ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

VII

ԳԻՐՔԸ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ
ԷԴՈՒԱՐԴ ԵՎ ՎԵՐԺԻՆ ՄԸՐԼՅԱՆՆԵՐԻ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԻՆԸ ՀԱՏՈՐՈՎ

881981

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ՅՈԹԵՐՈՐԴ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՄԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2013

ՀՏԴ 891.981 Շանթ
ԳՄԴ 84 Հ
Շ 301

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա՝
Ավ. Իսահակյան, Վ. Կիրակոսյան, Ս. Մարգարյան,
Ա. Մանուկյան, Ս. Սարինյան, Ե. Փամբուկյան

Հատորի խմբագիր՝ **Ս. Սարինյան**
Բնագիրը պատրաստեց և ծանոթագրեց **Ա. Մանուկյանը**

Շանթ Լևոն
Շ 301 Երկերի ժողովածու/Լ. Շանթ. – Եր.: «Գիտություն» հրատ., Հ. VII, 2013 – 720 էջ:

ՀՏԴ 891.981 Շանթ
ԳՄԴ 84 Հ

ISBN 978-5-8080-0996-7
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2013
© ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՄԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ՀԵԹԱՆՈՍ
ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳՐԱԲԱՐԻ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԸ
ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԳՐԱԲԱՐԻ

ԲԱՐԲԱՌԱԿԱՆ ԱՆԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԲԱՌՈՎ

ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ
ԼԵԶՎՈՎ
ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՄԵՐ ՎԱՂՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱԽԱԲԱՆ

ՀԱՅ ԿՅԱՆՔԻ, ԼԵԶՎԻ ՈՒ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՀԱՏՈՒՄՆԵՐԸ

Ա. ՀԱՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐԸ

Գիտական ուսումնասիրություններու արդի եզրակացությունն այն է, որ մեր Հայրենի լեռնաշխարհի վրա դարերու ընթացքին ապրած են տարբեր ժողովուրդներու քանի մը շերտեր:

Նախ եղած է «բնիկ» տարր մը մինչև 1200 – 1300 թիվերը Քրիստոսե առաջ: Այդ առաջին շերտին ցեղակից կհամարվին արդի Կովկասյան լեռներուն մեջ ապաստանած ու տևած մանր ժողովուրդներ: Այդ բնիկ ըսվածները ուրկե՞ եկած են մեր աշխարհը, ե՞րբ, մարդկային ո՞ր ցեղին կպատկանին՝ հաստատ ոչինչ չգիտենք: Ապահովաբար ո՛չ սեմական ժողովուրդ են եղած, ո՛չ ալ արիական:

Քրիստոսե առաջ երկրորդ հազարամյակի երկրորդ կեսին Վոսփորի վրայով և քանի մը հաջորդական ալիքներով Պալքանյան թերակղզիեն անցած են Փոքր Ասիայի բարձրավանդակին վրա մինչև Ալիս գետը արիական ցեղեր, որոնց մեջ ամենեն ավելի հայտնի է փռյուգացիներուն անունը:

Այս շարժումներու միջոցին է հավանորեն, որ կես մը արիական և կես մը ոչ-արիական խառնուրդ ժողովուրդներ Փոքր Ասիայի բարձրավանդակեն անցեր են Եփրատ գետը, տարածվեր, տիրեր ու նստեր են Հայրենի լեռնաշխարհի գլխավորապես հարավային մասերը, Երասխ գետեն հարավ:

Այս ցեղերեն մեկը կնստի Վան ծովի արևելյան կողմը և հետզհետե ձուլվելով տեղական հին բնակչության հետ՝ կկազմե խալտ կամ հալտի կոչված ժողովուրդը, որ քիչ-քիչ զորանալով կհիմնե խալտական ուժեղ պետություն մը և իններորդեն մինչև յոթներորդ դարուն կեսերը իր տիրապետության տակ կառնե մեր լեռնաշխարհի մեծագույն մասը: Եվ ինչպես հետզհետե պատմագիտությունը կճշդե, թե՛ քաղաքական և թե՛ քաղաքակրթական մեծ դեր կխաղա իր շրջապատին մեջ:

Ութերորդ դարու վերջերեն սկսած ա՛յն արիական ցեղերը, փռյուգացիներու ազգակից, որոնք եկած ու նստած էին Ալիսի ափերուն վրա, շարժված են դեպի ավելի արևելք հաջորդական արշավ-

ներով և բռնած են մեր Հայրենիքի գլխաւորապէս Երասխ գետէն Հիւսիս եղող մասերը:

Նոյնպէս յոթներորդ դարուն Կովկասեան լեռներուն վրայով քանի մը անգամ Ռուսաստանի տափերէն դէպի Հարաւ արշաւող արիական ժողովուրդներու խուժումները անշուշտ նպաստած են արիական տարրի զօրացմանը, որ Հիւսիսէն դէպի Հարաւ ու արեւելք սահելով՝ տէր են դարձած այն երկիրներուն, որոնք այդ միջոցին խալտերու իշխանութեան կամ գերիշխանութեան տակն էին արդէն գրեթէ ամբողջապէս:

Այսպէս ուրեմն՝ Հին ընիկ բռնած ո՛չ-արիական ժողովուրդներու, Հաւանօրէն մեծ մասով ո՛չ-արիական խալտերու, Հիւսիսային արիական խուժումներու և արեւմուտքէն եկող արիական ցեղերու ընդհանուր խառնուրդէն ու ձուլումէն առաջացեր է նոր ժողովուրդ մը, որ Հայ կանուանենք, Հաւանօրէն Ալիսը անցնող ցեղերէն մէկուն անունով:

* * *

Այս կերպով ծնունդ առած և այսօր քսանյոթը դարերէ ի վեր իր գոյութիւնը պահած Հայ ժողովուրդի պատմութիւնը առանց բռնութեան կարելի է բաժնել յոթը հիմնական դարաշրջաններու:

1. Յոթներորդէն մինչև երկրորդ դարը Քրիստոսէ առաջ, ուրեմն մօտ 500 տարի: Հին ու նոր ցեղերու խառնվելու, ձուլվելու և Հայ ժողովուրդի միութիւնը կազմելու ժամանակն է: Երկրի տէրերն են մանր ու խոշոր ցեղական-ազնվական իշխաններ, երեք-չորս դար պարսկական գերիշխանութեան տակ, վերջին դարն ալ մակեդոնական-սելևկյան վերին իշխանութեան: Անվանենք Հայացման դարեր:

2. Քրիստոսէ առաջ երկրորդ դարէն մինչև Քրիստոսէ ետքը երրորդ դարուն վերջը, ուրեմն նորէն 500 տարի, սելևկյան տիրապետութեան անկումէն ետքը մինչև քրիստոնէութեան մուտք գործելը Հայաստան, Հայութիւնը բուռն ճիգեր կընէ անկախ ու ամբողջական պետութիւն մը ստեղծելու փոփոխակի հաջողութեամբ, մեծ ելքերով և խոր անկումներով: Ախոյեան ու մրցակից են արևելքեն

պարթևները, արևմուտքէն ալ Հետզհետէ կմտնեն ու կճնշեն Հռոմեական մեծ կայսրության տիրապետական ձգտումները: Անվանե՛նք պետականացման դարեր:

3. Քրիստոսի երրորդ դարուն վերջեն մինչև յոթներորդ դարուն կեսերը, ուրեմն մոտ 350 տարի, Հայ ժողովուրդը սաստիկ սեղմված է երկու նորոգված մեծ պետություններու և երկու նոր ու Հզոր կրոններու ճնշումին տակ: Պարսկաստանի մեջ բարձրացած է Սասանյան ուժեղ իշխանություն մը՝ մոլեռանդ ու Հպարտ իր մազդեզական կրակի կրոնքով: Հռոմեական կայսրության ամբողջ արևելյան բաժինը առանձնանալով կազմած է Բյուզանդական կայսրություն մը՝ նոր ցեղական ու լեզվական կազմով ու նոր կրոնքով, որ է քրիստոնեությունը:

Հայ թագավորական տիրող տունը, որ Սասանյաններուն ցեղային թշնամի է, Հարկադրված է իր արևմտյան ուժեղ Հարևանի կրոնքը ընդունելու և իր երկրին մեջ գրեթե բռնի տարածելու՝ այդ գնով իր պետական գոյությունն ու անկախությունը փրկելու Հույսով: Պետականությունը չորրորդ դարուն վերջերը կփոռեկտի և 430-ին բոլորովին կվերջանա Սասանյաններու ձեռքով. բայց քրիստոնեությունը կմնա, կամրանա ու կդառնա առանցքը Հայ կյանքի և այդ դարաշրջանի պատմության:

Հինգերորդ ու վեցերորդ դարերը կրոնական կռիվներ են ու պայքար նոր կրոնի պաՀպանման Համար պարսիկ մազդեզականության դեմ, այլև ներքին աղմուկներ, վեճ ու դիմադրություն բյուզանդական քաղքեդոնականության դեմ իրենց եկեղեցական անկախությունը պաՀելու Համար: Ամեն ինչ նոր կրոնի չորս կողմը կդառնա: Անվանե՛նք քրիստոնեացման դարեր:

4. Յոթներորդ դարուն կեսեն մինչև տասնմեկերորդ դարուն կեսերը, ուրեմն մոտ 400 տարի, Հայ աշխարՀն ալ իր Հարավային ու արևելյան դրացիներուն Հետ կիյնա նոր կայսրության մը ու նոր կրոնի մը իշխանության, Հալածանքներուն և բռնության տակ, որ կուգար այս անգամ Հարավեն. արաբական տիրապետությունը և մաՀմեդական կրոնը:

Արաբական խալիֆայության ներքին կռիվներու և բաժանումներու Հետևանքով իններորդ դարեն սկսած Հայ իշխանական

քանի մը տուներ կձգտին իրենք ալ անկախութիւն ձեռք ձգելու: Եվ արաբական գերիշխանութեան տակ կառաջանան Բագրատունի, Արծրունի և մեկ-երկու ավելի մանր թագավորութիւններ ոչ-բավարար ուժով և շարունակ կռիւներու մեջ շրջակա ոչ-Հայ փոքր իշխանութիւններու Հետ. միևնույն ժամանակ ստիպված են պայքարելու Բյուզանդական կայսրութեան մշտապես նորոգվող կրոնական ու քաղաքական պահանջներուն դեմ:

Եվ երկրին մեջ Հայ իշխանական-նախարարական տուները քանի կերթան կոտորվին ու կփճանան, որովհետև թե՛ արաբները և թե՛ Բյուզանդիան ամեն կերպ կջանան Հարվածել Հայութեան ողնաշարը եղող Հայ ազնվականութիւնը: Հույները կաշխատեն Հեռացնել Հայ իշխանները Հայ Հողերեն՝ Հայաստանեն դուրս անոնց նոր Հողեր ու Հարմարութիւններ տրամադրելով. արաբներն ալ նույն նպատակին կձգտին բռնութեան բոլոր միջոցներով, սպաննելով, գերի վարելով և կրոնափոխ դարձնելով: Ասով ալ կթուլցնեն Հայ ժողովուրդի դիմադրական ուժը, բայց ո՛չ իրենց օգտին. օգտվող կըլլան Հաջորդ դարաշրջանի թուրանական խուժող ցեղերը: Մաշումի այս չորս դարերը կանվանենք արաբական շրջան:

5. Տասնմեկերորդ դարու կեսերեն մինչև տասնհինգերորդ դարուն կեսը, մինչև թուրքերու ձեռքով Պոլսի գրավիլը, մոտ 400 տարի, Հայ ժողովուրդի ու Հայ Հայրենիքի քայքայման տարիներն են բուն Հայրենի Հողերուն վրա: ԺԱ դարու կեսերուն քանի մը տասնյակ տարի տևող սելճուկ-թուրքերուն արշավանքներն են իրարու ետև, որ կուգան, կավրեն, կջարդեն, իշխան ու կաթողիկոս կփախցնեն դեպի Տավրոս և իրենք կտեղավորվին անոնց Հողերուն վրա:

Թուրանական երկրորդ մեծ ալիքը թաթարական արշավանքներն են ԺԳ դարու կեսին. իսկ մեկ ու կես դար ավելի ուշ՝ ԺԴ դարուն վերջերը, թուրանական խուժումին երրորդ ալիքն է՝ մոնղոլական արշավները, որ կգերազանցեն նախորդները իրենց վայրագութեամբ, ավերներով ու արյունահեղութեամբ:

Այս դարեր տևող թուրանական Հարվածներուն տակ Հայ իշխանական տուները բոլորովին կոչնչանան. քաղաքացի ժողովուրդը կփճանա կամ կփախչի Հնար եղածին չափ Հեռուները՝

դեպի արևմուտք, դեպի Խրիմ, մինչև Լեհաստան. գյուղական բնակչությունը սաստիկ կնոսրանա, մեծ մասը կապաստանին երկրի լեռնոտ բարձունքները՝ բերրի հողերը թողնելով նոր եկվորներուն, որոնք կհիմնեն բազմաթիվ մանր ու խոշոր իշխանություններ և արյունալի կռիվներուն մեջ են շարունակ իրարու հետ, կխլեն երկիրը իրար ձեռքե ու կկեղեքեն հայ ժողովուրդի մնացորդները:

Այս միջոցին է, որ Տավրոսի լեռները ապաստանած հայ իշխաններ կհաջողին կիսանկախ բույն մը հիմնելու Կիլիկիայի մեջ՝ մաքառելով Բյուզանդիոնի ու շրջակա թուրք սուլթանություններու հետ, օգնելով խաչակիրներուն և օգտվելով անոնց արշավանքեն կկազմեն թագավորություն, կդիմանան երեք դար: ԺԴ դարուն վերջերը եգիպտական մամելուկներու հարվածներուն տակ կկործանվի մեր այս վերջին թագավորությունն ալ, որ արդեն ներքին կրոնական-լատինական վեճերով ու բաժանումներով սաստիկ տկարացած էր: Հայության քայքայման, նվազման ու ցրումի այս չորս դարերը կանվանեմ թուրանական դարաշրջան:

6. Բյուզանդիոնի գրավումեն մինչև ռուսներու Կովկաս մտնելը, այսինքն՝ ԺԵ դարու կեսեն մինչև ԺԹ դարուն սկիզբները, ուրեմն նորեն 400 տարիի չափ մեր Հայրենիքի ստվար մեծագույն մասը օսմանյան տիրապետության տակ է: Թուրք պետությունը արագ կերպով կընդարձակի ու կդառնա ծովային ու ցամաքային մեծ կայսրություն մը, որուն արևելյան սահմանը կներկայացնե մեր լեռնաշխարհը և ուր տեղի կունենան օսմանյան ու պարսկական երկու մահմետական մրցակիցներուն դարավոր ընդհարումները, որոնք նոր ու նոր աղետ ու ավեր կբերեն դեռ իր տեղը մնալ համառող քրիստոնյա բնակչության: Եվ շատ-շատերն են, որ պատառ մը ապահովության որոնումով կդիմեն դեպի արևմուտք, դեպի ծովեզրյա մասերը, դեպի Պոլիս ու շրջակայքը:

Ըլլա իր հողերուն վրա թե օսմանյան մայրաքաղաքին մեկ անկյունը ծվարած, Հայը ամեն տեղ դարձած է ստրուկ ու րայա. արհամարհված, իրավազուրկ ու ողորմելի տարր մը, որովհետև քրիստոնյա է ու բոլորովին անպաշտպան այդ մահմետական ծովուն մեջ, ամեն տեղ ալ փաշաներու, աղաներու, տերեպեյիներու հարստահարության ենթակա, հաճախ քաղաքե քաղաք նետվելով

ու փախչելով, որովհետև անպատերազմ տարիներն անգամ ներքին ցեղային ընդհարումները, ըմբոստությունները, ապստամբություններն ու ավազակություններն անվերջ էին: Ահա այս թշվառությունն է, որ կկազմե թուրքական դարերու շարունակությունը ներկայացնող օսմանյան դարաշրջանը Հայ պատմության:

7. Քրիստոնյա զորեղ պետության մը և եվրոպական օրենքի ու մշակույթի դեպի մեր Հայրենի հողերը շարժվելովն է, որ կսկսի Հայ ժողովուրդի համար նոր դարաշրջան մը: Ռուսները ԺԹ դարուն սկիզբը կմտնեն Կովկաս նախ Կուրի հովիտը, կգրավեն Թիֆլիսը. 1827-ին ռուսները կհասնին Երևան ու Էջմիածին. և Հայության հյուսիսային մեկ խոշոր հատվածը կփրկվի թուրքական տիրապետութենեն ու ազդեցութենեն և կկապվի եվրոպական-արիական ոգիին ու ձգտումներուն: Եվ ռուսները անկե ետքը շարունակ կձգտին հարավ՝ դեպի մեր աշխարհի ու շրջապատի ամբողջական գրավումը: Այս ձգտումներու ետ ու առաջ շարժումներուն մեջն ենք հիմա: Եվ Հայ ժողովուրդի գոյությունն ու վիճակը բոլորովին նոր և ուրիշ պայմաններում մեջ է մտած և սերտորեն կապված է եվրոպական ժողովուրդներու գոյավիճակին և ռուս պետականության:

Բ. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԼԵԶՈՒՆ

1. ԲԱՐԲԱՌՆԵՐ

Հայ ժողովուրդի կազմության հետ կապված է նաև Հայ լեզվի կազմվիլը և միևնույն բաղադրիչ տարրերու իրար խառնվելովը: Նախնական ընիկ ցեղերուն լեզուները, խալդական ցեղերուն լեզուները, հյուսիսեն խուժող ցեղերու լեզուներեն տարրեր և Ալիս գետը անցնող արիական ցեղերուն լեզուները խառնվելով իրար՝ մեկ-երկու դարերու ընթացքին առաջացուցած են Հայկական լեռնաշխարհին մեջ Հայ լեզուն:

Կամ ավելի ճիշդ արտահայտությամբ պետք է ըսենք՝ Հայ լեզուները, որովհետև երկրի տարբեր գավառներուն մեջ ցեղային

խառնուրդը տարբեր-տարբեր համեմատություններ ունի. տեղ մը արիական տարրն է տիրապետողը, ուրիշ տեղ մը խալտականն է, որ կգերակշռե, ուրիշ անկյուններու մեջ հին բնիկ ցեղ մը դեռ կրցած է պահել կամ դնել իր կնիքը խառնուրդին վրա, ուրիշ վայրի մը մեջ տևած է ազդեցությունը Կովկասեն խուժող ցեղերուն:

Հաշվի պիտի առնել նույնպես հարևան ժողովուրդներու լեզվական ազդեցությունները երկրի տարբեր մասերուն մեջ տարբեր չափով ու կերպով. և վերջապես մեր հողերուն վրա ավելի կամ պակաս երկար ժամանակով տիրապետություն կամ գերիշխանություն ունեցող ժողովուրդներու լեզվին ազդեցությունը:

Կա նաև տարբեր աշխարհագրական դիրքերու ու կլիմայի բերած տարբեր բնական ազդեցությունները մարդուս մտածման ու արտահայտության վրա, ինչպես և հնչաբանության ու արտասանության վրա:

Այս բոլոր պատճառներով երկրի տարբեր մասերուն մեջ կշեշտվին ու կզարգանան ինչպես մարմնական ու հոգեկան տարբեր հայկական տիպարներ, այդպես ալ կառաջանան իրարմե ավելի կամ պակաս խոշոր տարբերություններով հայկական լեզուներ, այսինքն՝ բարբառներ:

Որչափ երկիր մը կտրտված է լեռներով, որչափ հովիտե հովիտ դժվար կկատարվի ժողովուրդի երթևեկը ու մշտական հոգեկան շփումը, որչափ թույլ է մասերու քաղաքական միությունը, այնքան ալ շեշտված կըլլա բարբառներուն առանձնահատկությունները և իրարմե ունեցած զանազանությունը: Ինչպես կըսենք ամեն գավառ կունենա իր բարբառը: Ժողովուրդի մը լեզվական տարրական միավորները այդ բարբառներն են. բարբառներն են լեզվական բոլոր հարցերուն մեջ նախնականն ու հիմնականը:

Նույն հողեն ու նույն ժողովրդական արմատեն ընձյուղած են տասնյակ մը բուներ, որոնք բոլորը միասին դեպի արևը, դեպի դարերը կբարձրանան: Այդ լեզվական բուներեն ամեն մեկը իր հատուկ զարգացումը ունի և դարե դար իր ներքին հատուկ փոփոխությունները. երբեմն կատարելագործում, պարզում ու նրբացում. երբեմն անկում, աղճատում ու խեղճացում: Այդ բուներեն մեկը

կամ միասին իր խօսող ժողովուրդին հետ կրնայ չորանալ, կորսուիլ ու չքանալ:

Այդ լեզուական բուներէն ամէն մէկը պատմական պայմաններու բերած նոր ազդեցութիւններու տակ իյնալով, նոր տիրապետութեան ենթարկուելով կամ իր ժողովուրդի մէկ մասին հետ գաղթելով նոր երկինքներու տակ՝ կրնայ ինքն իր վրայ ճիւղաւորուիլ: Նոյն հիմնական բարբառը կրնայ քանի մը քոյր բարբառներու ծնունդ տալ:

Լեզու անուանածնիս, որ սովորաբար պարզ ու հաստատ, միակ ու միակերպ բան մը կ'երեւակայենք, իսկութեան մէջ բազմաբուն ու ճիւղաւոր գոյութիւն մըն է, մշտափոփոխ ու հարաճուն: Եվ անոր այս բարդ ու կենդանի էութիւնը երբեք պէտք չէ ուշադրութենէ հեռացնենք՝ երեւոյթները շփոթել ու խոր ըմբռնել ու դատել կարողանալու համար: Լեզուն մէկ հատիկ բունով մը շիտակ վեր սլացող ծառ մը չէ, որ վերեւը կճիւղաւորուի, այլ նոյն մայրենի հողէն ու արմատէն վեր խոյացող բուներու փունջ մը. լեզուն ավելի թուփի կնմանի:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐԲԱՌ ՈՒ ԳՐԱԲԱՐ

Երբ ժողովուրդի մը ցեղերէն մէկը կտիրէ իր ազգակից քանի մը ուրիշ ցեղերու եւ քանի մը գաւառներու միացումով կդառնա ավելի մեծ ծավալով իշխանութիւն մը, բնական կերպով իր խօսած լեզուն ալ դուրս կուգա իր նախկին սահմաններէն ու կսահի գրաված մասերուն վրայ:

Գրաված մասերուն բարբառները կշարունակեն ապրիլ ու խօսիլ առաջվան պես, բայց երկու բարբառներու իրարու կից ու իրարու մէջ գործածութիւնը տիրողի լեզուին կուտա պատիվն ու առավելութիւնը: Տիրողի պահանջով կամ տիրողին հաճո ըլլալու համար կամ իր անձին շուքն ու հարգը բարձրացնելու համար տիրողի լեզուն գործածելը կդառնա սովորական:

Իսկ այդ տեսակ իշխաններէն մէկը, երբ զէնքի ուժով կհաղթէ մոտավոր ու հեռավոր իրեն նման ու իրեն ախոյան իշխաններու

և կմիացնե իր չուպին տակ անոնց երկիրները, կդառնա ընդարձակ տարածութեան մը մեծ իշխանը կամ Թագավորը. իր ցեղի իշխանութեան բարձրացման հետն ալ կբարձրանա նաև տիրող ցեղին լեզվին իշխանությունը:

Թագավորին պալատը, Թագավորին պաշտոնյաները, Թագավորին քուրմերը, Թագավորին դատավորներն ու Թագավորին երգիչները ամենքն ալ բնականաբար կխոսին Թագավորի ցեղին բարբառովը: Մյուս իշխանները, մյուս գավառները, մանավանդ եթե հեռու են Թագավորական կեդրոնեն, կպահեն իրենց բարբառը իրենց ներքին գործածության առեն, բայց Թագավորի հետ ամեն հարաբերության միջոցին, Թագավորի մարդոց հետ ամեն շփումի միջոցին կշանան կամ ստիպված են Թագավորական բարբառով խոսելու:

Եվ այդ բարբառով խոսիլը կդառնա նաև նշան մը ավելի կրթված, ավելի բարձրաղիր նկատվելու, որովհետև իրավ որ այդ տիրող բարբառը արագ կերպով կսկսի զարգանալ ներքուստ, իբրև լեզու: Պալատականներու, բարձր պաշտոնյաներու, դատարաններու, մեհյաններու մեջ և գուսաններու շրթունքին, այսինքն՝ ամենեն բարձր նյութերու մասին և ամենեն փորձառություն ու դատողություն ունեցող մարդոց շրթունքին վրա Թագավորին բարբառը և՛ կնրբանա, և՛ կկոկվի, և՛ կհարստանա, արտահայտության նոր ձևեր կմշակե, նոր ոճ, նոր բառեր և նոր քաղաքավարություն:

Հին, հասարակ ու սովորական բարբառը, արդեն բոլորովին մշակված ու զարդարված, դարձած է պետական բարբառ: Ե՛վ իր լեզվական էությամբ, և՛ իր տարածականությամբ դարձած է բոլորովին տարբեր ու բացառիկ լեզվական երևույթ մը, ինչպես որ Թագավորությունը ինքը բոլորովին տարբեր պետական երևույթ մըն է, քան որևէ պարզ ցեղ մը ու ցեղապետ մը: Այն ատեն աչքի կիյնա ու կշեշտվի իր միակ ու բացառիկ ըլլալը, որ այլևս չենք ըսեր՝ պետական բարբառ, այլ կնկատենք իբրև պետության միակ ու վերին լեզուն: Բարբառական լեզուներուն վրա սավառնող ընդհանուր ու միակ լեզու մը, որ իր համաստիճանը չունի. պետականության մը ամբողջությանը պատկանող լեզու:

* * *

Այս տեսակ պետական բարբառ մըն էր մեր այն լեզուն, որ հինգերորդ դարուն սկիզբը Մեսրոպ Մաշտոց վարդապետի հնարած տառերով գրի առնուեցաւ եւ սկսաւ գործածուիլ ամեն տեսակի գրութիւններու մէջ, այսինքն՝ դարձաւ նաեւ գրական լեզու, որ մենք հիմա «գրաբար» կանուանենք:

Գրաբարը իր բարձրութիւնն ու գեղեցկութիւնը պարտական չէ գրականութեան. անիկա ամբողջական պտուղն է Հայ պետական կեանքին: Մեր գրաբար գրականութիւնը կսկսի Ե դարու առաջին քառորդին, ճիշդ այն վայրկեանին, երբ կկորսուէր Հայ պետականութիւնը. բայց մարդիկ ու գրիչները դեռ պետական ոգի ու լեզու ունէին: Այդ պատճառով ալ Սուրբ Գրքի Թարգմանութեան որոշ մասերը եւ քանի մը ուրիշ գրուածքներ Ե դարէն կներկայացնեն գրաբարի ամենէն բարձր աստիճանը, գրաբար լեզուի «ոսկեդարը», ինչպէս կսիրեն ըսել մեր բանասէրները: Որչափ հեռանանք Ե դարէն, այնքան գրաբարը կիյնայ ու կապականի, որովհետեւ իր արմատային թելերն ու մազիկները կորսնցուցած են պետականութեան հողը:

Պետականութեան ոչնչացումով կամաց-կամաց գրաբարը խեղճապէս կդառնայ «գրաբար», այսինքն՝ գրի լեզու, որ միայն գրութիւններու մէջ կգործածուի. իսկ կեանքի մէջ, կենդանի խօսակցութեան համար ասպարէզը կմնայ բարբառներուն. եւ դարեդար գրաբարը կդառնայ բոլորովին անգործածական կենդանի հարաբերութիւններու ժամանակ: Այն աստիճան դուրս կուգայ կենդանի գործածութենէն ու կմոռցուի շրթունքներու վրայ, որ Բագրատունի ու Ռուբինյան դարերուն, երբ նորէն կսկսի պետական կեանք մը, գրաբարը միշտ կմնայ միայն իբրեւ գրութեան լեզու: Եւ այնքան տիրող կդառնան բարբառները ամեն գործածութեան համար, որ ահագին ալիքով կխուժեն նոյնիսկ գրաբար գրութիւններու եւ արձանագրութիւններու լեզուին վրայ:

Բարբառները հետզհետէ կողողեն գրաբարը. եւ զուտ ու մաքուր գրաբար սորվիլն ու գիտնալը կդառնայ բացառիկներուն մատչելի շատ դժուար գործ մը. որուն վրայ երկար պիտի աշխատին

տիրացուներն ու հոգևորականները վանքերուն մեջ: Եվ գրաբար սորված ու գիտցող այդ բացառիկ մարդիկն ալ իրենց առօրյա կյանքին մեջ, նույնիսկ բարձր հոգևոր անձերն ու մասնագետները, կխոսին միշտ բարբառով կամ բարբառի ու գրաբարի անշնորհք խառնուրդով մը: Գործնականապես արաբական ու թուրքական դարերու իրար քալող սահմանին վրա գրաբարը դարձած է արդեն մեռած լեզու:

Բայց գրություններու մեջ գեշ-աղեկ, դիցուք և հետզհետե աղճատվելով կշարունակի դիմանալ. և ԺԸ, ԺԹ դարերու ընթացքին կունենա արվեստական բարձրացում մը, զտում մը և ընդարձակ գործածություն, բայց միշտ միայն գրություններու մեջ, ան ալ վաղանցիկ: ԺԹ դարու կեսերուն կդադրի գրաբարի գործածությունը գրություններու մեջ ալ:

3. ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆ

Թե՛ գրաբարը և թե՛ բարբառները մեր գրական ասպարեզեն հեռացնողը եղավ արդի հայերենը:

Մեր արդի լեզուն ծնունդ է նոր քաղաքական պայմաններու և քաղաքակրթական նոր պահանջներու, որոնց գրաբարը պատասխանել չէր կրնար, իբրև շրթունքներու վրա արդեն վաղուց մեռած մեկ լեզու: Բարբառներն ալ իրենց եղած վիճակին մեջ նմանապես բավարարել չէին կրնար նոր պահանջներուն: Անհրաժեշտ էր լայն շերտերուն դյուրին հասկընալի ու կենդանի լեզու մը խոսվող, որ միևնույն ժամանակ արտահայտել ու ներկայացնել կարողանար եվրոպական գիտության, գրականության և լրագրության բոլոր նրբություններն ու հարստությունները: Պետք էր լեզու մը շատ մոտիկ բարբառին, հենված էապես բարբառի մը, բայց և անհամեմատ ավելի հղկված, կոկված, սանրված ու կանոնավորված: Միևնույն ժամանակ և՛ նուրբ ու հարուստ, և՛ ձևավորված ու ներկայանալի:

Մեր արդի հայերենը ո՛չ գրաբար է, ո՛չ ալ բարբառ. բայց զավակն է բարբառի և գրաբարին ալ իր սանուն: Բարբառի ու գրաբարի գիտավորյալ խառնուրդ մըն է, ընտրությամբ կատարված

ու կանոնաւորուած, գիտակից աշխատանքով եւ աստիճանական մշակումով ձեռք բերուած, մէկ կողմէն գրաբարի պահանջկոտ ոտնձգութիւններուն դէմ պայքարելով, միւս կողմէն ալ իր մայր բարբառի անտաշութիւններուն դէմ:

* * *

Եւ նոր խառնուրդին վրայ տիրող ընդհանուր օրէնքը հետեւեալն է:

Հոլովումը, խոնարհումը եւ դերանունները առնուած են բարբառէն. եւ քանի կերթանք՝ այնքան աւելի խստօրէն պէտք կզգանք հետեւելու մայր բարբառի քերականութեան, ինչ կվերաբերի ձեւաբանութեան, այսինքն՝ բառերու ձեւափոխութեան ուսումին: Հետզհետէ կժխտուին գրաբարի ձեւաբանութեան վերջին մնացորդներն ալ:

Հնչաբանութիւնը, ընդհակառակը, կհետեւի գրաբարին. մեր արդի հայերէնը կմերժէ բարբառներուն ամէն տեսակի ձայնափոխութիւնները եւ կհենուի գրաբար արտասանութեան ձեւին. բացառիկ բառերու համար միայն զիջումներ կըլլան բարբառական հնչաբանութեան, այն ալ մեծ զգուշութեամբ եւ հնար եղածին չափ կանոնի մը տակ բերելու ջանքով:

Բառակազմութիւնը ե՛ւ գրաբարին կհետեւի, ե՛ւ բարբառներուն. երկու ճամբան ալ բաց է: Տիրողը գրաբարի բառակազմութիւնն է ընդհանուր առումով. բայց օրէ օր կշատնան ու կսիրուին բարբառական բառակազմութեամբ կերտուած բառերը:

Բառամթերքը նմանապէս. լեցուն բուռով առած է մեր արդի հայերէնը գրաբարի հարուստ մթերանոցէն դարերու դիզած ընդարձակ պաշարէն. բայց հաւասար դիւրութեամբ ու սիրով կվերցնէ նաեւ բարբառներու ընծայած առատ ու կենդանի բառերն ու արտահայտութիւնները:

Արդի հայերէնը հին գրաբարին կմօտենայ նաեւ անով, որ հնար եղածին չափ կջանայ մաքրել լեզուն թուրքական խուժումէն, որուն ենթարկուած են անխտիր մեր բոլոր բարբառները մեծ չափերով:

Իսկ նախադասութիւններուն կազմը, կապակցութեան օրէնք-

ները, բառերուն փոխադարձ դիրքն ու դասաւորութիւնը և խնդրառութիւնը ընդհանրապէս կհետևի բարբառներուն, բայց շաղկապներն ու մակբայները հաճախ փոխառութիւն է դեռ գրաբարէն:

Ահա՛ այս ընդհանուր սկզբունքներուն վրա է կառուցված մեր արդի հայերենը, որ կառուցված, նորոգված, մշակված լեզու մըն է բարբառական հիմքի վրա, բարբառի մը մշակումն է, բարբառի մը ազնվացումն ու նրբացումը:

Եվ մեկ լեզու մը չէ արդի հայերենը, այլ երկու՝ արևմտյան ու արևելյան: Վերի սկզբունքներու գործադրության տեսակետեն հիմնական տարբերություն մը չկա այդ երկուքին մեջ: Միայն արևմտյանը ավելի մեծ չափերով ենթարկված է գրաբարին և օգտագործած է լայնորեն գրաբարը, մինչդեռ արևելյանը, ընդհակառակը, բարբառները ավելի է օգտագործած և ենթարկված է անոնց ազդեցության շատ ավելի մեծ չափերով, քան գրաբարի: Բայց այս տարբերությունն ալ օրե օր մեղմելու վրա են երկու կողմեն գիտակից կերպով թափված աշխատանքով: Արևելյան հեղինակները հետզհետե նոր-նոր բառեր ու ձևեր յուրացնելու հետամուտ են գրաբարեն ու արևմտյան արդի լեզվեն, մինչ արևմտյան հեղինակներն ալ ճիգեր կընեն բարբառական արտահայտություններն ու կենդանի բառ ու ոճ հետզհետե ավելի ու ավելի հյուսելու իրենց ասության:

Մեր արևմտյան ու արևելյան երկու նոր լեզուները երկուքն ալ ծնունդ են միևնույն կամ իրարու շատ նման պայմաններու. երկուքն ալ նույնանման պահանջներու կձգտին բավարարել, և իրենց մշակումն ալ կատարված է նույն ու նման ծրագրով ու խառնուրդով: Իրենց երկու հատ ըլլալուն պատճառը ներքին չէ, ո՛չ ալ քաղաքակրթական. այլ արտաքին է, քաղաքական: Ռուս ու Թուրք երկու տիրող պետություններու խիստ սահմանագիծն է, որ զատեր է իրարմե նույն ժողովուրդի տարբեր հատվածները, որոնք միևնույն օրերուն միևնույն պահանջներով հարկադրված են իրենց շրթունքին եղած բարբառը օգտագործելու, հղկելու և գրական լեզվի մը վերածելու. ատոնցմե մեկը Պոլսի ու շրջակայքի մեջ խոսված բարբառն է, մյուսը՝ Արարատյան դաշտին գլխավոր բարբառը:

Առանց այդ քաղաքական սահմանագծի դրած անջատման ու հարկադրանքին և քիչ մը աւելի մօտիկ կեանքի շփումով մենք հիմա ազատ կըլլայինք երկու գրական լեզու ունենալու բոլորովին աւելորդ շռայլութենէն, և շատ աւելի կեդրոնացված կըլլար հիմա և՛ մեր հոգեբանութիւնը, և՛ մեր գրականութիւնը: Մէկ առանցքի մը շուրջը կդառնար Հայ կեանքը, Հայ միտքն ու ճաշակը շատ աւելի մեծ չափերով, քան եղած է այս վերջին դարու մը ընթացքին:

* * *

Մեր արդի երկու հայերէն լեզուները իսկապէս եղած են նախ իբրև գրական լեզու, բայց շատ շուտով գիրէն ու մամուլէն անցած են կեանքին, դարձած են խօսվող լեզու: Գրաբարը նախ խօսված ու տարածված կենդանի լեզու մըն էր, որ առնվեցաւ գրի ու դարձաւ գրական: Ասոր ճիշդ հակառակն է մեր արդի լեզուն. գրելով ու գրչի տակ գործածված, հղկված ու մշակված լեզու մըն է, հարմարցված առեղծագործութիւն մը, որ լրագիրներէն ու գրքերու էջերէն կիջնէ կեանքի առօրյա հրապարակը ու կդառնայ կենդանի խօսված լեզու:

Հին ու նոր գրական լեզուներուն այս հակադրութեան պատճառ ժամանակակից կեանքին մէջ գրի ու գրքի խաղցած բացառիկ կարևոր դերն է: Գիր ու ընթերցում գիտնալը հիմա քանի մը պաշտօնյաներու կամ դաս մը հոգևորականներու միայն սեփական եղող բան մը չէ, ինչպես որ էր մինչև վերջին ժամանակներս: Հիմա դպրոցը ամենատարրական հաստատութիւններէն մեկն է ամեն գյուղի ու քաղաքի մէջ. հիմա գիրն ու ընթերցումը ամենէն տարածված երևույթներէն մեկն է և օրէ օր աւելի ու աւելի տարածվող: Մանավանդապես շատ մեծ է պարբերական մամուլին դերը մեր արդի լեզվի տարածման ու ժողովրդականացման գործին մէջ:

Դպրոցներու, լրագիրներու և գրքերու միջոցով հետզհետե ժողովուրդի հատվածները մշտական հաղորդակցութեան մէջ կմտնեն մեր արդի գրական լեզվին հետ: Դեռ անշուշտ ամեն տեղ ալ մեծամասնութիւն կկազմեն բարբառով խօսողները, բայց քիչ-շատ ամեն տեղ ալ կխօսին նաև, կամ գէթ կհասկընան, մեր գրական նոր լեզուն: Եվ տարիէ տարի աւելնալու վրա է այն մարդոց թիվը,

որոնք գրեթե բացառաբար գրական լեզվով կխոսին: Անշուշտ ո՛չ ամեն անհատ կարտահայտվի գրված լեզվի մը մաքրությամբն ու նրբությամբը. Հաճախ բարբառական կամ օտար լեզուներեն եկող առանձնահատկություններ ներս կսպրդին հնչյունի, հոլովի, խոնարհումի և նախադասության կազմի, բայց ընդհանուր առումով հիմքը կմնա արդի գրական նոր լեզուն:

Այժմ, ընդհակառակը, մեր արդի նոր գրական լեզուն է, որ հարձակողական դիրք ունի բարբառներու հանդեպ: Մինչև ժթ դարուն կեսը տիրապետողը ամեն տեղ ալ բարբառներն էին առանց որևէ սահմանափակումի. Հիմա բարբառներուն քովը կա նոր կենդանի գրական բարբառ մը, ուսման, գիտության, գրականության, լրագրության գործածած ավելի հարուստ, ավելի նուրբ ու ավելի կիրթ լեզուն, որուն առջևեն բարբառները կամաց-կամաց կնահանջեն՝ տեղի տալով միության ու բարձրացման պահանջին:

Ինչպես որ ժողովուրդի մը զանազան ցեղերը, մասերն ու հատվածները քաղաքականորեն ձգտում ունին իրար միանալու և կազմելու միակ ընդհանուր ազգային-պետական միություն մը, այդպես ալ նույն ժողովուրդի զանազան բարբառներն ու այլազանությունները տեղի կուտան հետզհետե ընդհանուր ու միակ ազգային լեզվի մը միահեծան տիրապետության: Լեզո՛ւ մը, որ դառնա ամբողջ ժողովուրդի մը և՛ բանավոր, և՛ գրավոր բոլոր արտահայտություններուն միակ գործիքը:

Գ. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

1. ԻՐ ԵՐԵՔ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Մարդկային լեզվով կատարված ամեն տեսակի քիչ-շատ իմաստալից ու ամբողջական հորինում, ըլլա բանավոր թե գրավոր, կանվանենք բանահյուսական ստեղծագործություն. և ժողովուրդի մը սեփական լեզվով կատարած այդ բանահյուսական ստեղծագործություններուն ընդհանուր գումարը կանվանենք այդ ժողովուրդի

բանահյուսությունը: Բանահյուսության գրավոր կերպով ստեղծ-ված մասը կանվանենք նաև գրականություն:

Հայ ժողովուրդի ու հայ լեզուի առաջացումը իր սկիզբը առած ըլլալով յոթներորդ դարուն շուրջը՝ հայ բանահյուսության մասին խոսք կրնա ըլլալ միայն մեկ կամ երկու դար ավելի ուշ, ըսենք՝ Քրիստոսեն առաջ Ե դարեն: Մեկ-երկու դար պետք է անցներ, որ բարբառները ձևավորվեին ու բյուրեղանային և ատոնց թվին մեջ նաև այն բարբառը, որ հետզհետե պետք է դառնար պետական լեզու և որու ստեղծած բանահյուսության մասին միայն որևէ տեղե-կություն ունինք մենք կամ կրնանք ունենալ: Այդ պետական լե-զուն, դառնալով ազգային գրական լեզու, հաղորդած է մեզի գրերու գյուտեն առաջ իր ունեցած անգիր բանահյուսության մասին որոշ տեղեկություններ:

Ուրեմն մոտավորապես Քրիստոսեն առաջ Ե դարեն մինչև Քրիստոսե ետքը Ե դարը, այսինքն՝ հայ գրերու գյուտը, գոյություն ուներ միայն անգիր բանահյուսություն. գրաբարի առաջին հա-զարամյակը ունի միայն անգիր բանահյուսություն:

Անշուշտ պետական կյանքի աստիճանական բարգացման և Տիգրան Մեծի ստեղծած կայսրության նման կազմակերպության մը մեջ անկարելի է, որ չըլլային ամեն կարգի պաշտոնական հաղոր-դագրություններ, գրավոր տեղեկատվություններ, հրահանգներ, պետական թղթակցություններ, դաշինքներ և այլ վարչական ու իրավական գրություններ. բայց այս բոլորը հայ գրերու բացա-կայության պատճառով կատարված են ասորերեն, պարսկերեն և հունարեն լեզուներով: Նույնիսկ զուտ գրական երկեր ունեցած ենք օտար լեզուներով: Կհիշվի, օրինակ, Արտավազդ Թագավորը, որ շատ կսիրեր հունական դրամաները և ինքն ալ կհորիներ դրա-մաներ... հունարեն լեզվով:

Ինչքան ալ որ այդ գրությունները կարևոր և հետաքրքիր ըլլան, և ինչքան ալ որ հայ թագավորի մը գրած դրամաները մեզի համար մեծ հետաքրքրություն ներկայացնեն ու թանկագին ըլլան, եթե նույնիսկ մեր ձեռքը հասած ըլլային ատոնք, հայ գրա-կանության անվանել չենք կրնար, մինչև անգամ եթե հեղինակը հայ պալատեն կամ հայ կյանքեն առած ըլլար իր նյութը: Պետք է

հայերէն լեզուով գրուած ըլլային հայ գրականութիւն դառնալու համար:

Հայութենէ առաջ մեր լեռնաշխարհի մեծագոյն մասին իշխող խալտ ժողովուրդը ունեցած է բարձր քաղաքակրթութիւն և ունեցած է անշուշտ իր անգիր բանահիւսութիւնը, ուրկէ սակայն մեզի բան մը չէ հասած. միայն ենթադրական նշմարներ կան մեր հայ առասպելներուն մէջ: Խալտերը ունեին նաև գիր Ասորեստանի հետևողութեամբ և հասած են մեզի բավական խոշոր թիւով խալտական սեպագիր արձանագրութիւններ, որոնք շատ թանկագին են խալտ ժողովուրդի պատմութիւնը, քաղաքակրթութիւնը և լեզուն ուսումնասիրելու համար, ինչպես և խալտերու և հայերու մէջ եղած հարաբերութիւնները ճշդելու համար, բայց իբրև բանահիւսական կառուցում՝ մասնավոր կարևորութիւն մը չեն ներկայացներ:

Իսկ խալտերէն առաջ մեր հայրենի հողերուն վրա ապրող ժողովուրդներէն իբրև բանահիւսական արտադրութիւն բնականաբար ոչինչ չունինք, ո՛չ իսկ իրենց լեզուի մասին գաղափար մը: Անկասկած անոնք ալ ունեցած են անգիր բանահիւսական ստեղծագործութիւններ, որոնք կրնան մտած ըլլալ կամ ազդած ըլլալ իրենց վրա տիրող խալտ ժողովուրդի բանահիւսութեան վրա, ետքն ալ հայ ժողովուրդի բանահիւսական կարողութիւններուն վրա այս կամ այն չափով:

Ըսել է՝ առնվազն քսանհինգ դարերէ ի վեր կհնչէ հայ լեզուն, հայ երգը և հայ անգիր վեպը մեր հայրենի լեռներուն մէջ, իսկ տասնհինգ դարերէ ի վեր ունինք հայերէն գիրք ու գրականութիւն:

* * *

Այսքան դարերու վրա փռուած մեր բանահիւսական ստեղծագործութիւնները ուսումնասիրելու համար մինչև հիմա սովորական է եղեր դար-դար շարել իրար ետևէ բոլոր հեղինակները և անոնց բոլոր հեղինակութիւնները, միևնոյն է՝ արժեքավոր բաներ ըլլան անոնք, բացառիկ երկեր թէ սովորական, երկրորդական կամ նոյ-

նիւթ անկարեւոր բաներ: Կարծես լքացված ճերմակեղէն բլյան, չափկիկներ ու թաշկինակներ, և՛ նորը, և՛ պատռուածը, և՛ պիտանին, և՛ անպէտքը, որ կչարեն պարանին վրա բարի արևին դէմը, որ չորնան, առանց ուրիշ որևէ խնդրումի, մաղթումի ու զատաւորու-թյան: Միակ Հատում մը, որ կկատարվի, ամբողջ նյութը երկու մասի բաժնելն է, Հին Հայ գրականություն և Նոր Հայ գրականություն:

Այս վերաբերումը ո՛չ գիտական է, ո՛չ ալ գործնական: Ամեն աշխատանք Հատակելու և եզրակացնելու գլուխներու Համար անՀրաժեշտություն մըն է ինչպես ներքին ավելի նուրբ խմբումները, այնպես ալ արտաքին ավելի Հիմնական բաժանումները:

Անորոշ ու մշուշոտ բան մըն է Հայ բանաՀյուսությունը երկու մասերու բաժնելը առանց որևէ գիտական Հիմքի: Ո՞րն է մեր «Հին» ըսված գրականությունը: Հի՞ն դարերուն գրականությունը. բայց Հին դարերը կվերջանան ճիշդ Հոն, ուր կսկսի այդ գրականու-թյունը. մինչև Ե դար Հայը գրականություն չունի, ունինք միայն անգիր բանաՀյուսություն: Ամբողջ գրաբար գրականությունը ծնունդ է միջին դարերու ու նոր դարերու:

Եթե ընդՀանուր պատմության Հին, միջին ու նոր դարերը պետք չէ աչքի առաջ ունենանք, այլ այնպե՛ս Համեմատաբար ավելի Հին ու ավելի նոր ժամանակներուն պատկանող գրական ստեղ-ծագործությունները կուզվի միայն իրարմե զատել, բաժանումը կըլլանա և՛ կամայական, և՛ մեքենական. և բնական կերպով մեջ կուգա Հարցը, թե ո՞ւր կվերջանա այդ նշանավոր «Հինը» և ո՞ւր կսկսի «Նորը» և ինչո՞ւ:

Բաժանումին կամայական չըլլալու Համար ամենքն ալ ավելի կամ պակաս չեշտված կերպով կզգան ու կըսեն, որ Հինի ու Նորի սաՀմանը գծողը բարբառներու տարբերություն մըն է. և որովՀետև արմատապես ու պայծառ գիտակցությամբ այդ երկուքի սաՀմանափակությունները չեն անջատեր իրարմե, ամեն Հատվածում և ամեն խմբում կըլլանա խառնակ:

Այսպես ալ «Նոր» ըսված մասը գրականության, որ «աշխարՀաբար» անճիշդ ու անշնորՀք անվան տակ միակ ու ամբողջական բան մը կըմբռնվի, մեր կենդանի ու Հնավանդ բարբառներուն գոյու-թյունը կմթագնե: Եվ այդ միևնույն աշխարՀաբարի տարբեր

կնետվին նաև մեր արդի նոր Հայերենով եղած ստեղծագործու-թյունները՝ բարբառական ու մեր արդի գրական լեզուները իրար խառնելով. մայրն ու աղջիկը իրարու հետ կշփոթվին ու նույն անձը կկարծվին:

Այս անճիշդ ու շփոթ ըմբռնումներուն գլխավոր պատճառն այն է, որ մինչև հիմա մեր գրական ստեղծագործություններուն վրա նայած են բանասերի աչքով, մասնագետի մասնական հե-տաքրքրությամբ: Քրքրեր են, սրբագրեր են հեղինակներու լե-զուն, տառասխալները, ճշդեր են այս ու այն նախադասության իմաստը, ստուգեր են թվականը, ժամանակը, և թե ո՞ր հատվածն է կասկածելի, ո՞րն է պակաս, ո՞րն է փոխված կամ ուրկե՞ է արտա-գրված: Եվ ատոնց նման շատ թանկագին գիտական հետազոտու-թյուններ, որոնք սակայն երկի մը ամբողջությունն ու էությունը աչքե կկորսնցնեն: Վարդին գույնն ու բույրը, տեսքն ու թուփը մեկդի թողած՝ անոր տերևները կփեթռտեն ու կդնեն խոշորա-ցույցին տակ. և անշուշտ որ խոշորացույցին տակ շատ հետաքրքիր բաներ կտեսնեն ու կգտնեն. միայն թե տեսածնին չըլլար ծաղիկ, ո՛չ ալ գրական ստեղծագործություն:

Քրքրելու ու փեթռտելու ատեն ալ հարցերուն կմոտենան կրոնական, պատմական ու գիտական կողմերեն, ո՛չ գեղարվես-տական, որովհետև գիտնական կամ կրոնավոր մարդիկ են: Բացա-ռիկ կերպով գեղարվեստական մերձեցումներու ատեն ալ գրեթե միշտ աշխատանքը տարված է հատվածորեն՝ այսինչ երկը, այսինչ հեղինակը կամ այսինչ գեղարվեստական երևույթը. որով մեր հայ բանահյուսությունը ո՛չ մեկ տեղ իբրև ամբողջություն մը չի ներ-կայանար ու չի դառնար իբրև կենդանի ուրույն գոյություն մը: Բանահյուսության պատմությունը կվերածվի գրքերու ու ձեռա-գիրներու փոշոտած դեզի մը, իրարմե անկախ, անկապ. ամեն մեկը իր համար:

Եվ այս տեսակի գրականության պատմություններուն մեջ շատ զգալի թուլություն մը կա գրաբար գրություններուն հանդեպ, որոնք կխրվին ու կշոյվին և շատ հաճախ իրենց արժանիքեն շատ ավելի բարձր: Ընդհակառակը, «աշխարհաբար» ըսվածը խորթ զավակ մըն է դեռ մինչև հիմա. ի միջի այլոց, կհանդուրժվի:

Այսինքն՝ արդեն բոլորովին հինցած և ժամանակեն ետ մնացած նախասիրութիւններ, որոնք ծնունդ են վանական հոգեբանութեան. և բնական կերպով կը ցուցադրեն շեշտված պակաս մը գեղարվեստական վերաբերումի ու գնահատանքի:

* * *

Բանահյուսութեան մեջ վերին բաժանումներու միակ առողջ հիմքը լեզուն է՝ իր ներքին բնական ենթաբաժանումներով:

Հայերենը ունեցեր է և ունի բազմաթիվ բարբառներ: Հայերենը ունեցեր է հին գրական լեզու մը՝ հիմնված հին պետական բարբառի մը վրա, որ հասեր է մինչև մեր օրերը: Հայերենը ունի այս վայրկյանիս նոր գրական երկու մշակված լեզու, տարբեր գրաբարեն ալ, բարբառներեն ալ, թեև ծնունդ են երկուքն ալ որոշ բարբառներու, ինչպես անխտիր բոլոր մշակված գրական լեզուները:

Այս երեքը հայերեն լեզվի իրարմե բոլորովին տարբեր ձևակերպումներն են, տարբեր իրենց կազմով, տեղով, դերով ու արժեքով:

Ասոր համար ալ հայ բանահյուսությունը բնական կերպով պետք է ունենա իր երեք բաժինները:

ա. Հայ բանահյուսության առաջին բաժինը կկազմեն այն բոլոր անգիր ու գրավոր ստեղծագործությունները, որոնք կատարված են գրաբար լեզվով և որ մեզի հայտնի ամենեն հին ձևն է հայերեն լեզվի:

Այս բաժնի ուսումնասիրություններու առեն պետք չէ միասին առնելին միջնադարյան բարբառական գրությունները իրենց ժամանակակից գրաբար գրություններուն հետ, երբ նույնիսկ միևնույն հեղինակի աշխատություններն են: Երբ ուսումնասիրել կուզենք առանձին հեղինակ մը, բնականաբար աչքի առաջ կունենանք անոր և՛ գրաբար, և՛ բարբառական գրությունները, նույնիսկ օտար լեզուներով իր ունեցած գրությունները՝ հեղինակին դեմքը ավելի լրիվ ըմբռնելու համար: Բայց երբ բանահյուսության մը ամբողջությունը կուզենք աչքի առաջ ունենալ և անոր առած զանազան

հոսանքները ուսումնասիրել, անհրաժեշտ կդառնա գրաբար չեղող երկերը մեկ անգամ ընդմիշտ գրաբարեն անջատել, որ տեսողութիւնը հստակի:

Նույնն է նաև երևույթը ժԹ դարու գրաբար և արդի նոր գրական լեզվով եղած գրութիւններու վերաբերմամբ. շատ մը հեղինակներ ունինք, որոնք միաժամանակ գրած են այդ երկու լեզուներով. անհատական ուսումնասիրության ատեն անխուսափելի է մեկեն մյուսին անցումը. ուղղութիւններու և հոսանքներու ընդհանուր պատկերը գծելու ատեն լավ է, որ խիստ անջատվին իրարմե հեղինակի մը գրաբար և ոչ-գրաբար գրութիւնները:

բ. Հայ բանահյուսության Երկրորդ բաժինը կկազմեն հին ու նոր բոլոր բարբառներով եղած ստեղծագործութիւնները, որոնք հայտնի են մեզի, այսինքն՝ անգիր կամ գրավոր այն բոլոր երկերը, որոնք ո՛չ գրաբար են, ո՛չ ալ մեր արդի գրական լեզվով:

Մեր բարբառական բանահյուսութիւնը ինչպես որ պետք է զատ պահվի մեր միջնադարյան ու նորդարյան գրաբարեն, այդպես ալ կտրուկ կերպով պետք է անջատվի մեր նոր գրական լեզուներով ստեղծագործված երկերեն: Սխալ մըն է ըմբռնումի մեր արդի ժողովրդական անգիր բանահյուսութիւնը մեր արդի գրականության կցելը. ինչպես և անճիշդ վերաբերում է Սայաթ-Նովան, Սունդուկյանը, Ալիշանը և Խաչատուր Աբովյանը մեր նոր գրական լեզվով գրող հեղինակներուն հետ միևնույն «աշխարհաբարի» տոպրակը լեցնելը: Ատով կաղքատացնենք մեր բարբառական մեծարժեք գրականութիւնը և գողցված փետուրներով զարդարած կըլլանք մեր նոր բանահյուսութիւնը, որ բոլորովին ավելորդ ու չփոթ վարմունք է. ամեն մեկուն ի՛ր իրավունքը, ի՛ր տեղն ու ի՛ր դերը:

Եվ մեր ամեն տեսակի բարբառներով եղած ստեղծագործութիւնները պետք է նկատենք իբրև մեկ ամբողջութիւն մը. իրավ է՝ լեզվական տեսակետեն բարբառները հաճախ շատ տարբեր են իրարմե, ոմանք շատ մոտիկ են գրաբարի, մյուսները ավելի մոտ են մեր արդի գրական լեզվին, ոմանք կշեղվին մեկեն ալ, մյուսեն ալ իրենց ուրույն ընթացքով: Բայց ամեն մեկ բարբառով եղած ստեղծագործութիւններր զատ-զատ ուսումնասիրելու ո՛չ կարիքը կա, ո՛չ ալ ընդհանրապես հնարավորութիւնը. բավարար նյութ

չկա, երբ ամէն մէկը առանձնացնել ուզենք. շատ անգամ բարբառ մը ունի իր որոշ առանձնահատուկ բանահյուսական գծերը: Ընդհանուր առմամբ թե՛ նյութերը, թե՛ մշակումը նմանակ են նույն սկզբունքներուն. նույնն է նաև ոգին և ստեղծագործելու առավելությունները ու տկարությունները: Շատ անգամ դյուր քերականական հարց է միայն եղած տարբերությունը: Ամեն պարագայի բանահյուսական ընդհանուր ուսումնասիրության մը մեջ բնավ անհրաժեշտություն չկա այդքան բարակ մաղելու:

գ. Հայ բանահյուսության երրորդ բաժինը կներկայացնեն մեր արդի երկու գրական լեզուներով այս վերջին դարու մը ընթացքին կատարված գրական բոլոր արտադրությունները, ըլլան գործնական գրություններ, գիտական գրվածքներ թե գեղարվեստական երկեր:

Մեր արդի երկու լեզուներով եղած գրությունները պետք է առնենք միասին նույն բաժնին մեջ, իբրև նույն ու նման երևույթներու երկու զուգահեռ հոսումները, որոնք միևնույն ժամանակի մեջ, միևնույն պայմաններեն են ծնունդ առած և նույն ու նման ալ գեր ու զարգացում ունին:

Այսպեսով՝ Հայ բանահյուսությունը կառնե երեք հիմնական բաժանում լեզվական հիմքի վրա. ա) գրաբար բանահյուսություն, բ) բարբառային բանահյուսություն և գ) բանահյուսություն արդի Հայերենով:

2. ԱՄԵՆ ՄԵԿՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Այս երեք բաժիններեն ամենեն երկար ճամբա կտրողը, որուն կատարած հնագույն աշխատանքներեն մենք հիմա մեր ձեռքը նյութեր ունինք, գրաբար բանահյուսությունն է: Սկիզբ է առած Հայ ժողովուրդի կազմավորման օրերեն ու կերթա գրեթե մինչև մեր օրերը, պաշտոնապես մինչև ԺԹ դարուն կեսերը:

Այս ընդարձակ տարածությունը ինքնին կբաժնվի իրարմե բոլորովին անջատ երեք ներքին մասերու, որոնք և կներկայացնեն գրաբար բանահյուսության երեք ուրույն հատվածները:

Մինչև Հայ գրերուն գյուտը միայն անգիր բանահյուսու-

թյունն է. հայության հեթանոսական դարերն են, բացի չորրորդ դարեն, որ թեև պաշտոնապես քրիստոնյա, բայց խորքին մեջ դեռ կես-հեթանոս դար մըն է: Գրաբարի առաջին հազարամյակը հեթանոս բանահյուսություն է և կներկայացնե հայ ստեղծագործության առաջին հոսումը:

Գրերու գյուտեն մինչև Թուրանական արշավներուն վերջը, մինչև Բյուզանդական կայսերության վերջնական կործանումը, այսինքն՝ մարդկային պատմության ամբողջ միջնադարը, Ե դարու սկիզբներեն մինչև ԺԵ դարուն կեսերը, կկազմե գրաբար լեզվի ու բանահյուսության երկրորդ հազարամյակը, որ ամբողջովին քրիստոնյա գրականություն է:

Քրիստոնեությունն էր, որ հայ գիրը բերավ իր պետքերուն համար և գործածեց իր պետքերուն համար. գիր գտնող և գործածողներն ալ եղած են հոգևորականները: Իշխող տներուն ու նախարարական վերին դասին համար գիրը բնավ պահանջ մը չէր. սուրն էր իշխողներուն պետք եղած միակ անհրաժեշտ գործիքը:

Գրիչը հոգևորական դասի զենքն էր, որ այդ ամբողջ հազարամյակի ընթացքին գործածած է իր վարդապետական, քարոզչական, վարչական ու եկեղեցական պետքերուն համար: Ոչ-կրոնական գրությունները և՛ քիչ են, և՛ երկրորդական, և՛ ամբողջովին թաթախված են քրիստոնեական ոգիով ու ըմբռնումներով: Այս քրիստոնյա հազարամյակի գրաբար լեզվով կատարած գրական աշխատանքներուն ամբողջությունը կկազմե հայ բանահյուսության երկրորդ հատվածը:

ԺԵ դարու սկիզբներեն մինչև ԺԷ դարուն սկիզբները երկու հարյուր տարի գրաբար գրականությունը անկումի ու մեռելության շրջան մը ունի. գրաբար լեզվով բան մը արտադրելը գրեթե բոլորովին կանգ կառնե. հոսանքը կցամքի: ԺԷ դարու առաջին քառորդեն կսկսին փորձեր գրաբարն ու գրաբար գրականությունը նորեն ոտքի հանելու: Եվ իրավ, իր կյանքի վերջին երկու դարերուն մեջ՝ մինչև ԺԹ դարուն կեսերը, գրաբար լեզուն կունենա անսպասելի ու հարուստ ծաղկում մը և ան ալ գլխավորապես հայրենիքեն դուրս՝ օտար հողերու վրա:

Օսմանյան կայսրության ծովեզրյա մասերը, հատկապես Պոլիս և Հալեպ այլ խոշորական քաղաքները, մասնավորապես՝ Հռոմ ու Վենետիկ, ինչպես և աշխարհքի ուրիշ անկյունները՝ Լեհաստան, Պարսկաստան, Հնդկաստան, Ռուսաստան ապաստան գտած Հայ Հոգեորականներ կսկսին մշակել գրաբարի գաղթական գրականություն մը եվրոպական ազգերու ու գրականություններու ազդեցության տակ:

Լեզուն ուրեմն նորեն գրաբար, հեղինակները ընդհանրապես նորեն Հոգեորական, բայց իրենց գրություններուն նյութերը, գրելու եղանակը և աշխատություններու ոգին այլևս բնավ քրիստոնեական չէ: Այդ խոշոր աշխատության ամենեն կարևոր ու արժեքավոր մասերը այլևս քրիստոնեության ծառայելու համար չէ: Հայության օգտին ու պետքին ծառայելու համար է, Հայ կյանքն ու գրականությունը հնար եղածին չափ հարստացնելու ու բարձրացնելու համար է, եվրոպական գիտության ու գրականության մոտենալու և հաղորդակից ըլլալու համար է: Գրաբարի վերջին երկու գաղթական դարերը գրաբար գրականության եվրոպականացման ու աշխարհականացման դարերն են, որ և կկազմեն Հայ բանահյուսության երրորդ հատվածը:

Հայ բանահյուսության գրաբար լեզվով եղած բաժինը ունի ուրեմն երեք խոշոր հատվածներ, երեք տարբեր հոսանքներ՝ գրաբար հեթանոս բանահյուսությունը, գրաբարի քրիստոնյա գրականությունը և գրաբարի աշխարհական գրականությունը:

* * *

Հայ բանահյուսության բարբառական բաժինը ունի երկու հոսանք: Նախ՝ ժողովրդական անգիր բանահյուսությունը, որ Հայության հնագույն դարերեն անընդհատ կհոսի ու կթավալի բազմաթիվ զուգընթաց թելերով մինչև հիմա. հին ու միջին դարերու իր ստեղծումները մեր ձեռքը հասած չեն. միայն միջին դարերուն վերջը մշակված անտունիները ունինք մեր ձեռքը և «Սասմա ծռերը»:

Բայց ունինք մեր ժողովուրդի շրթունքին այժմ գոյություն

ունեցող ասույթները, երգերը, վեպերը և ատոնց վրա է հիմնված գլխավորապես նաև հինի մասին մեր ծանոթությունն ու դատումները: Բայց գոյություն ունեցող նյութերու մասին ալ մեր գիտցածը շատ թերի է, քանի որ նյութերուն մեկ համեստ մասն է միայն գրի առնված և ան ալ շատ անխնամ կերպով:

Սակայն իր այդ պակասավոր, կտոր ու անխնամ վիճակին մեջն ալ բարբառական անգիր բանահյուսությունը կկազմե հայ ստեղծագործության հիմնական ու մեծարժեք մասը իր ուրույն կյանքով ու արվեստով ու քանի մը հոսումներով կներկայացնե հայ բանահյուսության չորրորդ հատվածը:

Նախորդեն բոլորովին անջատ հունով ու անջատ էությամբ ԺԹ դարեն սկիզբ կառնե գրավոր ու անհատական բարբառական գրականություն մը, որ քանի մը ձևառումներով կտևե մինչև ԺԹ դարուն կեսերը, մինչև մեր արդի երկու նոր լեզուներուն տիրող դառնալը. որ և կկազմե բարբառով եղած ստեղծումներուն անհատական տեսակները և կկազմե հայ բանահյուսության հինգերորդ հատվածը:

Մեր արդի նոր հայերենով եղած բաժինը հայ բանահյուսության իր ծագման առաջին օրեն սկիզբ է առած երկու հոսանքով և դար մըն է արդեն, որ կվազե իրարու զուգընթաց երկու հոսանքով, իրարու շատ նման, իրարու քույր ու մտերիմ, բայց իրարմե անջատ, ուրույն հուներով: Մեր արդի արևմտյան գրականությունը և մեր արդի արևելյան գրականությունը:

Հազիվ դար մըն է իրենց աշխարհ գալը, բայց արդեն տված են իրենց բարձր կարողություններուն ապացույցը. և իրավունք ունինք վստահությամբ սպասելու և՛ գործնական, և՛ գիտական, և՛ գեղարվեստական շատ ավելի բարձր ստեղծագործություն մոտիկ ու հեռու ապագաներուն մեջ: Մեր արդի գրականության այս երկու ճյուղերն են, որ կկազմեն հայ բանահյուսության վեցերորդ ու յոթներորդ հատվածները:

* * *

Այս կերպով հայ բանահյուսությունը իր ամբողջության մեջ կստանա երեք գլխավոր բաժիններ լեզվական հիմքի վրա, որոնք

Երեքը միասին կառաջացնեն յոթը տարբեր-տարբեր հատուածներ. երեք հատուած գրաբար լեզուով, երկու հատուած բարբառով եւ երկու հատուած ալ արդի նոր հայերէնով:

Ամէն հատուած առանձին գոյութիւն մըն է իր տարբեր տեսակի հեղինակներով, տարբեր հոգեբանութեամբ ու աշխարհայեացքով կամ տարբեր ժամանակով ու տարածութեամբ, տարբեր կեանքի պայմաններով ու ձգտումներով: Այս բոլոր հոսանքները ունին իրենց սեփական հունը ու իրենց սեփական ընթացքը՝ անջատ ու անկախ միւսներէն, ինչպէս եւ իրենց ճիւղերը:

Այս գետ հոսումով ու գետ էութեամբ հատուածները իրարու մաս, իրարու ծնունդ եւ իրարու շարունակութիւնը նկատելը կըլլայ նոյնքան բռնազբօսիկ, որքան անհատ հեղինակի մը զանազան ժամանակներու մէջ գրած իրարմէ տարբեր նպատակներով, տարբեր շունչով ու տրամադրութեամբ ու տարբեր նիւթերով գրութիւնները իրարու մաս եւ իրարու շարունակութիւն նկատելը:

Այս բոլոր հոսանքները իրենց բոլոր ներքին բաժանումներով, նոյնիսկ բոլոր հեղինակները իրենց բոլոր երկերով անշուշտ որ ունին իրարու հետ ներքին խոր կապեր եւ հաճախ ընդհանուր հատկանիշ գծեր, քանի որ նոյն ժողովուրդի հոգիին զանազան արտայայտութիւններն են. բայց այդ պատճառով բնաւ կարելի չէ, որ այդ բոլորը նաեւ արտաքուստ անպատճառ իրարու կապուած, իրարու մաս եւ իրարու շարունակութիւն ըլլան կամ նկատուին:

Հայ բանահիւսութեան յոթը հատուածները հայ ժողովուրդի ստեղծագործութեան յոթը առանձին ու իրարմէ անկախ հատորներն են. ամէն մէկ հատորը ինքն իրմով լրացած, իր ուրոյն նիւթով, ոճով ու եղանակով ու իրեն հատուկ զանազան հոսումներով: Բոլոր հատորներուն մէջն ալ հայ ժողովուրդի զգացումներն են, հայ մարդու մտածումները, հայու դատումն ու ճաշակը, բայց ժողովուրդի տարբեր-տարբեր տարիքներու մէջ կամ քաղաքական ու տնտեսական տարբեր պայմաններու տակ ապրող տարբեր մասերու կողմէ արտահայտած կամ տարբեր պէտքերու եւ ոգեւորութիւններու ճնշումին ու ներշնչումին տակ:

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԳՐԱԲԱՐ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ

ԳՐԱԲԱՐ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԻՆ ԱՆԳԻՐ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1. ՔՆԱՐԱԿԱՆ ՈՒ ՎԻՊԱԿԱՆ

Երբ մեր գրաբար լեզուն կենդանի բարբառ մըն էր Հայաստանի գեթ մեկ որոշ մասին վրա և կամաց-կամաց դառնալու վրա էր պետական լեզու և վերջն ալ արդեն տիրող պետական բարբառ մըն էր, ուներ անշուշտ իր բազմատեսակ քնարական ստեղծագործությունները ժողովրդի շրթունքին թե՛ գյուղական համեստ խրճիթներու մեջ և թե՛ իշխանական հարկերու տակ, ինչպես հատուկ է ամեն բարբառի և ամեն ժողովուրդի. և մանավանդ շատ ավելի շեշտված կերպով ժողովրդի մը կենսուրախ ու կենսունակ թարմ տարիներուն. իսկ գրաբարի հեթանոս հազարամյակը հայության պատանեկության ու երիտասարդության թարմ տարիներն էին:

Եվ հայը շատ է ստեղծած և շատ է սիրած իր այդ բանահյուսական ստեղծագործությունները, որոնք սերտորեն հյուսված էին իր առօրյա կյանքին, աշխատանքին, ուրախություններուն, վշտին ու հավատալիքներուն: Եվ սիրած է հեթանոսական դարերեն ալ ասդին, քրիստոնեության օրերուն, ինչպես կընդգծեն ժամանակի պատմիչները, և հակառակ քրիստոնյա հայերու խրատին, մեղադրանքին, նույնիսկ անեծք ու նզովքին:

Բայց այդքան տարածված ու սիրված քնարական ստեղծագործություններեն մեր ձեռքը ոչինչ չէ հասած: Անոր համար պետք է գրի առնված ըլլային. իսկ գրին տերը և գիր գիտցողը նույն քրիստոնյա հայերն էին, որ չէին ըներ:

Նախ և առաջ՝ այդ երգերը կապված էին միշտ եղանակներու և պարերու. որոնք հեթանոսութենե կուգային և սաստիկ անախորժ

էին քրիստոնյա ղեկավարներուն: Եվ երգերը իրենք շատ կենդանի գույներ ունեին, շատ բաց խոսքեր, հեթանոս ճաշակ ու հեթանոս ըմբռնումներ, որ կղխլչեր հոգևոր հայրերու պարկեշտության զգացումին. անվայելուչ էին:

Երկրորդ՝ այդ բոլոր երգերը՝ մեկ-երկու տողէ կազմված և անվերջ բացականչություններով ու դիմառնություններով խճողված, կցկտուր ու անոճ բանի մը տպավորությունը կընեին արդեն գրքերու ոճավոր ընթերցանության վարժված մեր հոգևորականներուն վրա: Այդ բոլորը շատ էր ռամիկ ու հասարակ իրենց համար, արդեն դարձեր էին գրքի ու մտքի ազնվականներ և վերեն կնայեին այդ ռամիկ ստեղծագործություններուն արհամարհանքով:

Եվ վերջապես ամենեն էականը. այդ բոլոր երգերուն մեջ գովված, կանչված ու ներկայացված բաները ա՛յս կյանքին կվերաբերեին, փնտրվածը աշխարհային կյանքն էր, աշխարհային ուրախություններ, կերգվեր կռիվը, արյունահեղությունը, գինին, կինը, սերն ու կարոտը: Իսկ քրիստոնեությունը եկած էր հանդերձյալ կյանքը քարոզելու, մարմինը մեռցնել կուզեր և Հայաստանը վերածել կուզեր համատարած վանքի մը, ուր միայն սուրբերը բնակեին, մինչև որ տերը վեր կանչեր իր երկնային վանքը, ինչպես շարունակ կկրկնեին քրիստոնյա հայրերը իրենց քարոզներուն ու գրություններուն մեջ:

Այսինքն՝ այդ երգերուն խորքը հեթանոսությունն էր նստած, որուն դեմ մաքառելու էր եկած քրիստոնեությունը: Հեթանոսական երգերով զբաղվիլը խորքին մեջ հեթանոսություն էր, պետք էր ոչնչացնել, պետք էր հավատացյալ ժողովուրդի հոգիեն արմատախիլ ընել ու մոռցնել տալ և ո՛չ թե գրի առնել ու պահել:

Այդպես ալ եղավ: Մեր քրիստոնյա պատմիչներու վիճաբանական տողերուն ու քննադատություններուն մեջ մնացած են քնարական երգերու մեկ-երկու տեսակներուն անունները, քանի մը անորոշ ակնարկություններ, հիշատակություն քանի մը նախապաշարումներու՝ գլխավորապես մեր աղանդավորներու մասին խոսելու ատեն: Ահա՛ ինչ որ հասեր է մեզի մեր հին անգիր քնարական բանաստեղծություններեն:

Քիչ մը տարբեր է վիճակը մեր հին անգիր վիպական բանաս-

ստեղծության, որովհետև ինքը վիպական ստեղծագործությունը տարբեր պայմաններու մեջ է:

Առաջին՝ քնարական երգին նյութը զգացում մը, ցանկություն մը, կարոտ մը, վիշտ մը կարճ արտահայտությունն է անմիջական, պարզ, անհատական և ատոր համար ալ ամեն մարդու ծանոթ, ամենուն սովորական եղող հոգեկան վիճակ մը. և ամեն մարդ ալ անգամ մը-երկու լսելեն ետքը և՛ դյուրին կսորվի, և՛ դյուրին միտք կպահե, և՛ դյուրին ալ կրնա կրկնել, և՛ կրկնելու ալ ախորժ ու հակում կունենա. որդեն պարն ու եղանակն ալ ավելի ևս մատչելի ու կրկնելի կդարձնեն ու տեսակ մը խմբական: Իսկ վիպական երկը զգացում մը կամ ներքին սովորական ապրումի մը պարզ ու ամբողջական արտահայտությունը չէ, այլ դեպքի մը, կատարված բանի մը պատմիլը, որ մտքերու անհամեմատ ավելի երկար հաջորդականություն, կապ ու ամբողջություն կպահանջե և իր հետ կբերե թե՛ հոգեկան և թե՛ արտաքին բազմատեսակ վիճակներու և եղելություններու պատկերացումներ: Շատ ավելի երկար տևություն ունի, շատ ավելի հարուստ արտահայտություն և շատ ավելի բաղադիր ըմբռնումներ. ամեն մարդ նույն չափով ու նույն դյուրությամբ յուրացնել չի կրնար, միտքը պահել չի կրնար. միտքը պահվածն ու գիտցածն ալ նույն վստահությամբ ու նույն գեղեցկությամբ ուրիշներուն պատմել չի կրնար: Շատ ավելի բարդ արվեստ մըն է, որ կփնտռե իր մասնավոր վարպետները: Այսինքն՝ այս տեսակի վեպ մը հորինելու ու մշակելու համար մարդս մասնավոր շնորհք ու ընդունակություն պետք է ունենա. Իսկ հորինածը գիտնալու և ուրիշներու առջև շնորհքով պատմել կարողանալու համար ալ նորեն պետք է որոշ աստիճանի տաղանդ ու հակում:

Երկրորդ՝ այդ վեպերուն նյութ դարձող պատմությունները պետք է ժողովուրդի մը ծագումին, զարգացումին, պահպանման ու բարձրացման հետ կապված դեպքեր ըլլան կամ համարվին. Հանրության ծանոթ եղելություն մը, քաջություն մը, հանրային արժեք ներկայացնող անձ մը, գործ մը, որ հանրության հետաքրքրությունը վառել կարողանան, որ ընդհանրությունը շահագրգռեն և սեր ու հարգանք, ինքնագոհություն ու հպարտություն

ներշնչեն բազմություններուն: Անգիր վեպերուն հիմնական նյութը ժողովուրդի մը սեփական մեծ մարդիկն են և անոնց կատարած գործերը: Հի՜ն օրերու մեծ մարդիկը, որոնք հետզհետե առասպելական ու դիցաբանական կերպարանք կառնեն, կդառնան դյուցազներ ու աստվածներ. և ավելի նո՛ր ժամանակներու մեծ ու կարևոր մարդիկը, որոնց դեմքն ու գործերը երևակայությունն ու փառաբանությունը ավելի ևս կգեղեցկացնե, կբարձրացնե ու կդնե հերոսներու պատվանդանին վրա:

Արդ՝ այս տեսակի հին ու նոր անձերը բնականաբար ժողովուրդի մը իշխաններն են, տերերը, ղեկավարները, զորավարները զանազան նախարարական տներեն և հատկապես թագավորական տան ցայտուն դեմքերը: Անգիր վիպասանության նյութը առնված է ժողովուրդի մը ազնվական դասի կյանքեն, ազնվականության պանծացումն է, ազնվական տներու առաջացման և անոնց գլխավոր դեմքերուն պատկերացումն ու գովաբանումը: Եվ ատոր համար ալ այդ վեպերը մասնավորապես ընահատված էին նախարարական ու թագավորական այն տներեն, որոնք ինքզինքնին այդ նախահայրերեն ուղիղ գծով իջնող շառավիղները կնկատեին: Կգնահատեին, կպաշտպանեին ու կշոյեին այդ վիպասանությունները հորինող ու տարածող տարօրինակ մարդիկը, որոնք գուսան կկոչվեին:

2. ԳՈՒՍԱՆ ԵՎ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Եվ իրավ ալ այդ գուսանները շատ սիրելի ու շատ բացառիկ մարդիկ են բոլոր ժողովուրդներու մեջ, այդպես ալ անշուշտ մեր հին հայ կյանքի իրականության մեջ:

Գիր չունեցող ժողովուրդի մը ծոցին մեջ և՛ ռամիկին համար, և՛ ազնվականի համար գուսանը իսկական մտավորական մըն է: Ան է, որ գիտե դարերու ընթացքին մշակված հին ու սրբազան պատմությունները իրենց աստվածներու, իրենց դյուցազներու, իրենց հերոսներու, ինչպես և իրենց ավելի նոր ու մեծ սիրված դեմքերու մասին:

Այդ բոլոր գիտության վրա հենված և իր երկար թափառում-

ներու ընթացքին շատ բան տեսած ու լսած՝ կյանքը Հասկցող իմաստուն մըն է անիկա, մարդոց վարմունքին տակն ու խորքը տեսնող մը: Տեսնող մըն է անիկա նաև քիչիկ մըն ալ ապագային մեջ, տեսանող մըն է, գուշակ մը, մարգարեական շունչով:

Իսկ դեմքեր գծելու, դեպքեր Հորինելու գործին նուրբ մասնագետ, ինչպես և դեպքերը զարդարելու, ծաղկեցնելու, սրտի զարնելու, զգացումները բարձրացնելու արվեստին վարպետը: Շնորհալի մարդ մը, որուն բացառիկ տաղանդը ամենքը կտեսնեն, կխոնարհին և Համոզված են, որ ան իրենց աստվածության ընտրյալն է, ինչպես և թագավորի ու իշխաններու գնահատելին, ինչպես որ ամբողջ ժողովուրդի սիրելին ու փնտրածը:

Իր գիրքը, իբրև Հարգված անձ և իբրև Հեղինակություն, կարելի է Համեմատել միայն բարձրադիր քուրմերու վիճակին Հետ, անշուշտ ավելի նվազ պաշտոնական և շատ ավելի բարձր Հմայքով: Մենք, որ Հիմա սովոր ենք վեպեր կարդալու գրքերու վրա կամ անոնց պատկերացումը տեսնելու բեմերու ու լաթե պատերու վրա, շատ դժվարությամբ կրնանք երևակայել այն խորին Հրճվանքն ու Հաճույքը, որ մարդիկ կստանային Հին դարերուն իրենց գուսաններու պատմած վեպերուն ականջ դնելով:

Գուսաներգություն մը լսելը ամեն խնճույքի, ամեն մեծ խրախճանքի մեկ անբաժան ու անՀրաժեշտ մասն էր: Երբ կերած ու խմած են մարդիկ, առատորեն ըսած ու լսած բարեմաղթություններ, կատակներ ու կենացներ, խնջույքին մասնակցողները քիչ մը ետ կքաշվին իրենց գաՀավորակներուն վրա, կընկողմանին գինիի լեցուն թասերուն և պտուղներով ծանրաբեռ սեղաններուն առջև: Եվ սեղանին մեծը կանչել կուտա գուսանը, որ շատ Հաճախ իրենց Հետ սեղանակից է արդեն, կխնդրե անկե, որ իրենց Համար բան մը պատմե կամ Հատկապես այսինչ բանը պատմե շատ անգամ ընդգծելով այսինչ կտորը, այսինչ տեղը:

Եվ գուսանը՝ ընդՀանրապես լեցուն տարիքով լուրջ դեմք մը իր ճերմակ Հագուստներուն մեջ, տերևե պսակ մը կդնե գլխուն, թելավոր նվագարանը կրծքին ու մորուքին սեղմած, կքաշվի սրաՀին խորքը, կկենա ոտքի. քիչ մը կամփոփվի, նվագարանի թելերուն վրա մեկ-երկու ձայնախաղ, Հանկարծ աչքերը կվառին ու կսկսի:

Բոլոր ունկնդիրները կքարանան իրենց դիրքերուն մեջ, Հոգիները կսլանան ուրիշ աշխարհ, ուրիշ դարեր և դեմքերը ալեկոծ են: Երբ սիրված կտորը կհանգի իր վերջին՝ արցունք կխաղա արևառ դեմքերու նայվածքներուն մեջ և կուրծքերը հպարտությամբ կբարձրանան:

Այս բոլորը պետք է կենդանի պահենք մեր երևակայության դեմ, եթե կուզենք գուսանական վեպերու իսկական դերն ու արժեքը լրիվ ըմբռնել: Հիմա մեզի համար գուսանական վեպը գեղարվեստական երկ մըն է միայն. կրնանք շատ հավնիլ ու սիրել, կրնանք հիանալ ու հափշտակվիլ գեղեցիկ հատվածներուն վրա, բայց ինչքան ալ բարձր ըլլա մեր գնահատանքը՝ ամեն ինչ ուղղված կըլլա միայն գեղարվեստական շնորհքին, գեղարվեստական նրբության, գեղարվեստական կենդանության ու գեղարվեստական խորքին: Մեր գիտնականներն ալ կրնան այդ պատմություններուն մեջ նշմարել որոշ պատմական հուշեր ու արձագանքներ և ատոնց վրա տեսություններ կառուցել: Աս է գուսանական վեպը հիմա մեզի համար:

Բայց ժամանակակիցներուն համար այդ վիպումները բանաստեղծական երկեր չէին: Այո՛, անոնք ալ գիտեն, որ գեղարվեստը բերած է իր հմայքներն ու վարպետությունները այդ պատմությունները ավելի գրավիչ ու ավելի գեղեցիկ դարձնելու համար և ավելի ցայտուն՝ մեծություններն ու քաջությունները, բայց այդ բոլորը երկրորդական բաներ են գուսաններուն դեմի ունկնդիրներուն համար: Կարևորը, էականը այդ պատմություններու իրականությունն է. այդ աստվածները, այդ դյուցազները, այդ ընտիր-ընտիր քաջերն ու հերոսները, ատոնք ամենքը իրականություններ են, ճշմարտություններ և ամենեն բարձր ճշմարտությունները. իր նախնիքներու և աստվածներու իսկական գործերն են, որ կպատմվին սրբությամբ ու հավատարմորեն:

Հին դարերու այդ ունկնդիրներուն համար գուսանական ամեն մեկ վեպ հատված մըն է, իրական ու ճշմարիտ կտոր մըն է իր ցեղի ու իր ժողովուրդի ապրած կյանքին: Եվ ամբողջ գուսանական վիպասանությունները, բոլորը միասին առած, ամբողջական պատմությունն է այդ ժողովուրդի անցյալին, որով հին սերունդները

իրենց դէմքով, իրենց գործերով, իրենց կյանքով ու խոսքով կկազմեն նոր սերունդներուն: Ամեն մեկ ունկնդրութիւն կենդանի դաս մըն է պատմութեան և հաճախ բազմաթիվ կրկնութիւններով խորապես յուրացված դաս մը:

Իր պատմական վիպասանութիւնները չունեցող ժողովուրդը դեռ անհաս ժողովուրդ մըն է, դեռ ազգային գիտակցութեան չեկած ռամիկ ժողովուրդ մըն է: Ռամիկ մարդն է, որ լուրջ հետաքրքրութիւն մը չունի իր հորմեն անդին եղած նախահայրերու մասին և կրնա արհամարհոտ անփութութեամբ խոսիլ անոնց մասին: Ազնվական մարդն է միայն, որ հպարտ է իր նախնիքով. և ինչքան երկար է իր նախնիքներուն շարանը, որ ինքը կճանչնա, այնքան ալ հին ու խոր է իր ազնվականութիւնը: Մարդ մը ազնվական դառնալու համար միայն հող ու իշխանութիւն ձեռք ձգած ըլլալը հերիք չէ, պետք է ունենա և պետք է ճանչնա իր նախնիքները: Այն աստիճան մեծ է այս պահանջը, որ նորելուկ ազնվականները ստիպված են սուտեն նախնիքներ հնարելու ազնվանալու համար. մյուս կողմեն ալ ամուսնական կապերով ջանք կթափեն գտնել շեղ գիծով մը ձեռք բերելու իրենց զավկին համար, ինչ որ չունեին շիտակ գիծով:

Ժողովուրդ մը հասուն ու գիտակից ժողովուրդ մը դառնալու համար պետք է ունենա իր հերոսները և իր հերոսներուն քաջագործութիւններն ու մեծագործութիւնները: Ինչքան շատ բան գիտնա իր անցյալեն, ինչքան լավ ու խոր ճանչնա իր հայրերն ու նախահայրերը, իր ազնվականներուն ծագումը, իր մեծ թագավորներուն գործերն ու արարքը, այնքան ալ խոր կըլլա իր ազգային գիտակցութիւնը, այնքան ու ժեղ կըլլա ժողովուրդի մը զանազան մասերն ու հատվածները իրար միացնող զոդվածքը, այնքան ալ ամուր կըլլա դարերն ու դարավոր ճիղերը իրար օղակող և կենդանի միութիւն մը ստեղծող կապը:

Եվ շատ խոշոր ու ձրի կմեղադրեն Խորենացին մեր ամբողջ ազնվականութիւնը, որ իբրև թե իր անցյալով բնավ չէ հետաքրքրված. իրեն՝ Խորենացիին հետաքրքրողը գրավոր ու քրիստոնեական ոգիով պատմութիւն մը ունենալն է քրիստոնեական նպատակներու համար: Հեթանոսութեան մշակած մեր անգիր ազ-

գային պատմությունը, այսինքն՝ գուսանական վիպասանությունը, որ ամենուն ծանոթ էր և մեր ազնվականներուն ու արքունիքին ամենեն առաջ, Խորենացին դիտմամբ կանտեսե ու չհասկընալու կուտա:

Բ. ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ՎԵՊԵՐՈՒՆ ԳՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԲԵՐԱԾ ՊԱՀԱՆՋԸ

Մինչև գրերու գյուտը ժողովուրդի մը միակ պատմական հարստությունը իր գուսանական վեպերն են, որոնք կավանդվին դարե դար ավելի ու ավելի կոկվելով, նոր հավելումներ ու մեկնություններ ստանալով և հետզհետե իրականին մոտիկ ճշմարտությենեն դեպի գեղարվեստական ճշմարտությունը բարձրանալով, դեմքերն ու դեպքերը խոշորացնելով:

Բնական պայմաններու մեջ գրերը գտնվելեն ետքը և գրերու գործածության ընդհանրացման զուգընթաց փորձեր կըլլան այդ անգիր պատմությունները գրի առնելու համար՝ հնար եղածին չափ լրիվ ու անփոփոխ շնորհալի պատմիչներու շրթունքեն: Ուրկե ետքը զանազան տարբերակներու և իրարմե շեղող կտորներու գոյությունը կհարկադրե գրի առնվածները խնամքով համեմատելու, իրարու հետ կապակցելու. իրարմով լրացնելու և վերջնական ամբողջական խմբագրություն մը մեջտեղ դնելու:

Այս վերջին աշխատանքը կկատարվի ընդհանրապես իշխանական հովանավորության տակ և մեծ բծախնդրությամբ: Ճիշդ նույն ձևով, ինչպես հիմա քրիստոնյա աշխարհը կվերաբերվի Սուրբ գրքի ամեն մեկ և-ին և ստորակետին, որովհետև այդ անգիր վեպերը հեթանոս ժողովուրդներու Սուրբ գիրքերն են, իբրև ժողովուրդի ազգային պատմությունը և իբրև իր դիցաբանական աստվածաբանությունը:

Աս է բնական ընթացքը անգիր վիպասանություններու գրականացման, երբ գրերու գյուտը տեղի կունենա քաղաքակրթական ու պետական այն շրջանին, ուր դեռ հիմնական փոփո-

խութիւններու. ենթարկված չէին այդ վեպերուն մէջ նկարագրված պետական ու կրոնական կարգերն ու հաստատութիւնները: Մեր դժբախտութիւնը հոն է, որ հայ գրերուն գիւտը զուգադիպած է հայ պետականութեան խորտակումի օրերուն և գրերու գիւտը բնոյթ ու գործածողներն ալ եղած են մեր հին կյանքին ու կրոնքին բոլորովին տարբեր նոր ու օտար կրոնքի մը պաշտոնյաները՝ քրիստոնյա հայերը: Եվ ասոր համեմատ ալ կատարված է մեր անգիր վիպասանութեան գրականացումը ճղակոտր ու աղճատված ձևով մը:

Քրիստոնեութիւնը եկած էր հեթանոսութիւնը ոչնչացնելու Հայաստանի մէջ. հեթանոսական ըմբռնումները, վարքն ու բարքը, ամեն ինչ ատելի էին քրիստոնյա հայերուն: Մասնավորապես ատելի էին հեթանոսութեան ղեկավար ու մտավորական դասերը, ինչպես էին քուրմերն ու գուսանները: Զվարճանքի ու արհամարհանքի առարկա էին անոնց բարձր, ստեղծածը և ամեն ինչ, որ կապված էր անոնց անունին:

Այս ատելութիւնը շատ ավելի սուր էր ամբողջ Դ դարու ընթացքին, երբ հին ու նոր կրոններու մաքառումը դեռ ուժեղ էր մեր հայրենի հողերուն վրա. դեռ շատերն էին միայն անունով, միայն պաշտոնապես քրիստոնյա և հոգիներուն մէջ դեռ հեթանոսութիւնը կապրեր: Դեռ շատ մը իշխանական տներու մէջ և արքունի պալատին մէջ բաց կամ ծածուկ հեթանոս սովորութիւններու սերն ու հակումը մեծ էր: Հեթանոս նախահայրերու գործերն ու վարմունքը, ինչպես և անոնց խոսքերն ու ըմբռնումները, ինչպես և անոնց երգերը, վեպերը, զրուցն ու հավատալիքները դեռ շատ բարձր կգնահատվեին: Եվ այս պատճառով ալ հոգևորականութիւնն ու արքունիքը, այսինքն՝ աշխարհական ու հոգևորական իշխանութիւնները, խորքին մէջ իրարու դեմ էին, իրար թշնամի, իրար կնախանձեին և իրար հակառակ կգործեին:

Պայմանները սակայն շատ կփոխվին Ե դարու առաջին քառորդին: Հայ անկախ պետականութեան խորտակումը կդարձներ հոգևորական դասը իրմեն բարձր եղող աշխարհական ուժեն և ժողովուրդի ղեկավարութիւնը կանցներ հոգևոր իշխանութեան ձեռքը:

Քրիստոնյա հոգևորականությունը հաղթանակած էր և հաստատված, դարձած էր նոր տեսակի հավաքական ազնվականություն մը, որ տեր էր ընդարձակ հողերու և իր բարոյական ազդեցությամբ ալ բարձր էր աշխարհիկ ազնվականութենեն, քանի որ կուռ և Հայաստանի բոլոր մասերը համող կազմակերպություն մըն էր մեկ վերին պետի մը հրամանին տակ:

Հինգերորդ դարու ուղիղ կեսին Հայ ժողովուրդը իր իշխաններու մեծամասնության հետ կերթար արդեն հոգևորականության բարձրացուցած խաչին ետևեն՝ իր նոր կրոնքը և իր ազգային գոյությունը պաշտպանելու համար պարսիկներուն դեմ. Հայության շահերը և քրիստոնեության շահերը կհյուսվեին իրար ու կնույնանային:

Այդ նույն Ե դարու առաջին կեսին բարձր Հայ հոգևորականության ջանքերով առաջացած էր երիտասարդ վարդապետներու նոր սերունդ մը շատ ավելի գիտակից և ուսման տեր, այլև բուն Հայ ժողովուրդի ծոցեն դուրս եկած Հայ հոգիով, որ կմաքառեր դուրսեն եկած օտար քրիստոնյա պաշտոնյաներու ապազգային ու հակահայ տրամադրություններուն դեմ: Այդ մաքառման պտուղը և շուտով անոր գլխավոր զենքը դարձավ Հայ տառերուն գյուտը, որ բերավ իր հետ նոր ոգևորություն Հայության և Հայհոգի երիտասարդ հոգևորականության:

Արագ թարգմանվելու վրա էին Սուրբ գիրքը և քրիստոնեական ամենեն արժեքավոր երկերը. թարգմանել՝ կնշանակե հայացնել: Եվ այդ ոգիով ալ ամբողջ եկեղեցական կարգերն ու արարողությունները Սահակ Պարթևի և իր հաջորդ հայրապետներու օրով իրենց վերջնական ու հայադրոշմ կազմակերպությունը առնելու վրա էին: Հայ եկեղեցին ներսով ու դուրսով և չեշտված կերպով Հայ կերպարանք կառներ և վերջնապես ինքնուրույն և ինքնիշխան կդառնար մեկ կողմեն պարսկական կռիվները վարելով. մյուս կողմեն ալ հետզհետե կտրվելով բյուզանդական քրիստոնեութենեն և՛ վարչապես, և՛ դավանաբանորեն:

Եթե նախորդ դարուն նշանաբանը Հայը քրիստոնյա դարձնելն էր, հինգերորդ դարուն նշանաբանը դարձեր էր քրիստոնեությունը Հայացնելը: Բոլոր ազնիվ ու ղեկավար անձերու ըսածին ու

բռածին մեջ մասնավոր կերպով կշեշտվեր հայությունը: Ինչ որ հայկական էր, կգնահատվեր, գրավչություն կստանար. նույնիսկ հեթանոսութենեն եկած բաները. կջանային միայն, որ անոնց վրայեն քերեն, սրբեն, ինչ որ անախորժ ու անմարսելի էր քրիստոնյա մտայնության համար:

Ինչպես որ ամբողջ հայ հեթանոս ժողովուրդը մկրտվեր էր քրիստոնյա, այդպես ալ պետք էր ամբողջ հայ հեթանոս անցյալը մկրտվեր քրիստոնյա: Այդ անցյալն ալ պետք է քրիստոնեական կնիք ստանար, պետք է առնվեր քրիստոնեության փեշերուն և հովանիին տակ, ինչպես որ հին հեթանոս տաճարները, տոները, սովորությունները առնված էին արդեն քրիստոնեության գիրկը, որ քրիստոնեությունը վերջնականապես հայանալ կարողանար:

Հայ պետականությունը և Գրիգոր Լուսավորչի հայրապետական տունն ալ նոր էր հանգած. բոլոր մտածող հոգիներու համար անցյալը կդառնար սիրելի ու երանելի: Հայրենասիրական զգացում մը և հին դարերու հայ հերոսներուն պաշտամունքը կարթներ: Անկախության կորուստը միշտ ալ բուռն հայրենասիրություն կծնի. հիվանդն է, որ առողջության կտենչա. առողջը պետք չունի շատ իր առողջության մասին մտածելու:

2. ԳՐԱՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԸ

Ինչպես ընդհանրապես ամեն գաղափար, այնպես ալ հայ անցյալը քրիստոնեության հետ հաշտեցնելու և գրի առնելու պահանջը կհասուննա ու կիրականանա աստիճանաբար:

Ամենեն առաջ հայ հոգևորականության սրտին ու շահին անհամեմատ ավելի մոտիկ էր բուն հայ քրիստոնեական եկեղեցիի հաստատման մասին հայերեն պատմություն մը ունենալը: Գրավոր երկ մը, ուր շեշտված ըլլար, թե հայ եկեղեցին հիմնողը որևէ հույն Գրիգոր մը չէր, այլ հայ Գրիգոր մը, բարձր նախարարական ծագումով Գրիգոր մը, թագավորական-պարթևական արյունե սուրբ Գրիգոր մը: Ասիկա արդյոք ճշմարտությու՞ն մըն է պատմական, թե՞ հոգևորականներու հետին թիվով հնարած ավանդություն մը՝ բանասերներուն կմնա ճշդելը: Բայց այն դարու հոգևորակա-

նութեան համար, որ կուզեր Հայ եկեղեցին հունական եկեղեցիէն զատ ու անկախ հաստատութիւն մը դարձնելու՝ իր ինքնուրոյն բարձր հոփվապետով, թագաւորական-պարթեւական սուրբ Գրիգոր մը չափազանց կարեւոր անհրաժեշտութիւն էր:

Այդպէս ալ անհրաժեշտ էր, որ ինքնուրոյն այդ Հայ եկեղեցիին հիմնադիրը բացառիկ դէմք մը ըլլա նաեւ անձնապէս, ըլլա աստծու ընտրյալը, երեւակայելի ու աներեւակայելի չարչարանքներու ենթարկված ու հաղթահարած, հրաշքներով սրբագործված և սուրբ կույսերու և նահատակներու ամբողջ շքախումբով մը շրջապատված: Հայ հոգեւորականութեան այս պահանջին ծնունդն է «Ագաթանգեղոս» անունով գիրքը: Ագաթանգեղոս հեղինակի անուն չէ, այլ գրքին անունը, որ հունարեն ավետաբերի իմաստը կուտա. այդ գիրքը Գրիգոր Լուսավորչի կյանքին, չարչարանքներուն և քարոզչութեան պատմութիւնն է, ուրեմն ըստ էութեան մեծ սուրբի մը կյանքը, «վարք սրբոց» մը, որ սակայն շատ նշանակալից կերպով իր ճակատին կկրե «Հայոց պատմութիւն» վերտառութիւնը և մեր հաջորդ պատմիչներեն ալ կնկատվի իբրև Հայ առաջին հիմնական պատմական երկը, որուն հեղինակ կհռչակվի Տրդատ թագավորին դպիրը Ագաթանգեղոս անունով, որ իր գիրքը գրած է իբրև թե Տրդատի հրամանով, Դ դարուն սկիզբը հունարեն լեզվով:

«Ագաթանգեղոս» մատյանը հորինված է դար մը ավելի ուշ, հավանորեն գրերու գյուտեն անմիջապես ետքը, Սուրբ գրքի թարգմանութեան աշխատանքներեն ոչ շատ հեռու, հորինված է անշուշտ Հայ լեզվով և Հայ բարձր հոգեւորականի մը ձեռքով՝ ըստ իր պաշտոնակից եղբայրներու հավատքին և ըստ չորրորդ դարու ընթացքին քրիստոնեական շրջանակին մեջ հետզհետե ծագում առած և ընդհանրացած ավանդութիւններուն: Այդ տեսակ բանավոր կրոնական ավանդութիւններ շատ կային և՛ Գրիգոր Լուսավորչի, և՛ անկե առաջ Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալներու, կույսերու նահատակութեան, Սուքիասյան նահատակներու, Եդեսիայի Աբգար թագավորի և նման ուրիշ «սուրբ» անուններու շուրջ:

Այս Հայ կամ հայացած սուրբերու վրա պատմվող ավանդու-

թիւններին աւելի կարեւորները Դ դարու ընթացքին հաւանօրէն գրի առնուած կային ասորերէն կամ հունարէն լեզուներով քրիստոնեայ պաշտոնեաներու պէտքին համար: Եվ անկարելի չէ, որ հինգերորդ դարու մէջ «Ագաթանգեղոս» մատյանը հորինողը այդ կարգի գրութիւն մըն ալ ունեցած ըլլայ իր ձեռքը սուրբ Գրիգորի մասին՝ օգտվելով անկէ ազատ կամ բառացի թարգմանութեամբ: Կրնայ պատահիլ նույնիսկ, որ ան օգտուած է հունարէն գրութեան մը, որ Տրդատ թագաւորը գրել էր տուած իր գահին՝ անշուշտ ո՛չ քրիստոնէական եկեղեցին բարձրացնելու համար, այլ իր անձը, իր քաղաքական մեծագործութիւններն ու իր քաջութիւնը գովաբանելու համար. եւ այդ գրութիւնը պէտք է ունենար հեթանոս ոգի ու շունչ՝ չնայելով Տրդատի քրիստոնեայ դարձած ըլլալուն եւ Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը պարտադրած ըլլալուն, մեր կրօնափոխութիւնը հարկադրողը այդ օրերու հռոմէական քաղաքականութիւնն էր: «Ագաթանգեղոս» գիրքը կազմող ջերմեռանդ ու հաւատացեալ հոգեւորականը անշուշտ իր պարտականութիւնը պիտի սեպէ ջնջել այդ հեթանոս ոգին, Տրդատին տալ երկրորդական ու աւելի նուաստ դեր մը, նույնիսկ խաղ դարձնել՝ անոր տեղը գնելու համար Գրիգոր Լուսաւորչի կերպարանքը եւ վարդապետութիւնը: Շատ աւելի հաւանական է սակայն, որ «Ագաթանգեղոսի» հեղինակը Տրդատի մասին իր գրքին մէջ եղած մեկ քանի վիպական կտորները առած ըլլայ պարզապէս անգիր վիպասանութենէ մը, ճիշդ ինչպէս Փաւստոսն է ըրած Տրդատի հաջորդ թագաւորներու մասին խօսելու ատեն անհամեմատ աւելի ընդարձակ չափերով:

«Հայոց պատմութիւն», այսինքն՝ քրիստոնեայ հայութեան այս ամենէն կարեւոր առաջին գիրքը ստեղծելէն ետքը պիտի դար պահանջը ատոր շարունակութեան: Պէտք էր գրի առնել Գրիգոր Լուսաւորչի հաջորդ կաթողիկոսներուն սուրբ վարքն ու հոգեւորական մեծ գործերը եւ վեր հանել հատկապէս Լուսաւորչի տունեն ու սերունդեն եղող հայրապետներուն՝ թագաւորական տունեն ցած չըլլալու տեսակէտը՝ արիւնով ալ, սրբութեամբ ալ, բարոյականով ալ, մեծագործութիւններով ալ. ջանք կընեն ցույց տալու ոլորուն բացատրութիւններով, որ վերջին ներկայացուցիչները

Գրիգորի հայրապետական տան՝ ուղղակի հայ արքայական սերունդ են՝ թագաւորի աղջկան զաւակներ են:

Եվ երբ Սահակ Պարթեւի մահով 438 թվին կընդհատուէր Լուսաւորչի հայրապետական տունը, հայ հոգեւորականներէն շատ-շատերուն հոգիին մէջ կշեշտուէր թէ՛ գնահատանքը, թէ՛ հիացումը մեր առաջին հայրապետներու անձին ու գործին հանդէպ. եւ օտար քրիստոնյա բարձր հայրերու կյանքն ու գրութիւնները թարգմանելով զբաղված իրենց այդ օրերուն՝ բնական կերպով սաւառնէր պիտի օդին մէջ նաեւ մեր մեծ հայրապետներու կյանքն ու գործերն ալ գրաւոր կերպով հավերժացնելու գաղափարը:

Սակայն ամբողջ դարու մը հայ հոգեւորական պետերու պատմութիւնը գրել առանց հայ թագաւորները եւ ժամանակի աշխարհիկ դեպքերն ու պայմանները հիշատակելու՝ կարելի բան չէր: Մանաւանդ որ սուրբ Գրիգորի տան հետ կընդհատուէր նաեւ հայ Արշակունի թագաւորական տունը եւ ամենուն համար ալ ծանր էր հայ պետական անկախութեան կորուստը. հիմա պարսիկ իշխանութեան տակ ճզմված՝ աշխարհական թե հոգեւորական մեծ հուզումով կհիշեին ամենքը իրենց թագաւորներուն ու մեծ զորավարներուն դիմադրութիւնն ու կռիվները այդ միեւնույն պարսիկներուն դեմ:

Այն գրչի տեր հոգեւորականը, որ բան մը պատմել ուզեր այդ դեռ նոր անցած, բայց արդեն կարոտով փնտրվող ժամանակներու մասին, պետք է գրեր թէ՛ հոգեւոր եւ թէ՛ աշխարհիկ պատմութիւնները այդ օրերու: Պատմական այդպիսի փորձ մը ընել ուզողը ուրկէ՞ պիտի քաղեր սակայն իր նյութերը:

Իր աշխատանքի հոգեւորական մասի համար կային աւանդութիւններ ու զրույցներ՝ բանաւոր ու գրաւոր, հունարեն եւ ասորերեն. ատոնք եկեղեցական շրջանակներուն մէջ ընդունված ու վավերացած էին արդեն. իսկ ավելի մոտիկ ժամանակներու համար կային իր ու իր եղբայրակիցներու անձնական հիշողութիւններն ու տեղեկութիւնները, որոնք հաճախ կլսվեին եւ՛ եկեղեցական բեմեն, եւ՛ մասնավոր խոսակցութիւններու ատեն: Հոգեւորական մասի պատմական նյութը ըստ էութեան կար արդեն մշակված եւ հոգեւորականութիւնն էր մշակողը. եւ բոլորովին ագա-

թանգեղոյան ոճով ու ոգիով՝ Հրաշքներ, ճառեր, պանծացում սրբութեան ու կուսութեան և գերադասում Հոգևոր իշխանութեան և ընդհակառակը, կարելիին չափ սևցնելով բարոյապէս աշխարհիկ իշխանութեան դէմքերը:

Այս վերջին կէտը յատկապէս ապացոյցն է, որ այդ բոլորը գրի է առնուած Հայ Թագաւորութեան անկումէն ետքը: Թագաւոր-ներու ապրած և իշխանութեան տէր եղած միջոցին ո՞ր Հոգևորա-կանը պիտի Հանդգնէր այդ տեսակ ցած ու զզուելի բաներ գրի առնել և ամէն տեսակի կեղտոտութիւններ քսել Թագաւորական տան անդամներու երեսին անդուռն բերանով: Խուցերու մէջ ու ականջէ ականջ այդ բոլորը փսփսալը, այո՛, շատ բնական էր, քանի որ արքունիքը ատուած մրցակից մըն էր Հոգևորական տիրապետու-թեան: Միայն արքունիքի ու Թագաւորներու չքանալէն ետքը ամէն ըսած ու լսած բան կարելի էր գրի առնել, երբ մանաւանդ մարդս կհաւատար իր ըսածին և իր ըսածն ալ ձեռնտու է իր կողմի տեսակէ-տին: Նոյնիսկ չեն քաշուիր այդ միջոցին Հայտարարելու, որ Հայ Թագաւորական տան խորտակումը արդիւնք էր սուրբ մարդոց խօսքը լսած չըլլալուն և զայրացած սուրբերու անէծքին:

Իսկ իր աշխատանքի աշխարհիկ մասին նիւթերը ուրկէ՞ պի-տի քաղէր Հոգևորականը իր պատմութիւնը շարադրելու Համար. բանաւոր մշակուած ու փոխերացուած ոչինչ չկար և ըլլի, թերատ ու անստոյգ կտորտանքով դարու մը պատմութիւն չի շարադրուիր, իսկ գրաւոր նոյնպէս ոչինչ չկար. գիրն ու գիրքը նոր ձեռք բերուած գլուխներ էին Հայուն Համար և այդ գլուխն էր, որ կըրդէր Հիմա Հայուն Հայ պատմութիւն մը գրի առնելու:

Մեր աշխարհի, մեր Հնաւոր և մօտիկ անցեալի, մեր Թագա-ւորներու ու մեր Հանրային գործերու մասին կար միայն մէկ աղ-բիւր մը, բացարձակապէս միակ աղբիւրը: Եւ ի՞նչ աղբիւր, ինչպէ՛ս առատ, ի՞նչ կենդանի ու Հարազատ, ի՞նչ գրաւիչ ման-րամասնութիւններով. և այդ միակ ու Հորդ աղբիւրը դուսանական անգիր վէպերն էին, դուսաններու պատմած ու մշակած Հայ դէմ-քերու և Հայ գործերու պատմութիւնը:

* * *

Ինչքան ատեն որ Հայ Թագաւորներ կային ու կար Հայ արքունի պալատ, կար Հայ պետական կյանք ու պետական Հուզում, կռիվ ու ձեռնարկներ, կար նաև միշտ պալատական վիպասանը, որ կՀնչեցներ արքունի տաճարներու բարձր կամարներուն տակ ինչպես Հնադարյան Հայ դյուցազներու ու Թագաւորներու գործերն ու խոսքերը, այնպես ալ տիրող Թագաւորական տան ներկա ու նախորդ Հայր ու պապ Թագաւորներու կյանքը, դեմքն ու գործունեությունը, անոնց փառքն ու գովքը, նաև գործն ու գովքը իրենց Հավատարիմ ծառաներուն, մտերիմներուն, քաջ ու արի զորավարներուն, իրենց կյանքի, գործի ու զենքի ընկերներուն:

Հայ Թագաւորներու չքացումը և անկախ պետականության կորուստը վերջ կդներ նոր անգիր վեպերու ստեղծագործության. և նյութը կցամքեր և պաՀանջողն ու պաշտպանողը չկար: Արդեն Դ. դարուն վերջերին Արշակունի գաՀի կիսումով պետությունը կանՀքանար. Հին կենցաղին Հետ կխոնարՀեր նաև Հայ գուսանական վեպին նոր ստեղծագործությունները: Բայց եթե նոր նյութ, նոր դեմքեր, նոր ստեղծագործություն ու նոր վեպեր չկան գուսաններու շրթունքին՝ արդեն եղած Հին ստեղծագործությունները կան միշտ ու կմնան և անկախության կորուստովը ամենուն Համար կդառնան ավելի Թանկ ու գրավիչ. դեռ նոր կորսված փառքն ու վեՀությունն է, որ կպատմեն այդ Հուզիչ ու աշխույժ վեպերը՝ և՛ ցավ, և՛ Հպարտություն ներշնչելով ունկնդիրներուն:

Հինգերորդ դարուն, գուցե և վեցերորդ դարու ընԹացքին դեռ մեծ էր Հայ գուսաններու Թիվն ալ, դերն ալ, արժեքն ալ, ազդեցությունն ալ Հայ Հոգիներուն վրա: Այդ Հին դյուցազնական ու վերջին Հերոսական վեպերը կերգվին ամեն տեղ, գուսաններուն ձայնը կՀնչեր քիչ-շատ ամեն Հավաքույթներու մեջ, ըլլա ազնվական, ըլլա ռամիկ: Ըստ երևույթին արաբական դարերուն է, որ Հետզհետե կԹուլանա գուսաններուն ձայնը, մինչև որ Թուրանական Հեղեղին տակ բոլորովին կլռանա:

Այդ վեպերու Հմայքեն ազատ չէր նաև Հինգերորդ դարու Հայ Հոգևորականությունը և Հատկապես Հայ ծագումով և Հայ Հոգիով մասը այդ Հոգևորականության, որ կվարեր կյանքն ու

միտքը Հայութեան: Անոնք ալ ի պաշտօնէ և ըստ քրիստոնէական տեսակէտներու մեծ արհամարհանք կցուցաբերէին հեթանոսութեանն եկող և քրիստոնէութեան ծնունդը չեղող անգիր երգերուն ու վէպերուն հանդէպ, որոնց ստեղծողը և տարածողը գուսանները էին: Բայց այս ցուցադիր արհամարհանքը հարցի տեսական կողմն էր. գործնականին մէջ հոգևոր հայրերն ալ սիրով կլսէին այդ հին ու նոր վէպերը, որոնց մէջ շատ խոր, գեղեցիկ ու բարձր կտորներ կային՝ հայ հոգին փրթած: Հայ էին վերջապէս այդ մարդիկը և իրենց մանուկ ու պատանի օրերուն գոնէ լսած, ծծած ու ոգևորված էին այդ վէպերով:

Քրիստոնէութիւնն ու հայութիւնը ձուլել ուզող մեր հոգևոր մտաւորականները ո՛չ միայն լսած ու ծանօթ էին այդ անգիր վէպերուն, այլև ամբողջ կտորներով ու հատուածներով հաճախ գոց գիտէին: Ահա՛ այդ տեսակի հոգևորական մըն էր, որ խօսքով կարհամարհէր անգիր երգերն ու վէպերը, բայց ծայրէ ծայր գոց գիտէր այդ վիպասանութիւնները իր աշխարհական տարիներէն, այսինքն՝ գործնականապէս գուսան մըն ալ ինքն էր իր գիտցածով, իր ճաշակով, իր ներքին հակումներով ու բանահիւսական համակրանքներով, որ ուզեց այդ բոլորը գրի առնել, միացնել իր հոգևոր եղբայրներու մշակած, հայ հայրապետներու մասին եղող նիւթերուն և առաջացնել ամբողջական հայոց պատմութիւն մը: Այդ մարդը մեր գրականութեան պատմութեան մէջ կկրէ Փաւստոս Բուզանդ անունը:

3. ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ՄԵԾ ԴԵՐԸ

Հինգերորդ դարուն վերջերը գրող պատմիչ Ղազար Փարպեցին հոգևորական մըն է, պատմութիւն ըսելով կհասկընա գրված պատմութիւնը և ան ալ քրիստոնեայ հօր մը ձեռքով գրված պատմութիւնը մաքուր քրիստոնէական ոգիով. ատոր համեմատ ալ «Ագաթանգեղոս» գիրքը կանխանէ առաջին «Հայոց պատմութիւն» և Ագաթանգեղոսն ալ հեղինակի անունը համարելով մեծ գովասանքով կխօսի անոր մասին: Երկրորդ «Հայոց պատմութիւն» կանխանէ Փաւստոս Բուզանդի մեր ձեռքը հասած վերջին մասերը, ուր կպատմվի Գրիգոր Լուսաւորչի հաջորդներուն

ժամանակի պատմութիւնը, և կխօսի Փաւստոսի մասին շատ վերապահ, գրեթե արհամարհոտ վերաբերումով, ինչպես իրմեն ետքը եկող մյուս հոգևորական պատմիչները. ամենքն ալ խնկույն կզգան, որ Բուզանդի գիրքը քրիստոնյա հոգիի ծնունդ չէ իր շատ ու շատ կտորներով: Իսկ երրորդ «Հայոց պատմութիւն» կանվանե Ղազարը իր շարադրածը:

Արդ՝ իրողութիւնն այն է, որ «Ագաթանգեղոս» կոչվող գիրքը Հայոց պատմութիւն չէ, այլ վկայաբանութիւն մը և քրիստոնեական վարդապետութիւն: Գրավոր Հայոց պատմութիւն մը մեջտեղ դնելու խիղական առաջին փորձ ընողը Փավստոս Բուզանդն է: Այսինքն՝ այդ անունով մեզի հասած գրքին հեղինակը: Գիրքը կխստ է. կկոչվի «Պատմութիւն Հայոց», բայց և «Բուզանդարան», որ շատ տարօրինակ արտահայտութիւն մըն է. ինչպես բուն հեղինակին անունը հաստատ չգիտենք:

Հայ հոգևորական մըն է հեղինակը, որ գրած է իր գիրքը անշուշտ «Ագաթանգեղոսեն» ետքը, հավանորեն հինգերորդ դարու կեսերուն: Կարելի է ենթադրել, որուն ուժ կուտան իր Գ դպրութեան վերջը տեսակ մը գրքի լուսանցքին վրա ավելցված քանի մը խառնակ տողերը, որ մեր առաջին պատմագիրը կրոնական մասին համար բացի բանավոր հոգևոր զրույցներե՝ օգտված է նաև հոգևորական գրավոր աղբյուրե մը՝ գրված Դ դարուն վերջերը հունարեն լեզվով. երևի հոգևոր ժամանակագրութեան նման բան մը, որուն հեղինակին անունը կարծես թե եղած է Փավստոս Բուզանդ կամ Բյուզանդացի:

Կարելի է մտածել, որ մեր պատմագիրը իր սեփական անունը չէ գրած իր գրութեանը վրա՝ իր գրածը նկատելով պարզ հյուսվածք մը՝ քաղված կրոնական ամենուն հայտնի ավանդութիւններե, հոգևոր գրութենե մը և գուսանական վեպերե, իրար լրացնող ամբողջութիւն մը կազմելու ջանքով: Իր վրա նայեր է իբրև հավաքողի մը, մեկտեղ բերողի մը վրա. արդեն պարզհոգի ու համակնութիւն չունեցող մարդ մըն է ինքը, անանուն գուսանի մը հոգեբանութեամբ: Գրքին վրա ուրեմն անուն չէ եղած, կամ գուցե առաջին դպրութիւններու կորստին հետ կորսվեր է և անունը, բայց գրքին մեջ տեղ մը հիշատակարանի պես բան մը կա, ուր կհիշատակվի

Փավստոս Բուզանդ մը իբրև ժամանակագիր և ամբողջ գրվածքը մնացեր է անոր անունով:

Կրոնական մասերուն համար հունարեն գրված Փավստոս Բուզանդի մը օգտված կամ թարգմանած ըլլալու վարկածը կդյուրացնե նաև այն հարցին պատասխանը, թե ինչո՞ւ համար իր պատմությունը կանգ կառնե Դ դարու ութսունական թվերուն վրա և չի հասնիր մինչև Ե դարուն կեսը կամ, Խորենացիին պես, մինչև Հայ թագավորության անկումը և Գրիգոր Լուսավորչի տան ընդհատումը: Թեև այդ ինչուին կարելի է պատասխանել նաև անով, որ իր գիտցած դասական վեպերը ութսունական թվերեն անդին չէին անցներ:

* * *

Մեր պատմագիրեն առաջ հունարեն գրող Փավստոս Բուզանդ մը եղե՞ր է, թե՞ ոչ. ի՞նչ անուն է ատիկա, ուրկե՞ կուգա, հեղինակը ի՞նքն է գրեր այդ անունը իր գրքին մեջ կամ իր գրքին վրա, թե՞ ուրիշները: Ասոնք բանասիրական հետաքրքիր հանելուկներ են, որ ես բնականաբար կթողնեմ բանասերներու վճռին ու եզրակացության. բայց ինչ եզրակացության ալ որ գալու ըլլան, ո՛չ մեկ կարևորություն չունի երկի արժեքին ու գնահատմանը տեսակետեն. երկը մեջտեղն է, որ կխոսի և՛ իր համար, և՛ իր հեղինակի:

Մեր առաջին «Հայոց պատմությունը» գրողը տարիքն առած հոգևորական մըն է. շատ բարեմիտ, պարզասիրտ, բոլորովին համոզված է իր շուրջը իր քրիստոնյա եղբայրակիցներուն ըսածին ու պատմածին, խորապես հափշտակված է մեր հայրապետներու սրբակրոն կենցաղով, անոնց կատարած հրաշքներով ու սքանչելիքներով և կատարյալ լրջությամբ ինքն ալ կկրկնե նախորդ հոգևորական սերունդի գործած բամբասանքներն ու բարոյական ազդեցությունները ժամանակակից թագավորներու մասին: Այս բոլոր կեղծ ու ցած կամ հրաշապատում կուսակցական բաները, որ իրենց ժամանակին պրոպականդայի մեծ արժեք ունեին, հիմա մեր արդի պատմագիտության սեղանին վրա անարժան ու անարժեք գրություններ են: Եվ Փավստոսի մեր ձեռքը հասած գրքին երկու երրորդը այս տեսակի ապրանք է. եթե այդ բոլոր երկար էջերը սեղ-

մենք ու քամենք՝ կարելի է որ մեջեն քանի մը կաթիլ պիտանի իրականութիւն հանել կարողանանք. իր ամենեն մեծ արժէքը այդ դարերու հոգեւորական մտայնութեան ու մտավոր մակարդակի հարազատ պատկերացումն է:

Եթե միայն այդ կրոնական մասը ըլլար իր կազմածն ու խմբագրածը՝ մեր հեղինակը կդառնար եկեղեցական պատմիչ մը, «Ագաթանգեղոսը» շարունակող և շատ քիչ հետաքրքիր դեմք մը մեր պատմության համար: Բայց իր գրած միւս մասը՝ գրքին միւս մեկ երրորդը, որ ան առեր է կամ քաղեր է գուսանական վեպերեն, կդարձնե իր աշխատութիւնը ո՛չ միայն իսկապես «Հայոց պատմութիւն» և առաջին «Հայոց պատմութիւն», այլ բոլորովին բացառիկ արժեքով ու հրապույրով երկ մը: Ինչքան ալ որ իրենց կուռ ամբողջութիւնը տուժած ըլլան այդ քաղվածքները և անշուշտ տեղ-տեղ կրած ըլլան իրենց վրա քրիստոնեական տեսակետներուն հարմարեցում, բայց և այնպես կպահեն միշտ գուսանական վեպի ոգին և կենդանի պատկերացումը:

Մեծ է այդ քաղվածքներուն արժեքը և՛ պատմական, և՛ գրական տեսակետեն: Մեկ մարդու մը, մեկ հոգեւորականի մը զիտողութիւններն ու դատողութիւնները չեն ատոնք, ոչ ալ ընդհանրապես քրիստոնեական հոգեբանութեամբ դիտված, բացատրված ու մարմնե զրկված պատմութիւններ, այլ թագավորներու համար, պալատներու մեջ երգվելու համար հյուսված են ատոնք, հայ պետական դեմքերու և հայ քաղաքական դեպքերու գեղեցիկ ու խորազգաց պատկերացումով, ուր կնկարագրվին հարազատորեն տիրող դասակարգին կյանքը, պայմանները, փոխադարձ հարաբերութիւններն ու ըմբռնումները: Իր նմանը չունի այդ գիրքը մեր ամբողջ հայ պատմագրութեան մեջ՝ իբրև քաղաքակրթական վիճակի և կենդանի կրքերու իրական ու առույգ նկարագրութիւն. մեր պատմագրութեան մեջ բացառիկ հատոր մըն է:

Եվ զուտ գրական տեսակետեն ալ Փավստոս Բուզանդի այդ քաղվածքները կներկայացնեն գուսանական վիպասանութեան համեմատաբար ամենեն ամբողջական նմուշները, ամենեն երկար կտորները, որոնք իրարու տեսակ մը շարունակութիւնը կկազմեն. և համեմատաբար քիչ աղարտված կտորներ. ամբողջ էջերով կար-

ձև բռնած է ավանդումը: Առանց Փավստոս Բուզանդի այդ ժամանակին հատվածներուն՝ չափազանց կարճառոտ Հին Հայ վիպական գեղարվեստի մասին մեր ունեցած ծանոթությունն ու ըմբռնումը ընդհանրապես, իսկ հեթանոս-քրիստոնյա Դ դարու մեր գուսանական ստեղծագործություններու մասին բնավ ո՛չ մեկ գաղափար չէինք ունենար:

* * *

Այս բոլոր բաները կվերաբերին Փավստոս Բուզանդի այն կիսատ գրքին, որ հիմա ունինք մեր ձեռքը: Բայց Փավստոս Բուզանդի գործն ու արժեքը ավելի և բարձր է եղած, քան ինչ որ տեսնել կրնանք այդ կիսատ գրքի էջերուն մեջեն: Մեր բարեհոգի և գուսանասեր պատմագիրը իրականին մեջ շատ ավելի լայն նայվածք և իբրև պատմահայր մը արժանի վերաբերում է ունեցած մեր պատմության հանդեպ: Ան ուզեր է մեջտեղ դնել լրիվ «Հայոց պատմություն» մը, ան գրի է առեր մեր պատմությունը բուն սկիզբեն մինչև իր օրերը:

Իր հիմնական կիսատ գիրքը կսկսի երրորդ դպրությամբ, որուն առաջին՝ առաջաբանի նման գլխուն մեջ շատ հստակ կերպով կըսե, թե մեր պատմությունը երեք մաս ունի՝ առաջին պատմություն, միջին պատմություն և վերջին պատմություն: Փավստոսի անունով մեր ձեռքը հասածը միայն վերջին պատմությունն է, այսինքն՝ Գրիգոր Լուսավորչեն ասդին: Միջին պատմությունը արդեն գրված է, կըսե, ուրիշներու կողմե. աչքի առաջ ունի քրիստոնեական այն ավանդությունները, որոնք հունարեն ու ասորերեն լեզուներով կային գրի առնված, վերջն ալ հավանաբար հայերենի թարգմանված: Այսպես, օրինակ, Թադեոս առաքյալեն սկսած մեր կողմերը եկող քարոզիչներու, սուրբերու և կույսերու զանազան վկայաբանություններ և վերջապես սուրբ Գրիգորի կյանքն ու վարդապետությունը:

Այս նյութերը ինքն իր կողմեն նորեն մանրամասն գրի առնելը ավելորդ կհամարե Փավստոս Բուզանդ. այդ նյութերը Հայ եկեղեցիին կողմե տրված էին արդեն որոշ ձև ու պաշտոնական վավերականության կնիք և հայտնի էին ամենուն. բայց իր գրած

պատմության «առաջին» ու «վերջին» մասերը բոլորովին իրարմե կտրված չթողնելու համար կխոստանա տալ ատոնց սեղմ բովանդակությունը: Այդ խոստումը ան կատարած պիտի ըլլար իր գրքի երկրորդ դպրության մեջ, որ հիմա գոյություն չունի:

Այսպեսով՝ իր «միջին պատմություն» անվանածը կառնե Քրիստոսին մոտիկ ժամանակներեն մինչև Գրիգոր Լուսավորչի մահը: Ուրեմն իր «առաջին պատմություն» ըսածն ալ կդառնա մինչև Քրիստոսի ժամանակները հասնող հին հայոց պատմությունը, որուն միակ աղբյուրը հին հեթանոսական վիպասանությունններն էին: Եվ այդ հին գուսանական վեպերովն ալ Փավստոս Բուզանդ կազմած էր իր ամբողջական «Հայոց պատմության» առաջին երկու դպրությունները, որ հիմա իր գրքին մեջ չկան, հանված, պատռված են. և որպեսզի ընթերցողը իզուր չփնտրե, հանողն ալ երրորդ դպրության ճակատը գրեր է՝ «Ի սկիզբն»:

Կկարծեմ՝ Փավստոս Բուզանդի մահեն ետքը անոր ձեռագրին մեջեն այդ երկու դպրությունները փրցնողը մեր քրիստոնյա բարձր ղեկավարությունն է նորեն. և փրցնելուն պատճառն ալ դժվար չէ ենթադրելը: Աչքի առաջ ունենալով Փավստոս Բուզանդի վիպասեր, գուսանասեր և իրմեն բան չավելացնելով գրելու իր ձևը, ինչքան ալ դիցուք մեջեմեջ հեթանոսական անհարմար տողերուն վրայեն ցատկած ըլլա, ամբողջության ոգին, տիրող հեթանոս-աշխարհական շունչը և գուսանական արվեստի գունագեղ ու գեղեցիկ մանրամասնությունները ջնջել ու ոչնչացնել չէր կրնար: Իսկ քրիստոնյա հոգևոր ղեկավար անձերն ալ, որոնք գեղարվեստեն շատ տարբեր գործնական կողմերը կկշռեին հարցի, մարսել չէին կրնար Փավստոսի գրի առած պատմության առաջին երկու մասերը:

Քրիստոնեական գրվածքի մեջ պետք չէ զգացվեր հեթանոսության շունչը և ո՛չ ալ մանավանդ գուսանական դրոշմը. ոչ ոք մոքեն պետք չէ անցըներ, որ քրիստոնյա հայերը որևէ բանի մեջ կրնան հետևիլ գուսաններու ըսածին ու հորինածին: Այնպես որ քրիստոնեական տեսակետեն անհաջող ու անհարմար փորձ մըն էր Փավստոս Բուզանդի գրի առած առաջին երկու դպրությունները: Այդ պատճառով ալ հանած են մեջեն ու պատռած: Պահեր են գիրքը երրորդ դպրութենեն սկսած, որ քրիստոնեական շրջան

է, իբրև Ագաթանգեղոսի շարունակությունը, ու խմբագրված է Հոգևորականության մշակած տեսակետներով. իսկ աշխարհիկ կյանքի գուսանականներն առած մասերուն մեջն ալ ո՛չ մեկ հիշատակություն չկա գուսանական երգի մասին. առնված կտորները հյուսված են հոգևոր պատմության իբրև մասնավոր անհատ հեղինակի մը գրչեն ելած ամբողջություն, թեև այդ հյուսքը կատարված է միայն արտաքուստ. գրքի հոգևոր ու աշխարհական մասերը մեծ դյուրությամբ իրարմե կբաժնվին միացնող կարին թելը քաշելուդ պես:

Բայց հայ գրականությունը պարտական է ընդգծելու, որ Փավստոս Բուզանդ գրի է առած ամբողջ Հայոց պատմությունը և ցանկացեր է ավանդել ապագա սերունդներուն նաև հեթանոս դարերու գուսանական վեպերը. և անտարակույս շատ ավելի հարազատորեն ու մանրամասն, քան ինչ որ տվեր է Խորենացին:

Երբ այս աչքով կնայինք Փավստոս Բուզանդի աշխատության վրա՝ այն ժամանակ միայն իսկապես կպայծառանա իր գործին մեծությունը: Փավստոս Բուզանդ կդառնա առաջին հավաքիչը հայ անգիր բանահյուսության և կդառնա իրավ որ պատմահայրը մեր պատմագրության: Եվ ճիշդ ասոր համար ալ անփոխարինելի կդառնա իր երկու առաջին թանկագին դպրություններուն կորուստը մեզի համար:

4. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻԻ ԴԵՐԸ

Փավստոսի գրքին հեթանոսական առաջին երկու մասերը ընդունելի չեղան բարձր հոգևորականության կողմե. շատ էր բաց ու պարզ գուսանական, շատ էր հեթանոս ճաշակով ու մտայնությամբ: Մեր հին պատմությունը, մեր պատմական հեթանոս դարերը անհրաժեշտ էր, որ գրի առնվեին, ժամանակը կպահանջեր, բայց գրի առնվել կարողանալու համար նախ արմատապես պետք է կտրվեր գուսաններու անունեն ու հեղինակութենեն, պետք է ջնջվեր հեթանոսական ամեն շունչ ու կնիք, պետք է մոտենար ու նմանվեր քրիստոնեական ավանդություններուն, հունական ու ասորական քրիստոնեական գրություններուն, որ կարելի ըլլար երիտասարդ հոգևորականներուն ձեռքը դնել, իբրև ուսման և

ընթերցման վայել ու արժանի նյութ: Ինչպես «Ագաթանգեղոս» մատյանին Հեղինակը, ինչպես Փավստոսը, այնպես ալ Խորենացին իրենց պատմությունները գրեր են ամենեն առաջ երիտասարդ վարդապետացուներուն ձեռքը ուղեցույց մը դնելու Համար, անոնց քրիստոնեությանը ազգային գույն ու ազգային կնիք մը տալու Համար:

Հին Հայ Հերոսական դեմքերը, որոնք սիրելի ու Հարազատ էին ամենուն, պետք է դառնային քրիստոնեության սեփականությունը. ատոնք ալ պետք է քրիստոնյա դառնային ճիշդ այնպես, ինչպես Հեթանոս տաճարները, տոները, շատ մը սովորություններ, Հին սրբատեղիներ և պաշտամունքի որոշ մասեր ու արարողություններ ընդուներ էին քրիստոնեության ծոցը. մեր Հին քաջերն ու Հերոսներն ալ պետք է քրիստոնյա մկրտվեին:

ԱՀա՛ այդ գործի իրականացմանը ձեռնարկեց Ե դարու երկրորդ կեսին մեր երկրորդ պատմագիրը, որ Հայ գրականության մեջ Հայտնի է Մովսես Խորենացի անունով: Մովսես Խորենացին ամենեն առաջ աչքի լինող մեծ Հոգևորական մըն էր անտարակույս և իր վրա է առած այդ գործը շատ Հստակ գիտակցությամբ, թե ինչ է իր ընելիքը. գուցե և դրված էր անոր վրա այդ պարտավորությունը Հայ բարձր Հոգևոր վարչության կողմե. շատ ավելի Հավանական է, որ ինքը կարևոր դեմք մըն էր այդ բարձր վարչության մեջ:

Եվ զարմանալու բան չըլլար, եթե այդ բարձր դիրքով Հոգևորականը իր իսկական անունը իր կազմած գրքին տակը դնել չուզենար, որով երկար ժամանակ գրվածքը մնար անանուն: Եվ կարծես այդպես ալ եղած է, ճիշդ «Ագաթանգեղոս» մատյանին նման, որուն Հեղինակը նմանապես Հայտնի չէ մեզի. Հաջորդ սերունդները գրվածքին փակցուցեր են անուն մը իբրև Հեղինակ: «Փավստոս Բուզանդ» անունն ալ ատոր նման վերջեն եկած բան մըն է: «Մովսես Խորենացի» կրնա նմանապես ավելի ուշ գրքին վրա ավելցված անուն մը ըլլալ՝ երևի բերնե բերան անցնող ավանդության մը վրա Հենված: Ամեն պարագայի դարուն Հեղինակները ո՛չ «Մովսես Խորենացի» կճանչնան, ո՛չ ալ այդ անունով «Հայոց պատմություն» մը:

Գիրքը գործածուած էր ուրեմն հոգեւորականութեան կողմէ ուսուցման համար, առանց հեղինակի անուան։ Հաջորդ բոլոր դարերուն ալ շարունակուած է այդ տաղանդաւոր գրքի իբրեւ դասագիրք գործածութիւնը հոգեւորականութեան կողմէ եւ մեծ գովեստներով եւ հիացումով. հեղինակի մը անունն ալ փակած է վրան։ Անոր գրականութեան մէջ շարք մը ուրիշ երկեր ալ կան, որոնք նոյնպէս Մովսէս Խորենացիի մը կվերագրվին։

Խորենացիի պատմութեան երրորդ գրքին մէջ իր անձի մասին գրած տողերը իմ այս բանծին հակառակ ոչինչ չունին։ Կրնայ պատահիլ, որ այդ ինքնակենսագրութիւնն ալ ըլլայ հորինուածք մը իր երկին արժանիքը աւելի բարձրացնելու դիտաւորութեամբ. բայց եւ կրնայ ըլլալ բոլորովին ճշմարիտ։ Ի՞նչ է ըսուած այդ ամբողջ ինքնակենսագրութեան մէջ բուն էութեան. որ ինքը աշակերտ է եղած Սահակ Հայրապետին ու Մաշտոցին, որ անոնց կողմէ ղրկուած է եղեր Աղեքսանդրիա ուսումը լրացնելու. եւ որ ինքը շատ կհարգէ ու կսիրէ այդ երկու անձերը։ Ի՞նչ կա աւելի հավանական ու բնական Ե դարու երկրորդ կեսին ապրող ու բարձր դիրք ունեցող հոգեւորականի մը համար։ Եվ այդ ինքնակենսագրութիւնը գրուած է ընդհանրապես շատ ընդհանուր խօսքերով, որ բաւական էր թէ՛ իր երախտագիտութիւնը հայտնելու համար եւ թէ՛ իր գրքին վարկն ու հմայքը բարձրացնելու համար այս երկու խորապէս հարգուած անուններով, առանց սակայն որոշակի կերպով հեղինակին դէմքը մերկացնելու։

Շատ աւելի խելապէս հորինուած բանի մը տպաւորութիւն ընողը իմ վրայ Սահակ Բագրատունիի դէմքն է։ Ո՛չ, Խորենացիին գրելու դրդողը Սահակ Բագրատունին չէ՛, ինչպէս որ կհայտարարէ Խորենացին իր գրքին սկիզբը շատ ուռուցիկ ու ճարտասանական ձեւով մը։ Սահակ Բագրատունին հավանօրէն բնավ գոյութիւն չունեցող վիպասանական ստեղծագործութիւն մըն է, ըսելու ձեւ մը, դիմակութիւն մը ճարտասանական, որ միեւնոյն ժամանակ Խորենացիի գրութեան բուն քրիստոնէական դրդիչներուն վրայէն ուշադրութիւնը ուրիշ կողմ կթեքէ։

Իշխան Սահակ Բագրատունիի մը ուղղուած նամակը եւ իր պատմութեան ընթացքին անոր ուղղուած խօսքերը, գովքն ու հան-

դիմանութիւնները իրար լաւ չբռնող անբնականութիւն մը ունին իրենց վրայ: Եւ վերջապէս դէռ խակ, կիսատղայ մարդու մը պատահական խնդիրքին ու դրդումին բնաւ պէտք չունէր ապրած, տեսած, ճամբորդած, շատ կարդացած ու թարգմանած և իր հոգևոր պաշտօնակիցներուն հետ բարձր դիրքերու վրայ երկար գործած ու խորհած ծերունի Խորենացին՝ «Հայոց պատմութիւն» մը ստեղծելու մեծ ու ծանր գործին ձեռնարկելու համար: Մտածելը նոյնիսկ ծիծաղելի է: Այդ գիրքը գրուած չէ իշխան ու տղայ մարդու մը խնդիրքը բաւարարելու համար, այլ շատ աւելի կարևոր և քրիստոնեայ բարձր ու ղեկավար շրջանակին մէջ զգացուած ու հասունցած պէտք մը իրականացնելու համար:

Խորենացիի «Հայոց պատմութեան» առաջին գրքին սկիզբն ու վերջը եղած այդ նշանաւոր նամակները այն ինքնահնար բազմաթիւ նամակներէն են, որոնցմով լեցուն է Խորենացիին գիրքը. թագաւորներու, իշխաններու ու Քրիստոսի ուղղուած շատ մը շինծու նամակներ կան հոն իրենց տակի բարևներովը. գրական ձև մըն է ասիկա, վիպական ձև մը և Խորենացին վիպասան մըն է խորքին մէջ, այսինքն՝ հորինող մը, հարմարցնող մը. և իր «պատմութիւնը», մասնաւորապէս՝ իր առաջին երկու գրքերը պատմական վիպասանութիւն մըն է, որ ան հարմարցուցեր է, կարեր է ու կարկտեր է՝ զանազան կողմերէ իրեն հայտնի եղող դէմքերն ու դէպքերը և քրիստոնէութեան հնարած կամ վավերացուցած աւանդութիւնները իրար հյուսելով ու բացերը իր դատողութեամբ կամ իր ունեցած տեղեկութիւններով կերպ մը լեցնելով:

Եւ այս իրողութեան մէջ ես վիրաւորական ու անսովոր ոչինչ չեմ գտներ. «կեղծիք», «խարդախութիւն» բառերը բոլորովին անտեղի են: Խորենացին պատմիչ մը չէ նեղ մտքով, այսինքն՝ մարդ մը, որ իր ժամանակի տեսած ու լսած բաները հաջորդ սերունդներուն աւանդել կուզէ և եթէ իր խելքէն բաներ հնարէ, կդառնայ սուտ ու կեղծիք: Խորենացին պատմաբան մըն է, այսինքն՝ իրմէն առաջ իրեն ծանօթ բոլոր աղբյուրներէն օգտվելով՝ իր խելքը հասածին չափ և իր ստացած կրթութեան, իր հոգիին ու կոչումին թելադրածին համեմատ պատմական ամբողջութիւն մը կերտելու կձգտի: Բոլոր պատմաբաններն ալ արդէն միևնոյն բանը կընեն.

ամէն պատմաբան իր ժամանակի գիտութեան, իր պատկանած կուսակցութեան, իր ունեցած աղբիւրներուն, իր զարգացման աստիճանին և իր հոգեկան խորատեսութեան վրայ հենուած աշխատաւոր մըն է և ուրիշ բան մը ըլլալ չի կրնար: Եւ ճիշդ ատոր համար ալ բոլոր պատմաբաններուն եզրակացութիւնները, պատկերացումները և կառուցումները խորապէս տարբեր են իրարմէ և իրենց աշխատանքին մեծագոյն մասը՝ ժամանակաւոր ու անցաւոր: Նոյն է և Խորենացին:

Երբ մարդ մը Աստուածաշունչին սկիզբը եղած ազնիւ հեքիաթները և նոյն գուսանական վիպասանութիւնները պատմական հիմնական ճշմարտութիւններ կնկատէ, բնականաբար իր գրած պատմութիւնն ալ կէս մը հեքիաթ պիտի ըլլայ, կէս մը պատմական վիպասանութիւն՝ մէջէմէջ խառնուած որոշ իրական կամ իրականութիւնը հիշեցնող դէպքերու: Խորենացին նեղ մտքով պատմիչ է միայն Ե դարու առաջին քառորդի մասին խօսող իր քանի մը էջերուն մէջ:

Իր գրելու կերպերէն, իր խօսելու, քննելու ու վարելու եղանակէն դատելով՝ Մովսէս Խորենացին կներկայանայ մեզի իբրև լայն ծանօթութիւններ ունեցող, գիտական ձևերով ու մտածումով, շատ կարդացած, ինքնիշխան ու կարուկ բնաւորութեամբ վարպետ հոգևորական մը: Ունի գիտակից ու մտածված հայրենասիրութիւն մը և անցյալի խոր սեր: Այդպէս ալ գիտակից, հաստատ կերպով յուրացված քրիստոնեութիւն մը, ուր կրօնն ու ազգութիւնը, անցյալն ու ներկան խորապէս փաթթված են իրարու և կազմած են ամբողջական ու խռեայական հյուսք մը. և այդ իր խռեայը վարդապետացող երիտասարդ հոգիներու մէջն ալ արմատացնելու համար է, որ գրած ու հօրինած է Մովսէս Խորենացին իր պատմական աշխատութիւնը: Ան ճշմարիտ քրիստոնեայ մըն է ու ճշմարիտ հայ մը:

Մեր առաջին պատմագիրը՝ Փաւստոս Բուզանդ, ամենէն առաջ զգացումի մարդ է, հափշտակվող ու ենթարկվող. մեր երկրորդ պատմաբանը՝ Մովսէս Խորենացին, մտքի մարդ է ամենէն առաջ, քննող ու դատող, ավելի առնական ու տիրական, որ ինքը կառուցել կիրել և ուրիշները իրեն ենթարկել: Բուզանդ կջանա

չշեղիլ իր լածեն: Խորենացին կջանա իր բոլոր լածն ու գիտցածը Համարցնել իր իտեալին, իր Հիմնական սրբութիւններուն. մեկը ավանդող է, մյուսը՝ կառուցող:

Մովսես Խորենացին մեր արդի բանասերներու ընդՀանուր Համոզումով իր ձեռքին տակ ունեցած է Փավստոսի ձեռագիրը և օգտված է անկե: Իսկ ինծի կթվի, որ Փավստոսի ու Խորենացիի գրած պատմությունները շատ ավելի խոր ներքին կապեր ունին, քան արտաքուստ կերևա: Փավստոսն է Խորենացիի պատմության կարմիր թելը տվողը, պատմությունը երեք մասերու բաժանողը և ընդՀանրապես Խորենացիին դրդողը, որ գրե: Խորենացին գրիչ է վերցուցած քրիստոնեական տեսակետեն Փավստոսի թերիներն ու անՀարմարութիւնները սրբագրելու Համար: Ըլլա իր ձեռքով, ըլլա ուրիշներու ձեռքով անոր պատմութենեն Հանած երկու դպրութիւններուն տեղը նորը շարադրելու Համար և անոր չընդունած ու կիսատ դարձած ու միամիտ ու «անոճ» կերպով խմբագրված պատմության տեղը ավելի «ոճավոր», ավելի գիտական տեսք ունեցող ու ամբողջական Հայոց պատմություն մը դնելու Համար:

* * *

Բայց իր մատյանը սկսելեն առաջ Մովսես Խորենացիին առջևը դրված խնդիր մը կար, որ պետք է լուծեր. Հայ ազգային վեպերու և գուսաններու մեջ եղած անխզելի կապը պետք է խզեր: Այդ ավելի խորը նայող և դեռ իր մանուկ օրերեն մեր թագավորներու վեպերը լսած ու սիրած մարդը, որ և Հույն Հին Հեղինակներու գրվածքներուն մեջ Հին ու օտար առասպելներուն ու վեպերուն ալ տեղյակ էր, որ իր ժամանակի քրիստոնյա գրականության ալ ավելի լայնորեն ծանոթ բացառիկ մտավորական մարդ մըն էր և որ իր ձեռքին տակ ուներ Փավստոս Բուզանդի «ձախողած» երկը, արդեն եկած էր Հարկ եղած եզրակացության:

Ինչպես քրիստոնեության մեջ ամեն բան կապված էր քանի մը Հնավանդ գրքերու գոյության, այդպես ալ Հայ պատմությունը պետք է կապվեր, ինչ գնով կուզե ըլլա, մեկ-երկու Հին գրքերու, որ նմանվեր քրիստոնեական պատմություններուն, ավելի պատկառանք ազդեր և գուսաններուն դերը դարձներ բոլորովին երկրոր-

դական, ո՛չ թէ հեղինակ ու ստեղծագործող, այլ եղածը վերա-պատմող «աննշան ու մանր» մարդիկ:

Եվ ահա՛ շատոնց մոխիր ու ավերակ դարձած Նինվեի մը երբեմնի գոյություն ունեցող արքունական դիվաններեն հանված կհռչակվի Մար Աբաս Կատինայի մը ձեռքով պատմական գրություն մը, որ որուն ճամբաներով կուգա, կհասնի Խորենացիին ձեռքը, ուրկէ ան կքաղէ Հայկի, Արամի, Արայի, Տիգրանի և անոնց սերունդներուն պատմությունները: Այդպես ալ Ուրփայի և Պնտոսի շատոնց ավերակ դիվաններեն բերված կհռչակվի Ափրիկիանոսի մը ձեռքով ուրիշ գրություն մը, որ նորեն սոյր ու նախորդին բոլորովին նման ճամբաներով կհասնի Հայաստան և ուրկէ Խորենացին կքաղէ Արտաշեսի ու Սաթենիկի վիպասանության ամբողջ պատմությունը:

Հին-հին գրքեր, ավելի ևս հին դիվաններե դուրս հանված, ուր կպատմվին չգիտես որու և ինչու համար մեր ամենեն գեղեցիկ հեթանոսական վիպասանությունները և գուրգուրանքով կպահվին անշուշտ անոր համար, որ օր մը գան Մովսես Խորենացիին ձեռքը և իբրև անհերքելի աղբյուր ծառայեն: Թո՛ղ բանասերները վիճեն ու վճռեն՝ Մար Աբաս Կատինա և Ափրիկիանոս ապրե՞ր են աշխարհիս երեսին երբևիցե, թե՞ բոլորովին Խորենացիի տաղանդին ծնունդ են. ինչպես և անոր այդ կարգի քանի մը ուրիշ աղբյուրները:

Ընդունինք, որ ապրեր են: Ընդունինք, որ անոնց բերած գրքերուն մեջ Հայերու մասին մեկ-երկու տող կամ էջ բաներ մը գրված ըլլան, որ Խորենացին կարդացեր է և օգտվեր: Ընդունինք նույնիսկ այն տարօրինակ գաղափարը, թե հին ու օտար ու հեռավոր դիվաններու մեջ գուսանական «մանր» ու «աննշան» մարդոց ձեռքով հավաքված, գրի առնված ու պահված էին սատանան գիտե ինչ լեզվով մեր աղվոր անգիր վիպասանությունները: Անցադակի հիշեմ, որ խիստ հետաքրքիր է Խորենացիի տված այդ «մանր» ու «աննշան» տիտղոսը գուսաններու հասցեին և բոլորովին ավելորդ ու անտեղի, նույնիսկ անհարիր իր գործածված տեղին:

Վայրկյան մը ընդունինք նաև ա՛յդ դժվարամարս գաղափարը: Բայց ըսեք խնդրեմ՝ Խորենացին ի՞նչ պետք ուներ այդ փոշիներուն մեջ թաղված ու քրքրված մատյաններեն քաղելու իր

պատմութիւնները, երբ այդ միեւնոյն պատմութիւններուն բնագիրները շատ աւելի ընդարձակ, իր Հարազատ լեզուով ու կենդանի իր քովն ունէր, իր ականջին տակը և արդէն իր մանկութենէն այդ բոլորը շատ լաւ գիտէր: Իր իսկ ըսելովը այդ Հին մատեաններուն բովանդակութիւնը առնուած էր գուսանական վէպերէն մանր ու աննշան գուսաններու ձեռքով: Ի՞նչ կարիք կար ուրեմն Մար Աբասի բերած գիրքը մասնաւոր ու նմանը չեղած աղբյուր մը ներկայացնելու: Շատ-շատ պետք է Հիշեր, թէ ինքը ձեռքի տակ Հին գիրք մը ունի, ուր շատ զարմանալի կերպով մեր գուսանական վէպերը դեռ դարեր առաջ գրի են առնուած և սքանչելի կերպով պաՀված:

Այս բոլոր տարօրինակութիւնները ինքնին Հասկընալի կդառնան, երբ աչքի առաջ ունենանք, որ Խորենացին ջանքն է ընդգծել և ցուցադրել, որ ինքը, այսինքն՝ ղեկավար քրիստոնէութիւնը, իր պատմելիքները գտած ու Հանած է Հին ու փոշոտ. ուրեմն և Հարգելի ու սրբազան գրքերէ և ո՛չ թէ քաղած է գուսաններու շրթունքէն:

Հա՛, այս կերպով երբ անգամ մը կտրված է իր պատմածներու և գուսաններու մեջ եղած բնական ու խորունկ կապը, երբ գուսաններու շրթունքէն խլված է Հեղինակության իրավունքը, ալ անկե ետքը կարելի է Հաճախ, և պետք եղածէն շատ աւելի Հաճախ, վկայության կանչել այդ միեւնոյն վիպասանութիւնները, թէ ահա՛ գուսաններուն ձեզի պատմած վէպերուն մեջն ալ միեւնոյն ձեւով կպատմվին այս իմ Հին ու վավերական գրական աղբյուրներէ ու Հնագոյն դիվաններէ Հանված ճշմարիտ պատմութիւններս: Ասով մեկ կողմեն ընդգծված կըլլա քանի մը տասնյակ անգամներ, թէ ինքը առած է բոլորովին տարբեր ու Հին աղբյուրներէ, մյուս կողմեն ալ միաժամանակ ճշմարտութիւնը ըսված կըլլա. իր իսկական աղբյուրները Հիշատակված կըլլան, որոնք արդեն Հայտնի ու ծանոթ էին ամենուն և լռել կարելի չէր:

* * *

Երբ Հեթանոս վէպերը քրիստոնյա Հոր մը ձեռքով օգտագործվելու Հնարավորության առջեւէն վերցված էր գլխավոր ար-

դեպքն ու հակադրությունը այս ոլորուն ու բավական միամիտ հնարքով՝ կրնար իրականացնել երկրորդ անհրաժեշտ աշխատանքը, այսինքն՝ քրիստոնյա հոգեբանության հանդուրժելի, դրեթե հարազատ դարձնել հայ հեթանոս անցյալը, քրիստոնեացնել հին հայոց պատմությունը: Շատ ավելի ճիգ, հմտություն ու վարպետություն պահանջող գործ մը, քան ավերակներուն ետևեն կորսված մատյանները հայտնաբերելը:

Պետք էր մեր վիպասանության երգած նախահայր Հայկը ուղիղ գծով կապել Աստվածաշունչի ջրհեղեղեն միակ ազատված Նոյ նահապետին, պետք էր զուգընթացել Հայկի սերունդներուն ծննդաբանությունը աստվածաշունչային ծննդաբանություններուն հետ. պետք էր մեր նախարարական տները առաջացնել հրեական սերունդներե. և ուր որ հնար էր՝ հիշումներ ու ակնարկություններ մեջ բերել Սուրբ գիրքեն մինչև Քրիստոս:

Քրիստոսին ժամանակակից և հաջորդ դարերու մասին արդեն կային քրիստոնեական գրի առնված ավանդություններ մինչև Գրիգոր Լուսավորիչ, ինչպես տեսանք: Այդ բոլորը պետք է օգտագործվեր, պետք է հյուսվեր իրարու ու դառնար իրարու կապված ամբողջություն մը և ո՛չ թե ատոնց վրայեն ցատկելով անցնիլ բարեմիտ Փավստոս Բուզանդին պես: Եդեսիայի Արշամներն ու Աբգարները, օրինակ, պետք է դառնային հայ սերունդե հայ թագավորներ, որ հայերն ու հայ եկեղեցին անմիջապես Քրիստոսի հետ հաղորդակցության մեջ դրվեին ու դառնային առաջին հավատացյալները:

Այս քրիստոնեական նյութերուն պետք էր կցել քանի մը հույն հեղինակներե և ասորի քրիստոնյա հայրերե առնված, մեր աշխարհի հետ և մեր աշխարհի շուրջը կատարված դեպքեր ու հիշատակություններ. և հիշելու միջոցին ալ որևէ պատվավոր դեր պետք էր հատկացնել հայության, որ արժեքը բարձրանար: Եվ այս ամենը պետք էր օղակել ու հարմարցնել գուսանական վեպերեն առնված հիմնական դեմքերուն. և ստեղծել կանոնավոր ժամանակագրություն՝ ճշդելով ամեն մեկ հայ իշխողի տարիները և զուգահեռ պահելով միջազգային կարևոր եղելություններուն: Խորենացին սաստիկ հպարտ է իր հաշված ու հարմարցուցած այդ ժամանա-

կագրութեամբ: Եթէ այս ամենուն վրա աւելցնենք Հայ Արշակունի ու պարսիկ ու պարթեւ նմանաձայն անուններու քանի մը պատահական շփոթութիւններ՝ ընդհանուր պատկերը կդառնա գրեթե լրիվ:

Այսինքն՝ Հայ գուսանական վեպին հերոսները և այդ հերոսներուն միջև մնացած պարապ տարածութիւնները բազմաթիվ թելերով պետք էր կապել Աստվածաշունչի հեքիաթներուն, քրիստոնեական հեքիաթախառն ավանդութիւններուն, Հունական ու ասորական հին ու նոր հեղինակներու պատմած զանազան ճշգրիտ կամ անստույգ դեպքերուն, որ ստեղծվեր քրիստոնեական գրութիւններուն բոլորովին զույգ գացող և բոլորովին անոնց նմանող «Հայոց պատմութիւն» մը Աստվածաշունչի ջրհեղեղեն սկսած մինչև Հայ պետականութեան կործանումը Ե դարու առաջին քառորդին:

Ահա՛ աս է Խորենացիին պատմութիւնը իմ ըմբռնումիս մեջ: Խորենացին հաճախ կկրկնե ճշմարտութեան անհրաժեշտութիւնը պատմութեան մեջ, որով և մեր արդի բանասերները կհիանան: Բայց ի՞նչ կարիք կա այդ աստիճանի ինքնին հասկընալի բան մը այդքան ընդգծելու. ինչո՞ւ Փավստոսը կարիք չունի այդ կարգի տողերու: Խորենացին ինքն ալ գիտե, որ իր գրածներուն մեջ ենթադրական, առարկելի ու վիճելի բաներ շատ կան. որ քրիստոնեական հայրերու ընդունած կամ ընդունելի տեսակետներեն տարբեր կարծիքներ ու ըմբռնումներ շատ կան. ատոր համար ալ շարունակ կկրկնե, որ ընթերցողը հետևելու է հեղինակի բսածին, այսինքն՝ քրիստոնեական վերին ղեկավարութեան տված մեկնութեան. ուրիշներուն բսածները սխալ են: «Դուն հավտա՛ իմ բսածիս», – աս է պահանջվածը Սահակ Բագրատունիեն, այսինքն՝ ընթերցողեն: Քրիստոնեական ամբողջ գրականութեան մեջ ատիկա էր սկզբունքը. հավտալ ու հետևիլ քրիստոնյա հայրերու տված բացատրութեան և անոնց ընդունած որոշման. ով ատկե կշեղի հերետիկոս է: Միևնույն աչքով կնայի Խորենացին նաև պատմական ճշմարտութեան վրա, և այդ աղբյուրեն կբղխի նաև Խորենացիին խրոխտ ոճը, իր կիսաինքնահավան և կիսախրատական արտահայտութեան ձևերը. մեծավորի պաշտոնական ձայնն է, որ կխոսի: Վարժապետի չեշտ է:

Ահա՛ այս քրիստոնեական հանդերձանքով, աստվածա-շունչական խույրերով և եկեղեցական հողաթափերով մեր գուսանական վիպասանության սիրելի դեմքերը կթույլատրվեին, որ բարձրանան Հայ քրիստոնեական բեմին վրա: Հայաստանի մեջ վերջապես լիորեն հաղթանակած քրիստոնեությունը միայն այս ձևի տակ ու այս չափով կրնար օգտվել մեր ազգային անգիր վեպերեն: Ամբողջ վեպերը լրիվ առնել և չնչին կրճատումներով հարազատորեն փոխանցել հաջորդ սերունդներուն, ինչպես ընել ցանկացավ Փավստոս Բուզանդի միամիտ հոգին, վարիչ հոգևորականությունը թույլ տալ չէր կրնար, առիկա իր գործը չէր և հակառակ էր իր էության:

Դարձյալ երախտագետ պետք է ըլլանք մեր քրիստոնյա հայրերու հայրենասիրությանը, որ գոնե Խորենացիի ձևով ու չափով բաներ մը փրկած ու ավանդած են մեզի մեր հեթանոս անցյալեն: Եվ այս իրողության մեջն է արդեն Մովսես Խորենացիին պատմական ամենեն մեծ դերն ու հետաքրքրությունը: Առանց անոր մեզի փոխանցած մեր հեթանոս վեպերու բովանդակության մենք կզրկվեինք բոլորովին մեր ժողովուրդի երիտասարդ ու խիզախ օրերու զգացած, մտածած ու ստեղծած պատմություններեն:

Խորենացին ինքն ալ առիկա շատ լավ գիտե. հպարտությամբ կշարե իրար հետևե գլխավոր հերոսներուն անունները, կգովե, իր հիացումը կարտահայտե, կցավի միայն, որ «Քրիստոս անոնց օրով աշխարհ չի եկած»: Խորենացին սիրելի է մեզի ու միշտ ալ սիրելի պիտի մնա մեզի իր այդ ոգևորության համար, իր Հայ հոգիին համար և մինչև մեզի հասցուցած մեր հին դյուցազներու ստվեր-ներուն համար:

Գ. ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ՎԵՊԻՆ ՉՈՐՍ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Գրաբար գուսանական վիպասանության Փավստոսի ու Խորենացիի միջոցով մեզի հայտնի եղող բոլոր նյութերն ու կտոր-ները իրար բերելով՝ կստանանք չորս որոշ շրջանակ:

Առաջին շրջանակը ըստ երևույթին խառնուրդ մըն է խալ-

տական ու հայկական ստեղծագործության: Անունները, ոգին, դեմքերը արիական ծագում կմատնանշեն, բայց դեպքերը կապված են Հարավի հետ և Ասորեստանի «պատմական» անձերուն, որոնք խալդական օրերու հարաբերություններուն կհամարին:

Հայ ժողովուրդի Հայաստան գալուն և Հայ աշխարհին հետզ-հետե տեր դառնալուն վիպականացումն է այս շրջանակի ամբողջ նյութը: Հինգ-վեց սերունդներ կհիշվին վեպին մեջ անցողակի. ավելի հանգամանորեն պահված են երեք դեմք՝ Հայկ, Արամ, Արա:

Հայկ ու Բելի վեպին նման հպարտ, ազնվական ու սքանչելի պատմվածք մը իր պատմության ու իր բանահյուսության գլուխը ունենալը կրնա մեծ պարծանք մը համարվիլ անխտիր ամեն ժողովուրդի համար:

Եվ ո՛չ մեկ կարևորություն չունի գեղարվեստական տեսակետեն, որ այդ պատմության տակը աստվածաբանական ու աստղաբաշխական շերտ մը կա, որ ծագման կապեր ունի Օրիոնին հետ և որ նման աղեղնավոր հերոսներ ուրիշ ժողովուրդներ ալ ունին: Գեղարվեստի մեջ գրեթե բոլոր նյութերը ընդհանուր են, բայց այդ ընդհանուր նյութերը ինչպե՞ս կըմբռնե ժողովուրդ մը, այդ նյութերով ի՞նչ կշինե և ի՞նչ կարտահայտե՝ ատոր մեջն է ստեղծագործական արժեքն ու ինքնուրույնությունը ամեն մեկի: Մեր վեպին մեջ գծված Հայկը հայու ըմբռնումն է, հայու ստեղծագործություն, որ հայու վիճակեն կծնի: Ուրիշին գլուխ ծռել չսիրող ղեկավար մը, թեև իր մարդոց թիվը երեք հարյուր է բյուրավորներու դեմ. լեռներու և ձյուներու սիրահար մարդ մը, որ ձյունապատ գագաթներու նման խոյանք ունի իր հոգիին մեջ դեպի վեր և որ քանի մը տասնյակ դարեր ամեն գույնի Բելերու բռնությանը ենթակա՝ դեռ մինչև հիմա կպահե իր այդ լեռնցու հպարտ կեցվածքը:

Հայկի պատմությունը ավելի հերոսական ու դյուցազնական շունչ ունի: Արայի վեպը, ընդհակառակը, ավելի վիպային է ու, եթե կուզեք, ավելի արդիական: Իր նյութը կինն է. և կինը իր երկու երեսներով՝ ընտանիքի կնոջ դեմքը և տարփանքի կնոջ դեմքը հայու ըմբռնումով: Կարելի է երևակայել, թե ի՞նչ հրապույր ու գեղեցկություն կրնար ստանալ այդ պատմությունը ներշնչված գուսանի մը մեղրահոս շրթունքին: Իր արդի կիսատ ու փեթռտած

վիճակին մէջն ալ կզգացուի դեռ իր ներքին ջերմութիւնը:

Հոս ալ միեւնոյն նկատողութիւնը. Իշտար, Աստարտէ, Աստղիկ ու Շամիրամ խորքին մէջ բոլորն ալ նոյնն են, բոլորն ալ կապուած Արուսեակ աստղին, բոլորն ալ կներկայացնեն սեռը, սերն ու ծնունդը եւ սեմական է իրենց ծագումը: Գեղարուեստը միայն իրեն հետաքրքրութիւն կհարցնէ, թէ ուրկէ՞ ես առեր քու նյութդ. կարեւորն այն է, թէ ի՞նչ ես շիներ այդ նյութեն: Հայու ըմբռնում է, որ Շամիրամին դեմը Նուարդ մըն է դրած, Հայու պատկերացում է նմանապես Արայի կեցուածքը:

Գունատ ու անկենդան է Արամի վէպը, մասամբ անշուշտ իր կորսուած ու թափթփուած պատմուելուն պատճառով, մասամբ ալ նյութի բերած չորութեան. ամեն ուղղութեամբ կռիւներ ու տիրապետութիւն. վէպը կհագնի միակերպութիւն եւ կպակսի վիպական թափը. նոյն է երեւոյթը նաեւ «Իլիականի» անվերջանալի մենամարտներու նկարագրութեան ատեն:

Երկրորդ վիպական շրջանակը հարիւսուած է արդեն մեր պատմութեան Հայկազեան դարաշրջանին եւ իր երեսը դարձուցած է դէպի արեւելք. վեցերորդ դարու մար ու Հայ հարաբերութիւններու վիպականացումն է: Հոս ալ քոյր ու եղբօր խոր ու քնքուշ կապն է, որ կերգուի եւ որ երկրորդ ջերմ սրբութիւնն է Հայ ընտանիքի: Հիանալի ու հմայիչ վիպասանութիւն մըն էր անտարակոյս Տիգրանի ու Տիգրանուհիի այդ պատմութիւնը, ուր Աժդահակն ու իր արեւելյան պալատը, իր երազը, թագաւորութեան մը կործանումը եւ պալատական կանանցին ներքին կյանքն ու դավերը սքանչելի նյութ կմատակարարեն վիպասանի երեւակայութեան:

Նոյն հեղինակ Քսենոփոնի «Կյուրոսի կրթութիւնը» անունով վէպին մէջ դուրս է բերուած Հայ Տիգրան թագաւոր մը եւ իր երիտասարդ կինը՝ Տիգրանուհին: Այդ վէպին մէջն ալ ընդգծուած է, եւ արդեն օտարի մը գրիչով, Հայ կնոջ խոր ու բարձր սէրը իր ամուսնու հանդեպ շատ գեղեցիկ պատկերացումով: Ցեղային, արիական ու Հայկական գծեր են այր ու կնոջ, քույր ու եղբոր մէջ եղած այս ջերմ ու ազնիվ կապերը, որոնք մինչեւ այսօր Հայ ընտանեկան կյանքի եւ՛ գեղեցկութիւնը կկազմեն, եւ՛ ուժը:

Երրորդ վիպական շրջանակը Արտաշեսի ու Սաթենիկի

վիպասանությունն է, ըստ երևույթին շատ ընդարձակ վեպ մըն է եղած. Արտաշեսի մանկությունը, վերադարձը, ամուսնությունը, ընտանեկան ներքին անհամաձայնություն, Արգավանի ու Սաթենիկի սիրային կապը, մարերու դերը, զավակներու հետ ընդհարում ու վերջապես Արտաշեսի մահը և Արտավազդ Մասիսի խորքը շղթայված:

Վեպը հայ պետականացման դարերու շրջանեն է և հեթանոսական վերջին դարերու ստեղծագործություն: Շատ կենդանի ու աշխույժ գույներով պատկերացված է եղեր հոս ալ սիրված ու հաղթական թագավորի մը դեմքն ու կյանքը, բազմակողմանի ու տրամաժիկ կողմերով առատ: Զգալի է, որ շատ ավելի մշակված արվեստի ստեղծագործություն է, ինչքան որ կարելի է դատել մեզ բերված պատառիկներեն և Խորենացիի տված սեղմ բովանդակությենեն: Գուցե մեր գուսանական վիպասանության ամենեն վիպասանական ստեղծագործությունն է:

Չորրորդ վիպական շրջանակ մը կկազմե Դ դարը, արդեն իբրև թե քրիստոնյա: Վեպին հիմնական նյութն է Արշակունի վերջին ինքնավար թագավորներու և իրենց ցեղական թշնամի Սասանյան թագավորներու մարտնչումը. կեդրոնը կկազմե Արշակ թագավորը և Փառանձեմ թագուհին իրենց ընտանեկան-պալատական շրջապատով, իրենց արի ու քաջ Մամիկոնյան սպարապետներով: Երկարատև կռիվ է ու մաքառում և՛ աջ, և՛ ձախ, պարսիկներու և հույներու դեմ հայ անկախ պետականությունը ոտքի պահելու համար: Ե՛վ անվեհեր քաջություն, և՛ վայրագություն, և՛ դավ ու դառն վիշտ, և՛ տրամատիկ դրություններ, և՛ քաղաքական բարդ հարաբերություններ: Երկու մեծ ու դավադիր ուժերու մեջ ինկած և ոչնչացման սպառնալիքի տակ խիզախորեն դիմադրող թագավորություն մը իր վերջին ուժերով, հուսահատ մաքառումով: Մեր ազգային անգիր վեպերեն ամենեն տրամատիկը. հասուն շունչ ունի և շատ մոտեն ու սերտորեն կապված է իրականությանը, բայց պակաս է կեդրոնացումն ու գեղարվեստական ամբողջականությունը. ժամանակ չէ ունեցած տաշվելու, կոփվելու ու վերջնապես հղկվելու՝ միաձույլ արձան մը դառնալու համար:

Այս չորս շրջաններէն դուրս կայ Տորք Անգեղի մը հիշատակությունը, նույնպես Երվանդ Թագավորի ու Վարդգես մանուկի մը մասին պատառիկ մը, որ խիստ հետաքրքիր մատնանշում մըն է Երվանդական վեպի մը գոյության: Այլև հոս ու հոն ակնարկություններ ու բացատրություններ կան զանազան նախարարություններու անունին ու ծագումին հետ կապ ունեցող, ինչպես և զանազան տեղերու անունները բացատրող տողեր, որոնք բոլորն ալ անգիր պատմվածքներ կակնարկեն, բայց փշրանք են և քիչ-չափ վիպական մարմին մը չեն ներկայացներ, որ կարելի ըլլա վրան կանգ առնել: Անոնց կարգին կպատկանի նաև նշանավոր հատվածը կայծակի ծագման՝ «Երկնէր երկին և երկիր», որ Խորենացին կներկայացնե իբրև Տիգրանի որդի Վահագնի ծնունդը և կհիշատակե անոր կռիվները վիշապներուն հետ. այդ պատճառով ալ Վահագնը կկոչվի Վիշապաքաղ: Պարզ է, որ կտոր մըն է հեթանոսական-աստվածաբանական վիպասանութենե մը, որ անտարակույս կայծակի ու ամպերու կռիվը կմարդկայնացներ, ավելի ճիշդը՝ կաստվածացներ:

Ասոնք բոլորը մեկ մասն են եղած ու կորած հին գուսանական ստեղծագործություններուն, որոնք սակայն իրենց թերի, անկապ ու փշրված վիճակի մեջն անգամ կվկայեն, թե բանահյուսական ի՛նչ հարստություն և ի՛նչ գեղեցկություն ունեինք եղեր: Հայ ժողովուրդի ամենեն մեծ և անփոխարինելի կորուստն է այդ երկերուն իրենց մշակուն վիճակով գրի չառնված և ոչնչացված ըլլալը: Եթե գրի առնված ըլլային իրենց բնական ու ամբողջական վիճակով՝ գոնե այն չափով, ինչ չափով որ Դ դարու մասին Փավստոսն է գրի առած, մենք ալ հիմա կունենայինք Հոմերոսի անունով պահված հույն գուսանական երկերուն համապատասխանող հայ գուսանական վեպերու իրարու կապված հավաքածու մը՝ գեղարվեստական ու մշակութային անչափելի արժեքով:

Գուսանական այդ վեպերը հայ ժողովուրդի գրաբար լեզվով ստեղծած ամենեն բարձր արժեքներն են, որուն դեմ քրիստոնեական դարերու մնացած ամբողջ գրաբար գրականությունը շատ է անարյուն և անհայ, շատ է միջակ ու անկենդան: Եվ այն բացառիկ անհատական թռիչքներն ալ, որ ունեցած է գրաբարը մեկ-երկու

անգամ երկար դարերու ընթացքին, ո՛չ մեկ կերպով մոռցնել տալ չեն կրնար հայ ժողովուրդի առաջին գեղարվեստական բարձր ստեղծագործության այդ թանկագին գանձերուն կորուստը:

Դ. ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ

1. ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուրիշներու ուշադրությունը իրեն քաշելու, ունկնդիրներու վրա ավելի խոր ազդեցություն բանեցնելու, իր խոսքը ավելի կուռ ու համոզիչ կամ ավելի գրավիչ ու հաճելի դարձնելու համար մարդս շատ հաճախ, մանավանդ երբ բազմություններու կխոսի, իր ըսելիքը կենթարկե որոշ գիտակից կամ կիսագիտակից փոփոխություններու, կմշակե իր խոսքը, իր արտահայտությանը հոգ ու խնամք կտանի, իր ըսելիքը կպարզե, կհստակե, կդասավորե կամ կզարդարե:

Մեր մտածումներու անմիջական կամ ինքնահոս արտահայտության վրա կատարված այդ ամեն տեսակի հավելյալ աշխատանքը կանվանենք արվեստ, ըսելու արվեստը:

Եվ ըսելու այդ խնամքն ու արվեստը ունի երկու կողմ՝ ներքին ու արտաքին: Մեկ մը մեր ըսելիքի ներքին մտածական կազմին, ըսվածի իմաստին, արտահայտության խորքին կապված արվեստ մը, մեկ մըն ալ մեր ըսելու արտաքին հնչական, արտասանական ու առոգանության կապված խնամքը, ընտրությունը, զարդարանքը, հարդարանքը:

Բանահյուսության այս ներքին ու արտաքին արվեստը բնականաբար տարբեր միջոցներ գործ կդնե և տարբեր ուղիներով կերթա՝ նայելով թե արտահայտական ո՞ր սեռին կպատկանի, ըսելիքը գործնակա՞ն բան մըն է, գիտակա՞ն, թե՞ գեղարվեստական: Ուրիշ է բան մը ապացուցելու կամ եզրակացություն մը հանելու համար տարածված խնամքն ու մշակումը, ուրիշ է, օրինակ, զգացումներուն զարնելու համար գործադրվող միջոցներն ու ձևերը: Եվ վերջապես գրական նույն սեռին պատկանող զանազան տարբեր տեսակներ թեև ընդհանուր գծեր ունին անշուշտ իրարու հետ,

բայց և այնպես իրենց գործածած արվեստի զենքերն ու միջոցները շատ զգալի կտարբերին իրարմե: Այսպես, օրինակ, գեղարվեստական սեռին պատկանող բոլոր բանահյուսական ստեղծագործությունները բոլորն ալ անխտիր զգացումի զարնել կուզեն, Հուզել կուզեն, բայց տարբեր-տարբեր միջոցներով՝ նայած թե ո՞ր ճյուղին կպատկանին՝ քնարակա՞ն, վիպակա՞ն, թե՞ թատերական:

Արդ՝ առաջին Հազարամյակի մեր գրաբար բանահյուսութենեն ունինք միայն մեր ձեռքը Հասած վիպասանական կտորտանքներ. ինչպես բուն էության, այնպես ալ արվեստի տեսակետեն միայն անոնց մասին բան մը կրնանք խոսիլ:

Մեր Հին անգիր վիպասանության վրա ներքին արվեստի տեսակետեն աչքի կիյնա մասնավորապես չորս Հատկություն:

Ամենեն առաջ՝ արտահայտության պարզություն, կարճ ու ամփոփ նախադասություններ. մտքերու շղթայավորումը կկատարվի նախադասություններու անմիջական կցումով, առանց արտաքին տրամաբանական շաղկապներու. և գերբայներու վրա կենային իբրև դիմավոր բայի. «և Հաներ», «և անցներ» երգչի մտքին մեջ ըսել է «և Հանեց», «և անցավ». ո՛չ թե մեր Հիմակվան Հասկացողությամբ «Հանելով», «անցնելով», որ ոլորուն ու ծանր մտածելու եղանակ մըն է և օտարամուտ:

Երկրորդ Հատկությունը մտածումի կենդանությունն է, շարժունակությունը մտածողության. դեմք գործողություն մըն է միշտ, ըրված բան մըն է միշտ, կատարվող բան մը, որ կնկարագրվի ու կգծագրվի: Մեր արդի մտածման ու արտահայտության մեջ շատ Հաճախ վիճակ ու դրություն է, որ կտոր-կտոր կներկայացվի, ո՛չ թե իրար Հաջորդող ու իրարմե բխող կենդանի գործողություններ:

Երրորդ Հատկությունը բառը պատկերավորելն է զանազան Համեմատություններով ու նմանեցումներով. «որպէս արծուի», «աչկունքն էին արեգակունք», բայց մանավանդ մակդիրներով ու մակբայներով. գրեթե տող չկա, ուր մակդիր մը գործածված չըլլա և ի՜նչ բնորոշ մակդիրներ: Պետք չէ մոռնանք, որ մակդիրն ու մակբայը նախադասության բուն Հիմնական իմաստին վրա Հավելյալ կերպով եկած անդամներն են, և ատոր Համար ալ առանցմե

ամէն մէկը զատ նախադասութեան մը արժէքը իր վրա ունի, նոր գաղափար մը, նոր պատկերացում մը, նոր հարստացում մը կբերե իր հետ:

Չորրորդ հատկութիւնն ալ հուզականութիւնն է. երգիչը կջանա իր սեփական հոգիին մեջ ալեկոծող հուզումները վարակիչ դարձնել. կգործածե բառեր, ձևեր, արտահայտութիւններ ու դատում, որոնք հարուստ են հուզական տարրերով, որոնք գրավիչ ու սիրելի են իրեն. գիտե, որ ատոնք ունկնդիրներուն համար ալ հուզիչ են, լողներու հոգիին մեջ ո՛չ թե հանգիստ պատկերացումներ ու մտածումներ կառաջացնեն, այլ կգրգռեն, կհիացնեն, կհափշտակեն, կզայրացնեն:

Ուրեմն կարճ ու կտրուկ նախադասութիւններ, ամեն ինչ պարզ ու հստակ, խուսափում ամեն ավելորդ ու ոլորուն բաներե, կենդանի ու աշխուժ գործողութեան պատկերացում, պատկերավորում հնար եղածին չափ ամեն բովածի և այս բոլորի միջոցին մշտական ընտրանք բառերու և արտահայտութիւններու հուզադացական արժեքին:

Այս չորս հատկութիւններն են արդեն ինչպես հայ անգիր վիպասանութեան, այդպես ալ ընդհանրապես ամեն վիպականգեղարվեստական ստեղծագործութեան մեջ գործադրվող ու փնտրվող առավելութիւնները. ատոնք են ըսելու արվեստին ներքին գլխավոր զենքերը բոլոր դարերու և առաջին իսկ օրեն, որովհետև մարդկային հոգիի բնութենեն կբղխին:

Չորս են նաև մեր անգիր վիպասանութեան արվեստին արտաքին գլխավոր հատկութիւնները:

Ամենեն առաջ՝ ախորժալուր հնչյուններու և հնչական կապակցութիւններու գործածութիւնը, այսինքն՝ դյուրին, կարճ, թեթև ու հաճելի հնչական կազմ ունեցող բառերու ընտրութիւն, որ ընդհանրապես կկատարվի բնազդորեն, բայց վարպետ գուսանը անշուշտ նաև գիտակցորեն գիտե օգտվիլ բառերու հնչական գրավչութենեն:

Երկրորդ հատկութիւնն է հնչակրկնութիւնը, այսինքն՝ իրարու կապված ու իրար հաջորդող բառերուն մեջ նույն հնչյունը կամ հնչախումբը գործածելն է, ամենեն ավելի աչքի կիյնա բառին

ակիզբը. «Արի արքայն Արտաշէս», «Երկնէր երկին և երկիր», «ծով ծիրանի», «Հուր Հեր»: Նույն դերը կխաղա Հատվածի մը մեջ կարճ ու սիրված բառի մը Հաճախակի կրկնությունը, ինչպես, օրինակ, «քաջ» բառը Սաթենիկի դիմումին մեջ: Կամ ախորժելի եղող կապակցություն մը իրարու մոտիկ կրկնությունը՝ «զմէջք փափուկ օրիորդին Ալանաց», «ընդ եղէգան փող բոց ելանէր», «ընդ եղէգան փող ծուխ ելանէր», «ի Տուհաց գաւառէն զԲասաղ գետով», «զԱրտիմէդ քաղաքաւ, զԲասաղ գետով»:

Երրորդ սիրված Հատկությունն է, անշուշտ ներեն խոսքի Հուզազգացական արժեքը բարձրացնելու Համար, Հարցի, զարմանքի, կանչածի ու դիմառնական-կոչական ձևերու ու բացականչություններու գործածությունը՝ փոխանակ պարզ պատմական-դրական ձևի. «Եւ ուստի՞ տացէ ինձ քաջն Արտաշէս», «Ո՛ տայր ինձ զծուխն ծխանի», «Ո՛վ դու, այր քաջ Արտաշէս»: Եվ ընդՀանրապես խոսակցությունը մեջբերելը՝ փոխանակ միշտ երրորդ դեմքով պատմելու:

Նույն Հուզազգացական արժեքը բարձրացնելու Համար է «իկ» մասնիկի Հաճախակի գործածությունը՝ «պատանեկիկ», «կարմրիկ», «եղէգնիկ»:

Նույն նպատակին կծառայեն անշուշտ իր արտասանած բառերուն Հետ գուսանի զուսպ շարժումները, դեմքի արտաՀայտության փոփոխությունները, ձայնին դողն ու ելևէջները:

Մեր Հին անգիր վիպասանական արվեստի չորրորդ արտաքին Հատկությունն է միաձույլ խոսքի արտասանական Հատվածումը, որ սովորական արտաՀայտությամբ չափ կանվանենք. թող ըլլա «չափ»՝ պայմանով, որ չափ ըսելով Հավասարաչափություն չՀասկնանք:

2. ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Մեր Հին վիպասանական արվեստի «չափը» առաջացած է պարզապես խոսքը կտրտելու բնական անՀրաժեշտութենեն: Արագ խոսակցության և ասության միջոցին անգամ տրամաբանական որոշ Հարկադրանքով և շնչառական ստիպումով խոսքի ընդՀանուր Հոսումը կտրտելու կստիպվինք թեթև կամ երկար ընդՀատումով

մը, թէև ընդհանուր առումով արագ խօսվածքը բառերն ու նախադասութիւնները իրար փակցնելու հակում ունի. մազերն ու տարբեր չուղերը իրար կփաթթուին մանող թելի մը պէս:

Տարբեր է պայմանը, երբ քիչ մը աւելի հանդիստ կխօսինք, ներկայացնելով ու բացատրելով կխօսինք, բառերն ու ասութիւնները ընտրելով, մտածելով կխօսինք և մանաւանդ երբ բազմութիւններու առջև «հանդիսաւոր» կխօսինք ու երկար կխօսինք, կմենախօսինք: Այս պարագային մեր խօսքին երկար թելը կտրտելը, մասնատելը, բեկորելը կդառնայ անհրաժեշտութիւն. նախ՝ իմաստի պարզութեան և մտածումների ընդգծման համար, այսինքն՝ տրամաբանական դրդումով. երկրորդ՝ աւելի տպաւորութիւն ընելու, աւելի հաճելի ըլլալու, լսելը բազմազանելու և աւելի գրաւիչ դարձնելու համար, այսինքն՝ հուզազգացական դրդումով. և երրորդ՝ հանգիստ շնչելու, ամեն ինչ որոշ ըսելու շունչը ունենալու և չհոգնելու ներքին պահանջով, այսինքն՝ բնախօսական դրդումով:

Եվ այս երեք դրդիչներու միաժամանակ գործածութեամբ կատարվող խօսքի թելին կտրտվիլը ունի երկու աստիճան: Նախ՝ աւելի լայն ու քիչ մը աւելի խոշոր կտորներու իրարմե անջատումը, որ կանվանեմ տողատում: Յուրաքանչյուր այս տեսակի խոշոր կտոր, այսինքն՝ յուրաքանչյուր արտասանական տող անպայման որոշ ամբողջութիւն մըն է ինքն իրմով. կրնայ մեկ կամ աւելի քերականական նախադասութիւններէ կազմված ըլլալ, կրնայ նախադասութեան մը կես կամ մեկ մասը միայն ներկայացնել, բայց պիտի ունենայ միշտ որոշ մտածումի մը արտահայտութիւնը, իմաստի որոշ ինքնուրույնութիւն մը:

Խօսքի այս աւելի լայն հատումները ունին սակայն իրենց ներքին աւելի մանր հատումները, քանի որ ամեն տող կազմված է քանի մը բառերէ, որոնցմե ամեն մեկը իր հատուկ իմաստը և որոշ դերը ունի տողին մեջ, և այդ դերն ու իմաստը հստակելու, իր լրիվ արժեքովը ցուցադրելու և ունկնդիրներու ուշադրութեան կեդրոնը բերելու համար ակնթարթ մը անհրաժեշտ է և այդ բառերը իրարմե առանձնացնել խօսքի թեթև ընդհատումներով. բացի իմաստի հարկադրանքեն կայ նաև հուզազգացական կողմը. այդ իրար հաջորդող ընդհատումները խօսքի հոսումին տեսակ մը ալիք

կուտան, որ ինչպէս ամէն պարբերական փոփոխութիւն, որ միապաղաղ հոսումը կխանգարէ, բազմազանութիւն կպատճառէ մարդուս ականջին: Ուրիշ խօսքով՝ ամէն տողատում ունի իր ներքին ներատումը՝ բառատումը:

Հայերէն լեզուի բառերը սովոր մեծամասնութեամբ երկվանկ են կամ եռավանկ: Միավանկ նախդիրները, միավանկ շաղկապները, միավանկ ստացական ու ցուցական դերանունները կձուլուին սովորաբար իրենց հաջորդող բառին. միավանկ մակդիրներն ալ շատ հաճախ ձույլ կարտասանենք իբրև մէկ մասը մակդիրուած բառի՝ բարդ բառի մը նման բան մը. իսկ միավանկ օժանդակ բայը իմաստ մը կառնէ միայն ուրիշ բառի մը հետ, որով շատ աւելի նվազ կդառնայ մէկ վանկի մը առանձնացումը: Չորս ու հինգ վանկանի բառեր ունինք բավականին, որով և չորս կամ հինգ վանկէ բաղկացած հատումները կպատահին մեջնմեջ: Բայց տիրապետողը տողերուն մէջ երկու ու երեք վանկանի հատումներն են:

Անգիր վեպին մէջ ամէն տող, նայելով իր բաղադրիչ բառերու թիվին և իրարու հետ ունեցած վերը հիշված կապերուն, կրնայ ունենալ երկու, երեք, չորս, հինգ և աւելի, բացառիկ կերպով վեց կամ յոթը ներքին հատումներ: Ամենէն հաճախ պատահողը տողին մէջ երեք ու չորս հատումներն են: Եվ ամէն հատում ալ, ինչպէս տեսանք, բաղկացած է մէկէն մինչև հինգ վանկերէ. և ամենէն սովորականն ու հաճախադէպը երկու վանկն է ու եռավանկը:

Այս բոլորը ամփոփելով՝ կտեսնենք մեր հին վիպասանական «չափը». 1) ազատ ու հանգիստ տողատում ըստ իմաստի, 2) տողերու անհավասար ներատում երեքէն հինգ հատվածներու մեծամասնութեամբ և 3) յուրաքանչյուր հատվածի վանկերուն թիվը անհավասար, բայց երկու և երեք վանկանիներու բացարձակ տիրապետութեամբ:

Եվ այս չափը իրավացի կերպով կրնանք անվանել հատվածական չափ, որ ո՛չ հունարէնի պէս ձայնավորներուն երկարն ու կարճը աչքի առաջ ունի, ո՛չ արդի եվրոպական քանի մը լեզուներու պէս բառերուն շեշտին կհենվի, ո՛չ ալ մեր հիմակվան չափերուն պէս տողերուն վանկերը կհաշվէ: Շատ աւելի բնական ու ճկուն «չափ» մը, որ բառերուն ամբողջականութիւնը կպահէ, ինչ-

պես և չեչտերուն ներքին ազատութիւնը: Եվ որ հնարավորութիւն ունի միշտ նոր ու նոր ձևեր արտադրելու ու զարգանալու: Եվ զարգացում բսխածն ալ հատուածներու ազատութեան մեջ որոշ սահմանափակումներ մտցնելն է, որոշ «կանոնավորութիւն», որուն վերադառնալու դեռ առիթը կունենամ:

3. ՆՄՈՒՇՆԵՐ

Հին վիպասանական արվեստի այս բոլոր ներքին ու արտաքին հատկութիւնները պարզ պարզելու համար և ստուգելու հարմարութիւն տալու համար ընթերցողին՝ կդնեմ Խորենացիի այն քանի մը կտորները, որոնք անգիր վեպերեն բառացի առնված ըլլալու հավանականութիւնը ունին:

Խորենացիի գրքին մեջ իր պատմութեան հոսանքին հյուսած կտորներ են ասոնք և բնականաբար արձակ գրութեամբ, բայց ուսումնասիրողները հաճախ գրի են առած մեր արդի ոտանավորի ձևով և իր տաղաչափութիւնը որոնելով. ես ալ կգրեմ այդ ձևով միմիայն բսխածքին տողատումը մատնանշելու համար, արտասանական տողատումը:

Երկնէր երկին եւ երկիր,
երկնէր եւ ծիրանի ծով.
երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն.
ընդ եղեգան փող ծուխ ելանէր.
ընդ եղեգան փող բոց ելանէր.
եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր.
նա հուր հեր ունէր,
ապա թէ բոց ունէր մօրուս
եւ աչկունքն էին արեգակունք:

♦

Քեզ ասեմ, այր քա՛ջ Արտաշէս,
որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց.

եւ հաւանեաց աչագեղոյ դստերս Ալանաց՝
տալ զպատանին.
զի վասն միոյ քինու ո՛չ է օրէն
զիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն
կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել
եւ թշնամութիւն յաւիտենական
ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել:

◆

Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս
հազարս ի հազարաց եւ բիւրս ի բիւրուց
ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Ալանաց:

◆

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ
եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն
եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն
եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց.
եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին
արագ հասուցանելով ի բանակն իւր:

◆

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
տեղայր մարգարիտ իր հարսնութեանն Սաթինկանն:

◆

Տենչայ Սաթենիկ տիկին տենչանս
զարտախուր խաւարտ եւ զտից խաւարծի
ի բարձիցն Արգաւանայ:

◆

Ո՛ տայր ինձ զծուխն ծխանի

եւ զառաւօտն նաւասարդի,
զվարգելն եղանց եւ զվազելն եղջերուաց.
մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք:

◆

Եթէ դու յորս հեծցիս յազատն ի վեր ի Մասիս,
զքեզ կալցին քաջք,
տարցին յազատն ի վեր ի Մասիս,
անդ կացցես եւ զլոյս մի՛ տեսցես:

◆

Մինչ դու գնացեր
եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
ես աւերակացս որպէ՞ս թագաւորեմ:

◆

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն
ի Տուհաց գաւառէն զ·Քասաղ գետով,
եկեալ, նստեալ զՇրէշ բլրով,
զԱրտիմէդ քաղաքաւ, զ·Քասաղ գետով,
կռել, կոփել զդուռն Երուանդայ արքայի:

Նույն հատկությունները ստուգման համար կիսաքրիստոնյա շրջանի Դ դարու գուսանական վիպասանութենեն կդնեմ երկու դրվագներ, որոնք նմանապես բառացի ըլլալու ամենեն ավելի հավանականությունը ունին: Փավստոս Բուզանդի գրքին մեջ պատմության ընդհանուր թելին հյուսված կտորներ են ասոնք և բնականաբար արձակ գրությամբ. այդ բոլորը ոտանավորի ձևով գրի առնելը հաճելի խաղ մըն է, դիցուք և քիչիկ մը կամայական: Ես ալ հոս ոտանավորի ձևով կարտագրեմ միայն արտասանական տողատումը մատնանիշ ընելու համար. հոս ու հոն որոշ տողերու մեջ կարելի է նաև այլ կերպով կատարել հատումը. բայց ինչպես ալ որ կտրենք՝ ամեն տող իմաստի ամբողջություն մը պիտի պահե:

Ապա Հրաման տայր Թագաւորն Շապուհ
զկէս յատակին իւրոյ խորանին
Հարկանել ի բերեալ Հողոյն Հայոց
եւ զջուրն ցանել ի վերայ նորա,
եւ զկէսն ի նոյն Հողն զիւրոյ բնակութեան երկրին Թողուլ:
Եւ նա ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջեւ իւրով
եւ զայլ մարդիկն ի բաց Հրամայեաց կացուցանել
եւ զձեռանէ առեալ շրջէր ճեմելով:
Եւ երթեալ եկեալ ընդ խորանն
ասէ ցնա յորժամ ի պարսիկ ի Հողոյն ի վերայ ճեմէին,
Թէ ընդէ՞ր եղեր իմ Թշնամի, Արշակ արքայ Հայոց.
զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ
եւ կամեցայ տալ քեզ զդուստր իմ ի կնութիւն
եւ որդի ինձ առնել զքեզ,
իսկ դու խստացար ընդ իս
եւ քով կամօք՝ առանց իմոց կամաց՝
եղեր ընդ իս Թշնամի.
եւ այս լի երեսուն ամ է,
զի պատերազմեցար ընդ իս:
Ասէ Արշակ արքայ,
Թէ մեղայ քեզ եւ յանցեայ.
զի ես եկի եւ կոտորեցի
եւ յաղԹեցի Թշնամեաց քոց
եւ ակն ունէի ի քէն պարգեւ կենաց.
եւ Թշնամիք իմ Հրապուրեցին զիս
եւ արկին երկիւղուկս ի քէն
եւ փախուցին ի քէն:
Եւ երդումն իմ, զոր երդուայ քեզ,
յառաջ ածին զիս եւ եկի աւասիկ առաջի քո:
Եւ աւասիկ ծառայ քո ի ձեռս քո կամ.
զինչ եւ պէտք է քեզ՝ արա զիս.

զինչ եւ կամ իցէ, սպան զիս.
զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ,
մահապարտ եմ:
Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա
շրջէր ճեմելով ի չքմեղս առեալ զնա
ածէր ի հայակողմն ի հողն հարեալ յատակն:
Իսկ իբրեւ յայն տեղի հասանէր
եւ զհայ զհողն կոխէր,
մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ
այլ ձայն շրջէր, սկսանէր խօսել եւ ասել.
Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ
տիրացեալ տէրանցն քոց.
այլ ոչ թողից զքեզ եւ որդւոց քոց
զվրէժ նախնեաց իմոց
եւ զմահ Արտեւանայ արքայի:
Զի այժմիկ ձեր՝ ծառայից
զմեր՝ տէրանց ձերոց զբարձ կալեալ է.
բայց ոչ թողից,
եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ:

◆

Եւ չոգաւ Դրաստամատն
Հանդերձ փշտիպանաւն եւ հրովարտակաւն արքունի
յԱնուշ բերդն
եւ ետես զտէրն բնակ.
եւ արձակեաց զԱրշակ ի կապանացն երկաթեաց
ի ձեռակապացն եւ յոտիցն երկաթոց
եւ յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն.
եւ լուաց զգլուխ նորա.
եւ լոգացոյց զանձն նորա,
եւ ագոյց նմա պատմուճան ազնիւ,
եւ էարկ նմա բազմականս եւ բազմեցոյց զնա,
եւ եդ առաջի նորա ընթրիս

ըստ օրինաց թագաւորաց,
եւ եդ առաջի նորա զինի,
որպէս օրէն էր թագաւորացն.
սթափեաց զնա եւ մխիթարեաց
եւ ուրախ առնէր զնա գուսանօք:
Եւ ի ժամ աղանդեր մատուցանելոյ
եդին առաջի նորա միրգ
խնձոր եւ վարունգ եւ ամիճ, զի կերիցէ.
եւ եդին դանակ նմա,
որպէս զի հատցէ եւ կերիցէ զխարդ եւ կամեսցի:
Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա,
կայր յոտն եւ մխիթարէր զնա:
Իսկ յորժամ արբեցաւ
եւ զինին եկն զակամբ նորա,
արբեցաւ, հպարտացաւ եւ ասէ.
Վա՛յ ինձ Արշակայ.
այս ես եւ ա՞յս. եւ յայսմ չափու.
եւ այս ա՞նցք անցին ընդ իս:
Եւ զայս ասացեալ
զդանակն, զոր ունէր ի ձեռինն,
որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել,
եհար ի սրտի իւրում
եւ անդէն սատակեցաւ.
եւ մեռաւ անդէն ի նմին ժամուն
մինչ դեռ կայր ի բազմականին:
Իսկ յորժամ զայն ետես Դրաստամատն,
յարձակեցաւ եհան ի նմանէ զնոյն դանակ
եւ եհար յիւրում կշտին.
եւ անդէն մեռաւ եւ նա ի նմին ժամուն յայնմ:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԳՐԱԲԱՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԸ

Գրաբարի առաջին Հազարամյակը ունեցավ միայն անգիր բանահյուսություն. գրաբարի երկրորդ Հազարամյակը արդեն նեղ մտքով գրականություն է, գրքի բանահյուսություն. գիրն է իր զենքը:

Գիրը բերավ քրիստոնեությունը և բերավ իր պետքերուն Համար: Քրիստոնեական կրոնը Հայու ներքին կյանքեն բղխած բան մը չէր, այլ դուրսեն ներմուծված. և այդ պատճառով այ բոլոր կարգերը, ծեսերը, աղոթքները և բոլոր ըսվելիք, գիտնալիք և պատմվելիք բաները դուրսեն պետք է բերվեին՝ դրացի Հունական գավառներեն կամ Հարավի Ասորիքեն, Հունարեն և ասորերեն գրություններով: Օտար գիրն ու օտար լեզուն մեծ դժվարություններ կպատճառեր. ամեն բան տեղնուտեղը պետք էր կարդալ ու թարգմանել, որ ամեն մարդու գործ չէր և տեղի կուտար զանազան տարբեր ըմբռնումներու ու կբարդացներ ամեն արարողություն և մեկնություն: Օտար լեզուն և օտար գիրքը մեծ անհարմարություններ կստեղծեր նոր վարդապետության կենդանի գործունեության ու խորացման: Միևնույն ժամանակ տեղական բուն Հայ Հոգևորականը տեսակ մը ավելի խոնարհ դրության մեջ կգներ դուրսերեն եկած Հոգևորականներու Հանդեպ: Ստիպողական պահանջ էր դարձած Հայ գիր և Հայ գրություն ունենալը տեղացի Հայ Հոգևորականության Համար:

Կգիմեին ամեն կողմ, Հարց ու փորձ կընեին, որ կերպ մը Հայ արտասանության Համմարող այբուբեն մը ճարեն կամ Հնարեն Հույն և ասորի գրերու Հետևողությամբ: Երկար ճիգերե, որոնումներե ու փորձերե ետքը Մեսրոպ Մաշտոց վարդապետը Հաջողու-

թյամբ գլուխ բերավ այդ գործը 404–406 թվին: Եվ անմիջապես այդ նորաստեղծ հայ տառերով սկսավ գոյանալ ահագին քրիստոնեական հայ գրականություն մը նախ թարգմանաբար, բայց ատոր զուգընթաց ատոր հետևողությամբ հետզհետե նաև ինքնագիր երկեր:

Եվ ո՛չ միայն այդ սկզբի օրերուն, այլև հաջորդ դարն ու դարերը և ամբողջ հազարամյակը գիրն ու գրականությունը մնաց հոգևորականության ձեռքը, ծառայեց եկեղեցիի ու եկեղեցականության պետքերուն և եղավ կրողն ու արտահայտողը քրիստոնեական ըմբռնումներուն ու հավատալիքներուն: Թարգմանված ու հեղինակված ահագին դեզերով գրություններուն ստվար-ստվար մեծամասնությունը նեղ մտքով կապված էր եկեղեցական պետքերուն և կրոնական խնդիրներու: Նույնիսկ այն համեմատաբար սակավաթիվ երկերը, որոնք իմաստասիրական կամ պատմական նյութերու և հարցերու կմոտենան, կա՛մ խորքին մեջ նորեն կրոնական քարոզ, խրատ ու մեկնություն մը ունին իրենց տակը, կա՛մ շաղախված ու խմորված են հոգևորական ըմբռնումներով, կրոնական նպատակներով և վարդապետական վերաբերումով:

Արդեն գրիչ շարժել գիտցող և գրություններ արտադրող, արտագրող և կարդացող մարդիկը հոգևորականներն են միայն մատի վրա համրվող բացառությամբ. և այդ բացառիկ աշխարհականներն ալ միևնույն հոգևորականներու թևին տակը սնած ու կրթված՝ հոգևորականի հայեցողություններեն ոչինչով չեն տարբերիր, օրինակ՝ Գրիգոր Մագիստրոսի նման դեմք մը, որ բոլորովին նույն հարցերով կզբաղի, նույն բաները կգրե, նույն ձևով ու ոգիով:

Այնպես որ կատարյալ իրավունք ունինք այս տասը դարերու գրաբար գրություններուն ամբողջությունը քրիստոնեական գրականություն անվանելու՝ հակադրելով և՛ նախորդ՝ հեթանոսական բանահյուսության, և՛ հաջորդ՝ աշխարհականացած գրականությանը գրաբարի:

Սակայն բնական է, որ այդ հազար տարիներու ընթացքին քրիստոնեական գրականությունը իր ստեղծագործ թափը, շունչն ու ոգին միշտ նույնը պահել չէր կրնար ներքին ու արտաքին փոփոխվող պայմաններու ազդեցության տակ:

* * *

Առաջին շրջանին՝ գրերու գյուտեն մինչև արաբական արշավները,Նոր կրոն մըն է, որ տիրեր է Նոր աշխարհ մը. պետք է մաքառի, պետք է կոտրե Հին կրոնի, Հին սովորություններու և Հին ըմբռնումներուն դիմադրությունը, պետք է հետզհետե կազմակերպվի և՛ ծիսական, և՛ վարչական, և՛ դավանական գետիններուն վրա. պետք է գրե, խոսի, քարոզե, մեկնաբանե ու քննադատե: Նոր վարդապետության մը դրականությունը իր առաջին շրջանին մեջ ամենեն ավելի եռուն, եռանդուն, բուռն ու բոլորանվեր կըլլա բնականորեն. ավելի թափ կունենա, ավելի տաղանդավոր ճիգեր կըլլան և շարժումն ալ ավելի մեծ ու բազմակողմանի:

Մանավանդ երբ այդ ներքին մղումին կմիանան արտաքին քաղաքական դրդումներ: Հայ պետականության բարձումով Հինգերորդ ու վեցերորդ դարերուն Հրապարակի վրա կմնային իրար յավ չըմբռնող և իրար նախանձող իշխանական տուներ Հայաստանի մեջ և մեկ կեդրոնի մը Հրամանովը քալող կազմակերպված Հոգևոր դաս մը, որուն վրա գլխավորապես կծանրանար քրիստոնեության պաշտպանության դժվար գործը պարսկական ճնշումին դեմ. Հոգևորականության վրա կիյնա նախարարները իրար բերելու և դիմադրությունը կազմակերպելու ծանր աշխատանքը. սուրերուն առջևեն խաչը կքալեր: Հոգևորական դասակարգը կդառնար նաև քաղաքական ղեկավար ուժ. և ձեռներեց էր ամեն բանի մեջ. ժողովներ, խորհրդակցություններ, քննադատություն Հակառակորդ կրոնի, գովք ու բարձրացում իր պաշտպան քաջերի. բանավոր ու գրավոր աՀագին շարժում մը:

Քրիստոնեացման երեք ու կես դարերը ընդհանրապես կկազմեն քրիստոնեության մաքառման, պայքարի, տարածման, Հաստատման, տիրացման շրջանը Հայաստանի մեջ: Իր ճիգերը էապես դեպի դուրս, դեպի աշխարհն են ուղղված, շարունակ կխոսվի Հանդերձյալ կյանքի անունով, բայց վարիչները այս կյանքի տիրապետության կձգտին: Հայ աշխարհը լրիվ քրիստոնյա դարձնել, դրսի քրիստոնեութենեն անկախ դարձնել, իրենց քրիստոնյա կազմակերպությունը ամրացնել, քրիստոնեությունը արտաքին թշնա-

միներին պաշտպանել, ներքին վերջին թշնամիները խորտակել, ամեն բանի մեջ իրենց կամքն ու տեսակետը պարտադրել և ամբողջ ժողովուրդի ղեկավարությունը իրենց ձեռքը պահել: Արտաքին մաքառման և աշխարհիկ տիրապետության ետեւ է քրիստոնեությունը այս առաջին շրջանին: Տիրող, վարող ու հաղթական կազմակերպություն մըն է, տեսակ մը տերն է երկրին ու իր դրօշը բարձր ու հպարտ բռնած:

* * *

Յօթներորդ դարուն կեսերեն արաբական արշավանքներուն հետ խորտակես կփլփլին պայմանները, քրիստոնեությունը կդառնա խոնարհած ու տկրված կրոնք մը. մահմետական իշխանության ու հալածանքներուն տակ հոգևորականությունը կկծկտի ինքն իր վրա. և արտաքին աշխարհական ու քաղաքական ղեկավարութենե զրկված ու ձեռնթափ՝ մեր հոգևոր հայրերը ստիպված են բավականանալու միայն ներքին հոգեկան աշխարհով: Եվ առոր համեմատ ալ թե՛ ինքզինքնին և թե՛ իրենց հոտը մխիթարելու համար շրջապատող բոլոր զրկանքներուն, հալածանքներուն և ստորնացման հանդեպ՝ կսկսին խիստ ընդգծել հանդերձյալ կյանքի ապագա երանությունները, որ կսպասե ճշմարիտ քրիստոնյային:

Այլև հոգևոր հայրերու հոգեկան աշխարհը հետզհետե շատ ավելի խեղճացավ քաղաքական և տնտեսական կեղեքումի այդ օրերուն. «ուսում ունեցող» հոգևորականը չափազանց հազվագյուտ երևույթ մը դարձավ և իր ուսումն ալ շատ համեստ: Ըմբռնումներն ու հավատալիքները ամենուն հոգին մեջ արագ կասմկանային. նորեն կշեշտվեր հրաշքներու, տեսիլներու, դժոխքի չարչարանքներու, դևերու ու սատանաներու հավատքը, հոգիները բոլորովին կլցվեին սնոտիապաշտություններով ու նախապաշարումներով: Ինչքան հոգևոր անձ մը իրական աշխարհի իրական պայմաններեն կտրվեր և ինչքան խոր կերպով սնոտիապաշտ աշխարհի էակներովն ու կյանքով շրջապատվեր, այնքան կավելնար իր հարգը և՛ իր աչքին, և՛ իր հոգևոր ընկերներու, և՛ ժողովուրդի: Քրիստոնեությունը մեր երկրի իրական ղեկավարներուն հպարտ կրոնը ըլլալե կդառնար կամաց - կամաց կյանքե փախչողներու. նահատակներու, դևերու հետ մարտնչողներու և աղքատ

հոգիներու կրոն մը: Արտաքին կյանքին տիրելու ու ղեկավարելու հին դրդումներուն տեղը կբռնեին ներքին հոգեկան տիրակայության դրդումներ:

Իններորդ դարու կեսին Բագրատունի, Արծրունի և մյուս ավելի մանր ու կիսանկախ հայ թագավորություններուն հիմնվիլը անշուշտ որ բերավ և՛ դիրքի, և՛ տնտեսական վիճակի, և՛ մտավոր ճիգերու որոշ փոփոխություն հայ հոգևոր վերին դասին համար, բայց չբերավ հոգեբանական մեծ ու հիմնական տարբերություն մը:

Քրիստոնեության բուն միջնադարն էր. ամեն տեղ ալ Քրիստոսի կրոնը տեսակ մը հոգնած էր ու թևթափ. մասամբ պատճառը կիսավայրենի ցեղերն էին, որ դարձեր էին քրիստոնյա ու տվեր էին քրիստոնեության իրենց դեռ շատ մանուկ հոգիին սնոտիապաշտ ըմբռնումները, մասամբ մահմեդականության մեծ հաղթանակները ճնշեր էին նահանջող քրիստոնեության վրա. մասամբ ալ, ինչպես ըսի, մահմեդականության լծին տակ կքած մասերուն մեջ հոգևոր վարչությունը ինքն էր տափակած ու խեղճացած և՛ տնտեսապես, և՛ մտավորապես: Որով ամեն տեղ ալ աչքի կիյնա ռամկացում և սնոտի հավատալիքներ մեկ կողմեն, մյուս կողմեն ալ՝ այդ դևերուն ու սատանաներուն որոգայթներեն ազատվելու ճիգ, կյանքեն փախուստ, մարմնի խոշտանգում, ճգնավորական բնազդներու ուժեղացում ու մենակեցության սեր:

Այս է պատկերը նաև մեր կիսանկախ մանր թագավորություններու սահմաններուն մեջ. և այդ ոգիին ենթակա են անխտիր ամենքը, ինչպես հոգևորականը, ինչպես հասարակ ժողովուրդը, այնպես ալ ժողովուրդի ավելի բարձր դասակարգը, այսինքն՝ հին իշխանական տուները և առևտրով հարստացած ու դիրք ստացած նոր ընտանիքները: Այս բարձր տուներու միակ իրական տարբերությունը հասարակ ժողովուրդեն կրոնական հարցերու մեջ այն իրողությունն է, որ բարձր դասերը հնարավորություն ունեին վայելքի շատ ավելի մեծ չափերով և անհամեմատ ավելի առիթներ հանդերձյալի ու երկնայինի դեմ մեղանչելու: Եվ վերջն ալ իրենց կյանքի դեպի գերեզման խոնարհվող տարիներուն հնարավորություն ունեին տեսակ մը իրենց մեղքերը դրամով ետ գնելու: Հոսկե կառաջանա

անոնց մեծ սերը աստվածահաճո բարեգործություններ կատարելու, այսինքն՝ իրենց ունեցած կամ դիզած հարստություններեն բաժին հանելու Աստուծուն իրենց հոգիի փրկության համար: Մեծ եռանդ մը կա մանավանդ եկեղեցիներ ու մատուռներ կառուցելու, ինչպես և վանքեր ու մենաստաններ հիմնելու կամ եղածները բարեզարդելու, հոգևորականությունը շոյելու առատ նվերներով, որու փոխարեն հոգևորականներն ալ կհաստատեին տարվան մեջ «այսքան ու այսքան օրեր»՝ նայելով նվերի մեծության, նվիրողի հոգիի փրկության համար աղոթելու:

Հատկապես մենաստաններն ու վանական կյանքը տասներորդ դարուն կդառնա ուղղակի նոր երևույթ, տաճարներով վանքեր ծնունդ կառնեն լեռներուն ու անտառներուն խորքերը մեր թագավորներու և իշխանական տներու հովանիին տակ: Վանքե՛ր, ուր տաճարներով, մեկ-երկու տեղ՝ հարյուրյակներով կհավաքին վանականները միաբանություն կազմելու. անոնք կուգան անշուշտ անաշխատ ու ապահով ուտելիքի հրապույրով, բայց ընդհանրապես ժամանակի ոգին մղած ներքին դրդումով, կյանքե փախչելով աղոթքի ու պաշտամունքի նվիրվելու համար, մեկ փոքր մասն ալ կուգար ուղղակի ճգնելու, իր մարմինին դեմ կռվելու և հոգիանալու տենչանքով:

Այս վանականները, հատկապես անոնցմե ավելի սրբակյացները և ճգնավորները մեծ համբավ կվայելեին և ժողովուրդի վրա մեծ ազդեցություն ունեին: Եվ պարզ է, որ բարձր հոգևորականությունը հաճույքով կնայեր անոնց թվի շատացման վրա. անոնք տեսակ մը իր զինվորներն էին, իր հեղինակությունը բարձրացնող հաստատություններ: Զարմանալու ոչինչ չկա, որ հոգևոր ու աշխարհական պետերը կարծես իրարու հետ մրցումի էին ելած վանքեր կառուցելու և պարենավորելու գործին մեջ: Հատկե օգտվողը եղած է դարուն ճարտարապետությունը:

* * *

Տասնմեկերորդ դարը դեռ կես չեղած՝ ծայր կուտան արևելքեն սելճուկյան արշավանքները. և շուտով մեր աշխարհը կդառնա ավեր. հափշտակություն, արյուն ու փախուստ: Մեր բուն արևել-

յան Հայրենիքն է, որ ենթարկված է ամենեն ավելի քանդումի. նախորդ շրջանին արդեն սաստիկ նոսրացած ու տկարացած ազնվականությունը գրեթե հիմա բոլորովին կոչնչանա, մնացորդները կապաստանին կա՛մ Հունական սահմաններր՝ Տավրոսի լեռներուն վրա, կա՛մ Վրաստանի սահմանները՝ Սևանը շրջապատող բարձրություններուն վրա: Բերրի ու ավելի հարուստ գավառները կամայանան հայութենե, կդառնան նիստը օտար ցեղերու:

Մոտավորապես դար մը ետքը, երբ ողողումին թափը կնստի, կտեսնենք, որ նոր Հայ պետական կյանք մը ծիլ է տված մեր Հայրենիքի հյուսիսարևելյան և հարավարևմտյան լեռնոտ մասերուն վրա, ուր փախստական ազնվականությունն էր ապաստանած:

Կիլիկիայի մեջ Ռուբինյան իշխանություն մը, որ շուտով թագավորության կվերածվի ու կտևե մոտ երեք դար. իսկ Վրաստանի սահմանակից լեռնային մասերուն վրա, իբրև Վրաստանի սպարապետներ՝ Իվանե ու Զաքարիա եղբայրներու ձեռքով կկազմվի հայկական պետական իշխանություն մը, որուն կկապվի շուտով Պռոշյան տոհմի մը իշխանությունը և որ ինքզինքը կպարտադրե ու կտևե գրեթե ամբողջ թաթարական տիրապետության օրերուն:

Եվ այս երկու Հայ իշխանական ծայրագավառներուն մեջն ալ կկեդրոնանա բնական կերպով Հայ կրոնական, քաղաքակրթական ու գրական շարժումը: Կուսակրոն հոգևորականությունը, որ միշտ ղեկավարն է Հայ եկեղեցիին, կապաստանի այդ երկու Հայ պետություն ունեցող անկյուններր հանգիստ ու պաշտպանություն գտնելու համար. և այդ իշխաններու օժանդակությամբ ալ շրջապատող ձորերուն ու անտառներուն խորքը հետզհետե կհիմնվին նոր ու նոր վանքեր:

Բայց այս նոր վանքերը խոշոր տարբերություն մը ունին սակայն նախորդ շրջանի վանքերուն հետ համեմատած: Արաբական շրջանին վանքերը, ինչպես տեսանք, ճապես կհիմնվեին կրոնական-ճգնավորական դրդումներով, աշխարհային գայթակղութենե մեկուսանելու ճիգով, մարմինը սպաննելու և ամբողջովին հոգեկան վերացման մը նվիրվելու համար աղոթքով ու մարմնի խոշտան-

գումով: Հիմա այս նոր Հիմնվող վանքերուն մէջ աղօթքն ու արա-
րողութիւնը կերթայ նոյն Հին կարգով, բայց փոխված է վանական
կեանքին մէջ ներքին դրդումը, իրենց գոյութիւն ստանալու խորքի
պատճառը: Թէ՛ իշխանները, որ նյութական ու վարչական ամեն
միջոցներով կնպաստեն նոր վանքերու առաջացման, և թէ՛ իրենք
Հոգևոր Հայրերը, որ կձգտին այդ նոր միաբանութիւններու Հաս-
տատման, բոլորին ալ ներքին մղումը խաթարված կրոնական Հին
սուրբ կարգերը ու արարողութիւնները վերանորոգելն է, խեղճա-
ցած եկեղեցին պայծառացնելն է, անշքացած ու անգրագետ Հոգևո-
րականութեան միտքն ու պատրաստութիւնը բարձրացնելը, գրա-
բար լեզուն, գրաբար գիրքը և գրաբար գրականութիւնը վերստին
ծաղկումի բերելը: Այս նոր վանքերուն մէջ մղիչ ուժը և առաջնորդ
սկզբունքը ուսումն է. եկեղեցական գիրք ունին ճգնութիւնն ու
ծոմապահութիւնը, այսինքն՝ ճիշդ Հակառակը նախորդ շրջանի,
ուր քանի մը վանքերու մէջ որոշ աստիճանի Հոգ կտարվեր նաև
ուսման ու գրչարվեստի, թեև տիրող սկզբունքը ճգնութիւնն էր ու
սատանային դեմ մղված պայքարը:

Այս Հոգևոր խոր փոփոխութեան պատճառը մեկ կողմեն բնա-
կան Հակազդեցութիւնն է. միշտ ու ամեն տեղ Հոգեկան որոշ
շարժում մը որոշ աստիճանի մը Հասնելեն ետքը կանգ կառնե վայրկ-
յան մը վարանոտ. կարծես ամենքը կկշտանան Հանկարծ և կռնեն
տարբեր և Հաճախ ուղղակի Հակառակ ուղղութիւնը: Այդ փոփո-
խութեան մէջ դեր ունին անշուշտ առևտրական քանի մը Հարուստ
քաղաքներու առաջացումը Սև ծովը և արևելքը իրարու կապող
գլխավոր ճամբուն վրա, ինչպես են Դվին, Անի, Արծն, Կարին:
Իսկ վաճառաշահ քաղաք կնշանակե նոր դասակարգ. Հարուստ ու
երթևեկող և արդյունագործող, որ միշտ ալ ավելի սեր ունի գիտ-
նալու, փորձելու, լսելու. ամեն տեղ ալ երրորդ դասակարգը եղած
է ուսումնասեր և ուսման պաշտպան: Հոգեկան այդ փոփոխութեան
մէջ որոշ դեր ունի անշուշտ քանի մը դարերու արաբական քաղա-
քակրթութեան ազդեցութիւնը, արաբական գիտական մտքի և
իմաստուններուն ազդեցութիւնը, ինչքան ալ որ այդ բոլորը Հեռավեն
գար ու դանդաղ:

Ասոր Համար ալ, երբ սելճուկյան առաջին ամեն ինչ ավերող

ողողումը կմեղմի և սելճուկյան լայն սուլթանություն մը իր թևերը կփռե և կուգա համեմատական հանգիստ մը, ԺԱ և ԺԲ դարերու ընթացքին Հայաստանի մեջ ամեն կողմ դեռ մնացած, կամ կարկտած ու նորոգած, կամ նոր հիմնվող վանքերը իրար ետևե և իրար նայելով կդառնան ուսման վառարաններ, դպրոցներ, վարդապետարան՝ քրիստոնեական գիտությամբ ու եկեղեցական զենքերով զինված հոգևորականներ հասցնելու համար: Այդ պատճառով ալ շուտով վանքերը կդառնան գրադարան, ձեռագիրներու հավաքարան, ձեռագիրները արտագրելու և բազմապատկելու գործատեղի, ձեռագիրները կազմող, զարդարող, զարդանկարող և նկարազարդող աշխատանոց: Ամեն կողմե ուսման հակում, կարդալու և մտածելու սեր ունեցող մարդոց աչքերը կուղղվին դեպի վանքերը, ուր խմբական դասավանդումը տեղ-տեղ կդառնա ուղղակի կանոնավոր և պարտադիր աշխատանք, վանքը կդառնա դպրեվանք. և կարծեմ սխալ չըլլար, եթե մեր գրաբար գրականության այդ քրիստոնեական վերջին դարերը անվանենք դպրեվանյան շրջան:

Ներքին հափշտակությամբ ու մշտական տվայտանքով ապրող ճգնավորական դարերու կհաջորդեր ահա վանական ուսումնական շրջան մը շատ ավելի հանգիստ հոգիով, հայեցողական տրամադրությամբ և որոշ գիտական ու գրական կյանքով և հմտությամբ:

* * *

Այդ վանքերեն հռչակ ու հատուկ կարևորություն կստանան Հայ աշխարհի հյուսիսային-արևելյան սահմաններուն վրա Գուգարաց լեռնախումբերուն մեջ Հաղբատ, Սանահին ու Գետիկ վանքերը ԺԲ ու ԺԳ դարերու ընթացքին, քիչ մը ավելի ուշ՝ Գլաձորի վանքը և Սյունիքի լեռներուն մեջ Տաթևի վանքը:

Իսկ Ռուբինյան ու Հեթումյան իշխաններու պաշտպանությամբ ու նպաստով Կիլիկիայի լեռներուն մեջ անուն կհանեն Հռոմկլայի բերդը, որ վանք մըն է ըստ էության, ինչպես և Սիսի կաթողիկոսարանը, որ նմանապես վանք մըն է ինքնին. այլև Դրազարկի վանքը, Սկևռա վանքը, Գռներ, Ակներ և Այգեկ վանքերը. որոնցմե

ամէն մէկը որոշ ժամանակաշրջանի մը մէջ դեր է խաղցած իբրեւ մտաւոր կեդրոն:

Եւ այս երկու խումբ վանքերուն մէջ շուտով կառաջանան Հայ գրականութեան համար երկու տարբեր թեւեր՝ շնորհիւ քաղաքական տարբեր պայմաններուն: Թուրանական դարաշրջանի գրութիւններուն հեղինակները կբաժնուին երկուքի՝ արեւմտեան ու արեւելեան հեղինակներ: Արեւմտեանները, այսինքն՝ Կիլիկիայի հոգեւորականութիւնը, իր իշխաններուն ու թագաւորներուն հետ միասին շրջակայ մահմետական սուլթանութիւններու սպառնալիքին տակ իրենց աչքերը ուղղած են միշտ դէպի արեւմտեան քրիստոնեայ աշխարհը, ուրկէ կսպասէին իրենց համար օգնութիւն ու փրկութիւն: Եւ այդ պատճառով ալ հարկադրուած էին գոնէ սկզբունքով ընդունելու նախ Բիւզանդիոնի եւ վերջն ալ Հռոմի հետ կրօնական միութիւն մը գաղափարը որոշ թեթեւ զիջումներով, բայց իրենց հիմնական դաւանանքը եւ իրենց վարչական անկախութիւնը պահելու անկարելի ծրագիրներով: Մինչդեռ արեւելեան վանքերուն մէջ նստած մեր հոգեւորականները, այդ կարգի քաղաքական ճնշումներէ ազատ, ամուր կառչած էին դարերու խորքէն իրենց հասնող հայ դաւանանքին, որուն վրայ որեւէ փոփոխութիւն մը մտցնելը սրբապղծութիւն կթուէր իրենց, եւ համառօրէն կդիմադրէին ու կկռուէին արեւմտեան հոգեւորականներու թուլացումներուն դէմ:

Այս խիստ աղմուկ հանած տարբերութենէն զատ ուրիշ ամէն բանով երկու թեւի վանքերն ալ բուն էութեան նման էին իրար. եւ արդէն հաճախ երկուստեք հոգեւորականները կճամբորդէին մէկէն միւսը, վանքէ վանք՝ այս կամ այն ճիւղի մէջ կատարելագործուելու համար այսինչ կամ այնինչ անուն հանած վարդապետին ձեռքին տակ:

Այդ վանքերուն մէջ բացի ժամասացութենէ եւ պաշտամունքին կապուած աղօթքներէ եւ շարականէ, կուսուցանէին ամէնէն առաջ Սուրբ գիրքի խորին հմտութիւն, հին հոգեւոր հայրերու քանի մը կարեւոր երկերուն ընթերցում մը եւ հատկապէս մեկնիչներուն աշխատութիւնը: Այս զուտ կրօնական զարգացման կից կուսուցանէին նաեւ քերականութիւն եւ փիլիսոփայութիւն:

Քերականութիւն բաւածը ժամանակի հասկացողութեամբ կ՚ընդգրկէ շատ աւելի լայն նիւթեր. մօտաւորապէս կնշանակէ 1) գրաբար լեզուի կանոնաւոր յուրացում, 2) ուղղագրական ու ճարտասանական ձեւերու ընտելացում, 3) հռետորութիւն, այսինքն՝ քարոզներ գրելու ու ըսելու վարժութիւն, 4) եկեղեցական ու քաղաքական հայ պատմութեան ծանօթացում և 5) ընդհանրապէս գիտական ու գրական ծանօթութիւն ու վերծանութիւն:

Իսկ փիլիսոփայութիւն բաւածը քանի մը իմաստասիրական գրութիւններու ընթերցումն է ու վերլուծութիւնը, ըստ քրիստոնեայ հայրերու մեկնաբանութեան. գլխաւոր հեղինակը Արիստոտելն է, որուն մէկ-երկու երկերը թարգմանուած էին հայերէնի արդէն վաղուց, հաւանօրէն կկարդացուէին նաև Դաւիթ Անհաղթի իմաստասիրական մեկնութիւնները:

Այս գրական պատրաստութեան կից պէտք է հիշել նաև մէկ-երկու արուեստ, որոնք կմշակուէին այդ վանքերուն մէջ. եկեղեցական երգն ու երաժշտութիւնը ամենէն առաջ, այլև, ինչպէս արդէն հիշեցի, ձեռագիրներու արտադրութիւնը, ինչպէս և տառերու նկարչական գեղազարդումը, որ տեղ-տեղ կվերածուի մանրանկարչութեան և գեղարուեստական խոր արժէքի. և վերջապէս կազմարարութիւն:

* * *

Այսպէսով՝ մեր հայրենիքին մէջ քրիստոնէութիւնը և իր հետն ալ քրիստոնեական գրականութիւնը հազար տարուան ընթացքին կանցնի երեք հիմնական աստիճաններէ. ունի բարձրացման երեք ալիք՝ իրենց մէջի էջքերովը. քրիստոնէութեան առաջին վերելքը, Բագրատունի վերելք մը և դպրեվանեան վերելքը: Բայց հայ քրիստոնեական գրականութեան այս ելևէջն ու տարբերութիւնները կվերաբերին աշխատանքի թափին, աշխուժացումին, թուլացումին, կվերաբերի հոգեկան տրամադրութիւններու փոփոխման, բայց ո՛չ աշխարհայացքի և ըմբռնումներու որևէ հիմնական ձևափոխութեան: Այդ բոլոր աստիճաններուն վրա ալ բոլոր գրութիւններուն նիւթերը, դատումները, տեսակէտները, մշակուած բոլոր գրական տեսակները, ձգտումները, քարոզները,

խոեայները միշտ միեւնոյնն է մէկ ծայրէն միւսը, կկրկնուի միշտ նոյնը:

Այս պատճառով ալ այս հազարամեակի գրական գործունէութեան պատկերը տալու համար աւելի պարզ ու հատակ կըլլայ, եթէ միշտ աչքի առաջ ունենանք ամբողջութիւնը ըստ քանի մը որոշ տեսակներու, քան եթէ բոլոր հարցերուն ու տեսակներուն մօտենանք դարերու կամ շրջաններու հաջորդական հատումով: Շրջաններու հաջորդական հատումով ուսումնասիրութիւնը արժէք ունի, եթէ այդ հատումները լրջօրէն կտարբերին իրարմէ նիւթով, ուղղութեամբ ու մշակման եղանակով:

Քրիստոնէական հազարամեակի գրաբար գրականութիւնը ձոյլ միակերպ ու ամբողջական զանգուած մըն է, որուն վրա կատարուած հարիւրական հատումները մեծ օգուտ մը չեն տար մեզի: Շատ աւելի պարզութիւն ու հատակութիւն կբերեն տեսողութեան այդ զանգուածի ամբողջութեան վրա քաշուած ուղղահայեաց հատումները, այսինքն՝ նիւթերու խմբումն ու ուսումնասիրութիւնը ըստ գլխաւոր տեսակներու ամբողջ հազարամեակը միասին առած:

Իսկ տեսակները որոշելու համար ամենէն բնականն է նախ զատել բուն կրօնական երկերը ոչ-կրօնական երկերէն. առաջ մեծամասնութիւնը դաւանանքի, եկեղեցիի ու եկեղեցականութեան հետ սերտօրէն կապուած երկերն են: Այդ զուտ կրօնական գրութիւններու ուսումնասիրութիւնն ալ կբաժնենք երկու մեծ խումբերու՝ կրօնական-գործնական գրութիւններ և կրօնական-գեղարուեստական գրութիւններ: Ոչ-կրօնական գրութիւնները նմանապէս կբաժնենք երկու խումբերի՝ պատմական երկեր և փիլիսոփայական-գիտական աշխատութիւններ. պատմականները պատկառելի թիւ մը կկազմեն, մինչդեռ գիտական ու իմաստասիրական երկերուն թիւը շատ է սահմանափակ:

Բայց բուն ինքնագիր գրական երկերու մասին խօսելէ առաջ անհրաժեշտ է ընդհանուր ակնարկ մը նետել այդ հազարամեակի ընթացքին մեր հոգեւոր հայրերու կատարած թարգմանական գրականութեան վրա:

Ե՛ւ հետաքրքիր է, ե՛ւ կարեւոր գաղափար մը ունենալը, թէ մեր հոգեւորականներն ու հեղինակները ի՞նչ օտար երկեր են թարգ-

մանած, ուրիշ խոսքով՝ ի՞նչ օտար երկեր կկարդային, ի՞նչ օտար երկերու անմիջական ազդեցութեան տակ էին:

Բ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Առաջին առիթողական գործը մեր քրիստոնյա Հայրերուն Համար Հայերեն լեզվով Սուրբ գիրք ունենալն էր, որուն վրա էր Հիմնված քրիստոնական կրոնի ամբողջ դավանանքը ըստ ղեկավար Հայրերու տեսության:

Հայերեն նոր գտնված տառերուն գործածությունը փորձելու մեկ-երկու աշխատություններեն անմիջապես ետքը՝ Սահակ Պարթև Հայրապետը Մեսրոպ Մաշտոց վարդապետի և խումբ մը ուրիշ երիտասարդ վարդապետներու Հետ, որոնցմե են նաև Եզնիկն ու Կորյունը, բոլորն ալ ասորագետ կամ Հունագետ, անմիջապես ձեռնարկեցին Սուրբ գրքի թարգմանության մեծ գործին և որ գլուխ բերին Հաջողությամբ և Հիանալի լեզվով: Բոլոր թարգմանիչները տեր էին պետական ու արքունի մշակված բարբառին, որ այդ թարգմանական ճիգերու միջոցին բնականաբար բան մը ավելի շահեցավ: Եվ շատ մը ուրիշ քրիստոնեությունը ընդունած ժողովուրդներու պես՝ Հայ ժողովուրդի Համար ալ առաջին մեծ ու ընտիր գիրքը դարձավ Աստվածաշունչը:

Քրիստոնեության Հիմքը նկատված այդ Սուրբ գիրքը պարզ երկ մը չէ, ո՛չ ալ միայն մեկ Հեղինակի մը գործը, ինչպես է, օրինակ, մաՀմեդականներուն Ղուրանը, ո՛չ ալ միմիայն քրիստոնեական վարդապետության նվիրված երկ մը:

Իր առաջին մեծագույն մասը, որ Հին կտակարան կկոչվի, բնավ կապ չունի քրիստոնեական կյանքի ու վարդապետության Հետ: Եփրայական Հին գրականության շատ կարևոր ու արժեքավոր երկերու Հավաքածու մըն է՝ շատ տարբեր-տարբեր նյութերով: Նախ՝ աշխարՀքի ստեղծագործության պատմությունը, ինչպես որ ըմբռնած են քաղդեական և սեմական ժողովուրդները. ետքը՝ եփրայական նաՀապետական շրջանեն կենդանի ու գեղեցիկ վիպական պատկերացումներ. ետքը՝ եփրայական դատավորական ու

թագաւորական շրջաններուն պատմութիւնը, ինչպէս և Հետագա դարերուն պատմական դէպքեր, իհարկէ բոլորն ալ անգիր բանահիւսութեան բերած ու մշակած նիւթերուն վրայէն գրի առնուած, ինչպէս բոլոր ժողովուրդներու հին պատմութիւնը. մակաբայեցիներու ազգային դիմադրութեան պատմութիւնը աւելի ուշ ժամանակներէն: Այլև սիրային տաք բանաստեղծութիւններու հատորիկ մը՝ Երգ երգոց. և ապաշխարութեան սքանչելի սաղմոսներ. առակներու հաւաքածու. և փիլիսոփայական-վիպական խոր ու գեղեցիկ պատկերացում մը՝ Յոբ Երանելին: Ինչպէս և բոլոր շրջապատող քաղաքական մրրիկներուն և ներքին մարդկային սովորական ցածութիւններուն դէմ եբրայական ազգային-միաստուածեան ոգին բարձր պահել քարոզող մարգարէներու կրակոտ գրութիւնները:

Ասոնք բոլորը գրական-գեղարուեստական գոհարներ են, ընդունակ ցեղի մը հոգեկան ստեղծագործութիւնները, վերին աստիճանի կենդանի, հիւթեղ ու գրաւիչ: Եւ ահա այս բոլոր օտար հարստութիւնները քրիստոնէութիւնը կբերէ ու կդնէ հայ լեզուով հայ հոգեորականի սեղանին վրայ, ուրկէ փշրանքներ կթափէին նաև հայ իշխանի ու իշխածի սեղանին վրայ:

Քրիստոնէական Սուրբ գրքի երկրորդ մասը՝ Նոր կտակարանը, կպարունակէ նախ Քրիստոսի կյանքն ու քարոզութիւնը՝ պատմուած կամ հորինուած չորս տարբեր գրիչներով ըստ աւանդութեան, ետքն ալ առաքյալներու կատարած գործերը, ինչպէս և անոնց գրած նամակները զանազան քրիստոնյա համայնքներուն: Այս երկրորդ մասն է ուրեմն իսկական Սուրբ գիրքը Նոր Հաւատքի: Այս գրութիւններն ալ, թէև բոլորովին տարբեր ոգիով, գրուած են նորէն շատ պարզ ու սրտանց և կուտան քրիստոնէական առաջին համայնքներուն իրական պատկերը, Քրիստոսի կյանքին վրայէն կանցնին սահելով, կուտան միայն քանի մը վիպական ու դրամատիկ կտորներ և շատ պարզ ու գեղեցիկ առակներ:

Սուրբ գիրքը և մանաւանդ Հին կտակարանը այն միակ գիրքն է քրիստոնէական ընդարձակ գրականութեան մէջ, որ ա՛յս աշխարհի, մեր ա՛յս իրականութեան կենդանի պատկերացումը ունի, ուր կտիրէ առատ լոյս, գոյն, կիրք ու մարմին, որ արյուն ունի,

զգացումներ, տենչեր ու մաքառումներ, որ ա՛յս աշխարհի մարդկային հոգին կնկարե, իրական, պատկերելի ու երկրային:

Հին կտակարանը կյանքն ու նյութը սիրող և իրականին մեջ հեթանոս ժողովուրդի մը բնական և խակական ստեղծագործությունն է: Նոր կտակարանի հեղինակները թեև այդ հեթանոս ոգին մեջտեղեն վերցնելու համար կգրեն, բայց հեթանոսներու կխոսին դեռ և հեթանոս ոճն ու ճաշակը կապրի դեռ իրենց իսկ հոգիին մեջ:

Նոր կտակարանին հաջորդող քրիստոնեական ղեկավար գրիչները կուսակրոն եկեղեցական հայրեր են, որոնք կջանան քրիստոնեական համայնքը, հոգևորականությունը, իրենց դավանաբանությունը, վարքն ու կենցաղը խիստ կերպով կտրել այս աշխարհի կյանքեն. այս աշխարհի պահանջքներուն ու վայելքներուն վրա արհամարհանքով կնային. մարդն ու մարդկայինը հեթանոսական խեղճություններ են անոնց համար. իրենց իտեալը հրեշտակներն են և իրենց երազն ու քարոզը հանդերձյալ կյանքը: Հրեշտակ կնշանակե անսեռ, անմարմին ու թևավոր էակներ, որոնք վերը եթերին մեջ կսավառնին աստվածտեսու թյան երջանկությամբ:

Այս պատճառով ալ զգայարանքները մեղքի աղբյուր կնկատվի և զգացումները շատ կասկածելի են. միակ արժեք ունեցող բանը մարդկային հոգիին մեջ կմնա միտքը և մտքին լարումը դեպի աստվածային ճշմարտություն: Եվ քրիստոնյա հեղինակները մտքին կխոսին, հին հեթանոսական դունալից պատկերացումին կհաջորդե դատողությունը, ճառը, մեկնաբանությունը ու դավանաբանական խրթին վեճեր: Իրացականության տեղը ամեն բանի մեջ կբռնե վերացականը. և երևակայությունը կդառնա այլաբանություն:

Այս տեսակի երկերն են քրիստոնեական հրապարակը բռնողը, նոր կրոնքի ոգուքին ու ճաշակին բավարարողը, և այս քրիստոնեական երկերն են բնականաբար, որ կթարգմանվին հայերենի հայ հոգևոր հայրերու ձեռքով: Եթե բացառաբար մեկ-երկու հատ ոչ-կրոնական գրքեր ալ կթարգմանվին, նորեն դրդիչը կրոնն է ու վերացականությունը. այսպես, օրինակ, Արիստոտելի փիլիսոփայական երկերը թարգմանված են, որովհետև Քրիստոսի միաբնա՞կ, թե՞ երկաբնակ ըլլալու վեճերուն մեջ ուզած են օգտագործել հին

Հույն որոշ իմաստասիրական տեսություններ: Նույնիսկ կենդանիներու կյանքին իբրև թե առնված աստվածաշնչական պատմություններուն խորքը միշտ կրոնական բացատրություն մը կա:

* * *

Քրիստոնեացման շրջանի ելքի դարերուն թարգմանված են.

Եփրեմ Ասորիի (Դ դար) մեկնությունները Հին ու Նոր կտակարանի զանազան մասերուն և վարդապետական ճառեր: Բարսեղ Կեսարացիի (Դ դար) վեցօրյա արարչության ճառերը: Հովհան Ոսկեբերանի (մինչև Ը-ի կեսերը) մեկնությունները Նոր կտակարանի զանազան գրքերուն և իր յոթը դավանական ճառերը: Եվսեբիոս Կեսարացիի (Դ) եկեղեցական պատմությունը և քրոնիկոնը, այսինքն՝ ընդհանուր պատմությունը: Եփրաս Ջզոն պարսիկի քսաներեք ճառերը: Փիլոն Եփրայեցիի (Դ) ճառերն ու մեկնությունները: Գրիգոր Նազիանզացիի (Դ) քառասունհինգ ճառերը աստվածաբանական բովանդակությամբ: Մեծն Աթանասի (Դ) ճառերն ու թղթերը դավանաբանական հարցերու շուրջ: Տիմոթեոս Կուզի (Ե) հակաճառությունները քաղքեդոնականներուն դեմ: Սոկրատ Սքոլաստիկոսի (Ե) եկեղեցական պատմությունը: Սեղբեստրոս Հայրապետի վարքը: Քաղքեդոնի ժողովին պատմությունը: Սուրբ գրքի անվավեր կոչված մասերուն թարգմանությունը:

Այլև քանի մը ավելի երկրորդական հեղինակներու նման երկերը՝ ճառեր, առաքելական կանոններ, ժողովներու կանոններ, վարդապետական գրություններ: Նաև առաջին չորս դարերու քրիստոնեական սուրբերուն կյանքը, նահատակություններուն նկարագրությունը և «Հարանց վարք»-եր. այս կենսագրական նյութերուն գլխավոր թարգմանիչն է Աբրահամ Զինակեցի:

Զուտ կրոնական չեղող երկերու թարգմանություններ են.

Արիստոտելի «Ստորոգությունները», Պորփյուրի «Ներածությունը» և ուրիշ իմաստասիրական գործեր. թարգմանիչը կհամարվի Դավիթ Հերքացի: Դիոնիսիոս Թրակացիի (Քրիստոսե 100 տարի առաջ) «Քերականությունը»: Փիլատոսի «Բարոյախոս» գրվածքը, ուր կպատմվի կենդանիներու մասին զանազան առաս-

ղերական տեղեկութիւններ: Կալիսթենեսի «Աղեքսանդրի վարքը» առասպելներով խառն վիպական ժողովածու մը Աղեքսանդր Մեծի կյանքի մասին: Այլև պետք է հիշել «Խիկարի իմաստութիւնը» անունով վիպական գրվածք մը, ինչպես և Նոնոսի «Առասպելներուն մեկնութիւնը»:

Արաբական դարերուն թարգմանված են. Դիոնիսիոս Արիսպագացիին վերագրված խրթին վարդապետական գրվածքներ՝ խրթին լեզվով ալ թարգմանված: Կյուրեղ Աղեքսանդրացիի (Ե) «Պարապմանց» և «Գանձուց» գրքերը, այլև թղթեր Քրիստոսի մարդեղութեան հարցին շուրջ: Հովհաննես Կլիմաքսի (Զ) «Սանդուղքը», թե ինչպես կարելի է երկինք բարձրանալ, այսինքն՝ խրատներ: Նեմեսիոսի (Դ) «Մարդու բնութեան մասին»՝ մարդակազմական-հոգեբանական երկ մը, որ վիճաբանութիւն մըն է հին փիլիսոփաներուն դեմ քրիստոնեութեան տեսութիւնները պաշտպանող: Պիսիտի «Վեցօրյակը», որ քերթվածք մըն է Աստծու մեծութիւնը գովաբանելու համար: Նաննա Ասորիի Հովհաննու ավետարանի մեկնութիւնը: Աբլմսեի նահատակութեան վկայաբանութիւնը և Դիոնիսիոս Արիսպագացիի կյանքը:

Իսկ Գրիգոր Մագիստրոս Պահլավունի հայ իշխանը (980-1058), որ իր հայրենի հողերը հույներուն լքած, փոխարենը Միջագետքի մեջ ստացած էր ընդարձակ կալվածքներ և կապեր գրական կյանքով, թարգմանած է Պլատոնի տրամախոսութիւնները, այսինքն՝ խոսակցութիւններ իմաստասիրական հարցերու շուրջ: Թարգմանած է նաև Եվկլիդեսի «Երկրաչափութիւնը»:

Դպրեվանյան շրջանին ամենեն շատ թարգմանած է Գրիգոր կաթողիկոսը (†1105) և գլխավորապես սուրբերու և նահատակներու վարքն ու կյանքը և այդ պատճառով ալ կկոչվի Վկայասեր: Ներսես Կլայեցին նմանապես թարգմանած է բավական սուրբերու վարքեր ու ճառեր: Ներսես Լամբրոնացին ալ ունի թարգմանութիւններ, ինչպես Բենետիկտոսի (ԺԲ) «Սահմանք կրոնավորաց» և Գրիգոր պապի գրած իտալական հայրերու կյանքն ու վարքը:

Իսկ ԺԴ դարու առաջին քառորդեն սկսած թարգմանիչները ունիթորներն են, այսինքն՝ լատինական եկեղեցիին հարած մարդիկ, որոնք լատիներենե կթարգմանեին լատինախառն հայերենով մը

քրիստոնէական խրատական գրքեր, քարոզներ ու նման գործնական գրութիւններ:

Այն հետաքրքիր է հիշել, որ ԺԳ դարուն սկիզբը Առաքել վարդապետ մը թարգմանած է արաբերէնէ «Երազահան»-ը և «Պղնձէ քաղաքին պատմութիւնը», որոնք մինչև հիմա դեռ հրապարակի վրայ են: Ասատ անունով կրօնաւորի մը ձեռքով ալ նոյն ԺԳ դարուն թարգմանուած է Հովասափի ու Բարղամ ճգնաւորի կեանքը, որ վիպական գրութիւն մըն է և Բուդդայի կեանքը կներկայացնէ:

Անուններու այս ցանկէն պարզ կերևի, որ քրիստոնէական վարդապետութեան տեսակէտէն կարևորութիւն ներկայացնող երկեր թարգմանուած են հինգերորդ ու վեցերորդ դարերուն գլխաւորապէս, բոլորովին սկիզբը հայ քրիստոնէական գրականութեան. և թարգմանուած գրութիւններն ալ բոլորը հռչակ ունեցող և հեղինակութիւն վայելող երկեր են համաշխարհային քրիստոնէական գրականութեան մէջ:

Հետագայ դարերուն թարգմանիլը հետզհետե աւելի անձնական հետաքրքրութեան բնոյթ կառնէ, աւելի ցրիվ ու պատահական և երբեմն նույնիսկ քրիստոնէական պետքի մը չէ. որ կծառայէ: Եվ քրիստոնէական եղող երկերուն մէջէն ալ այդ վերջի դարերուն՝ մասնաւորապէս սիրվածը վկայաբանութիւններն են, այսինքն՝ հոգևորական դյուցազներգութեան պէս բան մը, ուր ղեկավար սկզբունքը դեպի զգացում մը կտանի:

Այս բոլոր թարգմանութիւնները, բացի իրենց ժամանակի կրօնական կարևորութենէն, հիմա ալ ունին իրենց բանասիրական արժէքը. օտար հեղինակներու բնագիրներէն կորսված կամ աղճատված կտորները ստուգելու և վերականգնելու համար. այդպէս ալ բազմատեսակ ժամանակագրական հարցեր պարզաբանելու համար. ինչպէս և հայ կեանքի ու հայ լեզուի ու գրականութեան վրայ մեր քրիստոնյա հարևաններու ըրած ազդեցութիւնը ուսումնասիրելու համար: Այդ հայերէն թարգմանութիւնները կարևոր աղբյուրներ են ու զենքեր արդի գիտնականներուն ձեռքը պատմական, գրական ու լեզվական քննադատութիւններու և վերլուծութիւններու ատեն:

Գ. ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԿՐՈՆԱԿԱՆ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երբ թարգմանականեն անցնիլ կուզենք Հայ ինքնագիր կրոնական գրականության, անհրաժեշտ է անմիջապես ընդգծել, որ մեր Հոգևոր Հայրերը իրենց գրություններուն մեջ շատ բնական կերպով կրկնած են շարունակ նախ իրենց կրոնքին հիմքը եղող Աստվածաշունչի բաժինները, ետքն ալ հետևած են ընդհանուր քրիստոնեական աշխարհի մեջ արդեն հեղինակություն և հմայք ներկայացնող քրիստոնյա մեծ հեղինակներու երկերուն: Ուրիշ խոսքով՝ Հայ հոգևորականության թարգմանած կրոնական երկերուն և իրենց ինքնագիր կրոնական գրություններուն մեջ մեծ նմանություններ, փոխառություններ ու հետևողություններ կան:

Ո՛չ միայն հիմնական ըմբռնումներն ու հավատալիքները, որ ինքնին հասկընալի է, քանի որ քրիստոնեությունը օտար ու եկամուտ վարդապետություն մըն էր Հայության համար և ամեն ինչ դուրսեն բերված, այլև ըսելու ձևերը. սովորական համեմատությունները, ճարտասանական խաղերը, տրամաբանելու եղանակը, նույնիսկ բազմաթիվ լեզվական դարձվածքներ, ասույթներ, մակդիրներ կառնվին արտաքին հեղինակներեն ու կհյուսվին առանց այլևայլության ինքնագիր տողերուն:

Այդպես ալ իրենց ամեն տեսակի գրություններուն մեջ Հայ Հոգևոր հեղինակները շարունակ կօգտվին իրարմե և իրենցմե առաջ եղած Հայ գրություններեն առանց շատ բարակը փնտրելու: Հազիվ երբեմն կհիշատակվի աղբյուրը, ան ալ ընդհանրապես իբրև վկայություն իրենց խոսքին արժեքը ավելի բարձրացնելու համար:

Այս կերպով իրար նմանվիլն ու իրարմե օգտվիլը բնական երևույթ մըն է ժամանակակից, գաղափարակից և մանավանդ դավանակից մարդոց համար ամեն տեղ, ամեն գրականության մեջ և ամեն գրական շրջաններու. նույն ուղղության, նույն դպրոցին պատկանող հեղինակներուն մեջ ավելի ևս կշեշտվի, իսկ կրոնական երկերու մեջ կհասնի իր գագաթնակետին:

Պետք չէ մոռնանք, որ կրոնքի պաշտոնյաներուն նպատակը նոր բան մը ըսելը չէ, նոր բան մը ստեղծագործելը չէ իրենց կրոնա-

կան երկերուն մէջ. ընդհակառակը, հինը կրկնելն ու հինը ամրացնելն է. ինքնուրույն ըլլալու ցանկությունը չկա: Միակ ներքին խոր պահանջը իրենց կրոնքի վարդապետության ծառայելն է. ինչպես որ իրենց կյանքը նվիրած են եկեղեցիին ու իրենց հոգևոր պաշտոնին, այնպես ալ իրենց գրիչը, իրենց խոսքը: Կրոնական գրականության վրա սավառնող ոգին համայնական է և միջին թիվ. ո՛չ անհատական ձգտումներու, որոնումներու և դատողություններու հնարավորությունը կա հոն, ո՛չ ալ նորության, ինքնուրույնության և ազատ թռիչքի պահանջը: Այդ պահանջը եթե առաջանա, խիղճն կդառնա կամ կզգացվի իբրև հերձված, իբրև ապանդավորություն, որ պետք է խեղդվի անմիջապես կա՛մ իր ձեռքովը, կա՛մ իր ընկերներուն: Եթե հոս ու հոն գրություններու մէջ ձևի կամ խորքի նորություններ կերևան՝ պարզապես շնորհքի տաղանդավորության հարց է, քիչ մը ավելի խոր կամ շնորհալի է բոլոր մյուսներու բաժնեն:

Քրիստոնյա հոգևոր գործիչներու ինչպես կյանքն ու գործունեությունը, այնպես ալ անոնց գրականությունը կհամապատասխանե արդի աշխարհիկ կուսակցություններու գործունեության և կուսակցական գրականության: Այս պատճառով ալ քիչ հեղինակներ կան մեր գրաբար գրականության մէջ, որոնց կյանքին, գործին ու հոգիին անհատաբար մոտենալու մասնավոր պահանջ զգա ուսումնասիրողը: Կարևորություն ունեցողն ու հետաքրքիր եղողը ընդհանուր հոսանքին բռնած ուղղությունն է, կուսակցական ամբողջության տարած աշխատանքը:

Եվ ասիկա ավելի ևս բացահայտ է գործնական-կրոնական գրություններու համար:

Գործնական գրությունները շատ դժվար է որոշ ու հաստատ տեսակներու բաժնելը. թե՛ նյութով, թե՛ ձևով միշտ խառնուրդ են և շարունակ մեկը մյուսի վրա իրարու մէջ կմտնեն: Մոտավոր ճշգրությամբ մը կրոնական-գործնական գրությունները կբաժնեմ երեք խումբի:

Նախ՝ ծիսական-վարչական գրություններ, որոնք հատկապես հոգևորականներուն համար են՝ իրենց հոգևոր պաշտոնի պարտավորությունները կիրարկելու ատեն օգտվելու համար, իբրև

ղեկավար, իբրև օժանդակ, իբրև հիշում, իբրև ստուգում միշտ ձեռքի տակ ունենալու համար:

Երկրորդ՝ ամեն ձևի ու տեսակի վարդապետական գրություններ, որոնք սահմանված են շատ ավելի լայն հասարակության մը, ուղղված են տեսականորեն բոլոր հավատացյալներուն կա՛մ եկեղեցիի բեմեն ըսելու ու կարդացվելու համար, կա՛մ իբրև մասնավոր մեկուսի ընթերցում: Եվ նպատակն է ուսուցանել, խրատել, զգուշացնել, մեկնել ու բացատրել կամ օրինակ տալ, ոգևորել, գովել ու փառաբանել իրենց սուրբերն ու սրբությունները:

Երրորդ խումբը, որ կրնանք անվանել դիմադարձական գրություններ, կա՛մ ուղղված են այլադավան անձերու և հաստատություններու դեմ՝ սեփական դավանանքը պաշտպանելով և հակառակորդինը քննադատելով, կա՛մ ուղղված են նորեն իրենց հավատացյալներուն՝ հակառակորդներու թյուրն ու սխալը ցուցադրելու, խայտառակելու և զգուշացնելու համար:

ա. Նախ ուրեմն ծիսական-վարչական գրությունները:

Քրիստոնեությունը, որ դուրսեն կուգար մեր աշխարհը, իր հետ կբերեր դուրսը մշակված պաշտամունքի ձևեր, կարգեր, ընթերցումներ, ըսելու կամ երգելու կտորներ, որոշ հաջորդականությամբ արարողություններ, տոներ, հանդեսներ: Այս բոլորը ըստ էության պատրաստ կար արդեն, հայ հոգևորականության կմնար այդ բոլորը վերածել հայերենի կա՛մ ուղղակի թարգմանելով, կա՛մ քիչիկ մը ավելի ազատ հետևողականությամբ, տեղ-տեղ ալ հարմարցնելով մեր ժողովուրդի տեղական պայմաններուն, որպեսզի հայ եկեղեցիին մեջ տիրե ամենուրեք ընդհանուր միօրինակություն մը և ամեն ինչ կայունանա:

Ժամակարգություն, Ժամասացություն, Մեսաղիրք, Պատարագամատույց, Տոնացույց և նման հավաքածուներն ու ղեկավար գրքերը մեր եկեղեցին վերջնապես կարգավորած ու կերպարանավորած է հինգերորդ դարու կեսեն առաջ Սահակ Պարթև հայրապետի օրով և Մեսրոպ Մաշտոց վարդապետի գլխավոր աշխատակցությամբ. Մաշտոցի անունն ալ մնացած է մեր գլխավոր ծիսագրքին վրա: Հինգերորդ դարու կեսեն ասդին նույն ուղղությամբ

աշխատանքներ տարուած են Հովհան Մանդակունի Հայրապետի օրով:

Հինգերորդ դարէն ետք զանազան Հայրապետներ և զանազան եկեղեցական ժողովներ հոս ու հոն մտցուցած են որոշ թեթեւ հաւելումներ և ժամանակի մանր սրբագրութիւններ՝ նայելով տեղի ու ժամանակի պահանջքին, բայց ընդհանուր հիմնականը պահած են միշտ նոյնը, իբրեւ հնաւանդ սրբութիւն:

Փափոխելի աւելի ամենուն ջանքը եղած է բծախնդիր կերպով գործադրել հին Հայրերու և հին եկեղեցական ժողովներու հաստատած կարգերն ու որոշումները: Հոգեկան այս պահանջքէն ծնունդ կառնէ հաւաքել ու մեկնել եկեղեցական ժողովներուն հանած որոշումները, ինչպէս և Հոգեւոր Հայրերու ունեցած թղթակցութիւնները ծիսական ու վարչական հարցերու շուրջ:

Առաջին անգամ Օհան Օձնեցի կաթողիկոսն է ութերորդ դարուն մէջ, որ կազմած է եկեղեցական կանոններու ընդհանուր ժողովածու մը, ինչպէս և «Գիրք Թղթոց» անունով հաւաքածու մը եկեղեցական Հայրերու գրած վարչական ու դաւանական նամակներէն ու դիմումներէն:

բ. Վարդապետական գրութիւնները շատ են բազմաթիւ ու բազմատեսակ: Մեծ մասը հասարակ ու սովորական խմբագրութիւն է՝ քարոզ, խրատ, ճառ, բացատրութիւն օրուան պէտքերուն բաւարարելու անհրաժեշտութեամբ:

Երբեմն այդ վարդապետական գրութիւնները կերկարին, կմանրամասնուին ու կվերածուին տեսակ մը գիտական աշխատութեան՝ տրամաբանական հիւսքով ու վերլուծութեամբ և կդառնան մեկնութիւն որոշ կրօնական խնդիրներու ու երկերու, կդառնան հաստ գիրք և ուսումնասիրութիւն:

Երբեմն ալ այդ ճառերն ու քարոզները, այդ սուրբի մը, խաչի մը, տաճարի մը մեծարանքն ու գովքը հանկարծ թեւեր կառնեն և դուրս կուգան ճարտասանական պաշտօնական ձեւերէն և հաւիտյան կրկնուող այլաբանական համեմատութիւններէն ու կգտնէ հանկարծ անսպասելի մակդիր մը, սրտէ փրթած ճիչ մը, կենդանի դիմանկարութիւն մը, սրտանց բխած մտածում մը, որ բանաստեղծական թեթեւ շունչ մը կբերեն գրուածքին:

Ընդհանրապես վարդապետական այդ երկերուն մեջ ա՛յս կյանքի իրականություններու մասին շատ քիչ խոսք կա, ստվար մեծամասնությունը աստվածաբանական ու դավանաբանական բարձունքներեն վար իջնել չեն զիջանիր. վերերեն կթռչին, ամպերուն նման, իրենց ոտքը հողին չի դպչիր: Ճիշդ ատոր համար ալ, երբ հոս ու հոն բոլորովին պատահական կերպով կյանքե առնված իրականություն մը հանկարծ մեջ կուգա, կենցաղական գիծ մը, կենդանի խոսք մը այդ ուղղությամբ, կրկնակի ուժով կգրավե մեր ուշադրությունը, իբրև հետաքրքիր բացառություն:

Այս ամեն տեսակի վարդապետական երկերուն հեղինակները շատ-շատ են. ես կքաղեմ ամենեն ավելի աչքի իյնողներուն անունները՝ քովը նշանակելով իրենց ապրած ու գործած դարը:

Քրիստոնեական ելքի ու տիրական դարերուն, իբրև վարդապետական գրություններու հեղինակ, կարևորներն են՝ Մեսրոպ Մաշտոց, Հովհան Մանդակունի, Եղիշե, Մամբրե հինգերորդ դարեն, Պետրոս Սյունեցի, Հովհան Մայրագոմեցի (Է) և Անանիա Շիրակացի (Է):

Արաբական ավելի նկուն դարերեն՝ Զաքարիա կաթողիկոս (Թ), Համամ Արևելցի, որ գրած է մեկնություններ սաղմոսներու, Առակաց գրքի և Հոբ Երանելիի, Խոսրով Անձևացի (Ժ) գրած է պատարագի խորհուրդին մեկնությունը. Գրիգոր Նարեկացի (ԺԱ) ունի գովքեր ու ներբողներ խաչի, առաքյալներու, Աստվածածնի և մեկնություն մը Երգ երգոցի. Կարապետ Սանահնեցի ներբողած է խաչն ու Հովհաննես Մկրտիչը. Հովհաննես Կոզեռն (ԺԱ) ունի դավանական գրություններ:

Դյուրեվանյան շրջանի արևմտյան հոգևոր հայրերեն Ներսես Կլայեցի (ԺԲ, Հռոմկլա բերդ), հայտնի է իր «Ընդհանրականը», այսինքն՝ խրատական և օրհնության գիր մը՝ ուղղված ամենուն. ունի Սուրբ գրքի զանազան մասերուն, ինչպես և օտար նշանավոր հայրերու գրություններու մեկնություններ: Ներսես Լամբրոնացի (ԺԲ, Սկևռա վանք) գրած է քարոզներ, մեկնություններ ու դավանական խնդիրներու շուրջ: Գրիգոր Վկայասեր (ԺԲ, Սիս), Կոստանդին կաթողիկոս (ԺԳ, Սիս), Վարդան Այգեկցի (ԺԳ), Մխիթար

և Եսայի Սասնեցիներ (ԺԴ), Հովհան Որոտնեցի (ԺԴ) Տաթևի վանքեն և Գրիգոր Տաթևացի (ԺԴ):

գ. Գալով այլադավաններուն դեմ ուղղված գրություններուն՝ առաջին և ամենեն ալ բարձր հեղինակն է Եզնիկ Կողբացին, որ եղած է Մեսրոպ Մաշտոցի աշակերտը և գործակիցը: Երկար ճամբորդած է Ասորիք և Հունաստան, կատարած է բազմաթիվ թարգմանություններ այդ երկու լեզուներեն: Սահակ Պարթև, Մաշտոց վարդապետ և Եզնիկն են, որ երեքով կատարած են Սուրբ գրքի հայերեն թարգմանության վերջնական սրբագրությունը հունարեն բնագիր օրինակի մը վրայեն:

Իր ինքնագիր հեղինակությունն է «Եղծ աղանդոց» անուն գիրքը, որուն նպատակը քրիստոնեական կրոնի պանծացումն է: Գրքին մեջ քննության կունվին հեթանոս ու պարսիկ կրոններուն էությունը, հույն իմաստասիրության կրոնական ըմբռնումները և վերջին ալ Մարկիոնի վարդապետությունը, որ հինգերորդ դարու կեսերուն Ասորիքի մեջ շփոթություն էր առաջ բերած քրիստոնյա մաքերու մեջ:

Ուրիշ խոսքով՝ իր ժամանակի ուղղափառ քրիստոնեութենեն տարբեր եղող ամեն տեսակի կրոնական-իմաստասիրական ըմբռնումներու դեմ գրված երկ մըն է, ուր կերևա Եզնիկի բազմակողմանի հետաքրքրությունը, իր վերլուծող, առողջ դատող միտքը և իր ծանոթությունը ժամանակակից հեղինակներուն, ուրկե անշուշտ շատ բան օգտված է: Կոկիկ շարադրված, նյութի լայն ըմբռնումով և հատու քննադատությամբ գիրք մը, որ սքանչելի ալ լեզու ունի. «ոսկեդար»-յան մատենագետներու վկայությամբ ամենեն մաքուր ու գեղեցիկ գրաբարը:

Վեցերորդ դարուն մեջ քննադատությունները ուղղված են հատկապես քաղքեդոնականության դեմ և այդ ուղղությամբ գրություններ ունին դարու իրար հաջորդող բոլոր կաթողիկոսները:

Արաբական դարերուն քրիստոնեության կրած ընկրկումը և աշխարհային ըմբռնումներու ջրին երեսը ելլելը իր արտահայտությունը կգտնե նաև նոր հայ աղանդներու առաջացման ու տարածման մեջ: Նախ պավլիկյաններն են Է և Ը դարերուն, ապա՝ թոնդրակեցիք Թ, Ժ դարերուն. կան և ավելի մանրերը: Շատ նեղություն

ու աշխատանք են պատճառած այս աղանդները մեր քրիստոնյա ղեկավարներուն: Քարոզչական ու գրական խզուր անցած Հայածանքներեն ետքը՝ սուրով ու արյունով է գործը կարգադրված շատ ուշ:

Յոթներորդ դարուն մեջ Վրթանես մը կգրե պավլիկյաններուն աղանդին դեմ: Դավիթ Անհաղթ «Խաչի ճառ» մը ունի պավլիկյաններուն դեմ: Աբրահամ կաթողիկոս վիր ու աղվան եկեղեցիներու մեր եկեղեցիեն բաժնվելու առթիվ քննադատական մը ունի: Իր Հաջորդը՝ Կոմիտաս կաթողիկոս, «Վասն Հավատոյ» ընդարձակ գրություն մը ունի և Հովհան Մայրագոմեցին «Արմատ Հավատոյ» գրվածքը ունի նույն ուղղությամբ:

Ութերորդ դարուն մեջ Խոսրով Հռետոր կգրե երևութականներու, Հուլիանիտներու և սևերյաններու դեմ: Օձան Օձնեցի կգրե պավլիկյաններու դեմ և «միաբնակներու», որոնք չէին ընդունիր, թե Քրիստոսի մեջ մարդկային կրքերը, Հոգնությունը, ցավը իրական էին:

Իններորդ դարուն մեջ Սահակ Մռուտ, Մաշտոց կաթողիկոս և Հովհաննես կաթողիկոս թղթեր ունին գրած քաղքեդոնականության դեմ, որ Հույներու կողմե շարունակ կպահանջվեր Հայ և Հույն եկեղեցիներու միացումը վերջապես գլուխ բերելու Համար:

Տասներորդ դարուն Անանիա Նարեկացին ունի գրություններ թոնդրակեցիներու աղանդին դեմ: Խաչիկ կաթողիկոս և Սամուել Կամրջեցի գրած են թղթեր Հույն մետրոպոլիտներու Հայ եկեղեցիին դավանանքը պաշտպանելու Համար: Վասպուրականի Գագիկ թագավորը նույն ոգիով թուղթ մը գրած է բյուզանդական Ռոմանոս կայսեր և Պոլսի պատրիարքին: Թոնդրակեցիներու աղանդին դեմ գրած են և՛ Գրիգոր Նարեկացին, և՛ Գրիգոր Մագիստրոս. վերջինս ունի նաև բազմաթիվ նամակներ զանազան անձերու ուղղված նման Հարցերու շուրջ. ունի գրություն մըն ալ ուղղված ասորի գիտնականներու, ուր կպաշտպանե քրիստոնեությունը:

Դպրեվանյան շրջանի վեճը նախ Բյուզանդիոնի Հետ է, որ միշտ Հայ և Հույն եկեղեցիներու միացման կձգտի: Լևոնի թագավորութենեն ետքը նույն ճնշում մը կբանեցնե լատին եկեղեցին: Մեկ կողմեն արևմտյան և արևելյան մեր Հոգևոր Հայրերը իրարու Հետ

անվերջ թուղթեր կփոխանակէին իրար բացատրելով, իրար հակաճառելով և իրար մեղադրելով: Մյուս կողմէն ալ թղթեր ու գրություններ կերթան նախ Բյուզանդիոնի պատրիարքին, ետքն ալ Հռոմի պապին, իբրև թէ հարմարվելու ջանքերով: Այս իրարանցման մասնակից են քիչ-շատ բոլոր եկեղեցական հայրերը ժամանակի: Իսկ ԺԴ դարուն վերջերը ունիթորական շարժումներուն դեմ ուժեղ պայքար ու նախանձախնդիր դիմադրություն ցույց է տված հատկապես Տաթևի վանքը:

Դ. ՊԱՏԱՐԱԳ

Դյուրին գործ չէ գեղարվեստականը առանձնացնելը քրիստոնեական երկերուն մեջեն: Քրիստոնեական գրություն մը միշտ ալ ավելի կամ պակաս չափով գաղափարական պետքերու կծառայէ և ընդհանուր առումով գործնական պահանջներու հետ կապված պայմաններու ծնունդ է, որով քրիստոնեական գեղարվեստական գրականությունն ալ միշտ խառնուրդ մըն է գործնականի ու գեղարվեստականի:

Գործնական երկը արդեն ընդհանրապես իր էությամբ խառնուրդ մըն է միշտ: Գիտական երկը իր սկզբունքներն ունի, իր մտածական աշխարհը և իր տրամաբանական եղանակը. գեղարվեստական երկը ունի իր սկզբունքները, իր զգայական աշխարհը և պատկերելի արտահայտության եղանակ: Մինչդեռ գործնական գրվածքը, որ միշտ շատ հստակ կերպով ունի իր նպատակը, չունի իրեն հատուկ գրական սկզբունք, ո՛չ ալ իր ուրույն արտահայտության եղանակը: Իր գործնական նպատակին հասնելու համար տեղ մը տրամաբանության ու գիտության կդիմէ, բացատրել ու համոզել կփորձէ կամ հանկարծ կցատկէ գեղարվեստական գետինը և կջանայ իր նպատակին հասնիլ հուզելով և զգացումներու զարնելով:

Կրոնական գրություն մը, ինչ ալ կուզէ ըլլա, միշտ ալ ունի իր մեջը այդ գործնականությունը, քանի որ որոշ գաղափարանքի մը, որոշ քարոզչության մը, որոշ սրբության մը ներբողումին նվիրված

գրություն մըն է: Գիտությունն ու գեղարվեստը ամեն տեսակի գործնական երկերու մեջ, այդպես ալ կրոնական երկերու մեջ միջոց մըն է միայն, գործիք մը. երկրորդական է, ո՛չ էական:

Ասոր համար է, որ գործնական երկերուն շարքը դրված ճառեր, քարոզներ, մեկնություններ ու ներբողներ կարելի է քաշել, բերել գեղարվեստական երկերուն շարքը, իբրև ճարտասանական արվեստ, երբեմն իբրև քնարական զեղում: Բայց շահածնիս մեծ բան մը չըլլար. գեղարվեստականը միշտ կմնա երկրորդական ու ծառայական դերի մեջ. գլխավորը նպատակն է, գործնականը, որուն համար որ գրված է երկը:

Եվ հիմա ալ, որ անցնիլ կուզենք կրոնական մարդու կրոնական զգացումներուն և կրոնական պատկերացումներուն անմիջական արտահայտությանը, վերի ճշմարտությունը պետք չէ երբեք մոռնանք: Ծիսական ու վարդապետական պետքերու հետ շաղկապված այդ կրոնական ստեղծագործություններուն մեջ գործնական նպատակը բոլորովին մտահան ընել կարելի չէ: Այնպես որ նախորդ գլխու ճառական, ներբողական ու քարոզչական գրություններուն և այս ու հաջորդ գլխու իբրև կրոնական գեղարվեստ ներկայացող երկերուն մեջ եղած տարբերությունը չափի ու աստիճանի տարբերությունն է, ո՛չ թե էության. գործնական տարրը ավելի մեղմ է կամ ավելի սքողված. հուզական տարրը ավելի է շեշտված, ցուցադիր կամ հորդ:

* * *

Գեղարվեստական գրականության երեք հիմնական տեսակներն ալ ունի քրիստոնեական գրականությունը, և՛ քնարական, և՛ վիպական, և՛ նույնիսկ բեմական:

Իբրև բեմական ներկայացում քրիստոնեությունը ունի միայն մեկ հղացում, որ կանվանենք պատարագ: Պատարագ զոհաբերություն ըսել է. և պատարագի ամբողջ արարողության միջոցին ըսվելիք, երգվելիք ու կատարվելիք բոլոր բաները միասին առած կպատկերացնեն Քրիստոսի մարդեղությունը. ինչպես տրամաներու մեջ մենախոսությամբ, երկախոսությամբ և երգող խումբով կպատկերացվի գործողություն մը:

Աստուած, որ եկած է աշխարհ, զոհաբերուած է ու մահացած՝ իր մարմինն ու արիւնը նուիրելու համար մարդկութեան, որ մարդկութիւնը մաքրէ ու բարձրացնէ:

Աստուածութեան մը աշխարհ գալը, տառապիլը ու մեռնիլը մարդկութեան առաջդիմութեան ու բարձրացման համար հեթանոս կրօններուն մէջ ալ կար. այդ ըմբռնումը տարածուած էր ամէն կողմ եւ սերտօրէն կապուած է բուսականութեան աշնանային թառամումին եւ գարնանային վերակենդանացման գաղափարին հետ: Իսկ հեթանոսութեան վերջին դարերուն այդ ըմբռնումները խառնուելով արեւելյան կրօններէն փոխ առնուած կիսածածուկ, կիսահայտնի խորհրդաւոր ծեսերու ու գիշերային հանդիպումներու հետ՝ կազմած էին հունա-հռոմեական աշխարհին մէջ պաշտամունքի խորհրդաւոր տեսակ մը:

Քրիստոնէութիւնը իր առեղծած պատարագի արարողութեան մէջ խորհրդաւորութիւնը վերածեց ուղղակի խորհուրդի՝ իբրեւ խորհրդանշան մէջ բերելով «սրբութիւնը», որ իբրեւ մարմինն ու արիւնը նահատակուած Քրիստոսի, կբաշխուի բոլոր ներկա հաւատացեալներուն: Եկեղեցական բոլոր արարողութիւններու կեդրոնն ու գագաթնակէտն է քրիստոնէական պատարագը: Եւ պատարագն է միայն, որ կկատարուի եկեղեցական բեմին վրայ: Եւ եկեղեցական բեմէն զատ ուրիշ բեմ չէ հանդուրժած քրիստոնէութիւնը իր պէտքերուն համար: Ո՛չ ուրիշ բեմ եւ ո՛չ ուրիշ բեմական երկ:

Շատ ուշ՝ միջին դարերուն վերջը, արեւմտյան քրիստոնէութիւնը սկսաւ օգտուիլ եկեղեցիներու դռանը շինուած տախտակամածէն՝ այդ դուրսի շարժական բեմին վրայ ալ թոյլատրելով, որ ներկայացնեն Քրիստոսի կյանքէն դրվագներ եւ հատկապես Քրիստոսի չարչարանքին պատմութիւնը: Բայց ո՛չ իբրեւ եկեղեցական խորհուրդ, այլ իբրեւ մարդկային պատկերացումը Քրիստոսի կյանքին ու գործին եւ անոր մարդկային տառապանքին: Այդ միջնադարյան սրբազան ներկայացումները անջատ են կրօնական բեմադրումէն, ատոնք արդէն տրամաներ են, այսինքն՝ մարդկային գործողութիւններ ու մարդկային տառապանքներ: Մարդկային հոգիի պատկերացումներ են, նույնիսկ Քրիստոսի դիմքին տակ:

Մարդուն կխօսին ու մարդկօրէն կխօսին. և ճիշդ այդ պատճառով ալ այդ գրական-բեմական ստեղծագործութիւնները քրիստոնէութեան բերածը չեն, որ միշտ կյանքէն ու մարդէն վեր խոյանալ կձգտի, վերացականութիւն կսիրէ: Միջնադարյան այդ ներկայացումները արդէն այս աշխարհի մարդոց համար են, արդէն նոր հոգեբանութիւն մը, որ վերադարձ մըն է դէպի հինը, հեթանոսականը: Թէև եկեղեցիներու դռանը հանդուրժված և եկեղեցականութեան աչք գոցող թոյլտվութեամբ, բայց այդ տախտակամածները պտուղն էին տոնավաճառներու, որոնք նմանապես տեղի կունենային եկեղեցիներու ու վանքերու դռանը. ինչպես տոնավաճառները, այնպես ալ այդ տոնավաճառական ներկայացումները բոլորովին տարբեր բան մըն էին քրիստոնեական ոգիէն, նյութ ու նյութականացում կբերէին իրենց հետ, կբերէին մարմին ու աշխարհային ըմբռնումներ և հետզհետե նաև շրջապատող կյանքի պատկերացում: Եկեղեցիներու դռանը շինված այդ տախտակամածները այլևս եկեղեցական բեմ չեն. անոնք արդէն թատրոն են. վերադարձ հին, հեթանոսական, կենդանի և իրական պատկերացումներուն:

Հայ քրիստոնեութիւնը թատրոն չունի ո՛չ կյանքի, ո՛չ ալ գրականութեան մէջ: Ունեցած է միայն իր եկեղեցական բեմը և իր պատարագի խորհուրդը. և հայ ժողովուրդը խորապես սիրած է իր պատարագի արարողութիւնը: Այդ բոլորանվեր և ընդհանուր սիրո մէջ անշուշտ դեր ունի և այն տխուր պարագան, որ քրիստոնեութիւնը Հայաստանի մէջ հաստատուն արմատ բռնած օրէն հայուն կյանքը մշտական տառապանք ու հալածանք է եղած. անվերջ դարերով, տևական մարտիրոսութիւն մը: Եվ Քրիստոսի մարդեղութեան, Քրիստոսի կրած անարժան չարչարանքներուն և Քրիստոսի բոլորանվեր զոհաբերութեան գաղափարին հայը փաթթեր է նաև իր անձնական և իր ազգային ցավն ու անվերջ տվայտանքը: Այն աղոթքները, երգերը և արարողութիւնները, որոնք Քրիստոսի անձնատվութիւնը կխորհրդավորեն, հայ մարդը նկատեր է նաև որոշ չափով մը իբրև իր սեփական և ազգային խաչելութեան պատկերացումը:

Ե. ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

1. ԱՂՈԹՔ ՈՒ ՇԱՐԱԿԱՆ

Բանաստեղծության մեջ քնարական կանվանենք հուզումներու և զգացումներու անմիջական արտահայտությունը բառերով:

Գրաբարի երկրորդ հազարամյակի ամբողջ ընթացքին գիրքն ու գրությունը եղած է հոգևորականին ձեռքը. ան է հորինած, ան է գրած ու կարդացած գրաբարով: Ան հորինած է, գրած ու կարդացած գրաբար լեզվով իր դիրքի, իր պաշտոնի ու իր կոչումի բերած ու թելադրած զգացումները, որով լեցուն է եղեր իր քրիստոնեի ու հոգևորականի հոգին: Այդ պատճառով ալ գրաբարը այդ երկար դարերու ընթացքին ունի միայն կրոնական քնարերգություն, այսինքն՝ քրիստոնեական հավատքի, քրիստոնեական ջերմեռանդության ու քրիստոնեական պաշտամունքի հետ կապված զգացումներու զեղում:

Իսկ կրոնական ամեն զգացումի ու դատումի խորքը աստվածության գաղափարն է: Երբ կըսենք կրոնական քնարերգություն՝ ըսած կըլլանք Աստծուն ուղղված զգացումի արտահայտություններ, խոսակցություն Աստծու հետ: Կրոնական քնարերգությունը բառերով արտահայտված հաղորդակցություն մըն է անմիջապես մարդու և Աստծու միջև. կամ մարդու և աստվածայինի միջև, քանի որ մարդիկ հաճախ խոսքի կբռնվին նաև զանազան սուրբերու և սրբություններու հետ:

Աստծու կամ աստվածայինի մը ուղղված ամեն խոսքի հիմքն ու շարժառիթը կկազմեն երեք բան. կա՛մ հիացում մըն է, հափշտակություն մը և գովասանք մը աստվածային անհուն մեծության, կարողության, իմաստության ու բարության հանդեպ. կա՛մ մարդու շնորհակալությունը, երախտագիտությունը և իր երջանկության արտահայտությունը Աստծու տված անբավ պարգևներուն համար՝ և՛ կրոնական, և՛ հոգեկան, և՛ մարմնական. կա՛մ վերջապես խնդրվածք մըն է, աղաչանք մը, կոչ մը աստվածային օգնության հոգեկան ու մարմնական դժբաղդության մը պարագային, պակասի

մը, կորուստի մը պարագային, այսինքն՝ փառաբանութիւն, շնորհակալութիւն և աղաչանք:

Այս երեք հիմնական նյութերուն շուրջ հայ գրաբար գրականության մեջ գոյություն ունեցող հորինվածքները երկու տեսակ են. կա պաշտոնական քնարերգություն մը, որ վավերացված է եկեղեցիի կողմեն և մաս կկազմե ժամերգական ընդհանուր պաշտամունքին. կա և անպաշտոն քնարերգություն մը, որ թեև պաշտոնականին պես նույն ոգիով, նույն ձևերով և նույն մարդոց կողմե հորինված, բայց առնված չէ եկեղեցական արարողության մեջ, վավերացված չէ, դուրս կմնա պաշտոնականին քովն ի վեր:

Այս տեսակ անպաշտոն, ըսենք անբնական, ո՛չ կանոնական երգեր, տաղեր, գանձեր, աղոթքներ, փառաբանություն, գովք ու նման քնարական կտորներ շատ կան մեր ձեռագիրներուն մեջ և դեռ լրջորեն ուսումնասիրված չեն: Ինչ որ տպված է արդեն մինչև հիմա՝ պաշտոնական քնարերգութենեն որևէ տարբերություն չունի. քիչ մը ավելի հաջող կամ նվազ հաջող, հազիվ երբեմն հոս ու հոն թեթև նոր շեշտ մը:

Հայ գրաբար գրականության մեջ իր հատուկ տեղը գրավողը պաշտոնական քնարերգությունն է, որ ունի երկու հիմնական տեսակ՝ աղոթք ու շարական:

Երկու տեսակներուն ալ նյութը միևնույն է. արդեն ըսվեցավ գովք, շնորհակալիք ու խնդիրք: Աղոթքներուն մեջ խնդիրքը քիչ մը ավելի է շեշտված, շարականներուն մեջ, ընդհակառակը, շեշտվածը փառաբանությունն է, շնորհակալությունը միշտ ալ կա: Աղոթքը զույգ մը շրթունքե ըսելու համար է ընդհանրապես, շարականը խմբական արտահայտություն է. և այդ պատճառով ալ շատ ավելի ձայնի խաղեր ու ելևէջ ունի և ենթակա է չափի ու եղանակի:

Քրիստոնեական ըմբռնումով աշխարհքը մեղքի ծով մըն է և մենք բոլորս թաղված ենք այդ ծովուն մեջ մեր ծնունդով. այնպես որ դուրս գալ այս անցավոր ու հանցավոր սին աշխարհեն ու երթալ միանալ հավերժական երջանկության՝ պետք է ըլլար խոկալես տենչանքը ամեն քրիստոնյայի և միակ խնդրանքը գոնե ամեն պաշտոնական աղոթքի: Սակայն անողոք է կյանքի ուժը. այս սին ու հանցավոր աշխարհքի պետքերն ու ցանկություններն ալ տեսակ

մը գողունի կրցած են ներս սպրդիլ այս պաշտոնական աղօթքներուն մէջ. և այդ կտորներն են աղօթքներուն մէջի ամենէն աւելի սրտանց բխած ու ճշմարիտ մարդկայինը: Իսկ մասնաւոր անհատներուն մասնաւոր աղօթքներուն մէջ բնականաբար այդ աշխարհային և հաճախ չափազանց աշխարհային ու մանր խնդրանքներն են գլխաւոր տեղ բռնողը՝ բոլոր քրիստոնէական ըմբռնումներուն հակառակ:

Իսկ գովքն ու փառաբանութիւնը հատկապես չարականներուն մէջ ուղղուած է աստուածային երրորդութեան բոլոր մասերուն, կողմերուն ու գործերուն, որոնց մէջ Աստուծու մարդանալը, ծնիլն ու աշխարհ գալը, մեզի նման տառապիլն ու մահանալը ամենէն աւելի հիացում պատճառող և երախտագիտութիւն պարտադրող նյութը կկազմե: Աստուածածնին ուղղուած երգերն ալ մասնաւոր քնքշութիւն մը ունին միշտ՝ անոր կին ու մայր ըլլալուն համար. այր մարդու կանացիութեան հանդէպ ունեցած հիացումը հոս ալ կգործէ:

Արտահայտութիւններն ու պատկերացումները այս աղօթքներուն ու չարականներուն մէջ բնականաբար Սուրբ գրքի Հին ու Նոր կտակարաններուն մէջ եղածի անվերջ կրկնութիւններն են: Երբեմն շատ հասարակ ասութեամբ, երբեմն աւելի խոր ու սրտառուչ, երբեմն ալ՝ ո՛չ հաճախ, երգչի էութեան խորքերէն ժայթքած թեւաւոր խօսքերով: Եւ այդ բացառիկ տողերն են, որ չարականներուն գեղեցկութիւնը կկազմեն:

Բացի Սուրբ գրքի բառերէն ու պատկերացումներէն ու համեմատութիւններէն՝ նաև հունական ու ասորական համապատասխան քրիստոնէական ստեղծագործութիւնները ունեցած են ազդեցութիւն, իբրև ընդունուած և վաւերացուած օրինակներ: Հաւանաբար որոշ գծեր ու պատկերներ հետևութիւն են հին հայ հեթանոս օրհներգութիւններու. Քրիստոսի վրայ արևին լոյսը պատմուճան կարելը քիչ մը անսովոր մտայնութիւն է քրիստոնյայի համար. այդ հագուստը շատ աւելի կվայլե մեր հին Վահագնին և բնաւ անկարելի չէ, որ անոր հանդերձանոցէն գողցուած ըլլա:

Այս աղօթքներուն ու չարականներուն մեկ նախնական ու հիմնական մասը թարգմանուած կամ համարուած է չորրորդ-

դարուն մեջ քրիստոնեության մուտքի ու տեղավորման օրերուն, մեր գրերու գյուտեն շատ առաջ, ուրեմն բանավոր կերպով: Մյուս կարևոր մասը հորինված է հինգերորդ դարուն մեր առաջին թարգմանիչներու եռանդուն գործունեության միջոցին, երբ մեր եկեղեցական արարողությունները վերջապես կհայացվեին ու կբարեկարգվեին: Արդեն ավանդությունը որոշ աղոթքներ ու շարականներ կկապե Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի, Խորենացիի և ուրիշներու անուններուն, բայց ընդհանրապես այդ հնագույն կրոնական քնարերգությունները անանուն են:

Եվ հաջորդ դարերուն ալ զանազան առիթներով զանազան հայրապետներու ձեռքով եղած են նորմուծումներ: Այսպես՝ հայտնի է, օրինակ, Կոմիտաս կաթողիկոսը նորոգած է յոթներորդ դարու առաջին քառորդին Հռիփսիմեի տաճարը և այդ առիթով գրած է Հռիփսիմյան կույսերու պատվին հայտնի շարականը՝ «Անձինք նուիրեալք»:

Նոր շարականներ գրված են բավական նաև դպրեվանյան դարերուն, հատկապես ԺԲ ու ԺԳ դարերուն: Մանավանդ մեծ է այդ տեսակետեն Ներսես Կլայեցի կաթողիկոսի դերն ու գործը. հորինած է շարք մը աղոթքներ ու շարականներ, որոնք քիչ մը վերջը պաշտոնապես ընդունված և մաս են դարձած պաշտոնական եկեղեցական արարողության:

* * *

Այս աղոթքներուն ու շարականներուն մեջ գործածված արվեստը թե՛ իր ներքին և թե՛ իր արտաքին հատկություններով բոլորովին նույնն է մեր անգիր վիպասանության մեջ գործադրված արվեստին հետ:

Բայց քնարական բանաստեղծությունը, ըլլալով անմիջական արտահայտությունը զգացումներու և իր միակ տենչն ալ զգացումներուն վարնելը, բնական կերպով ավելի ուժ կուտա ու ավելի կշեշտե արվեստի այդ ներքին ու մանավանդ արտաքին բոլոր գլխավոր հատկությունները: Վիպական ստեղծագործությունը իր մեջ պատմություն մը ունի, դեմքերու ու դեպքերու որոշ հաջորդա-

կանություն, որով կազդե մեր հոգիին վրա: Վեպի մեջ գործածված արվեստի թե՛ ներքին և թե՛ մանավանդ արտաքին հատկություն-ները հավելված մըն է միայն իր բուն ազդեցությունը ավելի ևս բարձրացնելու համար, մինչդեռ քնարական ստեղծագործության մը վրայեն եթե վերցնենք արվեստի այդ ներքին և հատկապես արտաքին հզորությունը, չափազանց կաղքատանա ու կխեղ-ճանա: Քնարերգության մեջ արվեստի այդ հավելվածները շատ ավելի էական մաս կկազմեն արտահայտության:

Քնարերգությունը շատ ավելի ուշ կդարձնե ինչպես ար-վեստի մյուս արտաքին հատկություններուն, այնպես ալ հատկա-պես խոսքի հատումին վրա. ավելի կնրբացնե ու կկանոնավորե:

Այդ ուղղությամբ իր առաջին կատարելագործումը բազմա-վանկ բառերեն խուսափումն է, որպեսզի հատումները փոքր ըլլան և ձայնին ելևէջը սա փոքր ալիքներ. քառավանկ բառը դեռ կհան-դուրժվի, մանավանդ երբ երկու անգամ երկուքի տպավորություն կընե, ինչպես են, օրինակ, ընդհանրապես քառավանկ բարդ բա-ռերը. բայց տաղաչափության հիմքը կկազմեն մեկ, երկու կամ երեք վանկանի բառերը: Ասով ալ քնարերգության մեջ հատվա-ծական չափը կդառնա մանրահատում ալիքավորություն մը, որ վիպականեն ավելի երկարահատում ու ավելի անփույթ հատվածա-կանություններեն շատ ավելի հաճելի և զգալի ելևէջ մը կուտա խոսքին, առանց միակերպ ու հավասարաչափ ըլլալու:

Քնարական ու վիպական չափերուն երկրորդ տարբերությունը բերողը արդեն երաժշտությունն է: Քնարական ստեղծագործու-թյունը, այսինքն՝ երգը, ստեղծված է երգվելու. կծնի ու սերտորեն կապված կմնա երաժշտական եղանակի մը հետ: Վեպը իր սկիզբը, վերջը, երբեմն ալ մեջը կրնա ունենալ և ունի նվագարանի մը որոշ հավելյալ օժանդակությունը, որ անջատ է սակայն վեպեն. վեպը իր էությամբ ըսելու և պատմելու համար է, ո՛չ թե երգվելու:

Իսկ երգի մը եղանակ ըսվածը, մանավանդ իր նախնական աստիճաններուն վրա, երաժշտական մեկ-երկու նախադասություն է, ընդհանրապես ո՛չ երկար. այնպես որ եթե երգի մը բառական մասը ավելի երկար է, հարկ կըլլա եղանակը կրկնել, և կարելի է երգի մը կցել նման բովանդակությամբ ուրիշ բառեր՝ պայմանով

որ եղանակի պարտադրած նույն երկարությունը ունենա, ուրիշ խոսքով՝ երգի մը բառական մասը ինքնին կբաժնվի քանի մը իրար հավասար մասերու, որ կանվանենք երգի մը «տուները»: Վիպական հատվածականությունը տուներ չունի, տողերը անընդհատ կշարունակվին, պատմությունը հոս ու հոն կանգ կառնե քիչ մը՝ պատմվող նյութի պահանջին համեմատ:

Երաժշտությունը, որ իրարու հավասար տուներ կպարտադրե, ատով իսկ կնպաստե տողերուն ներսի հատվածներու թվին հավասարության, որ սակայն արդեն ինքնին կատարվող բնական զարգացում մըն է, նաև առանց եղանակի միջամտության: Վիպական տող մը, ինչպես տեսանք, կրնա ըլլալ երկուքեն մինչև յոթը հատված, բայց 5, 6, 7 հատվածանի երկար տողերը շատ կմոտենան արձակ գրության, իբրև արձակ կզգացվին, ուրկե հետզհետե արվեստը կջանա խուսափիլ. երկու հատվածով ալ բան մը ըսելը համեմատաբար քիչ կպատահի. այնպես որ վեպին մեջ արդեն ինքնին ստվար մեծամասնությունը կկազմեն եռահատված ու քառահատված տողերը: Հիմա քնարերգության մեջ ավելի ևս մաղվելով՝ եռահատված ու քառահատված տողերը կդառնան գրեթե կանոնական, ընդհանրապես իրար հետ խառն, բայց երբեմն որոշ հեղինակներու քով ատոնք ալ կզատվին իրարմե. երգը կազմված կըլլա միայն եռահատված կամ միայն քառահատված տողերե:

Այսպես, օրինակ, հավանորեն մեր ժողովրդական երգերու ազդեցության տակ, գուցե մասամբ ալ հունական քառատրոհ չափերու գործածության հետևելով՝ յոթներորդ դարու առաջին կեսին մեր հոգևոր բանաստեղծներեն Կոմիտաս Հայրապետը բացառապես քառահատված տողերով հորինած է նշանավոր «Անձինք նուիրեալք» շարականը: Նույն այդ միջոցներուն Դավթակ Քերթողն ալ, որ բացառիկ աշխարհական մըն է իբրև գրական դեմք, գրած է գրեթե անընդհատ քառահատված տողերով Ջիվանշիր իշխանի մահվան վրա շարադրած իր ողբը:

Այնպես որ՝ թեև ազատ ու անհավասարության վրա հենված չափ մըն է խոսքի հատումնավոր հորինումը, բայց հայերեն բառերու բնական բերումով, երաժշտական եղանակի հարկադրանքով և ականջին ավելի հաճելի մանր ալիքներու բնախոսական

պահանջով՝ ըսելու արվեստը մնացած է այդ ազատության մեջ շատ հստակ և շատ կարևոր սահմանափակումներ: Անխտիր բոլոր ազատությունները կյանքի մեջ ունին իրենց անխուսափելի բնական սահմանափակումները. և այդ սահմանափակումներով է, որ ազատությունը կդառնա զարգացում, նրբություն, ճաշակ ու քաղաքակրթություն:

Հատվածական քնարական չափի այդ սահմանափակող կանոններն են. 1) Հատվածներուն մեջ պետք է տիրեն երկվանկն ու եռավանկը. տկարություն է միավանկ ու քառավանկ հատվածը: 2) Տողերուն մեջ ընթացիկն է երեք կամ չորս հատվածանի տողը. մեջեմեջ հարկադրանք մըն է երկու հատվածանի տողը: 3) Տուներուն մեջ ամենեն տարրականը երկու տողանին է, ամենեն սովորականը՝ նորեն երեք կամ չորս տողանի ամբողջությունը. հանգերգի մը կրկնությունը սովորական տունը կդարձնե երբեմն հինգ ու վեց տողանի:

Մինչև Ներսես Շնորհալի՝ մինչև ԺԲ դարուն կեսերը, աս է հոգևոր քնարերգության չափը, որ հավանորեն եղած է նաև մեր այն ժամանակվա ժողովրդական երգի չափերուն հիմքը: Հանգ ըսվածը գոյություն չունի:

* * *

Չափի մասին այս բոլոր ըսվածներուն ստուգումը դյուրացնելու դիտավորությամբ, ինչպես և ընդհանրապես մեր հոգևոր երգերու նյութի ու արվեստի մասին ավելի հստակ գաղափար մը տալու համար գրաբար գրքերու անսովոր ընթերցողին՝ կդնեմ հոս աղոթք-երգերե ու շարականներե առնված քանի մը բնորոշ կտորներ, իբրև նմուշ:

Փառք ի բարձունս Աստուծոյ
Եւ յերկիր խաղաղութիւն,
ի մարդիկ հաճութիւն:
Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս.

օրհնեալ ես տէր Աստուած մեր,
օրհնեմք զքեզ եւ գովեմք զքեզ:
Ցոյց մեզ, տէ՛ր, զողորմութիւնս քո
եւ զփրկութիւնս քո տո՛ւր մեզ:
Տէ՛ր, ողորմութիւն քո յաւիտեան.
զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:
Տէ՛ր իմ, զքեզ ապաւէն ինձ արարի,
ուսո՛ ինձ առնել զկամս քո,
զի դու ես Աստուած իմ:

❖

Ընդ մեզ տէր Աստուած.
գիտասջի՛ք, հեթանո՛սք, եւ պարտեցարո՛ւք,
զի Աստուած ընդ մեզ է:
Եւ լուարուք զայս
ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի,
զի Աստուած ընդ մեզ է:
Եւ զի թէպէտ եւ դարձեալ զօրանայք,
դարձեալ ի պարտութիւն մատնեսջիք,
զի Աստուած ընդ մեզ է:
Եւ զխորհուրդն, զոր խորհիք,
խափանէ Տէր,
զի Աստուած ընդ մեզ է:
Եւ զբանն, զոր խօսիք,
մի՛ մնասցէ առ ձեզ,
զի Աստուած ընդ մեզ է:

❖

Խաչի քո, Քրի՛ստոս, երկրպագանեմք
եւ զսուրբ մատնութիւնդ քո մեծացուցանեմք
եւ զսուրբ չարչարանսդ քո փառաւորեմք:
Եկայք, հաւատացեալք երկրպագեսցուք
Քրիստոսի Աստծոյ մերոյ,

վասնզի եկն ի ձեռն Խաչի իւրոյ
շնորհեաց պարգեւս աշխարհի:
Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ,
որ մատնեցար վասն մեր,
ողորմեա՛ մեզ:

❖

Ի նեղութեան իմում
օգնեա՛ ինձ, Տէ՛ր,
որպէս երբեմն Յովնանու:
Ի յանցանաց իմոց,
մաքրեա՛ զիս, Տէ՛ր,
որպէս երբեմն զմաքսաւորն:
Ի նենգաւոր շրթանց
փրկեա՛ զիս, Տէ՛ր,
եւ յարենէ ապրեցո:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

❖

Զանապական զՀոգեւոր զգանձն
յապականացու կենցաղս ծախեցի.
այլ առ քեզ միայն պաղատիմ, բարերա՛ր փրկիչ,
խնայեա՛ ի մեղուցեալ ծառայս:
Զցանկ Հոգւոյ իմոյ քակեցի
Եւ եղէ անբարունակ որթ.
այլ առ քեզ միայն պաղատիմ, բարերար փրկիչ.
խնայեա՛ ի մեղուցեալ ծառայս:
Ոստաքանց եղէ ես որպէս արմաւենի,
պտղակորոյս որպէս ձիթենի.
այլ անյիշաչա՛ր եւ անոխակալ փրկիչ,
խնայեա՛ ի մեղուցեալ ծառայս:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Ալիք յանցանաց զիս ալեկոծեն
եւ մեղք իմ բազում զիս յանդիմանեն.
արդ զի՞նչ արարից մեղուցեալ անձամբս,
որ չեմ ապրելոց յահագին հրոյն.
մեղայ քեզ, Քրիստո՛ս, որդի Աստուծոյ,
շնորհեա՛ զթողութիւն բազում յանցանաց իմոց:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Պարգեւատուն ամենեցուն՝
այսօր խնդրի պարգեւս ի Պիղատոսէ.
եւ արկողն զլոյս որպէս զօթոց
հաւանի պատել ի Յովսէփայ:
Կենդանատուն ամենեցուն
այսօր դնի ի նոր գերեզմանի.
եւ գանձն անմահութեան՝
կնքի մատանեաւ քահանայից:
Արարածոց փրկութիւն Քրիստոս՝
այսօր եղաւ ի նորափոր վիմի.
զոր օրհնեն զօրք երկնից երգով՝
պահպանի ի զինուորացն:

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ

Ո՛վ սքանչելի. եւ տեսի՛լ ահաւոր.
զարարիչն երկնի եւ երկրի
այսօր տեսաք ի խաչին:
Տեսեալ զտէրն ի խաչին
խաւարեցաւ արեգակն
եւ վարագոյր տաճարին ցելոյր վերուստ մինչ ի

վայր:
Անարգաբար խաչեցաւ տէրն ի մէջ ի յանօրինաց.
զի լցցի գիրն, որ ասէ,
Թէ ընդ անօրէնսն համարեցաւ:

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ

❖

Խորհուրդ մեծ եւ սքանչելի,
որ յայսմ աւուր յայտնեցաւ.
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս,
տան աւետիս աշխարհի:
Ծնաւ նոր արքայ
ի Բեթղեհեմ քաղաքի,
որդի՛ք մարդկան, օրհնեցէ՛ք,
զի վասն մեր մարմնացաւ:
Անքաւելին երկնի եւ երկրի
ի խանձարուրս պատեցաւ,
ո՛չ մեկնելով ի հօրէ՝
ի սուրբ այրին բազմեցաւ:

ՄՈՎՍԵՍ ՔԵՐԹՈՂ

❖

Ընդ արշալոյսն առաւօտուն
կանխեալ կանանցն ի գերեզմանն ասելով՝
Քրիստոս յարեաւ ի մեռելոց:
Եւ առ նոսա ասեր հրեշտակն՝
զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս.
Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

*Փութացարո՛ւք, ո՛վ սուրբ կանայք,
եւ պատմեցէ՛ք աշակերտացն ասելով
Քրիստոս յարեաւ ի մեռելոց:*

❖

*Գաւազան զօրութեան
զխաչ քո ետուր մեզ, Քրիստո՛ս,
եւ սովա՛ւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն:
Սա է զէն յաղթութեան՝
սրեալ արեամբ որդւոյն Աստծոյ.
եւ սովա՛ւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն:*

❖

*Զքեզ ամենօրհնեալ Աստուածածին,
մայրդ լուսոյ եւ առագաստ Աստծոյ բանին,
մեծացուցանե՛մք:
Զքեզ պայծառ երկինք եւ ամպ լուսեղէն,
ծնող արարչին եւ մօրենի անկիզելի.
մեծացուցանե՛մք:*

❖

*Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի,
երկնաւոր նահատակք եւ կուսանք իմաստունք.
ի պարծանս ձեր բարձրացեալ տօնէ
մայր Սիովն դստերօքն իւրովք:
Բարբառք երկնաւորք լցին զերկիր,
քանզի հոտ անուշից բուրեցայք ի Քրիստոս.
ողջակէզք բանաւորք եւ զոհք փրկութեան
եւ որոջք անարատք ընծայեալք Աստուծոյ:
Գեղեցկութիւնք մարմնաւոր
պայծառութեան ձերոյ
յիմարացոյց զթագաւորն եւ պակեան հեթանոսք.*

ի գեղ սքանչելի աստուածատուր կուսանացն
տարփացեալ զուարթունքն ընդ մարդկան
տօնեցին:
Թուլացան կորովք հաստաձիգ աղեղանց
և ակար կանայքն վառեցան զինու,
թագաւորն պերճացեալ զօրութեամբ և փառօք
ի մանկոյ ի կուսէն պարտեալ ամաչէր:
Կանայք պատուականք քաղաքաւ և
ազգաւ,
վաճառականք առատք անյայտ մարգարտին,
եդին զանձինս զրուականս բազմաց
և եղեն փրկանք անծանօթ աշխարհի:
Ճշմարիտ որթոյն Քրիստոսի շառաւիղք
և ողկոյզք ճմլեալք երկնաւոր մշակին,
կոխեցայք ճգնութեամբ ի հնձանս ձեր,
զի ուրախ լինիջիք անմահական բաժակաւն:
Մերժեցին զկարմիր մարմնական կենցաղոյս,
զի ծանեան, եթե երազ է և սուտ պաճուճանք.
ո՛չ հեշտացան ի զգայնս փափկութեան
իմացան՝ թէ սնոտի է անցաւոր մեծութիւն:

Յաղավածորեն.

ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

❖

Ճգնաւո՛րք Աստուծոյ
և ժառանգո՛րդք երկնից արքայութեան,
որք փոխանակեալ զանցաւորս՝
առիք զանանցն բարութիւնս,
բարեխօսեցէ՛ք առ տէր
վասն մանկանց եկեղեցւոյ:

Նահատա՛կք պանծալիք
եւ սիրեցեալք ի յերկնաւոր Հօրէն,
որք մկրտեցայք ընդ Քրիստոսի
արեամբ ձերով ի մահ խաչին,
բարեխօսեցէ՛ք առ տէր
վասն մանկանց եկեղեցւոյ:

Մարտիրո՛սք ցանկալիք,
եւ օթեւանք Հոգւոյն ճշմարտութեան,
որք յաղթեցիք Հոգւով
կարեաց եւ ցանկութեանց,
բարեխօսեցէ՛ք առ տէր
վասն մանկանց եկեղեցւոյ:

ՆԵՐՍԵՍ ԿԼԱՅԵՑԻ

Լո՛յս, արարի՛չ լուսոյ, առաջի՛ն լոյս,
բնակեալդ ի լոյս անմատոյց,
Հա՛յր երկնաւոր,
ի դասուց լուսեղինացն օրհնեալ.
ի ծագել լուսոյ առաւօտուս.
Ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Լո՛յս, ի լուսոյ ծագումն, արեգա՛կն արդար,
անճա՛ռ ծնունդ Հօր որդի,
յառաջ քան զարեւ
անուն քո գովեալ ընդ Հօր.
ի ծագել լուսոյ առաւօտուս,
ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Լո՛յս, ի Հօրէ բղխումն, աղբի՛ւր
բարութեան,
Հոգիդ սուրբ Աստուծոյ,

մանկունք եկեղեցւոյ ընդ Հրեշտակս
զքեզ բարեբանեն.
ի ծագել լուսոյ առաւօտուս
ծագեա՛ ի Հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Լոյս եռեակ եւ մի,
անբաժանելի սո՛ւրբ երրորդութիւն,
զքեզ ընդ երկնայնոցն
երկրածինքս միշտ փառաւորեմք.
ի ծագել լուսոյ առաւօտուս
ծագեա՛ ի Հոգիս մեր զլոյս քո իմանալի:

ՆԵՐՍԵՍ ԿԼԱՅԵՑԻ

2. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Քրիստոնէութիւնը՝ իբրեւ պաշտամունք, ծէս ու արարողութիւն, տարբեր ու նոր բան մը չունի իրմէն առաջ բոլոր միւս կրօններուն հետ համեմատած: Ինքը եկած էր կռուելու հեթանոսութեան դեմ, ուրկէ սակայն կամաց-կամաց յուրացուցած էր անոր պաշտամունքին ու կազմութեան բոլոր կողմերը:

Կրօններն ալ ունին իրենց զարգացման ներքին բնական օրէնքները: Երբ գաղափարը իր գաղափարական բարձունքներէն կիջնէ և ոտքը կդնէ իրականութեան հողին վրայ, երբ հաւատքը, զգացումն ու ոգեւորութիւնը պէտք է առօրեայ գործադրութեան վերածուին, երբ քանի մը անհատներու հոգիի մէջ ծագում առած անրջանքը բազմութիւններու սեփականութիւնը պիտի դառնայ, անխուսափելի կերպով կվերածուի որոշ հայտնի արարողութիւններու, որոշ ծէսերու, անվերջ կրկնվող որոշ խօսքերու և որոշ շարժումներու, որոնք բոլոր դարերու մէջ գրեթէ նոյնն են: Քրիստոնէութիւնն ալ բացառութիւն մը ըլլալ չէր կրնար:

Քրիստոնէութիւնը նորութիւն չէ բերած նաեւ իբրեւ աստուածաբանական տեսութիւն, իբրեւ ուսում միստիկականութեան: Նախ

նեղ մտքով կռապաշտութիւն եղած է միայն ժողովուրդներու ամենէն վարի ու տգէտ խաւերուն մէջ, Հասարակության ավելի կրթված ու ավելի մտածող վերին շերտերուն ըմբռնած աստվածությունը մեր ըմբռնածեն մեծ տարբերություն մը չունի. իրավ է, շատ են աստվածները, բայց ատոնք մոտավորապես նույնն են, ինչ որ մեր երրորդությունը, Աստվածածինը, առաքյալներն ու ամեն տեսակի սուրբերը: Երբ քիչ մը խորը կնայինք Հեթանոսներու բազմաստվածության վրա՝ խիկույն զգալի կդառնա, որ շատ մը աստվածներու անունին ու կերպարանքին տակ ավելի ծույլ ու Հավաքական արարչական միություն մը կխլրտի, որ կՀասնի տեղ-տեղ Համայնաստվածության մը Հավատքին. այսինքն՝ բնության բոլոր կողմերն ու երևույթները իբրև աստվածություն կըմբռնվին. բնությունն ու կյանքը իր ամբողջությամբն առած արարիչ է ու արարած միաժամանակ. և այս տեսակի լայնախոՀ, արարչագործ աստվածություն մը անտարակույս շատ ավելի բարձր ու աստվածայինին վայել Հասկացողություն մըն է, քան Հրեական միապետական ու խստապարանոց ու վրեժխնդիր ԵՀովան, որ Հին կտակարանին Հետ մտավ քրիստոնեության դիրկը:

Ու իր մեղմանալեն ու ազնվանալեն ետքն ալ, երբ դարձավ բարի նավապետ, բարեխնամ, բարեգութ ու բարի Հայր, քրիստոնեության պաշտած ու քարոզած միաստվածությունը մնաց միշտ շատ բարդ, խրթին ու շարունակ վեճերու տեղիք տվող պատկերացում մը: Միություն և երրորդություն, մարդ և աստված, որուն կապված է անխուսափելի կերպով ծնունդի գաղափարը և մարդկային տկարություններու և տգեղություններու պատկերացումներ և ոլոր-մոլոր անվերջ բացատրություններ, ուսումներ ու աղանդներ, կուսության ու մայրության խնդիրներ: Մեր այս շփոթ միաստվածության Հետ Համեմատած՝ ինչքան պարզ ու վսեմ է մաՀմետականության դավանանքը. ո՛չ մեկ աղճատում և ո՛չ մեկ ճիգ մարդկայնացնելու. «Մեկ է աստված». և վերջացավ:

Քրիստոնեության բոլոր գերազանցությունը, բոլոր մեծությունն ու խորությունը երկու կետի մեջ կկայանա. մեկը Հանրային է և մյուսը անոր կապված անՀատական:

Քրիստոնեության դավանանքով խտիր չկա ո՛չ ազգի. ո՛չ

դիրքի, ո՛չ վիճակի և ո՛չ սեռի. բոլոր մարդիկ եղբայր են իրար: Սիրե՛ ընկերդ քու անձիդ պես, սիրե՛ նոյնիսկ թշնամիդ: Ընկերական հաւասարութիւններուն ու փոխադարձ կապերուն հիմքը սէրը պիտի ըլլայ, ո՛չ թէ ուժը դրամի, ծագումի կամ բռունցքի:

Ասիկա չլսուած երգ մըն էր ու չտեսնուած նորութիւն մը, երբ հռչակուեցաւ: Ասիկա լսուած, բայց չտեսնուած նորութիւն մըն է մինչև այսօր: Աշխարհիս երեսին հիմա ճշմարիտ քրիստոնէութիւն չկա և ո՛չ մէկ տեղ ալ մինչև հիմա չէ եղած, եթէ իրաւ որ այդ եղբայրութիւնն ու սէրը հիմնական պահանջ է քրիստոնէութեան և ո՛չ թէ զարդարանքի սոսկ փետուր մը ամեն տեսակի գլխարկներուն ծայրը ցցելու համար:

Իսկ եթէ հանենք այդ յիշեալ պահանջը քրիստոնեական դաւանանքին մէջէն, ինչպես որ միշտ ալ հանուած է եղեր քրիստոնեաներու ընկերական կեանքին ու իրականութեան մէջէն, այն ատեն կզրկենք քրիստոնէութիւնը իր բոլոր վսեմութենէն և իր պահանջած բարոյակրթական բարձրութենէն: Քրիստոնէութեան բարձր արժէքը հոն է, որ մարդկութենէն աւելի բարձր հոգեբանական զարգացում կպահանջէ և շատ աւելի բարձր տեսակի ընկերական կեանք ու կազմակերպութիւն: Նախապատմական մարդու հին ու արմատացած ու նեղ եսականութեան դէմ այլասիրութիւնը դնել կքարոզէ:

Անհատական տեսակէտէն ալ քրիստոնէութեան բերած նորութիւնն ու հրապոյրը հոն է, որ զուրկ ու խոնարհ դիրքով մարդոց, որոնք միայն արհամարհանք էին տեսած, թեւեր կուտար: Այդ «չիք խնդիրը» ինքնին չափազանց ուժեղ լծակ է, որ կբարձրացնէ հոգիները. միւս կողմէն ալ աշխարհային մեծութիւններուն ու հարստութիւններուն վրա վերէն նայիլ և միայն հոգեկան ու երկնային բարձրութիւններուն ձգտիլը աւելի եւս կխթանէ մարդուս ներքին արժանապատուութիւնն ու հպարտութիւնը:

Նոր կրօնքը կըսէ. «Նայէ՛ միշտ վեր ու երկինք. նետէ՛ քու մէջէդ ու վրայէդ աշխարհային բոլոր մանր, ցած ու անցաւոր բաները, զբաղէ՛ միայն հաւիտենական ճշմարտութեամբ, ձգտէ՛ միայն դէպի Աստուած»: Երբ այսպես է նոր դաւանանքը, երբ այսպես է մարդու մը հաւատքը և երբ այդ պահանջը իրագործելու

ձգտումով մարդս լքած է աշխարհայինը ու եկած դարձած է վանական, նվիրած է իր կյանքը աստվածպաշտության, սուրբ ու բարձր գրքերու ընթերցումին և իր մտածումներով, երազանքներով ու աղոթքներով շարունակ անմիջական հաղորդակցության մեջ է աստվածության հետ, բնականաբար հետզհետե կշեշտվի իր մեջ բացառիկ մը ըլլալու գաղափարը, աստվածային ընտրյալ մը ըլլալու հավատքը, ինչքան ալ խոնարհ ու համեստ ձևեր առնե: Եվ դարմանալու ոչինչ չկա, երբ կըսե, թե կխոսակցի Քրիստոսի հետ և որ արժանացած է Մայր Աստվածածինի անմիջական ու իրական սուրբ տեսության: Աստվածային այցելուներ է, որ կընդունի. դարձած է արդեն երկնային պալատի բացառիկ դրանիկներեն մեկը իր խղճուկ ու միայնակ խուցին մեջ նստած:

Այս նոր տեսակի ինքնագիտակցումը, այս բացառիկ ընտրյալ մը ըլլալու ինքնագնահատումը կբերե սակայն իր հետ իր նոր պահանջները. ընտրյալը կուզե իսկապես արժանի ըլլա իր ստացած վիճակին, կուզե դառնա իրապես աստվածային. կուզե որ իր մեջ լռեն բոլոր մարդկային թերությունները, բոլոր մարդկային կրքերը ու բնազդները. կուզե երկրի վրա դառնա ճշմարիտ երկնային մը. կուզե նման ըլլա իր Քրիստոսին, որ աստված մըն էր մարդկային մարմնի մեջ:

Սակայն ինչպես քրիստոնեության հանրային իտեալը կա միայն գրքերու մեջ ու թղթի վրա, իսկ կյանքի ու ընկերության մեջ իրականանալու հող չի գտներ, այդպես ալ բացառիկ անհատներու այդ հոգեկան ճիգն ու թռիչքը դեպի վեր կրնա ապրիլ միայն մարդուս բարի ցանկություններուն մեջ և իրական դառնալու կարելիությունը չունի: Մարդը, մարդկայինը, մարմինն ու աշխարհայինը ինչքան ալ արհամարհես, ինչքան ալ վեր ձգտիս դեպի երկնայինը, դուն մարդ մըն ես միշտ, մարմին մը ունիս և կքալես այս աշխարհի վրա: Եվ ինչքան ալ մարմինն ու աշխարհայինը խոր արհամարհես և ինչքան հոգիիդ խորերեն հոգիանալ տենչաս քու մարմնիդ չորս պատերուն մեջ, այնքան ավելի խորունկ կզգաս քու տկարությունդ և մեղավորությունդ, անկարողությունդ և երկնային մը ըլլալե շատ հեռու ըլլալդ: Այս անխորտակելի իրողության և քու հոգիիդ վերացական ձգտումին մեջ եղած այս սարսա-

փեղի Հակամարտութեանն կծնի խաղաղես քրիստոնյա Հոգիներուն խորքը աներևակայելի բուռն տրամա մը:

Եվ այդ տրաման ապրած են քրիստոնյա Հայրերեն շատերը և ինչքան որ խոր է եղած իրենց Հավատքն ու տենչանքը և ինչքան թևավոր իրենց Հոգին ու իմացականությունը, այնքան ալ ուժեղ է եղած այդ ներքին տակնուվրայությունը: Մանավանդ երբ Հոգևոր կոչումի աշխարհիկ պարտավորություններեն ու պաշտոններեն Հեռու՝ քաշված ու մենիկ կյանք մըն են անցուցած վանքի մը անկյունը:

* * *

Գրիգոր Նարեկացին ճիշդ այդ տեսակ դեմք մըն է, ապրած է տասներորդ դարու երկրորդ կեսին: Իր մանկությունն ու պատանեկությունն անցուցած է Նարեկի վանքին մեջ՝ Վան ծովուն դիմացը, իր ազգական Անանիա Նարեկացի Հոգևորականին թևին տակը: Գրիգոր Նարեկացին վանական մըն է խակական, իր ամբողջ կյանքը անցուցած է մեկուսի ու ինքնամփոփ խոկումներու մեջ: Խորին Հավատքով, բարեպաշտ և Հուր ունեցող երևակայությամբ անձ մը: Կարդացեր է շարունակ, գրեր է գովքեր ու մեկնություններ, ճանչցվեր ու գնահատվեր է իր շրջանակին մեջ իբրև բարձր ու գիտնական ու շնորհալի վարդապետ. և իր թողած գործնական ու կիսագործնական Հոգևորական գրությունները իրենց տեսակին մեջ ամենեն լավերն են. տաղանդավոր մարդ է, նուրբ մտածումով, խոր զգացումով և կենդանի լեզվով:

Շատ ավելի թափ, շունչ, գեղեցկություն ու անհատականություն ունի իր բուն քնարական ստեղծագործություններուն մեջ: Իր երգերը կրոնավորի երգեր են, եթե նայինք նյութին, եթե նայինք վերջին տողերու բացատրության. բայց մեջեմեջ դուրս կհոսին իրենց այդ նեղ շրջանակեն ու կդառնան դիտված իրականության մը պատկերացումը կամ բնության գեղեցիկ ու Հորդ նկարագրություն, ինչպես, օրինակ, իր «Սայլիկը» ու մանավանդ իր գեղեցիկ «Վարդավառի» երգը:

Եթե մեզի Հասած ըլլային միայն իր այս գրությունները՝ Նարեկացին կներկայանար մեզի քրիստոնեական Հայ գրականու-

թյան ընդհանուր հոսանքին մեջ շատ աչքի իյնող, ինքնատիպ, ճաշակով ու անհատական շնչառով դեմք մը. կըլլար շատերեն մեկը, լավերեն մեկը:

Բայց ահա իր կյանքի մեկ որոշ շրջանին, իր նրբազգաց ու խորունկ իմացականության մեջ իր քրիստոնյա մենակյացի ապրումներն ու ձգտումները տարապայման կերպով կուռին ու կհորդին. կզգա իր հոգիին թռիչքը, իր կամքին սլացքը դեպի վեր. հպարտ որոշումով կուզե իրականացնել բացառիկներեն պահանջված սրբությունն ու մեծությունը, կտենչա, որ իր մարդկային մարմնին ու հոգիին մեջ խեղդե, ինչ որ աշխարհ է ու մարմին: Բայց իր սուր խելքով և իր ղսպված զգացումներով միևնույն ժամանակ կըմբռնե, ավելի ճիշդը՝ չի կրնար ըմբռնել, չի ուզեր ըմբռնել, որ անկարելին կտենչա: Չի կրնար հաշտվիլ, որ ինքը հողեղեն մըն է միայն կապված հողին և որ չի կրնար դուրս գալ իր մարմնի անդիմադրելի պահանջներեն, հուզումներեն, հուշերեն ու մտածումներեն:

Հուսահատ ճիչերով կկրկնե ու կկրկնե աղոթքներու անվերջ շարքի մը մեջ իր խեղճությունը, իր ոչնչությունը, իր թռիչքին ու իր հպարտության անկարողությունը՝ ատոր դեմ դնելով Աստծու ու աստվածայինի անհուն տարբերությունը, անկասելի բարձրությունը, ամենազոր կարողությունը:

Միևնույն մտածումին, միևնույն զգացումին այդ միևնույն դառն հակադրության մշտական կրկնությունն է էջերով ու էջերով. անհատնում ձևերով, հորդ ու վարար համեմատություններով ու պատկերներով աղոթքներու այն շարքը, որ կկոչվի «Նարեկ»:

Ո՛չ, աղոթքներու շարք մը չէ սակայն այդ գիրքը. ո՛չ էությամբ, ո՛չ ձևով, ո՛չ ալ ոգիով աղոթքներ չեն ատոնք: «Նարեկը» աղոթագիրք չէ. «Նարեկը» մարդկային հոգիի մը խորունկ ալեկոծումն է, փոթորիկի բերանն ինկած քրիստոնյա հոգի մը, որ ծովերու ջրերուն պես շարունակ դեպի վեր, դեպի երկինք կձգտի և ծովերու ջրերուն պես շարունակ վար կթափի իր խեղճ գոգը: Ի՞նչ է ալեկոծությունն ըսվածը: Ուժեղ փչող շունչի մը տակ ջրերու ճիգն ու խոյանքը դեպի վեր, որ հազիվ քիչ մը բարձրացած՝ շառաչյունով իր բացած անդունդը կթափի նորեն, նույն խոյանքը միշտ ու շարունակ և նույն անողոք անկումն ու խորտակումը: Այդ անվերջ

ներքին եռքին ու այդ անվերջ միեւնոյն բանի կրկնութենէն զատ ուրիշ ի՞նչ կա օվկիանոսներու փոթորիկին ալեկոծութեանը մէջ: Այդ անվերջ խոյանքին ու այդ անզօր խորտակումին զատ ուրիշ ի՞նչ կու զենք, որ ըլլար ազնիվ ու մաքուր վանականի մը միայն աղօթքի սովոր այդ երգերուն մէջ: Արդէն ամէն երգի գլուխը ինքը կկրկնէ շատ որոշ կերպով. «Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հեղողի առ նոյն աղերս մաղթանաց բանի, ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ»: Ինքը կըսէ «հեծութիւն» ու «խօսք» Աստծու հետ. իրականին մէջ այդ գրութիւնը կռիվ մըն է Աստծու հետ, որուն պիտի գամ:

Հոգիի մը ապրումներուն կենդանի ու հարազատ պատկերացումը կանվանենք գեղարվեստական երկ: Ինչքան ճշմարիտ ու հարազատ է այդ պատկերացումը, այնքան ավելի բարձր գեղարվեստ ունի երկը: Եվ որքան լայն շերտերու, ինչքան շատ անհատներու ու խումբերու հոգեկան ապրումին խոր ու իրական պատկերացումն է գեղարվեստական երկը, այնքան ավելի հանրային մեծ հետաքրքրութիւն և ընդհանուր հիացում կառաջացնէ և այնքան ավելի ընկերային խորք կստանա գեղարվեստական երկը:

«Նարեկը» այդ տեսակի բացառիկ գեղարվեստական ստեղծագործութիւն մըն է, պարզ, խոր ու ինքնաբուխ: Միջնադարյան քրիստոնեական կյանքի ամենեն բարձր ու խորհրդավոր մեկ արտահայտութիւնը և ո՛չ միայն մեր հայ քրիստոնեական գրականութեան ամենեն խորունկ ստեղծագործութիւնը կներկայացնէ, այլև ընդհանրապես համաշխարհային բուն քրիստոնեական ոգիի բացառիկ ու բարձր ժայթքումներեն մեկն է:

* * *

Նարեկացին իր դավանանքով, իր ուսումով, իր հոգեկան ափայտանքով ծնունդ է ու արտահայտութիւն միջնադարի քրիստոնեութեան, բայց իր հոգեկան կազմով, իր խորքով, ճաշակով ու բնածին հակումներով, ինչպես և տաղանդով հեթանոսական դեմք մըն է:

Քրիստոնեութիւնը զգայարանքները կարհամարհէ և միայն

մաքին խոսիլ կուզե, մինչդեռ Նարեկացին զգայարանքներով կապրի. կենդանի դիտող ու կենդանի գործող զգայարանքներ. իր «Նարեկը» զգայարանքներով դիզված պատկերացումներու, Համեմատություններու շտեմարան մըն է: Սուր իմացականության տեր ու խելացի մարդ է անշուշտ, բայց ո՛չ վերացական. վերացականը իր կարդացած գրքերեն ու դավանանքեն փոխառություն է, և այդ փոխառությունն անգամ ճիգ կընե պատկերելի դարձնելու, իրականությանը մոտեցնելու, զգայարանքով թարգմանելու:

Նարեկացիի Հոգին նվիրված է բնության, լեցուն է բնության իրական պատկերացումներով, կըմբռնե, կսիրե ու կվայլե բնության գեղեցկությունները ու գիտե նաև իր այդ սիրած բնությունը արտաՀայտել նուրբ ու ճաշակով. և ճաշակ ըսվածը զգայարանք ըսել է:

Նարեկացին կսիրե կյանքը, ա՛յս կյանքը իր Հոգեկան բնական խորքին մեջ. և ինքն ալ գիտե, որ շատ կսիրե. գիտե, որ այս կյանքի գեղեցկություններն ու վայելքները քաշեր են ու կքաշեն իր Հոգին. գիտե, որ ինքը խորունկ կարոտ ու որոնումը ունի կյանքի, այս կյանքի Հրապույրներուն ու սերերուն, և այս իրողութենեն կծնին արդեն իր աղոթք-երգերը: Չէ՞ որ զղջումն են ու խոստովանություն իր մեղքերուն, իր Հոգեկան անխոստովանելի շեղումներուն ու մոլորանքին, սատանայի ու դևերու ունեցած մեծ ազդեցությանը իր Հոգիին վրա: Իսկ ի՞նչ ըսել է «մեղք», «սատանա» ու «դև». ըսել է մարմին, աշխարՀ, բնազդ, ըսել է կյանքի վայելք ու սիրո ծարավ:

Նարեկացիին աղոթք-երգերը անՀույս ու ՀուսաՀատ ճիգեր են այդ ծարավեն ազատվելու, մեղքերու ծովեն դուրս ելլելու, թեև ինքն ալ գիտե, որ ասիկա անկարելի բան մըն է իր Հոգիին ու խառնվածքին Համար, որ «իր ու Քրիստոսի ձուլումը անկարելի բան մըն է»:

Քրիստոնեությունը, ինչպես և ընդՀանրապես ամեն արդեն կազմակերպված կուսակցություն, չի սիրեր անՀատականը, կսիրե ընդՀանրականը. կխոսե ընդՀանրության անունով. իբրև կուսակցության բերանը. նույնիսկ շատ ուժեղ կուսակցական դեմքեր, որ իրենց խելքով կուսակցությունը կվարեն ու իրենց կամքը կպարտադրեն, ամեն կերպ կջանան անՀատականը սքողելու և իբրև

հանրության բերանը ներկայանալու, իբրև հանրության կամքին արտահայտությունը. իր նոր ցուցադրելը, իբրև անհատ խոսիլը կհամարվի հանրության զգացումը վիրավորող երևույթ, կզգացվի իբրև խրոխտանք ու ամբարիշտություն:

Քրիստոնեական բոլոր աղոթքներն ու շարականները «ես» չեն ճանչնար. ասոր մեծամասնությունը միշտ կխոսի արդեն հոգնակի՝ «մենք», «զմեզ», «մեր», «մեղաց մերոց», «երգեմք», «փառաւորեմք». աս է ընդհանուր տարազը Աստծու հետ խոսելու: Գլխավորապես հրեական սաղմոսներու ազդեցության տակ և ընդհանրապես սաղմոսներեն փոխ առած բառերով, եթե մեջընդմեջ կհանդիպինք նաև «իմ», «զիս», «իմոյ» եզական ձևերու գործածության, իմաստը միշտ ալ հոգնակի է, ընդհանրության ըսելիք բաներն են եզակի ձևով արտահայտած:

Քրիստոնյա հոգեբանության համար եզակին ինքը Աստվածն է միայն. հավատացյալները բոլորը միասին առած կեցած են Աստծու դեմ իբրև հոգնակի մեկ ամբողջություն մը. «Մի հոտ և մի հովիվ», ինչպես շարունակ կկրկնվի. անհատը քրիստոնյայի հոգեբանության մեջ միշտ ձուլված է հանրության. իբրև անհատ մեջտեղ չի գար. իբրև անհատ չի խոսիր Աստծու հետ երգերու ու շարականներու մեջ. եթե խոսի՝ քրիստոնեական ըմբռնումներուն ու քրիստոնեական պաշտաճության դեմ գացած կըլլա, քալած կըլլա հեթանոսական ուղիներով: Եվ Գրիգոր Նարեկացին այդ հեթանոս ճամբով կքալե. իր «աղոթքներուն» մեջ կեցած է միշտ ինքը մինակ, իբրև անձ, իբրև անհատ մարդ մը ու կխոսի Քրիստոսի հետ իբրև «ես», ի՛ր մասին, ի՛ր հոգիի մասին, ուրիշներուն հետ գործ չունի:

Հետևանքը կըլլա հոգեբանական խորություն. գրվածքը ընդհանուր խոսքեր ու գաղափարներ ըլլալեն կդառնա հոգեբանական, անհատական ապրում. և կշեշտվի մարդկայինը, անհատ մարդկայինը, ո՛չ «հոտ»-ային. որով և խիստ կբարձրանա գրվածքին գեղարվեստական արժեքը: Մյուս կողմեն ալ, երբ անհատ մարդ մը և աստվածությունը կդնեն դեմ դեմի վեճի մեջ, իբրև տեսակ մը հավասար հավասարի, իրենց բոլոր սարսափելի անհավասարության հակառակ՝ կստացվի խոր դրամատիզմ. կստացվի հակադրություն, ընդհարում, կայծ, բողոք. մեղադրանքի պես բան մը,

պայքար աստվածայինի ու մարդկայինի միջև, որ արդեն դուրս կուգա բոլորովին քրիստոնյայի ուղղափառ ըմբռնումներեն և Հավատացյալի մը «Հոտ»-ային Հլու ու խոնարհ վիճակեն:

Հակառակ Նարեկացիի բոլոր անվերջ ինքնաքննադատության, ինքնամտրակումին, Հակառակ իր չափազանցված Հավաստիացումներուն իր թշվառության, իր մեղավորության և իր ոչնչության մասին, Հակառակ իր լացին, զղջումին ու աղաչանքին և Հակառակ Քրիստոսի աստվածային անհասելի բարձրության պանծացումին և Հակառակ բոլոր իր ու Քրիստոսի մեջ եղած անսահման Հակադրություններուն՝ մենք կզգանք այդ երգերուն մեջ և այդ խոսքերուն տակեն, որ Հպարտ Հոգի մը կխոսի, որ այդ Հոգին կմաքառի աստվածային այդ ամենակարող մեծության սարսափելի ճնշումին դեմ և իր մարդկային իրավունքները կպաՀանջե. իր կազմին, իր մարմինին, իր Հոգիին, իր գոյության ազատությունը կփնտրե՝ անշուշտ խարխափելով իր շրջապատի ու իր դավանանքի խավարին մեջ: Երբ խորը կնայինք՝ «Նարեկին» երգերը ողբ չեն, այլ բողոք, ստորնացում չկա այդ երգերուն մեջ, այլ ըմբոստացում. ստորնացում եղողը բառերն են, այդ բառերուն իմաստն ու ոգին ըմբոստություն է. անկում չեն այդ երգերը դեպի վար, այլ թռիչք մը մարդկային ուժեղ Հոգիի դեպի վեր:

Եթե այդ երգերուն ու մտածումներուն վրա նայինք իբրև քրիստոնյա Հավատացյալի մը սովորական աղոթքներուն վրա, իրավ որ ատոնք կդառնան ընդՀանրապես տարօրինակ և մեջեմեջ ուղղակի ամբարիշտ: Զարմանալի աղոթք մըն է ինքզինքն ու Քրիստոսը դեմ դեմի դնելն ու իրարու Հետ Համեմատելը, ուր Համեմատություններն ու Հակադրությունները ինքնին բողոքի կերպարանք կառնեն, կռվի նման բան մը կդառնա աղոթքը մարդկայինի ու աստվածայինի այս աստիճան մեծ անՀավասարության դեմ և ուր Հոգին իր խորքերուն մեջ մարդկայինի բարձրացմանն ու արժեքավորմանը կձգտի. կստացվի Պրոմեթեոսի ու Զևսի պայքարումը Հիշեցնող պատկերացում մը զուտ Հեթանոսական:

Զարմանալի աղոթք մըն է, երբ Հավատացյալը կՀրավիրե, որ Քրիստոս գա իր Հոգիին մեջ բնակվելու, որ ձուլվի ու միանա իրեն. և միևնույն ժամանակ կըսե պարզապես, որ Քրիստոս ինչքան

այ աշխատելու ըլլա, չի պիտի հաջողի, ինչու որ աշխատանք է, շատ են տարբեր երկուքի էությունները: Զարմանալի աղոթք մըն է նմանապես, երբ կկանչես Քրիստոսը, որ գա ու արյունը քսե քու սենյակի սեմին և որ իր հետ բերե իր երկնային զորքերը բնակա-րանիդ բոլոր անցքերը պահպանելու համար, որ դևերն ու սա-տանաները ներս մտնել չկարողանան, այսինքն՝ մարդկային մեղավոր մտածումները, և մեր վարդապետը իր անկողնին մեջ քիչ մը հանգիստ քնանալ կարողանա:

Եվ վերջապես սա ի՞նչ աղոթք է, երբ կդիմես քու սիրած ու պաշտած Աստծուդ ու կըսես. «Ամեն աղվոր ու բարձր դիրքերն ու պատիվները պահեր ես քեզի համար և ամենեն գեշ ու ծանր բաները պարտադրեր ես ու տվեր ես ինծի, բոլոր բազմարժան իրավունք-ները պահեր ես քեզի և տվեր ես ինծի ամենեն վարանելի պատաս-խանատվությունները»: Սա արդեն աղոթք ու փառաբանություն չէ, սա արդեն կռիվ է, պահանջ է մարդկային իրավունքի. սա պարզապես մեղադրանք է աստվածային եսականության դեմ, որ միայն իր մասին է մտածեր և ո՛չ թե իր ստեղծած մարդուն մասին:

Եվ ինքը շատ լավ կգիտակցի, որ կռվի մեջ է Աստծու հետ: Իր վարմունքը կանվանե «անաստված մոլեգնություն» և կխոստովանի «իր պարտությունը» այդ կռվին մեջ. կըսե. «Ոտքդ պագնիմ, Քրիստոս, այլ նորեն զարնելդ ու որոտալդ ավելորդ է, ես արդեն ջախջախված մըն եմ»:

Իր երգ-աղոթքներուն մեջ Գրիգոր Նարեկացիին հետա-քրքրողն ու զբաղեցնողը քրիստոնեական վերացականությունները չեն, ո՛չ ալ նույնիսկ իր սիրած ու պաշտած Քրիստոսը. իրեն համար իսկապես հետաքրքիր եղողը ի՛ր հոգին է, ի՛ր էությունը, ի՛ր ան-հատականը, ի՛ր ներկան ու ապագան: Մարդկային անհա՛տը: «Ի՞նչ է հիմա իմ այս կյանքս և ի՞նչ պիտի ըլլա վերջը իմ այս կյանքիս»:

Հարցեր, որոնց պատասխանը գտնել չի կրնար, որովհետև իր հոգիին մեջ բոլորովին խառնված են իրարու քրիստոնեությունն ու հեթանոսությունը, «հոտ»-այինն ու անհատականը, ճգնավորն ու բողոքողը, սուրբն ու ամբարիշտը, սատանան ու Քրիստոսը. և ինքը հուսահատ կերպով կնայի, թե ուր պիտի հասնի իր այս կյանքի

խարխլած սայլակը: Սա մարդկային հոգի մըն է մեր առջևը դրած մերկ. և բարձր գեղարվեստ:

Գրիգոր Նարեկացին մեծ է նախ անով, որ ապրած ու արտահայտած է իր միջնադարյան քրիստոնեության հոգեկան ներքին փոթորիկը այնքան հարազատ ու այնքան թափով. մեծ է իբրև բուն քրիստոնեական դարերու խոր երգիչ:

Գրիգոր Նարեկացին մեծ է նաև անով, որ առանց իր գիտնալուն դուրս է եկած իր հոգիով միջնադարյան քրիստոնեական դարերեն դեպի նոր դարերուն խարխափումները:

Բնության սեր, կենդանի ու իրական նկարագրություն և անհատական հոգիի մը բացումն ու ցուցադրումը, պայքար ու որոնում. ու հոգեկան տրամա. մարդկայինի շեշտումն ու ընդգծումը. արարածի մը զգացած բարձրացման պահանջը իր արարիչ ճնշող ուժին դեմ: Այսինքն՝ բնություն, իրականություն, ճշմարիտ հոգեբանություն, անհատականություն ու պայքար մարդկայնության համար: Իսկ այդ բոլորը նոր ժամանակներու պահանջներ են. այդ բոլորը վերադարձ մըն է դեպի հին հեթանոսական հոգեբանությունը: Եվրոպական վերածնության դարերեն դարեր առաջ գրված մեր Նարեկացիի աղոթք-երգերուն մեջեն կհնչե այդ նոր դարերուն կարոտը, նոր դարերու մարդկային մարմնի ու հոգիի ազատության պահանջը և նոր դարերու նախերգանքը եղող վերածնության ձայնն ու ոգին: Եվ ասիկա մեր հայ հոգիի խորության ու ստեղծագործ արժեքի տեսակետեն շատ բարձր վկայական մըն է:

* * *

Հոս կդնեմ քանի մը կտորներ ըսածներուս իբրև հենարան նմուշ, որոնք միևնույն ժամանակ կուտան Նարեկացիի լեզուն, ոճը և արտահայտության ձևերը: «Նարեկը» ամբողջովին գրված է հատվածական վիպական չափով, որովհետև չէ ստեղծված երգելով կամ երգելու համար: «Վարդավառի երգը», որ անշուշտ հեթանոսութենեն եկող ժողովրդական երգի մը ազդեցությամբ կամ հետևողությամբ է գրված, ունի հատվածական ամենեն նուրբ ու ազնիվ քնարական չափը, որ է 2, 3, 2 և 3, 2, 3 վեց հատվածներու

կանոնավոր հաջորդականություն, որու մասին հաջորդ գլուխնե-րուն մէջ խոսվելու է:

❖

Եւ արդ հի՞մ տրտմիս,
ա՛նձն իմ կործանեալ,
ո՛չ յաստուածո՛ւ առ հնարաւորութեանց,
այլ ի քումդ ինքնագործ հակամիտութեանց.
կամ ընդէ՞ր զիս խոտես
յուսահատութեամբ սատանայականաւ:

❖

Զի ոչ ջերմն սիրով առ ընկերին կարիս
մատուցայ՝
յիրաւի ի նախնումն վտանգին տագնապեալ սատնում:
Եւ զի ոչ զցանկականն խրոխտականութիւն սանձեցի՝
յարժանի կրեմ եղկելիս զանզովանալի զկիզումն:
Եւ քանզի ոչ սիրեցի զլուսոյդ աւետիս՝
արդար հատուցմամբ ի մթութիւն ըմբռնողական
միգին կորստեան վրիպեալ դանդաչեմ:
Եւ զի ոչ խորհեցի զմանունս փոքունցն յանցանաց,
իբր անխնամակարք վարկանելով,
պատկանալէս ի խածանողականացն
զագիրն գետնոց խթեալ խոցոտիմ:

❖

Քեզ արդարութիւն հանդերձեցեր, բարերա՛ր,
եւ ինձ՝ ամօթ եւ պատկառանս պատրաստեցեր.
քեզ փառս վայելչականս,
եւ ինձ՝ նախատինս յարմարաւորս.
քեզ քաղցրութեան յիշատակ,
եւ ինձ՝ մաղձ քացախեալ ի կատարածի.
քեզ բարերարութիւն անլռելի,

եւ ինձ՝ ձայնս ողբոց աղաղակի.
քեզ օրհնութիւնս երգոց խնկելի,
եւ ինձ՝ մերժումն տարագրութեան.
քեզ՝ իրաւունս բազմարժանիս,
եւ ինձ՝ պատասխանատուութիւնս ամենավարանս.
քեզ բարձրութիւնս անճառ գովեստից,
եւ ինձ՝ զաճիւն լիզելոյ պատիժ ձաղանաց:

❖

Մոլորեցայ անառակ ընթացիւք ի միտս վայրենիս,
յանդգնեցայ շրթամբք խօսից ի բանս երկրաւորս.
զակատեցայ անկասելի ի պատկառելեացն գործոց.
զիրկս ածի կենցաղոյս սիրոյ.
եւ ի քեզ թիկունս փոխանակ դիմաց դարձուցի.
ի թուիչս մտաց ընդ խաւար խորհրդոց սլացայ.
զանարատ Հոգիս մարմնոյս փափկութեամբ յաւէտ
վատեցի,
յաղօթարանն վայրի ընդ պատաղմունս այսր
կենցաղոյս շրջանակեցայ.
ո՛չ կացուցի յստին զերիվար մտացս երասանաւ բանին:

❖

Ամբարտաւանեցայ փոշիս շնչաւոր,
ամպարհաւաճեցայ կաւս ձայնաւոր,
հպարտացայ հողս անարգութեան,
ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի,
բազուկ կառուցի բաժակս մանրելի,
տարածեցայ առաւել իբր վիհ,
եւ դարձեալ իբր զհերքեալ՝
առ իս ինքնամփոփեցայ:

Բարկութեանն բոցով ցոլացոյ տիգմս բանաւոր.
իբր զանմեռ որ մեծամտեցի՝
որ ընդ քառասնեաց մահու եմ փակեալ:

❖

Տարր ժամանակիս յանէից,
անցեալն անյայտ եւ ապառնին կարծողական,
ե՛ս անհամբեր եւ բնութիւն թերահաւատ,
տուք անհաստատուք եւ միտք ցնդեալք,
կիրք հարկաւորք եւ բարք անժուժկալք,
մարմին մեղսամակարդ
եւ յօժարութիւն երկրասէր,
դիմադրութիւն անկակից
եւ խառնութիւն ներհակական:

❖

Սիրտս նանրախորհուրդ, բերանս չարախօս.
ակնս յայրատատես, ականջս դիւրալուր.
ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկիւղ.
քահանայ անկնդրուկ, օրինական աննուէր.
խորտիկ խանդարեալ, ճաշակ զարշեցեալ.
այգի զազձնաւոր, որթ որդնահար.
պարտէզ փշաբեր, հասկ ուտճահար.
մեղր ի մկանց ճարակեալ, անպատսպար անկեալ,
մնապարծ յուսահատ, անհամոզելի նզով.
անհաշտական բաժանեալ, ունայնաբան չաղակրատ.
պաճարամիտ զոռոզ, անսանօրէն ապիրատ.
աներասան յանդուգն, մոլեգնութիւն անսաստուած:

❖

Մնոեալ պատկերիս մի՛ ոխս պահեսցես,
ընդ անշունչ կերպարանիս մի՛ պատ քննութեան մտցես,
մահու տանջեցելոյս մի՛ հարուածս յաւելցես,
կործանելոյ շինուածոյս մի՛ պատուհաս մատուցես,

շանս սպանելոյ մի՛ քարինս արձակեսցե՛ս:
Լուսոյս ջախջախելոյ մի՛ սաստիկս որոտասցես:
Ի յոտս քո անկանիմ եւ զգարշապարիդ Հետս Համբուրեմ,
զպարտութիւնս խոստովանիմ եւ զմեղանս
Հրապարակեմ,
կշտամբանաց քարամբք կոծիմ եւ Հառաչանօք սրտիս
տապանեմ:

❖

Եւ արդ, վասն զի ի ձեռն մեծիդ
եւ ամենաՀնար արուեստաւորիդ՝
իմս եղանութեան տեառն եւ Աստուծոյ՝
իբր ի քրայս ընտրութեան փութոյ քոյ սիրոյ
Հանապազ եռամ եւ ո՛չ երբեք պարզիմ,
միշտ խառնեմ զուգիլ եւ ոչ եւս միանամ:
ԱՀա՛ զո՛ւր, արծաթագործդ եկնաւոր իմ ճարտարպետ,
ի սնոտիս վաստակեալ առ իս աշխատիս:

❖

Դու լոյս ես եւ յոյս,
եւ ես՝ խաւար եւ յիմար.
դու խնկութեամբ բարի, զովելի,
եւ ես՝ Համայնիւն չար ապիկար.
դու տէր ստորիցս եւ երկնից,
եւ ես՝ անիշխան շնչոյս եւ Հոգւոյս.
դու բարձրեալ ի կարեաց զատեալ,
եւ ես՝ տաժանաւոր եւ վտանգաւոր.
դու ի վեր քան զկիրս երկրիս,
եւ ես՝ կաւ անարգութեան զարշութեան.
դու մնաս յաւիտեան յամբաւ բարձրութեան,
եւ ես բովանդակն իսկ իցեմ,
որ զաւանդն իմ ոչ պաՀիցեմ:

ՏԱՂ ՎԱՐԴԱՎԱՌԻ

Գոհար վարդն վառ առեալ
ի վեհից վարսիցն արփենից՝
ի վեր ի վերայ վարսից
ծաւալեր ծաղիկ ծովային:

Ի համատարած ծովէն
պլըպլըջեր գոյնն այն ծաղկին՝
երփին երփնաւնակ ծաղկին,
շողշողեր պտուղն ի ճղին:

Բրքում վակասիր պտուղն
նմաներ խուռն տերեւով՝
տերեւն տաւիդ տաւողին,
որ երգէր Դաւիթ Հրաշալին:

Ի փունջ խուռներամ վարդից
գոյնզգոյն ծաղկունք ծաղկեցան.
այդ սօս ու տօսախ ծառերդ
վարդագոյն ոստս արձակեցին:

Այդ նոճ ու բողբոջ արօսդ
զարդ առեալ վարդըն շուշանին
շուշանն շողէր յովտին,
շողշողէր դէմ արեգականն:

Այն հիւսիսային հովէն
հով հարեալ գոհար շուշանին,
յայն հարաւային լեռնէն
քաղցր օդով ցօղէր շուշանին:

Շուշանն շաղով լցեալ,

շող շաղով եւ շար մարգարտով.
ծաղկունքդ ամեն շաղ առին,
շաղն յամպէն, ամպն յարեգակնէն:

Աստեղքդ ամեն շուրջ առին,
դէմ լուսնին գունդ-գունդ բոլորին,
գունդ-գունդ խաչաձեւ գնդակ,
յօրինուած երկնից շուրջանակ:

Փա՜ռք Հօր եւ որդւոյն յաւէտ,
սուրբ Հոգւոյն այժմ եւ յաւիտեանս:

3. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Այն պայմանները, որ առաջացուցին Գրիգոր Նարեկացիին մեջ բողոքը, կներգործեն ասկե ետքն ալ և որոշ դրոշմ կդնեն հաջորդող դարերու գրական-գեղարվեստական ստեղծագործություններուն վրա:

Բնականին մոտենալ, բնությունը սիրել ու նկարագրել. ա՛յս կյանքի հարցերով հետաքրքրվիլ, առնել ու պատկերել կյանքը ինչպես որ է, խուսափիլ մարմնի դեմ կռվելու չափազանցումներեն, անհատին ավելի արժեք տալ, – ասոնք գծեր են գրականության մեջ, որ հետզհետե ջրին երեսը կելլեն: Այս հեթանոսական գծերը ամբողջովին ջնջված չեն եղած մեր բանահյուսության մեջեն: Անտարակույս է, որ ժողովրդական անգիր երգերուն մեջ ասոնք միշտ ալ ապրած պիտի ըլլան, ինչպես և անգիր վիպումներու և հեքիաթներու մեջ: Այդ աշխարհային ու հեթանոս ոգին էր, որ միշտ վառ կպահեր մեր հայրենիքին մեջ նաև զանազան անուններու տակ երևցող աղանդները. ասոնք պավլիկյան կոչվին, թոնդրակեցի, հուլիանիտ կամ ուրիշ՝ միևնույն է, այդ բոլորին խորքը բողոքն էր նստած քրիստոնեական տեսություններու չափազանցության դեմ. հոգևորական պետերու միահեծան տիրապետության դեմ, մարմնի ու մարդկայինի հակաբնական հալածանքին դեմ:

Բացի ժողովրդական բանահյուսութենէն և ավանդներէն՝ այդ ուղղութեամբ կմտածէր նաև քաղաքներու մէջ հետզհետէ ուժեղցող աւետարանական գաղափարը, որ հարստացեր էր. Հարստութիւնը վայելքի համար է և ո՛չ աշխարհի մէջ. և արդէն ըսի՝ բնականէն այդ գաղափարը հակում ունի ավելի ազատ մտածումի և կջանա հոգևորականութիւնը իր դրամին ենթարկել:

Այս բոլոր հոսանքները ժողովուրդի մէջ միշտ ալ եղած են և շեշտուած են մանաւանդ կրոնական խեղճացման ու չափազանցման դարերուն: Հոգևորականութիւնը, որ կմաքառեր այդ բոլորին դեմ, քիչ-քիչ ինքն ալ կազդվեր այդ արտաքին ճնշումէն: Մանաւանդ արաբական տիրապետութեան շրջանին վերջը, օտար կրոնի ու քաղաքակրթութեան ազդեցութիւնն ալ կրելէն ետքը՝ ավելի զգալի կդառնար հոգիներու մէջ որոշ թեթև թեքում մը, որոշ շեղում քիչ մը ավելի ներողամիտ ըլլալու, քիչ մը ավելի հաշտ աշխարհայինի դեմ, քիչ մը բնութեան ու իրականութեան ավելի մոտենալու:

Այս պահանջը զգալի է Գրիգոր Նարեկացիէն ետքը եկող բոլոր տաղանդ ունեցող կրոնական դեմքերուն վրա: «Նարեկի» աղոթքներուն վրայէն ոչ ոք անուշադիր անցնիլ չէր կրնար այլեւս. պահպանողական հոգիները ծայր տվող նորութիւնը տեսնել չէին ուզեր և Նարեկացին կհամարեին իրենց հին երգին երգիչը, մինչ ավելի շարժուն հոգիները շատ ավելի խոր կզգային Նարեկացիին բողոքը և կջանային այդ ուղղութեամբ նոր արտայայտութիւն մը գլուխ բերեն. անշուշտ շատ զգույշ ու թեթևակի, որ աղմուկ ու պառակտում չառաջանա: Այս կարգի մտքեր արտահայտելն ու արծարծելը կրոնական բուն գործնական երկերու մէջ անհամեմատ ավելի դժվար էր ու վտանգավոր: Գեղարվեստական-քնարական երկերու մէջ ավելի դյուրին էր աշխարհայինի ու մարդկայինի տարրերուն քիչ մը ավելի մոտենալը, մանաւանդ բնութեան:

Սարկավագ վարդապետը (†1129), որ ըստ երևույթին շատ կարդացած և շատ իր խելքովը դատող ու բաց աչք ունեցող բացառիկ հոգևորական մըն է եղած, ունի նաև չափածո երկար գրութիւն մը, ուր սարյակի հետ խոսակցելով շատ հետաքրքիր մտքեր կհայտնէ երգի ու արվեստի ծագման մասին. ինչպես թռչնակի, այնպես ալ մարդու երգն ու բանաստեղծութիւնը ձայնն է բնութեան. բնու-

թյունն է, որ երգել կուտա և բնության պատկերացում մըն է երգին ըսածը: Մինչդեռ քրիստոնեական վարդապետությամբ ամեն գրություն ու ամեն երգ կառաջանա աստվածային ներշնչումով, վերին թելադրանքով:

Բայց գեղարվեստական գրություններու մեջն ալ նյութեն ու խոսքեն ավելի դյուրին էր ձևի ու արտաքինի մեջ նորություն ու աշխարհականացում մը մտցնելը: Իսկապես ալ Գրիգոր Նարեկացիի ժամանակներեն սկսած գրաբար գեղարվեստի մեջ կմտնե նոր չափի մը գործածությունը, որ տարբեր էր մեր ազգային հին հատվածական չափեն, օտար արվեստի պտուղ էր, հետևողություն արաբական չափերու:

* * *

Նոր չափի հիմնական հատկությունն է ըսվելիք խոսքը իրարու հավասար երկարությամբ տողերու բաժնել. և երկարությունը չափերու միջոցն ալ ո՛չ թե տողի մը կրած ներքին հատումներու թիվն է, այլ տողի մը բովանդակած վանկերուն թիվը. Հին անհավասար տողերուն հատվածական չափի դեմ կուգա հավասարատող չափ մը:

Իրարու հավասար տողերով բան մը ըսելու, տողը տողեն հստակորեն անջատելու և տողերուն հավասարությունը ընդգծելու համար կուգա երկրորդ հատկություն մը՝ տողերու վերջավորության հնչական նույնությունը: Բոլոր հավասարավանկ տողերը կվերջանան միևնույն ձայնավոր հնչյունով կամ միևնույն ձայնավոր ու բաղաձայն ձուլումով՝ ին, ին, ին, եալ, եալ եալ. է, է, է: Հատվածական չափի սիրած ներքին ազատ հնչակրկնության կփոխարինե անպատճառ տողերուն վերջը միակերպ կրկնվող հանգը: Նորեն պարտադիր կանոնավորություն: Եվ այս կերպով ազատ խոսվածքեն բոլորովին տարբերվող խոսքը կարելի չէր արձակ գրությամբ գրել. Հարկադրաբար տողերը կզատվին ու կգրվին իրարու տակ:

Հավասարավանկ, նույնավերջ և իրարու տակ գրված տողերով գրություններն են, որ անվանեցին ոտանավոր. վանկի փո-

խարեն ժամանակի մարդիկը կըսեին՝ ոտք, որով տողը կըլլար ութը ոտանի, տասը ոտանի:

Այս ոտանավոր գրության մեջ շատ է ցայտուն չափական արվեստի մը գոյությունը, և՛ վերջավորությունը, և՛ մատներու վրա համրվող վանկերը. որով տողերուն վանկահաշիվն ու հանգը ալ ասկե ետքը կըմբռնվին մեր գրաբար գրող հեղինակներու կողմե իբրև չափական արվեստին հիմք: Եվ անոնցմե ալ անցավ այդ ճաշակն ու ըմբռնումը նաև մեր արդի մտավորականության: Մենք մինչև այսօր ալ տողի կամ կիսատողի ընդգրկած վանկերով կչափենք մեր բանաստեղծությունները. կըսենք՝ չափը 4/4 է կամ 5/5 կամ 6/5, մինչև անգամ 7/7 կամ 7/8 և այդ պատճառով ալ մեր տեսութենեն կվրիպի անոնց մանր ու հին հատվածականությունը, որու վրա է հիմնված սակայն մեր ժողովրդական երգի, մեր միջնադարյան երգիչներու և մեր արդի քնարերգության խորքի գրավչությունն ու գեղեցկությունը: Այդ մասին խոսքի կուգամ ավելի ուշ:

* * *

Հանգավոր գրությունը մեր գրականության մեջ մտցնելուն պատիվը, ինչքան հայտնի է, կպատկանի Գրիգոր Մագիստրոսին: Ավելի առաջ գործածված ըլլալու մասին տեղեկություն չունինք, բայց անշուշտ որ ավելի կանուխ գործածված պիտի ըլլան ժողովրդական երգին մեջ թե՛ հանգը և թե՛ տողերու հավասարությունը արաբական գավերուն, արաբական ազդեցության տակ. և հոնկե պետք է անցած ըլլան գրաբարին. և քանի որ աս ալ իր տեսակի զիջում մըն է, մերձեցում մըն է կյանքին ու ժողովրդականին՝ անբնական չէ, որ աշխարհական և իշխան մարդ մը կառնե այդ առաջին համարձակ քայլը:

Գրիգոր Մագիստրոս, ինչպես տեսանք, իր ժամանակի հայտնի գրական-գիտական դեմք մըն է, Պահլավունի իշխան ու ազդեցիկ պաշտոնով հույներու կողմե Միջագետքի մեջ հաստատված: Իր Պոլիս գտնված միջոցին արաբ գիտնականի մը ապացուցելու համար, որ Սուրբ գրքի առանց տաղաչափության գրված ըլլալը ոչ մեկ թերություն չէ և որ շատ դյուրին բան է Ղուրանի պես

ոտանավորով գրելը, կնստի ու Աստվածաշունչի բովանդակությունը սկզբէն մինչև վերջը համառոտ կերպով կվերածե հազար տողանի ոտանավորի մը, բոլոր տողերը ին վերջավորությամբ, 1045 թվականին:

Իր գործածած չափը հին հատվածական քառահատված չափին է. բայց երեք հատվածներուն երկարությունը իրարու հավասար բռնած՝ յուրաքանչյուր հատված չորս վանկ. միայն առաջին հատվածին մեջ պահած է հին հատվածական չափին ազատությունը, այսինքն՝ երկու, երեք կամ չորս վանկով: Կրնա պատահիլ, որ աս ալ ժողովրդական որևէ տեսակ երգի մը հետևողությունը ըլլա, կրնա պատահիլ, որ ինքն է իրարու միացուցեր հինն ու նորը, գուցե և հունական նման քառահատված չափի մը ազդեցության տակ: Ան կսիրեր, նույնիսկ կհպարտանար իր զանազան տեսակի չափեր գործածելովը իր քանի մը տարբեր, բայց գեղարվեստական տեսակետե անարժեք գրություններուն մեջ: Այս հնարովի խառնուրդ չափով և հանգավոր ոտանավորը վերջը ուրիշներ ալ գործածեցին և մեր Վենետիկի հայրերն ալ շատ սիրեցին. երևի հունարենի մոտիկ գտան և սկսան վերստին գործածել իրենց թարգմանություններուն մեջ. անունը մկրտեցին «հայկական» չափ:

Հանգավոր ու հավասարատող ոտանավորը գրաբարի մեջ կտրուկ կերպով մտցնողը ու սիրցնողը և ընդհանրացնողը եղած է սակայն Գրիգոր Մագիստրոսի թոռնորդին՝ Ներսես Կլայեցի հայրապետը իր տաղանդավոր գրություններով:

Ներսես Կլայեցին հոգևոր երգերե զատ ունի բազմատեսակ գրություններ թե՛ վարդապետական, թե՛ գեղարվեստական, թե՛ արձակ, թե՛ չափական: Ո՛չ միայն դպրեվանյան շրջանի, այլ ընդհանրապես ամբողջ քրիստոնյա հազարամյակի խիստ կարկառուն գրական դեմքերեն մեկն է: Ապրած է 1102-են 1173:

Ամենեն առաջ խոր ու ջինջ հավատքով հոգևորական մըն է և հոգևոր պետ մը, որ ո՛չ երկմտում ունի, ո՛չ ալ անհանգիստ որոնումներ հոգիին մեջ. հաշտ է և՛ երկնքի, և՛ աշխարհի հետ. մեղմ ու բարի աչքերով կնայի դեպի երկինք ու դեպի երկիր:

Իր երգերուն մեջ նյութերուն ընտրությունը, ըմբռնումներն ու դատումները, օրինակներն ու պատկերացումները, ամեն ինչ

կհասի դարերու ընթացքին մշակված ու փայլեցուցված հոգևորական հունով: Բայց ոչինչով նա չի մնար իրմեն առաջ ըսվածներեն և նոր կրկնություն մը ըլլալուն համար չի դադրիր հետաքրքիր ըլլալեն. շնորհալի գրիչ է:

Եվ իր մեծ պապին պես սեր ու շնորհք ունի զանազան ձևերով տաղաչափելու: Իր ամբողջ աստվածաբանական, պատմական ու գիտական հասկացողությունները ուզած է ենթարկել տաղաչափության: Տաղաչափությունը եղած է իր մասնավոր հաճույքն ու ժամանցը Հռոմկլայի պարիսպներուն ետևը իր հոգևորականի պարտավորություններեն ազատ եղած պահերուն. ոտանավոր գրելը եղած է իր մենության մխիթարությունը: Կգործածե հին հատվածական չափը շատ վարպետ. կգործածե նաև հանգավոր ու հավասարատող ոտանավորը և իր սիրած ու հաճախ գործածած չափն է ութը վանկանի տողը 4/4 կիսումով: Ավելի աղոթքի նմանող հոգեկան արտահայտությունները սովորաբար գրած է հին հատվածական չափով. բայց շարականներուն մեջ և իր նոր տեսակի երկար գրություններուն մեջ տիրողը նոր հավասարատող ու հանգավոր ոտանավորն է: Վարդանանց հիշատակի պանծացումին նվիրված իր շարականին մեջ՝ «Նորահրաշ պսակավոր», գործածած է իր մեծ պապի գրած չափը, միայն առանց հանգի, այսինքն՝ հին հատվածական չափին ավելի մոտիկ:

Չափերեն զատ ունի նաև գրության զանազան արտաքին ձևեր: Այսպես, նույն հնչյունով կսկսին իրար հաջորդող քանի մը տողեր, այսինքն՝ առջևեն դրված հանգի պես բան մը: Ոտանավորի տուներուն առաջին տառերը իրար բերելով կկազմվի «Ներսէս», այսինքն՝ հեղինակը իր անունը պահել կուզե իր երկին վրա, որ արդեն անհատականության ընդգծում է. հին հոգևոր երգերուն վրա անուն չկա. կամ իր ոտանավորին յուրաքանչյուր տունը կսկսի մեր այբուբենի մեկ նոր տառովը ու այբուբենի սովորական կարգով: Այսինքն՝ հակում մը կա գրությունը հնար եղածին չափ նոր կանոններուն ենթարկելու, գրության հետ խաղալու:

Գեղարվեստը մեր հոգևոր հայրերուն ձեռքը եղած էր զենք մը կրոնական զգացումներու և նպատակներու ծառայող:

Հիմա Ներսես Կլայեցիի գրչին տակ կամաց-կամաց կրոնական

նյութերը իրենք կսկսին դառնալ ատաղձ ու միջոց գեղարվեստական կառույցներու, իրենք կծառայեն արվեստին:

Գեղարվեստի կարևորության շեշտվիլը, այսինքն՝ կրոնական ու քաղաքական ծառայականութենե ձերբազատվելու ճիգը և բուն իր գեղարվեստական պետքերուն համար աշխատիլը գրականության մեջ հաճախ իր սկիզբը կառնե արտաքինեն՝ նոր ձևերու, նոր չափերու և արտահայտական նոր կերպերու գործածութենեն:

Կրոնական քնարերգության մեջ Ներսես Կլայեցիի կատարած գեղարվեստական աշխատանքը և բերած նորությունը ուրեմն ամենեն առաջ արտաքին աշխարհայնացում մըն է: Ներքին տեսակետն ալ ունի բերած նորություն ու աշխարհայնացում իր «ողբերգություններուն» մեջ, ինչպես պիտի տեսնենք. բայց չունի անշուշտ Նարեկացիին թափը, ո՛չ ալ անոր բացառիկ մեծությունն ու արժեքը: Ունի պայծառ ու անդորր հոգի. ունի արվեստը ըսելու, ճաշակով երգելու. մեղմ զգացումի մարդ է:

Եթե Գրիգոր Նարեկացիի հոգին ու ստեղծագործությունը գալարվող ու շառաչող մթին ու ալեկոծ ծովու մը կնմանի, Ներսես Կլայեցիի հոգին ու երգը գուցե նորեն ծով մըն է լայն ու խորին, միայն թե ջրերու ամենեն խաղաղ ու ամենեն անկնճիռ վիճակին մեջ, երբ ծովը հայելի մըն է կարծես, որուն մեջ երկինքը իր դեմքը կդիտե գիշեր ու ցերեկ:

Իր քնարերգության մեծագույն մասը դար մը չանցած մեր եկեղեցին յուրացուցած է և մտցուցած մեր կանոնական աղոթքներուն ու շարականներուն շարքը, ինչպես արդեն ըսած եմ, իբրև մաս հայ եկեղեցական արարողության:

* * *

Կդնեմ «ոտանավոր» նոր չափով հորինած շարաններեն մեկ-մեկ տուն. շարականները տարբեր են, իսկ չափը նույն:

Սէրդ սիրով խոնարհեցար,
ի փրկութիւն մեր մարմնացար,
նովին մարմնով-ըն խաչեցար,

ի գերեզման մահու եղար.
այսօր յարեար աստուածաբար,
ի Հրեշտակաց քարոզեցար:
Եկա՛յք, փրկեա՛լք, ընդ զուարթնոյն
տո՛ւք օրհնութիւն յարուցելոյն:

❖

Արարչական բանին Հրաման,
ի յերկրորդում աւուր սկզբան.
զջուրն ի ջուրց-ըն բաժանեաց,
Հաստատութեամբ պարունակեաց,
որով զաշխարհս Հողեղինաց
անջրպետեաց ի Հրեղինաց
ընդ նոսին, որդի՛ք լուսոյ,
տո՛ւք օրհնութիւն երեակ լուսոյն:

❖

Նայեա՛ց սիրով, Հա՛յրդ գթած,
ի քո ստեղծեալ գործս ձեռաց,
և զբանակ-ըս Հրեշտակաց
կո՛ւր պաՀապան մեզ տկարացս.
փրկեա՛ զանձինս ի փորձանաց,
ի խաւարի շրջող դիւաց.
զի ի տւընջեան և գիշերի
տացուք քեզ փառս անլռելի:

Այրուբենի կարճ տուներով Հորինված և երկվանկ ու եռավանկ Հատվածներով գրված իր աղոթքեն քանի մը տուն:

Առաւօ՛տ լուսոյ,
արեգա՛կն արդար,
առ իս լոյս ծագեա՛:

Բղխո՛ւմն ի Հօրէ,
բղխեա՛ ի Հոգւոյս
բան քեզ ի Հաճոյս:
Գա՛նձդ ողորմութեան,
գանձիդ ծածկելոյ
գտող գիս արա՛:
Դո՛ւռն ողորմութեան
դաւանողիս բա՛ց,
դասեցո՛ վերնոցն:
Երրեա՛կ միութիւն,
եղելոց խնամող,
եւ ինձ ողորմեա:
Զարթի՛ր, տէ՛ր, յօգնել,
զարթո՛ զթմրեալս,
զուարթնոց նմանիլ:

Զ. ԿՐՕՆԱԿԱՆ ՎԻՊԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՈՏԱՆԱՎՈՐ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Թուրանական դարերու բերած գրական նոր տեսակ մըն է նոր Հնարված ոտանավորով երկարաշունչ գրություններ Հարյուրավոր ու Հազարավոր տողերով, որոնք «վիպասանություն» կամ «ողբերգություն» անունը կկրեն ընդՀանրապես:

Ասոնք ո՛չ վեպ են մեր արդի Հասկացողությամբ, ո՛չ ալ երգ, այլ վիպականի ու քնարականի խառնուրդ մը, երբեմն պատմվածքի մոտեցող, երբեմն ճառախոսության, երբեմն քնարերգության:

Ինչպես ոտանավոր չափի, այնպես ալ բանաՀյուսական այս նոր տեսակի Հստակ կերպով մշակողը զանազան ուղղությամբ, նորույթ դարձնողը և սիրցնողը իր ընկեր մտավորականության եղավ նորեն Ներսես ՇնորՀալին:

Եվ ինքն ալ տվավ այս նոր տեսակի երեք գլխավոր ենթաբաժանումներուն Հիմնական օրինակները:

Նախ՝ բուն կրոնական ուղղությամբ վիպերգություններ: Գրած է ամբողջ գիրք մը 4000 տողանի, մեկ ծայրեն միւսը ին հանգով իր մեծ սպասի հետեւողությամբ. գիրքը կոչված է «Ողբերգական վիպասանութիւն». Հիմա սովորաբար կանվանենք «Յիսուս որդի», որ գրվածքի առաջին բառերն են: Սուրբ գրքեն քաղված օրինակներով կներկայացնե մարդկային մեղանչականությունը և աստվածային ներողամտությունը: Գրած է «Բան հավատոյ» հազարե ավելի տողերով և քանի մը տարբեր հանգերով, որոնք սակայն բավական երկար կկրկնվին: Գրած է «Ներբողեան կենսատու սուրբ խաչին» միայն 600 տողերով և ան ու եալ հանգերով: Գրած է «Մաղթանք առ սուրբ Հրեշտակսն». դիմում ու խնդիրք, որ Հրեշտակները գան օգնելու ու ձեռք մեկնելու մարդուն:

Այս կրոնական երկար վիպումները, որոնք նորություններ էին իրենց ձևով, չափով ու արտաքինով, իրենց ներքինովն ալ ունեին որոշ հատկություններ, որոնք հին գրություններեն կզատվեին և հատկապես «Յիսուս որդին»: Ամեն ինչ Սուրբ գրքեն է և բառ ավանդություն, անշուշտ. բայց տարբեր է նյութերուն ընտրանքն ու գործածությունը, շարունակ հեղինակի անձը մեջտեղն է իր դատումներով և զգացումներով, տեղ-տեղ կենդանի նկարագրությունը նոր շունչ մը ունի իր վրա և գրավչություն: Շատ կարդացված գրքերեն մեկն է եղած «Յիսուս որդի»-ն մեր գրաբար գրականության մեջ:

Այս զուտ կրոնական գրություններուն կից՝ Ներսես Շնորհալին հորինած է երկու «վիպասանություն» կրոնականե տարբեր նյութերով ու դիտավորությամբ:

Առաջինը «Յաղագս երկնից և զարդուց նորա», ուր կուտա երկնքի կազմը ըստ իր ժամանակի հասկացողության, այսինքն՝ բնության ըմբռնումը երգի կվերածվի. իր հետաքրքրությունը այդ ճիգին մեջն է: Իր այս գրությունը Շնորհալին շարադրած է Մխիթար Հերացի բժշկի խնդրանքով:

Երկրորդը պարզ «Վիպասանութիւն» վերնագիրը ունի և ոտանավորի վերածած հայոց պատմություն մըն է, սկիզբեն մինչև իր օրերուն քանի մը դեպքերը. ամեն ինչ քաղված է իրմեն առաջ եղած պատմիչներեն. Աստվածաշունչի բովանդակությունը տարուն

նմանող գրություն մը, որուն խորքը նստած է սակայն ազգային զգացումը. ան է հիմնական դրդիչը և գրվածքին հետաքրքիր կողմը:

Իր ստանավոր վիպումներուն մեջ բոլորովին առանձին դիրք մը կգրավե իր մեկ երկար երկը, որ արդեն իրավ և՛ ողբերգություն է, և՛ վիպասանություն, և՛ ներքին ստեղծագործություն, որ կրկնություն չէ ուրիշներու ըսածին, որ չէ հանված գրքերու էջերեն, որ ծնած է կյանքի ու իրականության խայթեն, ուր անհատական ապրումներն ու զգացումները մեծ դեր կխաղան և որ ամբողջովին կապված է ա՜յս կյանքին, և ի՜նչ ուժով:

Երկին անունն է «Ողբ Եդեսիոյ» և գրված է այդ քաղաքի գրավման ու ավերման գործած դառն ազդեցության տակ: Դեպքը տեղի է ունեցած 1144 թվին Զանգի ամիրայի ձեռքով:

Նորօրինակ երկ մը. սուր ճիչ մըն է ցավի ու բողոքի, որ կցայտե Շնորհալիի կուրծքեն. և հարցը միայն Եդեսիայի շուրջը չէ, թեև երկին մեջ Եդեսիան է, որ սգավոր կնոջ մը կերպարանքով կողբա ու կկանչե: Այդ սգավոր կնոջ շրթունքներով սելճուկյան դարերու բերած ավերն ու ցավն է, որ կերգվի ու կանիծվի: Եվ ի՜նչ խոր ու ճշմարիտ շեշտերով, ինչպես բնական ու իրական պատկերներով և ի՜նչ սեր կա իր ժողովուրդին ու իր հայրենիքին հանդեպ, այո՛, ամբողջ հայրենիքին: Խոսքի կուգան պատմական իրական դեպքեր, խաչակիրներու վրա դրված մեծ հույսեր ու ապագա բարձրացման երազներ: Արդեն դուրս ենք ելած քրիստոնեական կախարդված շրջանակեն. կյանքն է, որ կխոսի, մարդն է, որ ցավեն կպոռա, կանիծե ու կհուսա:

Եդեսիայի այս ողբը թեթև հապավումներով կկարդացվի և՛ այսօր, և՛ վաղը: Եվ հին կարդացողներուն վրա ալ ըրեր է մասնավոր ու խոր ազդեցություն. դրդեր է ուրիշները. ուրիշներն ալ հետևեր են իր տված օրինակին՝ ողբալով ուրիշ քաղաքական վայրագություններու բերած ավերն ու փճացումը: Փա՜ռք Աստծու, ատկե ավելի առատ ի՜նչ կար թուրանական դարերուն:

Շնորհալին ետքը ստանավորով գրված «ողբերգություն»-ներն ու «վիպասանություն»-ները ամբողջ շարան մը կկազմեն:

Ամենեն առաջ Գրիգոր Տղա կաթողիկոսը, որ Շնորհալիի հետևողությամբ գրած է ամբողջապես ին հանգով երկու հազարե

ափելի տաղերու մէջ «Բան ողբերգութեան վասն առմանն Երուսա-ղէմի», որուն մէջ կողբայ Սալահատտինի ձեռքով Երուսաղէմի եւ գրաւմը 1189 թուին խաչակիրներու ձեռքէն:

Երկրորդ մեծ հեղինակն է Ստեփաննոս Օրբէլեան, որ 1299 թուականին գրած է «Ողբ ի Սուրբ Կաթողիկէն», որուն մէջ կողբայ արեւելեան Հայ աշխարհի եւ Հայ սրբարաններու քայքայումն ու աւերումը:

Յովհաննէս Երզնկացին գրած է հազարատողեան մը աւ հան-դով 1289 թուականին «Յաղագս երկնային շարժման», որ նորէն հեղինակութիւն է Շնորհալիի համապատասխան երկին:

Խաչատուր Կեչառեցին ԺԴ դարուն սկիզբները գրած է «Ողբ վասն աւերման տանն արեւելեան», այսինքն՝ կողբայ արեւելեան Հայ աշխարհին մէջ թաթարներուն գործած աւերը: Եւ ինչպէս բոլոր մեր հոգեւոր հայրերը, հայու գլխուն եկած բոլոր դժբաղդու-թիւններուն խորքի պատճառը հայերուն գործած մեղքերը կը հա-մարէ:

Վահրամ Րաբունի (ԺԴ) եւ Գրիգոր Ծերենց (ԺԵ) երկուքն ալ պատմիչի ու տաղաչափի պաշտօնները կը միացնեն իրարու՝ Շնոր-հալիի օրինակին հետեւելով՝ իրենց օրերու պատմութիւնը մեզի աւանդելու համար:

Առաքել Սիւնեցի ԺԵ դարու առաջին տարիներուն գրած է վիպասանութիւն մը «Ադամգիրք» անունով, ուր ոտանաւորով կը նկարագրէ նախամարդու անկումը սատանայի սադրանքով եւ դժոխքի տանջանքները մեղաւորներուն հատկացված. այսինքն՝ Միլտոնի եւ Տանթէի նիւթերը:

Աբրահամ Անկիւրացի ԺԵ դարու կէսին կողբայ Պոլսի գրա-ւումը թուրքերէն, տեղ-տեղ բարբառախառն գրաբարով: Առաքել Բաղիշեցին ալ նոյնպէս գրած է ողբ մը Պոլսի գրաւման վրայ:

Մինաս Թոխաթցին գրած է բարբարախառն գրաբարով մը «Ողբ ի վերայ Օլախաց երկրի Հայերուն». սա եղած է աշակերտը Գրիգոր Ծերենցի:

ԺԶ դարու վերջերն ալ Սիմէոն վարդապետ Մոկացին գրած է «Ողբ Մեծոփայ սուրբ ուխտին»:

Այս բոլոր ողբերգութիւնները շատ հետաքրքիր գրութիւն-

ներ են իբրև պատմության հումնյութ և ժամանակի ոգին ըմբռնելու իբրև կենդանի վկայագիր. բայց սաստիկ ծանրաբեռնված են կրոնական բացատրություններով, մեջբերումներով և ըմբռնումներով. շատ համեստ է իրենց գեղարվեստական շնորհքն ու ստեղծագործությունը: Ոչ մեկը չի հասնիր իրենց նախատիպ օրինակին Ներսես Շնորհալիին: Գրական օրենք է արդեն հետևող մը հասնիլ չի կրնար երբեք իր նախատիպին. ամեն հեղինակ ինքը պիտի բանա իր նոր ճամբան, եթե իսկապես արժեք մը ունի:

Վերի ողբերգություններուն մեջ միայն մեկը ունի այդ համեմատական ինքնուրույնությունը՝ «Ադամգիրքը», որուն մեջ զգալի է բանաստեղծի մը շունչը և մանավանդ բանաստեղծի մը ոգորումները նոր բան մը ստեղծելու: Հեղինակը նույն նյութը մշակած է երկու-երեք անգամ՝ տեղ-տեղ կենդանի ու անձնական մերձեցումով և իր երևակայությամբ լրացնելով, խոսեցնելով ու պատկերացնելով, կյանք ներշնչելով Աստվածաշունչի քանի մը բառով ըսած եղելության: Բայց միջնադարյան ոգին ու կրոնական ամրացած դատողություններն ու մեկնաբանությունները այնքան կճնշեն և իրենց ծանրության տակ այնպես կխեղդեն, որ կմարի գեղարվեստական ճիգը ու չի հաջողիր նոր ծիլ մը արձակելու, բանահյուսական նոր ծաղիկ մը բանալու:

2. «ՎԱՐՔ ՍՐԲՈՑ» ՈՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնեական հազարամյակի վիպական արձակ գրությունները, ավելի ճիշդ կըլլա ըսենք՝ վիպախառն ու կիսավեպ գրությունները, բնավ գեղարվեստի նպատակով չեն գրված: Գրողները չափազանց լուրջ ու իրական պատմություն գրելու և ավանդելու համոզումն ունին, ճիշդ այնպես, ինչպես գուսանական վիպասանները իրենց ժամանակին կնայեին իրենց ստացած և իրենց փոխանցած վեպերուն վրա: Քրիստոնեական այդ նոր տեսակի պատմությունները հիմա մեզի համար են վեպ կամ վիպական. մենք հիմա բոլորովին տարբեր պահանջներ ունինք պատմական ու կենսագրական իրականությունը տալ ուզող գրություններեն. և այդ չափերով երբ կմոտենանք այս միջնադարյան երկերուն

ստիպուած ենք ատոնք վէպերուն շարքը դնելու, մեծագոյն մասը կատարեալ խրախուսանքով. մնացածն ալ կըլլա վիպականի ու պատմականի խառնուրդ բան մը:

Երկու խումբի կը բաժնուին այդ կենսագրական երկերը: Առաջին խումբը կը կազմեն «Վարք Հարանց» կամ «Վարք սրբոց» կոչուող գրութիւնները, այսինքն՝ համաշխարհային քրիստոնէական եկեղեցիի նշանաւոր կամ հեղինակաւոր Հայրերու կեանքն ու գործը: Վարքին մէջ կենսագրական այդ գրութիւնները պէտք է պատկանէին պատմական գրութիւններու շարքին. եւ կան ատոնց մէջ որոշ թիւով երկեր, ուր երեւակայութեան ու քրիստոնէական ջերմեռանդութեան բերած հաւելուածը համեմատաբար քիչ է եւ ընդհանուր գրուածքը պատմական պէտք է նկատել:

Բայց այդ գրութիւններուն ստուար մեծագոյն մասը արդիւնք է հին սուրբ դէմքերը նորերուն օրինակ ծառայեցնելու ցանկութեան, թէ քրիստոնեայ մարդը ինչպէ՞ս պէտք է ըլլայ. եւ ատոր համեմատ ալ եղած է հորինումը: Կամ պարզապէս գրողի ու արտագրողի կրօնական ջերմեռանդութեան, դիւրահաւանութեան եւ մտաւոր շատ համեստ վիճակին պատճառով այդ կենսագրութիւնները շարադրուած են, արտագրուած, հաւելուածներ են կրած ու «սրբագրութիւններ»: Իրականը սքողուած է, երբեմն բոլորովին այլակերպուած եւ միշտ պճնազարդուած քրիստոնէական երեւակայութեամբ. Հրաշքներ, սարսափելի ու անկարելի տանջանքներ, հրեշտակներու հետ հաղորդակցութիւն, երկինքն ի վեր ճամբորդութիւններ, սատանաներու հետ աղմուկ ու կռիւ եւ ատոնց նման ուրիշ քրիստոնէական առաքինութիւններ, որով այդ դիցուք եւ իրական կենսագրութիւնները վերածուած են վիպասանութեան կամ կիսավէպի:

Կ'ըսեմ «դիցուք եւ», որովհետեւ այդ կենսագրութիւններուն մեկ խոշոր մասը գրուած է շատ ուշ, յետոյ եւ գրուած է աւելի կրօնական հափշտակութեամբ եւ գովաբանելու համար, քան իրողութիւնն ու ճշմարտութիւնը գրելու մղումով: Կուսակցական ու դաւանաբանական խնդիրներու մէջ ճշմարտութիւնը գրելուն կամ ճշմարտութիւնը որոնելուն շատ կարեւորութիւն չէ տրուեր. կարեւորութիւն ունեցողը իր հասկցած տեսակի ճշմարտութիւնն է, իր

դավանանքին հարմարող ճշմարտությունը. մանավանդ միամտությունն ու տգիտությունն ալ կուգան օգնելու հավատալիքին:

«Հարանց վարք»-եր թարգմանված են շատ թե՛ մեր քրիստոնեության առաջին տաք շրջանին՝ Ե ու Զ դարերուն, և թե՛ վերջը՝ գլխավորապես կիլիկյան մեր թագավորական շրջանին, արևմտյան վանքերուն մեջ գործող հոգևոր հայրերու ձեռքով: Բայց քիչ-շատ ամեն ժամանակ ալ գոյություն ունեցած է սերը կենսագրություններու, և համաքրիստոնեական կարևոր դեմքերու գրավչությունը մեր հոգևոր հայրերուն համար եղած է միշտ:

Գալով հայ կյանքի ծնունդ և ինքնագիր կենսագրական երկերու՝ իբրև առանձին դրվածք սովորական երևույթ չէ մեր գրականության մեջ: Իրենց այդ հոգեկան պահանջին մեր հոգևոր հայրերը բավարարություն են տված իրենց ճառերուն ու քարոզներուն մեջ գովաբանելով, ինչպես և իրենց պատմական երկերուն մեջ: Այդ պատմական երկերուն գրողը հոգևորական է, իր հետաքրքրությունները հոգևորական են, իր հոգեկան մտերմությունները հոգևորական են և բնական կերպով իր երկին մեջ կշեշտվին հոգևորական դեմքերը. անոնց կենսագրության հրաշալի մանրամասնությունները արդեն կհյուսվին իր գրած պատմության: Նույնիսկ զգալի է, որ քանի մը պատմական երկերու գրվելուն գլխավոր դրդիչն այս կամ այն նշանավոր հայապետի գործն ու դեմքը պանծացնելն է, բարձրացնելը:

Քրիստոնեական վիպագրության երկրորդ խումբը «Վարք սրբոց»-ի մեկ ուրիշ տեսակն է: Նորեն քրիստոնյա մեծ դեմքեր, բայց ո՛չ իբրև հայր ու առաջնորդ, այլ մեծ իրենց անձնազոհությամբ, իրենց կրած տառապանքներով և իրենց մահովը քրիստոնեական հավատքի համար. այսինքն՝ քրիստոնյա նահատակներուն կենսագրությունները, հատկապես անոնց նահատակության պատմությունները, որ «վկայաբանություն» կկոչվի:

Պարզ է, որ իրենց հավատքին համար ամեն տեսակի զրկանքի ու չարչարանքի ենթարկվող և մինչև մահ գացող մարդոց կյանքն ու վերջին օրերը ամեն հավատացյալի համար մասնավոր հրապույր մը ունին, երևակայության կզարնեն, բերնե բերան կպատմվին և հետզհետե կզարդարվին քրիստոնեական ամեն տեսակի առա-

բնութիւններով, սատանային միջամտութիւններով, լուսերու երևումով, հրաշքներով և նման միապախառն տարրերով:

Ըստ էութեան, ըստ հոգեբանական խորութեան, ըստ մարդկային հոգեկան պայքարի՝ այդ պատմութիւնները բոլորն ալ հրաշալի նյութ են և՛ վեպի, և՛ դրամայի: Ատոնցմէ ամէն մէկը կեանքի ու մահվան, մարդկայինի ու սատանայինի, աշխարհային վայելքի և հանդերձյալ ակնկալութիւններու մէջտեղը ինկած պայքարողներ են: Հոգեկան կռիվ է, վախ, վարանք, վճիռ, հավիրշտակութիւն ատոնցմէ ամէն մէկուն նահատակութեան պատմութիւնը: Անձնվիրութեան, համոզումի նվիրման, իտեալի մը ձգտումին ու հավատքի ուժին հրաշալի օրինակներ են բոլորն ալ, ինչպես և մարդկային ամէն տեսակի թերացումներու և տկարացումներու: Եվ կարծես իրավունք պիտի ունենայինք, որ այդ հարուստ ու խոր նյութերը քրիստոնեական գրականութիւնը օգտագործեր և չքեղ երկեր ստեղծագործեր:

Իրականին մէջ այդ բոլոր «վկայաբանութիւն»-ներն ալ շատ միջակ բաներ են գրական տեսակետեն. անարյուն, մշուշոտ դրվածքներ, ուր հատուկ կերպով ջնջված է, ինչ որ մարդկային է, ինչ որ մաքառում է ներքին, ինչ որ շրջապատի իրական պայմաններն են. ասոր փոխարեն ներկայացված են այդ բոլոր նահատակները իբրև բացառիկ սուրբեր, Աստծու կողմեն հատուկ կերպով երկինք հրավիրյալներ, իբրև հրեշտակային գոյութիւններ:

Ինչպես ամէն տեղ, հոս ալ քրիստոնեութիւնը սպաննել է ուզած կյանքն ու մարմինը, կենդանութիւնն ու իրականութիւնը՝ տեղը դնելու համար անգույն ու անշարժ վերացական սրբութիւն մը: Եվ այդ պատճառով ալ տարբեր երկիրներու, տարբեր պայմաններու և տարբեր դարերու մէջ կատարված նահատակութիւններն ու անոնց վկայաբանութիւնները դարձեր են սաստիկ իրարու նման և՛ խորքով, և՛ արտահայտութեամբ, դարձեր են կաղապարային:

Շատ բացառիկ են այդ ընդհանուր միջակութեներեն վեր բարձրացող գիծերը. հազվագյուտ են այն շեշտերն ու պատկերացումները, որոնք իրավ որ սրտե կուգան ու սրտի կզարնեն: Տիրող ընդհանուր կերպը ծանր է. հալած ու դժգույն դեմքեր, որ այլևս մարդկային չեն. թափծու ու դժգույն միակերպ խոսքեր, որ այլևս

իրական կենդանի խոսք չէին. և կրավորական դիմադրություն, որ կարծես կկորսնցնե իր աշխարհային իրականությունը: Այդ բոլոր նահատակներու պատմություններուն մեջ կզգաս, որ տակը ճշմարիտ մեծություն մը կա, որ քեզմե զգուշությամբ կծածկեն, անոնց բուն ու արժեքավոր մարդկային մեծությունը: Այդ վկայաբանություններուն մեջ երկրորդ անգամ մը կնահատակվին քրիստոնյա նահատակները և այս անգամ հավատակից եղբայրներու ձեռքով: Մարդիկը կզրկվին իրենց երկնային ու երկրային մարդկային կերպարանքեն ու գրավչութենեն ու կդառնան հրեշտակներ, ան ալ անթև:

Ինչպես գուսանները մեր պատմական իրական դեմքերն ու դեպքերը առեր են ու դարե դար մշակելով, զարդարելով, նրբություններ և նորություններ ավելցնելով աշխատեր են ավելի գեղեցիկ, ավելի կատարյալ և ավելի իտեալական դարձնել այդ հերոսներն ու անոնց արարքը ապարանքներու մեջ և հրապարակներու վրա, նույն ձևով նույնը ըրած են հոգևոր հայրերը իրենց խուցերուն մենության մեջ այդ վկայությունները գրի առնելով, արտագրելով, սրբագրելով, զարդարելով և քրիստոնեաբար կատարելագործելով. ջնջեր են բոլոր փախերը, տարակույսներն ու երկմտումները, թուլացումները. չեշտեր են արհամարհանքը աշխարհայինի և անտարբերությունը դեպի այս կյանքն ու վայելքը. ջնջեր են բոլոր մանր ու նվիրական անհատական գծերը, որով մարդը մարդ է, ավելի ցայտուն դարձնելու համար քրիստոնեական հավատքի մեծությունը: Գուսաններու վիպասանության մեջ դարերու այդ հրապարակային աշխատանքին հետևանքը եղած է գեղարվեստական բարձրացում, կենդանացում ու մարդկայնացում, քրիստոնեական վիպասանության այս վկայաբանություններուն մեջ այդ դարավոր լռիկ ու մենիկ աշխատանքին արդյունքը եղած է աղոտացում ու վերացականացում. իրական ու կենդանի դեպքը դարձեր է դժգույն վեպ մը, քրիստոնեական իտեալի իբրև քարոզ:

Օտար նահատակներու վկայաբանություններ թարգմանված են հայերենի Ե դարեն սկսած: Հայ նահատակություններ նկարագրված են մեր առաջին քրիստոնեական դարու ավանդություններուն մեջ, Եղիշեի մեջ, ինչպես և ճառերու ու դավանաբանական

երկերուն մէջ Հոս ու Հոն, բայց միշտ տեսակ մը պատահական ու ցրիվ մինչև արաբական դարերը: Մահմետական կրօնի ծավալումն ու տիրացումը, Հրով ու սրով տարածումը առաջացուցին նաև մեր աշխարհին մէջ ռազմաթիվ նահատակութիւններ, որոնք բերնէ բերան կպատմէին խորին կարեկցութեամբ և Հիացումով, իսկ Հոգևորականութեան կողմէ ալ Հետզհետէ գրի կառնուէին ու կհիշատակվէին եկեղեցական արարողութեան ատեն, Հատկապէս անոնց նահատակութեան օրը, անոնց տոնին օրը:

Առաջին անգամ կհիշվի Մաքենիսին վանքին վանահայրը, որ ութերորդ դարուն երկար տարիներու աշխատանքով բոլոր ձեռագիրներին, Հիշատակարաններին ու գրքերին Հանելով, անշուշտ նաև քիչիկ մը կոկելով ու գեղեցկացնելով՝ կազմած է Հայերեն լեզվով եղող Հայ ու օտար սուրբ Հայրերու և նահատակներու կյանքին ու գործերուն Հավաքածուն:

Թուրանական դաժան դարերուն բնականաբար շատ ավելի Հարստացավ Հայ նահատակներու բաժինը, ինչպես և ավելցան Հայ Հոգևորականութեան այդ ուղղութեամբ ցույց տված խնամքն ու Հետաքրքրութիւնը: Շնորհալիի ազգական Գրիգոր Բ Կաթողիկոսը ամբողջ իր կյանքը այդ տեսակ վկայաբանութիւններ թարգմանելով զբաղվեցավ, ատոր Համար ալ կոչված է արդէն Վկայասէր: Շնորհալին ինքն ալ ունի վկայաբանութիւններ թարգմանած: Ուրիշներն ալ: Այդ դարերուն ամենուն կողմէ սիրված, Հարգված ու փնտրված այդ գրութիւնները դարձած էին ճշմարիտ ու ժամանակի վեպը. և եկեղեցին ալ օրը օրին դասավորեց ու կկարդար Հավատացյալներուն այդ կրոնական Հուզիչ պատմութիւնները:

Այդ պատմութիւններու Հին Հավաքածուները վերջին թարգմանութիւններով և նոր Հայ սուրբերով ու նահատակներով ճոխացած ԺԵ դարուն վերստին խմբագրված է Սկևռա վանքի Հայր Գրիգոր վարդապետ Ծերենցի ձեռքով: Այս Հաստափոր Հավաքածուներն են, Հին թե նոր, որ Հայտնի են մեր ձեռագիրներուն մէջ «Յայսմաւուրք» անունով, այսինքն՝ այդ օրը կարդացվելիք պատմութեան մատյանը:

Թուրանական դարերով ալ չի վերջանար քրիստոնյա նահա-

տակներու ո՛չ թիվը, ո՛չ ալ պատմությունը: Նոր հայ նահատակներու մասին հիշատակություններ կան մեր ձեռագիրներու հիշատակարաններուն և մեր պատմիչներու գրություններուն մեջ մինչև ԺԹ դարը: Անշուշտ կրոնափոխության ճնշումները քանի կերթան կնվազին ու համեմատաբար բացառիկ կդառնան նոր դարերուն, բայց իբրև մոլեռանդություն, իբրև անձնական վրեժխնդրություն կամ դրամաշորթության միջոց տևած են հոս ու հոն, նույնիսկ Պոլսի մեջ մինչև ԺԹ դարը:

3. ԱՌԱԿՆԵՐ

Կրոնավորներու ձեռքով հավաքված ու խմբագրված քրիստոնեական ոգիով ու բարոյականությամբ օծուն կիսավիպական, կիսախրատական գրություններ են նաև մեր միջնադարյան կոչվող առակները:

Առակը նորություն մը չէր հայ կյանքին մեջ: Նախ ժողովուրդը ինքը անշուշտ միշտ ալ ունեցեր է իր բերնե բերան կրկնվող առակները և՛ հեթանոս դարերուն, և՛ քրիստոնյա: Ասոնց վրա պետք է ավելցնել քրիստոնեական գրականության բերած առակները. ամենեն առաջ՝ Ավետարանի պարզ ու գեղեցիկ առակները և երկրորդ՝ Եզովպոսի անունով հավաքված հունական առակներուն հայացումը: Արաբական տիրապետության օրերուն ալ անտարակույս արաբական աշխարհեն եկած են նոր առակներ:

Միջնադարյան ըսված առակները հոգևորական մարդոց ձեռքով խմբագրված առակներ են ԺԳ դարեն. խմբագրված են մեծ մասով ժողովուրդի բերնեն առնելով, բայց դժբախտաբար ո՛չ հարազատորեն: Նախ՝ խմբագրված են գրաբար լեզվով և ո՛չ բարբառով, երկրորդ՝ ո՛չ թե պատմված են լայն շունչով, այլ ընդհանրապես շատ կարճ երկու խոսքով ամփոփված. կարծես ավելի հիշեցնելու համար առակը, քան իսկապես առակը լրիվ պատկերացնելու համար: Առակի փոխարեն հաճախ շատ ավելի ընդարձակ կխոսվի ու կբացատրվի առակի միտքն ու բարոյականը. այնպես որ միջնադարյան կոչվող այդ առակներուն մեծագույն մասը խրատի ու քարոզի տեսակ մը ըլլա կարծես բուն էության, քան գեղարվեստական ստեղծագործության. շատ քիչ են ասոնց մեջ կյանքի ու

մարդկային հոգիի ու վարմունքի պատկերացումը եղող և գեղարվեստական հրապույրը պահած նմուշները: Միջնադարյան առակներուն մեջ բուն առակը ինքը սեղմ ու հապճեպ ասված մեկ-երկու խոսք մըն է, ընդհանրապես իբրև բնաբան հետևեն եկող մեկնաբանության:

Առակը օգտագործող, խմբագրող, գուցե և մեկ-երկու հատը հորինող առակախոսները ԺԳ դարուն երկու հոգի են, երկու վանական, երկուքն ալ գրեթե միաժամանակ. մեկը արևմտյան, մյուսը արևելյան վանականության պատկանող, երկուքն ալ հայտնի իրենց կրոնական ուրիշ գրական աշխատանքներովը: Մխիթար Գոշ, որ վախճանված է 1213 թվին, և Վարդան Այգեկցի Կիլիկիայի Սև լեռան վրա, որ վախճանված է 1240 թվին: Գոշին կվերագրեն երկու հարյուրի չափ առակներ, Վարդան վարդապետինը ավելի ճշդված կերպով՝ 33 հատ:

Անշուշտ եղած են և ուրիշները վերիններու օրինակով. գրական տեսակ մը երբ կսիրվի ու կբռնվի, կգտնա նորույթ և անկե ետքը կկրկնվի ուրիշներեն: Ամեն պարագայի, եթե շատերը չեն խմբագրած ու հորինած, գոնե շատերն են ուրիշներուն գրածները արտագրեր, մեկտեղեր և կազմեր են ձեռագիր հավաքածուներ, որոնք «Աղուէսագիրք» անունը կկրեն՝ առակներուն մեջ գլխավոր դերակատարը եղող աղվեսի պատվին:

Կդնեմ նմուշի համար մեկ-երկու հատ Վարդան Այգեկցիի առակներեն, անշուշտ լավերեն և առանց տակի խրատական մեկնաբանության:

ԱՅԾՔ ԵՒ ԳԱՅԼՔ

Եւ արդ եկեալ ժողովեցան ամենայն այծք ի միասին եւ գրեցին թուղթ առ ազգն գայլոց այսպէս. «Առ խոհեմ եւ հզօր յաղթող ազգս գայլոց, որ աստուծով էք զօրացեալ, գրեմք տկար եւ ողորմելի եւ անիմաստ ազգ այծից, երկիր պագանեմք եւ ողջունեմք զմեծափառ թագաւորութիւնդ ձեր. եւ աղաչեմք, որ ողորմիք մեզ եւ առնեք սէր եւ խաղաղութիւն, որ բառնայ ի միջոյ հայրենի թշնամութիւն, որպէս եւ առնեն թագաւորք ազգաց»:

Եւ զայս ընթերցեալ ազգն գայլոց եւ ուրախացան ընդ բարի առաջարկութիւնն. եւ գրեցին առ նոսա նամակ մի, որ է այսպէս. «Առ ամենիմաստ եւ երջանիկ աստուածասէր եւ հոգենորոգ սուրբ ազգ այծիցդ գրեմք չարաբարոյ եւ մեղաւոր եւ լիրբ ազգս գայլոց, եւ մեծ փափագանօք ողջոյն առաքեմք ձեզ եւ գիտացընեմք ձեզ, զի աստուածեղէն է խնդիրք ձեր եւ բարեաց պատճառ. ապա լուեալ է մեր ի ծեր եւ հնագոյն հարցն մերոց, զի շունն եւ հովիւն է պատճառ խռովութեան ընդ մեզ եւ ընդ ձեզ: Եւ թէ բառնայք զնոսա ի միջոյ, մեք ուրախութեամբ կատարեմք զոր հրամայէք մեզ»:

Եւ զայս ընթերցեալ այծքն ի բաց վանեցին զհովիւն եւ զշունն եւ առեալ թուղթ երդման եւ պայման սիրոյ զամս քառասուն: Ելեալ այծքն յանհոգս եւ սկսան արածիլ ի լերինս եւ ի դաշտս ի հովանիս ծառոց եւ ի ցուրտ աղբերս բարեհամս: Եւ համբերեցին գայլքն աւուրս քառասուն եւ ժողովեալ ի վերայ սատակեցին զայծքն ամենայն եւ եղեւ խաղաղութիւն:

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿԱՔԱՒ

Աղուէս էառ կաքաւ մի ի բերան եւ կամէր ուտել զնա: Եւ ասէ կաքաւն. «Օրհնեա՛լ է Աստուած, որ կոչեաց զիս յիւր արքայութիւն, զի զերծանիմ ի յայս չարեացս. եւ ապա դու, աղուէ՛ս, գոհացի՛ր զԱստուծոյ եւ ապա ուտես զիս. քեզ մեծ վարձք է»:

Եւ աղուէսն կլկլզեցաւ եւ հայեցեալ յերկինս եւ բացեալ զբերանն ասէ. «Գոհանամք զքէն, Աստուած բարի, որ պատրաստեցեր ինձ սեղան բարութեան»:

Եւ կաքաւն զերծաւ ի բերանոյն եւ թռաւ:

Եւ ասէ աղուէսն. «Ո՛վ անմիտս և յիմարս. յառաջագոյն պարտ էր ինձ ուտել եւ ապա գոհանալ զԱստուծոյ»:

ԱՌԻՒԾ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Առիւծ մի կորիւն ծնաւ: Եւ ժողովեցան կենդանիքն ի տես և յուրախութիւն: Գայ աղուէսն ի մէջ բազմամբոխին եւ մեծահանդեսին՝ նախատեսեց զառիւծն յատեանն բարձր ձայնիւ եւ անար-

գնաց, թէ ա՞յդ է քու կարողութիւնդ, զի մի-մի կորիւն ծնանիս եւ ո՛չ բազում:

Պատասխանի ետ առիւծն համարձակաբար եւ ասէ. «Այո՛, մի կորիւն ծնանիմ, բայց առիւծ ծնանիմ եւ ո՛չ աղուէս, քան զքեզ»:

Գրիգոր Մագիստրոսի նամակներուն մէջ տեղ մը յիշուած է Հետեւյալ գեղեցիկ առակը.

Արտոյտը վախնալով, որ երկինքը Հանկարծ վար չի թափի, պառկեցաւ կռնակին վրայ եւ ոտքերը ցցեց դէպի երկինք: Ոմանք տեսան ծաղրել ու կըսէին. «Այդ ծղօտի նման ոտքերդ դէմ տալ կուզես ո՛վ ծիտ, քու ծով խելքովդ»: Արտոյտը պատասխանեց. «Կ՛ընեմ ինչ որ կրնամ»:

Է. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ԵԼՔԻ ԴԱՐԵՐՈՒՆ

Բուն կրոնական նյութերէ դուրս գրականության միայն մեկ տեսակը կա, որ մեր եկեղեցական Հայրերը սիրեր են ու մշակեր դարեդար քրիստոնեական գրաբար գրականության ամբողջ Հազարամյակի ընթացքին. գրականության այդ տեսակը պատմագրությունն է:

Քրիստոնեության Հայաստան Հաստատվելէն մինչեւ արաբական արշավները անոր երեք ու կես դարերու ընթացքին՝ այսինքն քրիստոնեության պայքարի, Հաղթանակի ու ելքի օրերուն, գրականության պատմությունը կՀաշվէ ութը պատմագիր:

Առաջին երեքի՝ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացիի պատմական գործերու մասին անՀրաժեշտ եղածը արդեն խոսած ենք նախորդ էջերուն մեջ պատմական տեսակետեն: Հոս միայն պետք է ավելցնենք, որ Խորենացիին մատյանը իբրեւ գրական երկ ու կառուցում մեծատաղանդ գործ մըն է, շատ խիտ ու Համարձակ ձեռքի շարժումով, Հասուն ոճով և դատողա-

կան կայծերով. տեղ-տեղ հրաշալի նկարագրություններ ունի, որոնք սակայն ընդհանրապես մեր անգիր վիպասանություններեն կուգան, ուրկե քաղած է ինքն իր նյութը: Դարերու ընթացքին եղած է բոլոր մեր միւս պատմիչներուն ուսուցիչն ու օրինակը և ոչ մեկն ալ չէ կրցած հասնիլ անոր թափին, ո՛չ գիտական ձևակերպումին, ո՛չ ալ անոր հնարելու, հարմարցնելու ու կերտելու կարողության ու համարձակության: Ո՛չ միայն մեր, այլ ընդհանրապես մարդկային գրականության մեջ պատմագրի ինքնուրույն դեմք մըն է մեր Խորենացին:

Հայ պետականության անկումեն մինչև վեցերորդ դարուն սկիզբները ունինք նորեն պատմություն գրող երեք հեղինակներ: Այդ գրեթե դար մը տևող ժամանակի ընթացքին մեր քաղաքական կյանքին առանցքը կրոնական մաքառումներն ու պատերազմներն են պարսիկներու ճնշման դեմ. ղեկավարող տարրը հոգևորականությունն է ամեն տեղ: Մեծ է հոգևորականության դերը այս բոլոր շարժումներուն մեջ և երկու գլխավոր պատճառով. նախ՝ որ հարցն ու պայքարը կրոնքի ու կրոնավորության շուրջն է անմիջապես. Երկրորդն ալ՝ հոգևորականությունը Հայաստանի մեջ միակ կազմակերպված ուժն է, որ ամեն տեղ իր պաշտոնյանները ունի և իր կեդրոնական պետը. այս միության դեմ աշխարհական իշխաններուն շահերն ալ, զգացումներն ալ, կեցվածքն ալ շատ են և՛ տեղական, և՛ ցրիվ:

Հայ քրիստոնեության այդ դյուցազնական շրջանի դեպքերուն ու հարցերուն նկարագրությանն են նվիրված թե՛ Եղիշեի և թե՛ Ղազար Փարպեցիի գրած պատմությունները: Եղիշեն Վարդանանց պատերազմին պատմիչն է և Փարպեցին՝ էապես Վահան Մամիկոնյանի կազմակերպած դիմադրության պատմիչը:

Եղիշե ու Փարպեցի երկուքն ալ կգրեն իրենց ապրածը, իրենց գիտցածը, կգրեն ուղղակի կյանքեն, ուրիշ գրություններե ու հեղինակներե առնված բաները երկրորդական են: Պատմիչ են: Ագաթանգեղոս, Փավստոս ու Խորենացի հայոց պատմությունը կերտողներ էին: Բայց այդ առաջին սերունդի ավագ պատմագիրներուն նման՝ այս ավելի կրտսեր սերունդի պատմիչներն ալ նույն խմորեն են ու նույն հոգեբանությամբ: Եռանդուն հոգևորա-

կան մարդիկ, որոնք արդէն բոլորովին Հայաբար կմտածեն, Հայանկար կզգեն և իրենց գրութիւնը ազնուացած է Հայ շունչով: Եւ այդ Հայ շունչին մէջն է Եղիշէի ու Փարպեցիի գրաւչութիւնը ամենուն առաջ:

Եղիշէ աւելի թափ ունի ու ոգեւորութիւն, ուղղակի սրտէ կխօսի ու սրտի կխօսի, ասոր համեմատ ալ՝ իր ոճն ու լեզուն: Փարպեցին աւելի հանդարտ է, աւելի դիտող ու նկարագրող և երկարապատում. ասոր համեմատ ալ իր ոճը:

Փարպեցիին պատմութիւնը աւելի մօտ ու նման է պատմիչի մը գրութեան: Ան մեր առաջին իսկական պատմիչն է նեղ մտքով, մինչդեռ Եղիշէի «Վարդանանց պատերազմի պատմութիւնը» անսովոր ու բացառիկ գիրք մըն է մեր գրաբար գրականութեան մէջ, որուն գլխաւոր պատճառը գրուածքի գեղարուեստական արժանիքներուն մէջն է:

Նախ՝ ամբողջ գրուածքը շատ կոկիկ ու համաչափ կառուցում մը ունի, կարծես տրամայի մը յոթը արարները ըլլան: Եւ իր պատմած դէպքերն ալ չի տար իբրև եղելութիւններու պարզ նկարագրութիւն. ինքը շարունակ կմիջամտէ իր զգացումներու արտահայտութեամբ, իր գնահատանքով կամ հակակրանքով: Եւ ամեն ինչ կներկայացնէ կենդանի պատկերացումով, համեմատութիւններով, որով գրուածքը շատ աւելի վիպական ստեղծագործութեան տպաւորութիւնը կընէ, քան պատմական երկասիրութեան: Եւ արդէն ինքն ալ գրիչ է վերցուցած ո՛չ թէ հետնորդներուն իր ժամանակի ամենէն կարևոր եղելութիւնները պատմագրելու համար, այլ իր նպատակն է եղած գովել ազգին ու եկեղեցիին հաւատարիմ եղողներուն անձնուիրութիւնը և խարանել ետ կեցողներուն վատթարութիւնը: Ուրիշ խօսքով՝ իր նպատակը օրինակ տալն է, զգացումի զարնելն է, գեղարուեստական է իր ձգտումը:

Բոլոր հաջորդ դարերուն մէջ և մինչև այսօր շատ սիրուած և շատ կարդացուած գիրք մըն է Եղիշէի այդ հատորիկը, ուր երիտասարդ հոգևորականի մը հափշտակութիւնը, վիրաւորուած ու գրգռուած Հայ զգացումները և բնատուր գեղարուեստական հակումները հիւսուած են իրարու:

Եղիշէի ու Փարպեցիի պատմութիւններուն պէտք է միացնել

նաև Կորյունի գրքույկը։ Կորյունն ալ Եղիշէի խմորէն մարդ մըն է, թարմ ոգևորութեամբ և երիտասարդ ջերմեռանդութեամբ. իր գրածը ժամանակի քաղաքական պատմութիւնը չէ, բայց Հինգերորդ դարու ամենէն կարևոր դէպքին պատմութիւնը. իր նիւթը Մեսրոպ Մաշտոցի կենսագրութիւնն է՝ իր սիրած ու հարգած մեծ ուսուցչի պարզ ու ամփոփ պատմուած կեանքը և հետևապէս Հայ գրերու գիւտին պատմութիւնը։ Հարազատ և սիրով տոգորուն փոքրիկ գրութիւն մը, որ որքան Մաշտոցի, այնքան ալ Կորյունի հոգին սիրելի կդարձնէ մեզի։

Աւելի մեկուսի դէմք մըն է Սեբեոս՝ այս շրջանի վերջին պատմիչը, որ դար ու կէսվա պատմագրական ընդհատումէ մը ետքը Է դարու կեսեն քիչ մըն ալ առաջ կուգա Փարպեցիի թողած պատմութեան թելը շարունակելու։ Սեբեոս կհիշէ իբրև պատմիչ Ստեփաննոս Տարոնցի մը, որուն երկը սակայն չէ հասած մեզի։

Սեբեոսի գրած գրքին անունն է «Պատմութիւն ի Հերակլն», որ պարզապէս Հայոց պատմութիւնն է Ե դարու կեսեն մինչև Է դարուն կէսը՝ ժամանակի հուլն ու պարսիկ պատմական դէպքերն ալ միասին առած։ Հինգերորդ դարու դէպքերուն համար կօգտվի Եղիշէեն ու Փարպեցիեն, որ կշարունակէ։

Ամբողջ դարու մը լրիվ պատմիչն է միակ. և ճշմարիտ գրող, պարզ ու արժեքավոր։

2. ԱՐԱԲԱԿԱՆ ԴԱՐԵՐՈՒՆ

Արաբական շրջանի չորս դարերու ընթացքին պատմական ամենէն գլխավոր երևույթը նախ արաբներու և մահմետական կրոնի երևան գալն է, մեր շրջակա երկիրներուն տիրելը, մեր աշխարհքին տիրանալը և տված տառապանքները։ Հայերու համար երկրորդ մեծ երևույթը արաբական իշխանութեան թուլացումով անոնց գերիշխանութեան տակ նոր Հայ թագավորութիւններու ծագում առնելն է, որոնց մեջ ամենեն մեծն էր Բագրատունի թագավորութիւնը, անկե ետքն ալ Վասպուրականի Արծրունիներու թագավորութիւնը։ Իսկ ԺԱ դարու կեսերուն այդ թագավորութիւնները, ինչպես և ամբողջ Հայ երկիրը, կողոզվի սելճուկներու արշավանքներուն տակ։

Այս գլխավոր դեպքերուն զուգընթաց առաջացած են նաև շրջանի Հայ պատմիչները:

Յոթներորդ դարու կեսերեն մինչև իններորդ դարուն կեսը, մոտ երկու հարյուր տարի տևող սոսկալի խառնակ ու դժբաղդ ժամանակի ընթացքին ունեցած ենք միայն մեկ պատմիչ մը՝ Ղևոնդ Երեց, որ ապրած է ութերորդ դարուն և գրած է մահմետական առաջին խալիֆաներուն գործերը և հատկապես մեր Հայ աշխարհին հետ կապված դեպքերը:

Իններորդ դարու մեջերեն ծայր կուտան մեր նոր պետական ինքնուրույնության ճիգերը, այսինքն՝ կհիմնվին Բագրատունի ու Արծրունի թագավորությունները, որոնց բարձրացման կհամապատասխանե նաև մեր պատմագրության համեմատական բարձրացում մը: Բագրատունի աշխարհին պատմիչներն են Շապուհ Բագրատունի, Հովհաննես կաթողիկոս և Ստեփաննոս Ասողիկ, իսկ Վասպուրական թագավորության պատմիչն է Թովմա Արծրունի:

Շապուհ Բագրատունիին գիրքը կորսված է, բայց տեղե մը հանկարծ դուրս գալու հույսերը դեռ բոլորովին կորսված չեն: Վերջերս հրատարակվեցավ անանուն և կիսատ ձեռագիր մը, որ թե՛ շարադրության, թե՛ նյութի և թե՛ լեզվի տեսակետեն աղվոր նմուշ մըն է արաբական իշխանության բերած տակնուվրայության ու խեղճ վիճակին: Աշխարհիկ մարդ մըն է գրողը. ո՛չ պատմության է նման, ո՛չ ժամանակագրության. լեզուն ալ՝ խառնուրդ գրաբարի ու բարբառի. գրված է իններորդ դարուն. նոր ու հետաքրքիր աղբյուր մըն է թե՛ պատմության և թե՛ բարբառական լեզվի ուսումնասիրության համար: Բայց մեր բանասերներու փնտրած Շապուհ Բագրատունին չէ:

Հովհաննես կաթողիկոս իր պատմությունը կսկսի աշխարհքի սկիզբեն և կհասնի մինչև տասներորդ դարու առաջին քառորդը. մինչև իր ժամանակը հետևողությունն է Խորենացիին և հաջորդ պատմիչներուն: Հետաքրքիրը բնականաբար իր ապրած ու տեսած դեպքերու ու խնդիրներու նկարագրությունն է. գրված է անշուշտ գրաբար, բայց ուռուցիկ ու արվեստական ոճով մը:

Ստեփաննոս Ասողիկ գրեր է ու զած նմանապես ամբողջ Հայոց պատմությունը աշխարհքի ստեղծումեն մինչև ԺԱ դարուն սկիզբ-

ները. բայց իրմեն առաջ եղած ժամանակներու մասին տվածը կա՛մ անուններու ցանկեր են, կա՛մ մեր պատմիչներեն առած կտորներ: Մեր պատմագրության համար կարևորություն ունեցողը բնականաբար նորեն այն էջերն են, որ գրել է ինքը իր տեսածեն ու ապրածեն:

Թովմա Արծրունին մեր նախորդ պատմիչներու և բերանացի ավանդություններու վրա հենված ջանացել է առանձնացնել ու կերտել Արծրունյաց պատմություն մը, ինչպես վայել է նոր հաստատված թագավորության մը: Միակ արժեք ներկայացնող մասը նորեն իր ժամանակի մասին իր տված տեղեկություններն են: Ինքը իր պատմությունը կհասցնե մինչև 910 թվականը. անկե անդին մինչև տասներորդ դարուն կեսերը շարունակած է ուրիշ մը:

Շրջանին վերջ դնող ամենեն աղետալի պատահարը սելճուկներու արշավանքն է և մեր հայ աշխարհի ավերումը: Այդ արշավի ու այդ ավերումին պատմիչն է Արիստակես Լաստիվերտցին, որ գրած է իր բարակ գիրքը տասնմեկերորդ դարու կեսին: Ավեր ու փճացում միայն ներկայացնող պատմիչ մը ուզե-չուզե ողբ ու կական պիտի գրե. և քանի որ գրողը միևնույն ժամանակ հոգևորական մըն է, հետն ալ պետք է խառնվիլ քարոզ ու աղոթք. և Լաստիվերտցիին պատմությունը ողբ է, քարոզ ու աղոթք՝ տեղ-տեղ խորունկ հնչյուններով:

* * *

Այս վեց հեղինակներուն դեմ, որոնք, այսպես ըսեմ, շրջանի քաղաքական կյանքին կապված ավելի բնական ու իսկական պատմիչներն են, կա նույն շրջանին պատկանող հինգ-վեց հեղինակ ալ, որոնց երկերը ավելի պատահական բնույթ կկրեն. պատմական երկեր են, բայց ո՛չ անհրաժեշտորեն իբրև այդ շրջանի ծնունդ:

Ամենեն առաջ Թ և Ժ դարերուն մեջ ապրած հեղինակ մը Մովսես Կաղանկատվացի, որ գրած է աղվան ժողովուրդի պատմությունը, նորեն աշխարհքի սկիզբեն մինչև հեղինակի ապրած օրերը: Շատ խառնակ գրված գիրք մըն է, որ ունի սակայն մեջը հետաքրքիր էջեր, փաստաթղթեր, ժողովական կանոններ, անծանոթ ավանդներու հիշատակություն, ինչպես և Դավթակ Քերթողի գրած ողբը:

Հետաքրքիր հեղինակ մըն է նաեւ Ուխտանէս եպիսկոպոսը, Ժ դարուն ապրած, որ գրած է ծադ. ազգին պատմութիւնը. Երկը հիմա չունինք, կորսուած է. պատմական կարեւորութիւն ունեցող կտոր մը: Կորսուած է նմանապէս Ուխտանէսի գրած «Հայոց պատմութեան» մեծագոյն մասը եւ հատկապէս վերջին մասը, ուր իր ժամանակի մասին պիտի խօսէր. Հասած է մեր ձեռքը ամբողջական հատուած մը միայն, ուր կպատմուի վրաց եկեղեցիի Հայ եկեղեցիէն բաժնուելուն պատմութիւնը:

Կա Զենոբ Գլակի եւ Հովհան Մամիկոնյանի անուններով մեզի հասած բարակուկ գրութիւններ՝ ըստ երեւույթին Գլակ վանքի վանահայրերու կողմէ գրուած տարբեր-տարբեր ժամանակներու մէջ: Հովհան Մամիկոնյանի անունով եղածը մասնաւոր հետաքրքրութիւն կներկայացնէ անով, որ իր մէջը ունի ժողովուրդի բերնէն առնուած վիպախառն պատմութիւն մը. մեր գրաբար ու բարբառական անգիր բանահյուսութեան ուսումնասիրութեան համար կարեւորութիւն ունի:

Կա գրուածք մը Մեսրոպ Երեցի անունով, նորէն Ժ դարէն: Գրուածքի միտքն է Լուսաւորչի տան պատկանող Հայրապետներուն բարձրացումը, հատկապէս Ներսէս Մեծի գովասանքը Դ դարու Հայրապետներէն:

Կա նման գրուածք մըն ալ ԺԱ դարուն սկիզբները շարադրուած, ուր Մեսրոպ Մաշտոցի կեանքը կպատմուի իբրեւ «ներբողեան պատմագրաբար»:

Այս վերջիններն ալ պատմական աշխատանքներ են անշուշտ, բայց ո՛չ պատմիչի աշխատանք. ուրիշներու երկերուն վրայէն քաղուած ու հօրինուած գրութիւններ են. գիրքէ գիրք:

3. Դ-ՊՐԵՎԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ

Թուրանական դարերու պատմական գլխաւոր դէպքերն են՝ նախ սելճուկներուն արշաւները եւ անոր կապուած մեր Ռուբինյան իշխանութեան կազմվիլը եւ Թագաւորանալը խաչակիրներու միջոցով: Երկրորդ կարեւոր դէպքը Թաթարներու արշաւանքն է ԺԳ դարուն: Եվ վերջապէս ԺԴ դարու վերջին քառորդին, արդէն Կիլիկյան Թագաւորութեան Հաստատումէն ետքը, Լենկ Թիմուրի

արշաւանքը, որ մեր Հայրենի աշխարհին աւերն ու կործանումը Հասցուց իր լրման:

Այս երեք պատճաններուն կհամապատասխանեն այս շրջանի պատմիչներուն երեք խումբերը:

Կիլիկյան տան Հիմնարկութեան ու զարգացման պատմիչները Հինգ Հոգի են: Առաջինը Ներսես Շնորհալին, որ ամբողջ Հայոց պատմութիւնը վերածած է ոտանաւորի. ինչպես տեսանք, որուն իր ժամանակվա մասին գրած տողերուն մեջ պատմիչի նման բան մը կգտնուի:

Պատմիչ մըն է արդեն և այս խումբի ամենեն արժեքավոր դեմքը Մաթեոս Ուռհայեցին: Իր պատմութիւնը կսկսի Ժ դարու կեսեն և կհասցնե մինչև 1136 թիվը: Իր գրածը շարունակական պատմութիւն մը չէ, այլ տարեգրութիւն. կդնե կարևոր համարած թվական մը և դեմը Հայ կամ օտար կարևոր դատած դեպքը, տեղ-տեղ բավական մանրամասն, օգտվելով իրմեն առաջ եղած պատմիչներեն, ինչպես և իր բերնե բերան լսած տեղեկութիւններեն. բնականաբար ամենեն ավելի արժեք ներկայացնողը ԺԲ դարու առաջին մասին վերաբերող եղելութիւններն են:

ԺԲ դարուն է գրած նաև Սամուել Անեցին, երեց մը: Գրքին վերնագիրն է՝ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», այսինքն՝ ժամանակագրական ձևով քաղած է Հայ պատմիչներեն կարևոր դեպքերը. Ադամ-Եվայեն սկսած մինչև Հեղինակի մահվան տարին (1179), ուրիշ խոսքով՝ տարեցույց:

Կիլիկյան օրերու ժամանակագիր մըն է նաև Հեթում թագավորի եղբայրը՝ Սմբատ Գունդստաբլ, այսինքն՝ սպարապետը Հայ զորքերուն. ուրիշ գրական աշխատութիւններու շարքին թողած է նաև տարեգիրք մը. կսկսի Ժ դարու կեսեն և կհասցնի մինչև իր օրերը. ինքը ապրած է 1208-1276: Շատ կարճ գրված բան մըն է. ուրիշ պատմիչներե քաղած հին ժամանակները բոլորովին կարևորութենե զուրկ են. իր ժամանակի մասին գրածն է ավելի հետաքրքիր, ուր մեծ նորութիւն մը չունի սակայն, լեզուն գրաբարի ու բարբառի խառնուրդ մըն է:

Այս խումբի վերջին պատմիչն է Վահրամ Րաբունին, ԺԳ դարուն, որ կուտա Կիլիկիայի պատմութիւնը Շնորհալիի թողած

տեղին սկսելով մինչև իր օրերը, նմանապես տաղաչափ գրութեամբ, ինչպես վերն ալ հիշած եմ:

Այս տաղաչափ գրութիւնները, ինչպես և տարեգիրքեր կող-մերու սերը անշուշտ նշան են պատմական անդրջութեան. քիչ մը խաղ է, քիչ մը օրացուցային հետաքրքրութիւն: Ամենեն ավելի պատմիչի նմանողը այս առաջին խումբին Մաթեոս Ուռհա-յեցին է:

Թաթարական արշավանքներու մասին գրող պատմիչներուն խումբը կկազմեն երեք հոգի՝ Վարդան Արևելցի, Կիրակոս Գանձա-կեցի և Մաղաքիա Աբեղա:

Վարդան վարդապետ Արևելցին մեռած է 1271-ին: Իր գործը կկոչվի «Պատմութիւն տիեզերական», որովհետև փրանկներու և արևելյան ժողովուրդներու մասին ալ կխոսի, Ադամ-Եվայեն մինչև 1268 թվականը: Արժեք ներկայացնողը թաթար-ներու մասին գրած տողերն են: Ինքը գերի է ինկած թաթարներուն ձեռքը, մոտեն ճանչցած է և Հուլավու խանի հետ ալ տեսակցութիւն է ունեցած: Եվ իր ազատագրվելեն ետքն ալ շատ թափառած մարդ է արևմտյան և արևելյան վանքերուն մեջ:

Վարդանի աշակերտն է Կիրակոս Գանձակեցին, մեռած է նմանապես 1271 թվականին: Գրիգոր Լուսավորչեն սկսելով և գլխավորապես կրոնական դեմքերն ու դեպքերը արագ հիշելով՝ կուտա իր ժամանակի պատմութիւն, որ գրած է հանգամանորեն և հատկապես թագավորներու մասին շատ արժեքավոր տեղե-կութիւններով:

Մաղաքիա Աբեղան գրած է՝ «Պատմութիւն վասն ազգին նետողաց», այսինքն թաթարներու: Գրած է միայն իր տեսածն ու ապրածը 1230-1274 տարիներու ընթացքին, անոնց հար-ձակումները, ավերածութիւններն ու կոտորածը: Սրտանց կխոսի ու կենդանի արտահայտութեամբ. մեր լավագույն պատմիչներեն մեկն է:

Լենկ Թիմուրի արշավանքներն ու վայրագութիւնները կպատմեն երկու հեղինակ՝ Գրիգոր Ծերենց և Թովմա Մեծոփեցի:

Գրիգոր Ծերենց նահատակված է 1425 թվին: Նույն անձն է, որ վերստին կարգի է բերած «Յայսմաւուրքը»՝ վրան ավելցնելով

իր ժամանակի նոր նահատակները, որոնցմէ մէկն ալ ինքն էր ըլլալու: Իր պատմութիւնը, որ հորինած է տաղաչափութեամբ, կկոչուի «Յիշատակարան աղէտից» և կբովանդակէ 1386-1422 թուականներուն մէջ եղած պատահարները և Հայաստանի թշուառութեան պատկերը: Նրբազգաց, շատ բան տեսած ու տառապած մարդ մըն է, որ կխոսի:

Թովմա Մեծոփեցին իր ժամանակի ուսումնական հոգևորականներէ մէկն է, Գրիգոր Տաթևացիին աշակերտը: Գրած է երկու պատմական երկ՝ «Յիշատակարան» մը և «Պատմութիւն պղծոյն և չար գազանին Լենկ-Թիմուրայ»: Երկու գրութիւններն ալ ներքնապէս կապված են իրար և կուտան հեղինակի ապրած ու տեսած իրականութիւնը 1384-1446 թուականներու ընթացքին, կնկարագրէ մոնղոլ, թուրք ու քյուրտ մեծ ու փոքր բռնակալներու կռիւներն ու վայրագութիւնները:

Պատմական դեպքերուն զույգ գացող այս բուն ժամանակակից պատմիչներին զատ՝ ունինք ուրիշ չորս պատմիչներ գպրեվանյան շրջանին:

Նախ՝ Հովհաննէս Սարկավագ վարդապետ, ԺԲ դարին, որուն պատմական երկը մինչև հիմա դեռ չէ գտնված մեր ձեռագիրներուն մէջ:

Երկրորդ՝ Մխիթար Անեցի, ԺԳ դարու առաջին կեսեն, որ ըստ երևույթին ունեցած է մեկ-երկու պատմական գրութիւններ, որոնցմէ միայն մեկը հասած է մեզի և ան ալ միայն առաջին կեսը՝ Ադամ-Եվայեն մինչև մահմետականութեան երևալը, ամեն ինչ քաղված է մեր մյուս պատմիչներեն. կորսված է ուրեմն, ինչ որ արժեք պիտի ներկայացներ:

Երրորդ Մխիթար Այրիվանեցի, ԺԴ դարու միակ պատմիչը, որ գրած է «Պատմութիւն ժամանակագրական» աշխարհքի սկիզբեն մինչև 1328 թվականը 60 երեսներու մէջ. այսինքն չոր ու ցամաք անուններու ցանկ մը:

Չորրորդ անունն է հետաքրքիրը անհամեմատ ավելի. Ստեփաննոս Օրբելյան, որ մեռած է 1305 թվին: Եղած է Սյունիքի եպիսկոպոս և երկար տարիներ կառավարած է ինքնիշխան իր աշխարհի հոգևոր գործերը: Խիստ ու մեկուսի դեմք մըն է, և իր

գրածն ալ մեկուսի մենագրություն մը՝ «Պատմութիւն տանն Սիսականի», այսինքն՝ Սյունյաց աշխարհի պատմությունը և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ՝ սկսելով իրենց «նախահայր Սիսակեն» մինչև Սյունիքի իշխանական տան ընդհատիլը, օգտվելով ամեն տեսակի գրավոր ու բանավոր հիշատակություններե և ավանդություններե և հնար եղածին չափ այդ իշխաններու դերն ու կարևորությունը ընդգծելով տեղային ու տոհմական հայրենասիրությամբ մը:

4. ՀԱՄԱԴՐՈՒՄ

Արդ՝ եթե ընդհանուր հայտարարի բերենք այս բոլոր պատմություն գրող հեղինակները՝ կստանանք երեսունեհինգ անուն: Ասոնցմե երկուքի աշխատանքը բոլորովին չունինք. հինգ հոգիի երկերին պակաս են ամենեն կարևոր մասերը. մեկը պարզապես պատմական անուններու ցանկ մըն է. և հինգ հատ ալ գիրքեն գիրք թափված գրություններ են, ըլլան արձակ թե ոտանավոր: Ասոնք եթե հանելու ըլլանք ընդհանուր թիվեն՝ քրիստոնյա հազարամյակի պատմագիրներուն թիվը կիջնե քսաներկուքի:

Այս քսաներկուքեն Կորյունի երկը կենսագրություն մըն է, Կաղանկատվացիի «Աղվանից պատմությունը» և Օրբելյանի «Սյունյաց պատմությունը» մեկուսի գրվածներ են, իրենց ժամանակի պատմությունը տալու համար գրված չեն. այդպես ալ Ագաթանգեղոսի ու Մովսես Խորենացիի հորինած պատմությունները ավանդական իմաստով պատմիչներու կարգը դնելը դժվար է:

Այս երկերն ալ եթե առանձնացնենք մյուսներեն՝ կմնա տասնյոթ անուն, այսինքն՝ ուղիղ կերը պատմություն շարադրող մեր հեղինակներուն. ասոնք ուզեր են ավանդել հետագա սերունդներուն իրենց ապրած ժամանակի կարևոր դեմքերն ու գլխավոր դեպքերը ավելի կամ պակաս լրությամբ, ավելի կամ պակաս կանոնավոր հաջորդականությամբ:

Ասոնցմե քանի մը հատ կսկսին անմիջապես իրենց նյութեն և իրենց օրերեն. անշուշտ գիտական տեսակետեն ամենեն շիտակ ճամբան: Մեկ-երկու հեղինակ կսկսին իրենցմե առաջ եղած պատմագիր հեղինակի ընդհատած տեղեն, որ շատ ավելի իմաստ ունի անշուշտ: Երբեմն կսկսին պատմականորեն իրենց կարևոր համա-

րած կետե մը, մեկ կամ երկու դար առաջ իրենց ժամանակեն, և որովհետև իրենցմե առաջ եղած դեպքերու համար կօգտվին միայն մեր նախորդ հեղինակներեն՝ աշխատանքին այդ մասը կդառնա երկրորդական արժեքի գործ. նոր տարր մը չեն բերեր մեր պատմության:

Իսկ Ժ դարեն սկսած մեր պատմիչներուն մեկ մասը սովորություն կդարձնե իր գիրքը սկսիլ Ադամ-Եվայեն. և իհարկե շատ վազեվազ ընթացքով մը մինչև իր օրերը հասնելու համար և օգտվելով գրեթե բացառապես իրմեն առաջ եղող մեր պատմիչներու գրածներեն, երբեմն շատ ալ կցկտուր. այսինքն՝ բացարձակապես անպետք ու ավելորդ աշխատանք մը և ահագին անօգուտ բեռ մը ձեռագիրները արտագրողներուն համար:

Չեմ կարծեր, որ ամբողջական երևալու սին մեծամտությունը ըլլա այս վարմունքին ներքին պատճառը. ինծի կթվի, որ ուսուցման հետ կապված անհրաժեշտություն մըն էր ատիկա: Ժ դարեն սկսած Բագրատունի թագավորներու պաշտպանության տակ սկսան քանի մը վանքեր իբրև ուսման կեդրոն գործածվիլ, որ թուրանական դարերուն դարձավ արդեն ընդհանուր երևույթ: Գրաբար լեզվի տեր դառնալու համար արդեն պետք էր երկար ժամանակ և աշխատանք, գրաբար լեզվին հետ կրոնական որոշ ուսում, այդ ուսման մեջ էր նաև մեր ժողովուրդի պատմությունը, որ գրերու գյուտեն սկսած կեսավակես հայ եկեղեցիի ու հայ եկեղեցականության պատմությունն է արդեն: Այդ ուսումը դաս տվող վարդապետը բնականաբար ստիպված էր ամեն անգամ Ադամ-Եվայեն սկսելու և ատոր համեմատ ալ պետք է կազմեր ղեկավար և ուղեցույց գրություն մը, որ ունենար ձեռքի տակ խոսելու ատեն:

Բայց ուրկե ալ որ սկսին այս բոլոր պատմիչները՝ անխտիր բոլորի համար ալ ընդհանուր օրենք է, որ իրենց գրության իսկապես արժեքավոր մասը կկազմե իրենց ժամանակակից կյանքին նկարագրությունը: Բացառիկ երևույթ է, որ ավելի հին ժամանակներու մասին խոսած ատեն պատմական արժեքավոր նորություն մը հայտնաբերեն: Իր ժամանակի պատմական դեպքերու հաջորդական նկարագրությունը տվող հեղինակն է միայն, որ ես այստեղ նեղ մտքով կանվանեմ պատմիչ:

* * *

Քրիստոնէական Հազարամյակի մեր գրավոր գրականության այս տասնյոթը պատմիչները գիտակցորեն թե ինքնաբեր կերպով, մեկը մյուսի գործը շարունակելով տված են մեզի քրիստոնեությունը Հայաստան մտնելեն մինչև Թաթարական գաղթերուն վերջը հասնող դեպքերուն գրեթե անընդհատ շղթան, անշուշտ իր շատ ընդհանուր գծերով. մոտ հազար երկու հարյուր տարվան պատմությունը: Ինչ որ գիտենք մեր անցյալի մասին, մանավանդ ներքին կազմին դիտված, գիտենք այդ տասնյոթը անձերու շնորհիվ:

Եվ ասոնք բոլորն ալ, բացի Շապուհ Բագրատունիեն և Սմբատ Գունդստաբլեն, բոլորն ալ հոգևորական մարդիկ են՝ կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ և երեց:

Իրենց տված տեղեկությունները ընդհանրապես միակողմանի են և թերի. հոգևոր աչքով տեսնված: Աշխարհիկ կյանքի ու պայմաններու մասին, ժողովուրդի առօրյա ապրուստի ու միջավայրի մասին պատահական կերպով միայն բաներ մը երբեմն կսահին գրչին տակեն: Իրենց սովորական պատմածն է իշխանական տներու կռիվներ, արտաքին հարձակումներ, հալածանք ու ավեր, այլև հոգևոր կյանքին հետ կապ ունեցող ժողովներ, խնդիրներ ու հարցեր. աս է ընդհանուր պատկերը:

Եվ պատմվածքն ալ երբեմն պարզ ու հստակ, երբեմն խառնակ. երբեմն ուռուցիկ, բայց ընդհանրապես չոր է. տիրողը դատողական նկարագրությունն է, կենդանի պատկերացում քիչ կա, բայց հոս ու հոն կպատահինք հանկարծ տրամատիկ դեպքի մը, որ ավելի ալ սրտանց պատկերացված է. կպատահինք մեջեմեջ կենդանի գծված դեմքի մը, կյանքե փրցված նկարագրության մը, ինչպես և խորության մը սուր ու հաջող ընդգծումին:

Իրենց պատմած երևույթները քիչ-շատ տրամաբանական պատճառականությամբ բացատրելու կամ բնավ ճիգ չկա, կամ հարցերուն կմոտենան զուտ իբրև քրիստոնյա քարոզիչ: Մեր մեղքերն են պատճառ մեր բոլոր դժբախտություններուն. Աստծո բարկությունն է և անոր տված արդար պատիժը: Ամենքն ալ աստվածավախ, եկեղեցասեր ու բարեպաշտ մարդիկ են արդեն իրենց կո-

չումով. և կգովաբանեն շարունակ սուրբերը, ճգնավորները, վանքերը և ամեն բան, ինչ որ կապված է Հավատքին;

Հավատքի մարդիկ են, երբեմն զարմանք պատճառելու աստիճան միամիտ և սնահավատ: Արդի ընթերցողը միշտ հաճելի անակնկալ մը կունենա, երբ սովորականեն քիչ մը ավելի լայն Հորիզոնով և նվազ նախապաշարումով դատողության մը կՀանդիպի: Եվ այդ Հեղինակներեն շատերուն մտածելու և դատելու եղանակը ընդՀանրապես դժվար է զանազանել Հասարակ ժողովուրդի մտածելու եղանակեն:

Բայց բոլորն ալ անպայման Հայ են. Հայու անցյալը, Հայուն վերաբերող բաները և Հայուն գրքերը սիրելի են իրենց շատ: Եվ խորապես կցավի իրենց սիրտը Հայ ժողովուրդի անվերջ տառապանքն ու Հալածանքը տեսնելով ու նկարագրելով. Հայրենասերներ են ամենքն ալ, անշուշտ մեծ չափերով Հյուսված եկեղեցասիրության:

Այս պատմիչներեն քանի մը Հատը սակայն նաև ուրիշ ժողովուրդներու պատմության Համար արժեք ունին մեր Հայրենի պատմության սաՀմաններեն դուրս: Այսպես՝ Սեբեոս է դարուն, որ Հերակլ կայսեր պատմությունը գրել կուզե. Ղևոնդը, որ արաբական առաջին խալիֆներու պատմությունը գրել կուզե: Այսպես՝ Կաղանկատվացին, որ Աղվանքի պատմությունը Հյուսել կուզե, Ուխտանես եպիսկոպոսը, որ ծաղ. ժողովուրդի պատմությունն է գրած: Այսպես՝ արաբական շրջանի պատմիչները ընդՀանրապես վրացի ժողովուրդի մասին Հաճախ Հիշատակություն ունին. բայց դրացիական բնական կապերե ավելի այդ Հաճախակի Հիշատակության պատճառը Բյուզանդիոնի վարած քաղաքականությունն է, որ այդ արաբական դարերուն ամեն կերպով կջանար մեզի դավանակից եղող վրացիները քաղքեդոնական դարձնելու, մեզմե զատելու և Բյուզանդիոնի պատրիարքության կապելու: Իսկ Թուրանական դարերուն մեր արևմտյան մասի պատմիչները խաչակիրներու Հետ մեր ունեցած Հարաբերություններու մասին Հիշատակություններ ունին. մինչ նույն դարերու մեր արևելյան բաժնի պատմիչները Հատկապես թանկագին տեղեկություններ կուտան թաթարներու մասին:

* * *

Քրիստոնէական գրականութեան այս տասը դարերուն մէջ երեք դար մասնաւորապէս աչքի կիյնան պատմագրութեան տեսակէտէն: Այդ երեք դարերն են. նախ՝ գրերու գիւտէն մինչեւ Զ դարուն սկիզբները. երկրորդ՝ Թ դարու կէսերէն մինչեւ Ժ դարուն վերջերը. եւ երրորդ՝ ԺԳ դարը. կամ աւելի դիւրին արտայայտութեամբ՝ Ե, Ժ եւ ԺԳ դարերը, այսինքն՝ քրիստոնէական դարերու երեք ալիքներուն ամենէն բարձր գագաթները:

Հինգերորդ դարու մեր պատմական զարգացումը՝ Ագաթանգեղոս, Փաւստոս, Խորենացի, Կորիւն, Եղիշէ ու Փարպեցի, մեկը միւսէն աւելի անուններ, մենք պարտական ենք ամենէն առաջ նոր կրօնքի բերած նոր ոգեւորութեան ու նոր պահանջներուն. երկրորդ՝ նոր կատարուած տառերու գիւտին, որ բոլորովին նոր տեսակի զենք մը կըլլար հայ հոգեւորականի ձեռքը. եւ երրորդ՝ մեր պետականութեան դեռ բոլորովին չմարած շունչին: Այս բոլոր մարդիկը, որ կթարգմանեն ու կշարադրեն, իրենց հոգիներուն խորքը դեռ չկտրուած թելի մը ունին, նախորդ անկախ դարերէն եկող հպարտութեան մը, տեսողութեան ու շնչառութեան լայնութեան մը. եւ բոլորովին միեւնոյնն է՝ իրենք կգիտակցի՞ն, թէ՞ ոչ:

Տասներորդ դարու պատմագրական շարժումը, որ անհամեմատ աւելի համեստ է իբրեւ տաղանդ, կպարտինք նոր թագաւորութիւններու բարձրացումին. իսկ իր համեստութեան պատճառն ալ մէկ կողմէն արաբական տիրապետութեան տուած հարուածն է հայ հոգիին, միւս կողմէն ալ մահմետականութեան տուած հարուածը քրիստոնեայ հոգիին:

Տասներեքերորդ դարու պատմագրութիւնը մենք պարտական ենք վանական-ուսումնական կեանքին: Բարձր ու միջնակ կուսակրօն հոգեւորականութիւնը քաշուած ու կծկուած է վանքերու պարիսպներուն ետեւը, ուր կկարդա, կմտածէ, կսորվի ու կսորվեցնէ: Ուր կայ սորվիլ ու սորվեցնել, ուր կայ գիր ու գրիչ, ուր կայ ազատ ժամանակ, մարդիկ կխորհին, կգիտեն ու իրենց գիտածն ու խորհածը այս կամ այն ձեւով գրի առնել կուզեն: Գրչի մարդը անցած ու գալիք դարերուն շատ աւելի սերտօրէն կապուած արարած մըն

է, քան գործի մարդը: Թէ՛ դէպի ետ, թէ՛ դէպի առաջ մշտապէս հաղորդակցության մէջ մնալ կուզէ:

Ընդհանուր առումով մինչև արաբներու խուժումը մեր պատմագրությունը կենդանի է և ստեղծագործ, ավելի բարձր է իր գրական արժանիքը և ավելի շունչ ունի: Արաբական շրջանի մեր հեղինակները դժվար կքալեն, հոգնած են և կարծես գրիչ շարժելու շնորհքը մոռցած են բավական. արվեստական բան մը կա կարծես իրենց գործին ու աշխատանքին վրա: Դպրեվանական շրջանի մեր պատմագրությունը ավելի հանգիստ է, ավելի ուսումնական և անոր համար ալ ավելի գրական արժեքով, բայց չկա ներքին թափ և հափշտակող նյութ. խեղճերը ինչո՞վ ոգևորվեին ու ի՞նչ պատմեին այդ դաժան դարերուն:

* * *

Ես շեշտեցի գլխավորապես մեր տասնյոթը պատմիչ հեղինակները, բայց անշուշտ որ նաև մեր մյուս պատմագիրները, ինչպես և ավելի երկրորդական կամ ավելի ճղակտոր հեղինակներու մեզի հասած էջերուն մէջն ալ կան տողեր ու հատվածներ, որոնք մեր պատմության համար աղբյուր են ու արժեք ունին կամ հանկարծ վաղը կրնան արժեք ստանալ որևէ հարցի մը լուսաբանության ատեն:

Եվ ո՛չ միայն մեր բուն ու հատուկ պատմական գրություններուն մէջ, այլ նույնիսկ մեր ամբողջ կրոնական-գործնական գրականության մէջ հոս ու հոն դիտողություններ, տեղեկություններ կան, որոնք կրնան ծառայել իբրև պատմական ուսումնասիրություններու աղբյուր: Այդպես ալ «Վարք սրբոց»-ներու, վկայաբանություններու, վիճաբանական թղթերու և աղանդավորներու դեմ գրված երկերու ու ճառերու մէջ. այդպես ալ ժողովական կանոններու, նույնիսկ ծիսական գրություններու, նույնիսկ քնարական տաղերու որոշ տողերուն մէջ:

Իբրև պատմության աղբյուր շատ անգամ մեծ կարևորություն կստանան զանազան շենքերու և քարերու վրա փորագրված արձանագրությունները իրենց թվականով, հիշած տողերով, դեպքերով ու անուններով:

Նոյն դերը կխաղան, իբրեւ պատմութեան աղբիւր, հատկա-պէս ձեռագիրներու սկիզբն ու վերջը շատ սովորական եղող հիշա-տակարանները, ուր հեղինակը կամ արտագրողը, կամ զարդարողը, կամ ձեռագիրը նուիրողը կամ ստացողը կհիշեն իրենց ով ըլլալը, իրենց ժամանակի ծանր պայմանները, ո՞ւր եւ ե՞րբ աշխատած ըլլալնին ու կխնդրեն, որ հիշենք մեր աղօթքներուն մէջ իրենց եւ իրենց հարազատներուն անունները: Այս հիշատակարաններէն թանկագին նյութեր կարելի է հանել. եւ գիտական բանասիրութիւնը այդ ուղղութեամբ արդէն լուրջ աշխատանքի վրայ է: Եվ շատ չան-ցած մենք կունենանք անշուշտ այդ հիշատակարաններուն խնա-մոտ արտագրութիւններուն գիտական հաւաքածուները:

Կրոնական գրքերը՝ իբրեւ պատմութեան աղբիւր, աւելի պետքի կուգան քրիստոնեական մեր առաջին դարերուն համար մինչեւ արաբներուն խուժումը: Արձանագրութիւնները աւելի դեր ունին Բագրատունի եկեղեցաշէն դարերու համար: Իսկ դպրեվա-նական շրջանը հարուստ է բնականաբար ձեռագիրներու հիշատա-կարաններով:

Ը. ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ

Մեր հոգեւոր հայրերը թէեւ գլխաւորապէս հետաքրքրուած եւ զբաղված են հոգեւոր ու կրոնական գործերով ու խնդիրներով, բայց անոնց մէջէն շատերը բոլոր դարերուն մէջ ալ որոշ հե-տաքրքրութիւն ցոյց են տուած նաեւ իմաստասիրական ու գիտա-կան աւելի ընդհանուր հարցերու համար:

Կկարդային այդ ուղղութեամբ թարգմանական երկեր. անշուշտ նոյն ուղղութեամբ կխօսէին եւ կվիճէին իրենց վանքերուն ու խուցերուն մէջ: Վանական-ուսումնարանական շրջանին գի-տենք, որ կանոնաւոր դասախօսութիւն է եղած գոնէ արեւելեան բանի մը վանքերու մէջ իմաստասիրութեան, տրամաբանութեան, քերականութեան եւ հռետորութեան: Եվ շատերու կրոնական երկե-րուն մէջ կհիշվի կամ կզգացվի այդ հետաքրքրութիւնը. մանաւանդ երբ այդ նյութերը ուղղակի կամ չեղակի սերտ կապեր ունեին

քրիստոնեական պաշտամունքին ու դավանաբանության հետ:

Բայց շատ քիչեր են, քանի մը բացառություններ, որոնք ավելի լրջորեն տարված ու հափշտակված են եղեր իմաստասիրական ու գիտական հարցերով. այն աստիճանի, որ իրենց գրական ու ուսումնասիրություններու գլխավոր նյութը դարձնեին այդ հարցերը:

Զանազան տեսակի կրոնական գրություններու մեջ հոս ու հոն կհիշվին «հռետոր», «քերթող», «քերական», «փիլիսոփա» ու նման մակդիրներով որոշ կամ անծանոթ անուններ, բայց անոնց գրած երկերու մասին բան մը չգիտենք. կա՛մ չեն ունեցած, կա՛մ մեզի չեն հասած:

Զորս հեղինակ ունինք այդ ուղղությամբ աշխատած, որոնց իմաստասիրական կամ գիտական երկերը հասած են մեր ձեռքը, որ ըսել է՝ ձեռքե ձեռք արտագրվեր են ու կարդացվեր: Անհրաժեշտ է աչքի առաջ ունենանք նաև այդ բացառիկ հեղինակները լրիվ գաղափար ունենալու համար այդ հազարամյա դարաշրջանի մասին:

ա. Առաջին բացառիկ հեղինակը իմաստասեր մըն է. ըստ երևույթին ապրած է յոթներորդ դարու առաջին կեսին, Դավիթ Անհաղթ անունով: Միակն է մեր գրականության մեջ, որ հատուկ իմաստասիրական երկեր է հորինած հայերեն լեզվով հակաճառելով կամ մեկնաբանելով հույն փիլիսոփաներու գրությունները:

Իր կյանքի մասին հաստատ ու որոշ բան մը չգիտենք. երևի Հունաստանի մեջ է ստացած իր փիլիսոփայական կրթությունը. և հետաքրքիր կը գիտնալը, թե իր մեծապանծ «Անհաղթ» մականունը հե՞տն է բերած Հունաստանեն հոն ունեցած իր վիճաբանական ելույթներեն, թե՞ այդ պատվանունը ստացած է մեր հայրենի անհամեմատ ավել համեստ իմաստասիրական միջավայրին մեջ:

Դավիթի երկերն են. «Գիրք սահմանաց», «Մեկնութիւն վերլուծութեանց Արիստոտելի», «Վերլուծութիւն ներածութեան Պորփիւրի»: Կարդացողներու գնահատանքով ասոնք լուրջ իմաստասիրական աշխատություններ են առողջ տրամաբանությամբ և ըմբռնելի լեզվով:

բ. Երկրորդ անունը արդեն գիտական դեմք մըն է ավելի.

բան փիլիսոփա: Կոչվի Անանիա Շիրակացի. ապրած է յոթներորդ դարուն և միակն է մեր եկեղեցական հայրերուն մեջ, որ խորապես սիրած է ու ամբողջովին նվիրված է գիտություններուն՝ հաշվական, բնական և բժշկական գիտություններուն և փիլիսոփայական տեսության:

Իր ամբողջ երիտասարդական տարիները թափառած է քաղաքե քաղաք Փոքր Ասիայի զանազան կողմերը հատկապես գիտնականի անուն հանած անձերու որոնումով և այդ ճամբով ձեռք է բերած իր ժամանակի հնարավոր հմտությունը գիտություններու մեջ: Հասուն տարիքին ալ ինքը ջանացած է իր ամբարածը ավանդելու ուրիշներուն իր մայրենի հողին վրա, թեև, ինչպես կերևա, շատ չէին այդ տեսակի հարցերով լրջորեն խանդավառվողները:

Իր գիտական աշխատություններեն մեր ձեռքը հասած են՝ նախ գրություն մը երկնային բնական երևույթներու մասին՝ անձրև, կարկուտ, որոտում, փայլակ, աղբյուրներու առաջացումը: Ուրիշ երկ մըն ալ կլոր ամպերու և զանազան բնական նշաններու մասին, այսինքն՝ թե զանազան բնական երևույթները ինչի՞ նշան են. ամեն ինչ բացատրված է բնական գիտողություններու վրա հենված: Երրորդ գրություն մը ունի հատկապես երկնքի մասին, թե քանի՞ հարկանի է, լուսնի, արևի, աստղերու, ծովերու ու ցամաքի մասին:

Այս բոլոր երկնային ու մթնոլորտային բացատրություններուն մեջ մասամբ կընդունի հեղինակը հին փիլիսոփաներուն տեսությունները, տեղ-տեղ ալ իբրև հոգևորական կնիք քրիստոնեական աստվածաշնչական տեսակետին վրա: Եվ կջանա ամեն ինչ հստակ բացատրելու և բոլոր բաները գիտական ամբողջություն մը վերածելու:

Իրմեն ունինք նաև թվաբանության խնդրագիրք մը: Խնդիրները շինված են ժամանակի պատմական եղելությունները և իր շրջապատի իրականությունը օգտագործելով, որ խիստ անակնկալ ու հաճելի տպավորություն մը կընե գրաբար գրականության վերացականություններով միայն լեցուն հեղեղին մեջ: Խնդիրները թե՛ ամբողջ թիվերով են և թե՛ կոտորակներով: Ունի նաև առանձին

գրուածք մը, որ Սուրբ գրքի մէջ հիշատակուած չափերն ու կշիռները կը բացատրէ:

Անանիայի այս բոլոր գիտական երկերը թէեւ ինքնին շատ խոր բաներ մը չեն և ընդհանրապէս հետեւողութիւն են հունական նման երկերու, բայց և այնպէս թէ՛ զուտ գիտական և թէ՛ պատմական-քաղաքակրթական իրենց արժէքը ունին:

Յոթներորդ դարէն հասած է մեզի նմանապէս բնագիտական ուրիշ գրուածք մը «Աշխարհացոյց» մը, այսինքն համառոտ աշխարհագրութիւն մը, անշուշտ նորէն հոյն հեղինակներու հետեւողութեամբ, որուն կցված է սակայն Հայաստանի աշխարհագրութիւնը՝ բնական ու քաղաքական, որով գրուածքը կստանայ բնականաբար մասնաւոր կարեւորութիւն մեր գրականութեան մէջ: Գրուածքին հեղինակը որոշ չէ: Կվերագրեն կամ կվերագրեին Մովսէս Խորենացիին՝ Խորենացին ալ համարելով յոթներորդ դարու հեղինակ: Կվերագրեն նաև Անանիա Շիրակացիին: Գուցէ բոլորովին ուրիշ անձ մըն է հեղինակը:

գ. Բացառիկ երկ մըն է գիտական նաև Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», որ գրված է 1184 թվին իր իսկ հիմնած Գետիկ վանքին մէջ: Աս ալ մեր միակ իրավաբանական երկասիրութիւնն է ինքնագիր հայ գրաբար գրականութեան մէջ:

Գործը երեք մասի կբաղկանայ. 1) նախադրութիւն մը. ուր կբացատրէ իր ըմբռնումները դատակազմութեան, դատավարութեան և դատավորներու մասին. 2) եկեղեցական կանոններ և 3) աշխարհական կանոններ:

Գոշէն առաջ գրավոր դատաստանագիրք գոյութիւն ունեցած չէ հայ կյանքի մէջ: Իշխաններն ու հոգեւորականութիւնը առաջնորդված են անգիր սովորութեամբ եկած օրենքներով, թագավորական զանազան հրովարտակներով և կրոնական ժողովներու և հայրապետներու սահմանած կանոններով:

Ռուբինյան իշխանութեան օրով և անշուշտ կյանքի դրած պահանջով ճիշդ նույն միջոցներուն Ներսէս Լամբրոնացին թարգմանած է, ինչպէս արդէն հիշած եմ, բյուզանդական օրենսգիրք մը, հույն գինվորական օրենսգիրքը և թագավոր օրենքներու կարգը: Անտարակույս այդ պահանջներու հետ որևէ կերպով առնչութիւն

ունեցող երեւոյթ մըն է նաեւ Գոշ Մխիթարի գիրքը:

Գոշ կազմած է իր աշխատութիւնները աչքի առաջ ունենալով քրիստոնեայ ազգերու համար ընդհանուր եղող կանոնները, մահմետական իրաւունքի պահանջները, մովսիսական օրէնքը եւ Հայ եկեղեցիի ժողովներու վաւերացուցած կանոնները:

Ամէն տեսակէտէ շատ հետաքրքիր եւ բազմակողմանի կարեւորութեամբ երկ մըն է, որ հարկադրաբար պէտք է ըլլար թերի, քանի որ իրավական օրէնսգիրք մը մշակել սերունդներու պետական ջանքերով կարելի է գլուխ բերել եւ մասնագիտական հասուն փորձառութիւն կը պահանջէ: Պետականութենէ զուրկ, վանքի մը անկիւնը քաշված առաջնորդ մը, իրավական ուսումներէ հեռու, զարմանք է, որ այս տեսակի երկ մը ուզեր է գրել եւ կրցած է իր մտածումը իրագործել:

գ. Ուրիշ անսովոր գրվածք մըն ալ նորեն, որ հեղինակած է Սանահինի վանքի առաջնորդը՝ Գրիգոր վարդապետ. Հեղինակը վախճանած է 1221 թվականին:

Իր գրվածքը, որ տարօրինակ կերպով կկոչվի «Պատճառ լոյն ու նուրր գրեանց», կբացատրէ Սուրբ գրքի ամէն մէկ առանձին գրութեան ե՞րբ գրված ըլլալը, գրվելուն պատճառը. Հեղինակի կյանքին ծանոթութիւններ եւ դժվար կտորներուն մեկնութիւնը: Նոյն ձեւով ալ վերլուծած է նշանավոր եկեղեցական հայրերու երկեր, թէ ո՞վ է հեղինակը, ե՞րբ է գրած, ի՞նչ կյանք է ունեցած, ի՞նչ գրդումներով է գրած եւ թէ ի՞նչ արժէք ունի երկը:

Այսինքն՝ եկեղեցական գրական պատմութեան շատ նմանող աշխատութիւն մը: Հավանորեն այս տարօրինակ գիրքը առեղծված է ինքնիրենը:

Գրիգոր վարդապետ իր վանքի վարդապետարանի աշակերտներուն ավանդած դասերու միջոցին ձեռքը պէտք է ունենար թղթի կտորներ, իբրեւ հուշ իր դասավանդութեան՝ ավելի կամ նվազ մանրամասնութեամբ: Այս հուշագրերն են հավանորեն, որ վերջը վարդապետը միացուցեր է իրարու ու դարձեր է գիրք: Կամ նույն բանը ըրեր են իր աշակերտները:

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԳՐԱԲԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԸ

Ա. ԳՐԱԲԱՐԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

1. ԵՐԵՔ ԱՌԱՆՑՔ

Լենկ Թիմուրի արշաւանքը Փոքր Ասիա, անոր հաջորդող տեղական անվերջանալի կռիւները սև ու ճերմակ ոչխարավոր քյուրտ ցեղերու և վերջն ալ օսմանյան ու պարսկական երկարատև հարձակումները մեկը մյուսի վրա և գրեթե միշտ հայկական հողերու վրայով՝ անկարելի էին դարձուցեր քիչ-շատ կանոնավոր կյանքն ու աշխատանքը հայության այն մասին համար, որ թեև կոտորակված, անտեր ու թշվառ, բայց դեռ կհամառեր չհեռանալ իր հայրենիքեն:

Շատ-շատերը ձգեր հեռացեր էին դեպի արևմուտք, դեպի ծովեզրը, դեպի օսմանյան մայրաքաղաքին մոտերը, ուր համեմատաբար ավելի հանգիստ էր ու հեռու էր գոնե բանակներու շարժումներեն, ընդհարումեն ու ավերումեն, ինչպես և տեղական մանր բռնակալներու, ավազակներու և ըմբոստներու հավելյալ կողոպուտեն ու կեղեքումեն: Հայության խոշոր թիվ մըն ալ, կտոր-կտոր, իրարու օրինակին հետևելով անցած էին Ռումելի, Մոլդավիա և օսմանյան սահմաններեն ալ անդին մինչև Լեհաստան:

Այս հուր ու ավերի, կրոնական արհամարհանքի, տնտեսական քայքայման և շարունակ տեղե տեղ փախուստի դարերուն բնականաբար թշվառացած էր նաև հայ հոգևոր դասը, որ թագավորության կորուստեն և հայ իշխանական ցեղերու ոչնչացումեն ետքը դարձեր էր ինքնին իբրև միակ առաջնորդը հայ անգլուխ

ժողովուրդին: Պակսած էր հոգևորականներուն թիվը, մանավանդ բարձր հոգևորականներուն թիվը. եղածներն ալ ո՛չ շնորհքով նախապատրաստություն կստանային և ո՛չ քիչ-շատ լուրջ կրթություն: Վանքերն ու դպրեվանքերը ավեր էին ու ավարի ենթարկված, եկեղեցիները՝ կիսաքանդ ու անշքացած. ի՞նչ ժամանակ էր ուսման. մատի վրա կհամրվեին նույնիսկ այն բարձր հոգևորականները, որոնք գրաբարը շնորհքով հասկընային. շատ ավելի բացառիկ բան մըն էր, որ գրել կարողանային գրաբար լեզվով:

Գրաբար գրականությունը գործնականապես դադրած էր ԺԵ և ԺԶ դարերու ընթացքին, մինչև ԺԷ դարերուն կեսերը, այսինքն՝ մոտ երկու հարյուր հիսուն տարի Լենկ Թիմուրեն մինչև Շահ-Աբասի իշխանության վերջը:

ԺԷ դարու առաջին տասնամյակներեն Թուրք-պարսկական հարատև պատերազմները վերջապես կանգ կառնեին երկու կողմերու սպառումով և տկարացումով: Եվ մեր դժբախտ հայրենիքն ալ կստանար թեթևացում մը գոնե պատերազմներու բերած վայրագություններեն: Ներքին կեղեքումն ու կյանքի, գույքի անապահովությունը միշտ ալ կշարունակվի թե՛ օսմանցիներուն և թե՛ պարսիկներուն մնացած նահանգներուն մեջ: Եվ այս համեմատական թեթևացումը քիչիկ մը շունչ առնել կուտա մեր արդեն տառապանքի վարժված ու չարքաշ դարձած ժողովուրդին, որ և նորեն կլծվի համառ աշխատանքի և՛ իրեն համար, և՛ իր մարմնին փակած տզրուկներուն համար:

Եվ այս չափը բավական էր, որ նորեն հոս ու հոն վանք մը երևան գա և սկսի հոգևոր կյանքը: Նախ քանի մը հոգևորական անհատներ են միայն, որ կջանան աղոթքներն ու ժամերգությունը քիչ մը կարգի բերել. ձեռք կերկարեն հին գրքերուն, կսկսին քարոզել ու շրջիլ. շուտով անուն կհանեն և վերջապես քանի մը բարեպաշտներու նյութական օժանդակությամբ կվերափոխվին ավերակ վանքի մը մեկ անկյունը և կժողվեն աշակերտներ իրենց շուրջը:

Եվ կսկսի կամաց-կամաց մեկ-երկու կետերու վրա դանդաղ ու տկար զարթոնք մը հին դպրեվանական կյանքի: Սուրբ գրքի ընթերցում ու ավանդում, քարոզչություն, մեկ-երկու բացառիկներ

կհասնին քերականութեան ու տրամաբանութեան, մինչև անգամ Դաւիթ Անհաղթի փիլիսոփայական վերլուծումներուն:

Վերակենդանացման այս համեստ շարժումը իր սկիզբն առաւ Սյունյաց անապատեն, այսինքն՝ Սյունիքի վանքե մը, ուր քանի մը վարդապետներ իրենց վարքով, ուսումով ու քարոզով հռչակ հանեցին: Անոնց օրինակով իրենց աշակերտները գնացին նոր վանական-ուսումնական մեկ-երկու բույներ հաստատելու Սևանի անապատը, Լիմ անապատը, Ջարեքի վանքը: Բաղեշի մոտերը անուն հանեց Ամրդոլի վանքը, Սպահանի մոտ՝ Ջուղայի վանքը. և այդ վանքերեն կանչված կաթողիկոսներու միջոցով շարժումը հասավ Էջմիածին:

Կիլիկիայի Հայ իշխանութեան կործանումեն ետքը կաթողիկոսական աթոռը 1444 թիվեն սկսած նորեն փոխադրված էր Էջմիածին և շատ թշվառ պայմաններու մեջ կապրեր այդ ծանր տարիներուն երկու կռվող բանակներու ճամբուն վրա ինկած: ԺԷ դարու կեսերուն հոն ալ զգալի կըլլայ համեմատական թեթևացում մը: Եվ իբրև պարսիկներու և օսմանցիներու կողմեն ճանչցված Հայ հոգևոր կեդրոն և անոնց վավերացումովը դարձած վերին կրոնապետ Էջմիածինն ու իր կաթողիկոսները որոշ քաղաքական դեր ու դիրք կստանան:

* * *

Էջմիածինեն զատ ուրիշ տեղ մըն ալ կար, ուր նորեն Հայութեան ընդհանուր պետ մը կնստեր: Օսմանյան մայրաքաղաքին մեջ. պատրիարք մը և ան ալ Թուրքերու կողմե Պոլսի գրավված օրեն սկսելով: Եվ այդ օրեն, այսինքն՝ ԺԵ դարու կեսեն մինչև ԺԷ դարուն կեսերը, Հայ պատրիարքները իրարու ետևե կհաստատվեին սուլթանին կողմե և ամբողջ օսմանյան արևմտյան մասերու Հայութեան կրոնապետը կհամարվեին:

Շատ խեղճ դիրք ու վիճակ ունեին և ընդհանրապես իրենք ալ խեղճ դեմքեր են եղած: Պոլիսը ինքը դեռ նոր էր սկսած Հայութեան մը կեդրոնը դառնալ. Հայութեան թիվը մեծ չէր. և մայրաքաղաքն ալ ենիչերիներու քմայքին էր ենթակա. որոնք շա-

բունակ զանազան ձևերով քրիստոնյաները կկողոպտեին. բայց և այնպես Հայերուն ձեռքը դրամ կար. աշխատող էին: Պատրիարքները, որոնք իբրև թե կընտրվեին, ընդհանրապես արևելյան մասերեն եկած Հոգևորականներ էին, սովորաբար իբրև Էջմիածնի կաթողիկոսին ներկայացուցիչ կամ նվիրակը եղող մարդիկ: Տեղին վրա եկած Հոգևորականությունը տասնյակ մը քահանաներ էին միշտ իրարու հետ կռվտուքի մեջ և պատրիարքներուն հետ ալ թեր ու դեմ մշտական աղմուկներու մեջ:

Բայց և այնպես պատրիարք մը կար, որ այս ու այն ձևով Հաջողած էր վավերացվիլ. կար պատրիարքարան մը և պետության հետ որոշ Հարաբերություններ: Եվ այդ պատրիարքներն ալ, ինչպես խեղճ կամ գիտուք գեշ ըլլային, նորեն իրենց ժամանակի ամենեն աչքի ինկնող Հոգևորականներն էին: Եվ այդ պատրիարքներուն նման քիչ-շատ կարդալ գիտցող, գրաբարեն բան մը Հասկցող ու ձեռքին տակ գոնե մեկ-երկու ձեռագիրներ ունեցող ուրիշ մարդիկներն ալ պատրիարքարանի շուրջը կդառնային:

Այս պատճառով ալ մայր Հողին վրա ծայր տված վերածնունդի շարժումը կամաց-կամաց կսկսի զգալի դառնալ նաև Պոլսի մեջ: ԺԷ դարու կեսերեն Պոլիս ալ, այսինքն՝ Պոլսի Հայ պատրիարքարանի շուրջն ալ, կդառնա Հետզհետե կարևորություն ունեցող կեդրոն մը Հայ գրաբար գրականության վերակենդանացման Համար:

Կա և երրորդ կեդրոն մը գրաբար լեզվով գրականության՝ արդեն մահմեդական կայսրության սահմաններեն դուրս՝ Հռոմի մեջ, կաթոլիկ եկեղեցիի Հովանիին տակ:

Կիլիկյան թագավորության տկարացման ու քայքայման օրերեն՝ դեռ ԺԴ դարու սկիզբներեն, լատին կրոնավորներ, օգտվելով մեր ժողովուրդի անտեր ու թշվառ վիճակեն, կաթոլիկություն կքարոզեին և Հովանավորության ու պաշտպանության խոստումներով կջանային արևմտյան Հայերեն շատերը քաշել պապական եկեղեցիին գիրկը: Կաթոլիկ քարոզիչներն ու կաթոլիկացած Հայերը ունիթորներ կկոչվեին, այսինքն՝ միացածներ: Արևելյան Հայ վանքերը խիստ կերպով կընդդատեին ու կմաքառեին այդ կրոնական մարդորսության դեմ. Հայտնի է այդ ուղղությամբ մանա-

վորապես Տաթևի վանքը ԺԴ դարուն վերջը, մինչև ԺԵ-ի սկիզբները:

Ունիթոր քարոզիչները, որոնք իրենց նոր հոտի պետքերուն համար զանազան կրոնական ու խրատական գրքեր կթարգմանեին լատիներենե, մասամբ իրենց կաթոլիկ եռանդեն, մասամբ լատինական լեզվի հանդեպ իրենց ունեցած հիացումեն և մասամբ ալ մեր գրաբար լեզվին ու գրականության հանդեպ արհամարհանք ու ատելություն ունենալով, հետզհետե մեր լեզվին մեջ սկսան մտցնել զանազան լատիներեն բառեր. ասություններ ու քերականական ձևեր. և առաջացավ աղճատված ու չափազանց տգեղ արվեստական լեզու մը՝ ունիթորական լեզուն:

Այս տեսակ լեզվով դեռ ԺԴ դարուն մեջ Բարթողիմեոս եպիսկոպոսի մը ձեռքով թարգմանություններ են կատարված յոթը մահացու մեղքերու մասին, առաքինություններու և մոլություններու մասին, այլև կաթոլիկ ոգիով ուրիշ մեկնաբանություններ ու խրատներ: Իսկ Ներսես Պալենց գրած է գիրք մը. հավանորեն թարգմանաբար, «Գիրք քահանայապետաց Հռովմայ»:

Այս ունիթորական շարժումը միշտ գոյություն ունեցեր է ԺԵ և ԺԶ դարերու ընթացքին մեր մյուս թշվառություններուն հետ միասին և այլևս առանց որևէ կողմե լուրջ դիմադրության, բայց բուն երևույթին ինքն ալ արդեն մեծ թափ մը չէ ունեցած: Արդեն ինքը պապական եկեղեցին մեծ ցնցումի մեջ էր այդ միջոցին ծայր տվող բողոքական անջատումներու կռիվներու ազդեցության տակ:

Բայց շուտով, իբրև հակազդեցություն հետզհետե բռնկող ու տարածվող բողոքականության դեմ, լատին եկեղեցիին մեջ ծնունդ առին և ուժեղցան քանի մը կրոնական միաբանություններ, կրոնական կարգեր, որոնց մեջ ամենեն հայտնին դարձան հիսուսյանները՝ ճիզվիտները: Այս նոր կրոնական կարգերը և՛ գործոն էին, և՛ ձեռներեց, և՛ հարուստ, և՛ ժամանակի լայն-գիտական ուսումով զինված և շատ մոլեռանդ. աշխարհը իրենց ձեռքը առնելու ներքին մղումով և հպարտությամբ:

Այս նոր կրոնավորները շուտով երևցան նաև օսմանյան հողերուն վրա, ուր մահմեդական կրոնին մոտենալու չէին համար-

ձայներ և կ'ըլլային Յոյներուն և Հայերուն նման: Հայերու նման էին ընկած նաև Լեհաստանի մէջ, ուր մեր գաղթականները իրենց արհեստով և օգտակար աշխատանքով համակրութիւն և բարեկեցութիւն էին ձեռք բերած. կաթոլիկ եղբայր հոս ալ կաշխատէր իր գիրկը առնել այդ հայութիւնը և՛ համոզելով, և՛ դպրոցներով, և՛ բռնութեամբ:

Իրենց պրոպականտային նպատակին համար Հռոմ սկսաւ ուժ տալ Հայ-կաթոլիկ կրոնական գրականութեան մը: Եվ այդ նպատակով ալ ԺԷ դարու առաջին քառորդին Հռոմի պրոպականտան ունէր արդէն Հայերէն տպարան և սկսած էր ունիթորական Հայ գրականութեան մը տպագրութիւնը բոլորովին օտար ու հեռաւոր հողի վրայ:

Ահա՛ այսպէսով միաժամանակ երեք կէտերու վրայ՝ Էջմիածին, Պոլիս և Հռոմ, ԺԷ դարու առաջին քառորդին սկսած ծայր կուտայ Հայ գրական նոր շարժում մը, որ հետզհետէ կսկսի ուժեղնալ: Այդ երեք կեդրոնները կպահեն միշտ իրենց կարեւորութիւնը մինչև շրջանին վերջը, մինչև ԺԸ դարուն կէսերը: Եվ ասիկա շատ բնական կերպով, քանի որ գրաբար գրականութիւնը ինչպէս քրիստոնէական հազարամեակին, այնպէս ալ հիմա այս վերածնունդի երկու դարերուն հոգեւորականութեան ձեռքն է միշտ. չունինք ուրիշ գիր գիտցող ու գրութիւններով հետաքրքրուող դասակարգ. այս երկու դարերուն ալ մեր միակ մտաւորականութիւնը հոգեւորականներն են. մատի վրայ համրուող մեկ-երկու աշխարհականներն ալ իրենց ոգիով ու աշխարհայացքով հոգեւորականներ են:

Մեր գրաբար գրականութեան վերջին երկու դարերը ինչքան ալ որ տարբեր ըլլան նախորդ գրաբար դարերէն և ինչքան ալ խոր չափերով ենթարկուին նոր ու օտար ազդեցութիւններու, միշտ կծկուած են դեռ այդ երեք հոգեւոր պետերուն փեշերուն տակը: Մտնեն թէ հետեւէն Էջմիածին, Պոլիս և Հռոմ կներկայացնեն այն երեք բացառիկ հաստատութիւնները, որոնց հրահանգով, համակրանքով կամ գոնէ անոնց զիջումով ու թոյլտուութեամբ հետզհետէ կսկսին փաթթուիլ նոր տեսակի գրաբար գրականութեան մը թելերը:

2. ԵՐԿՈՒ ԴԱՐԵՐՈՒՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Գրաբար լեզվի ու գրականության այս վերջին զարթոնքը արդյունք է երկու բոլորովին տարբեր դրդումներու՝ մեկը ներքին, մյուսը արտաքին:

Ներքին դրդումը ծնած է, արդեն ըսի, քիչ մը ավելի Հանգիստ շունչ քաշելու Հնարավորութենեն, մեր Հոգևոր դասակարգի վերստին ընձյուղվելու բնական պաՀանջեն, թուրանական դարերու ընթացքին Հայ Հոգևոր աշխարՀին մեջ կործանվածն ու փչացածը կերպ մը կարկտելու, Հնար եղածը փրկելու ու վերակենդանացնելու բուն Հայկական ցանկութենեն, մեր Հին վանքերն ու եկեղեցական կարգն ու սարքը, մեր Հին կրոնական ուսումներն ու դպրեվանքերը նորեն աշխարՀ բերելու. Հոգևորական ջանքերեն:

Արտաքին դրդումը կուգա դուրսեն, կուգա այն շփումեն, որ Հայ մարդը, Հայ միտքը կունենա արևմտյան եվրոպական ժողովուրդներու կյանքին, մտածումին ու գրականության Հետ: Մեր գրաբար գրականության վերը Հիշված երեք կեդրոններն ալ մեկը մյուսի ետևեն կենթարկվին այդ օտար շփումին և օտար ազդեցության, եվրոպական մտքին, ճաշակին ու կենցաղին: Եվ այդ ավելի բարձր քաղաքակրթությունը կքաշե, կՀրապուրե, օրինակ կդառնա, կդառնա իրեն Հետևելու և իրեն նմանվելու ուժեղ արտաքին դրդում:

Այս երկու ազդակներու մեկի կամ մյուսի գերակշռության տեսակետեն, ինչպես և անոնց ազդեցության տակ ստացված արդյունքին որակի ու քանակի տեսակետեն գրաբար վերածնունդին երկու դարերը իրարմե մեծ չափերով կտարբերվին:

ԺԷ դարու կեսերեն մինչև ԺԸ-ի կեսերը գրաբար զարթոնքին մեջ ներքին դրդումն է գլխավոր դեր խաղացողը. Հիմնական շարժումը մեր Հայրենի Հողերուն վրա է, և շարժումը վարողը մեր Հին վանականներն են. և շարժումը ինքն ալ նոր սկիզբ առնող և Համեստ շարժում մըն է, բոլորովին Հին ու ծանոթ ոգիով. տեսակ մը դեպի ետ կնային, ո՛չ դեպի առաջ: Տնտեսական ու քաղաքական, քաղաքակրթական շրջապատը դեռ միշտ Հինն է. Հին կյանքն է նվաստության ու թշվառության. Հայությունը թաղված է միշտ

մինչեւ կոկորդը մահմետականութեան ու թուրքութեան ծովուն մէջ, իբրեւ օտարին ու անկարեւոր տարր մը: Ըլլա մայր հողին վրա թէ Պոլսի շուրջը, հնար ու պատեհութիւն չկա մտքի բարձրացման: Հազվագյուտ բացառիկ մարդիկ են, որ գրաբարը կհասկընան ու գրքի հետաքրքրութիւնը ունին: Կարդացածնին ալ, գիտցածնին ալ բառէութեան միայն հոգեւորականութիւնը հետաքրքրող հարցեր են, գուցէ մէկ-երկու հոգի քիչիկ մը աւելի գրական ու պատմական հարցասիրութեամբ:

Գրաբարի վերջընթեր դարը Հայու համար դեռ արեւելք է, թուրանական դարերու շարունակութիւնը: Արեւմտեան շփումը, արեւմտեան քաղաքակրթութեան ազդեցութիւնը դեռ նոր կսկսի միայն, դեռ շատ քիչ չափով, դեռ աւելի հեռվէն եւ ատոր համար ալ այդ դարուն բերածը շատ համեստ ու սակաւ գործունք մըն է, քունէն նոր ելնող մարդու առաջին երեւկուքը:

Բուն գործունքը, շարժումը, գրաբարի խոկական վերակենդանացումն ու նորացումը թէ՛ իբրեւ լեզու, թէ՛ իբրեւ գրական աշխատանք եւ թէ՛ իբրեւ նոր ուղղութիւն կուգայ հաջորդ դարուն, գրաբար գրականութեան վերջին դարուն՝ ԺԸ դարու կեսեն ԺԹ դարուն կեսը:

Հայ հոգեւորականը կերթա Եվրոպա, Հոռմ, թուրանական խեղդող միջավայրեն դուրս Հայ վանք մը հիմնելու, արեւմտեան հողի վրա, արեւմուտքի շունչի տակ, արեւմտեան օրինակով Հայ լեզու ու Հայ գրականութիւն մշակելու համար: Վենետիկի ջրանցքներուն մէջ նստած այդ Հայ վանքը ինքը կդառնա ջրանցք մը Եվրոպան ու մեր ասիական Հայրենիքը իրար կապող գրաբար նոր գրականութեան մը ստեղծումով:

Այն միջոցին, երբ արեւելյան Հայ հոգեւորականը դեպի արեւմուտք կձգտի քիչ մը նոր շունչ քաշել կարողանալու համար, արեւմուտքը ինքն ալ հետզհետե շեշտված չափերով դեպի մեր աշխարհը կքալե. դեպի Պոլիս, իբրեւ քաղաքակրթութիւն, դեպի բուն մեր Հայրենի հողերը, իբրեւ ռուսական արշավանք, այլեւ Հնդկաստանեն, իբրեւ գաղութային անգլիական ազդեցութիւն: Արեւմտյան միտքն ու ճաշակը միաժամանակ երեք ուղղութեամբ՝ արեւմուտքեն, հյու-

սփսեն ու արևելքեն կմտնենա մեզի ու կսահի հայ կյանքի ու ստեղծագործության վրա:

Որով գարթոնքի երկու հիմնական ազդակներեն գլխավորը կդառնա արտաքինը՝ եվրոպական շփումը: Գրաբարի վերջին դարը գրաբար գրականության եվրոպականացումն է, արևմտացումը. և այդ օրինակի ու ազդեցության տակ գրաբար գրականության աշխարհականացումը: Գրիչ շարժողները հոգևորականներն են նորեն, բայց արդեն հոգևորական նպատակներու համար չէ, որ կաշխատին. աշխարհիկ գաղափարներ, աշխարհիկ նյութեր և աշխարհիկ զգացումներ կխուժեն գրաբարեն ներս:

Եվ ամբողջ շարժումի ծանրության կեդրոնն ալ մեր հայրենի հողերը չեն. բուն հայ աշխարհը դեռ հեռու է ինկած այդ շարժումեն և շատ փոքր է իր դերը:

Շատ ավելի աշխատանք կկատարվի Պոլիս, Զմյուռնիա, որոնք թուրքական տիրապետության տակ գտնվող հողերեն ամենեն ավելի շուտ ու սերտ շփման կուգան արևմտյան կյանքին ու մտքին: Ամենեն մեծ աշխատանքը, արդեն ըսի, կկատարվի Վենետիկ, որ ինքնին շատ կարևոր կեդրոն մըն է եղած երկար դարեր արևմտյան քաղաքակրթության, ամենեն ավելի մոտիկեն շփվող արևելքին, երեսը դարձուցած է միշտ դեպի արևելք: Մեր հողերեն ավելի՝ դեր են կատարեր Հնդկաստանի մեկ-երկու քաղաքները և ռուսական քանի մը կեդրոններ: Բոլորն ալ հեռու անկյուններ մեր հայ աշխարհեն:

Գրաբարի վերջին դարը ու գրաբարի վերջին շրաշյլ ծաղկումը գաղութային շարժում է, գաղթականի գրականություն:

Բ. ԳՐԱԲԱՐԻ ՎԵՐՋԸՆԹԵՐ ԴԱՐՈՒՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրաբարի վերածնունդը ծայր առավ մայր հողի վրա ցրված քանի մը վանքերու մեջ, ուրկե գարթոնքի այդ համեստ շարժումը կեդրոնացավ Էջմիածնի կաթողիկոսներուն շուրջը. կաթողիկոսները կուգային այդ արթնցող վանքերեն:

Էջմիածնի մէջ բացին նախ դպրանոց մը: Հայ հողի վրայ մամուլ դեռ գոյութիւն չունէր: 1656 թւին Էջմիածնէն Եւրոպա զրկեցին սարկաւագ մը քանի մը եկեղեցական գրքեր տպել տալու համար: Թէ՛ սարկաւագը և թէ՛ մանաւանդ անոր գործը շարունակող Երեւանցի Ոսկան վարդապետ տպագրեցին բաւական թիւով գրքեր Ամստերդամ քաղաքին մէջ. այդ գրքերէն հատկապես պէտք է յիշել Աստուածաշունչի տպագրութիւնը և Առաքել Դաւրիժեցիի դեռ նոր գրած պատմութիւնը:

Էջմիածնի մէջ իբրև ուսուցիչ և իբրև թարգմանիչ ու գիտնական անուն հանեց Ստեփաննոս վարդապետը, որ իր կրթութիւնը ստացած էր Լեհի վարժարանին մէջ: Թարգմանած է լատիներէնէ Դիոնիսիոս Արիսպագացիի աստուածաբանական և իմաստասիրական երկերը, ինչպես և Թովմա Աքվինացիի «Յաղագս Հոգւոյ և Հրեշտակաց» գիրքը. թարգմանած է «Բուրաստան աղօթից», այլև, շատ հետաքրքիր է, թարգմանած է Ղուրանը:

Բայց այդ դարուն Էջմիածնի տուած ամենէն կարեւոր գրական դէմքն է Առաքել Դաւրիժեցին, որ իր ժամանակի շատ մը իր նման հոգեւորականներու պես շատ թափառած է և շատ ալ մեր հին ձեռագիրներուն ետեւէն ինկած մարդ մըն էր, որ իր ծերութեան օրերուն 1651-1662 թվականներու ընթացքին գրած է իր պատմական աշխատութիւնը: Այդ գրքին մէջ կնկարագրէ Շահ-Աբասի Հայաստան գալէն մինչև հեղինակի խոր ծերութեան օրերը վաթսուն տարուան շրջան մը. հայերու բռնի Նոր Ջուղա փոխադրուիլը, մեր արեւելյան աշխարհի աւերումը, կաթողիկ քարոզիչներու բերած խառնակչութիւնը Արեւելյան Հայաստանի մէջ, Լեհաստանի Հայ գաղութին վիճակն ու բռնի լատինացումը, ինչպես և այդ տարիներու Էջմիածնի կաթողիկոսներուն պատմութիւնը: Հայ-քրիստոնյա պատմիչ մըն է իր բոլոր գիտցածը ըսելու և ամեն ինչ ճշմարիտ ներկայացնելու ջանքով. ուժեղ դեմք մըն է, տեղ-տեղ շատ խիստ շեշտերով:

Առաքել Դաւրիժեցիին ժամանակակից Էջմիածինը տուած է նաև երկրորդ պատմիչ մը. նորեն այս ու այն կողմ շատ թափառած հոգեւորական մը՝ Զաքարիա սարկաւագ: Իր պատմութիւնը կսկսի հին դարերէն համառոտ տողերով. աւելի մանրամասն կանգ կառնէ

օսմանցիներու և պարսիկներու երկարատև պատերազմներուն վրա և կնկարագրե Հայ ժողովուրդի կրած տառապանքը. իր պատմությունը կհասցնե մինչև իր մահվան թվականը՝ 1700: Ճիշդն ու առասպելը իրար չփոթած խառն գրություն մըն է, ուր բազմաթիվ ու հետաքրքիր գծեր կան սակայն անմիջապես կյանքի իրականութենեն քաղած:

Էջմիածնի կաթողիկոսության սերտորեն կապված հաստատություն մը եղավ Սպահանի մոտ հիմնված Նոր Ջուղայի վանքը, ուր Ամլորդի վանքեն ու Սյունիքի անապատեն եկող վարդապետներ իրարու գալով հանկարծ գրական կեդրոն մը դարձուցին այդ օտար հողին վրա բարձրացող վանքը ԺԷ դարու երկրորդ կեսին. և անոնք հանեցին հատկապես հիսուսյան կրոնավորներուն դեմ իրենց մղած պայքարով, իբրև պաշտպան Հայ դավանաբանության: Դպրոց մը բացին վանքին մեջ և մեծ դժվարությամբ հաջողեցան նույնիսկ տպարան մը հիմնելու:

Կրոնական-վիճաբան հեղինակներու փունջ մը տվող այդ վանքը տվավ նաև մեկ-երկու կաթողիկոսներ Էջմիածնին: Գրական դեմքերուն մեջ հայտնի դարձավ մասնավորապես Հովհաննես Մրքուզ վարդապետը (+1709), որ գիտուն անձ էր, կտիրեր արաբ ու պարսիկ լեզուներուն և ունի գրություններ նաև այդ լեզուներով: Իր գործերեն նշանավոր են համարված «Գիրք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» և «Գիրք պատմութեան վիճաբանութեան առ Շահ Սլեման պարսից»: Ունի նաև գրած քերականություն մը և տրամաբանություն:

Իսկ Խաչատուր վարդապետ մը նույն վանքեն գրած է «Պարսից պատմութիւնը»՝ անշուշտ քաղելով պարսկական նման գրություններե:

* * *

Պոլսական գրաբար գրականություն մը կրնանք ըսել, որ սկսած է Թուրքերու կողմե Պոլսի գրավման օրեն, հոն Հայ պատրիարքության մը հաստատման օրեն, այսինքն ԺԵ դարու կեսեն: Աբրամ Անկյուրեցին է առաջին հեղինակը, որ գրած է ողբ մը, ուր

իբրեւ ականատես կնկարագրէ Պոլսի գրաւման պատմությունը:

ԺԶ դարու կէսէն Աբգար դպիրը, որ Հռոմի ու Վենետիկի մէջ հայերէն լեզուով տպագրության առաջին փորձերն էր ըրած, կուգայ Պոլիս եւ հոն ալ կհիմնէ տպարան մը 1596 թվականին եւ կտպագրէ «Մաշտոց»:

Պատրիարքական գահին վրա ելլող ու իջնող վարդապետներուն մէջ կան քանի մը հատ մեր հին կրօնական գրքերուն ու պատմության քիչ-շատ տեղյակ մարդիկ, որոնք ոչ միայն խօսքով ու քարոզով, այլեւ գրով ու գրքերով կպայքարին հայ եկեղեցիի դավանական ու իրավական առանձնահատկությունները պաշտպանելու համար ճիզվիտներու ոտնձգություններուն դեմ, որոնք սկսած էին աղմուկ ու հակառակություն սերմանել հայ համայնքին մէջ ԺԷ դարուն սկիզբներեն:

Վերջընթեր դարու պոլսական ամենեն հետաքրքիր գրական դեմքերը երկու հոգի են: Նախ՝ Գրիգոր Դարանաղցի, օսմանյան կիսավեր ասիական նահանգներուն մէջ շատ թափառած եւ ժամանակի պատրիարքարանի խնդիրներուն մէջ դեր ունեցող վարդապետ մը, որ գրած է «Ժամանակագրութիւն» 1595–1640 թվականներուն համար: Խառնակ կենսագրական գրություն մը, ուր կուտայ սակայն իր ժամանակի մասին շատ մը տեղեկություններ եւ կենդանի պատկեր մը իր ժամանակի հայության կյանքին ու վիճակին:

Երկրորդ դեմքը աշխարհական մըն է, բայց ընտանեկան ու պաշտոնի կապերով սերտորեն կապված է հոգեւորականության եւ լիովին հայ հոգեւորականի մը աշխարհայացքը ունի՝ Երեմիա Չելեպի: Շատ կարդացած, լեզուներու հմուտ մարդ մը, որ մեռած է 1695-ին: Գրած է իր երիտասարդ տարիներու կենսագրական հուշագրություններ, որ Պոլսի ու շրջակայքի հայության ապրուստի, կյանքի ու քաղաքական պայմաններու մասին, ինչպես եւ հոգեւոր դասակարգի ազատ ու ինկած գրության մասին շատ կենդանի պատկերացում մը կուտայ: Ունի նույնպես ոտանավորով գրած Ստամպոլի նկարագրություններ, որ մեզի երկու դար առաջ Պոլսի տեղագրությունը եւ քիչ մըն ալ կյանքն ու պայմանները ճանչնալու տեսակետեն արժեք ու հետաքրքրություն ունի:

* * *

Հռոմի մէջ մինչև ԺԷ դարուն կեսերը տպված գրքերը «Քրիստոնէական վարդապետութիւն» է, «Ուղղափառ դաւանանք» ու նման զուտ կրոնական պրոպականտայի գրքեր:

Առանձին պետք է հիշել վիպական գիրք մը, որ թարգմանված է Հայերենի դեռ 1614 թվին Սամոսցա քաղաքին մէջ. գրքին անունն է «Գիրք կայսերն Փոնցիանոսի եւ եօթն իմաստասիրաց»:

Դարու երկրորդ կեսին գրքերը միշտ կրոնական են նյութով ալ, ոգիով ալ, բայց քիչ մը ավելի լայն իմաստով: Մեծագույն մասը անշուշտ թարգմանական գրություններ են: Գլխավոր աշխատող դեմքն է Հովհաննես Հոլով (+1691): Ահա՛ քանի մը վերնագիրներ իր աշխատանքեն՝ «Պարտէզ հոգեւոր», «Նորագոյն ծաղիկ զօրութեանց», «Նուագարան կուսին», «Հայելի ճշմարտութեան», «Խրնկումն քրիստոնէական», «Պարզաբանութիւն սաղմոսի»: Պետք է խոստովանինք, որ կա գեղարվեստական որոշ ճաշակ գոնե վերնագիրներու ընտրության վրա:

Այս միևնույն Հոլովն է, որ գրած է հայ լեզվի քերականություն մը՝ «Զտութիւն հայկաբանութեան»՝ զտորեն աղճատելով Հայերեն լեզուն լատիներենի քերականությանն ու բառակազմությանը նմանցնելու համար, այսինքն՝ ունիթորական լեզվի քերականացումը: Հովհաննես Հոլով գրած է նաև «Համառօտութիւն ճարտասանականի արհեստի»:

Կա և Վարդան Հունանյան մը և ուրիշ ճիզվիտ վարդապետ մը, որոնք Հայերեն լեզվով գրքեր են շարադրած: Նույն ժամանակները (1660) թարգմանված է լատիներենն Ստեփաննոս Լեհացիի ձեռքով «Հայելի վարուց, որ է ֆրանկաց հարանց վարք», այլև Հովսեփոսի «Գիրք պատմութեանց վասն պատերազմին Հրէից»:

Կհիշվի, որ նույն ժամանակները գրված ու խաղացված է լեհական Լվով քաղաքի հայ-կաթոլիկ դպրոցին մէջ առաջին գրաբար թատերախաղը՝ «Սրբուհի կոյսն Հռիփսիմէ» 1665-ին:

Այս լեհական հայ-կաթոլիկ վարժարանին մէջ կուսուցանեին քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, պոե-

տխկոտություն և ըմբոստացություն: Այսինքն՝ կաթոլիկ հոգևորականներ պատրաստելու աշխատող հաստատություն մըն էր և կհամապատասխաներ մեր վանական դպրոցներուն:

Գ. ԳՐԱԲԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԴԱՐՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՆՔԸ

Գրաբարի վերջընթեր դարը թե՛ Պոլիս և թե՛ Հայկական նահանգներուն մեջ դեռ արևելք է, թուրանական արևելք. բայց արդեն սկսած է թեթև շփում մը արևմուտքի հետ, և այդ շփումը բերող ամենեն կարևոր տարրը կաթոլիկ քարոզիչներն են:

Մեր հոգևորականները իրենց համեստ պատրաստությամբ հարկադրված էին դուրս գալու անոնց դեմ վեճի ու դիմադրության. և այդ պայքարներու միջոցին հետզհետե ավելի կզգային, որ շատ թերի է իրենց ուսումն ու զարգացումը: Եվ անձնական հարաբերություններու ատեն ալ կտեսնեին, որ իրենք դուրսի աշխարհին անծանոթ մարդիկ են, որ դուրսը արևմտյան երկիրներուն մեջ բաներ կային և՛ հետաքրքիր, և՛ գրավիչ, և՛ նոր ու բարձր, ինչպես և բարձր ուսումներ թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ:

Եվ պատանի ու երիտասարդ հոգիներու մեջ, որոնք բնականեն ընդունակ էին, ուսումնասեր ու աչքաբաց ու կձգտեին կրոնական կոչումի, կամաց-կամաց կշեշտվեր ավելի լայն հորիզոններու պահանջը: Իրենց շրջապատող իրականության մեջ անկարելի էր հասնիլ բարձրություններու, բոլորովին խամրած էր քրիստոնեությունը մահմեդական տիրապետության տակ: Այն քանի մը իրարմե հեռու վանքերու մեջ եղած պատառ մը ուսումն ալ այլևս բավարարել չէր կրնար այդ բացառիկ կերպով խթանված ու ծարավված հոգիներուն, և որոնք կամա-ակամա իրենց երազներն ու հայացքը կդարձնեին դեպի լատին աշխարհը, դեպի Հռոմ, որու անունով կխոսվեր շարունակ, խոստումներ կըլլար և որ տիրող էր եղեր դարեր ու դարեր իբրև հզոր կայսրություն և որ հիմա ալ քրիստոնեության ամենեն ուժեղ կեդրոնն էր, իբրև պապականություն. և

Հոնկե կուգային, թեև Հակառակորդ, բայց շատ ավելի զարգացած, ավելի կիրթ ու ավելի ճարպիկ Հոգևորականներ. ուրկե սկսեր էին գալ նոր տեսակի գրքեր, տպված գրքեր, թեև ունիթորական լեզվով ու ոգիով, բայց Հայերեն գրքեր:

Այս տեսակի երիտասարդ ու ծարավ վանական մըն էր Մխիթար Սեբաստացին, որ իր ուզած ուսումնական վանքը Հայ Հողի վրա գտնելու անկարող, վերջն ալ իր ուզած վանքը այդ Հողերուն վրա Հիմնելու անկարող, կձգե, կերթա արևմուտք, մաՀմետական-թուրքական սաՀմաններեն դուրս, օտար Հողի վրա և օտար դավանանքի մը տակ իր պասուկը Հագեցնելու, իր երազած ուսումնական վանքը Հիմնելու ԺԸ դարուն սկիզբը:

Եվ այդ խիզախ քայլով Հիմնական փոփոխություն մը կբերե մինչև այն ատեն լատինականության և գրաբար գրականության մեջ տիրող փոխադարձ Հարաբերության: Մինչև Մխիթարի ու Մխիթարյան վանքի լուրջ գործի սկիզբը Հայ լեզուն ու գրականությունը գործիք մըն էր միայն կաթոլիկ պրոպականտային ձեռքը. անոր փույթը չէր Հայությունը և Հայ լեզուն, իր միակ մտաՀոգությունը կաթոլիկությունն էր: Մխիթար իր աշակերտներուն Հետ եկած էր Մորեա, ետքն ալ Վենետիկ ճիշդ ատոր Հակառակ դիտավորությամբ. իրեն Համար պապական Հպատակությունը և լատինական եկեղեցին գործիք մըն էր, բուն նպատակին Հասնելու միջոց մը. և այդ նպատակն էր նախ մաքրել մեր գրաբար լեզուն լատինականության բերած խառնակություններեն և բարձրացնել Հայ լեզուն ու գրականությունը: ԺԸ դարու երկրորդ կեսին արդեն մեծ է Մխիթարյաններու դերն ու ազդեցությունը Հատկապես Հայ լեզվի ու տպագրության գործին մեջ. իսկ ԺԹ դարու առաջին կեսին մանավորապես մեծ է իր զուտ գրական-գեղարվեստական թարգմանական գործունեությունը. որով ան իր կնիքը դրած է ո՛չ միայն իր վանքի, այլ բոլոր երկիրներու մեջ մշակվիլ սկսող մեր ամբողջ գրականության վրա:

* * *

Գրաբար գրականության վերջին դարու վերջին տարապայման ու անժամանակ ծաղկումը կապես Մխիթար Սեբաստացիի 1713 թվականին Վենետիկի մեջ Հիմնադրած վանքին աշխատու-

թյուններուն արդյունքն է: Եվ շատ մեծ է աշխատանքը. մոտա-վորապես դարու մը ընթացքին՝ ԺԸ-ի կեսեն մինչև ԺԹ-ի կեսը, Հարյուրի չափ Հեղինակներ Հազար անուն գիրք են Հրատարակած:

Նախ և առաջ տպարանական աՀագին գործ: Մայր Հողի վրա այդ միջոցին տպարան կար միայն Էջմիածին, շատ Համեստ տպարան մը, ավելի ևս Համեստ աշխատանքով: Տպարաններ կային նաև Պոլիս, ռուսներու գալեն ետքը՝ նաև Թիֆլիս և Աստրախանի մեկ-երկու անկյունները, բայց բոլորն ալ շատ երկրորդական արժեքով ու աշխատանքով: Այս ընդՀանուր աղքատության դիմաց Վենետիկի Հայ տպարանը Հիացման առարկա էր թե՛ տպագրու-թյան մաքրությամբ ու գեղեցկությամբ, թե՛ ներքին ու արտաքին ճաշակով: Իզուր չէր, որ Վենետիկի մեջ էին. Վենետիկը այդ շրջանին Եվրոպայի տպարանական արվեստի գլխավոր կայան-ներեն մեկն էր: Այնպես որ նյութեն անկախ՝ գիրք, գրքի սեր ու գրքի ճաշակ սկսավ տարածել Վենետիկը Հայ գաղութներուն մեջ ամեն կողմ, քիչիկ մըն ալ մայր երկրին ներսը:

Գալով այդ գրքերու ներքինին՝ ամենեն վեր պետք է ընդգծել Հին Հայ գրականության ձեռագիրներուն տպագրությունը, որոնց մեկ մասը կտպագրվեին նոր ու առաջին անգամ. մյուս մասը, որ արդեն տպագրված էին ուրիշ տեղեր, վերստին կտպվեին շատ ավելի խնամքով, սովորաբար քանի մը ձեռագիրներու բաղդատու-թյամբ. թեև անշուշտ ո՛չ արդի գիտական պաՀանջներուն բավա-րարել կարողանալու չափ: Ասով Հին ձեռագիրները արագ բազմա-պատկվեցան. շատերու Համար դյուրամատչելի դարձան, որով և շատցան կարդացողները. Հայ գրականությունը սկսավ դուրս գալ իր թաքստոցներեն և սկսավ ծանոթ դառնալ գեթ գրաբարը կար-դալ ու Հասկնալ կարողացողներու շրջանակին մեջ: Ասիկա առա-ջին լայնացումն է մեր գրականության, որ անշուշտ Վենետիկը չսկսավ. ո՛չ ալ միայն Վենետիկը կատարեց, բայց շատ մեծ եղավ Սուրբ Ղազարի վանքին դերը այդ գործին մեջ:

Ինչ կվերաբերի նոր ինքնագիր երկերու արտադրության՝ Մխիթար և իր անմիջական աշակերտները իրենց գլխավոր ուշադ-րությունը դարձուցին ամենեն առաջ գրաբար լեզվի զտումին վրա. ձեռնարկեցին խմբական աշխատանքով և Հին Հայ մատենագիր-

ներու լեզվին վրա հենված՝ Հայկազյան լեզվի բառարանը կազմելու. հոտկե քաղեցին Առձեռն բառգիրքը առօրյա ու դպրոցական գործածության համար: Այլև իրարու ետևե հրատարակեցին քանի մը քերականություններ գրաբար լեզվի, որոնցմե ամենեն վերջինը և ամենեն լրիվը Արսեն Բագրատունիի «Զարգացելոց քերականութիւնն է»:

Մնացած գրքերուն մեկ շատ ստվար մասը անմիջական հետաքրքրություն չունի գրականության համար. խոշոր մաս մը կաթոլիկ կրոնական ու դավանական գրություններ են, օրվա վեճերուն կապված երկեր, որոնք հայ հոգիին հետ գործ չունին: Ահագին դեզ մըն ալ դպրոցական պետքերու համար թարգմանված կամ խմբագրված գրքեր են, որոնք ուսման գործին ծառայած են երբեմն և դեռ մասամբ ալ կծառայեն, բայց դուրս կմնան բնականորեն գրական ստեղծագործություններու նեղ սահմանեն:

Իսկ գրական այդ սահմաններուն մեջ իյնող երկերը Մխիթարյան հայրերուն կարելի է խմբել երեքի՝ ինքնագիր հայագիտական աշխատություններ, թարգմանական գործունեություն և գեղարվեստական ինքնագիր գրականություն:

* * *

Հայագիտական աշխատանքներու մեջ ամենեն կարևորը Միքայել Չամչյանի եռահատոր «Հայոց պատմությունն» է, ուր խտացուցած է հայ բոլոր պատմիչներու տված տեղեկությունները՝ օգտվելով նաև հոս ու հոն օտար աղբյուրներե և լրացուցած իր կողմեն ԺԸ դարու պատմությունը մինչև 1784 թվականը: Շատ կարևոր ամփոփում մը հայ պատմագրության, որ մինչև հիմա ալ կարելի է օգտագործել, բայց որ անշուշտ շատ հինցած է արդեն և մեծ ալ չէ եղած միշտ իր գիտական արժեքը: Կպակսի իրեն երևույթները գիտականորեն կշռելու և քննադատելու ոգին և դեպքերու խոր պատմական ըմբռնում մը: Եվ վերջապես մեկուկես դար է անցած վրայեն: Պետք չէ մոռնանք, որ մեծ դեր է խաղացած այդ գիրքը հայության համար ամբողջ դար մը. և դեռ մինչև հիմա չունինք պատմական ամբողջական նոր երկ մը, որ գործածութենե հաներ

կարդանար Զամչյանի Հատորները: Հիմա միայն նոր ճիգեր կըլլան մեր Հայ Համալսարանին մէջ:

Պատմական-Հայագիտական աշխատանքներուն պէտք է Հիշել Ղուկաս Ինճիճյանի (+1833) նորեն եռահատոր «Հնախօսութիւնը», որ Հին Հայ կյանքի Հաստատութիւններուն ու կազմակերպութիւններուն ուսումնասիրութիւնն է՝ նույն առավելութիւններով ու նույն թերութիւններով, ինչ որ Զամչյանը: Ունի նաև «Հին Հայաստանի աշխարհագրութիւնը»:

Պատմական-աշխարհագրական ուսումնասիրութիւններու նվիրված մյուս կարևոր դեմքն է Ղևոնդ Ալիշան (+1901), որու «Շիրակը», «Այրարատը» և «Սիսուանը» աշխարհագրութեան մէջ Հյուսված պատմութիւն է և քաղաքակրթական բազմատեսակ տեղեկութիւններ: Շատ խառնակ դասավորութեամբ, բայց ընդհանրապէս պիտանի ու Հետաքրքիր մանրամանութիւններ ու նյութեր ամբարված են միասին: Եվ սրտով ու սիրով Հավաքված ու գրված երկեր են այդ Հաստափոր տարօրինակ պետուքերները, ուր կպակսի նորեն գիտական մտքի սիսթեմն ու խորացումը: Ալիշանը ունի նաև բազմաթիվ ավելի փոքր ու ավելի մասնական Հարցերու շուրջ գրած Հատորներ՝ «Շնորհալի և պարագայ իւր», «Հայ-Բուսակ», «Հին Հաւատք Հայոց», «Արշալոյս քրիստոնէութեան», «Հայապատում», «Հայ-Վենետ»: Եվ այս բոլոր և ասոնց նման ուրիշները շատ կարդացված գրքեր են եղած և սիրված Հեղինակի տաք շունչին պատճառով:

Նմանապես մեծ է Վենետիկի բաժինը գրաբարի թարգմանական գրականության գործին մէջ: Քրիստոնեական Հազարամյակի ընթացքին օտար գրականութենեն թարգմանելու Համար կընտրվեին ասորի և Հույն եկեղեցական Հայրերուն երկերը և քանի մը Հույն իմաստասիրական վերացական գրութիւններ. բոլոր մեր Հոգևոր Հայրերը զգուշութեամբ խուսափած են Հույն-Հռոմեական աշխարհի Հեթանոս ստեղծագործութիւններեն՝ թե՛ պատմական, թե՛ գեղարվեստական:

Հիմա դերը փոխված է, փոխված է և տեղը: Եվրոպական վերածնունդի դարերեն սկսած Հույն ու լատին Հեթանոս գրականությունը ամեն տեղ գնահատված է և ամենեն առաջ Իտալիայի

ու Հռոմի մեջ: Հեթանոս են հիմա ամենքը իրենց հոգիով և՛ աշխարհիկ իշխանները, և՛ հոգևոր իշխանները: Լատին բարձր հոգևորականության կարևոր դեմքերեն շատ-շատերը հեթանոսներ են եղած նաև իրենց կյանքով ու գործով, մնացածներն ալ գոնե իրենց երևակայության մեջ ու գրական ճաշակով:

Այս միջավայրին մեջ մեր խեղճ ու ճգնավոր գրաբար գրականությունը վերջապես իր վրեժը կառնե կյանքեն: Մխիթարյան հայրերը իրենց փոքրիկ ու սիրունիկ կղզիին մեջ սիրեր ու հափշտակվեր են գլխավորապես հեթանոս հեղինակներով, որ և թարգմաներ են հաճույքով: Գեղարվեստական երկերեն՝ Հոմերոս, Էսխիլես, Սոֆոկլես, Եվրիպիդես, Վերգիլիոս. նոր հեղինակներեն Տանթե, Թասսո, Ռասին, Քորնեյլ, Ֆենելոն, Միլտոն, Պայրոն: Պատմագիրներեն՝ Պլուտարգոս, Սալուստիոս, Կեսար, Տակիտոս. այլև Սենեկա, Կիկերոն, Դեմոսթենես և ասոնց նմանները:

Մեկ անգամեն հայ գրականության անպաճույճ սեղանին վրա կնետվին արևմտյան մտքի լավագույն ստեղծագործությունները՝ խնամոտ ու ճաշակավոր թարգմանությամբ, և՛ արձակ, և՛ չափով: Շռայլություն մը, որ երազի մեջ անգամ չէր տեսած մեր կրոնավոր գրաբար գրականությունը. և այս բոլորը մեկ, դիցուք երկու սերունդի ձեռքով: Մենք հիմա դժվար կըմբռնենք, թե ի՛նչ հոգեկան ցնցում և հայացքի ի՛նչ ընդլայնում կբերեին այդ երկերը իրենց ժամանակին մեր կարդացող սերունդին, օրինակ՝ երիտասարդ Խրիմյանի մը, որ կկարդար ու կմտածեր՝ Այգեստանի մեկ անկյունը առանձնացած:

Թարգմանական այս աշխատանքին մասնակցած են Մխիթարյաններեն շատերը. բայց մասնավոր կերպով պետք է հիշել Եղիա Թովմաճյանի և Էտուարդ Հյուրմյուզի անունները. առաջինը իբրև Հոմերոսի թարգմանիչ, երկրորդը՝ իբրև Վերգիլիոսի թարգմանիչ, ինչպես և ուրիշ կարևոր հեղինակներու:

Հին հայ ձեռագիրներու հրատարակությունը և հայագիտական հավաքող ու համադրող աշխատանքը Մխիթարյան հայրերու շատ նպաստեցին հայ լեզվի, հայ կյանքի ու հայ անցյալի սերը արծարծելուն ժԹ դարու առաջին կեսին մեր գաղութներու երիտասարդության հոգիին մեջ, հայրենասիրություն ու «ազգասի-

րություն» ներշնչեցին Պոլիս, Զմյուռնիա, Նախիջևան, Մոսկվա, Թիֆլիս և քիչ մը ամեն կողմ: Իսկ այս գրական արժեքավոր հին ու նոր ստեղծագործություններուն թարգմանությունները ավելի գաղութներու մեջ աճող նոր սերունդներուն գրական ճաշակ, գրական ավելի լայն հորիզոն և հին եղածներեն շատ տարբեր օրինակներ ու մտածումներ:

Գրաբարի գործածությունն ընկնելը և մեր արդի գրական նոր լեզուներու արագ տիրապետությունը հրապարակեն քշեցին այդ ազնիվ գրքերը դեպի գրադարաններուն քիչ բացվող դարակները: Բայց պատմությունը միշտ պարտական է ընդգծելու, որ անոնք Հայ հոգիի կրթության գործին մեջ մեծ դեր են խաղացած ամբողջ դար մը:

* * *

Մխիթարյան Հայրերու գեղարվեստական ինքնուրույն երկերը, այս առատ ու հաջող թարգմանություններուն հակառակ, նույն հաջողությունը չունին դժբաղդաբար կամ բնականաբար: Մայր հողեն կտրված ըլլալը և վանքի մը պատերուն ետևը ապաստանած կուսակրոն մը ըլլալը գեղարվեստական արժեքավոր ստեղծագործություններու ասպարեզ չի տար: Ասիկա ըսել չէ, թե Մխիթարյանները, ինչպես անխտիր բոլոր Հայ հոգևոր հայրերը, ոտանավորներ ու «բանաստեղծություններ» չեն գրած: Ընդհակառակը. քիչ կպատահի հոգևոր հայր մը, որ քանի մը ոտանավոր չարադրած ըլլալու շատ ներելի մեղքը գործած չըլլար: Աններելին այդ գրությունները տպագրության տալն է. հանցանք մը, որ գործած են նաև Մխիթարյանները և հենց իրմեն Մխիթարեն սկսած: Մխիթարյան հայրերը նախ իրենց հատուկ տաղարաններն ունին տեսակ մը ներքին գործածության համար. անկե ետքն ալ բավական անհատական հատորներ ու հատորիկներ կան այս ու այն հոր անունով, բոլորն ալ գեղարվեստական տեսակետեն ավելորդ հրատարակություններ:

Այդ գրություններուն մեջ նորեն ամենեն հաջողները աղոթքներն են և աղոթքի նմանող խոկումներն ու իմաստասիրական

գեղումները. այն պարզ պատճառով, որ հեղինակը հոռ առանց վերապահության կրնա արտահայտել իր զգացումները: Մնացած քնարերգական կտորներուն մեջ, նույնիսկ բնության նկարագրու-թյուններուն մեջ, բաներ կան, որ չեն բուխր, բաներ մըն ալ կան, որ կեղծ կըսվին: Որ կողմէն ալ որ մոտենանք հարցին՝ վանականի մը համար այդ «բանաստեղծությունները» անհարազատ աշխարհ մըն է: Այլիշանի զգացումով լեցուն հոգին անգամ իր գրաբար ոտանավորներու հատորներուն մեջ քաշող ու ու արժեքավոր շատ քիչ տողեր ունի:

Իսկ իբրև վիպական ստեղծագործություն Վենետիկի վանքը տվեր է, գրաբար գրականության իբրև վերջակետ, մեկ շատ հետաքրքիր երկ, կեղծ-դասական հետևողություն մը Հոմերոսին: Եվրոպական բոլոր մեծ ազգերը ունին այդ տեսակի կեղծ-դասական ստեղծագործություն մը, նմանողություն ու հետևողություն «Իլիականին» ու «Ոդիսականին»: Հայերս ալ ո՛չ մեկ մեծ ազգէ ետ չմնալու համար ունինք մեր «Հայկ դյուցազն»:

Դուրսով-ներսով շատ պատկառելի խոշոր հատոր մը Արսեն Բագրատունիի (+1866): Հայկի ու Բելի պատմությունն է՝ դյուցազ-ներգության վերածված Հոմերոսի նմանությամբ:

Էջեր կան կենդանի շունչով՝ հակառակ իր ծանր գրաբարին. պատկերներ ու գծեր հաճելի: Հեղինակը երևակայելու ուժ ունի և կառուցումներու կարողություն, բայց ինչպես բոլոր այդ կարգի կեղծ-դասական հետևողությունները, զուրկ է անմիջական հոգեկան հորդումէ, ներքին հարազատ ստեղծագործութենէ. և բնական կերպով շինված բանի մը տպավորությունը կընե՝ փոխանակ ստեղծված բան մը ըլլալու: Ատոր համեմատ է և իր լեզուն. ո՛չ թե բնական ինքնահոս նրբություն մը, այլ հարուստ ու բազմերանգ ըլլալու փնտրտուք մը, որու համար և շատ հարգված է գրաբարի մասնավոր սիրահարներէ:

Եթե այս դյուցազներգությունը աշխարհիկ լեզվով գրված ըլլար՝ գուցե ավելի մեծ դեր մը խաղար, քիչ մըն ալ ավելի հարա-զատ դառնար և անպայման ավելի երկար ալ դիմանար: Բայց պատմությունը «եթե» չընդունիր: Գրաբարի հրապարակեն քաշ-վելովը «Հայկ դյուցազն» ալ քաշվեցավ վեհորեն հայ գրական

պատմության տաճարը և հոն կեցած է հիմա գլուխը բարձր բռնած, հին աշխարհներեն բերված ահագին թևավոր ցուլերուն նման, որոնք եվրոպական մյուզեներուն մեջ վերեն կնային վարեն նայողին և կարծես չեն սղմիր իրենց հյուրընկալող շենքին մեջ:

2. ԳՐԱԲԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԴԱՐԸ ՊՈԼԻՍ

Թուրքիայի մեջ ալ ԺԸ դարու կեսերեն շատ զգալի չափերով կմեծնա արևմտյան ժողովուրդներու հետ օսմանյան կապն ու շփումը: Եվրոպական դեսպանները հետզհետե կսկսին ավելի ու ավելի ազդեցություն բանեցնել կաթոլիկությունը պաշտոնապես ճանչցնել տալու և կրոնական ներկայացուցիչ ունենալու ճիգեր թափել, հատկապես աչքի կընկնի ֆրանսական դեսպանը:

Եվրոպական ազդեցությունը, օրինակը, որոշ չափով և ճնշումը այնքան կավելնա, որ ԺԹ դարու սկիզբեն հարկ կդառնա պետական առանձին հայտարարությամբ քրիստոնյաները օրենքի առաջ հավասար հաշվել մահմետականին: Շուտով կոչնչացնեն ենիչերիներուն բռնատիրությունն ու գոյությունը: Հագուստները կսկսին եվրոպականանալ. մեկ-երկու մասնագիտական դպրոցներ կբացվին եվրոպական ուսուցիչներով և զինվորական կազմակերպության մեջ կարևոր փոփոխություններ կկատարվին եվրոպական հետևողությամբ:

Արևմուտքի հետ կապվելու այս շարժումներն ու հակումները կազդեն բնականաբար մայրաքաղաքի մեջ ապրող հայության վրա ալ որոշ չափով մը: Քաղաքական-վարչական ու գրական թեթև շարժում մը կսկսի նաև պատրիարքարանին շուրջը, որ ռուս-թուրքական պատերազմի թուրք պարտութենեն ետքը ավելի ևս կշեշտվի: Այնպես որ Պոլսի համար ալ գրաբարի վերջին դարը եվրոպականացման դար է, թեև անշուշտ ո՛չ Մխիթարյաններու չափով, մանավանդ մինչև ռուս-թուրքական պատերազմին պարտությունը, որ իր տեսակի դարձակետ մըն է և՛ թուրքերուն համար, և՛ հայերուն՝ եվրոպական ազդեցության շեշտվելու տեսակետեն:

Պոլսի մեջ իրենց գրականությամբ ամենեն ավելի աչքի ընկնող դեմքերը ԺԸ դարու երկրորդ կեսին երկու պատրիարքներ են: Դարու կեսերուն ավելի մոտիկ՝ Հակոբ Նալյան պատրիարքը (+1764), որ

հեղինակ է շարք մը կրոնական-խրատական երկերու. «Վէմ Հաւատոյ», «Մեկնութիւն Նարեկի», «Հոգեշահ», «Ծրագ ճշմարտութեան», «Զէն Հոգևոր», «Յառաջաբան Եզնեկի», «Զունայնութենէն կենցաղոյս», «Գանձարան ծանուցմանց»: Վերնագիրներեն դատելով՝ շատ լուրջ հոգևոր դեմք մը և գրական ալ ավելի խոր հասկացողությամբ:

Իր հաջորդը պատրիարքական աթոռին վրա՝ Գրիգոր Պասմաճյան (+1773) թողած է անձնական հիշատակարան մը, որ բնականաբար հեղինակի հանրային դեմք մը ըլլալուն պատճառով կստանա կարևորություն ժամանակի դեպքերը հասկնալու տեսակետեն, ինչքան ալ միջակ ու անստույգ գրություն մը համարվի:

Հայտնի անուն է եղած իր ժամանակին Գևորգ Դպիր (+1810), իբրև լեզվագետ, աստվածաբան, պատմաբան. քերթող ու թարգմանիչ: Կազմած է արաբերենի ու պարսկերենի բառարաններ. պարսկերենինը մասնավորապես եղած է շատ գնահատված հասկցողներու կողմե: Գրած է «Պատմութիւն օսմանեան». որ կհասցնե մինչև 1728 թվականը և մեծ մասով թարգմանություն է: Ունի եղած ուրիշ պատմական երկասիրություն մըն ալ, որ կորսված է: Գրած է նաև «Հայոց պատմութիւն» մը, որ դժբախտաբար նմանապես անհայտացած է:

Հայտնի անուն է եղած իր ժամանակին նաև Գրիգոր պատվելի Փեշտըմալճյան (+1837), հայկաբան, աստվածաբան ու վարժապետ, որ թեև աշխարհական, բայց հոգևորականե մը ավելի խիստ ու կրքոտ գրած ու պայքարած է կրոնական հարցերու շուրջ և հատկապես կաթոլիկներու դեմ: Կատարած է քանի մը ձեռագիր եկեղեցական մատյաններու հրատարակությունը: Գրած է անխուսափելի քերականությունն ու տրամաբանությունը: Գրած է «Լուսաշաւիղ», որ քրիստոնեական հանգանակի բացատրությունն է: Կազմած է երկու հատոր «Բառգիրք հայկազեան լեզուի»: Գրած է նաև կրոնական քերթված մը ութ վանկանի տողերով 300 էջերու վրա, որուն անունն է «Դիմառնութիւն ի չարչարանս Քրիստոսի»:

Գեղարվեստական տեսակետեն ավելի հետաքրքրական դեմք մըն է Հովհան Միրզա Վանանդեցին (+1840): Վանեցի մըն է ուսումը առած Պոլիս, վարժապետ ու քահանա: Թարգմանած է

պարսկերէնէ տաղաչափուած բարոյական խրատներ: Իբրեւ ինքնագիր ունի ոտանաւորներու փունջ մը:

Հատկապէս պէտք է ընդգծել իր երեք երկարաշունչ քերթուածները: «Ոսկի դար Հայաստանի» 4, 4, 4, 3 չափով 1400-ի մօտ քառատողեր. կը ներկայացնէ մարդկութեան երջանիկ ոսկի դարը, այսինքն՝ ջրհեղեղէն մինչեւ մեր Արամ նահապետը: Եթէ հանենք գրուածքին մէջէն վիճաբանական ու կրօնական կտորները, մնացած բուն նիւթը հին երազուած կեանքի մը տեղ-տեղ շատ կենդանի նկարագրութիւնն է ու հաճելի հովուերգութիւնը՝ ըստ Աճառեանի: Առանձին քերթուած մըն է «Տեսարան Հայկայ, Արամայ եւ Արայի», այսինքն՝ Հայոց պատմութեան նահապետական-աւանդական շրջանը, որ կատարեալ հմտութեամբ ու ոգեւորութեամբ վերածուած է տաղաչափուած վիպերգութեան: Իր երրորդ քերթուածին վերնագիրն է «Արփիական Հայաստանի», որ Հայոց քրիստոնեայ դարերուն պատմութիւնն է, 2500 քառատող նոյն 4, 4, 4, 3 չափով: Ամենէն հաջող տողերը նորէն Հայոց պատմութեան վերաբերող մասերն են. տկար են կրօնքի ու քրիստոնէութեան նուիրուած տողերը: Եւ աս ալ արդէն նշան է ժամանակներու եւ հոգիներու փոփոխութեան. քրիստոնէական դարերուն գերագոյնը կրօնականն էր, հայրենասիրութիւնը պէտք է անոր հարմարուէր ու ենթարկուէր. գրաբարի այս աշխարհականացման օրերուն հոգիներուն մէջ գերագոյնը, ազդողը ու ոգեւորողը դարձած է արդէն հայրենասիրութիւնը, որուն ետեւէն պէտք է երթայ կրօնական զգացումը, նոյնիսկ տէրտէրի մը գրչին տակ:

Այս երեք քերթուածները, որոնք միասին առած քանի հազար տողը կ'ելլեն կ'անցնին, հեղինակի մտքին մէջ անշուշտ իրարու շարունակութիւն են եւ իր տեսակի ամբողջութիւն մը կը ձեւացնեն: Շատ երկարաթել աշխատանք մը, գրական նոր ու լուրջ փորձ մը, որ կրնանք Արսէն Բագրատունիի «Հայկ դիւցազնին» քովը դնել: Անշուշտ այս փակցուած ու խախուտ ամբողջութիւնը համեմատուել չի կրնար «Հայկ դիւցազնի» ձոյլ կերտուածքին, ո՛չ անոր ներքին վիպական դարձքը ունի, ո՛չ ալ անոր շարժումներուն խիզախութիւնը, բայց կը ներկայացնէ հայրենասիրութեան աստուածաշնչական ներշնչումներու տարօրինակ հիւսք մը: Միրզա Վանանդեցին

թեև կապրի գրաբարի վերջին դարու մեջ, բայց իր հոգեբանությամբ գրաբարյան վերջընթեր դարուն կպատկանի. դեռ նոր արթննալու վրա եղող քերթող մը, որ թուրանականեն արևելք է դեռ և չգիտակցիր, որ արևմտյան ազդեցություններով և արևմտյան ազդեցություններու զարգացմանը կաշխատի: «Հայկ դյուցազն», ընդհակառակը, գրաբարյան վերջին դարու իսկական պտուղն է. իր հեղինակը հեթանոսական գլուխգործոցներու թարգմանիչ է. հեթանոսի ու քրիստոնյայի, աշխարհականի ու հոգևորականի. հայու ու եվրոպացիի հոգեբանության հանդուգն խառնուրդ մը. և շատ լավ գիտե. թե ինչ կընե:

Մխիթարյան կրթությամբ Վենետիկի վանքեն կուգան, բայց կապրին Պոլիս աշխարհականի կյանքով երկու դպրոցական ու գրական բարեկամներ՝ Սրապիոն Հեքիմյան և Մկրտիչ Պեշիկթաշլյան: Այս երկուքն են եղած էապես Պոլսի մեջ առաջին անգամ թատերական բեմ պատրաստողը 1857 թվականին և այդ բեմին համար թատրերգություններ հաստատողը:

Սրապիոն Հեքիմյան (+1892) ունի քնարական գրություններ ալ, բայց իր նախասիրությունը թատերական երկերն են: Գրած է «Արտաշէս ու Սաթինիկ» աշակերտական օրերու աշխատանք մը. գրած է «Հարմակ ու Աշխէն», «Սամէլ կամ կրոնք ու տիրասիրություն», «Վահրամ», «Յուլիանէ»: Բոլորն ալ գրված են 1850–1856 թիվերու ընթացքին. այդ տարիներուն ունի նաև քանի մը թատերակներու թարգմանություններ ալ:

Իր բոլոր երկերը հայրենասիրական ճառեր են. նյութերը առնված են տարբեր դարերե ու շրջաններե, բայց ո՛չ ժամանակի ոգի կա այդ երկերուն մեջ, ո՛չ կյանք և ո՛չ կենդանի մարդկային դեմքեր: Ինքը գրած է գրաբար և տպած է գրաբար. թեև բեմ հանելը հնարավոր դարձնելու համար մեկ-երկու հատը վերածեր են ետքը աշխարհաբարի: Ուրիշ խոսքով՝ թատրոնի ու թատերական ստեղծագործության մարդը չէ Հեքիմյան, թատրոնի սիրահարն է անիկա:

Իր ընկերը Մկրտիչ Պեշիկթաշլյան. նուրբ ու խոր հոգիով ճշմարիտ բանաստեղծ մըն է և իր լավագույն երգերը. դժբաղդաբար, գրած է գրաբարով, որով և հիմա գրեթե չի կարդացվիր.

այսինքն՝ իրական կորուստ մը ընթերցողներու ստվար մեծամասնության համար: Պեշիկթաշլյանը ավելի ծանոթ է լայն հասարակության իր աշխարհաբար գրած բանաստեղծություններով, որոնք ինչքան ալ շնորհք ու գրավչություն ունենան, չեն հասնիր իր գրաբար «ի խորոց սրտի» գրած կտորներուն: Աշխարհաբար գրածներուն դեռ կվերադառնանք: Իր գրաբար երգերուն մեջ մարդկային տառապող հոգի մը կա խոր արտահայտություններով և արվեստի հմայքով:

3. ԳՐԱԲԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԴԱՐԸ ԷՋՄԻԱԾԻՆ ՈՒ ԱՐԵՎԵԼՔ

ա. Բուն հայկական հողերը ամենեն հեռուն էին Եվրոպայեն. Էջմիածինն ու մյուս հայ վանքերը ԺԸ դարուն վերջերը և ԺԹ-ի սկիզբները դեռ հին թուրանական աշխարհն է իր թշվառ վիճակով: Բայց և այնպես Սիմոն Երևանցի կաթողիկոսի (+1780) օրով Էջմիածնի վանքին մեջ լուրջ շարժում մը կտեսնվի: Վերջապես տպարան մը կհաստատվի և թղթի գործարան մը, թեև շատ կարճ ժամանակով: Մինչև այն ատեն գրքերը Էջմիածնի անունով կտպագրվեին Ամստերդամ, Լիվորնո ու Պոլիս:

Սիմոն Երևանցին արդեն ինքը գրագետ դեմք մըն է: Փաստաթղթերու վրա հիմնված և պատմական արժեքով նոր ձևի երկ մըն է իր «Ջամբռ», այսինքն՝ «Դիվան» անունով գրությունը, որ Էջմիածնի կալվածներուն, իրավունքներուն և Էջմիածնի իշխանության տակ գտնվող վանքերուն նկարագրությունն է լուրջ ու խելացի դատավորությամբ:

Սիմոնեն ետքը մինչև Ներսես Աշտարակեցին շատ խառնակ ու ինկած վիճակի մը մեջ է Էջմիածինը և անկարող մարդոց ձեռքը: Դավիթ-Դանիելյան կաթողիկոսներու ողորմելի ու խայտառակ կռիվներուն օրերն են՝ Երևան նստող պարսիկ խաներու քմայքներուն և կաշառակերության օղակված:

բ. Գրականությունը արդեն վանքերեն դուրս է, որ կմշակվի և կապված է քաղաքային կյանքին մեր մայր հողերեն շատ հեռու՝ Հնդկաստանի ու Ռուսաստանի քանի մը քաղաքներուն մեջ: Այդ

օտար քաղաքներուն մեջ դիրքի ու հարստության տիրացած վաճառականներ իրենց շրջապատի ազդեցության տակ իրենք ալ հայ դպրոցներ կհիմնեն, ուր կհրավիրվին գրաբարագետ մարդիկ հայ նոր սերունդի հայ կրթությանը համար:

Հնդկաստանի մեջ մեր դպրոցներու և գրականության տեսակետեն հետաքրքիր կդառնան Մատրասն ու Կալկաթան: Սպահանեն խումբ մը հայ վաճառականներ ԺԸ դարու ընթացքին կանցնին Հնդկաստան և հոն շուտով կտիրանան դիրքի ու հարստության, կշփվին մոտիկեն եվրոպական մտքին ու կենցաղին: Անգլիական թերթերուն օրինակը կվարակե. և անոնց դպրոցներուն մեջ սորված հայ տղաք կերևան մեջտեղ. և նոր մտքեր ու ծրագիրներ հոնկե կուգան մինչև Էջմիածին: Էմինյանի ու Շահամիրյանի ազատ Հայաստանի մը գաղափարն ու սահմանադրական առաջարկները Հնդկաստանեն կուգան: Եվ հոն է, որ կերևան նոր տեսակի գրական փորձեր աշխարհական ոգիով:

Մատրաս քաղաքին մեջ Հարություն քահանա Շմավոնյան կհիմնե տպարան և կհրատարակե առաջին հայ պարբերական թերթը «Ազդարար» անունով 1794 թվին: Թերթը տևած է երեք տարի. փոքրիկ տետրակներ են. բովանդակությունն ալ մանր պատմություններ և օրացույց, տեղական պարբերական թերթի մը օրինակով: Շմավոնյան քահանան հրատարակած է նաև առանձին պատմություններ և կրոնական այլ գրություններ:

Մեսրոպ Թաղիատյան (1803–1858) ամենեն խոշոր գրական դեմքն է, իբրև Հնդկաստանի պտուղ: Նախնական հայ վանական կրթությամբ պատանի մը, որ կհաջողի չորս տարի ուսում ստանալ Կալկաթայի անգլիական դպրոցի մը մեջ:

Կալկաթայի մեջ 1821 թվականին կբացվի Մարդասիրական ճեմարանը. Թաղիատյան կդառնա ուսուցիչ. կհիմնե տպարան մը: Վերջը եղած է Թավրիզ, Էջմիածին, Պոլիս շարունակ թափառելով:

Անհանգիստ ու եռանդուն մարդ մը. վարժապետի, գրագետի. ազգասերի ու ազատամիտի խառնուրդ. նոր դեմք մը, որ շուտով ընդհանուր պիտի դառնա, ինչ չափով որ աշխարհական հայը մոտիկ շփում ունենա արևմտյան արվեստին ու գիտության:

Եվ գրականության մեջ ալ Թաղիատյան կներկայանա բնա-

կանաբար իբրև նոր դեմք մը նոր նյութերով և մշակման նոր ձևերով, անշուշտ միշտ գրաբար: Ունի թարգմանություններ, օրինակ՝ «Առակք պարսից», ունի «Այբբենարան» մը նոր ճաշակով, ունի «Պատմութիւն հին Հնդկաստանի», «Պատմութիւն պարսից»:

Մեզի համար ավելի հետաքրքիր է «Ճանապարհորդութիւն ի Հայս», ուր գլխավորը Արարատյան նահանգի այն ժամանակվա նկարագրությունն է: Այլև ունի «Ծառ դաստիարակութեան օրիորդաց»:

Իր գեղարվեստական երկերն են. իբրև քնարական՝ «Ողբերգութիւնք» իր կնոջ մահվան հիշատակին և «Թուղթ Թաղիադյան» հավաքածուն բանաստեղծություններու, ուր կերգվի ուսման սերը և նաև իր կնոջ հիշատակը: Ամենեն ավելի հայտնի ու տարածված է այդ հատորեն «Տէր, կեցո՛ դու զՀայս» երգը, որ դարձած է հայկական պաշտոնական ազգային օրհներգ. և նոր է ու ազվոր զամբյուղ ծախող հայ աղջկան երգը օտար երկինքներու տակ:

Իբրև վիպական գործ գրած է «Վէպ Վարդգէսի». արկածախնդրական նոր ու աշխույժ գրություն մը, ո՛չ գրական լուրջ արժեքով: «Վէպ Վարսենկան», որ կախարդական-հեքիաթական գրություն մըն է. այլև «Սօս և Սոնդիպի», որ չափով գրված, նորեն հեքիաթախառն, բայց պատմական ձևի տակ. վերջին երկու վեպերը գրած է 1847 թվին:

Գրական մնայուն արժեքներ չեն այս երկերը, բայց լուրջ ու նոր գրական ճիգ է: Ինչպես «Հայկ դյուցազն», ինչպես Վանանդեցիի ոսկի ու արծաթ դարերը, Թաղիադյանի այս վեպերն ալ խոր ձգտում մըն է նորվելու, փոխվելու, հին ճամբաներեն դուրս գալու: Կես գիտակից, կես բնազդական որոնում մըն է նոր արվեստի՝ նոր տեսակի հայ ստեղծագործության: Մեկը խիզախ քայլվածքով, մյուսը՝ վարանքով, երրորդն անհամբեր, բայց բոլորն ալ նույն ճամբան կբռնեն, նույն ճամբան կհարթեն գալիք նոր գրականության մը:

Թաղիադյան դեռ խոր կապեր ունի վանքի ու վանականության հետ, բայց շարունակ կռվգտուքի մեջ է անոնց վարմունքին և ըմբռնումներուն դեմ: Կգրե բնականաբար գրաբար, ատ է

ժամանակի գրական լեզուն, բայց իր հոգին ու աշխարհայացքը աշխարհիկ է արդեն լիովին: Թաղիադյան ամենեն բացված ծաղիկն է գրաբարի աշխարհականացման:

գ. Բայց հեռավոր Հնդկաստանեն շատ ավելի մեծ էր անշուշտ հայ ժողովուրդին համար հատկապես Ռուսաստանի հմայքը, որ ԺԸ դարու վերջերեն հետզհետե կմոտենար մեր լեռներուն: Եվ մեր մելիքներն ու մեկ-երկու կաթողիկոս ռուսներու օգնությամբ հայ անկախության երազներ կհյուսեին, դեսպաններ կերթան ու կուգան, խոստումներ ու թղթեր: Եվ ԺԹ դարուն սկիզբը իրավ որ ռուսները եկած են արդեն Կուրի հովիտը և տեր են Երևանին ու Էջմիածնին: Արևելյան հայության խոշոր ու կարևոր կտոր մը կապված է արդեն անմիջապես ռուս պետականության և Հայաստանը իր մեկ մասով մտած է եվրոպական քաղաքակրթության սահմաններուն մեջ: Եվ ԺԹ դարու երկրորդ քառորդին արագ կերպով կկատարվի հայ հողերուն վրա տնտեսական ու վարչական պայմաններու եվրոպականացումը, որոշ չափով ապրուստի ու կենցաղի արևմտացումը, ինչպես և կրթության ու գրականության մեջ եվրոպականին նմանվիլը:

Գրական շարժումը նախ ծայր կուտա բնականաբար ռուսական քանի մը քաղաքներու մեջ, ուր մտավորականություն մը կառաջանա ռուսական ազդեցության տակ. ինչպես Մոսկվա, Նախիջևան, Հյուսիսային Կովկասի մեկ-երկու հայաշատ քաղաքներր և նաքն ալ Թիֆլիս:

Այս ժամանակաշրջանի համար պետք է հիշատակվին երկու պատմական աշխատանք և երկու քնարերգու:

Երկու պատմական երկերն են «Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ». Հեղինակն է եպիսկոպոս մը՝ Հովհաննես Շահխաթունի: Եվ «Պատմութիւն կաթողիկոսաց ի Սիմէոնէ մինչեւ ցՅովհաննէս». Հեղինակն է Մսեր Մսերյան, որ Մոսկվայի մեջ կհրատարակեր գրաբար ամսագիր մը 1859 - 1862 թիվերուն «Ճռաքաղ» անունով:

Քնարերգուներեն առաջինն է Սերովբե Պատկանյան (1760-1837). պոլսեցի մը, Վենետիկ ուսած. և ուսուցիչ է եղած Հյուսիսային Կովկասի մեկ-երկու քաղաքներուն մեջ և վերջը եկած ու հաստատ-

ված է Թիֆլիս: Խառնուրդ մը ստացած կրթական ազդեցութիւններով, ուր սակայն տիրողը Վենետիկն է անշուշտ: Իբրեւ գրական աշխատանք ունի երգերու փունջ մը. կրօնական գովաբանական տաղեր ու գանձեր՝ քրիստոնէական Հին ու սովորական նիւթերով ու ոճով: Հին դէմք է եւ ուշ մնացած:

Շատ աւելի նոր ժամանակներու շունչէն ազդուած եւ բնականօրէն շատ աւելի կենդանի, ձեռնարկող ու խելացի Հոգեւորական մըն է Յարութիւն Ալամդարյան (1795-1834). ամուսնացած, վերջը շուշտակ վարդապետ ու վարժապետ, ժամանակ մը վարիչ Ներսէսյան դպրոցի: Համարձակ մարդ մը խօսքով ու գործով ու ներքին արժէքով. այդ պատճառով ալ Հոգեւորական իր մեծավորներէն շատ չսիրուած, նոյնիսկ աքսորուած: Հոգիով բանաստեղծ է, եւ իրմէն մնացած քանի մը ոտանաւորներուն մէջէն ալ իսկական բանաստեղծ է. գրած է գրաբար երգեր մաս մը կրօնական բովանդակութեամբ, ուր սակայն նոր ու տարբեր շեշտ մը կար. իսկ քանի մը Հատը, որ կապուած են իր անձնական կյանքին ու ապրումներին, արդէն նոր, թարմ ու աշխուժ գրութիւններ են անպայման գեղարվեստական արժէքով: Ներսէս Աշտարակեցին նայած է Ալամդարյանի վրա իբրեւ իր Հաջորդը ըլլալիք մարդու մը վրա կաթողիկոսական գահին Համար: Ալամդարյան սպանված է ավազակներու ձեռքով: Տաղանդավոր ու Հետաքրքիր դէմք մը ԺԹ դարու առաջին մասին մէջ:

Դ. ԱՄՓՈՓՈՒՄ

Հիմա, երբ աչքի առաջ կը բերենք ամբողջ վերջին երկու դարերու գրաբար գրականութիւնը եւ իր կատարած աՀագին աշխատանքը եւ ըմբռնել ու գնաՀատել կուզենք իր խաղցած դերն ու իր ձեռք բերած արդյունքը, ստիպված ենք ընդունելու, որ գրաբար գրականութեան տեսակետէն նոր բարձրացում մը, նոր արժէք մը չէ բերած:

Հին լեզուն մաքրել, գեղեցիկ բառարաններ շինել այդ Հին լեզվին Համար եւ քերականութիւններ շարադրել՝ շատ արժեքավոր եւ աղվոր գործ է անշուշտ Հին լեզուն լավ ճանաչնալու ու խոր

ճանչնալու Համար, բայց ատով նոր Հարստացում մը չստանար գրաբարը: Հին կրոնական, պատմական ու գրական երկերու նոր տպագրված Հրատարակություններ մեջտեղ դնելը շատ արժեքավոր, ազնիվ աշխատանք է մեր Հին գրականությունը նորերուն ծանոթացնելու, մեր Հին պատմությունը շատերուն սորվեցնելու, ազգային ոգին, ազգային գիտակցությունը և ազգասիրությունը արծարծելու Համար, Հոգեկան բարձրացում բերելու Համար նոր սերունդին, բայց գրաբար գրականությունը ատով նոր Հարստացում մը չի կրեր: Նույնիսկ Ջամչյանի, Ինճիճյանի ու Ալիշանի ու նման Հեղինակներու Հավաքող ու Համադրող ու մեկտեղող նորեն Հետաքրքիր ու նորեն կարևոր աշխատանքը գրաբար գրականության Համար մասնավոր նորություն մը և Հարստացում մը չեն բերեր. եղածի վրա նոր Հավելումը շատ է Համեստ և ո՛չ ստեղծագործ. թե՛ աշխարՀայացքը, թե՛ մերձեցումը, թե՛ խորացումը ո՛չ գիտական բարձր արժեք մը կներկայացնե, ո՛չ ալ գրական բարձրացում:

Գեղեցիկ ընտրությամբ և մեծ սիրով կատարված օտար գրական Հռչակավոր երկերու թարգմանությունները անշուշտ որ նոր դրդում մը ու նոր ուղղություն բերած կըլլային մեր գրաբար գրականության, ինչպես երբեմն Սուրբ գրքի թարգմանությունը, եթե գրաբար լեզուն ապրեր և գրաբար լեզվով նոր գրականություն մը աճեր այդ թարգմանություններով բերած նոր Հողերուն վրա նոր տարրերով: Բայց ճիշդ այն միջոցին, երբ այսքան ազնիվ աշխատանք կթափվեր այդ ՀամաշխարՀային արժեքները գրաբարի վերածելու, գրաբարը ինքը արագ կերպով կքաշվեր Հրապարակեն ու աշխարՀքեն. և այդ թարգմանությունները կդառնային փաղաքուշ աշխատանք մը գրաբար գրականության Համար:

Եվ վերջապես քնարական ու վիպական երկերն ու փորձերը թե՛ վանքերեն ներս, թե՛ վանքերեն դուրս գրաբար լեզվով կա մ երեսը Հինին դարձուցած Հին նյութերու և Հին ձևերու նոր կրկնություններ են, այսինքն ժամանակեն ետ մնացած աշխատանք. կա՛մ, ընդՀակառակը, նոր աշխարՀայացքով, նոր արտաքին արվեստով ու դրդումով կատարած ջանքեր են, որոնց գործածած լեզուն սակայն ինքը ետ կմնար ժամանակի Հիմնական ու տիրական պաՀանջեն:

Մեր հին գրաբարը վերակենդանացնելու, կենդանի գրական լեզուի վերածելու և այդ լեզուով նոր գրականութիւն մը մշակելու ճիգը իրականանալ չէր կրնար: Բնական հակասութիւն մը կար հին լեզուին ու նոր պահանջներուն միջև: Գրաբար գրել կնշանակէր մասնաւոր կերպով գրաբարը հատուկ ուսած խումբի մը համար գրել. նոր ժամանակներուն կոխիլը ատոր դէմ էր. ընդհանրացում, ժողովրդականացումն էր տիրող պահանջը, առնել գրականութիւնը հոգևորականներուն և բացառիկ գրաբարագէտներուն ձեռքէն և տանիլ ժողովուրդին և ժողովուրդի համար եղածին չափ լայն խաւերուն: Աւելի ճիշդը՝ ժողովուրդի հոգին ու կեանքը և իր գրական աշխատութիւնները սերտօրէն կապել իրար. ատիկա հնար էր միայն ժողովուրդի մարդոց ձեռքով և ժողովուրդի խօսած լեզուին կարելի եղածին չափ մօտիկ ու դիւրին լեզուով:

Պեշիկթաշլեանի ու Ալամդարեանի գեղեցիկ գրաբար երգերն անգամ արվեստական բան մը ունին իրենց վրայ և՛ լեզուի, և՛ ժամանակի տեսակէտէն: Գրաբարի տեսակէտէն անհարազատ կզգացուին. շատ են անձնական ու աշխարհիկ նիւթով ու ձևով. դարերը ուրիշ ոգի են տուած մեր գրաբարին: Նոր ժամանակներու տեսակէտէն արվեստական կզգացուի գրաբարը, քանի որ աշխարհականացման կձգտի և լայն հասարակութեան խօսիլ կուզէ, բայց կխօսի փոքրիկ խումբի մը միայն մատչելի լեզուով:

Գրաբարի վերամշակում ու վերակենդանացում մըն է, անշուշտ, այդ երկու դարերուն կատարած գործը. այլև ընդհանրապէս հայկական զարթօնք մը, հոգեկան նոր շարժում մը նոր ըմբռնումներով, նոր հայրենասիրութեամբ և նոր հագուստով արևմտեան տարազի: Միայն թէ այդ ամբողջ նոր ու կենդանի շարժումին համար կենդանի գործիք մը չէր արդէն դարերէ ի վեր Հայ ժողովուրդի շրթունքներուն վրայէն թռած գրաբարը:

Գրական վերածնունդը ժամանակի պահանջ էր. գրաբար լեզուով վերածնունդը հակառակ էր ժամանակի պահանջին: Եվ ատ էր եղեր գլխաւոր պատճառը, որ այս շրջանի գրաբար գրականութիւնը ներքին ուժ չունի, պակաս է ստեղծագործ թռիչքը՝ հակառակ թափուած մեծ ճիգերուն. շատ է իր մէջ քրտինքն ու համառ աշխատասիրութիւնը և շատ է հնադարյան վերաքաղ:

Գրաբարի այս վերջին «վերածնունդը» իբրև իր շիտակ ճամբեն շեղած անիվ մը կնկատեմ ես մեր գրականության համար. պատմական դժբաղդ պայմաններու բերած գաղութային անխուսափելի անիվ մը, որ շատ նպաստած է մեր արդի գրականության առած առաջին կլթոտ քայլերուն, բայց որ ինքը չէ եղած այդ երկու դարերու հայ բանահյուսության իսկական ստեղծագործ ուժը:

Այն բոլոր ջանքերը, որ ըրավ գրաբարի վերջին դարը գրաբար լեզվով, գրաբար գրականության համար չէ, որ իսկապես արժեքավորվեցավ, այլ բոլոր աշխատանքը դարձավ նպաստ մը. դարձավ եվրոպական պատվաստ մը ընդհանրապես հայ գրչին ու հայ գրականության:

Վանքի մեջ թե վանքեն դուրս գրաբար լեզվի ու գրաբար գրականության վրա աշխատանք թափող ամեն մեկը, առանց իր գիտնալուն կամ ուզելուն, աշխատած է նոր գալիք նոր լեզվով հայ գրականության ճամբան հարթելու համար: Գրաբարի ամբողջ այս վերածնունդը նախապատրաստական ընդհանուր աշխատանք մըն է ծանոթանալու, սիրելու, մտենալու, նմանվելու եվրոպականին. օգտվելու եվրոպականեն. լեզվի, ոճի, նյութի, ձևի, կառուցման ու գրական տեսակներու նոր ըմբռնումներ ու նոր մշակումներ փորձելու: Եվ վերակենդանացնելու հին հայ կյանքը նոր սերունդներու հոգիին մեջ, որ դարերու ստրկացումով կտրվեր էր իր անցյալեն. հոգեկան բարձրացում, ինքնագիտակցություն և ազգային զգացում ներշնչելու համար, որ նոր հայ լեզվով մը բարձրացումներ կատարվին նոր պահանջներուն դիմադրելու:

Գրաբարի ոճով եթե խոսինք՝ գրաբարի վերջին դարը. գրաբարի վերածնունդը իր ամբողջությամբ առած կարապետ մըն է իսկապես, ճամբա բացող Հովհաննես Մկրտիչ մը սպասող Մեսիային, այսինքն՝ մեր արդի հայերենով մեր նոր գրականության:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԲԱՐԲԱՌԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՆԳԻՐ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ա. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Բարբառային ստեղծագործությունները կբաժնվին երկու որոշ հատվածի՝ ժողովրդական անգիր բանահյուսություն և բարբառային անհատական գրականություն:

Երկրորդ տեսակի երկերը ստեղծված են գրչով. կամ բանավոր արտաբերումեն ետքը հեղինակի կողմեն գրի են առնված և ընդհանրապես քանի մը անգամներ գրչով ալ հղկված են, սրբագրված, մշակված: Եվ մեկ մարդու մը կատարած ճիգերուն արդյունքը ըլլալով և այդ մարդու գիրովն ալ խնամքով տետրակի մը մեջ առնված՝ սովորաբար կկրեն իրենց վրա հեղինակին անունը. Հեղինակը կդնե իր ձեռքեն եկածը, որ իր անունը չկորչի: Իր ստեղծագործության վրա կնայի իբրև իր անձի ու իր հոգիի մեկ հարազատ կտորին վրա, իբրև իր մեկ մասնավոր սեփականության վրա: Ուրիշներն ալ այդ աչքով կնային անոր գրվածքին ու տետրակին:

Կրնա պատահիլ պատահական կորուստ մը տետրակի սկիզբեն կամ վերջեն, որով երկը կմնա հանկարծ անանուն: Կրնա պատահիլ նման անուններու շփոթում, որով մեկուն գրածը մեկ ուրիշի մը կվերագրվի: Կրնա պատահիլ արտագրություններու ատեն պատահական կամ դիտավորյալ ներմուծումներ կամ հապավումներ, որով զանազան կտորները նույն հեղինակին գրածը ըլլալու կամ չըլլալու վեճեր կառաջանան: Բայց ասոնք բոլորը շատ երկրորդական և կողմնակի հարցեր են. ընդհանուր և հիմնական երևույթն ան է, որ անհատական և գրավոր ստեղծագործության հեղինակը հայտնի է մեզի:

Ժողովրդական բանահյուսության առաջին հիմնական տարբերությունն ալ ատիկա է արդեն, որ ստեղծված չէ գրչով. ստեղծված է շրթունքներու վրա, պահված, մնացած և ավանդված է բերնե բերան անգիր: Եվ այդ պատճառով ալ անգիր բանահյուսության կտորները որոշ հեղինակ մը չունին:

Քնարական կտորները կարճուկ մեկտունանի բաներ են, զգացումներու անմիջական արտահայտություն, ի՞նչ հեղինակ: Շատ անգամ իր հորինողը ճիգ կընե, որ չիմացվի իր հնարած ըլլալը, կձևացնե իբրև ուրիշներե լսած, ամենուն առջևը իր հոգին չմերկացնելու համար, օրինակ՝ հորինողը եթե աղջիկ մըն է: Ճիշդ այնպես, ինչպես գրական երկերու մեջ հեղինակները իրենց դեմքին զանազան տեսակի դիմակներ կդնեն իրենց ապրած ու զգացած բաները ավելի ազատ պատմել կարողանալու համար: Իսկ քիչ մը ավելի երկար ըսված բաներն ալ իրենց բանավոր ըլլալու պատճառովը, արագ բերնե բերան անցնելով, տարածության ու ժամանակի վրա փռվելով և շատերուն կողմե մշակումներու ու փոփոխություններու ենթարկվելով, հեղինակ չի մնար մեջը իրապես. մանավանդ որ ոչ ոք ալ չի հետաքրքրվիր, թե ո՞վ է եղեր առաջին հորինողը. հեղինակը փնտրելու պետք չկա. երգ է, խոսք է, բերնե բերան կլսեն ու կկրկնեն. ամենուն սրտեն ըսված բաներ են, ամենուն գիտցած բաները, ամենուն հարազատ, ընդհանուր սեփականություն, և կըսենք՝ պարզապես ժողովուրդն է հեղինակը:

Հեղինակի մը անվան կապված ըլլալն ու չըլլալը արտաքին տարբերություն մըն է, որ կդնենք ժողովրդական անգիր բանահյուսության և գրավոր-անհատական ստեղծագործություններուն միջև: Բանահյուսության ու գրականության իրարմե ունեցած զանազանությունը շատ ավելի խոր է ու ներքին. և այդ ներքին տարբերության մեկ արտաքին արտահայտությունն է միայն հեղինակի անվան մնալն ու չմնալը:

Գիր գիտցող անհատը, քիչ-շատ կարդացած, ուսում առած անհատը, ինչքան ալ չնչին ըլլար իր ուսումն ու ընթերցումը, արդեն ուրիշ տեսակի մարդ մըն է, քան կարդալ չգիտցող, անուսում մարդը: Վերջինս ինչ որ գիտե, ինչ որ կդատե ու կըմբռնե, բոլորը առած է իր շրջապատեն, իր նման անգիր ու անուսում մարդոց

հետ ապրելէն ու շփվելէն, մասնաւորապէս՝ եթէ իր գյուղէն ու գաւառէն ալ գրեթէ դուրս չէ ելած: Այդ տեսակ մարդուն աշխարհայեացքը, դատումներն ու զգացումները շատ աւելի մօտ ու նման են իր կենակիցներու ապրումներուն ու մտածումներուն: Նոյն թաղի, նոյն գյուղի ու նոյն տեղի անգրագէտ մարդիկը գրեթէ նոյն կյանքը ունին, նոյն կենցաղը, նոյն սովորութիւնները, նոյն մտածելու եղանակը և նոյն ընդհանուր հոգեբանութիւնը իր հիմնական գծերով:

Եվ այս հոգեկան ապրումներու իրարու շատ նման ըլլալուն հետեւանքը կդառնայ, որ ժողովրդական անհատ մը, երբ հուզում, դատում կամ պատկերացում մը կունենայ և իր անհատական զգացածը կարտահայտէ, առանց իր ուզելուն կամ նկատելուն արտահայտած կըլլայ իր կենակիցներու, իր շրջապատող ընկերակիցներու հուզումներն ու պատկերացումները, մտածումներն ու տենչանքները: Ժողովրդական երգիչը, ժողովրդական բանահյուսը, ժողովրդական ծաղրածուն և ժողովրդական իմաստունը ինչ ալ որ բսէ իր ժողովուրդի հոգիէն կխօսի և ատոր համար ալ անմիջապէս ժողովուրդի հոգիին կխօսի:

Գրագէտ մարդը, ինչքան ալ դեռ համբակ ըլլա ու խակ, միշտ բանով մը տարբերած է արդէն իր շրջապատի զանգվածէն. քիչիկ մը աւելի ուսման տէր դառնալուն պէս ուզէ-չուզէ շատ աւելի չեշտված կերպով կզատվի իր հարազատներէն: Իր տարբեր մտածումներն ունի, որոնք գիրքերէն կուգան, իր տարբեր դատումներն ու ըմբռնումները, որոնք իր ուսուցիչներէն կուգան. և իր նոր ու աւելի լայն աշխարհայեացքէն կուգան:

Այս տեսակ անհատը բան մը ըսելու կամ գրելու ատեն շատ աւելի մեծ չափերով իր գրքերը, իր ուսուցիչներն ու ղեկավարները ունի աչքի առաջ, քան այն հարազատ միջավայրը, ուրկէ ինքը դուրս է ելած: Քանի կերթա «ժողովուրդի» վրա բարձրէն կնայի. ինքր իր աստիճանին եղող «իր նմաններու» համար խոսիլ կուզէ. անոնց գնահատանքը իրեն համար արժէք ունի: Եվ վերջն ալ երբ կամաց-կամաց ինքն իր սեփական ոտքերուն վրա կանգնիլ կսկսի , ինքը կսկսի դիտել ու դատել, կցանկա, որ ուրիշներն ալ իրեն պէս դատեն: Ինքը հիմա ունի իր կարծիքը, իր տեսակէտը և ատիկա է,

որ կքարոզե, կերգէ, կներկայացնէ և ուրիշներր իր նսեէն քաշել կուզե:

Այսինքն՝ անգիր բանահյուսության մեջ անհատը ժողովուրդի մեկ հարազատ մասնիկն է. իր ապրումներն ու դիտածները երգելով ու պատմելով իր ժողովուրդի ապրածներն ու մտածածները արտահայտած կըլլա. կդառնա թարգմանը ժողովուրդի հոգիին. անհատականը կձուլվի ու կսուզվի ժողովրդականին մեջ. և բերնե բերան անցնելով, տաշվելով ու փոփոխվելով արդեն բոլորովին անհատականը կհալի, կմաշի ու կմնա մեջտեղ հանրայինը: Աս է, որ անգիր բանահյուսությունը իսկապես կդարձնե ժողովրդական:

Ասոր հակառակ՝ գրագետ բանահյուսը, ինչքան ալ ժողովուրդին մոտիկ ըլլա, ունի արդեն իր գրական-դասակարգային շեղումները և՛ լեզվի, և՛ ոճի, և՛ մտածման, և՛ աշխարհայացքի: Եվ քանի իմաստուն ու վարպետ կդառնա՝ այնքան ավելի կշեշտվին այդ շեղումները, այնքան առաջ կուգա ի՛ր անհատը, ի՛ր եսը. ի՛ր ապրած կյանքը, ի՛ր հասկըցածը: Գրական երկերու մեջ անհատն է, որ կխոսի. և ատոր համար ալ պետք է իր անունը գիտնանք, որ ուրիշ անհատներու հետ չշփոթինք:

Հովհաննես Թումանյանը ինչքան ալ մոտիկ է հոգիով իր Լոռու հայության, ինչքան ալ իր յուեցի տղաքն ու աղջիկներր և անոնց կյանքը գծե հարազատորեն իր վեպ-երգերուն մեջ. ինչքան ալ ջանա իր գրություններու ժողովրդական ոգին կենդանի պահելու. ինչքան ալ բուն ժողովրդական վեպեն առնե իր նյութը և բծախնդիր կերպով պահե ժողովրդական վեպի և՛ մանրամասնությունները, և՛ առանձնահատկությունները, և՛ արտահայտության եղանակն ու նրբությունները, միևնույնն է. Թումանյանի մշակած «Սասունցի Դավիթ»-ը ժողովրդական բանահյուսություն չէ. գրական-անհատական մշակում մըն է և բոլորովին տարբեր բան մը ժողովրդական ստեղծագործութենեն:

Իսկ «Սասնա ծռերու» բազմաթիվ տարբերակներեն որն ալ առնենք, թեև իրարմե հաճախ խիստ տարբեր և մշակումով. և՛ զանազան մանրամասնություններով, և՛ ոճով. և՛ բարբառով. միևնույնն է, անոնք բոլորն ալ անգիր բանահյուսություն են և ժողովրդական ստեղծագործություն: Տարբերություններր

արդյունք են տարբեր գավառներու, տարբեր դարերու կամ երգչի մը կամ շարք մը երգիչներու տարբեր տաղանդին:

Ժողովրդական նյութեր առնել, ժողովրդական ձևեր գործածել և ժողովրդական ստեղծագործությունները նմանիլ չի նշանակեր ժողովրդական ստեղծագործություն արտադրել: Ժողովուրդ պետք ըլլալ, անգրագետ ժողովուրդի հոգեբանությունը պետք ունենալ, առանց հավելումներու ու նմանողություններու, որ ստեղծագործությունդ դառնա ժողովրդական բանահյուսություն:

Գիր ու ընթերցման ծավալումը, ուսման ընդհանրացումը և դպրոցական կրթության իրապես պարտադիր դառնալը բոլորի համար՝ հետզհետե պետք պակասեին անգիր բանահյուսությունը ու չքացնեին: Ասոր տեղը պետք բռնեն տարբեր վայրերու և տարբեր դասակարգերու քանի մը տեսակները ազգային գրականության:

Բ. ԲԱՐԲԱՌԱԿԱՆ ԱՆԳԻՐ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՈՒՄԸ

Բարբառական անգիր բանահյուսություն հայ ժողովուրդը անտարակույս ունեցեր է միշտ, ինչպես անխտիր ամեն ժողովուրդ:

Հայության առաջին հեթանոս հազարամյակին ինչ որ «գրաբար» պետական բարբառով գոյություն ուներ, գոյություն ուներ անշուշտ նաև մյուս՝ ոչ պետական բարբառներուն մեջ ալ: Անգիր երգը, վեպը, առակը, կատակը բարբառական սահմաններու առջև կանգ չեն առներ. բարբառը կփոխե, քիչ մը կհարմարցնե տեղական ասության կամ քերականության ու կշարունակե երգվիլ ու պատմվիլ բոլոր բարբառներու սահմաններու մեջ: Ճիշդ այնպես, ինչպես հիմա, երբ միևնույն անեկդոտը, առածը, առակը, երգը, հեքիաթը և գյուղացներգության մը զանազան տարբերակները ունինք շատ մը բարբառներով:

Այդ բոլոր բարբառական ստեղծագործությունները տեւած են, ապրած են ու շարունակված նաև հայության հաջորդ քրիստոնյա հազարամյակի ընթացքին: Քրիստոնեությունը ինչքան ալ արհամարհեր կամ նզովեր այդ երգերն ու պարերը, այդ պատմությունները ու մանրավեպերը, ժողովուրդի հոգին ու շրթունքին

խլել ու ոչնչացնել չէր կրնար: Բնականաբար քիչ մը, գեթ արտաքուստ այլակերպված են այդ հեթանոսության ծաղիկները. հարմարված են քրիստոնեական ասության և քրիստոնեացած են, ինչպես ինքը՝ երգող ու պատմող ժողովուրդը: Հեթանոս աստվածներն ու անունները փոխարինված են քրիստոնյա սուրբերով ու սրբություններով, ավելցված է քանի մը նոր կրոնական ակնարկություններ և հին ժողովրդական բանահյուսությունը շարունակած է իր ճամբան. ինչպես և հին հեթանոս տոներն ու արարողությունները, սովորություններն ու ըմբռնումները շարունակած են իրենց գոյությունը երկար-երկար դարեր, մինչև մեր օրերը: Քրիստոնեության առաջին ելքի դարերուն, երբ դեռ ուժեղ էր պետական գրաբարը և այդ լեզվով եղած ստեղծագործություններն էին ավելի աչքի ընկնող, մյուս բարբառներով եղածները հավանորեն ավելի տեղական բնույթ պիտի կրեին և ավելի ստվերի տակ էին:

Արաբական դարերուն պետական գրաբարբառի անկումն ու մոռացումը բնական կերպով ասպարեզը ավելի լայն բացավ մյուս բարբառներուն և այդ բարբառներով երգերուն ու վիպումներուն: Քանի մը իրարմե անջատ թագավորություններու միաժամանակ հիմնվիլը իր հետ կբերեր քանի մը բարբառներու միաժամանակ հարգի ու պատվի գալը՝ դառնալով տիրող բարբառ:

Մեր կիլիկյան իշխաններու, անկե ետքն ալ մեր կիլիկյան թագավորներու օրերուն չեմ կարծեր, որ հայ անգիր բանահյուսությունը մասնավոր կերպով թափ առած ըլլար կիլիկյան հողերուն վրա: Օտար հողը միշտ անբերրի է ժողովուրդի մը հոգեկան ծաղկումին համար. հին արմատները չկան, եկվորը միշտ քիչ կըլլա թիվով տեղականին հետ համեմատած և ենթակա ավելի մեծ չափերով օտարներու ազդեցության: Անշուշտ քիչ մը տարբեր ձևով. բայց բուն էության անոնց վիճակը եղած է նույնը. ինչ որ հիմա մեր ամեն կողմ փախստական գաղութներուն դրությունը. երբ դիմանալն ու չայլասերիլը ու հետը բերածը կերպ մը պահպանել կարողանալը արդեն մեծ արժանիք մըն է. նոր բանահյուսական ստեղծագործություններ ակնկալելու իրավունքը չունինք այդ հողեն փրցված ժողովուրդեն:

Թուրանական այդ դարերուն՝ մեր անգիր բանահյուսության

պահպանումն ու զարգացումը ճապես տեղի է ունեցած նորեն իր Հայրենի բնաշխարհին մեջ կամ շատ մոտիկ, անոր կից՝ Հակառակ շրջապատի ավերին ու թշվառության և անվերջ կռիվներուն: Անգիր բանահյուսությունը ըսկածը շատ խոր ու սերտ կերպով հյուսված ու կապված է կյանքի առօրյա անխուսափելի երևույթնե-րուն, որոնք կանգ առնել չգիտեն քիչ-շատ տևականորեն, ինչքան ալ ավեր ու կռիվ ըլլա շուրջը:

Ժողովուրդին երգը, փաթթված առօրյա կյանքին, ինքն ալ կանգ առնել չգիտեր: Հողը կփարեն երգով, կհնձեն երգով, քաղհան կընեն ու կերգեն, կմանեն ու կերգեն, կերգեն իրենց ցավն ու վիշտը, կերգեն սերն ու կարոտը, կամուսնանան երգերով, մանուկները կքնացնեն երգերով, կլսեն ու կխոսին անվերջ առակներով: Այ-բերուն ու խոսքերուն հյուսված ատոնց մեկ անբաժան մասն է բանա-հյուսությունը:

Ամեն գյուղ, ամեն սրբատեղի ունի իր ուխտի օրը. ամեն ամիս ունի իր տոնի օրերը, որոնք ալ ունին իրենց հատուկ սովորու-թյունները, բազդ նայիլ և այլ արարողություններ՝ բոլորն ալ կապ-ված հինեն եկած խոսքերու, ավանդություններու, երգերու: Ասոնք պահանջ են դարձած հավատքի, պետք է կատարվին, և կկատար-վին, ինչքան ալ ծանր եղած ըլլան երեկը կամ սպառնալից՝ վաղը:

Ձմեռվան երկար ցուրտ գիշերները, բանտված թանձր ձյու-նին տակ, խմբված խեղճ գետնատակ խրճիթի մը մեջ՝ բուխարիկին շուրջը, ուր բոցեր կճարճատին, նստած են ամենքը գլուխնին կախ. կյանքի հոգը կճնշե ու շատ դժվար է իրենց վիճակն ու ապրուստը: Բայց կյանքը կյանք է, պետք ունին ամենքը կտոր մը մոռացման, հոգեկան շարժման. և ահա՛ աշուղը, երգիչը կամ իրենցմե ավելի շնորհալի մեկը վար կառնե պատեն մեկ-երկու թելանի թշվառ նվագարանը, կխաղա քիչ մը այդ թելերի լարերուն հետ ու կսկսի հեքիաթ մը: Երկար-երկար հեքիաթ մը՝ մանկածապատ ու ոլորուն: Ի՜նչ վայելք, ի՜նչ արկածներ, ի՜նչ թռիչք, ի՜նչ երջանկություն և ի՜նչ առատություն ամեն ազվոր բաներու այդ գիշեր լուսցնող հեքիաթին մեջ: Եվ որքան թշվառ է ու զուրկ շուրջի իրականու-թյունը, այնքան հմայիչ, այնքան գրավիչ կհնչե հեքիաթը: Մարդիկ իրականութենեն չստացածը զոնե երևակայության մեջ վայելել

կուզեն և աստվածները արդեն ատոր համար են ղրկած մուսաները աշխարհ:

Ինչքան ատեն որ ժողովուրդ մը կշնչե ու գետ-ադեկ կաշխատի, կշնչե ու կապրի իր հետ անգիր բանահյուսությունը: Ատոր համար է, որ ԺԲ-ԺԹ դարերու ընթացքին, երբ գրաբար հին անհատական ստեղծագործությունը չդիմացավ թուրանական հարվածներուն, ձգեց ու փախավ հեռու աշխարհներ ու դարձավ գաղթական գրաբար մը, հոս մայր հողին վրա մնացած ժողովուրդը կերգեր, կպարեր ու կպահեր իր անգիր բանահյուսությունը երբեմն էջքերով, երբեմն ելքերով, տեղ մը կծկտած, տեղ մը թափով՝ նայած պայմաններու բերումին և երգողներու բնածին տաղանդին:

* * *

Բայց այս քսանհինգ դարերու կյանք ունեցող բարբառական անգիր ստեղծագործություններն ալ, մեր գուսանական հին երգերուն նման, պաշտոնապես արհամարհված են եղած միշտ մեր գիր գիտցող եկեղեցական հայրերուն կողմե, իբրև ռամիկ, իբրև աշխարհական, իբրև անուս մարդոց վայել հորինվածք:

Բարբառները նկատեր են իբրև աղավաղումը մեր միակ ու իսկական լեզվի՝ գրաբարի, և ժողովրդական երգերն ու վեպերն ալ համարեր են իբրև տափակ ու կոպիտ խակ բաներ, լավագույն պարագային երեխայական խաղ ու զվարճալիք:

Այս ըմբռնումները մեր ուսում առածներու հոգիին մեջ տևած են գրեթե մինչև մեր օրերը, մինչև ԺԹ դարու կեսեն ալ անդին: Նախ պետք էր գրաբար գրականությունը տեղի տար նոր գրական լեզվի մը՝ հիմնված կենդանի բարբառի մը վրա, որ բարբառներու հանդեպ հարգանք զգացվեր: Եվ ասոր զուգընթաց պետք է ընդհանուր համոզում դառնար, թե ազգ ու պետություն ըսվածը ժողովուրդն է, որ ամեն ինչ ժողովուրդներու համար է, գոնե սկզբունքով: Ժողովրդապետության սկզբունքը պետք է տիրապետողներու գահը բարձրանար, որ ժողովուրդի լեզուն ու ժողովրդական երգն ու վեպն ալ արժեք ստանար: Եվ այս ուղղությամբ մեծ դեր է խաղացած եվրոպական առաջընթաց ժողովուրդներու մեզի տված օրինակը:

ԺԹ· դարու ընթացքին եւրոպական երկիրներու մէջ քիչ մը ամէն տեղ մեծ խնամքով ու գուրգուրանքով սկսան հաւաքել ժողովուրդի շրթունքէն անգիր բանահիւսական ամէն տեսակի ստեղծագործութիւններ, նոյնիսկ անշնորհքներն ու փշրանքը: Այդ բոլոր նիւթերը սկսան հրատարակել, հատուկ ուսումնասիրութիւններու առարկա դառնալ, ենթարկուիլ հոգեբանական ու գիտական վերլուծման և արժանանալ մեծ գնահատանքի թէ՛ իբրև քաղաքակրթական արժէք, թէ՛ իբրև գեղարուեստական ստեղծագործութիւն:

Այս ընդհանուր գրոհի տակ հայ միտքն ալ ԺԹ· դարու կէսերէն սկսաւ հետաքրքրուիլ, ուշադրութիւն դարձնել, հաւաքել, քիչ-քիչ սիրել ու հափշտակուիլ ժողովրդական բանահիւսական հարցերով: ԺԹ· դարու յոթանասունական թիւերուն էր, որ Գարեգին Սրվանձտյան տպագրութեան տակ իր ճամբորդութիւններու տակէն հայ ժողովուրդի բերնէն լսած երգերն ու պատմութիւնները. մեծ համակրանքի ու քաջալերանքի արժանացաւ. և անկէ ետքը իրար ետեւ ուրիշներ ալ սկսան հրատարակել բարբառներու մասին գրութիւններ և հաւաքեցին բաւական նիւթ ժողովուրդի շրթունքէն: Այդ շրջանի մեր բոլոր պարբերականներուն մէջ այս ուղղութեամբ ջանքեր կան կատարուած: Ունինք նաև հատուկ պարբերականներ ժողովրդական կյանքի պատմաններն ու բանահյուսական երկերը ժողովող, ինչպէս Էմինյան հրատարակութիւնն էր Պետրոգրադի մէջ և Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդէս» Թիֆլիսի մէջ:

Շնորհիվ այս շարժման մենք հիմա ունինք բաւականին ժողովրդական բանահյուսական նյութ: Անշուշտ այս հաւաքածը մեկ փոքր մասն է միայն եղածի: Եվ դժբախտաբար ասկէ ետքը մեծ բան մը հաւաքելու հույս չկա. մեր ժողովուրդի մեծագույն մասը ազգային խողխողված է հիմա. մնացորդներն ալ վտարված են իրենց հայրենիքեն օտար երկիրներու տակ օտար ժողովուրդներուն գիրկը, ուր արագ կերպով կկորսնցնեն ինչպէս իրենց հայ բարբառը, այնպէս ալ իրենց հետ տարած բանահյուսական փշրանքը:

Եվ հաւաքված նյութերն ալ քաղված չեն հարկ եղած հնչա-

կան, լեզվական ու բանահյուսական զգուշությամբ. Հավաքումը կատարված է անվարժ կամ անգետ ձեռքերով, առանց Հարցի ուսումնասիրության ու նախապատրաստության: Հրատարակված նյութերուն մեջ, կարելի է ըսել, չկա երգ մը, նույնիսկ տուն մը, ուր որևէ կոպիտ սխալ մը սպրդած չըլլա:

Այս բոլոր նյութերը գիտական Համեմատությամբ, զգուշությամբ ու կարգով պետք է մեկտեղել, որ կարելի ըլլա և՛ եղածը խորապես գնահատել, և՛ օգտագործել. որուն վրայեն մեր Նոր դրական սերունդներուն գրիչները կարողանան մեզի մը պես իրենց միտքը Հավաքել և՛ լեզվի, և՛ ոճի, և՛ արտաՀայտության ձևերու, այլև բանաՀյուսական ուրիշ տեսակետներե:

* * *

Այս Հավաքված նյութերուն մեկ մասին խորքը շատ Հին է անշուշտ և Հեռավոր դարերեն կուգա. այդ նյութերը կՀասնին մեզ աղճատվելով, խառնակվելով և շատ դժվար է լրջորեն բան մը Հասկընալը. գիտական Համեմատությունը միայն ուրիշ ժողովուրդներու նման կտորներուն Հետ կրնար լույս ու իմաստ տալ մեր չՀասկըցածին, որով և կդառնար Հետաքրքիր:

Հասկընալի մնացածներն ալ խառնակված են, ընդՀատված են, փոփոխված են կրոնե կրոն, տիրապետողե տիրապետող, քաղաքակրթութենե քաղաքակրթություն ու դարաշրջանե դարաշրջան անցնելով, այդ բոլոր շուշափումներեն, այդ բոլոր ժողովուրդներեն ու ժամանակներեն պատառիկ մը, Հուշիկ մը, ակնարկություն մը, Հավատալիք մը Հետը բերելով: Գիտական աշխատանքի ու վերլուծական սրատեսության Համար առատ նյութ կա այդ ավելի Հինեն եկող կտորներուն մեջ:

Սակայն արդի մեր ունեցած նյութերուն մեծագույն մասը մեզի կուգան Թուրանական դարերեն: Ութը դարերու մեր ստրկացումը Թուրք-մաՀմետական լուծին տակ չէր կրնար չազդել մեր նիստ ու կացին, մեր սովորություններուն, մեր ըմբռնումներուն և մեր արտաՀայտության վրա: Ամենեն խոր ազդվողը կենցաղական վարմունքի ձևերն են ու լեզուն. աՀագին քանակությամբ Թուրք բառեր մտած են մեր լեզվին մեջ. նաև պարսկական ու արաբական

բառեր. այլեւ տիրող դարձած են թուրք ու պարսիկ հատուկ անուն-ները թէ՛ տղոց, թէ՛ աղջիկներու, թէ՛ իբրեւ անուն ու ազգանուն, թէ՛ մականուն:

Բայց Հայ արիական խորքը կրցած է դիմանալ թէ՛ կեանքի մէջ, թէ՛ բանահյուսութեան: Շատ էր տարբեր մեր ըմբռնումը բնութեան, ամուսնութեան ու սիրոյ մասին, շատ էր հակադիր մեր ու տիրողի կրօնական խառնվածքը, որ մեզի ալ, մեր տի-րողներն ալ եւս կհրէր իրարմէ. եւ շատ էր չեշտված մեր մէջ աշխա-տանքի սէրը, ինքնուրոյնութեան սէրը: Քաղաքական կեանքի մէջ չէինք կրցած մեր ինքնուրոյնութիւնը պահել, բնազդական պահանջ կար գոնէ հոգեկան աշխարհի մէջ մեր առանձնահատկու-թիւնները ամուր պահելու: Եվ բնականեն ուժեղ էր ու տարբեր մեր գեղարվեստական ճաշակը, շատ ավելի լուրջ, զուսպ. զգաստ եւ չափը պահել սիրող, որ արեւմտյան ու արիական հատկութիւն է: Այս բոլորը իրար գալով կրցած են պահել մեր ինքնութիւնը, օտարի ազդեցութիւնը եղած է ավելի արտաքինի վրայ՝ հագուստ, կապուստ, մարմնի ձեւեր եւ օտար բառեր. մեր հոգիներուն խորքը, ինչպես եւ մեր բանահյուսության խորքը մնացած է Հայ ու արիական:

Ժողովուրդի մը հոգին ըմբռնելու եւ անոր ինքնութիւնը հասկնալու առաջին ամենէն կարեւոր միջոցը անոր լեզուն վեր-լուծելն է եւ լեզուին մէջն ալ ամենէն առաջ բարբառները եւ անկէ ետքը միայն գրական լեզուն: Նույն նպատակին հասնելու երկրորդ միջոցը ժողովուրդի մը գեղարվեստական ստեղծագործութիւններն են եւ այդ ստեղծագործութիւններուն մէջն ալ ամենէն առաջ լեզուով կատարուած ստեղծագործութիւնները. նախ ժողովրդական անգիր բանահյուսութիւնը, ետքն ալ անհատական գրականութիւնը:

Ժողովրդական բանահյուսության բոլոր տեսակները մեկ կողմէն շատ ընդհանուր գծեր ու նմանութիւններ ունին թէ՛ դրացի ու մոտավոր, թէ՛ ցեղակից ու հեռավոր ժողովուրդներու բանահյու-սական երկերուն հետ. բայց միւս կողմէն ալ շատ հստակ կցայտին ամեն մեկ ժողովուրդի ինքնահատուկ գծերը, մտածման եւ արտա-հայտութեան ուրույնութիւնները եւ զգացական խորքը:

Այնպես որ բարբառական անգիր բանահյուսական երկերը,

բացի իրենց գեղարվեստական արժեքեն, իրենց տված անմիջական վայելքեն, ունին նաև գիտական-հոգեբանական երկրորդ կարևոր արժեք մը: Եվ վերջապես ունին նաև պատմական-քաղաքակրթական երրորդ դեր մը. լեզվի և լեզվական ստեղծագործություններու միջոցով կարելի է շատ մը պատմական ու քաղաքակրթական իրողություններ ճշգել ու պարզաբանել: Մեծ է ու բազմակողմանի ժողովրդական անգիր բանահյուսության դերն ու արժեքը:

Գ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՆԳԻՐ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՔՆԱՐԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. ՀԱՎԱՏՔԻ ԿԱՊՎԱԾ ԵՐԳԵՐ

Ժողովրդական երգերը ըստ իրենց արտահայտած հիմնական զգացումին կարելի է բաժնել հինգ տեսակի. 1) հավատքի կապված երգեր, 2) կենցաղի կապված երգեր, 3) սիրո երգեր. 4) բնության երգեր և 5) զվարճանքի երգեր:

Հավատքի կապված երգերուն առաջին խումբը ընդհանրապես հինեն կուգա՝ հեթանոսական հավատալիքներեն, որոնք սակայն ապրած են նաև քրիստոնեական դարերուն և կապրին մինչև այսօր: Խոսք մը կըսես, երկու տողով դյութանք մը կընես, տուն մը կախարդական աղոթք կմրմնջես և կկապվին մրջյուններուն ոտքերը, մարախին արշավը կանգ կառնե, մկներուն ակռան չի բռներ. գայլերը իրար կըզկտեն, հովերուն ուղղությունը կփոխվի և թշնամի մարդոց թևերը կթուլնան: Նման քանի մը բառ. հետոն ալ քանի մը բժժանք մազին, եղունկին կամ որևէ այլ մանիկի մը վրա, որ առնված է ենթակայի մարմնեն և սիրող սիրտերը սիրասթափ կըլլան, կամ իրար տեսնել չուզողները իրարու կսիրահարին:

Այս կախարդանքներուն, հմայումին, դյութանքին ու բժժանքին կապված խոսքերը, որոնք մասնագետներու խորին գաղտնիքն են, պատահական կերպով միայն մեջտեղ կելլեն, քիչ են. աղճատված ու թերի. մեկ մասն ալ ուղղակի անիմաստ. քանի մր կրոնական բառեր ու անուններ, մեկ-երկու անիմաստ նախադասություն որոշ

հնչակրկնությամբ կամ հանգերով իրարու կապված։

Բայց կան այս հմայական խոսքերուն ավելի հանուր և ընդհանրացած ձևերը, որ ամենքս ալ կըսենք ու կկրկնենք կյանքի մեջ կես մը կատակով, կես մը հավատով։ Օրինակի համար՝ կորուստ մը որոնելու ատեն սատանային ուղղված մեր սա խոսքը. «Սատանա՛, սատանա՛, պոչիդ տակը բան մը կա, շատը քեզի, քիչը ինծի»։

Ժողովուրդի կրոնական ու գերբնական ըմբռնումները ուսումնասիրելու համար հետաքրքիր նյութեր են ասոնք։

Հավատքի կապված սովորություններու երկրորդ կարևոր և շատ գործածական տեսակը օրհնանքն է ու անեծքը. երբեմն ավելի գեղարվեստական ձև հագած համեմատություններով և իր տեսակի տաղաչափությամբ, երբեմն ալ ավելի պարզ, արձակ ու անմիջական, երբեմն մեկ-երկու բառ միայն, ուր շատ հստակ կերպով կերևա, թե ի՞նչն է, որ ժողովուրդը բաղդավորություն կհամարե մարդուս համար և ինչ աստիճանավորությամբ. այդպես ալ, թե որո՞նք են ամենեն մեծ անբաղդությունները ամենուն համոզումով։

Նաև շատ հետաքրքիր նյութեր են ու տարբեր՝ ժողովուրդի մը աշխարհայացքը ուսումնասիրելու համար, ուր գեղարվեստականն ալ, սրամտությունն ալ և երևակայության թափն ալ իրենց բաժինն ունին։

Հավատքին կապված սովորություններու և երգերու երրորդ խումբը արդեն նեղ մտքով կրոնական կերտվածներն են, այսինքն՝ աղոթք, խնդիրք, մաղթանք ու փառաբանություն՝ երբեմն կապված տեղական որոշ աղբյուրի մը, մատուռի մը, սրբատեղիի մը, գերեզմանի մը, նահատակի մը, սրբության մը ուղղված. կամ ուղղակի Քրիստոսին, Աստծուն, Աստվածածնին. Աստվածածնին անունը մանավանդ գուրգուրանք կվայլե։

Միշտ գովք է, հավատքի զեղում, միջնորդության խնդրանքով, օգնության աղերսանքով։ Մեջեմեջ կպատահին սրտեն փրթած խոսքեր ու հավատքի բացառիկ խոր շեշտեր, բայց ընդհանրապես արդեն ընդունված, կայունացած կամ քարացած սովորություններ են, ծիսական դարձած թե՛ արտաքին ձևով, թե՛ խոսքով։

2. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Ժողովուրդի ապրուստին, կյանքին ու կենցաղին կապված երգերուն առաջին խումբը կներկայացնեն աշխատանքի երգերը. ամենեն կարևորը անշուշտ հողի աշխատանքներուն կապված երգերը, քանի որ հայ ժողովրդական բանահյուսության վայրը հայ գյուղն է և գյուղի հիմնական աշխատանքն ալ հողագործությունը: Ամենեն կարևորը վարելը, ամենեն խորհրդավորը սերմելը, ամենեն ուրախը հնձելը, որ կապված է սակայն ամառվան տապին ու շոգին:

Ամենեն հետաքրքիրը վար ու ցանքն է անշուշտ՝ կապված գարնան, հույսերու ու թարմության, որուն երկար երգին իրար հաջորդող տուները, իրենց խոսքը ուղղելով մեյ մը հողին, մեյ մը լուծին ու եզներուն, մեյ մը խոփին ու գութանին, մեյ մը հոտաղին ու մշակին, մեյ մը երկինքին ու Աստուծուն, իրավ որ շատ կենդանի ու գեղեցիկ կառուցում մըն է, որուն իրարու հաջորդող ու իրարու հագցված տուները լրիվ ամբողջություն մը կգոյացնեն ամբողջ օրվան մը աշխատանքին քերթվածը. ձայնանմանություններով, բացականչություններով ու դիմառնություններով շրջանակված. հինգվանկանի տողերով ու շուտ-շուտ իրար զարնող հանգերով աշխուժացած և բուն գործեն ու բնութենեն հորդող երաժշտական եղանակով ուռճացած՝ այդ հայ հողի հայ երգը կզարնե իսկույն ամեն հայու սրտին:

Ո՛չ նույն ամբողջական կառույցով, բայց միշտ գրավիչ, տեղ-տեղ շատ գրավիչ են նաև աշխատանքի մյուս երգերը՝ քաղհանի երգը, հունձի երգը, կալի երգը, սայլով փոխադրելու երգը. ուր բնության նկարագրությունը, գյուղացիին հոգն ու կարիքը. գոմեշներուն հանդեպ իր ունեցած քնքշանքը և իր սրտի սերն ու սիրուհին շարունակ իրարու կհյուսվին:

Հողի աշխատանքեն զատ կան դարբնոցի երգեր. ջուլհակի երգեր, մանելու երգեր, այսինքն՝ գյուղական արհեստներուն հետ կապված երգեր, ուր նորեն տիրող նյութը աշխատավորի հոգերն են ու ծանր տնտեսական վիճակը և ուր նորեն սերն ու սիրականը. լուսինը, գիշերն ու ճրագը, անձրև ու ձյուն ու բնության նման

նկարագրությունները կխաթթվին իրարու:

Կդնեմ հոս մեկ-երկու հատը աշխատանքի այդ երգերեն: Եվ ամենեն առաջ եզան դերը, որ հողային աշխատանքներու գլխավոր դերակատարն է:

ՀՈՐՈՎԵԼ

Ձի՛գ տու, քաշի, ա՛յ եզը,
　　արա հո՛, հո՛, արա հո՛.
լուծդ մաշի, ա՛յ եզը,
　　արա հո՛, հո՛, արա հո՛.
Աստված պահի քո տերը,
　　արա հո՛, հո՛, արա հո՛.
մինն էլ քաշի, ա՛յ եզը,
　　արա հո՛, հո՛, արա հո՛.

ԿԱԼ

Արի՛, արի՛, քե մատաղ
　　Հո՛, ե՛զը ջան:
Ճա՛, կալ արա, ման արա,
Հա՛, կալը դարման արա.
ցորենն ինձ, դարմանը քեզ,
Հաշանը դարման արա:
Ճո՛ղ արա, ե՛զը, ջա՜ն աղբեր,
Թո՛ղ արա, ե՛զը, ջան աղբեր:
　　Դե՛. Սիրո՛ւն, ե՛լ, ե՛լ,
　　դե՛, Ծիրա՜ն, ե՛լ, ե՛լ,
　　դե՛, Տոկա՜ն, ե՛լ, ե՛լ:
Ճո՛ղ արա ակը, ջա՜ն աղբեր,
Թո՛ղ արա ակը, ջան աղբեր:
　　Դե՛, Սիրո՛ւն, ե՛լ, ե՛լ,
　　դե՛, Ծիրա՜ն, ե՛լ, ե՛լ,
　　դե՛, Տոկա՜ն, ե՛լ, ե՛լ:

ԿԱՏԱԿ

Մարալ գոմեշ նազ կանե,
պոչը փաթթե՝ թոզ կանե,
մարալ գոմեշ նազ կանե,
ճիպոտ կուտե, վազ կանե:

ՀՆՁՎՈՐԻ ԵՐԳ

Հով արա, Լեզվա՛ր, Հով քամի.
մեր մշակը Հով կամի.
մեր մշակը շոքել ա,
որձ գոմշի պես շոքել ա:

Լեզվա՛ր, ամպե՛, ցո՛ղ արա,
էսօր քիչ ամպշող արա,
շոքն ու տոթը թող արա,
մի քիչ մեզ բանթող արա:

Արևը ինձ տաղում ա,
ուշք ու միտքս շաղում ա.
ծովինարը խաղում ա,
բարակ անձրև մաղում ա:

ՔԱՂՀԱՆԻ ԵՐԳ

Գարնան գութան Հանեցի,
արտը բամպակ ցանեցի.
ամառն եկավ, քաղն եկավ,
քաղՀանավոր ճարեցի:

Քաղհան կանեմ, Հո՛, բարով.
ղոլմա կեփեմ պիպարով.
աշնան անի լավ օրեր,

րամպակ քաշեմ նուագարով:

Բեռնեմ սայլը սար հանեմ,
սար հանեմ ու տուն տանեմ.
դուրս գա չարի չար աչքը,
ձմեռն հանգիստ օր անեմ:

ՔԱՂՀԱՆ ԱՆՈՂԻ ԵՐԳ

Քաղհան եմ անում սարին,
մատաղ ըլեմ իմ յարին.
մեջքին արծաթ քամար ա,
մեռնիմ ունքի կամարին:

Ուրագս սարքած, սրած,
մաշիկս սաղրուց կարած.
էս իմ կարմիր էրեսս
էրես-էրեսին դրած:

Քաղհանում եմ կնճիթը,
հագած եմ յալ խաս չիթը,
էրնեկ կտամ էն օրին,
որ ընկնեմ յարիս ճիտը:

Կենցաղական երգերու երկրորդ խումբը հարսանեկան երգերն են: Գյուղական հարսնիքը մեր հին ազնվական ամուսնություններու ատեն գործադրվող արարողություններուն նմանեցումն ու մնացորդն է և օրեր կտևե: Փեսան այդ օրերուն «թագավոր» է, հարսը՝ «թագուհի» և անոնց ամեն մեկ քայլ ու վարմունքը կապված է երգերու:

Նախ՝ փեսայի տունը կատարված ծեսերը, ինչպես՝ լողանալ, հալավ օրհնել, գլխատավորել ու նստել խրախճանքի, իբրև հրաժեշտ իր ազատ ընկերներին: Նույնը կկատարվի, իհարկե, նաև աղջկա տունը աղջիկներու շրջանակին մեջ. մատները հինա դնել, հագվեց-

նել, երգել ու պարել, մասամբ պատրաստութիւն Հանդեսին, մասամբ Հրաժեշտ աղջկնութեան ընկերներէն:

Կուգայ մօր տունէն աղջիկը առնելու երգերն ու արարողութիւնը լացերով. տղու տունը բերելը և նոր ընտանիքին կապելը Հաղթական երգերով, գվարթութեամբ ու կատակով: Որով կգոյանար Հարուստ նյութ՝ և՛ կատակ, և՛ յուրջ, և՛ խինդ, և՛ լաց, և՛ գովք, և՛ Հեգնութիւն, երբեմն խիստ Հուզական, երբեմն խիստ դրական, երբեմն խիստ ծաղրական ասույթներով ու տողերով:

Այս երգերուն ու սովորութիւններուն գիտական վերլուծումը առատ նյութ կմատակարարէ ամուսնական Հին ըմբռնումներու, կնոջ դիրքի, տնտեսական ու տոՀմային կապերու բացատրութեան Համար:

Կենցաղական երգերու երրորդ խումբը օրօրներն են. միշտ քնքուշ ու սրտագին տողեր, որով ամեն մայր գոնե երևակայութեամբ առատօրէն թափել կուզէ իր զավկին վրա աշխարՀիս բոլոր գոՀարներն ու մարջանները և բնութեան բոլոր գեղեցկութիւններն ու անուշութիւնները: Ասիկա ներկայի Համար. ապագայի Համար ալ ցանկացվածը կա՛մ քաջութիւն է, կա՛մ Հարստութիւն, կամ ազատութիւն ու մեծութիւն՝ նայելով մօրը Հոգեկան տենչանքին: Այս պատճառով ալ ընդՀանրապես ուրախութեան բարակ քող մը նետված է այս խումբի երգերուն վրա ժողովուրդի շրթունքին:

Կդնեմ քանի մը կտորներ՝ Հարսանեկան և օրօրի:

Ժամեն կուգայ ջուխտ մը փիտան.
ելնե՜նք, տեսնե՛ք մե՞րը կուգան.
առնենք, ելնենք վերը օտան:
Բարով եկեր դուն ի մերը.
առջիդ քաշենք եղն ու մեղրը:
Քալե՛, Հարսնո՛ւկ, քալե՛. Հարսնո՛ւկ.
վրա խալուն քալե՛, Հարսնո՛ւկ,
քալե՛ ու մանտրտիկ քալե՛.
ալուկ փեշերդ վեր ծալե՛:

Թագվորի մեր, դո՛ւրս եկուր,
քու թագվոր որդիդ եկեր է,
քեզի կաքվու ձագ բերեր է,
թեք գնացեր, ջուխտ եկեր է:

Թագվո՛ր, զոլեմ գլխուդ ի վար.
առաջ ես քու պոյիկդ ըսեմ,
որ սելվիի ծառ կու նմանի.
անկեց ես քու երեսդ ըսեմ,
որ լուսընկի կալ կու նմանի.
անկից ես քու փարչամդ ըսեմ,
որ սրմայի թել կու նմանի.
Հա՛յ, իմ Հա՛յ աննման ազվոր:

Ազվոր, քեզ ո՞ր մարն է բերեր.
ան թուխ աչեր մարն է բերեր,
մարն է բերեր մեզի Համար,
մենք ենք եկեր քեզի Համար:

Խնամի՛, դուռդ չեն կենա,
այս դռնակը բաց մնա,
ջուխտակ որդիքդ ապրած կենա:

Մի՛ լար, մարի՛կ, ես ալլի տի գամ,
ութ օրն լմըննա՝ ընկերովս տի գամ,
տարին ուր լմըննա՝ գրկովս տի գամ:

Աղջիկ մի կու տանին լալով ու լալով,
գլուխը փաթթթեր են լաՀոռի շալով.
ծամերը Հյուսեր են սրմայի թելով:
Եկո՛ւր աղվո՛ր աղջիկ, Հարս եղիր մեզի,
յախութ, զմրութ, անգին քար եղիր մեզի:

Թագվորի՛ մեր, դո՛ւս արի,
տե՛ս քե ինչե՛ր ենք բերե:
Քե լվաց անող ենք բերե.
քե տախտ ավլող ենք բերե.
քե տաշտ մաքրող ենք բերե.
քե Հաց թխող ենք բերե.
կարկտան անող ենք բերե.
բուրդի գզող ենք բերե.
ճախրակ մանող ենք բերե.
սոլեր շիտկող ենք բերե.
ծամ խստկող ենք բերե.
քե գլուխ դմրող ենք բերե:
Քաղվածորեն

– Էն դիզան, պետ-պետ դիզան,
տեսե՛ք՝ էն ո՞րն է:
– Էն դիզան, պետ-պետ դիզան,
դեղի Համբեքն է:
– Կաքվըներ կըղկըղալեն,
տեսե՛ք՝ էն ո՞րն է:
– Կաքվըներ կըղկըղալեն
էն էրիցներն է:
– Ճնճղուկներ ճըվըլալեն,
տեսե՛ք՝ էն ո՞րն է:
– Ճնճղուկներ ճըվըլալեն,
էն տիրացուքն է:
– Էն միջի Հաստագերան,

տեսե՛ք՝ էն ո՞րն է,
– էն միջի հաստագերան
թագավորի հերն է:
– էն քուլա բամպակն ի ծակ,
տեսե՛ք՝ էն ո՞րն է:
– էն քուլա բամպակն ի ծակ
թագավորի մերն է:
– էն արև, երկնուց արև,
տեսե՛ք՝ էն ո՞րն է:
– էն արև, երկնուց արև,
էն թագավորն է:
– էն լուսին ամպերի տակ,
տեսե՛ք՝ էն ո՞րն է:
– էն լուսին ամպերի տակ,
մեր թագուհին է:
– Շունն եկավ, պարկն ի բերան,
տեսե՛ք՝ էն ո՞րն է:
– Շունն եկավ, պարկն ի բերան,
գեղի գզիրն է:

ՕՐՈՐ

Օրոր ըսեմ, քնանաս,
քնանաս ու մեծանաս.
ան գեղն, ուր մեծ չկենա.
ան գեղի մեծը դառնաս:

Դուն դառնաս անտառ մորուն,
գարնես քոքիկդ խորուն.
քոքիկդ խորուն գարնես
ծառդ չուք դա ճղերուն:

Օրո՜ր, օրո՜ր, քներ ես,
ծածկեր եմ քրտներ ես,
երեսիդ չարը դեն տանիմ,
վարդի նման բացվեր ես.
վարդերու անուշ հոտուն
եղի՛ր, մո՜ւշ-մուշ, անուշ քուն:

Կենցաղական երգերու չորրորդ խումբը, ընդհակառակը, սուգի երգերն են, մահվան ու անդառնալի անջատման ցավն ու կսկիծը: Կյանքեն աղիի և կյանքեն անդիի հակադրությունը. կյանքի չվայլած հրապույրներուն պատկերացումը և առոնցմով մեռածը երևակայությամբ ապրեցնելը. ցնորական հույսեր և դառն հուսահատություն:

Խիստ հուզիչ կտորներ ունին այդ երգերը, ուր սակայն գեղարվեստի տալիք հաճույքը ամբողջապես կխեղդվի ցավի ուժեղ ճնշումին տակ: Երբ ցավեն խելագար մայրը ելած կպարե իր կտրիճ զավկի դիակին չուրջը, ալ ո՞վ կրնա պարի մասին մտածել:

Կենցաղական երգի այս չորս խումբերը, այսպես ըսեմ, միջազգային են, այսինքն՝ ամեն ժողովուրդ ալ ունի այս կամ այն չափով ու հաջողությամբ: Թուրանական դարերու դառն հայկական իրականության և դարավոր ծանր տնտեսական ու քաղաքական պայմաններու ինքնահատուկ պտուղը կներկայացնեն կենցաղական երգերու մեր հինգերորդ ու վերջին տեսակը, որ պանդուխտի երգեր կանվանենք:

Հայրենի տան ու գյուղի, հայրենի լեռներու ու ձորերու, իրարմե բաժնված մարդ ու կնոջ, մոր ու զավկի ու սիրելի դեմքերու, սիրելի վայրերու այրող կարոտով ու անհագ որոնումով շաղաղված երգեր: Շատ լեղի երգեր, բայց և չատ խոր ու գեղեցիկ, որու ամեն տողեն ու բառեն հայ հոգիի երազանքը կկաթի ու իր ավեր բույնին խորունկ սերը:

Ղարիպ մեռար, ղարիպ թաղեցին,
ղարիպ լցին հողիկն ի վրադ.
եկին օտար մարեր ի վրադ,

եկին օտար քուրեր ի վրադ.
եկին ու վա՛յ բերին ծնողին։
Վա՛յ բերողին, վա՛յ մեծցնողին,
վա՛յ յուսայուս արթուն կեցողին.
մաղկատր սրտին ծիծը տվողին։

Յամա՞ն, յաման, իս Յուսկյուտար անցուցե՛ք.
Սև ծովը ճեղքեցեք, ճամբա ցուցուցե՛ք.
տարե՛ք իմ մորս դռնակ, վար դրեք ու պահ մը լացեք,
յարուկս ալ վար իջեցուցեք, հյուսած ծամեր քակեցե՛ք,
քուրուկս ալ վար բերեք, ծարուրած աչքն լացուցե՛ք։
Չկա՞ն, չե՞ն գար...

Այ չեմ երթար պախճան վարդերուն տակը,
ինկեր է մատնիխս ջեվահիր ակը,
ա՜խ, ի՞նչ դժվար ցավ է էօլյումին խակը։

Սուրբ Աստվածածնա ծոցեն
մարգրիտ մը ինկեր է՝ գին չունի.
Երնե՛կ գտնողին, վա՛յ եկեր է կորսուողին։

ԿԻՆԸ ՂԱՐԻՊ ԱՄՈՒՍՆՈՒՆ

Գիշեր-ցերեկ հեչ չես եկեր մտացս.
գլուխս բարձ դնեմ՝ կու գաս երազս.
Հերամ ըրիր կերած հացս, խմածս։

Ղայեմքեր պտեի՝ քիալեսդ առնեի,
քանի կարոտնայի՝ վրադ նայեի,
պելքի ես ալ քենե արզուս առնեի։

Գարնան պյուլպյուլի պես՝ պախճան կիջնեաք,
թե թեի կու տայաք, չիֆթ ժուռ կու գայաք,
երկիր կու հավասեր, դատըկ չունեաք։

Զարկիր, կրակ տվիր, կերիմ, կու վառիմ.
Ջրի պես ծարվցեր՝ ճամբուդ կը նայիմ:

ՂԱՐԻՊԸ

Կռո՛ւնկ, ուստի՞ կու գաս, ծառա եմ ձայնիդ.
կռո՛ւնկ, մեր աշխարհեն ծապրիկ մի չունի՞ս:
Մի՛ վազեր, երամիդ շուտով կը հասնիս.
կռո՛ւնկ, մեր աշխարհեն խապրիկ մի չունի՞ս:

Թողեր եմ ու եկեր մլքերս ու այգիս.
քանի որ ա՛խ կանեմ, կու քաղվի հոգիս.
կռո՛ւնկ, պահ մի կացի՛ր, ձայնիկդ ի հոգիս,
կռո՛ւնկ, մեր աշխարհեն խապրիկ մի չունի՞ս:

Ո՛չ զլուր օր գիտեմ, ո՛չ զկիրակին,
զարկած է զիս շամփուրն, բռնած կրակին.
այրիլս չեմ հոգար, ձեզմե կարոտ եմ.
կռո՛ւնկ, մեր աշխարհեն խապրիկ մի չունի՞ս:

Պաղտատու կու գաս, կերթաս ի սեհրաթ.
Թղթիկ մը գրեմ տամ քեզ ամանաթ,
Աստված թող վկա լինի քու վրադ.
կռո՛ւնկ, մեր աշխարհեն խապրիկ մի չունի՞ս:

Գրեր եմ մեջ թղթիս, թե հոս մնացի.
օրիկ մը օրեր զաչերս չբացի,
սիրելի՛ք, ձեզանե կարոտ մնացի.
կռո՛ւնկ, մեր աշխարհեն խապրիկ մի չունի՞ս:

Աշունն է մոտեցեր, գնալու ես թետպիր.
երամ ես ժողվեր, հազարներ ու բյուր.
ինձ պատասխան չը տվիր, եյար. գնացիր.
կռո՛ւնկ, մեր աշխարհեն գնա՛ հեռացի՛ր:

3. ՍԻՐՈ ԵՐԳԵՐ

Ժողովրդական քնարերգության երրորդ տեսակը կկազմեն սիրո երգերը: Ամենուն հոգիին խոսող, ամենուն ապրած և ամենեն պարզ երգերն են ասոնք: Ընդհանրապես մեկտունանի քառատող. ավելի բարձր կառուցումով և ավելի բացառիկ երգերու մեջ մեկ-երկու տուներ ավելի սերտորեն կկապվին իրար ու կկազմեն կենդանի ամբողջություն մը:

Նախնականն ու հիմնականը քառատողն է: Այս կարճ և կազմով ու չափով ընդհանրապես միատեսակ երգերուն և՛ հնարքը, և՛ եղանակները, և՛ տարածքը մատչելի է շատ-շատերուն, գրեթե բոլորին. և ատոր համար ալ շատ են այդ սիրո քառատողերը, բայց անշուշտ ո՛չ հավասար արժեքով: Միևնույն մտածումի, միևնույն պատկերի կամ համեմատության քանի-քանի տարբերակներ կան: Իսկապես խոր զգացումով ու գեղեցիկ արտահայտությամբ ձուլածո տուներուն քով կան շատ միջակ ու սովորական պատկերացումով բազմաթիվ տուներ: Եվ եթե հավաքող բանասերը իր գրական ճաշակը մեջ բերել չուզենա՝ կան շատ տափակ, նույնիսկ կոշտ ու տգեղ տուներ: Մարդկային հոգիները թե՛ զգայուն և թե՛ արտահայտելու տեսակետեն շատ են տարբեր իրարմե իրենց նրբությամբ, իրենց խորությամբ, իրենց ճաշակով միևնույն գյուղական հասարակության մեջ: Հայ ժողովրդական սիրերգին մեջ տիրող չեշտը նորեն կարոտն է, որոնումը, կանչը, այսինքն՝ երազանք, տենչանք ու մաշվիլ. ատով ալ հայ սիրո երգը ընդհանրապես մարմնականեն բարձր կմնա, սիրտ կբանե և ավելի խոր ու նուրբ կազդե:

Սիրերգներուն քառյակները մեծ մասով լուրջ են, բայց պակաս չէ երբեք հեգնությունը. մեջեմեջ կատակ ալ կա, նույնիսկ ծաղր:

Սիրո այս երգերը ժողովուրդի մեջ երեք ձևի գործածություն ունին: Ամենեն առաջ իբրև պարզ երգ՝ անհատաբար կամ խումբով երգվելու: Երկրորդ ձևի գործածությունն է իբրև բաղդի գուշակություն համբարձման տոնի օրը, որ հին հեթանոսական դարերեն եկող հավատալիք ու սովորություն է: Հավատք կար, թե այդ գիշերը երկինքը կբացվի, և ով որ տեսնե այդ բացումը, մեծ բաղդի կտիրանա: Յոթը աղբյուրներե բերված ջուրի, ծաղիկներու և երգերու

Հետ հյուսված բաղդի այս գուշակումը ժողովուրդը հիմա պարսկերեն բառով «ջան գյուլում» կանվանե. և իբրև գուշակություն բովող սիրո երգերուն՝ տուներն ալ կդառնան ջանգյուլումի երգեր: Սիրո երգերու գործածության երրորդ ձևն ալ պարերգ դառնալն է. աղջիկ ու տղա շղթա կազմած փոխնիփոխ կերգեն տուն-տուն և պարի շղթան առաջ ու ետ կտատանի ըստ եղանակի պահանջին՝ մերթ մեղմ, մերթ աշխույժ և մերթ բուռն:

Միևնույն քառյակները այս երեք ձևով ալ կգործածվին, թեև երգերեն մեկն ու մյուսը այս կամ այն գործածության համար կարծես ավելի կհարմարին գլխավորապես իրենց կապված եղանակին բերումովը:

Սիրո քառյակը ընդհանրապես որոշ կազմ ունի. առաջին երկու տողերը կա՛մ բնության նկարագրություն է, կա՛մ համեմատություն մը, կա՛մ այլ տեսակի նախապատրաստություն մը հաջորդ երկու տողին համար. այս վերջին երկտողն է, որ իսկապես կներկայացնե գլխավոր զգացումը: Որչափ խոր ու բնական ու ճիշդ ըլլա այս երկու մասերուն մեջ եղած կապը ըստ իմաստի. այնքան բարձր կըլլա իր պատճառած գեղարվեստական հաճույքը: Եթե երկու մասերուն միջև այդ խոր կապը չկա, երբ մեկ կեսին բերած պատկերը, համեմատությունը կամ տարողությունը հաջորդ կեսի սիրո զգացումի արտահայտության հետ իրար լավ չեն բռներ, անշուշտ որ գեղարվեստական խորքը կտուժե. միակ կապը կմնա բառախաղ մը, հարուստ հանգ մը, այսինքն ավելի արտաքին, հասարակ արվեստ:

Ժողովրդական սիրերգի այս քառյակները երգել ու գրել կարելի է իրարու ետևե ու կազմել տեսակ մը շարան, բայց ատով նոր ամբողջություն չի կազմվիր. ամեն քառյակ ինքնուրույն է: Երբ քանի մը տուներու ներքին իմաստի կապով ամբողջություն մը կգոյանա, իսկույն կստացվի ավելի բարձր արվեստ. և ավելի բացառիկ, և՛ ավելի գեղեցիկ:

Կդնեմ ժողովրդական սիրերգի քանի մը ավելի հաջող քառյակներ, այլև բացառիկ կառույցով երգ մը.

Անձրև եկավ շաղալեն,
ուռու տերև ղողալեն.

Հրես եկավ իմ աղբեր
ալ ձին տակին խաղալեն:

Սիրեր եմ սերն երեսին,
ուեհան ու թերն երեսին,
ով իմ սիրածն ինձ չտա՝
Աստծու կերն երեսին:

Մի ջաղաց երկու դռնի,
բարձ բերեք՝ յարս կռնի.
ես, դու մի պաղում պտենք
ես՝ չինարի, դու՝ նռնի:

Սերն ի՞նչ է, սևտան ի՞նչ է.
թուղթն ի՞նչ է, ղալամն ի՞նչ է.
բարձր ծառ, անուշ պտուղ.
չեմ հասնիր, փայտան ի՞նչ է:

Սարը սարին նման չէ,
քարը քարին նման չէ.
Հարս ու աղջիկ շատ տեսա՝
մեկն էլ յարիս նման չէ:

Քանաքեռ բարձր տեղ ա,
ջուրը հիվանդի դեղ ա.
սիրած սիրածի չեն տա,
էս ի՞նչ անօրեն գեղ ա:

Ա՜յ տղա, սև ջուխավոր,
սադմոր ծոցիդ սովոր.
էրնեկ կու տամ էն օրը՝
մեր տունը գաս թագավոր:

Ա՛յ տղա, պաղումն արի,
ոտքերդ շաղումն արի,
էս թաղը ղալմաղալ ա,
ման տուր՝ էն թաղումն արի:

Ուռի ես՝ կռանա՛լ մի,
մեր տնից Հեռանա՛լ մի.
թե Աստվածդ կը սիրես,
սիրել ես՝ մոռանա՛լ մի:

Կայնել ես, կանչում էլ չես.
պոյիցդ ամաչում էլ չես.
եկար կշտովս անց կացար՝
տեր ես, ճանաչում էլ չես:

Ոսկի մատնիք մատներին,.
շողքն ընկավ երեսին.
աքլո՛ր, շուտով մի՛ կանչեր,
անքուն կանես իմ յարին:

Կայնել եմ՝ գալ չեմ կարող,
լցվել եմ՝ լալ չեմ կարող.
քանի որ գնացել ես՝
անունդ տալ չեմ կարող:

Ա՛յ, Հևա՛, Հևա՛, սի՛րտս.
ճնճղկան թև ա սիրտս.
քանց պուտը կարմիր չկա՝
բաց անեմ՝ սև ա սիրտս:

Ավելի կատակով կամ ծաղրով.

Սարերի սինձն ի՞նչ կանեմ.
կաթով բրինձն ի՞նչ կանեմ,
թող իմ սիրածն ինձի տան,
ոսկի, արծաթն ի՞նչ կանեմ։

Ձուն դնեմ թավեն, խաշեմ,
գնամ, կողովը աշեմ.
թե որ յարս գալիս է՝
չոքեմ, չեքմեքը քաշեմ։

Արխալուխս կարել եմ,
ոսկե կոճակ շարել եմ,
նանի՛ ջան, տարս մի՛ անի,
իմ սիրածս ճարել եմ։

Պարտեզ ունեմ՝ դրախտ ա,
ծաղիկ-ծաղկունքի վախտ ա.
գեշ աղջիկ, սիրուն տղա՝
էս էլ մի ուրիշ բաղդ ա։

Սարերում մը տուն ունեմ,
մեջին ոսկի սուն ունեմ.
ա՛յ շան տղա, քի՛չ խոսա.
քեզ պես հազար շուն ունեմ։

Սանտր կծեծեմ՝ խաղ կանեմ,
մաշիկը ոտիս լախ կանեմ.
շատ մի՛ խոսա, ա՛յ տղա,
մուկն բուխիցդ կախ կանեմ։

ԵՍ ՍԱՐԵՆ ԿՈՒ ԳԱՅԻ

Ես սարեն կու գայի, դուն դուռը բացիր,
ձեռքդ ծոցդ տարար, ա՛խ ըրիր, լացիր:

Ես մի պինդ պաղ էի, դուն մրմուռ լացիր,
քո Հրեղեն արցունքով ինծի Հալեցիր:

Ես մի չոր ծառ էի, դուն գարնան արև,
քո սիրով ծաղկեցավ իմ ճյուղն ու տերև:

Թե չէիր ինձ առնի՝ ինչո՞ւ սիրեցիր.
մի բուռ կրակ եղար, սիրտս էրեցիր:

4. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

Քնարական երգերու չորրորդ տեսակը բնության նկարագրությանը նվիրված երգերն են, որոնք շատ չեն, բայց որոնց մեջ Հիանալի կտորներ կան խոր տրամադրությամբ:

Այս երգերուն Հիմնական նյութը մեկ մը լույսն է ու լուսաբացը, գիշերը, իրիկունը, մեկ մըն ալ տարվան չորս եղանակները՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ, երբեմն ամեն մեկը առանձին գծված, երբեմն չորսը միասին իրարու ետև:

Այդ երկու Հիմնական նյութերուն կապված՝ խոսքի ու գովքի կուգան մեր Հայրենի աստղազարդ երկինքը, ձյունապատ լեռները, գլգլան ջրերը, արտ ու այգի, ծառ ու ծաղիկ, թռչնիկն ու Հովերը «անո՛ւշ, անո՛ւշ»:

Իրենց կազմով ավելի բարդ են, քանի մը իրարու կապված տուներ են սովորաբար: Իրենց Հատուկ կրկնություններով, Հանգի ու չափի առանձնաՀատուկ շեղումներով:

ԳԻՇԵՐ

Լուսնակն անուշ, հովն անուշ,
շինականի քունն անուշ.
ծագեց լուսնակն երկնուց,
հովվի փողն էր անուշ:

Հոտաղ եզներ կարածա,
մաճկալ պառկեր՝ քունն անուշ,
զզզզուն քամին կը փչէ,
ծովային հովն էր անուշ:

Դաշտեր, ձորեր մնջեր են,
ջրեր գլգլան՝ ձենն անուշ.
հավքեր թռան իրենց բուն,
պլպուլի սազն էր անուշ:

Անմահական հոտ բուրեր,
քաֆուր վարդի հոտն անուշ.
հասուն պտղով լի ծառեր,
ծառի տակ քունն էր անուշ:

ԳԱՐՈՒՆ

Գնաց աշուն, եկավ գարուն.
կաթեր ջրիկ աղբյուրներուն.
երթար լցվեր բարակ առուն.
աղբրանց-առուն մեջ քարերուն,
դեղին սուսամ վըր քարերուն.
փունջ մանիշակ մեջ ձորերուն,
կանաչ-կարմիր գույն-գույն ծաղկունք.
դաշտերն ամեն էրանք, թռչուն,
ձենիկ կու գա գառնիկ-մագուն:

ԱՐԱԳԻԼ

Արագի՛լ, բարով եկիր,
դո՛ւ, արագի՛լ, բարով եկիր,
մեզի գարնան նշան բերիր,
դու մեր սրտիկ զվարթ արիր:

Արագի՛լ, երբ գնացիր,
դու մեր ծառեն երբ գնացիր,
զուլումաթ Հովեր արին,
ծիծղուն ծաղկունքս չորցուցին:

Պսպղուն երկինք մթներ,
էն պսպղուն երկինք մթներ,
մեր վերեն ձներ բրդեր,
ծաղկաթափ ձմեռն Հասեր:

Վարագա սարեն բռնած,
էն Վարագա սարեն բռնած,
ձյունն իջներ, ըմեն ծածկեր,
կանաչ դաշտեր սիպտակ աներ:

Արագի՛լ, բարով եկիր,
դո՛ւ արագիլ, բարով եկիր.
մեզի գարնան նշան բերիր,
դու մեր սրտիկ զվարթ արիր:

5. ԶՎԱՐՃԱՆՔԻ ԵՐԳԵՐ

Քնարական երգերուն վերջին տեսակը կկազմեն զվարճանքի երգերը, խնդալու Համար, կատակի Համար շինված երգերը:

Ասոնցմե առանձին խումբ մը կներկայացնեն արդեն իրենց Հորինման ձևովը իրենց վրա խաղ ու կատակ ունեցող երգերը. ու ր

որոշ հարցի մը կամ խոսքի մը կրկնությամբ հետզհետե նոր կենդանիներ, նոր տարրեր կու գան կավելնան հիմնական տարրին՝ կազմելով գալարուն, հետզհետե աճող և կծիկի մը պես ինքն իր վրա փաթթվող հյուսք մը, որ ինչքան երկարի, այնքան ծիծաղաշարժ կդառնա, իմաստն ու եղանակն ալ զվարճության իրենց բաժինը կավելցնեն:

Երրորդ խումբ մը կկազմեն հատկապես մանկական հոգեբանության և մանուկներու զվարճության համար բացված կես-լուրջ, կես-կատակ երգերը: Ասոնք պարզ բառախաղեր են, հանգերու խաղեր, առանց խոր իմաստի կամ գուցե իրենց իմաստը կորսնցուցած, այսպես, օրինակ, ամենուն հայտնի «Ծի՛վ, ծի՛վ, մատնոցիկը»: Կան սակայն ավելի խորք ունեցող տեսակները:

Ահա՛ մանկական պարզ կատակ մը.

Արեգա՛կ, արեգա՛կ, դուս արի,
հերդ ու մերդ եկել է,
ոսկի ըլիթ բերել է,
պատի ծակը դրել է,
մուկն եկել է, տարել է,
կատուն էննեն վազել է,
գոմշի փուշը կտրել է,
աղամանը վիթել է:

Շատ ավելի խորք ունի հետևյալը.

– Լագլագո՛,
Հաճի-պեկո,
Հուսա՞ կու գաս:
– Սև սարերուց:
– Ի՞նչ ես բերեր:
– Թուղթ մը սապոն:
– Ո՞ւր կը տանիս:
– Սուսկա մամուն:

- Որ ի՞նչ անի:
- Լաչիկ լվա,
Թալի գլխուն,
Ելնի դարուն:

Երրորդ կարևոր խումբ մը կկազմեն կենդանիներու դեմքը գծող, բնավորությունը նկարող ու նկարագրող ոտանավորները:

Կենդանիներու կյանքեն ու վարքեն առած այս իրական ու ճշմարիտ պատկերացումները և խաղերը շատ մոտիկ են ու սիրելի մանուկներու հոգիին: Աքլորը, լորիկը, կաքավը, կկուն, մուկը, կատուն, շունը և նշանավոր աղվեսը, որ բոլոր գրականություններու մեջ հատուկ տեղ ու դեր ունի, ասոնք են հերոսները, բացառություն չէ նաև մեր անգիր ժողովրդական բանահյուսությունը:

Արտուտի՛կ,
կարմիր տոտիկ,
իջնեն կալեր
դողտիկ-մողտիկ,
ընտրեն քարեր,
ուտեն կուտիկ,
կը ծլվլան
կլթիկ-կլթիկ:

ԱՂՎԵՍ

Աղվեսն հագեր քուրքը դեղին՝
պտուտ կու գար շուրջը գեղին,
ջուր կտրեցավ տատխս լեղին,
ա՛յ, դո՛ղ աղվես, ագին ծաղիկ:

Աղվեսն եկեր նստեր դեզին,
երկար ագին ծալլեր վզին,
աչք է տնկեր մեր խորոզին,
ա՛յ, չար աղվես, ագին ծաղիկ:

Վա՛յ, իմ խորոզ, կարմիր խորոզ,
ման կու գայիր գոռոզ-գոռոզ,
փետուրդ արավ ողջ դար ու փոս,
ա՛յ, գող աղվես, աղին ծաղիկ:

Աղվե՛ս, աղվե՛ս, դու չար գազան,
ոտքերդ կարճ ու խիստ վազան,
շներն ամեն քեզ չհասան.
ճարպիկ աղվես, աղին ծաղիկ:

Չորրորդ խումբն ալ կկազմեն արդեն մեծերու հասցեին ուղղված հեգնություններ, մեծերուն կյանքին ծաղրանկարը, երբեմն կոպիտ, երբեմն կատակ, երբեմն շատ նուրբ:

Կդնեմ երկու օրինակ: Առաջինի վերնագիրը կրնանք դրել «Ահագին իրարանցում ոչինչի համար». գյուղական կյանքի իրական պատկեր մըն է կատակով և կապված ճնճղուկներու աներևության: Երկրորդը շատ նուրբ ծաղր մըն է ծույլ ու անպետք հնձվորներու հասցեին. ծաղրը ըմբռնելու համար պետք է գիտնանք, որ մեկ բարդը քանի խուրձ է:

ՃՆՃՂՈՒԿՆԵՐ

Կոտ ու կես կորեկ ունիմ ցանելու համար,
ճնճղուկներ թռան եկան ուտելու համար,
ծռեցա քար վեր կալա զարնելու համար:

Կտրիճներ դանակ բերին մորթելու համար,
աղջիկներ թև քաշեցին փետրելու համար,
պառավներ պղինձ բերին եփելու համար:

Դուռ-դրկից շուրջ բազմեցան ուտելու համար,
տերտերներ խաչով եկան օրհնելու համար,
աշուղներ սազով եկան գովելու համար:

Ա՛յ ճնճղուկիկ,
ճերմակ փորիկ,
ուտեն կուտիկ,
խմեն ջրիկ
առվի եզրիկ,
պզտիկ-մզտիկ,
փախչեն երթան ման գալու համար:

ՋԱՆԱՍԵՐ ՀՆՁՎՈՐՆԵՐԸ

Ալիքսան
և իր տասնըինը փեսան,
քսան գերանդի, քառսուն հեսան.
Նստեն, սրեն,
ուտեն, պառկեն,
քաղեն, փոցխեն,
կապեն, բարձեն,
վերջին անգամ համրեն՝ տեսան
բարդեն պակաս էր քսան:

Դ. ԱՐԴԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻՆ ՏԱՂԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ

1. ՉԱՓԸ

Արդի անգիր բանահյուսության քնարական չափը մեր հին մանրահատում հատվածական չափն է. յուրաքանչյուր տողը կազմված է գլխավորապես երեք կամ չորս հատվածե և յուրաքանչյուր հատվածի երկարությունը՝ երկու կամ երեք վանկ:

Այս ազգային հիմնական չափին վրա արաբական ու թուրքական ազդեցությամբ ավելցած է տողերու հավասարության սկզբունքը. ոտանավորի բոլոր տողերը կունենան վանկերու նույն թիվը:

Ժողովրդական երգի տեսակներուն մէջ աչքի կիյնա անզոյգ թիւերու գերադասութիւնը. Հինգ կամ յոթը կամ տասնմէկ վանկանի տողերով են հիւսուած երգերը մեծ մասով: Այս գերադասութիւնը արդիւնք է երկվանկ ու եռավանկ հատուածներու խառն գործածութեան տողերու մէջ, որով գումարը աւելի մեծ հաւանականութիւն ունի անզոյգ ըլլալու:

Երբ միայն երկվանկ կամ միայն եռավանկ հատուածներով է հիւսուած երգը՝ տողերը աւելի մեծ հաւանականութիւն կստանան զոյգ թիւով վանկեր ունենալու՝ ութը, տասը, տասներկու: Բայց աւելի քիչ են գործածական և կարծես աշխարհագրօրէն ալ աւելի հարաւային են. Վան ծովուն շուրջը աւելի սիրուած է կարծես միատեսակ հատուածներով երգ հօրինելը:

Արդի ժողովրդական քնարական չափերը կարելի է երեք աստիճանի վերածել՝ կարճ, սովորական և աւելի երկար չափեր:

ա. Կարճ չափերին ամենեն աւելի գործածութեան եկողը հինգ վանկանի տողն է երկու հատուածով՝ 3 ու 2 կամ 2 ու 3 վանկանի: Ժիր ու շարժուն չափ մը, որ աշխուժ կուտայ խոսքին և շուտ-շուտ դարձող հանգն ալ կուտայ աւելի զվարթութիւն:

Այս չափով են հօրինուած, օրինակ, «Գութանի երգին» հիմնական տուները.

Վարե՜նք շատանա,
տերն ուրախանա.
թա՛փ տուր, թե՛ արա,
շո՛ւռ տուր, սե՛ արա.
գութանա՛ս, հոտա՛ղ,
ես քեզի մատաղ:

Այս չափով է հօրինված կատակող սիրերգը՝ «Ինճիներ յար ջան». այս չափով է մշեցիներու «Յոթն օր, յոթ գիշեր, շաղգամն ի գոտխ թումշեր» հայտնի երգը իր կարճ մասերուն մէջ.

Երթանք Ստամպոլ,
բերենք փարա պոլ,
իմ յարի համար
առնենք ջուխտ ըմ սոլ:

Կայներ ես Հիգին,
խաղող կու քաղես.
չամամ ծծերով
Հոգիս կու Հանես,
ալմաս պչաղով
գիմ սիրտ կու տաղես:

Ահա՛ Հինգոտանի ջանգյուլում մը. որ բացառություն է ու Հեզնանք.

Մեր պաղը ծառ ա,
ձեր պաղը քար ա.
ես քեզ չեմ առնի,
իմ աղբոր ծառա:

Ավելի սակավ կգործածվի չորսոտանի կարճ չափը, որ մանկական է: Այսպես են «Արտուտիկ»-ի ու «Ծնճղուկներ»-ու կարճ մասերը: Այսպես է «Դլե՛ յաման» սիրային երգի կարճ տուները. և երգը արդեն Հեգնություն ունի իր իմաստին մեջը. նշանածը դեռ երեխա աղջիկ մըն է:

Արևն առեր
Վանա ծովին,
ես քեզ սիրի
աշնան Հովին:

Լուսինն ելավ
էս գիշերին.
յարս տեսա
կես գիշերին:

ը. Յոթնոտանի տողը արդի ժողովրդական երգի ամենեն սովորական ընթացիկ չափն է, ջանգյուլումներուն չափը: Արդեն երգը ինքը իր անունը կու տա.

Երգ ասեմ յոթնատանի.
մինակ քունս ո՞նց տանի.
էգուց արի մեր տունը,
մատիդ դնեմ մատանի:

Տողը միշտ բաղկացած է երեք հատվածե՝ երկու հատը երկվանկ, մեկ հատվածը եռավանկ, ազատ դասավորությամբ, ինչպես պատահեցավ.

Մոտիկ արեք էն ղուշին, 2.2.3
ոտքը դրեր է փուշին. 2.3.2
գլուխս ղուրբան կու տամ 3.2.2
թուխ աչքին, կարմիր թուշին: 3.2.2

Ա՛յ տղա, դուն պաղի միջին, 2.3.2
ոտքերդ շաղի միջին. 3.2.2
կանչե, կանչելուդ մեռնիմ. 2.3.2
ես եմ քու հաղի միջին 2.3.2

Երևան պաղ եմ արել, 3.2.2
Հոգիս մատաղ եմ արել. 2.2.3
բարե-կամի, էլի մոտ 2.2.3
լացս ծիծաղ եմ արել: 2.2.3

Ահա՛ շատ բացառիկ, չորսվանկանի բառերով աղվոր տուն մը.

Կայնել ես աղբե-բակին. 3.2.2
շող կու տաս արե-գակին. 3.2.2
քո շող երեսիդ մեռնեմ, 2.3.2
ունքերիդ աղեղ-նակին: 3.2.2

Ութը վանկանի չափով հայրենական երգերուն մեջ կան մասեր, օրինակ՝ վերը արդեն հիշված «Թագավորի» գովքը: Ութի չափով է գրված «Տատրակ» թռչունի ամբողջ վիպերգը և բոլոր տողերը միևնույն հանգով և առանց տների բաժանման, այսինքն՝ վիպական կառուցմով:

Կդնեմ արոր Թռչունի պատասխանեն կտոր մը.
Ասաց. դու մի՛ լար էս աշուն.
չէ՞, վաղ կու գա բարի գարուն.
լուս կը բացվի վըր աշ-խարհուն,
դուռ կը բացվի խեղճիկ-ներուն.
ես քեզ կառնեմ իմ թև-քերուն,
թռնեմ բարձրիկ վեր ծառ-երուն:

Ահա՛ Վան ծովի մոտեն սիրային տուն մը նման կազմով 2.2.2.2.

Կիգամ. յար Նըս-տեր վըր խոտին,
շուշան ցանեմ ես քյո ոտին,
թևքս կեղնի մեջքիցդ գոտին.
տերտեր կօխնա մեր Նա-րոտին:

Այսպես ալ ամբողջ կաքավի պատմությունը.

Արև դիպավ սարի վերեն,
կյաքավ ելավ իրա բյոնեն
բարև արեց ծաղկը-ներեն,
թռավ ելավ սարի վըրեն:

Քյո բյոն հյուսած ծաղկը-ներով.
ըրհան, Նարգիզ, նունու-փարով.
քյո տեղ լցված է շաղ-երով,
դյու կը մայլիս անմահ հոտով:

Որ ըսել է ուլթը ոտանի տողին մեջ տիրապետողը քառահատվածն է. կրնար ըլլար մեջեմեջ երեք հատվածով՝ երկու հատվածը եռավանկ, մեկ հատվածը երկվանկ:

դ. Տասնմեկ վանկանի տողերով երգը ավելի լուրջ է տեսակ մը, ավելի լեցուն ու հանգիստ: Տողը կազմված է երկու և երեք վանկանի հատվածներով. տողը կունենա չորս հատված. եթե տիրողը եռավանկերն են, աս է ավելի սովորականը. տողը կունենա

Հինգ. Հատված, եթե տողին մեջ տիրողը երկվանկերն են:

Պյուլպյուլը կը կանչե. ասօր գարուն է. 3.3.2.3
մի՛ խոսիք, մանկըննե՛ր, սրտիկս արուն է. 3.3.2.3
սիրեկան յար մ'ունիմ, ան ալ Հեռուն է: 3.3.2.3

Առավօ-տուն կելլես, երեսդ լվա՛. 3.3.3.2
Լուրրշում մազերդ դրեր ես Հինա. 3.3.3.2
սա աղվոր երեսդ պագ մը տուր Հիմա: 3.3.3.2

Մանան սարեն կու գա, շալկինը ցախ է. 2.2.2.3.2
ոսկեթել մազերը թիկունքեն կախ է: 3.3.3.2
Երկինքը ամպել է, գետինը թաց է. 3.3.3.2
Մանանի թիկունքը կեսեն Հետ բաց է: 3.3.3.2
Արի, Մանա՛ն, արի՛ գնանք մեր տունը, 2.2.2.2.3
գիշեր-ցորեկ գուրկ է աչքիցս քունը: 2.2.2.3.2

Ես Ա.-լեքն եմ՝ չամբրխ-եցի մի ջիվան, 2.2.2.2.3
բռնին, տարան էստուց չուրի Երիվան, 2.2.2.2.3
ձեռ ու ոտս կապին, բերդը դրեցին, 2.2.2.2.3
չոխս, շալվար յալով տունը բերեցին: 2.2.2.2.3

Կանչե՛, կռո՛ւնկ, կանչե՛, քանի գարուն է.
գարիպների սիրտը գունտ-գունտ արուն է:
Կանչե՛, կռո՛ւնկ, կանչե՛, ձենդ բարակ է,
յարիս լեզուն թազա մեղրած կարագ է:
Կռո՛ւնկ, եղած տեղըդ չայիր չիման է.
աշխարհքը արեգակ, ինծի տուման է:

Այս չափով են Հորինված նաև վերը բերված երկու երգերը՝ «Ես սարեն կու գայի» և «Կռո՛ւնկ, ուստի՞ կու գաս», ինչպես և «Վարդն ի բացվե» երգը:

Տասը վանկանի չափը այս տասնմեկի Հետ Համեմատած՝ նույն կշիռը ունի, ինչ որ ութը վանկանին՝ յոթի Հետ Համեմատած:

կա՛մ վիպերգ է, կա՛մ ընդհանրապես Վան ծովի շրջանին.

Ծովուն հավքըմ կեր, անունն էր արոր.	2.3.2.3
վզիկն էր էրկեն, սրտիկ սեւավոր.	2.3.2.3
կապեմ պիչներես, երթամ խետ ինոր,	2.3.2.3
էն իմ տարտ գիտի, ես էլ գյո ինոր:	2.3.2.3

Սիրտս նման է էն փլած տներ.	2.3.3.2
կտորեր գերաններ, խախտեր են սներ.	2.3.3.2
բուն պիտի դնեն մեջ վայրի հավքեր:	3.2.3.2
Երթամ ծիկ թալեմ էն եկման գետեր,	2.3.3.2
ըլլեմ ծկներու ձագերաց-ըն կեր:	2.3.3.2

Այս չափով են հորինված հարսանեկան երգերու ավելի լուրջ մասերը: Այս չափով է հորինված «Ալ այլուղս» վիպերգը, ինչպես և «Աղջի Հոռոմ» փոքրիկ ամբողջությունը: Այս երկու երգերն ալ քիչ մը ետքը դնելու եմ:

2. ՏՈՒՆ

ա. Ժողովրդական երգը իր նախնական ու հիմնական ձևին մեջ կազմված է մեկ տունե մը և տունն ալ չորս տողե:

Բնության երգերը, օրորները, պանդուխտի երգերը, սիրո երգերը, այսինքն՝ ժողովրդական երգի ստվար մեծամասնության շենքն ու ամբողջությունը քառատող տուն մըն է:

Շատ հազվագյուտ է երեքտողանի տունը. և ընդհանրապես արկածի հանդիպած ըլլա կարծես ու մեկ տողը կորսնցուցած:

Ավելի սովորական է երկուտողանի տունը: Կարելի է ըսել, որ տասնմեկ վանկով հորինված, երբեմն և տասը վանկով հորինված երգերը կա՛մ սկիզբեն իրենց հորինումով կազմված են իրար հաջորդող զույգ տողերե, կա՛մ դյուրությամբ կարելի է վերածել այդ տեսակ զույգ տողերու, քանի որ ատոնց հանգերն ալ զույգ կերթան ընդհանրապես:

Հինգ, վեց, յոթը տողանի տուները պատահմունքի արդյունք է. և գլխավորապես երաժշտական հանգերի բերումով, ո՛չ իբրև գեղարվեստական հորինվածք:

Տան մը բոլոր տողերը ընդհանուր առմամբ նույն երկարությունը կունենան ժողովրդական երգին մեջ, բայց կա երկու շատ բնորոշ շեղում: Առաջին՝ յոթը ոտանի չափով հօրինված տուներուն երրորդ տողը, որ ընդհանրապես անհանգ կլինի, մեջեմեջ կպատահի նաև, որ դառնա ութը վանկ: Եվ երկրորդ՝ ութը ոտանի չափով հօրինված տան մը առաջին տողը շատ անգամ կըլլա յոթը վանկ:

Տան մը տողերուն մեջ երկվանկ ու եռավանկ հատվածներուն դասավորումը, ինչպես տեսանք, ազատ է. ժողովրդական երգը այդ կողմեն կաշկանդում չունի: Բայց բնական կերպով երգչի ականջը կձգտի զուգահեռականության ստեղծելու, այսինքն՝ որոշ տողեր նույնաձև հատում կառնեն: Զուգահեռությունը տեղի կունենա կա՛մ առաջին ու երկրորդ տողերու միջև, կա՛մ երկրորդ ու չորրորդ տողերու միջև, կա՛մ այդ երեք տողերուն մեջը հավասարապես:

Սարիցը ջուր ա գնում.	*3.2.2*
Հարցրե՛ք ո՞ւր ա գնում.	*3.2.2*
քենիցն մահանա արև,	*2.3.2*
յարուջը տես ա գնում:	*3.2.2*

Ինչպես տարբեր մեծության հատումներու դասավորության զուգահեռությունը տարր մըն է հայ երգին մեջ, այդպես ալ խոսքի տրամաբանական շեշտին զուգահեռությունը. տան մը որոշ տողերուն մեջ գեղարվեստական հավելյալ արժեք մըն է, որ կօգտագործե երգիչը երբեմն գիտակցորեն, ավելի հաճախ բնազդորեն:

Կայնե՛լ եմ՝ գա՛լ չեմ կարող.
լցվե՛լ եմ՝ լա՛լ չեմ կարող.
քանի որ գնացել ես
անո՛ւնդ տա՛լ չեմ կարող:

Հոս միայն «գալ», «տալ», «լալ» բառերուն հանգին մեջը չէ գեղեցկությունը, այլ շատ ավելի մեծ չափերով երեք տողերու տրամաբանական շեշտերու զուգահեռության մեջ:

Այսպես ալ ուրիշ տեղ մը, զուգահեռությունը միայն երկու տողի մեջ.

Ե՛ս բարձ բերեմ, դո՛ւ կըռնի.
Ե՛ս չինարի, դո՛ւ նռնի:

Ահա՛ տուն մը, ուր զուգահեռությունը կպահվի չորս տողերու մեջ.

Սա՛րը սարի՛ն նման չէ.
քա՛րը քարի՛ն նման չէ.
Հա՛րս ու աղջի՛կ շատ տեսա,
մե՛կն էլ յարի՛ս նման չէ:

Ասկե զատ կա ուրիշ հարց մը: Հայ երգը շեշտական չէ, այսինքն՝ հիմնված չէ մեր չափը շեշտված ու անշեշտ վանկերու կանոնավոր հաջորդականության վրա: Հայ երգին մեջ թե՛ նախադասության և թե՛ մեն-մի բառի շեշտը ազատ է բոլորովին, ամեն հատվածի, ամեն վանկի վրա կրնա իյնալ. և կկարծեմ՝ մեր չափի մեծ առավելություններեն մեկն է. ազատ է ականջը միակերպ ու միշտական թմբկահարումե: Բայց միևնույն ժամանակ շատ տեղ բնական կերպով մեր հատվածական չափը կնմանի ու կհավասարի շեշտական չափին, երբ միայն երկվանկ կամ միայն եռավանկ հատվածներով է հորինված. քանի որ մեր բառերուն շեշտը ընդհանրապես հատվածին վերջը կիյնա, այլև շատ անգամ հատվածին վերջը ինկած անշեշտ վանկը երգիչը կնետե հաջորդ հատվածին ավելորդ երկարութենե ազատելու համար: Այս կերպով մեր չափի մեջեմեջ շեշտականին նմանիլը առավելություն մը կդառնա, տաղաչափական նոր փոփոխություն մը, կարճ ու հավելյալ հաճելիություն մը:

բ. Նույն բովանդակությամբ քառատողեր, երբ նույն եղանակով իրարու ետևե կերգվին կամ կարտասանվին, բնականորեն տեսակ մը իրարու կկապվին ու կկազմեն երեք, չորս և ավելի տուներե կազմված շարան, ուր սակայն ամեն մեկ տուն ինքն իրմով կլրանա և ինքնուրույն կապրի, կապը արտաքին է:

Այդ կապը ավելի կշեշտվի և քիչ մը ավելի կխորանա, երբ իրարու հաջորդող տուները որևէ ներքին կամ արտաքին բանով

մը իրարու հետ կշղթայվին: Օրինակ՝ երբ բոլոր տուներն ալ կսկսին միեւնոյն դիմառնութեամբ. «Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ», կամ «Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հով արէք» կամ երբ ուղղված են միեւնոյն անձին ու անուն կուտան բոլոր տներու մէջ. «Աղջի՛ Սուսան» կամ «Սոնա բաջին կանչում ա, կանչում ա»: Յուրաքանչյուր տուն նորէն խորքին մէջ առանձին է, բայց ուղղված ըլլալով միեւնոյն անձին կամ երեւոյթին՝ ներքուստ ալ իմաստով իրարու կղոդվին: Այդ քանի մը տուներէ կազմված զոդվածքը արդէն իբրեւ մէկ ամբողջութիւն մը կնկատենք:

Երբ այդ իրարու հաջորդող տուներէն ամեն մէկը ըսվելիքի միայն մէկ մասը կկազմէ և բոլոր տուները միասին լրիվ ամբողջութիւն մը կձեւացնեն, բնականաբար երգին հօրինվածքը կբարձրանա, կստանանք աւելի բարձր տեսակի գեղարվեստական կառուցում, որ անշուշտ նորէն իր աստիճանական տարբերութիւններն ունի:

Շատ աւելի տարրական կառուցում մըն է «Աղջի՛ Հոռոմ» երգը, քան «Ես սարէն կու գայի» կամ «Բեկեր, ցոլեր», որ նուրբ արվեստով հյուսված սքանչելի կառուցում է ներսով ու դուրսով:

Երգի մը զանազան տուները ընդհանրապես կպահեն տողերու նոյն երկարութիւնը, այսինքն՝ նոյն չափն ու կազմը: Քիչ կպատահի և ընդհանրապես եղանակի բերումով, որ երկու կամ երեք տարբեր երկարութեան չափեր իրարու կապվին նոյն երգին մէջ, ինչպես որ է «Բեկեր, ցոլեր» երգը, որ կանոնավոր հյուսք մըն է հինգ, յոթը և տասնմեկ վանկանի տողերու:

Համեմատելու համար կդնեմ վերը հիշված երգերս.

Աղջի՛ Հոռոմ, մատանին դրել ես,
Նշանվել ես, յարոջդ խաբել ես:

Աղջի՛ Հոռոմ, ոսկիքը կապել ես,
Նշանվել ես, յարոջդ խաբել ես:

Աղջի՛ Հոռոմ, պաղտատին կապել ես,
Նշանվել ես, յարոջդ խաբել ես:

Աղջի՛ Հոռոմ, գրողը քեզ տանի.
արժանի չես մի քթոց դարմանի:

Վարդն ի բացվե Վանա քյաղքի էգիստար.
Աստված սիրես՝ մեկ օր-օխկի, ձիկը տար:
Քյա՛ Նա-զերով, քյա՛ խո-բոտիկ, դյու վի՞րն իս.
աշխարհ գիտի, ալամ գիտի, դյու իմն իս:

Վարդն ի բացվե առավ-ըտման խավխուսոց,
իմ յար պախճեն կայնե երկու ձեռն ի ծոց,
վարդն ի բացվե առավ-ըտման շաղերով,
իմ յար պախճեն վարդ կը քաղե մաղերով:

Վարդն ի բացվե վարդի-վորի կիրակին,
քո սեր ինկե մեջ իմ սրտի պըրակին.
քյա՛ Նա-զերով, քյա՛ խո-բոտիկ, դյու վի՞րն ես.
աշխարհ գիտի, ալամ գիտի. դյու իմն իս:

Քելեր, ցոլեր իմ յարը,
արևի տակին
քելեր, ցոլեր իմ յարը:
Սարի սովոր, մեն-մենավոր, չե՛կ տղա.
չող արեգակ, թո՛ղ արեգակ, ե՛կ, տղա՛:

Քելեր, ցոլեր իմ յարը.
աղբյուրի ակին
քելեր, ցոլեր իմ յարը:
Կանաչ առվով, ճանաչ առվով ե՛կ, տղա՛.
պաղովն արի, շաղովն արի, չե՛կ տղա:

Քելեր, ցոլեր իմ յարը,
գերանդին ուսին
քելեր, ցոլեր իմ յարը:

Հով ծառի տակ, զով ծառի տակ ե՛կ, տղա՛,
Հունձ ես արել, քրտինք դառել, չե՛կ տղա:

Քելեր, ցոլեր իմ յարը,
Ջա՜ն աչքի լույսին,
քելեր, ցոլեր իմ յարը:
Հով է՝ քնի՛ր, զով է՝ քնի՛ր, չե՛կ տղա,
Հունձ ես արել, շատ բե-վարել, ե՛կ, տղա՛:

Բայառիկ կերպով կպատահի նաև տողերու կրկնությամբ հյուսված կառուցում՝ ճաշակավոր խաղով.

Ալագյազ սարն ամպել ա,
ազբերն իր ձին թամբել ա:

Ազբերն իր ձին թամբել ա,
յարոջ տունեն անցել ա:

Յարոջ տունեն անցել ա,
ելե, դաշտը խաղցել ա:

Ելե, դաշտը խաղցել ա,
անձրև եկե՝ թրջել ա:

Անձրև եկե՝ թրջել ա,
արև դարկե՝ չորցել ա:

Արև դարկե՝ չորցել ա,
քան կարմիր վարդ բացվել ա:

դ. Հանգը ժողովրդական երգին մեջն ալ նոր ու օտարամուտ երևույթ է: Եվ հանգի սովորական դառնալն ալ, արդեն ինչպես շեշտած եմ գրաբարի մասին խոսելու ատեն, կապված

է տողերու հավասարաչափ դառնալուն հետ. այդ հավասարաչափությունը ընդգծող, տողը տողէն զատող արտաքին զենք մըն է, որ իր հետ բերած է ականջի համար նոր հաճելիություն, որու համար ալ սիրված է, յուրացված և հայ քնարական երգի մնայուն մեկ հատկությունը դարձած:

Դյուցազներգությունը, որ չէ ընդունած հավասարատողը, չէ ընդունած նաև հանգը. «Սասունցի Դավթի» բոլոր տարբերակները հորինված են ազատ հատվածական չափով, առանց որևէ հանգի, այսինքն՝ դեռ պահած են հին անգիր վիպասանության բնական չափը անփոփոխ կերպով:

Ինչպես հավասարատողը, այնպես ալ հանգը, այնպես ալ տուներու բաժանումը հատուկ է միայն քնարական ստեղծագործության:

Հայ ժողովրդական կարճ չափերով հորինված երգերը չորս կամ հինգ վանկանի տողերով, ամբողջ կտորը նույն հանգը կունենա սովորաբար. խաղ է տեսակ մը, ուր հանգը շուտ-շուտ կրկնվելով աշխույժ ու կատակ կուտա խոսքին:

Յոթը վանկանի հիմնական չափը հայ ժողովրդական երգի հանգավորման հաստատ օրենք ունի. նույն հանգը կստանան առաջին, երկրորդ և չորրորդ տողերը. երրորդ տողը կմնա անհանգ: Ինչպես տեսանք, այս երրորդ տողը նաև հատվածական տեսակետեն, նույնիսկ վանկերու թիվով կշեղի մյուս երեք տողերու կազմութենեն. ըմբոստ տող մըն է, որ կշեշտե ու ցայտուն կդարձնե մյուս տողերուն ներդաշնակությունն ու գեղեցկությունը:

Ութը ու տասը թիվով չափերը, և տասնմեկ ոտանի լեցուն չափը ընդհանրապես կհանգավորվին զույգ-զույգ. կամ ամբողջ տունը կունենա նույն հանգը: Այս վերջին պարագային առաջին ու երրորդ տողերուն հանգերը ավելի խախուտ են, կրնան և առանց հանգի մնալ. բայց երկրորդ ու չորրորդ տողերը միշտ կհանգավորվին:

Վեպի նմանող նկարագրական ու պատմական նյութերուն բոլոր տողերը շատ հաճախ նույն հանգը կունենան, գրաբար «ողբերգության» նման: Այսպես, օրինակ, «Տատրակ հավքը» կամ «Սոխակի վիշտը»:

Ե. ԹԱՏԵՐԱԿԱՆ ՏԱՐՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻՆ ՄԷՋ

Հայ ժողովրդական բանահիւսութիւնը մեր գրական հասկացողութեամբ թատերական հատուկ ստեղծագործութիւն չունի. չկայ բանահիւսական երկ մը, ուր մարդիկ իրենց խօսքով և իրենց գործերով մեր դէմը կեանքի կտոր մը ներկայացնեն, որ ինքնիրմով քիչ-շատ ամբողջութիւն մը կազմէ:

Եթէ Հայ անգիր բանահիւսութիւնը չունի բեմական ուրոյն ստեղծագործութիւն, ատոր փոխարէն առատ է թատերական տարրը Հայ ժողովուրդի քնարերգութեան մէջ:

Նախ՝ ընդհանրապէս ամէն տեղ ալ քնարերգութիւնը իր էութեամբ շատ կարևոր ընդհանուր հատկութիւն մը ունի, որով կապված է թատերգութեան: Քնարերգութիւնը, ըլլալով զգացումներու անմիջական արտահայտութիւն, բնական կերպով կ'խօսի ես-ով ու դու-ով, այսինքն՝ բերան խօսակցական ձև ունի: Թատերգութիւնը նմանապէս ամբողջովին հիմնված է հոգեկան արտահայտութեան խօսակցական ձևին վրա:

Երրորդ դէմքով խօսիլը պատմական ոճ է, արտահայտութեան նկարագրական-միջնորդական ձև է. տեսակ մը չեզոք ու ո՛չ անմիջական. երկրորդ բերնով կ'խօսի, որով նվազ կենդանի է: Ավելի բերնէ հեռու եղող և անցած բանի մը կ'վերաբերի կարծես: Բեմն ու քնարերգութիւնը աչքին դէմը եղող, ներկա ու անմիջնորդ ձևն է հոգեկան արտահայտութեան:

Վերջը, երբ բան մը ներկա դարձնել կուզէ, երբ «ներկայացնել» կուզէ, երբ ավելի ազդող և անմիջական հետաքրքիր ըլլալ կցանկայ, խելայն երրորդ դէմքէն կանցնի առաջին ու երկրորդ դէմքի գործածութեան, այսինքն՝ կսկսի իր հերոսները խօսքով խօսեցնել՝ փոխանակ պատմողը ինքը իր խօսքերովը անոնց բաժն ու ըլլածը մեզի պատմելու:

Այսպէսով՝ քնարերգութիւնն ու թատերգութիւնը միևնոյն սուր զէնքը կգործածեն. և ատոր համար ալ բոլորովին անկախ երկի մը նյութեն ու դիտավորութեններեն միջև խորին քնա-

բականություն մը կա թատերական երկերուն մեջ, հենց միայն թատերական սեռին պատկանելուն համար:

Եվ փոխադարձաբար քնարերգության մեջ ալ խորին ու ներքին թատերականություն մը կա, հոգեկան ապրումներու անմիջական խոսակցական ցուցադրում մը: Քնարական ամեն մեկ երգ խոսք մըն է՝ ուղղված ես-ի մը կողմե դու-ի մը, այդ դիմացինը ըլլա մարդկային էակ մը, թռչուն մը, ծառ մը, գետ մը կամ որևէ առարկա: «Հրազդա՜ն, գետակդ իմ հայրենի», «Կռո՛ւնկ, ուստի՞ կու գաս», «Սարե՛ր, ա՛յ սարեր»:

Դիմացինը պատասխան կու տա, թե ոչ՝ երկրորդական հարց մըն է. երգողը կխոսի, խոսք կուղղե, կհարցնե, կկանչե, կդիմե, կխնդրե, կհրամայե, ճիշդ ինչպես բեմի վրա:

Այս առաջին բնածին պատճառին կավելնա նաև ժողովրդական երգին մեջ երկրորդ հավելյալ դրդում մը, որ ժողովրդական երգի, մանավորապես սիրո երգերուն մեջ թատերական տարրը կուժեղցնե: Այդ երկրորդ պատճառը պարն է:

Երգը ընդհանրապես, սիրերգը մանավորապես, սերտորեն հյուսված է պարին ժողովուրդի մեջ, ինչպես և ժողովրդական պարը հենված է ժողովրդական երգի եղանակներուն վրա: Ժողովրդական երգի բանահյուսությունը, երաժշտությունը և պարը զոդված են իրարու:

Իսկ սերը ծնունդ է սեռի. կերգեն երկու սեռերը, կերգեն երկու սերերը իրենց զգացումները իրարու արտահայտելու համար. պարերգը սիրաբանություն է կամ սիրակռիվ. լուրջ, կատակ, տխուր, հուսահատ կամ զայրացկոտ, բայց միշտ դեմ դեմի են երկու սեռերը, երբեմն խումբով՝ խումբ մը աղջիկ, խումբ մը տղա, որ խոսք ու հուզում կնետեն իրարու, երբեմն իբրև մեներգ՝ աղջիկ մը ու տղա մը առանձին խումբին մեջեն: Ըլլա խումբով, ըլլա որոշ զույգ մը, դեմ դեմի են միշտ, որով պարերգը կդառնա նախնական թատրոն. և արդեն հին հունական թատրոնը այս տեսակ կրոնական գույն ունեցող պարերգերե է առած իր ծագումը: Թատրոնը հարազատ աղջիկն է քնարերգության, ինչքան ալ որ մենք հիմա տարբեր պատճառներով թատրոնը սովոր ենք ավելի վեպին կապելու, քան քնարերգության:

Երբ քնարական երգը կգործածվի իբրև պար՝ իր խորքի թատերական հատկությունը սաստիկ կընդգծվի ու կդառնա շոշափելի. որովհետև բուն խոսքը պատասխան կստանա: Եվ հոսկե արդեն քայլ մըն է միայն դեպի բուն թատերական-քնարական ստեղծագործությունը, այսինքն՝ իրարու հետ խոսելով, իրար պատասխանելով հորինված բանահյուսական ամբողջություն մը:

Քնարական երգի հիմնական ու նախնական կառույցը քառատողն է. բայց արդեն տեսանք, որ ժողովրդական երգը այդ նախնական ու հիմնական ձևեն բարձրացած է և ունի ավելի երկար ու ամբողջական կառուցում քանի մը տուներով: Արդ՝ այդ զարգացումը աստիճան մը ավելի կխորանա, երբ այդ քանի մը տուներով կազմված ամբողջությունը չըլլար մենախոսություն, այլ կվերածվի երկխոսության ու կդառնա իսկապես թատերական: Երգը կհորինվի այնպես, որ աղջիկ ու տղա դեմ դեմի կխոսին ու կհայտնեն իրենց զգացումները:

Այս թատերական քնարերգությունն ալ ունի բնականաբար իր տարբեր-տարբեր աստիճանի խորությունը և գեղարվեստորեն տարբեր աստիճանի բարձր կառուցումներ:

Այսպես, օրինակ, «Պեկգասու աղջիկը», ուր տղան դուրս կկանչե աղջիկը հաջորդական տուներու մեջ, որ տեսնե անոր հասակը, աչքերը և բոլոր մյուս գեղեցկությունները, մինչ «պեկգասու» երես առած ու հպարտ աղջիկը նազ կընե. փոխանակ դուրս գալու՝ ներսեն իր գեղեցկությունները կհամեմատե բնության գեղեցկություններուն հետ. այսինքն՝ և՛ հա՛ կըսե, և՛ չէ՛. խոսքը կտուրը կնետե: Խոսակցություն մըն է, բայց ավելի նախնական, կրկնություններով ու միատեսակ:

Ասոր նման է իր հորինվածքով «Լուսվորչու մեկն էլ ես եմ» երգը: Աղջկան ծամկալը իբրև թե ինկեր է ջուրը և հիմա կխնդրե, որ տղան նետվի ջուրը ու հանե: Հաջորդական տուներու մեջ կխոստանա փոխարենը նախ իր վզնոցը, ետքը գոտին, ետքը ավելի ևս՝ ներքին իր շապիկը: Տղուն պատասխանը միշտ նույն է սակայն՝ «Չեմ հաներ քու ծամթելդ ծովեն այդ գնով»: Մինչև որ աղջիկը իբրև թե հարկադրված կխոստանա համբույր լուսին գիշերով. հա՛, խնդիրը բնականաբար կփոխվի: Ազվոր է նյութը և պեկգասու

աղջիկեն անհամեմատ գեղեցիկ, բայց իր մշակման մեջ շատ է նորեն միակերպ ու կրկնութիւն:

Անհամեմատ աւելի աշխուժ կդառնա ամբողջ կառուցումը, երբ փոխանակ այդ սիրախաղերուն՝ ինքը սերը կուգա բեմը, երբ աղջիկ ու տղա դեմ դեմի իրենց սերը կերգեն ուղղակի, քիչ մը նազ ընելով, քիչ մը տնազ ընելով, բայց սիրով ու կենդանի արտահայտությամբ, որով և ամբողջի կառուցումը կստանա խորություն, ինչպես որ է «Հապըրպանի» մեջ, ուր կրկնությունը միայն այդ բացականչության մեջն է, որ և կդառնա արտաքին զոդող կապ մը ամբողջին և կգեղեցկացնե կառուցումը:

Կառուցումի ու թատերականության այդ գեղեցկությունը աւելի ևս կշեշտվի ու կբարձրանա «Ալ այլուղս» սքանչելի երգին մեջ, ուր խոր սեր կա, խոր տառապանք ու տրամատիզմ, ուր ներկան ու անցյալը մեծ արվեստով ու հրաշալի պարզությամբ հյուսված են իրար, ուր տղու գողցած-վերցուցած թաշկինակի մասին կխոսին իբրև թե և իրենց ամբողջ սերն ու ցավը կպատմեն մեծ նրբությամբ ու բարձր արվեստով: Կարճ երգ մըն է, որ երկար երկ մը կարժե. ինչքան մտածես այդ քանի մը տուներուն վրա, այնքան կյանք կառնե, կհարստանա ու կխորանա, այսինքն կարժեքավորվի:

Կդնեմ հոս հիշած չորս երգերս, իբրև վերջակետ մեր արդի հայ ժողովրդական քնարերգության:

ՊԵԿԶԱՏՈՒ ԱՂՋԻԿ

– Պեկզատո՛ւ աղջիկ, դռնեն դո՛ւս արի,
քո պոյը տեսնեմ:
– Կորի՛ր, գնա՛, հարամզատա՛.
քրդու գյատա.
անտառ չե՞ս մտել, չինար չե՞ս տեսել:
– Պեկզատու աղջի՛կ, դռնեն դուս արի,
քո երես տեսնեմ:
– Կորի՛ր, գնա՛, հարամզատա՛,
քրդու գյատա՛,
պարտեզ չե՞ս մտել, խնձոր չե՞ս քաղել:

– Պեկզատո՛ւ աղջիկ, դռնեն դո՛ւս արի,
քո աչեր տեսնեմ:
– Կորի՛ր, գնա՛, Հարամզադա՛,
բրդու գյադա,
երկինք չե՞ս նայել, աստղեր չե՞ս տեսել:
– Պեկզատո՛ւ աղջիկ, դռնեն դո՛ւս արի,
քո կուրծքը տեսնեմ:
– Կորի՛ր գնա՛, Հարամզադա՛,
բրդու գյադա.
սարեր չե՞ս անցել, մարմար չե՞ս տեսել:

ԾԱՄԹԵԼ

– Զինչ ու զինչ տամ լուղվորչուն,
որ խանա ծամթելն ի ծովեն:
Զիմ վզի վզնոց կի տամ,
որ խանա ծամթելն ի ծովեն:
– Լուղվորչու մեկն է ես եմ,
չե՛մ խանա ծամթելն ի ծովեն:

Զինչ ու զինչ տամ լուղվորչուն,
որ խանա ծամթելն ի ծովեն:
Զիմ մեջկապ գոտի կի տամ,
որ խանա ծամթելն ի ծովեն:
– Լուղվորչու մեկն է ես եմ,
չե՛մ խանա ծամթելն ի ծովեն:

– Զինչ ու զինչ տամ լուղվորչուն,
որ խանա ծամթելն ի ծովեն:
Զիմ Հազի չապիկ կի տամ.
որ խանա ծամթելն ի ծովեն:
– Լուղվորչու մեկն է ես եմ,
չե՛մ խանա ծամթելն ի ծովեն:

- Չինչ ու գինչ տամ լուղվորչուն,
որ խանա ծամթելն ի ծովեն:
Լուսնակ գիշեր պագիկ կի տամ,
որ խանա ծամթելն ի ծովեն:
- Լուղվորչու մեկն է ես իմ,
որ խանա ծամթելն ի ծովեն:

ՀԱՊԸՐՊԱՆ

Տղան - Հապըրպա՜ն:
Աղջիկը - Ջանե ջա՜ն:
Տղան - Սիրել եմ սերն երեսին,
անթառամ թերն երեսին.
ով իմ սիրածն ինձ չտա՝
Աստըծու կերն երեսին:

Աղջիկը - Հապըրպա՜ն:
Տղան - Ջանե ջա՜ն:
Աղջիկը - Սարի թրթնջուկ թազա,
մեղր ու շաքար քեզ մազա,
ինձ պես նազանի աղջիկ
քեզ պես տղին ո՞նց սազա:

Տղան - Հապըրպա՜ն:
Աղջիկը - Ջանե ջա՜ն:
Տղան - Պստի՛ աղջիկ, Համ ունիս,
չորեք-դիմաց ծամ ունիս.
խունճիկ-մունճիկ մի՛ անի.
ինձ առնելու կամ ունիս:

Աղջիկը - Հապըրպա՜ն:
Տղան - Ջանե ջա՜ն:

Աղջիկը – Գութանըդ հոլա, հոլա,
գութանիդ տակը քոլ ա.
քանի՞ դժություն անես,
քեզի առնողը տոլ ա:

Տղան – Հապըրպա՜ն:
Աղջիկը – Ջանե ջա՜ն:
Տղան – Ձեր տան տակին վար կանեմ,
չոր ագռավին քար կանեմ,
թող իմ սիրածն ինձի տան՝
դժություններս թարկ կանեմ:

Աղջիկը – Հապըրպա՜ն:
Տղան – Ջանե ջա՜ն:
Աղջիկը – Ջուրը իր ճամրով կերթա,
ցողածը վարդի թերթ ա.
ինձ սիրող կտրիճ տղեն
հազարի մեջ մի բերդ ա:

Տղան – Հապըրպա՜ն:
Աղջիկը – Ջանե ջա՜ն:
Տղան – Բուսել եմ պաղի միջին,
շամամի թաղի միջին.
գիշեր, ցերեկ միալար
դո՛ւ ես իմ խաղի միջին:

Աղջիկը – Հապըրպա՜ն:
Տղան – Ջանե ջա՜ն:
Աղջիկը – Աշուղի պես խա՛ղ ասա,
պլպուլի պես տա՛ղ ասա,
ինչքան որ գովես՝ արժեմ,
իմ մոր գովական փեսա:

ԱԼ ԱՅԼՈՒՂՍ

Աղջիկ – *Ալ այ-լուղըս կորավ ձեր դուռ.*
փոխո-խել է սիրտըս մրմուռ,
բաղդը ինձի գցեց էս կուռ.
սիրո՛ւն տղա, տո՛ւր այ-լուղըս:

Տղա – *Ալ այ-լուղըդ ես չը գտա.*
երդը-վում եմ՝ Աստված վկա,
ով գը-տել է՝ թող բե-րե տա,
սիրո՛ւն աղջիկ, քու այ-լուղը:

Աղջիկ – *Ալ այ-լուղըս յարս էր բաշխել,*
ալ ապ-րըշում շուրջը նաշխել,
պատկեր-ըս վրեն էր քաշել,
սիրո՛ւն տղա, տո՛ւր այ-լուղըս:

Տղա – *Քու վար-մունքիդ ի՞նչ ա-նուն տամ,*
քիչ է մնում, որ ան-վերջ լամ.
մուրըս լինի՝ բերեմ կու տամ
սիրո՛ւն աղջիկ, քու այ-լուղըդ:

Աղջիկ – *Ա՛խ, ի՞նչ ասեմ իմ խորթ մորըս,*
կամ ի՞նչ պատմեմ աղիզ Հորըս.
խապար կու տան շեկ աղ-բորըս,
տղա՛, տղա՛, տո՛ւր այ-լուղըս:

Տղա – *Սերըդ ինձմեն վաղ է սառել.*
տված խոսքեդ ետ ես դառել,
Հավա-տա, որ ես չեմ առել,
սիրո՛ւն աղջիկ, քու այ-լուղը:

Աղջիկ – *Մյուժտեդ կու տամ՝ այլուղ-ըս բեր.*
դու ամեն օր կե՛ր կա-թի սեր.
ինձի քարերուն մի՛ խփեր.
անո՛ւշ տղա, տո՛ւր այ-լուղս:

Տղա – *Սևո՛ւկ աղջիկ, սիպտակ Հագիր.*
ա՛ռ այ-լուղըդ, վերքըս կապիր.
սիրուդ գերի ինձ մի՛ տանջիր.
էրվա՛ծ աղջիկ, ա՛ռ այ-լուղըդ:

Զ. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԸ

1. «ԱՆՏՈՒՆԻ»-ՆԵՐ

Մինչև հիմա մեր ուշադրության առարկան բուն Հայ աշխարհին վրա տիրական եղող Հայ ժողովրդական քնարերգությունն էր՝ արդի ապրող ու երգվող անգիր ժողովրդական երգը, որու անցյալ կյանքի մասին հաստատ ու որոշ ոչինչ չգիտենք, քանի որ հազիվ դար մըն է անոնց գրի առնվիլը:

Այդ երգերուն բովանդակությունը, շենքը, լեզուն ու տաղաչափությունը աչքի առաջ ունենալով՝ կենթադրենք, որ անոնք իրենց հիմնական ձևը առած պիտի ըլլան վերջին հինգ օսմանյան դարերու ընթացքին: Նոր հորինումներ են կամ նոր վերամշակումներ հին քնարական նման նյութերու. հորինված կամ վերամշակված են թուրանական քանի մը դարերու տիրապետութենեն ետքը՝ թուրք ժողովրդական երգի ձևին ու չափին ազդեցությունը իրենց վրա կրելեն ետքը:

Այսպես, օրինակ, մեր արդի յոթնատանի գլխավոր ժողովրդական չափը, չորստողանի կազմով, որուն երրորդ տողը անհանգ կըլլա, իսկ մնացած երեք տողերը կունենան նույն հանգը, այսինքն՝ ջանգյուլումներու արտաքին շենքը, կկարծեմ հետևողություն է թուրք ժողովրդական երգի, ինչպես և անոնց քառատող տուներուն առաջին ու վերջին մասին իմաստին շատ հաճախ խիստ խախուտ տրամաբանական կապը: Իսկ ինչ կվերաբերի մեր ամբողջ տաղաչափության հավասարավանկ տողեր դառնալուն և հանգերու տիրապետող գործածության՝ արդեն ընդգծած եմ իրենց օտարամուտ ըլլալը: Մեր հին Հայ երգերը հետզհետե թուրանական տարազով հագուստ են առած իրենց վրա, ինչպես որ ինքը Հայ ժողովուրդն ալ ստացած է թաթարական և մոնղոլական զգեստավորություն ստրկության այդ երկար դարերուն:

Արդ՝ այս ավելի արևելյանձև և նորատարազ երգին զուգընթաց ապրեր է սակայն մեր Հայ աշխարհին փախստական, բայց

անմիջապես հայ աշխարհի արեւմտյան սահմաններուն կից, հինեն եկող և զուտ ազգային ձեւով ու տարազով հայ ժողովրդական քնարերգություն մը, որ եղեր է ապրող ու կենդանի ու ծաղկած Թուրանական չորս դարերուն, որ տեսեր է նաև հաջորդ օսմանյան դարերուն և հասեր է մինչև մեր օրերը ժողովուրդի շրթունքին՝ հատկապես Ակն քաղաքի ու իր շրջապատին մեջ:

Այս ժողովրդական երգերեն մաս մը ԺԹ դարու 80-ական թիվերուն ժողվեր ու գրի է առեր «Ակնա Հնությունք»-ի հեղինակը՝ Ծանիկյան՝ մեծ ծառայություն մը մատուցանելով հայ ժողովրդական երգի ուսումնասիրության գործին, քանի որ ժողվեր է այդ երգերը դեռ իր հողին վրա նստած ժողովուրդի կենդանի շրթունքներեն:

Այս արեւմտյան հայ ժողովրդական երգը կկոչվի «անտունի» դժվար բացատրելի անունով մը: Եվ ինքը ժողովուրդը գիտե, ինչպես և այդ երգը ինքն ալ գիտե, որ հին է ու հինեն կուգա, հինի ժառանգորդ ու հինը շարունակող և որ զուտ ազգային է խորքով ու ձեւով: Զատվիլ ու առանձնացվիլ կուզե նորաձեւ ու արեւելաձեւ ժողովրդական երգերեն ու իր հատուկ ձեւն ու չափը կանվանե «հայրեն», այսինքն՝ բուն հին ու ազգային տարազով հորինված ժողովրդական երգեր:

Եվ իրավ ալ այդ ներսով ու դուրսով նուրբ ու հասուն երգերուն ծայրը հաստատ կերպով կհասնի գոնե մինչև արաբական դարերը. Հավանորեն շատ ավելի հին երգ է: Գրիգոր Նարեկացին, ինչպես տեսանք, քանի մը երգերու մեջ հետևած է այդ ժողովրդական հին երգի ինչպես նյութին, այնպես ալ ձեւին Ժ դարու կեսին և դեռ առանց հանգերու գործածության: Հաջորդ ԺԱ և ԺԲ դարերուն է, որ այդ հին հատվածական չափին վրա կավելնա ամեն կողմ արդեն տիրող դարձող հանգը:

Թուրանական դարերուն այդ չափը սերտորեն կապված է դեռ կենդանի ժողովրդական երգին. և գրի ծանոթ մեկը երբ ժողովուրդի կենդանի լեզվովը տաղ մը հորինել ուզեր բնական կերպով պետք է գործածեր կենդանի խոսքին կապված այդ չափը: Այնպես որ ԺԳ դարեն մինչև ԺԶ դարը, այսինքն մինչև արեւելյան նոր տարազին ու երգին սովորական և ընդհանուր դառնալը. մոտ

երեք-չորս հարյուր տարի թէ՛ ժողովուրդի բերնին և թէ՛ ժողովրդական լեզուով գրիչ շարժող տաղերգուներու գրչին տակ դեռ տիրապետողը «Հայրեն» չափն էր, առաջնութիւնը «Հայրեն» երգինն էր:

* * *

Այս անտունի երգերը՝ իրենց ձևով բոլորովին առանձին և իրենց խորքով ու մշակումով ալ շատ աւելի տարբեր ու տեսակ մը արդիական, այն աստիճան աչքի կիյնան և զատ ու ինքնամփոփ տպաւորութիւն մը կընեն մեր վրայ, որ Արշակ Չօպանեանի նման արուեստին հասկցող մէկը չէ կրցած հաւատալ, որ անոնք պարզ ու սովորական ժողովրդական երգեր ըլլան. և սկսած է փնտրել անհատ հեղինակ մը այդ բարձր արժէքով գեղեցիկ տաղերուն. անոնց ստեղծագործութիւնը վերագրած է Նահապետ Քուչակ անունով աշուղի մը: Նախ համարած է միայն մէկ բանաստեղծի մը գործը իրեն հայտնի եղած այդ տեսակի բոլոր երգերը: Վերջը ինչքան նոր նյութերը սկսեր են շատնալ իր ձեռքին տակ, այնքան ինքն ալ զգացեր է, որ ոճով, խառնուածքով ու կյանքի պայմաններով բոլորովին տարբեր այդ երգերը անկարելի է մէկ անձի մը ստեղծագործութիւնը համարել. իր անհատը վերածեր է խումբի մը. այդ երգերուն հեղինակը կհաշուի նորեն Նահապետ Քուչակ մեծատաղանդ աշուղը, այլև անոր հետևող անմիջական խումբ մը իր աշակերտները:

Կամայական ու անիրական վերագրում մըն է ասիկա: Միևնույն է, թէ մէկը հիմա ելլէր և արևելյան արդի ժողովրդական ջանգյուլումներուն չափի, շենքի, կյանքի և ընդհանրապես անոնց սիրային ըլլալուն վրա հենված՝ մասնավոր մեծատաղանդ հեղինակի մը ստեղծագործութիւնը հռչակէր այդ բացահայտ ժողովրդական երգերը:

Անտունիներու և ջանգյուլումներու այս զուգադրումը, որ կընեմ, միայն պատահական ու պարզ համեմատութիւն մը չէ գուցէ: Կերևակայեմ, որ վարդավառի տոներուն մեր հին Աստղկան ու Վահագնի բագիններուն շուրջը անտունիներու ձևով ու շունչով հորինված վառ սիրային երգեր կհնչէին և անոնք ալ հավանորեն

ինչպես կրօնական-սիրային պարերը վարելու, այնպես ալ երիտասարդ սրտերու բաղդ գուշակելու կծառայեին:

«Հայրեն» անտունիները ամեն պարագայի մեկ աշուղի մը ստեղծագործությունները չեն, ո՛չ ալ խումբ մը աշուղներու. և ընդհանրապես աշուղային ստեղծագործություն չեն, այլ զուտ ժողովրդական:

Աշուղի տիպարն ու գաղափարը ԺԵ ու ԺԶ դարերեն ետքն է, որ կսկսի կազմվիլ. և կկազմվի հայ աշխարհի արևելյան բաժնին մեջ գլխավորապես, թուրք ու պարսիկ օրինակով և թուրքի ու պարսիկի պետքին համար: Աշուղները գործիք ունին միշտ իրենց ձեռքը, թափառական են և կերգեն ու կհորինեն ընդհանրապես թուրք լեզվով թուրք ու պարսիկ չափերով ու եղանակով: Եվ բացառաբար հայերեն լեզվով երգելու պարագային ալ կգործածեն շարունակ թուրք քլիշե ասություններ և թուրք ճաշակ:

Անտունիները մաքուր հայ ստեղծագործություն են, զուտ հին հայ հատվածական չափով: Անտունիներուն մեջ ո՛չ մեկ տեղ աշուղի անուն կամ հիշատակություն չկա, ո՛չ ալ աշուղային ստեղծագործության նմանություն: Եվ աշուղներուն ընդհանուր սովորությունն է իրենց անհատ հեղինակ մը ըլլալը չեշտել և իրենց անունն ալ միշտ կհյուսեն իրենց հորինած երգերու վերջի տողերուն: Անտունիներուն մեջ ասոր նմանող ոչինչ չկա, ո՛չ ալ որևէ տեղ մը որևէ կերպով անհատ հեղինակի անուն:

Այդ անտունիները ըսող, պահող, փոփոխող ու հորինողը ժողովուրդն է ու քաղքենի ժողովուրդը, այսինքն՝ գլխավորապես արհեստավոր դասակարգը: Եվ եթե «վարպետ» նահապետ մը եղեր է, որ շատ անտունիներ է գիտցեր և ըսեր է գեղեցիկ, այդ «վարպետը» աշուղ չէ եղեր, այլ արհեստավոր. «վարպետ»՝ արհեստավոր ըսել է:

Ժողովուրդի մարդ մըն է եղեր ինքն ալ: Եվ քաղքենի ժողովուրդի ըսած, զգացած ու մտածած կերպով եթե ինքն ալ իր կողմեն բան մը փոփոխած կամ ավելցուցած է այդ հնավանդ երգերուն վրա առանց իր անվան ու հեղինակության մասին մտածելու, ըսել է ինքն ալ մեկն է ժողովրդական այդ անգիր բանահյուսության բազմաթիվ ստեղծագործողներեն: Նույնիսկ այս պարագային մենք

իրավունք չունինք իր անունը դնելու դարերու ետեւէն եկող անգիր բանահյուսութեան ընդարձակ տեսակի մը վրայ: Այդ ենթադրական վարպետ Նահապետին պես ուրիշ շատ վարպետներ են եղեր այդ անտունիները գիտցող, ըսող, կրկնող և կես-գիտակից, կես-անգիտակից փոփոխումներով նոր տարբերակներ ստեղծող:

Անտունիները, որոնց մէջ աշուղներու մասին ո՛չ մէկ հիշատակութիւն չկայ, ունին շատ հստակ ընդգծում մը, թե այդ հայրենները գիտեին շատ-շատերը, գիտեին ամենքը. այդ անտունիները գիտնալ և բանի կարողանալը պատիվ կհամարվեր. լալ ու գեղեցիկ բառերը հարցի էին ու սիրելի: Նույնիսկ ամոթ կհամարվեր շնորհքով երիտասարդի մը համար, որ որոշ չափով անտունիներ տեղն ու տեղը բանի չկարողանար: «Մանուկ ես այն մանկան կըսեմ, որ կրնարե ու կըսէ հայրեն. և այնքան կըսէ, որ իրեն ամոթ չբերէ». ահա՛ երգին խոսքերը. ուրեմն ի՞նչ աստիճան կարեւոր կենցաղական պահանջ մը կհամարվեր ամենուն համար հայրեններ գիտնալն ու բանի կարողանալը:

* * *

Արշակ Չոպանյան, որ այնքան սիրեր ու գնահատեր է ինքն ալ այդ հայրեն անտունիները և հոգեկան խորին նվիրումով որոներ է հին ձեռագիրներուն մէջէն նոր կտորներ ու տուներ և հին ու նոր նյութեր միկտեղեր է հատորի մը մէջ, ցանկացեր է ատոնց մէջ կայծկլտող ստեղծագործական շնորհքն ու հրապույրը խտացնե մեկ անձի մը վրայ՝ ավելի եւս խոշոր ու շոշափելի դարձնելու համար անոնց ըրած տպավորությունը: Բայց իզո՛ւր: Երբ կտեսնենք, որ փոխանակ մեկ բացառիկ ու շնորհալի անձի մը՝ ամբողջ ժողովուրդի մը հոգիին խորքը կպլպլա բանաստեղծական այդ կայծը ու դարեր շարունակ կստեղծագործե, մի՞թե ատով մեր բանահյուսութենե կամ մեր ազգային հպարտութենե բան մը կպակսի: Երբե՛ք. Կշահի միայն: Կշահի նաև արդարամտությունն ու ճշմարտությունը:

Բայց բացի Չոպանյանի անձնական ցանկութենեն՝ կկարծեմ՝ հոս դեր է խաղացած նաև այն պարագան, որ ինքը տեսած ու

ժողված է այդ երգերը ձեռագիր տաղարաններուն մէջեն: Միջնադարյան ձեռագիրներուն մէջ ժողովրդական երգերու Հավաքածուներ չկան: Հոգևորականությունն ու վանականությունը, ինչպես տեսանք, իրական կամ ցուցադիր արՀամարՀանք միայն ունի ժողովրդական Հանրային ստեղծագործության Հանդեպ, թեև առանց խոստովանելու կՀետևի ու կօգտագործի անգիր ժողովրդական բանաՀյուսության և՛ լեզուն, և՛ տաղաչափությունը, և՛ նյութը, երբ մանավանդ ինքն ալ կսկսի աշխարՀիկ լեզվով գրելու:

Միջնադարյան ձեռագիրներուն մէջ եղած տաղերը անՀատ Հեղինակներու երկեր են միշտ՝ Ֆրիկ, Պլուզ, Կոստանդին, ՀովՀաննես, Նաղաշ. ատոնց կարգին և Հաճախ ատոնց Հետ խառնված կներկայանան Ակնի այդ անտունիները: Բոլոր անՀատ Հեղինակներուն անունները ընդՀանրապես պաՀված են ու կՀիշվին կա՛մ վերնագիրներուն մէջ, կա՛մ տաղերու վերջին տողերուն Հյուսված: Բայց կպատաՀի, որ Հեղինակները իրարու շփոթվին, կամ Հեղինակին անունը որևէ պատճառով մը դուրս իյնա: Կստանանք տաղեր, որ Հեղինակի անուն չունին և բանասերներու սրամտությանը կամ Հմտությանը կմնա փնտրել, ճշդել ու գտնել անոնց Հեղինակները:

Եվ աՀա՛ այդ անՀատ Հեղինակներու տաղերուն շարքին մէջ և անոնց Հետ խառն կգտնվին խիստ արժեքավոր, գեղեցիկ ու Հետաքրքիր անտունի տաղեր, որոնց վրա Հեղինակի անուն չկա. ուրեմն պետք է փնտրել ու գտնել, ինչ որ ջանացեր է ընել Արշակ Չոպանյան:

* * *

Այո՛, անտունի կոչվող ժողովրդական երգերու մեկ բացառիկ առանձնաՀատկությունն է, որ անոնցմե շատերը և Հատկապես սիրայինները գրի են առնված շատ ավելի կանուխեն, Սրվանձտյանեն ու Լալայանեն առնվազն երեք-չորս Հարյուր տարի առաջ՝ օսմանյան դարերուն սկիզբը, և մտած են միջնադարյան տաղերգուներու երկերը պարունակող տաղարաններու մէջ: Շատ Հետաքրքիր բացառիկ երևույթ մը, որուն պատճառները բացատրելը սակայն, ինծի կթվի, թե դժվար չէ:

Առաջին պատճառ նորաձև արևելյան ժողովրդական երգերու տարածվելուն ու ընդհանրանալուն է ճիշդ այդ միջոցին՝ ԺԸ-ԺԹ դարերուն: Ասով հնակարգ ու հնաձև արևմտյան ժողովրդական երգը քիչ-քիչ կդադրի սովորական ժողովրդական երգ մը նկատվելե. ինքնուրույն ու մեկուսի դիրք մը կստանա և ավելի հարգ ու պատիվ կվայելե, ինչպես ամեն հինեն եկող արժեք: Եվ իր այդ ուրույնացած ու տեսակ մը սրբագործված ամփոփ վիճակովը շատ կնմանի հարգված հեղինակներու անհատական ստեղծագործություններուն:

Երկրորդ պատճառը հատկապես այդ անտուններու գործածած «Հայրեն» չափն է, որ ԺԳ դարեն սկսած դարձած էր նաև մեր անհատ տաղերգուներու շատ սիրած և շատ հաճախ գործածած չափը:

Արդ՝ երևակայեցե՛ք, որ դպիր մը երգի սեր ունի. և նստած տաղեր կարտագրե ձեռագիրներեն, իբրև հաճույք, իբրև հավաքածու գեղեցիկ և իմաստուն տաղաչափված գրություններու. ահա՛ Ֆրիկի, Պլուզի, Նաղաշի երգերը արտագրելու ատեն իր հիշողությանը կուգան միևնույն լեզվով, միևնույն չափով և միևնույն ձևով բռված բազմաթիվ տուներ, որ ինքը գիտե ականջով և որոնք իր արտագրածներուն մեջ չկան և որոնք շատ հաճախ ավելի գրավիչ են ու աչքի զարնող: Ինչո՞ւ զարմանանք, եթե մեր դպիրը այդ տուներեն ալ բանե ու մտցնե իր արտագրության մեջ մյուսներու շարքին, ինչպես որ լսած է. ո՛չ հեղինակ, ո՛չ անուն: Եվ հասկընալի է, որ հատկապես սիրային երգեր են, որ ամեն տեղ ու հաճախ կկրկնվին ու կփոխվին. մասամբ ալ մարդկային իմաստությունը խտացնել ու զող խրատական երգերը հաճախ կհիշվին բերնե բերան ու մտքի մեջ թարմ կմնան: Մանավանդ որ մեր դպիրի արտագրած մյուս անհատ-հեղինակ տաղասացներու երգերն ալ ընդհանրապես կա՛մ սիրո շուրջը կդառնան, կա՛մ հոգեշահ խրատներու:

Մինչև հիմա մեզի հայտնի եղող ամենեն հին և մեջը անտուններ պարունակող ձեռագիր տաղարանը խմբագրված է 1583 թվականեն սկսած. որուն մեջ 1589 թվականին նաև անտուններ են գրի առնված «տղետ»-ի մը կողմե, այսինքն՝ իր արտագրածներու և անոնց հեղինակներու մասին շատ բան չհասկըցողի մը

կողմէ: Այդ ԺԶ դարուն խմբագրված կամ արտագրված Համաքածուն հիմա մեր ձեռքը չկա, ունինք միայն ԺԸ դարուն սկիզբներր այդ կորված ձեռագրին վրայեն կատարված արտագրութիւն մը:

2. ԿՅԱՆՔԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՓՐԱՏԵՆ ԱՐԵՎԵԼՔ ՈՒ ԱՐԵՎՄՈՒՏՔ

Արաբական դարերին եկող այդ ժողովրդական անտունիները, որոնք կշարունակեն իրենց գոյութիւնը և ԺԲ-ԺԷ դարերու ընթացքին ըստ երևույթին նոր ծաղկումի մը շրջանը կապրին Ակն քաղաքին կողմերը, ինչո՞վ և ինչո՞ւ կտարբերին մեր սովորական արևելյան ժողովրդական երգեն, որ ԺԵ-ԺԶ դարերեն ասդին ընդհանուր տիրապետութեան կուգա:

Թուրանական խուժումները արևելքեն կուգային ալիք-ալիք, և ամենեն ավելի ողողման ենթակա էին մեր լեռնաշխարհի դեպի արևելք դարձած մասերը՝ մեր բուն Հայաբնակ աշխարհը: Խուժող ալիքները քանի կմոտենային մեր Հայրենիքէ արևմտյան մասերուն այնքան կտկարանային: Խուժումներու այդ թափին սահմանը կոպիտ կերպով կարելի է համարել Եփրատ գետի արևմտյան մեծ աղեղը: Մինչև Եփրատի եզերային լեռնաշղթաները եկվորները ո՛չ միայն ավերի ու ավարի կուտային ամեն ինչ, այլև իրենք կնստեին ու կտեղավորվեին այդ հողերուն վրա իբրև սեփականատեր իշխան: Հայ տարրի տիրող ու ղեկավար մարդիկը, հողատեր մասը, աշխարհական թե հոգևորական, այդ տակնուվրայութիւններու միջոցին մասամբ կոչնչանար, մաս մըն ալ ստիպված էր փախչելու դեպի ավելի արևմուտք՝ դեպի Եփրատ ու Եփրատեն անդին:

Եփրատեն անդին ալ թուրք տարրն էր, բայց արդեն նստած և սուլթանութիւններ կազմված, ուր նույնպես ընդհարումներ կային թե՛ իրարու հետ, թե՛ Բյուզանդիոնի: Բայց այդ բոլորը, համեմատած Եփրատեն արևելք կատարվող նոր ու բուռն խուժումներուն, տեղահանութեան ու ավերածին հետ, շատ ավելի տկար, մեղմ ու երկրորդական չարիք մըն էր: Արևմտյան այդ երկիրներուն մեջ քաղաքական վիճակը ավելի կայուն էր, տանելի միջավայր էր:

Արեւելքէն փախչող հայ մարդիկը աւելի հարաւային տաւ-րոսեան բարձրութիւններուն վրայ կհաջողէին իրենց համար անկախ բոյներ ստեղծել հոյներուն ու սուլթանութիւններուն հետ կռվելով. իսկ Եփրատէն ուղղակի արեւմուտք եղող և քիչ մը աւելի կազմակերպ մասերուն վրայ փախստականները կմնային իբրև հյուր, իբրև գաղթական: Տեղական թուրք իշխանութիւններուն վերաբերումը միշտ թշնամական չէր, երբեմն նույնիսկ բարեկամական էր: Թույլ կուտային, որ նստէն ու գլուխնին պահէն ու կջանային օգտագործեն այդ եկվորներուն աշխատանքը կրցած-ներուն չափ:

Եվ որովհետև այդ փախստականները ընդհանրապես իշխող մարդիկ էին եղած. լավ ապրած կամ ունևոր և կրած էին բաղդին հարվածները, խելացի էին, վճռական ու ձեռներեց՝ շատ շուտով ձեռք կբերեին շնորհքով ապրուստ իրենց խելքով ու կամքով: Եվ քանի որ հողին տէրը տեղացի Թուրք իշխողն էր՝ շատ դժվար էր ու բացառիկ բան հողի տէր դառնալը մանավանդ սկիզբները. Նորեկ-ները կդիմեին աւելի բազմամարդ կեդրոն վայրեր և պետք է զբաղ-վեին քաղքենի աշխատանքով, այսինքն՝ զանազան արհեստներով. մանածի գործ. կտավի գործ. կտորները ներկող, նկարազարդող, ոսկերիչ, ատաղձագործ, տուն շինող, երկաթագործ: Կաշխատեին մասամբ իրենց տներուն մէջ և իրար կաշխատցնեին տնայնագործ եղանակով. բայց հետզհետե խանութներ կբանային նաև շուկային մէջ. ուրկէ իրենց պատրաստած ապրանքները կտարածեին նաև քաղաքը շրջապատող մոտավոր ու հեռավոր գյուղերը: Հայերը կդառնային այդ օտարատեր մասերուն վրայ արհեստավոր վարպետ և առևտուրի մարդ:

Շատ շուտով ամէնքն ալ կդառնան բարեկեցիկ, շատերը՝ ուղղակի հարուստ, որոնք վարմունքի ու դրամի ուժով կմտերմանան, ծառայութիւններ կմատուցանեն ու կապեր կհաստատեն տեղական թուրք իշխանավորներուն և կառավարութեան վարիչներուն հետ, որով ձեռք կբերեն նաև դիրք ու ազդեցութիւն, կդառնան «պա-րոն», ինչպես կկոչվեին սկիզբները խաչակիրներու ազդեցութեամբ. Ետքն ալ տեղական սովորութեամբ՝ «աղա» կամ «ամիրա»:

Ասոնց ունեցած հարստութիւնը, բացի իրենց պատրաստած

հոսուն ապրանքեն, կալվածներ էին, այսինքն՝ տուներ ու խանութներ, որ հետզհետե կշինեին քաղաքին մեջ. այլև պարտեզ, այգի ու բանջարանոց իրենց շենքերուն կից: Առատ էր իրենց պտուղը, կանաչեղենը և գինին. և իրենք ալ ուտել-խմել սիրող մարդիկ էին. ինչպես և ճաշակ ունեին աղայավարի տուն ու տեղ, հագուստ ու ապրուստ ունենալու. քեֆ, երգ ու նվագ սիրող վարպետներու ընտանիքներ էին, ավելի ազդեցիկները՝ ազնվականի հովերով:

Բացի տնտեսական բարեկեցության բերած ազնվականութենեն, ճաշակեն ու վայելքի սերեն կար նաև հավանորեն որոշ չափով մը արյան ազնվականության բերած նպաստը: Չէ՞ որ Արծրունի Հայ թագավորական տունը այդ կողմերն էր տեղավորված բյուզանդական կայսրներու ձեռքով թուրանական դարերուն բոլորովին սկիզբը. չէ՞ որ նոր փախստականներուն մեջ կային անշուշտ իշխանական բարձր ծագումով դեմքեր, որոնց սերունդները հիմա վարպետներ էին դարձեր, առևտրական պարոն ու ամիրա:

Ահա՛ այս տեսակ տոհմապես, տնտեսապես ու քաղաքականապես նպաստավորված հայաշատ կեդրոն մըն էր հավանորեն Ակն քաղաքը: Ակնցիները մինչև վերջերս միշտ աչքի են ինկած իրենց խելքով, շնորհքով ու հնարիմացությամբ և թուրք տիրապետողներուն հետ լեզու գտնելով՝ ոչ միայն իրենց քաղաքի ավելի նեղ շրջանակին մեջ, այլ մինչև Պոլիս՝ օսմանյան մայրաքաղաքը:

Այս աշխատող, ճարպիկ ու շնորհալի ժողովուրդի շրթունքին պահվեր էր ահա հայրենիքեն իրենց հետ բերած իրենց հին երգերը, ինչպես և այդ ձևերով ու հին ազգային չափերով երգերուն նոր մշակումները: Եվ այդ հնաձև ու նորակերտ անտունի երգերուն մեջ պատկերացող կյանքն ու ապրուստը բնականաբար վերը նկարագրված քաղքենի կյանքն է: Եփրատեն արևմուտք ժողովրդական անգիր երգը երգողը, պահողը և շարունակ մշակողը գյուղացի ժողովուրդ չէ, այլ ավելի բարձր ու մեծ կեդրոնի մեջ ապրող հայ արհեստավոր ժողովուրդ մը: Իրենց երգերուն մեջ մեր տեսածը հողը չէ, ո՛չ ալ հողի ու գյուղի աշխատանքն ու կյանքը: Քաղաքի փողոցները կգտնենք հոն, քաղքենի տան ներսը՝ պարտեզ ու այգի, ավելի հարուստ միջավայր ու բարեկեցիկ կյանք, ավելի առատ կեր ու խում: Արևմտյան միջնադարյան այս անտունի ժո-

ղովրդական երգերուն մէջ պատկերացողը միջնադարեան փոքր քաղաքային կեանքն է:

Մինչդեռ ճիշդ այդ դարերուն Եփրատէն արեւելք եղող մեր բուն հայրենի երկիրը բոլորովին տարբեր պայմաններու տակ է. Հայր ո՛չ թէ եկւոր մը ու հիւր մըն է, այլ տիրապետուած ու իրաւազրկուած անձ մը. բոլորովին ուրիշ է տեղացիի եւ եկւոր հիւրի հարաբերութիւնը եւ ուրիշ է հոգեբանութիւնը խլողի ու կողոպտուածի: Տնտեսապէս ալ հայ հողերուն վրայ հայ տարր մնացած է միայն գիւղացի դասակարգը եւ ան ալ սաստիկ խեղճացած ու աղքատ. եւ ինքը չէ իր վարած հողին տէրը, հայ գիւղացին հողին կապուած ճորտ մըն է օտարացեղ եւ օտարակրօն հողատէրերուն ձեռքը: Հայ հողատէր իշխաններ մնացած են միայն հիւսիսային Վրաստանի սահմանակից մասերուն մէջ, ան ալ ո՛չ շատ երկար եւ հոն ալ ինկած են նորէն արեւելեան ուժեղ ազդեցութեան տակ:

Այնպէս որ մեր բուն հայրենիքը՝ Եփրատէն արեւելք, օտարի տիրապետութեան, բռնութեան ու ճնշումին տակն է ուժեղ չափերով. աղքատ է ու հողին կապուած հողի աշխատաւոր իր տէրերուն համար: Եւ իր երգերն ալ բնականաբար մեծ չափերով ենթակա օտար երգի ճնշումին ու ձեւին. եւ անոնց մէջ պատկերացուած ու ցոլացող կեանքն ալ գիւղի կեանքն է. եւ ընդհանրապէս զրկուած ու չքաւոր գիւղացիին կեանքը:

Արեւելեան հայ ժողովրդական երգին մէջ տիրապետողը հողն է. ամէն ինչ անոր շուրջը կդառնայ, անոր է կապուած, անով կպատկերանայ եւ մարդոց բոլոր զգացումներն ալ հիւսուած են հողային աշխատանքներուն: Արեւելեան հայ ժողովրդական երգը հողագործ ու գիւղացի ժողովուրդի բանահիւսութիւնն է:

3. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Արեւելեան արդի հայ ժողովրդական երգին հետ համեմատած՝ արեւմտեան այս անտունիները ունին նաեւ արուեստի բարձրութիւն մը, իբրեւ քաղաքակրթական աւելի բարձր միջավայրի ստեղծագործութիւն:

Բնարական բանահիւսութիւնը զգացումներու անմիջական

արտահայտութիւնն է, բայց այդ արտահայտութիւնը ինքն ունի երկու տարբեր եղանակներ: Կա՛մ ուղղակի կըսէ, կհայտնէ, կպոռա իր զգացածը. ասիկա զգացումներու ավելի տարրական, ավելի նախնական, ավելի պարզ ու շիտակ արտահայտութիւնն է, որ կերպով մը բացականչութեան կհամապատասխանէ. շարք մը բառերու միջոցով իր արտահայտել ուզածը կրնար արտահայտել նաև պարզ բացականչութեամբ մը, կանչով մը, ճիչով մը, մարմնի կամ դեմքի որոշ շարժումով մը: Երգին խոսքերը բոլորը միասին առած դիմում մը, ցասում մը, տենչանք մը արտահայտած ըլլալեն անդին չանցնիր:

Հուզումն ու զգացումները արտահայտելու երկրորդ եղանակը միայն բացականչութեամբ չի բավականանար և ավելի հաճախ ընավ բացականչութեան չի դիմեր, այլ կպատմե ու կնկարե դիմացդ այն արտաքին եղելութիւնները, որոնցմե առաջացած է իր հուզումը, ինչպես և իր ներքին հոգեկան կյանքին մեջ առաջացած փոփոխութիւններն ու վիճակը. այսինքն փոխանակ միմիայն ուղղակի իր ուզածն ու իր զգացումը մեզի ըսելու, մեր դեմը կըբեմադրե այն արտաքին իրողութիւններն ու այն ներքին հոգեկան դրութիւնները, որոնց համախմբումը իր ապրածն ու իր ցանկացածը կպատկերե:

Քնարական բանահյուսութեան առաջին տեսակը զուտ քնարական է, կազդե երաժշտութեան նման անմիջական վարակումով: Քնարական բանահյուսութեան այս երկրորդ տեսակը վիպական է, վիպական քնարերգութիւն, վիպերգ. արվեստ մը, որ դիմադրութեան, նկարագրութեան ու պատկերացման միջոցով ազդել ու հասկցնել կցանկա իր մեջ եռացող հուզումը. ո՛չ երաժշտական վարակումով, այլ նկարչական դիմադրումով:

Այս երկրորդ եղանակը ընդհանրապես շատ ավելի բարդ, շատ ավելի դժվար և ավելի բարձր արվեստ մըն է, քան խինդ ու ցավի անմիջական արտահայտութեամբ դիմացինդ վարակելը: Կպահանջե արտաքին իրականութեան ճիշդ ընտրութիւն և նուրբ ու կարող պատկերացում, ինչպես և ներքին հոգեբանական վիճակներու ավելի խոր ու հստակ ըմբռնում և արտահայտելու կարողութիւն: Եվ այս ճանապարհով ո՛չ միայն զգացումները կարտահայտ-

վին, այլև այդ զգացումներուն ծնունդ տվող դրդումներն ու պայմանները, ինչպես անոնց առաջացուցած հետևանքներն ու հոգեկան շարժումները: Այսինքն՝ զուտ զգացական տարրին կուգան կաւելնան բազմաթիվ դիտողություններ, դատողություններ ու գնահատություններ շրջապատի իրականութենեն ու մարդկային հոգեբանութենեն, որով և կհարստանա, կխորանա ու կնրբանա մեր արտահայտել ուզած ներքին ապրումը:

Դուրսի ու ներսի պատկերացումով իրականացած զգացումի մը արտահայտությունը այլևս պարզ բացականչության մը Հավասարցնել չենք կրնար. կարճ կամ երկար պատմություն մը կա մեջը, որ իր ծայրը, ընթացքը ու վերջը ունի. այսինքն՝ իր վրա շատ ավելի որոշ կերպով ամբողջական բան մը ըլլալու կնիքը կկրե, շատ ավելի զգալի կերպով մասերու հաջորդականություն ու կառուցում ունի: Բացականչությունը ժայթքում մըն է, հառաչ մը, բան չենք ու կառուցում:

Արդ՝ արևելյան ժողովրդական երգին մեջ և՛ արտաքին իրականության պատկերացում, և՛ ամբողջականություն, և՛ հոգեբանական կառուցում շատ քիչ անգամ գործադրության կուգա. ընդհանուր տիրողը բացականչական եղանակն է: Իր շենքն ու կառուցումը ընդհանրապես արտաքին ձևի ու չափի կառուցումներ են և ո՛չ խորքի ու ներքին էության. շատ հաճախ քառյակի մը առաջին տողերը վերջին տողերու հետ միայն ականջի երաժշտական կապ մը միայն ունին. քիչ անգամ չորս տողերը միասին ամբողջական պատկեր մը կամ դատողություն մը կկազմեն, գեթ ամբողջական տրամադրություն մը: Ընդհանուր առումով արևելյան մեր ժողովրդական երգը շատ ժլատ ու թերի կերպով կդիմե վիպականության ու վիպական կառուցումի: Իր գեղեցկությունը զգացումի ուժին ու արտահայտության թափին մեջն է, իր գեղեցիկ համեմատություններուն մեջ. իրարմե դիցուք անջատ, բայց ոգեկոչող պատկերներուն մեջ և վերջապես մանրահատում չափին ու հարուստ հանգերուն մեջ:

Անտունիներուն մեջն ալ անշուշտ պակաս չեն բացականչական քնարերգական տուներն ու կտորները, բայց արևելյան երգին հետ համեմատած՝ շատ են ու տիրող իրական կյանքի կենդանի ու

ապրող պատկերացումը եղող կտորները. ավելի շատ են գործողութիւն մը ու պատմութիւն մը պարունակող տուները, որոնք զգացումներու խորութեան կից ունին նաև ներքին ճարտարապետութիւն, ուր աչքի կիյնայ աւելի հասուն, ներքին գեղարուեստական ճաշակ ու կառուցում. և ատոր համար ալ այդ տուները աւելի բարձր ստեղծագործութեան մը տպաւորութիւն կընեն ու կնմանին արդի եւրոպական քնարերգութեան գործածած հոգեբանական ձևերուն. որով և աւելի հաճելի կդառնան արևմտյան ազգերու գրականութեամբ սնած մարդոց ճաշակին:

* * *

Գեղարուեստական տեսակետեն անտուններէն կզանազանվին մեր արևելյան ժողովրդական երգերեն նաև իրենց արտաքին շենքով: Բոլոր անտունիները հորինված են ինքնահատուկ չափով մը, որ թուրանական դարերեն ի վեր «Հայրեն» անունը կկրե:

«Հայրեն» կոչվող այդ չափը ըստ էութեան մեր հին հատվածական չափն է, միայն աւելի կանոնի ենթարկված, աւելի բարդ արվեստով, աւելի հաստատ ու միայուն ձև մը առած:

Արևելյան հայ ժողովրդական երգին պես մանրահատում քնարական չափ մըն է. արևելյան երգին պես իր բոլոր հատումները կա՛մ երկու վանկ են, կա՛մ երեք:

Արևելյան երգի ամենեն սովորական չափը յոթը ոտանի տողն է, յուրաքանչյուր տողը՝ կազմված երեք հատվածե, երկու հատված երկվանկ և հատված մը եռավանկ. կամ ատոր համապատասխանող ութը ոտանի չափը, չորս հատ երկվանկ հատված կամ երկու եռավանկ և մեկ երկվանկ: Այս միևնույն երկու չափերու զուգադրումն է «Հայրեն» չափը: Յուրաքանչյուր տողի առաջին կեսը յոթնոտանի մըն է՝ երկու հատված երկվանկ, մեկ հատվածը եռավանկ. իսկ յուրաքանչյուր տողի երկրորդ կեսը ութնոտանի՝ երկու հատված եռավանկ և մեկ հատված երկվանկ:

Այսինքն՝ «Հայրեն» չափի յուրաքանչյուր լրիվ տողը կազմված է 15 վանկե, որոնք կներկայացնեն միշտ վեց հատում՝ երեք հատում առաջին կիսատողը, երեք հատում երկրորդ կիսա-

տողը, և կարելի է միշտ կիսատողերը գրել իբրև առանձին տող:

Առաջին կիսատողին մեջ տիրապետողը երկվանկանի հատվածներն են և ընդհանրապես կսկսի երկվանկ հատումով մը. երկրորդ կիսատողին մեջ տիրապետողը եռավանկ հատվածներ են և կսկսի միշտ եռավանկ հատումով մը:

Եվ գեղեցիկ ու հաջող կտորներուն մեջ ճիշդ կա երկվանկանի հատված երկվանկանի հատվածներին զատելու, եռավանկներն ալ եռավանկներեն, այսինքն՝ ճիշդ կա երկվանկ ու եռավանկ հատվածներու կանոնավոր հաջորդականություն մը ստեղծելու ամբողջ երգին մեջ մեկ ծայրեն մյուսը՝ 2, 3, 2 և 3, 2, 3 տարազով:

Երկու կիսատողերու իրար անհավասար ըլլալը, մեկուն մեջ կարճվանկանի բառերու տիրապետությունը և ավելի կարճ բառով մը սկսիլը, երկրորդ կիսատողին մեջ, ընդհակառակը, ավելի երկար հատումներու տիրապետությունը և միշտ երկար հատումով մը սկսիլը կուտան ականջի համար բոլորովին հավելյալ նոր հրապույր մը. արտասանելու ատեն խոշոր ալիք մը կարծես կերթա ու կուգա մանրահատում ալիքներուն վրայեն. բան մը կարծես կերթա ու ետ կդառնա, երեք հատված առաջ ու երեք հատված ետ. ստրոֆ ու անտիստրոֆ շարժում մը, մեր շուրջպարերու շարժումին նման: Ձայնին մեջ մեկ-երկու տեսակի ալիքավորում կստեղծվի և իրարու ներդաշնակ:

Այս 2, 3, 2, և 3, 2. 3 ներհատումներով կազմված տողերը մեր հին հատվածական չափի ամենեն արվեստով, ամենեն ճաշակավոր և ամենեն նուրբ կառուցումն է. և ատոր համար ալ անշուշտ շատ գնահատված ու սիրված մեր միջնադարյան անհատ տաղերգուներեն:

Եվ որ հիմա ալ մեծ հաջողությամբ կրնա նորեն գործածության դրվիլ մեր բանաստեղծներուն կողմե, երբ վերջապես ամենուն ալ ըմբռնելի դառնա, որ այդ անտունիներուն չափը 7, 8 չէ, ո՛չ ալ 7. 3. 5. այդ տեսակի անճոռնի չափեր գոյություն չունին. ի՞նչ ալիքավորություն է ատիկա: Այլ որ ատոնց չափը երկու և երեք մանրահատում հատվածներու անընդհատ հոսում մըն է կա՛մ կանոնավոր, կա՛մ մասամբ կանոնավոր հաջորդականությամբ: Կանոնավոր հաջորդականությունը երկու-երեք վանկանի հա-

տումներու անշուշտ ունի իր հոսուն պճեղկությունը, բայց այդ մանր հատումներու մեջնմեջ-կանոնավոր կամ բոլորովին անկանոն հաջորդականությունն անգամ ունի իր մեծ գրավչությունը:

Միջնադարյան «Հայրեն» չափի միակ նորությունը, որ առեր է իր թուրանական շրջապատեն, հանգն է: Ինչպես գրաբարը, այնպես ալ բարբառական ժողովրդական երգը չկրցավ դիմադրել այդ տողավերջ հնչակրկնության բերած նորույթին ու հրապույրին:

«Հայրենները» հանգ կուտան միայն 15-րդ վանկին, այսինքն լրիվ տողին վերջը, ընդհանրապես երկ-երկու տող միայն կունենան նույն հանգը, եթե երգը չորս տողեն ավելի է: Չորս տողանի երգերը ընդհանրապես կունենան նույն հանգը: Եվ աղքատ են սովորաբար այդ հանգերը, ձայնավոր մը, հետն ալ բաղաձայն մը: Հանգին վրա միշտ նայած են երկրորդաբար. քիչ կպատահի լրիվ վանկ մը իբրև հանգ. իսկ արևելյան երգի հարուստ հանգերը երբեմն երկու-երեք վանկերով, բնավ չկան «Լափ տալով, ծափ տալով», «պաղի միջով» «թաղի միջով», «խաղի միջով»:

Անտունիները մեծ մասով կազմված են քառատող ամբողջություններե. քիչ կպատահի երկու կամ երեք տողանի ամբողջություն, որոնք միշտ ալ տողեր կորսնցուցած ըլլալու տպավորությունը կընեն: Բայց չորսեն ավելի տողեր հաճախ կպատահին. կհորինեն այնքան տողերով, որքան որ իր նյութը ամբողջացնելու համար հորինողը անհրաժեշտ զգա կամ ժողովրդական ապագա «բաղները» ավելցնեն ու պակսեցնեն, անպատճառ չորս տող ըլլալու հարկադրանք չկա. 5, 7, 9 և ավելի տողերով երգեր բավական շատ կան: Եվ բոլորովին ավելորդ է մեր անտունիներուն քառյակները Օմար Խայամի ազդեցության վերագրելը. ծրի մեղադրանք է: Դեռ յոթներորդ դարեն և անկե ալ առաջ դեռ Ե դարեն մեր կրոնական երգերուն մեկ խոշոր մասը քառատող է: Եվ ընդհանրապես ամեն ժողովուրդի քնարերգության մեջ քառատողը ամենեն բնական ու ամենեն սովորական ամբողջությունն է և անշուշտ երկու անգամ երկու ըլլալուն պատճառովը. զույգ մը տողը ամենեն տարրական կառուցումն է ոտանավորի, որով այլևս ժողովրդական երգն անգամ բավականանալ չի կրնար, գոնե արտաքուստ: Ամբողջությունը կդառնա երկու զույգե կազմված:

* * *

Արեւմտեան հին ժողովրդական երգի նիւթերն ալ նոյնն են արդի արեւելեան հայ երգերու տեսակներուն հետ, թէեւ արեւմտեանի մէջ բոլոր տեսակները առատօրէն չկան կամ մեր ձեռքը չեն հասած:

Կենցաղական երգերէն կան օրօրներ, հարսանեկան երգերու կտորներ, սուգի երգերու կտորանք եւ ավելի հաճախ՝ պանդուխտի երգեր: Զուտ կրօնական ու բնութեան նուիրուած առանձին երգեր անտառներուն մէջ անսովոր է: Մեր ձեռքը չեն հասած նաեւ աշխատանքի երգեր, որ պէտք է անպատճառ ըլլային. մանելու, բանելու, բրուտի ու մյուս արհեստներուն կապուած երգեր. չեն պահուած անշուշտ մասնաւոր խումբի մը համար միայն հետաքրքիր ու ծանօթ ըլլալով:

Ամէն պարագայի մէջի հասած նիւթերուն մէջ հաստուկ կերպով շեշտուած ու կրկնուած սիրո երգեր են, 500 կտորի վրայ մօտաւորապես 400-ը: Նոյն շատ բնական կերպով, ինչպես եւ արեւելեան ժողովրդական երգին մէջ: Կյանքի ամենեն թարմ օրերուն, ամեն հասունցող անհատի մարմինն ու հոգին հուզող, ամենեն ավելի խոր կարոտներ, հույսեր, հույզեր ու կրքեր վառող զգացումը, որ երգել ու պարել կուտա, երբ բռնկած է, որ երգել ու փնտրել կուտա, երբ դեռ իր այցելութիւնը կսպասէ եւ որուն երգերը մեծ ախորժով կլսէին նաեւ անոնց կողմէն, որոնք անցեր են արդէն Սկիլլիայի ու Ղարիպդայի այդ իրարու բախող ժայռերուն մէջէն. իմաստուն Ոդիսեւսն անգամ իրեն կապել տուավ կայմին այդ երգերը անվտանգ կերպով նորեն լսել կարողանալու համար:

Սիրո երգերէն դուրս խրատական երգերն են միայն, որ շատ կկրկնվին ու ամէնքէն, շրթունքէ շրթունք, իբրեւ կյանքի իմաստութիւն, իբրեւ բարոյական ղեկավար սկզբունք եւ իբրեւ մտքի հեղինակութիւն ձեռք բերելու զենք:

Կդնեմ նախ քանի մը կենցաղական ու խրատական երգեր, ետքն ալ փունջ մը սիրո երգեր:

ՕՐՈՐ ՄԸ.

Ծոցիկդ առաւօտ նման, առտուան շաղիկն է վրան.
շաղուտ՛ր, ետ ու ետ գնա՛, որ ցամթէ արեւն ի վրան:
Կարմիր վարդ ու լայն տերեւ, բացուեցար օտայիս վերեւ.
քանի կայ պախճան տերեւ, անխտար կ'ուզեմ քեզ արեւ:
Մեծնաս դուն Հազար-Հազար ու չի գա՛ս աւուր մի չարի.
աւուր մ'որ չարի տի գաս, քու չարերը դառնայ բարի:

ԹԱԳԱՎՈՐԻՆ ՀԱԼԱՎԸ.

Ան բարձր լեռներն ի վար մեղի բարկ արեւ մ'է ցաթեր.
ըմենուն երդիքն ի վար, մեզի դուռն ի ներս ճառագեր.
ըմենդ ի վրայ եկէ՛ք, թագւորին կապան կարեցէք.
լուսընկան աստառ արէ՛ք, արեգակն երես ձեւեցէ՛ք.
ան մանր ու խոշոր աստղեր թեւերուն կոճակ կարեցէք:

ՂԱՐԻՊԻՆ ՍՊԱՍՈՂ ՀԱՐՍԸ.

Ա՛յ իմ սարերու հովիկ վար իջեր դռնակն է զարկեր:
Նորեկ ջահիլուկ հարսնուկ, որ իջեր դռնակն է բացեր.
տեսեր որ իր եարը չէ, միւլիւլեր ու ներս է գացեր:
Կեսրակն ալ հարցմունք արեր՝ «Հարսնո՛ւկ, քու ո՞ր տեղդ է ցաւեր»:
– Մարի՛կ, քու որդուդ սիրուն իմ ամեն տեղիկս է ցաւեր:
«Մի՛ լար, մի՛ խարգիր, հարսնո՛ւկ, գիր կ'անեմ. որդիս կու բերեմ»:
– Գիր անես, որդիդ բերես, Աստըծու լուսուն տիրանաս.
գիր չանես ու չի բերես, կ'անիծեմ ու քար կու դառնաս:

ՆՈՐԵՆ ՂԱՐԻՊԻՆ ՍՊԱՍՈՂ ՀԱՐՍԻ ՄԸ ԳԱՆԳԱՏԸ.

Լուսիկ մի փրթաւ քարէն, կէսն է խոռ ու կէսն է բոլոր.
քիչ-քիչ ալ ի վեր եկաւ, բոլորեր զըն նոր թագաւոր:
– Լուսի՛կ, դու լուսով կենաս, թէ կենաս պահիկ մը հուտա,
երկու խօսք գանգատ ունիմ, գանգըտիմ՝ դու ալւի գնա՛,
գնա՛, զարիպիս ըսէ՛, չի կենայ, թող ելլէ ու գայ:

– *Խօսմունքդ ի գլխուս վրայ. չի գիտեմ ղուաը ղարիպիդ:*
– *Եկո՛ւր, նշանով ցոյց տամ. բարձր պատ ու ծառ. չքերուն.*
Նստեր է ծառին շուքը խատուտմատ խատեհն ի ափին:
Խատեհն որ ափիդ ունիս՝ կա՛մ խմէ՛, կա՛մ տո՛ւր խմողին.
Ան տագն որ կրծքիդ ունիս՝ կա՛մ չալէ՛, կա՛մ տուր չալողին:

ՏՈՒՆԵՆ ՀԵՌԱՑՈՂ ՊԱՆԴՈՒԽՏԸ ԻՐ ԿՆՈՋ.

Հա՛յ իմ աննման նման, մայրն չէ բերեր քեզ նման.
այդ քու բռանայ մազերդ որ առեր վզիդ մանեման.
քաշէ՛ փունջ մ'ինձ տուր նշան, ես օտար երկիր կու գնամ.
բանի դուն իմ միտքս անկնիս, երեսիս դնեմ քեզ փոխան:

ՄԵԿՈՒՆ ՄԱՀԸ, ՄՅՈՒՍԻՆ ԽԱՂԸ.

Եկէ՛ք որ իջնունք ի ծովն ու ձկնիկ որսանք վարմընով.
առնունք ու մեճլիս նստունք, խորովենք զինք բարկ կրակով:
Ձկնիկն ի գինին ասաց, թէ՝ «Լցու սրտիկս արիւնով.
երբ գիս արեւէն հանեն, թող ցամքի ինչ գետ կայ ու ծով»:

ՀԱՄԼԵԹՅԱՆ ԽՐԱՏԱԿԱՆ ՄԸ.

Փողոցէդ ի վայր կուգ'ի, զինչ տեսայ բրուտ մի բանի.
կաւիկն այլ ի ձեռքն առեր՝ կու առեղծէր սուրաթ մի քանի.
կաւիկն ի բրուտն ասաց. «Մի՛ զատեր ողորմ ու լալի.
վաղն ու մէկալ օրն առեմ քու սուրաթն ի յիս նմանի»:

ՀՈՒՅՍԴ ԴԻ՛Ր ՔԵԶ ՎՐԱ.

Յաշխարհս ես ի ժուռ եկայ. չըգտայ ըղորդ սիրելի.
գլխեյքս ի վերայ բերի, զբազուկս արի սիրելի.
բանի բազկիկս ի բանի՝ շատ եղբայր ու շատ սիրելի.
բազկիկս ի բանէ ընկնի՝ ո՛չ եղբայր եւ ո՛չ սիրելի:

ՕՐՀՆԱՆՔ ՀԵՌԱՑՈՂ ՁԱՎԿԻՆ.

«Գնամ, կու գնամ» կ'ասէր իմ մանչուկն, ես աւտայու չ'էի:
Երբ բարով-մնա՛ ասաց, ես ու օտ-չաւօտ կենայի:

Երբ զոտքն ի զանկուն եղիր՝ ես Հայրան ի վար մնացի.
այլ բան չի կարցի ասել՝ «Ուր երթաս, ճամբէքդ ի բարի.
այն ճամբովն որ դուն երթաս՝ վարդ ու մուրտ առջեւդ բուսնի.
այն քաղաքն որ դուն մտնուս՝ գրողին ձայնն չի Հասնի.
այն մաճլիսն որ դուն նստիս՝ զաւաթներդ գինով լըցուի,
ծովերն այլ գինի դառնայ ու նաւերն տոստողանի»:

ԽՐԱՏ ԱԶՆԻՎ ՈՒ ՄԱՔՈՒՐ ԱՊՐԵԼՈՒ.

Ա՛յ իմ նշենի ծաղիկ, դեղնեցար ու դարձար ի նուշ.
բերանդ է փոքրիկ անուշ, պռկընիդ ամպրաւ ու նուշ.
այն օր ի մօրէն ծընար՝ դուն լայիր, ամենք խնդային.
Հանց մաքուր ել յաշխարհէս, թ'երկիր լայ՝ նա դու ծիծաղիս:

* * *

ՍԻՐՈ ԵՐԳԵՐ

Աչերդ է ի ծով նման, որ Մսրայ ի դուռն է կանգներ.
վարսերդ ի յալի նման, որ քամին կ'անէ տարուբեր.
քան զուռ ես ի վեր վազեր, քան զկարմիր խնձոր բոլորեր.
պայծառ ես քան զքաֆուր վարդ, որ Հոտով զաշխարհս է լըցեր:

– Իմ բարձրագնայ լուսի՛ն, շատ բարեւ տա՛ր իմ կիւզէլին:
– Զբարեւդ ես ի ո՞ւր տանիմ, չեմ գիտեր զտունն կիւզէլին:
– Գնա՛ ի վերայ թաղին, բարձր պատ ու ծառն ի միջին.
նստեր ի ծառին շրքին՝ կու խմէ ի լուրջ ապիկին.
կու խըմէ ու Հայրեն կ'ասէ, թ'ինչ անուշ է սէրն ու գինին:

Ես աչք ու դուն լուս, Հոգի՛, առանց լուս աչքըն խաւարի.
ես ձուկ ու դուն ջուր, Հոգի՛, առանց ջուր ձուկն մեռանի:
Երբ զձուկն ի ջրէն Հանեն 'ւ ի այլ ջուր ձգեն՝ կու ապրի.
երբ զիս ի քենէ զատեն, քան զմեռնիլն այլ ճար չի լինի:

Ես ձագ ծիծեռնիկ ըլլա'ի, զօրն գքո տունն մտնուի.
ան բարձր մայտան չարտախդ ես ի հոն բուն մը շինէի.
ինչ որ մութն մութանար, ցածնայի ծոցդ մտնուի.
ինչ որ լուսն լուսանար, բարձրանայի բունս մտնուէի:
Ես չարէ չափիկ ըլլա'ի, զօրն ի բուն անձդ կենայի,
կամ ապրշումէ գումաշ, զօրն գքո մէջքդ պինտէի,
կամ ապրշումէ կոճկեկ, որ շլնիցդ գիրկ ածէի.
կամ քաղցր նուռն գինի՝ զօրն գքո փարչդ պինտէի,
առնէիր ու բերնիդ դնէիր, ցածնայի դունչդ պագնէի:

Բարի յուսուն դուրս ելայ, ես աղուոր կտրիճ մի տեսայ.
այդ որ կտրիճ մի տեսայ, զարկաւ իմ երեսն արունեց.
մարիկն այ հարցմունք արաւ՝ «Աս երեսդ ո՞վ արունեց»:
– Ես աւոր պախճան իջայ, վարդենուն փշիկն արունեց:
«Զօրնա՛յ ան վարդին փուշը, որ քու լուս երեսդ չարունէ»:
– Մ՛անե՛ր, մ՛անիծեր, մարի՛կ, մէկ աղուոր կտրիճ մ'էր
պագաւ.
պագաւ, թէ առնէ մուրատ, կ'անիծես՝ կ'երնէ պեմուրատ:

Սրտիկս է յարու տղայ, շաքարով կը խաղուեցընեմ.
կու յայ զօրն. գքեզ կ'ուզէ, ես անոր ճարակն ի՞նչ անեմ:
Աշխարհն ինչ բանից որ կայ, նա բերեմ աչուընուս ցուցնեմ.
աչերս երբ քենէ ի զատ մարդ չ'ուզեր՝ նա ես ի՞նչ անեմ:
Հոգի՛, թէ հոգիս ուզես՝ չէ չասեմ, հանեմ տամ ի քեզ.
ապա թէ աչերս ուզես՝ ալ ինչո՞վ նայիմ դէպ ի քեզ:

Ես տղայ ու դուն տղայ, սիրուելուն ատենն է հիմա.
մէջկուկքդ ի յաղեղ նման, քանի յիս քաշեմ նա կու գայ.
քո ծիծդ է խաղող նման, որ առեր կըծոցդ ի վերայ.
քո ծոցդ առաւօտ նման, քանի յետ բանամ նա լուսնայ:

– Կոզա՛յ, քեզ բանիկ մ'ասեմ, քո ահուդ չեմ իշխեր ասել.
անոր համար չեմ ասեր՝ դուք հարուստ էք ու մենք տառապել:
– Ծօ՛, աստ՛ և մի՛ վախեր, շատ հարուստ է տառապեցել.

անչափ Հարըստի դստրիկ տառպելի ծոցիկ է պառկել։

Ամուր եմ քարիդ նման, որ մրճիկն ի յիս չի բանի.
բարձր եմ թուխ ամպիդ նման, որ ոչ ով ի յիս չի Հասնի.
աղեղն եղնենի լինի ու լարն ի վերայ գայլենի,
քաշողն քաջորդի լինի, Հապա թէ իմ սիրուն Հասնի։

Լուսի՞ն, պարծենաս, ասես՝ «Լուս կու տամ ես աստընուորիս»։
Ահա՛ Հողեղէն լուսին ի գրկիս, նրեսն երեսիս,
թէ չես աւտալ այս գերուս՝ յետ տանեմ զփեշ կապայիս.
վախեմ՝ սիրոյ տէր լինիս, լուս պակաս տաս աստընուորիս։

Սահայօքս ի վար կուզ՚ի, նա տեսի լաթեր լուացած.
ի յան լաթերուն միջին լուացած շապիկ մ՚էր փռած.
իր կուրծքն է ղալեմ քաշած ու թեզնիքն է մատնեՀարած.
անոր տէրն ի յիս պիտէր՝ զիս Հազար դեկան թէ գնած։

Աչկո՛ւնք, ծրարեմ զքեզ կրակով, որ երթաս էրիս.
լեզո՛ւ, ալ կտրեմ զքեզ սուր դանակով, որ ալ չխօսիս.
սրտիկս ալ դանակ ածեմ, արունին մէջն թապլտիս.
երբ սապր ու Համբեր չունիս, սիրոյ տէր ինչո՞ւ կը լինիս։

Վաղուեմէն ի դուրս ելայ, արեգակն աչացս ի դիմաց.
աղուորն ալ ի դէմս ելաւ, զէտ Հազար լուսին բոլորած.
ասի թէ՝ «Սիրեմ զքեզ», լոկ պռկունքն ալ ի դէմս իխած.
«Սիրես նա՝ սիրէ՛ դու մէն, մի՛ աներ այլ մարդու իմաց.
թէ չէ նէ կ՚ելնես գլխուդ, յարեւուդ ու յայլ շատ իրաց»։

– Ա՛յ իմ մարգրտէ շարոց, ոսկեթել ծածկոցդ ի վերայ,
զքո Հայրն պատիւ ձենեմ, քեզ ինծի կ՚ուզեմ՝ թէ կու տայ։
– Կտրի՛ճ, մի՛ անխելանար, թէ Հազար ուզես՝ նա չի տայ.
ծոցդ լի ոսկով արա՛, եկո՛ մեր դուռն խա՛ղ արա.
զիմ Հայրս պարտակա՞ն արա, դու կանգնէ զինչ քուրդ Հաւալայ,

Ես իմ հօրս հետ կռուիմ թէ՝ «Գնա՛ պարտքիդ ճա՛ր արա».
մայրս քեզ բարձ դնէ, դու նստիս գինչ բարձր ամիրա.
ձեռքդ բռնեմ նէրս տանիմ, դուռն դնիմ, զփակն ի վրայ.
ապրիշում խալի ձգեմ, ոսկեթել դօշակն ի վրայ,
բարձրիկ մի սեղան բերեմ, որ խորված կաքաւն ի վրայ,
գաւաթ մի գինի բերեմ, որ խմենք ի սիրոյ վրայ:

Խապանցայ խապաս մ՚արի՝ ան գէշէն պագիկ մ՚ուզեցի.
ան գէշն ալ ի նազն եկաւ՝ «Ջեմ ի տար, անուշ կ՚ուրի»:
Ադուար մը նէրսէն ի դուրս՝ «Ի՞նչ միւննէթ կ՚անես ատ
գիշուն.
պագիկն ադուորէն ուզէ՝ ան գիռէ դառը կորճուն»:

Այս գիշեր մինչի լուսացաւ ես երկու խանգալ մանեցի.
իմ եարն ալ որ միտքս ինկաւ՝ թեզ եղայ ջահրաս կործեցի.
գացի իմ եարին դուռը՝ «Ջին եկեր, ոտուխս կու մխի».
իմ եարն ալ դուրս եկաւ, թէ՝ «Բարի՛ եկիր, իմ հոգի՛.
Եկո՛ւ գիրկուծոց անենք, որ առքուդ մազկատն անցընի»:

– Ճէպէգ ու ծոցէգ կ՚ուզեմ. էճապ նո՞ւռ տի տաս, թէ խնծոր:
– Եկո՛ւր. քեզի նուռ տի տամ. կտրէ՛, տե՛ս քանի՞ հատ ունի.
ամեն հատի պա՛գ մը տուր, էնկը հերամ թէ ալխոի:
– Նուռ կայ՝ հազար հատ ունի. հազար պագն ո՞ւսկի կու լինի:
Երկու սէրն որ մէկ լընի՝ հազար պագը թեզ կու լինի:

Ձայգ պագն, որ ի քո բերնէն դու տուիր քո սրտի կամով,
Հանցեղ անուշիկ պտուղ ո՛չ ցամաք կար եւ ո՛չ ի ծով.
նման էր այն պտղոյն, որ Ադամ կերաւ խաբանօք,
կերաւ ի դրախտէն ելաւ, ես ի քո ծոցոյն կարօտով:

Կանաչ ու կարմիր հագնիս, ի նուան հաղըն նմանիս.
Յայնժամ ինձ ադուոր թուիս, երբ եկնես ձեր դուան կանգնիս,
դուան այլ կիսարաց անես՝ ցած հայիս, մանտրիկ ծիծաղիս,

աչօքդ ու ունօքդ անես, իմ տխմար խելքս կու տանիս:

Խնծորն ի ծառին ճղին, ի ճղին ներքև տերևին,
Հնցկուն իմ եարին ծծերն ի ծոցին՝ ներքև շմաթին.
արեգակն ի ջուրն իջել, լուսնեկան ու կուժն ի յուսին.
Նա քալէր՝ ճօճկըտար միջին, լոք ենէր շամամն ի ծոցին:

Մահալօքս ի վար կուգ'ի ծուռումուռ հազար սոխախով.
իմ եարս ալ ի դէմս ելաւ, լոկ բարև երետ հեճապով.
գլրկ ածի ու պինդ պագի գիր աչերն ի խիստ կարօտով.
կ'երթար ու կ'ասէր լալով, թէ՝ «Ի խաղք եղանք ցորեկով»:

Կարմիր ու ճերմակ երես, մազդ երեսդ ի վար կու բերես.
քանի պագնելու կ'անեմ չոր արմուկդ ի դէմ կու բերես:
Ջորնա՛յ ատ չոր արմուկդ, որ այա իմ դէմ չի բերես,
մարդը սիրու տէր կ'անես, կու դառնաս «աղբար» կու կանչես:
Ադ հալդ աղբար չիլլիր. սիրու տէր եմ՝ իս կու խաբես.
Օտար մարդն աղբար չիլլիր՝ դուն հոգիդ կրակը կ'երես:

Է. ԱՆԳԻՐ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՎԻՊԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Վիպական ստեղծագործությունները բանահյուսության կրաժնեմ նորեն հինգ գլխավոր տեսակներու՝ 1) ասելուկ ու առած, 2) առակ ու կատակ, 3) զրույց ու ավանդություն, 4) հեքիաթ և 5) դյուցազներգություն:

1) Առաջին տեսակը վիպումի ու դատումի, բոլոր ժողովուրդներու մեջ ալ շատ տարածված, ասելուկներն են ու առածները:

Ասելուկ կանվանեմ պատկերով մը, համեմատությամբ մը, դատողությամբ մը ձևակերպված ու դրամի պես հղկված, կլորցած ու կարծես դրոշմված մտածումի մը արտահայտությունը, որ բառի մը նման բերնե բերան ամենուն կողմե տեղը եկած ժամանակ

կկրկնվի: Ասելուկին մեջ ո՛չ խորք կա, ո՛չ ալ մասնավոր մարդկային իմաստության մը խտացում. պարզապես բառի մը կամ սովորական նախադասության մը փոխարեն ավելի տաշված, ավելի կոկված, հաճախ պատկերավոր արտահայտության ձև մըն է, կազմ ու պատրաստ. անշուշտ շատ ավելի սիրուն ու հաճելի, քան միևնույն բանի սովորական, անճաշակ արտահայտությունը. ասելուկի էությունը իր զարդ ըլլալն է. ո՛չ թե հասարակ կոճակ մը, այլ վրան թռչունի մը պատկերը ունեցող կամ քանի մը զարդի գիծ կամ անսովոր կտրվածք մը ունեցող կոճակ մը, իսկ կոճակի վրայի այդ զարդն ու հավելվածը գեղարվեստ է:

Գեղարվեստական ստեղծագործության ամենեն տարրական ու ամենեն կարճ երկն է ասելուկը: Շատ անգամ չափ ու հանգ ալ կունենա իր վրա, երբեմն կըլլա բոլորովին արձակ, հաճախ կունենա միայն ներքին իմաստի ալիքավորում մը, հակադրություն մը:

Հայերենը հարուստ է այս կարգի ասելուկներով, որոնք և՛ նուրբ են, և՛ սիրուն: «Անցուկը մոռցուկ», «Կսկծու՝ փա՛ռք Աստծու», «Նեղ ընենք, տեղ ընենք», «Երես տվինք, աստառ կուզե», «Ծուռ նստինք, շիտակ խոսինք», «Գող՝ սիրտը դող», «Արևը քուն ունի, ամեն մարդ տուն ունի», «Մուկը ծակը չէր մտներ՝ ցախավելն ալ պոչին կապեցին», «Ես իմ մաղը մաղեր եմ, մաղն ալ պատեն կախեր եմ», «Ուղտին ըսին՝ ինչո՞ւ վիզդ ծուռ է: Ըսավ՝ ո՞ր տեղս է ուղիղ, որ վիզս ուղիղ ըլլայ»:

Երբ ասելուկը իրմով կենցաղական դիտողություն մը կամ բարոյական ըմբռնում մը կձևակերպե՝ այդ լեզվական գեղարվեստը ավելի իմաստ կստանա ու կդառնա առած:

Ժողովուրդի դարավոր փորձառությամբ կռանված և արտահայտության դարավոր գործածությամբ տաշված ու հղկված բյուրեղացումներ են առածները մարդկային մտածումների և իմաստության: Երբեմն խիստ խորունկ փիլիսոփայությամբ ու բարձր հոգեկան թռիչքով, երբեմն ավելի առօրյա ու թեթև գործնական խրատով: Կրնա ըլլալ կատակի ձևով, բայց շատ ավելի հաճախ լուրջ. լուրջ թե կատակ՝ միշտ կառիպե, որ մտածես. և որչափ վրան մտածես՝ այնքան ավելի կխորանա և՛ իր ներքին իմաստը, և՛ իր պատճառած հաճույքը:

Շատ անգամ ամբողջ պատմություն մըն է՝ քանի մը բառերու մեջ սեղմված: Կան ալ, որ ծանոթ ու տարածված առակներու և կատակներու եզրակացությունն են պարզապես կամ ամենեն կարևոր նախադասությունը, որ դարձեր է ու կգործածվի իբրև առած: Եվ առածներեն ամենեն կարևորը միշտ կարելի է դյուրությամբ վերածել մանրապատումի մը կամ դարձնել վերնագիր ընդարձակ կամ համառոտ գրական ստեղծագործություններու:

Հիշողության թարմացումի համար կդնեմ քանի մը ընտիր առածներ:

Աստված սարին կնայի, ետքը ձյունը կդնե:

Ագռավին ձայնը որ Աստված լսեր՝ Վարդավառին ձյուն կուգար:

Հպարտութենե բարձր հպարտություն մը կա՝ համեստությունը:

Առանց կրակի մուխ չըլլար:

Խելոքները մինչև դատեն ու վճռեն, խենթը կանցնի կամուրջեն:

Արևը ցեխով չի ծեփվիր:

Ցեխին քար մի՛ նետեր, վրադ կցատկե:

Ամառն ըլլաս այգեպան, ձմեռն ըլլաս բաղնեպան:

Ուրիշի պարանով հոր մի՛ իջներ:

Մինչև հաստը բարակի, կելլե հոգին բարակի:

Ով ալարի, ո՛չ դալարի:

Շատ մի՛ սիրեր՝ ատել կա. շատ մի՛ ատեր՝ սիրել կա:

Ծառին վրա ինչքան շատ բար, գլուխն այնքան կկախե վար:

Այսօրվան խոսքը վաղվան գործին կամուրջն է:

Մեկ ծաղիկով գարուն չի գար:

Շուռ գալիք ոտքը քարի կդիպչի:

Աղվեսը խաղողին չհասավ, «Դեռ խակ է» ըսավ:

Հորովելը արտ չի վարի:

Մեջքդ մի՛ ծռեր, վրան բեռ դնող շատ կըլլա:

Շատ խնդուքը արցունք է:

Քիչ, ո՞ւր կերթաս: – Շատին քով:

Ուշ եկուր, նուշ եկուր:

Մի՛ փքվիր, կճքվիս:

Դուն ճենճ ըսե, ճանճը Պաղտատեն կհանի:

Գառը գարնան, ձյունը ձմռան:

Դատարկեն ու լոկեն ի՞նչը պլոկեն:

Օձը շապիկը կփոխե, բնությունը չի փոխեր:

Ես ի՞նչ ըսեմ այն կատակին, որուն կեսը շիտակ չըլլար:

Ժողովրդական մտածողության ու ճաշակի ընտիր գոհարներ են առածները, որոնց ներկայությունը միշտ գեղեցկություն, հրապույր ու բարձրացում կբերե ըսված խոսքին. ատոր համար ալ ժողովուրդի հոգիին չկտրված մարդն ու հեղինակը հաճախ ու առատ կգործածե իր լեզվին ասույթն ու առածը:

Իր ձևովը ասույթին ու առածին շատ նման բան մըն է հանելուկ ըսվածը: Քանի մը պատկերով, համեմատությամբ մը, հակադրությամբ մը մարմին մը գծելու և արտահայտելու ջանքը, որ միևնույն ժամանակ մտածումն ալ կգրգռե և տված ատաղձովը չըսված առարկան որոնել ու գտնել կդրդե, թվաբանական խնդրի մը պես:

Ժողովուրդի պարապ ժամերուն մեծին ու պզտիկին սիրած խաղերեն մեկն է հանելուկը: Շատ սրամիտ հղացումներ կան մեջը. և՛ երևակայության ազատ թռիչք, և՛ հաճելի, և՛ զվարճալի:

Սև արաբը պեխը ոլորեց, հազար-հազար մարդ գլորեց: (Գիշեր)

Ինչքան կտրեմ՝ երկնիա, ինչքան տաշեմ՝ հաստընա: (Ջրհոր)

Ծերմակ դաշտեր, սև-սև հունդեր, ձեռքով ցանեմ, աչքով հնձեմ: (Գիր)

Ոտքերը կրակը, ծամերը երկինք: (Մուխ)

---

2. Երկրորդ աստիճանը ժողովուրդի վիպական արտահայտության՝ շատ կարճ ու կտրուկ պատմություններ են. հաճախ քանի մը տողերու մեջ ամփոփված, երբեմն քիչ մը ավելի երկար, բայց միշտ թեթև ու արագ պատմված ամբողջություններ, որոնք իրենց մեջ մարդկային ընդհանուր գիծ մը, թերություն մը, ալլրում մը, ձգտում մը կմարմնավորեն: Կըլլան լուրջ ձևի տակ կամ կատակ:

Երբ լուրջ եղանակով կներկայացնե իր ըսելիքը՝ որոշ դեպք

մը իբրև օրինակ ծառայեցնելով, պատմվածքը կանվանենք առակ: Առակներուն մեջ շատ անգամ իրենք մարդիկն են, որ կգործեն. մարդն է դերակատարը. բայց շատ ավելի հաճախ մարդիկ առնելու փոխարեն կառնվին զանազան բնորոշ կենդանիներ, բույսեր, իրեր, որոնք սակայն դերասանի պես մարդկային կյանքը կպատկերացնեն, մարդկային հոգիեն կխոսին ու մարդկային լեզվով:

Առակներուն մեկ մասը կուգա հնագույն դարերեն, երբ կենդանիներու և բույսերու վրա տարբեր հայացք ուներ մարդը. ավելի ետքի ժամանակներեն ծագում առնող առակները տեսակ մը հետևողություն են ու նմանողություն նախորդներուն առանց անոնց բնապաշտական ոգին պահելու:

Կան ավետարանական առակներ, կան հստակորեն ուրիշ ժողովուրդներե փոխառություն եղող առակներ: Եվ այս բոլորն ալ անխտիր պետք է նկատվին ժողովրդական անգիր բանահյուսության նյութ, եթե բերնե բերան ժողովուրդի մեջ կպատմվին. քանի որ բերնե բերան ու դարե դար կրկնվելով՝ կմշակվին, կտաշվին ու կհարմարին ժողովուրդի հոգեբանության և ըմբռնումին. տեսակ մը ինքնահատուկ վերամշակման կենթարկվին ու կյուրացվին: Նույն նյութերու տարբեր ժողովուրդներու մեջ ստացած տարբեր նրբություններն ու այլազանությունները իրարու զուգորդելն ու համեմատելը շատ հետաքրքիր աշխատանք է: Տեղ մը կենդանիներն է, որ կփոխվին, այսինքն՝ պատմության ենթական. ուրիշ տեղ մը գործողությունն է, որ քիչ մը տարբեր ընթացք կստանա. կամ համեմատություններու, պատկերներու, խոսակցության և այլ նրբություններու մշակման մեջն է, որ կնկատվի փոփոխությունը. և ընդհանրապես այս բոլորի մեջ ժողովուրդի մը ինքնահատուկ մտածելակերպը, լեզուն և բնական շրջապատը մեծ դեր կխաղան:

Ժողովուրդը իր շրթունքին այս առակներուն կից և այս լուրջ առակներեն շատ ավելի հաճախ գործածվող և շատ ավելի բազմաթիվ՝ ունի կարճ ու կտրուկ կատակի համար ըսված մանրապատումներ, որոնց մեկ մասը խնդացնելու համար է միայն, բայց մյուս մասի խնդուկին տակը շատ խոր իմաստ կա. մարդկային խոշոր թերություններ ու մարդկային բնական տկարություններ, որ կմերկացվին այդ կատակ պատմություններուն մեջ. ինչ որ

անեկդոտ կանխանենք, զավեշտ, խնդալիք ու կատակ, ըստ էության միևնույն առակն է՝ միայն խնդացնելով ներգործող:

Եվ ճիշդ առակներու պես ալ կրնա առածի վերածվիլ ու հյուսվիլ ընթացիկ խոսակցության մեջ: Այս կատակ պատմությունները նմանապես մեծ աշխույժ ու կենդանություն կուտան բավող խոսքին և ատոր համար ալ շատ հաճախ գործածության կուգան թե՛ անգիր բանահյուսության և թե՛ գրական վիպումներու մեջ: Որչափ խոսողն ու հեղինակը մոտ է ժողովրդական լայն խավերու կյանքին ու լեզվին, այնքան ավելի հաճախ ու բազմադիմի:

3. Ժողովրդական բանահյուսության վիպական ստեղծագործություններու երրորդ տեսակը կկազմեն զրույցները ու ավանդությունները: Արձակ պատմված և ընդհանրապես կարճ վիպումներ են:

Կըսենք զրույց, երբ որոշ տեղի մը, ժայռի մը, աղբյուրի մը, լեռան մը, այրի մը, լճի մը, գետի մը, ավերակի մը, հին ծառի մը, այսինքն՝ որոշ ու իրական երևույթի մը գոյությանը կապված է և ընդհանրապես այդ իրի ու երևույթի ինչպես առաջացած ըլլալը կուզե բացատրել: Եվ իր տված բացատրությունը գերբնական պատմություն մըն է սովորաբար՝ հրաշքի մը, սրբության մը, տեսիլքի մը, սատանային կամ նման անիրականություններու կապված:

Հիմա մեզի համար իբրև գեղարվեստական խաղ ու քմայք մը կներկայանան այդ պատմությունները, բայց իրենց ստեղծող ժամանակին համար, ինչպես և բերնե բերան երկյուղածությամբ մինչև մեր օրերը ավանդող ժողովուրդին համար ատոնք ո՛չ խաղ են գեղարվեստական և ո՛չ հնարամտություն, այլ պարզապես իրականություն: Այդ բոլորը կպատմվի հավատքով. և շատ հաճախ այդ տեղերն ու իրերը որոշ հարգանքի ու պաշտամունքի առարկա են. իրենց հետ սովորություններ են կապված, հիշատակի օրեր, ուխտագնացության պես բան մը, ուր կերթան, կաղոթեն, մոմ կվառեն, իրենց հագուստեն կտորներ կթողնեն իրենց ցավերեն ազատվելու համար և ամուլ կանայք որոշ արարողություններ կկատարեն զավակ ունենալու աղաչանքով:

Զրույցի փոխարեն կըսենք ավանդություն, եթե շատ հիներեն եկած ըլլալը կշեշտվի, որով և ավելի ընդգծված կըլլա բնականաբար նաև պատմության սրբությունը:

Զրույցներուն և ավանդություններուն մեջ երբեմն մտածումի խորություն և զգացումի ու արտահայտության գեղեցկություն կա անպայման, բայց ընդհանրապես բարձր թռիչքով բաներ չեն: Արտաքին թեթև նմանություն մը, երևույթները բացատրելու նախնական մտքի ճիգ մը, նախապաշարումի մը թելադրանքը ղեկավարած են ստեղծագործությունը: Երբեմն ամբողջ զրույցն ու ավանդությունը ծնունդ է ձայնանմանության կամ իմաստ մը առնել կրցող անունի մը: Իրիկնադեմին անտառի մեջ որոշ տեսակի թռչուններու ընդհատ-ընդհատ ձայները ժողովուրդը իբրև «սա՛հկ», «սա՛հկ» է լսած և ատոր վրա հիմնված է «Սահակ, Սահակ»-ի զրույցը, որ Գարեգին Սրվանձտյան գրի է առած ժողովուրդի բերնեն: Ատոր նման է Ախթամար կղզիին շուրջը հյուսված սիրային զրույցը, իբրև «Ա՛խ, Թամա՛ր»:

---

4. Ժողովրդական վիպական անգիր ստեղծագործություններու չորրորդ տեսակը կանվանեմ պարզապես վիպում. ժողովուրդը ինքը կըսե հեքիաթ, որ պարզ արդյունք է պատմություններ հորինելու մարդկային հոգեկան բնական պահանջին:

Հորինված պատմությունը երբեմն իրական կյանքե է քաղված ու կդառնա իրականության սահմաններուն մեջ. դեմքերն ու դեպքերը մարդիկ են ու ամեն ինչ մարդկային: Երբեմն ալ մեծ չափերով առնված է երևակայութենեն. հնարված են մտացածին էակներ, գերբնական գործողություններ, անկարելի պատահմունքներ ու արկածներ, ուր սանձարձակ միտքը, հնարավոր հավանականություններու բոլոր պատնեշները խորտակելով, ազատ թռիչք կուտա քմայքին ու երևակայության խաղին:

Այս վիպումները կրնան ըլլալ շատ կարճ, էջի մը վրա գրի առնված մանրապատում մը. կրնան ըլլալ ավելի երկար, քանի մը էջերու ծավալով: Կան և շատ ավելի երկարները, որոնց պատմելը ժամեր կտևե. կան նույնիսկ հեքիաթներ, որ գիշերներով ու գիշեր-

ներով կպատմվին ու չեն վերջանար: Սովորաբար չափեն ավելի երկար վիպումը իսկապես մեկ պատմություն մը չէ, այլ իրարու հյուսված քանի մը պատմություններ, որոնց գործողությունները իրարու կխաթթվին կամ պարզապես տուփը տուփի մեջ հագցված են իրարու՝ առանց իրարու հետ մեծ առնչություն մը ունենալու, առանց հիմնական պատմության համար անհրաժեշտություն մը ներկայացնելու:

Վիպումները, կարճ թե երկար, արձակ կըլլան ընդհանրապես. բայց հոս ու հոն պատմության ընթացքին կրնան երգի կտորներ մեջը հյուսվիլ. կամ որոշ խիստ հուզումնալից կամ հանդիսավոր հատվածները չափի ու ալիքավորության մը ենթարկվիլ առանց հանգի:

Իրական կյանքե առնված և իրական պատկերացումներե չհեռացող վիպումները իրենց նյութով ու ձևով շատ կմոտենան մեր գրական այն տեսակներուն, որ մանրավեպ, նորավեպ, պատկեր կանվանենք: Միայն թե մեր գրական մանր վիպումներուն մեջ ընդհանրապես դեմքեր ու վիճակներ են, որ ավելի կնկարագրվին: Ժողովրդական վիպումը շարժումն ու գործողությունը կսիրե. վիպումին առանցքը միշտ դեպք մըն է, բան մը կկատարվի. ժողովրդական վիպումը միշտ գործողության մը նկարագրությունն է ամենեն առաջ. անձերու, տեղերու և այլ նկարագրությունները կուգան երկրորդաբար, իբրև լրացում:

Բայց ժողովրդական վիպումի այդ շարժուն հանգամանքը շատ անգամ կդանդաղի, որովհետև ժողովուրդը կրկնությունները կսիրե: Շատ է սովորական, որ միևնույն գործը, միևնույն փորձը, միևնույն ձեռնարկը կատարվի իրար ետևե նույն կամ տարբեր մարդիկներու ձեռքերով սովորաբար երեք անգամ: Կրկնությունը ժողովրդական մտածման և գեղարվեստական ստեղծագործության հիմնական գծերեն մեկն է:

Իրականության կապված վիպումեն շատ ավելի սիրված ու տարածված է իրականության հողեն ոտքը կտրած, երևակայականին ու գերբնականին ազատ ընթացք տվող հեքիաթը, որոնք և ընդհանրապես ավելի երկարաշունչ կըլլան:

Զրկանքներով, ձախողանքներով ու թշվառություններով

լեցուն մեր այս աշխարհի վրեժը կառնվի հեքիաթի մեջ, ուր պարտեզները դրախտ են, շատրվանները գինի ու օշարակ կցայտեն, սքանչելի պալատները լեցուն են հուրի-փերիներով ու աննման քաջ կտրիճներով, ուր ամեն բարիքով լեցուն սեղանները իրենք կբացվին, ուր թավ գորգերու վրա ընկողմանած կրնաս թռչիլ ուր որ հոգիդ կցանկա, ուր քաջն ու գեղեցիկը միշտ կհաղթե բոլոր չար ուժերուն, բոլոր վիշապներուն, դևերուն ու կախարդներուն, և մութ ու լույս աշխարհներուն մեջ անվերջ արկածներու բոլոր դժվարությունները հաղթահարելով՝ հերոսը անպատճառ կհասնի ու կտիրանա իր տենչանքին՝ հազարան պյուլպուլին, կախարդական ամենակարող ադամանդին ու իր սիրած աղջկան: Իզուր չէ, որ ամենեն տենչալի, ամենեն գեղեցիկ ու անհասանելի բաներուն «հեքիաթ» կըսենք, «հեքիաթական»:

Հեքիաթներուն մեջ տարրեր կան, որ նախնական մարդու դարերեն կուգան, հին ու աղոտ նախապատմական հիշողություններ, մոռցված ըմբռնումներ, կորսված հավատալիքներ, բնության հանդեպ բոլորովին տարբեր հասկացողություն ու վերաբերում: Տարրեր կան, որ հեթանոսական դարերեն կուգան, աստվածներ, ոգիներ, ուժեր ու կյանքի զվարթ պատկերացում: Տարրեր կան՝ զուտ միջնադարյան քրիստոնեական դատումով ու կնիքով, ճգնավորական ու վկայաբանական իտեալներով: Կան պատմական արժեքով տարրեր այդ վիպումներուն մեջ, բայց շատ աղոտ ու աննշմար դարձած, երկար ուսումնասիրությունները միջոցով միայն նշմարելի:

Ժողովուրդի մը վրայեն անցած բոլոր քաղաքակրթությունները բան մը թողած են իրենց դատումներեն, կրոնական հավատալիքներեն, իրենց պաշտած աստվածներեն ու սովորություններեն, պատմական անձերն ալ երբեմն իրենց անուններն ու գործերեն: Այդ հին ու նոր զանազան պատկերացումներն ու հասկացողությունները՝ նախապատմական, հեթանոսական, արևապաշտ, մահմեդական ու քրիստոնյա, սեմական, արիական ու թուրանական, արևելքն ու արևմուտք բոլորը խառնված են իրար, շաղաղված են միասին այդ կարճ ու երկար, իրական ու երևակայական հեքիաթներուն մեջ:

Այդ վիպումներուն մէկ շատ խոշոր մասը կա՛մ ամբողջովին, կա՛մ իր որոշ կտորներովը միայն մէկ ժողովուրդի մը Հատուկ չէ. միջազգային է: Եվ շատ Հետաքրքիր է ժողովուրդէ ժողովուրդ փոխանցվելուն ուղիները գտնելը և կրած փոփոխութիւնները ընդգծելը: Հոգեբանական, ցեղաբանական շատ Հետաքրքիր Հարցեր, մտանանշումներ և եզրակացութիւններ կբերեն գեղարվեստական այդ երկերուն Համեմատական ուսումնասիրութիւնները:

Ը. «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ»

Ժողովրդական վիպական ստեղծագործութիւններուն Հինգերորդ ու վերջին տեսակը կներկայացնէ դյուցազներգութիւնը, այսինքն՝ Հանրային արժէք ունեցող դէմքի մը կյանքն ու գործը վիպականացնելը:

Դյուցազնական երկերու ստեղծման Համար անՀրաժեշտ է, որ ժողովուրդը ունենա իր մեծ մարդիկը, որոնք Հոգեկան բարձրացում և Հպարտութիւն ներշնչած ըլլան: Մեծը ժողովուրդի Համար ամենեն առաջ ուժեղն է, կռվողն ու տիրողը. դյուցազներգութիւնը ծագելու Համար պետք ունի քաղաքական բարձրացում բերող ու պետական Հմայք ունեցող դէմքերու: Իսկ մեր վերջին ութը դարերը Հայ պետական կյանքի ու ազնվականութեան քայքայման տարիներն են՝ Հակառակ կիլիկյան և Հյուսիսային վիրաՀայ ճիգերուն: Ծիծաղելի կըլլար, եթե մեր պատմութեան թուրքական և օսմանյան դարերեն դյուցազներգութիւն սպասեինք:

Բայց թուրքական դարերը, եթե իրենք դյուցազներգութիւն ստեղծելու իրականութիւնն ու կարելիութիւնը չեն ունեցած, գոնե գէշ-աղեկ կրցած են պաՀել ու մինչև մեզի Հասցնել մէկ դյուցազներգութիւն մը, որ նախորդ արաբական շրջանեն, մեր վերջին թագավորական տներու վերածնունդի Հուսալից օրերեն ավանդ էր մնացեր թուրքական դարերու Հայութեան:

Եվ այդ պաՀպանումը ու մինչև մեզի Հասնիլը Հնարավոր է եղած շնորՀիվ Վան ծովուն Հարավը արևմուտքեն արևելք՝ Տավրոսեն մինչև Ջակրոշի լեռները երկարող բարձրութիւններու գոյութեան: Այդ բարձր, անտառոտ, շատ տեղ անառիկ, լեռնային

դիրքերուն Հենած՝ տեղական բնակչությունը, ազնվականներն ու Հասարակ ժողովուրդ իրարու ձուլված, կրցած են որոշ չափով մը պաՀել իրենց տեղական ազատությունը և իրենց զենքը պաՀել իրենց ձեռքը. դիցուք և անվանական ճանաչումով մը մոտակա մաՀմեդական տիրողի գերիշխանության:

Եվ իրենց բարձունքներուն ետևը իրենց այդ Համեստ ազատության Հետ կրցած են պաՀել նաև Հին օրերու Հիշատակները, սովորություններն ու ոգին քավական բան. այդ ժառանգության մեջն է նույնպես նախորդ պատմական շրջանեն եկող այն անգիր վիպասանությունը, որ ըստ էության ի՛ր երկրին, ի՛ր տեղական ժողովուրդին և իր սեփական քաջության և ազատության գովքն էր և իր իսկ ծոցեն ելած երգիչներու Հորինածն ու մշակածը:

Այդ դյուցազներգությունը, որ «Սասնա ծռեր» անունը կկրե, վերջին Հիսուն տարիներու ընթացքին գրի է առնված շատ մը տարբերակներով, զանազան կտորներով և տարբեր-տարբեր բարբառներով, որոնք գրեթե բոլորն ալ այդ վերը Հիշած արևմուտքեն արևելք ձգվող լեռնաշղթային ճյուղերուն վրա ապրող ժողովուրդին բարբառներն են: Այդ բարբառները խոսող ժողովուրդին ենք պարտական մեր արդի միակ ժողովրդական դյուցազներգությունը, որ ունինք:

Մեր դրաբար անգիր վիպասանության Հեղինակը և ներկայացնողը գուսաններն էին՝ Հատուկ այդ գործին նվիրված մարդիկ: Գուսանները թեև ժողովուրդեն ալ շատ սիրված էին և ժողովրդական Հավաքույթներու մեջ ալ միշտ իրենց արվեստին ուրախությունն ու ոգևորությունը կբերեին, բայց իրենք իրենց էությամբ սերտորեն կապված էին իշխանական պալատներու և արքունիքի կյանքին. իշխաններու Համար կՀորինեին ամենեն առաջ, անոնց գնաՀատանքը կփնտրեին, անոնց գործերը կպատմեին ու կգեղազարդեին. ազնվականի ըմբռնումով կխոսեին և պետության ու արքունիքի պաշտոնյաներն էին գրեթե, քուրմերուն նման:

Պետականության և ազնվականության քայքայումին ու ոչնչացումովը չքացան նաև Հին այդ գուսանները: Հիմա մնացած է միայն գյուղացի ժողովուրդ և մնացած գուսաններն ալ կապված են անոր, կերգեն միայն անոր Համար, անոր ճաշակով և ըմբռնում-

ներով և հետզհետէ աւելի կձուլվին ու կդառնան պարզ ու սովորական ժողովուրդի մարդ: Չկա արդէն նոր վիպական ստեղծագործութիւն, բայց կա գուսանական ստեղծագործութեան վերջին վէպը, վերջին վէպին կտորները, որ դեռ կպահվին շրթունքներու վրա և կպատմվին ժողովուրդի մէջէն աւելի պատմելու և հիշելու շնորհք ունեցող անձերու կողմէ. այդ անձերը այլեւս դժվար է գուսան անվանելը:

Այլեւս պարզապես ժողովուրդի մարդիկ են, երեւի քիչ մը աւելի տաղանդով ու արվեստի ճաշակով, քան մյուսները: Այսպեսով Թուրանական դարերէն սկսած` այդ վէպերու պահողն ու ավանդողը կդառնա ժողովուրդը և անգիր վիպասանութիւնն ալ կդառնա ժողովրդական բանահյուսութեան միակ տեսակը. և հատկապես մեր երկրի հարավային լեռնաշղթային վրա ապրող ժողովրդական բանահյուսութեան մեկ տեսակը, իբրև դյուցազներգութիւն:

Հետաքրքիր է և շատ բնական, որ աւելի ուշ ժամանակներու մէջ կատարված հավաքագյուտ փորձերէն մեկը, որ մեզ հայտնի է, ուր գեր ու գիրք ունեցող իրական ու քաջ անձի մը դավաճան մահը երգի ու գովքի նյութ կդարձվի, տեղի է ունեցած Վանի հարավը երկարող նույն լեռներուն վրա: «Մոկաց Միրզեն» թափ ունի, շունչ և հետաքրքիր կտոր է: Այդ երգը հորինող ու սրտանց երգող Մոկաց ժողովուրդը անշուշտ որ ջերմորեն պահած էր իր լեռներու և իր հոգիի ծերպերուն մէջ և' ազատութեան սերը, և' ազատութեան երգին սերը:

* * *

«Սասունցի Դավթի» դյուցազներգությունը հղացեր, կազմվեր ու ձևակերպվեր է արաբական տիրապետության խարխլելու այն միջոցին, որ մեր բժիշկ-վիպասանը Ծերենց բնորոշած է մեր հայրենիքի համար իբրև «Երկունք իններորդ դարու»: Մեր ազնվականության համար արաբական հալածանքներէն ու կեղեքումներէն վերջապես ազատելու և նոր ինքնուրույն պետականություն մը կազմելու ճիգերուն, փորձերուն և տառապանքներուն օրերն էին. և հայ հասարակ ժողովուրդի ալ օտարի հավելյալ ճնշումներէն, կրոնական խստություններէն և հարկային ան-

տաների ծանրութենեն ազատվելու Հույսի ու երկունքի օրերն էին:

Եվ այդ երկունքեն ծնան մեկ-երկու կիսանկախ և ո՛չ շատ երկարատև և ո՛չ լիաշունչ թագավորություններ, և այդ թագավորություններու հետ ալ ծնավ որոշ Հոգեկան բարձրացում: Այդ Հոգեկան բարձրացման և Հույսերու ծնունդն է մեր վերջին ժողովրդական դյուցազներգությունը, ինքն ալ տեսակ մը կիսատ ու անարատ՝ իրեն ծնող պետական Հույսերուն նման, ինքն ալ տեսակ մը դեռ լրիվ չբացված և դեռ ո՛չ ամուր իր սեփական ոտքերուն վրա, քանի որ մանուկ մըն է իր երգած Հերոսը, որուն ո՛չ երիտասարդությունը, ո՛չ առնությունը մենք չենք գտներ վեպին մեջ, ինչպես որ Հարկ էր:

«Սասնա ծռերը» իր ամբողջության մեջ կարելի է երեք մասի բաժնել: Առաջին մասը այն կտորներն են, որոնք Սասունցի Դավթեն առաջ եղող քաջերու մասին կխոսին, տեսակ մը Դավթի տոհմաբանությունը: Այդ մասը լեցուն է առասպելական Հուշերով ու Հարաբերություններով. և անշուշտ ավելի հին զրույցներու ու պատմություններու մնացորդներն են, որոնք եկեր ու կապվեր են Սասունցի Դավթի պատմության: Հին ու նոր անգիր պատմությունները իրարու հետ Հարաբերության բերել, տեսակ մը իրարու կարել և այդ բոլորը մեկ ամբողջության մը վերածել՝ անգիր վիպասանության սովորական գծերեն մեկն է:

Այս առաջին մասի կտորներուն մեջ և՛ պատմական, և՛ բանահյուսական հետաքրքիր բաներ շատ կան և մեկ-երկու մանրամասնություններու մեջ կա նաև գեղարվեստական Հրապույր. բայց կուռ ամբողջություն մը չկա և Հասուն չէ մշակումը. դեռ ցրիվ է ու նախնական վիճակի մեջ:

Երկրորդ ու միջին մասը կկազմե Սասունցի Դավթի պատմությունը, Մսրա Մելիքի մարդոց Հարկահանության պատմությունը և Դավթի ու Մսրա Մելիքի մենամարտը: Վեպի ամենեն գրավիչ, ամենեն գեղեցիկ ու ամենեն ավելի մշակված ու ամբողջական մասը:

Իսկ անկե ետքը եկող Դավթի սիրո պատմությունը, Դավթի մահվան պատմությունը և Մհերի պատմությունը. որոնք երրորդ ու վերջին մասը կներկայացնեն «Սասնա ծռերու», վայրիվերո

պատմված բաներ են: Վիպասան-Հեղինակի մը գրած-ջնջած ու նիշեր առած թղթերուն տպավորությունը կթողնեն: Բաներ մը ստեղծելու դիտավորություն կա, շենքի համար կուտակված է տատաղձ, բայց վերջնական ստեղծագործություն դեռ չկա, մնացած է անավարտ ու թերի:

Այնպես որ մեր վերջին դյուցազներգության ամենեն հասուն մասը կմնա ուրեմն Մսրա Մելիքի, այսինքն՝ արաբներու գործած բռնությունները, Հայ երկրի հարստությունները ու գեղեցիկ աղջիկները հափշտակելը, մինչև որ Հայ Հին թագավորական տան՝ այսինքն՝ Առյուծ Մհերի վերջին շառավիղը գիտակցության կուգա, կզինվորի, վերջն ալ կկռվի ու կհաղթի: Եվ շատ բնական կերպով ասիկա պիտի ըլլար իններորդ դարու երկունքին բանահյուսական ծնունդը. ան է նորությունը, ան է կատարված փոփոխությունը, իրականը, զգացածը: Եվ ատոր համար է, որ «Սասնա ծուռեր» վերնագիրը կմնա ամբողջ վիպասանության պաշտոնական գրապատմական անունը, իսկ մեր ամենուս և առօրյա տված անունը «Սասունցի Դավիթ» է:

* * *

Արդ՝ ի՞նչ կներկայացնե այդ կեդրոնական ամենեն ամբողջական, ամենեն ավելի մշակված և ամենեն գեղարվեստական մասը:

Ասիկա այլևս մեր հին անգիր վիպասանությունը չէ, ո՛չ միայն իր բարբառով, այլև նյութով և խորքով: Մեր հին անգիր վիպասանության մեջ պատմական դեմք մըն է միշտ, որ կներկայացվի իր անձով, իր կյանքով ու իր գործով վիպականացած, մինչդեռ այս նոր դյուցազներգության մեջ այլևս պատմական դեմք չկա: Կրնա պատահիլ, որ Դավիթը որևէ պատմական Դավիթէ մը առեր է իր անունը. ինչպես որ վեպին միջի մյուս անուններն ալ բանասիրությունը գուցե վաղը կարողանա բանալ, որ այսինչ կամ այնինչ իրական ու ժամանակակից պատմական անձերու անունները կհիշեցնեն:

Անունը առնել չի նշանակեր պատմական անձ բեմադրել. «Սասունցի Դավթի» մեջ պատմական դեմք չկա գծագրված: Ավելի հավանական է, որ Դավիթ ու Գողիաթի աստվածաշնչական

ներշնչումը կա մեր վեպի անունին ու ծագումին տակը, քան ժամանակակից որևէ մարդու կյանքն ու գործը:

«Սասունցի Դավիթը» դյուցազներգություն մըն է, որ իջած է հեքիաթի աստիճանին. փոխանակ իրական մարդոց և իրական գործերու՝ երևակայական մանուկ մըն է հերոսը, և գերբնական գործողություններ, ուր ամեն ինչ կկատարվի, ինչպես հեքիաթներու մեջ, ո՛չ իրական-բնական ընթացքով: Անշուշտ հին գուսանական վեպերու մեջն ալ մեր հիմնական հասկացողությամբ գերբնական բաներ շատ եղած պիտի ըլլան և կան, բայց այդ բոլորը հիմա մեզի համար է իրերու բնական ընթացքեն դուրս: Ժամանակակիցներուն համար անոնք իրական էին. ժամանակի կրոնին, հավատալիքներուն, նախապաշարումներուն և հասկացողության իրական մասը կկազմեին: Մեզմե քանի մը դարեր ետքը կրնան գերբնական ու անիրական նկատել, որ աստված մը լույս կծնի, ետքն ալ ավազակի մը հետ խաչվի, մեռնի, ետքն ալ գերեզմանեն հարություն առնե և իր մարմնովը երկինք համբառնա և իր հոր աջ կողմը նստի ամպերուն վրա, բայց ասիկա մեր արդի քրիստոնեության համար հեքիաթ մը չէ, այլ իրողություն ու իրականություն:

Մինչ «Սասունցի Դավթի» մեջ ներկայացված գերբնականությունը ամենուն համար ալ, ամեն ժամանակ ալ հեքիաթական է և ան ալ ո՛չ միայն իր այս կամ այն կետին մեջ, այլ իր ամբողջությանը մեջ: Երգիչը իբրև երազանք, իբրև ցանկություն, իբրև ազվոր հեքիաթ մըն է պատկերացուցեր, ո՛չ իբրև կյանքի իրականություն: Եվ շատ բնական կերպով. ո՞ւր էին Տիգրաններն ու Արտաշեսները և Արշակները և անոնց անվան շուրջը պատմված գործերը, ո՞ւր էր մեր հին լրիվ պետականությունը իր դրանիկներով ու մեծ զորավարներով, որոնց դեմքն ու գործերը իններորդ դարուն ոգևորել կարողանային երգիչները և երգել տային:

Իններորդ դարուն երգիչը պետականության մը զարթոնքը ուներ միայն, զգացումի մը բարձրացումը, նոր անկախության մը, երկունք մը: Հին պետականության, հին դարերու հին ազգային ազատության ոգին կար միայն, որ արթնցեր էր հոգիներու մեջ. դեռ նորածին մանուկ մըն էր արաբական դարերու երկունքեն ծնած, որ միայն «ժառանգաբար» իր արյան մեջ ունեցած քաջու-

թյունն ու ուժը կրնար գործադրել, ան ալ այն պայմանով, որ Հին պետականության նժույգը տային իրեն, որ հեծնէ, Հին պետական կայծակէ սուրը դնեին իր ձեռքը, որ զարնէ, և Հին պետական փառահռւթյունը՝ խաչ-պատարագին, կապեին իր թևին: Այս երեք շատ կարևոր ու թանկագին բաները, որ քեռի Օհանը տարեր էր իր ախոռը ու պինդ-պինդ պահեր էր, որ չըլլա թե Դավթին ձեռքը անցնի, տանի փճացնէ:

Սասունցի Դավիթը անշուշտ դյուցազն մըն է և բոլորովին բառացի իմաստով. Հին հերոսներու սերունդ է իր ծագումով և իր կոչումով, բայց ո՛չ իր պետական դիրքով ու գործերով: Սասունցի Դավիթը դյուցազներգության ոգին է, պետականության ու ազատության ոգին, բայց ո՛չ մարդը: Թ և Ժ դարերուն մեջ և հատկապես Արծրունի թագավորության դրոշին տակ չկար Հին Հայ արքունի պետականությունը. կար միայն Հին պետականության ստվերը: Թագավորը դարձեր էր գավառական իշխանություն, արքունիքը գյուղ և պալատական երգիչն ալ գյուղացի. երգիչները երգեր են, ինչ որ տեսեր են ու զգացեր են, և իրենց զգացածն ու պատկերացուցածը դուրս է եկեր գյուղական հեքիաթ:

Իսկ Ժ դարեն ետքը՝ թուրանական ծանր օրերուն, այդ հեքիաթը՝ ինքնուրույն ու ազատ ըլլալու այդ երազը, շարունակեր է ապրիլ հոգիներուն խորքը և շրթունքե շրթունք Վան ծովի հարավը երկարող լեռներուն ամենեն անմատչելի խորերուն ու անտառներուն մեջ: Լեռնական այդ բարձունքներեն վար հայը րայա մըն էր, ստրուկ մը, արհամարհված մը, փախստական մը, ի՞նչ երգ, ի՞նչ ազատություն:

* * *

Այո՛, «Սասունցի Դավիթը» բուն դյուցազներգությենե իջած է հեքիաթի աստիճանին. գեղարվեստորեն էջք մըն է անիկա, բայց դարձած չէ սովորական հեքիաթ մը սովորական հերոսով, դիցուք և շատ քաջ ու հրաշալի հերոսով:

Դավիթը սովորական հերոս մը չէ, Դավիթը սիմվոլ մըն է, պետականության ոգին, որով ամբողջ այդ պատմությունը կդառնա

սիմվոլիկ հեքիաթ մը, որ բոլորովին տարբեր արժէքի ու աստիճանի ստեղծագործութիւն մըն է, քան պարզ ու սովորական հեքիաթը:

Այդ հեքիաթին մէջ ժողովուրդի մը նորէն պետականացման հոյսերը կմարմնանան, նորէն անկախ և ինքնուրոյն պետութիւն մը կազմելու իր ձգտումը, ինքն իրմով ու ինքն իր համար ազատ ապրելու տենչանքն ու հաւատքը:

«Ծռեր»-ու այդ հեքիաթը մեկ դարու մը, մեկ ժամանակաշրջանի մը որոնումին ու հոյսերուն մարմնացումը չէ այլեւ. ան դարձեր է արդեն ընդհանրապէս հայ կյանքի, հայ իրականութեան, հայութեան որոնումն ու երազանքը, քանի որ մինչև հիմա դեռ չէ իրականացած իսկապես ազատ պետական գոյութեան մը գաղափարը հայութեան համար:

Գեղարվեստական երկ մը, երբ իր միւս գեղարվեստական արժանիքներուն կից՝ կդառնա հանրային հոգեկան ընդհանուր վիճակէ մը բղխող ցանկութեան մը, ձգտումի մը, գաղափարի մը խորհրդանիշը, անշուշտ որ դրվածքը կստանա հավելյալ ու վերադիր նոր արժանիք ու խորութիւն:

«Ծուռ» մըն է Դավիթը, որ իրենց պարտված, գրկված ու հպատակ վիճակին հետ չի հաշտվիր և կշարժի ազատ մարդու հոլերով: «Ծուռ»-եր ենք մենք՝ բոլոր հայերս, որ դարերով Մսրա Մելիքի բռունցքին տակ ճզմված՝ անոր համար դանձեր կդիզենք և մեր ցեղային գեղեցկութիւնները անոր իբրև հարկ կվճարենք, բայց և այնպես մեր հոգիներուն խորքը բարձրեն կնայինք այդ բոլոր բռնակալ հսկաներուն վրա և կտենչանք արդարութեան, իրավունքի ու մեր պետական ազատ գոյութեան. և բոլոր ներկա հավանականութիւններուն հակառակ՝ «հիմարաբար» կուզենք ու կհավատանք, որ օր մը պիտի իրականանա այդ հեքիաթը, օր մը վարնե պիտի Սասունցի Դավթի ազատութեան ու արդարութեան Թուր Կայծակին:

Հայ գուսանները հայ հոգիի խորքեն են երգեր ու կերտեր հայ տենչանքի և հոյսի այդ խորիմաստ դյուցազներգութիւնը, որ դարձեր է խորհրդավոր հեքիաթ մը, և ատոր համար է, որ այնքա՜ն հարազատ կխոսի ամեն հայ հոգիի:

* * *

Եվ Սասունցի Դավթի ստեղծագործությունը ինծի հետևյալ կերպով կպատկերանա: Իր դյուցազնական ծնունդով, իր կայծակե թրով և իր թռչող նժույգով ան անշուշտ որ սկիզբը եղած է հին հեթանոսական աստված մը, հավանորեն մրրկի ու կայծակի աստվածությունը, հնդկական Ինտրայի եղբայրը, ետքն ալ շարունակեր է ապրիլ ժողովուրդի երգին ու վեպին մեջ իբրև հեքիաթ մինչև իններորդ դարը: Եվ ահա՛ նոր ծլող պետականության մը հույսերուն ու ազդեցության տակ, ըստ ժամանակի պատմագրության, դույն քիչ մըն ալ գրված Աստվածաշունչի Գողիաթի ու Դավթի պատմութենեն, հին հեքիաթը գուսաններու կողմեն ենթարկվեր է նոր մշակման, մարդկայնացման, ազգայնացման, արդիացման:

Հին երկնածին ու երկնաբնակ աստվածայինը դարձեր է լեռնցի դյուցազնի մը ծնունդը, բնության կյանքին պատկերացումը դարձեր է ազգային կյանքի մը պատկերացումը. աստվածը դարձեր է հերոս: Բայց հոն ալ, հոս ալ կռիվը միշտ մարդկային բարձրացման համար է. հո՛ն վերը, դև ամպերուն դեմ՝ անոնց ձեռքեն երկնային ջուրերը ազատելու համար ու մարդոց տալու. հո՛ս՝ վարը, դև Մսրա Մելիքեն ձեռքեն զարնված ու զրկված ժողովուրդ մը ազատելու համար. հոն ալ, հոս ալ իր Թուր Կայծակով դևին մարմինը մեջեն կիսելով:

Ժողովրդական անգիր վեպերուն մեջ սովորական երևույթ է. մեկ կողմեն ապրող քաջ ու մեծ մարդիկը կդյուցազնանան ու կաստվածանան, երկրեն կփոխադրվին երկինք, մյուս կողմեն ալ երկնային բնության պատկերացումները հետզհետե կմարդկայնանան, երկինքեն կիջնեն երկիր ու կդառնան «որդի մարդո»:

Առաջինը՝ ելքը, կկատարվի մարդկային ավելի նախնական դարերուն. երկրորդ շարժումը՝ էջքը՝ մարդկային ավելի զարգացած դարերուն, ավելի գիտակից դարերուն: Եվ երկնքի ու երկրի մեջ կատարվող այս ելևէջը կկրկնվի բոլոր ժողովուրդներու վեպերուն ու կրոնական ըմբռնումներուն մեջ: Ասսունցի Դավթի մարդկայնացումը բացառություն մը չէ:

Հեքիաթական այդ քերթվածին մեջ իսկապես ապրող և իրական դիտողութենե առնված դեմքը քեռի Օհանն է, բոլորովին նոր ստեղծագործություն, որ չկար մեր հին ազնվական դյուցազներգության մեջ և որ նեղ մտքով հայ ժողովուրդը, այսինքն՝ ոչ ազնվական տարրը կմարմնավորե. մեր Սանխո Փանչոն և շատ ճիշդ ու իրացի նկարված:

«Այն ձեռքը, որ չես կրնար կտրել, համբուրե՛ ու դի՛ր ճակատիդ». այս ընդվզեցուցիչ, բայց դրական ու «խելացի» առածը անտարակույս քեռի Օհանն է հնարել: Իրերը, վիճակները, ուժերն ու հարաբերությունները կտեսնե, ինչպես որ կան. գոնե ինքը այդպես կկարծե և ատոր համեմատ ալ կշարժի. այսինքն՝ կջանա, որ բնավ չշարժի. դառն փորձերով եկած է այն եզրակացության, որ տկարը ինչպես ալ որ շարժի՝ գլխուն փորձանք է գալու. ուրեմն՝ լավագույնն է լռիկ ենթարկվիլ բռնակալներու բոլոր պահանջներուն: Եվ այդ պատճառով ալ ուրիշ կերպ զգացող ու գործող իր եղբորորդին վտանգավոր ու փորձանքավոր խենթ մըն է իրեն համար. և ընդհանրապես «ծուռ»-եր են բոլոր այդ սերունդի մարդիկը, որոնք ազատ մտածելու և ազատ ըլլալու ազնվական պահանջը զիջել չեն կրնար ոչ ոքի: Դավիթը Օհանի համար ծուռ մտածող ու սխալ վարվող երեխա մըն է, բայց սիրելի ու հարազատ երեխա մը, որու ըսածներեն ու ըրածներեն կվախնա Օհանը, որ փորձանք ու պատուհաս բերեն իրենց գլխուն, թեև հոգիին խորքը դժգոհ չէ. կուզե որ Դավիթը հաջողի և հպարտ է Դավթի գործով ու անունով: Այո՛, ճիշդ այսպես է հայ ժողովուրդը:

* * *

Վեպը շատ ազվոր կտորներ ունի, գեղեցիկ միջադեպեր, տեղ-տեղ բարձր թռիչք ու խոր մտածում. և խոսելու շնորհք ունին վեպին մեջի մարդիկը, ինչպես և ըսելու, պատմելու և նկարագրելու շնորհքն ունի ինքը վեպը: Ո՛չ կենդանությունը կպակսի, ո՛չ սիրուն պատկերացումները, ո՛չ ճիշդ ու համարձակ բառը, ո՛չ ալ հեգնությունն ու կատակը:

Բանահյուսական երկ մըն է «Սասունցի Դավիթը», որ գե-

դարվնատական արդար հպարտութեամբ հայերս կրնանք դնել բոլոր ժողովուրդներու դյուցազներգական ստեղծագործութիւններուն քովիկը առանց վարանելու:

Մեր ժողովուրդի հին անկախ պետականութեան պտուղն ու նվերն էր հին անգիր գուսանական վիպասանութիւնը, ուրկէ սակայն թանկագին փշրանքներ միայն ունինք մեր ձեռքը:

Դարեր հետո վերստին անկախ պետականութիւն մը ստեղծելու հույսին, ջանքերուն և երկունքին բերած պտուղն է «Սասունցի Դավիթը»՝ մեր վերջին գուսանական վեպը:

Գուսանական վիպասանութեան ծաղկումը սերտորեն կապված է ժողովուրդի մը պետականութեան: Պետականութիւնը կծնի մեծ մարդիկն ու մեծ գործերը. և մինչև մեծ մարդիկն ու անոնց ներշնչող գործերը չըլլան մեջտեղը՝ ծնիլ չի կրնար անոնց դեմքն ու գործը քանդակող երգիչ-վիպասանը:

Հին գուսանական վիպասանութեան կտորներուն հետ համեմատելը դյուրացնելու համար կդնեմ Մոկաց բարբառով հատված մը «Սասունցի Դավթեն»:

Դաւիթ քնաւ չուր խլիտուն:
Խլիտուն էլ ըմ նետ ու աղեղ առեց,
գնաց, ընկաւ մըջ պատւու կորկին, լիւր սպանեց:
Մսրա Մելքի էլչին, անուն Կոզբադին,
էկաւ, գխադնի տիւռ եբաց,
գխադինէն չափէր, տանէր:
Պառաւ էկաւ, գնաց, տեսաւ՝
Դաւիթ էնօր կորկին լիւր կ՚ըսպանի:
Ասաց. «Դաւի՛թ, գրողս քե տանի.
ես եմ, էստ մէկ արտ կորեկ.
գխ իմ ապրուստ կորեցիր.
որ գիւ կարիճ ես՝ արի՛, գնա՛,
Մսրա Մելքի էլչին, անուն Կոզբադին,
էկի, քեօ խօր խադինէն չափի, տանի:
Դաւիթ ասաց. «Պառա՛ւ, ո՞ր տեղն ի.
ձի տար, չանց տուր»:

Պառաւ առեց, տարաւ զԴաւիթ.
Թող էտու էնտեղ, էկաւ: Դաւիթ տեսաւ,
որ Կոզբադին խաղինէն կը չափի, տանի:
Որ Դաւիթ տեսաւ՝ բարկութենէ արուն լցաւ աչքեր,
խեբոստեցաւ, ասաց.
– Կոզբադի՛ն, էլի վեր, ես չափեմ:
Կոզբադին չկայնաւ:
Դաւիթ ձեռ ետու, զէնոր ճիւ բռնեց,
էնտեղէն քցեց չուր դռան:
Նստաւ, գչափ կործեց գետին,
գվոսկին ըլից վըր չափու ռռան.
փէտ ետու վըր չափու ռռան.
գվոսկին ըլից գետին,
մէկը չթողուց վըր չափին:
Դարտակ չափ եթալ մըջ ջուալին,
ասաց՝ «է՛ս մէկ»: Կոզբադին ասաց.
– Զէնով Յովհան, էսա տղէն տարէ՛ք դէն:
Կը տաս՝ տո՛ւր օխտը տարուան խարճ.
Թե չես ի տար՝ կ'երթամ Մսրա Մելքին կասեմ,
կը կեայ, Սասմայ քաղաք աւրի, տանի,
Մսրայ քաղքի քամակ Նոր քաղաք ըմ շինի:
Դաւիթ լէ խեբոստեց, կայնաւ,
գչափ եղար Կոզբադնի ճակատ, գլուխ կոտրաւ:
– Գնա՛, ջուղափ տուր քեօ Մսրա Մելքին,
ինչ կ'անի, թող անի:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԲԱՐԲԱՌԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ԱՌԱՋԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ ԲԱՐԲԱՌՈՎ

1. ԳՐԱԲԱՐԻ ՆԱՀԱՆՋԸ

Մեր քրիստոնեացման դարերուն գրաբար գրական լեզուն կենդանի լեզու մըն էր, որով կխոսեին: Խոսված գրաբարը և գրվող գրաբարը անշուշտ տարբերություններ ունեին, ինչպես, օրինակ, Հիմնական արևելյան նոր գրական լեզուն և Երևանի բարբառը. բայց հիմքն ու էությունը խորքին մեջ նույնն էր: Թարգմանիչներն ու հեղինակները կգրեին իրենց և ամենուն առօրյա գործածական լեզվով, դիցուք քիչ մը ավելի կոկիկ ու մաքուր: Կարդացող և ունկնդիր մասնավոր դժվարություն մը չունեին այդ գրությունները հասկընալու համար:

Արշակական տիրապետության առաջին երկու դարերուն պետական լեզուն արդեն մեջտեղեն քաշված էր, իբրև խոսակցության կենդանի ընդհանուր բարբառ. օր օրի ավելի շեշտված կերպով ամեն տեղ կգործածվեին տեղական բարբառները: Հաջորդող Բագրատունի և Արծրունի թագավորություններու երկու դարերուն ավելի ևս բացարձակ դարձավ երևույթը. ամենքը և ամեն տեղ կխոսեին բարբառներով, երևի որոշ գերիշխանությամբ երկու թագավորական բարբառներու:

Գրաբար լեզուն մնաց ընդհանուր գրական լեզու, որ շատ քիչերը կրնային գործածել որոշ գրություններու մեջ, ինչպես են կրոնական, պատմական և ուսումնական երկերը: Գործնական գրություններու մեջ, ինչպես, օրինակ, շենքերու վրայի արձանագրությունները, ավելի բարբառ է, քան գրաբար: Նույնիսկ կրոնական

և ուսումնական երկերու մեջ սխալ ներս խուժել բարբառը, որովհետև օրե օր հազվադյուտ սխալ դառնալ մաքուր ու շիտակ գրաբար գրել կարողանալը: Գրաբարը շնորհքով հասկընալու և մանավանդ քիչ-շատ շնորհքով գրելու համար պետք էր քանի մը տարվան հատուկ աշխատանք և ուսում «առ ոտս» այսինչ կամ այնինչ վարդապետի:

Թուրանական արշավներուն բերած ավերն ու տակնուվրայությունը արդեն բոլորովին հին ու մեռած լեզու մը դարձուցին գրաբարը կյանքին համար: Հայ աշխարհի զանազան կողմերեն փախած իշխանները անշուշտ խառնուրդ ու խառնակ բարբառով մը կխոսեին իրարու հետ կիլիկյան լեռներուն մեջ: Վերջն ալ՝ Թագավորական շրջանին, մոտիկ շփումը խաչակիրներու և անոնց հիմնած իշխանություններու հետ եվրոպական նոր բառեր ու արտահայտություններ խառնեց անոնց խոսած լեզվին, այլև թուրք ու թաթար բառեր ու ասություններ, որով կենդանի խոսված լեզուն ավելի ևս անջատվեցավ և խորթացավ գրաբարեն:

Նոյնն է պատկերը նաև արևելյան հայկական հողերուն վրա: Եվրոպական ազդեցությունը չկա, բայց թուրք ու թաթարը կրկնակի ուժով կներգործեն: Գրաբարը հիմա կապրի միայն վանքերու մեջ, իբրև սորվելի ուսումնական լեզու, իբրև գրության լեզու շատ-շատ քանի մը հարյուր վանականներու համար, որոնք առօրյա խոսակցության ժամանակ վանքերուն մեջն ալ, վանքերեն դուրսն ալ կխոսեին միշտ բարբառով: Այսինքն՝ աստիճանաբար գրաբար լեզուն կդառնա բոլորովին մեռած լեզու մը բանավոր գործածության տեսակետեն. ան կպահե իր գոյությունը շատ սահմանափակ խումբ մը ուսումնական մարդոց գրություններուն մեջ:

Լենկթիմուրյան արշավանքներեն ետքը հայ աշխարհին մեջ հայ կյանքը բոլորովին կկոտրվի ու կթոշնի. Հայ վանքերն ալ կոչնչանան և քանի մը հարյուր գրաբարագետներեն կմնա երևի քանի մը տասնյակ անձեր, որոնք լուրջ կապ կպահեին հին գրքերու հետ որևէ անկյուն մը կծկտած. և քանի մը տասնյակ ալ ավելի կյանքին մոտիկ հոգևորականներ կամ ոչ հոգևորականներ, որոնք գեշ-աղեկ կհասկընային իրենց ամեն օր կրկնած աղոթքներն ու Սուրբ գիրքը: Մնացածները բոլորովին բոպիկ էին ո՛չ միայն գրաբարե, այլև

ամեն ուսումի: Հասած ենք ԺԵ և ԺԶ՝ գրաբարի համար ամենեն ամուլ դարերուն, որոնք քրիստոնեական հազարամյակը կբաժնեն գրաբարի նվիրականացման ու աշխարհականացման վերածնունդին:

2. ՄԻՋՆԱԿ ՀԱՅԵՐԵՆ

Երբ գիրը գոյություն ունի ժողովուրդի մը մեջ և եղած գրական լեզուն կենդանի գործածութենեն կնահանջե՝ ասպարեզը թողնելով բարբառներուն, բնական կերպով կամաց-կամաց բարբառը կսկսի գործածվիլ նաև գրություններու մեջ: Եվ այդ գործածության զարգացումը կկատարվի գրական լեզվի նահանջին զուգընթաց:

Սկիզբը բարբառական բառեր, հոլովներ ու բայական ձևեր և ինքնահատուկ արտահայտություններ, ինչպես տեսանք, կսկսին ներս սպրդիլ ավելի հաճախ և ավելի չեչտված կերպով գրական լեզվով եղած գրություններուն մեջ: Տեղ-տեղ այդ ներս սպրդելը կվերածվի կատարյալ խուժումի:

Այսպես է մեր գրաբարի վիճակը արաբական դարերուն:

Այդ խուժումին հետքը քիչ-քիչ կերևան բացառիկ կերպով գրություններ, որոնք արդեն ուղղակի բարբառով են գրված ըստ էության կա՛մ հեղինակի գրաբար չգիտնալուն պատճառով, կա՛մ ընթերցողներու ավելի լայն շրջանակի մը հասկնալի ըլլալու ձգտումով. մասամբ ալ իր մտածումն ու զգացումը ավելի հարազատորեն արտահայտած ըլլալու ներքին հոգեբանական դրդումով:

Բավական ատեն այդ բարբառական գրությունները կնկատվին «օրենքե դուրս». ամենուն համար ալ դեռ միակ իսկական գրական լեզուն հին գրաբարն է. բարբառով գրությունը կես մը անճարակության, կես մը հարկադրության բերած ժամանակավոր չարիք մը կնկատվի: Մինչև որ վրայեն դարեր սահին, այդ կարգի գրությունները չառնան ու դառնան սովորական: Եվ քիչ-քիչ գրաբարը կըմբռնվի իբրև կրոնական գրքերու և աղոթքի լեզու, իսկ բարբառով գրությունը կհամարվի կյանքի ու աշխարհիկ պետքերուն համար գործածվող լեզու:

Այսպիսով գրաբար լեզվի քովն ի վեր արմատ կբռնե նոր

գրական լեզու մը, որ թե՛ գրաբարէն և թե՛ մեր արդի գրական լեզուներէն անջատելու համար կանվանենք միջնակ հայերէն:

Այդ միջնակ գրական հայերենի հիմքը կազմած է ըստ երևույթին այն շատ տարածված բարբառը, որ Թուրանական դարերուն տիրած է հայ աշխարհի կեդրոնական ու արևմտյան մասերուն մեջ, անտարակույս իր բազմաթիվ տեղական, իրարմե թեթև տարբերվող ենթաբարբառներով:

Հայաստանի սահման եզող և բարձր լեռներ ունեցող մասերը մեր երկրի, ինչպես են Գուգարքը, Սյունիքը, Վան ծովի հարավը և Տավրոսի բարձունքները, իրենց ծոցին մեջ ունեցած են բարբառներ, որոնք շատ ավելի շեշտված կերպով մեկը մյուսեն տարբեր են եղած և իրենց այդ առանձնահատուկ տարբերությունները այ պահած են խստորեն ավելի մեկուսի ապրած ըլլալով: Մինչդեռ Հայաստանի միջին մասերը Եփրատեն արևմուտք ու արևելք, Արարատյան նահանգի ալ ավելի դաշտային մասերը, որոնք իրարու հետ ավելի դյուրին ու սերտ հարաբերության մեջ են եղած, ունեցած են կարծես թե մեկ ընդհանուր տիրող բարբառ մը տեղական երկրորդական տարբերություններով, ինչպես ըսի: Եվ այդ լայն գործածություն ունեցող, տեսակ մը ընդհանուր եզող բարբառն է, որ դարձեր է հիմքը մեր միջնակ գրական լեզվի:

Կը բարբառ մըն է այդ հիմքը, այսինքն՝ ներկա և մտադիր ժամանակները բայերու կչինե կու մասնիկի հավելումով, որ հաճախ չի դրվիր ոտանավորի չափը բերելու համար կամ դեռ գրաբարի ազդեցության տակ:

Ջունի ո՛չ ստորադասական, ո՛չ ալ ապառնի առանձին խոնարհական ձևեր: Հոլովներն ալ շատ ավելի պարզ են գրաբարեն, թեև գրաբարյան հոլովական ձևեր դեռ հաճախ կուգան գրչի տակ, բայց ի, է, ով հոլովակերտներուն գործածությունը հետզհետե ավելի կշեշտվի ու կընդհանրանա: Հոգնակի շինողը եր ու ներ մասնիկներն են և հոգնակի տրական հոլովը ու, գրաբարեն շատ տարբեր, թեև շատ անգամ կգործածվին դեռ գրաբարեն եկող հոգնակի ձևերը: Եկեղեցին ու ազոթքները ականջները ընտելացուցած են գրաբարի որոշ հոլովական ձևերուն:

Պահած է ի նախդիրը և չափազանց շատ կգործածե, որով-

հետեւ գոյութիւն կուտայ տաղաչափական հատուածներու կազմութեան եւ ինքնին շատ ախորժելի իգական հնչիւն է: Նախդիրներէն զ ալ դեռ հաճախ կգործածուի. ուղղական ու հայցական հոլովներու նոյնացումը դեռ հաստատուած չէ վերջնականապէս:

Հնչական տեսակէտէն ամենէն աչքի ընկնող տարբերութիւնը ոյ ձոյլ ձայնաւորի ու հնչման վերածուիլն է. լոյս- լուս, առնելոյ-առնելու:

Բառամթերքը կքաղէ եւ՛ գրաբարէն, եւ՛ բարբառական ստեղծումներէն, որով միջնակ հայերէնը հիմա մեզի համար գրաբարի ու մեր արդի գրական լեզուի խառնուրդի մը կնմանի, որ յուրահատուկ գրաւչութիւն ունի:

Այս դարու հայկական կազմութեան վրայ եկած աւելցած են թուրք ու պարսիկ տիրապետողներու լեզուին ազդեցութիւնները: Այդ երկու լեզուներէն քերականական փոխառութիւնները քիչ են համեմատաբար ու գործածութիւնը չափազանց շատ է ու մերկ. գլխաւորապէս գոյական ու ածական ու մակբայ եղող բառեր. տեղ-տեղ կուգան բայեր օտար արմատներով եւ հայերէն խոնարհումով: Այս բոլորը փոխած են անշուշտ հայ լեզուին կերպարանքը. միջնակ հայերէնը դարձած է տիրուած եւ ստրուկ ազգի մը լեզու:

3. ԳԻՏԱԿԱՆ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՐԿԵՐ ԲԱՐԲԱՌՈՎ

Բարբառը իբրեւ գրութիւն բնականաբար ամենէն առաջ կսկսի գործածուիլ կեանքի գործնական պէտքերուն համար: Նամակներ, առուտուրի ու համաձայնութեան թղթեր, հիշելու համար գրուած բաներ, որոնք ընդհանրապէս անձնական են եւ ուրիշներու համար մասնաւոր հետաքրքրութիւն մը չեն ներկայացներ, չեն արտագրուիր ու ժամանակներու ընթացքին կփճանան: Պատահական կերպով կրնան բաներ մը մնալ, որոնք իրենց վրայ չեն ունենար գրական յուրջ արժէք մը եւ կդառնան պատմական ուսումնասիրութեան նյութ:

Բայց այս գործնական գրականութեան մէջ կան որոշ

տեսակներ, որոնք հանրային արժեք ու հետաքրքրություն ունին իրենց վրա, գրված են հանրության համար: Ընդհանրապես բան մը սորվեցնելու, օգուտ մը տալու դիտավորությամբ շարադրված գրություններ են ատոնք, գիտական երկեր, ավելի հաճախ մասնագիտական աշխատանքներ, որոնք ժողովուրդի մի ստվար մեծամասնության համար անմատչելի են իրենց նյութով, բայց այդ մասնագիտությամբ զբաղվող մարդոց համար շատ փնտրված ու սիրելի. և այդ մարդիկն են, որ մեծ խնամքով և՛ կարտագրեն, և՛ կպահեն այդ խոշոր գրությունները մեծ զգուշությամբ:

Բարբառով գրված առաջին գիրքը կպարտինք բժշկության: Բժշկությունը անծանոթ գիտություն մը չէ եղած հայերու համար դեռ հնագույն դարերեն. իսկ արաբական դարերուն ըստ երևույթին ավելի ևս շեշտված է հետաքրքրությունը այդ ուղղությամբ:

Մխիթար Հերացին բժիշկ մըն էր, որ ապրեր է Կիլիկիա և գրեր է «Ջերմանց մխիթարութիւն» անունով գիրք մը ու գրեր է բարբառով. և գրեր է ինքն ալ իր գրության թվականը գրքի ճակատին՝ 1184 թվականը Քրիստոսի:

Հունարեն, պարսկերեն ու արաբերեն բժշկական երկերու հետևելով, տեղ-տեղ թարգմանելով՝ խմբագրած է իր գիրքը ջերմի տեսակներուն և բժշկելու եղանակներու մասին: Գրվածքը հատկապես հետաքրքիր է անով, որ գաղափար կկազմվի ԺԲ դարու բժշկության մասին ընդհանրապես և մեր երկրին մեջ մասնավորապես: Կուտա նշանավոր բժիշկներու անուններ, որոնց երկերը չկան և հայտնի չեն գիտության:

ԺԲ դարեն կա «Երկրավաստակք» անունով գրվածք մը, որ զանազան տեղեկություններ ու բացատրություններ կուտա հողագործության ու պարտիզպանության վերաբերյալ: Գիրքը թարգմանություն է հունարենե. լեզվի որոշ նմանությունների վրա հենված կկարծվի, որ այդ գիրքն ալ Մխիթար Հերացիի աշխատությունը պիտի ըլլա:

ԺԳ դարուն մեջ Սմբատ Գունդստապլ կներկայանա իբրև գլխավոր դեմք բարբառական գործնական գրականության: Թարգմանած է օրենսգիտական գիրք մը Ֆրանսերենե: Խաչակիրները իրենց արևմտյան կարգն ու օրենքները բերած էին Կիլիկիայի

Հարևան երկիրներուն մէջ հաստատած իրենց իշխանութիւններուն համար: Այդ իշխանութիւններէն մէկն էր Անտիոքի դքսութիւնը, որ ունէր իր օրէնսգիրքը՝ ասիզքը: Ահա՛ այդ «Ասիզք Անտիոքայ» գրութիւնն է, որ Սմբատ անշուշտ Կիլիկիայի մէջ թագաւորութեան պէտքերուն ու դատարաններուն համար անհրաժեշտ է համարել թարգմանելը և թարգմանել է ամենուն հասկնալի բարբառով:

Լեզուական տեսակէտէն շատ հետաքրքիր երևոյթ մըն է, որ նոյն Գունդստապլը գրաբար լեզուէ փոխադրած է ժողովրդական բարբառի Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» համառօտ կերպով՝ անունը դնելով «Օրէնք յաղթող թագաւորաց»:

Գունդստապլը, ինչպէս տեսանք, ունի նաև գրած տարեգրութիւն մը, որու ուրիշներէ քաղած մասերու լեզուն՝ գրաբարը, նորէն փոխած է աշխարհիկ բարբառի, իսկ իր շարադրած սեփական կտորները գրած է ուղղակի բարբառով:

Ուրիշ նշանաւոր հայ բժիշկ մըն ալ ունինք ԺԵ դարէն, որուն գրութիւններէն երկուքը հասած են մեր ձեռքը: Բժիշկն է Գրիգոր Ամիրդովլաթ Ամասիացին, որ լեզուագէտ ու անվանի դէմք մըն է եղած. շատ թափառած է և իր կեանքին վերջին մասը անցուցած է Պոլիս, ուր և մեռած է 1497 թուին:

Օգտուելով հայ և օտար բժիշկներու գրուածքներէն՝ շարադրած է 1466 թուին ընդարձակ գիրք մը՝ «Օգուտ բժշկութեան», որ բաղկացած է չորս մասերէ՝ մարդակազմութիւն, առողջապահութիւն, ախտաբանութիւն և դեղագործութիւն:

Իր երկրորդ գրուածքին վերնագիրն է «Անգիտաց անպէտ». գրած է 1478 – 1482 թիւերու ընթացքին և բժշկական բառարան մըն է, ուր կու տայ բժշկական բոյսերու և այլ նիւթերու կարևոր հատկութիւնները, անոնց ուրկէ առացվիլը և անոնց հունարէն, պարսկերէն և արաբերէն անունները:

Շատ հետաքրքիր դէմք մը գիտնական և շատ բացառիկ հետաքրքիր գրութիւններ գիտական:

Բ. ՏԱՂԵՐԳՈՒԹՅՈՒՆ

1. ՏԱՂ ՈՒ ՏԱՂԵՐԳՈՒ

Բարբառի դիմող գրութիւններու երկրորդ տեսակը, ընդհակառակը, բոլորովին անջատ է կյանքի արտաքին գործնական պետքերեն:

Ան ծնունդն է ամենեն առաջ կրոնական-բարոյական ներքին պահանջի՝ հոգիները փրկելու, հոգիները ազնվացնելու դիտավորութեան, իբրև խրատ, իբրև քարոզ, իբրև բարոյախոսութիւն և իբրև կյանքի փիլիսոփայութիւն: Անկե ետքն ալ ընդհանրապես իր ներքին ապրումները, իր զգացումները, իր կարոտն ու տենչանքները արտահայտելու, թափելու ու թեթևելու ներքին խորին պահանջի մը ծնունդն է: Ուրիշ խոսքով՝ հոգեբանական պետքի մը պատասխանը, արվեստով հորինված քնարական կտորներ, որ իրենք հեղինակները սովորաբար տաղ կանվանեն:

Գեղարվեստը ավելի գրավիչ և ավելի ընթեռնելի դարձնելու կձգտի իր նյութը, երբ ավելի մտքին է, որ կխոսի. գեղարվեստը արտահայտական բնական պահանջ մըն է, երբ զգացումներու հորդութենեն է, որ կբղխի: Ճիշդ ասոր պես ալ բարբառով գրելը խելացի հաշիվ մըն է շատերուն խոսելու և շատերեն հասկըցվելու համար, երբ խրատ մը տալ կուզես. իսկ երբ ներքին հորդում մըն է խոսքը՝ կապված կյանքի ապրումներուն, արդեն ինքնին հակում ունի կյանքի լեզվով հորդելու:

Այս տաղերը հասկընալու համար ժամանակակից մարդը ո՛չ մասնավոր ուսման պետք ունի, ո՛չ կողմնակի ճիգերու. ամենուն զգացած ու գիտցած բաներն են քիչ մը ավելի կոկիկ, սուր ու ճաշակով ըսված. և սովորաբար թեթև գրութիւններ՝ պճնված գեղարվեստի հրապուրիչ զարդերով: Այս պատճառով ալ ամենուն սրտին մոտիկ են: Կսիրեն, կփնտրեն, կարտագրեն ու կպահեն շատերը, ով որ կրնա: Ու հին կրոնական գրաբար երգերուն կից կամ անջատ հետզհետե կկազմվին հաստափոր ձեռագիր ժողովածուներ, որ տաղարան կանվանենք:

Այդ տաղարաններու և անոնց բովանդակած երգերու և

երգիչներու մասին մեր ունեցած տեղեկությունները դեռ շատ պակասավոր են: Այդ առատ նյութը դեռ չէ ենթարկված բազմակողմանի ուսումնասիրության, մաղումի, ճշդումի: Եվ մեզի ծանոթ են նյութի որոշ մասերը միայն: Նոր գտնված ձեռագիր տաղարան մը կրնա վաղը նոր երգիչ ու նոր երգեր աշխարհ բերել ու նոր լույս սփռել մեր թերի գիտցածին:

Ասկե վաթսուն-յոթանասուն տարի առաջ գրեթե ոչինչ չգիտեինք, այսինքն՝ գրեթե ոչինչ չկար մեր գրական սեղանին վրա: Ինչպես մեր ժողովրդական անգիր բանահյուսության գոհարները, այնպես ալ մեր բարբառական բանաստեղծության անհատական շնորհները անծանոթ կմնային մեզի. և այդ պատճառով ալ շատ աղքատիկ կթվեր մեր գրական-գեղարվեստական ժառանգությունը:

Ժողովրդական բարբառական բանահյուսության և բարբառական անհատական գրականության հանքերուն գյուտն ու պեղումը կատարված է իրարու զուգընթաց և միևնույն ժամանակամիջոցին մեջ: Թե՛ իբրև որոնող, թե՛ իբրև արժեքավոր մատնանշումներ ընող և թե՛ ուսումնասիրող հատկապես պետք է հիշվին երեք հարգելի դեմքեր, որոնք ընդգծված դեր ունին կատարած այդ ուղղությամբ:

Նախորդ դարու վաթսունական թվերուն բժիշկ Գեորգ Ախվերդյանն է, որ իր Թիֆլիսի բարբառով գրած շատ գեղեցիկ և մնայուն ուսումնասիրությամբ Սայաթ-Նովան տվավ մեր գրականության: Ութսունական-իննսունական թվականներուն Կարապետ Կոստանյանն է, որ շարք մը հատորիկներով դարձուց ամենուն ուշադրությունը գլխավորապես հոգևորական տաղերգուներուն վրա: Քիչ մը ավելի ետքը Արշակ Չոպանյանն է, որ իր որոնումներով և հրատարակություններով ընդգծեց «Հայրեն» անտուններուն արժեքը և Նաղաշ Հովնաթանի գործերն ու դեմքը դրավ հրապարակ:

Տաղերգությունը ծայր կուտա ԺԳ դարու կեսերեն և կտևե մինչև ԺԸ դարուն կեսերը: Այդ հինգ դարերու ընթացքին, որչափ առայժմ հայտնի է մեզի, ունեցած ենք քսանհինգի չափ տաղերգուներ, որոնց մեծ մասի գրություններեն հասած են մեզի մեկ-

երկու կտոր. քանի մը Հեղինակներու երկերուն ծանօթ ենք շատ աւելի մեծ չափերով:

Բոլոր տաղերգուներն ալ կարեւորութիւն կուտան իրենց շնորհքին ու աշխատանքին եւ կջանան իրենց անունը ամուր կապած պահել իրենց ստեղծագործութեան: Սովորաբար ամեն կտոր, ամեն տաղ իր վրա կկրե Հորինողին անունը: Երկու ձեւ կա անունը դրոշմելու:

Մեկը Հին է, գրաբարեն կուգա եւ գիրքը ունի աչքի առաջ, այսինքն ընթերցողը, աչքին կխոսի. տաղի տուներուն առաջին տառերը կկազմեն Հեղինակին անունը: Երկրորդ ձեւը աւելի նոր է եւ կարդացողը չունի աչքի առաջ, այլ բերնե բերան գոց ըսողը կամ երգողը. ականջին կխոսի: Հեղինակը իր տաղին վերջը երգի նյութին Հյուսելով կուտա իր անունը: Ստորագրութիւն դնելու պես բան մը բանաստեղծորեն:

Մեզի Հայտնի առաջին տաղերգուն աշխարհական մարդ մըն է՝ Ֆրիկը. բայց անկե ետքը տաղերգուները Հոգեւորականներ են, եթե Նաղաշ Հովնաթանը մեկ կողմ առնենք: Եվ շատ ալ բնական կերպով, քանի որ այդ դարերու մտավորականը Հոգեւորականներն են. անոնք են գրել-կարդալ գիտցողը, անոնց ձեռքն է գրիչը: Ինչպես գրաբար եւ Հոգեւորական երգերը, այնպես ալ այս նոր տեսակի բարբառական տաղերը անոնց զբաղումն է կամ անոնց ժամանցը: Այն մեկ-երկու աշխարհականներն ալ թե՛ նյութով, թե՛ ձեւով եւ թե՛ մանավանդ աշխարհայացքով մեծ տարբերութիւն մը չունին Հոգեւորականներեն: Տարբերութիւնը եթե կա տաղանդին մեջն է. եւ աշխարհիկ բաները ապրելու, զգալու եւ գրելու իրենց աւելի ազատ ու բնական վիճակին մեջը:

2. ԹՈՒՐԱՆԱԿԱՆ ԴԱՐԵՐՈՒՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Նարեկացիի փոթորկաՀույզ եւ իր մարմինն ու Հոգին խարազանող աղոթք-երգերեն եւ միջնադարյան ճգնավորական խոր «ողբերգութենեն» չորս դար ետքը, Ներսես ՇնորՀալիի Հավատավոր ու ողջունչ աղոթքներեն, շարականներեն եւ կրոնական

քերթվածներուն երեք դար ետքը, ԺԵ դարուն բարձր հոգևորական մը կերգէ պլպուլն ու վարդը:

Կքաղեմ երգին մէջէն քանի մը ամենէն կենդանի տողերը.

Պլպուլն ի վարդն ասաց. «Հոգիս կու քաղուի
ու բաժանիլ ի քէն ինձ մահ կու թուի»:
Վարդն ի պլպուլն ասաց. «Այս ի՞նչ կիւնահ է,
զինչ դու ինձ արիր՝ կատարեալ մահ է»:
Պլպուլն ի վարդն ասաց, թէ աննման ես.
չկարէ մարդ հոգեղէն լեզուով գովել զքեզ:
Վարդն ի պլպուլն ասաց, թէ արեւն դուն ես.
Հասրաթ չի մնար՝ ով տեսնէ զքեզ:
Պլպուլն ի վարդն ասաց, թէ բարի լուսին
չկայ քեզ օրինակ ջուհար մեծագին:
Վարդն ի պլպուլ ասաց. վարդն իւր մուրատին,
երբ տեսնէ զպլպուլն ի մէջ տերեւին:

Այս ոգիով կշարունակուի բավական երկար և տաղին վերնագիրն է՝ «Գաբրիէլ ու Մարիամ», այսինքն՝ իբրև թե կրոնական այլաբանություն է գրվածքը. Գաբրիել հրեշտակապետը և Մարիամ Աստվածածինն է, որ իրարու հետ կխոսին: Ընդունեցի՞նք:

Նույն դարուն վերջերը ավելի ևս բարձր հոգևորական մը ավելի ևս բաց ու շիտակ կգրե. տաղին վերնագիրն է՝ «Գարուն». կքաղեմ նորեն քանի մը ամենեն կենդանի տողերը.

Կենա պահար, այլւի պահար
այլւի կու տայ սիրոյ խապար.
ծով-ծով աչեր ու լուռ քնար
ունքն կեռ էր, քան զկամար:
Ծոցդ է պախճա վարդով ի լի,
մարմինդ ճոխ բուսեր չինար
և ճոճ կու տայ, քան զուռ դալար:
Հանցեղ նետով զիս խոցեցիր,
որ այլ չունիմ բժշկարար:

Ավելի ևս բարձր հոգևորական մը՝ վեհափառ մը, ԺԵ և ԺԶ դարերուն մեջտեղը, սիրո հուզումեն իր ներքին բերկրանքը զսպելու անկարող, կգոչե հաղթական ու սքանչելի տողերով.

Գինով եմ, գինով, հարբեր եմ սիրով,
գինով եմ, գինով, ցերեկս արեւով,
գինով եմ, գինով, գիշերս երազով:

Եվ առանց հագենալու բազմաթիվ տուներու մեջ և իր հարբած ըմպալը շարունակ կրկնելով կգովե ու կփառաբանե... ո՛չ սուրբ երրորդությունը, ո՛չ Քրիստոսի սերը, ո՛չ ալ Գաբրիելն ու կույս աստվածամայրը, այլ պարզապես աշխարհային հողեղեն կին մը:

Այս խոր հակադրությունը նախորդ երկնային ու ճգնավորական ոգիի և այս աշխարհիկ ու մարդկային զգացումներու ցուցադրության միջև անշուշտ պետք է ունենա իր ծնունդ տվող պատճառները: Խորունկ բան մը պետք է փոխված ըլլա հոգևորականներու հոգիին մեջ, որ մարդոց երգերը հանկարծ այսպես հիմնովին փոխվին:

Եվ, այո՛, փոխված է շատ մեծ բան մը: Հոգիներուն մեջ մեռած է քրիստոնեությունը, հին քրիստոնեությունը: Կամ եթե կուզեք՝ ավելի արքայավայել արտահայտությամբ՝ հին, հաղթական, հպարտ, դեպի երկինք սավառնող ու անզիջող քրիստոնեությունը գահընկեց է եղած հոգիներուն մեջ և անոր գահը գրաված է նոր քրիստոնեություն մը, շատ ավելի ճկուն ու հարմարվող, ծես դարձած ու անվանական քրիստոնեություն մը, շատ ավելի համեստացած, մեր այս վարի իրականության հարմարած քրիստոնեություն մը:

* * *

Ինչո՞ւ այս փոփոխությունը և ի՞նչպես:

Նախ՝ ինկած ու կոտրված է քրիստոնեության հմայքը. չկա այլևս ամեն տեղ հաղթական ու առաջընթաց կրոնքի մը հպարտությունը: Կտոր-կտոր փրցուցած է մահմեդականությունը քրիստոնյա դարձած երկիրները բյուզանդական կայսերութենեն, որ իսկական մայրն ու հենարանն էր քրիստոնեության: Եվրոպական խաչակիր ճիգերն ալ՝ մահմեդականներու ձեռքեն ազատելու գոնե Քրիստոսի գերեզմանը, վերջիվերջո չէր հաջողած: Բյուզանդական կայսերությունը ինքը ամեն կողմեն խածված ու փրցված գաթայի

կնմանէր քանի մը դարեր: Մնացած վերջին պատառն ալ երբ խլեցին Թուրքերը, այլեւ արեւելքի մէջ չմնաց քրիստոնեայ անկախ Հող. քրիստոնէութիւնը ամէն տեղ պարտուած մըն էր, Հպատակ մըն էր, ծաղրուած մըն էր:

Իսկ մեր Հողերուն վրայ ու Հայ տարրին Համար շատ աւելի շեշտուած կերպով, որովՀետեւ բացարձակապէս զուրկ էինք ամէն զէնք ու պաշտպանութենէ, նախորդ դարերը աղեկ գիտէին, թէ ինչու կոչնչացնէին մեր ազնուականութիւնը: Եւ քիչ մը խոր զգացող ու մտածող մարդոց գրչին ծայրը Հաճախ կուգար բնական ու չարչարատիկ Հարցը. «Աստուա՛ծ, ի՞նչ է մեր մեղքը. Հանցա՞նք է քրիստոնեայ ըլլալը: Ո՞ւր է քրիստոնէութեան ամենակարող ու ամէն ինչ ինքը տնօրինող Աստուածը: Ինչո՞ւ կՀանդուրժէ Հայերու գլխուն թափած այս բոլոր անլուր անիրաւութիւնները: Սա ի՞նչ անարդարութիւն է»:

Հրեական Հին կտակարանին մէջ գրուած է, թէ «Աստուած ստեղծեց մարդը ըստ պատկերի յուրում»: Ճշմարտութիւնը սակայն ճիշդ ատոր Հակառակն է. մարդիկն են, որ ստեղծեր են իրենց աստուածները իրենց կարճ խելքով և իրենց խեղճ երեւակայութեամբ և ըստ իրենց պատկերի: Պարտուած մարդը, պարտուած թագաւորը պարտուած մըն է. պարտուած երկնաւոր թագաւորն ալ խեղճացած երկնաւոր մըն է: Քրիստոնէութիւնը Թուրանական դարերուն կրօնք մըն է դեռ, անշուշտ, ու Հաւատք մը, միայն թէ գունաթափ ու թօշնած Հաւատք մը:

Երկրորդ՝ մեծ է միշտ տիրող դասակարգի վարած կրօնքին ու կենցաղին և անոնց տուած օրինակին ազդեցութիւնը: Կամա թէ ակամա ամէնքն ալ անոնց նմանիլ կուզեն. բարքերն ու ըմբռնումները այդ Հունով կՀոսին: Արդ՝ մեր աշխարՀին ու մեր շուրջի աշխարՀներուն մէջ բոլոր տիրողները շատ աւելի կանխիկ վճարող կրօնք մը ունէին: Անոնք արքայութիւնը ա՛յս աշխարՀքէն սկսիլ կուզէին և Հանդերձեալի Համար ա՛յս աշխարՀի վայելքներուն շարունակութիւնը կխոստանային. այսինքն՝ տրամագծօրէն Հակառակը քրիստոնէական վարդապետութեան:

Իրենց բարոյական ու ընկերային աշխարՀայացքը Հին Հայանի սկզբունքն է՝ «Զա՛րկ, խլէ՛ ու տիրացի՛ր ուրիշներու ունե-

ցածին, նայե՛, որ աշխատցնես ուրիշները ու ծառայեցնես քեզի, ա՛յս է կյանքի օրենքը»: Այսինքն՝ զուտ աշխարհային ըմբռնում մը կյանքի, դրական ու դարերով գործադրված: Ու կյանքի վայելքն ալ՝ «Կին, գինի, ուտել ու խրախճանք. նայե՛ որ ձեռքէ չփախցնես»:

Այս երկու հիմնական ուսումներեն առաջին հոդվածին հետևիլը շատ դժվար էր «րայա» ու «անհավատ» հայուն համար. տիրելու և ուրիշները կեղեքելու համար պետք էր նախապես զորավոր խլամ իշխանավորի գործիքը դարձած ըլլայիր և անոր փեշերուն տակը պատսպարված, որ շատ քիչերուն կվիճակվեր: Բայց երկրորդ հոդվածը՝ կինն ու գինին, ուտելն ու խրախճանքը, այո՛, անկարելի չէր: Ո՛չ միայն անկարելի չէր, այլև միակ մոռացումն ու մխիթարանքն էր հայու համար շուրջի բոլոր զրկանքներուն, բռնություններուն, անիրավություններուն ու նվաստացումին մեջ:

* * *

Այս պայմաններու տակ և ժողովրդային զանգվածներու այս ընդհանուր տրամադրության դեմ ելլողը, քրիստոնեական հին սկզբունքներուն տեր կեցողը խոսքով ու գործով պետք է ըլլար հոգևորականությունը թե՛ իր կոչումով և թե՛ իբրև միակ առաջնորդ հայ ժողովուրդի, որ դեռ մնացեր էր: Բայց այդ հոգևորականությունը ինքը թշվառ վիճակի մեջ էր: Նոսրացած էր իր թիվը, եղածներն ալ սովար մեծամասնությամբ և՛ նյութապես, և՛ բարոյապես խեղճ ու խոնարհած. հացի ետևե ինկած, անուսում, անպատրաստ ու տգետ: Իրենց հոտեն ոչինչով բարձր չէին և հաճախ շատ ցած էին. կեղեքող, գծուծ ու կաշառակեր:

Ահա՛ կտոր մը Մկրտիչ Նաղաշի մեկ տաղեն, որ կքաղեմ արձակ. «Կաթողիկոսները շատցան, անբան եպիսկոպոսներ կօրհնեն. վարդապետները Աստծու խոսքը ծախեցին և կքարոզեն մարդկային հաճույքներ. աբեղաները վանքը ուրացան և գյուղերը կթափառին. տերտերները իրարու հետ կկռվին, գավազան կքաշեն իրարու վրա և մորուք կփետեն. և այս ամենը վասն ագահության»:

Ահա՛ ուրիշ ազվոր օրինակ մը: Հովհաննես սարկավագ մը

սէր է կապած Թուրք մոլլայի մը աղջկան և, փոխանակ քրիստոնեաբար ինքն իր վիճակին սարսափելու, կնստի ու կերգէ տաք ու Հաղթական տողերով իր պատմութիւնը և շատ իրական չեշտերով, ժամը, բուրվառը, Թեփին տակի սաղմոսը ու իր սիրեկանի քիթ ու բերանը բոլոր կխառնվին իրար ոտանավորին մէջ:

Արդէն ուրիշ տեսակի սարկավագ մըն է սա: Բայց միայն ի՞նքն է, որ փոխված է: Նախորդ դարերու մէջ մեր Հոգևոր Հայրերուն Հոգեբանութիւնը աչքի առաջ ունենալով՝ պետք է սպասեինք, որ նզովք, անեծք ու պարսավանք ըլլար բաժինը այդ դայթակղեցի Հովհաննես սարկավագին: Բնավ չերևար այդ տեսակ բան մը Հոգևորականութեան կողմե: Անոր այդ նշանավոր Հայաթուրք սիրերգը ըստ երևույթին կարդացեր են սիրով և արտագրեր են Հաճույքով դարէ դար երգարան կազմողները, որոնք նմանապես Հոգևորականներ են եղած: Այդ դեպքը նկատեր են պարզապես «պիքանտ» պատմութիւն մը, որ ժպիտով ու աչքերու կծկումով փոխանցեր են իրարու մինչև մեզի: Այս տեսակի վերաբերում անկարելի է երևակայել նախաթուրանական դարերուն:

Սակայն այս ընդհանուր Հոգևորական թշվառութեան մէջ կար անշուշտ շատ փոքրաթիվ ընտրանի մը, ավելի բարձր և ավելի ազնիվ Հոգիի տեր կրոնավորներ, որոնք գրաբար ալ գիտեին ու կկարդային Հին գրքերը պատկառանքով, գիտեին նաև արաբերեն ու պարսկերեն լեզուները ու կՀետաքրքրվեին քիչ մը ավելի բարձր տեսակի բաներով և որ իրենք ալ գրել կշարժեին: Այդ բացառիկ ընտրիներն ալ, որ մտածում ունեին ու քիչ մըն ալ ուսում և որոնց թիվին կպատկանեին մեր տաղասացները ընդհանուր առումով, այդ բացառիկներու Հոգիին մէջն ալ ճաքած էր Թանկարժեք Հախճապակին, և Հիմնադագին երկվութիւն մը կտիրեր Հոն: Հին դարերու խստակրոն քրիստոնեութիւնը և Հանդերձյալ կյանքի երանութիւններն ու բարձր տեսիլները Հաստատ տեղավորված էին անոնց գլխուն մեկ Հարկին անկյունը, իբրև սուրբ ու սրբազան ճշմարտութիւններ, իբրև քրիստոնեական բարձր ուսում, իբրև երկնային ու աստվածային սկզբունքներ, իբրև կրոնական դավանանք:

Միայն թէ անոնք այլևս կորսնցուցեր էին իրենց Հին վարիչ ու մղիչ ուժը, անոնք այլևս տեսական-վերացական ճշմարտու-

թյուններ էին, որոնց դեմ նույն գլխի մյուս անկյուններուն մեջ դուրսի առօրյա իրականությունը դրեր էր մարդկային ու աշխարհային հասկացողություններ, պահանջներ, տենչանքներ: Այս զգացումները դեռ բոլորն ալ անարժեք կհռչակվեին ու մեղավոր բաներ տեսականորեն, բայց գործնականապես ատոնք էին, որ օրե օր ավելի շեշտված կերպով կդառնային հոգիին մեջ իսկական տիրապետողը, իսկական ղեկավարը:

«Մարդ ենք, մեղավոր. ներե՛, տե՛ր, դուն, որ մեզի մարդ ես ստեղծեր: Այո՛, աշխարհային բաներ են, մարմնեղեն ու հողեղեն, ինչ որ կուզենք ու կընենք, ներե՛, տե՛ր, դուն, որ դրեր ես մեզի այս աշխարհքին մեջ»: Ասիկա հարմար ու խելացի ճիգ մըն է տեսականն ու գործնականը կերպով մը իրար հաշտեցնելու. Հոգեկան երկվությունը մեջտեղեն վերցընել չէր կրնար ասիկա. Հոգեկան խոր ճեղքը կմնա, բայց գոնե այդ ճեղքին վրա երկու հասարակ տախտակով կամրջակ մը կնետվի մեկ կողմեն մյուսը երթալ-գալու համար:

Ինչպես որ գրիչ շարժող հոգևորականները կընդունին, թե մեր հայ իսկական գրական լեզուն գրաբարն է, բայց հետզհետե կլեցնեն իրենց գրությունները բարբառով և բոլորովին օտար, անհայտ բառերով՝ իրենց շուրջի իրականության ենթարկված, այդպես ալ ընդունելով զուտ հոգևոր գրություններու բարձր արժեքը՝ կամաց-կամաց կսկսին խառնել իրենց գրություններուն մեջ աշխարհիկ հարցեր, մարդկային զգացումներ, գործնական խորհուրդներ, նույնիսկ թուրանական փոխառություններ: Բայց միշտ ալ իրենց տաղերգության վերջին տողին մեջ չեն մոռնար, կխոստովանին հրապարակով ու բանաստեղծորեն, որ մեղք գործեցին, այս անցավոր աշխարհի սուտ ու նանիր վայելքները գովեցին, հոգին թողած՝ մարմնականը փնտրեցին: «Ներե՛, տե՛ր»:

Սկիզբները մեկ-երկու դար ավելի մեղմ ու վախվխելով կկատարվի այս գործնական շեղումը տեսական սկզբունքեն, բայց հետզհետե ավելի կուժեղնա ու համարձակ կդառնա: Հետզհետե «Ներե՛, տե՛ր»-ը կդառնա ծես մը, գրական ձև մը, բարակ քող մը, որ ինչպես բոլոր բարակ քողերը, ո՛չ թե մերկությունը ծածկելու կծառայեն, այլ մերկությունը զարդարելու:

* * *

Եվ վերջապես պետք չէ մոռնանք, որ այդ տեսակ բարակ կրոնական-այլաբանական քող մը նետելը՝ կրոնքով արգիլված բաներ երգելու համար, շատ սովորական վարպետություն մըն էր պարսկական ու արաբական այդ օրերու գրականության մեջ, որու որոշ ազդեցության տակ էին մեր տաղերգուները. և որ, կկարծեմ, կկազմե երրորդ մեկ ազդակը անոնց հոգեբանության կրած փոփոխության:

Հետևապես պարսկական և՛ հարուստ, և՛ գեղեցիկ գրականության ամենեն զարգացած ժամանակը կկազմե մեր տաղերգուներու ապրած շրջանը: Ֆիրտուսին՝ ԺԱ դարու առաջին կեսին, Նիզամին, որ գանձակեցի է և հոն է ապրած ու գրած, ԺԲ դարու երկրորդ կեսին, Սաատին՝ ԺԳ դարուն, Հաֆըզը՝ ԺԴ դարուն և Ճամին՝ ԺԵ դարուն: Ասոնք դեռ ամենեն խոշոր տաղանդներն են, անոնց չուրջը կային բազմաթիվ ուրիշներ:

Ինչպես որ ԺԹ դարուն մեր թե՛ հոգևոր և թե՛ աշխարհական հայ հեղինակները, երբ գրել կփորձեին, ըլլա գրաբար թե աշխարհաբար, կամա-ակամա կենթարկվեին իրենց ժամանակի եվրոպական առաջադեմ ժողովուրդներու մեծ ու դրավիչ հեղինակներու տված օրինակին թե՛ նյութերու ընտրությամբ, թե՛ հարցերու արծարծումով, թե՛ գրական մշակումի եղանակներով և թե՛ նույնիսկ որոշ արտաքին մանրամասնություններով, այսինքն՝ կույրին արևմուտքի ազդեցության տակն էին, ճիշդ այդպես ալ գրիչ շարժող և քիչ մը ավելի վերեն թռչիլ փորձող մեր հայրերը թուրանական դարերուն կամա-ակամա իրենց ժամանակի մեծ հռչակ ունեցող արևելյան հեղինակներու հմայքին տակն էին անշուշտ:

Մեր հոգևորական տաղերգուների համարձակության և աշխարհային նյութերու ձեռք երկարելուն մեջ կարևոր դեր ունին պարսիկ մեծ բանաստեղծներու վայելած պատիվն ու հռչակը և անոնց երկերուն տված օրինակը:

Արմատացած, հին ու մշակված գրականություններու օրինակն ու ազդեցությունը նոր սկիզբ առնող գրականություններու վրա անխուսափելի է ու բացահայտ: Մեր բարբառական գեղար-

վեստական գրականությունը նոր ուղքի եկող գրականություն էր. նոր փորձ, բոլորովին տարբեր գրաբար Հոգևոր գրականութենեն: Եվ երկու տեսակի օրինակ ուներ իր դեմը Հետևելու Համար. մեյ մը իր Հարազատ ժողովուրդի անգիր բարբառական բանաՀյուսութիւնը, որուն Հետևեր ու նմանվեր են մեր տաղերգուները. թեև քիչիկ մը վերեն վար կնայեին անոնց վրա. երկրորդ ալ՝ պարսիկ ծաղկած գրականության գրավիչ օրինակներն էին, որոնց վրա կնայեին մեր տաղերգուները Հիացումով ու վարեն վեր:

Ծանոթ էին մեր տաղերգուներեն շատերը այդ օտար երկրուն նախ ականջով, քանի որ կերգվեին ու կարտասանվեին մեզի տիրող պալատներուն ու ժողովուրդին մեջ, ծանոթ էին նաև, կկարծեմ, անձնական ընթերցումով գոնե մեկ-երկուքը: Պարսիկ գրականությունը մեր տաղերգուներուն Համար եղած է և՛ դրդող մը, որ գրեն, և՛ դեպի մարդկային ու աշխարՀային զգացումներու մղող մը, որ արտաՀայտեն. օրինա՛կ մը և՛ իր խրատական գրութիւններով, և՛ իր փիլիսոփայութեամբ, և՛ արտաՀայտութեան իր ինքնաՀատուկ ձևերով ու իր թափանցիկ քողերով ու այլաբանութիւններով, որոնցմե մեկն է նաև «Վարդն ու պլպուլի» սիրաՀարութիւնը:

3. ՏԱՂԵՐԳՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹՆ ՈՒ ՁԵՎԸ

Թուրանական դարերու այս Հոգեբանական պատկերացումը արդեն ինքնին կցծե, թե ի՞նչ էր ըլլալու այդ դարերու տաղերգության Հիմնական նյութը:

Բոլոր տաղերգուները իրենց տաղերուն մեջ երկու տեսակի նյութ ունին՝ երբեմն մեկը, երբեմն մյուսը շեշտված: Կա՛մ խրատներ են Հոգևոր ու բարոյական խորքով, Հավիտենականի ու Հանդերձյալի սպառնալիքով, կա՛մ անձնական երգեր են՝ նվիրված կնոջ գեղեցկության ու սիրո, վայելքի ու խրախճանքի:

Խրատական տաղերը շեշտված են գլխավորապես ԺԳ դարու առաջին տաղերգուներուն քով և Հիմնված են քրիստոնեական Հին ըմբռնումներու վրա: Գրաբարեն կուգան. ձևն է քիչ մը փոխված. տեսակ մը անձնական ընդգծումով կխոսի տաղերգուն, իր անունեն. իբրև իր փորձառության ու մտածումին վրա Հենված կամ խոսքը

իրեն ուղղելով: Միշտ մեջտեղն է հեղինակին հետ և միշտ ալ իր անունը կուտա: Բայց իր բառերը, իր քարոզը քրիստոնեության հինեն եկող դատումներն են՝ ավելի կամ պակաս հաջող արտահայտությամբ, ավելի կամ պակաս կենդանի պատկերացումով:

Աշխարհս ոչինչ է. աշխարհային վայելքներուն ետևեն մի՛ երթաք, կկորսնցնեք ձեր հոգին. Հիշեցե՛ք դժոխքի սարսափելի ու հավիտենական տանջանքները: Եվ ի՞նչ արժեք ունին այս բոլոր սնոտի հարստությունները, փառքը, գեղեցկությունն ու իշխանությունը. չէ՞ որ քանի մը տարիեն ամենքս ալ պետք է իջնենք նույն փոսը, որուն երկարությունը երկու կանգուն է անխտիր ամենուն համար: Մի՛ հետևիր մարմնիդ ու զգայարանքներուդ պահանջին. անոնք կխաբեն քեզի ու կդավեն, հետևե՛ իմաստության, այսինքն՝ կրոնքի պատվիրաններուն:

Իրենց քարոզած այս իմաստուն խրատներուն դեմ սակայն շարունակ մեղանչած են ու կմեղանչեն բոլոր տաղերգուները. արդեն ատ է պատճառը, որ դարձած են տաղերգու: Իրենք ալ գիտեն ու կխոստովանին ալ հրապարակով իրենց մեղանչելը. ոմանք քիչ մը զղջալով, մյուսները քաղաքավարի կերպով հանցանքը ստեղծողի վիզը կնետեն. Աստված մարդս շաղվեր է չորս իրար հակառակ տարրերե՝ հող, ջուր, օդ և կրակ, և անկարելի բան է այս չորսը իրարու հետ հաշտեցնելը:

Իսկապես նոր նյութը երկրորդ տեսակի տաղերն են: Սիրո երգերը գրեթե միշտ հյուսված են գարնան, լուսաբացին, պարտեզի ու ծաղիկներու: Սկիզբները մինչև ԺԵ դար սիրո մասին կխոսին ընդհանրապես իբրև աստվածային սեր, նույնիսկ իբրև, տիեզերական մեկ սկզբունք, իբրև ընդհանուր գեղեցկության որոնում. Հետզհետե սակայն անձնականը կընդգծվի և առանցքը կդառնա կանացի գեղեցկություններուն և հրապույրներուն գովքը, ծարավ ու տենչանք կնոջ էության: Եվ ասոր զուգընթաց կերթա ընդհանրապես վայելքի պահանջը, ուրախության, հաճույքներու ու կերուխումի ներբողը:

Այս երկու տեսակի նյութերն ալ կմշակվին քնարական կառուցումով, այսինքն՝ քառյակի մը մեջ իր ըսելիքը ըսած է արդեն: Թեև միջնադարյան տաղերը հաճախ երկար, երբեմն շատ երկար

դրություններ են, բայց շարոց են, կուռ ամբողջություն մը չեն ներկայացներ երբեք: Նույն մտքի կամ նույն զգացումի շուրջ իրարմե անկախ կամ երբեմն շատ թույլ կերպով իրարու կցված կտորներ են՝ անվերջ կրկնություններով, կա՛մ Աստվածաշունչեն, կա՛մ նախորդ տաղերգուներեն առնված խոսքերով, համեմատություններով ու պատկերացումներով: Միակ ընդհանուր ու վերացական կապը դատողության մը կամ տրամադրության մը վերին տիրապետությունն է: Չկա գրական ավելի բարձր կառուցում մը ստեղծելու ո՛չ զգացումը, ո՛չ պահանջը:

Եվ այս ցրիվ քնարական հորինվածքին պատճառով ալ շատ դժվար է ամբողջ տաղը մեկ ծայրեն մյուսը նույն ուշադրությամբ կարդալը և տեղ-տեղ նույնիսկ լրջորեն իմաստին հետևիլ կարողանալը: Նման մտքերու զանազանակերպ կրկնություններ են ընդհանրապես, մեկ-երկու տող հաջող ու գեղեցիկ, իսկ անկե առաջ ու անկե ետքը շատ սովորական ու շատ անգամ ալ ուղղակի անհամ ու ձանձրալի տողեր: Ասոր համար է, որ միջնադարյան տաղերգության գեղեցկությունը կապված է միշտ մեկ-երկու տողի ու կտորի, բայց երբեք ամբողջության: Գեղեցիկը հոս ու հոն պատկեր մըն է, համեմատություն մը, խորհրդածություն մը, սուր խոսք մը, ջերմ արտահայտություն մը: Այդ աղվոր ու գրավիչ պատառիկները վայելել կարողանալու համար ստիպված ես կարդալու քանի մը երես շատ միջակ տողեր ու անհամություններ:

Ամբողջականության և գրական ճարտարապետության այս պակասը, իրարու նման ու իրարմե անկախ տուներու այդ անփույթ կցումը իրարու հնարավորություն կուտա մեզի դյուրությամբ մեջեն կտորներ զեղջել, կտորներ ավելցնել, տեղափոխել և նույնիսկ տարբեր տաղերու և տարբեր հեղինակներու կտորները բերել և իրարու փակցնել, ինչ որ սովորաբար կկատարվի նաև ժողովրդական անգիր բանահյուսության կտորներուն հետ: Բան մը, որ ըստ երևույթին հաճախ կատարեր են տաղարան կազմողներն ու արտագրողները ըստ իրենց ճաշակի ու հասկացողության: Ատով ալ ավելի ևս խառնակեր են տաղերու ամբողջականությունը, երբեմն նաև հեղինակներուն ամբողջականությունը՝ մեկ հեղինակին տաղերը կամ տա-

ղային կտորները ուրիշ հեղինակի տաղերուն հետ շփոթելով կամ գիտակցաբար իրար հյուսելով:

Այս երկու տեսակի նյութերն ալ գրված են միշտ հավասարատող հատվածական չափով: Տաղերգուները, որ նաև խորքով ու նյութով կապված են ժողովրդական անգիր երգին, իրենց գործածած չափերումն ալ կհետևեն ժողովրդական երգին: Շատ սովորական են ութը, տասը վանկանի տողերով երգերը: Բայց բոլոր նուրբ ականջ ունեցող տաղերգուները սիրած են մասնավոր կերպով և գործածած են անտունիներու «Հայրեն» չափը. յուրաքանչյուր տողը վեց մանրահատված:

Գալով տաղերու հանգին՝ ընդհանրապես ակար հանգեր են. քիչ կպատահի, որ լրիվ վանկ մը հանգ դարձած ըլլա: Անախորժ է նմանապես. երբ հին գրաբար տաղերուն հետևելով՝ երկար էջերու մեջ կպահեն նույն հանգը, որ իր հետ կբերե նաև որոշ բռնազբոսիկ բառերու ձևեր: Հանգը կստանա նուրբ գործածություն, երբ երկու տողեր կկապե միայն իրարու կամ շատ-շատ միայն մեկ տուն մը:

Գ. ՏԱՂԵՐԳՈՒՆԵՐԸ

1. ՖՐԻԿ

Մեր առաջին բարբառագիր տաղերգուն Ֆրիկ կկոչվի. անսովոր ու տարօրինակ անուն մը:

Կարելի է, որ իրմեն առաջ եղած ըլլան բարբառով գրող ուրիշ տաղերգուներ, մինչև իսկ հավանական է: Տեղ մը Ֆրիկ անեծք կուտա այն մարդոց, որոնք իր անունը ջնջել ուզենան իր գրություններուն վրայեն իրենց անունը հոն դնելու համար: Բանագողության դեմ այսպես ինքզինքը պաշտպանելու պահանջ զգալու համար պետք է որ երևույթը սովորական ըլլար մինչև Ֆրիկ. ուրեմն կային տաղերգուներ, նույնիսկ իրարմե գողցողներ:

Դժվար է ենթադրել, որ գրաբար գրված տաղերու կվերաբերի Ֆրիկի այդ տխուր դիտողությունը:

Ամեն պարագայի առայժմ մեզի հայտնի առաջին տաղեր-

գուն Ցրիկն է: Եվ եթե ինքը ըլլա, իրա՛վ, առաջին անգամ բարբառով գրող երգիչը, անշուշտ որ այդ իրողությունը մեծ պատիվ մը ու մեծ ծառայություն կըսանա Ցրիկի համար, իբրև հիմնադիր նոր ուղղության, իբրև ուղեցույց նոր ճամբաներու, իբրև օրինակ իր եաևեն եկողներուն:

Բայց եթե առաջինն ալ չէ, հավանորեն ինքը ամենեն բարձրն է եղած իր շուրջը եղողներուն մեջ և ավելի աչքի ընկնող թե՛ որակով, թե՛ քանակով, քանի որ փնտրվեր ու արտագրվեր են իր երգերը, իսկ մյուսներուն երգերը չկան: Ցրիկի տաղերեն մեր ձեռքը հասած են քառասուն կտորե ավելի, ամեն մեկը երեք-չորս էջ երկարությամբ, որ ըսել է քերթվածներու շնորհքով հատոր մը:

Ցրիկ ապրած է ԺԳ դարուն, մեռած պիտի ըլլա դարուն վերջերը. և ըստ երևույթին գրել է սկսած իր կյանքի վերջին տասնամյակներուն: Իր կյանքի մասին պատմական աղբյուրները դեռ բան մը չգիտենք: Ինքն իր մասին հոս ու հոն կխոսի իր տաղերուն մեջ, ուրկե կկազմվի պատկեր մը ո՛չ շատ հստակ ու լրիվ:

Իր երիտասարդ ու թարմ առնական տարիներուն ունևոր մարդ է եղած, հարստության ետևե ինկած. և առանց շատ հաստն ու բարակը փնտրելու մեծության ու վայելքի է ձգտած աշխարհիս երեսին: Բայց թաթարական արշավանքները և թաթար տիրապետությունը խլեր է անոր ձեռքեն ամեն ինչ. և մեկ հատիկ զավակն ալ տարեր է գերի, իբրև գրավական, որ հայրը կարևոր փրկանք մը վճարե ու ազատե. Ցրիկ այլևս գտնել չէ կրցած իր որդին:

Ծերության հասակին մեջ մարդ մըն է «մինակ ու աղքատ», ինչպես ինքը կըսե: Սկիզբը գինիով փորձեր է խեղդե իր վիշտը, անկումն ու մենությունը: Բայց ըլլալով ավելի խորհող ու փիլիսոփայող տրամադրության տեր շուտով կգտնե ուրիշ հոգեկան մխիթարություն մը. կսկսի տաղեր հորինել:

Նախ ինքն ալ կզարմանա իր ըրածին ու իր շնորհքին վրա, քանի որ մասնավոր կերպով ուսում առած մարդ մը չէ. և շուտով կուգա այն համոզումին, որ իր տաղերգելու կարողությունը Աստծու կողմե իրեն տրված հատուկ կոչում մըն է: Եվ կգրե իր տաղերը, իր «ոգըները», ինչպես ինքը կանվանե իր խրատները, գլխավո-

բայց երկրատարր մարդոց ուղղելով իր խօսքը և իր սեփական կեանքը տեսակ մը իբրև օրինակ ներկայացնելով: Կքարոզէ իմաստութիւն, այսինքն՝ չերթալ աշխարհային մեծութեան, հարստութեան և զգայարանական վայելքներու ետևէ, այլ հետևիլ աղօթքի, աղքատներուն օգնելու և մտածել հոգիին փրկութիւնը դժոխքի տառապանքներէն:

Առաջին հայեացքով այնպէս կթուի, թէ հին հազարամեայ քարոզն է, որ կկրկնուի գրաբարին նոյնը, հիմա ալ գրաբարեան բարբառով, բայց այդպէս չէ իրողութիւնը. և միայն լեզուին մէջը չէ փոփոխութիւնը, այլև խորքին մէջ: Այդ քարոզները ան կուտայ և՛ իրեն, և՛ ուրիշներուն, բայց ո՛չ ինքը կհետևի իր տուած խրատին, ո՛չ ալ հաւատք ունի, որ ուրիշները պիտի հետևին:

Այդ քարոզը կարևոր ձև մըն է, հաւատքի հանգամանք և ինքնապաշտպանութեան միջոց մը հանդերձեալի սպառնալիքներուն դէմ: Անընդմէջ զղջում արտահայտելը անհրաժեշտ պայման կնկատուի, որ Քրիստոս ներէ և ատոր համար ալ անվերջ-անվերջ կկրկնուի երկար-երկար տաղերով. աղօթքի մէկ նոր տեսակը: Բայց աղօթքը իր կարգով, կեանքն ալ իր կարգով: Նոյնիսկ իր կեանքի վերջին տարիներուն մէջ և՛ կխմէ, և՛ վայելք կփնտրէ, և՛ մարմնական հաճոյքներ այդ «մինակ ու աղքատ» մարդը:

Աշխարհքի մարդ է, տեսած ու ապրած մարդ է, և՛ գինով, և՛ ապրել սիրող մարդ է բոլոր արտաքին ձախողանքներուն հակառակ: Բայց տարիքը լեցած է և անդին աշխարհքին մէջ իր տեղը կուզէ ապահովել: Ինկած ու կտրուած հաւատք մըն է իր տուած խրատը: Ամեն բան ընելէն ետքը և երկու մեղանչումին մէջտեղը գրուած փիլիսոփայութիւններ են այդ ոտանաւորները և ո՛չ թէ հոգիի խորքէն փրթած երգեր: Մտքէն կուգան ու մտքի կխօսին, ո՛չ թէ սրտի:

Կոկիկ տաղերով, հաջող տաղաչափութեամբ, միապաղաղ գրաբարեան հանգերով, պարզ ու ազուոր լեզուով, մէջընմէջ խորք ստացող արտահայտութիւններով գրուած տաղեր են: Գրուած են տեղ-տեղ ժամանցի համար, գրելու հաճոյքին համար, բայց ընդհանրապէս իբրև պարտաւորութիւն, իբրև կոչում, երբեմն ալ ծերունի մարդու փիլիսոփայելու հակում. և վերջապէս, ինչպէս

ըսի, իբրև մուրհակ, որ օր մը ձեռքը բռնած կարողանա ներկայանալ մեր մեղքերեն մեզի փրկելու համար խաչը ելած Քրիստոսին:

Շատ հետաքրքիր հատորիկ մըն է Ֆրիկի տաղերու ժողովածուն, ուր շատ հստակ կերպով կպատկերացվի հոգիներու մեջ առաջացած խոր ճեղքվածքը: Քրիստոնեական տեսաբանության և աշխարհական իրականության զուգընթաց գոյությանը մեկ ցայտուն օրինակն է Ֆրիկի գիրքը:

Եվ եթե միայն այս խրատները ըլլային Ֆրիկի գրածը՝ իրեն պիտի մնար միշտ արվեստի տեր և բնածին շնորհքով աչքի ինող տաղերգու մը ըլլալու պատիվը: Սակայն Ֆրիկ իր կյանքի բոլորովին վերջի տարիներուն գրած է մեկ-երկու տաղեր, որոնք հանկարծ նյութը կփոխեն և Ֆրիկին կուտան բոլորովին նոր արժեք:

Ֆրիկ վեճի կմտնե Աստծու հետ: Արտաքին քանի մը քաղաքավարական խոսքերը եթե մեկդի դնելու ըլլանք՝ խորքին մեջ սարսափելի քննադատություն մըն է աստվածային ստեղծագործության անիմաստությանը դեմ: Ըսածը շատ է պարզ. «Աս ի՞նչ տեսակ աշխարհք է, որ ստեղծեր ես. ամեն կողմ անիրավություն, անարդարություն, անհավասարություն, բռնություն, ստորնություն և վայրենություն: Հազար լեզու, հազար ժողովուրդ, բոլորն ալ իրար չեն հավնիր ու իրար կուտեն. սա ի՞նչ կյանք է, որ տվեր ես մեզի»:

Հա՛, սա արդեն բոլորովին նոր երգ է. և ժխտում մըն է բոլոր մինչև հիմա իր գրած տաղերուն, որոնք մինչև վերջը աստվածային իմաստությունը, արդարությունը և բարությունը կգովաբանեին: Սա արդեն Նարեկացիի պայքարին կնմանի. միայն թե Նարեկացին կչեչտե ու կմաքառի եսի ու անհատի ներքին-հոգեկան իրավունքներուն համար, իսկ Ֆրիկը կբողոքե արտաքին-ընկերական անիրավություններու դեմ՝ ազգային ու միջազգային, տնտեսական ու քաղաքական:

Մինչև հիմա Ֆրիկի գրածները կրոնական գրքերե և ըմբռնումներե քաղված խրատներ էին, որ երաժշտական հանգերգի մը պես կրկնած էր ու կրկնած: Այս բողոքը, այս գանգատը, որ գրքերուն ալ դեմ է ու իր հավատքին ալ դեմ է, դուրս է ցայտած իր անձնական երկար դիտողություններեն, իր սեփական ապրում-

ներին ու տառապանքներեն և իր շուրջի ժողովուրդին ու մարդկութեան հանդէպ իր զգացած խորին ցաւէն ու գութէն:

Երկար ատեն, ամբողջ իր կեանքի ընթացքին զսպված պոռոց մըն է, որ ալ զսպել չի կրնար ու դուրս կխուժէ իր էութեան խորքերեն. և ճիշդ ատոր համար ալ «Գանգատը» խառնակ գրվածք մըն է և Ցրիկի տաղերուն սովորական ներդաշնակութիւնը չունի: Շատ բան տեսած և շատ բան մտածած ծերունին ալ լռել չէ կրցած: Եվ Ցրիկ իր այս մեկ ժայթքումովը մեր բացառիկ բարձր հեղինակներեն մեկն է, և ո՛չ միայն ի՛ր ժամանակի և միայն տաղերգուներո՛ւ շարքին մեջ, այլ ընդհանրապես հայ գրականութեան բոլոր կարեւոր դեմքերուն մեջ:

Այդ միեւնոյն տողերուն մեջ ինչքա՞ն ճիշդ կերպով արտահայտած է հայ ժողովուրդի խոր տառապանքը և խոր բողոքը թե՛ իր ժամանակի տեսակետեն և թե՛ մեր օրերու հոգեբանութեան, երբ կըսէ Աստուծուն. «Ո՛չ եղեգ ենք, ո՛չ վայրի խոտ. փշաբեր անդաստանի պես դուն տվեր ես մեզի կրակին: Եթէ այդ պատճառն անպետք ենք՝ մեկ անգամեն փճացո՛ւր, որ քու բարի սիրտդ հանգչի. եթէ այս բոլորը քու կամքովդ կկատարվի»:

Ամեն հայ, առանց բացառութեան, այս աղօթքը կամ կոծը ունի Աստուծու հետ, որու առաջին գրական արտահայտութիւնը ահա՛ տված է Ցրիկ:

Կդնեմ հոս «Գանգատի» երկու ամենեն կարեւոր կտորները.

Եւ ա՞յս էր բան քո հրամանի,
արդար իրաւ դատաւորի,
որ մէկն ապրի տասն տարի,
մէկն հարիւր այլ աւելի,
մէկն ո՛չ ի տասն հասանի,
երկու երեք ամսոց մեռնի:
Մէկին մէկ որդի լինի,
անօր, անժամ նա մեռանի.
մէկն այլ ունի շատ մի որդի՝
անոր ո՛չ մաղ մի չպակսի:

Մէկն ի պապանց պարոնորդի,
մէկն ի հարանց մուրող լինի.
մէկին հազար ձի ու ջորի,
մէկին ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի:
Մէկին հազար դեկան ոսկի,
մէկին ո՛չ փող մի պղնձի.
մէկին հազար հատ մարգարտի,
մէկին ո՛չ ուլնիկ մի ապակի:
Մէկին հազար գառնով մաքի,
մէկին ո՛չ մէկ չորքոտանի:

Մէկին բեհեզ և ծիրանի,
մէկին բրդէ շալ մի չանկնի,
մէկին ատլաս ու ղրմզի,
մէկին շապիկ մի չի հասնի:
Մէկին հարամըն յաջողի,
մէկին հալալըն կորուսի:
Մէկն ի զրկանացն հարստի,
մէկն յիւրայնոցն աղքատասցի.
մէկն է ուժով զարմանալի,
մէկն է վախկոտ սարսափելի:

Մէկն է ձեւօք աննմանի,
հասեալ ուսման և արհեստի,
հիմն արկանէ յատակք ծովի,
կամուրջ կապէ վերայ գետի:
Մէկն է ճնշող ու անճոռնի,
կոպիտ, փալիտ, երկայն աքուի.
մէկն նման է հրեշտակի,
և շատ ունի նա գործ բարի.
մէկն նման է Յուդայի,
սպանող, ղամազ, գործող չարի,
տեղի եղեալ սատանայի

և բնակարան դիւաց դառի:

Ես քեզ մեղայ երկնաւորի,
տեառն Աստուծոյ ահեղ մեծի.
քո դատաստանն է յիրաւի,
նեաթով կու տաս ամեն մէկի:

«ՁՈՐ ԱՍԱՑԻ ՎԱՍՆ ԻՄ ԱԶԳԻ»

Որքա՞ն տանջեն զմեզ յաշխարհի
և կեղեքեն զկեանս մեր յայտնի.
և դու ներես յամենայնի
ու անտես առնես զմեզ ի վշտի:

Տէ՛ր, ո՛չ խնդրես վրէժ յայտնի
և ո՛չ ցուցնես ակն ամենի,
գիտե՛ս, մարմին եմք մսեղի,
զէմ արժան չեմք ինչ երկաթի:

Եղէգն չեմք կամ խոտ վայրի,
որ խանձ արկեալ ես կրակի,
քան զանդաստան փշաբերի
կամ մացառաց ինչ պրակի:

Որ բարկացար Հայոց ազգի,
որպէս Հրէիցն Իսրայէլի,
զինչ բարկութիւն ի քէն թափի,
նա ի վերայ մեր գայ, կուտի:

Արդ եթէ չեմք ինչ պիտանի
և կամ չունինք գործ ինչ բարի
կամ քո սրտից եմք ատելի,
որ չարչարաք ըստ Հրամանի:

Նա դու ջնջէ՛ զմեզ մէկ հետի,
որ քու բարի սիրտդ հանգչի,
թէ այս կամօք քո կու լինի,
ամենակալ Աստուած բարի:

2. ՀՈԳԵՎՈՐ ՏԱՂԵՐԳՈՒՆԵՐՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲԸ

Ֆրիկի խրատական բանաստեղծության անմիջապես հետևած են խումբ մը հոգևոր հայրեր, որոնց սրտին ու ճաշակին շատ մոտիկ էին այդ աշխարհական մարդու աշխարհիկ լեզվով գրած իսկապես կիսահոգևոր երգերը: Ե՛վ հետևած են, և՛ խոշոր քայլ մը ավելի առաջ անցած նյութերու և ոգիի ավելի ևս աշխարհականացման տեսակետեն:

Այդ խումբեն երեք հոգիի անունը և մասամբ գործերը հաստատ հայտնի են մեզի. հավանորեն ուրիշներ ալ կան նվազ ծանոթ ու անծանոթ:

Երեքն ալ գրեթե ժամանակակից են իրարու ԺԳ դարուն վերջերը և ԺԴ-ի սկիզբը, այսինքն՝ Ֆրիկեն ո՛չ շատ շուտ: Իրենց անուններն են Խաչատուր Կեչառեցի, Հովհաննես Պլուզ և Կոստանդին Երզնկացի:

ա. Խաչատուր Կեչառեցին (+1331), որը գրաբար լեզվով ողբերգուներու մեջ հիշած ենք արդեն և որ ունի բազմաթիվ գրաբար երգեր ու գանձեր և իր ժամանակին եղած է նաև հայտնի զարդանկարիչ հոգևորական մը, ունի նաև սակավ թվով կիսաշխարհիկ բովանդակությամբ և կիսագրաբար լեզվով ոտանավորներ. այս ձևի ոտանավորներ են նաև Ալեքսանդրի կյանքի թարգմանության սկիզբն ու վերջը իր ավելցուցած «կաֆաները»:

Խորքին մեջ դեռ հին դեմք է, բայց նորի հակում ու ճաշակ ունի. իր ոճի ու արտահայտության գրավչությունը մատնանշելու համար կդնեմ իրմեն գրաբար ու աշխարհաբար քանի մը տուներ:

Հանցգուն զինչ բուսնի տերեւ եւ ծաղկի գարունն ի ծառէն,
Տէ՛ր իմ, ծաղկեցո՛ հոգւով զիս ի սէր քո աստուածեղէն:

Հանցգուն զինչ հանեն մարդիկ հնարիւք զձուկն ի ծովէն,
որ պահ մի տատանը տայ, մեռանի կարօտ ի ջրէն:

Հանցգուն զինչ եղնէ ժամ-ժամ թանձրացեալ թուխ ամպն ի ծովէն,
որ յորդամանէ նորա սասանի ամէն մակղէն:

Ես արտաքսեցայ մեղօք իմաստից անհուն քո ծովէն,
Հոգիս թալկացաւ դէմ քեզ. զիս կեցո՛, ահեալդ ի կուսէն:

Աշխարհս էր ի ծով նման
զիս ի վայր տարաւ յանդիման.
կենցաղս էր յալեաց նման,
զիս ի մէջ էառ քան զգնտան:

Մէրն էր անդընդոյ նման
զիս ի վայր քաշեց փոշիման.
աւուրքս էր ծաղկի նման,
որ անցաւ յերազ ի նման:

Խաչատո՛ւր, զարթիր ի քնոյ,
որ քեզ ժամ է աշխարհելի.
այս կեանքն է ձիւնի նման,
որ ի գալ գարնան կու հալի:

ը. Հովհաննես Պլուզ Նմանապես գրաբար լեզվով գրական երկեր ունեցող իր ժամանակի ուսումնական դեմք մըն է. և շատ ալ ճամբորդած Թիֆլիսեն Երուսաղեմի տարածության մեջ: Գիտե լատիներեն, բարեկամություններ ունի ունիթորներուն հետ և թարգմանած է Թովմա Աքվինացու «Յոթն խորհուրդք»-ը: Ունի կրոնական ճառեր, մեկնություններ, կրոնական տաղեր ու չարականներ:

Բարբառով գրած իր տաղերը Ֆրիկի խրատականներուն ազդեցության տակն են, բայց քիչիկ մը ավելի հեշտ վերաբերումով աշխարհային բաներու: Ֆրիկեն ավելի պատկերավոր գրող է: Քառյակներ են բոլոր իր գրածները ըստ էության. թեթևություն ու թարմություն ունի, ճաշակի տեր է, և քիչ բան է մեր ձեռքը հասած:

Ահա՛ իրմեն մեկ- երկու նմուշ.

Գիտուն մարդն յարեւ նման
խօսքն լուս պայծառ կը ծագէ.
Տգէտ մարդն օձուն նման
հանապազ զմարդ կու խոցէ:

Մարդ կայ որ հազար արժէ,
հազար կայ, որ մէկ մի չարժէ.
ան մարդն որ հազար արժէ,
անգէտին մօտ փող մի չարժէ:

Բազան ի անտառ մորին
թէպէտ բու, թէպէտ բազայ է.
Ճոհարն ի ծովուն միջին
թէպէտ քար, թէպէտ ճոհար է:

Խելօքն ի յանգէտն ի մօտ,
մի՛տք արա, թէ ի՞նչ նման է.
Ճրագն ի յառջեւ կուրին
կու վառի՝ ինքն չգիտէ:

Խելօքն ի ծով նման,
որ քանի չափեն կու տանի,
անգէտն է ի տիկ նման
փարչ էվել լընու նա պատռի:

Ելայ ժողուեցի զիմ մեղք
ու դրի առջևս ու լացի.
յանդէնն քարւան կ'երթար՝
շալկեցի 'ւ ի հետ գնացի:
Հրեշտակն այլ ի դէմս ելաւ,
թ'ո՞ւր կ'երթաս ողորմ ու լալի.
այդ շալեկդ որ դու ունիս՝
անդէնին քեզ տեղ չի ընկնի:

Աշխարհս է ի ծով նման,
ան որ գայ՝ անթաց չի մնայ.
յայս ծովս ես ի նաւ մտայ,
գնաց նաւս ու ես չիմացայ:
Եղեր մօտեցեր է նաւս՝
վախեմ թէ քարի դիպենայ,
քակտի իմ աղուոր շինուածս
ու տախտակըս մէկ-մէկանայ:
Երթամ աղաչեմ զԱստուած,
որ հանէ դիհաց մի քամի,
այս մթանս լոյս մի տայ,
զմեզ բարի երկիր մի տանի:

գ. Իբրև բանաստեղծ՝ աւելի արժէք ունի Կոստանդին Երզնկացին, մանաւանդ իր նուրբ զգայութեամբ ու խորաչուն հոգիով: Իր խրատները ու բարոյական կտորները մրցիլ չեն կրնար ո՛չ Ֆրիկի, ո՛չ Պլուզի հետ. չունի անոնց կենդանութիւնը:

Իր ուրոյն աշխարհն ու շնորհքը լոյսի ու սիրո ու առաւան փառաբանութեան մէջն է, որ իր հոգիին խորքը խառնուած ու ձուլուած է Քրիստոսի էութեան հետ: Բայց լոյս, առաւօտ ու փիլիսոփայական սէր երգելով՝ անձկանելի կերպով կսահի դէպի կնոջ սէրը. «Եթէ ես ալ ուրախութեան ու սիրո բաժին մը պէտք է ունենամ՝ թող խառնուի առիկս առաւան ու լոյսին»:

Եվ կերգէ նմանը չեղած գեղեցիկ մը, որ իր աչքերը տեսեր են և որուն պատկերեն այլևս բաժնվիլ չի կրնար. և հիացումով կգովե երկար-երկար տուներով ու վերջն ալ կավելցնե, թե բարեկամ մարդոց զվարճության համար հորինած է: Բայց բարեկամ մարդոց զվարճության համար չեն գրվիր հետևյալի նման տողեր.

Ես եմ կարօտ ի իւր սիրոյն,
զինչ ծարաւած երկիր ցօղոյն,
կամ զինչ գարնան անուշ քամուն,
թէ երբ չնչէ հողմն հարաւուն:

Կարոտն ու ծարավը անտարակույս իրական է և զարմանալու ալ բան մը չկա: Երազկոտ հոգի մըն է, քաշված, անօգնական ու տրտում. կզգա ինքզինքը զրկված ու հալածված, կապրի իր ստեղծած լույսերուն և կնոջ մը անմոռանալի պատկերին հետ:

Կդնեմ իրմեն բնորոշ երկու կտոր.

Զարթի՛ք ի յերազուտ,
бացէ՛ք զաչերդ ով կայք ի քուն.
երբ էանց գիշերն երկար՝
նշան եղեւ առաւօտուն:

Մի աստղ ելաւ պայծառ
առջեւ Արուսեակին լուսոյն.
ունէր լոյս գեղեցիկ
քան զաստեղանց այլ գերագոյն:

Քաղցր է ծնունդ լուսոյն,
երանի տամ ես այն մարդուն,
որ բաժին ինքն ունենայ
ի յայն լուսոյ առաւօտուն.
թէ դուռն կայ երկնից

պարգեւատու մի Աստծուն՝
ի ծագել արեգականն
ի մեզ բացուի դուռն բարույն:

Թ՛է անմահական սէր կայ,
որ հոգի տայ հոգեստնուն,
իմ բաժին սէրն ու հոգին
խառնել ի սէրն առաւօտուն,
թէ ինձ կեանք կամ խնդութիւն
բաժին կայ ի դուռն ի սիրուն,
մէկ պահու սէրն ի սրտէ
թող լինի ինձ յառաւօտուն:

Ով կամի սիրով լինել
ինքն յարութեան որդի լուսոյն,
թող խնդրէ ի յայն սիրուն,
որ ինք յարեաւ առաւօտուն:
Ի սիրոյն սէր յաւելու;
սիրով գնայ տունն ի սիրուն.
ով սիրոյն ինք հետեւի՝
հասնի սիրովն առաւօտուն:

Ես չունիմ հանգստութիւն, ուրախութեան ինչ չկայ ճար,
որ մի պահիկ հանգիստ առնում կամ դուրանայ կեանքս դժուար:
Ձերդ ի ծով կամ տատանեալ յերակ ծփիմ յալիս խաւար
եւ չկայ եզր ի ծովիս կամ թէ ճամբուս թեզ կայ վճար:
Ո՛չ ունիմ ես օգնական, յոյս, ապաւէն ինձ կամ եար,
ո՛չ ունիմ մարդ սիրելի ի յընտանեաց ինձ կամ օտար,
որ գթայ սրտովն ի յիս կամ աղեսայ գիս իր եղբայր:
Զայս ի յո՞վ հարցուկ լինիմ, որ ինձ խրատ տար կամ կար,
թէ գիս է՞ր աշխարհս ամէն հանց կու առեն թշնամաբար:

3. ՀՈԳԵՎՈՐ ՏԱՂԱՍԱՑՆԵՐՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲԸ

Չմոռնանք, որ ԺԵ և ԺԶ դարերը գրաբար գրականության մեռյալ դարերն են: Եվ քրիստոնեական ոգիի ամենեն խոնարհ օրերը:

Եվ աշխարհայինը տիրապետած է հոգիներուն. և այս երկրորդ շրջանի հոգևոր հայրերուն երգերը ամենեն ավելի շեշտված կերպով նվիրված են աշխարհին: Խրատական գրությունները տարված են աշխարհային ու գործնական խորհուրդներով, շուտով ատոնք ալ մոտայեն կլլյնան: Կեդրոնականը կդառնա հետզհետե սիրո զգացումը և սիրո երգերուն վրայեն ալ հետզհետե կվերնան քողերը. ԺԵ դարու կեսերեն արդեն ամեն բան բաց է ու իր անունով:

Երեք հոգի են նորեն գլխավոր դեմքերը՝ Մկրտիչ Նաղաշ ԺԴ և ԺԵ դարերուն անցումին վրա, Հովհաննես Թլկուրանցի երևի ԺԵ դարու ընթացքին և Գրիգոր Աղթամարցի ԺԵ դարուն վերջերը և ԺԶ-ի առաջին քառորդը:

ա. Մկրտիչ Նաղաշ, որ Դիարբեքիրի առաջնորդն է եղած, պատմական դեմք է: Իր ժամանակի իշխանություններուն հետ շփման մեջ և իր ժողովրդին համար աշխատած մարդ մը: Կես մը կամքով, կես մը օրվա դեպքերուն հետևանքով փախստական. ճամբորդած է մինչև Խրիմ:

Նախորդ խումբի բանաստեղծներեն շատ ավելի աշխարհային ու գործնական ըմբռնում ունի և իր արտահայտություններուն մեջ դեռ միշտ իր կոչման պարտադրած սահմանները հարգող է և զգույշ:

Քիչ է գրած և մեծ մասով խրատական. բայց, ինչպես ըսի արդեն, այս աշխարհի համար պետք եկող խորհուրդներ են իր տվածները: «Բարի՛ք գործե. ատիկա է աշխարհիս երեսին ամենեն մեծ բանը»: «Ագահ ու անկուշտ մի ըլլար, հոտկե կծնին չարիքները»:

Իր սիրո երգը վարդ ու պլպուլի փոխասացություն մըն է, որով այդ սիրահարները իրար կգովեն և իրարմե հեռու եղած ատեն կյանքի անարժեք ըլլալը կհայտնեն, ուրկե քաղվածք մը դրած եմ արդեն նախորդ գլուխներուն մեջ: Կան մեջը սրտե եկած

աղւոր տողեր, երբ անգամ մը վարդ ու պլպուլի հիմար այլաբանությունը կմոռնաս ու կենդանի մարդ ու կնոջ մասին կմտածես:

Իր հարազատները, իր անկյունը, իր երկիրը սիրող հոգի մըն է, ատոր համար ալ տաք շունչ ունին իր ղարիբության տողերը: Անունը վրան է, նկարիչ ալ է, մանրանկարներով ձեռագիրները կզարդարե:

Կգնեմ իրմեն ղարիբի կտոր մը, ունայնության կտոր մը և ծաղիկի մը երգին կտորը, որ կուզեք այլաբանորեն կրոնական հասկըցեք, կուզեք ընդունեցեք շիտակ ու աշխարհային:

Աւա՛ղ զղարիպն ասեմ, որ յօտար երկիր հանդիպի.
աչերն արտասուօք ի լի յերեսէն ի վայր կու թափի.
յորժամ ի մեճլիս նստած յանկասկած սրտիկն արունի,
զաչերն ի բոլորն ածէ՝ կարեւոր և զոք ոչ ունի:

Հոգի՛, մի՛ ասեր ղարիպ, սիրտն է սեւ քան զգործելի.
ի ղարիպութեան տարաէն երեսին գոյն կու քաղի.
զինչ հաւքն երամէն ի զատ՝ մոլորած ի տեղ չի հանգչի.
այնչափ երերուն կենայ՝ մինչ որ իւր երամն հասանի:

Երազ է սուտ, եղբա՛րք, աշխարհիս բաներն ի լման.
ո՞ւր են թագաւորք, իշխանք, պարոնայք եւ սուլթան ու խան.
շինեցին բերդ ու քաղաք, պարպանի ու շատացան.
յետոյ գէմ անտէր թողին ու մտան ի հող ի զնդան:

Նաղա՛շ, մի՛ խաբիր մեղօք, մի՛ դառնիր անասնոց նման.
մի՛ գիրկ աշխարհիս ածեր, մի՛ կարծեր՝ թէ քեզ տի մնան.
մայլ հասրաթ մի՛ լինիր, մեծութիւն քեզ չի՛ պիտի.
ունես կերակուր, հանդերձ, աւելին քեզ ցաւ կու լինի:

Զինչ որ գեղեցիկ ծաղկունք կային՝ ամէնքը գացին.
ծաղիկ մի այլ հանց գնաց, որ ամէն ծաղկունք գնա լացին:

Ծաղիկն անուշ հոտ ունէր, որ ամէն աշխարհս լնցին
ու ամէն աշխարհաց ծաղկունք յայն ծաղկի սէրն դիմեցին:

Ոմանք յայն ծաղկի սիրուն՝ չորցան ու դարձան դեղին,
բազումք յայն ծաղկի սիրուն ծաղկեցան քան զնշդարենին:

Զայն ծաղիկն Աստուած երևտ ու ոմանք զզատրն չիմացին.
ծաղիկն ով երևտ՝ Լառ. զիւրն. շատ ոք ի վայր մնացին:

Ծաղիկն յանց տեղ գնաց, որ ամէն ծաղկունք խնդացին.
Հազար գոյնզգոյն ծաղկունք յայն ծաղկի սէրն ժողովին:

Ծաղկունքն յայն ծաղկի սիրուն շաղ առին ու շողշողային.
ամէն ծաղիկ իւր գունովն այն ծաղիկն գլուխ դնէին:

Բ. Հովհաննես Թլկուրանցին արդեն պարզ ու անքող սիրո երգիչ է. և սերը ինքն ալ խոսքեն անցած է գործի: Ո՛չ թե սիրո կարոտ, երազանք ու այլաբանություն, ո՛չ թե հեռավոր բանի մը ակամա որոնումը, այլ ապրված, ճանչված ու գնահատված բանի մը նկարագրությունը կամ վերստին կանչը: Ապրված բան մը ըլլալուն համար իր տաղերը ստացած են ավելի կենդանի ու չեշտակի արտահայտություն: Ամեն պարագայի իր սիրո մասին գրած տողերն են ամենեն ավելի աչքի իյնողը իր տաղերուն մեջ:

Եվ իր ներկայացուցած սերն ալ վերացական ոչինչ չունի. դավասանք է կնոջ գեղեցկության ու հրապույրին: Իր «Գարուն»-են կտոր մը բերած եմ արդեն նախորդ գլուխներուն մեջ քաղվածորեն: Այդ միևնույն երգին մեջն է, որ կդիմե կնոջ ու կըսե.

Դու ես գինի ուրախարար,
    ով որ խմէ ի քեզանէ
ուրախանայ սրտովն յոժար.
    ով որ մեզայ ճաշակն առնու.
այլ աստծոյ չի տար խապար:

Պարզ և հստակ, այլև հին քրիստոնեությունը հոս գործ չունի. կործանված են իր բոլոր տաճարները:

Եվ կնոջ հոգեկանի մասին ալ շատ բարձր համոզում մը չունի «մեղաց ճաշակին տուած» այս հոգևորական երգիչը: Ամբողջ անհամ տաղ մըն է շարադրած «Ի վերայ անզգամ կանանց», որոնց ձեռքեն ինքն ալ, ինչպես կհասկըցնե, շատ բան է քաշած. «Աստված փրկե կնկան չարե»:

Կնոջ մասին իր ունեցած վերաբերումն ու կարծիքը, որ թուրանական վերաբերում է, մենք կրնանք չսիրել, բայց կինը գովելու իր շնորհքին քովեն բոլորովին անտարբեր անցնիլ չենք կրնար, նույնիսկ երբ այդ կինը «ներս կանչող» կին մըն է:

ՍԻՐՈՅ ՏԱՂ

Արե՛կ, արե՛կ իմ խուբ սուրաթ.
փա՛ռք ու պատիւ քո ստեղծողին.
յԵդեմական դրախտեն կու գաս.
օրհնեա՛լ անուն քո նախշողին:

Արե՛կ, արե՛ւ գարնանային,
արե՛կ, աշնա՛ն պայծառ լուսին.
նի՛ստ, որ հայիմ յերեսդ ի վեր.
տեսքդ հերիք է ինձ բաժին:

Տեսքդ բժիշկ է հիւանդին,
առողջութիւն ջերմընոտին,
աչքերըդ ծով է ծարաւին,
բերանըդ քաղցր է քաղցածին:

Ծոցդ է դրախտ անմահութեան,
յետ դարձընէ գելած հոգին.
ո՛չ մեռանի, ո՛չ ծերանայ,
ո՛չ երեսուն դառնայ գեղին:

Վաղւընէն ում որ հանդիպի
ի ծար ելնէ զօրն ի բարին.
ով ըղսուրաթըն համբուրէ
խնդումով անցընէ զբոլոր տարին:

Զով դու սիրով ի ներս ձէնես
ծաղկի քան զծառըն խնկենին.
ով կուռ միջացըդ գիրկ ածէ
կանաչ մընայ քան նշդարին:

Խե՛ւ Յովհաննէս Թլկուրանցի,
փառաւորէ՛ հայր եւ որդին.
աղուոր սուրաթն ի հող դառնայ,
ի հուրն անշէջ իւր սիրելին:

Այսինքն՝ ինքը՝ Թլկուրանցին, բայց ի՞նչ կարեւորություն ունի. ալ վախցող չկա անդիի աշխարհքի «անշեջ հուրեն»:

Անոր երգերուն մեջն ալ գարունը, պարտեզը, այլև գինին ու սերը հյուսված են իրար: Այդպես է «Կենա պահար, այլի պահար» տաղը կամ, օրինակ, ուրիշ երգի մը քաղվածորեն հետևյալ կտորը.

Ահա՛ եղեւ պայծառ գարուն.
ծաղկեաց այգիքն ու պաղչանին.
անուշանայ հովն ու քամին.
ձագերն ձայն ածեն յայգին.
կու թանձրանայ շուքն ծառին.
յորդոր գնայ ջուրն յառաջին.
զթեւն բերէր բոլոր վզին,
սիրով խմեր զանուշ գինին:

Թլկուրանցին հատուկ տաղով մը կգանգատի «սուտ սիրելիներեն». ո՛չ մեկուն մի՛ հավտար. սիրելի, եղբայր, դրացի, բոլորը խաբեբաներ են. աս է իր հոռետես վարդապետությունը: Եվ

սաստիկ կվախենա մահեն, «լեղի մահէն», «յամենայն լեղւոյն լեղի մահէն», ինչպես ինքը կանվանե: Եվ շատ զարմանալու պատճառ չկա, քանի որ ինքն իրեն զինելով՝ կըսե. «Եոթանասուն տարին լցեր, ի մեղաց մէջն եմ կացեր», իսկ Քրիստոս շուտով պիտի նստի դատաստանի:

Բայց այդ դատաստանն ալ, Աստվածաշունչեն բերված ուրիշ վկայությունները ալ լրջորեն չեն առնված. խոսք է միայն: Ինքը անշնորհք մարդ չէ, բայց հոգին խոր չէ:

Կդնեմ գլխավոր կտորը իր տաղեն «Ի վերայ մահուան»:

Է՛, մա՛հ, քանի զքեզ յիշեմ՝
կու դողամ եւ կու սարսափիմ.
չկայ քան զքեզ լեղի,
յամենայն լեղւոյն լեղի ես.
լեղի, 'ւ ամենայն լեղւոյ,
միթէ դու ի քեզ նմա՞ն ես.
դժոխք քան զքեզ լեղի,
եւ յետոյ զայն ալ դու բերես

Սողոմոն յիշեաց զքեզ
եւ ասաց. Եղո՛ւկ, վայ եմ ես.
նախատեաց զիմաստութիւն,
ինքն ի յինքն ասաց. փո՛ւ քեզ,
ի՞նչ շահ է իմաստութիւնս,
քան զտգէտ աղքատ մեռայ ես.
անմեղ եկայ ի յաշխարհս
եւ մեղօք երթամ սեւերես:

Սողոմոն արքայն ասաց՝
մի՛ ասիր, թ' արքայ եմ ես,
ունիմ շատ դրամ, շատ գանձ,
շատ դարպաս ու ոսկի ի ներս.

ի զուր խռովեալ գանձէս.
ո՛չ գիտես ում ժողովես.
զաշխարհս ես ի գիրկդ առեր.
քեզ ի խոր դժոխք կու փորես:

գ. Ավելի խորունկ է մտածումով, անպայման ավելի ջերմ զգացումով և ավելի ալ տաղանդով մեր վեհափառ տաղերգուն՝ Գրիգոր Աղթամարցին:

Նարեկացիի ոճէն ու հորդութենէն բան մը ունի իր նկարագրության մեջ, երբ «զինով եմ, գինով» հանգերգի տակ իր սիրած կինը կգովե ամեն տաք գույներուն, թանկագին քարերուն և ծաղիկներուն նմանցնելով. և կապված է կնոջը ամբողջ հոգիով.

Հոգիս բերկրեալ ընդ քեզ ցնծայ,
սիրով ի սէրդ կապեցայ:

Պլպուլի ու վարդի սերը Աղթամարցին վերածած է վիպերգության՝ դեպքերու իրարու զոդված հաջորդականությամբ. անջատում, նամակ, նամակին պատասխանը և վերստին հանդիպում. այսինքն՝ բացառիկ ճիգ մը վիպական կառուցման:

Ասոր ալ սերը հյուսված է գարնան և բույս ու ծաղկի հետ: Աս ալ վայելքի մարդ է, բայց անհամեմատ ավելի կեդրոնացած և ավելի խոր իր զգացումներուն և անոնց արտահայտության մեջ: Աս ալ կխոսի մահվան մասին, ինքն ալ խոր ծերության մեջ է. բայց ո՛չ հազար անգամ ուրիշներեն կրկնված դատողություններ. ո՛չ ալ աստվածաշնչային վերակոչումներ, այլ պարզ ու կենդանի պատկերացում:

Ինքը շիներ ու զարդարեր է իր այգին և հիմա եկեր են ու կըսեն՝ «Ելի՛ր այգիեդ»: Մարդը այգիին մեջ հնձան է շիներ, կարասներ է թաղեր և դեռ շնորհքով չէ խմեր իր գինին. եկեր են ու կըսեն՝ «Ելիր այգիեն»: Ինչքա՜ն քրտինք ու աշխատանք է թափեր և ի՜նչ ուրախություններու դեռ կսպասե իր այգիին մեջ. եկեր են ու կըսեն՝ «Ելի՛ր այգիեն»:

Այո՛, շատ դժվար պատմություն է և շատ աղվոր: Մեր բար-

բառական գրականության մեջ մնայուն գեղեցկություններին մեկն է այս տաղը: Եվ ընդհանրապես Գրիգոր Աղթամարցին իր շունչով, զգացումներու թափով և իր քնարական կենդանի արտահայտությամբ ամենեն բարձրն է բոլոր հոգևորական աշխարհաշունչ տաղերգուներուն մեջ:

Բաղխածորեն կդնեմ իր սիրո երգը. և իր «այգին՝ հանելով միայն քանի մը կրկնության տուները:

Գինով եմ գինով, հարբել եմ սիրով,
գինով եմ գինով, ցերեկս արևով,
գինով եմ գինով, գիշերս երազով:

Լուսին ու արև, աստղ առավոտին,
պայծառ արուսեակն լուսով ի լին,
լալ, ակն ու գոհար ես դու մեծագին,
ծիրանի ծաղիկ, գույն մանուշակին:

Մոմեղէն մատունք հոտ պալասանին,
դու կարմիր խնձոր ի մէջ տերևին,
պայծառ մարգրիտ յատակն ծովին,
որ դայ ի ցամաք ձեռամբ լուղորդին:

Թուխ ամպի նման, ցող ես անձրևին.
ծառ կանաչ-տերև դու պտղով ի լին,
ծաղկեալ բուրաստան հոտով շուշանին,
ծաղիկ ծովային, ծով ես ծիրանի:

Դու մուշկ ու ամբէր, բուրումն ամէնի,
համատիփուռ ծաղիկ անթառամելի,
դու սելլի, չինար, ծաղկեալ նշենի,
զմեզ քու տեսուն առնես արժանի:

Գեղեցիկ պատկեր եւ տիպ հրաշալի,
լոյս ծագեալ ի քեզ նման հրեշտակի,
բերանդ է խորան եւ տուփ խնկալի
զմեզ քու սիրուն արա՛ արժանի:

Գինով եմ գինով, հարբել եմ սիրով,
գինով եմ գինով, ցերեկս արեւով,
գինով եմ գինով, գիշերս երազով:

ԱՐԵ՛Կ, Ե՛Լ ԱՅԳԻՈՅՍ

Ամէն առաւօտ եւ լոյս
պիւլպիւլն էր նստել յայգւոյս,
քաղցրիկ ձայնէր վրայ վարդոյս.
կ'ասեն, թ'արե՛կ, ե՛լ այգւոյս:

Քար եմ բերեր գետերոյս,
փուշ եմ բերեր սարերոյս,
ցանկ եմ շիներ այս այգւոյս.
կ'ասեն, թ'արե՛կ, ե՛լ այգւոյս:

Պրքա եմ շիներ յայգւոյս,
յերկնից ցօղն է մէջ պրքոյս,
քաղցր եւ բարեհամ ջրոյս,
բոլորն է ծաղկունք եւ բոյս:

Դեռ չեմ կերեր այս պտղոյս,
կ'ասենք թ'արե՛կ, ե՛լ այգւոյս.
ինչպէ՞ս ելնեմ ես այգւոյս.
այս իմ նորաշէն տներոյս:

Հնձան եմ շիներ այգւոյս,
կարաս եմ շիներ գինւոյս,

դեռ չեմ խմեր յայս գինւոյս,
կ'ասեն, թ'արե՛կ, ե՛լ այգւոյս:

Բաղեմ փունջ մի վարդ այգւոյս,
դնեմ մէջ կարսի գինւոյս,
ուրախանամ այս հոտոյս,
կ'ասեն, թ'արե՛կ, ե՛լ այգւոյս:

Ղումրի է նստեր այգւոյս,
գարուն է հասեր ծաղկոյս,
պլպուլն է բացուեր վարդոյս,
պխտէր տեսնեմ կեանք եւ լոյս:

Վարդն է խռով պխւլպխւլոյս,
ձայնս է կորեր ի յանձնոյս,
հոգիս ելեր է մարմնոյս.
աւա՛ղ տասցէք գերւոյս:

Եկն ի խնդիր այս վարդոյս
հրեշտակն է կանգներ հոգւոյս.
յահէն կապեցաւ լեզուս,
եհան զհոգիս ի մարմնոյս:

Տարան ի յեղեր հողոյս,
դրին զիս ի մէջ գբոյս,
ահա՛, որ եկայ յայգւոյս,
այս իմ նորաշէն տներոյս:

Ծաղկունքն վերացաւ յայգւոյս,
վարդն թափաւ իմ այգւոյս,
ցանկն քակեցաւ այգւոյս,
ահա՛, որ եկայ յայգւոյս:

4. ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ՏԱՂԵՐԳՈՒՆԵՐՈՒՆ ՎԵՐՋԻՆ ԽՈՒՄԲԸ

Հոգևորական տաղերգուներու վերջին խումբ մը կներկայացնեն ԺԷ և ԺԸ դարերուն մեջ ապրած ու գրած հոգևորականները կա՛մ մայր հողին վրա, կա՛մ հեռավոր օտարության մեջ: Իրենց մասին լուրջ տեղեկություններ չունինք. անուններ կհիշատակվին տասնյակի մը չափ: Ամեն մեկեն հասած է մեր ձեռքը մեկ կամ երկու կտոր տաղ. դժվար է ամբողջական պատկեր մը կազմելը:

Տաղերուն մեկ մասը սիրային են նորեն և իրենց գրական արժեքով չեն հասնիր նախորդ խումբին. լավագույն պարագային կկարդացվին. միևնույն պատկերները, միևնույն մակդիրները, միևնույն համեմատությունները, որ հետզհետե կդառնան տափակ ու անախորժ:

Կհիշվի Բերդակցի սարկավագ մը, կհիշատակվի Ղազար Սեբաստացի մը, կա Վարդան մը, որոնց անունով սիրային երգեր կան:

Այս խումբի բերած նորությունը ավելի նկարագրական է: Ստեփաննոս մը աշնան ու գարնան իրար հաջորդելը կնկարագրե կես մը իրական, կես մը այլաբանական՝ մարդկային կյանքը ակնարկելով:

Դավիթ Սալնաձորեցին կգովե ծաղիկները, որ շատ հետաքրքիր է դուրսով ու ներսով: Իբրև չափ կգործածե ամենեն երկար տողը ութը հատվածով, յուրաքանչյուր հատվածը երկու վանկե, ուրեմն 16 վանկանի տողերով: Իսկ ներքուստ բազմաթիվ ծաղիկներու անուններ կուտա իրենց տեսքովն ու հատկություններովը, որ ինքնին հետաքրքիր ուսումնասիրության նյութ է: Ամբողջը գրված է միապաղաղ ուն հանգով:

Հովհաննես մըն ալ ուզած է թռչունները նկարագրել նույն ձևով.

Կամիմ գովել զհաւքն հաւսար
ուրախութեան մարդկան համար:

Բացի քանի մը տողերե՝ ո՛չ նկարագրածը, ո՛չ ալ երգածը երևելի բան մը չէ:

Եվ ընդհանրապես զգացումներու քնարական արտահայտութենեն և բնության կենդանի պատկերացումեն բույսերու և կենդանիներու բնապատմական նկարագրության անցնիլը անշուշտ որ ինքնին խեղճացում մըն է արդեն ստեղծագործության:

Այս խեղճացումը կդառնա գեղարվեստական տափակություն, երբ Մինաս Թոխատցին, Առաքել մը, Մարտիրոս մը կսկսին երգել Հարիսան, նկարագրել իրենց արկածային ցավը կամ գանգատիլ ստանավորով ճանճերեն ու լվերեն կամ տաղերգել իրենց «չախուն»:

Հասած ենք հոգևորականներու գրչով աշխարհիկ քնարերգության վերջին: Նյութ մը, որ արդեն սկիզբեն ի վեր իրենցը ըլլալու չէր, քանի որ իրենք իրենց ուխտով աշխարհեն քաշված մարդիկ են և աշխարհայինը կարհամարհեն:

Հիվանդ երևույթ մըն է, երբ կուսակրոնությունը կոչում ընտրած և իր անձն ու հոգին Քրիստոսին և անոր եկեղեցիին նվիրած մեկը հանկարծ կելլե աշխարհային վայելքները, սերն ու զվարճությունները կերգե:

Հոգևորականության բնական բաժինը քնարերգության մեջ աստվածայինի ու երկնայինի երգը պիտի ըլլար կամ այդ ուղղությամբ հորդոր ու քարոզ ու փիլիսոփայություն:

Շատ վիրավորիչ բան մը ունի իր մեջը, երբ երդում կուտես սրբություններուդ ու ժողովուրդիդ դեմը, որ թողնես պիտի աշխարհը, մարմինն ու երկրայինը և այդ խոստումով կդառնաս կուսակրոն, բարձրադիր հոգևորական անձ, եպիսկոպոս, կաթողիկոս և քու գահիդ բարձրութենեն կխնդաս ամենուն քթին՝ և՛ քու ժողովուրդիդ, և՛ քու Աստծուդ: Եվ այս չափը կարծես քիչ ըլլար դեռ՝ կելլես հրապարակով կտաղերգես քու խաբեբա և ուխտադրուժ վարմունքդ:

Մեր հոգևոր հայրերու տաղերգության գեղարվեստական ու պատմական գնահատանքի ժամանակ իրավունք չունինք հարցի այս բարոյագիտական կողմին վրայեն լռությամբ անցնելու, ինչպես որ եղած է մինչև հիմա մեր գրականության մեջ:

Վերջին հոգևորական խումբի տաղերեն կդնեմ միայն Դավիթ Սալնաձորեցիի «Գովասանք ծաղկանց»-ի սկիզբն ու վերջը: Ստեփաննոսի տաղերն ալ անարժեք չեն:

ԳՈՎԱՍԱՆՔ ԾԱՂԿԱՆՑ

Գարուն տարի, ամիսքն են ճիւղ, սեաւ ու սպիտակ պտուղ, չարուն.
երկոտասան ամիսք որ կան, մարտն է խարիսխ հիմն տարուն.
յորժամ մարտին ամիսն գայ, տէրն հրաման կու տայ հողոյն,
հողն ի քնոյն հետ կու զարթնի, ջաբայ կու տայ բոյս եւ տնկոյն.
բուսնին, գետնէն ի վեր կու գան, կանաչ հագնին բոյսքն պիթուն.
ապա օդոյն հրաման կու տայ, որ կը թափէ զցօղն ի յամպոյն,
ցօղէ, աշխարհս ցնծուցանէ, տաստուր լինի ծաղկըներուն.
ուրախանայ երկինք, գետին բուրէ հոտըն անմահութիւն:
Ծաղկունք բուսնին հազար-հազար, ցեղ-ցեղ ներկած եւ գոյնզգոյն.
թիւրլիւ-թիւրլիւ հոտեր ունին, մինն քանց միւսն սիրուն:
Նախ ձնծաղիկն եւ ջրիկտամ, բարդն ու խաժուակն յառաջագոյն,
տքա չորսն միաբանին ու ձայն ածեն ծաղկըներուն.
«Ծաղկո՛ւնք, զարթի՛ք ի խոր քնոյն, քանի՞ պառկիք ներքեւ հողոյն,
զարթի՛ք, աշխարհս ծաղկեցուցէ՛ք, բիւրք եւ բիւրոց անթիւ անհուն»:
Ապա բուսնին ծառք եւ տնկոյք, ծաղկին ծառերն եւ պտղատոյն.
յետոյ բիբղօշն ու քոքոռոջն կու ջահառին ի հետ ամպոյն.
ցինկն դեղին ծաղկի, ցնծայ, փայլէ, ժպտայ մէջ ջրերուն.
Ջուրն ու չայիր-չիման ծաղկունք ցնծան ի հետ ձնաբերոյն.
լեռն ու մարմանդ ծաղիկ դառնայ ծաղկունք ծաղկին ի սարերուն,
ծիծաղին սարն ու ձոր ծաղկօք, ծափ զարնեն, ծփան բիւրագոյն,
կարմիր կակաչն, ալ ու դեղին, մօռ ու մախմուր է զարդարուն.
սումբուլն մանաւուշ է հագեր, զըմըզ է եօթնադրրանց արուն.
Հասամ ծաղիկն է փոշատել, բուսել հետ մոշին, մորենւոյն.

պուտն ու պուտվարդն ու մատուտիկն եւ այլ ծաղկունք բացուին
սիրուն.
եղան ծաղիկն է խիստ գեղին, գոյնն է գունով քանց ծիրանուն՝
անջրդի տեղն կու բուսնի, կու ժրանայ ամրան չորոյն.
....
Սայնաձորցի սարկաւագ. որբ Դաւիթն եմ անգէտ գրոց բաներուն.
կեանքս նման ծաղկներուն, որ կը բացուի առաւօտուն
եւ չորանայ մինչ իրիկուն.
շատ դատեցայ թէ գլուխն առնում ծաղկներուն,
ծաղկունք, որ վարդ են աշխարհիս, օրինակ երկնից աստղերուն,
սակայ ծաղկունքս գովեցի, բազումս մնաց վարպետներուն:

ՁՄԵՌ ԷՐ, ԵՂԱՒ ԳԱՐՈՒՆ

Ձմեռ էր, եղաւ գարուն, ցամքեցաւ ձիւն սարերուն,
փթթեցան ծառերն ամեն, տերեւ հագան գոյնզգոյն,
սոխակը գիշերն ի բուն կը ձայնէ դալար ճիւղերուն:

Ձմեռ էր, եղաւ գարուն, կանչըցաւ երես դաշտերուն,
ծիծառը դրաւ իր բոյն, կ'երթայ ու կու գայ մեղուն,
կը թռչի սարերն ի վեր, որ քաշէ հիւթ ծաղկըներուն:

Ձմեռ էր, եղաւ գարուն. փա՛ռք արարիչ Աստըծուն.
մանուկները սարերն ելան մէջ ծաղկաւէտ խոտերուն,
կը խայտան ու երգ կ'երգեն նման աշխուժ հաւքերուն:
ՍՏԵՓԱՆՆՈՍ

5. ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ

Հավանական է, որ վերի հոգեւորական տաղերգուներուն ժամանակակից ունեցած ըլլանք նաեւ քանի մը աշխարհական տաղերգուներ, որոնց անուններն ու տաղերը հասած չեն մեզի կամ դե՛ռ հասած չեն մեզի:

Առայժմ մեր ձեռքը եղած թերատ նյութերը աչքի առաջ

ունենալով՝ մեր բարբառական գրականութիւնը իբրև աշխարհական տաղերգու ունի երկու անուն. տաղերգուներուն սկիզբը՝ Ֆրիկ, տաղերգուներուն վերջաբան՝ Նաղաշ Հովնաթան:

Նաղաշ Հովնաթան ապրած է ԺԷ դարու երկրորդ կեսին և ԺԸ-ի առաջին քառորդին: Տերտերի զավակ, ինքն ալ սարկավագի աստիճան ունեցող և մեջեմեջ պատարագի առեն սպասավորող: Հորը պես ինքն ալ նաղաշ է, նկարիչ, եկեղեցիներու պատերը նկարազարդող ու կենդանագրող: Ե՛վ երգիչ է ձայնավոր, և՛ նվագող, և՛ տաղեր հորինող, այսինքն՝ գեղարվեստի մարդ:

Եվ եղած է դուրսով ու ներսով աչքի ընկնող մարդ, ամեն կողմ լայն կապեր ունեցող, ճանչցված ու դիրքի տեր, այսինքն կյանքի մարդ:

Հաջողությունը և զվարթ բնավորությունը սորվեցուցեր է նայիլ կյանքին հաշտ և ուրախ, վերցուցեր է կյանքեն, ինչ որ կյանքը տալ կրնա: Եվ ըմբռներ է, որ մարդս ինքը պետք է լեցնե իր կյանքն ու իր հոգին, ամեն մեկը իր գիտցած կամ կրցած ձևով:

Հովնաթանը լեցուցեր է գեղարվեստով ու քեֆով. աչքի գեղարվեստ ու գրչի գեղարվեստ. և կերուխում ու խրախճանք, բայց շատ մարդավայել կերպով, միշտ գրավչության սահմաններուն մեջ ու չափը պահելով, որ բոլոր գեղարվեստներուն ալ հիմնական պայմանն է: Կերուխումն ալ եղած է Հովնաթանի համար տեսակ մը գեղարվեստ. իր սիրելիներուն հետ, իր բազմաթիվ բարեկամներուն հետ, իր պարտեզին մեջ, իր մառանի ու հնձանի գինիներով և երևի իր կնոջ պատրաստած և իր իսկ ընտրած ուտելիքներով, երգ ու նվագ, խոսք ու կատակ, իրարու համար երկար կյանք ու առողջություն մաղթելով, աշխարհքին խաղաղություն և ամենուն համար բարիք ցանկալով:

Այս բոլորեն ետքը պետք չէ զարմանանք, որ Հովնաթանի երգերուն մեջ սիրված ու հաճախ կրկնվող նյութը խրախճանքի ու կերուխումի նկարագրությունն է. ուրախության երգեր, միշտ մաքուր ու կոկիկ:

Երգերուն մյուս կեսն ալ բնականաբար սերն է. գրված են միշտ խայտուն ու ներդաշնակ: Ինչ որ իր սիրո խոսքին կվերաբերի գեղեցիկը փնտրող աչքեր ունի և հոգի, որ շատ բնական է ու

վայել նկարչի մը համար. և ունի մեջեմեջ աղւոր տողեր և սիրուն արտահայտություն. բայց ընդհանուր առումով հին տողերեն ելող տողեր են ու պատկերներ: Եվ օրվա սերն է իր երգած սերը. «խմ նո՛ր սիրելի» կկրկնվի հաճախ. «խակ կուրծքեր» ալ կան անոնց շարքին մեջ, որբևայրիներն էլ կան, օտար գոզալներն ալ կան. սերը անոր համար նկարելու արվեստին կնմանի. կհավնիս, կնստիս նկարելու, ավարտելուդ պես կդնես մեկ կողմ ու կանցնիս նոր պաստառի:

Կինը գովող երգերուն մեջ մասնավորապես հետաքրքիր է Թիֆլիսի գեղեցկուհիներուն վրա գրած իր ստանավորը: Հովնաթանը գեղեցկության քովեն անտարբեր անցնիլ չի կրնար, Թիֆլիսի գեղեցիկները ալ մասնավոր կերպով հուշակավոր են և Թիֆլիսը քեֆը սիրող աշխարհ է:

Անշուշտ, զգացումը զգացում է, և վայելքի երգիչն ալ երգիչ է. և մեր Հովնաթանն ալ ճաշակով ու չափով երգել ու վայելել գիտե: Սակայն հոգեբանությունն ալ իր օրենքներն ունի: Վայելքը, լիացումը, ունենալը, իր տաղանդին ու իր զգացումներուն հետ խաղալը չեն տար գրչին այն թափը, որ անհրաժեշտ է բարձրերը խոյանալու համար, որովհետև կնկարագրե արդեն հասած, ձեռք բերված վիճակներ: Մինչդեռ մարդկային հոգին լարողն ու քաշողը բանի մը հասած ըլլալը չէ, այլ բանի մը հասնելու ձգտիլը:

Մարդը գեղեցկացնողն ու բարձրացնողը իր ձգտումն է, իր թափած ճիգերը, իր մագլցիլը, իր տառապիլը: Եվ ինչքան դժվար ու տաժանագին է անցնելիք ճամբան, այնքան մեր ունեցած հետաքրքրությունն ու գնահատանքը կբարձրանա: Եվ ճիշդ ատոր համար ալ գրագետներն ու արվեստագետները բնազդորեն կամ բնականորեն շարունակ իրենց հերոսներու այդ ճիգերն ու պայքարումներն է, որ կնկարագրեն: Հանգստի, վայելքի, հասած ըլլալու ու երջանկության վրայեն արագ կսահին, թեթև կշոշափեն:

Վայելքի ու խրախճանքի, խաղի ու զվարճության համար գրված երգերն ու երկերը խորք չունին և որոշ միջակութենե մը վեր դժվար կբարձրանան, ինչքան ալ որ շնորհք ու արվեստ ունենա հեղինակը:

Գեղարվեստները տենչանքի, կարոտի, մաքառումի ու տառապանքի պատկերացումը քանդակելու համար են ստեղծված:

Մեր Նաղաշ Հովնաթանը ապրած է դառն, սիրված ու փնտրված, կյանքն անցուցած է կարծես խաղի պես, ասիկա իր անձնական բաղդն ու առավելությունը: Բայց իր երգերը, որոնք հղկված են, կոկիկ, հաշտ ու բարի ու տեղ-տեղ շատ հաճելի, չունին ու չէին կրնար ունենալ գեղարվեստական ավելի բարձր թռիչք:

Կդնեմ իրմեն ամենեն հաջող մեկ-երկու երգեր, մեջեն քանի մը տուն փեղչած.

ԲԱՑՈՒԵ՛Լ Է ՎԱՐԴԸ

Ասել ես թէ գարնան վախտը,
սիրակա՜ն, ամա՜ն,
որ բացուի մեր պաղչին վարդը,
քեզ ցոյց կու տամ ծոցիս զարդը,
սիրական, ամա՜ն,
ամա՜ն, ե՛կ պաղչէն, այս է լաւ վախտը,
բացուել է վարդը:

Վարդը ղրկեմ քեզ կոկոն թազա,
սիրակա՜ն, ամա՜ն,
դրեմ թղթով սիրոյ արդը,
ե՛կ պաղչէն, բե՛ր ըրախ-մազա,
սիրակա՜ն, ամա՜ն,
ամա՜ն, ե՛կ պաղչէն, այս է լաւ վախտը,
բացուել է վարդը:

Վարդագոյն երեսդ է փայլուն,
սիրակա՜ն, ամա՜ն,
իմ գեղեցիկ Նաղլու խաթուն,
ահա՛ եղեւ օրհնեալ գարուն,
սիրակա՜ն, ամա՜ն,

ամա՜ն, ե՛կ պաղչէն, այս է լաւ վախտը,
բացուել է վարդը:

Վարդով գլուխդ զարդարէ՛,
սիրական, ամա՜ն,
ե՛կ, իմ խնդիրքս կատարէ՛,
ինձ այս տարտէս ազատ արե՛,
սիրական, ամա՜ն,
ամա՜ն, ե՛կ պաղչէն, այս է լաւ վախտը,
բացուել է վարդը:

ԵՐԳ Ի ՎԵՐԱՅ ԳՈՒՐՋԸՍՏԱՆԱՅ ԳՈԶԱԼՆԵՐՈՒՆ

Գովեմ սրտիւ ուրախական
Թիֆլիս քաղաքն պատուական.
յույժ գեղեցիկ են, սիրական
Գուրջըստանայ գոզալներն:

Ինքնագոյ ջերմեռանդ Համամ,
մէջի խամթուններն Թամամ,
սիպտակ պողաղ, բոլոր չամամ,
Վրաստանայ արմաղաններն:

Կարմիր երես նման վարդի,
ինչպէս ծաղիկ ծաղկազարդի,
ուշ ու խելք կու տանին մարդի,
Գուրջըստանայ գոզալներն:

Ղալամ ունքեր կապած կամար,
աչքերն վառ չամախ զամար,
կապեր են մուրասա քեամար
Վրաստանայ արմաղաններն:

Վարսերն դաստա ոլորած,
երեսը լուսին է բոլորած,
շատ մարդ է տեսած, մոլորած
Գուրջըստանայ արմաղաններն:

Տեսօք են ամենն Հասարակ,
պոյն ու ջամալն մուպարակ,
բատանըն լայն, մէջքըն բարակ
Գուրջըստանայ գոզալներն:

Մէջլիս նստին սազով, դամով,
լեզուն քաղցր, խօսքն Համով,
գինի խմեն ոսկէ ճամով
Վրաստանայ արմաղաններն:

Սիրամարգի նման քայլեն,
տեսնողքըն զարմանան, մայլեն,
աստղանման գունով փայլեն
Գուրջըստանայ գոզալներն:

Ես Նաղաշ եմ, մեղաց ծով եմ,
նոցա սիրուն գինով եմ,
խապար չեմ թէ ինչպէ՞ս գովեմ
Վրաստանայ արմաղաններն:

ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Ո՛վ եղբարք, նստեալ էք ծաղկեալ ծառի տակ.
ձեռքերնիդ կ գինի կարմիր ու յըստակ,
գինւոյ մէջն անկանի ծաղիկ սպիտակ.
խմե՛նք, եղբա՛րք, գինի. մեզ անուշ լինի.
ածէ՛ք, խմենք գինի. բանն Աստուած շինի:

Վաղիւըն ո՛չ գիտենք, թէ զինչ ծնանի,

մարդուս կեանքը վայրի ծաղկի նմանի,
որ այսօր բացուել է, վաղիւըն անցանի.
խմե՛նք, եղբա՛րք, գինի. մեզ անուշ լինի.
ածէ՛ք, խմենք գինի. բանն Աստուած շինի:

Առէ՛ք կարմիր գինի ու լցէ՛ք շուշով,
բերե՛ք թասա գաւըն սինի սարխուշով,
ղալլի փլաւ ձգէք մեխակով, նուշով,
խմե՛նք, եղբա՛րք, գինի. մեզ անուշ լինի,
ածէ՛ք, խմենք գինի. բանն Աստուած շինի:

Թ՚ող չիման տեղ նստինք, ջուր լինի եւ խոտ,
կարմիր գինի խմենք մէկզմէկի մօտ,
միմեանց նուիրենք վարդ անուշահոտ.
խմե՛նք, եղբա՛րք, գինի. մեզ անուշ լինի.
ածէ՛ք, խմենք գինի. բանն Աստուած շինի:

Այլ եւ խաղաղութեամբ խմելն է հալալ,
ո՛չ հարբել, ո՛չ կռուել եւ ո՛չ բարկանալ,
պարկեշտութեամբ ըմպել, սիրով զուարճանալ.
խմե՛նք, եղբա՛րք, գինի. մեզ անուշ լինի,
ածէ՛ք, խմենք գինի. բանն Աստուած շինի:

ԶԱՏԻԿՆ ՀԱՅՈՑ

Ուրախանան մարդիկք, մանկունք եւ աղայք.
զարդարեալ ցնծան եւ պարեն կանայք.
խաչապաշտք խնդան, եւս առաւել Հայք,
որք են քրիստոնեայք:
Աւետեաց օր է Զատիկն Հայոց.
գովե՛մք Զատիկն Հայոց:

Վերանայ ձմեռն եւ գայ ամառըն,

Հասանի գինին եւ թազա զառըն,
կանաչի խոտն եւ ծաղկի ծառըն,
տերեւախառն:
Քաղցր եւ անուշ է Զատիկն Հայոց,
գովե՛մք Զատիկն Հայոց:

Առեալ քահանայք խաչ-աւետարան,
օրհնեն զերեզման, տուն եւ անդաստան.
ամեն մարդ շրջի ծաղկանց բուրաստան՝
երկիր Հայաստան:
Շնորհ աշխարհի Զատիկն Հայոց,
գովե՛մք Զատիկն Հայոց:

Թռչունքն խայտան, խօսի պլպուլն,
փայլի մանուշակ, բացուի սմբուլն,
սերմանիք ցանեն, աշխատի ցուլն
բոլոր աւուրն:
Առատ գարուն է Զատիկն Հայոց,
գովե՛մք Զատիկն Հայոց:

Աղբերք յորդորին եւ հալի սառն,
Քրիստոս զենուի, Աստծոյ գառն,
քահանայք երգեն երկնից բարբառն
հրեշտակախառն:
Դրախտի նման է Զատիկն Հայոց,
գովեմք Զատիկն Հայոց:

Դ. ԱՇՈՒՂԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

1. ՏԱՂԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ

Ուրեմն դեպի ԺԸ դարուն կեսերը կամաց-կամաց կմարի միջնակ հայերենով եղած տաղերգությունը, այսինքն՝ բարբառով գրված տաղեր կարդացվելու համար:

Կմարի, որովհետև թե՛ իր գրողները և թե՛ իր կարդացողները թիվը շատ էր սահմանափակ, որովհետև իր մշակած նյութն էր սահմանափակ և իր մշակման ձևերն ու արտահայտությունները սպառված էին. Նոր եկողները կուտային հինին կրկնությունը:

Թուրքական և օսմանյան մեր կաշկանդված կյանքին ու նեղ միջավայրին մեջ այն ժամանակվա ուսման և մտավոր-զգացական վիճակը անկե ավելի տարբեր բան մը արտադրել չէր կրնար: Կիսաքաղքենի, կիսահոգևորական, կիսահայկական ու կիսաարևելյան ստեղծագործություն մըն էր մեր միջնակ հայերենով տաղերգությունը, որ քանի մը դարերու կրկնություններով ու իրարու նմանվելով՝ դարձեր էր արդեն շաբլոն: Ո՛չ քաղաքական, ո՛չ մտավոր, ո՛չ ալ կենցաղի նոր փոփոխություն մը չկար, որ թարմ հոսանք մը բերեր տաղերգության, նոր ձգտումներ, նոր դրդում, նոր ճիգ ու որոնում:

Ֆրիկի անգամ մը միայն զարկած բողոքի ու խուլ ընդվզումի լարերուն այլևս անկե ետքը ոչ ոք մատ չէր դպցուցած: Քնարին վրա կհնչէր միայն վայելքի լարը: Կին ու գինի և ուտել: Ստրկությունը, տիրող բռնակալներուն ճաշակը, մտքի ու շրջապատի նեղ ու թշվառ առօրյա կյանքը այս տեսակ տաղերգություն մը կրնար ներշնչել, ավելի վեր ու ավելի անդին տեղ չուներ:

Ամբողջ նախաթուրքական դարերուն մեջ գրականությունը, գրի հնարված օրեն սկսած, երկնքի, կուսության ու աշխարհանքի փառաբանությունն էր եղած և անտեսում ամեն մարդավարի վայելքի ու հաճույքի, և այդ ուղղությամբ գրություններու ու տառապանքի գագաթնակետը եղած էր Նարեկացին: Անկե ետքը սակայն արագ կերպով եկած էր էջքը: Թուրքական դարերու գրականության էությունը խորքին մեջ նախորդ դարերու հակահարվածը ըլլար կարծես. կարծես տասը քրիստոնեական դարերու ճգնավորական քնարերգության վրեժը հանել կուզեին մեր տաղերգուները:

Կյանքի մեջ ամեն բան առաջ կշարժվի ելք ու էջքով. ամեն հոսանք ալիք մըն է, ելք ու էջք: Քրիստոնեական խստաբարո հոգեբանական այտուցքին հաջորդած էր վայելապաշտ դարերու գո-

գավորումը: Եվ ահա հիմա հագեցած էին արդեն այդ վայելքի գովքեն ու կանչեն. և բնազդորեն քրիստոնեական նոր վերելքի մը պահանջը խուլ կշաժվեր հոգիներուն մեջ:

Գրաբարը կվերածներ ժէ դարու կեսերեն: Գաղթական կրոնական գրականություն մը ծայր կուտար գրաբար լեզվով, ինչպես տեսանք, և տպագրությունը հին ու նոր գրքեր կղրկեր հեռավոր հեռուներեն: Ամեն քիչ թե շատ շարժում ու ձգտում ունեցող հոգի դեպի արևմուտք կդարձներ իր երեսը՝ հոնկե եկող ձայներուն իր ականջը սրած:

Մարդիկ նորեն կսկսեին կարդալ հին գրքերը նոր տպագրությամբ, հին լեզուն նոր մշակումով և հին կրոնաբարոյական ըմբռնումները նոր արևմտյան ազգային հայրենասիրական գունավորումով: Անշուշտ դեռ աղոտ էր ու շատ դանդաղ այդ փոփոխությունը մեր հայրենի հողերուն վրա և դեռ շատ քիչերուն համար: Բայց ճիշդ այդ քիչերն էին, որ տաղեր կհորինեին ու պիտի հորինեին:

Բարբառ ու տաղերգություն դրված էր մեկ կողմ. գրաբարի վերածնունդն էր, որ կուգար հեռվեն հորդ հոսանքով ու հաղթական կեցվածքով: Ով որ գրիչ շարժել կրնա՝ կսկսի նորեն գրաբար գրել, Աստվածաշունչը վերապատմել և կիսովին մոռցված հին ու սուրբ դեմքերը ոգեկոչել և անոնց հետո ալ ավելի ևս մոռցված Հայկ, Արամ, Տիգրանը:

Բայց այս ճամբով քալել կրնա միայն ան, ով գրիչ շարժել կրնա, ով գրաբարը հասկընալ և ով գրաբարը գրել կրնա, այսինքն մատի վրա համրվող բացառիկներ:

Սակայն ասոնց քովը կան նորեն մատի վրա համրվող ուրիշ բացառիկներ, որոնք գրաբարյան այդ կարողությունները չունին. շատ քիչ գիր գիտեն, կարդալ գիտեն ու չգիտեն, բայց ըսելու, հորինելու պահանջը կամ դյուրությունը ունին: Զափ ու հանգ ու երաժշտություն ունին իրենց ականջին մեջ, այլև նվագարան մը իրենց մատներուն տակ:

Բարբառով երգեր հորինելու արվեստը հիմա անոնց կմնա ժառանգություն: Պարսիկ բառով մը աշուղ կկոչվին ասոնք:

2. ԱՇՈՒՂՆԵՐ

Ժողովուրդի մէջ շրջող և սիրային կամ այլ տեսակի երգեր հօրինող կամ պարզապես կրկնող թափառական մարդիկ, այսինքն՝ հին գուսաններուն նմանող ժողովրդական երգիչներ մենք անտարակոյս ունեցած ենք միշտ նաև մեր պետականութենեն զուրկ դարերուն, անշուշտ ավելի խեղճ ու սակավաթիվ:

Թուրանական դարերը, ինչպես մեր լեզվին, վարք ու բարքին վրա գրեր են իրենց կնիքը, այնպես ալ ուժեղ կերպով ազդած են մեր այդ թափառական երգիչներու նոր սերունդներու լեզվին ու ճաշակին վրա: Մանավանդ որ ասոնցմե շատերը և հատկապես օսմանյան տիրապետության վերջին դարերուն միայն Հայերու համար չէ, որ կերգեին: Շատ ավելի շահավետ գործ էր թուրքերեն երգել կարողանալը, թուրք տիրապետողներուն հաճոյանալը:

Եվ ահա՛ իրողությունն այն է, որ ԺԸ դարուն կան ու կհիշվին արդեն աշուղ անունով թափառական երգիչներ, որոնք թուրք ու պարսիկ արվեստի ձևերով, թուրք ու պարսիկ ճաշակով երգել ու նվագել գիտեին. և այդ ոճով երգեր հօրինել թե՛ թուրքերեն և թե՛ հայերեն, Վրաստանի սահմաններուն մէջ՝ նաև վրացերեն:

Ձախանորեն հօրիներ ու երգեր են մեծ մասով անգիր. բայց նույնիսկ գրի առնված պարագային իրենցմե ետքը իրենց թողած «տաղարանները» ո՛չ հավաքված էին, ո՛չ ալ գնահատված իրենց ժառանգորդ հաջորդներեն. կորսված են:

ԺԹ դարուն մէջն էր, որ ռուսներու Կովկաս գալովը և նոր արթնցած գրաբար գրական շարժումով, ինչպես և ազգային հետաքրքրության բարձրացման հետևանքով մասնավոր ուշադրություն կդարձվի նաև այս ժողովրդական թափառիկ երգիչներուն վրա. մանավանդ որ թուրքերեն երգելը հետզհետե կդառնա երկրորդական ու ավելորդ և աշուղները կսկսին հետզհետե հայանալ, այսինքն՝ կերգեն հայերեն և ավելի սերտ կկապվին հայ իրականության ու ժողովրդին:

Այնպես որ ԺԹ դարու առաջին կեսեն տասնյակի մը չափ աշուղներու անուններ և աշուղային հայերեն երգեր հասած են մեզի և առնված են զանազան գրական հավաքածուներու և տպված երգարաններու մէջ:

Այդ տպված կտորները մասնավոր արժեք ներկայացնող բաներ մը չեն: Սկիզբները ավելի ժողովրդական անգիր բանահյուսության կտորներուն կնմանին, իսկ դեպի ԺԹ՝ դարուն կեսերը քիչ-քիչ ավելի գրական շեշտ կառնեն. կրնդգծվի ազգասիրությունը, ուսումնասիրությունը, կգովաբանվին քանի մը նշանավոր Հայ զորավարներ՝ ռուս բանակներուն մեջ անուն Հանած, այլև քանի մը աչքի ընկնող Հոգևորական դեմքեր: Իրենց գործածած լեզուն որևէ բարբառ մըն է՝ նայելով երգչի ծագումին:

Իսկ արևելյան արդի նոր գրական լեզվի արմատ բռնելեն ետքը Հետզհետե կշատնա գրական լեզվով կամ գրեթե գրական լեզվով երգող աշուղներու թիվը, որոնք գյուղե գյուղ ու քաղաքե քաղաք կպտտցնեն և՛ իրենց Հնարած, և՛ իրենց վարպետներեն յուրացուցած երգերը: Նյութը մեծ մասով սիրային, մյուս մասն ալ պատասխան է օրվան Հրատապ Հարցերուն կամ գովասանք ուսման, ազգասիրության կամ զանազան կատակերգեր:

ԺԹ՝ դարու լիննսնական թիվերեն սկսած գլխավոր իրենց Հանրային նյութը Հայ Հեղափոխական շարժումներն են և Թուրքիայի մեջ տեղի ունեցող ֆեոդալական ընդՀարումներուն նկարագրությունն ու գովքը, ինչպես և աչքի ընկնող Հերոսներուն պանծացումը:

Այնպես որ աշուղը Հետզհետե դարձած է անպաշտոն պրոպականտիստ մը և՛ Հայերեն գրական լեզվի տարածման տեսակետեն, և՛ Հեղափոխական դեպքերը ժողովրդականացնելու տեսակետեն: Հիմա ալ դուցե պոլշևիզմի փառքերուն ու Հաղթանակներուն գովաբանողներն են, եթե ձայներնին բոլորովին կտրած չեն:

Այս վերջին տեսակի աշուղներեն մեկ-երկուքը ստացած են նույնիսկ որոշ անուն ու դիրք արևելյան մեր արդի Հայ գրականության մեջ, ինչպես Մատաթյանն է ու Ջիվանին, որոնց երգերեն տպված շատ բաներ կան. մեկ-երկու երգ մտած են նույնիսկ գրական Հավաքածուներու և դասագրքերու մեջ, օրինակ՝ Ջիվանիի «Ձախորդ օրերը կուգան ու կերթան» Հայտնի երգը:

Այսինքն՝ աշուղը արդեն դարձած է ինքնաՀատուկ գրական դեմք մը:

3.ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

Աշուղ մըն է եղած նաև Սայաթ-Նովան և առաջին աշուղը, որուն անունն ու գործը մեզի հայտնի է: Ապրած է ԺԸ դարու ամբողջ ընթացքին և դարու ճիշդ կեսին իր փառքի գագաթնակետին է: Ունեցած է մեծ հռչակ թե՛ Թիֆլիսի հասարակ ժողովուրդի խավերուն մեջ և թե՛ Վրաստանի Հերակլ թագավորի արքունիքին մեջ:

Բայց աշուղ բառեն պետք չէ խաբվինք: Սայաթ-Նովան աշուղ է իր քեմանչով և անով, որ «մեճլիս»-ներուն մեջ կնվագե ու կերգե, այսինքն՝ իր դիրքով ու արհեստով: Մնացածի մեջ Սայաթ-Նովան ոչ միայն արտակարգ շնորհք մըն է և մեծ դեմք մը աշուղներու շարքին մեջ, այլ ընդհանրապես մեջ հին ու նոր բանաստեղծներու երկար շարքին մեջ:

Մեծ ու բացառիկ մարդիկը բոլոր ասպարեզներու վրա ալ մեծ են ու բացառիկ, ինչքան ատեն որ իրենց հատուկ ասպարեզին մեջն են ու իրենց բնական գործունեության վրա. երբ կհեռանան այդ իրենց բնական դաշտեն ու կդադրի իրենց հատուկ ուղղությամբ գործունեությունը, իրենք ալ ատով կդառնան արդեն սովորական մարդ մը. մեծն ու բացառիկը կապված է գործունեության ու ստեղծագործության:

Սայաթ-Նովան մեծ է ու բացառիկ իր կյանքի միայն այն շրջանին, երբ հասած է իր շնորհքի լիակատար տիրապետության, երբ երգն ու երաժշտությունը հորդ կըղխի իր էութենեն ուզած վայրկյանին, երբ ամենուն հիացում կպատճառե իր ներքին ուժովն ու հնարքով, երբ արքունիքի ու ապարանքներու մեջ «մեճլիսի կեան է» իր քեմանչեն, և երբ այս բոլորի հետ ու այս բոլորին խորքը բռնկած է իր հոգին բուռն սիրով մը, անշեջ հրով մը:

Սայաթ-Նովայի կյանքին այդ մեծ ու բացառիկ շրջանը, որ կքաշե մեզի, որ գեղարվեստորեն հետաքրքիր է մեզի, որուն պտուղն են իր երգերը, որով մենք ու մեծ բանաստեղծ մը կապված ենք իրարու, Սայաթ-Նովայի կյանքին այդ ստեղծագործ շրջանը տևած է հազիվ տասնյակ մը տարի: Իր երգերուն տակը դրած տարեթիվերուն հենվելով՝ 1751- են մինչև 1759 թվականը: Այդ տարիներեն առաջ ծանր ճիգերու, սովերու, պատրաստության ու

դանդաղ հասունացման ու վերելքի տարիներն են. իսկ այդ ստեղծագործ տարիներեն ետքը ինքնասպանության տարիներ են:

Ինչո՞ւ այդ վաղաժամ անհետացումը գեղարվեստի ասպարեզեն: Պալատական սովորական դավերն ու նախանձը կհեռացնեն հիսունական թիվերուն վերջը մեր բանաստեղծը Վրաստանի արքունիքեն. ըստ երևույթին ունեցած է նաև դուրսը շարք մը մանր ու խոշոր անհամություններ իր դիրքի այդ անկումի օրերուն. և այս ամենուն զույգ կերթա իր բուռն սիրո խորտակումը:

Իր սիրածը հավանորեն բարձրադիր ու բացառիկ կին մըն է ըստ իր երգերուն մեջ ըրած ակնարկներուն, որ համակրանք ու գնահատանք է ցույց տված. անշուշտ հպարտ է եղած այդ բացառիկ երգչի ծածուկ սիրովը, բայց առկե անդին չէ անցած, չէ ուզած կամ չէ կրցած.

Գիտիմ, վուր, եար, ինձ լայեղ չիս անի՝
դուն մէ թաքավուր իս, ես մէ խեղճ դավրիշ:

Ու Սայաթ-Նովան կտառապի, կերգե ու կկանչե շարք մը տարիներ ու «կբեզարի». կբեզարի կյանքեն ալ, սերեն ալ, երգերեն ալ·

Աշխարհս մէ փանջարա է, թաղերումէն բեզարիլ իմ.
մտիկ տըւողն կու խոցուի, դաղերումէն բեզարիլ իմ.
երէկ լավ էր քանց վուր էսօր, վաղերումէն բեզարիլ իմ.
մարդ համաշա մէկ չի ըլի, խաղերումէն բեզարիլ իմ:

Ուրիշ տեղ մը կըսե պարզապես.

Օխնըւի քիզ բերող մէրն, աշխարհումս դուն իս իմն.
առանց քիզ ի՞նչ կ'օնիմ սազն, կու կտրիմ սազիս սիմն:

Եվ Սայաթ-Նովան պահեց իր խոսքը. կտրեց իր գեղարվեստին լարերը, կտրեց իր մեծությունը և գոցեց իր հոգիին թևերը: Գնաց ամուսնացավ կնոջ մը հետ, դարձավ տերտեր, ունեցավ զավակներ, իսկ կնոջ մահեն ետքն ալ ձգեց տուն ու տեղ, դարձավ շուշտակ վարդապետ ու մտավ վանք և ապրեցավ երկար:

Սայաթ-Նովայի այս վարմունքը կրնա ոմանց շատ գեղեցիկ ու շատ իմաստուն երևիլ: Ճիտակը խոսելով՝ ես ո՛չ մեկ գեղեցկու-

թյուն և ո՛չ մեկ իմաստութիւն չեմ կրնար տեսնել այդ հուսահատ ու տխուր լքումին և իր կատարած դժբաղդ ինքնաոչնչացումին մէջ. միայն խորապէս կցավիմ, որ Սայաթ-Նովայի նման տաղանդի մը բացառիկ շնորհքն ու մեծութիւնը քանի մը տարիներէն անդին տեւել չէ կրցած: Անշուշտ իր մղոսի հար ներարկած դատումներն ու հակումները, իր ստացած տկրացու կրթութիւնը և իր ժամանակի տնտեսական պայմաններն ու ըմբռնումները ազդած են իր այդ վարմունքին վրա:

Իր նախապատրաստական առաջին տարիներուն կյանքը, ինչպես և իր լքումն ու հոգևորական մարդու կյանքը հետաքրքիր է մեզի իբրև կենսագրութիւն, իբրև նմուշ մը իր ժամանակի, իբրև կյանքի օրինակ, թե ինչ ելքերով ու ինչ թավալումով կհասի մարդ արարածին կյանքը: Գեղարվեստի համար հետաքրքիր եղողը կյանքի այն միակ ստեղծագործ ատանամյակն է, երբ կվառվեր իր կյանքն ու հոգին, կվառվեր ամբողջովին ու բոց-երգեր կժայթքեր: Անկե ետքը եղածը պաղ ու դժբաղդ մոխիր մըն է. մոխրացած կրակ մը, որ գուցե մեջեմեջ կմխար երբեմն, երբ իր վանականին խուցին մեջ պատեն վար կառներ սազը, իբրև կատակ, իբրև հեղ-նանք, իբրև հուշ, իբրև լքում ու գայրույթ:

Սայաթ-Նովան քանի մը տարիներու «միանվագ երգիչ» մըն է մեծ արժեքով: Եվ իր քնարերգութեան մեծ հրապույրը գլխավո-րապես երեք կետերու մեջ կկայանա:

Ամենեն առաջ՝ մարդը. մեր երգիչը հասուն մարդ մըն է. իր կյանքի ամենեն հասուն շրջանին, իր կարողութիւններու խոր ու բեղուն շրջանին. և իր ամենեն բարձր արտաքին դիրքին վրա, ուր «աշուղ» մը հանիլ կրնար այն ատեններ: Եվ այս բոլորին հենած իր հոգեկան բարձր վիճակը, ինքն իր մասին ունեցած իր ըմբռնումը: Գիտե իր դիրքը, իր շնորհքն ու ուժը, իր ներքին ստեղծագործական հարստութիւնը ու բարձր կդնահատե իր գեղարվեստը: Եվ ատոր համար ալ վերեն կնայի ամբողջ աշխարհի վրա, ըլլա այդ աշխարհը թագավորի պալատը, ըլլա մեծահարուստի մը ապարանքը, ըլլա «խալխի» մը ծուխի ու հիացման մեջ լողացող սրճարանը: Իրավ է, բանաստեղծը տեղ մը ինքն իրեն «խալխի նոքար» կանվանե Սունդուկյանի պես. բայց այդ նոքարները նոքար են Անգլիայի

առաջին լորտին նման, որ որևէ մեկուն գրած իր նամակին տակը կստորագրէ՝ «Ձեր խոնարհ ծառան»: Իր խոհական կարծիքը իր մասին տարբեր է. ինքը ո՛չ թէ «նոքար», այլ բացառիկ էակ մըն է.

Ամէն մարդ չի կանայ խըմի իմ ջուրն՝ ուրիշ ջրէն է.
ամէն մարդ չի կանայ կարդայ իմ գիրն՝ ուրիշ գրէն է.
բունիաթս աւազ չիմանաս՝ քարափ է, քարուկրեն է:

Իր հոգիին հարստութիւնը կհամեմատէ հեռու երկիրներէն դարձող վաճառականի մը գանձերուն հետ.

Հեռու տեղացէն գալիս իմ, խնլքի ղարար չահ իմ բերի.
հուճրէս լիքն է անգին լալով, ջաւահիրճուն ահ իմ բերի.
Հինդու մէջէմէն դուս եկած ղիմեթով մաթահ իմ բերի:
Բեռնիրն վրայ չի գալիս, հակիրս է սիլա-սիլա.
անտակ ծովի մէջէն հանած ակներ ունիմ լալ ու թիլա:
Շատ մարդ էստունք կու իմանայ՝ կ՚օսէ «Հալբատ սա
ղանգին ա».
չին գիտի թէ ուչք ու միտքս հազար մէ բարաթ հանգին ա.
մարիփաթով քաղցր լեզուն դիփունի վրայ անգին ա:

Այո՛, ինքը պանդուխտ ու բացառիկ ու իր նմանը չունեցող անցյալոր հյուր մըն է այս աշխարհիս երեսին.

Նա՛ր, քու կարօտդ քաշում իմ անմահական ջրի նման,
ռահմ արա, դուռդ իմ եկի օճախի ու փիրի նման.
սէրդ սիրտս կէս է արել ջահվարդարի թրրի նման.
էշխիդ ալաւը ինձ վառից բաբելական հըրի նման:

Վունց որ կարօտ մի ուխտաւոր դուռդ է եկիլ Սայաթ-Նովէն,
անց է կացի ամէն ղարկապ, ամէն արկիլ Սայաթ-Նովէն,
թէ վուր կուրցնիս՝ էլ չիս գտնի նորից մէկիլ Սայաթ-Նովէն.
նա մէկ հատ էր աշխարհ եկաւ, քանց մէ ղարիբ հիւրի նման:

Բանաստեղծի այս ինքնագիտակից հպարտութիւնը մեզի շատ սիրելի է ու գրավիչ, երբ կզգանք, որ ուժերու հորդումին կծագի.

բնական ներքին զգացումին և կհամապատասխանի իրականության ու մեր ըմբռնումին:

Սայաթ-Նովայի երկրորդ մեծ հրապույրը իր երգած սերն է: Սիրո երգիչ է՝ կըսենք Նովայի համար. և իրավ է, քանի որ իր արհեստին և գրական ստեղծագործության կեդրոնական հիմնական նյութը սերն է, ինչպես որ կյանքի հիմնական առանցքն ալ սերն է, գրեթե ամենուն համար: Բայց հասուն ու մեծ տաղանդի մը սիրո երգերը ունին այն մեծ առավելությունը, որ մեր դեմը կբանան ապրած հոգիի մը նուրբ ծալքերը և ապրված կյանքե մը քաղված մտածումներ ու պատկերացումներ: Նովայի սիրո երգերուն մեջ միայն սերը չէ, որ կխոսի. Նովայի սիրո երգերուն մեջ Նովան է, որ կխոսի. ապրած, խոր ու խոյացող հոգի մըն է, որ կնկարվի: Եվ մենք ամենքս գլուխնիս ծռած մտիկ կընենք ու կդիտենք:

Մանավանդ որ իր զգացած, իր երգած ու իր պատկերացուցած սերը բարձր սեր մըն է, խոր ու հստակ, ազնիվ ու ազնվական ու ամբողջական նվիրում: Մեր բոլոր մյուս տաղերգուները, հոգևորական թե աշխարհական, կկրեն իրենց հոգիներուն մեջ և իրենց տաղերուն վրա հարեմական-մահմեդական սիրո ավելի կամ պակաս խորունկ ազդեցությունը: Նովայի երգերուն մեջ պարսկական արվեստի ձևերով, չափով ու երաժշտությամբ հայ հոգին ու հայու սերն է, որ կխոսի. ուր ավելի խորք կա, ավելի հոգի, ավելի հարգանք կնոջ հանդեպ և ազնիվ ու բոլորանվեր սիրո մը պաշտամունքը: Եվ ատոր համար ալ իսկույն կբռնե ու իր մագիլներուն մեջ կառնե մեջ հոգին:

Սայաթ-Նովայի երգերուն երրորդ մեծ հրապույրը արվեստագետի իր մեծ կարողությունն է. ինքը մեծ ու ճշմարիտ տաղանդ մըն է, բնածին թափով ու ջերմ շնչով. ու իր երգերուն մեջ իսկական ադամանդը կփայլի, ինչքան ալ խիճ ու դերբուկ հետը խառնելու ըլլա. իր երևակայության խաղերը, իր բանաստեղծական համեմատությունները, իր գյուտերն ու նմանեցումները, հոգեկան վիճակներու պատկերացումները, սուր ու սիրուն ցայտքեր ու խոսքեր, որ ամեն լսելուդ նորեն ու նորեն խոր հաճույք կզգաս:

Անշուշտ իր սեփական գյուտերուն ու բնական արտահայտություններուն քովը կան խոշոր չափերով հինեն ու օտարեն եկող

բառեր, պատկերներ ու համեմատութիւններ. ժամանակի ճաշակը առ էր, որ և սերտօրէն հիւսուած է իր գործածած արուեստի տեսակին և որ հիմա խիստ ծանր կու գայ մեզի ու անմարսելի: Նմանապէս շատ խորթ են մեզի պարսկերէնէ փոխ առնուած գրական ակնարկութիւններն ու կրկնութիւնները. լեզուով ալ, ոգիով ալ մեզի օտար և որ անտարակոյս շատ տեղ գրուածքին գեղեցկութիւնը կխաթարեն: Գեղեցիկ տողի մը կէսին հանկարծ կդադրի գրուածքը հայաշունչ ըլլալէ, նոյնիսկ հասկընալի ըլլալէ. պետք է դիմես պարսկագէտի կամ թուրքագէտի մը, որ իմաստը հանել կարողանաս:

Բայց իր լեզուն ու իր ոտանաւորը շատ է անուշ ու ներդաշնակ հարազատ մնացած տողերուն ու տուներուն մէջ: Կենդանի հայ խօսուածք ունի, նուրբ հնչիւններու առատութիւն և շատ աղուոր մանրահատում չափ:

Հանգի ու տաղաչափութեան տեսակէտէն ալ նորէն ձախորդը օտար չափերով ու կաղապարներով գրուած ըլլալն է ընդհանրապէս: Օտար կաղապարը աշուղի գլխուն մէջ օտար ալ պատրաստ հանգեր ունի. և ահա՛ կու գան բոլոր տուներուն եւեն «սաբաբ մի՛ անի», «ջուղաբ մի՛ անի», «քապապ մի՛ անի» խժալուր արտահայտութիւնները մեր ականջին համար: Եվ միևնոյն ժամանակ այդ կաղապար հանգերը իրենց հետ կբերեն բռնազբօսիկ ասութիւններ և բանաստեղծի բնական ու հայավարի մտածման ընթացքը կշեղեն:

Բայց վերջապէս աս է իրողութիւնը: Օտար ժողովուրդի մը մայրաքաղաքը, օտար պետութեան մը արքունիքը և ոչ-հայ քաղաքակրթութեան մը առօրյա շփումը չէին կրնար իրենց կնիքը չի դնել: Իր պետութիւնը չունեցող, իր ինքնուրոյն մշակոյթը չունեցող ժողովուրդի մը բանաստեղծը, որ օտարներու հացովն ու գնահատանքովը պիտի ապրի, կիսովին օտար մըն է, ուզենք թէ չուզենք: Սայաթ-Նովան հայերէնէ աւելի գրած ու երգած է վրացերէն ու թուրքերէն. երգած է օտար եղանակներով, սնած ու մեծցած է օտար չափերով, օտար հանգերով, օտար ճաշակով: Եվ իր հայերէն երգերուն մէջն ալ իր սիրած և ունեցած փարպետութիւններէն չելլել բնականօրէն ո՛չ կրնար, ո՛չ կուզենար:

Այս աղճատումէն ազատ մնացած մասերուն մէջն է, ըսի, որ

կերևա իր լեզվին, բարբառին, չափին ու ճաշակին գեղեցկությունը: Ինչպես և կառուցումին և մտածումին, որովհետև օտարեն առածը հետևողություն մըն է: Թեև ընդհանրապես անխտիր իր բոլոր գործներուն մեջ, բայց դուրս է վեճեն, որ իր հայ կտորներուն ու հայ տաղերուն մեջն է հատկապես, որ կցոլա իր հայու տաղանդը, հայու հոգին ու հայ արվեստը:

Մեր բարբառական անհատական քնարական գրականության ամենեն բարձր գագաթն է Սայաթ-Նովան: Իր լավագույն տողերն ու տաղերը կհավասարին հայ անգիր բանահյուսության ամենեն ընտիր քնարական կտորներուն:

* * *

Կդնեմ քաղվածորեն քանի մը տուներ ու կտորներ իր երգերեն՝ ծանոթ չեղողներուն գաղափար մը տալու համար, ճաշակ մը: Իր երգերեն մեկը՝ «Քու ասածը ուրիշ տիղ է», կդնեմ ամբողջությամբ, որ իր խորքով ու կառուցումով շատ է գրավիչ ու ամբողջական. և շատ կհիշեցնե հայ ժողովրդական «Ալ այլուղս» երգի ոգին, հյուսքը, խաղն ու շենքը:

Ձիս ասում՝ թէ լաց խի էլի.
բարով տեսայ, ի՛մ սիրեկան.
վարդի նման բաց խի էլի
        խարերով,
        խարերով.
բարով տեսայ, իմ սիրական:

Արի մէ տարտս իմացի,
էշխեմէդ համան իմ լացի,
օրս էսպէս անց է կացի
        դարերով,
        դարերով,
բարով տեսայ, իմ սիրական:

Սայաթ-Նովէն վո՞ւնց դընջանայ.
աչքիրդ ոսկէ փինջան ա.
տուշմանի լեզուն մնջանայ
    չարերով,
    չարերով,
բարով տեսայ, իմ սիրական:

❖

Աշխարհումս ա՛խ չիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ ամա.
անմահական ջրով լիքըն ոսկի փինջան իս ինձ ամա.
նստեմ, վրէս շուաք անիս՝ զարբաբ վրան իս ինձ ամա.
սուչս իմացի, էնենց սպանէ՝ սուլթան ու խան իս ինձ ամա:

Ես էս տարտին վո՞ւնց դիմանամ, մազամ սիրտս ունիմ քարա՞ծ,
արտասուքս արուն շինեցիր, խելքս գլխէս ունիմ տարած.
նուր սպաղ իս, նուր պաղչի մէջըն՝ բոլորքդ վարդով չափարած.
վրէդ շուռ գամ պլպուլի պէս՝ սիրով սէյրան իս ինձ ամա:

Ի՞նչ կ՚ուզի մէկ Հիտս խօսիս՝ թէ վուր Սայաթ-Նովու եար իս.
շուդքդ աշխարհս բռնիլ է՝ արեգակի դիմն փար իս.
Հուտով՝ Հիլ, մեխակ, դարչին, վարդ, մանուշակ, սուսամբար իս.
կարմրագուն դաշտի ծաղիկ, Հոլոտաց շուշան իս ինձ ամա:

❖

Պլպուլի Հիտ լաց իս էլի,
վարդի նման բաց իս էլի,
վարդաջրով թաց իս էլի,
    թաց իս էլի.
չկայ քիզի նման, չկայ քիզի նման,
    դուն իս աննման:

Տարոս ասիմ՝ կուլան սարեր.
Էս ի՞նչ բան էր, վուր դուն արիր.
Սայաթ-Նովուն ջունուն արիր.
Ջունուն արիր.
չկայ քիզի նման, չկայ քիզի նման,
դուն իս աննման:

❖

Աճալ քեզ ի՞նչ գնիթ իմ արի՝ կենում իս լուռ, աչքի՛-լուս.
աշխարհս աշխարհով կշտացաւ. ես քիզանից սով, աչքի՛-լուս:
Մազամ էլ ոչ ով նար չէ սիրի, էս ի՞նչ արիր, էս ի՞նչ բան ա.
սիրտս լուրի պէս խորվեցիր էշխիդ կրակով, աչքի՛-լուս.
Աստուած վկայ, խիստ դժար է, գլուխս ինչպէ՞ս դուս տանիմ.
Ես մի փոքր նաւի նման, քու էշխդ է ծով, աչքի՛-լուս:
Սայաթ-Նովէն ասաց՝ «Զալո՛ւմ, ես էն մահին մահ չիմ ասի՝
հինչափ ըլի՝ դուն վրէս լաս մազդ շաղ տալով, աչքի՛-լուս:

❖

Քանի վուր ջան իմ,
եա՛ր, քե ղուրպան իմ,
ապա ի՞նչ անիմ:
Արտասուք հանիմ,
շատ հոգուց հանիմ,
եա՛ր, դատէդ տանիմ:

Ասիր՝ ջեյրան իմ,
թող քե սէյր անիմ,
եա՛ր մտիկ անիմ:
Մո՛ւտ պաղչէն նազով,
քիզ գովիմ սազով,
եա՛ր, իլթիմազով:

❖

Երեսդ նուր լուսնի նման՝ քանի կեհայ, կու բոլորուի.
դաստամազդ նամ չի ուզի՝ առանց հուսիլ կու ոլորուի.
էնտու համար քու տեսնողն իր ճամբէմէն կու մոլորուի:

Ծուցիդ մէջն վարդ, մանիշակ, սմբուլ ու սուսան իս չինի:
Քու տէրն պաղն ի՞նչ կ՚օնէ, քու հուտըն ռեհան իս չինի,
քամին մէջն անց է կենում, մազերդ նլքան իս չինի:

❖

Ղումաշ ասիմ՝ չուրեղէն է՝ կու մաշուի.
սալլի ասիմ՝ ախըր մի օր կու տաշուի.
Ջէյրան ասիմ՝ շատ մարդ քիզ հիտ կու եաշուի.
բաս վո՞ւնց թարիփ անիմ՝ միրա իս, զոզա՛լ:

Թէ մանիշակ ասիմ՝ սարեմէն կ՚օսին.
Թէ ջաւահիր ասիմ՝ քարեմէն կ՚օսին.
Թէ վուր լուսին ասիմ՝ տարրեմէն կ՚օսին.
արեգակի նման՝ փարա իս, գոզա՛լ:

Սիրոյ սերմըն սրտիս մէջն ցանեցիր.
նազ ու ղամզով, եա՛ր, իմ հոգին հանեցիր,
էս քու Սայաթ-Նովուն դո՛ւն սպանեցիր.
գլխիդ եկած ղադէն առայ իս, գոզա՛լ:

ՔՈՒ ԱՍԱԾԸ ՈՒՐԻՇ ՏԻՂ Է

Սայաթ-Նովէն - *Ի՞նչ կ՚օնիմ հեքիմըն, ի՞նչ կ՚օնիմ ջարէն*
քու տուածն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ.
կրում է մհլամն, չի լաւնում եարէն.
քու տուածն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ:
Սիրեկանն - *Ասաց թէ՝ «Հեռացի՛, գլխէմէս գնա՛,*

քու ասածն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ.
էդ քու արարմունքդ քեզի չի մնա.
քու ասածդ ուրիշ տիղ է, ուրիշ տիղ»:

Սայաթ-Նովէն - Ասաց՝ «Էշխեմէդ չիմ հանդչում սանա.
ձեռնիրս թլացաւ՝ չէ շինում բանա.
էրուեցաւ ջիգեարս, մաշուեցաւ ջանս.
քու տուածը ուրիշ դիղ է, ուրիշ դիղ:

Սիրեկանն - Ասաց. «Իմ դիղեմէն քիզ չկայ չարա.
գնա՛, թէ խելք ունիս, գլխիդ ճար արա.
թէ չէ՝ անիլ կու տամ քիզ փարա-փարա.
քու ասածն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ»:

Սայաթ-Նովէն - Ես պլպուլ իմ, վարդս մնաց խարումըն.
կրակ դրիր սրտիս խուցի եարումըն.
վունց գրանքումըն կայ, վունց
տաւթարումն՝
քու տուածն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ:

Սիրեկանն - Ասաց թէ՝ «Բի զարար չինեցիր շահըդ.
կորեցիր ադաղդ, կորեցիր ահըդ.
մի՛ վլթի արունդ, մի՛ շանց տա մահըդ,
քու ասածն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ»:

Սայաթ-Նովէն - Ասի թէ՝ «Մաղերդ սուրմա իս անում.
հենց գիտիս՝ չիմ գիտի, եա՛ր, չիմ իմանում.
սէրդ ինձ մահ դառաւ, էլ չիմ դիմանում.
քու տուածն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ»:

Սիրեկանն - Թագաւորի թագլին լայըդ քարըն իմ.
Շիրինի պէս Փարհադի դիդարըն իմ.
ես էն գլխէն Սայաթ-Նովու եարըն իմ.
քու ասածն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ:

Սայաթ-Նովէն - Հիտըս խօսի, մի՛ կենա խռովի պէս.
տալդա տուիր, կեմիս տարար ծովի պէս.
կու մեռնիմ, չես տեսնի Սայաթ-Նովի պէս.
քու տուածն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ:

Ե. ԲԱՐԲԱՌԱԿԱՆ ՆՈՐԱՏԵՍԱԿ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՇՈՒՆՉԻՆ ՏԱԿ

ԺԹ· դարու ճիշդ մեջտեղը՝ 1840 – 1870 թվականներուն, առաջ եկավ նոր մտավորական սերունդ մը Հայության մեջ՝ Եվրոպական կյանքի ու կրթության և եվրոպական գրականության անմիջական ու զորեղ ազդեցության տակ, նոր տեսակետներով, նոր հոգեկան պահանջներով և նոր արվեստով:

Գրաբարը այդ պահանջներուն չէր կրնար բավարարել. նոր գրական լեզուներն ալ դեռ նոր կազմվելու վրա էին և դեռ հարկ եղած չափով իբրև կենդանի ու տևական իրողություն մը չէին զգացվեր գրել ուզողներու կողմեն: Իսկ նոր հասանքի ամենեն զորեղ պահանջը ժողովուրդին ու իրական կյանքին հյուսված ու մոտիկ մնալն էր և գրականության մեջ կյանքի իրական պատկերը տալը:

Եվ գրիչ վերցնող նոր երիտասարդ մարդիկ, իրենց պատկերել ուզած կյանքն ու անձերը հնար եղածին չափ իրականին մոտիկ պահելու ջանքով, սկսան գործածել կյանքի մեջ խոսված լեզուն, այսինքն՝ խոսակցական հարազատ բարբառ մը կամ գեթ բարբառախառն ու աշխարհիկ արտահայտական ձևերով հարուստ լեզու մը: Այսպեսով մինչև մեր գրական նոր երկու լեզուներուն ամրանալը քառորդ դարու մը չափ առաջացավ նորատեսակ ծաղկում մը բարբառական գրականության. վերջին ծաղկում մը նոր տեսակի եվրոպաձև երկերով:

Այդ ուղղությամբ կարևոր են գլխավորապես չորս հեղինակ:

Առաջինը Ղևոնդ Ալիշանն է (1820 – 1901), որ լեռնակուտակ գրաբար ուսումնասիրություններ է գրած և հատորներով գրաբար ոտանավորներ: Բայց ինքն ալ զգացեր է, որ այդ բոլոր աշխատանքը փոքր խումբ մը իրեն նման մարդիկներու համար է միայն, և ունեցած է ներքին դրդում մը իր սրտին խորեն անմիջապես հայ ժողովուրդի ավելի լայն խավերուն խոսելու. և արտադրած է երկու տասնյակ ոտանավորներ՝ նմանվելով նախորդ դարաշրջանի տաղասացներու գործածած լեզվին՝ անտարակույս չհավնելով իր ժամանակի ու իր վանքին մեջ տիրող պոլսական դեռ անմշակ ու

թուրքախառն բարբառին: Իր այդ կտորները, որ գրած է 40-ական թուականներուն, կկրեն Նահապետ ստորագրութիւնը:

Նահապետի այդ նոր տեսակի քնարերգութեան առաջին հրապոյրը ճիշդ իր այդ միջնադարեան արտասովոր և անուշ ինքնահատուկ լեզուն է: Երկրորդ հրապոյրը հայրենի հողի, հայրենի անցեալի, հայրենի քաղաքական ու գրական հուշիկներու հանդէպ իր ունեցած ջերմ սէրն է, որ իր ամեն տողին կծորի ու կվարակէ: Երրորդ հրապոյրը՝ ընդհանրապէս իր սրտաբուխ ու հորդ քնարականութիւնը, ամեն արտահայտութիւն սրտէ եկած և զգացումներով թաթաւուն: Վերջապէս իր չորրորդ հրապոյրն ալ՝ արուեստի նոր վիպական ձեւերու գործածութիւնը, որ արեւմտեան օրինակներէ էր ներշնչուած: Լեռները իրարու հետ վէճի կմտնեն, պանդուխտը իր հայրենի գետին կուղղէ իր խօսքերը, երբ կմոտենա հայրենի հողերուն կամ բանաստեղծը լուսնի հետ կխօսի և անոր պատմել կուտայ դարեր առաջ հայ հողին վրայ տեսածները: Այս բոլորը և՛ նոր էր, և՛ կենդանի, և՛ խոր անկեղծութեամբ ըսուած, թէև ընդհանրապէս շատ պարզունակ ու միամիտ:

Ղեւոնդ Ալիշան այդ երգերուն մէջ տաղասաց մըն է, տաղասացներու շարքին վերջինը, բայց հեռու ամեն աշխարհային սէրերէ, ոգեւորուած միայն «Շավարշանի շուշաններով»: Եվ նորոված տաղասաց մըն է, ինչպէս ըսի, նորոված եվրոպական շփումով և նորոգված ազգային ձգտումներով: Ասով ալ կդառնայ նոր ծայր առնող՝ գալիք բանաստեղծութեան մը առաջին ռահվիրաներէն մէկը:

Երկու դարաշրջաններու կապն է Ալիշան. ձախ ոտքը ամուր դրած հին գրքերու ու հին կրոնական տաղերու վրայ՝ ան իր աջ ոտքը նետած է դէպի նոր ձգտումներու ու նոր արուեստի դաշտը: Իր «Մասիսները», իր «Լուսնկան», իր «Հրազդանը», իր «Ավարայրի պլպուլը» մնան պիտի մեր գրականութեան մէջ միշտ համով ու գրավիչ՝ չնայելով իրենց գեղարվեստական խոշոր թերութիւններուն, ըլլա մտածման, ըլլա մշակման, ըլլա անհաճո երկարաբանութեան:

Եթէ Ալիշան՝ իբրև վանական, ավելի մեկուսի և ավելի մասնակի հաղորդակցութեան մը մէջ էր արեւմտեան կենցաղին ու գրականութեան հետ, բարբառով գրող մյուս նոր դեմքերը

յուրացուցած էին եվրոպական ըմբռնումներն ու գրելու ձևերը՝ ապրելով եվրոպական աշխարհիկ միջավայրերու մեջ և իրենց բարձր կրթությունը ստանալով եվրոպական համալսարաններու մեջ. և սպունկի նման լեցված էին եվրոպական աշխարհիկ գրքերու ընթերցանությամբ:

Բարբառագիր երկրորդ նոր դեմքը Խաչատուր Աբովյանն է (1804 - 1848), գերմանական բարձր կրթությամբ, նախապես Էջմիածնի մեջ մոնթ ու սարկավագ ըլլալեն ետքը: Նախ գրած է գրաբար, բայց հատկապես մանուկներու համար շարադրած էր բարբառով առակներ ու մանր առականման երկեր, շատ համեստ երկեր:

Եվ հանկարծ մեկ շունչով և ներքին բուռն ժայթքումով մը գրած է իր «Վերք Հայաստանի»-ն՝ «Ողբ հայրենասերի» ենթավերնագրով, 1841 թվականին, որ տպված է առաջին անգամ 1858 թվին: Գիրքը գրված է Երևանի հարազատ ժողովրդական բարբառով և ժողովուրդին խոսելու տենչանքով: Ժողովուրդի լեզվով գրական լուրջ ստեղծագործություն մը մեջտեղ դնելու ձգտումով:

Թեև երկը մեկ ծայրեն մյուսը ունի միևնույն հերոսը՝ Աղասին, բայց գիրքը ինքը իր էությամբ միակտուր ու ամբողջական գործ մը չէ: Աքանչելի հառաջաբան մը: Բոլորովին նոր ու կենդանի առաջին մաս մը, որ ինքն իրմով ամփոփ հրաշալի պատկերացում մըն է գյուղական կյանքի՝ իրական ու կենդանի վրձինով քաշված: Բայց ինչպես «Ֆաուստի» երկրորդ՝ ավելի ընդարձակ մասը, իր բոլոր ծավալին ու հետաքրքրության հակառակ, չի հասնիր բնավ իր առաջին ինքնիրմով լրացած մասին, այդպես ալ «Վերք»-ի երկրորդ մասը, շատ մը կողմերով հետաքրքիր ու արժեքավոր, չունի առաջին մասի ո՛չ թափը, ո՛չ անմիջականությունը, ո՛չ ալ արժեքը: Երկար սիրային ողբեր, երկար մահմետական ծեսերու նկարագրություններ, կրոնական դեմքեր ու վեճեր, հովակիմ աղայի մը իրականեն փրցված գեղեցիկ պատկերը, տեղ-տեղ բնության հատու տեսարաններ՝ կարող գրչով մը գծված, ինչպես Երևանի բերդը կամ Զանգուն և վերջապես հեղափոխական վեպի մը ուրվագիծը Անիի ավերակներուն շուրջ:

Մեկ երկի մը մեջ ու մեկ թափով Աբովյան դրեր է մեր նոր

գրականութեան ամբողջ առաջին շրջանի բոլոր վիպական ուղղութիւնները ու նիւթերը. և՛ Աղայեան, և՛ Պռոշեան, և՛ Րաֆֆի. սիրային վէպ, գիւղական վէպ և հեղափոխական վէպ: Եվ արդէն Արմէնի այդ ողբը մեր նոր գրականութեան մուտքի սեմին վրայ բարձրացուցած կարծես ընդհանուր գրական կոթող մը ըլլայ, խակական հառաջաբան արձան մը նո՛ր նիւթերով, նո՛ր գեղարվեստական ձգտումներով, քաղաքական նոր ուղղութեամբ և իր կրակոտ հառաջաբանով:

«Ողբը» միևնոյն ժամանակ վերջաբան մըն է սակայն մեր թուրանական գրականութեան՝ իր խիստ երկար ու խիստ համեստ արժէքի քնարական գեղումներովը, իր գրվածքին ամբողջական ձև մը տալու անկարողութեամբը և վերջապէս իր գաւառական բարբառովը: Աբովեանի պէս Արմէնն ալ երկու դարաշրջաններու մէջտեղը գրված սահմանաքար մըն է. և անտարակոյս մեծ տաղանդ մըն է և շատ սիրելի Հայ անուշ հոգի մը.

Բարբառով գրող նորատեսակ և բոլորովին նորատեսակ հեղինակ մըն է Գաբրիէլ Սունդուկեան (1825 – 1912): Թիֆլիսցի մը, իր ամբողջ էութեամբ կապված իր սիրական քաղաքին. և սնած է ռուս կրթութեամբ ու գրականութեամբ:

Սունդուկեանի երիտասարդ. թարմ տարիներուն ռուս բեմին վրայ տիրող էր Օստրովսկին, որ առևտրական դասակարգի ընտանեկան կյանքեն բազմաթիվ թատերախաղեր ունէր հօրինած և շատ էր ժողովրդական: Սունդուկեան անոր օրինակեն դրդված՝ ինքն ալ սկսաւ կատակերգութիւններ գրել Թիֆլիսի իր ժամանակվա Հայ առևտրականներու խաւութի ու ընտանիքի կյանքեն՝ հոն տիրող այլանդակութիւններն ու վատութիւնները մերկացնելով ու ծաղրի ենթարկելով:

Վաթսունական թվականներուն իրար ետեւ գրած է չորս կատակերգություն, որոնք խաղուն ալ բեմադրված են Թիֆլիսի մէջ, իբրև մեծ նորութիւն և մեծ վայելք ու գրականութիւն ամենուն համար. բայց մանավանդ թիֆլիսցիներու համար, որոնց կյանքեն

առնված էր միշտ նյութը և գրված էր անոնց հարազատ Թիֆլիսի բարբառով:

Իր գծած դեմքերը ցայտուն ու կենդանի են, հատկապես բացասական տիպարները, խաղերուն ընթացքը՝ շարժուն ու աշխույժ, հանրային թերություններու մատնանշումը ու քննադատությունը՝ համակ, միջավայրի պատկերացումը՝ արդար ու իրական, ծիծաղն ալ առատ ու մտածել տվող: Ասոնք հատկություններ են առաջնակարգ ու վարպետ կատակերգուի:

Մեկ շարժումով մը և մեկ մարդու ձեռքով Հայ գրականությունը հանկարծ տեր կդառնար խոլական ու արժեքավոր գրական-թատերական երկերու, ինչպես են «Խաթաբալան» ու «Էլի մեկ զոհը»:

Բայց հասուն Սունդուկյանի բոլորովին նորակերտ ու խորապես Հայ ստեղծագործությունն է «Պեպոն». գլուխգործոց մը և՛ Սունդուկյանի երկերուն մեջ, և՛ ընդհանրապես Հայ գրականության:

Պեպոն քիչ մը խռովալացված ձկնորս-ձկնավաճառ մըն է Թիֆլիսի մեջ. իր ճակտին քրտինքովը իրենները ապրեցնող ազնիվ ու շիտակ հոգի մը իր շրջապատող քաղքենի դասակարգի խարդախ ու շողշողուն ստորնություններուն մեջ: Հուզիչ, կենդանի, միաձույլ և ընտիր արվեստով կառուցված երկ մը՝ մնայուն ու գեղեցիկ:

«Պեպոն» մեր գրականության առաջին մեծ արժեքով թատերական ստեղծագործությունն է և Սունդուկյանն ալ մեր առաջին մեծ տաղանդով թատերագիրը:

Ինչպես գրաբար գրելը կանգ չէ առած բոլորովին արդի Հայ գրական լեզուներու տիրապետության գալովը և հոս ու հոն զանազան առիթներով երբեմն կգործածվի, այդպես ալ նույնն է վիճակը բարբառներու համար և շատ ավելի բնականությամբ: Արդի մեր գրական երկու լեզուները անշուշտ որ թշնամի են բարբառներու գրական գործածության: Բայց և այնպես մեջընդմեջ կերևան բարբառական գրություններ, մանավանդ երբ զավեշտ ու կատակ է իրենց նյութը: Գրվածքին բարբառը լավ գիտցողի մը

համար բարբառական գրությունը անհամեմատ մեծ գրավչություն ունի իր վրա իր բազմաթիվ ինքնահատուկ ասություններովը, ուրույն նրբություններովը և իր հատուկ արտասանությամբ, այսինքն՝ գրվածքը ատով կստանա հավելյալ, ձրի ու ապահով հրապույր մը:

Մյուս կողմեն ալ տեղի մը իրական կյանքը ճշգրիտ կերպով պատկերացնել ուզող հեղինակի մը համար գրեթե պարտադիր պահանջ մը կդառնա գոնե իր ներկայացուցած անձերու խոսակցության միջոցին տեղական հարազատ բարբառը գործածելը կա՛մ երբեմն, կա՛մ մշտապես: Երբեմն ալ ահա՛ ամբողջ երկը կգրվի բարբառով:

Այսպես, օրինակ, Գամառ-Քաթիպան, որ արդի արևելյան գրական լեզվի հիմնադիրներեն մեկն է, գրած է զանազան կեղծանուններով երգիծական շունչով պատկերներ ու վեպիկներու ամբողջ շարք մը Նոր Նախիջևանի իրականութենեն առած և ամբողջապես Նախիջևանի բարբառով: Եվ պետք է ընդգծեմ, որ իր վիպական ստեղծագործություններուն մեջ լավագույններն են իր բարբառով գրածները թե՛ նյութով, թե՛ ոճով:

Ղարաբաղի և Երևանի բարբառներով ալ եղած են նմանօրինակ փորձեր, ինչպես և արևմտյան կը բարբառներով: Եվ անշուշտ ասկե ետքն ալ կրկնվելու են մեջեմեջ: Բայց հետզհետե ավելի նվազ հետաքրքրությամբ ու հաճախականությամբ: Գրաբարի նման բարբառներն ալ այլևս պետք է նկատենք քաշված գրական ասպարեզեն:

Արդ՝ եթե առնենք միջնադարյան տաղերգուներու ամենեն ազնիվ կտորները ու փունջ մը կազմենք, վրան ավելցնենք Սայաթ-Նովայի խորունկ զգացումով տաղերը, քանի մը հատված ալ Ալիշանեն, կստանանք այն բարձր աստիճանը ստեղծագործության, ուր կրցած է հասնիլ բարբառով գրված քնարերգությունը:

Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին» քովն ալ Գամառ-Քաթիպայի հաջող վիպակները՝ բարբառով գրված, կներկայացնեն մեր բարբառական գրականության ամենեն արժեքավոր

վիպական ստեղծագործությունները: Իսկ Գաբրիել Սունդուկյանի «Պեպո», հետո այլ նույն հեղինակի մյուս կատակերգություններեն քանի մը շատ հաջող տեսարաններ, կկազմեն մեր բարբառական գրականության ամենեն բարձր ու ազնիվ թատերական ստեղծագործությունը:

Երբ այս բոլորը կմիացնենք, գրական երեք տեսակները միասին իրենց ամբողջությամբ, այն ատեն ամենուս համար հստակ կդառնա մեր բարբառային գրականության բռնած կարևոր դիրքը և մեծ արժեքը:

Առանց քովը դրե՛ք մեր ժողովրդական անգիր բանահյուսության սքանչելի տողերն ու տաղերը, թե՛ արդի արևելյանը և թե՛ միջնադարյան անտունի քնարերգությունը, ինչպես և «Սասունցի Դավթի» խորիմաստ հայ վեպը՝ ըմբռնելու համար, թե գեղարվեստական ի՜նչ հարստություն կպարփակե հայ բանահյուսական ստեղծագործության բարբառական բաժինը իր ամբողջությամբն առած:

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ-ՀԱՅԵՐԵՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՄԵՐ ԱՐԴԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ՆՈՐ ԿԱՐԳԵՐ

ԺԹ· դարը խոշոր փոփոխություններ բերավ Թուրքական մեծ կայսրության: Ռուսական առաջխաղացումը դեպի Սև ծով, դեպի Կովկաս ու դեպի Պալքան մեծ սպառնալիք մըն էր Թուրքիայի համար. պետության ղեկավարները սկսան անհանգստանալ, զգացվեցավ պահանջը զինվորական ու վարչական ներքին նորոգության: Եվրոպական մյուս պետություններն ալ նույնը կմատնանշեին շարունակ՝ ռուսական նոր հաջողություններու առջևը առնելու համար:

Առաջին պահանջն էր օրենքի առջև մահմետականի ու քրիստոնյայի տարբերությունը մեջտեղեն վերցնել և քրիստոնյայի կյանքն ու ինչքը ապահովել ռուսական միջամտություններուն պատրվակ չտալու համար: Արդեն եվրոպացիներու հետզհետե շատացումը ծովեզերյա քաղաքներուն մեջ և զինվորական մարզիչներու ներկայությունը հարկ կդներ, որ քիչ մը ավելի մոտենար Թուրքիան եվրոպական կենցաղին և ըմբռնումներուն: Եվ պետության ձևը գոնե արտաքուստ շատ չտարբերվեր եվրոպական վարչական ձևերեն:

Նախ հայտարարվեցավ երկու կրոններուն հավասարությունը, անշուշտ առայժմ սկզբունքով, այլև փոփոխության ենթարկվեցավ նահանգներուն վարչաձևը. կառավարությունը ասկե ետքը

ինքը պիտի նշանակեր նահանգապետներ իր անմիջական հսկողության տակ՝ փոխանակ կապալով տալու այս ու այն լավ վճարող փաշային: Այս և ասոնց նման դատական և ուրիշ բարենորոգումները, որ քանի մը հասկցող ղեկավար դեմքեր կփորձեին իրականացնել վարչական կարգադրություններով, քիչ մը ավելի ուշ 1839-ին սուլթան Ապտուլ-Մեճիտ գահ բարձրանալուն պես հայտարարեց պաշտոնապես իբրև պետական օրենք:

Անկե քիչ մը առաջ հանդուգն վճռականությամբ և մեկ հարվածով վերջ էր դրված ենիչերիներու կազմակերպության, որ չարիք մըն էր դարձած կառավարության գլխուն՝ միջամտելով ու խանգարելով ամեն պետական ձեռնարկ ու զինվորական ամեն նորաձևություն:

Շոգիի գյուտով և շոգենավի ու շոգեկառքի գործածության հետևանքով դյուրացած ու արագացած էր հարաբերությունը Եվրոպայի հետ և սկսած էր ավելի աշխույժ ու բազմակողմանի առևտրական շարժում մը, մասնավորապես Պոլիս ու Զմյուռնիա, որոնք բերանը կներկայացնեին Փոքր Ասիայի: Թուրքիան հետզհետե ավելի սերտ կապերով կկապվեր Եվրոպայի հետ, սորվիլ ու օգտվիլ կուզեր եվրոպական գիտության, արհեստի ու տնտեսության աչքի ընկնող մեծ առավելություններեն: Արդեն պահանջ կդառնար, գոնե որոշ շրջանակի մը համար, ո՛չ թե ասիական, այլ եվրոպական պետություն մը համարվիլը: Վերի շրջաններուն մեջ արտաքինը արագ կփոխվեր. հագուստ, կարասի, կենցաղ ու վարմունք, նաև ուսում. ամեն ինչ կձգտեր նմանվիլ Եվրոպային:

Թուրքիայի այս շեշտվող արևմտացումը անշուշտ որ շատ զգալի փոփոխություններ բերավ նաև Թուրքիայի հայության համար: Քրիստոնյայի վկայությունը, խոսքը, կրոնը, դիրքը քիչ մը ավելի բարձրացավ. կեդրոնեն նշանակված և պատասխանատու նահանգապետները և անոնց հսկողության տակ գտնվող դատարաններն ու վարչությունները անտարակույս որ քիչ մը ավելի արդարություն մտցուցին կյանքի մեջ, ավելի ապահովություն և հոգեկան թեթևություն: Ճամբաները համեմատաբար ավելի ապահով դարձան, երթևեկը՝ ավելի տանելի, սկսավ ապրանքներու շարժումը: Եվ այս բոլորի հետևանքով հայ ժողովուրդի վիճակը, և

հատկապես քաղաքներու մեջ առևտրական ու արդյունաբերող դասակարգին համար, մեծ բարձրացում տեսավ, եթե մանավանդ համեմատելու ըլլանք նախորդ դարերու արհամարհված, հալածված, անկայուն, անտեր ու անիրավունք վիճակին հետ:

Այս բարելավումը ներքին գավառներու համար եթե համեմատական առավելություն մը միայն ուներ, ծովեզերյա հայության համար և հատկապես Պոլսի ու շրջակայքի հայության համար շատ ավելի իրական էր ու անմիջական: Պետության խոստացած իրավունքներն ու հավասարությունը շատ ավելի մեծ չափերով իրականություն կդառնային մայրաքաղաքին մեջն ու մոտերը, որ ուղղակի աչքի տակ էին և՛ կառավարության, և՛ օտարներուն:

Անկե զատ Պոլսի հայությունը շատ ավելի մեծ չափերով հնար ու մարդիկ ուներ եղած իրավունքներեն և առևտրական առավելություններեն օգտվելու: Պոլսի հայությունը դեռ նախորդ դարերեն առավելություն մը միշտ ուներ գավառի հետ համեմատած, ինչպես տեսանք, քանի որ Պոլիս կնստեր հայերու պատրիարքը. ինչքան ալ դիցուք խեղճ ու խաղալիք ըլլար հայ պատրիարքը տիրապետողներուն ձեռքին մեջ, բայց և այնպես կրոնապետ մըն էր, սուլթանական պաշտոնագրով վավերացված և կրնար միշտ որոշ աստիճանի պաշտպանություն մը ցույց տալ հատկապես իր անմիջական շրջապատին մեջ:

Պատրիարքեն զատ Պոլսի մեջ էին նաև և մեծ դեր ունեին ԺԸ դարեն սկսած հայ ամիրաները, այսինքն՝ խելացի ու տաղանդավոր հայեր, որոնք կրցած էին լուրջ ծառայություններ մատուցանել Թուրք կառավարության և կհամարվեին անոր մնայուն պաշտոնյաները՝ իբրև սեղանավոր, իբրև փողերանոցի վարիչ, իբրև վառոդապետ, իբրև ճարտարապետ: Բոլորն ալ բնականաբար կապեր, հարստություն ու ազդեցություն ունեին և միևնույն ժամանակ խորապես հայ մարդիկ էին, հայ եկեղեցիի, հայ գրքի և հայ դպրության պաշտպան:

Ազգային-եկեղեցական բոլոր գործերուն ղեկավարությունը այդ ամիրաներուն ձեռքն էր. անոնք է, որ պատրիարքները կրնտրեին կամ կիջեցնեին գահեն, հոգևորականության մասին կհոգային և հոս ու հոն դպրոցներ էին բացեր քիչ մը ավելի պատ-

րաստություն ունեցող հայ ուսումնական մարդիկ հասցնելու համար՝ հետևելով օսմանյան կայսրության այդ միջոցին կատարած նմանօրինակ ջանքերուն:

2. ՆՈՐ ԱԶԴԱԿՆԵՐ ՈՒ ՆՈՐ ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳ

Երեսնական թվականներուն այդ դպրոցներուն թիվը բավական շատցած էր զանազան թաղերու մեջ, բացված էր Սկյուտարի նշանավոր ճեմարանը ավելի բարձր ծրագրով և այդ վարժարաններու աշակերտության թիվը հազարներու կհասներ: Աշակերտներու շատացումին զուգընթաց այդ աշակերտներուն ծնողներն ու պարագաները սկսան օրե օր ավելի հետաքրքրվիլ իրենց դպրոցներով և իրենց եկեղեցիներու մատակարարությամբ, որուն կապված էր դպրոցին գոյությունն ու վարչությունը: Թաղին մեջ ժողովրդական ամենեն ազդեցիկ դեմքերը արհեստապետներն էին, այսինքն՝ յուրաքանչյուր արհեստի շուրջ կազմակերպված արհեստավորների միության գլխավորները. այդ պետերը սկսան պահանջել, որ իրենք ալ տեղյակ ըլլան դպրոցի ու եկեղեցիի հաշիվներուն, որ իրենք ալ մաս ունենան եկեղեցական ու դպրոցական գործերու ղեկավարության մեջ:

Ասով ալ ծայր առավ նշանավոր վեճն ու պայքարը ամիրաներու և արհեստավորներու միջև պատրիարքարանի և ազգային գործերու շուրջ, որ քանի մը զիջումներե, փոխադարձ համաձայնություններու անհաջող փորձերե ետքը երկու տասնյակ տարիներու ընթացքին, հետզհետե մշակվելով ու ձևավորվելով՝ եկավ հանգավ «Ազգային սահմանադրության» հիսունական թվականներուն վերջը:

Այս ազգային վարչական ու դպրոցական շարժումներուն միացավ շուտով և լրագրական շարժումը: ԺԹ դարու առաջին տարիներուն վենետիկցիք Պոլսի մեջ հրատարակած էին մեկ-երկու «Տարեգիրք», իսկ 1812 - 1815 «Դիտակ Բյուզանդյան» անունով երկշաբաթաթերթ մը: Իբրև առաջին լրագիր եղած է Թուրքիայի Բարձրագույն դռան պաշտոնական առաջին թերթին հայկական մասը «Լրո գիր» անունով շաբաթաթերթ մը 1832-ին, միայն տարի

մը: 1839 – 1855 բողոքականները հրատարակած են «Շտեմարան» անունով կրօնական պարբերաթերթ մը, որ կու տար նաև գիտական նիւթեր անգլերէնէ թարգմանելով:

Բուն լրագրութիւնը մեր արդի ըմբռնումով սկսած է 1840 թուին Պոլիս ու Զմյուռնիա միաժամանակ: Պոլսի մէջ «Ազդարար Բիւզանդեան» և «Հայտարար դիր լրո» կարճատև թերթերը, իսկ Զմյուռնիայի մէջ «Արշալոյս Արարատեան», որ տևած է մինչև 1886 թվականը պարբերական թերթի մը բոլոր բաժիններով և լուրջ ուղղութեամբ ու խմբագրութեամբ: 1846-ին իբրև Հայ պատրիարքարանի պաշտօնաթերթ հրատարակված է «ՍուրՀանդակ Կոստանդնուպոլսոյ», որ շուտով կկոչվի «Հայաստան» և կտևէ մինչև 1852. «Հայաստանի» փոխարէն կսկսի Հրատարակվիլ, իբրև պատրիարքարանի պաշտօնաթերթ, «Մասիս»՝ Կ. Ութուճյանի խմբագրութեամբ, որ 1852-էն կտևէ մինչև 1888 թվականը:

Այսինքն՝ 1841 թվականէն Զմյուռնիայի մէջ և 1846 թվականէն Պոլսի մէջ ունինք անընդհատ և չնորհքով խմբագրված պարբերական թերթեր, որոնք կու տային օրվան քաղաքական լուրերը, քաղաքական տեսութիւններ, եվրոպական տեսութիւններ, եվրոպական թերթերէ քաղված նորութիւններ, տեղեկութիւններ, ինչպես և թարգմանական վիպական նյութեր:

Ինչպես պատրիարքարանի շուրջ տեղի ունեցող սահմանադրական պայքարները իրենց ղեկավար դեմքերով, այնպես ալ այս դպրոցները իրենց վարչութեամբ և ուսուցիչներով, այնպես ալ այս պարբերական մամուլը իր խմբագիրներով և աշխատակիցներով մեծ նորութիւններ էին մեր Հայ կյանքին մեջ. և պտուղ փոխված պայմաններու և Հետևողութիւն եվրոպական օրինակներու: Այս բոլոր մարզերը միասին առած կներկայացնեին նոր տեսակի Հասարակութիւն մը, կարդալ գիտցող, կարդալը սիրող, մինչև Հիմա չտեսնված բազմութիւն մը, նոր մտավոր դասակարգ մը, որ կրնանք անվանել «միջնակ մտավորականութիւն»՝ ղեկավարողներն ու ղեկավարվողները միասին առած, որոնք իրենց ստացած նախապատրաստական կրթութեամբ իրարմէ տարբերութիւն մը չունեին:

Ղեկավարողներու թիվին մեջ Հատուկ կերպով պետք է Հիշել

Վենետիկի Մխիթարյանները, որոնք թե՛ կուգային Պոլիս, դպրոց կրանային և ուսուցիչ կղառնային և թե՛ կաղդեին Հեռվեն իրենց գրական երկերով և «Բազմավեպ» ամսագրով, որ 1843 թվեն սկսած Հրատարակված է շարունակ, մեջեմեջ ձև ու կերպարանք փոխելով, մինչև օրս: Թե՛ այդ աշխարհաբար «Բազմավեպը», որ նոր նյութեր կբերեր, թե՛ Վենետիկի գրաբար լեզվով երկերուն Հրատարակությունները, թե՛ իրենց գրաբար ուսումնասիրությունները և թե՛ իրենց Հարուստ թարգմանական գրականությունը գրաբար լեզվով, մեծ օժանդակ մը և լուրջ ազդակ մըն էր այս նոր առաջացող ընթերցող Հասարակության մտքին ու ճաշակին Համար:

3. ՆՈՐ ԼԵԶՈՒ

Ինչքան ատեն որ կարդալ-գրել գիտնալը և գիրքն ու ընթերցումը սակավաթիվ փոքրամասնության Համար էին, որոնք ընդՀանրապես եկեղեցական պաշտոնյաներ էին, գրաբար լեզուն էր, որ կմնար իբրև խսկական ու միակ գրական լեզու: Այդ փոքրամասնությունը միշտ ու ամեն տեղ բարբառով կխոսեր և գրաբարի ուսուցումը ձեռք կբերեր երկար տարիներու չարչարանքով և ան ալ շատ թերի կերպով, բայց ի՞նչ փույթ, իր կոչումին պաՀանջ էր և, եթե կուզեք, նույնիսկ իր կոչումին Հմայքը: Ինչքա՜ն, ինչքա՜ն աղոթքներ, երգեր, ըթերցումներ պետք է սորվեր ամեն տիրացու, ինչքան բաներ պետք է գոց աներ. այդ ամենուն Հետ քիչ-քիչ կսորվեր և անոնց լեզուն. նյութն ու լեզուն սերտորեն կապված էին իրար և իրարմե անբաժան սրբություն մը կներկայացնեին:

Միայն այն տեսակի նյութերը, որոնք կրոնի Հետ կապ չունեին և գրաբար չգիտցողներու Համար սաՀմանված էին կամ կյանքի գործնական պետքերու կծառայեին, կյանքը կստիպեր, որ գրվեին բարբառով. և կգրվեին բարբառով, միևնույնն է՝ ով կուզե ըլլար գրողը:

Այս տեսակի բարբառով գրված անտիպ ու տպված խրատական, բացատրական գրություններ, ինչպես և տաղեր, ինչպես նախորդ դարերուն մեջ, այնպես ալ կային ԺԸ դարու ընթացքին: Եվ ատոնք ընդՀանրապես Պոլսի միջնոլորտին մեջ գրված ըլլալով գրված են Պոլսի մեջ տիրող բարբառով: Հայտնի են շարք մը Պոլսի

պատրիարքներ, որոնք իրենց եկեղեցական, աստվածաբանական, վիճաբանական գրաբար երկերուն կից ունեին նաև մեկ-երկու ավելի ատոնին, ավելի անձնական կամ «Հասարակ ժողովուրդի» համար գրված գրություններ կա՛մ բարբառով, կա՛մ բարբառային գրաբարով: Պաղտասար դպիրը գրած է «Սիրոյ եւ կարօտանաց տաղարանիկը». Պետրոս եպիսկոպոս Խաչանցի կազմած է Հավաքածու մը՝ «Գրքոյկ կոչեցեալ երգարան»:

Եթե միայն ատոնք և ատոնց նման հոս ու հոն մոլորված հատորիկներ միայն շարունակվեին նաև ԺԸ դարու ընթացքին՝ անշուշտ որ ո՛չ գրական նոր լեզվի պետքը կծներ, ո՛չ ալ այդ բարբառով գրությունները իրենք կդառնային նոր գրական լեզվի մը առաջին խարխափ քայլերը: Նոր գրական լեզու մը առաջանալու համար անհրաժեշտ էր, որ նախ առաջանար նոր ընթերցող հասարակություն մը և շատնար այդ հասարակությունը, որ շատնային գրությունները իրենց նոր տեսակի նյութերով և շատնային գրողները իրենք, որոնք տարբեր մարդիկ ըլլային, քան մինչև հիմակվան աղոթքին ու եկեղեցիին կապված մարդիկը:

Պոլսի մեջ առօրյա խոսված բարբառը կամաց-կամաց գրական ու մշակված նոր լեզվի մը վերածողը և գրաբար լեզուն հրապարակեն վերցնողը եղած են, ԺԸ դարու առաջին կեսին, երկու շատ կարևոր և նոր հիմնարկություններ. այդ նոր հիմնարկություններու անունն է դպրոց ու լրագրություն, որոնք իրենք ծնունդ են, ինչպես տեսանք, քաղաքական ու քաղաքակրթական փոխված պայմաններու:

Պոլսի մեջ դպրոցներուն թիվը հետզհետե կավելնար երեսնական-քառասնական թիվերուն. դարու կեսին հիսունի մոտ կհաշվեր պատրիարքարանը միայն Պոլսի մաս կազմող թաղերուն մեջ եղած դպրոցներուն թիվը՝ չորս հազարը անցնող աշակերտներով: Արդ՝ այս բոլոր դպրոցներուն մեջ կխոսեին Պոլսի բարբառով, գրավոր աշխատությունները կկատարվեին Պոլսի բարբառով, թեև սորվածնին բնականաբար գրաբար լեզու էր, գրաբար քերականություն:

Ուրեմն դպրոցներուն մեջ կտիրապետեր Պոլսի բարբառը, ուր կխոսվեր ամեն տեսակ նյութերու շուրջ և ուսուցիչ ու աշակերտ

առանց մտածելու, կամա-ակամա քիչ-քիչ կմաքրեին օտար տարրերն, կոպիտ արտահայտական ձևերն, հնչական «աղավաղումներն», հետզհետե կկոկեին գրաբարեն փոխ առնված շաղկապներով, մակբայներով՝ Հարմարվելով գիտական ու գրական եվրոպական արտահայտություններու ձևերուն:

Դպրոցը միշտ և ամեն տեղ լեզվի խառնարան է, ձուլարան ու զտարան, որովհետև դպրոցին մեջ տիրողը լեզուն է. մտքի ամեն զարգացում ու արտահայտություն անխուսափելի կերպով կապված է բառին ու նախադասություններու կազմության. ճիշդ մտածելու համար ճիշդ պետք է արտահայտես. մտածման նրբությունը կբերե արտահայտության նրբություն. և կոկ ու գեղեցիկ մտածողը կոկ ու ճաշակավոր արտահայտություն կփնտրե:

Դպրոցի մեկ անհրաժեշտ գործիքն է դասագիրքը. ամեն առարկայի ուսուցիչ ստիպված է մտածելու և ընդհանրապես ինքն ալ կամա-ակամա քիչ-քիչ իր դասագիրքը մշակելու, որ որոշ հասունության մը հասցնելեն ետքը բնական կերպով կուտա տպագրության: Եվ ամեն ուսուցիչ տարվետարի ավանդելով նույնը՝ ինչպես նյութը կկոկե, կլրացնե ու կպարզե, այդպես ալ անխուսափելի կերպով ստիպված է իր գրքի լեզուն ճշդելու, կանոնավորելու և կոկելու:

Առաջին վարժարանը մենք ունեցած ենք Վենետիկ և ԺԸ դարու երկրորդ կեսին հոն կերևան արդեն «բարբառով» գրված դասագրքերը: Իսկ Պոլիս ԺԹ դարու երկրորդ քառորդին կսկսի արագ շատնալ դասագրքերը և անշուշտ բոլորն ալ «բարբառով», նույնիսկ գրաբար սորվեցնելու համար պատրաստված քերականությունները: Բայց դասագրքերու այս «բարբառը», ինչպես և դասարաններուն մեջ խոսված «բարբառը» այլևս դուրսը խոսվող պոլսական սովորական բարբառը չէ. լվացված է ու սանրված և տեսակ մը կոկիկ կիրակնօրյա զգեստներով: Պոլսի բարբառը սկսած է գրականանալ, այսինքն՝ գրական լեզվի վերածվիլ:

Եվ ահա՛ դարուն կեսերուն մոտիկ ասպարեզ կիջնե երկրորդ մեծ գործոնը՝ պարբերական մամուլը և հատկապես օրաթերթը: Լրագիր ըսվածը հաջողելու համար, կենդանի ու իրական առօրյա պահանջ մը դառնալու համար պետք է որ շատ ըլլան ընթերցող-

ները, հետաքրքրւողները, փնտրողները: Ուր դեռ դպրոց չկա՝ լրագիրը արվեստական տունկ մըն է, հող չունի, չապրիր: Ինչքան շատ են դպրոցներն ու ընթերցողները, նույնքան մեծ է լրագիր կարդացող հասարակությունը: Դպրոց ու լրագիր զույգ կերթան միշտ և իրար կպայմանավորեն: Դպրոց գացողը այս կամ այն չափով լուր ու տեղեկություն կփնտրե. իսկ լրագիրն ալ բերանը բանալուն պես դպրոց կպահանջե:

Եվ խորքը դիտած պարբերական մամուլն ալ տեսակ մը դպրոց է, ըլլա քաղաքական, գիտական թե գրական ուղղությամբ: Լրագիրներու էջերեն օրը օրին խոսող, քարոզող ու մեկնաբանող, հասակը առած մարդոց այս ուսուցիչներն ալ, դասարանի ուսուցիչներուն նման և դեռ շատ ավելի շեշտված կերպով, ստիպված են իրենց գործածած լեզուն ճշդելու, կոկելու, գեղեցկացնելու, որ նուրբ կերպով հայացնել ու արտահայտել կարողանան միջազգային ամեն տեսակի գաղափարները, գիտական խորությունները և գրական կենդանացումները. ամեն օր ստիպված են շատ ու շատ էջեր թարգմանելու բազմադիմի բովանդակությամբ կիրթ ու բարձր զարգացման հասած լեզուներե. և այդ կարգի ամեն մեկ թարգմանիչ խոր պահանջ կզգա իր հոգիին մեջ՝ բարձրացնելու, կանոնավորելու, հարստացնելու, նրբացնելու և գեղեցկացնելու իր գործածած հայերենը, որ հնար եղածին չափ կատարելագործե, բարձրացնե և հասցնե եվրոպական լեզուներու աստիճանին:

Թարգմանությունը լեզուն սրող, կանոնավորող ու հարստացնող շատ կարևոր գործիք մըն է ընդհանրապես և դպրոցներու ու դասագրքերու մեջն ալ խոշոր դեր ունի: Բայց դպրոցներեն ու լրագիրներեն դուրս ալ կգործե, իբրև օտար նշանավոր երկերու հայացում առանձին գրքերով: 1820 թվին նորեն Մխիթարյանները թարգմանած են աշխարհիկ լեզվով «Ռոպինզոնը», «Եզովբոսի առակները»: Երեսնական թվերուն Պոլիս և Զմյուռնիա բողոքականություն տարածողները ինչպես «Շտեմարանի»-ի մեջ, այնպես ալ անոր քովն ի վեր կսկսին թարգմանական գրքույկներ հրատարակել:

Հատուկ պետք է հիշել, իբրև մեր նոր լեզվի մշակման նախապատրաստող կարևոր աշխատանք, «Աստվածաշունչի» աշխարհա-

բար թարգմանությունը բողոքականներու ձեռքով, որ հրատարակեցին Զմյուռնիայի մեջ քառասնական թվականներուն վերջը Պոլսի բարբառով, բայց շատ կոկիկ ու խնամված, որ ըսել է լուրջ նպաստ մը մեր նոր գրական լեզվի ձևավորման:

Նույնպես քառասնական թիվերուն Հովհաննես Տերոյենց թարգմանած է Ծոյայի «Քաղաքավարությունը» և «Խորհրդածությունք Բասկալա»: Այդ միջոցին հրատարակված են «Մետաքսաբանություն» մը և «Մանկատածություն» մը և «Նապոլեոնի կենսագրությունը»: Բոլորովին նոր տեսակի նյութեր և արդեն ընդհանուր առումով կոկված ու տաշված պոլսահայերենով մը:

4. ՄԵՐ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Դպրոցներու, լրագրության և թարգմանություններու միջոցով Պոլսի բարբառը ԺԹ դարու կեսին հասած է արդեն զարգացման ու հստակացման որոշ աստիճանի մը:

Քերականությունը բարբառինն է, ինչպես և նախադասությունները կազմելուն ձևը, թեև գրաբարեն դեռ բավական բան փոխ կառնվի՝ թե՛ հոլովական ձևեր, տեղ-տեղ խոնարհում գրաբարի, նախդիրներ, դերանուններ և մեջեմեջ ամբողջ ոճեր ու դարձվածքներ գրաբարով:

Բառերուն արմատական և հնչական օրենքներն ու կազմը կպահվի ընդհանրապես ըստ գրաբարի. բարբառեն կառնվին միայն սահմանափակ թվով արդեն բոլորովին աշխարհաբարացած բառեր, որոնց գրաբար ձևերը խորթ կհնչեն ականջի. օրինակ՝ ըլլալ, իյնալ, արցունք: Կմերժվին բոլոր մնացած բարբառային հնչյունները, ինչպես, օրինակ, կարմունջ, քինթ, մենձ, էրկու, իրեք, լուս, արուն և այլն:

Բառամթերքը կառնվի գրաբարեն. և՛ գրաբարի գործած իմաստով, և՛ գրաբար բառերը հարմարցնելով նոր ըմբռնումներու. օրինակ՝ նախարար, նախարարություն, նախարարապետ՝ մինիստրի իմաստով, կամ ոստիկան, ոստիկանատուն՝ փոլիսի իմաստով: Բարբառեն կառնվին զուտ բարբառական բառեր մեծ զգուշությամբ, գրաբարի մեջ չեղած բառերը դեռ անգրական տպավո-

ութիւն կընեն գրաբարը իբրեւ Հայերէնի միակ հիմք նկատող ականջներուն: Բուն ժողովրդական կենդանի բառերը, դարձուածները, ոճերն ու ասութիւնները իբրեւ գռեհիկ կզգան:

Բայց ասոր փոխարէն մեծ հնարամտութիւն ու ջանք կթափեն մասնաւորապէս թարգմանիչները նոր-նոր բառեր շինելու՝ եվրոպական եզրերը մէկ բառով մը արտահայտել կարողանալու համար. արագ կերպով կաճին նորակերտ բառերը եւ նորաձեւ ասութիւնները գրաբարին նմանելով:

Ահա՛ այս կազմն ու ուղղութիւնը ունեցող նոր լեզուն ԺԹ դարու վաթսունական թիվերէն կսկսի նոր գրականութիւն մը ինքնագլուխ. սկիզբը գրաբար գրութիւններու զուգընթաց, տեւակ մը անոր կողքն ի վեր իր առաջին քայլերն առնելով, բայց շուտով իր ետեւը կթողնէ գրաբարը եւ կդառնա միահեծան տէրը գրականութեան բոլոր ճամբաներուն վրայ: Սակայն տեսականօրէն դեռ բավական ժամանակ վէճը կշարունակվի, թէ ո՞րը պէտք է ընտրել՝ գրաբա՞րը, թէ՞ աշխարհաբարը: Հետզհետէ զուտ գրաբարը պաշտպանողներուն թիվը շատ կպակսի. բայց քանի մը նոյնիսկ հայանի գրիչներ կփորձեն գտնել գրաբարի կես հաղթանակ մը ու կգրեն գրաբարի ու բարբառի վերին աստիճանի անճոռնի խառնուրդով մը: Բայց այս բոլորը արդէն վերացական ու անգործնական վէճեր են եւ ցույց կուտան միայն, թէ ինչպէս մարդիկ խորապէս կկապվին իրենց պատանեկան տարիներուն յուրացուցած լեզվին եւ անկէ բաժնվիլ չեն ուզեր:

Այսպէսով՝ ԺԹ դարու կեսեն մինչեւ Ի դարուն կեսերը, այսինքն՝ մինչեւ մեր օրերը, գրեթէ ուղիղ դար մըն է, որ անընդհատ կաշխատի ու կստեղծագործէ մեր արդի նոր գրականութիւնը այդ նորակերտ Հայերէնով:

Այդ դարու մը տեւողութիւնը ունեցող մեր արդի արեւմտեան գրականութեան ընթացքն ու պատկերը աւելի պարզ ու հստակ տեսնելու համար կբաժնենք նյութը երեք շրջանի, եւ ամէն մէկ շրջանին կուգա մոտաւորապէս երեսուն տարի: Այս երեք շրջաններու բաժանումը հիմնված չէ սակայն կամայականութեան վրայ, ո՛չ ալ տարիները իրարու հավասար պահելու խաղին վրայ, այլ ատիկա անհրաժեշտ հատում մըն է՝ հիմնված արտաքին քաղաքական

պայմաններու փոփոխության վրա մեկ կողմէն, միւս կողմէն ալ գրականության բռնած ներքին տարբեր ուղղութիւններու վրա, որ կջանամ հետզհետե պարզելու:

Դիւրին միտք պահելու համար, մեկ կամ երկու տարիի ավելն ու պակասը մեկդի դնելով, կարելի է այդ բաժանումը ձեւակերպել հետեւյալ կլոր թիվերով.

առաջին շրջանը կտևե 1860 – 1890. կրնանք անվանել քաղաքականապես հանդիստ և գրականապես ազգասիրական շրջան:

Երկրորդ շրջանը կտևե 1890 – 1920. կրնանք անվանել քաղաքականապես հեղափոխական և գրականապես իրականասեր շրջան:

Երրորդ շրջանը, որ կտևե 1920-են անդին մինչև մեր օրերը, կրնանք անվանել քաղաքականապես ցրումի և գրականապես կարոտանքի շրջան:

Բ. ԱՌԱՋԻՆ՝ ԱԶԳԱՍԻՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ (1860 – 1890)

1. ՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

ա) ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մեր նոր գրականության սկզբնավորման օրերուն՝ հիսունական-վաթսունական թիվերուն, շատ սիրալիր ու բարեկամ հարաբերություն է թուրք կառավարության և հայության կարկառուն դեմքերուն միջև:

Կառավարության և մեր ամիրաներուն մեջ եղած հին կապին վրա ավելցած էին առևտրական նոր շերտի մը գործակցությունը. հունական ապստամբության օրերեն հայերուն նախապատվություն կտրվեր և դյուրություններ հատկապես արտաքին առևտրական ձեռնարկներու համար. սկսած էին շատնալ և հայ պաշտոնյաները պետական ծառայության մեջ, իբրև ընդունակ ու հավա-

տարիմ տարր:

Հիսունական թիվերուն Միդհատ փաշայի ազատական գաղափարներով տարված դահլիճի ազատական ծրագիրներուն և ճիգերուն շատ մոտիկ մասնակցություն ունեին բարձր կրթությամբ քանի մը հայեր, որոնք նաև աչքի ինկող դեմքեր էին ազգային կյանքի մեջ և որոշ չափով մը նաև մեր նոր գրականության մեջ՝ Սերվիչեն, Ազաթոն, Օտյան:

Յոթանասունական թիվերու սկիզբեն սկսավ գանգատի, դժգոհության ու բողոքի շարժում մը հայ ազգային ժողովի և պատրիարքարանի մարմիններու կողմե, բայց հարցը միշտ քյուրտերու դեմ կձևակերպվեր և Թուրք կառավարության պաշտպանությունն ու օգնությունը կխնդրվեր. հայր ու զավկի հարաբերության սահմաններեն անդին անցած չէր:

1878-ի պատերազմեն վերջը, երբ Ներսես Վարժապետյան պատրիարքը դիմեց Սանստեֆանո ռուսներու միջամտության, և ստեղծվեցավ 16-րդ հոդվածը Թուրք և ռուս հաշտության մեջ, որով ռուսներուն հնար կարվեր Թուրքիայի ներքին գործերուն խառնվիլ, բնականաբար հայ ու Թուրք հարաբերությունները սկսան լարվիլ: Երկու կողմեն ալ դժգոհություններ փոխադարձ և անվստահություն:

Ութսունական թիվերուն առաջին տարիները Թուրքերը, նոր վերադարձած Պեռլինեն, դեռ ավելի զգույշ էին և կզսպեին իրենց զայրույթը հայերու հանդեպ, բայց օրե օր ավելի ջղային կդառնային. նախ մտցուցին գրաքննություն մը ավելի թեթև ձևով, որ շուտով խստացուցին և ընդհանրապես հայ քաղաքակրթական ջանքերուն սկսան ծուռ աչքով նայիլ:

Իսկ երբ ութսունական թիվերուն վերջը ծայր տվին հնչակյան ցույցերը, բնականաբար ամեն ինչ արագ ու բացահայտ կերպով փոխվեցավ ու թթվեցան: 1890 թիվը կրնանք նկատել ներքին հայ ու Թուրք հարաբերություններու կրած վճռական փոփոխության սահմանաքարը:

Ուրեմն դեպի վերջերը հետզհետե լարվելով ու ավրվելով՝ բայց և այնպես ընդհանուր առումով այս ամբողջ շրջանը՝ վաթսունական, յոթանասունական և ութսունական թվականներուն, Թուր-

քերու վերաբերումը հայերու հանդէպ եղած է հաշտ, մեղմ, անտարբեր ու վստահ, որու հետեւանքով մեծ ուշադրութիւն չէին դարձներ և արգելքներ չէին հարուցաներ հայութեան առած մշակութային քայլերուն՝ դպրոց, լրագիր, գիրք, թատրոն, ընկերութիւններ, հանդէսներ ու ճառեր: Մեր արդի արեւմտյան գրականութեան ու կեանքի ամենէն ազատ, հանգիստ ու թույլատու շրջանն է, որ հաջորդ խիստ ու ծանր հալածանքի տարիներուն քով մասնավոր կերպով աչքի կընկնի ու կզատվի:

Այս մեղմ ու բարյացակամ վերաբերումին կպարտինք արդէն մեր «Ազգային սահմանադրութիւնը», որ քանի մը սրբագրութիւններէ ետքը 1863-ին վավերացվեցավ պետութեան կողմէ: Տարօրինակ ու լայնամիտ թույլտվութիւն մը, որ կապ ունի անշուշտ այդ օրերուն թուրք վերին շրջաններուն մէջ հոսանք ունեցող ազատական ծրագիրներուն հետ, բայց և այնպես արդի պետական ըմբռնումներուն ու ձգտումներուն հետ համեմատած՝ զարմանալու աստիճան ազատախոհ է հպատակ «փոքրամասնութեան» մը հանդէպ: Մեր ազգային սահմանադրութիւնը կուլտուրական ինքնավարութիւն մըն է, պետութեան մէջ պետութիւն մը, միայն անշուշտ «քառակուսի անիվներով», ինչպես շատ ճիշդ կերպով որակած է ստորագրող փաշան:

Եվ այդ սահմանադրութիւնը կներկայացնէ մեր նոր գրականութեան առաջին շրջանի երեսուն տարիներուն մէջ հայ կեանքին առանցքը, հայ կեանքին էութիւնը. ամէն հանրային ու կուլտուրական շարժում անոր շուրջը կդառնա, անով կզբաղի և անով ձև կառնէ: Հանրային կեանք ըսվածը դարձած է ընտրութիւններ, ժողովներ և ատենախոսութիւններ:

Ամէն ինչ ժողովուրդի ընտրյալներուն ձեռքովը՝ աս է կարգախոսը. թե՛ գավառական կեդրոնները և թե՛ Պոլիս թաղերուն մէջ կգոյանան ընտրող և ընտրված մարմիններ, ուր կարծիքներ ու ցանկութիւններ կփոխանակվին, ատենախոսութիւններ կըլլան: Թե ի՞նչ աստիճան և ի՞նչ արժեքով գործ կկատարվի՝ դեռ երկրորդական է, գլխավորը, գոնե առայժմ, իր համոզումը ըսելն է, ուզելն է, քարոզելն է, հորդ խոսքի շրջանն է ո՛չ միայն ժողովներուն մէջ, այլ ամէն տեղ. ժողովատեղիէն վեճերն ու հարցերը կանցնին սրճա-

բաններն ու խանութները, հոնկէ ալ լրագիրները. ամէնքը կխօսին ազգային գործերէ նոյնիսկ տունը Հայ ունելու առնէն. և այդ ազգային գործերն ալ բաւ էութեան կդառնան կա՛մ ընտրութիւններու և ընտրվողներու շուրջը, կա՛մ թաղի եկեղեցիի սնտուկին և դպրոցին շուրջը. ամէն Հայ իր իրաւունքն ու պարտաւորութիւնը կհամարէ խառնուիլ ազգային այդ գործերուն և Հայտնել իր կարծիքը իբրև ազգային անհատ:

Սահմանադրութիւնը արթնցուց ազգային իրաւունքի և ազգային պարտականութեան զգացումը, որ միանալով ժամանակի գրաբար գրականութեան բերած պատմական ազգասիրութեան՝ շեշտեց և ընդգծեց ազգային ոգին: Ամէն մարդ ավելի կամ պակաս հստակութեամբ իրեն կզգար մեծ ու հինէն եկող ամբողջութեան մը մէկ մասնիկը:

Թող ըլլա թաղային սահմաններու մէջ, թող ըլլա միայն խումբի շրջանին մէջ, թող ըլլա եկեղեցական հարցերու շուրջ, բայց և այնպես սահմանադրութիւնը տուաւ մարքերուն հանրային մղում. դուրս քաշեց անհատները իրենց եսական-ընտանեկան պատյանեն և վարժեցուց լայն հասարակութեան խաւերը հանրային խնդիրներով զբաղվելու:

Հոսկէ կուգա արևմտյան և հատկապես պոլսական հայութեան մէջ շեշտված ազգասիրական գիծն ու ազգային հետաքրքրութիւնը խոշոր չափերով, որ անտարակույս կենդանի գիծ մըն է, ինչքան ալ որ իր չափազանցութիւններու մէջ ծիծաղելի դարձուցած ըլլան մեր երգիծաբանները:

Հոսկէ կուգա արևմտյան և հատկապես պոլսեցի հայու խօսելու, ըսելու, մէջ նետվելու և ճառելու սերն ու դյուրութիւնը և որոշ չափով նաև լեզվի ճկունութիւնը, որ նորեն հաճախ ծաղրի առարկա է իր չափազանցութիւններուն մէջ, բայց իր խորքին մէջ մեծ առավելութիւն մըն է:

բ) ԴՊՐՈՑ, ՄԱՄՈՒԼ, ԹԱՏՐՈՆ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սահմանադրութեան այս խմբանող ոգին բնականաբար թև տուաւ լրագրութեան. ամէն գրիչ շարժել կրցող իր ըսելիքը ունի և

իր կարծիքը: Եթե գավառներուն մէջ տպարաններ գոյութիւն ունենային, բոլոր սահմանադրորեն կեդրոն եղող վայրերու մէջ լրագիրներ ծնունդ պիտի առնեին: Տպարան կար միայն Պոլիս և քանի մը հատ. այլև Զմյուռնիա: Այս երկու քաղաքներեն դուրս տպարան ունէր Երուսաղեմը իր վանական պետքերուն համար բոլորովին մեկուսի, այլև բուն հայկական հողի վրա տպարան մը բանալու առաջին փորձը ըրեր էր Խրիմյան 1857 – 1863 թիվերու ընթացքին նորեն վանքերու հովանիին տակ, որ շուտով խափանված էր:

Այնպես որ Թուրքիայի սահմաններուն մէջ լրագրական ամբողջ շարժումը կեդրոնացած էր Պոլիս և Զմյուռնիա, գլխավորապես Պոլիս, որ և՛ պետության, և՛ հայության մայրաքաղաքն էր: Պոլսի մէջ այս շրջանին հրատարակված լրագիրներուն թիվը կհասնի քսանի. հաճախ շատ տարօրինակ անուններ ունեին այդ պարբերական հրատարակությունները և մեծ մասին կյանքը մեկ կամ երկու տարի է: Ընդհանրապես շատ համեստ բովանդակությամբ փոքր տետրակներ. քանի մը հատն ալ կատակի թերթեր: Այս շրջանին վաթսունական թիվերեն սկսած անընդհատ Պոլիսը ունեցած է զավեշտաթերթ, երբեմն երկու հատը միաժամանակ:

Այս երեսնամյակը ճառելու, աղմկելու և խնդալու շրջանն է. եթե կուզեք՝ ազատության շրջանն է. գրե, ինչ որ կուզես, ո՛չ հարցնող կա, ո՛չ արգելք: Լրագրական այս հորձանքին մէջ սակայն քանի մը թերթեր տևած են ավելի երկար, եղած են ավելի լուրջ և որոշ չափով բարձրացուցած են ընթերցող հասարակության ճաշակն ու հասկացողությունը, թեև իրենք ալ շատ բարձր չեն եղած ընթերցողներու ընդհանուր մակերեսեն ո՛չ իրենց ըմբռնումներով, ո՛չ իրենց հասարակագիտական տաղանդով, ո՛չ ալ իրենց թերթի ինքնուրույն ուղղությամբ: Խմբագիր և աշխատակից բարձրացած են կամ կջանան բարձրանալ միևնույն ընդհանուր մտավորական մակարդակեն: Արևմտյան հայության մէջ գրական ու կուլտուրական շարժումը իսկապես լայն ժողովրդական է, վարեն վեր: Հրապարակի վրա տիրողը մեր սահմանադրութենեն, մեր դպրոցներեն և մեր մամուլեն ծագում առնող միջնակ մտավորականություն մըն է, որ լավագույն պարագային կաշխատի օտար լեզվի մը օգնությամբ հարստացնել իր մտավոր զարգացումը:

Առաջին շրջանի ամենէն կարեւոր ու տեւական թերթերն են Զմյուռնիայի մէջ «Արշալոյս Արարատեան», հիմնադիրը՝ Ղուկաս Պալթազարեան, և «Արեւելեան մամուլ», խմբագիրը՝ Մաթէոս Մամուրեան: Պոլսի մէջ «Մասիս» օրաթերթը Կարապետ Ութուճեանի խմբագրութեամբ, վերջն ալ «Արեւելք» օրաթերթը: Կատակի թերթերէն պէտք է հիշել Այվազեանի «Մամուլը», Սվաճեանի «Մեղու» և Պարոնեանի՝ զանազան անուններով երեւցող թերթերը, վերջինը՝ «Թատրոն»: Այլեւ պատանիներու համար՝ «Բուրաստան մանկանց»:

Սահմանադրական կարգը անտարակոյս աւելի եւս բարձրացուց արդէն նախորդ երկու տասնյակներու ընթացքին սկսած դպրոցական շարժումը: Պոլսի մէջ ամեն թաղ ունի իր մեկ, երբեմն երկու դպրոցը՝ նախակրթարանը՝ մոտաւորապես վեցամյա ուսման ծրագրով. շատ մը թաղեր ունին աւելի անուն հանած և 7-8 տարի տեւող դպրոցներ. ուսման նյութերն են՝ գրաբար, ֆրանսերէն, թուրքերէն, թվաբանութիւն, բնագիտական և աշխարհագրական գիտելիքներ, Հայոց պատմութիւն, քիչ մը երգ ու նկարչութիւն:

Այս դպրոցները կպահվին մաս մը եկեղեցիներու եկամուտով, բայց գլխավորապես ծնողներու տված վճարով և թաղեցի երիտասարդութեան հատուկ ջանքերով: Այդ մասնավոր ջանքերը աւելի արդյունավորելու համար, մասամբ ալ զանազան կրթական հավելյալ նպատակներով գրեթե ամեն թաղի մեջ կհիմնվին «կրթասիրաց», «գրասիրաց», «ուսումնասիրաց» ընկերութիւններ, եղբայրասիրական խումբեր, ինչպես և «ընթերցասիրաց» մը, «վերածնական միութիւն» մը, «Միսրոպյան հրատարակչական» մը և նման:

Այս ձեւով ալ և Պոլսի օրինակով նույնը կկրկնվի գավառական քիչ-շատ աչքի ընկնող կեդրոններուն մեջ: Գավառական այդ ջանքերուն օգնելու և դպրոց չեղած տեղերն ալ դպրոցներ բանալու մտածումով յոթանասունական թիվերուն դպրոցական այս շարժումը կսկսի աւելի լայն և ընդհանուր ծավալ ստանալ. կկազմվին «Արեւելյան ընկերութիւն», «Դպրոցասիրաց ընկերութիւն», «Արարատյան ընկերութիւն», «Կիլիկյան ընկերութիւն». այս

ընկերություններու միացումն է և իրարու ձուլումը, որ կկոչվի «Միացյալ ընկերություն», որ շատ լուրջ ու մեծ գործունեություն է ունեցած:

Այս ձևով ալ կառաջանան և վերջը կմիանան և հատուկ աղջիկներու կրթության համար «Ազգանվեր հայուհյաց ընկերությունը», «Դպրոցասեր տիկնանց ընկերությունը»: Կկազմվի նաև «Արհեստասիրաց ընկերություն» մը՝ երկրագործությունն ու արհեստները քաջալերելու համար: Ընկերություններու այս շարքին կպատկանի նաև Պոլսի մեջ կազմակերպված «Հայաստանի սովելոց հանձնաժողովը» 1878-ին, որ ահագին գործ է կատարած:

Տեղական ընկերություններու և դպրոցներու շատացման հետ կապված է նաև քիչ-շատ ամեն կողմ ընդհանուր շարժում մը, յոթանասունական թիվերեն սկսած, բանալու լսարաններ, դասախոսություններ իրիկվան կամ կիրակնօրյա և ճառախոսություններ. այդպես ալ դպրոցական հանդեսներ զանազան առիթներով, որոնց մեջ հատկապես պետք է հիշել Վարդանանց տոնակատարությունը, որ տեսակ մը ընդհանուր ազգասիրական ցույցի բնույթ էր ստացեր: Եվ մանավորապես սահմանադրության տարեդարձին տոնը մայիս մեկին:

Այս բոլորը նոր կյանք է, նոր շարժում, որ սահմանադրության հետ հետզհետե կբարձրանա վաթսունական թիվերու սկիզբեն մինչև յոթանասունական թիվերուն վերջը, ութսունական թիվերուն առաջին տարիները կհասնի իր գագաթնակետին. ուրկե ետքը քանի մը տարի կանգ կառնե վարանոտ և վերջը բոլորովին կխեղդվի կառավարական խստություններու ճնշման տակ՝ 1890-ին դեռ լիովին չհասած: Ճիշդ այս միևնույն աղեղնագծով կբարձրանա ու կիջնա նաև թատրոնական գործը:

Թատերական առաջին ներկայացումները Պոլսի մեջ տեղի կունենան զանազան թաղերու մեջ, մասնավոր տներու և մեկ-երկու դպրոցներու մեջ 1855-են սկսելով, շատ ցրիվ և հազվագյուտ. և անշուշտ շատ նախնական ներկայացումներ:

Սրապիոն Հեքիմյանի և Մկրտիչ Պեշիկթաշլյանի ջանքերով Խասքյոյի մեջ կբացվի առաջին թատրոնը 1858-ին, և թատրոնական

գործը անկե ետքը կշարունակվի վաթսունական թիվերուն՝ հետզհետե հաճախելով ու լրջանալով, որ յոթանասունական թվականներուն կհասնի իր գագաթնակետին: Արագ կերպով առաջ կուգան դերասանական մեծ ընդունակություններ, որոնք Վարդովյանի ու Մաղաքյանի ղեկավարության տակ շուտով հռչակ կստանան. խումբը կխաղար և՛ հայերեն, և՛ կուտար ներկայացումներ թուրքերեն լեզվով Վարդովյանի ղեկավարությամբ, որ անտարակույս շատ ավելի հասութաբեր էր: Հայ ու թուրք բեմը մեկ անգամեն կհիմնեին մեր դերասանները, որոնք օր օրի կշատնային, մեկը մյուսեն տաղանդավոր. և առանց որևէ եվրոպական կրթության ու նախապատրաստության եվրոպացիներու առջև պատիվով կխաղային թե՛ այր, թե՛ կին: Զարմանալի է այդ առատությունը բեմական շնորհալի դեմքերու, որոնք կարծես գետնեն կբուսնեին՝ և՛ ողբերգու, և՛ կատակերգու:

Վերի երկու անուններուն պետք է կցել Էքշյան, Ֆասուլաճյան, Մնակյան, Պենկլյան, Թոսպատ, Զափրաստ, Սիսակ, Թրյանց, Ադամյան և բազմաթիվ ավելի երկրորդական, բայց արժեքավոր ուժեր: Այդպես ալ իբրև դերասանուհի. չափազանց հետաքրքիր է այն ոգևորությունը, որով հրապարակ կուգան կանացի բեմական դեմքեր իրար ետևե և իրարմե արժանավոր: Արուսյակ, Հրանուշ, Պայծառ, Մարի-Նվարդ, Գարագաշյան քույրեր, Հրաչյա, Աստղիկ ու Սիրանույշ և դեռ ինչքա՞ն ուրիշներ՝ համեմատաբար ավելի երկրորդական:

Թատերական այս մեծ շարժումը դրական տեսակետեն փայլուն արդյունք մը չի տար. պոլսական հասարակությունը չուներ լուրջ բեմ մը՝ ունենալու ո՛չ կրթությունը, ո՛չ պահանջը. Թաղե թաղ իրենց ներկայացումները պտտցնող դերասանները դեռ նոր պիտի ճաշակ կրթեին: Ներկայացնելու համար հայ երկեր չկային, քանի մը հայրենասիրական պատմական թատերակներ էին եղածները, և դերասանները հարկադրված էին եվրոպական բեմերուն վրա անուն հանած երկեր թարգմանելու ու ներկայացնելու, որով մինչև ութսունական թիվերը կազմվեցավ բավական երկար խաղացանկ մը, ուր տիրողը մելոդրամատիկ երկերն էին, այսինքն՝

արդիւնք քաշող գրվածքներ:

Ժամանակ էր պետք, որ բեմը խսկապէս Հայանար, Հայ կեանքէ առնված և քիչ-շատ գեղարվեստական արժեքով թատերակններ առաջանային, իսկ այդ ժամանակը չկար. ուԹսունական Թիվերու սկիզբներեն սկսան կառավարական դժվարուԹյուններն ու արգելքները. մեծ ջանքերով ու դիմումներով կարելի կըլլար Հու ու Հոն բացառիկ ներկայացում մը տալ, ան ալ խիստ անմեղ խաղ մը: Մեկ-երկու տարիեն արգելվեցավ Հայերեն լեզվով ներկայացումը բացարձակապես: Նույնիսկ Թուրքերեն լեզվով ներկայացումները դժվարացան ու անպաշտոն կերպով արգելվեցան պալատական պատճառներով: Դերասաններուն մեկ մասը անցավ մասնավոր գործերու, ոմանք ապաստան գտան Ռուսաստանի Հայ բեմերուն վրա, ամբողջ Թատերական այդ կենդանի շարժումը մեռավ Պոլսի մեջ ուԹսունական Թիվերու կեսերեն:

Պետք չէ անցնինք առանց Հիշելու Թատերական այս ճիգերուն մեկ ուրիշ երեսը:

Սերովբե Պենկլյան դերասանուԹենեն ավելի օփերեԹային Հակումներ ուներ և երգեր ու խմբերգեր կկազմակերպեր գլխավորապես Թուրքերեն լեզվով: Անոր այդ փորձերուն նյուԹ մատակարարելու դրդումով երաժշտագետ Տիգրան Չուհաճյան սկսավ օփերեԹ պատրաստելու: Իր առաջին երաժշտական ստեղծագործուԹյունը Հայերենով էր «Օլիմբիա» (Արշակ Բ) անունով. փորձը Հաջողեցավ, անուն Հանեց և գնահատվեցավ եվրոպական երաժշտական շրջանակներու կողմե: Չուհաճյան իրար ետևե գրեց ու երաժշտեց «Արիֆ», «Քյոսե քեհյա» և «Լեպլեպիճի Հորհոր» օփերեԹները Թուրքերեն լեզվով. ավելի ուշ գրած է «Զեմիրե»:

Այս խաղերեն մանավանդ «Լեպլեպիճի» մեծ Հռչակ ստացավ և սիրվեցավ: Պոլսի մեջ Թատերական ներկայացումներու դժվարուԹենեն խուսափելով՝ Պենկլյանը անցավ Եգիպտոս, Հունաստան իր քանի մը երգիչ-դերասաններով, բոլորն ալ ինքնուս Թե՛ երգի և Թե՛ խաղի տեսակետեն, և մեծ Համակրանք ու ՀաջողուԹյուն գտավ ամեն տեղ:

Չուհաճյանը մեր առաջին երգահանն է և երաժշտական սիրելի դեմք մը եվրոպական իմաստով:

գ) ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՇԱՐԺՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅԵՆ ԴՈՒՐՍ

Այս շրջանի արևմտահայության քաղաքակրթական պատկերը ավելի լրիվ դարձնելու համար պետք է աչքի առաջ ունենալ նաև Թուրքիայեն դուրս տեղի ունեցող դպրոցական, լրագրական ու տպարանական աշխատանքը:

Հիմնական կեդրոնը Մխիթարյան հայրերն են թե՛ Վենետիկ, թե՛ Վիեննա. հրաշալի մամուլ ունին, որ անընդհատ կաշխատի գլխավորապես գրաբար գրությունները վրա, բայց բոլորովին անտեսված չէ նաև արդի հայերենով գրվածքը, թեև անշուշտ երկրորդաբար:

Ամեն պարագայի իրողություն է, որ Մխիթար աբբայեն սկսած Վենետիկի վանքին մեջ կա միշտ ուշադրություն դարձնող մը աշխարհիկ լեզվին վրա՝ գլխավորապես դրդված դպրոցական պահանջներե: «Բազմավեպ» ամսագիրը իր երկարատև աշխատանքով անշուշտ իր լուրջ բաժինը ունի արդի հայերենի կազմության ու տարածման գործին մեջ, ինչքան ալ որ Մխիթարյան հայրերը իրենց հոգիով ու համակրանքով գրաբարի հետ ըլլան:

Եվ վերջապես Վիեննայի Մխիթարյաններեն Արսեն Այտընյանը եղավ, որ իր «Քննական քերականությամբ» վերջին հարվածը տվավ գրաբար-աշխարհաբար վեճին ու մրցակցության և առաջին անգամ լրջորեն ձևակերպեց մեր նոր հայերեն լեզվի օրենքները: Գիրքը տպված է 1866 թվին:

Ինչպես տպարանական, այնպես ալ դպրոցական գործին մեջ շատ կարևոր է Մխիթարյաններուն մասնակցությունը մեր նոր գրականության այս առաջին շրջանին: Գտնվելով եվրոպական հողի վրա և եվրոպական դպրոցներու անմիջական օրինակներուն ազդեցության տակ՝ Մխիթարյանները ունեցած են լավագույն դպրոցական հաստատությունները այն ժամանակվան պայմաններուն մեջ: Ձեռք բերելով հնդկահայ Ռաֆայելյանի ու Մուրատյանի թողած կտակները՝ նյութապես ալ հնար ունեին ավելի բարձր միջնակարգ վարժարաններու ծրագրով դպրոց ունենալու:

Մուրատ-Ռաֆայելյան վարժարանը նախ Իտալիայի մեջ էր՝

Պատուա քաղաքը՝ իրենց վանքին ավելի մոտ, բայց շուտով փոխադրեցին Փարիզ: Դպրոցի հետ բնականաբար Փարիզ փոխադրվեցան քանի մը Հայրեր, որոնք իրենց շրջապատող ուսուցիչներու և ուսանող երիտասարդներու հետ միասին կազմեցին փոքրիկ Հայկական անկյուն մը Փարիզի մեջ: Հայ ուսանողություն մը արդեն կար Փարիզ դեռ քառասնական թիվերեն սկսած:

Շուտով ներքին վեճեր ծայր տվին Վենետիկի ու Փարիզի միաբանակիցներու մեջ, որու հետևանքով երեք վարդապետներ՝ Թեոդորյան, Գալֆայան և Այվազովսկի, բաժնվեցան վանքեն, թողին կաթոլիկությունը և անցան Հայ ազգային եկեղեցիին գիրկը: Բաժնվողները գոցված Մուրատյան վարժարանին տեղը բացին Հայկազյան վարժարան մը Փարիզի մեջ, հաստատեցին տպարան մը և սկսան հրատարակել ամսագիր մը արդի Հայերենով՝ «Մասյաց աղավնի»: Քիչ մը ետքը Այվազովսկին անցավ Խրիմ՝ իր նկարիչ եղբոր քով, հոն փոխադրեց ամսագիրը և հիմնեց Ղալիպյան վարժարանը 1858-ին՝ հրավիրելով Գալֆայանը իր քովը:

Այնպես որ վաթսունական թիվերուն գրական-դպրոցական արևմտահայ բույն մը կար Հարավային Ռուսաստանի մեջ: Եվ երկրորդ, շատ ավելի կարևոր ու գրեթե մնայուն գրական կեդրոն մը Փարիզի մեջ, ուր Շահնազարյան Հայ ազգային եկեղեցիին պատկանող վարդապետն ալ եկած էր Պոլսեն և ձեռնարկած մեր հին մատենագիրներեն մեկ-երկուքի հրատարակչության:

Ուրեմն՝ Վենետիկ, Վիեննա, Փարիզ, Թեոդոսիա:

դ) ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԻ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

Թուրքիայի մեջ ֆրանսերենն էր միջազգային լեզուն բոլոր պետություններու հետ հարաբերելու ատեն. ֆրանսերենը ընդունված էր նաև պետական բարձր վարժարաններուն մեջ իբրև հիմնական օտար լեզու, նույնիսկ դասախոսություններուն մեկ որոշ մասը բարձրագույն վարժարաններուն մեջ ֆրանսերեն լեզվով կկատարվեր: Երկրին մեջն ալ առևտրական և այլ հարաբերություններու համար ամենեն ծանոթ և ընթացիկ օտար լեզուն ֆրանսերեն էր:

Այս պայմաններուն մեջ Հայ դպրոցներն ալ բնականաբար

կսորվեցնեին ֆրանսերենը ամեն տեղ: Ամեն ավարտող դպրոցական գէշ-աղէկ կհասկընար ֆրանսերենը. և ով իր զարգացումը շարունակելու մասին կխորհեր ինքնաշխատության, պետք է դիմեր ֆրանսերեն գրքերու. որով բնականաբար ֆրանսական գրականության արտադրությունները էին ամենեն առաջ իբրև ազատ ընթերցման նյութ:

Եվ բոլոր անոնք, որ բարձրագույն ուսում ստանալու համար Եվրոպա երթալու հնարն ու պատեհությունը ունեին, ստվար մեծամասնությամբ կնախընտրեին Ֆրանսան և հատկապես Փարիզը, որու հրաշալիքներուն և հմայքներու մասին շարունակ կլսեին ու կկարդային. և վերջապես իրենց գիտցած լեզուն ֆրանսերենն էր:

Հետևանքը եղավ այն, որ ո՛չ միայն մեր միջին մտավորականության համար ընթացիկ օտար լեզուն եղավ ֆրանսերենը, այլև մեր բարձր մտավորականությունն ալ իր կրթությունը ստացավ ֆրանսական բարձրագույն հաստատություններու մեջ և սերտորեն ընտանեցավ ֆրանսական կյանքին, ըմբռնումներուն ու գրականության: Ուրեմն զարմանալու ոչինչ չկար, որ մեր գրեթե բոլոր թարգմանիչները մեր առաջին շրջանին թարգմանած են ֆրանսերենե և գրեթե բացառաբար ֆրանսական գրականութենե:

Իսկ թարգմանության դիմելը անխուսափելի պահանջ մըն է ամեն զարթնող ու բարձրանալ ուզող ժողովուրդի համար. ինքը դեռ իր սեփականը չունի, բայց ճաշակը արթնցած է և վայելքը ունենալ կուզե. ստիպված է ունեցողներեն, ավելի բարձր ու մշակված գրականություն ունեցող ժողովուրդներեն փոխ առնելու, այսինքն՝ թարգմանելու: Թարգմանիչը հարստացնել կուզե իր միջնակ մտավորականության միտքը, կրթել կուզե անոնց ճաշակը և ճամբա հարթել սեփական ստեղծագործություններու: Գրական առաջին փորձերը կկատարվին, թե՛ անհատներու կողմե, թե՛ ժողովուրդներու՝ հետևելով ու նմանվելով ուրիշներու հրապուրիչ ու գեղեցիկ երկերուն:

Այս պատճառով ալ թարգմանական գործը սերտորեն կապված է լրագրության գործին. լրագիրն ալ կրթել կուզե, ճաշակը արթնցնել կուզե , օրինակ տալ կուզե, հետաքրքրել և ընթերցա-

նութեան վարժեցնել կուզէ և միևնույն ժամանակ իր թերթին սյունակները լեցնել, որ այնքան ալ դյուրին գործ չէ, մանավանդ նոր ոտքի ելլող գրականութեան մը Համար:

Մեր առաջին կարևոր թարգմանիչն է «Մասիս»-ի խմբագիրը, որ Հիսունական թվականներեն մինչև մեր առաջին շրջանին վերջերը շարունակ թարգմաներ է Հիսուն կտորեն ավելի գիրք, որոնց մեջն են Էոժեն Սյուի «Թափառական Հրեան», «Գաղտնիք Հավատաքննութեան» և Սեյլիո Փելլիքքիոյի «Բանտք իմ»-ը: Երկրորդ կարևոր թարգմանիչն է Զմյուռնիայի «Ծաղիկ» թերթին (1861 – 1867) խմբագիրը՝ Գրիգոր Չիլինկիրյան, որ թարգմանած է երեսուն Հատորի չափ, որոնց մեջն են Վիկտոր Հյուկոյի «Թշվառները», Ապե Փրևոյի «Մանոն Լեսքոն», Լամարթինի «Ռաֆայելը», Մյուսեի «Դարուս մեկ զավկին խոստովանանքը»:

Երրորդ կարևոր թարգմանիչն է «Արևելյան մամուլ»-ի խմբագիրը, որ թարգմանած է նորեն բավականաչափ գրքեր, որոնց մեջն է Էոժեն Սյուի «Գաղտնիք Փարիզու», Ալեքսանդր Տյումայի «Երեք Հրացանակիրք»-ը, «Քսան տարի ետք»-ը, Ժյուլ Վեռնի «Աշխարհի շուրջը ութսուն օրվան մեջ», «Խորհրդավոր կղզին», Կյոթեի «Վերթեր»-ը, Վալտեր Սքոտի «Իվանհոեն»:

Բավական գրքերու թարգմանիչ է նաև Մեսրոպ Նուպարյան. թարգմանած է Հյուկոյի «Փարիզի Նոթր-Դամ»-ը ութսունական թիվերուն, Կյոթեի «Ֆաուստը», «Առակք Լաֆոնտենի», Ռասինի «Եսթերը», Պուալոյի «Գրակալը» և ուրիշներ:

Թարգմանություններ ունին Ստեփան Ոսկան, Գրիգոր Մսերյան, Կոստանդյան, Հարություն Տետեյան և ուրիշներ, մեծ մասով իգմիրցիներ. այնպես որ մեր թարգմանական գրականության առաջին շրջանին շատ բան կպարտինք Զմյուռնիային, ուր դպրոցական լուրջ գործ է եղած, ուր Տետեյան եղբայրներու տպարանը մեծ դեր է խաղացած և ուր բազմաթիվ գործիչներ զբաղված են թարգմանությամբ, և ուր Հրատարակված են մեր առաջին շրջանին «Արշալույս Արարատյան», «Արևելյան մամուլ», «Ծաղիկ» ու «Մնթեոր»:

Անշուշտ Պոլիս ալ միայն Ութուճյանը չէր, շատ շատերը ունին թարգմանություններ ցրիվ, ո՛չ իբրև Հատուկ գործ: Կարելի

է ասել, որ ամեն գրական դեմք մեկ-երկու կտոր թարգմանական աշխատանք ալ ունի. երբեմն շատ աչքի ընկնող երկեր, օրինակ՝ Այվազովսկիի թարգմանած «Քռիլովի առակները» ռուսերենէն:

Թարգմանական այս ընդարձակ շարժումը մեր առաջին երեսնամյակի ընթացքին ունեցած է երկու մեծ օգուտ: Առաջին՝ լայն հասարակության մեջ տարածած է ընթերցման սեր, կարդալու սովորություն, գիրքը դարձուցած է պահանջ, ըլլա ժամանցի համար, ըլլա զարգացման: Երկրորդ՝ շատ է նպաստած մեր արևմտյան արդի հայերենի զարգացման ու կանոնավորման և հարստացման: Զարգացած ու կանոնավորված եվրոպական լեզվի մը բոլոր երբերն ու արտահայտությունները ճշգրտեն տալու համար, ան ալ իրար հաջորդող սավար հատորներու մեջ, մեր թարգմանիչները հարկադրված էին բառեր հնարելու, օրենքներ մշակելու, լեզվին ճկունությունը փնտրելու և շատ բան կոկելու: Բայց և որոշ աստիճանի արվեստաբանություն են մտցուցած առավ և չորություն, սորկական հավատարմությամբ դեպի բնագրի լեզուն. և փոխանակ օտար արտահայտությունները հայացնելու՝ հայերենը օտարացուցած են, ամեն բան ուզեր են իրենցմե չինեն ու հնարեն, որովհետև կտրված են եղած բուն ժողովուրդի կենդանի հայերենեն, չեն ճանչցած կամ արհամարհած են բարբառներու ունեցած կենդանությունը. ավելի հակում ու ճաշակ ունին գրաբարի, թեև «մաքուր աշխարհաբար» գրելու ձգտումով են:

2. ՎԱԹՍՈՒՆԱԿԱՆ ԹՎԵՐՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ա) ՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ահա՛ այս կուլտուրական շարժման մեջն է, որ կսկսի իր ծիլերն արձակել մեր նոր գրականությունը և աճել:

Վաթսունեն յոթնասուն թվականներու ընթացքին մեր նոր հայերենով, ըլլա ավելի զուտ թե գրաբարախառն, երկեր հորինող մարդոց ամենուն անունները եթե հաշվի առնել ուզենանք՝ վաթսուն-յոթանասունի կհասնի այս շրջանի հեղինակներուն թիվը, սակայն քսան-քսանհինգ անուն հազիվ կմնա մեջտեղը, եթե քիչիկ

մը ավելի լրջորեն վերաբերվինք «Հեղինակ» ու «գրականություն» բառերուն:

Ի՞նչ մարդիկ են և ի՞նչ պատրաստությամբ այդ ավելի փոքրիկ խումբին պատկանող Հեղինակողները: Մեծ մասը, կեսի չափ. տեղական կրթություն ունի մեր ազգային թաղային վարժարաններեն և իրենց իսկական արժեքը ձեռք են բերած անձնական ճիգերով, ինքնաշխատությամբ, ընթերցանությամբ կամ պարզապես իրենց բնածին շնորՀքով: Ոմանք միայն գրաբար գիտեն, ուրիշներ նաև օտար եվրոպական լեզու մը: Վեց-յոթը Հոգի Վենետիկ են եղած, Մխիթարյան ուսում ունին և անշուշտ կրած են գոնե որոշ չափով մը իտալական ազդեցություն. Պարոնյանը գիտեր Հունարեն: Շատ քիչերն են, որ իրենց նախակրթարանեն ետքը եղած են Եվրոպա, գլխավորապես Փարիզ և ավելի կամ պակաս լրջությամբ շփված են բարձր ուսման ու Համալսարանի, Հատկապես ֆրանսական գրականության, ինչպես Ութուճյան, Ոսկան, Օտյան, Մամուրյան, Ծերենց:

Այս Հեղինակներեն Հինգ-վեց Հոգի կոչումով Հոգևորական են, մնացածներեն միայն մեկը կին է՝ Սրբուհի Տյուսապ: Հոգևորական թե աշխարՀական՝ գրեթե բոլորն ալ ուսուցիչ են կա՛մ տևականորեն, կա՛մ եղած են ուսուցիչ և վերջը անցած են ուրիշ գործի, ինչպես, օրինակ, Պարոնյանը: Ծերենց բժիշկ է, Օտյան պետական մարդ, Մամուրյան՝ խմբագիր: Բոլորն ալ ավելի կամ պակաս չափով կդառնան դպրոցի ու ուսուցման շուրջը, մոտիկ կապեր ունին պարբերական մամուլի Հետ, այսինքն՝ իրենց ամբողջ կյանքով ու գործով Հյուսված են ժողովուրդի Հոգեկան բարձրացման գործին: Եվ գրելն ու Հորինելն ալ իրենց այդ Հանրային գործին ու կոչումին մեկ երեսը կնկատեն:

Հոդվածներ կգրեն, ճառեր կխոսին, դաս կուտան, դասագրքեր կպատրաստեն, բառարաններ կշինեն, ոտանավորներ կգրեն և կՀորինեն թատերական երկեր ու վիպական գրություններ: Նեղ մտքով գիտական աշխատանքի մոտեցող քիչ կա և մոտեցողն ալ թեթևակի, քանի որ շատ Համեստ է ընդՀանրապես իրենց գիտական պաշարն ու պատրաստությունը և շատ պակաս է գիտական Հետաքրքրությունը: Գիտության սերը և գիտության նվիրումը

ուշ հասնող պտուղ է և բազմակողմանի նախապատրաստական պահանջներ ունի, որ անկարելի է իրականացնել նոր ոտքի ելլել ուզող գրական միջավայրի մը մէջ:

Այս շրջանի գլխաւոր բովածը լեզվաբանական վէճեր են, քերականական առաջարկներ, ինչպէս Ռուսինեանի ու Մինաս Չերազի մտցնել ուզած բառագրական նորութիւնները, որոնք արմատ բռնել չէին կրնար, քանի որ քիչ հաշվի կառնէին կենդանի լեզվի մը կենդանի ծագումն ու պահանջները: Այս շրջանի խոկական գլխաւոր արժէք ունեցող լեզվական ուսումնասիրութիւնը Այտընեանի քերականութիւնն է՝ իր ավելի ևս հետաքրքիր հառաջաբանով:

Այնպէս որ առաջին շրջանի ամբողջ գրական աշխատանքը կեդրոնացած է գեղարվեստական տեսակի երկերու ստեղծագործութեան վրայ: Եվ հոս ալ շատ որոշ կերպով սկիզբները, այսինքն՝ վաթսունական թիվերուն տիրողը քնարերգութիւնն է ու ճառախոսութիւնը, որոնք իրարու շատ մօտիկ են խորքով, քանի որ երկուքն ալ զգացումներու անմիջական արտահայտութեան կծառային: Այդ երկուքէն զատ վաթսունական թիվերուն շատ չեշտված էր նաև թատերական տեսակի գրական ստեղծագործութիւնը, որ սակայն կգործածէին հեղինակները քնարական ու ճառախոսական նպատակներու ծառայեցնելու համար:

Յոթանասունական և ութսունական թիվերուն է, որ հետզհետէ ստեղծագործութեան վիպական ու վիպասանական արձակ գրութիւնները կդառնան կեդրոն և տիրող. և երկու ձևով՝ թէ՛ չիտակ, թէ՛ կատակ:

բ) ՔՆԱՐԵՐԳՈՒՆԵՐ

Վաթսունական թիվերուն ոտանավորով գրողներուն թիվը մեծ է. ամենքն ալ ոգևորված են սահմանադրութեամբ, ազգով, ուսումով, հայ լեզվով, հայ պատմութեամբ ու մեր պատմական հին քաջերով. ինչ որ հայ է ու հայկական՝ պանծալի է: Հիմա մեր վրա քիչ մը երեխայական տպավորութիւն կընէ այս բոլորը, բայց բնական է. ամեն նոր զարթնող ժողովուրդ պետք ունի այդ ինքնագովութեան, ոգևորութեան, բնազդական է, ինքն իրեն սիրտ

տալու Համար: Եվ այդ սաՀմանադրական ու ազգասիրական ոտանավորները գրված են իրենց ոգևորությունը արտաՀայտելու և ոգևորություն առաջացնելու Համար: Իրականություն ու չափավորություն փնտրելու ժամանակը չէ:

Գալով մշակումին՝ կան անշուշտ ջերմ տողեր, բայց ընդՀանրապես պակաս է Թուրչքը և շատ Հազիվ կզգացվի քնարական թրթիռը. տիրողը ճառական տրամադրությունն է. ոտանավորով գրված ճառեր են ավելի, քան քնարերգություն:

Եվ գրողները Հայտնի դեմքեր են եղած ժամանակին՝ Ֆեյեկյան, Փափազյան, Այվազյան, Մնզպուրյան և ուրիշներ. իրենց այդ ոտանավորները գնաՀատված են, Հանդեսներու մեջ կարդացված, մեկ-երկուքը երգված, բայց գրականության Համար կմնան երկրորդական աստիճանի վրա:

Զորս քնարերգուներ կզատվին ընդՀանուր Հոսանքեն և մնայուն արժեք ունին: Եվ իրենց արժեքը գլխավորապես իրենց անձնական-անՀատական քնարերգության մեջն է: Ազգային թելը այն ատեն միայն գեղարվեստորեն կՀնչե ու կզարնե մեր սրտին, երբ ճառերու փոխարեն իրողությունները կպատկերացվին, երբ դատողություններու և ընդՀանուր գովաբանություններու փոխարեն իր անձնական Հանրային զգացումի Հորդ ու անմիջական արտաՀայտությունը կծորի:

1. Ամենեն առաջինը, ամենեն լրիվը և ամենեն ալ գեղարվեստականը անտարակույս Մկրտիչ Պեշիկթաշլյանն է: Շատ սիրելի դեմք մը իբրև մարդ, իբրև մտավորական Հանրային գործիչ, իբրև վեր խոյացող Հայ և իբրև ազնիվ ու մշակված բանաստեղծ, որ և տրամիկ դեմք մըն է իր խոր սիրով, դժբաղդ կյանքով ու վաղաժամ մաՀով:

Իր գրաբար գրած սիրո ոտանավորները շատ ավելի խորեն կՀոսին, բայց քիչերուն են մատչելի. իր աշխարՀաբար գրած ոտանավորները, որ կխոսվին գրաբար են նորեն, թվով շատ չեն, երկու տասնյակ, և ո՛չ նույն խորության, բայց ատոր փոխարեն նո՛ր են, մեր նոր կյանքին կապված, նոր մշակումով և շատ փափուկ ու շատ ներդաշնակ:

Ինքը միակն է, որ երգած է կռիվ ու վառոդ մեր բոլոր Հեղա-

փոխական երգերին առաջ. և երգած է ո՛չ անցյալ հուշերով, ո՛չ ալ ապագայի երազանքով, այլ օրվան իրականության ու Ձեյթունի դեպքերուն կապված: Եվ երգած ու վիպած է շատ պարզ ու սրտանց, ի՞նչ փույթ, թե հետևողությամբ օտար բանաստեղծի մը: Իր մյուս երգերը հայրենասիրական են, ընդհանուր, հեռավոր, երազկոտ հայրենասիրություն մը, որ անշուշտ Վենետիկեն էր հետը բերած, բայց անձնական շեշտով մը. և նոր ձևով մը, անուշ ու գրավիչ, և որ ամեն հայու շրթունքին է հիմա, օրինակ՝ «Օ՜հ, ի՞նչ անուշ»:

Եթե երգածը հայրենասիրությունը չէ՝ եղբայրությունն է, որ նորեն վանքին կուգա, կաթոլիկ հայ վանքե: Բայց ինչ ալ որ կերգե, իր սրտեն կերգե: Իսկ աշխարհաբարով գրած սիրո երգերը, որ միշտ քնքուշ են ու ազվոր, չունին զգացումի մասնավոր խորություն, ինչպես արդեն ըսի:

2. Պեշիկթաշլյանի հետ համեմատած՝ իր դասընկերը և կյանքի մեջ իր ընկերը՝ Թովմաս Թերզյան, շատ է աններդաշնակ և արվեստով ալ տկար: Իրարու վրա կուտակված երկար ոտանավորի տուներ, ուր մտածումներն են տիրողը: Բայց այդ բոլոր կուտակումներուն ու մտորումներուն մեջ գեղեցիկ պատկերացումներ կան, համամարդկային շեշտ մը կա, թեև տկար արտահայտված. և հափշտակություն մը կա մեծ բնության հանդեպ, որ արդեն ինքնին մեծ բանաստեղծություն մըն է:

Դժվար է Թերզյանի ոտանավորները կարդալը և ուշադիր հետևիլը մանավանդ մեր այս հևիհև դարուն մեջ, բայց կարդացողը մեջեմեջ կվարձատրվի: Թերզյան բանաստեղծ մըն է:

3. Թերզյանի հակոտնյան է, իր նյութերու և իր տրամադրության տեսակետեն, նորեն իր դասընկերը՝ Մկրտիչ Աճեմյան, որուն մուսան անշուշտ մուսա մըն է, բայց որ բնավ գործ չունի Թերզյանի երկինքներուն, անդունդներուն և օվկիաններուն հետ: Աճեմյանի մուսան տունեն դուրս չի գար, առանձին բանաստեղծություն մըն է: Նյութերն ալ, մշակումն ալ, չափն ալ, հանգն ալ, ամեն ինչ պարզուկ, առօրյա ու տնային. միշտ տանու հագուստով ու մարդկային հասարակ խոսվածքով և պարզ աշխարհաբարով. ատոր համար ալ հաճելի, քանի որ բնավ ճիգ չի պահանջեր: Իր

հաճելիութենէն միշտ կտուժէ, երբ խիստ հասարակի և խիստ սովորականի սահմաններուն կքալի:

4. Այս երեք բանաստեղծներէն ո՛չ թէ ետքը, այլ այս երեքին դէմը պէտք է դրվի Պետրոս Դուրյանը, որ չունի Պեշիկթաշլյանի ո՛չ լրութիւնը և ո՛չ արվեստի մշակումը, ո՛չ ալ Թերզյանի փիլիսոփայող բնապաշտութիւնը. ի՞նչ կպահանջեք երիտասարդէ մը, որ քսան տարեկան իջած է գերեզման (1851 - 1872):

Բայց այդ տարիքին մէջն ալ ունի բնականէն շատ սուր տեսնող աչքեր, ըսելու ներսէն եկող նոր ձևեր և զգացումներու արտահայտության ի՞նչ մեծ թափ և ի՞նչ աղվոր աշխարհիկ լեզու: Ինչ որ գրած է Դուրյան՝ մեզի զարմանք կպատճառէ. և խոր հաճույք իր թարմութեամբ, իր գեղեցկութեամբ և իր ինքնաբուխ ու անմշակ արվեստով: Եվ կցնցէ մեզի իր մահով և Աստծու դեմ մղած իր կռիվով:

Իր ամբողջ քնարերգութիւնը փունջ մը երգեր են. երբ կկարդանք՝ կզգանք, որ կարդացածնիս մեծ ու կարևոր երկի մը առաջին էջերն են միայն, որուն շարունակութիւնը սակայն չունինք. պատռված է:

Հակառակ Դուրյանի խիստ թարմ տարիքին և իր բանաստեղծութիւններու փոքր թվին՝ շատ աչքի կընկնի իր ազդեցութիւնը արևմտյան մեր արդի լեզվի զարգացման վրա: Հեռու վենետիկյան անմիջական շփումէ, բուսած ուղղակի ժողովուրդի ծոցէն և բնածին մեծ ու առողջ տաղանդով՝ իր երգերը պարզ են, արու, գունագեղ և անհամեմատ ավելի մոտիկ ժողովրդական կենդանի արտահայտության և աշխարհիկ լեզվի հստակ կառուցումին:

Եվ որովհետև Դուրյան եղավ շատ սիրված ու շատ կարդացված հեղինակ մը՝ իր ձևերն ու լեզուն դարձան օրինակ իր ետևէն եկողներուն, որով մեր արդի գրական լեզվին վրա դրավ իր կնիքը:

Կրնանք ըսել, որ Պետրոս Դուրյան մեր արևմտյան արդի լեզվի առաջին լուրջ մշակողն ու գործածողն է իբրև հեղինակ: Նույն դերը ունի, ինչ Գամառ-Քաթիպան արդի արևելյան գրական լեզվի մշակման ու տարածման գործին մեջ:

գ) ԹԱՏՐԵՐԳՈՒՆԵՐ

Երբ 1857 թվին Օրթաքյոյի մեջ հայ թատրոնի հիմը կդնեին, անով ալ բեմական երկեր ունենալու հիմքը կդրվեր: Քանի մը թատերական գրվածքներ իսկույն թարգմանվեցան իհարկե հիմնադիրներուն իսկ գրչով, բայց թարգմանական երկերը միշտ խորթ կհնչեին բեմի դեռ անվարժ ժողովուրդին համար:

Հայ հասարակությունը հայ նյութ կփնտրեր բնական կերպով, մանավանդ այդ ազգասիրական ու սահմանադրական առաջին արբեցության օրերուն:

Այդ պահանջը բավարարելու համար է, որ գրած են Պեշիկթաշլյան, Հեքիմյան, Թերզյան և Դուրյան իրենց թատերական երկերը: Բայց տարբեր բան է հայ թատերական երկերու պահանջը զգալ ու գրել ցանկալ, և տարբեր բան է թատերական երկ մը գրել կարողանալ:

Թատերական երկը իր ներքին օրենքներն ունի և շատ խիստ պահանջներ, որուն կրնան բավարարել միայն անոնք, որ բնականեն այդ տեսակի երկեր ստեղծագործելու հակումն ու տաղանդը ունին: Ինչպես որ ցանկանալով երաժշտական կտոր մը հորինել չես կրնար, այնպես ալ թատերական քիչ-շատ տանելի երկ մը ստեղծելու համար պետք է բնածին հատուկ ձիրքը ունենաս: Բանաստեղծ ըլլալը հերիք չէ թատերական հաջող երկ մը ստեղծագործելու համար, ինչպես և թատերական հաջող կտոր մը գրած ըլլալը ապացույց չէ, որ կրնաս նաև քնարական արժեքավոր երգեր ստեղծագործել: Մինչև անգամ որոշ աստիճանի հակադրություն կա այդ երկու բնածին շնորհքներուն մեջ:

Մեզի համար հիմա արդեն ինքնին հասկընալի տարրական այս հասկացողությունները շատ պարզ չէին մեր գրական գործիչներուն համար ասկե դար մը առաջ, երբ դեռ մեջտեղ ոչինչ չկար և ամեն բան մեկ անգամեն կուզեին մեջտեղ դնել: Լեզուն գիտեին, նյութը ունեին, խաղալու բեմը կար, իրենք ալ շնորհքի տեր բանաստեղծներ՝ ինչո՞ւ պիտի չգրեին. հապա ո՞վ պիտի գրեր: Մանավանդ որ բեմի ու թատրոնի և ընդհանրապես գրականության վրա կնայեին տարբեր հայացքով: Բեմը և գրականությունը չէին նկատեր իբրև կյանքի ու հոգիի պատկերացման վայր, այլ խրատելու, ճա-

ռելու, ուսուցանելու, ժողովուրդը կրթելու և ազգային գիտակցությունը արթնցնելու և ազգային հպարտություն ներշնչելու միջոցներ էին առոնք. հրապուրի՛չ միջոցներ:

Բեմ կհանվեին մեր թագավորները, մեր սուրբերը, մեր մեծ զորավարներն ու հերոսները՝ իրենց ոսկի թագերով, արծաթ սուրերով և խայտաբղետ հագուստներով, որոնք կուգային ու բեմին վրա երկար ու գեղեցիկ և հնչեղ ճառեր կարտասանեին հայրենասիրական տաք շունչով և ոգևորված շարժումներով, եթե հետն ալ քիչիկ մը երգ ու երաժշտություն խառնեին՝ ներկայացումը կդառնար կատարյալ հաջողություն և բազմությունը հուզված և արցունքոտ աչքերով կդառնար տուն: Ալ ի՞նչ կուզես. աս էր օրվան պահանջը, աս էր հասարակության ճաշակել կրցածը և աս էր նաև հեղինակներուն ուզածն ու ձգտածը:

Մեր առաջին թատերագիրը նորեն Պեշիկթաշլյանն է, գրած է չորս հատ մեր պատմության էջերեն հանած ողբերգություններ՝ «Կոռնակ», «Վահե», «Վահան Մամիկոնյան» և «Արշակ Բ». թարգմանած է՝ «Մահ Կեսարու», «Սավուղ» և «Բրուտոս»: Գրած է նաև մեկ-երկու հատ փոքրիկ կատակ գրություններ: Պեշիկթաշլյանի բոլոր թատերական երկերուն մեջեն փոքրիկ կատակ մը միայն՝ «Երեք քաջեր», մինչև հիմա դիմացեր է բեմին և դեռ կդիմանա մանավանդ դպրոցական բեմերուն:

Հեքիմյանի ու Թերզյանի բեմական երկերը նույն տեսակին կպատկանին: Հեքիմյան գրած է գրաբար յոթ-ութ կտոր, որ բեմի կոշտ տախտակներուն վրա հանել կարողանալու համար ակամա ստիպված էին թարգմանելու աշխարհաբարի, ինչպես արդեն հիշած եմ: Թերզյան գրած է, և ըստ երևույթին կիսովին հարկադրաբար, «Սանդուխտ», «Հովսեփ Գեղեցիկ» և «Արշակ Բ»: Պեշիկթաշլյան գոնե ուժեղ բանաստեղծական շունչ ունի: Իր երկու ընկերներուն այս թատերական երկերը միայն գրապատմական արժեք ունին. ցույց կուտան ժամանակի ոգին ու ճիգերը:

Ավելի հետաքրքիր է Պետրոս Դուրյան, որ 16 տարեկան հասակեն սկսած է թատերախաղեր գրել. գրած է թիվով ինը հատ. «Վարդ և Շուշան», «Սև հողեր», «Ավերումն Անի մայրաքաղաքին», «Անկումն Արշակունի հարստության», «Արտաշես աշ-

խարհակալ», «Կործանումն Հռոմա», «Շուշանիկ», «Տիգրան Բ», «Թ'ատրոն կամ Թշվառներ»: Տհաս գրություններ են անշուշտ, բայց այս երկերուն մեջն ալ կենդանի գրիչ ունի. էջեր կան, որ սիրով կկարդացվին:

Եվ շատ հետաքրքիր է իր փորձը ժամանակակից կյանքեն իր նյութն առնելու. իրավ է, անգամ մը միայն: Հավանորեն Սրապիոն Թ'ղլյանի ազդեցությունն է, որ Դուրյանի ուսուցիչն է եղած և ինքն ալ գրած է նույն ուղղությամբ թատերակներ, որոնք դժբախտաբար մեջտեղ չկան:

Թե՛ բեմական տեսակետեն և թե՛ գրական, այս շրջանի ամենեն աչքի ընկնող թատերագիրը Նարպեյն է՝ Խորեն Գալֆայան, կաթոլիկութենե ազգային եկեղեցին անցած բարձր հոգևորական մը, որ գրական դեմք մըն է (1833 - 1892):

Հայտնի են իր ազգասիրական գրաբար տաղավորները, որոնք ինչքան ալ իրենց ժամանակի ճառական ու երկարաբան թերությունները ունենան իրենց վրա, բայց և այնպես իրենց մեջը ավելի կորով ունին: Ունի նաև ամբողջ հատոր մը սիրային տաղավորներու «քո՛ւյր իմ» ըսելով, որով շատ բան չի փոխվիր իհարկե: Երբ մարդս իր զգացածն ու մտածածը հարազատորեն ըսել չի կրնար կամ չի ուզեր, պետք չէ այդ մասին խոսի. գրածը կդառնա կամ կհնչե կեղծ: Այս տաղավորներն ալ կմնան գրաբար ստեղծագործություններու իզուր ճիգերուն մեջ:

Նարպեյ գրած է երկու թատերական երկ, զույգ և խմիջիայլոց, առանց մասնավոր կարևորություն տալու, դպրոցի մը մեջ ներկայացնելու դիտումով, ուրեմն և աշխարհիկ լեզվով: Այդ երկու երկերն են, որ պիտի մնան իրմե մեր նոր գրականության մեջ իբրև առաջին քիչ-շատ հաջող թատերական փորձեր:

Մեկը ողբերգություն մըն է, նախորդ հեղինակներուն նման մեր պատմական անցյալեն առնված և նույն ազգասիրական ոգիով, բայց ինքը բեմական ավելի շնորհք ունի և իր ներկայացուցած հերոսներուն վրա ավելի կյանք կա, և այդ պատճառով ալ մինչև հիմա կմնա բեմական խաղացանկերու վրա: Երբ որևէ հանդիսավոր առիթով հարկ զգացվի ազգային-պատմական խաղ մը բեմադրելու՝ խնկույն կսկսին փնտրել իր «Արշակ Բ»-ը: «Արշակ Բ»-ներ գրեր

են շատերը և դեռ շատերն ալ պիտի գրեն, հանցավորը Փավստոս Բուզանդի բացառիկ գիրքն է, այսինքն՝ հին ու անգիր վեպին հրապույրը:

Իր երկրորդ գործը կատակերգություն մըն է, աշխույժ ու հետաքրքիր գրվածք մը և մեր գրականության առաջին իսկական կատակերգությունը, կկոչվի «Ալաֆրանկա», որ տպված է 1862-ին: Կենդանի ընթացքով, կենդանի դեմքերով, բնական ծիծաղով թատերակ մը, որ մեր բեմերուն վրա մնայուն երկ մը կդառնար, եթե չարաբաստիկ «քույր իմ»-ը հոս ալ գործը խանգարած չըլլար: Կին չկա խաղին մեջ, որով խաղին զսպանակը կոտրված է. կզգաս, որ պակաս ու եղծված ստեղծագործություն մըն է՝ իր ունեցած շատ մը առավելություններուն հակառակ:

Նարպեյի համար դժվար չէր քիչ մը զգուշությամբ մեկ-երկու կին մտցնելը խաղին մեջ, այդ համարձակությունը ան ունի. հավանորեն արգելքը այն միջավայրն էր, ուր խաղացվելու համար գրված էր երկը:

3. ՎԻՊԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

ա) ՎԵՊԵՐ

Վիպական զանազան ուղղությամբ փորձեր ունեցած է մեր նոր գրականությունը նույնիսկ հիսունական-վաթսունական թվականներուն. բայց յոթանասունական և ութսունական թիվերուն է, որ արձակն ու վեպը ընդհանուր տիրող ձև կդառնան:

Վեպ գրող հեղինակները հետևյալներն են.

Խաչատուր Միսաքյան. պոլսեցի, ինքն իր գլխուն հավնած խխունջ մարդ մը, երկար ժամանակ Փարիզ ապրած և իր մասին բավական խոսեցուցած, որ ուներ գրաբարագետի համբավ և ոտանավորներ: Գրած է աշխարհաբար «Սոփիա» անունով վեպ մը իր փարիզյան կյանքի առաջին տպավորություններով հյուսված:

Արմենակ Հայկունի (1835 – 1866), որբ մը ձեռներեց, բողոքական կրթությամբ, եղած է անգլիական բանակին մեջ Ղրիմի պատերազմի ատեն և գրած է «Էլիզա» անունով վեպ մը, որ տպված է 1861-ին, ուր իր սերը, Հայաստանի զանազան մասերը

և ամեն տեսակ դատողություններ և արկածներ հյուսված են իրար:

Ս. Տեր-Սարգսյան, վանցի ուսուցիչ մը, որ Պոլսի մեջ եղած ատեն կգրե վեպ մը «Շահենն ի Սիպիր» անունով, տպված է 1876-ին. Հայրենի վայրերու նկարագրություններով, արկածալի դեպքերով, կիսահեղափոխական, կիսասիրային, կիսագրական, կես-բարբառական լեզվով գրություն մը:

Մաթեոս Մամուրյան (1830 – 1901), «Արևելյան մամուլի» խմբագիրը, բարեխիղճ աշխատող ու թարգմանիչ, Փարիզի Մուրատյան վարժարանեն. գրած է «Հայկական նամականի» (1872) անունով վեպի նման հասարակական ու քննադատական երկ մը, այլև ուրիշ ամբողջական վեպ մը «Սև լեռին մարդը», Հայրենասիրական ձգտումով և հայրենական վայրերու նկարագրությամբ «Շահենն ի Սիպիր»-ի ոգիով, որ չունի սակայն անոր ավելի տաք շունչը՝ երկրին ու պայմաններուն անձնապես անծանոթ ըլլալուն հետևանքով:

Սրբուհի Տյուսաբ 1883-են մինչև 1887 չորս տարվան ընթացքին գրած է երեք վեպ՝ «Մայտա», «Սիրանուշ» և «Արաքսիա». ինքը կին մը և գրածները կնոջ ազատագրության ջատագովություն. ամենեն հաջողն է «Մայտա»-ն: Շատ հարգված դեմք մը ինքը հեղինակուհին՝ իր ընտանիքով ու դիրքով, իր բնավորությամբ և անով, որ Պեշիկթաշլյանի աշակերտուհին ու սերն է եղած: Իբրև առաջին կին հեղինակ՝ մեծ համակրանքի է արժանացած:

Տիգրան Կամսարական 1888 թվին «Արևելքի» մեջ, իբրև թերթոն, հրատարակած է երկար վեպ մը «Վարժապետին աղջիկը» անունով, ինքը հեղինակը իր կյանքին քանի տարիները հազիվ լրացուցած: Գրվածքը ժամանակին մեծ աղմուկ է հանած, իբրև Պոլսի իրականութենեն առնված և նոր հոգեբանական շունչով գրված երկ մը:

Քանի տարեկան տղա մը անշուշտ կրնա կարճ կամ երկար քնարական հաջող բանաստեղծություններ գրել, նույնիսկ գեղեցիկ պատկեր մը, նկարագրություն մը, ապրված վայրկյան մը, որոնում մը, թռիչք մը ստորագրել. բայց հասարակության մը կյանքը պատկերացնող և հոգեբանական վերլուծությամբ հանրային արժեք ներկայացնող վեպ մը գրել չի կրնար: Պետք է ապրած ու տեսած

ըլլա Հեղինակը, պէտք է ժամանակ ունենա, որ կարողանա ճանչնալ իրականութիւնը իր խորքին մէջ և լրջօրէն ծանօթ դառնա հոգեբանական բազմատեսակ վիճակներուն, որ իր գրական ձեռնարկը իսկապէս գեղարվեստական արժէք ստանա:

Եթե «Վարժապետին աղջիկը» շատերու գնահատանքին է արժանացած, կնշանակե Հեղինակը ուժեղ երևակայութիւն ունի և գրական կառուցումներու ճարտարապետական շնորհք, ինչպես և բնականեն հոգեբանական հոտառութիւն: Երեքն ալ շատ կարևոր հատկութիւններ վիպագրի մը համար, որոնք սակայն առանձին առած գեղարվեստական ճշմարիտ երկ մը հօրինել չեն կրնար, քանի դեռ խորքը, բուն ապրումը չկա: Այս տեսակի «հաջողած» երկ մը խոստում մըն է միայն, որ քանի մը տարի ետքը գալու է իսկական գեղարվեստական ստեղծագործութիւնը: Դժբաղդաբար հեղինակը չէ պահած իր խոստումը:

Այս բոլոր վեպերն ալ երկարաշունչ երկեր են և շատ հետաքրքիր իրենց ժամանակի մտայնութիւնը, ձգտումներն ու խարխափումները ըմբռնելու համար: Գրապատմական լուրջ արժէք ունին անոնք, բայց գեղարվեստական արժէք չունին:

Յոթանասուն-ութսունական թիվերուն միակ իսկական գեղարվեստական արժէք ներկայացնող հեղինակները երկու հոգի են՝ Ծերենց և Պարոնյան:

Ծերենց (1822 – 1888), որ բժիշկ մըն է վենետիկյան նախնական կրթութեամբ և բավական ճամբորդած ու կարդացած մարդ, գրած է երեք վեպ, երեքի ալ նյութը Հայ պատմութեան էջերեն քաշած «Թորոս Լևոնի» (1878), «Երկունք իններորդ դարու» (1879) և գործնականապես կիսատ մնացած վեպ մը՝ «Թեոդորոս Ռշտունի», որուն առաջին գլուխն է միայն վիպած և շատ գեղեցիկ. մնացած ամբողջ գիրքը վեպ չէ, այլ վեպի համար հավաքած պատմական նյութ:

Պատմական վեպեր, մանավանդ տաղաչափութեամբ գրված, շատ կան վենետիկյան և ոչ-վենետիկյան գրիչներու երկերուն մէջ. մեծ մասով գրաբար, բայց հոս ու հոն նաև աշխարհաբար: Եվ բոլորն ալ նույն խոշոր թերութիւնն ունին. ճառ են, գովասանք, ներբող, երկար-երկար տողերով, սրբացում, պանծացում, բայց ո չ

պատկերացում: Մարմինը, Հոգին, պատկերը, իրականը, կենդանի շրջապատը և Հոգեբանական նրբութիւնն ու ճշմարտութիւնը չեն Հետաքրքրած ճառագիրները. և ընդՀանրապես գործողութիւն ալ չկա իրենց վիպումին մէջ. անոնք խրատ կուտան, Հայրենասիրութիւն կքարոզեն, եղբայրութիւն կքարոզեն կամ եկեղեցական պաշտամունք կկատարեն. ժամանակ չունին գեղարվեստի պաՀանջներով զբաղելու և ատոր Համար ալ գեղարվեստեն դուրս կմնան:

Արդ՝ Ծերենց առաջինն է և տաղանդավոր, որ պատմական նյութերուն կմոտենա իբրև գեղարվեստագէտ: Իր ամբողջ աշխատանքը կենդանացումն է պատմական սեղմ ու չոր տողերու՝ Հոգի դնելու Հոգի չեղած տեղը, կենդանի խոսք ու կենդանի շարժում ստեղծելու Համար, ավորե և արյունե կերտված իսկական մարդիկ՝ ամեն մեկը իր ուրույն Հոգեբանութեամբ, իր դեմքով, իր արտաքինով ու ներքինով, այլև ամբողջ շրջապատը և իրար Հաջորդող դեպքերը Հնար եղածին չափ պարզ, Հորդ և Հոսուն: Այսինքն՝ կենդանի պատկերացում, կենդանի շարժում և կենդանի Հոգեբանութիւն: Այս կենդանութեան մեջն է Ծերենցի բերած և՛ նորութիւնը, և՛ գեղեցկութիւնը:

Ծերենց ալ Հայրենասիրութիւն կքարոզե, բայց գործով, պատկերացումով, կենդանի տիպարներ ստեղծելով և իր ամբողջ վեպի Հորդ Հոսումով. ան Հայրենասիրութիւնը կպատկերե, դեմք կդնե, կդրոշմե աչքերուդ ու Հոգիիդ մեջ, առանց ձանձրալի քարոզչութեան և սնամեջ դովաբանութեան. աս է գեղարվեստի պաշտոնը:

Ծերենցի «Թ՚որոսն» ու «Երկունքը» միշտ ալ մնան պիտի մեր գրականութեան մեջ իբրև նոր Հանոր սերունդներու առաջին ամենեն գրավիչ ու գեղարվեստական արժեքով ընթերցանութեան գրքեր:

բ) ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ

Հակոբ Պարոնյանը (1842 – 1892) առաջին երեսնամյակի մեր արևմտյան գրականութեան տիրական դեմքն է անպայման, իբրև գեղարվեստական ստեղծագործող:

Իր ժամանակին ալ, իրմեն առաջ ալ ունեցած է մեր պոլսական

գրականությունը և՛ գավեշտական թերթեր, և՛ երգիծաբան գրողներ. Վոսփորի ափերուն վրա այդ ապրանքեն միշտ ալ եղած է, բայց ասոնցմե և ո՛չ մեկը ո՛չ խորքով, ո՛չ ձևով, ո՛չ լրջությամբ, ո՛չ որակով, ո՛չ քանակով համեմատվիլ չի կրնար Պարոնյանի հետ: Ուրիշ է խնդացնիլը, ուրիշ է խնդացնելով գեղարվեստ ընելը:

Իր գրությունները բազմատեսակ են, մեծ մասը փոքրիկ կյանքի պատկերներ, տեսարաններ, խոսակցություններ, խաղեր, կատակներ, ակնարկներ, իբրև օրացույց, իբրև բառարան, իբրև հիշատակարան գրված կտորներ: Իր գրելու տիրող ձևը կտորբրդուճ է:

Իր համեմատաբար ավելի երկար ու ավելի վեպի նմանող երկերն են «Պտույտ մը Պոլսի թաղերուն մեջ», «Քաղաքավարության վնասները», «Ազգային ջոջեր», «Մեծապատիվ մուրացկաններ», «Հոս-հոսի մը ձեռագիրը» և մեկ-երկու բեմական գրություններ՝ «Արևելյան ատամնաբույժ», «Պաղտասար աղբար»:

Այս բոլոր ավելի երկարաշունչ գրություններուն մեջ չունի սակայն կուռ ու ամբողջական կառուցում. լավագույն պարագային կյանքի պատկերներու շարք մըն է՝ թելով մը իրարու կապված, համրիչի պես, ինչպես «Մեծապատիվ մուրացկանները». կամ պարզապես շարված են իրարու քով, ինչպես «Քաղաքավարության վնասները»: Վիպական կառուցումը իր տկար կողմն է. շենք մը չի բարձրանար ո՛չ վիպական, ո՛չ ալ թատերական: Չունի կերտած ո՛չ մեկ տաճար. բոլորը խրճիթներ են կամ սովորական տներ իրարու կից: Գեղարվեստի այս կարևոր կողմը կպակսի իրեն. ասով է, որ ցած կմնա Մոլիերեն:

Իր ուժը և իր բարձր արժեքը խորքին մեջն է. իր բոլոր գրվածքները կխնդացնեն, բայց երբեք գրված չեն միայն խնդացնելու համար. գրված են բան մը ըսելու համար, գրված են բան մը փոխելու, սրբագրելու ցանկությամբ, գրված են իբրև քննադատություն, իբրև բժիշկ, իբրև ուսուցիչ: Ուղղակի խրատ չի տար, ատիկա հակառակ կըլլար գեղարվեստի, բայց իր բոլոր գրածները իրենց էությամբ ու իրենց խնդուքով մեյ-մեկ խրատ են: Պարոնյանի կատակն ու երգիծաբանությունը ընկերաբանական ու բարոյական խորք ունի միշտ: Եվ շատ առողջ խորք մը, արժեքավոր հատկու-

թյուն մը ծաղրի չի ենթարկվիր Պարոնյանի գրչին տակ, բան մը, որուն դեմ Մոլիեր շատ տեղ կմեղանչե:

Պարոնյանի երկրորդ մեծ հատկությունը իր անուշ ու բնածին բարությունն է: Ծիծաղը շատ սուր զենք է, որ դյուրությամբ կրնա դառնալ ծաղր ու երգիծանք: Պարոնյանի գրիչը վիրավորանք չունի. նույնիսկ հոն, ուր շատ կմոտենա անձնականին, և կպասես, որ պիտի դառնա վիրավորիչ: Եվ վիրավորիչ չէ, որովհետև թերությունները կմատնանշե ներքին բնական բարությամբ, չկա բնավ խայթելու, չարություն մը ընելու ցանկությունը. անչար հոգի է:

Իսկ իր երրորդ մեծ հատկությունը իր բնածին տաղանդն է, ծիծաղելին տեսնել և արտահայտել կարողանալը: Ներկայացնելու և ըսելու ատեն անսպառ աղբյուր մըն է ծիծաղի. անվերջ են իր գյուտերը, իր նուրբ գիծերը, իր նուրբ դատողությունները:

Հորդ ու բնական ծիծաղ մեղմ բարությամբ մը փաթթված և միշտ առողջ բարոյական վերաբերում մը՝ ահա՛ Պարոնյանի հմայքը:

Ան իր երկերուն մեջ ներկայացուցած է գրեթե բացառաբար երկու աշխարհ, նախ՝ պոլսեցի միջակ առևտրական դասակարգի կյանքն ու դեմքերը՝ շուկայիկ հին մարդոց կյանքը, ընտանիքը, վարքն ու տիպարը. և երկրորդ՝ մտավոր դասակարգի նոր մեջտեղ եկած դեմքեր՝ ուսուցիչ, գրագետ, ճառախոս, սահմանադրական ժողովներու անդամ, հեղինակ, խմբագիր և նոր կիսամտավորական պաշտոնյաներ և արհեստավորներ. և ասոնց հետ ալ հիներեն եկող մտավորականությունը՝ տերտեր ու վարդապետ: Եվ Պարոնյանի գրիչը տարբեր գեղարվեստական մերձեցում ունի այս երկու տարբեր դասակարգերու հանդեպ, կոպիտ արտահայտությամբ՝ հիներուն ու նորերուն:

Հիները՝ շուկայեցիները երբ կնկարե, կնկարե գեղարվեստագետի մը պես. անոնց բոլոր ըսածը, ըրածը, խոսելու ու շարժելու ձևերը, ամեն ինչ կբղխի տիպարներու ներսեն. ներսն է, որ կդրսևորվի և ինքը դուրսեն օգնության գալու ձևեր չառներ. իր կողմեն նոր կատակներու, ծիծաղելի համեմատություններու և արտաքին հավելումներու շատ պետքը չզգար. կթողնե ազատ, որ այդ տիպարները իրենք իրենց ցուցադրեն. և կստացվի ավելի միա-

ձույլ քանդակ և ավելի խոր ու ճիշդ հոգեբանություն, որովհետև այդ մարդիկը արդեն ձևակերպված ու արմատացած հատկություններու տեր են և ամեն մեկը իր նման ամբողջ խումբի մը հարազատ ներկայացուցիչն է: Հեղինակը ո՛չ թե անհատի մը վարմունքն է, որ կգծե, այլ ամբողջ որոշ խումբի մը. հավաքական, ընդհանուր ու միջին թիվ դեմքեր են, որով և խոր ու մնայուն:

Երբ նոր մտավորական մարդոց կմոտենա այդ ներքին մշակված ձևառությունը այլևս չկա, խումբի մը ներկայացուցիչ տիպարները չեն անոնք. ամեն մեկուն առանձնակի ստիպված է մոտենալու. անհատական դեմքեր են և ոչ միշտ հստակ. և հեղինակն ալ ամեն անգամ չունի հնարավորությունը կամ սրատեսությունը անոնց կյանքն ու հոգին որոշակի տեսնելու: Եվ այդ պատճառով ալ այդ մարդոց թերիները մատնանշելու համար իր կատակն ու ծիծաղը շատ հաճախ իր տիպարներու հոգեբանական խորքեն չէ, որ կբղխի, այլ հագուստի մը պես հագցուցած է դուրսեն անոնց վրա. Հեղինակը ինքն է, որ կկարե ավելի կամ նվազ հաջող ենթադրություններով, համեմատություններով և ծիծաղական բոժոժներով պճնված այդ հագուստը: Եվ մենք ալ կխնդանք այդ Պարոնյանի դերձակությամբ հորինված հագուստին վրա, բայց ո՛չ իսկապես այդ մարդոց հոգեկան ներքին գծերուն վրա:

Առաջին տեսակը իսկական գեղարվեստական քանդակում է. երկրորդ տեսակը գեղարվեստական խարխափում է և մեր ծիծաղն ու հաճույքն ալ պայմանական: Կխնդանք Պարոնյանի ըմբռնումին ու անոր երևակայած խաղերուն վրա: Առաջին պարագային մարդկային հոգիի գիծերն ու բիծերն են, որոնց վրա կժպտինք, խորեն կուգա տպավորությունը: Երկրորդ պարագային մեզի զբաղեցնողն ու ծիծաղեցնողը հեղինակի զանազան գյուտերն են, անոր հնարած վարպետությունները ու կատակները:

Այս նոր տեսակի մարդիկներուն քանդակումը Պարոնյանի կողմե անշուշտ որ շատ ավելի կամայական է և նվազ հոգեբանական արժեքով, բայց մեզի ավելի կհետաքրքրե, որովհետև նոր դեմքեր են, հրապարակի վրա կեցած մարդիկ են և ավելի մեծ չափերով մեր ուշադրությունը կքաշեն:

գ) ՎԻՊԱՆՄԱՆ ԵՐԿԵՐ

Առաջին շրջանի արևմտյան նոր Հայ գրականությունը ունի քանի մը նշանավոր հեղինակներ, որոնց երկերը դուրս կմնան գրական սովորական կաղապարներեն, բայց ունին իրենց հատուկ ինքնուրույն գրական արժեքը:

1. Ամենեն առաջ Մկրտիչ Խրիմյան (1820 - 1907), որ ժողովուրդը պարզապես «Հայրիկ» կանվաներ և որ իր ծերության օրերուն ընտրվեցավ կաթողիկոս: Խրիմյան ԺԹ՝ դարու իսկական Հայ դեմք մըն է, գուցե և ամենեն ցայտուն Հայ դեմքը: Եղած է հավատավոր ու նվիրված հոգևորական մը, բայց ունեցած է ժամանակի ամենեն ազատ մտածող աշխարհական մարդու հայացքներ ու լայնախոհություն. գուցե անոր համար, որ շուշտակ վարդապետ է, ընտանիք է ունեցած և ապրած ժողովուրդին մեջ. և ապրեր է միշտ պարզ ժողովուրդի մարդու մը պես և միշտ ալ ժողովուրդին հետ սերտ շփման մեջ:

Արևմտյան Հայության հոգեկան ու գրական բոլոր շարժումները մինչև ութսունական թվականները գլխավորապես կեդրոնացած էին Պոլիս. բուն գավառացի Հայ ժողովուրդը հեռվեն միայն բաներ մը կլսեր. ուրիշ աշխարհ մըն էր, որու մասին շատ քիչ բան գիտեին Պոլիս և քիչ կհետաքրքրվեին: Այդ միջոցին է, որ Խրիմյան 1851-են սկսած ինքն իր խելքով ու իր ճարած միջոցներով կմտածե ու կաշխատի մին-մինակը հոգեկան օջախ մը վառել բուն Հայ հողին վրա. Վարագի վանքին մեջ կբանա դպրոց՝ հյուսված գյուղատնտեսական աշխատանքներու. կհաջողի տպարան մը հարմարցնել ու կհրատարակե «Արծիվ Վասպուրականի» անունով ամսագիր մը մայր հողին վրա:

Ինքն ալ կգրե արձակ ու տաղաչափված, սկիզբը գրաբար, ետքն ալ կիսագրաբար, կիսաբարբառով. կերգե Հայ ժողովուրդի դարավոր տառապանքը և իր օրերու ցավն ու սուգը: Բայց առանց հուսահատելու, հավատքով ապագային վրա՝ կձգտի բարձրացնել ժողովուրդը տնտեսապես ու մտավորապես:

Իր այդ ըմբռնումներու արտահայտություններն են իր

գլխավոր գրական երկերը՝ կես մը վեպ, կես մը արձակ խրատական գրություն, ուր շատ հետաքրքիր ու մեջեմեջ կենդանի էջեր կան. գրված են սրտանց և ինքնահատուկ մտերիմ ոճով մը. «Դրախտի ընտանիք», «Սիրագ ու Սամուել» և մանավանդ «Պապիկ ու թոռնիկ»:

Խրիմյան առաջին օրեն մոտիկ է եղեր նաև մեր հեղափոխական շարժումներուն, ինչպես և հայ հողերու վրա կատարվելիք բարեփոխություններու առաջարկներուն ու ծրագիրներուն մեր ազգային ժողովներուն մեջ: Ինքն ալ Ներսես Վարժապետյան պատրիարքի ու խումբ մը դիրք ունեցող ազգայիններու հետ հայկական հարցը դրած է միջազգային սեղանի վրա: Բայց իր վեղարով, իր հուզումով ու արցունքով և իր «Թուղթե շերեփով» լուրջ արդյունք մը ստանալ չէ կրցած այդ նշանավոր սեղանեն: Եվ իր սիրտը մխիթարելու համար կյանքի վերջին տարիներուն գրած է կիսահեգնոտ ոտանավոր մը թագավորներու հացեին:

2. Խրիմյանի աշակերտն է Գարեգին Սրվանձտյանց (1840 – 1892) և նորեն մայր հողեն բուսած, հայ հողին կապված, հայ շունչով ազնիվ հոգի մը, որ Խրիմյանի դիրքը չունի, ո՛չ ալ անոր տիրող կերպարանքը, բայց որ եղած է մարմնացած հայրենասիրություն: Շարունակ ճամբորդած է հայաբնակ գավառներուն մեջ զանազան հոգևոր պաշտոններով. և այդ ճամբորդություններու ատեն իր կրած տպավորություններն է, որ գրի է առած իր գրքերուն մեջ: Իր գրածը այդ ուղևորության նկարագրություններն են՝ չափազանց ջերմ ու հորդ զգայնությամբ մը թաթավուն:

Իր այդ թափառումներու միջոցին ամեն տեղ սիրով ժողվեր է ժողովրդական անգիր բանահյուսության հետ կապված ամեն տեսակի երգեր, վեպեր, խաղեր, որ և տվեր է տպագրության իր ուղևորական հուշերուն հետ միասին: Իր այդ հավաքած նյութերը թանկագին գոհարներ են ժողովրդական բանահյուսության և իր ժամանակի համար բոլորովին նոր ու անակնկալ գյուտեր: Հիմա որ այդ կարգի ժողովրդական անգիր բանահյուսական նյութեր արդեն հրատարակված են նաև ուրիշներուն կողմե բավականին, նորեն իր ժողվածները անփոխարինելի կմնան իր ընտրելու ու գնահատելու բնածին ու նուրբ ճաշակին պատճառով:

Իր երկերն են «Թորոս աղբար», «Գրոց-բրոց», «Համով-հոտով» և «Մանանա»: Վերնագիրներն անգամ Հայրենի բույր ունին իրենց վրա: Իր գրչեն ելած ամեն տողին մեջ հեղինակի սերն հորդող սիրտը կթրթռա:

3. Գավառի պտուղ, գավառե ելած, գավառացիներուն կապված իր ամբողջ էությամբ, Հայրենի հուշերով և Հայրենիքի վշտերով լեցուն հոգի մըն է Մելքոն Կյուրճյան, որ իր ինքնաշխատությամբ և իր շնորհքով ուսուցչական ու գրական անուն մը կրցած է շինել Պոլսի մտավորական շրջանակներու մեջ. և իր պանդուխտ Հայրենակիցներու վիճակն ու կյանքը, վշտերն ու տառապանքը նկարագրած է կենդանի գույներով և թրթռուն հուզումով:

Գրած է «Արևելքի» ու «Մասիս»-ներու մեջ ութսունական թվերու վերջին: Սրտին խորքեն և վարակիչ զգայնությամբ գրված էջեր են, Սրվանձտյանցի գրություններու հուզականության շատ ազգական. և որ պիտի պահեն իրենց թարմությունն ու խորությունը մեր բարբառական գրականության պանդուխտի խոր երգերուն նման: Արդեն «Կռունկ»-ի երգը վիպական պատկերներու և արձակի վերածելն է Հրանդի գրչին կատարածը:

4. Նմանապես շատ սիրված և շատ հարգված անուն մըն է Գրիգոր Օտյան (1834 -1886), որ սնած է ֆրանսական կրթությամբ ու գրականությամբ, եղած է պետական պաշտոններու վրա, ունեցած է բարձր դիրք, մասնակցած է Պոլսի ազգային գործերուն և սահմանադրության կազմությանը հիսուն-վաթսունական թիվերուն, կյանքին վերջին հատվածը ապրած է Փարիզ:

Բայց Պոլիս ըլլա, Բուլկարիա թե Ֆրանսա, հոգիով միշտ կապված է Հայ կյանքի բոլոր կողմերուն, կդողա Հայ դրին վրա: Կկարդա ամեն Հայ նոր երկ, կհետևի բոլոր Հայ շարժումներուն և Հայ թերթերուն. իր նրբազգաց բարի հոգին կարձագանքե իսկույն ամեն ձայնի: Կապ է պահած իր ժամանակի քիչ-շատ կարևոր բոլոր աչքի ընկնող դեմքերուն հետ, ոմանց հետ տևական թղթակցությամբ:

Նեղ մտքով գրագետ մը չէ Օտյան, այլ գրասեր մը, Հայասեր մը, մարդասեր մը, խորհող ու խոր հոգի ունեցող Հայ մարդ մը, որ

հետաքրքրվեր է ամեն բանով, որ հայուն կվերաբերի: Եվ որ հոս ու հոն իր պատահական գրություններուն մեջ, ըլլա բարեկամի ուղղված նամակ մը, ըլլա օրը օրին թղթակցություն մը Պոլսի թերթերուն, գրեր է իր տպավորությունը, իր դատումները:

Պատառիկներ են, ինչ որ ունինք Օտյանեն, բայց այդ պատառիկներուն մեջ այնքա՜ն սիրտ կա, այնքա՜ն ջերմություն, այնքա՜ն հոգեկան մասնակցություն և հոգեկան բարձրացում, որ մասնավոր, աչքի իյնող երկ մը գրած չըլլալուն հակառակ՝ միշտ ալ համարվեր է մեր լավագույն ու բարձր գրագետներեն մեկը. և մեծ սխալ մը չկա այդ ընդհանուր տպավորության մեջ:

5. Կա և հինգերորդ անուն մը՝ Եղիա Տեմիրճիպաշյան, որ գրած է յոթանասունական-ութսունական թվականներուն և շատ է գրած. հրատարակած է նաև պարբերական թերթեր, ինչպես «Երկրագունտ», «Շարժում». գրած է արձակ ու ոտանավոր, փիլսոփայական, ճառական, քննադատական, իմաստասիրական, նիրվանայական: Տեղ-տեղ նոր, թարմ ու հետաքրքիր տողերով, տեղ-տեղ խելապես ապրումով ու գրավիչ, բայց ընդհանրապես խառնակ, իրար չբռնող, երբեմն տարօրինակ ու տափակ, նույնիսկ անախորժ:

Անհավասարակշիռ հոգի մը և անհանգիստ հոգի մը ու անհավասար գրիչ մը, որ շատ աղմուկ է բարձրացուցեր իր ժամանակին. եղած է և՛ պաշտամունքի առարկա, և՛ քամահրանքի ենթակա: Հիմա, հեռվեն նայած, անշուշտ որ Տեմիրճիպաշյան արտասովոր դեմք մըն է արտասովոր «ելույթներով» և արտասովոր գրություններով, որով և անշուշտ ուշադրություն կգրավե և հետաքրքրություն. բայց իր բոլոր գրություններու վրա, ըլլա փիլսոփական թե քնարական թե փիլիսոփայական, ո՛չ մասնակոր վեհություն մը կա, ո՛չ մասնակոր խորություն մը, ո՛չ ալ մասնակոր ստեղծագործություն մը: Առողջ գրություններ չեն:

Անշուշտ առողջն ու անառողջը դյուրին չէ իրարմե զատելը հոգիի արտահայտություններուն մեջ. և հանճարն ու խենդությունը սահմանակից են, կըսեն, իրարու: Ընդունինք. բայց ինչքան ալ որ գիջումներ ընենք, միշտ ալ հոգեկան առողջությունը կմնա իբրև հիմնական աղբյուր և՛ կենսունակության, և՛ թռիչքի, և՛ գեղեցկության:

Գ. ԵՐԿՐՈՐԴ՝ ԻՐԱԿԱՆԱՄԵՐ ՇՐՋԱՆԸ (1890 – 1920)

1. ՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

ա) ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ

Այս երկրորդ երեսնամյակը հիմնապես կտարբերի նախորդ երեսնամյակեն: Նախորդը ամբողջապես զարթոնքի, բարձրացման ու կառուցվելու տարիներն են. մշակութային աշխատանքի և ազգային ոգևորության տասնամյակներ են, քաղաքականապես խաղաղ ու դյուրատար: Այս երկրորդ՝ նոր երեսնամյակը Թուրքիայի հայության քայքայման ու փճացման տարիներն են, ներքին ու արտաքին կռիվներու տարիներ, հույսերու, հուսահատության ու լքումի տարիներ, ելքերով ու էջքերով հոգեպես ու կուլտուրապես:

Արդեն ութսունական թիվերու վերջերեն Թուրք կառավարությունը զգալի կերպով փոխած է իր վերաբերումը հայերու հանդեպ. կասկածոտ է, դժվարություններ կհանե երթևեկի և մտցուցած է գրաքննություն, որ հետզհետե կխստանա:

«Հնչակը» կսկսի հրատարակվիլ 1887-ին. Գում-Գափուի հնչակյան ցույցը տեղի կունենա 1890 հուլիսին . հալածություն, լրտեսներ, ձերբակալություններ: 1891-ին Ժնևի մեջ կսկսի հրատարակվիլ «Դրոշակը»՝ իբրև Հայ հեղափոխական դաշնակցության օրգան, և ծայր կուտան ռուս ու Թուրք սահմաններուն վրա հեղափոխական երթևեկ ու շարժում, որ ավելի կջղայնացնե Թուրք կառավարությանը: Բայց և այնպես մինչև 1895 թիվը դեռ չկա վայրագություն, գոնե արտաքուստ ամեն ինչ օրենքի սահմաններու մեջ կդառնա. սաստկացած են լրտեսությունն ու բանտարկությունները, և հատկապես հալածանք կա հայ-ազգային զգացումներու հանդեպ:

Սասունի պաշարումը, կռիվներն ու կոտորածը տեղի կունենա 1894-ի ամառը Թուրքերու կողմե, իբրև պատասխան հայ-հեղա-

փոխական շարժումներու Տարոն-Տուրուբերանի շրջանին մէջ: Եվրոպական պետությունները կմիջամտեն, քննիչ Հանձնաժողով մը կղրկվի Սասուն. կմշակվի բարենորոգումներու ծրագիր մը Հայաբնակ գավառներու Համար երեք պետություններու ձեռքով 1895-ի գարնան: Աշնան տեղի կունենա Պոլսի Հնչակյան ցույցը, որուն կպատասխանե Թուրք կառավարությունը կոտորածներով: Կոտորածի առաջին լուրերը կուգան Տրապիզոնեն սեպտեմբերի վերջերը, որ Հետզհետե տեղե տեղ անցնելով՝ կդառնա Համատարած և սպանվածներուն թիվը կՀասնի 300.000-ի:

Նույն 1895-ին կվերսկսվին Զեյթունի Հին կռիվները սեպտեմբերի վերջը, ջարդերու Հետ միաժամանակ: 1896-ին կմիջամտեն եվրոպական դեսպանները: Նույն այդ թվականին կսկսին Հաճախակի դառնալ մաՀափորձերը Թուրքիայի մէջ. իսկ նույն տարվան օգոստոսին տեղի կունենա Պանք Օթոմանի դաշնակցական ցույցը, որուն պատասխանն է Պոլսի կոտորածը. Պոլիսը մինչև այդ օրը խնայված էր եվրոպական դեսպաններու աչքին տակը գտնվելուն պատճառով:

Այսինքն 1894, 1895 և 1896 թվականները ծանր ու դառն տարիներ են Թուրքիայի Հայության Համար: Հայ ու Թուրք զգացումները կվերածվին բացարձակ ատելության և կառավարության վերաբերումը կատաղի վայրագության Հայ ժողովուրդի Հանդեպ, ոչնչացնել կուզեն, ինչ որ Հայ է և Հայ ոգիի արտաՀայտություն:

Դեպքերու տակ տպավորությունը անցնելեն ետքը երկու կողմերն ալ բնականորեն կձգտին կերպ մը եղածը մեղմելու և կենակցության քիչ-շատ Հնարավոր եղանակ մը առաջացնելու, որուն արդյունքը կըլլա 12 տարիներու կիսամեռ գոյության շրջան մը Թուրքիայի Հայության Համար: Ջարդված, կողոպտված, տեղե տեղ չարժվիլը արգիլված, փոխադարձ անվստաՀություն, զսպված ատելություն, ազգային ամեն բաներու Հալածանք. և գետնի տակ խուլ Հեղափոխական աշխատանք, որ կառավարությունը կզգա, բայց առաջն առնել չի կրնար իր բոլոր խստություններուն Հակառակ:

Այս է նշանավոր «Համիտյան ռեժիմը»: Երիտասարդ Թուրքերու ապստարար բանակին Հետ 1908-ին գարնան Պոլիս կուգան

«ազատության» օրերը: Հայ ու Թուրք հեղափոխականներու գրկախառնություն. փախստական մտավորականությունը կվերադառնա. բոլոր փակված բերանները կբացվին. կսկսի երազներու, հափշտակության և ճառերու շրջանը, երեսփոխանական ընտրություններ ու Թուրք պառլամենթ: Վրա կհասնին չերիաթական ու հակա-չերիաթ ընդհարումները. այդ ցնցումներեն հազիվ ազատված՝ կբռնկի Պալկանյան պատերազմը, պուլկարները Պոլսի տակ են:

Կիլիկիայի մեջ տեղի ունեցող շարժումներն ու նոր Հայկական կոտորածը պաղ ջուր կլեցնեն Հայ ու Թուրք գործակցության երազներուն վրա: Հայաբնակ նահանգներու համար մեջ կուգան Հոֆ ու Վեստենենկի ինքնավար ծրագիրները, որոնք ավելի ևս կպաղեցնեն Հայ ու Թուրք մերձեցումը: Եվ 1914-ի օգոստոսին կբռնկի համաշխարհային պատերազմը. Թուրքերը մեկ-երկու ամիսեն կմիանան գերմանացիներուն. Հայերը Թուրքիայեն դուրս դաշնակիցներու հետ են ու ծայր կուտան կամավորական շարժումներ, որ ավելի ևս կկատղեցնեն Թուրքերը. և կմտածեն մեկ անգամեն վերցնելն մեջտեղեն Հայությունն ու Հայկական հարցը. զանգվածային կոտորածներ, տեղահանություն, բոլոր աչքի իյնող մտավոր ուժերու ձերբակալում ու ոչնչացում:

Բուն Հայ հողերուն վրայեն կչքանա Հայ տարրը, իր բոլոր ստացվածքը կհափշտակվի, կմնա միայն Պոլսի մեջ կոտորակված ու ճմլված Հայություն մը մինչև 1918-ի զինադադարին օրերը: Այս մնացորդը վայրկյան մը սիրտ կառնե և փախստական Հայերեն շատերը, սիրտ առած եվրոպական պետություններու խոշոր ու խաբուսիկ սատարագրություններեն ու խոստումներեն, կվերադառնան Պոլիս նոր հույսերով, արդարության նոր պահանջներով ու նոր աղմուկով. բայց այս երազներն ալ կտևեն շատ կարճ, ու ամեն ինչ կխեղդվի Քեմալի հաղթական Պոլիս մուտքովը և Լոզանի մեջ պետություններու իրենց տված խոստումները դրժելովը: Հայության մեկ մասը նորեն կփախչի Պոլսեն Թուրքերու ալ օժանդակությամբ, իսկ Պոլիս մնացողներն ալ կհայտարարվին ամեն մասնավոր Հայկական իրավունքներե զուրկ «քրիստոնյա Թուրքեր»:

Թուրքիայի մեջեն Հայը գործնականապես չքացած է,

հայաբնակ նահանգներուն գյուղերը վերածված են ավեր ու անբնակ տարածություններու, լեռնական մասերուն մեջ քյուրտերը կքոչեն հոսկե հոն և կստեղծեն քյուրտական հարց մը թուրքական իշխանության դեմ, իսկ գլխավոր, կեդրոնական քաղաքներուն մեջ կգոյանա նոր մահմետական բնակչություն մը և մեր հայրենիքը կհռչակեն Թուրքիա:

բ) ՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Թուրքիայի հայության այս քաղաքական պայմաններուն զույգ կհոսի բնականաբար նաև իր մշակութային կյանքը:

Շրջանի առաջին քանի մը տարիները մինչև 1895 դեռ ամեն ինչ կերթա ութսունական թիվերու վերջին նման: Սահմանադրական ընդհանուր ժողովներ չկան, բայց պատրիարքարանի ժողովները կգործեն, դպրոցները իրենց սովորական ընթացքով կքալեն, որոշ բծախնդրություն կա ավանդվող պատմական առարկաներու հանդեպ, թատրոն չկա բոլորովին, ընկերությունները կգործեն հնար եղածին չափ անաղմուկ և զգույշ: Այս քանի մը տարիներու գլխավոր լրագիրներն են «Արևելք» և «Հայրենիք» օրաթերթը. առաջինը շատ խոհեմ ուղղությամբ, դիրք ունեցողներու թերթն է, գրեթե պաշտոնական թերթ. «Հայրենիքը»՝ ավելի թարմ ու երիտասարդ ուժերով և շատ ավելի համարձակ, շեշտված ժողովրդական ուղղությամբ: «Հայրենիքի» մեջ աշխատող ուժերն են գրեթե, որ կվարեն նաև «Մասիս» գրական շաբաթաթերթը: Եվ ամբողջ գրական շարժումը կեդրոնացած է այդ երեք պարբերականներուն մեջն ու շուրջը, որոնց կընկերանա կարճ ժամանակ մը Զոպանյանի «Ծաղիկ» ամսագիրը:

1895-են ետքը մտավորականներեն շատերը հեռացած են Պոլսեն, խեղդիչ է մթնոլորտը Թուրքիայի սահմաններուն մեջ: Մնացողները կա՛մ գրիչը վար կդնեն, կա՛մ կզբաղին չափազանց չեզոք հարցերով, գրաքննությունը ծիծաղելիության հասնող խստության է հասած: Կապ է դրված մտքին ու լեզվին. այդ ձևով կգրվին լրագրական հոդվածները, ինչպես և բանաստեղծական գրությունները ու վեպերը կգրեն շունչերնին բռնած, հաճախ եզով-

բոյան պայմանական դարձվածներ գործածելով: Այդ տարիներու ամենեն կարևոր օրաթերթն է Քեչյանի «Բյուզանդիոն»՝ խմբագրված ծանրախոհ ու փորձառու ձեռքով. խոշոր պաշտոնաթերթ մը: Սմբատ Բյուրատ կհրատարակե «Բյուրակն» երկշաբաթաթերթը գրական-ժողովրդական հակումով և հնար եղածին չափ անմեղ երևալու ջանքով:

Մինչև 1908 թվականը արևմտահայ գրականության կենդանի մասը արտասահմանի մեջն է: Արշակ Չոպանյանի «Անահիտ»-ն է գլխավոր կեդրոնը Փարիզի մեջ, ուր կգրե ինքը իր խումբ մը աշխատակիցներուն հետ. գրականությունը սիրող մարդոց փնտրած ամսագիրն է: Շուտով Լոնտոնի մեջ կսկսի հրատարակվիլ նման ամսագիր մը Արփիար Արփիարյանի ձեռքով՝ «Նոր կյանք»՝ նմանապես գրական մեծ հետաքրքրություն շարժելով, որ վերջը կփոխադրվի Եգիպտոս տարբեր անունով:

Այս երկու նոր գրական հնոցներեն զատ կշարունակվի «Բազմավեպը» Վենետիկի մեջ երկրորդական գրական արժեքով և Վիեննայի Մխիթարյաններուն «Հանդես ամսօրյան» հայագիտական կարևոր արժեքով:

Համիտյան ռեժիմի տապալումով Պոլսի դռները կբացվին. արտասահմանեն ու գավառներեն Պոլիս խուժող մտավորականությունը կբերե կենդանություն, աղմուկ ու շարժում հեղափոխական, մշակութային, գրական ու դպրոցական բոլոր ասպարեզներուն մեջ. կյանքը կվերսկսի նոր պահանջներով, նոր ծրագիրներով, նոր հույսերով ու թռիչքով, բայց ժամանակ չուներ արմատ նետելու և արդյունավորվելու. հազիվ ձև առնելու սկսած՝ վրա կհասնի 14-ի համաշխարհային մեծ պատերազմը և փճացման օրերը:

Ազատության այս կարճ շրջանին Պոլսի մեջ գլխավոր թերթերն էին՝ «Բյուզանդիոն», որ կշարունակվեր և ստացած էր պահպանողական մեծ թերթի մը դերը, «Ազատամարտ» Դաշնակցության օրգանը, այլև «Ժամանակ»՝ ավելի միջին ու ավելի անհատական կերպարանքով: Երևցած էին նաև քանի մը գրական ու կիսագրական շաբաթաթերթեր կարճ կյանքով:

Այս շրջանը մասնավոր կերպով նպաստավոր էր թարգմանական գրականության համար թե՛ Համիտյան օրերուն, երբ իրենք

հանգիստ ու լուրջ բան մը գրելու հնարավորությունը չունեին, և թե՛ ազատության աղմկոտ օրերուն, երբ թերթերը կշատնան, կարդացողներն ալ և օրվան աղմուկներուն մեջ դեռ գրական երկարաշունչ ինքնագիր լուրջ գրություններու կարելիությունը չկար. բնական կերպով թերթերն ալ իրենց ծավալուն էջերը լեցնելու և լայն հասարակության վիպական պահանջը գոհացնելու համար պետք է դիմեին թարգմանության:

Բայց այդ բոլոր թարգմանություններուն թե՛ նյութի և թե՛ թարգմանչի ընտրությունը ենթակա էր մեծ պատահականություններու, ցրիվ, անփույթ աշխատանք մըն է կատարվածը և անբարեխիղճ վերաբերում և լեզուն ալ անխնամ: Շատ բան է թարգմանված և թերթոն ըլլալեն ետքն ալ ոմանք առանձին գրքով արտատպված են իբրև ծախու շահավոր ապրանք, բայց այդ շատերու բազմաթիվ աշխատություններուն մեջ գրականության համար միայն արժեքով թարգմանական գործերը չափազանց քիչ են:

Հատուկ պետք է հիշել Վենետիկի միաբաններեն Արսեն Ղազիկյանը, որ ձգտած է թարգմանել ընտրանքով և ընդհանրապես ընտիր ու արժեքավոր դասական երկեր: Ափսոս որ շատ շտապ են կատարված այդ թարգմանությունները: Այս կարգի լայն բռնված ծրագրի մը իրագործմանը ձեռնարկողեն կպահանջվի շատ ավելի հանգիստ ու խնամոտ վերաբերում, որ իրապես հարստացնել կարողանա մեր գրականությունը: Մյուս կողմեն ալ այդ միևնույն նպատակին համար կպահանջվի շատ ավելի կենդանի ու ժողովրդական շունչ ունեցող լեզու, քան Ղազիկյանի վանական աշխարհաբարն է: Այդ դասական երկերուն աշխարհաբար հայերենը ունենալը անտարակույս մեծ առավելություն մըն է նույնիսկ իր արդի վիճակով, որուն համար շնորհակալ պետք է ըլլանք թարգմանչին, բայց այդ երկերու ավելի կենդանի ու ավելի նուրբ թարգմանություն մը ունենալը դեռ բաց մնացած պետք մըն է մեր նոր գրականության համար:

Անցնելով բուն ինքնագիր գրականության՝ ամենեն առաջ պետք է ընդգծել, որ այս շրջանին ալ աղքատ է գիտական աշխատանքներով: Գիտություններու մշակումը սերտորեն կապված է համալսարաններու և բարձրագույն մասնագիտական վարժա-

րաններու գոյության հետ, որ կրնան միայն պետությունները հիմնել ու պահել: Երբ գիտնական մը իր պետությունն ու իր համալսարանը չունի, ստիպված է կապվիլ ոչ-հայ պետական հաստատություններու և աշխատիլ այդ պետության լեզվով, այսինքն՝ կծառայե օտար գրականության: Միակ բացառությունը, ան ալ միայն մասամբ, կկազմեն հայագիտական ուսումնասիրությունները, որոնց կնվիրվին ու կրնան նվիրվիլ գիտնական մարդիկ նաև պետական հաստատություններու շրջանակեն դուրս և հայերեն լեզվով: Եվ այդ մարդիկն ալ մեծ մասով հոգևորական-վանականներ են, որոնք վանքի մը տված ապրուստի, ազատ ժամանակի և հանգիստ պայմաններու առավելությունը ունին, ինչպես և գրադարան ու տպարանական հարմարություններ:

Վիեննայի Մխիթարյաններեն Հակոբոս Տաշյան և Ներսես Ակինյան գլխավոր դեմքերն են լեզվագիտության և բնագիրներու ուսումնասիրության շուրջ: Երկրորդ կարևոր բույն մը եղավ Արմաշի վանքը, ուր Մաղաքիա Օրմանյան և Եղիշե Դուրյան իրենց հասցուցած աշակերտներուն հետ լուրջ նպաստ մը բերին ու կբերեն պատմական ու գրական ուսումնասիրություններով:

Վանքեն դուրս պետք է հիշել Նորայր Բյուզանդացին և Մատթեոս Գարագաշյան, երկուքն ալ Մխիթարյան կրթությամբ ու վանքը թողած մարդիկ, որոնց հայագիտական, պատմական ու բանասիրական աշխատանքները արժեք ունին: Ասոնցմե դուրս կան անշուշտ նաև ուրիշ հոգևոր և աշխարհիկ դեմքեր, որ լուրջ ծառայություն են մատուցած հայագիտության արևմտահայ գրականության միջոցով, բայց ո՛չ նույն կարևորությամբ:

գ) ԳԵՂԵՑԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՌՆԱԾ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

Գեղարվեստական գրականության մեջ այս շրջանին աչքի կիյնա երկու կարևոր փոփոխություն:

Նախ՝ գեղեցիկ գրականությունը վերջնապես աշխարհականացած է: Նախորդ շրջանին դեռ շատ կային գեղարվեստով կամ գեղարվեստին նման երկերով զբաղվող հոգևորական դեմքեր: Հիմա շատցած է արդեն նոր մտավորական դասակարգը, ուժի է եկած և

այլևս կարիք չկա, որ Հին մտավորականությունը՝ Հոգևորականները, միջամտեն ամեն մտավոր աշխատանքի. ետ կքաշվին գեղեցիկ գրականութենեն և կապված կմնան միայն գիտական գրականության, Հայագիտական, պատմական, եկեղեցական ու բանասիրական աշխատանքներու, որ անտարակույս շատ ավելի կՀարմարի իրենց պաշտոնին ու կոչումին: Գեղեցիկ գրականությունը կմնա աշխարՀիկ մարդոց՝ նոր մտավորականության ձեռքը:

Երկրորդ՝ գեղեցիկ գրականությունը ինքը կփոխե իր ընդՀանուր ուղղությունը: Նախորդ շրջանին տիրողը քարոզչությունն էր ու ազգասիրությունը: Հիմա արդեն ինքնին գրագետները կշտացած են և՛ ազգասիրություն, և՛ ուսում ու դպրոց քարոզելեն. ալ պետքը չկա այդ քարոզներուն, կյանքը խոսքեն արդեն անցած է գործին. գեղարվեստը թեթևցած է այդ պարտականութենեն և Հետզհետե ճիգ կընե ինքն իր գործին վրա կեդրոնանալու և Հեղինակներու Հոգիին մեջն ալ ավելի Հասունցած են գեղարվեստական պաՀանջները. մանավանդ թուրք կառավարությունն ալ բնավ թույլատու չէ Հայասիրական գրություններու:

Այնպես որ թե՛ ներքին և թե՛ արտաքին դրդումներով գեղարվեստը Հարկադրված է իր փեշերը Հավաքելու և կեդրոնանալու որոշ տեսակի մշակման վրա: Օրվան կյանքը, շուրջիդ կյանքը, կարելիին չափ ընդՀանուր ու մարդկային. և այդ սաՀմաններուն մեջ իրականությունը, միայն իրականությունը, բայց մինչև Հիմա չլսված ձևով մը, նոր ձևով մը և իր կատարյալ մերկությամբ: Անշուշտ ուժ և օրինակ կուտար այս բոլորին ֆրանսական գրականության մեջ այդ միջոցին քարոզվող գրական բնապաշտությունը նատյուրալիզմը:

Շուրջի կյանքին մերկ իրական պատկերացումը կրնանք Համարել այս շրջանի տիրող ուղղությունը մեր նոր գրականության. անշուշտ բոլոր Հեղինակները նույն չափով ու նույն ձևով չեն ենթարկվի անոր ՀրաՀանգներուն, բայց զգալի է ամենուն ալ վրան անոր ուժեղ ազդեցությունը: Եվ ընդՀանուր առումով բարձրացում մըն է դեպի ավելի գեղարվեստականը, մերձեցում մըն է քայլ մը ավելի դեպի գեղեցիկ գրականության բուն դիրքերուն ու անոր նպատակներուն, քանի որ գեղարվեստներուն Հատուկ դերը

կյանքը պատկերելն է և հոգիներուն ապրումները ներկայացնելը:

Կյանքը պատկերելու այս շրջանի առանձնապես շեշտված կողմը իրականին, շուրջը եղածին, սովորականին մոտիկ ու հարազատ մնալն է. ի՞նչ փույթ եթե այդ մոտիկն ու իրականը ամեն անգամ մասնավոր գեղեցկություն մը, հրապույր մը չունի իր վրա. իր հրապույրը իրական ըլլալն է. աս է վարդապետությունը:

Գալով շրջանի գործածած գրության ձևերուն՝ գեղեցիկ գրականության երեք հիմնական սեռերեն թատերականը շատ քիչ ու հազվադեպ ընթացք ունի: Մինչև Համիդյան ռեժիմին վերջը արգելված է բեմն ու բեմախաղը. ուրեմն չկա կենդանի դրդիչը բեմական երկեր գրելու: Եվ բեմական երկը շատ ավելի բարդ աշխատանք կպահանջե և նյութի ավելի խոր հոգեբանական մշակում, մինչ ժամանակի տրամադրությունը խորանալու հակում չունի. կուզե արագ գրվել մեկ անգամով և ընթերցման համար ավելի հարմար ձևով մը, քանի որ ասպարեզը բաց է միայն ընթերցման համար:

Ազատության օրերուն հետ կուգան նաև բեմական ներկայացումները. բայց այնքան կարճ է այդ ազատության ժամանակը, որ հնար չի տար լրջորեն թատերական տեղական նոր ուժերու առաջացման թե՛ իբրև հեղինակ, թե՛ իբրև դերասան: Ինչպես նախորդ շրջանին Պոլսեն կերթային Կովկաս աչքի ինկող դերասանական ուժեր տեսակ մը արդեն պատրաստ, հիմա ալ, ընդհակառակը, Կովկասեն կուգան դերասանական կարևոր դեմքեր իրենց խումբով, իրենց խաղերով տեսակ մը բոլորովին պատրաստ: Կուտան Պոլսի քանի մը մեծ թաղերուն մեջ իրենց ներկայացումները աղմուկի ու ոգևորության ցույցերու մեջ ու կհեռանան:

Բայց և այնպես եղած են թատերական նոր ստեղծագործության քանի մը փորձեր՝ ազատության օրերուն գրված կամ տպված և ընդհանրապես երկրորդական արժեքով: Սիպիլ ու Ալփայան հրատարակած են «Մազնիս» երկու արարով: Մ. Տեր-Մինասյան, Շ. Նաթալի, Մ. Սուրյան գրած են մեկ-մեկ բեմական խաղ չորս-հինգ արարով. Առանձար ունի կատակերգություն մը՝ «Փրկիչներ» հինգ արարով և Երվանդ Օտյան՝ քանի մը հատ մեկ արարով գավեշտներ: Եվ նորեն ամենեն ավելի մնայուն են եղած այս կատակ գրությունները:

Այնպես որ դեղեցիկ գրականության երեք սեռերեն այս շրջանին մէջն ալ թե՛ աւելի սովորական և թե՛ աւելի արժեքով են մյուս երկու սեռի գրությունները՝ քնարերգությունն ու վեպը:

2. ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Այս երկրորդ շրջանի բուն պոլսական քնարերգուներուն թիվը տասնյակի մը կհասնի. տասնյակ մըն ալ Պոլսեն դուրս է, կա՛մ փախստական, կա՛մ նորեն վերադարձած Պոլիս ազատության տարիներուն:

Ասոնցմե մեկ-երկուքը գրականության մյուս պատմական, բանասիրական, քննադատական ճյուղերուն մէջ աշխատող մարդիկ են, որ տեսակ մը հյուրաբար կես կատակ-կես լուրջ մոտեցած են «բանաստեղծության» Եղիշե Դուրյանին նման. մեկ մասը նորավեպ գրողներ են, որ չեն արհամարհած նաև տաղաչափական արվեստը. կամ աւելի հասութաբեր գործերով կզբաղին, բայց իրենց հոգիին մէջ բանաստեղծ կզգան ինքզինքն կամ դպրոցական հուշերով կապված են ոտանավորին: Մեկ-երկու հատն ալ հազիվ բացված ծաղիկներ են, որ մահվան խորշակը զարկած է և չէ թողած պտուղ կապեն, ինչպես Հերանուշ Արշակյանն է ու Մաթեոս Զարիֆյանը:

Արժե այս բոլոր հեղինակներու քնարական հաջող կտորներով աղվոր հատոր մը կազմել՝ դնելու համար շրջանի գլխավոր հինգ քնարերգուներու դեմը՝ շրջանի բանաստեղծության պատկերը լրիվ ունենալու համար:

Այդ գլխավոր հինգ դեմքերեն երեքը բուն պոլսական հեղինակներ են, այսինքն՝ ապրած ու գրած են Պոլսի մէջ և համիտյան ռեժիմի տակ՝ Սիպիլ, Միսաք Մեծարենց և Ինտրա. իսկ վտարանդի քնարերգուներուն մէջ տիրական ու մնայուն են երկու անուն Դանիել Վարուժան և Սիամանթո:

1. Սիպիլ միակ կին քնարերգուն է արևմտահայ բանաստեղծության մէջ և իր գրական շնորհովը այնքան բարձր, որ կարիք չունի գրագատության կողմե մասնավոր զիջումներու այր բանաստեղծներուն հետ հավասար դասվելու համար:

Նուրբ ու փափուկ զգացումներն են իր քնարին տիրողը. և

քնար մը, որ կթրթռա կյանքի սիրով, նույնիսկ երբ ցավ կերգե, հիվանդ ու ձախողանք: Նուրբ ու փափուկ են իր արտահայտության ձևերը, իր համեմատությունները և իր պատկերները: Նուրբ ու փափուկ է իր լեզուն և իր տաղաչափությունը:

Եվ այսքան նրբությունն ու փափկությունը անտարակույս կգրավե մեզի, թեև կզգանք ընթերցման ատեն խորության պակաս մը և մեջընմեջ նույնիսկ նյութի անկրկնություն: Կցանկայինք, որ ավելի լուրջ նյութեր և ավելի խորունկ զգացումներ արտահայտված ըլլային կանացի այդ փափկությամբ ու նրբությամբ: Բայց գեղարվեստի մեջ պետք է վերցնենք միշտ երախտագիտությամբ, ինչ որ արվեստագետը կրցած է, կամ ինչ որ իրեն հաճելի է եղած մեզի տալ: Մեր ուզածին ու չուզածին ականջ կախող չկա:

2. Միսաք Մեծարենց (1886 – 1908) երկրորդ Պետրոս Դուրյան մը մեր գրականության մեջ: Ապրած է ճիշդ այնքան և գրած է ճիշդ այնքան, որ լավ մը զգանք իր արժեքը և իր կորուստը:

Իրմեն մնացած գրություններուն մեջ, որոնցմե գրեթե ո՛չ մեկը առանձին առած ամբողջություն մը չի ներկայացներ, կհոսի սակայն բնական քնարականություն մը, կհոսի կյանքի մը երգը: Բնությունը իր թարմ գույներով, իր կենդանի ձայներով, իր գրավիչ լույսերով ու ձևերով գետի մը պես կհոսի կարդացած գրքիդ իրար նմանող էջերուն մեջեն և չգիտես ուրկե կուգա և ուր կերթա. և բնության այդ բոլոր ձայներուն ու լույսերուն հետ հյուսված, միացած, նույնացած է բանաստեղծին որոնումը, կարոտը, սպասումը: Այդ մշտահոս բնության և բանաստեղծի այդ մշտահոս սպասումի ներքին ու արտաքին ձուլման մեջն է Մեծարենցի էջերուն հրապույրը:

Մեծարենցի զանազան վերնագիրներով երգերը առանձին ու տարբեր երգեր չեն, այլ անոր բոլոր գրվածները միասին առած մեկ հատիկ երգ մըն է, շատ ներդաշնակ ու հաճելի քչքչուն երգ մը, որուն վերնագիրը իրավ որ կրնանք դնել «Ծիածան», դեռ չապրած ու ապրիլ տենչացող զգայուն հոգիի մը ծիածանումը, ուր կդողդղա միշտ կես բնազդական վախի մը ցոլքերը, թե միգուցե ուշանա ու ապրիլ չկարողանա:

3. Ինտրա (1875 – 1921) նմանապես բանաստեղծ հոգի մը,

որ միևնույն ժամանակ նկարիչ է ու փիլիսոփա. կսիրե քրքրել իր հոգին և ընկերության հոգին և կյանքին ու գոյության էությունը. դժգոհ է եղածէն, մարմնականէն, սովորականէն և անցողականէն և սերն ունի անանց բաներու, միշտ կույս մնացող բաներու ու կատարյալ հավերժական բաներու կարոտով:

Գրած է Մեծարենցի պես ընդարձակ բանաստեղծություն մը «Ներաշխարհ». գրած է արձակ լեզվով և խիտ ոճով, տեսակ մը մեջնմեջ կառուցումով, հիշողություններով, նորակերտ ու ծանրաբեռն բառերով: Մութ է տեղ-տեղ. կարդալը և բովածին հետևիլը ամեն տեղ շատ դյուրին չէ, բայց ով լրջորեն միտքը կդնե հետևիլ ու կարդալ այդ երկարաշունչ բանաստեղծությունը, իրապես կվարձատրվի: Մեր գրականության մեջ բացառիկ գիրք մըն է ներսով ու դուրսով. հետաքրքիր և մտածել տվող գիրք մը երիտասարդ հոգիի մը, որ կմաքառի իր եսը ազատելու համար գռեհկություններէ, տափակություններէ ու մահէն, եսի մահէն:

Եվ կմերկացնե իր հոգին առանց վերապահումի, որ միևնույն ժամանակ ծարավ ունի գնահատվելու և կուզե սիրվիլ, և սիրելի է անտարակույս, որովհետև մաքուր է և դեպի վեր կձգտի: Իր ավելի ուշ գրված «Նոճաստան»-ը, որ ոտանավոր է և հնչյակներու շարք մը կկազմե, ամբողջովին նվիրված է ես-հոգիներու հավերժակա՞ն. թե՞ ոչնչացման ենթակա ըլլալու հույսին ու կասկածներուն: Եվ կարծես հետզհետե կհանի այն եզրակացության, որ մեր եսերու հավերժացումը չէ կարևորը և որ մեր պզտիկ հոգիներն ալ կարելի է թողնել մեր մարմիններուն հետ գերեզմանին դռանը:

4. Դանիել Վարուժանի (1885 – 1915) բանաստեղծությունները շատ դժվար է քնարերգություն անվանել: Թեև ինքը հաճախ քնարի մասին կխոսի, բայց չի սիրեր քնարի զարնել. ավելի նկարիչ է, քան քնարահար, և իր նկարները շատ այլազան են ու բազմակողմանի և բազմերանգ, բայց իր գրեթե բոլոր ստեղծագործությունները ալ ծանրաբեռնված բան մը ունին իրենց վրա. պատմությունը, դիցաբանությունը և հին ու նոր դատողություններ շատ կճնշեն ու կծռեն գրվածքին գեղարվեստական կազմը և շատ քիչ տեղ կթողնեն զգացումներու արտահայտության. էջեր ու էջեր կդառնան իրար ետևե և ընթերցողը իզուր կսպասե թարմ զգացումի

ջերմ արտահայտութիւն մը հանդիպելու այդ երկար-երկար երգերուն մէջ:

Այս հիմնական պակասի պատճառով Վարուժան աւելի կհաճոյի հոն, ուր նիւթը հնար կուտայ լայն պատկերներու և նկարագրութեան, նոյնիսկ եթէ եղածը արեւելեան բաղնիք մըն է միայն: Իր գրածներուն մէջ ամենէն հաջողած ու մնայուն երկը «Հարճը» է, որ տաղաչափուած և աշխուժ պատմուած վիպակ մըն է արդէն: Իսկ իր ամենէն մեծ ու արժէքավոր գործը «Հացին երգը» է անտարակոյս. գյուղական աշխատանքի տեղին վրա բռնված իրականութիւններու բազմերանգ ու կենդանի շարք մը, որոնք բոլորը միասին ամբողջութիւն մը կկազմեն ու կդառնան հողի աշխատանքին գեղեցիկ քերթվածը:

5\. Սիամանթո (1877 - 1915). ընդհականուրը, խիստ կեդրոնացած է որոշ տեսակի նյութերու վրա և նկարիչ ալ չէ, թեև ազնիւ ու արտասովոր համեմատութիւններ ունի և պատկերավոր ածականները շատ կսիրէ: Ինքը ուղեր է դրդիչ մը ըլլա դեպի հերոսութիւն. տեսականորեն ոգեւորված է կռիվով, սուրով, քաջութեամբ և անձնազոհութեամբ, բայց գործնականապես նրբազգաց ու տառապող հոգի մըն է երիտասարդ, որ մեկ անգամէն կորսնցուցած է ամեն բան, ինչ որ սուրբ, թանկ ու սիրելի է եղած՝ իր ծնողները, իր մտերիմները, իր տուն-տեղը, իր մանկութեան վայրերն ու հիշատակները, իր հայրենիքը. և կորսնցուցած է ամենադաժան կերպով, հրով ու սրով, մեկ զարկով, հոն հեռուն իր բացակայութեան. և իր հոգին կգալարի հիմա այդ անկարելի, անըմբռնելի իրականութեան հանդէպ:

Իր երկերուն մէջ ամենէն աւելի մեր սրտին խոսողը «Հոգեվարքի և հույսի ջահեր»-ն են և ան ալ հատկապես այն կտորները, որ հոգեվարքի մասին կխոսին. Հույսի մասին եղածները քիչ են ու տկար: Ինչպես որ Դուրյանի վեհութիւնը իր մահվան դեմ ծառացող զգացումներուն մէջն է, այնպես ալ Սիամանթոյի խորութիւնը իր հոգիին խորապես կապված անձերու, տեղերու և հուշերու հանկարծական ոչնչացման դեմ իր զգացած տառապանքին մէջն է:

Եվ բնական կերպով աւելի տկար են իրենց գեղարվեստական

արժեքով իր Հաջորդ ներկերը, որոնք արդեն իր Հոգիին տվայտանքը չէ, որ կնկարեն մեզի, այլ կցանկան մեր աչքերուն դեմ դնել Հայ ժողովուրդի ապրած սարսափելի տանջանքներուն ու ջարդերուն զանազան դրվագները:

Գեղարվեստը Հուզել և զգացումներ արթնցնել կտենչա, բայց գեղարվեստորեն, այսինքն՝ ո՛չ իրական ցավ ու տառապանք, այլ ցավին ու տառապանքին մեղմացած ու անխթույն մեկ Հեռավոր նմանությունը միայն: Երբ Հուզելու Համար կնկարվին իրականութենեն առնված այն տեսակի եղելություններ, որոնք ո՛չ թե գեղարվեստորեն, այլ իրապես սարսափ, տառապանք, ցավ ու խոր վիշտ կպատճառեն մեզի, այլևս կդադրին գեղարվեստ ըլլալե: Այդ տեսակի գրությունները կարելի է օգտագործել վրեժխնդրություն բորբոքելու Համար, ատելությունը վառ պաՀելու Համար, բայց ոչ գեղարվեստական զգացումներ արթնցնելու Համար:

Հայ ժողովուրդի կրած գազանային Հարվածներուն և վայրագություններուն նկարագրությունները գեղարվեստին նպաստ մը բերել չեն կրնար և իրենք ալ բնավ կարիք չունին գեղարվեստի բերելիք նպաստին. իրականությունը արդեն չափազանց է դաժան և ուժեղ: Լավագույն է, որ այդ ամենը մնա ճերմակ, կապույտ, դեղին և ուրիշ ամեն գույնի պետական փաստաթղթերու Հավաքածուններուն մեջ ներկայացված ձևով ականատեսներու շրթունքեն քաղված:

Սիամանթոյի Հոգին, ինչքան ալ տխուր ըլլա, ցաված, կատղած ու տառապող, մերինին պես Հոգի մըն է և մենք կրնանք լսել իր երգերը, զգացվիլ ու Հուզվիլ առանց դուրս գալու գեղարվեստի դրած սաՀմաններեն, բայց Հայ ժողովուրդի խաչելության նայիլ չենք կրնար գեղարվեստի աչքով ու տրամադրությամբ. անմիջապես կզգանք իսկական սուր ցավ ու իրական վիշտ:

Իրական ցավը կժխտե գեղարվեստական Հուզումը. և եթե գեղարվեստորեն Հուզել կցանկանք՝ պետք է խուսափինք իրական ցավ արթնցնելեն: Այդ երկուքը Հաշտ չեն երթար իրարու:

6. Այս շրջանի բանաստեղծներու շարքեն է և Արշակ Չոպանյանը. գրած է ամբողջ շրջանի ընթացքին. իր բանաստեղ-

ծութիւնները խոշոր հատոր մը կկազմեն արդէն, խոշոր հատոր մըն ալ իր մանր վիպական երկերն են. ունի նաև թատերգութիւն. և այդ բոլորին մէջ նկարչի մը շեշտված շնորհքը ունի և բոլոր գրածներուն մէջն ալ ո՛չ դիտողութիւնը կպակսի իրեն, ո՛չ դատողութիւնը. և չի մոռնար երբեք իր բոլոր երկերուն զգացումի բարակ թել մը փաթթելու:

Բայց և այնպէս իր ըրած գեղարուեստական գրականութենէն շատ աւելի բարձր է իր արժէքը հայ գեղարուեստի համար: Արշակ Չօպանեանի բացառիկ դերը գեղարուեստօրէն գրելուն մէջը չէ, այլ գեղարուեստը գնահատելուն մէջն է: Ան պաշտամունք ունի նախ ընդհանրապէս գեղարուեստի, ամէն տեղ, ուր որ կգտնէ. ան ջերմ սէր ունի հատկապէս հայ գեղարուեստին համար:

Ամբողջ կէս դար մըն է, որ իր «Անահիտի» էջերուն մէջէն կամ առանձին հրատարակված գեղեցիկ հատորներով և ուսումնասիրութիւններով կաշխատի: Ժամանակի փոշիներու կամ անգիտութեան մէջէն կփնտրէ ու դուրս կհանէ թանկագին գոհարներ, կմաքրէ վրայի աղտն ու մուրը, որ փայլի գոհարը իր լրիվ փայլով և կդնէ հայութեան դէմ, որ ճանչնան ու սիրեն ամէնքն ալ հայ արվեստն ու ստեղծագործութիւնը, որ ճանչնան ու գիտակցին հայ հոգիին կարողութիւնները:

Իր ոգևորութեան մէջ հոս ու հոն շռայլ է Չօպանեանին գովասանքը, երբեմն տարապայման ածականներ կփակցնէ համեստ տաղանդաւորի մը աւելի հաջողված մէկ տողին, բայց ի՞նչ փույթ, այդ շռայլութիւնը իր հոգիի բարութենէն կուգայ. մոռցված կամ չգնահատված գեղեցկութիւններու դէմ անիրավ չգտնվելու ձգտումէն կուգայ. արդար ըլլալու չափազանցութիւն մըն է ատիկա:

Մեր արևելյան նոր գրականութեան մէջ կան մէկ-երկու ուրիշներ ալ, որ հայ գեղարուեստական արժէքներու ցուցադրութեան ու գնահատանքին վրա կաշխատին. մեր արևմտյան նոր գրականութեան մէջ այդ տեսակէտէն ոչ ոք հավասարվիլ չի կրնար Արշակ Չօպանեանին: Մեծ է իր դերը, որով հայ մտավորականութեան հոգիին մէջ ցեղի ինքնագիտակցութիւնը բարձրացնել կուզէ և հայ ստեղծագործութեան սէրը հոն դնել կջանայ:

3. ՆՈՐԱՎԵՊ

ա) ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

Վիպագրությունը բացարձակ տիրող տեսակն է այս շրջանի մեր գրականության թե՛ Պոլսի մեջ հին ռեժիմին, թե՛ Պոլսեն դուրս հոս ու հոն ցրիվ ու վտարանդի, ինչպես և ազատության ու վերադարձի օրերուն ու անկե ետքը:

Երեք տասնյակի կհասնի վիպագիր հեղինակներու անունները: Եվ ընդհանուր գործածված ձևը կարճ պատմվածքներն են մեկ-երկու երեսեն սկսած մինչև մեկ-երկու տասնյակ երեսներ. քիչ-շատ երկարաշունչ աշխատանքները թիվով համեմատաբար շատ քիչ են:

Այդ ավելի կարճ գրություններուն մեջն ալ դեռ ութսունական թվականներու վերջեն սկսավ վիպական նոր ուղղություն մը շեշտվիլ, ինչպես ըսի, որ իր կնիքը դրավ ամբողջ շրջանի ընթացքին արևմտյան հայ գրականության վրա: Սկսան գրել կարճ վիպակներ՝ նյութն առնելով անմիջական շրջապատող կյանքեն, և սկզբունք հռչակվեցավ չշեղիլ բնավ իրականութենեն. անունը դրին նորավեպ:

Նորավեպի գլխավոր հիմնադիրներեն մեկը, ապահովաբար ամենեն տաղանդավորը և իր երկերու որակովն ու քանակովը ամենեն կարևորը Գրիգոր Զոհրապն է:

Զոհրապի (1860 – 1915) առաջին և մեծ առավելությունն այն է իր հետևորդներեն, որ նորավեպին և ընդհանրապես գեղեցիկ գրականության մոտեցած է զուտ գեղարվեստական տեսակետեն. գրած է իր վիպակներն այնպես, ինչպես քանդակագործ մը կամ նկարիչ մը կքանդակե ու կգծե: Հորինած է իր նորավեպերը կյանքն ու մարդիկը պատկերելու ներքին պահանջեն մղված. որևէ օգուտ, բարոյականություն, քարոզ կամ քննադատություն չէ հյուսված բնավ իր երկերուն, և այդ ուղղությամբ եղած պահանջներուն վրա ալ խնդացած է: Իրեն համար հետաքրքիր եղողը կյանքը պատկերացնելն է «կյանքը այնպես, ինչպես որ է»: Ան նույնիսկ կպարծենար, որ գրելու ատեն, քիչ մըն ալ մինչև անգամ կյանքի մեջ, ինքը կանխակալ մտածումներ, ղեկավար գաղափարներ և

որոշ գծված սկզբունքներ չէ ունեցած: «Իմ միակ սկզբունքս սկզբունքներ չունենալն է», – կըսեր կես կատակով:

Ասիկա անշուշտ չի նշանակեր, որ ան իր սիրած գաղափարները չուներ և իր որոշ սկզբունքները. ասիկա միայն բողոք մըն է գեղարվեստի վրա դրված ավելորդ կաշկանդումներուն: Անկարելի բան է, որ գեղեցիկին սիրահար հոգի մը բարձր բաներն ալ չսիրե, ազնիվ վարմունքը չգնահատե և ընկերական լավագույն կարգերու չձգտի. այս բոլորը միշտ սերտորեն կապված են իրարու: Բայց տարբեր բան է այդ ամենը իր հոգիին ու իր ձգտումներուն մեջ ունենալը և տարբեր բան է այդ գաղափարներուն համար վարժապետություն ընելը: Զահրատ իր հոգեկան կառուցվածքով վարժապետ չէ, ան արվեստագետ է. ան չուզեր գեղարվեստի պարտադրած սահմաններեն դուրս գալ. ան ուզած է միայն ծառայել գեղարվեստին. և գիտե, որ միայն գեղարվեստին ծառայելով ծառայած կըլլա նաև հանրային բարձրացման ու ազնվացման:

Իր երկրորդ մեծ առավելությունը իր ընկերներեն ու հետևորդներեն իր բնածին տաղանդն է ինքնին: Ըսել, թե ան ազդված է ֆրանսական իրեն նման գրողներեն և հատկապես Մոպասանեն, անարժեք խոսք մըն է. ամենքս իրար կնայինք ու իրարմե կազդվինք. հարցը այդ ազդեցություններեն օգտվիլ գիտնալն է, օգտվածը նորեն կերտել ու կառուցել գիտնալն է և այդ բոլոր աշխատանքին մեջ իր հոգին, իր թափին ու ինքնությունը պահել գիտնալն է: Ամեն գրագետի համար ալ կան միշտ հեղինակներ, որոնք մոտ են իր հոգեկան կառույցին կամ իր գրելու եղանակին թե՛ ազգային և թե՛ օտար գրականություններու մեջ:

Զահրատի նորավեպերը կենդանի են միշտ, ճկուն իրենց կառուցումով և ամեն մեկուն մեջ որևէ նորություն, նոր գյուտ, նոր ձև մը կա, որ կգրավե: Իր նորավեպերուն մեջ շարժում կա, պատմությունը երբեք չի լճանար ավելորդ մանրամասնություններու, ավելորդ դատողություններու շարվածքի մը մեջ. այդ պատճառով ալ իր երկերը միշտ աշխույժ են ու ջղուտ: Դեմքերը կնկարե քանի մը գծով, որ վարպետներու հատկանիշն է, միջավայրն ու տեղերը կուտա կարճ ու արագ. իր նկարագրությունները, համեմատությունները, ածականները և՛ զուսպ են, և՛ համարձակ, և՛ ինքնա-

հատուկ: Եվ պարզ է միշտ ինչպես ընդհանուր կառուցումը, այնպես ալ պատմվածքը, պատմելու եղանակը և լեզուն:

Այս բոլորը երբ միասին կուգան քանի մը երես պատմութեան մէջ, իրարու կսեղմվին ու կբյուրեղանան՝ կգտնան գեղեցկություն և հրապույր:

Գրիգոր Զոհրապը մեր արևմտյան գրականության ամենեն վճիտ ու ամենեն հրապուրիչ գրողն է: Իր նորավեպերուն մեկ մեծ մասը մնալու է մեր գրականության մէջ իբրև մնայուն հարստություն:

բ) ՆՈՐԱՎԵՊԻ ՏԱՐԲԵՐ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս շրջանի գրեթե բոլոր արձակագիրները փորձած են նորավեպը զանազան ուղղությամբ ու ձևերով, բայց ասոնցմե և ո՛չ մեկը չի հասնի Զոհրապին. կան անշուշտ ավելի կամ պակաս հաջողները այդ բազմաթիվ երկերուն մէջ, երբեմն նույնիսկ աչքի ընկնող կտորներ: Եվ արժե, որ ընտիրները հավաքվին առանձին հատորի մը մէջ և այն ատեն միայն ավելի ցայտուն կդանա վիպագրության այս կարճ տեսակի և՛ առավելությունները, և՛ թերին:

Ես հոս կհիշեմ միայն այն քանի մը հեղինակները, որոնք շեղած են Գրիգոր Զոհրապի ըմբռնումեն և նորավեպին տված են տարբեր գործածություն. և արդեն ասոնք են իրենց վրա մասնավոր հետաքրքրություն մը ունեցողները:

1. Ամենեն առաջ նորավեպի առաջին մշակողներեն Լևոն Փաշալյան, բայց շատ ավելի նվազ տաղանդի հարցեն, Զոհրապեն ունեցած իր գլխավոր տարբերությունը օգտապաշտության մեջն է:

Իր նորավեպերը, որ ժամանակին ընդհանուր ուշադրության առարկա են եղած, գեղարվեստական պահանջի ծնունդ չեն, այլ շատ ավելի մեծ չափերով հրապարակախոսական պահանջի. գեղարվեստը օգտագործված է որոշ հանրային թերություններ մատնանշելու, ներկայացնելու և քննադատելու համար. գեղարվեստի ու լրագրական պատկերացման միջին վիճակ մը. և այդ միջին վիճակին հանիլը դյուրին էր շատ, քանի որ նորավեպը

շրջապատող կյանքի իրական պատկերացումը ըլլալ կուզեր և ընդհանրապես իրականության ալ անախորժ կողմերուն ցուցադրումը. շատ դյուրին էր սայթաքումը, դրեթե աննկատելի կերպով, դեպի քննադատությունը, դեպի հասարակության օգտակար ըլլալու ցանկությունը: Որքան պակաս է հեղինակին մեջ գեղարվեստական թափը և որքան ուժեղ է, ընդհակառակը, լրագրական ջիղը, այնքան ավելի ընդգծված կըլլա շեղումը: Իբրև թերի ու պակասություն կնկատե իրականությունը նկարել միայն նկարած ըլլալուն համար. կուզե, որ այդ իր նկարածը «գործնական» բանի մըն ալ ծառայե, հասարակության համար օգտակար ըլլա:

Որքան շեշտված է հեղինակի հոգիին մեջ գեղարվեստական կարողությունը և գեղարվեստագետի ճաշակն ու շունչը, այնքան կարևորություն չի տար այդ արտաքին, «գործնական» հավելումներուն և, ընդհակառակը, այնքան ավելի խոր կըմբռնե գեղարվեստական երկի մը զուտ գեղարվեստական արժանիքներուն մեծ կարևորությունը մարդկային ընկերության բարձրացման ու ազնվացման տեսակետեն:

2. Հրանդ Ասատուր վիպասան չէ, այլ գրականությունը սիրող մը, ավելի ևս գրական հին դեմքերը սիրող մը: Բայց իր այդ սիրած հին ու նոր դեմքերը իբրև պատմիչ գծելու և ներկայացնելու ատեն ենթարկված է իր ժամանակին տիրող նորավեպի հմայքին և իր տպավորություններն ու հուշերը ու դատումները խմբագրած է նորավեպի ձևով. Հանդիպումներ, կենդանի խոսակցություններ, միջավայրի նկարագրություն՝ փոխանակ սովորական պարզ ու պատմական շարադրության: Իր գրելու նորավիպային այս ձևը անշուշտ որ շատ նպաստած է իր գծած դեմքերու կենդանի պատկերացմանը: Հրանդ Ասատուր պատմիչ մը չէ, վիպասան ալ չէ. նորեն միջնակ վիճակ մը, կմնա լրագրական հոդվածագրի սահմաններուն վրա, բայց կենդանի ու աշխույժ գրիչ մը ունի. իր «Դիմաստվերներ»-ը կկարդացվին մեծ հաճույքով:

3. Նման փորձ մըն է Ռուբեն Սևակի ըրածը. կուզե օգտվիլ նորավեպի հրապուրիչ կողմերեն բժշկական հարցեր քրքրելու և բժշկական խորհուրդներ տալու համար իր ընթերցողներուն՝ գիտությունն ու գեղարվեստը իրար խառնելով, մանավանդ որ ինքն ալ

թարմ երիտասարդ մըն է, որու հոգիին մէջ գեղարուեստն ու գիտութիւնը դեռ բոլորովին խառնուած են իրար. դեռ չէ նստած իր հոգին, դեռ բաժակը չէ դրուած սեղանին վրայ. գիտութիւնն ու գեղարուեստը ջուր ու յուղ են, կարելի է իրար խառնել ինչքան ատեն դդալը ձեռքդ է ու կխառնես, վայրկեան մը հանգիստ թողնելուդ պէս յուղը կելլէ երեսը, ջուրը կիջնէ տակը: Եւ ճիշդ այդպէս ալ են Սեւակի բժշկական վիպակները. անոնց մէջ շատ գեղեցիկ ու գեղարուեստական էջեր կան, երբ մանաւանդ իր կեանքէն ու մանկութենէն դէպքեր կպատմէ. այդ աղուոր էջերը կապրին իրենց համար, ինչպէս որ գրուածքին բժշկական մասերն ալ կան ու կապրին իրենց համար, այդ երկու մասերը իրարու ձուլուած ու միացած չեն ու չեն կրնար միանալ. իրար կխանգարեն, իրար օգնել չեն կրնար: Կարելի է քերականութիւնը գրել ոտանաւորով և գրուած կայ, բայց ի՞նչ իմաստ ունի. անբնական խաղ մը: Կարելի է գրել վէպ մը քիմիայի դասագրքի նման, ասկէ ի՞նչ օգուտ քիմիային: Շատ աւելի ապրող ու բնական բան մը ըրած կըլլար Ռուբէն Սեւակ, որ տաղանդ ունի, եթէ իր մանկական յուշերն ու իր գրածին գեղարուեստական մասերը առանձին գրած ըլլար, բոլորովին անջատ բժշկական էջերէն, իբրև պատկեր, իբրև յուշ, իբրև նորավէպ, իսկ իր բժշկական խորհուրդներն ալ տար առանձին գրութիւններու մէջ շատ աւելի խորանալով, շատ աւելի լրջօրէն ու հիմնապէս ու բազմակողմանի:

Կարելի է հիւանդի մը կամ բժշկի մը կեանքէն վէպ գրել, ուր բժշկական դէպքեր ու դեղեր խօսքի կուգան. ասիկա բժշկութիւն չէ: Կարելի է բժշկական իրողութիւն մը պարզելու համար բազմաթիւ օրինակներ ու դէպքեր նկարագրել վիպական մանրամասնութեամբ, բայց ասիկա գիտութիւն է, վէպ չէ: Գրուածքի հիւանդոտ վիճակը կսկսի հոն, երբ վէպ գրել կուզես ու բժշկութիւն կընէս միաժամանակ. բժշկութիւնդ միշտ կմնայ երկրորդական ու կաղլիկ և վիպակդ ալ կպատռտի:

Ռուբէն Սեւակ, որ քնարական ալ շատ աղուոր կտորներ ունի, մեր այն թանկագին երիտասարդներէն էր, որոնք խոստմնալից գիտական ու գեղարուեստական ապագա ունէին ու կորան 1915-ի մեր մտաւորական ջարդին:

4. Ինչպէս Սիամանթօն փորձած է մեծ եղեռնը գեղարուեստօրէն ներկայացնելու շարք մը վիպերգութիւններու մէջ, այնպէս ալ Սուրէն Պարթեւեան, Արամ Անտոնեան եւ մէկ-երկու ուրիշներ ուզած են ջարդերու ու տեղահանութեան մեր ազգային տառապանքը պատկերել գեղարուեստօրէն նորավէպերու մէջ:

Շատ աւելորդ ու շատ դժուար ձեռնարկ մը: Ի՞նչ է այդ գրութիւններու նպատակը. գեղարուեստօրէն երկ մը ստեղծել: Ինչպէս արդէն ըսի՝ գեղարուեստը չարաչար տուժել պիտի. ընթերցողը աւելի ցաւ պիտի զգայ եւ իրական վիշտ, քան գեղարուեստական հաճոյք ու վայելք: Իսկ եթէ նպատակը ճիշդ այդ ցաւն ու վիշտը առաջացնելն է՝ ընթերցողներու հոգիին մէջ վրէժխնդրութիւն վառելու եւ անտարբերութիւնը ցնցելու համար, այս պարագային ալ մեր պատմելիքը գեղարուեստական ձեւի մը տակ դնելը մեծ արգելք մը կդառնա ու կխանգարէ, որովհետեւ գեղարուեստական գրուածքի մը վրայ մենք վարժուած ենք նայելու իբրեւ երեւակայութեան ստեղծած բանի մը վրայ, իբրեւ հարմարցուած բան մը, որ կտկարացնէ բուն իրականութեան թողնելիք տպաւորութիւնը:

Մեր դաժան իրականութեան այդ ցաւի, վշտի ու տառապանքի պատմութիւնները պէտք է պատմուին մանրակրկիտ զգուշութեամբ, կատարեալ մերկութեամբ, առանց որեւէ զարդարանքի, առանց սուտի, առանց կեղծ հաւելումներու, առանց որեւէ չափազանցութեան, ականատեսներու շրթունքէն եւ պաշտօնական վկայաթղթերէն՝ ամէն կերպ խուսափելով, որ գեղարուեստական գրութեան մը տպաւորութիւնը չընեն. իրենց այդ վիճակին մէջ այդ հում նկարագրութիւնները կհասնին իրենց ուժի ամենէն բարձր աստիճանին, իբրեւ վայրագ իրականութեան ճշգրիտ պատկերացումը:

Որ կողմէն ալ որ հարցին մօտենանք՝ ջուրն ու յուղը իրար խառնելու պիտի չհաջողինք, իրար չընդունող բաները պէտք չէ իրար հիւսել. տարբեր ուղղութեամբ վազող ջրերը կարելի չէ մէկ հունով մը վազցնել: Ընթերցողի մտածումներուն եւ զգացումներուն մէջ կառաջացնենք շփոթ, վարանք ու տկարացում, բայց երբեք կեդրոնացում, ո՛չ գործնական տեսակէտէն, ո՛չ ալ գեղարուեստական:

Գեղարուեստի զենքերէն կարելի է օգտուիլ գործնական ու գիտական նկարագրութիւններու ատեն հոս ու հոն, զգուշութեամբ

ու չափը պահելով, որ մեր ըրածը գեղարվեստի հետ չշփոթվի: Ինչպես որ արտաքին իրականությունն ու գիտությունները այ կօգտագործվին գեղարվեստական երկերու մեջ. պայմանով, որ մեր ըրածը չդառնա իրականության գործնական ներկայացում մը և գիտությամբ զբաղվելու լուրջ ձևեր չառնե:

5. Նորավեպը օգտագործած է բոլորովին տարբեր ուղղությամբ մը Ալֆիարը իբրև երգիծաբանության անոթ. իբրև շուրջի իրականության կատակ պատկերացում:

Ալֆիար՝ իբրև կատակաբան և իբրև սրախոս, անտարակույս շնորհալի դեմք է և մեջեմեջ էջեր ունի, որ կմնան: Դժբախտաբար ընդհանրապես լպրծուն է գետինը իր ոտքերուն տակ, շատ հաճախ սեռական հարցերու շուրջը կդառնա և ո՛չ հայու մը պես, որով կօտարանա մեր հոգեբանութենեն:

Սրախոսությունն ու սրամտությունը շատ թանկագին բաներ են, պայմանով, որ ժողովուրդի մը զգացումներու թույլատրած սահմաններեն շատ անդին չանցնին: Պետք չէ, որ ընթերցողը ամչնա, ո՛չ ալ ներքուստ վիրավորվի: Երբ ուշադրություն չի դարձվիր այդ ազգային ամոթխածության ու սխալը կկրկնվի. ան ալ հաճախ և կարծես հատկապես ու դիտավորյալ շեշտով՝ ո՛չ մեկ սրամտություն չի դիմանար. Հեղինակը իր գեղարվեստական արժեքը կկորսնցնե իր ժողովուրդին համար: Երկը կդադրի գեղարվեստական հղացում մը զգացվելե. կմնա մեջտեղ անախորժն ու լպրծունը, այսինքն՝ գրություն մը, որ կջանաս զավկիդ ձեռքը չիյնա:

Անշուշտ շատ դժվար է այս տեսակի հարցերու մեջ թույլատրելիի ու անթույլատրելիի սահմանը ճիշդ գծելը. տարբեր ազգերու համար տարբեր է. անհատներն ալ իրենց կրթությամբ ու խառնվածքով այս տեսակետեն իրարմե զգալի կերպով կտարբերին. բայց կա միշտ ազգային առողջ միջին մը և ամեն հեղինակ, եթե իր կապը կտրած չէ իր ժողովուրդեն, ինքն իր հոգիին մեջ կունենա. պետք է որ ունենա բնականեն այդ ազգային սահմանագծումը:

գ) ԳԱՎԱՌԱԿԱՆ ՁԵՎԱՌՈՒՄԸ ՆՈՐԱՎԵՊԻ

Պոլսական գրականության զուգընթաց այս շրջանի սկիզբեն իսկ ծայր տված գավառական գրականություն մը, որուն

տարբերութիւնը պոլսականին ըստ էութեան երկու կէտի մէջ կկայանա՝ միջավայրը և լեզուն:

Նիւթը գաւառական կեանքի, ապրուստի, կենցաղի սովորութիւններու, աւանդութիւններու, նախապաշարումներու, գաւառական տիպարներու ու վայրերու նկարագրութիւն է, այսինքն՝ Սրվանձտեանի և Պռոշեանի աշխատանքին հետևողութիւն ու շարունակութիւն: Սրվանձտեանի բռնած ճամբան աւելի ուղևորական է ու նկարագրական, Պռոշեանինը՝ աւելի վիպական. Հիմա այս նոր գաւառական հեղինակները միջին վիճակի մը վրա կմնան: Իրենց գրութիւններուն մեկ խոշոր մասը ուղղակի նկարագրութիւն է իրականութեան, լրագրական հոդված. բայց մեկ ուրիշ մասն ալ այդ հոդվածային սահմաններեն դուրս կուգան ու կստանան աւելի կամ պակաս վիպական ձև. և ընդհանրապես պոլսական նորավեպի ազդեցութեան տակ կդառնան մանր գեղարվեստական պատմվածքներ, որոնք կձգտին շուրջի գաւառական իրականութիւնը պատկերացնել:

Կարգախոսը կմնա նույնը՝ «կեանքը ինչպես որ է», մանր-մանր ու կտոր-կտոր. շատ քիչ անգամ և շատ համեստ չափերով մեկ-երկու փորձեր կըլլան գաւառական կեանքեն, տիպարներեն ու պայմաններեն օգտվելով մարդկային հոգիներ, տենչանքներ ու ձգտումներ նկարելու, գաւառական ատաղձով և գաւառական կեանքի հիմքին վրա խոկական գեղարվեստական երկ մը բարձրացնելու:

Եվ «կեանքը ինչպես որ է» նշանաբանը հակում ունի կեանքի ծուռ, ձախորդ, գեշ ու քննադատելի կողմերն ու դեմքերը մեջ քաշելու. և գաւառական այս գրութիւններուն մեջն ալ վաշխառու, խարդախ, անառակ, ապուշ ու տգետ մարդիկ են ընդհանրապես մեջ բերվածները. հազիվ կներկայանա երբեմն սիրելի մամիկ մը, համակրելի ու խելացի մարդ մը, մաքուր հարսնուկ մը և ազնիվ ու գրավիչ երիտասարդ դեմք մը տղու կամ աղջկա:

Անշուշտ գաւառի մեջ ալ, ինչպես «մայրաքաղաքին» մեջ, ինչպես ամեն տեղ, կան ամեն տեսակի զզվելի մարդիկ. բայց անոնց քովիկը կան պայծառներն ալ, գեղեցիկները, քաջերը, խելացին ու ազնվականը. ինչո՞ւ անպատճառ գեղարվեստի մենաշնորհը

դարձնել դարչելի դեմքերու պատկերացումը: Իրապաշտության, այսինքն՝ իրականությունը սիրելուն չափազանցումն է ասիկա և սխալ ըմբռնված օգտապաշտություն. այս միակողմանի ու քննադատող գեղարվեստական պատկերացումներով բարձրացնել չենք կրնար Հասարակության Հոգին. և երիտասարդության բնազդորեն փնտրածը գեղեցկությունն է, խոյանքը ու կորիճությունը, որուն նմանի ու Հետևի: Ով կցանկա «օգուտ մը տա» իր գեղարվեստով, ով կտենչա իրապես ներկայացնել «կյանքը ինչպես որ է»՝ կյանքի գեշն ու աղեկը պետք է իրար Հյուսե և անոնց պայքարը նկարե: Իհարկե, շատ ավելի դժվար է ազնիվը, նորը ու բարձր ձգտողը նկարելը, ան ալ գեղարվեստորեն, բայց ատ է, որ կհրապուրե ու կբարձրացնե:

Գավառական այս նոր Հոսանքին բերած մյուս նորությունը իր լեզուն է. գավառական բազմաթիվ բառեր, ասույթներ, արտահայտության ձևեր, Համեմատություններ, առած ու առակ ժողովուրդի առօրյա կենդանի լեզվեն վերցված: Ժողովուրդի նուրբ ու Հարուստ լեզվին անծանոթ ու իբրև գաղթական մեծցած մարդու Համար այս լեզուն շատ կդժվարացնե ընթերցումը և ընթերցման վայելքը. բայց քիչիկ մը վարժվելեն ետքը մեծ Հաճույք է և մեր գրական նոր լեզվին Համար նոր Հարստացում ու նոր բարձրացում. որովհետև մեր նոր լեզվի զարգացումն ու ապագան Հիմնված է, և Հետզհետե ավելի շեշտված կերպով, մեր կենդանի բարբառներուն վրա. այնպես որ գավառական այս նոր Հոսանքի բերած նպաստը լեզվի տեսակետեն անվերապահ կերպով արժեքավոր է:

Գավառական գրականություն ըսող Հինգ-վեց անուններուն մեջ ամենեն կարևորները երեք Հոգի են՝ Թլկատինցին, Ռուբեն Զարդարյան և Գեղամ Տեր-Կարապետյան: Գեղարվեստական տեսակետեն վերջինը ամենեն Համեստն է. իր արժեքը ավելի գիտական ուսումնասիրության Համար է և լեզվի:

Թլկատինցին այս խումբի պարագլուխն է, ամենեն կարևորը թե՛ իր գործի ծավալով, թե՛ շոշափած նյութերու բազմակողմանիությամբ, թե՛ բուն գավառեն գրելուն պատճառովը և թե՛ վերջապես ամենեն գլխավորը՝ իր գրական տաղանդով:

Կենդանի վրձին ունի ու կգրե Հոգիով: Իր գրածներուն մեծա-

գույն մասը պատկերներ են ու նկարագրություն. և քիչերն են, որ գեղարվեստական երկի ձևը կհագնին. իր տալ ուզածը գավառական իրականության նկարագրությունն է, ընդհանրապես տեսակ մը հում աշխատանք, բայց մեծ է իր ներքին բնական թափը, ներկայացնելու գեղարվեստական շնորհքը:

Եվ իր այդ ներքին թափին ու իր բնածին գեղարվեստական շնորհքին կպարտինք իր մեկ-երկու բեմական փորձերը. ո՛չ միայն այս շրջանի գավառական գրողներուն մեջ, այլ ընդհանրապես արևմտյան ամբողջ նոր գրականության մեջ միակն է, որ գրած է թատերականներ, որոնց մեջ լրջորեն պատկերացնել կուզե կենդանի կյանք ու կենդանի մարդիկ: Խակ է դեռ իր արվեստը, բայց սիրելի է իր բնական մտքի ազատ խաղը: «Էն դիր դեմեն» հետաքրքիր է իր արտաքինով, ներքինը նորավեպ մըն է նորեն, որ իր շուրջի վարքն ու բարքը քննադատել կուզե. և գեղեցիկ է իր բեմական լեզուն, կարճ, կտրուկ, պատկերալից խոսակցություն մը, ուր հարցն ու պատասխան իրարու մեջ կխրվին:

Գեղարվեստական տեսակետեն ու խորքեն շատ ավելի բարձր է «Զալում տղան», որուն առաջին երկու արարները ուղղակի վարպետի գործ է. ո՛չ միայն աննման լեզուն ու խոսակցությունը, այլև խաղին ընթացքն ու կենդանությունը. ո՛չ մեկ ավելորդ խոսք ու շարժում, ո՛չ մեկ նախապատրաստող առաջաբան, այլ անմիջապես կենդանի գործողություն: Հաջորդ երեք արարներուն մեջն ալ կան մեկ-երկու գեղեցիկ տեսարաններ, ինչպես, օրինակ, բանալիի տեսարանը, բայց ընդհանուր առումով գրությունը կիջնե նորեն գավառական կյանքի քանի մը «ցեցեր» նկարելու աստիճանին:

Թլկատինցիի տկար կողմը այդ բեմական երկերուն մեջ հոգեբանական մշակումն է. հեղինակը ունի կարողությունը իր գրչին տակ հոգեկան մշակումն ու խորացումները նկարելու, բայց չունի այդ գործին պահանջը և իր ընելիքի հստակ գիտակցությունը: Այսպես, օրինակ, իր զալում տղան ո՛չ մեկ զալումություն չունի իր վրա. գծված է աղոտ ու անհետևողական. լաթե մարդ մըն է, ո՛չ կենդանի էակ: Հեղինակին ուշադրությունն ու հետաքրքրությունը ուրիշ կողմ կերթա, կերթա դեպի նորավիպայինը, մինչդեռ

ինքը անհամեմատ բարձր շնորհք ունի բեմական ավելի խոր ստեղծագործության:

Թլկատինցիի աշակերտն է Ռուբեն Զարդարյան, որ համիտյան շրջանին ապրած է մեր շատ մը գավառացի հեղինակներուն նման Հայրենի հողեն դուրս, բայց սիրեր է ու նկարեր է միայն իր Հայրենի հողերուն վրա իր թարմ տարիներուն առացած հուշերն ու տպավորությունները:

Իր գրություններուն մեկ մասը ուղղակի նկարագրություններ են, պատկերներ, առանց շարժուն պատմության, մյուս մասն ալ ավանդություններու օգտագործում է ու հեքիաթի նմանող վիպագրություն: Մեծ չէ իր թափը. և արհեստական բան մը ունին իրենց վրա իր գեղարվեստական երկերը: Բայց սիրով կգրե. խնամք ու հղկում ունին իր գրությունները: Մշակած է ու հոգացած և՛ կառուցումը, և՛ ասությունը շատ ավելի, քան իր ուսուցիչը Թլկատինցին, բայց շատ ավելի նվազ կենդանություն կդնե մեջը, քան Թլկատինցին:

Այդպես ալ իր լեզուն. Զարդարյանը կհոգա, կքննե ու կկոկե իր բոլոր ասությունները, բայց ո՛չ մեկ կերպ համեմատվիլ չի կրնար Թլկատինցիի ուղղակի ժողովուրդի շրթունքեն քաղած տաք ու կենդանի խոսքին ու ոճին:

4. ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) ԹԵՐԹՈՆԱԿԱՆ ԵՎ ԿԻՍԱԹԵՐԹՈՆԱԿԱՆ

Երկարաշունչ վեպերու առաջին տեսակը կներկայացնեն թերթոն-վեպերը, այսինքն՝ օրաթերթերուն տակը լայն գոտիով մը տեղ բռնող և հաճախ ամիսներ տևող ընդարձակ վիպասանական գրություններ, որոնք լրանալեն ետքն ալ հոնկե կարտատպվին ու կղրկվին գրախանութ ծախվելու համար իբրև «ընթերցանության գրավիչ նյութ»:

Գրական լուրջ պահանջներ դնելու իրավունք չունինք այս թերթոնական գրականության վրա, իր ընթերցողները պահանջկոտ չեն. բավական է, որ շատ ձանձրալի չըլլան. մնացածը մեծ կարևորություն չունի:

Եթե երիտասարդ հոգի մըն է ընթերցողը՝ իր փնտրածը դեպքերու և արկածներու «հևիհև» ընթացքն է. ինչքան անսովոր, արտառոց, խորհրդավոր, սահմռկեցուցիչ, բազմակնճիռ ու մանկածապատ ըլլա բովանդակությունը՝ այնքան ավելի աղեկ, հետաքրքիր կըլլա: Իսկ հասուն ընթերցողը այդ թերթոն-վեպերու ավելի ևս ներողամիտ է. իր փնտրածը պարզ ժամանց է. կուզե, որ զբաղված ըլլա կերպ մը մինչև իր ժամադրված անձը գա, կամ մինչև շոգենավը տեղ հասնի, կամ մինչև որ քունը տանի:

Ահա՛ քանի մը վեպագիրներ, որոնք արդեն ինքնին շատ բան կըսեն. «Ավազակապետը», «Թխապարարը», «Մատնիչը». Արմեն Շիտանյանի երկերն են: «Թունավորիչ աղջիկը», «Ապերախտ գրագիրը». Հեղինակն է Գ. Սարաֆյան: «Պոլսո գաղտնիքները», «Բերայի գիշերները». Հեղինակն է Հակոբ Հաճյան:

Ազատության օրերուն հետ երբ կզպված բերանները կբացվին, կսկսի հեղափոխական թերթոնը. իր գլխավոր ներկայացուցիչն է Սմբատ Բյուրատ. և իր վեպագիրները՝ «Բանտե բանտ», «Արյան ձորը», «Իննսունվեց» և ուրիշներ:

Ասոր զույգ կերթան կես-թարգմանական ու կես-հեղինակություն եղող թերթոններ, որոնք Համիդյան ռեժիմի պալատական դավերն ու սարսափները նկարագրել կցանկան: Եվ Երվանդ Օտյան ալ դժբաղդաբար մշակած է բավականին այս տեսակի թերթոններ:

Շատ ավելի գրական հակումներով հեղինակներ են Սիպիլ, Զիփթե-Սարաֆ, Մարի Սվաճյան և Երվանդ Սրմաքեշխանլյան, որոնք երկարաշունչ վեպեր են գրած:

Սիպիլի «Աղջկան մը սիրտը» ունի գրական գրավիչ մասեր, հատկապես երբ գյուղի կյանքն ու բնությունը կնկարագրե:

Զիփթե-Սարաֆի ու Մարի Սվաճյանի վեպերը գրական կեցվածք ունին ու պատմելու շնորհք, տեղ-տեղ գեղարվեստական ցայտքեր, բայց ընդհանուր առումով ավելի տարված են հետաքրքրությունը վառելու ջանքով. և հոգեբանական բռնազբոսիկ բաներ ունին իրենց հորինումին մեջ, որ արգելք է գրվածքի գրական բարձրացումին:

Իսկ Սրմաքեշխանլյանի երկար վեպերը թերթոնականի ու գրականի ճիշդ սահմանին վրայեն կքալեն. շատ անգամ կմտնեն

ռակայն ավելի խոր չափերով դրական երկի մը սահմաններեն ներս՝ Պոլսի իրական կյանքը պատկերացնող տեսարաններով և իր նկարած պեմքերու ավելի հարազատ հոգեբանությամբ:

բ) ՎԵՊԵՐ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱԿՈՒՄՈՎ

Գեղարվեստին նյութը համիտենապես եղած է ու պիտի ըլլա մեյ մը արտաքին բնության, արտաքին կուլտուրական պայմաններու և ընկերային կյանքի արտաքին պատկերացումը, մեյ մըն ալ մարդկային հոգիներու ձգտումներուն, անուրջներուն, մաքառումներուն և հուզումներուն ներքին պատկերացումը:

Եվ ամեն հեղինակ, եթե իրավ որ հասած է գեղարվեստական որոշ բարձրության մը, այդ երկու կողմերն ալ գեղարվեստական աշխատանքի անտեսել չի կրնար: Ամենքն ալ կմոտենան այդ երկու կողմերուն, բայց տարբեր է միշտ իրենց մոտենալու եղանակն ու վերաբերումը:

Հեղինակներ կան, որոնց համար կարևորն ու հետաքրքիրը արտաքին իրականությունն է: Մարդկային հոգիներու նկարագրությունը կուգա խոսքի ու կհյուսվի, ինչ չափով որ անհրաժեշտ է ընդհանուր արտաքին պատկերի լրացման ու բացատրության համար: Հեղինակներ ալ կան, ընդհակառակը, որոնց համար կեդրոնականն ու էականը հոգիներուն ներքին իրականությունը պատկերացնելն է. արտաքին բնությունը, քաղաքակրթական ու ընկերական վիճակներն ու պայմանները կնկարվին միայն այն չափով, որչափով որ անհրաժեշտ են հոգիին պատկերացումը լրիվ ու ցայտուն դարձնելու համար:

Այս երկու հիմնական կողմերու տարբեր աստիճանի խառնուրդներովն է, որ պատմող ու նկարող գեղարվեստը կստանա իր բազմատեսակությունը: Մեկ կողմը ավելի տարածվելու ու փռվելու է հակամետ, մյուսը՝ ավելի նեղնալու ու խորանալու: Այս երկրորդ տեսակի ավելի հոգեբանական խորության ու վերլուծության սեր ունեցող հեղինակներուն կպատկանին այս շրջանին մեջ Զապել Եսայան և Տիգրան Զոլյուրյան:

Զապել Եսայան մեր հայ իրականության մեջ բացառիկ կին մըն է. ապրած է այր մարդու մը պես, այր գրագետի մը պես

անկախ, մինակ ու թափառական, գրեթե միշտ դուրս է եղած թե՛ ծնողական և թե՛ ամուսնական իր ընտանիքներեն. գրագետ կին մը, տարված գրական հետաքրքրություններով և զբաղված գրական աշխատանքով:

Թե՛ իր ավելի փոքր գեղարվեստական գրություններուն մեջ և թե՛ իր ավելի երկարաշունչ վեպերուն մեջ, ինչպես են «Անձկության օրեր», «Շնորհքով մարդիկ», «Վերջին բաժակը», Զապել Եսայան դիտող աչք ունի, բայց ավելի մտածող ու վերլուծող միտք: Իր գրիչը երբեմն քանի մը կարճ գիծերով, երբեմն ալ ավելի համեցող մանրամասնություններով կենդանի պատկերներ կուտա տեղերու, դեմքերու ու դեպքերու, արտաքին պայմաններու, բայց իր գլխավոր հետաքրքրությունը կհակի ու կկեդրոնանա հոգեկան ապրումներու պատկերացման վրա: Եվ իր գրչին եղած վիպական երկերը ինքնահատուկ գեղարվեստական մթնոլորտ մը ունին միշտ և գրական արժեք:

Տիգրան Չյոկյուրյան քանի մը վեպեր ունի, որոնք գրական առաջին փորձերու տպավորությունը կընեն ավելի, քան լուրջ գրական ստեղծագործության: Բոլորովին տարբեր ու մեկուսի դիրք մը ունի իր վերջին վեպը՝ «Վանքը», որ գրած է պոլսական ազատության վերջին տարիներուն և որ անպայման գրական թափ ու գեղարվեստական շունչ ունեցող գրություն մըն է:

«Վանքը» գրված է սրտանց, անձնական հուշերով, ապրված ու խոր դրոշմված տպավորություններով. և գրված է ջերմ գրչով, աչքի կիյնա փոքրերու ու մեծերու հոգին պատկերելու, հոգեկան աշխարհը գծելու կարողությամբ, որ իր երկին հրապուրիչ կողմն է: Եվ «Վանքը» պիտի մնա մեր գրականության մեջ իբրև գեղարվեստական մնայուն գործ մը:

Իր արտաքին թերությունը՝ քիչ մը շատ միալար. մեկ մարդու մը մեկ զգացումին երկարաձիգ նկարագրությունը առանց գույն ու ձև փոխելու, որ կհոգնեցնե: Ավելի խոր է ներքին թերությունը. գրվածքը մեզի կպատրաստե կուսակրոնի մը հոգեկան ներքին մաքառումներուն հանդիսատես ըլլալու և ճիշդ հոն, ուր պիտի վճռվի սիրո ու կոչումի մեջ տեղի ունեցող ընդհարումը, հանկարծ ներս կսպրդի թոքախտը ու կքակե բոլոր հանգույցները: Ասիկա

կարելի է շատ «Հուզիչ» և արտասովաբեր միջոց մըն է գիրքը փակելու, բայց պետք է ընդունինք, որ ո՛չ Հետաքրքիր է, ո՛չ մեր ակնկալածը, ո՛չ գրական է, ո՛չ ալ նույնիսկ իրական:

գ) ՎԵՊԵՐ ԿՅԱՆՔԻ ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՆ ՀԱԿՈՒՄՈՎ

Արփիար Արփիարյան (1852 - 1908) ութսունական թիվերու սկիզբեն մինչև իր մաՀը եղած է Հրապարակագիր, երկար տարիներ աշխատակից «Արևելքի» և թղթակից «Մշակ»-ի. վերջն ալ խմբագիր անդամ «Հայրենիք» օրաթերթի. արտասաՀման Լոնտոնի մեջ Հրատարակած է «Նոր կյանք» և զանազան այլանուն թերթեր Լոնտոն ու Եգիպտոս: Իր Հոդվածներով, իր օրը օրին տոմսերով, իր քննադատությամբ և իր արծարծած Հարցերով մեր արևմտյան մամուլի ամենեն աչքառու խոշոր դեմքերեն մեկն է:

Թեև գրած էր քանի մը նորավեպեր, որոնց մասին շատ էր խոսված և որոնցմով ինքն ալ նորավեպի Հիմնադիրներեն մեկն է Համարված, վերջն ալ գրած է ավելի երկարավուն մեկ-երկու վեպեր, բայց Արփիարյան ճանչցված էր Հրապարակի վրա իբրև կարևոր լրագրող. երկրորդական բան մըն էր և՛ իրեն Համար, և՛ ընթերցողներուն իր վիպական փորձերը: Երբ Հրատարակեց իր վերջին վեպը «Կարմիր ժամուց», Հանկարծ Հիմնապես շրջվեցավ իր դիրքը. իր լրագրող մը ըլլալը դարձավ երկրորդական, ու «Կարմիր ժամուցը» եղավ գրական երկրորդ շրջանի, գուցե և ամբողջ արևմտաՀայ մեր գրականության ամենեն բարձր վիպական ստեղծագործությունը:

Իր արժանիքները շատ են: Ամենեն առաջ իրական դեմքերու և իրական շրջապատի ճիշդ, կենդանի ու գեղեցիկ պատկերացում: Բայց դուրսեն ավելի շեշտված է վերլուծված Հոգիներուն ներսի պատկերացումը, որով վեպը խորք կստանա: Այս երկու խիստ կարևոր առավելություններուն կավելնա նաև երրորդ բարձր արժանիք մը. «Կարմիր ժամուցը» մարդկային քանի մը դեմքերու պատկերացումն ու ընդՀարումը չէ միայն, այլ ամբողջ ժողովուրդի մը կենդանի նկարը. Հայության պատկերացումը իր արդի երկու Հիմնական տիպարներով: Մեկ կողմեն Հայ պաՀպանողականը. մեծ

ադա, ամիրա ու քաղաքագէտ տարրը, միւս կողմէն աւելի թարմ ու շարժուն ու թռիչք ունեցող ժողովուրդի մարդը, հեղափոխական տարրը: Հայ արդի իրականութեան երկու հակադիր մասերը, որոնք ամէն տեղ պայքարի մէջ են իրարու հետ և իրենց ձեռքը կուզեն կեդրոնացնել հայ կեանքին ղեկավարութիւնը: Բայց ահա՛ թշնամիի խոլը չգնող հարուածին տակ կբացվի աչքերնին, կըմբռնեն իրարու դիրքն ու արժէքը և իրարու ձեռք կմեկնեն գործակցութեան: «Կարմիր ժամուցը» հայ ամիրայի մը և հայ գաւառացի տերտերի մը մեկ մասնաւոր ընդհարումը չէ, ինչքան ալ որ անհատօրեն ճիշդ ու հաստատ նկարուած ըլլան անոնք թէ՛ արտաքուստ և թէ՛ ներքուստ իբրև տիպար կենդանի անհատ: «Կարմիր ժամուցը» ամիրայական ու հեղափոխական մտայնութեան ընդհարումին պատկերացումն է, այսինքն՝ հայ կեանքի. և արդէն ատոր կպարտի իր մասնաւոր խորութիւնը:

Բայց կա աւելին: Գեղարվեստական հաջող ստեղծումները միշտ կարելի է աւելի ու աւելի խոր ըմբռնել: «Կարմիր ժամուցը» ո՛չ միայն հայ իրականութեան պատկերացումն է պատմական որոշ շրջանի մը, այլ, եթէ կուզեք, ամէն մեկ անհատ հայ հոգիի պատկերացումն է միևնոյն ժամանակ: Ամէն մեկ հայու հոգիին մէջ միշտ պահպանողական, քաղաքագէտ և «զգոյշ» ամիրա մը կա նստած. ինչպես և ամէն բան փոխելու, նորելու, ազատվելու խորին պահանջով «անխոհեմ» հեղափոխական գաւառացի մը կա նստած: «Կարմիր ժամուցի» մէջ ներկայացուած խաղը շարունակ կխաղացվի ամէն հայ մարդու հոգիին մէջ իրեն տիրապետող պետութիւններու ճնշող թաթին տակ:

Մեծ արժեքով վիպագիր դեմք մըն է նաև Երվանդ Օտյան (1869 – 1926): Սաստիկ շատ գրած, շատ ալ թարգմանած մարդ մը: Իր օրվան հայը հաներ է իր գրչին ծայրեն և ատոր համար ալ անդադար գրեր է առանց շատ մեկ կարևորութիւն տալու իր գրածին, ո՛չ ալ ընթերցող հասարակութեան ճաշակին և իմացականութեան, ո՛չ ալ հայ աղքատիկ գրականութեան պետքին ու պահանջին: Եվ ատոր համար ալ իր գրածներուն մեկ խոշոր մասը վայրիվերո բաներ են, մեկ մասն ալ թեև խորքով պիտանի, նույնիսկ

գեղեցիկ երկեր են, բայց խառնակ ու անփույթ. քանի մը երկեր կիսատ են մնացած, իսկ իր մանր-մունր անպետք ու պիտանի գրություններուն Հաշիվ չկա, բայց այս բոլոր կիսատ, անՀավասար ու թափթփած երկերուն մեջ ամեն տեղ ալ կերևա մարդուն տաղանդը:

Երվանդ Օտյան իր Հոգիին խորքը ունեցած է շատ լուրջ երակ մը. Հաճախ ուզած է գրել ու թարգմանել շատ լուրջ և ծավալուն երկեր կրոնական, փիլիսոփայական և Հասարակական նյութերու շուրջ: Բայց իր այդ լուրջ երակովը չէ, որ ծառայած է Հայ գրականության, այլ իր Հեգնող ու կատակաբան երակովը, որու վրա և պետք է կանգ առնել:

Հակոբ Պարոնյանի անմիջական Հաջորդն է և անմիջական շարունակողը: Իբրև ավելի ուշ եկող, իբրև եվրոպական գրականության շատ ավելի մոտիկեն շփվող՝ Օտյան ավելի ճարտարապետություն ունի, քան Պարոնյան. իր քիչ-շատ Հաջող գրությունները շատ ավելի ձև ունին ու կառուցում: Կյանքի պատկերացումները, իր Հեգնությունն ու իրականության քննադատությունը կաղապարած է շատ ավելի շենք ու ձև ունեցող ամբողջական երկերու մեջ, երբ նույնիսկ գրվածքը կիսատ կմնա: Իր գծած դեմքերը առանձին առած դիմանկարներ չեն, ինչ որ Պարոնյանի սովորական ձևն է, այլ գործողության մը շուրջը իրարու եկող, իրարու բախող ու իրար լուսաբանող մարդիկ: Իր գրածներուն մեջ շատ ավելի վիպական տարր ու Հետաքրքրություն կա:

Իր սրամտությամբ և ամեն ինչի մեջ ծիծաղելի կողմը դուրս ցայտեցնելու իր ընդունակությամբ ալ ետ չի մնար Պարոնյանեն: Օտյան ետ կմնա Պարոնյանեն իր գրած նյութերուն Հանդեպ իր ունեցած անմասնակից վերաբերումով: Պարոնյանի ծաղրին ու Հեգնության տակ կզգաս շարունակ, որ մարդը իր սկզբունքներն ունի, որոշ բաներ կՀարգե ու կսիրե և որոշ բաներու դեմ ալ դժգոՀություն ունի կամ Հակակրանք: Եվ ասիկա անփոփոխ բան մըն է Պարոնյանի գրչեն ելած ամեն երկի մեջ: Բոլորովին տարբեր է Օտյանի վերաբերումը դեպի իր գծած ու ներկայացուցած մարդիկն ու եղելությունները: Օտյան կխնդա ամենուն վրա և առանց մեծ տարբերություն մը դնելու՝ ամեն բանի վրա: Ջնջած է կարծես գեշի ու աղեկի զանազանությունը. ծիծաղելի են ամենքը, և ծիծաղել

միայն արժե այս կյանքին ու այս աշխարհին վրա:

Ո՛չ մեկուն դեմ Օտյան չարություն չունի, բայց համակրանք ալ չունի և այդ պատճառով ալ կլնդանք Օտյանի սուր խոսքերուն ու սուր դիտողություններուն վրա, կզգանք ու կխոստովանինք իր տաղանդը, բայց միշտ պաղ ու անջատ բան մը կմնա հեղինակին ու ընթերցողին միջև: Այս է գլխավոր պատճառը, որ հակառակ իր շատ մը առավելություններուն՝ Օտյանի երգիծանքն ու ստեղծագործությունը իր վրա կարծես պակաս բան մը ունի միշտ և իր խոսքին մեջ ցած կմնա Հակոբ Պարոնյանի խոսքեն ու գործեն:

Օտյանի սուր, գեղեցիկ ու հաջող կտորները շատ են, բայց դժվար է իր հաջող երկերը մատնանիշ ընել: «Տասներկու տարի ետքը» ավելի լուրջ գրության մեջ շատ սիրուն գլուխներ կան. իր կիսատ մնացած վեպերուն մեջ շատ արժեքավոր էջեր ունի. «Կատարյալ մարդ ըլլալու արվեստը» սորվեցնող նամակներու շարքին մեջ շատ ազնիվ գծված հեգնություն կա, բայց ծանրաբեռնված երկրորդական ու վիպային ավելորդություններով: Եվ անշուշտ որ իր գլուխգործոցն է «Փանջունին»:

Հերիք է միայն Ծապլվարի այդ հերոսի դեմքն ու վարքը գծած ըլլալը, որ Երվանդ Օտյան խոշոր արվեստագետ մը նկատվի և հայ գրականության մեջ կարևոր հեղինակ մը: Իրականության, դեռ գալիք իրողության և հայ հոգեբանության խոր ըմբռնում և սքանչելի պատկերացում կա այդ տասնյակ մը «կատակ» էջերուն մեջ:

Ծապլվարի այդ առաքինությունը կարելի է համարձակ կերպով դնել «Կարմիր ժամուցի» քովը, իբրև իրենց ժամանակի ամենեն ցայտուն և ամենեն խոր կերպով հայ հոգին պատկերող երկու երկեր:

Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՄԸ ՄԵՐ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԻՆ ՎՐԱ (1920-ԵՆ ԱՍԴԻՆ)

Առաջին Համաշխարհային պատերազմի վերջէն մինչև այս երկրորդ Համաշխարհային պատերազմի վերջը, այսինքն՝ մինչև այսօր, կներկայանայ մեզի իբրև նոր շրջան մը, իբրև մեր արդի գրականության երրորդ երեսնամյակը:

Դեռ ի լինելության եղող ներկա շրջանի գրականության մասին ես կուտամ միայն ամենէն բնորոշ ընդհանուր գծերը առանց անհատ հեղինակներու գործին ու գնահատանքին մտնելու: Շատ մը հեղինակներու երկերուն միայն մեկ մասն եմ կարդացած, շատերու աշխատանքին հետ պատահական ծանոթություն մը միայն ունիմ կամ բոլորովին անծանոթ եմ: Եվ վերջապես դեռ ապրող ու արտադրող հեղինակներու մասին խոսիլը վաղաժամ է այս տեսակ ընդհանուր հոսանքները ընդգծել ուզող աշխատության մը մեջ:

Առաջին Համաշխարհային պատերազմը հիմնովին փոխեց մեր արևմտահայ կյանքին պայմանները: Գործնականապես Հայությունը ջնջվեցավ Թուրքիայեն. լրացավ Թուրանական ցեղերու հազարամյա գործին արդյունքը. Հայ տարրը ջարդված ու վտարված է հայկական հողերեն և ընդհանրապես Թուրք պետության սահմաններեն՝ իր հողն ու ստացվածքը թողնելով Թուրքին:

Մինչև նախորդ Համաշխարհային պատերազմը արևմտյան Հայություն ըսվածը ըստ էության Թուրքիայի Հայությունն էր, որուն կեսը փճացավ, մնացած կեսի մը չափն ալ ցրիվ եկավ Թուրքիան շրջապատող արաբական ու եվրոպական երկիրներուն մեջ, իբրև փախստական ու գաղթական, մեծ մասը մերկ, զուրկ և հուսալքիք վիճակի մեջ. գաղթականության ծայրը հասավ մինչև Հյուսիսային ու Հարավային Ամերիկաները: Այնպես որ մեր գրականության այս երրորդ շրջանին արևմտյան Հայությունը. արևմտյան

Հայ նոր լեզուն և արևմտյան մեր նոր գրականությունը այդ գանա-
գան ու իրարմե շատ տարբեր երկիրներու գաղթական պայմաններուն մեջն է, որ կերպով մը դեռ իր գոյությունը պահպանելու կաշխատի:

Առաջին տարիները տեսակ մը դեռ կարծես ոտքի վրա և շուտով նորեն իր տունն ու Հայրենիքը վերադառնալու տարտամ հույսերով, իսկ վերջին տարիները արդեն հուսաթափ անորոշ իրականության հանդեպ և ինքն իրեն ցավագին հարց տալով, թե ինչ պիտի ըլլա մեր վերջը այս իր հողեն ու արմատեն կտրված վիճակին մեջ: Եվ ի՞նչ պիտի ըլլա մեր գրականության վիճակը մանավանդ, երբ Հայերեն կարդացող սերունդը հետզհետե կնվազի:

Բայց կյանքը կերթա իր ճամբով, և մեր նոր հեղինակները մեկ կողմեն կկրկնեն այդ տխուր հարցը և մյուս կողմեն կշարունակեն գրել համառությամբ: Եվ բնավ զանցառելի բան մը չէ այս վերջին քառորդ դարու մը ընթացքին Հայ վտարանդի գրչի կատարած աշխատանքը: Թեև ամեն տեղ ալ այդ աշխատանքի մեկ մեծ մասը երկրորդական կամ խակ գրություններ են, բայց ատոնց քովն ի վեր չեն պակսիր արժեք ունեցող երկերը:

Եվ ամեն տեղ ալ ամենեն առաջ լրագրական է այդ աշխատանքը: Ուր որ քիչ-շատ լուրջ թիվով մը գաղթականություն կհավաքվի՝ իսկույն կբացվի «դպրոց» սենյակ մը «եկեղեցի» սրահին քովիկը, որ լուր օրերը «մանկապարտեզ» կդառնա. և եկեղեցիեն ու դպրոցեն ալ առաջ կսկսի հրատարակվիլ շաբթե շաբաթ բարակ թերթ մը: Եվ շատ չանցած այդ բարակ թերթերեն մեկ-երկուքը կաճին ու կդառնան լրագիր Հայ գաղութային գլխավոր կեդրոններուն մեջ:

Քաղաքական ու կուսակցական այս լրագիրներուն կից չեն ուշանար ու լույս կտեսնեն հոս ու հոն նաև հատուկ «գրական» պարբերական հրատարակություններ, գլխավորապես իբրև ամսագիր: Ընդհանրապես երկար չեն ապրիր այդ ամսագիրները. գրական հետաքրքրությունը շատ փոքր շրջանակի մը մեջ է միայն, և այդ շրջանակի ալ պատրաստությունն ու կարողությունը շատ փոքր է լուրջ ու տևական գրական թերթ մը արտադրել ու պահել կարողանալու համար. իրենց կյանքը երկու-երեք տարիեն անդին

դժվար կանցնի. բայց և այնպես հետաքրքիր ու արժեք ունեցող ճիգեր են. «Կյանք ու արվեստ», «Մենք», «Զվարթնոց», «Արևագալ», «Հայ գիր», «Երիտասարդ հայուհի», «Նոր գիր», «Վեմ», «Ալիս», «Նաիրի» և շատ ուրիշներ. իսկ ամենեն կայունը և կեդրոնական դերը ունեցողը՝ «Հայրենիք» ամսագիրը: Այլև պետք է հիշվին վանական ամսագիրները՝ հինավուրց «Բազմավեպը», բանասեր «Հանդես ամսօրյան», Երուսաղեմի «Սիոնը» և Անթիլիասի «Հասկը»:

Այս պարբերականներուն մեջ երևցող հեղինակներուն մեկ մասը նախորդ շրջանեն կուգան և հոն հիշված են արդեն. այս շրջանին կպատկանին միայն այն հեղինակները, որոնց կյանքի ու գործունեության հիմնական ու կարևոր մասը կիյնա երկու համաշխարհային պատերազմներուն միջև:

Քիչ-շատ գիտական ուսումնասիրության մոտեցող ավելի լուրջ ու երկարաշունչ աշխատանքները շրջանին սկիզբը քաղաքական, հասարակական ու ազգային հարցերու շուրջ կդառնան՝ անշուշտ պոլշևիզմի բերած ցնցումին ու տակնուվրայության ազդեցության տակ. իսկ շրջանի երկրորդ կեսեն զգալի կերպով ծանրության կեդրոնը շարժված է դեպի պատմական, գրապատմական, հայասիրական ու բանասիրական հարցերն ու նյութերը:

Շրջանի առաջին կեսին ծնունդ առավ գրական նոր սեռ մը մեր գրականության մեջ՝ կիսովին պատմական, կիսովին գեղարվեստական բովանդակությամբ. մեկը մյուսի ետևեն սկսան երևալ մեր քաղաքական աչքի իյնող դեմքերու գրած «Հուշերը»: Ասոնց մեծ մասը արևելյան գրական լեզվով է, մյուս մասը՝ մեր արևմտյան բարբառով՝ նայելով հեղինակի տեղական ծագումին կամ նախասիրության:

Արևմտյան հայերենով գրված այդ երկերեն թե՛ իրենց նյութի հետաքրքրությամբ և թե՛ կենդանի պատկերացման գեղարվեստական արժեքով պետք է հիշել մասնավոր կերպով Արմեն Գարոյի «Հուշերը», որ սքանչելի էջեր են և հատկապես պատանեկան ընթերցման համար. Ռուբենի «Հուշերը», ուր բազմաթիվ դեպքեր ու նկարագրություններ գրված են վարպետի գրչով ու ջերմ շունչով. այլև Տարագրի «Հուշերը», Մալխասի «Հուշերը». որոնք նմանապես

գրված են շատ աշխուժ ու կկարդացվին հաջող վեպի մը նման: Մյուս հեղինակներուն հուշերը, որոնց գեղարվեստական արժեքը այնպես շեշտված չէ, անշուշտ կպահեն իրենց պատմական կարևորությունը:

Գալով բուն գեղարվեստական գրականության՝ շատ համեստ է այս շրջանի քնարերգությունը. ամենքս ալ կզգանք, որ հայրենիքեն փախստական կամ հալածական, սիրտ ու թռիչք տվող ամեն խթանե և հույսե թափուր, մեր այս գաղութներու մեջ մեծցող սերունդի քնարին թելերեն մեկ-երկուքը փրթած են, մյուսներն ալ թուլցած, ինչքան ալ որ ջանք կընեն ու կպրկեն: Այն միակ երգը, որ դեռ կհնչե ու կթրթռա և որ մեր սիրտերը կթրթռացնե և որուն անխտիր կզիջեն բոլոր բանաստեղծները քնարը վերցնելուն պես, կարոտի լարն է. կարոտ հայրենի տան, հայրենի հողի, հայրենի կյանքի կարոտ ու կանչ հին, անցած, հեռուն մնացած մանկական ապրումներու, հուշերու, ցավերու ու երազներու:

Մեր այս միջպատերազմյան շրջանի քնարերգության միակ իսկական նյութը և միակ հաջողվածը կարոտի այդ երգերն են. դեպի մեր ավերակի վերածված ու հափշտակված հայրենիքը: Կան քանի մը թարմ դեմքեր, որոնք կայծ ունին իրենց գրչին տակ և հույս կներշնչեն ու նոր ճամբաներ կորոնեն և ազատվիլ կուզեն հին կապանքներե ու հին ճնշումներե, որոնց մասին սակայն հիմա խոսիլ կարելի չէ, իրենց գործն ու իսկությունը կերևա հաջորդ շրջանին:

Վիպական գրականությունը ամենեն ավելի մշակվածն է նորեն և ամենեն ավելի հաջողը: Նկատելի է ավելի երկարաշունչ երկեր գրելու ձգտում մը բոլոր աչքի ինկող հեղինակներուն քով. այսինքն՝ շեշտված է հոգեբանական ավելի մանրամասն վերլուծություններ տալու պահանջը և կյանքի ամբողջ շրջան մը ընդգրկելու ու ներկայացնելու ցանկությունը. ըլլա՛ իրենց նյութը պատմութենեն առած, ինչպես Վ. Քյուրքճյանի «Ասպետ Լիպարիտը», ըլլա՛ մեր նոր պատմության ցավատանջ իրականութենեն, ինչպես Հ. Օշականի ու Մալխասի վեպերը, ինչպես է նմանապես Համաստեղի մեկ երկար ու կես մնացած վեպը, ըլլա՛ վերջապես ավելի արևելյան

ու միջազգային գետնի վրա բռնված վիպասանություն Լևոն Մեսրոպի:

Եվ այս հինգն են արդեն այս շրջանի արևմտյան լեզվով գրող գլխավոր վիպագիրները. և հինգն ալ արժեքավոր գրիչներ են՝ ամեն մեկը իր ձևի, իր գույնով ու իր ոճով, որոնք անտարակույս հարստացում մը կբերեն մեր նոր գրականության: Ասոնք միևնույն ժամանակ երկեր են, որոնք կնպաստեն ընթերցանության տարածմանը հասարակության քիչ մը ավելի լայն խավերուն մեջ, ուր, ինչպես հայտնի է, երկարատև ու բազմահատոր գրքերը կգնահատվին, պայմանով, որ կենդանի գրություններ ըլլան և հետաքրքիր:

Պակաս չեն բնականաբար նաև ավելի կարճ վեպերն ու վիպակները ու վիպանման մանր գրությունները, որոնց հեղինակները շատ են: Այս գրություններուն մեջ ալ նորեն ամենեն հաջողվածները անոնք են, որոնք հայրենի հողի, ջուրի, կյանքի ու մարդոց կորսված անցյալեն կպատմեն մեզի, որոնք անմոռանալի հուշեր են մանկության, սիրով ու կարոտով թաթավուն. այս ուղղությամբ գրող ամենեն գրավիչ հեղինակը Համաստեղն է անտարակույս:

Բնական կերպով հետզհետե կշատնան գաղութահայ կյանքե առնված վեպերը, քանի որ մեր նոր հեղինակները կապրին ու կմեծնան օտար հողի վրա, օտար պայմաններու մեջ: Եվ ինչպես մեր բոլոր գաղութներուն կյանքը կես մը հայ է, կես մը օտար, այնպես ալ իր ծնունդն ու իր պատկերը եղող այդ գրականությունը խառնակ ու ծանր բան մը ունի իր վրա. նույնիսկ հաջող էջերը խորթություն մը ունին իրենց մեջ, որուն հանցանքը անշուշտ հեղինակինը չէ: Այդ գաղութահայ կյանքե առնված գրություններուն մեջ աչքի կիյնա նաև սեռական ավելորդ բացություն մը, տեղ-տեղ նույնիսկ սեռական անպարկեշտ չափազանցություն մը, որ անշուշտ մասամբ արդյունք է իր հենարանը կորսնցուցած երիտասարդ խրղճության, մասամբ ալ օտար մեծ քաղաքներու ժխորին մեջ յուրացված «իմաստության»:

Լքված չէ և ծաղրավեպը, երգիծական գրությունը, որուն բեղմնավոր ներկայացուցիչն է Նշան Պեշիկթաշլյան: Օտար միջավայրի իբրև խառնակ ազդեցությո՞ւն, թե՞ կյանքի անարժատ

պայմաններու իբրեւ հետեւանք զգալի է ճաշակի ու չափի որոշ անվստահութիւն մը մեր նոր երգիծաբանի գրչի շարժումին վրա: Բայց եւ այնպէս պէտք է ընդգծել, թէ երգիծաբանութիւնը այն միակ ճիւղն է մեր նոր արեւմտեան գրականութեան, որ հաւասար բաղդաւորութեամբ մշակուած է իր երեք շրջաններուն մէջն ալ, առանց ընդմիջումի, անընդհատ ժառանգումով «որդի ի հօրէ»՝ Հակոբ Պարոնեան, Երվանդ Օտեան եւ Նշան Պէշիկթաշլեան:

ՅՈԹՆԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՄԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՆԱԽԸՆԹԱՑ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

ԺԸ դարու վերջերուն ռուսները հետզհետե կմոտենային կովկասյան սահմաններուն. ԺԹ դարու առաջին տարիներուն արդեն մտած էին Կովկաս և տեր էին Կուր գետի ստորին ու ձախ հովտին. 1804-ին գրավեցին Թիֆլիսը: Կմնար, որ առաջանային դեպի հարավային հայկական լեռնամասերը. կարծես կվարանեին. այդ վարանումեն միտ առած պարսիկները իրենք շարժումի անցան ռուսները դուրս քշելու հույսով Կովկասեն:

Ընդհարումները երկար չտևեցին. հայերը իրենց հոգիով, այլև կրցածնուն չափ զինվորներով ռուսներու հետ էին. քանի մը բարձր հայ զինվորականներ ռուս բանակին մեջն էին և կամավորներու գլուխն էր անցած Ներսես Աշտարակեցին: 1827-ին գրավվեցավ Էջմիածինն ու Երևանը իրենց շրջակա գավառներով և կնքվեցավ Թյուրքմենչայի հաշտությունը:

Հաջորդ տարին սկսան ռուս-թուրքական կռիվները գլխավորապես պալքանյան ճակատին վրա. բայց և պարսիկներեն նոր գրավված հողերու արևմտյան սահմաններուն վրա. այս կռիվներն ալ վերջացան ռուս զենքի հաջողությամբ և 1829-ի Անդրիանապոլսի հաշտությամբ:

Այս երկու դաշինքներով հայկական հողերու խոշոր կտոր մը Կուր ու Արաքս գետերուն միջև՝ ամբողջ Արարատյան և Սյունիք աշխարհները, կտրվեցան մահմեդական ու միջնադարյան տիրա-

պետութեանն: Հայութեան կարեւոր հատուած մը դուրս էր եկած վերջապէս թուրքական գաւառներէն: Չէր ստացած անշուշտ իրեն կեսարերան խոստացուած «Հայկական Թագաւորութիւնը», բայց մտած էր վերջապէս քրիստոնեայ, ընդարձակ եւ զօրեղ պետութեան մը հովանիին տակ, որ եւրոպական կազմ ու վարչութիւն ունէր եւ արագ կերպով աւելի եւս եւրոպականանալու ճամբուն վրայ էր:

Հայութեան հիւսիսարեւելեան անկիւնը՝ «կովկասեան հայութիւնը», կապուած էր վերջապէս արեւմտեան քաղաքակրթութեան եւ արիական ժողովուրդներու զարգացման ընթացքին: Հայութեան այս մասին համար փակուած էր պատմական ծանր դարերու մղձա-վանջային շրջան մը եւ կբացուէր բոլորովին նոր ու տարբեր կեանքի շրջան մը:

Ինչի՞ մէջն էր գլխաւոր ու անմիջական փոփոխութիւնը:

Ամենէն առաջ կեանքի ու ինչքի ապահովութիւն. դանակի պէս կորսուած էր մինչեւ վերջը վախի ու սարսափի տակ ապրիլը, խաներու ու խանական պաշտօնեաներու եւ մեծ ու պզտիկ ավա-զակներու կեղեքումները, բռնաբարութիւններն ու հափշտակու-թիւնները զանազան ձեւերու եւ անուններու տակ. վերցած էր նաեւ արհամարհանքն ու նվաստացումը, որ կկրէին հայերը իբրեւ ռայա, իբրեւ քրիստոնեայ: Հիմա հայը արագ կերպով տեսակ մը ընկեր, գործակից ու պաշտօնակից կդառնար պետական անիւներուն մէջ, հայ պաշտօնեաներ, հայ զինուորականներ հոս ու հոն դիրք ու անուն կստանային:

Երկրորդ մեծ տարբերութիւնը հաստատ օրէնքներու տակ ապրելու գիտակցութիւնն էր: Ամէն բանի համար որոշ օրէնք եւ անխտիր ամենուն համար նոյն օրէնքը: Օրէնքները, ինչքան ալ դիցուք անարդար ըլլան ու ծանր, եթէ կանոնաւոր կերպով գործադրուին՝ հանգիստ ու թեթեւութիւն կուտան միշտ կեանքին. ամենէն անտանելի բանը ամենուն համար անորոշութիւնն է, մեծ ու մանաւանդ պզտիկ իշխանաւորներուն կամայականութիւնը, քմայքը, ապօրինութիւնը, որ վախ կծնի, քծնանք ու անապա-հովութիւն:

Երրորդ՝ մեր աշխարհի այդ «ազատագրուած» կտորն ալ կդառնար մեծ ու կանոնաւոր կազմակերպուած պետութեան մը

Հարազատ մէկ մասնիկը. արագ կերպով կապերը, Հաղորդակցութիւնն ու երթեւեկը կսերտանար պետութեան կեդրոնին և մյուս մասերուն Հետ. ճամբաներ, փոստային կանոնավոր երթեւեկ. տեղափոխութեան Համեմատական դյուրութիւն ու արագութիւն, ապրանքներու ներածում ու արտածում, որ թե կուտար առեւտրով զբաղվողներուն, կնպաստեր կյանքի պայմաններու տնտեսական բարձրացման և ճամբա կՀարթեր նոր Հարուստներու, որոնք գլխավորաբար կկեդրոնանային Թիֆլիսի մեջ, որ դարձած էր Կովկասի վարչական ու տնտեսական մայրաքաղաքը:

Չորրորդ՝ Թիֆլիսի մեջ, բայց և այլուր կբացվեին քանի մը պետական վարժարաններ եվրոպական ուսումներով և եվրոպական ձև ու կազմով, ուր ուսուցման մեջ ամենեն կարևորը պետական լեզվի խոր ու ազատ յուրացումն էր: Ամեն բարձրացում, ամեն Հաջողութիւն, ամեն պաշտոն, ամեն զինվորական դիրք ու ամեն քիչ-շատ ընդարձակ առեւտրական գործ ասկե ետքը Հնարավոր էր միայն ռուսերենի տիրանալով: Եվ այդ կարևոր զենքը իրենց զավակներուն ձեռքը դնելու Համար Հասկցող ծնողները, Հնար ունեցող ծնողները ո՛չ մեկ զոՀողութեան առջև կանգ չէին առներ: Ռուսերեն լեզվի և ռուսերեն դպրոցի Հետ կուգար ռուսերեն գիրքը, ռուսական ու եվրոպական գիտութիւններն ու գեղարվեստները, ռուսական ու եվրոպական ըմբռնումներ, ձգտումներ ու աշխարՀայացք: Ռուսական դպրոցներով ճամբա կբացվեր նաև դեպի ռուսական բարձրագույն վարժարանները, դեպի ռուս Համալսարանները՝ իրենց զանազան ճյուղերով, սկիզբը՝ ամենեն ավելի դեպի բժշկութիւն:

Եվ զանդաղ կերպով կսկսի առաջանալ ռուսական միջնակ ու բարձր կրթութեամբ նոր մտավորականութիւն մը, որ մինչև դարուն կեսերը դեռ շատ ցրիվ է ու սակավաթիվ և ընդՀանուր ազդեցութիւն մը բանեցնել դեռ չի կրնար Հայ կյանքին վրա: Մինչև ԺԹ դարուն կեսը Հայ կյանքի ղեկավարը նորեն Հայ Հոգևորականութիւնն է, որ նախորդ դարերու Հոգևորականութենեն ո՛չ իր կրթութեամբ, ո՛չ իր կենցաղով Հիմնական տարբերութիւն մը չուներ: Ներսես Աշտարակեցիի ու Ալամդարյանի նման Հոգևորա-

կանները հաղվագյուտ բացառություններ էին, որ նոր կյանքի պայմաններուն մեջ նոր բաներ կփնտրէին:

Մինչև դարուն կեսը ռուսական տիրապետության տակ երեք դպրոց ունի Հայությունը. մեկը Աժտարխանի մեջ, մյուսը Մոսկվայի Լազարյան ճեմարանը դարու սկիզբէն և Թիֆլիսի մեջ Ներսիսյան վարժարանը, որուն պաշտոնական բացումը կատարված է 1825-ին: Այս դպրոցները, հատկապես վերջին երկուքը, մեկ-երկու տասնյակ տարի ետքը կսկսին կարևոր դեր խաղալ Հայ կյանքին մեջ, բայց մինչև դարուն կեսերը շատ ավելի համեստ է իրենց դերը. դեռ Հրապարակի վրա պատրաստ մարդիկ չկան. քիչ-շատ պատրաստված ուսուցիչ ու տեսուչ գտնելու համար հարկադրված են Պոլիս ու Վենետիկ դիմելու և հոն անուն հանած դեմքեր հրավիրելու, որոնց ունեցած կրթությունն ու պատրաստությունն ալ սակայն ընդհանրապես մեծ բան մը չէր:

Մինչև դարուն կեսերը կովկասյան Հայությունը դեռ լրագրություն ալ չունի: Ռուսերեն առաջին թերթը հրատարակվեցավ Թիֆլիսի մեջ 1846 թվին «Կովկաս» անունով, Վարանցով փոխարքայի օրով և կառավարության ձեռքով: Այդ պաշտոնական պարբերաթերթը 1846 – 1849 ունեցավ նաև Հայերեն լեզվով իր Հրատարակությունը նույն անունով, որ և եղած է Հայ առաջին պարբերականը ռուս պետության սահմաններուն մեջ և եղած է գրաբար լեզվով:

Այսինքն՝ 50-ական թվականներու սկզբին թե՛ ազգային կյանքը, թե՛ դպրոցական վիճակը, թե՛ լրագրությունը, թե՛ ընթերցող հասարակության թիվն ու պահանջը և թե՛ նոր գրական լեզվի առաջացումը ռուսական բաժնի Հայության մեջ համեմատելի չեն կրնար Պոլսի գրական-հասարակական շարժումներուն:

Պոլսի մեջ կեդրոնացում կա թե՛ թիվի, թե՛ աշխատանքի և շարժումը սկսված է ավելի կանուխ և ավելի շեշտված կերպով: Ռուսական բաժնի Հայության մեջ չկա Պոլսին համապատասխանող կեդրոնացում մը. շարժումը ավելի դանդաղ է և ավելի ցրիվ՝ Մոսկվա, Հյուսիսային Կովկաս, Թիֆլիս ու Էջմիածին: Ուսման, պաշտոնի ու առուտուրի պահանջներով Հայերուն թիվը պետք է լրջորեն ավելնար Թիֆլիսի մեջ մեկ-երկու տասնամյակներու ընթացքին,

որ Պոլսին նմանող Հայ Հասարակական կեդրոն մը ստեղծվեր նաև Կովկասի մեջ:

2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՆՈՐ ԼԵԶՎԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Արևմտյան գրական նոր լեզվի առաջացումը ու մշակումը կատարված է շատ ավելի մեծ չափերով ինքնիրենը և կատարված է միջնակ մտավորականության մը ձեռքով, այսինքն՝ տեղական Հայ վարժարաններեն ելլող նոր սերունդին ձեռքովը. շատ ավելի ուշ Հետզհետե կուգան ու կարևոր դեր կխաղան եվրոպական կրթությամբ ելլող անձերը: Պոլսի մեջ գրական լեզվի մշակումը տեսակ մը ներսեն դեպի դուրս, վարեն դեպի վեր շարժում մըն է:

Արևելյան գրական լեզվի առաջացումը գնացած է Հակառակ ուղղությամբ: Եղածը քանի մը վարժարան էր իրարմե սաստիկ Հեռու վայրերու մեջ և իր արտադրած աշակերտությունն ալ թվով քիչ էր ու ցրիվ ելած. պետական վարժարաններն ալ մինչև ԺԹ դարուն կեսը դեռ շատ քիչ էին, միջնակ մտավորականություն մը մեջտեղը դեռ չկար: Անոր փոխարեն մեկ-երկու տասնյակ ավարտականներ Լազարյանեն, Ներսեսյանեն, Նոր Նախիջևանեն և զանազան պետական միջնակարգ վարժարաններեն անցած էին Մոսկվա բարձրագույն վարժարանները և Համալսարան:

Ահա՛ այս Հայ ուսանողության մեջն է և օտարության մեջ, դուրսը, որ ծնունդ կառնե արևելյան գրական լեզուն: Այդ ուսանողությունն էր, որ իր ստացած նոր եվրոպական ըմբռնումներուն և իր տեսած նոր ու օտար կյանքի ուժեղ ազդեցության տակ կձգտեր նոր Հայ ժողովուրդ մը, նոր Հայ գրականություն մը և նոր Հայ լեզու մը ստեղծել:

Մոսկվայի ու Դորպատի Համալսարաններուն մեջն ու շուրջը աշխատող այդ դեմքերուն մեջ ամենեն կարևորներն են Գաբրիել Պատկանյան, Միքայել Նալբանդյան, Ստեփանոս Նազարյան, Դոդոխյան, Սմբատ Շահազիզ, այլև քանի մը ուրիշներ, որոնց անունը գրական աշխատանքով մը մեր գրականության մեջ չէ շեշտված:

1855-ին է, որ քանի մը ուսանող ընկերներ կհրատարակեն «Գամառ-Քաթիպա» անունով տետրակ մը, որ կպարունակվի 5-6

թիվ. այդ տետրակները գրված են «աշխարհաբար» լեզվով. ատոնց մէջն է տպված Պատկանյանի «Մայր Արաքսի»-ն: Այդ տետրակները և «Մայր Արաքսի»-ն կրնանք, առանց մեծ խղճի խայթի, արևելյան նոր հայերենի հիմնադրումը նկատել: 1858-են կսկսի Ստեփանոս Նազարյանը իր նշանավոր ամսագիրը՝ «Հյուսիսափայլը». ինչպես ընդհանրապես նոր հառաջդիմական գաղափարներու, այդպես ալ գրական նոր ընդհանուր լեզվի մը պահանջով կուգա «Հյուսիսափայլը»:

Նազարյանի լեզուն դժբաղդաբար շատ է չոր, բայց ամսագրին մէջ կաշխատակցեին ուրիշները շատ ավելի մեծ գրական ու լեզվական շնորհքով. ամենեն մեծ դեմքը և՛ հանրային, և՛ գրական տեսակետեն Միքայել Նալբանդյանն էր: Լեզվի մշակման տեսակետեն շատ կարևոր դեր կխաղա նաև Սմբատ Շահազիզ իր բանաստեղծություններով:

Արդ՝ Նազարյանը հավլաբարցի էր և Լազարյան ճեմարանեն. Պատկանյանը եղած էր Ներսիսյան դպրոցը և իր հայրը Թիֆլիսի մէջ 1851 թվին թերթ կհրատարակեր ժողովրդական լեզվով. Նալբանդյան նորնախիջևանցի է և ուսած է տեղական դպրոցի մէջ. Սմբատ Շահազիզ աշտարակեցի է և Լազարյան ճեմարանեն: Ասոնց պես ալ իրենց մյուս ուսանողական ընկերները կա՛մ իրենց ծագումով, կա՛մ իրենց նախնական կրթությամբ կխոսեին արարատյան բարբառով մը, որովհետև դպրոցներուն մէջն ալ ամենեն ավելի տիրապետողը արարատյան բարբառներն էին:

Արարատյան բարբառը իր զանազան երանգներով կխոսվեր ամբողջ Արարատյան նահանգին մէջն ու շուրջը, այսինքն՝ այդ բարբառն էր ամենեն ավելի ընդհանրացածն ու գործածականը կովկասյան հայության մէջ: Թիֆլիսի ու Նոր Նախիջևանի բարբառները կեդրոնացած էին միայն մեկ քաղաքի մէջ, ան ալ բնակչության հին շերտին մէջ. նոր շերտը կա՛մ դուրսեն եկած, կա՛մ դպրոցի ազդեցության տակ էր, այսինքն՝ արարատյան բարբառներու. իսկ Ղարաբաղի բարբառը դեռ շատ էր մեկուսի իր լեռներուն մէջ:

Այնպես որ կովկասյան հայության համար ամենեն ավելի հրապարակի վրա գործածվող, ամենեն շատ խոսվող և տեսակ մը

ամենուն հասկընալի միջին լեզուն արարատյան բարբառներն էին: Արարատյան բարբառը իր հնչաբանությամբ ալ շատ ավելի մոտիկ է գրաբարի արտասանության ու բառակազմության, որ անշուշտ գրական փոխանցման դյուրություն մըն է: Այլև պետք չէ մոռնանք, որ ԺԷ դարու կեսերեն մեջեմեջ տաղասացներ, աշուղներ տաղեր ու երգեր ունեին արարատյան բարբառով. կան հոս ու հոն գործնական գրություններ. և վերջապես հոս ալ երեսնական թիվերուն վերջը բողոքականները կցրվեն ժողովուրդի մեջ Սուրբ գրքի թարգմանությունը, որ նմանապես կատարված է արարատյան բարբառով: Դեր մը ունի նաև Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի», որ տպված է 1858 թվին, բայց գրված է 1842-ին և ձեռագիրը ծանոթ էր «գրասեր անձերու», անշուշտ և մեր ուսանողներուն:

Այս բոլոր իրողություններու հարկադրանքով արևելյան գրական նոր լեզվին հիմքը կդառնա արարատյան բարբառը, այսինքն՝ Երևանի, Նախիջևանի, Աշտարակի, Ապարանի, Լոռու ու Ղազախի ու հարակից շրջաններուն մեջ խոսվող իրարու շատ մոտիկ բարբառները:

3. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՆՈՐ ԼԵԶՎԻՆ ԿԱԶՄԸ

Արևելյան նոր գրական լեզվին հիմքը բարբառներն են արարատյան, բայց արևելյան նոր լեզուն ինքը այդ բարբառներեն և ո՛չ մեկը չէ· բարբառներու ու գրաբարի խառնուրդ վիճակ մըն է նորեն, արևմտյան նոր լեզվին նման. և իր կազմն ալ կհամապատասխանե միևնույն սկզբունքներուն:

Հնչաբանությունը կհետևե գրաբարին. բարբառական սղումներուն ու հնչայլումներուն տեղը կգործածվին գրաբարեն եկող հին, հիմնական ձևերը. կամուրջ (ո՛չ կարմունջ), այծ (ո՛չ էծ), լինում է (ո՛չ ըլլում ա):

Հոլովումը, խոնարհումը և նախադասություններուն կազմը ընդհանրապես ըստ բարբառի: Բայց շատ մը մակբայներ ու շաղկապներ փոխ կառնվին գրաբարե՝ որովհետև, այսուամենայնիվ. ըստ այսմ, իրավամբ, իհարկե, մասամբ:

Անոր փոխարեն լայն գործածություն ժողովրդական ասույ-

թային բայերու, ասույթային ձևերու, անկումներու, առածներու, առակներու, ժողովրդական ինքնահատուկ արտահայտություններու և կերպերու, թեև որոշ ոճեր ու դարձվածքներ կառնվին նաև գրաբարեն:

Այս բոլոր սկզբունքներն ալ նույնն են մեր երկու նոր գրական լեզուներուն մեջ, բայց այդ սկզբունքներու գործադրության չափին ու ձևին մեջ կա զգալի տարբերություն:

Նախ՝ գրաբարյան վերջին դարու ազդեցությունը անհամեմատ նվազ է եղած արևելյան հայության վրա. շատ էր հեռու ու կտրված Վենետիկեն. արևմտյան լեզուն շատ ավելի ուժեղ չափերով և շատ ավելի երկար ժամանակ կտրվիլ չուզեր գրաբարի քերականության ձևերեն խիստ կերպով: Մինչդեռ արևելյան նոր լեզուն գրաբարյան այդ ճնշումեն շատ ավելի ազատ է. ընդհակառակը, իր վրան ուժեղ կերպով ճնշողը բարբառներն են, որովհետև իր հեղինակներեն շատերը բուն ժողովուրդի մարդիկ են ժողովուրդի հոգեբանության շատ մոտիկ, ինչպես՝ Աղայան, Պռոշյան, Թումանյան. և ժողովուրդի լեզվով ու ոճով արտահայտվիլը բնական ձևն է իրենց համար. շատ-շատ ուզեր են քիչ մը ավելի կոկեն, կանոնավորեն, միաձևություն մտցնեն. միայն ժողովուրդի չունեցածը աշխատեր են գրաբարով լրացնեն: Մյուս կողմեն ալ ժողովուրդի լեզվին մոտիկ մնալը և ժողովուրդին համար պարզ ու հասկընալի ըլլալը ընտրած են իրենց նշանաբան:

Երկրորդ՝ արևմտյան նոր հայերեն լեզուն, բացի գրաբարե, ուժեղ ազդեցության տակ է եղած ֆրանսերեն լեզվի ու գրականության. իսկ ֆրանսերենը չափված-ձևված ու հաստատ ձևակերպված լեզու մըն է. և ֆրանսական գրականության մեջն ալ շատ է շեշտված արվեստն ու ճաշակը: Այս ազդեցություններուն տակ մեր ամեն մեկ գրիչ շարժողը, ըլլա հեղինակ թե թարգմանիչ, իր գործածած լեզուն հղկելու, տաշելու, մշակելու, միակերպություն մը տակ բերելու, քաղցրահնչյուն դարձնելու, ճաշակ ու արվեստ մտցնելու մտահոգություններուն մեջն է շարունակ: Հետևանքը եղած է, որ մեր արևմտյան նոր լեզուն ավելի կոկված է, ավելի մշակում ունի իր վրա և բառամթերքով ալ ավելի հարուստ է ու նուրբ: Մինչդեռ մեր արևելյան նոր լեզվին մեջ փնտրվածն ու

դնահատվածը հարազատությունն է և արտահայտության կենդանությունը ասույթներով, ասելուկներով, ոճերով ու ժողովրդական կերպերով:

Ժողովրդական արտահայտության կենդանությունը պահելու այդ ձգտումեն առաջացած է նաև թուրքերեն բառերու գործածության դեմ շատ ավելի լայն ու ներողամիտ վերաբերում մը, մանավանդ որ մեր արևելյան հեղինակները այլևս թուրք տիրապետության տակ չըլլալով՝ տիրողի ու տիրվածի զգացումներ չունեին իրենց հոգիին մեջ թուրք բառերու հանդեպ:

Այս նոր արևելյան լեզվով գրականությունն ալ կսկսի նոր արևմտյան հայերենին նման ԺԹ դարու հիսունական թիվերու վերջեն և ան ալ ուրեմն մոտավորապես դարու մը կյանք ունի արդեն:

Եվ ճիշդ մեր արևմտյան նոր գրականության պես կարելի է բաժնել այդ ժամանակը երեք շրջանի՝ բոլորովին համապատասխան հատումներով և զուգընթաց արևմտյան գրականության շրջաններուն: Եվ այս զուգընթացությունը ո՛չ արվեստական է և ո չ ալ բռնազբոսիկ, այլ հոս ալ կհիմնվի քաղաքական պայմաններու փոփոխության և գեղարվեստական ներքին առանձնահատկություններու վրա:

Առաջին շրջանը, ուրեմն, կլոր թիվերով 1860 – 1890. քաղաքական ավելի հանգիստ տարիներ են. քաղաքակրթական զարթոնքի ու բարձրացման աշխատանքներ կտարվին. և գեղարվեստի հիմնական ուղղությունն ալ քարոզչություն է, նախ կուլտուրական, ետքն ալ Թուրքիայի ազատագրության երգ ու քարոզ:

Երկրորդ շրջանը, ուրեմն, նորեն կլոր թիվերով 1890 – 1920. թե՛ քաղաքական և թե՛ հեղափոխական ու քաղաքակրթական աշխատանքները սերտորեն կապված են Դաշնակցական կուսակցության շարժումներուն ու գործունեության. իսկ գրականության մեջ չնչտված կերպով կառաջանա գեղարվեստականի փնտրտուքը. քարոզչությունը տեղի կուտա գեղարվեստական խորքին:

Երրորդ շրջանը մոտավորապես կսկսի 1920-են և կտևե մինչև օրս. քաղաքական ու քաղաքացիական տեսակետեն պոլշևիզմի տիրապետության տարիներն են. և գրականության մեջն ալ հաստ-

կապես արժէք ներկայացնող գիտական աշխատանքներն են, գիտություններու Հայ լեզուով ու Հայ շունչով մշակումը:

Բ. ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ՝ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ (1860 – 1890)

1. ՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Ռուսաստանի մեջ ալ մեր նոր գրականության ամբողջ առաջին շրջանի ընթացքին շատ ավելի լայնախոհ էր, շատ ավելի անխույժ ու բարեկամական ռուս կառավարության վերաբերումը դեպի Հայությունը, որ դեռ նոր տիրված ժողովուրդ մըն էր, ռուսներու գալը գրկաբաց ընդունող, շատ ցրիվ, քաղաքակրթապես ոտքի ելլելու առաջին փորձերով. և գլխացավ պատճառելու առիթներ դեռ չկային: Իսկ Հայերու վերաբերումը դեպի ռուս ժողովուրդը, ռուս քաղաքակրթությունը և ռուսական կրթությունը շատ ավելի ջերմ էր ու սրտաբաց. Հայերը կնայեին ռուս պետականության վրա, ինչպես կրտսեր եղբայրը կնայի իրեն կրթող, օգնող, բարձրացնող ու պաշտպանող մեծ եղբոր մը վրա:

Ռուսաստանի այդ ժամանակվա պայմաններն ալ ընդհանրապես ավելի նպաստավոր էին ժողովուրդի ու ժողովուրդներու հանդեպ քիչ մը ավելի ազատ ու թույլատու քաղաքականության: Հիսունական թվերու երկրորդ կեսին՝ Խրիմի պատերազմեն ետքը, կառավարությունը ավելի գիջող կեցվածք ուներ: Վաթսունական թվերու սկիզբին, երբ ճորտերուն ազատություն տրվեցավ Ալեքսանդր կայսեր օրով, ավելի ազատախոհ և ավելի ժողովրդասեր հովեր կփչեին:

Իսկ յոթանասունական թվականներու վերջը ռուս-թուրքական պատերազմն էր, երբ Հայկական հարցը ծագում առավ ռուսներու իսկ գրգռումով, իբրև Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդված.

պահանջատերը տեսակ մը Ռուսաստանն էր. շահակից ու դաշնակից էինք դարձած, որ բնականաբար հարաբերություններուն այ տաքություն կուտար, մանավանդ որ բավական հայեր այ նույնթապես շահվեր էին այդ պատերազմեն:

Ութսունական թիվերու կեսերուն պիտի հասնինք, որ ռուս կառավարության և հայության մեջ հարաբերություններու սառնացում զգանք, երբ պետությունը իր առաջին փորձը կընե հայ դպրոցները հայության ձեռքեն առնելու և ընդհանրապես ազգային-կուլտուրական ազատությունները քիչ մը ավելի սեղմելու, որ հետզհետե կխստանա, դիմադրություն կառաջացնե ու կվերածվի բացարձակ պայքարի իննսունական թիվերու ընթացքին: Նորեն ուրեմն սահմանագլուխ կդառնա 1890 թիվը վերաբերումի ու քաղաքականության կարևոր փոփոխությամբ:

Հայ մտավոր նոր շարժում մը, նոր հայ դրական աշխարհիկ լեզվի մը պահանջը և այդ նոր լեզվով նոր դրականության մը հիմնարկումը արևելյան հայության համար այ տեղի ունեցավ մայրենի հողեն հեռու՝ տիրապետող պետության մայրաքաղաքին մեջ: Հիսունական ու վաթսունական թիվերուն Մոսկվան կխաղա նման դեր մը, ինչ որ այդ միջոցին Պոլիսը կխաղար արևմտյան հայության համար: Հիմնական տարբերությունը հոն է, որ Պոլիսը արդեն դարերե ի վեր հայաշատ կեդրոն մըն էր, մինչդեռ Մոսկվան հայություն չուներ: Ընդամենը խումբ մը ուսանողներ էին, այլև Լազարյան ճեմարանը իր քանի մը ուսուցիչներով և ընտանիքներով: Քանակով շատ քիչ, բայց որակով կարևոր, քանի որ կներկայացներ մտավորական նոր տեսակի մարդիկ միասին խմբված, որուն նմանը դեռ չունեինք ո՛չ մայր հողին վրա. ո՛չ այ մայր հողին մոտիկ վայրերու մեջ: Իսկ մտավորական ու քաղաքակրթական նորությունները բնական կերպով կբերեն մտավորական նոր սերունդները, մանավանդ երբ կխմբվին:

Այս իրողության ծնունդն են ինչպես «Գամառ-Քաթիպա» տետրակները, այնպես այ «Հյուսիսափայլ» ամսագիրը, որ իր բացարձակ հյուսիսային ղեկավարության տակ պահեց հայ նորածիլ լեզուն ու գրականությունը. և իր դադարումեն ետքն այ այդ հյուսիսային ազդեցությունը տևեց մինչև վաթսունական թվական-

ներուն վերջը շնորհիվ մեր առաջին երեք հյուսիսային հեղինակներուն և անոնց գրական գործունեության. այդ երեք հեղինակներն են՝ Գաբրիել Պատկանյան, Միքայել Նալբանդյան և Սմբատ Շահազիզ:

«Հյուսիսափայլի» քննադատություններուն և նոր տեսություններուն հանդեպ, ինչպես և այս երեք հեղինակներու նոր տեսակի գրություններուն և երգերուն դեմ մայր հողն ու Թիֆլիսը դեռ զարմացածի վիճակին մեջն էին: Թիֆլիսն ալ մայրաքաղաք մըն էր իր տեսակի և հոն ալ որոշ շարժում մը կար, մանավանդ Ներսեսյան դպրոցին շուրջ, բայց դեռ հոն եղող ուժերը շատ համեստ էին: Հետաքրքիր է, որ Թիֆլիսի մեջ առաջին իբրև թե գրական նոր լեզվով լույս տեսնող ամսագիրը՝ «Կռունկ»-ը, տեղացի մը չէ, որ կհրատարակե. խմբագիրն է Մարկոս Աղաբեգյան՝ Զմյուռնիայեն եկած և որ մեկ-երկու տարի ետքը նորեն վերադառնալու է Պոլիս ու Զմյուռնիա: Եվ այդ պատճառով ալ վենետիկյան ու պոլսական շունչ ունի, շատ ավելի գրաբարյան. դեռ ԺԹ դարու առաջին կեսի հին երգերը կերգե, նոր ժամանակի բերած թերթը չէ. բայց հոն է տպված Պերճ Պռոշյանի առաջին վեպը և իր լավագույն վեպը՝ «Սոս ու Վարդիթեր». այսինքն՝ «Կռունկ»-ը ունի իր մեջ մեծ նորություն մը և զուտ տեղական նորություն մը. ո՛չ հյուսիսային:

Իսկ Թիֆլիսեն ավելի հարավ դեռ ձայն-ձուն չկա. Էջմիածնի մեջ երկու կաթողիկոսներ, երկուքն ալ իրար ետևե Պոլսեն հրավիրված, ջանքեր կընեն կրթական գործը կազմակերպելու: Մինչև յոթանասունական թվականները Կովկասի մեջ մարդիկ կա՛մ դեպի Պոլիս կնային, կա՛մ դեպի Մոսկվա:

Սակայն յոթանասունական թիվերու սկիզբեն իսկ պատկերը արագ կփոխվի և հաստատապես Թիֆլիսի մեջ: Ուսանողները ռուսական համալսարաններեն, նույնիսկ գերմանական կեդրոններեն կամաց-կամաց կդառնան Կովկաս և կհաստատվին գործով ընդհանրապես Կովկասի մայրաքաղաքին մեջ: Ներսեսյան դպրոցեն ալ, պետական վարժարաններեն ալ տարվե տարի կշատնա նոր կրթությամբ միջնակարգ ուսում ունեցողներուն թիվը, որով քիչ-քիչ կկազմվի նոր մտավորական միջավայր մը: Եվ առաջին խոշոր

ցնցումը տուողը Գրիգոր Արծրունին է (1840 - 1892) և իր «Մշակը»-ը: Եվ ալ ամբողջ յոթանասունական և ութսունական թվականներուն «Մշակն»-ն է դրոշակակիրը եվրոպական գաղափարներու, նոր ժամանակի պահանջներու և երևույթներու գնահատության:

Եվ շատ շուտով կբարձրանա աղմուկ, որովհետև հին արժեքները միայն կռվով տեղի կուտան ամեն տեղ և ամեն բանի մեջ: Իսկ այս պարագային մասնավորապես շատ ավելի ուժեղ, որովհետև տիրապետության հարց է: Մինչև հիմա ամեն ինչի վարողը հոգևկան աշխարհին մեջ հոգևորականն էր եղած և՛ իր ըմբռնումներով, և՛ իր շահերով: Իսկ հիմա ահա հասած էր, իր ուժը կզգար և արագ ավելի կուժեղնար նոր աշխարհիկ մտավորականություն մը՝ հպարտ իր ժամանակակից հասկացողություններով, հպարտ իր նոր սորված գիտությամբ, իր նոր գեղարվեստական ճաշակով և աշխարհքը փոխելու, բարձրացնելու իր ծրագիրներով. և հայ մտքի ու հայ կյանքի ղեկավարությունը ինքը կուզեր իր ձեռքը առնել:

Յոթանասուն-ութսունական թիվերը, որ կրնանք «Մշակի» շրջան անվանել, այդ հին ու նոր մտավորականներու ու մտայնության պայքարի տարիներն են: Սկիզբը անշուշտ հոգևորականն ու հինն է ավելի ուժեղը, մանավանդ որ հենված էր նաև պետական ճանաչումին. բայց քիչ-քիչ և կտոր-կտոր ստիպված է զիջումներ ընելու հետզհետե ուռող ու բարձրացող նոր պահանջներուն: Կառաջանան կես մը ազատ ընտրական մարմիններ, ժողովներ, ընտրություններ, վեճ ու պայքար և լրագրական աղմուկ, ուր շատ անգամ կրքերը իրենց սանձերը կփրցնեին:

«Մշակ»-ին դիմադրող, «կղերական» շահերը պաշտպանող թերթերն են «Մեղու Հայաստանի», վերջն ալ «Նոր-դար», որուն անունն անգամ արդեն խոստովանություն մըն է նոր ըմբռնումներու ուժեղացման: Դեպի ութսունական թիվերուն վերջերը «մշակականությունը» հաղթական է բոլոր ընտրություններու ատեն և բոլոր ժողովներու մեջ. «ժողովուրդը իր հետն է». Հոգևորականությունը քայլ առ քայլ տեղի կուտա. և իր պաշտպանած հին սկզբունքները այն աստիճան խիստ քննադատության կենթարկվին և հակառակ

Հոսանքը այնքան կուժեղնա, որ ալ սիրտ չի մնար աղմուկը շարունակելու. պայքարը կամաց-կամաց կնստի, մանավանդ որ ինսունական թիվերուն Հետ ծայր կուտա նո՛ր շարժում մը, որ իր ետևեն կքաշե և՛ ժողովուրդը, և՛ նոր մտավորականը, և՛ Հոգևորականը. «Հեղափոխական» շարժում մը, այսինքն՝ Թուրքիայի Հայությունը ազատագրելու շարժում մը, որ կպատկանի արդեն Հաջորդ շրջանին:

Յոթանասունական թիվերու կեսերեն արագ կերպով ամեն կողմ կսկսին բացվիլ ծխական դպրոցներ, այսինքն՝ 4-5 տարվան ուսումով տարրական դպրոցներ ժողովուրդի միաՀամուռ ճիգերով և էջմիածնի պաշտպանության տակ. քանի մը կեդրոններու մեջ կբացվին միջնակարգ վարժարաններ նորեն էջմիածնի Հովանիին տակ. Ներսեսյան դպրոցը ավելի ձև կառնե և կբացվի էջմիածնի մեջ Գևորգյան ճեմարանը: Նոր միջնակարգ վարժարանները, Հատկապես Ներսեսյան ու Գևորգյանը, կպաՀանջեին նոր ու բարձր գիտությամբ մասնագիտացած ուսուցիչներ. աՀա մեկ անգամեն մեջ կուգան փունջ մը անուններ. Ստեփան Պալասանյան Հայոց պատմության Համար, Կարապետ Կոստանյան Հայ գրականության Համար, Փիլիպպոս Վարդանյան ընդՀանուր պատմության Համար, Սեդրակ Մանդինյան մանկավարժության Համար, Արշակ ՆաՀապետյան բնական գիտություններու Համար, այլև ուրիշներ:

Ասոնք դեմքեր են, որ քանի մը ավելի մեկուսի գրական անուններու Հետ արդեն կներկայացնեն աշխատակիցներու լուրջ խումբ մը, որու վրա վստաՀած՝ Աբգար ՀովՀաննեսյան կսկսի Հրատարակել «Փորձ» եռամսյան (1875 – 1880), որ ամբողջապես նվիրված է բանասիրական ու գրական ինքնագիր երկերու, ինչպես և եվրոպական բարձր արժեք ներկայացնող թարգմանական գեղարվեստական ստեղծագործություններու: «Փորձ»-ը շատ է նպաստած նոր լեզվի և նոր գրականության Հմայքին ու բարձրացման:

Յոթանասունական թիվերու սկիզբեն արմատ կբռնե և թատրոնը: Սունդուկյանի՝ Թիֆլիսի բարբառով գրված կատակերգությունները արագ կբարձրացնեն ժողովուրդի աչքին բեմին

դրավչությունը, բեմը կկապեն կյանքին, օրվա չար ու բարիին, բեմը կդարձնեն ժողովրդական:

Սունդուկյանի երկերուն կից կխաղացվին նաև մեր պատմությենեն առնված մեր վենետիկյան ու արևմտյան ազգասիրական խաղերեն մեկ երկու հատը, իբրև տոնական ներկայացումներ, այլև քանի մը թարգմանություններ, գլխավորապես ռուսերենե: Հրապարակ կուգան շնորհալի դերասաններ՝ Գևորգ Ջմշկյան ամենեն կարևորը, այլև Մանտինյան, Սուքիասյան, Ավալյան: Շուտով կկազմվի թատերական կոմիտե մը, ուր ղեկավար դեր կխաղան Սենեքերիմ Արծրունի և Նապոլեոն Ամատունի: Քիչ-քիչ խաղացանկը կմեծնա նոր թարգմանություններով, գլխավորապես հուզիչ մելոդրամներ, որ լայն հասարակության ճաշակին ու ըմբռնումներուն մոտիկ կուգան: Ութսունական թիվերեն հետզհետե կշատնան Պոլիս անգործ մնացած դերասաններն ու դերասանուհիները, որոնք Կովկաս կանցնին իրենց տաղանդով իրենց կյանքը ապրելու. և որոնց մեջեն շատերը մնայուն անուն են թողած Կովկասի թատրոնական պատմության մեջ. ինչպես է Պետրոս Ադամյանը, Գարագաշյան քույրերը, Հրաչյան, Սիրանույշը և ուրիշներ: Եվ ատոնց հետո ալ բեմ կբարձրանան Շեքսպիրի խաղերը, Շիլլերի և համարժեք մեկ-երկու ուրիշ բարձր բեմական եվրոպական երկեր: Թատերական բեմի դերն ու ազդեցությունը կխորանա:

Այս միջոցին է նմանապես, որ Թիֆլիսի մեջ կհիմնվի բժիշկ Նավասարդյանի ձեռքով Հայոց բարեգործական ընկերությունը, որ երկար տասնամյակներ իբրև քաղաքակրթական լուրջ ձեռնարկ մը կներկայանա և՛ կեդրոնը, և՛ գավառներու հայության համար:

Այս շրջանի մեր արևելյան քաղաքակրթական շարժումը, եթե համեմատելու ըլլանք նույն տարիներու արևմտյան հայության մեջ տեղի ունեցող համապատասխան շարժումներուն, իսկույն աչքի կիյնա, որ Պոլսի ու Զմյուռնիայի մեջ գլխավորապես կեդրոնացած ճիգերը շատ ավելի առատ են ու ծավալուն. շատերը միևնույն բաները կընեն, թեև համեմատաբար ավելի անպատրաստ ուժերով. թերթերը շատ են, ընկերությունները շատ, վարժարաններ ամեն կողմ, նույնպես և միջնակարգի մոտեցող վարժարաններ, և ամեն դպրոցե ելլող բան մը ընել կուզե, հոդվածներ կգրե, ոտանավորներ

կշարադրե. և ամենքը կկարդան. Հանրային հետաքրքրությունը, լեզվի տիրապետությունը և գրական մասնակցությունը շատ ավելի լայն է:

Արևելյան Հայության մեջ մտավոր այդ շարժումը նույն ծավալը չունի, շատ ավելի քիչերն են և շատ ավելի զուսպ. գյուղացիներն ալ, թերթերն ալ, ընկերություններն ալ, գրողն ու կարդացողն ալ: Մասամբ ռուս կառավարությունն է պատճառը, որ սանձ կդնե ժողովրդական շարժումներուն, մասամբ ռուսական համապատասխան հաստատություններու և ձեռնարկներու ավելի լուրջ օրինակը կա, որ լրջություն կպարտադրե. մասամբ ալ բարձր կրթություն ունեցողներուն թիվը ավելի շատ է մտավոր շարժումը ղեկավարողներուն մեջ և անոնց ներկայության նվազ պատրաստված ուժերը հանրային գործերու մեջ առաջ նետվելու կքաշվին: Այսինքն՝ Ռուսաստանի տիրապետության տակ մտավոր մակարդակը ընդհանուր առումով ավելի բարձր է, բայց ավելի նեղ շրջանակի մը մեջ:

Այսպես ալ նոր գրական լեզվով գրող արևելյան հեղինակներուն հիմնական անունները տասնյակը չանցնիր, քանի մը հատ ալ երկրորդականներ, աս է բոլորը. որուն դեմ քառապատիկ, հնգապատիկ ավելի է արևմտյան հեղինակներուն թիվը այդ միևնույն երեսուն տարիներուն ընթացքին:

Թատերական երկեր գրող հեղինակներ չկան արևելյան նոր լեզվով, շրջանի գլխավոր բեմական գրիչը գրած է Թիֆլիսի բարբառով. Էմին Տեր-Գրիգորյանն ալ, որ ավելի համեստ արժեքով գրած է բավական բեմական մանր գործեր կատակերգական, գրած է երևանյան բարբառով կամ կիսաբարբառով. կան նաև քանի մը հատ Ղարաբաղի բարբառով գրված ավելի ևս նվազ արժեքով գործեր: Գրական նոր լեզուն դեռ չունի բեմական աշխատավոր. բեմի համար գրողը ունկնդիրներու լեզվին հարազատ մնալու ճիգը ունի՝ ավելի ազդու և կենդանի ըլլալու համար. գրական պահանջները դեռ հաստատված չեն:

Որով այս շրջանի հայ գեղեցիկ գրականությունը հոս ալ նույնպես երկու սեռ ունի՝ քնարական ու վիպական ստեղծագործություններ:

Իսկ գիտական ուղղությամբ գրությունները նոր լեզվով

գլխավորապես բանասիրական ուսումնասիրություններ են Հայ լեզվի, գրականության ու պատմության շուրջ. ավելի Հոդվածներ են պարբերականներու Համար, քան գիտական խորացող երկեր: Ասոնց կից նաև Հասարակագիտական, քննադատական Հոդվածներ կյանքի ու առօրյա երևույթներու շուրջ:

2. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

Չորս Հոգի են ատոնք: Մեկը՝ Հիմնականը՝ Գամառ-Քաթիպան, որ կտիրե իր կյանքով ու իր գրչով մեր նոր գրականության առաջին երեսնամյակին մեկ ծայրեն մյուսը: Երկրորդը՝ Միքայել Նալբանդյանն է, որ Գամառ-Քաթիպայի քովն ի վեր կՀերկե մեր նոր գրականության խոպան դաշտը առաջին ամենեն ծանր տարիներուն մեջ և Հողին ամենեն կոշտ ու կորդ մասերը. «Հյուսիսափայլ»-ի Հետ ալ կքաշվի գրական ասպարեզեն. և շուտ ալ մեռած է:

Երրորդը՝ Սմբատ ՇաՀազիզ, ժամանակակից է իր աշխատակցությամբ նախորդ երկուքին, միայն խիստ կարճ տարածություն մը. իր քնարերգությունը և ընդՀանրապես իր գրականությունը ըստ էության տևած է միայն տարի մը, կարծեմ 1864 թվականը. ինչ որ գրած է ու տպած, այդ տարին է գրած, այսպես ըսեմ միածին է:

Այս երեքն են մեր արևելյան նոր լեզվին ալ, նոր գրականության ալ, նոր քնարերգության ալ Հիմնադիրը ու մշակողը. որովՀետև չորրորդը՝ ՀովՀաննես ՀովՀաննեսյանը, կուգա շատ ուշ, առաջին շրջանի ամենեն վերջին տարիները. աս ալ միածին բանաստեղծ մըն է. 1890 թվին տպած է Հատորիկ մը, որուն երգերը գրված են բոլորն ալ իր Մոսկվա եղած միջոցին և ալ անկե ետքը թեև երկար ապրած է և ապրած է Կովկաս, բայց նոր բան մը չէ գրած:

Այս չորս Հյուսիսային բանաստեղծներուն միացնող առաջին ընդՀանուր գիծը Հրապարակախոսությունն է, քարոզչությունը. գրականության վրա կնային իբրև ազգասիրական գործիքի մը վրա. և Հատկապես քնարերգությունը իրենց Համար ձայնը բազմապատկող ու գեղեցկացնող շեփոր մըն է: Այս տեսակետեն անոնք ալ իրենց ժամանակի մարդիկն են. ինչպես վենետիկցիք, ինչպես

պտտեցիք, այնպէս ալ Հյուսիսայինները, ժողովուրդին Հետ ու ինկած, բայց «Թշվառ-անտեր» Հայրենիքի սիրով վառված կգրեն ու կքննադատեն բոլոր պակասներն ու ծռությունները, որոնք թուրանական դարերեն կուգան. և կմղեն ուսման, կրթության, բարձրացման ու ազնվացման. ժողովրդասիրության ու Հայրենասիրության: Իրենց ընդհանուր եղող այս առաջին գիծը ուրեմն կուգա մեր ժողովուրդի օրվան վիճակին ու օրվա պահանջին, որ ուրիշ ամեն բան կդարձնէր երկրորդական. այսպէս ըսենք՝ ազգային Հարկադրանք մըն էր, պատմության գծած առաջին գործը:

Իրենց երկրորդ ընդհանուր գիծը այդ քարոզ-երգերը նոր ու Հրապուրիչ ձևերով խմբագրելուն մէջն է. նախ՝ նոր գրական լեզու մը ժողովուրդի բերնէն առած, մաքրած ու մշակած, ամենուն Հասկընալի, որ դառնա ընդհանուր կապ մը ամենուն Համար. այլև նոր բանաստեղծական ձևեր, կերպեր, կառույց ու արտաՀայտություն. այս նորությունները արդէն կպարտին եվրոպական կրթության ու եվրոպական ընթերցանության:

Իրենց գրածներու և՛ նյութերը, և՛ ձևերը, և՛ Հագուստը մեծագույն մասը Հետևողություն է օտար Հեղինակներու և շատ անգամ ուղղակի թարգմանություն. և ասիկա առանց որևէ բանագողության կամ կեղծարարության. իրենց վերաբերումը շատ է տարբեր մեր Հիմնական գրական Հասկացողութենեն: Գրվածքի մը կատարված փոխառություններու առեն գրվածքին Հեղինակը անպատճառ Հիշելը Հիմա մեզի Համար կարևորություն ունի, որովհետև գրվածքին մէջ գեղարվեստական ինքնուրույնությունը կփնտրենք, ինչ որ ամեն Հեղինակ ինքն իրմէն բերեր է մեր գրականության: Բայց մեր նոր գրականության առաջին շրջանին մէջ Հեղինակները իրենց գրվածքներեն այդ տեսակ պահանջներ չունին. կարդացեր է օտար Հեղինակի մը այսինչ կտորը, այսինչ նյութը, զարկեր է իր սրտին, Հաներ է. և կուզե Հիմա իր այդ Հավնածին նման բան մը Հրամցնե իր ժողովուրդին. Հարստացնե մեր «աղքատիկ» գրականությունը այդ տեսակի գեղեցիկ կտորներով մը. քիչ մը կթարգմանե, քիչ մը կավելցնե, քիչ մը կփոխե ու կպատշաճե. բան մը ստեղծելու եռանդն չէ ինքը, այլ Հայ ընթերցողին արժեքավոր ազնիվ բան մը տալու եռանդն: Իրմե՞ն է,

թե՞ մեկ ուրիշին փոխառություն իրեն համար կարևորություն չունի:

Երրորդ ընդհանուր գիծը պատմական նյութերեն ձեռք վերցնելն է, որ տիրապետող էր մինչև ԺԹ դարուն կեսը. «Հայկ ու Լևոնին մոռանանք, եղբա՛րք», արդեն մարդիկ կշտացեր են Վենետիկի ու Պոլսի և անոնց հետևողներու բոլոր ողբերգություններեն, դյուցազներգություններեն, ազգային հին հերոսներու պանծացումներեն: Հիմա բոլորն ալ ինչ որ կգրեն կառնեն իրենց կյանքեն, իրենց շրջապատի մարդիկը, հարցերը և հոգեկան որոնումները:

Այսինքն՝ մեր հյուսիսային բանաստեղծները իրենց քարոզչությունը կընեն նոր լեզվով, նոր գրական-քնարական ձևերով և օրվա նյութերով: Եվ բնականաբար առաջին երեք իրարու ժամանակակից եղողները շատ ավելի շեշտված կերպով ունին այդ ընդհանուր գծերը: Քառորդ դար մը ետքը եկող ու երգող Հովհաննես Հովհաննեսյանը ինչքան ալ հյուսիսային ըլլա՝ շատ ավելի զուսպ կմոտենա քարոզչական խնդիրներուն և շատ ավելի շեշտված կերպով կձգտի դեպի զուտ գրական նյութերն ու կերպերը:

ա. Ռափայել Պատկանյան (1830 - 1892) աղմկոտ, դյուրագրգիռ, հարձակվող և առույգ բնավորության տեր մարդ մըն է և՛ կյանքին մեջ, և՛ իր գրություններուն: Արևմտյան հառաջդիմական գաղափարները յուրացուցած միտք մը. բայց տերտերի զավակ՝ հայ-քրիստոնյա հոգիով:

Ժողովուրդը, ամեն ասպարեզի վրա ալ, շարժող, ցնցող ու կենդանացնող մարդիկը կսիրե. ժողովուրդը ամեն տեղ ալ իր հոգին ունեցող և իր հոգիին մեջ եղած որոնումները արտահայտել կարողացող մարդիկը կսիրե: Գամառ-Քաթիպան ուներ այդ երկու շատ կարևոր հիմնական հատկությունները և դարձավ մեր նոր գրականության առաջին ու համաժողովրդական սիրված երգիչը:

Իբրև ստեղծող ու բանաստեղծ՝ խորքին մեջ ո՛չ բացառիկ մեծություն ունի, ո՛չ մասնավոր թռիչք և ո՛չ ալ ապրումներու և զգացումներու մեծ խորություն. և իր նոր լեզվով գրած արձակ գրություններուն մեջ ուժեղ չէ նաև կյանքի իրականության պատկերացումը: Գեղարվեստական տեսակետեն իր բերած թափը կապ-

ված է գլխավորապես առեղծագործության արտաքին կողմերուն: Իր նյութերը կջանա կապել պատկերի մը, կեդրոնացնել անձի մը վրա, մարմնավորել գետ մը, լեռ մը, լուսինը, ճիշդ Ալիշանին նման, որուն հետևողն է արդեն քանի մը տեղ: Իր խոսքը շեշտ ունի, կիրք, կուփ և հումոր. և կխոսի թե՛ ռոմանտավորի, թե՛ իմաստի և թե՛ հանգերգի գեղեցիկ դարձվածքով և որ գլխավորն է՝ կխոսի շատ պարզ ու հստակ և՛ լեզվի տեսակետեն, և՛ կառուցման. կհասկընան ու կպատկերացնեն ամենքը իր ըսածը և առանց որևէ մասնավոր ճիգի. չեն մնար օդին մեջ անկապ ու մշուշոտ բաներ ու վերացականություններ: Նոր լեզու մը և նոր գրական ճաշակ ժողովուրդի մեջ տարածելու համար թանկագին հատկություններ են ասոնք, իր ռոմանտավորը, խաղերը, չափերն ու հանգերը ամեն ինչ պարզ, գրավիչ ու ճաշակով:

Գամառ-Քաթիպան սիրելի է մեզի հայրենասերի իր տաք սրտով և իր մշակած այս գրական կենդանի ու պարզ արտահայտությամբ, որ և դարձավ օրինակ հաջորդ եկող սերունդներուն, որովհետև կհամապատասխաներ ժողովուրդին համար գրելու, ժողովուրդին ծառայելու, ժողովուրդը վեր քաշելու և մտավորականության մոտեցնելու ընդհանուր ու տիրող տեսակետներուն:

Գամառ-Քաթիպայի երգերը ինքնին կբաժնվին երկու խումբի. մինչև 1878-ի ռուս-թուրքական պատերազմը նույն ոգին ու նույն նյութերը ունին, ինչ որ հյուսիսային իր մյուս ընկերները, նվիրված քաղաքակրթական-ազգասիրական վերելքին. և քանի մը հատ ալ զուտ գեղարվեստական նյութեր: 1878-ի պատերազմը, որ սլավոն ազգերուն ազատություն էր բերած՝ թուրքերու ստրկութենեն խլելով, որոշ հույսեր ներշնչեց նաև թուրքի ձեռքին տակ մնացած մեր քրիստոնյա ժողովուրդին, որ իրենք ալ ռուսներու օգնությամբ պետք է կարողանան իրենց վիճակը բարելավել: Ռուսները հակառակ չէին. իրենք ալ կդրդեին նույն ուղղությամբ. մեր պատրիարքարանը անցած էր շարժման գլուխը. և Գամառ-Քաթիպան ալ իր սովորական աշխուժովն ու թափով մեջ նետվեցավ և իր խրոխտ ու ճկուն երգերով սկսավ ցնցել «չար սուլթանի ոսկի թախտը»: Երկրորդ խումբի իր երգերը նվիրված են հայուն ուժը, ըմբոստությունը և բռնության դեմ ծառացումը գովաբանելու. Երկրո-

պայեն Հայու իրավունքը կպաՀանջե, որ մենք ալ մտնենք վերջապես ազատ ժողովուրդներուն շարքը, և իր այս նոր տեսակի երգերը կկրեն «Ազատ երգեր» խորագիրը: Այսինքն՝ Հին կուլտուրական դրդումներուն ու ազգասիրության քարոզին կավելնան զենքի, կռվի ու ապստամբության քարոզները: Գեղարվեստական տեսակետեն տարբերություն մը չկա՝ նույն թափը, նույն ըսելու վարպետությունը և նույն ջերմությունը:

Գամառ-Քաթիպայի վիպական գրությունները նորեն երկու խումբի կը բաժնվին, բայց բոլորովին տարբեր պատճառով: Իր գրական լեզվով գրած վեպերը՝ «Ես նշանած էի», «Նաժիշտ ու տիրուհին», գրված են ուսանողական տարիներուն, արտաքին ընթերցումներու ազդեցության տակ, սանդիմենտալ ոճով և արկածահյուս արվեստով, որոնց գեղարվեստական արժեքը բարձր չէ: Բոլորովին տարբեր են շատ ավելի ուշ, իր Հասուն տարիներուն և իսկապես կյանքի իրականութենեն վերցված և Նոր Նախիջևանի բարբառով գրած իր վիպակներն ու պատմվածքները, որոնք կենդանություն ունին և կյանքի ճշմարտություն:

բ. Միքայել Նալբանդյանը (1829 – 1866) շատ ավելի խորունկ Հոգի մըն է և շատ ավելի թևավոր իմացականություն: Ինքնաշխատությամբ առաջ եկած մարդ մը, մխ-մինակ առաջ անցած ու վեր բարձրացած՝ պայքարելով ու դիմադրելով իր քաղաքի Հոգևոր ու դրամատեր ղեկավարներուն: Բարձրացած է ո՛չ միայն Նոր Նախիջևանի կամ Հայ Հասարակության Հորիզոնին վրա, այլ նետված է անկե ալ դուրս ու անկե ալ վեր՝ ռուսական ու միջազգային ընկերվարական-Հեղափոխական ոլորտներուն մեջ:

Հայ մըն էր ու Հայու բարձրացմանը կտենչար. և՛ քաղաքական, և՛ տնտեսական բարձրացմանը. և իր Հոգիին մեջ Հայու ապագա Հնարավորությունները կապված կզգար Համամարդկային ընկերական բարձրացումներուն Հետ: Իր ձգտումներով, իր շարժումներով, իր կյանքովն ու իր մաՀով առնվազն կես դար մը կանուխ ծնած Հայ մըն էր Միքայել Նալբանդյան. և գուցե արևելյան Հայության ամենեն մեծ, ամենեն ազնիվ ու ամենեն բոլորանվեր դեմքն է ԺԹ դարու ընթացքին:

Իբրև գրական մարդ՝ ուժեղ Հրապարակախոս մըն է Նալ-

բանդյան. «Հյուսիսափայլը» առանց Կոմս Էմմանուելի ամսական տեսութիւններուն շատ ու շատ բան կկորսնցնէր իր փայլէն: Ամէն տեղ կկարդային ու կհետեւէին հեւիհեւ. և շատ մեծ էր իր խօսքին ազդեցութիւնը: Ճամբորդած է Եվրոպա, մինչև Լոնտոն ու Հնդկաստան, ազգային խնդիրներով: Կարճ է ապրած և վերջին տարիներն ալ հսկողութեան տակ էր կամ բանտը և հիվանդ: Նալբանդյանէն ետքը միայն Գրիգոր Արծրունիի գրիչն է, որ լրագրութեան մէջ ունեցեր է նույն կորովն ու ազդեցութիւնը՝ առանց ունենալու Նալբանդյանի գրչին ու ոճին գրական հմայքը:

Նալբանդյան գրած է նաև բավական բանաստեղծութիւններ: Մարդ մըն էր, որ բոլոր միջոցները օգտագործել կուզեր հայ կյանքն ու հայ հոգին բարձրացնելու համար. և տաղանդավոր մարդ մըն է, փորձած է նաև քնարով խօսելու: Խոր արվեստ ու լուրջ ստեղծագործութիւն փնտրելու իրավունք չունինք այդ կարճ ու երկար ոտանավորներուն մէջ. կզգացվի միայն իր սիրտը: Եվ իր գրածները գրեթէ բոլորն ալ թարգմանութեան շատ մոտեցող հետեւողութիւններ են, նույնիսկ մեր նշանավոր «Մեր Հայրենիքը»: Եվ ընդհանրապես շատ խախուտ կառուցում մը ունին, շատ ձգձգված, չափն ու հանգերն ալ հազիվ իրար կբռնեն: Միայն «Ազատն Աստված»-ն է, որ իսկապես իր հոգիի տիրող զգացումին կհամապատասխանէ և որուն առջևը ամէն ընթերցող գլուխ կթեքէ ու կանգ կառնէ պատկառանքով:

գ. Սմբատ Շահազիզ (1841 – 1907), հազիվ ելած Լազարյան ճեմարանի աշակերտական սեղաններեն և նախորդ երկու հյուսիսային երգիչներու ուժեղ ազդեցութեան տակ, կվերցնէ գրիչը ինքն ալ անոնց ձայնակցելու՝ նույն համոզումներով հայ ժողովուրդի անմիջական պետքերու մասին և նույն բուռն քարոզչական ոգիով:

Գրեթէ մեկ տարվան մը ընթացքին գրած է փունջ մը քնարերգութիւններ և ամբողջ քերթված մը՝ «Լևոնի վիշտը»: Իր քնարական կտորները թարմ ու խակ գրչի փորձեր են, թէև կան հոս ու հոն ընդգծելու արժանի տողեր ու տուներ: Իր նորութիւնը և ինքնուրույնութիւնը «Լևոնի վիշտն» է և փույթ չէ ըսել, որ նմանողութիւն մըն է Պայրոնին: Արժանիք մըն է ինքնին, երբ քան-

քանիերկու տարեկան տղա մը Պայրոնով կհափշտակվի և կփորձե Պայրոնի գրչով գրելու: Մանավանդ որ Պայրոնի ձևով գրելը մեծ հարմարություն կուտա նորեկ մարդուն ուզածին չափ նյութեն շեղելու, երկար ճառեր խոսելու, բնության նկարագիրներ գծելու և նյութե նյութ ցատկելու:

Եվ իրավ ալ «Լեռնի վիշտը» ձգձգված, երկար քարոզներով ընդհատված և կիսատ մնացած գրություն մըն է. բայց զուրկ չէ արժեքներե: Տեղ-տեղ սրտե ժայթքած տուներ ունի, բնության իրավ որ աշխուժ նկարագրություն. խոսելու, արտահայտելու և դիմառնություններու անսովոր համարձակություն մը, որ հաճելի է: Եվ վերջապես նոր-գրական սահուն լեզուն և սահուն տաղաչափությունը, որ լեռնային գետակի մը պես արագ կհոսի:

Իրենց ամբողջությամբ առած այդ փունջ մը երգերն ու այդ քերթվածը դեռ գեղարվեստական հասուն ստեղծագործություն մը չէ, բայց շատ լուրջ խոստում մը հաջորդ ավելի խոր ու ավելի ամբողջական երկերու. և հայ հասարակությունը այդ հույսով ալ երկար սպասեց և իզուր: Այս տեսակետեն Սմբատ Շահազիզը արևելյան ճյուղի մեջ Տիգրան Կամսարականի հայրն է:

դ. Հովհաննես Հովհաննեսյան (1864 – 1929) իր բանաստեղծություններու մեկ հատիկ հատորը գրած ու տպած է իր ուսանողության օրերուն՝ ութսունական թվականներուն վերջը և այդ պատճառով ալ անշուշտ Մոսկվայի մեջ տիրող հայ-բանաստեղծական ճաշակին և նախորդ երեք հեղինակներու գծած ճամբու ազդեցության տակն է կեսվակես: Այո՛, կեսվակես. իզուր չէ, որ անցած էր քառորդ դար մը. նույնիսկ Մոսկվա նստող ու գրող բանաստեղծի հոգիին մեջ հիմա ուրիշ երգեր կհնչեն, անձնական շեշտով երգեր: Հովհաննես Հովհաննեսյան աղվոր ոտանավորով մը կհայտարարե, որ իր քնարը պիտի նվիրե խեղճերու ցավերը երգելուն. բայց այս հայտարարությունը արդեն դարձած է բանաստեղծական ձև մը կամ, ըսենք, բարի դիտավորություն մը միայն, ուրկե շատ հաճախ կշեղի ինքը: Եվ ուր որ կշեղի՝ հոն է, որ արժեքավոր բան մը կստեղծե: Հին ոճով ու քարոզչական իր երգերը միջակ բաներ են, կրկնություն իրմե առաջ եղածներուն. ատոնց ժամանակը արդեն անցած է:

Յովհաննիսյանի համով տողերն ու տուները անոնք են, ուր գրական նոր թափով մը կամ ժողովրդական երգի ձևերով իր անձնական ապրումներու ու որոնումներու լարը կհնչեցնե և քանի մը հատու գիծերով կյանքի պատկեր մը տալու փորձը կընե, առանց որևէ քարոզչության և ընկերաբանական հավակնություններու: Հովհաննես Հովհաննիսյան ութսունական թվերուն վերջը երկու իրար հաջորդող երեսնամյակներու միացումը ներկայացնող հյուսվածք մը կբանի իր երգերով. իր բանվածքին լայնքի թելերը նախորդ շրջանեն կառնե, իր բանվածքին երկայնքին թելերը հաջորդ գալիք շրջանեն կքաշե:

Հովհաննես Հովհաննիսյանեն ալ հայ հասարակությունը երկար ժամանակ մեծ ակնկալություններ ուներ և նոր ու գեղեցիկ երկերու կսպասեր. զարմանալի է, որ ան ալ չպահեց իր խոստումը, չարդարացուց հույսերը, ծույլ աշխատավորի համբավ ուներ: Անշուշտ դեր ունի այս կրկնվող երևույթին մեջ որոշ չափով ապրուստի հարցն ու հոգը, որ ամեն հեղինակի վրա կծանրանա. անշուշտ դեր ունի նաև հասարակության շատ փոքր մասի մը հայ գեղարվեստով հետաքրքրվիլը, բայց և այնպես երևույթը կմնա զարմանալի: Այս բոլորը, ծուլությունն ալ հետը առած, աշուղի մը սազը կտրել չեն կրնար, եթե կա իրոք ներքին կոչումը և եթե իրավ կվառի ներքին կրակը:

3. ՅՈԹԱՆԱՍՈՒՆԱԿԱՆ-ՈՒԹՍՈՒՆԱԿԱՆ ԹՒՎԵՐՈՒՆ ՎԻՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Յոթանասունական թվերու սկիզբին գրական շարժումը կփոխադրվի Հարավ: Ինչպես որ Հյուսիսը մայրաքաղաք էր, մոտավոր կեդրոն և Լազարյանի շուրջը, այնպես ալ Հարավը Կովկասի մայրաքաղաքն է, վարչական ու քաղաքակրթական կեդրոն, ուր կգտնվեր և Ներսիսյան դպրոցը:

Հյուսիսի գործը վարողները բարձր կրթության տիրացած կամ հենված մարդիկ էին և արտաքին ոչ-հայ ուժեղ ազդեցության տակ: Հարավը մայր հողին շատ ավելի մոտիկ է. և գրական դեմքերը տեղական միջնակարգ կամ նախակրթական ուսումով մարդիկ են իրենց անմիջական հարազատ շրջապատի ազդեցության տակ:

Վաթսունական-յոթանասունական թիվերուն Ռուսաստանի մէջ շատ տարածված էր նարոդնիկներուն վարդապետութիւնը. թե գյուղ պետք է երթալ, գյուղով պետք է հետաքրքրվիլ, թե գյուղն է հիմքը ժողովրդական բարձրացման. այս քարոզը անշուշտ որ մեր այդ ժամանակվան հեղինակներու հոգիին մէջ արձագանգ կուտար, միայն թե պետք չէ չափազանցել օտարի ազդեցութիւնը. այդ տարիներուն մեր հեղինակները կարիք չունեին այդքան հեռուներէ եկող դրդումներու՝ գյուղը սիրելու, գյուղը ներկայացնելու և գյուղով հետաքրքրվելու համար. բոլորն ալ գյուղեն եկած մարդիկ են, գյուղացիք են, մեկ ոտքը միշտ գյուղը: Եվ դեռ քառասունական թվականներեն մեր գրականութիւնը ունի իր «Վերք Հայաստանի»ն», որ շատ ավելի ուժեղ դրդիչ մըն է և ուժեղ օրինակ մը, քան օտար ընդհանուր վարդապետութիւնները. թե՛ Պռոշյանը, թե՛ Աղայանը, թե՛ Լեոն ու Րաֆֆին ամենքն ալ որոշ չափով Աբովյանի ազդեցութեան տակ են: Ասիկա շատ ավելի կարևոր ընդգծելու երևույթ մըն է:

Առաջին հյուսիսային հեղինակները մնացած էին գլխավորապես քնարերգութեան սահմաններուն մէջ. հարավի այս նոր հեղինակները մրցումի չմտան անոնց հետ. չմոտեցան քնարերգութեան: Միակ թեթև բացառութիւնը Աղայանն է, ան ալ փոքր չափով և ո՛չ լայն հասարակութեան համար. էապես իր ուզածը մանուկներու հոգին խոսիլն է: Այսպեսով՝ յոթանասուն-ութսունական թիվերու արևելյան հեղինակներուն ճիգերը կեդրոնացած են վիպասանութեան վրա:

Պետք է հիշատակվին հինդ հեղինակ, իբրև վիպագիր , նոր նյութերով ու նոր շունչով և իբրև մշակող նոր գրական լեզվի: Ուշ մնացած և հետաքրքիր դեպք մըն է Գամառ-Քաթիպայի հոր Գաբրիել քահանա Պատկանյանի պարագան, որ իր զավկի հրապարակ գալեն քանի տարի առաջ հրատարակած է գրաբար լեզվով կամ արևմտյան ու արևելյան գրական լեզուներու խառնուրդով մը տաղաչափված դյուցազներգութիւններ հին կրոնական ու ազգային հերոսներու վրա ոլոլսական ու վենետիկյան ճաշակով. և այդ պատճառով ալ ավելի գնահատված անոնցմե, բայց որ դուրս կմնան մեր նոր գրականութեան առած հոսանքեն:

ա. Հինգ նոր հեղինակներեն առաջինն է Պերճ Պռոշյանը (1837 – 1907). իր առաջին երկն է «Սոս ու Վարդիթեր», որ տպված է «Կռունկ»-ի մեջ. իր հաջորդ երկու վեպերը՝ «Կռվածաղիկ» ու «Հացի խնդիր», տպված են «Փորձ»-երուն մեջ. անկե ետքն ալ գրած է «Ցեցեր» և տասնյակ մը ուրիշ վեպեր: Իր վեպերու մեծագույն մասին նյութը առած է իր ծննդավայր Աշտարակ գյուղի կյանքեն և ատոնք են ամենեն ավելի արժեքավորները:

Բոլորն ալ ընդհանրապես միապաղաղ ու միջին կարողությամբ մը գրված գործեր են. և ատոր համար ալ իր ամենեն թարմ օրերուն գրած իր առաջին պտուղը ամենեն ավելի հաջողն է, «Սոս ու Վարդիթեր»-ը, իբրև ավելի շարժուն, ավելի թարմություն ունեցող, ավելի նոր ու գրավիչ բան մը:

Իր վեպերու այս շարքին մեջ հեղինակը ուզած է դուրս բերել ու ներկայացնել Աշտարակի մեջ տարվան բոլոր գլխավոր օրերուն հետ կապված գյուղական հին սովորությունները, վարքն ու բարքը, գյուղի չարն ու բարին, որով իր երկերուն մեկ մեծ մասը գեղարվեստականեն անկախ կստանան ինքնահատուկ գիտական արժեք մը. նույնպես նաև բարբառագիտական արժեք մը, քանի որ իր հերոսները կխոսին իրենց Աշտարակի հարազատ բարբառով:

Բայց այս բոլոր կողմնակի գծերն ու առավելությունները շատ սուղի կնստին բուն վեպին, այսինքն՝ կդանդաղեցնեն սաստիկ վեպին գործողությունը, խոսակցությունները կդառնան ճապաղ և գծված դեմքերը կա՛մ կպղտորին, կա՛մ կկրկնվին. լեզուն ալ կդառնա խառնարան: Բայց այս բոլորի հակառակ կամ գուցե ճիշդ այս բոլորի պատճառով իր երկերը ունին իրենց հատուկ հրապույրը և ընթեռնելի են: Եվ պահեն պիտի միշտ մեր նոր գրականության մեջ իրենց որոշ ինքնահատուկ տեղը և հատկապես Աշտարակի կյանքը պատկերացնող իր գլխավոր վեպերը:

բ. Գեղարվեստորեն շատ տարբեր և ինքնուրույն դեմք մըն է Ղազարոս Աղայանը (1840 – 1911): Միքայել Նալբանդյանի պես մի-մինակ իրեն համար ճամբա բացած ու բարձրացած ազնիվ ու շիտակ հայ մարդ մը, բնատուր խելքով ու տաղանդով. միայն թե ո՛չ հրապարակախոսական և ընկերաբանական ուղղությամբ, ինչպես որ էր Նալբանդյանը, այլ ավելի մանկավարժական ու

գեղարվեստական հակումներով: Զգացումի մարդ է. և իր արվեստը ինքնիրենը կըղխի:

Համեմատաբար շատ բան չէ գրած, բայց ինչ որ գրած է, արժէք մը ունի, և ինչ որ գրած է, իրմէն է: Փունջ մը «մանկական» ոտանաւորներ՝ մանուկներու հոգին ըմբռնող մարդու մը կողմէ գրված, որոնք մինչև այսօր հայ մանուկներու սիրած երգերն են: Կազմած է մայրենի լեզվի ուսուցման համար այբբենարան ու ընթերցարաններ բոլորովին նոր ու առողջ մանկավարժական հասկացողությամբ: Գրած է գյուղական աշխատանքները պատկերող պարզ ու սրտանց քանի մը երգեր:

Գրած է վեպ մը՝ «Հարություն ու Մանվել»՝ հավանորեն իր կյանքի պատանեկան օրերու վերհուշերով խմբագրված ու հետաքրքիր, դժբախտաբար թողած է կիսատ: Գրած է պարզ սրտի վիպակ մը՝ «Երկու քույրեր». այլև կիսահեքիաթ, կիսաիրական վիպակներ՝ «Անահիտ» և «Արեգնազան». ինչպես և «Տորք Անգեղ և Հայկանուշ»՝ քերթված մը: Համեմատաբար փոքր փունջ մը, որ մանիշակի փունջին կնմանի. և՛ սիրուն է, և՛ հոտավետ, և՛ սիրելի:

գ. Դպրոցական ընթերցումներես կհիշեմ Ա.Արարատյան մը, որ ուներ «Գյուղական խալիֆա» և «Գավառական ուսումնարանի հիմնարկումը» անունով վեպեր, եթե երկրորդի անունը չեմ սխալիր: Գրված պիտի ըլլան յոթանասունական թիվերուն, ուր ներկայացուցած են գյուղի կյանքին մեջ ինկած առաջին կրթական խլրտումները: Գեղարվեստական տեսակետեն համեստ երկեր անշուշտ, որոնք սակայն իրական վիպագրության առաջին փորձերն են Պռոշյանի երկերուն զուգրնթաց:

դ. Րաֆֆիին ժամանակակից և ութսունական թիվերու առաջին կեսին վիպագիր մըն էր նաև Լեոն: Սակայն շուտով վեպերը ձգեց՝ «Մշակի» մեջ օրաթերթի աշխատավոր դառնալու համար. և քիչ մը ավելի ուշ նվիրվեցավ գրական-պատմական ուսումնասիրություններու: Իր գաղափարախոսությամբ հյուսիսային հեղինակներու դպրոցին կպատկանի և իր էությամբ հրապարակախոս մըն է, նույնիսկ գիտական ու պատմական աշխատանքներուն մեջ:

Նույն հրապարակախոսությունը ուզած է նաև քաղաքի կյանքին առած իր պատկերներուն ու վիպումներուն մեջ. չէ զգացած,

որ ռուս ու թուրք պատերազմեն ետքը հոլերը փոխած են քիչ մը: Գյուղական կյանքն առած իր քանի մը վեպիկներու մեջ, ուր քարոզչությունը շեշտված չէ, հաճելի կերպով զգալի կդառնա իր գեղարվեստական շնորհքը, օրինակ՝ «Այծարած Եղոն», ուր հետաքրքիր է և՛ հոգեբանությունը, և՛ նկարագրությունը, և՛ ատու-թյունը:

Իր ամենեն հայտնի, ծավալով ալ ավելի մեծ և կարծեմ վերջին վիպական գործն է «Մելիքի աղջիկը». պատմական վեպ մը Ղարաբաղի վերջին դարու կյանքեն, որ իր պատվավոր տեղը ունի մեր պատմական վեպերու շարքին մեջ, ուր սակայն նույնպես հրապարակախոսական մտայնությունը որոշ ավերներ գործած է:

Ե. Արժե հիշել, որ Գրիգոր Արծրունին ալ գրած է մեկ-երկու վիպակներ իր «Մշակ»-ին մեջ. կհիշեմ իր «Էվելինա» վիպակը, որ ուսանողական օրերու տպավորություններով հյուսված, բայց ունի և հետաքրքրություն կներշնչե:

4. ՐԱՖՖԻ

Մեր հայ վիպագիրներեն ամենեն շատ կարդացված, ամենեն ավելի ազդեցություն ունեցած, ամենեն սիրված և ամենեն բարձր դիրք ունեցող հեղինակն է Րաֆֆին (1835 – 1888):

Իր վիպագրությունը կարելի է բաժնել չորս խումբի: Առաջին խումբը կկազմեն արևելյան-պարսկական կյանքեն իբրև թե առնված և հեղինակի երևակայության ուժովը կառուցված վեպերը, որոնք մեկ կողմեն պտուղ են մասամբ իր ծննդավայր Պարսկաստանի մեջ տեսած ու լսած տպավորություններուն. մյուս կողմեն ալ դեռ չկազմված գրչի մը վիպայնական ու արկածային հորինումներու հակումին: Իր առաջին երիտասարդական փորձերն են գրական ստեղծագործության, որոնք հասուն ու լուրջ երկեր չեն անշուշտ և արվեստական բաներ մեջը շատ կան, բայց կա նաև վառ տաղանդի մը անվիճելի ներկայությունը:

Րաֆֆիի երկերուն երկրորդ խումբը կկազմեն իր կենցաղական վեպիկները՝ գրեթե բոլորն ալ Թիֆլիսի կյանքեն առնված, որ ինքը հեղինակը ամփոփած է ետքը երկու հատոր «Փունջեր»-ու մեջ: Քաղքենի կյանքի պատկերներ են ու քննադատություններ.

կա հաջողը ու նվազ հաջողը, բոլորն ալ միջակի սահմաններէն վեր չբարձրացող, ամէն պարագայի դեռ վարպետի ձեռքէ ելած գործեր չեն: Ատոնց մէջէն դժվար էր նախատեսել ապագա Րաֆֆին:

Կենցաղական այդ վեպերուն մէջ միակ բացառությունը «Ոսկի աքաղաղն» է Երևանի կյանքէն, որ իր հոգեբանական գծերով, կյանքի պատկերացման հստակությամբ, դեմքերու ամբողջականությամբ և զգացումի նուրբ քնքշությամբ ազնիվ ստեղծագործություն մըն է և մնայուն: «Ոսկի աքաղաղը», որ գրված է յոթանասունական թիվերուն վերջը, տեսակ մը վերջակետն է Րաֆֆիի գրականության առաջին շրջանին:

Թուրք ու ռուս պատերազմը և Թուրքիայի հայության քաղաքական հարցի մը գոյություն առնելը ինչպես որ Գամառ-Քաթիպայի քաղաքակրթական հորդորներով զբաղված գրիչը հանկարծ հեղափոխական դարձուց իր «երկաթ ծամող հայ ակռաներով», այդպես ալ էքզոտիկ-հարեմական ու կենցաղական տգեղությունները մերկացնող Րաֆֆին դարձուց հանկարծ «միտումնավոր» հեղափոխական վիպասան մը:

Գեղարվեստական երկ մը, երբ կյանքի ու հոգիի պարզ պատկերացումը չէ, այլ իր գրությամբ կուզե որևէ գաղափարի մը տարածման ու հաղթանակին նպաստել ու ծառայել, կդառնա միտումնավոր:

Եվ այդ միտումնավոր ըլլալն ալ նորէն ունի երկու տեսակ: Առաջին տեսակն է խոսքով քարոզելը, երբ վեպին մէջ հեղինակը կա՛մ իր բերնով, կա՛մ իր հերոսների բերնով ճառեր կըսե, կհայտարարե, կդրդե, կքննադատե ու կհամոզե. ասիկա տկարացումն է վեպի. վեպը կանգ կառնե՝ խոսքը տալու համար հրապարակախոսին: Եվ վեպին մէջ ինչքան քարոզիչը շատ պոռա, տաք պոռա ու բարձր պոռա, վեպը այնքան կտժգունի ու կպաղի:

Երկրորդ տեսակը միտումնավոր գրականության գործով քարոզելն է. երբ ո՛չ հեղինակը, ո՛չ ալ իր հերոսները ճառեր չեն ըսեր և քարոզ չեն կարդար, բայց վեպը ինքը իր ամբողջությամբ, իր գծած դեմքերով և անոնց կատարած գործերով կդառնա դրդում մը, օրինակ մը որոշ ուղղությամբ քալելու: Այս տեսակի միտումը

ինքնին կապուած է կատարուող գործունէութեան ինչպէս իրական կեանքի մէջ, այնպէս ալ գեղարուեստներու ստեղծած կեանքին մէջ: Դրդիչ մը ըլլալը ամէն մարդու եւ ամէն գործի մէկ բնական հատկութիւնն է, եւ երբ հեղինակը գործերու եւ մարդոց այդ բնական հատկութիւնը կօգտագործէ ուրիշներու վրայ այս կամ այն ուղղութեամբ ազդելու համար, օգտագործած կըլլայ շատ բնական իրաւունք մը եւ գործածած կըլլայ գեղարուեստի հասուն զէնքերը: Առոյգ գեղարուեստին վնասել չի կրնար. ընդհակառակը, ինչքան խոր, ճիշդ եւ հաստատ նկարուած ըլլան դէմքերն ու դէպքերը, այնքան բարձր է գեղարուեստը. եւ միեւնոյն ժամանակ ալ խոր ազդեցութիւն կընէ ուրիշներուն վրայ: Ինչպէս կեանքի, այնպէս ալ վէպի մէջ խրատն ու քարոզը խօսք է, շունչ է եւ արժէքը մեծ չէ. մեզի համար երկրորդական է, թէ ինչ կըսես ու կքարոզես, կարեւորութիւն ունեցող հիմնական խնդիրն այն է, թէ դուն ո՞վ ես, ի՞նչ ես եւ ի՞նչ կընես, եւ ճիշդ այս հարցերուն է, որ կպատասխանէ ամէն գեղարուեստ:

Րաֆֆին իր միտումնաւոր երկերուն մէջ տեղ-տեղ սայթաքած է՝ տեղ տալով անմիջական խօսքով քարոզի եւ՛ «Ջալալէդդին»-ի, եւ՛ «Խենթ»-ի մէջ: Քարոզ մըն է նոյնիսկ Խենթին Հայտնի երազը, որուն դէմ սակայն շատ չենք բողոքեր ճիշդ այն պատճառով, որ հեղինակը վարպետօրէն իր քարոզին նորէն վէպի ձեւ է տուած, վէպին մէջ վէպ մը, տուփը տուփին մէջ: «Կայծեր»-ու երկրորդ հատորին մէջն ալ այդ կարգի անմիջական քարոզի էջեր բաւական կան: Բայց ընդհանուր առումով Րաֆֆին քալած է երկրորդ ճամբով, գծեր է կենդանի մարդիկ, ներկայացուցեր է դրական գործողութիւն, ստեղծեր է գեղարուեստական երկ եւ ձգեր է, որ այդ երկը ինքը դրդէ զէնքի եւ ազատամարտութեան իր հերոսներու տուած օրինակով:

«Խենթը» գեղեցիկ ստեղծագործութիւն մըն է իր տիպարներով եւ իր ընթացքով, եւ՛ դրական, եւ՛ բացասական տիպարները: «Կայծեր»-ու առաջին հատորը նմանապէս մեծ գեղարուեստական արժէքով գրուածք մըն է, որ հիւսեր է հեղինակը իր մանկութեան հարազատ հուշերը եւ իր պատմական հերոսական երազանքները

օգտագործելով: Տարբեր է երկրորդ Հատորը, որ վեպն ավելի ուղևորի մը Հուշերուն ձևը ունի:

Իսկ Րաֆֆիի «Դավիթ Բեկ»-ն ու «Սամվել»-ը կարելի չէ արդէն միտումնավոր անվանել: Այդ երկու ստվար երկերը պարզապես պատմական վեպեր են՝ Հենված պատմական ուսումնասիրության, երևակայության կենդանի ստեղծագործության և կյանքի տված փորձառության վրա: Անտարակույս Հեղինակը այդ նյութերուն վրա կանգ է առեր, որովՀետև իր սրտին մոտ է գտեր քաջության, նվիրման և ազատագրումի այդ կռիվներն ու մաքառումները, բայց եթե գեղարվեստական երկի մը մեջ ցոլացող բոլոր զգացումներն ու գաղափարները միտում նկատելու ըլլանք, գեղարվեստի մեջ գրվածք չի մնար, որ միտում չունենա:

Սակայն պատմական ըսված վեպերն ալ նմանապես երկու տեսակ ունին. ուրիշ է, երբ Հեղինակը բառացի կՀետևի իր ունեցած աղբյուրներուն, կջանա Հնար եղածին չափ արդեն ընդունված փաստերեն չչեղիլ և իրեն նպաստակ կդնե միայն կենդանացնել դեմքերն ու դեպքերը քանի մը երկրորդական մանրամասնություններով, այսինքն՝ կուզե Հարազատորեն պատկերացնել պատմությունը: Ասիկա ուսուցչի գործ է ու պատմաբանի. ամեն պատմության ուսուցիչ և ամեն գիտության նվիրված պատմաբան, երբ երևույթներու և անձերու նկարագրությունը պիտի տա, ուզե-չուզե վիպասան պիտի դառնա որոշ աստիճանի, քանի որ պիտի գծե, պիտի ներկայացնե, պիտի խոսեցնե, ամեն մեկը իր Հասկցած չափով ու ձևով: Ասոր Համար է, որ ո՛չ մեկ պատմիչի պատմած և ո՛չ մեկ ուսուցչի ներկայացուցած դեմքերն ու դեպքերը նման չեն ըլլար մեկ ուրիշի մը պատմածին, թեև բոլորն ալ զուտ ճշմարտությունը պատմելու եռևե են միշտ: Վեպի մեջ այս ձևով Հարազատորեն պատմելու ճիգը վարժապետական վիպասանություն մըն է:

Պատմական վեպի երկրորդ ձևն է, երբ Հեղինակը ինչպես իր շրջապատի ապրող մարդիկներեն և իր չուրջը Հոսող կյանքեն կառնե իր ուզածը, կտաշե, կյրացնե, կփնջե, կփոփոխե իր սրտի ու իր երևակայության ուզածը կերտելու Համար, այնպես ալ կվարվի պատմական աղբյուրներն քաղած դեմքերուն ու դեպքերուն Հետ.

անշուշտ քիչիկ մը աւելի զգուշութեամբ, քանի որ այդ դէմքերն ու դէպքերը պատմական Հանրութեան մը Համար որոշ գծագրութիւն առած են արդէն: Բայց ամէն պարագայի վիպասանին Հետաքրքրողը և կարևորը իր չինել ուզածն է, ի՛ր Համարցուածը, ի՛ր կերտածը և ո՛չ թէ պատմագիտութեան մէջ եղածը. շատ-շատ կջանայ պաՀել պատմական քանի մը խիստ աչքի իյնող առանձնաՀատուկ գիծերը պատմագէտներու ջիղերուն շատ չի դպչելու Համար. թէև Հաճախ ասոր ալ ուշադրութիւն չեն դարձներ գեղարվեստի Հեղինակները և կվարվին պատմութենեն քաղած նյութերու Հետ ալ բոլորովին ազատօրէն:

Րաֆֆին Հոս ալ երկրորդ տեսակին է և շատ բնական կերպով, քանի որ գեղարվեստի գործ կուզե տալ և ո՛չ պատմաբանի: Բարեխիղճ ուսումնասիրած է իր ընտրած նյութին աղբյուրները, պտտած է իր նկարագրելիք տեղերը, ջանացեր է թափանցել այն ժամանակվա քաղաքական ու քաղաքակրթական միջավայրը՝ անոնց պես զգալ ու մտածել կարողանալու Համար, այն օրերուն կյանքն ու մարդիկը իր աչքերուն դեմ կենդանի պատկերացնել կարողանալու Համար. և ալ անկե ետքը ազատ ընթացք է տված իր երևակայության ու իր Հոգեկան պաՀանջներուն և ստեղծեր է դեմքերն ու դեպքերը ըստ իրենց ներքին գեղարվեստական Հարկադրանքին՝ արտաքուստ իրական պատմության թելը կարելիին չափ ձեռքե չձգելով:

Ընտիր երկեր են «Դավիթ Բեկ»-ն ալ, «Սամվել»-ն ալ, ինչքան ալ որ քննադատությունը Հոս ու Հոն առարկություններ ունենա ընելիք: Րաֆֆին մեր ամենեն բարձր վիպասանն է բառի բուն գեղարվեստական իմաստով: «Պատանեկան Հասակի ընթերցում է» ըսել կամ «Հեղափոխական պրոպականտա է» մրմնջել ու քովեն անցնիլ ձևացնելը կեղծիք մըն է, եթե գեղարվեստական անՀասկացողություն չէ:

Արդեն ինքնին մեծ բան մըն է ժամանակաշրջանի մը զգացումներուն ու ձգտումներուն թարգման դառնալը վիպական երկերու մեջ, ինչպես եղած է Րաֆֆին: Շատ ավելի մեծ բան մըն է գուշակող ըլլալը. ո՛չ միայն տեսնելը, ինչ որ արդեն կա, թեև շատերը դեռ Հստակ չեն տեսներ, այլ նաև տեսնելը, ինչ որ դեռ չկա, ինչ

որ դեռ չէ եկած, բայց որ գալու վրա է: Եվ ան ալ ի՛նչ հստակութեամբ ու մանրամասնութեամբ. ասիկա արդեն տեսանողի հատկութիւն է, գուշակներու ու մարգարեութեան: Այսչափը արդեն ինքնին շատ մեծ բան է, որ մեծ յրջութեամբ ու պատկառանքով մոտենանք այդ տեսակ հեղինակի մը:

Բայց այս բոլորի վրա և այս բոլորեն վեր Րաֆֆիի երկերը ունին աւելի բարձր արժանիք մը, գեղարվեստական երկերուն մեջ փնտրվող ամենեն մեծ արժանիքը, այսինքն՝ գեղարվեստական տաղանդը, իր ստեղծագործելու մեծ շնորհքը, երևակայութեան իր մեծ թափը, իր հղացումներուն կենդանութիւնը և իր գծած դեմքերուն հոգեբանական ճշմարտութիւնը:

Պատանի ժամանակ կկարդանք Րաֆֆին, այո՛, և մեծ հափշտակութեամբ, որովհետև սրտերնիս թարմ է և դյուցազնութեան ու նվիրումի տարիքն է պատանութիւնը: Բայց և՛ հասուն տարիքի մեջ, և՛ խոնարհվող տարիքի մեջ, երբ կկարդանք նորեն Րաֆֆին, կզգանք նորեն իր հմայքը և կզգանք ուրախութեամբ, որ կտարվինք նորեն պատանիի մը պես:

Կդառնա պատմութեան անիվը, կանցնին այս օրերու բոլոր ցնցումները ու կդառնան պատմական անցյալ, բայց Րաֆֆիին ընտիր երկերը՝ կյանքեն քաղված, կյանքին կապված. հեղափոխական թե պատմական, կմնան կարդալ սիրող հայ մարդու ընթերցանութեան սեղանին վրա:

Մեր նոր գրականութեան առաջին շրջանի ամենեն բարձր գագաթները կներկայացնեն երկու անուն՝ Հակոբ Պարոնյան և Րաֆֆի:

Գ. ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ՝ ԴԵՊԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆԸ ԶԳՏՈՂ ՇՐՋԱՆԸ (1890 – 1920)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱՆԻ

ա) ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Կովկասյան Հայության քաղաքական կյանքը երկու մասի կբաժնվի երկրորդ երեսնամյակի ընթացքին: 1890 թվեն մինչև 1905 թիվը Հայ Հեղափոխական դաշնակցության միահեծան տիրապետության տարիներն են: Ռուս կայսրության եվրոպական ու քրիստոնյա ազդեցության ու մականին տակ հանգստացած ու ինքնագիտակցության եկած Հայ Հոգին բռնկած է Թուրքիայի Հայության համար ալ ավելի քաղաքակրթական ու ավելի մարդավայել պայմաններ ստեղծելու վճռականությամբ: Հայ դաշնակցական շարժումը, որ 1891-ին սկիզբ կառնե իբրև կազմակերպված կուսակցական շարժում, շատ արագ կծավալի ու կդառնա Կովկասի մեջ ազգային համաժողովրդական շարժում մը. կմասնակցին, կօգնեն ու կհամակրին ստվար բազմություններ և բոլոր դասակարգերեն՝ գյուղացի, արհեստավոր, հարուստներ, հոգևորականներ ու ամեն տեսակի մտավորականություն մը. թաղերով, գյուղերով, գավառով հատանքին մեջն են, տարերային շարժում մըն է:

Եվ կամաց-կամաց կուսակցական կազմակերպության մարմինները ո՛չ միայն զբաղված են զինվորագրելով, զենք ձեռք բերելով և մարդ փոխադրելով «երկիր», այլև հարկադրված են զբաղվելու ժողովուրդի տեղական բոլոր ներքին գործերովը: Թուրքիային սահմանամերձ քանի մը գավառներու մեջ ռուս պետական դատարանները գործնականապես դադրած են գործելե. ամենքը իրենց վեճն ու պահանջը կբերեն կուսակցության տեղական մարմին, որ մեծ հեղինակություն է ձեռք բերած և հավատք իր արդար ու արագ դատաստանով. ամուսնական, ընտանեկան ու բարոյական

բազմատեսակ խնդիրներով ստիպված են զբաղվելու տեղական կուսակցական մարմինները:

Զինագողության, զինական պահեստներու, զենքերը տեղափոխելու աշխատանքներին կից արագ կերպով կզարգանա կուսակցական ոստիկանություն մը, որ կհսկե ու կչեզոքացնե պետական ոստիկանության շարժումները. տեղի կունենան տեռորներ ոստիկանապետներու վրա: Կառաջանա քիչ-քիչ կառավարություն մը կառավարության մեջ: Ռուս կառավարությունը, իբրև հակահարված, իր ոստիկանության ղեկավարությամբ կստեղծե արվեստական հակամարտություն մը Կովկասի մեջ Հայերու և Թաթարներու միջև թե՛ մեծ քաղաքներու, թե՛ գավառներու մեջ, որ այնքան ավեր ու արյունահեղություն բերավ 1901-1902 թվականներուն. «չեյթանի» այս խաղերը ընդհատվեցավ 1903-ին, երբ ճապոնական պատերազմը պետության ուշադրությունը այլ կողմ դարձուց:

Ծովու ու ցամաքի վրա իրար հաջորդող ձախորդությունները ուժեղ ցնցում պատճառեցին միապետության. ներքին խլրտումներուն ու ցույցերուն վերջ դնելու համար 1905-ին հրատարակվեցավ սահմանադրական միապետություն և հրավիրվեցավ համաժողովրդական ընտրությամբ պետական ընդհանուր ժողով: Եվ այդ թվականեն սկսած ինչպես ամբողջ Ռուսաստանի, այնպես ալ Կովկասի մեջ սկսավ նոր կյանք, նոր եռուզեռ, նոր ոգևորություն ու նոր աղմուկներ: Համախմբումներու ազատություն, խոսքի ու մամուլի ազատություն, խորհրդարանային ընտրություններ, համապետական նոր կուսակցություններ, նոր պահանջներ ու տեսություններ, որոնք Կովկասի հայության ուշադրությունը, ուժերն ու հետաքրքրությունը մեծ չափերով Թուրքիայեն դեպի Ռուսաստան դարձուցին: Մանավանդ որ 1908-ին երիտասարդ Թուրքերու ըմբոստացումով Թուրքիայի մեջ «ազատություն» հռչակվեցավ և Թուրք ու Հայ հեղափոխականները «եղբայրացան». Թուրքիան սկսավ «վերանորոգվիլ»: Իսկ Կովկասի մեջ, ընդհակառակը, սկսավ հալածանք դաշնակցականներու դեմ, երկար-բարակ և ցուցադիր դատ մը, բանտարկություններ. և շատեր հարկադրվեցան փախչիլ Կովկասեն ու Ռուսաստանեն, ինչ որ պետության ալ ցանկությունն էր ըստ երևույթին:

Ամեն պարագայի 1905-են սկսած կովկասյան Հայության մտահոգության և ուշադրության առարկան Թուրքիան չէ այլևս, այլ իր կովկասյան Հայության հողերն ու խլրտումները: Դաշնակցությունը այդ թիվեն ասդին ալ միահեծան տեր ու վարիչ չէ, ինչպես որ էր նախորդ 15 տարիներուն, քանի որ իր քովն ի վեր սկսած էին առաջանալ և հետզհետե շատնալ նոր պետական կուսակցություններ՝ Հայ կադետներ, Հայ էսեռներ ու Հայ սոցիալիստներ: Ասոնցմե և ո՛չ մեկը անշուշտ դեռ իր թիվով ու ազդեցությամբ չափվիլ չէր կրնար Դաշնակցության հմայքին ու կազմակերպության հետ, որ միշտ կմնար զուտ ազգային շահերու պաշտպան: Բայց և այնպես Դաշնակցությունը այլևս մինակ չէր և Դաշնակցության մեջն իսկ ճեղքվածք կար: Կար զորավոր մեծամասնություն մը՝ հին ազգային հողի վրա կեցած և միշտ Թուրքիայի վրա պահել ուզելով իր գործունեության ծանրության կեդրոնը, որու դեմ սակայն կար ձեռներեց, ոգևորված ու երիտասարդ փոքրամասնություն մը, որ Դաշնակցության գործունեության շեշտը փոխադրել կուզեր սոցիալիստական հողի վրա և սահմանեն ասդին հարցերով կհետաքրքրվեր:

Եվ ընդհանրապես թե՛ Դաշնակցության շուրջը և թե՛ Դաշնակցության մեջ հետզհետե կշեշտվեր ռուս նոր պետական խնդիրներու և ընկերաբանական տեսություններու հետաքրքրությունն ու կարևորությունը, երբ 1914-ին վրա հասավ մեծ միջազգային պատերազմը. սանձվեցավ շուտով ռուս-թուրքական ճակատ, Հայ կամավորական շարժում, վրա հասավ ռուսական ներքին կքումը, ռուս պետությունը վերածվեցավ կտորներու, Կովկասի մեջն ալ առաջացան ազգային անկախություններ:

Մինչև 1905 կովկասյան Հայության ուզածն ալ, ըրածն ալ շատ ավելի պարզ էր, կեդրոնացած և ազգային: 1905-են կովկասյան Հայության տենչերն ալ, վախերն ալ, շարժումներն ալ շատ ավելի բարդ են, խճճված, և՛ ազգային, և՛ պետական, և՛ միջազգային: Կովկասյան Հայության կյանքն ու որոնումները իր նեղ ու հստակ սեփական հունեն դուրս է հոսած ու խառնված է ռուսական ու միջազգային պղտոր ու թավալգլոր մեծ հոսանքին:

բ) ՀՈԳԵԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1878-ի ռուս-թուրքական պատերազմը և ութսունական թիվերուն Բագւի նավթը շատերու շարքին հարստացուցած էր նաև բավական Հայեր: Հայու աշխատասիրությունը, համառությունը և խնայողությունը ընդհանրապես քիչ մը ամեն տեղ բարձրացուցած էր բարեկեցիկ Հայերուն թիվը:

Թե՛ իրենց ծնողներու սեփական միջոցներով, թե՛ ունևորներու լայն օժանդակությամբ արագ սկսեր էր բազմանալ մտավորական դասակարգ մը: Միջնակարգ կրթությունը լրացնող տղաք ու աղջիկներ սովորական երևույթ էր. և համալսարանականներուն թիվը հազարներու կհասներ: Եվ որովհետև ռուս կառավարությունը հնար եղածին չափ Հայերը հեռու կպահեր պետական պաշտոններե՝ այդ ամբողջ ուսում առած երիտասարդությունը կերթար մեկ կողմեն արդյունագործական ու առևտրական հարստացնող գործերու ետևե, մյուս կողմեն ալ ազատ արվեստներու կնվիրվեր բժիշկ, ինժիներ, փաստաբան, ուսուցիչ, նկարիչ, խմբագիր, պանքային պաշտոնյա և մասնավոր ընկերություններու ձեռնարկներուն մեջ աշխատավոր: Եվ առնցմե շատերը եղած էին Եվրոպա ուսման համար, շրջելու համար կամ գործերով. և մշտական հոգեկան հաղորդակցության մեջ էին թե՛ ռուսական և թե՛ եվրոպական մամուլի ու լրագրության հետ: Այսինքն ըմբռնումներն ու աշխարհայացքը շատ լայն էր. և ճաշակն ալ բնականաբար ավելի բարձր:

Կառավարությունը իր պարտադրած եկեղեցական Պոլոժենիայով սահմանափակած էր Հայ դպրոցներուն թիվը. վերջը եղածներն ալ գոցեց, բայց այն տեսակ ժողովրդական դիմադրության ու ցույցերու հանդիպեցավ, որ թույլատրեց նորեն բանալը, միայն շատ սեղմած իրավունքներով: Իսկապես եղածը հինգ հատ Հայ միջնակարգ վարժարաններ էին ընդամենը ամբողջ Կովկասի մեջ և Գևորգյան ճեմարանը Էջմիածնի մեջ. մնացածը գյուղական ու թաղային քանի մը հարյուր տարրական դպրոցներ էին չորս կամ հինգ տարիներու ուսումով: Բայց այս դպրոցներն էին նորեն, ինչքան ալ սեղմված ու սակավաթիվ ըլլային, որ տարվե տարի Հայ պատանություն մը հրապարակ կնետեին, որ Հայերեն լեզու ուներ

բերանը և Հայ պատմության ու Հայ գրականության ջերմ սեր, եթե ո՛չ բավարար ծանոթություն. և անոնք էին գլխավորապես, որ Հայ գրականությամբ կհետաքրքրվեին, կկարդային ու Հայ գրքին սերը վառ կպահեին:

Որովհետև պետական տարրական ու միջնակարգ վարժարաններին ավարտական եղող անհամեմատ ավելի բազմաթիվ Հայ պատանությունը, թեև Դաշնակցության հոսանքին մեջ կամ ուսանող ընկերներու ազդեցության տակ տևականորեն Հայ կզգային ինքզինքնին և Հայու բարձրացմանը կտենչային, բայց լեզվի ու Հայագիտական ուսումներու մեջ բոլորովին բոպիկ էին, շատ քիչերը միայն կհաջողեին անհատական մասնավոր ճիգերով Հայերեն խոսիլ շնորհքով, մանավանդ Հայերեն գրել:

Բայց նույնիսկ միշտ ռուսերենը գործածողներու հոգիին մեջ Հայը սկսած էր շեշտվիլ, որովհետև այս երեսնամյակի ընթացքին է, որ Հայ ժողովուրդի խաղացած դերը պատմության մեջ և Հայ ժողովուրդի ստեղծագործական կարողություններն ու արժեքը բարձրանալ սկսավ Հայ մարդու աչքին:

Պատմական նոր ուսումնասիրությունները նոր լույսեր բերին Հայերու ծագման ու Հին խալդական բարձր ու Հետաքրքիր քաղաքակրթության մասին. բյուզանդական Հազարամյա պատմության գրեթե կեսը Հայ կայսրներու, Հայ զորավարներու և Հայ գործիչներու պատմությունն դարձավ, նույնպես և ընդգծվեցավ ու շեշտվեցավ Հայերու խաղցած զինվորական դերը ռուս բանակին մեջ թե՛ ավելի Հին և թե՛ նոր. ինչպես և Հայ ամիրաներուն խաղցած կարևոր դերը Օսմանյան կայսրության մեջ գրեթե ամբողջ դար մը մինչև ԺԹ-ի կեսերը:

Ստրիկովսկին Հայ ճարտարապետության ունեցած մեծ ազդեցությունը դրավ եվրոպական գիտության առջև, Թորամանյան կաշխատեր նույն ուղղությամբ: Հայ մանրանկարչական արվեստի մը Հետաքրքիր գոյությունը ելավ Հրապարակ. խումբ մը Հայ նկարիչներ մեկ անգամեն երևցան մեր իրականության մեջ և Այվազովսկիին անունը բացառութենե Հանեցին:

Գարա-Մուրզան, Եկմալյանը և մանավանդ Կոմիտաս վարդապետ Հայ ինքնահատուկ ու խոր երաժշտության մը Հմայքը

դրին և՛ Հայ, և՛ օտար Հասարակության առջև, որ ջերմորեն գնահատվեցավ և եվրոպական մասնագետներու Հիացումին ու զարմանքին արժանացավ:

Ցրիկլի, Նաղաշի, Աղթամարցիի ու Սայաթ-Նովայի նման միջնադարյան բանաստեղծական անուններ եկան մեջտեղ իրենց գեղեցիկ ու անծանոթ երգերով, որոնց ռուսերենի վերածած իր թարգմանությունները երբ Վալերի Բրյուսով կկարդար Հայ Հասարակության առջև և կբացատրեր անոնց բացառիկ Հրապույրն ու գեղեցկությունները՝ դեմը նստած Հայերը իրարու կնայեին ապշած ու Հարց կուտային զարմանքով. «Իրա՞վ Հայու գրած բաներ են ասոնք, թե՞ Բրյուսով իրմեն կՀնարե»: Հարց մը, ուր իրենց տգիտության խոստովանության Հետ իրենց Հայ Հոգիներու խոր Հպարտանքը կՀնչեր:

Եվ այդ Հիներուն քովը Հետզհետե ավելի ու ավելի լայն չափերով Հմայքը կստանային Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի ու Վահան Տերյանի նման բանաստեղծներուն երկերը, որոնք եվրոպական նույն տեսակի լավագույն ստեղծագործություններուն քովը կդրվեին: Եվ ամենուն Համար, կարդացողներուն ու Հասկըցողներուն Համար, չկարդացողներուն ու չՀասկըցողներուն Համար Հայ երգի, Հայ ստեղծագործության և Հայ Հոգիի արժեքը կբարձրանար:

Այս զանազան կողմերեն եկող բարձրացումները, երբ եկան ու իրար բռնեցին, բնականաբար ամեն Հայ սկսավ քիչ մը ուրիշ աչքով նայիլ իր անցյալին, իր կարողություններուն, իր Հնարավորություններուն, իր ներկային ու ապագային վրա: Հոգիները թև կառնեին:

Նախորդ գրական շրջանի մեր բանաստեղծները Հայկի, Արամի ու Տիգրանի անուններով բարձրացնել կուզեին Հայու տրամադրությունն ու Հպարտությունը: Հիմա այդ առաջին կիսաարվեստական ինքնագովության դեմ, որ շատ բնական բան մըն է սակայն ամեն դեպի վեր ձգտող ժողովուրդի Համար, Հիմա կխոսեր արդեն գիտությունն ու արվեստը, որոնց խոսքին ու գնաՀատանքին առջև ստիպված էին խոնարՀվիլ ամենեն Հեգնոտ ու կասկածամիտ գլուխները: Նախորդ կիսովին արվեստական ինքնագովության

կհաջորդէր առողջ ու բնական ինքնագիտակցութիւնը, որ մեծ խթան մըն է միշտ ամէն ժողովուրդի համար:

գ) ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Քաղաքական, տնտեսական և հոգեկան այս բարձրացումներուն զուգ. կերթար բնականաբար նաև կովկասյան հայութեան ազգային- կուլտուրական վիճակը:

Շրջանի առաջին՝ Դաշնակցական կեսին Թիֆլիսի գլխավոր լրագիրներն էին «Նոր-դար»-ը իբրև «պահպանողական» և «Մշակ»-ը իբրև «մտրակող-հառաջդիմական». բայց ըստ էութեան Գրիգոր Արծրունիի մահով (1891) «Մշակ»-ը կորսնցուցած է արդեն իր նախորդ հմայքն ու դերը: Եվ դուրսի իրականության մեջ ալ պահպանողական թե հառաջդիմական դարձեր էին երկրորդական. մարդիկ զբաղած էին «փիտայի»-ներով, որոնցմով թերթերը զբաղվիլ չէին կրնար. թերթն ու հասարակութիւնը տեսակ մը կորված էին իրարմե:

Իբրև ամսագիր էջմիածնի միաբանութիւնը կհրատարակեր կրոնական ու բանասիրական ուղղութեամբ բարակ տետրակ մը՝ «Արարատ», որ քիչերուն համար հետաքրքրութիւն մը ուներ, թեև բոլոր տերտերները պետք է գնեին պարտադիր: Այս կես շրջանի իրապես լուրջ ամսագիրն էր «Մուրճ»-ը Ավետիք Արասխանյանի. «Մուրճ»-ը «Հյուսիսափայլ»-են ետքը առաջին հասարակական ջիղ ունեցող ամսագիրն է և «Փորձ»-են ետքն ալ առաջին ամսագիրը՝ խմբագրված գրական ու գիտական արժեքավոր նյութերով:

Իբրև մանկական ամսագիր շատ սիրված էին Ստեփան ու Կատարինե Լիսիցյաններու խմբագրած «Հասկերը», ուր մանկավարժական հասկացողութիւնը, մանուկներու հոգիին ըմբռնումը և գեղարվեստական ճաշակը ձեռք ձեռքի կաշխատեին:

Հատուկ պետք է հիշատակել նաև Երվանդ Լալայանի համառ ջանքերով հավաքված, գրված ու խմբագրված «Ազգագրական հանդեսը», որ մեր հնութիւնները, մեր ժողովուրդի բարքն ու սովորութիւնները, կենցաղը, անգիր բանահյուսութիւնը կուսումնասիրեր քանի մը ամիսը անգամ մը հաստ հատորներով. ահագին

նյութ է հրատարակած, ուր պիտանի ու հետաքրքիր բաներ շատ կան. դժբախտաբար զգալի է շատ արագ աշխատելու և քիչ մըն ալ իր գործին թեթև վերաբերվելու թերությունը, որ անվստահություն կներշնչէ դեպի կատարված գիտական աշխատանքը:

Այս ավելի կանոնավոր պարբերականներեն զատ շրջանի այս առաջին կեսին հրատարակված են ավելի պատահական «պարբերականներ»: Այսպես՝ Գյուտ Ադանյանի «Դիվան Հայոց պատմության» տասնյակ մը հատորները, որ նյութեր են վերջին դարու մը հայ պատմութենեն: Այլև կան աղին ու անդին հրատարակված գրական «ժողովածուներ». Վրթանես Փափազյանի «Վտակը», Գյուլնազարյանի «Արաքսը», նույնպես «Գարունը», նույնպես Նիկողայոս Ատոնցի խմբագրությամբ «Բանբերի» երկու հատորները:

Շրջանի երկրորդ կեսին ռուս հեղափոխության և եկած ազատություններուն հետ բնականաբար փոխվեցավ խիկույն նաև հայ մամուլը: Նախ՝ շատցան թերթերը շատցող կուսակցություններուն հետ, որոնց մեջ սակայն միշտ տիրող դիրքը ուներ Դաշնակցության ղեկավարությամբ հրատարակվող օրաթերթը, որ շարունակ անուն կփոխեր, որովհետև իր համարձակ գրություններուն համար հաճախ իբրև վարչական պատիժ նախորդ անունի գործածությունը կարգիլվեր:

Մեծ պատերազմի նախօրյակին նոր երիտասարդությունը ձեռնարկեց նոր ամսագրի մը հրատարակության «Նոր հոսանք» անունով և Նիկոլ Աղբալյանի գլխավոր խմբագրությամբ. իսկ պատերազմի միջոցին Բագվի մեջ սկսավ հրատարակվիլ երկու տարվան չափ խոշոր ամսագիր մը նորեն գրական ու գիտական «Գործ» անունով և Արտաշես Ջիլինգարյանի գլխավոր խմբագրությամբ: Այս երկու ամսագիրներն ալ մեծ հետաքրքրություն ու նոր խոստումներ իրենց հետ բերին, որոնք կորսվեցան պատերազմի ադմուկին տակ:

Այս ամեն տեսակի պարբերական հրատարակություններուն մեջ շատ զգալի կերպով կշեշտվեր և՛ կարողության, և՛ ճաշակի, և հմտության բարձրացումը: Հասարակությունն ալ շատ ավելի մեծ չափերով ընթերցող ու պահանջող կդառնար:

Մամուլին կից միաժամանակ կզարգանար և թատրոնը. նախորդ շրջանին ունեցած իր հիմնական տարբերությունը գործի կազմակերպված ըլլալն է: Հիմնված էր թատերասիրաց ընկերություն մը՝ «Արտիստիկական ընկերությունը», որ կհոգար գործի նյութականը, կվարձէր թատրոնն ու դերասանները ձմեռվան մը համար, կնշանակէր մարզիչ-ղեկավարը և հիմքը կդնէր շաբաթական անգամ մը կանոնավոր ներկայացումներու:

Իրար ետևե սկսան երևալ դերասանական նոր ուժեր, այր ու կին, որոնց մեկ մասը ռուսական բարձր տրամատիկ կուրսերու մեջ մասնագիտացած պատրաստություն ունեին. խաղարկումը սկսավ ավելի նրբանալ և համեմատաբար ավելի խնամք մտավ գործին մեջ: Խաղերն ալ սկսան ավելի ընտրանքով բեմադրվիլ՝ թե՛ ուժ տալով ինքնագիր երկերու և թե՛ թարգմանել տալով եվրոպական բեմերուն վրա անուն ու հաջողություն վաստակած նոր թատերակներ:

Այս ձևով յուրացված խաղերը ամառնային շրջանին դերասանները մեկ-երկու խումբով Թիֆլիսեն կտանեին կարևոր գավառական կեդրոնները: Թե՛ արտաքինով, թե՛ ուժերով, թե՛ խաղացանկով և թե՛ արվեստով թատրոնը կամաց-կամաց կբարձրանար և կբարձրացներ իր հետ հասարակության ճաշակն ու պահանջը:

Այս շրջանին ծնունդ առին և ամրացան երեք նոր ընկերություններ հասարակության լայն մասնակցությամբ. «Բագվի կուլտուրական ընկերությունը», որ քանի մը ճյուղեր ուներ ու կհետաքրքրվեր հայ կուլտուրական կյանքի բոլոր կողմերու զարգացումով և կձգտեր ժողովուրդի ինքնագիտակցության բարձրացմանը: Երկրորդ ընկերությունն էր «Թիֆլիսի հրատարակչականը», որ նվիրված էր գրական ու գիտական արժեքավոր գրքերու արտադրության. մեկ-երկու տասնյակ տարիներու ընթացքին շատ կարևոր եղավ հատկապես թարգմանական տեսակետեն. ծրագրված ընտրությամբ մը թարգմանել կուտային ամենեն ընթեռնելի և ամենեն կարևոր եվրոպական գեղարվեստական երկերը: Երրորդ ընկերությունը Հովհաննես Թումանյանի ձեռնարկն է՝ «Հայ գրական միություն», որ շաբաթը անգամ մը կհավաքվեր և քննու-

թյան կամ քննադատութեան նյութ կդարձնէր Հայ գրականութեան այս կամ այն երկը, այս կամ այն Հարցը: Շատ չուտով Հետաքրքրութիւն առաջացուց և՛ թարմ երիտասարդութեան և՛ թէ աւելի տարիքը առած անձերու մէջ, որոնք կանոնավոր կերպով կուգային մասնակցելու այդ մտավոր տուրնիրին: Թումանյանի ջանքերուն և այդ վիճաբանութիւններուն կպարտինք, օրինակի Համար, Սայաթ-Նովայի «գյուտը». այդ միութիւնն էր, որ ամենուն ուշադրութիւնը դարձուց մեր մեծ բանաստեղծի երգերուն վրա և նպաստեց խոսքով ու նվագով անոր ժողովրդականութեան վերստին Հարութիւն առնելուն:

Այս նոր ընկերութիւններն ալ կապված են նորեն մտքի ու ճաշակի բարձրացման Հետ: Իրենք ծնունդ են այդ բարձրացման և չափազանց նպաստած են Հանրութեան Հոգեկան կյանքի զարգացումին: Ուրիշ խոսքով՝ կովկասյան Հայութիւնը երկրորդ երեսնամյակի ընթացքին իր ամեն կողմերովը դրդում ունի բարձրանալու, նրբանալու. կյանք, շարժում ու կենդանութիւն ունի իր մէջը. և ընդՀանուր առումով բաղդավոր շրջան մըն է՝ Հակառակ իր ներքին քաղաքական ցնցումներուն, ընդՀարումներուն և ԹուրքաՀայ ցավին, որ իր Հոգիին վրա ծանրացած էր:

դ) ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Ամեն գրականութեան մէջ ալ գիտական երկերու առաջացումը մեծ չափերով կապված է Համալսարաններու գոյութեան, անոնց պաՀանջներուն և տված դյուրութիւններուն: Բնագիտական, բնալուծական, բնախոսական, բժշկական և ուսողական գիտութիւններու Համար շատ աւելի չեշտված կերպով. և Համալսարանական Հրատարակութիւններու մէջ Հոս ու Հոն կերևան արդեն Հայ գիտնականներու անուններ ու երկեր, բայց բոլորն ալ բնականաբար կգրեն օտար լեզուներով և կպատկանին օտար գրականութիւններու:

Քիչ մը տարբեր է պայմանը, երբ Հայ Հեղինակի մը մշակած գիտական նյութը Հայ լեզուն է, Հայ աշխարՀը, Հայ անցյալը կամ Հայերու մասնակցութիւնը ուրիշ ժողովուրդներու պատմական ու քաղաքակրթական երևույթներուն. այս պարագային այն ատիճան

չեշտված կըլլա Հայկական հետաքրքրությունը և այն աստիճան կգրավե Հայերու ուշադրությունը, այնքան կխոսվի Հայ գրականության մեջն ալ իր մասին, որ կխոսվին կդառնա Հայ գրականության մաս: Այսպես են այս շրջանի ընթացքին Մկրտիչ Էմինի, Քերովբե Պատկանյանի, Կարապետ Եզյանի, Նիկողայոս Ադոնցի, Աշխարբեկ Քալանթարի, նույնիսկ ո՛չ լիովին Հայ Նիկողայոս Մառի լեզվական, պատմական, աշխարհագրական ու գրականության վերաբերող աշխատությունները:

Նիկողայոս Ադոնց և Խաչիկ Սամվելյան ունին նաև Հայերեն գրած ուսումնասիրություններ: Գրեթե բացառիկ կերպով Հայերեն գրող գիտական-հասարակական աշխատավորներ են Ալեքսանդր Երիցյան, Ստեփան Մալխասյան, Լեո, Միքայել Վարանդյան, Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Ա. Դո, Նիկոլ Աղբալյան և շատ ուրիշներ, որոնց մեծ մասը սակայն ավելի հրապարակախոսական բնույթ ունին, քան գիտական:

Գալով գեղարվեստական գրականության՝ առաջին ընդգծվելիք կետը իր շատ չեշտված կերպով անկախացումն է ուրիշ պարտավորություններե. գեղարվեստական երկերը կսկսին խույս տալ ամեն հրապարակախոսական, քարոզչական, վարժապետական ու միտումնավոր նյութե ու ճառե, որուն արդեն կարիքն ալ չկար: Նոր բազմացած մտավորականությունը գիտեր իր ընելիքը և կկատարեր իր հասարակական դերը, նոր քարոզիչներու պետքը չուներ: Հեղափոխությունը նմանապես արդեն կազմակերպված ընդհանուր ու տիրող երևույթ մըն էր, նոր Գամառ-Քաթիպաներու ու Րաֆֆիներու պետքը չկար:

Ով որ հասարակական գործունեության սեր ու հակում ուներ՝ ահագին գործ կար, կերթար այդ ուղղությամբ, իսկ որու հոգիին մեջ գրական-ստեղծագործական հակումները կգործեին՝ բնական կերպով կերթար գրականության ծառայելու. և երբ հասարակական հակումներն ու գրական հակումները միաժամանակ կվառվեին հոգիին մեջ՝ կերթար այդ երկու ուղղություններով ալ, առանց սակայն այդ երկու աշխատանքները իրար խառնելու: Նորությունը հոս է արդեն. եկած էր աշխատանքի բաժանման շրջանը. Հասարակական կյանքը հասունցած էր ավելի և ընթերցող հասարա-

կութեան ճաշակն ալ դարձած էր ավելի կիրթ և գեղարվեստական երկեն ամենեն առաջ գեղարվեստական բարձր արժանիք կպահանջեր: Դեռ գրչով շատերը կկրկնեին հին նշանաբանը՝ «Նախ քաղաքացի և ապա պոետ», բայց ընազդորեն ամենուն փնտրածը գեղարվեստական երկին մեջ գեղարվեստական արժանիքն էր արդեն՝ դուցե և առանց շատ հստակ գիտակցելու:

«Արվեստը արվեստի համար» դեռ կշարունակվեր իբրև արհամարհական բացատրություն մը նկատվիլ, բայց միևնույն ժամանակ սկսված էր իբրև գրական մեղադրանք նկատվիլ «դենտենցիոզ»՝ միտումնավոր գրությունը: Եվ շատ մը ընթերցողներու և մանավանդ մտածող հեղինակներու գլխուն մեջ սկսած էր պայծառանալ, որ գեղարվեստական գրականությունը, ընկերական բոլոր մեծ հաստատություններուն նման, իր հատուկ դերն ու կոչումը ունի և որչափ որ խստորեն ու բացարձակորեն իր դերեն ու իր կոչումեն չշեղի, այնքան ավելի իր արժեքը կբարձրանա և այնքան ավելի խոր կերպով կատարած կըլլա իր ընկերաբանական հանրային պարտավորությունը:

Նկարել բնությունը իր հոգիին մեջեն անցընելով, արտահայտել իր հոգիին ապրումները, կարոտները, տենչանքները, երազներն ու հուզումները հնարավոր խորությամբ ու նրբությամբ և պատկերացնել ուրիշ մարդկային էակներու հոգին իրենց անհատական ու հասարակական գործունեությամբ, ձգտումներով, պայքարներով, որոնումներով ու տառապանքով. աս է գեղարվեստի և՛ նյութը, և՛ դերը, և՛ կոչումը: Ասկե դուրս ամեն ինչ երկրորդական է, ասկե դուրս գեղարվեստական երկի մը վրա դրված ամեն նոր պահանջ կրնա ժամանակի մը համար պիտանի ու անհրաժեշտ ըլլալ, բայց միշտ գեղարվեստի տեսակետեն կըլլա ավելորդ ու վնասող բեռ մը: Տաճարներուն դռները, սյուներն ու արձանները ըմբոստության մը միջոցին կարելի է նույնիսկ դիզել իրարու վրա ու շինել պատնեշ՝ անոր ետևեն միապետական կամ հեղափոխական գնդակներ արձակելու համար, բայց ատիկա չի դառնար երբեք խոյակներուն ու արձաններուն իսկական դերն ու կարևորությունը: Շատեր կան, որ անկողին մտնելեն ետքը սովորություն ունին քանի մը երես վեպ կարդալու, որ քուներնին

դա. վեպը քուն բերելու համար չէ ստեղծված սակայն: Եվ եթե խելոքին մեկը ուզենա այդ նպատակով, այսինքն՝ քունը շուտ բերելու ջանքով վեպ մը գրելու հաջողիլ, իր ըրածը կդառնա զուտ և շատ պիտանի ու օգտակար «գործնական» գրականություն մը, բայց անշուշտ պիտի կորսնցնե շատ բան իր բանահյուսական արժեքեն, իբրև գեղարվեստի երկ:

«Արվեստը արվեստի համար» ծուռ արտահայտություն է և միտքը կդնե ծուռ ու անբնական ճամբաներու վրա. պետք է ըսել՝ «արվեստը արվեստ». ինչպես որ «դպրոցը դպրոց» պիտի ըլլա և «ոստիկանությունն ալ ոստիկանություն». այսինքն՝ ամեն մարդ իր գործին: Ինչքան թերի է ու ցած մշակույթին աստիճանը ժողովուրդի մը մեջ, այնքան ավելի սովորական երևույթ է դերերու շփոթն ու խառնուրդը, այնքան դյուրությամբ տարբեր գործեր ու պաշտոններ կձուլվին ու կխառնվին իրար: Ինչքան կզարգանա մարդկային հոգին ու կբարձրանա ժողովուրդի մը զարգացման աստիճանը, այնքան կշեշտվի աշխատանքի բաժանումը և այնքան ավելի խստորեն կպահանջվի, որ ամեն մարդ իր գործի ու իր դերի սահմաններեն դուրս չի գա. ատով է, որ կբարձրանան ու կազնվանան ամեն տեսակի գործերն ու ստեղծագործությունները:

Մեր գրականության առաջին շրջանին մեր գեղարվեստական գրականությունը ծառայական վիճակի մեջ էր. ժամանակի պետքին համար կարևոր եղածը քանի մը սկզբունքներու ժողովրդականացումն էր. ամենքը ամեն միջոցով ատոր կձգտեին. կարևոր միջոցներեն մեկն ալ գեղարվեստն էր, ուրկե կօգտվեին մեկը ավելի, մյուսը պակաս, բայց ընդհանրապես քիչ կարևորություն տալով բուն գեղարվեստի ներքին ինքնահատուկ դերին ու պահանջներուն: Ութսունական թիվերու կեսեն նոր գրողներուն տրամադրությունները զգալի կերպով կսկսին փոխվիլ. գեղարվեստը հանել կուզեն իր գեղեցիկ սպասուհի մը ըլլալու վիճակեն, կուզեն, որ գեղարվեստը ինքը ըլլա տիրուհին, ինչպես վայել է իր դերին ու կոչումին: «Գեղարվեստը գեղարվեստ». գեղարվեստի մեջ ամենեն վերը, ամենեն կարևորը և ամենեն արժեքավորը՝ գեղարվեստ:

Այս բնական ու պարզ նշանաբանեն միայն անոնք դժգոհ կմնան, որ գեղարվեստներու հետ մտերմություն չունին և ատոր

Համար ալ չեն ըմբռներ գեղարվեստական երկերու և՛ Հոգեբանական, և՛ Հասարակական մեծ Հանրային դերը: Եվ գտնել կուզեն գեղարվեստներու Համար ուրիշ «գործնական» որևէ դեր ու արժեք մը:

Գեղարվեստները Հոգի կկրթեն, զգացումները կբարձրացնեն, մարդկային վարմունքի ու գործունեության ընտիր օրինակներ կուտան: Գեղարվեստական գրական երկերը մարդուս ամենեն Հետաքրքիր, ամենեն խոՀուն ու ամենեն նրբամիտ ընկերներն են, խոսակիցներն են, մտերիմներն են՝ նայելով թե ինչ աստիճան գիրքն ու ընթերցողը իրար կբռնեն իրենց էությամբ: Գեղարվեստական գրական երկերը կլայնացնեն ու կառատացնեն անՀատներու և բազմություններու Հոգեկան շփումները, ապրումներն ու իմացումները և բազմատեսակ ծուփ ու փոթորիկ կուտան մեր ներքին Հուզազգացական աշխարՀին, այսինքն՝ Հաճույքներն են ու մխիթարանքը մարդկային Հոգիի: Եվ ատով դուրս կքաշեն միևնույն ժամանակ անՀատները իրենց եսերու նեղլիկ պատյանեն. շարունակ ուրիշներու Հոգիներուն շփվելն ու անոնց չարն ու բարին մեր Հոգիներուն մեջ ապրիլը կուժեղցնե ու կխորացնե այլասիրությունը. գութը և մարդուս Հանրային զգացումները. եսականության դեմ պայքարող ամենեն մեծ ուժը գեղարվեստն է. մարդը սիրելու, մարդկայինը սիրելու, իր ժողովուրդը և բոլոր ժողովուրդները սիրելու ամենեն ազդու գործոնը գեղարվեստն է, որուն այնքա՜ն, այնքա՜ն պետք ունի մեր դեռ վայրենի ու թշվառ մարդկությունը: Այլև կյանքի Հարստացում մըն է գեղարվեստական երկերուն ընթերցումը. փոխանակ մեր սեփական մեկ կյանքովը ապրելու և մեր կյանքին կապված խումբ մը անձերու կյանքովը, կապրինք Հազարավոր ու այլազան ու բազմաձև կյանքերուն կյանքովը. մեր պզտիկ կյանքը կդառնա մեկ անբաժան մասնիկը անցած ու ներկա մարդկային լայն ու մեծ կյանքին:

Հոգեկան այս խորացումներու, այս բարձրացումներու. այս ծավալումներու և այս Հարստացումներու մեջն է գեղարվեստական երկին բացառիկ և ուրախարար արժեքը: Գեղարվեստական երկը եթե իր այս իսկական պարտավորությունը կատարած է, դրե՛ք վրան ուրիշ ինչ Հավելյալ պարտավորություններ ալ որ կուզեք.

ան այդ բեռը կրտանի: «Նախ պետք է տալ… ինչ որ կուզեք»: Հակառակ ուղղութեամբ շարժիլը գերադասելը իր ճամբէն կհանէ:

2. ՇՐՋԱՆԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

Մեր նոր գրականութեան մէջ հետզհետէ սովորութիւն դարձաւ տաղաչափութեամբ գրող քնարերգու ու վիպերգու հեղինակները «բանաստեղծ» անուանել և անոնց տաղաչափուած գրութիւններն ալ՝ բանաստեղծութիւն:

Ասիկա անշուշտ պզտիկ հափշտակութիւն մըն է արձակով գրող վիպագիրներու և թատերագիրներու իրաւունքէն, որոնք արձակ գրելնուն համար կարծես կզրկուին բանաստեղծ ըլլալէ. բայց վերջապես արդէն սրբացած սովորութիւն մըն է և դյուրութիւն կուտայ հեղինակներու քնարերգութիւնն ու վիպերգութիւնը միասին առնելու:

Այս երկրորդ գրական շրջանի բանաստեղծներու բավական խոշոր թիվին մեջ երեք անուն բռնած են գլխավոր դիրքերը. իրենց ասպարեզ իջնելու ժամանակագրական կարգով առաջինը՝ Հովհաննես Թումանյան (1869 - 1923), երկրորդը՝ Ավետիք Իսահակյան (ծնած 1875) և երրորդը՝ Վահան Տերյան (1885 - 1920):

Այս սերնդի երրորդութեան համեմատական պատկերը հետևյալն է.

Իբրև ուսում՝ շատ համեստ է Թումանյանի դպրոցական պաշարը. ձգած է Ներսեսյան վարժարանը Գ թե Դ դասարանէն և այլևս ոտք չէ դրած. և իր Լոռիէն ու Թիֆլիսէն անդին աշխարհ չէր տեսած մինչև իր հասուն տարիքը: Իր գրական ճաշակը, համաշխարհային գրականութեան հետ ունեցած իր ծանոթութիւնը և ընդհանրապես իր լայն՝ ու բազմակողմանի տեղեկութիւնները ձեռք էր բերած «օդին մեջէն». որովհետև կարդալու ալ մեծ համբերութիւն չունէր, թեև իր տունը իսկական գրադարանի կնմանէր, բոլոր պատերը գրքի պահարաններ էին. «գրքերը կթղթատեր», ինչպես ինքը կըսեր. շատ քիչ գիրք կար, որ լրիվ և ուշադիր կարդացած ըլլար: Իր միտքը բնականէն թափանցող էր և առողջ դատող. և արժեքավոր բաներն ալ իսկույն ըմբռնելու բնազդը ունէր:

Ավետիք Իսահակյան նմանապես կիսատ ձգած ուսում մը

ունի, Գևորգյան ճեմարանեն. բայց շատ կարդացած է, շատ ալ թափառած է թե՛ Կովկաս և թե՛ եվրոպական կարևոր կեդրոնները միշտ գիրք մը ձեռքը. սակայն խառն ու անսիսթեմ ընթերցում մը, ինչ որ հովն ու մոտան բերավ: Եվ որոճացած է երկար իր տեսածներուն և իր կարդացածներուն հիմնական հակասություններուն վրա և չէ կրցած եզրակացության մը հանգիլ իր գրություններուն մեջ:

Վահան Տերյան իր էությամբ ուսանող մըն է՝ կապված համալսարանին, գիտություններուն և համաշխարհային գրականության: Ան ալ դժգոհ է շուրջեն, կյանքեն ու եղածեն, բայց հափշտակված բնավորություն մըն է, նվիրվելու, ոգևորվելու և ճախրելու հակամետ: Եվ մեռած է գրեթե իբրև ուսանող և ամուսնացած էր դեռ իբրև ուսանող:

Իբրև կապ՝ Թումանյան խորապես կապված է իր հողին, իր Լոռուն, իր մանկության թարմ տպավորություններուն և իր լեռնական ու գյուղական բուն ժողովուրդին: Իր լեզվով ալ, իր վարմունքովն ալ, իր զգացումներովն ու գրականությամբն ալ եղած է ու մնացած է միշտ զուտ հայ ժողովուրդ. և ինքն ալ իր վրա նայած է միշտ իբրև հայ ժողովուրդի հոգիին ու ձգտումներուն հարազատ արտահայտիչը: Իսահակյանն ալ իր կապերը կտրած չէ իր գյուղեն, իր սեփական ջաղացեն և իր մորմեն երկար-երկար տարիներ, բայց գիրքն ու Եվրոպան և քաղաքական հոսանքներուն տաք ու պաղ քամիները շատ բան այլափոխած են այդ հոգիին մեջ: Ան չի կրնար պատասխանել նույն հպարտությամբ Հայոց կաթողիկոսին, Հովհաննես Թումանյանի նման՝ «Ես ալ Հայոց բանաստեղծն եմ»: Ան կրնա ըսել միայն՝ «Ես ալ հայ մըն եմ և բանաստեղծ մը»: Իր արտահայտություններուն, իր ընտրած նյութերուն, իր մշակման եղանակին և իր պարզած գաղափարներուն մեջ Իսահակյան խառնուրդ մըն է հայկականի ու եվրոպականի: Վահան Տերյան այն աստիճան խրված, թաթախված է համալսարանական ուսման, համալսարանական ընկերներու ճառերուն ու ձգտումներուն և ռուսական մայրաքաղաքի հուզումներուն ու հեղափոխություններուն մեջ, որ իր հեռավոր մանկությունը հայ լեռնաշխարհի բարձունքներուն վրա, իր մեծ մորը

ձեռքի իլիկին պես, հին ազնիվ երազ մըն է, որ կարոտով կկանչե իր նոր ու օտար մթնոլորտին մեջեն: Քանի մը անգամ կուգա ու կերթա Կովկաս, բայց իր տունը հյուսիսն է:

Իբրև գրական սեռ՝ Հովհաննես Թումանյանի երկերուն մեջ տիրողը վիպականն է. ան պատկերող ու ցուցադրողն է հայ գյուղական կյանքի. ունի շատ գեղեցիկ քնարական կտորներ ալ անշուշտ, բայց իր հատուկ մեծությունը իր պոեմներուն մեջն է: Մինչդեռ Տերյանի ամբողջ բանաստեղծությունը զուտ քնարերգություն է. նույնիսկ երբ կճգնի պատկեր մը նկարել, պատկերը իսկույն անմիջական զգացումի արտահայտության մը կվերածվի. Տերյան շարունակ իր հոգիին կխոսի մեզի. և ատոր համար ալ Տերյանի բանաստեղծության երևումը Կովկասի հայության մեջ և՛ մեծ անակնկալ, և՛ մեծ ուրախություն պատճառեց: Քարոզ-բանաստեղծություն և վեպ-բանաստեղծություն սովոր էր հայ հասարակությունը, բայց այս զուտ հոգի-բանաստեղծությունը նորություն էր: Իսկ Ավետիք Իսահակյան նաև այս տեսակետեն խառնուրդ մըն է. և՛ վիպական երկեր ունի, և՛ քնարական, բայց իր խորքը կմնա քնարական, ատոր համար ալ ավելի մոտիկ է Տերյանի շունչին. կբռնե տեսակ մը միջին տեղը ըստ սեռի Թումանյանի ու Տերյանի միջև:

Տերյանի գրիչը ավելի կեդրոնացած է ու միակողմանի իր նյութերով, իբրև բնական արդյունքը քնարերգության, մինչդեռ Թումանյան կմոտենա ավելի բազմատեսակ նյութերու, թեև ընդհանրապես նույն միջավայրեն առնված: Իսկ Իսահակյանի բազմազանությունը ո՛չ այնքան նյութին ու միջավայրին մեջն է, որքան տարբեր ժամանակներու մեջ իր ունեցած տարբեր ընկերաբանական երազանքներուն, հակումներուն և ըմբռնումներուն մեջ:

Արվեստի, լեզվի ու երաժշտականության տեսակետեն ամենեն բարձրն է Տերյան. թե՛ բնականեն ունի իր մեջը ճաշակ և թե՛ կդնե իր երգերուն մեջ մեծ հոգ ու խնամք. ընտիր, ընդելուզված աշխատանք է և երաժշտական: Թումանյանը անփույթ չէ այդ տեսակետեն ալ, բայց չի հասնիր Տերյանի ավելի կիրթ ճաշակին ու հոգածության: Համեմատաբար ամենեն անփույթը Իսահակյանն

է ընդհանուր առումով, որ սակայն մեջընմեջ աքանչելի ձույլ տողեր ունի:

Այս բոլորի հետևանքով Թումանյանի գրական տաղանդը ավելի անճիգ ու ավելի անմիջականի, հանգիստ ու անդորր բանի մը տպավորությունը կընե մեր վրա, Իսահակյանի տաղանդը քիչ մը ավելի չարչրկված է, որոնող ու անհանգիստ, իսկ Տերյանի շնորհքը հափշտակություն է ու դյուրահոս:

Հովհաննես Թումանյանը մեր նոր գրականության ամենեն հայ ու հարազատ, ամենեն պարզ ու պատկերող մեր մեծ բանաստեղծն է: Ավետիք Իսահակյանը շատ հետաքրքիր ու շատ սիրելի գրական դեմք մըն է իր վարանքով, իր որոնումով, իր հոխորտանքով ու խարխափումներով, որոնք մեր ժամանակի իր հենաբանը կորսնցուցած մտավորականության սովորական հատկանիշներն են: Վահան Տերյան նմանապես շատ սիրելի, թարմ ու նուրբ հոգի ունեցող քնարական բանաստեղծ մըն է, որ տառապեր է իր հոգիին մեջ և գծեր է մեզի իր հոգիին տառապանքն ու երազանքը քնքուշ ու գրավիչ երգերով:

Մնացած տասնյակ մը բանաստեղծներուն մեջ նախ լավ է, որ առանձնացնենք մեր երեք կին քնարերգուները: Շուշանիկ Կուրղինյան, որ դրոշակիր մըն է դասակարգային-բանվորական բանաստեղծության՝ ջերմ հավատքով և դառն բողոքով: Արմենուհի Տիգրանյան ազգային ժողովրդական ոգևորություններով երգիչ մըն է: Եվ Լեյլի, որ բոլորովին անձնական շեշտ ունի: Գեղարվեստական տեսակետեն Տիգրանյան մինչև իր ժամանակը եղած բանաստեղծության ընթացիկ աստիճանեն վեր չի բարձրանար ու կջանա կնոջ անունը պատվավոր պահել այդ աստիճանին վրա: Շուշանիկ Կուրղինյան ավելի խորություն ունի ու տեղ-տեղ այ ավելի թափ, բայց իր արվեստն է շատ միջակ: Գեղարվեստական տեսակետեն թե՛ իր ներքին ապրումներու նրբությամբ, թե՛ արտահայտության անձնական շեշտով և թե՛ հորինման արվեստով անտարակույս Լեյլի ավելի բարձր է և ավելի հետաքրքիր. ավելի խոյանք ունի իր գրիչը:

Այր բանաստեղծներեն պետք է հիշատակվին նորեն գոնե երեքը: Վահան Միրաքյան, որու «Լալվարի որսը» իր նյութով.

ոճով ու միջավայրով Թումանյանի ստեղծագործական աշխարհէն է և հեղինակի միածին երկն է և արժեքավոր: Հակոբ Հակոբյան գործարանի ու բանվորության երգիչն էր իր ներքին բնական դրդումով և իր կյանքով՝ այդ տեսակի երգերու մոտ դառնալէն մեկ-երկու տասնյակ տարի ավելի կանուխ: Մեծ չէ իր խոսքին ուժը, բայց գրավիչ բան մը ունի իր հավատքն ու հարատևությունը: Իսկ Աթաբեկ Խնկոյան բանաստեղծ ըլլալե ավելի զարմանալի շտեմարան մըն է ժողովրդական կենդանի ասույթներու, ասելուկներու, բառախաղերու, համեմատություններու, ժողովրդական-կենդանական ավանդություններու և առակներու: Իր այդ հարուստ պաշարեն օգտվելով, կարկատելով, մշակելով՝ գրած է մանկական շատ հետաքրքիր երգեր, զանազան խաղեր և ազվոր առակներ, որով և դարձած է ինքնահատուկ դեմք մը շրջանի գրականության մեջ:

Գուցե պետք է հիշել նաև, իբրև իր տեսակի նորություն մը, Լեռնենցն ու Համբարձում Համբարձումյանը, որոնք շատ ծանր լեզվով մը և խիստ խճողված ու ո՛չ բավարար հայերենով մը ուզած են երգել. առաջինը՝ իր սոցիալական գաղափարները մշակելու համար, երկրորդը՝ իր փիլիսոփայական մտածումները մարմնավորելու համար: Մտքի բանաստեղծ ուզած են ըլլալ, որ շատ դժվար հաջողելու գործ է ընդհանրապես, բայց մանավանդ երբ չունիս հարուստ ու ճկուն լեզու մը գրչիդ ծայրը, ո՛չ ալ գրական ոճ ու հորինվածք: Ծանր աշխատանք մըն է այդ ոտանավորները կարդալ ու հասկնալ ուզելը. գուցե հետաքրքրվին մասնագետ մարդիկ:

3. ՎԻՊԱԿԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Նոր գրականության մեջ պատմող ու նկարագրող արձակ երկերը միշտ տիրող են թե՛ հեղինակներու թիվով և թե՛ յուրաքանչյուր հեղինակի արտադրած բազմաթիվ երկերով: Գեղարվեստական ստեղծագործություններուն մեջ իրենց ձևով ամենեն դյուրինն են. պատկեր մը կամ մանրավեպ մը կամ այդ ձևով նույնիսկ ավելի երկար վիպում մը շարադրելու համար բնավ կարիք

չկա նոր ու բացառիկ կարողություններու. բավական է, որ հոգիիդ մեջ ապրած բան մը ունենաս և մտքերդ ազատ արտահայտելու բավարար շնորհք:

Արձակ վիպող գեղարվեստը ամենեն ավելի նման է ու մոտիկ գործնական գրականության առօրյա ձևերուն, որ ամեն մարդու շրթունքին է միշտ ու գրչին ծայրը:

Հիմա մանավանդ, որ ամեն տեղ ալ պարտադիր ուսումը կընդհանրանա և միջնակարգ ուսումն ալ բնավ հազվագյուտ բան մը չէ, վիպական կամ վիպանման .քանի մը էջ բան շարադրելը դարձած է ամենուն համար մատչելի գործ մը: Ոտանավոր գրությունը, որ զգացումի թարմության և առաջին սիրո երազանքներուն հետ սերտ կապեր ունի միշտ, շատ-շատերու կողմե կփորձվի թարմ կիսապատանեկան-կիսաերիտասարդական տարիներուն, բայց շուտով ալ կլքվի, երբ ամուսնությունը վրա կհասնի: Իսկ վիպելը, ընդհակառակը, ապրած, դիտած ու մտածած հասակի հետ ավելի կշեշտվի և անգամ մը փորձողը դրդում կստանա շարունակելու. ծխելու նման սովորություն ու հաճույք կդառնա:

Այս շրջանի վիպական ընդարձակ արտադրությունները դյուրությամբ ընդգրկել կարողանալու և հեղինակներու խմբումն ու համեմատությունը իրարու հետ ավելի հստակ դարձնելու համար հոս ալ կզատեմ վիպային ու վիպանման գրականությունը վիպասանական գրականութենեն: Բոլորովին տարբեր է հեղինակի մը մերձեցման եղանակը իր աշխատանքին՝ նայելով թե քանի մը էջերու կամ մեկ-երկու տասնյակ էջերուն մեջ իր ըսելիքը լրացնել կուզե, թե ավելի երկարաշունչ վիպասանություն մը գրել կցանկա:

Թե՛ նյութի ընտրությունը, թե՛ հոգեբանական վերլուծությունը, թե՛ գործողության ընթացքը, թե՛ ոճն ու հորինման եղանակը և թե՛ գրվածքին խորքն ու շոշափած հանրային հարցերը իրենց հատուկ ու իրենց հարմար ճամբան կբռնեն այդ երկու տարբեր պարագաներուն: Խնդիրը միայն ավելի կարճ կամ ավելի երկար ըլլալուն մեջը չէ, շատ ավելի բարդ է հարցը. նույնիսկ կփոխվի հեղինակի վերաբերումը դեպի իր աշխատանքը. որոշ չափով մը ընկերաբանական և հոգեբանական ուսումնասիրության գույն կստանա:

Վիպակային գրություններ են այն բոլոր գեղարվեստական հակում ունեցող կարճ երկերը, որոնք սովորաբար պատկեր կկոչվին, պատմվածք: Որչափ որ մեջը որոշ գործողություն մը, որոշ հոգեբանական խռովություն մը իբրև առանցք ներկայանա, այնքան կընդգծվի գրվածքին գեղարվեստական ամբողջությունը, վիպումը կդառնա վիպակ, մանրավեպ, նորավեպ: Երբ կպակսի գործողության կամ հոգեբանական այդ կարմիր թելը՝ գրվածքը կցրվի, կկորսնցնե գեղարվեստին հիմնական հատկությունը, կմեռանա, ինչքան ալ որ աղվոր նկարագրություններ ու հետաքրքիր կտորներ ունենա. կդառնա վիպանման գրություն:

Ըստ իրենց նյութին, ոգիին կամ միջավայրին՝ այդ վիպակային գրություններուն զանազան որոշիչ անուններ կուտանք՝ գյուղական վիպակը կա, հեղափոխական վիպակը, ընկերաբանական վիպակը կա, սիրային վիպակը, հոգեբանական վիպակը, արևելյան վիպակը կա, պատանեկան վիպակ:

Այս շրջանի վիպակային գրականության երկու կարևոր դեմքերն են Ավետիք Ահարոնյան (ծնած 1866) և Վրթանես Փափազյան (1866 - 1920):

ա. Ահարոնյանը այս երեսնամյակի տիրապետող գրիչն է: Ամբողջ շրջանը Դաշնակցության հմայքին տակն է և Ահարոնյանն ալ Դաշնակցության վիպագրողն է: Այս շրջանի ժողովրդական ընդհանուր հոգեբանության, ընդհանրությունը հուզող զգացումներուն, ցավին ու ակնկալության արտահայտիչը:

Շրջանի մյուս հեղինակներն ալ ավելի կամ նվազ չափերով գրություններ ունին միևնույն ուղղությամբ և նույն ոգիով. պատկերներ ու վիպակներ, ուր կնկարագրվին Թուրքիայի հայության կրած հարվածները, անտանելի պայմանները, զուլմի, հալածանքի ու դիմադրության փորձերը, ինչպես և դրվագներ ֆեդայիներու կյանքեն ու կռիվներեն: Բայց և այնպես Ահարոնյանը բացառիկ է անոնց մեջ. Ահարոնյանը ամբողջովին նվիրված է իր ժամանակաշրջանի տիրող շարժումներուն, ցնցումներուն, դեպքերուն, տեսակ մը օրը օրին հետևող իր գրչի մշտական ու հիմնական նյութն է ատիկա զանազան ձևերով. և իր գրիչը կարող գրիչ մըն է:

Իր այդ հիմնական նյութի էութենեն կըզգլխին իր գրչի թե-

րությունները ու առավելությունները: Ա՛խ ու վա՛խ շատ ունի իր գրիչը, և «Արցունքի Հովիտ» է իր գրականությունը. և ասոր զուգրնթաց ճառական-ճարտասանական ուռեցք մը ունի իր ոճը և կառուցումն ալ տեղ-տեղ արվեստական գծեր: Ասոնք թերություններ են, որոնք խիստ աչքի չէին ընկնի գուցե իրենց գրության միջոցին, երբ ամբողջ շրջապատը նույն տրամադրություններով կթրթռար, բայց հետզհետե քանի կհեռանանք այդ երեսնամյակեն և քանի պայմանները կփոխվին, այնքան ավելի զգալի կդառնան:

Բայց իր նյութեն և իր ժամանակի տրամադրութենեն կուգան նաև իր երկու կարևոր առավելությունները: Ահարոնյանը գիտե, որ Հայ ժողովուրդի սրտեն կխոսի և Հայ ժողովուրդի սրտին կխոսի. և ասոր համար ալ թափով կխոսի և ոգևորությամբ կխոսի. ուժ ունի իր արտահայտությունը, իր համեմատությունները, իր պատկերացումը. մարգարեական բողոք մը, նզովք մը կա իր խոսքերուն մեջ, և իր լեզուն փոթորիկին հաջորդող դեռ չնստած ծովու ելևէջն ունի, որ գրավիչ է, նույնիսկ երբ ճառ ու ճարտասանություն է ըրածը:

Ահարոնյանի գրությունները շատ են և՛ թիվով, և՛ տեսակով: Խոշոր մաս մը հոդվածի ու պատմվածքի միջին վիճակ մը ունին. ունի ուղևորական ընդարձակ նկարագրություններ, ունի ուսումնասիրություններ, ունի տրամաներ, ունի մեկ-երկու հատ ավելի երկարաշունչ վեպեր, բայց իր շնորհքն ու առանձնահատկությունները ամենեն ավելի իր վիպակներուն մեջն է, որ կցայտե:

Գեղարվեստորեն իր ամենեն հուզող երկերը այն պատմվածքներն են, որ իր մանկության ու իր հայրենի գյուղական կյանքի հուշերը, տեղերը, դեպքերը կնկարեն մեր աչքերուն դեմ: Այլև հեղափոխական տաք շունչով գրված այն վիպակները, որոնք ազատության ձգտող ժողովուրդի մը արյունոտ ճամբան կգծեն:

ը. Վրթանես Փափազյան շատ մը կողմերով տեսակ մը հակադրությունն է Ավետիք Ահարոնյանի:

Իր լեզուն հասարակ է, տեղ-տեղ թափթփած, թեև հաճախ զգալի է ճիգ մը կոկիկ ու մշակված ըսելու, բայց բոլորովին տարբեր Ահարոնյանի լայն ու առատ արտահայտութենեն: Ահարոնյանի գրությունները միշտ կիրակի օրվան հագուստներով են ընթերցողի

դիմաց, Փափազեանի գրուածքները միշտ ամենօրեայ գգուանքով կներկայանան, շատ-շատ նոր կարմիր փողկապ մը մէջնմէջ:

Փափազեան ալ հոգիով հեղափոխական մըն է, բայց ո՛չ Դաշնակցական իմաստով. ազգայնականէն աւելի իր հետաքրքրութիւնը լայն մարդկային ընկերային փոփոխութիւններու եւսեն է: Ժնեւի իր ուսանողական տարիները եւ իր ընկերաբանական ընթերցումները մէկ անգամ ընդմիշտ իրենց կնիքը դրած են անոր մտածման եւ ստեղծագործութեան վրայ:

Ո՛չ յակոբութիւն ունի, ո՛չ ճարտասանութիւն, բայց շատ գթասրտութիւն, պարզ ու բողոք կապիտալի, ֆեոդալի, անիրաւութիւններու եւ անարդարութիւններու դէմ: Այս բոլորի մասին սակայն աւելի կխօսի, քան կներկայացնէ. մինչդեռ միայն ներկայացուածն է, որ ուժ կուտայ եւ գեղարուեստական արժէք:

Այս համամարդկային հեղափոխական գաղափարներով եւ մեր Հայ կեանքին քիչ քաջող նիւթերով բնականաբար Փափազեան չէր կրնար ունենալ այդ ժամանակաշրջանին մէջ Ահարոնեանի ժողովրդականութիւնը: Մանաւանդ որ չունի նաեւ Ահարոնեանի երեւակայութեան ազատ խաղը, իր ոտքը միշտ հողին վրայ է եւ ունի տեսակ մը իր ուրոյն նիւթերն ու աշխարհը, որոնք անհետաքրքիր չեն, բայց տեսակ մը մեկուսի կմնան ժամանակի ընդհանուր հոսանքէն:

Փափազեան ալ շատ է գրած Ահարոնեանի պէս եւ փորձած է գրականութեան բոլոր տեսակները. թղթակցութիւններ ունի լրագրական, ուղեւորութիւններ, ուսումնասիրական աշխատանքներ, թռուցիկ հուշեր, նկարագրութիւններ, պատմուածքներ, վիպակներ, մէկ-երկու հատը քիչ մը աւելի երկար, նաեւ մէկ-երկու թատերական երկեր:

Բայց Փափազեանի ալ մանաւորապէս արժէքաւոր գրութիւնները, եւ հատկապէս գեղարուեստական տեսակէտէն, կեդրոնացած են իր վիպակներուն մէջ: Ահարոնեանի նման, եւ քիչ մը ընդհանրապէս ամէն հեղինակի նման, իր ամէնէն հաջող գրուածքները իր մանկութեան ու պատանութեան թարմ տարիներէն քաղած հուշեր են: Այլեւ մանաւորապէս շատ նոր ու գեղեցիկ է մեր գրականութեան համար Հայ բոշաներու կեանքէն առնուած «Խաթ-

Սայան»:

Երեսուն-երեսունուհինգ անուն մը կարելի է իրար բերել, որոնք վիպակներ ունին հրապարակի վրա այդ շրջանին: Ոմանք մեկ-երկու գրութեամբ միայն կմասնակցին և ավելի պատահական մարդոց բնույթ ունին: Կան ալ, որ գրած են բավականին, երբեմն նույնիսկ համառութեամբ ու երկարատև, բայց հազիվ կհասնին միջակ արժեքով գրութեան մը սահմանին:

Վիպակային այս գրականութիւնը քիչ մը դժվարութեամբ կարելի է խմբել երեքի. դժվարութիւնը հոն է, որ մեկն ու մյուսը իր որոշ գրվածքովը կարելի է սղմեցնել նաև մյուս խումբերուն մեջ: Բայց իր երկերուն միջավայրը, շունչն ու նպատակը ընդհանրապես աչքի առաջ ունենալով՝ կարելի է բաժնել երեք խումբի:

Առաջին խումբը կկազմեն հատուկ գյուղի կյանքն ու պայմանները ներկայացնել ուզող վիպակները: Եվ պետք է հիշել գոնե Ստեփան Տեր-Ավետիքյան, Ատեյան և Ծուղուրյան: Առաջինը այնքան գյուղական կյանքի նկարագրող չէ, որքան գյուղական կյանքեն իր նյութերն առնող: Ծուղուրյան հատկապես գյուղի դեմքերը տալ կուզե և լավ կգծե ու կենդանի: Ատեյան ավելի վիպական տրամադրութիւն ունի. կսիրե համենալ ու խորանալ ու վերլուծել գյուղի ցավերն ու պայմանները. և շուտ է մեռած:

Երկրորդ խումբը այդ տեսակ սահմանափակում չունի. կձգտի ընդհանրապես կյանքն ու մարդկային հոգին պատկերել փոքր վիպումներու մեջ, ըլլա քաղաքի կյանքեն առնված, մտավորական մարդոց կյանքեն, բանվորական կյանքեն թե հեռավոր արևելյան միջավայրի մը մեջ երևակայված մարդոց կյանքեն: Այս տեսակի ընդհանուր կյանք ու հոգի պատկերելուն կմասնակցին իրենց մանր վիպակներով և՛ Թումանյանը, և՛ Իսահակյանը շատ գեղեցիկ էջերով: Պետք է հիշել Ջուպարը, Արշալույս Մխիթարյանը, Սիմոն Շիյանը, որոնք բոլորովին տարբեր ուղղութիւններով խոստումնալից սկիզբ մըն են տված, բայց չեն շարունակած: Նկարիչ Գևորգ Փաշինջաղյան և դերասան Միքայել Մանվելյան, որոնք իրենց հատուկ արվեստին կցած են նաև գրական քանի մը արժեքավոր կտորներ:

Երրորդ խումբը կկազմեն մասնավորապես մանկական ու

պատանեկան տարիքի մեջ եղող ընթերցողներու համար գրված վիպակային մանր երկեր։ Նորին Հովհաննես Թումանյանն է թե՛ քանակով և թե՛ արժեքով ամենեն կարևորը։ Արժեքավոր գրություններ ունին այդ ուղղությամբ Սիմակը գլխավորապես գյուղական կյանքե և Ստեփան Լիսիցյան քաղաքային կյանքե, գլխավորապես դպրոցական միջավայրե։ Սարգիս Քամալյան, Լևոն Մեչիկ-Ադամյան և Սեյրի նմանապես բավական գրություններ ունին վիպական կամ հեքիաթական, մանուկներու ընթերցման համար, կա՛մ ինքնագիր, կա՛մ ռուսերենի հետևողություն։

Առանձին տեղ մը ունի Կարեն Միքայելյանը, որ գրած չէ պատանության համար, այլ մեծերու, բայց գրած է որբերու ու զրկված պզտիկներու կյանքեն հարազատ ու ջերմ շունչով։

4. ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս շրջանը իր բանաստեղծական երրորդության նման ունի նաև իր վիպասան երրորդությունը. վիպողներ, որոնց նախասիրած գրության ձևը երկարաշունչ վիպասանություններ են. ո՛չ պատահաբար և իմիջիայլոց նաև վիպասանություն մը, այլ իբրև ստեղծագործական տևական գիծ, իբրև գրական-հոգեբանական տիրող հատկություն։

Վիպասան երրորդությունը կկազմեն երեք կեղծանուն՝ Շիրվանզադե, Մուրացան և Նար-Դոս։

Ասոնցմե միայն Մուրացանն է, որ ունի գաղափարախոսություն, ներքին քարոզ մը՝ ազգին նվիրվելու քարոզը և իր բոլոր երկերուն մեջ, ըլլան ժամանակակից կյանքեն առնված թե պատմության էջերեն։ Ժամանակակից կյանքե առնված իր վեպերուն մեջ ավելի հաստ է ընդգծումը և ավելի խանգարող։ Պատմական վեպերուն մեջ թե՛ ավելի մեղմ է ինքնին այդ քարոզը և ավելի գեղարվեստական ձևով, և՛ թե ավելի դյուրին է պատմական երկի մեջ հաշտվիլը այդ քարոզին, քանի որ պատմությունը ինքը քարոզ մըն է իր խորքին մեջ ամեն տեղ և ամեն ժողովուրդի համար. գիտակից թե անգիտակից՝ ամեն տեղ ալ պատմիչ ու պատմաբան իրենց գրությունները սպաս են գրած որոշ գաղափարի մը քարո-

գուլթյան. կա՛մ կրոնական ու դավանաբանական քարոզություն մըն է, կա՛մ տոհմաբանական, կա՛մ ավատական, դասակարգային. կա՛մ ցեղային ու ազգասիրական:

Նկարելու ու պատմելու շնորհք ունեցող հեղինակ մըն է Մուրացանը: Իր ամենեն ժողովրդականացած վեպը՝ «Գևորգ Մարզպետունին»: Հեղինակը իր կյանքի ամենեն հասուն տարիներուն մեջ հիմնապես վերամշակած էր, խորացուցած ու լայնցուցած և ոգևորությամբ կպատրաստվեր տպագրության տալու, երբ հայթաթարական տխուր ընդհարումներու միջոցին պատրաստ ձեռագիրը հրդեհի զոհ գնաց: Հեղինակի մը համար խորունկ վիշտ մըն է սակայն՝ իր սիրած աշխատանքին կորուստը, որ և կորուստ մըն է անշուշտ մեր գրականության համար: Մնաց հին նախնական գրությունը, որ, կարելի է, մեզի կբավարարե, բայց բնականաբար այլևս բավարարել չէր կրնար իր հեղինակին: Իսկ Շիրվանզադեն ու Նար-Դոսը կգրեն կյանքը պատկերելու համար, ո՛չ թե կյանքին ուղղություն տալու համար:

Շիրվանզադեն կգրե կամ կուզե գրել առանց իրականութենեն հեռանալու. մտքի թափառումներու և սավառնող երևակայության բարեկամ չէ. հուշագրող մըն է և նկարագրող մը. և այդ սահմաններուն մեջ միայն իր մտքին ազատություն կուտա, իբրև լրացում կամ սրբագրում իրականութենեն իր առած նշումներուն: Մինչդեռ Նար-Դոս շատ բան իր հոգիեն կգրե. և իրականութենեն կօգտվի այն չափով, ինչ չափով որ իր մտածումը մարմնավորելու պետքի կրնա գալ:

Ասոր զույգ կերթա նաև իրենց գործածած լեզուներուն տարբերությունը: Նար-Դոս շատ ավելի լեզու ունի և իր արտահայտությունը մշակելու ճիգ: Շիրվանզադե անփույթ է. շատ համեստ է իր լեզուն. իրական ըլլալու և կենդանի կերպով պատկերելու իր ճիգերեն դուրս՝ շատ չի մտահոգվիր այդ տեսակի «արվեստական» բաներով. կգրե ինչպես որ գրչին եկավ. ատիկա կհամարե իսկական իրականություն:

Նար-Դոս ավելի որոճող է իր նյութերուն վրա, ավելի քիչ գրող և ավելի սահմանավոր է իր նյութերուն և տեսության շրջանակը: Շիրվանզադե համարձակ է ավելի և ավելի բեղմնավոր.

բայց իր նիւթերուն մէկ շատ խոշոր մասը միշտ կդառնայ նոյն Հարցերուն շուրջը. գլխաւորապէս քաղքենի, առեւտրական դասակարգի ամուսնական կեանքի ներքին անառողջ վիճակին պատկերացումը. և ոչ ամէն անգամ ժուժկալ լեզուով մը:

Այդ քաղքենի, դրամի ետեւէ վազող մարդիկը, երբ մասնաւոր խոր Հոգեբանութեամբ մը ներկայացուած չեն, լուրջ Հետաքրքրութիւն և գրաւչութիւն մը չունին իրենց վրայ մեր այս Հետզհետէ նոր Հուներով Հոսող ժամանակներուն մէջ: Իսկ դրամի Հետ սերտօրէն կապուած սիրո մանրամասնութիւններն ու Հիւանդագին երեւոյթները Հեռու են մեր Հոգին բարձրացնելէ. աժան ռոմանի տպաւորութիւն կընեն և շատ տեղ արուեստական, եղծուած ու անառողջ կզգանք. աս է Շիրվանզադէի երկերուն մեծ մասին անհրապոյր ըլլալուն պատճառը, թէ չէ՝ ո՛չ նկարելու, ո՛չ արտաՀայտելու, ո՛չ ալ դիտելու ուժը չի պակսիր իրեն:

Եվ ճիշդ ասոր Համար ալ շատ աւելի Հետաքրքիր ու գրաւիչ կդառնան իր երկերը, երբ նիւթը քաղքենի այդ կախարդական շրջանէն դուրս կուգայ: Երբ կգծէ Հանրային նոր ու շատ աւելի արժէք ներկայացնող դէմքեր, ինչպէս «Արսէն Դիմաքսյանն» է, երբ իր մանկութեան Հիշողութիւնները մեզի կպատմէ, երբ գաւառի կեանքը կպատկերէ, ինչպէս իր «Ցաւագարը», կամ երբ երիտասարդ «Արտիստի» մը դէմքը ու շրջապատը կգծէ մեզի, ինքն ալ իսկոյն կդառնայ արտիստ:

Նար-Դոս աւելի որոնող Հոգի մըն է, բայց Հաստատ չէ իր որոնածը և խորունկ չէ իր թափը. Շիրվանզադէ, դիցուք և աւելի կոպիտ, բայց աւելի ուժեղ է թէ՛ իբրև անձ, թէ՛ իբրև վիպասան:

Գրական չեշտուած շնորհք ունեցող մարդիկ ընդհանրապես կառչած չեն մնար գրական միայն մէկ ձևի մը վրայ, ինչքան ալ ստեղծագործելու այդ որոշ եղանակը իրենց Հակումներուն աւելի Համապատասխան ըլլայ:

Ավետիք ԻսաՀակյանը իր խորքին մէջ քնարերգու մըն է, բայց ունի ազվոր ու Հետաքրքիր վիպակային գրութիւններ. և ունի գրած երկարաշունչ և գեղեցիկ վիպասանութիւն մը՝ «Ուստա Կարոն», որ Դաշնակցական տիրապետութեան շրջանի գյուղական դէմքերն ու Հոգեբանութիւնը մարմնաւորել կձգտի: Մեծ մասը

տպագրված է արդեն, բայց կմնա անավարտ: Կըսեն՝ վերամշակման ենթարկելու վրա է պոլշևիկյան պատվաստումով. մաղթենք, որ չի փճացնե. կարկտանին հաջողն ալ խակականին չի հասնիր:

Շրջանի կին վիպասանն է տիկին Խատիսյան, որ շարք մը վեպեր ունի քաղքենի ընտանեկան կյանքի ու պայմաններու պատկերացումով ու քննադատումով, այսինքն՝ նույն աշխարհը, ուրկէ Շիրվանզադեն առած է մեծ մասով իր նյութերը. միայն թե տիկինը չունի Շիրվանզադեի բնական ստեղծագործ ուժը, ո՛չ ալ անոր մերկապարանոց ըլլալ ուզող ու կոպիտ կողմերը: Փեսա որսացողները և նման նյութերը անցուցած են իրենց ժամանակը, կորսնցուցած են իրենց հետաքրքրությունը գեղարվեստի ծարավ ունեցող հոգիներու համար. Սունդուկյանը դեռ յոթանասունական թիվերուն դրած է արդեն այդ նյութերուն ետևը իր վերջակետը և դրած է խնդալով: Տիկին Խատիսյանի վեպերեն ամենեն ընթեռնելին «Հեղինեն» է, եթե մանավանդ ըլլար քիչ մը ավելի սեղմ ու կարճ:

Իբրև վիպասանություն՝ աչքի լյնող երկ մըն է Համբարձում Առաքելյանի «Ջհուտ Քուշան»-ը: Պարսկական կյանքե ու պատմական վեպ. պատմված է կենդանի ու կկարդացվի հաճույքով: Եվ գեղարվեստական ավելի մեծ պահանջներ ալ դնելու իրավունք չունինք. տեսակ մը հետաքրքիր հյուր է մեր գրականության մեջ:

Հյուրաբար մոտենալ չենք կրնար Ատրպետի վեպերուն. ընդհակառակը, Ատրպետ գրած է ամբողջ երեսնամյակի ընթացքին համառ վճռականությամբ և շատ հարգելի լրջությամբ շարք մը վիպասանություններ, որոնց մեջ բավական բան կա այդ ժամանակներու զանազան կեդրոններուն մեջ հայ կյանքը ուսումնասիրել ուզող մարդու մը համար, որոնց գեղարվեստական արժեքը սակայն մեծ բան մը չէ:

5. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Թատերական երկը մեկ տեսակն է վիպագրության, բայց իր տարբերությունը ամբողջովին խոսակցություն ըլլալու ձևին մեջը չէ միայն, ինչպես հաճախ կընդգծվի: Բոլորովին տարբեր է իր շենքը և իր նյութին մշակումը. շատ ավելի կեդրոնացում ունի իր

մէջ, շատ աւելի խիստ հոգեբանական հաջորդականութիւն կպահանջէ և շարժուն գործողութիւն. ամեն ինչ երկու-երեք ժամվան մէջ պետք է ըլլի, կատարվի ու լրանա. դանդաղիլ կարելի չէ: Հոգեբանութեան, շարժումի և արտահայտութեան ամեն համեցում, ամեն յճացում ամեն երկարեցում հորանջ կբերե հանդիսականներու շրթունքին. դերասանը բեմին վրա վայրկյան մը կենալու ու շունչ առնելու իրավունք չունի. ամեն ինչ կհոսի արագ, անընդհատ ու անպարձ: Գեղեցիկ գրականութեան երեք հիմնական տեսակներեն ամենեն խստապահանջն է, ամենեն աւելի բարդ պայմաններ կդնե և իր հորինվածքով ամենեն դժվարն է:

Մեր այս երկրորդ շրջանին մէջն ալ դեռ միշտ երկրորդական տեսակ մըն է թատերական ստեղծագործութիւնը և՛ որակով, և՛ քանակով: Դեռ չկա գրական նոր լեզվով թատերագիր տաղանդ մը բարբառագիր Սունդուկյանին դիմագրելի:

Միայն Լևոն Մանվելյանն էր բեմական ստեղծագործութեան այդ ինքնահատուկ սերն ու ներքին պահանջը ունեցողը, բայց ան ալ ինչպես իր քերթվածներուն, այնպես ալ իր շարք մը թատերականերուն մէջ աւելի սիրահար մըն է գեղարվեստի, քան ստեղծագործող մը գեղարվեստի:

Մյուս թատերագիրները մեր վիպասաններն են, որոնք մասամբ ներքին դրդումով, մասամբ «Արտիստիկական ընկերութեան» կողմե ներկայացվելիք նոր երկեր հայցնելու արտաքին դրդումով փորձած են իրենց գրիչը նաև այդ ուղղութեամբ: Երբեմն ուղղակի իրենց վեպերը վերածած են թատերակի, որ միշտ ալ խոհանոցային աշխատանք մըն է և գրական տեսակետե անարժեք: Պետք է կարգալ բուն իր վիպական ձևին մէջ, եթե հարազատութիւն ու գրական վայելք է մեր փնտրածը:

Բնականեն իբրև թատերակ գրված երկերեն քանի մը հատը ներկայացուցած են կովկասյան բեմերուն վրա աւելի կամ նվազ չեշտված հաջողութեամբ: Այսպես է Մուրացանի «Ռուզանը»՝ պատմական խաղ մը. Արեէլ Ասլրեսյանի «Մարվող ճրագները»՝ ժամանակակից քաղաքային կյանքե. Շիրվանզադեի «Պատվի համար»-ը, «Եվգինեն»՝ իր սովորական քաղքենի ընտանեկան

կյանքի պատկերացումներ. և Ա.Հարոնյանի «Արցունքի Հովիտը» ու «Սև Թուչունը»՝ միշտ կապված ըստ իր սովորության թրքահայ իրականության:

Նար-Դոս և Փափազյանն ալ ունին բեմական քանի մը թատերակներ, որոնք նմանապես խաղացված են ավելի կամ նվազ հաճախությամբ: Հատկապես պետք է հիշել Փափազյանի «Ժայռը»: Շրջանին վերջերը հանրային հետաքրքրությունն ու ուշադրությունը քաշեց իր վրան Միքայել Մանվելյանը, որ դերասան է, իր մեկ կամ երկու արար եղող կարճ բեմական երկերովը, որոնք արևելյան փոն ունին և հոգեբանական հրապույր:

Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԻՆ ՎՐԱ (1920-ԵՆ ԱՍԴԻՆ)

Երկու համաշխարհային պատերազմներու վերջերուն մեջ ինկած երեսնամյակի մասին ալ քանի մը ընդհանուր գծերով պիտի խոսիմ առանց անհատ հեղինակներու գործերուն գնահատմանը մտնելու: Արևելյան մեր գրական բաժնին համար ասիկա շատ ավելի հարկեցուցիչ է, քանի որ մեր հայրենի հողերուն վրա կատարված ամեն տեսակի աշխատանքներուն հետ քիչ մը մոտիկեն ծանոթություն ունենալը դուրսը գտնվողներուս համար եղած է անկարելի:

Հատկապես գրականության մասին խոսելով՝ սաստիկ դժվար էր մեր արևելյան հեղինակներուն երկերը ձեռք ձգելը, ինչպես և պարբերականները: Ամենեն հայտնի անուններուն հազիվ մեկ-երկու գիրքը ձեռքս է ինկած. շատերուն երկերն ալ ամենևին չեմ տեսած: Այս աստիճան ընդհատ ու թերի ծանոթությամբ անկարելի ու ավելորդ կգտնեմ անհատ հեղինակներու մասին կարծիք մը հայտնելը այս տեսակ գրվածքի մը մեջ: Բայց այդ կտրտված ու պատառիկ ծանոթություններու միջոցավ ալ ըմբռնելի է նորեն մեր հայրենիքի մեջ տիրող գրական մթնոլորտը և տեսանելի է գրականության բռնած ընդհանուր ընթացքը:

Նախորդ շրջանի հետ համեմատած՝ կովկասյան հայության կյանքն ու վիճակը խոշոր փոփոխություն էր կրած քսանական թիվերու ճիշդ սկիզբեն: Վիճակի այդ փոփոխությունը քաղաքական հողի վրա չէ, որովհետև շատ կարճ անկախության շրջանե մը ետքը՝ պոլշևիկյան բանակներու Կովկաս մտնելովը մեր հայրենիքն ալ մեր հարևան ժողովուրդներուն հետ դարձավ նորեն ռուս պետության մեկ անբաժան ծայրագավառը, ինչպես որ եղած էր հարյուր տարիե ի վեր:

Իրավ է, հիմա մեր կովկասյան Հայաստանը կկրե «Հայկական ռեսպուբլիկա» փառավոր անունը, բայց ատիկա ժամանակակից քաղաքավարական արտահայտություն մըն է միայն:

Ռուսաստանին կցված բոլոր «ռեսպուբլիկաները» գործնականին մեջ միայն վարչական արժեք մը ունին, ո՛չ քաղաքական: Ինչպես նախորդ ամբողջ դարու մը ընթացքին, այնպես ալ հիմա Կովկաս ապրող հայությունը հպատակ ժողովուրդ մըն է ռուս լայնածավալ պետության ձեռքին տակ: Մեր երկիրը օգտագործողը, ղեկավարողը և պաշտպանողը ռուս պետությունն է, ռուս կեդրոնական կառավարության կամքը, նույն բացարձակությամբ, ինչպես և առաջ:

Եվ ուրիշ կերպ ալ ըլլալ չի կրնար, քանի որ մեր երկիրը զենքով տիրված աշխարհ մըն է ռուսի համար, կռիվով խլված հողեր ուրիշ պետություններե և կկառավարվի ու կպահվի ուժերի իրավունքով: Աս է հիմա աշխարհիս երեսին դեռ ամեն տեղ ալ մարդկության ըմբռնած ու գործադրած քաղաքակրթության աստիճանը. միապետ ըլլա թե բազմապետ, ընկերվարական ըլլա թե համայնավարական՝ տիրապետության տեսակետեն բոլորի ալ սկզբունքը նույնն է՝ իրավունքը թնդանոթին բերանն է:

Մեր նախորդ շրջանի ու այս շրջանի միջև եղած իրական տարբերությունը ռեժիմի փոփոխություն է: Փոխված են Ռուսաստանի ներքին տերերը. հին ցարական և ազնվական դասին հենած տիրապետության փոխարինած է կուսակցության մը տիրապետությունը, որ ինքզինքը բանվորագյուղացիական կանվանե և իրականին մեջ առանձնաշնորհյալ դասակարգ մըն է նորեն: Այս նոր կուսակցությունը տիրապետության է եկած արյունոտ պայքարներով և երկար ներքին պատերազմով. և մշակած է խիստ կեդրոնացած կառավարության եղանակ մը՝ արգիլելու համար ամեն մտածում, որ կտարբերի իր ըմբռնումեն և անմիջապես ու անխնա պատուհասելու համար ամեն վարմունք, որ կշեղի իր պահանջածեն:

Մեր հայրենիքն ալ, իբրև այդ մեծ պետության մեկ փոքրիկ գավառը, ենթակա է բնականաբար նույն կեդրոնացման և նույն կարգերուն ու ըմբռնումներուն: Ատոր համար է, որ մեր երկրի մեջ ալ ոչ մեկ քայլ առնել կարելի չէ առանց ռուս պետական կեդրոնի հրամանին ու հրահանգին, ըլլա տնտեսական, ըլլա կուլտուրական, ըլլա կրոնական կամ զինվորական, նույնիսկ զուտ

վարչական մարզերուն մէջ: Ասոր համար է, որ մեր երկրի մէջ ալ ամենքը և ամեն տեղ պէտք է խստորեն կատարեն, գրեն ու խօսին ըստ տիրապետող կուսակցութեան ըմբռնումներուն ու պահանջներուն: Եւ այդ պատճառով ալ ամեն մարդ ու ամեն գործ ու շարժում և ամեն խօսք ու գրութիւն ենթակայ է մշտական խիստ ու մանրակրկիտ հսկողութեան մասնաւոր կոմիտեներու կողմէ:

Ասիկա առաջին կարևոր կէտն է, որ պէտք է աչքի առաջ ունենանք մեր հայրենիքի կեանքն ու նոր գրական երևոյթները ճիշդ ըմբռնելու համար:

Այս երեսնամեակի երկրորդ հիմնական տարբերութիւնը իր նախորդներէն մեր երկրի տուած վարչական ձևն է: Խորհրդային Ռուսաստանը սկզբունքով ինքզինքը հռչակեց իբրև դաշնակցական ազատ կազմ ունեցող պետութիւն մը, որով և ընդունեց յուրաքանչիւր ժողովուրդի սահմաններուն մէջ և ներքին տեղական գործերու համար ազգային որոշ «ինքնուրոյնութիւն» մը. այսինքն՝ տեղական լեզուն պահելու, տեղական վարչութիւն մը ունենալու և տեղական պոլշևիկեան կազմակերպութեան ձեռքով իրենց ներքին գործերը վարելու իրաւունքը, անշուշտ ռուսական կեդրոնական վարչութեան հրահանգող ու ղեկավարող վերին ու մշտական հսկողութեան տակ:

Որով մեր երկիրն ալ այս երրորդ՝ պոլշևիկեան երեսնամեակին ունէր հայ վարչութիւն, հայ լեզուով դատարան ու դպրոց, հայ համալսարան և ընդհանրապէս իր տեղական, տնտեսական ու կուլտուրական պէտքերը տնօրինող, աւելի ճիշդ է ըսենք՝ գործադրող «հայկական կառավարութիւն» մը. այս կառավարութիւնը ունէր նաև իր տրամադրութեան տակ «ռուսական դաշնակցական կազմէն» տուած որոշ պիւտճէ՝ իր վրայ դրուած պարտաւորութիւնները կատարելու համար: Ասիկա Ռուսաստանի հայ կեանքին մէջ նորութիւն մըն է և մեծ նորութիւն մը, ինչքան ալ որ սահմանափակ ըլլայ այդ վարչութեան իրաւունքները, ինչքան ալ ամեն տեսակի արգելքներու և հսկողութեան տակ գործէ և ինչքան ալ լեցուն ըլլայ ռուս ոգիով, ռուսական շահերուն ծառայող ռուսական ազդեցութիւններով:

Երբ երրորդ երեսնամեակի այս երկու հիմնական նորութիւն-

ները միացնենք իրարու՝ կստանանք հայ կյանքի քաղաքացիական պայմաններուն և հայ գրականության ընդհանուր բնութագիծը: Այս շրջանին ամեն ինչ մեր հայրենիքին մեջ ավելի կաշկանդված է տնտեսապես ու հոգեպես, աղճատված է հայկականը օտար կաղապարներու տակ, ճնշված և ժողովուրդի կյանքն ալ ըստ երևույթին շատ աղքատ վիճակի մեջ. բայց վարչապես ստացած ենք ազգային անջատ կերպարանք և մեր հայ լեզուն ստանձնած է որոշ տեղական-պետական դեր. բա՛ն մը, որ առաջ չկար:

* * *

Այս փոփոխություններեն ամենեն ավելի նպաստավորված եղավ հայ գրականության գիտական ճյուղը, ավելի ճիշդ է ըսենք հայագիտական ճյուղը. մյուս ճյուղերուն մեջ ըստ երևույթին տիրապետողը միշտ ալ ռուսերենն է:

Հայ մարդիկ հայ միջավայրի մեջ, հայ ուսանողությամբ շրջապատված, վերջապես կրցան նվիրվիլ հայ երկրի, հայ անցյալի, հայ լեզվի ու գրականության ուսումնասիրությանը հայ հաստատության մեջ, որ և իսկույն տվավ իր պտուղը:

Երևանի մեր հայ համալսարանը հիմնված է 1920 թվականին Հայ Հանրապետության ձեռքով, որ պոլշևիկյան «ռեսպուպլիկան» պահեց ու կապեց ռուս համալսարանական ցանցին: Համալսարանին կից հիմնած են ձեռագիրներու ընդարձակ գրադարան և մեծ ընդհանուր մատենադարան, որոնք անշուշտ մեծ նպաստ են հայագիտական ու պատմական ուսումնասիրություններու համար:

Իր այս առաջին քառորդ դարու մը ընթացքին հայ համալսարանը ունեցած է քանի մը շատ պատկառելի հայագետներ, ինչպես են՝ պատմաբան Հակոբ Մանանդյան, լեզվագետ Հրաչյա Աճառյան, պատմաբան-ընկերաբան Խաչիկ Սամվելյան, գրաբանության ու գրականության մասնագետ Մանուկ Աբեղյան, լեզվաբան Ստեփան Մալխասյան և դեռ խումբ մը ուրիշներ: Իրավ է, մեծ մասը արդեն հայտնի դեմքեր էին նախորդ երկրորդ երեսնամյակեն սկսած, որոնք սակայն իրենց լրիվ բացումը ստացած են հայ համալսարանի իբրև ուսուցիչներ: Եվ այս հիներու ձեռքին տակ արդեն հրապարակ են իջած անոնց երիտասարդ աշակերտները, որոնց գործերը կազմելու

են մեր գրականության Հաջորդ շրջանի Հայագիտական մասը:

Մայր Հողի վրա Հիմա կատարվող Հայ գրական աշխատանքին ամենեն մնայուն ու արժեքավոր մասը այս Հայագիտական շարժումն է: Եթե նախորդ երեսնամյակին մեջ ամենեն շեշտվածը ու կարևորը Հայ բանաՀյուսության գեղարվեստական վերելքն էր, Հիմա այս շրջանին մեջ տիրողն ու կեդրոնը Հայ բանաՀյուսության գիտական վերելքն է:

Գալով գեղարվեստական գրականության՝ մեր Հայրենիքի սովետական կառավարությունը կազմակերպած է ու կղեկավարե ինչպես առՀասարակ բոլոր արդյունաբերությունն ու բոլոր աշխատավորները, այնպես ալ իր ձեռքն է առած գեղարվեստներն ու գեղարվեստագետներու աշխատանքն ու վճարը: Ստեղծած է պետական Հայ երաժշտական կոնսերվատորիա, նկարչական պետական ինստիտուտ, թատերական պետական վարչություն, շարժապատկերի կեդրոնական ղեկավարություն, գրական գործիչներու պետական կազմակերպություն և նման Հաստատություններ:

Այսինքն՝ մշտական պետական Հսկողություն կա մեր բոլոր գեղարվեստներուն վրա, որոշ պյուտճե և Հոգածություն, որ նմանապես նորություն մըն է Հայ գեղարվեստական կյանքին մեջ: Ասոր փոխարեն նախորդ շրջանին կգործեին քանի մը խախուտ ընկերություններ սակավաթիվ անդամներով, որոնք իրենց Համեստ պյուտճեները Հազիվ ծայրը ծայրին բերելու կՀաջողեին և ստիպված էին բացերը Հարուստներեն մուրալով գոցելու. և ընդՀանրապես կգործեին մայր Հողերեն դուրս՝ Թիֆլիս ու Բաքու, բայց կգործեին Հոգեկան նվիրումով և Հաճախ մեծ ճիգ կթափեին:

Պետական արդի այս կազմակերպությունները անշուշտ որ կուտան թե՛ գեղարվեստական գործին և թե՛ մարդոց որոշ առավելություններ ու Հարմարություններ. գոնե գեղարվեստին նվիրված մարդուն Հացը ապաՀովված է և գեղարվեստագետը ուրիշ գործերով զբաղվելու Հարկադրված չէ , ինչպես սովորական երևույթ էր նախորդ շրջաններուն: Այս առավելության դեմ սիսթեմը ունի նաև իր բացասական կողմերը. ամեն ինչ շուտով կվերածվի ձևապաշտության. մեծագույն մասը կնային իրենց գործին

վրա պաշտոնյայի պես. և քանի որ ամսականը կա՝ չափեն ավելի սիրտ հատցնելը ավելորդ կզգացվի, մանավանդ երբ մարդոց ապրուստն ալ խիստ համեստ է և հոգիները կծկված:

Խոսելով հատկապես հոս մեզի հետաքրքրող գեղեցիկ գրականության մասին՝ պետք է աչքի առաջ ունենանք, որ իր ներքին էությամբ շատ տարբեր է գիտական գրական աշխատանքեն: Խմբվիլը, աշխատանքի բաժանումը, համալսարանն ու կազմակերպվիլը թեև կուտա գիտնականին: Այդպես չեն սակայն բանաստեղծները, վիպասանն ու թատերագիրը: Նախ՝ բնավ չեն սիրեր ուսուցչական ու նման գործերը, չեն սիրեր պարտադրված ժամերն ու ժամանակները. չեն սիրեր ու պետք չունին վերին մարմիններե եկած խորհուրդներու և ծրագիրներու: Իրենց սիրածը իրենց հոգիեն միայն կբղխի. շատ ավելի քմայնոտ են և շատ չնչտված կերպով անհատական, քանի որ ինչ որ ստեղծելու են՝ պիտի ստեղծեն իրենց ապրումներու պրիզմակին մեջեն:

Եվ վերջապես գիտական աշխատանքը ռեժիմի պահանջներուն անցողակի կքսվի, գլխու թեթև խոնարհությամբ մը կրնա քովեն անցնիլ, մինչդեռ գեղեցիկ գրականությունը կյանքեն ու կյանքի իրականութենեն կցայտե և կյանքն ու կյանքի իրականությունը կցայտեցնե. որով և հեղինակի անձը, զգացումը, դատումը և շրջապատող կյանքին ու պայմաններուն պատկերացումը միշտ սերտորեն հյուսված են իրարու և ատոր մեջն է գեղարվեստական գրվածքի մը խորքն ու գեղեցկությունը:

Արդ՝ այս տեսակ մարդ մը, երբ չի կրնար ըսել՝ ինչ որ ըսել կուզե, երբ չի կրնար ներկայացնել կյանքն ու աշխարհը, ինչպես ինքը կտեսնե ու կըմբռնե, արդեն շատ դառն հոգեկան վիճակի մը մեջ է, և իր ստեղծագործության մեջն ալ կմտնեն սուտն ու շինծու տարրերը: Իսկ երբ կտեսնենք, որ գրե անպատճառ պետական պաշտոնյաներուն միայն ուզածը, գովե ու փառաբանե անպատճառ պետության տեսակետներն ու պետական մարդոց ճառերն ու գործերը և հակառակ պարագային կնկատվի հանցավոր ու հալածանքի կենթարկվի, այլևս գրական մարդը կկորսնցնե իր ազատ հոգին և գրական երկն ալ իր իմաստը. հեղինակը կդառնա պղնձե շեփոր մը, որուն մեջեն ուրիշները կփչեն. ինչքան ալ պղնձե շեփորը

գեղեցիկ շինված ըլլա գիրք և անուշ ձայն ունենա՝ արժեքը խեղճ է:

Գրությունը մը այս չափազանցության համած ըլլա թե ոչ՝ միևնույն է, մեր արևելյան գրականության երրորդ շրջանի մասին խոսելու ատեն միշտ պարտական ենք ռեժիմի բերած այս առանձնահատկությունը աչքի առաջ ունենալու:

Շատ աչքի կընկնի նմանապես, որ այս շրջանի մեր բանաստեղծության մեջ հայրենասիրական զգացումը փոխած է հիմա իր աշխարհագրությունը: Մեր նախորդ շրջանի բանաստեղծները «ռոմանտիզմով» ու համեստորեն մեր հայ հողերը կփրկեին ու կերգեին իբրև հայրենիք. այս նոր շրջանի մեր բանաստեղծները շատ լայն սիրտ ունին, հայրենիք մը ըսելով կհասկընան ընդարձակ ու լայնածավալ ամբողջ Ռուսաստանը՝ Քամչատկայեն մինչև Պերլին և այդ հայրենիքը կերգեն վերին հրամանով:

Վեպերուն ու թատերականներուն մեջն ալ «խոնարհ խավերուն» կյանքը պատկերելը ամբողջ դառնությամբ նոր երևույթ մը չէր և՛ ռուս, և՛ հայ գրականություններուն համար. հիմա բնականաբար ավելի շեշտված է բանվորներու և գործարանային կյանքեն նյութ վերցնելը, ինչպես վայել է սոցիալիստական գրականության մը: Նորությունը նյութերու մերձեցման եղանակին մեջն է. ընդհանրապես այդ գրություններուն նպատակը գեղարվեստը չէ, այլ նորեն քարոզչությունը. և այդ աչքով պետք է մոտենալ այդ տեսակի վեպերուն: Եվ ատոր համար է, որ մեր վիպասանները, հնար եղածին չափ գեղարվեստի սահմաններուն մեջ մնալ կարողանալու ճիգով, ավելի սիրով կդիմեն պատմական նյութերուն:

Ինչ կվերաբերի գեղարվեստական երկերու արտաքինին՝ մինչդեռ հայ գործնական ու լրագրական գրություններու մեջ նկատելի է անծայր անփութություն մը հայ լեզվի հանդեպ և բազմաթիվ օտար բառերու և ձևերու բոլորովին ավելորդ ու տգեղ ներխուժում մը, հայ գեղարվեստական երկերուն մեջ, ընդհակառակը, զգալի է շատ տեղ և լավագույն հեղինակներու քով, լեզուն կոկելու և նորացնելու ջանք մը թե՛ ժողովուրդեն առած նոր լեզվական ձևերով և թե՛ արևմտյան գրականութենեն կատարված փոխառություններով:

Իսկ քնարերգութեան մէջ շատ աչքի կիյնա մասնավոր հետաքրքրութիւն մը արտաքինով ու տաղաչափութեամբ. կգործածեն նոր տեսակի չափեր, նոր ձևերով կազմված տուներ, հանգերու խաղեր ու հանգերու արտասովոր ճոխութիւն, ինչպես և բսելու ու արտահայտելու ավելի արդիական կերպեր, որ հաճելի է:

Արդ՝ վերի բոլոր դրական ու բացասական գծերը եթե իրարու միացնենք, եզրակացութիւնը կըլլա, որ հայ ժողովուրդը, ինչպես միշտ և ամեն տեղ, չի դադրիր արժեքավոր մարդիկ արտադրելե, որոնք ամենեն աննպաստ պայմաններու տակ անգամ կշարունակեն աշխատիլ հայ գեղարվեստի ու հայ գրականութեան համար. ինչ չափով և ինչ ձևով որ կրցան: Տաղանդները չեն, որ կպակսին, ինչպես նախորդ շրջաններուն, այնպես ալ այս շրջանին:

Դուրսի ճնշումը և քաղաքական-քաղաքացիական պայմանները կխանգարեն, արվեստական կերպով դուրս կհանեն հայ գրական շարժումը իր բնական ազգային հունեն և շատ օտար քար ու ավազ կլեցնեն մեր անդաստանը, բայց և այնպես հայ հեղինակը ստեղծագործել կջանա և հայ գրականութիւնը խուլ կմաքառի, որ դուրս գա իրեն բռնի պարտադրած այդ խաթարումեն և նորեն իր հարազատ ճամբան գտնել կարողանա:

Այս պայմաններուն մէջ պետք չէ շատ զարմանանք, որ մեծարժեք երկեր ծնունդ չեն առած մեր մայր հողին վրա. պետք է գոհ մնանք, որ հայ գրականութեան մէջ դեռ ունինք գեղեցիկ հայ էջեր, մեջեմէջ իրապես սրտե բղխած երգեր և անտարակույս տաղանդավոր դեմքեր:

Այս շրջանի ամենեն կարևոր անուններուն մեկ մեծ մասը դեռ նախորդ շրջանեն սկիզբ առած կամ արդեն հայտնի դարձած հեղինակներ են, ինչպես Դերենիկ Դեմիրճյան, Ստեփան Զորյան, Եղիշե Չարենց և Լեռ Կամսար: Այս շրջանին երևցած ու սիրելի, դեմք էր Ակսել Բագունց. այս շրջանի դեմքեր են նույնպես Գուրգեն Մահարի, Վաղինակ Նորենց, Ազատ Վշտունի, Նաիրի Զարյան, Ալազան: Կան ավելի ևս նոր անուններ և ըստ երևույթին խոստմնալից, որոնց դերն ու արժեքը հաջորդ շրջանին լրիվ կըացվի Բորյան, Գոչար, Կապուտիկյան, Շիրազ, եթե միայն ռեժիմը չի թումեցնե:

* * *

Առաջին միջազգային պատերազմին վերջերը Ռուսաստանի մէջ տեղի ունեցող պոլշեւիկեան ցնցումներն ու ներքին պատերազմները պահ մը կտրեցին կովկասեան ժողովուրդները ռուսական տիրապետութենէն և կազմեցին ազգային անկախ փոքր պետութիւններ: Երկու-երեք տարի հետո, երբ զօրացած ու հաղթական պոլշեւիզմը շարժվեցավ նորէն դէպի Կովկաս, այդ նորաստեղծ ազգային անկախութիւնները ավելի կամ պակաս դիմադրութենէ մը ետքը մէկը միւսի ետեւէն պարտուեցան և ստիպուեցան տեղի տալ ռուս պոլշեւիկեան մակընթացութեան առջև: Ազգային կառավարութիւններուն վարիչները, աչքի ինկող դէմքերը և զինվորութիւնը և բոլոր անոնք, որոնք այլեւս չէին կրնար մնալ Հայաստան, տասը հազար հոգիի մը չափ, ձգեցին իրենց հայրենիքը, անցան Պարսկաստան և հոնկէ ալ ցրիւ եկան արաբական ու եւրոպական պետութիւններու մէջ, մինչեւ Ամերիկա:

Ասոնցմէ շատերը հայտնի մտաւորականներ էին՝ կա՛մ զէնքի, կա՛մ գրչի կարեւոր դէմքեր, որոնք գործօն մասնակցութիւն էին ունեցած իրենց ժողովուրդի ու անկախ պետականութեան շարժումներուն մէջ: Ասոնք օտարութեան մէջ ակամա անգործութեան դատապարտուած՝ բնական կերպով դիմեցին գրչին կա՛մ իրենց ապրումներն ու դիտողութիւնները գրի առնելու համար ու պատմութեան հանձնելու, կա՛մ պարզապէս գրչի աշխատանքով իրենց հոգին զբաղեցնելու համար:

Ասով ալ առաջացաւ արեւելեան բուն երկրի գրական ճիւղերուն զուգընթաց՝ վտարանդի արեւելեան գրականութիւն մը արեւմտեան մեր վտարանդի գրականութեան քովն ու շուրջը, գրեթէ բոլոր հայ գաղութային կարեւոր կեդրոններուն մէջ: Բայց չորս կէտի մէջ է գլխաւորապէս գործած այդ արեւելեան հայերէնով կատարվող տպագիր գրականութիւնը. ամենէն առաջ Պոսթոնի «Հայրենիքի» մէջ, թէ՛ օրաթերթ և թէ՛ մանաւանդ ամսագիր. երկրորդ՝ Գահիրէի «Յուսաբեր» օրաթերթի մէջն ու շուրջը. երրորդ՝ Փարիզի մէջ և հատկապէս «Վէմ» ամսագրին կից. և չորրորդ՝ Թեհրան, ուր կհրատարակվեր «Ալիք» օրաթերթը, «Լոյս» ամսագիրը, «Նոր

Հասկեր» մանկական-պատանեկան ամսագիրը և ուրիշ մեկ-երկու կարճատև պարբերականներ:

Այս թերթերուն ու գրությունններուն մեջ եղածը նորեն գլխավորապես Հրապարակախոսական ընթացիկ նյութեր են օրը օրին գրված, բայց կան նաև բավականին երկարաշունչ աշխատանքներ թե՛ Հրապարակախոսական և թե՛ բանասիրական բովանդակությամբ. և քանի մը Հատը արժեքավոր ուսումնասիրություններ:

Նախ՝ մեր Հայրենիքի ու մեր ժողովուրդի գլխուն անցած վերջին դեպքերու վերլուծումն ու բացատրումը իր գնաՀատանքով. կամ քիչ մը ավելի լայն բռնած Հասարակական ու ընկերաբանական ուսումնասիրություններ: Այսպես են Հատկապես Արտաշես Դարբինյանի, ՎաՀան Նավասարդյանի, Սիմոն Վրացյանի, Ալեքսանդր Խատիսյանի, ԱբրաՀամ Գյուլխանդանյանի և Իրազեկի աշխատասիրությունները: Ինչպես և Անդրանիկի, ՍեպուՀի, ՆժդեՀի, Կոմսի և ուրիշներու գրի առած Հիշողությունները:

Երկրորդ տեսակ մը կկազմեն գրական դեմքերու և գրական շարժումներու շուրջ կատարված գրական-քննադատական աշխատանքները, ուր Հատկապես պետք է Հիշվին Ռուբեն Պերպերյանի գեղեցիկ գրքերը Միքայել Նալբանդյանի ու Գամառ-Քաթիպայի կյանքն ու գործը նկարագրող:

Այլև Հատուկ կերպով պետք է Հիշվի Հայագետ ու բյուզանդագետ Նիկողայոս Ատոնցի անունը, որ բոլորովին բացառիկ արժեքով գիտական մեծ դեմք մըն է: Թեև իր երկերուն մեծագույն մասը և ամենեն կարևորները ռուս և եվրոպական օտար լեզուներով է Հրատարակած և մեկ փոքր մասը միայն Հայերեն, բայց իր բոլոր գրություններուն մեջ Հայն է, որ կխոսի և Հայերուն Համար, առանց վայրկյան մը գիտությենեն շեղելու:

Գալով գեղարվեստական գրականության՝ գեղեցիկ գրականության երեք պաշտոնական տեսակներն ալ իրենց աշխատավորներն ունին տարագրության մեջ: Քնարերգուներու անուններ կան բավական, բայց անոնց երգերեն շատ քիչերը կբարձրանան սովորականի ու ընթացիկի մակերեսեն վեր. և ընդՀանրապես իրենց մուսաները Հոգնած թևեր ունին. և ամենուն ալ Հոգիները խանձված են Հայրենիքի բուռն ու սուր կարոտեն:

Թատերագիրները, ինչպես միշտ, քիչ են. և եղածներն ալ ուրիշ գործի մարդիկ են, որ բեմական երկ մըն ալ փորձել կուզեն կա՛մ ներքին քմայքով, կա՛մ գրագետի խարխափող որոնումով մը. ասոնք բոլորը Հայ գեղարվեստով զբաղվողի մը համար հետաքրքիր վկայություններ են, բայց ավելի գեղարվեստի պատմության կվերաբերին, քան ապրող գեղարվեստի:

Գեղեցիկ գրականության մեջ շատ ավելի շեշտված հաջողություն ունեցան վիպական երկերը. և հոս ալ տիրապետողը երկարաշունչ վեպերն են: Վերլուծելու, մանրամասնելու ընդհանուր տրամադրություն մը զգալի է ամեն կողմ թե՛ կյանքի արտաքին երևույթներու ավելի խոր ու մանր քննությամբ և թե՛ ներքին հոգեկան ապրումներու և վիճակներու ավելի նուրբ ու խորամուխ նկարագրությամբ:

Ոմանք ավելի պարզ պատկերացումով և ավելի առօրյա լեզվով ու ոճով կկատարեն այդ աշխատանքը, ինչպես Ռենն է ու Վալտեր Վալտայանը իրենց վեպերուն մեջ: Ուրիշ մը հոգեբանական ու գեղարվեստական նոր արտահայտություններ գտնելու և նոր զգայություններ բանալու հետևն է ինկած, ինչպես Կոստան Զարյանը, որ անշուշտ հոգեկան ավելի թափ ունի և նոր բարձրություններու հանդգնոտ որոնում մը:

Երբ այս վտարանդի երկերն ու ստեղծագործություններն ալ միացնենք մայր հողի վրա կատարված աշխատանքին՝ կստանանք շատ ավելի բազմակողմանի և ավելի հարուստ գրական փունջ մը մեր վերջին շրջանի արևելյան գրականության համար:

ԻԲՐԵՎ ՎԵՐՋԱԲԱՆ

ՄԵՐ ՎԱՂՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախորդ Հատվածներուն մեջ գծված և ընդգծված իրողությունները եթե ուզենանք մեկ-երկու վերջին եզրակացություններու մեջ խտացնել՝ նախ Հարկ կըլլա գեղարվեստական բանաՀյուսությունը զատել ոչ-գեղարվեստական գրություններեն:

Հայ գրիչը Հազար Հինգ Հարյուր տարիե ի վեր շարունակ գործեր է ու դիզեր է նախ գրաբար լեզվով աՀագին գրականություն կրոնական ու պատմական բովանդակությամբ քրիստոնյա Հայրերու ձեռքով և քրիստոնեական ներշնչումով, որոնք բնավ ետ չեն մնար եվրոպական ժողովուրդներու Համապատասխան գրություններեն: Իսկ այս վերջին երկու-երեք դարերու ընթացքին ալ թե՛ գրաբար և թե՛ մանավանդ մեր նոր գրական լեզուներով մեծ ճիգեր է ըրած դարուս գաղափարներով մոտենալու մեր կյանքի զանազան Հարցերուն ամեն ուղղությամբ՝ գիտական, քննական և Հրապարակախոսական աշխատանքով բարձրացնելու Հայ միտքը և ազնվացնելու մեր կյանքին պայմանները:

Ինչքան ալ կարևոր դեր խաղցած ըլլան այս Հին ու նոր Հարատև ջանքերը Հայ ժողովուրդի մտավոր վերելքը ապաՀովելու Համար, ինչքան ալ սիրելի ըլլան մեզի շարք մը անուններ՝ պատմիչ, մատենագիր, խմբագիր ու Հոդվածագիր, և ինչքան ալ Հարգանքով ու գնաՀատանքով մոտենանք անոնց թափած թանկագին աշխատանքին, բայց և այնպես պետք է ըսենք, որ Հայ բանաՀյուսական արտադրություններուն մեջ առաջնությունը, ստեղծագործական թափը և առանձնաՀատուկ կարևորությունը իբրև Հայկական արժեք, կեդրոնացած է Հայ գեղարվեստական բանաՀյուսության վրա մինչև մեր օրերը: Եվ այդ գեղարվեստական ստեղծագործություններուն վրա աշխատած են Հայ ժողովուրդի բոլոր խավերը. և՛ անգիր, և՛ գրավոր բանաՀյուսություն, և՛ ժողովրդական, և՛ գուսանական, և՛ անՀատական ճիգ. մինչ գործնական ու գիտական

գրությունները միայն գրագետ նեղ դասի հոգածությունն ու աշխատանքը կներկայացնեն:

Հայ ժողովուրդը, իր ամբողջությամբ առած, իր ծագման օրեն մինչև այսօր անընդհատ իր կյանքի բոլոր երևույթներու ընթացքին սիրած է միշտ երգել ու վիպել. ինչ որ նշան է հոգեկան թարմության և ընդունակության: Բանահյուսական գեղարվեստը եղած է իր հոգիի մշտական զբաղումներեն մեկը:

Մինչև գրերու գյուտը միայն անգիր ստեղծագործություն է, հազար տարի և ավելի: Ե դարու սկիզբեն այդ անգիր բանահյուսության զույգ կերթա գրավոր-անհատական բանաստեղծությունը: Եվ շնորհքը բնավ պակսած չէ մեր անհատ քնարերգուներուն գրչին ծայրը: Նարեկացին և Սայաթ-Նովան, որոնք անհատական ստեղծագործության մեջ շատ բարձր լեռնային գագաթներ են, մինակ չեն սակայն. անոնց շուրջը կան խումբ մը նվազ բարձրությամբ, բայց շատ արժեքավոր ու շնորհալի տաղերգուներ՝ հոգևոր ու աշխարհիկ:

Բայց և այնպես երբ երևույթը կառնենք իրենց ընդհանուր ամբողջությանը մեջ՝ պետք է ըսենք, որ մինչև ԺԹ դարուն կեսերը իր առատությամբ, իր խորքով ու իր հայկական արժեքով հայ ժողովուրդի գեղարվեստական բանահյուսության հիմքը կկազմե անգիր բանահյուսությունը: Գուսանական հեթանոս վիպասանությունը, Դ դարու անգիր վիպասանությունը, միջնադարյան «Սասնա ծռերը», միջնադարյան հայրեն անտունիները և ավելի ուշ դարերուն մեր արդի անգիր բանահյուսությունը: Աս է հայ բանահյուսության հիմնաքարը մինչև մեր արդի նոր գրականության ծաղկումը: Հիմա է միայն հազիվ դար մը, որ նոր լեզվով մեր նոր գրականությունը եղած է մրցումի անգիր բանահյուսության հետ և իսկ կուզե անոր ձեռքեն առաջնությունը և՛ խորքով, և՛ արժեքով, և՛ արվեստով:

Իսկ անգիր բանահյուսության մեջն ալ մինչև մեր պետականության կորուստը մայր հողին վրա՝ ավելի դեր ու կարևորություն ունեցողը բուն երևույթին եղած են գուսանական ու ժողովրդական վեպերը: Մինչ հաջորդ դաժան դարերուն աստիճանաբար անտեր դարձող ժողովուրդի շրթունքին եղածն ու դար-

դացածը քնարական ստեղծագործություն է: Այդ դարերուն նույն է երևույթը նաև անհատական գրավոր բանաստեղծության մեջ. զուտ քնարական է խորքն ու էությունը: Եվ նորեն մեր արդի նոր գրականության օրերուն է, որ առաջնությունը կթնքի վերստին դեպի վիպումը. և բոլորովին նոր արդիական տեսակներով, առանց սակայն քնարերգության թափը կոտրելու: Թուրանական ծանծաղուտեն դուրս ելելն է, որ տված է մեզի Աբովյան ու Սունդուկյան և անոնց գործը շարունակողները:

Արդ՝ երբ մեր ժողովուրդի այս երկու-երեք տասնյակ դարավոր գեղարվեստական հարուստ աշխատանքին խորքը կնայինք, ըլլա հին թե նոր, ըլլա անգիր թե գրավոր, կրնանք ըսել հպարտ վստահությամբ, որ հայ ժողովուրդի բանահյուսական ու գեղարվեստական հակումներն ու կարողությունները զույգ ու հավասար կերթան ամենեն ընդունակ և ամենեն քաղաքակիրթ ազգերու բանահյուսական ու գեղարվեստական կարողություններուն:

Նրբազգաց, խորունկեն ապրող, ճաշակի ու լեզվի տեր, պատկերել գիտցող և ստեղծելը սիրող ժողովուրդի մը հոգին ունի հայը. և ատոր համեմատ ալ եղած է իր բանաստեղծությունը:

Գիտությունները հետզհետե և իրար ետևե սկսած են ընդգծել հայ ժողովուրդի դարերու ընթացքին հայտ բերած կարողությունները լինչպես զինվորական, վարչական և արդյունաբերական ասպարեզներուն վրա, այնպես ալ միտքի ու արվեստի աշխարհին մեջ՝ հատկապես ճարտարապետության, երաժշտության և բանահյուսական արվեստի մարզերուն մեջ: Այս ընդունակությունները սերտ առնչություններ ունին իրարու հետ և անկասկած կբղխին ցեղային նույն աղբյուրեն: Հայ մարդը, ամեն մեկը իր գործած ասպարեզին վրա, ամեն տեղ ալ քիչ-շատ գիտե իր արժեքը, գիտակից է իր հոգեկան առավելության, բայց կվերագրե իր կարողությունները ընդհանրապես իր անձին ու իր մասնավոր շնորհքին կամ ստացած կրթության: Շատ քիչերը միայն հստակորեն կըմբռնեն, թե իրենց ունեցած շնորհքն ու կարողությունը ազգային դրամագլուխ մըն է, որ դարերը բերեր ու հանձներ են իրենց, և որ իրենք պարտական են խնամքով գործադրելու և աճեցնելու: Ցեղային ժառանգական կարողություններու պայծառ ու վստահ

գիտակցումը մեծ հանրային ուժ է, մեծ մղում մըն է դէպի վեր, դէպի նոր ճիգեր ու դէպի նոր ու աւելի բարձր ստեղծագործութիւն:

* * *

«Դէպի նոր ու աւելի բարձր ստեղծագործութիւն»:

Ասով ալ հրաժեշտ կառնենք անցեալէն ու միտքը կանցնի ապագայի հողերուն՝ «մեր վաղուան գրականութեան», ինչպէս որ կըսենք սովորաբար գալիք մէկ-երկու դարերը օրուան մը մէջ խտացնելով:

Ապագայի մասին խօսիլ կնշանակէ հիմնուիլ պատմական աւելի կամ նուազ խորատես ենթադրութիւններու վրա, ուր միշտ մեծ է մարդուս հաւատքին ու ցանկութիւններուն խաղցած դերը գիտակից թէ անգիտակից կերպով: Այդ պատճառով ալ իմաստուն մարդիկ կզգուշանան այդ տեսակ խախուտ հողի վրա շէնք կառուցանելէ:

Բայց եկուր տես, որ այդպէս իմաստուն ըլլալը ամենուն թոյլատրելի չէ: Տիրողներն ու հզօրները կրնան «իմաստուն» ըլլալ կամ ձեւանալ. մեզի նման դարերով բռնաբարուած ու անիրաւուած փոքր ժողովուրդ մը այդ «իմաստութիւնը» ունենալու շռայլութիւնը ունենալ չի կրնար: Ներկայէ զուրկ՝ ան իր բոլոր կառուցումները միայն վաղուան վրա կրնայ կերտել. իր ներկան անգամ վաղուան վրա է կերտուած:

Կամա-ակամա մեզմէ ամէն մէկը պիտի մտածէ վաղուան մասին: Եւ կմտածէ:

Մեր այդ վաղուան կեանքի ու մեր գրականութեան ապագայի վերաբերմամբ հոս ու հոն երբեմն շատ հակահակ զգացումներ կարտահայտուին:

«Մեր հայրենիքի մեծագոյն մասը դարձած է աւեր. հայ չկայ: Դեռ հայ եղած փոքր մասին մէջն ալ ինքն իր գլխուն հաւնած ռեժիմ մը օրէ օր հայութիւնը այլասերելու եւ փճացնելու վրա է, քանդելով ընտանիքն ու ամուսնութիւնները, քանդելով ժողովուրդի ֆիզիքական առողջութիւնը, ապականելով անոր հոգին ու կեանքը եւ ցրիւ տալով երիտասարդութիւնը: Իսկ ամէն կողմ փռուած հայ

գաղթականներու նոր սերունդները օրե օր կօտարանան Հայ լեզվին ու Հայ Հողին օտար կրթության և օտար շունչի տակ: Հայութենեն շուտով բան չի մնար»:

Աս է ատոնց մտածումին խորքը, որ շատ դժվար է ժխտելը կամ մեղադրելը: Բայց որ ինքնին շատ անօգուտ ու վնասակար Հոռետեսություն մըն է:

Հայությունը տեսած ու ապրած է մեր արդի ծանր պայմաններուն նման շատ դժվար օրեր և շատ երկար դարեր: Հալածվեր է, ջարդվեր է, դարձեր է տեղե տեղ քշվող, թափառական ու գաղթական, կորսնցուցեր է իր թիվը, իր Հողը, իր լեզուն և իր ազգային ինքնութենեն կարծես չի մնացեր ոչ մեկ Հույս: Բայց ահա՛ բնավ չսպասված անկյունե մը քիչ մը փոխված են քաղաքական պայմանները, արտաքին ճնշումը թեթևացած է պահ մը և ազգային գիտակցությունը խուլույն սկսած է նորեն խլրտիլ և թև են առած ազգային ձգտումներն ու ճիգերը և ժողովուրդի թիվն ու կորովը:

Ապրող ժողովուրդ մը երբեք իրավունք չունի վաղվան վրա Հուսահատ ըլլալու: Անիմաստ ու անօգուտ բան մըն է նստիլ ու մտածել, թե մահ ու ոչնչացում կա գլխուս վրա կախված: Միակ իմաստ և օգուտ ունեցող բանը մաքառիլն է եղած սպառնալիքին դեմ: Մեր նախորդ և մեր Հաջորդ սերունդներուն Հանդեպ մեր միակ պարտավորությունն է տոկալ ու մնալ: Դիմադրել ամեն ճնշումի օրվան թելադրած բոլոր զենքերով. և պայքարիլ իր ուժերու լիակատար արծարծումին Հասնելու ջանքով: Աս է ամեն ապրող էակի, ամեն բույսի ու կենդանիի Հարատևության ու զարգացման Հիմնական օրենքը. ավելի ևս երբ Հարցը մեզի նման Հին ու արժեքավոր ժողովուրդի մը տևականությանը կվերաբերի:

Իրավ է, ուրախ և առողջ պատկեր մը չէ Հայուն այսօրը մեր արդի իրականությունը, որ կողմն ալ որ նայինք: Բայց արդար ըլլալու Համար պետք չէ մոռնանք, որ գոնե ինքնագիտակցության և մշակութային տեսակետեն մեր այսօրվան վիճակը անՀամեմատ ավելի բարձր է ու լուսավոր, քան ինչ որ էր երեկը թուրանական դարերու ծոցին մեջ:

Վստահ ըլլանք, որ շատ ավելի լեցուն ու առողջ պիտի ըլլա Հայուն վաղվան կյանքն ու վիճակը, ո՛չ միայն մշակութային

տեսակետեն, այլև իբրև ուրույն ժողովուրդ և ուրույն պետականություն. որովհետև վաղվան համամարդկային կյանքը ինքը ուրիշ պիտի ըլլա, ուրիշ պիտի ըլլան ընկերային ըմբռնումները և պետական կազմը, նոր հիմքերու վրա և շատ ավելի իրարու օղակված, շատ ավելի մարդկային ու շատ ավելի ազատ ու բարձր:

Պետք չէ խաբվինք մարդկային քաղաքակրթության այս անճոռնի խրտվիլակեն, որ հիմա տնկված է մեր դեմը: Հիմա որ կողմ ալ որ նայինք՝ ամեն տեղ ալ դող ու վայրենի բռունցք մըն է միայն մեր տեսածը. բռնակալություն, կամայականություն և փոխադարձ ատելություն. և միայն մենք չենք անիրավված ու բռնատիրված: Ամեն տեղ ալ տիրողը սանձարձակ ուժն է ու կեղծիքը ու լկտի քրքջող անօրինությունը. ամեն տեղ ալ բարձրագույն սկզբունքը զարնել ու փշրել է, ուրիշներուն գլուխը ուտելը, ուրիշներուն աշխատանքը հափշտակելը՝ և՛ ազգային, և՛ անհատական: Այսինքն՝ արդեն չափազանց հինցած մարդ-անասունի դարերեն եկող անսանձ ու անսահման եսականություն մը:

Իրա՛վ է, ա՛ս է ամեն տեղ մեր տեսածը հիմա. բայց ո՞վ ըսավ, որ աս է մարդուս հասած քաղաքակրթական բարձրությունը, ո՞վ ըսավ, որ աս է մարդկության ուզածն ու տենչացածը: Իսկական մարդկայինը, արդի իսկական քաղաքակրթությունը այդ հափշտակության ու բռնատիրության մեջը չէ, այլ այն խորին ձգտումին մեջը, որ ամենքը դուրս գալ կուզեն այս վիճակեն, դժգոհ են ու զզված են ամենքը, կփնտրեն, կխարխափեն, նորել կուզեն ամեն ինչ: Հոգիները բուռն կարոտ ունին հաշտ ու մարդավայել ընկերային հարաբերություններու, ունին տենչանքը տնտեսական ու պետական հիմնապես նոր կազմակերպության:

Հոգիներու այս յարումը այսպես երկար շարունակվիլ չի կրնար. ժայթքի պիտի. պիտի գան նոր կարգեր, նոր իտեալ, նոր վարդապետություն ու ռեժիմներ: Մարդկային բողոքող միտքն ու խիղճը, մարդկային ավելի նուրբ զգացումները կգործեն ու կքալեն. ու կքալեն դեպի ազգերու փոխադարձ սերն ու համախմբումը, դեպի հարգանքը բոլոր ազգերու ազատ անհատականության: Ո՛չ թե բաց կամ գող ցանկություն իրմեն փոքր եղող ազգերը ցրվելու, ճզմելու ու կուլ տալու, որ միշտ եղած է վայրենի քաղաքակրթու-

թյուններուն երազը, այլ ինչպես անհատներու, այնպես ալ ազգային անհատականություններու ուրույն ու ինքնահատուկ գծերը որոնելու, խնայելու ու բարձր գնահատելու ըմբռնումը:

Անսահման տարածությունները օրե օր կփոքրանան, մեկ-երկու ժամեն վրայեն կթռչինք, իսկ ռատիոն մեկ-երկու երկվայրկյանեն: Բոլոր ժողովուրդները սերտ կսեղմվին իրարու ու մշտական շփման մեջ կմտնեն օրե օր ավելի: Այդ շփումեն հոգիները կեռան և նոր տենչանքներ մարմին առնելու կձգտին համաշխարհային արդի քաոսին մեջեն դեպի ավելի վե՛ր:

Ինչ որ վեր կձգտի՝ անիկա միայն բարիք կրնա բերել հայուն: Պետք է դիմադրել ամեն վարանքի ու ամեն հոռետեսության: Ինչքան կուզե համեստ ըլլա մեր թիվն ու կրցածը՝ մենք պետք է միշտ ձգտինք ու աշխատինք անընդհատ մարդկության ամենեն ընտիր մասին հետ դեպի մարդկային այդ նոր բարձունքները: Կապրին այն ժողովուրդները, որոնք ապրելու կամքը ունին. և ապագան անոնցն է, որոնք ձգտիլ ու տքնիլ գիտեն դեպի վեր:

«Բայց ե՞րբ, բայց ե՞րբ են գալու այդ օրերը», - կպոռա մեր հայու հոգին, որ շատ է տառապած, շատ է հուսախաբված և շատ է անհամբեր: Անշուշտ գալիք այդ խոր տնտեսական ու քաղաքական փոփոխությունները վազել ու հասնիլ չեն կրնար այսօր մեր անհամբերության ետևեն: Բայց ինծի կթվի, որ այդ նոր ժամանակները այնքան ալ հեռու չեն մեզմե. Նախ եսականությունն ու բռնությունն ալ սահման մը ունին, որուն կարծեմ «քաղաքակիրթ» մարդկությունը հասած է արդեն. երկրորդ՝ պետք չէ մոռնանք, որ ժամանակ ըսվածն ալ հիմա այլևս ոտքով չի քալեր, ան ալ սկսած է թռչիլ սավառնակով:

* * *

Եթե ճշմարիտ որ աս է «վաղվան» իրականությունն ու պայքարը, եթե իրավ որ ավելի բարձր ու ավելի մարդկային քաղաքակրթության մը հասնելու համար պիտի մղվի կռիվը, եթե ճիշդ է, որ ավելի դաշն ու համայն գործակցության մը կդիմեն բոլոր ժողովուրդները, հոտկե արդեն ինքնին կբղխի, թե ինչ է ըլլալու

վաղվան գրականությունը ընդհանրապես ամեն տեղ և թե մասնավորապես ինչ է ըլլալու մեզի նման փոքրաթիվ, տիրված, գրկված ու ճնշված ժողովուրդի մը վաղվան գրականությունը:

Ո՞րն է ըլլալու իր ղեկավար ուղղությունն ու հիմնական նյութը: Նյութերուն նյութը բոլոր երգերու, բոլոր վեպերու, թատերակներու, ինչպես և գործնական ու գիտական գրություններու. ի՞նչն է ըլլալու ատոնց խորքն ու ծուծը:

Մեր վաղվան գրականությունը իր ամբողջության մեջ բողոք մըն է. պահանջ մը մարդկային իրավունքի, մարդավայել կյանքի, պետական անկախ գոյության, ինչ չափով որ անկախությունը հնարավոր է հետզհետե ամեն բանի մեջ իրարու օղակվող ընդհանուր ընկերական կյանքին մեջ:

Մեր վաղվան գրականությունը բուռն պահանջ մըն է. պահանջ մը ներքին ինքնավար կյանքի, մեր երկրին ու մեր անձին ու գործին տերը ըլլալու. պահանջ մը աշխատանքի ազատ կազմակերպման, տնտեսական ներքին բարձրացման և աշխատավորի մարդավայել բարեկեցության. պայքար ամեն ստրկացման, մեքենայացման ու շահագործման դեմ:

Մեր վաղվան գրականությունը կարոտ մըն է, կարոտի բուռն երգ մը հոգիի ազատության, մտածումի ու զգացումի ազատ արտահայտության, կյանքի ու իրականության շիտակ պատկերացման. նողկա՜նք մը ամեն կեղծիքի, ամեն չարի, ամեն բռնադատության դեմ:

Աս է տիրական ճիչը, հիմնական նյութը, հաստ ու կարմիր թելը մեր գալիք գրականության: Տեղ-տեղ ուժգին ու մերկ պատկերացումով, տեղ-տեղ ավելի զուսպ ու զգաստ, ավելի հանգիստ գծագրությամբ, երբեմն ավելի քողերու տակ պլլված՝ նայելով կյանքի ու վայրկյանի տված հնարավորության: Բայց ա՛ս է ըլլալիքը, քանի որ բերանը կխոսի, ինչ որ հոգիին մեջ կհորդի:

Ճշգրտության և ճշմարտության այս գալիք պաշտամունքը իր հետ պիտի բերե հոգեբանական ավելի խոր ու ավելի նուրբ վերլուծություն, երևույթներու ավելի բազմակողմանի ու հարուստ թափանցում, ինչպես և անհատական ու անձնական մերձեցում ամեն խնդրի, իր խելքովը դատելու, իր աչքերովը տեսնելու իրա-

կանությունը և ո՛չ թե ուրիշներու բանածը կամ հրամայածը թութակելու:

Իսկ այս բոլորի գումարը կդառնա գրական նոր բարձրացում, որ պիտի պահանջե արտահայտության նոր նրբություն և արվեստի կատարելագործում, այսինքն՝ ավելի բարձր գեղարվեստական ստեղծագործություններ, ինչպես և ավելի ազատ ու խորունկ գիտական երկեր:

* * *

Այս ավելի ընդհանուր դատողություններուն ու սպասումներուն կից՝ կան մեկ-երկու ավելի մասնավոր իրողություններ ալ մեր վաղվան գրականության կապված, որ արժե ընդգծել և որոնք ավելի կեդրոնացում և ուժ են տալու մեր վաղվան բանահյուսական երկերուն:

Նախ՝ մինչև հիմա մեր նոր գրականությունը դարձած է երկու առանցքի շուրջ երկու տարբեր գրական լեզուներով: Մեր վաղվան գրականության մեջեն վերնա պիտի այդ բոլորովին ավելորդ ու վնասակար երկվությունը և ամբողջ հայության կյանքն ու միտքը իր արտահայտությունը պիտի գտնե մեկ գրական լեզվով մը:

Մենք հիմա ունինք հայկական անկյուն մը, ուր կա կառավարություն հայ լեզվով, հայ դպրոցներով, լրագիրներով, գրականությամբ ու համալսարանով, ինչքան ալ կուզե սեղմված ու կաշկանդված ու աղավաղված ըլլան իր ներքին պայմանները: Այս առավելություններով օժտված գրական լեզվի մը դեմ դիմանալ չի կրնար քառասուն տեսակի ազգերու մեջ ցրված, օտար գրականություններու և օտար դպրոցներու մեջ կորսված մեր արևմտյան հայ լեզուն ու իր գրականությունը:

Բավական է, որ հայրենիքի դռներն ու պատուհանները իրապես ու լայնորեն բացվին, որ մեր Հայրենիքեն թերթերը, գրքերը, լույսն ու գիտությունը ազատ հոսին դեպի գաղութները և ողողեն ծարավ գաղութահայությունը. և մանավանդ վերնա մեր Հայրենիքին մեջ միակ կուսակցության մը տխուր մենատիրությունը և

մեկ վարդապետության մը բանի մենախոսությունը և բնական ազատություն տալի ամենուն մտածելու, ըսելու ու գրելու, ինչ որ կզգա ու կերազե, որ մեր արևմտյան գրականությունը կորսնցնե խոսուն իր գոյության իրավունքը. և ամենքը մտիկ ընեն երկրեն եկած ձայներուն և կամա թե ակամա կրկնեն անոր լեզուն:

Ինչքան ատեն որ Հայրենի Հողին դաները կռնակին վրա չրացվին, ինչքան ատեն որ մեր Հայրենի Հողերուն վրա Հայը ազատ մտածելու, ազատ խոսելու ու ազատ գրելու իրավունքը չունենա, ինչքան ատեն որ մեր լեզուն արվեստական կերպով ազավաղեն, արևմտյան գաղութային զատ լեզու ու գրականություն մը ունենալը, ուզենք-չուզենք, կպահե իր գոյության իրավունքը, որ ավելի ազատորեն ու ավելի Հայորեն Հայության տենչանքն ու պահանջը արժեցնել կարողանա:

* * *

Ո՛չ միայն պետք է վերնա խտիրը մեր արդի երկու գրականություններուն միջեն, այլև անշուշտ քիչ մը ավելի դանդաղ, բայց վերնա պիտի նաև խտրությունը անգիր ու գրավոր ըսված գրականություններուն միջեն:

Գրական լեզվով եղած գրականութենեն անջատ և անոր զուգընթաց բարբառական-ժողովրդական անգիր բանահյուսության մը գոյությունը պիտի տևե այնքան ժամանակ, որքան ատեն որ «Հասարակ» ըսված ժողովուրդը՝ գյուղացին ու արհեստավորը, զուրկ են լուրջ ուսումե, կապրին չափազանց ու երկարատև աշխատանքի մը տակ կքած, տնտեսապես խեղճ և կենցաղական ստորին աստիճանի մը վրա:

Եվ միայն տնտեսական ձևափոխություններով և քանի մը տարվան նախնական ուսման ծրագիրներով այդ վիճակին խակական դարման մը բերել կարելի չէ: Տնտեսական փոփոխությունները պետք է երթան շատ ավելի խոր և աշխատավորը պետք է դառնան խիստ չափավոր ու մարդավարի աշխատող քաղաքակիրթ աշխատավոր մը. և իր աշխատանքին պտուղը պետք է մնա իրեն, այսինքն՝ գրեթե ամբողջովին գործադրվի իր պետքին, իր վայելքին և իր կրթության վրա, որ մարդը մարդ դառնա:

Եվ ո՛չ միայն գրել-կարդալը պետք է դառնա պարտադիր, որ համեմատաբար շատ համեստ բան մըն է, այլ պարտադիր պետք է դառնա գիտական ու գեղարվեստական լուրջ նախապատրաստություն մը ամեն մարդու համար անխտիր: Գյուղ ու քաղաք ամեն տղա ու աղջիկ մինչև իրենց հասունության տարիքը, մինչև 18-19 տարեկան հասակը, ազատ ամեն հանրային աշխատանքե, պետք է կանոնավոր միջնակարգ ուսում ստանա նոր սկզբունքներով մտածված դպրոցներու մեջ, որ ամբողջ ժողովուրդը դառնա «մտավորական», ինչպես կըսենք հիմա հիմար բառով մը: Արդի բոլոր ընկերային վարդապետությունները կդավանին, թե ժողովուրդն է տերը իր երկրին ու պետության և ամեն ինչ ժողովուրդի համար է: Ասիկա պարապ խոսք մըն է միայն, ինչքան ատեն որ ժողովուրդը կազմող անհատները նեղ ու տգետ աշխարհայացք մը ունին և զուրկ են իրենց դարու կրթութենեն: Տեր մը տեր դառնալու համար պետք է ունենա հոգեկան բարձրացում և տնտեսական բարձրացում: Սո՛ւտ է. չկա սոցիալական ազատություն ու բարձրացում առանց հոգեկան ազատության ու բարձրացման:

Մեր արդի թշվառ պայմաններուն մեջ այս բոլորի մասին մտածելը հեգնություն կթվի և այդ մասին խոսիլը՝ կատակ: Կատակ թե հեգնություն՝ միևնույն է, ամենքը պետք է մտածեն այս բոլորի մասին, մտածեն, տենչան ու ձգտին: Այսօրվան մտածումը վաղվան գործին կամուրջն է, այսօրվան կատակն ու հեգնությունը՝ վաղվան իրականությունը: Այս ճամբով կքալե ժողովուրդներուն իրական ազատությունը:

Երբ հետզհետե ժողովուրդները դառնան իսկապես ժողովուրդ և վերնա միջտեղեն ազգի մը ուսյալ և անուս մասերուն ամոթալի տարբերությունը՝ այն ատեն «անգիր» ու ժողովրդական» կոչվող բանահյուսությունն ալ կկորսնցնե իր իմաստն ու իր անկախ գոյությունը: Գրականությունը կդառնա իրապես մեկ և ընդհանուր: Ամեն հոգեկան արտահայտություն կդառնա ամենուն մատչելի ու ամենուն համար: Ալ չըլլար նույն ազգին մեջ կարծես երկու տարբեր ազգություն: Մե՛կ ժողովուրդ, մե՛կ ընդհանուր կրթություն և մե՛կ ընդհանուր լեզու: Տարբերությունները կըլլան մասնագիտական, տեղական ու անհատական:

* * *

Ժողովրդական բոլոր մասերու ու շերտերու մտավոր աշխատանքին ու արտահայտական ճիգերուն այս կեդրոնացման ու համայնացման զուգընթաց՝ պետք է ընդգծել նաև, որ մեր վաղվան գրականության մեջ ո՛չ միայն ազգային հատկություն-ները պետք է խորանան, այլև համամարդկային հակումները պետք է ուժեղնան:

Ամեն ազգ անհատականություն մըն է, ինչպես արդեն մեկ-երկու անգամ շեշտեցի, իր ուրույն կազմով, ինքնահատուկ գծերով, նուրբ ու նրբին շեղումներով, իր շնորհներով ու թերություններով: Եվ ժողովուրդի մը ամեն արտահայտության, ինչպես և իր ամբողջ քաղաքակրթության վրա կա այդ անհատականության կնիքը: Եվ իր այդ առանձնահատուկ գծերն են, որ կներկայացնեն ամեն ժողովուրդի մասնավորապես հետաքրքիր կողմը. կներկայացնեն իր դեմքը, իր հրապույրն ու գեղեցկությունը: Ինչպես մարդիկ, այնպես ալ ժողովուրդները իրենց այդ անհատական դիմագծովն ու հոգեգծովն է, որ կորոշվին ու կճանաչվին:

Այս պատճառով ալ ժողովուրդի մը բանահյուսությունը ար-ժեք կստանա այն չափով, ինչ չափով որ իր ուրույն գծերը կմարմ-նավորե. մտածողության, զգացումի, կեցվածքի ու վարմունքի ազ-գային առանձնահատկությունները և հոգեբանական ինքնահա-տուկ խորքը կցուցադրե: Ամեն գրականություն ինքնուրույն ու արժեքավոր գրականություն մը դառնալու համար պետք է ըլլա ամենեն առաջ ուրույն գոյություն մը, այսինքն՝ իր ազգային գծերը պահող և ցայտեցնող գրականություն մը: Ամեն հարցի ու երևույթի հայու աչքով ու հայու հոգեբանությամբ մոտեցող:

Ասիկա դուրս է ամեն կասկածե: Բայց այս հիմնական պա-հանջին բավարարած ըլլալը դեռ հերիք չէ, երբ իրապես խոր ու բարձր երկն է մեր փնտրածը: Գրություն մը բարձր թռիչք և լայն հետաքրքրություն ստանալու համար անհրաժեշտ է, որ երկը շոշափե համամարդկային հոգեկան ապրումներ և մարմնավորե համամարդկային հարցեր ու վերլուծե հանուր մարդկությունը զբաղեցնող խնդիրներ, ձգտումներ ու որոնումներ:

Ազգերու մեջ օրե օրր սերտացող կապերը, օրե օր ավելցող հոգեկան շփումը, կրթության ու ընթերցման օրե օր շեշտվող մերձեցումը հետզհետե ավելի պարտադիր կերպով ընդհանուր մարդկային հարցեր, ընդհանուր որոնումներ և իրարու նմանող հոգեկան խարխափումներ պիտի դնեն ամեն ստեղծագործ մտքի առջև: Օրե օր ավելի ու ավելի անկարելի կդառնա քու պատյանիդ տակ քաշված խխունջ գրականություն մը մշակելը:

Արդեն մինչև հիմա ալ արժեքավոր երկերուն մեջ փնտրված է միշտ որոշ չափով մը այդ համամարդկային կողմերուն ներկայությունը. բայց մեր վաղվան գրականության մեջ այս իրողությունը պիտի շեշտվի շատ ավելի հարկադրաբար, եթե կցանկանք, որ մեր ստեղծագործությունը թևեր ունենա մեզի համար և հարգանք պարտադրե նաև օտար ազգերուն:

Մենք ամենքս պարտական ենք հայության վրա նայելու իբրև համամարդկային մեծ ընտանիքի մեկ կարևոր անդամին վրա: Այս պահանջը շատ ավելի ընդգծված պիտի ըլլա մեր հեղինակներուն համար:

Մեր վաղվան գրականության մեջ ամեն թռիչք ունեցող հայ հեղինակի բնական ու հպարտ ձգտումը պիտի ըլլա ո՛չ միայն նոր հարստություն մը ավելցնել ազգային գրականության գանձարանին մեջ, այլև իր նոր հայաշունչ երկովը նոր նպաստ մը բերել համամարդկային բանահյուսական ստեղծագործ որոնումին:

ԴԵՊԻ ՆՈՐ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

«Ընդհանուր ակնարկ մը հայ բանահյուսության վրա» մեծադիր հատորը Շանթը գրել է 1943 – 1946 թվականներին Բեյրութում: Դա հայոց գրականության պատմության մի ինքնատիպ տարբերակ է, որը գլխավոր հետաքրքրություն է ներկայացնում ինչպես կառուցվածքային սկզբունքներով, նույնպես և երևույթների անհատական մեկնաբանությամբ: Ամենից առաջ նկատենք, որ բանահյուսություն հասկացությունը Շանթի ընկալմամբ այլ իմաստ ունի, քան սովորաբար գործածվող ժողովրդական բանահյուսություն-փոլկլոր ըմբռնումը: Ըստ Շանթի՝ ամեն մի հոգևոր ստեղծում բանահյուսություն է, լինի գիտական թե գեղարվեստական, գրավոր թե բանավոր: Այս իմաստով նա գրականության պատմությունը համանիշ է դիտում գեղարվեստական բանահյուսությանը և համատեղում նրա ինչպես բանավոր, նույնպես և գրավոր հոսանքները:

«Հայ կյանքի, լեզվի ու բանահյուսության բնական հատումները» նախաբանում Շանթը առաջադրում է պարբերացման իր սկզբունքները: Հայ ժողովրդի կազմավորման վերաբերյալ հիմք ընդունելով բնիկ ոչ արիական ցեղախմբի և արևմուտքից ներխուժած արիական ցեղերի ձուլման տեսակետը՝ նա հայ էթնոսի վերջնական ձևավորումը վերագրում է մեր թվարկությունից առաջ յոթերորդ դարին և ըստ այդմ հայոց պատմությունը ստորաբաժանում յոթ դարաշրջանների. 1. նախաքրիստոնեական յոթերորդ դարից մինչև երկրորդ դարը (հինգ հարյուր տարի)՝ էթնիկական կոնսոլիդացիայի կամ «հայացման դարեր». 2. նախաքրիստոնեական երկրորդ դարից մինչև քրիստոնեության երրորդ դարը (հինգ հարյուր տարի)՝ անկախության մաքառման կամ «պետականացման դարեր». 3. երրորդ դարի վերջից մինչև յոթերորդ դարակեսը (երեք հարյուր հիսուն տարի)՝ պետականության անկման և կրոնական մաքառումների կամ «քրիստոնեացման դարեր». 4. յոթերորդ դարակեսից մինչև տասնմեկերորդ դարակեսը (չորս հարյուր տարի)՝ արաբական տիրապետության շրջան,

Արծրունիների ու Բագրատունիների թագավորության ստեղծում, արաբական ու բյուզանդական հալածանքներ, կրոնական պայքար. 5. տասնմեկերորդ դարակեսից մինչև տասնհինգերորդ դարակեսը (չորս հարյուր տարի)՝ Պոլսի անկումը, թուրանական տիրապետության շրջան, հայոց իշխանական տների փոխվացումը, ժողովրդի արտագաղթը. 6. Բյուզանդիայի անկումից մինչև 19-րդ դարասկիզբը, Ռուսաստանի մուտքը Անդրկովկաս (չորս հարյուր տարի)՝ հայոց պատմության ամենամռայլ դարաշրջանը, պարսկական և թուրքական կեղեքումների ու ամայացման դարեր. 7. 19-րդ դարասկզբից ի վեր՝ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, հայ ժողովրդի գոյության նոր պայմաններ, հաղորդակցումը «եվրոպական-արիական ոգիին ու ձգտումներուն»:

Ես անհրաժեշտ եմ համարում թվարկել պարբերացման կամ, ինչպես հեղինակն է ասում, «բնական հատումների» այս շրջանները, քանի որ դրանք էական նշանակություն են ստանում բանահյուսության պատմության զարգացման օրինաչափությունները բնութագրելու տեսակետից: Նույնպիսի հիմունքային նշանակություն է տրվում նաև հայոց լեզվի կազմությանը: Շանթը տարբերակում է հայոց լեզվի պատմությունը ներկայացնող երեք շերտ՝ գրաբար, որ ձևավորվել է որպես պետական բարբառ, ապա գրերի գյուտից հետո դարձել բանահյուսության լեզու, բարբառներ, որ ձևավորվելով էթնիկական կազմավորման շրջանում՝ շարունակում են իրենց գոյությունը մինչև այսօր, արդի հայերեն, որ արևելահայ ու արևմտահայ մասնաճյուղերով ներկայանում է որպես բանահյուսության լեզու:

Պատմական ու լեզվական այս նախադրյալների վրա կառուցվում է հայոց բանահյուսության պարբերացումը: Այս տեսակետից Շանթը անկատար և գիտականորեն անստույգ է համարում գրականության պատմության նախորդ պարբերացումները: Մինչև հիմա, ասում է նա, բանասերները դար դարի հետևից շարել են միայն գրողներին ու մատենագիրներին և առանց արժեքայնության չափանիշի գնահատել այս կամ այն երկը. ինչպես ճերմակեղենը պարանի վրա: Լավագույն դեպքում տարբերակվել է հին ու նոր ժամանակագրական բաժանումը, որն ինքնին միանգամայն

պայմանական է ու դարձյալ չի հանձնառում տարրկայի ներքին կառուցվածքի հստակ իմացություն: Այս «անճիշդ ու շփոթ ըմբռնումներուն գլխավոր պատճառն» այն է, որ բանահյուսության պատմությունը դիտվել է բանասերի հայացքով, որին հետաքրքրել է միայն երևույթի վիճակագրությունը՝ անտեսելով գեղարվեստական կողմը՝ «բոլորովին հինցած և ժամանակեն ետ մնացած նախասիրություններ, որոնք ծնունդ են վանական հոգեբանության» (էջ 26)[1]: Եվ քանի որ գեղարվեստականությունը անբաժանելի է լեզվամտածողությունից, ուստի գիտական պարբերացման միակ հիմունքը լեզուն է՝ իր ներքին բնական ենթաբաժանումներով: Այսպես էլ Շանթը հայ բանահյուսությունը շերտավորում է երեք բաժնի՝ գրաբար բանահյուսություն, բարբառական բանահյուսություն և բանահյուսություն արդի հայերենով:

Պետք է դիտել, որ Շանթը փոքր-ինչ չափազանցում է գրականության նախորդ պատմագրության վերաբերյալ իր բնութագրումը: Այլ բան է ընդունել կամ չընդունել պարբերացման այս կամ այն սկզբունքը, բայց որ գրականության նախորդ պատմաբանները առաջադրել են հայ բանահյուսության պատմության գիտական պարբերացման միանգամայն ուսանելի սխեմաներ և հայոց գրականության փիլիսոփայությունը ուղենշող տեսություններ, ըստ որում, չանտեսելով նաև լեզվական հատկանիշը (Գաթըրճյան, Պալասանյան, Դուրյան, Զամինյան), թերևս արժանի է ավելի օբյեկտիվ գնահատության:

Հայոց բանահյուսության երեք բաժինները անշարժ կացություններ չեն, ժամանակային երկար տևողության ընթացքում նրանք կրել են փոփոխություններ ու ներքին տեղաշարժեր, որոնց հիման վրա Շանթը այդ բաժիններն ստորոգում է առանձին հատվածների: Գրաբար բանահյուսությունը տրոհվում է երեք հատվածի՝ գրաբար հեթանոս բանահյուսություն, գրաբար քրիստոնյա գրականություն և գրաբար աշխարհական գրականություն: Բարբառական բանահյուսությունը ներկայանում է երկու հասանքով՝ ժողովրդական անգիր բանահյուսություն և անհատական բարբառային գրականություն (այստեղ են միջնադարյան տաղերգուները.

[1] Մեջբերումներն արվում են ըստ ներկա հրատարակության:

Աբովյանը, Սայաթ-Նովան, Սունդուկյանը և ուրիշներ): Ինչ վերաբերում է արդի հայերենով բանահյուսությանը, ապա սա էլ իր հերթին ընթանում է երկու հոսանքով՝ արևելահայ և արևմտահայ: Այսպիսով, հայ բանահյուսության երեք բաժինները ստորոգվում են յոթ հատվածի՝ գրաբար հեթանոս բանահյուսություն, գրաբար քրիստոնյա գրականություն, գրաբար աշխարհական գրականություն, բարբառական անգիր բանահյուսություն, բարբառական գրավոր անհատական գրականություն, արևելահայ գրականություն և արևմտահայ գրականություն: Շանթը գտնում է, որ բանահյուսական այս հոսանքները անջատ ու անկախ միավորներ են, առանձին գոյություններ՝ «տարբեր հոգեբանությամբ ու աշխարհայացքով, տարբեր ժամանակով ու տարածությամբ, տարբեր կյանքի պայմաններով ու ձգտումներով» (էջ 32): Իհարկե, նրանք ունեն ներքին կապեր ու ընդհանուր հատկանիշներ, քանի որ ծնունդ են նույն ժողովրդի պատմության ու հոգեբանության և սակայն այդ հոսանքները միմյանց շարունակություն նկատելը կլիներ նույնքան բռնազբոսիկ, որքան մի հեղինակի ամենատարբեր թեմաներով գրված երկերի միջև տրամաբանական կապ որոնելը: Հետևաբար բանահյուսության պատմության ուսումնասիրությունը ըմբռնելի է միայն նրա հատվածները ներկայացնող հոսանքների անկախ քննությամբ:

Շանթի այս սիստեմն իհարկե միանգամայն հաճելի է պատմության սիմետրիայի տեսակետից և ընձեռում է հետազոտական հարմարություն, սակայն անկատար է առարկայի պատմությունն իր ամբողջ բարդության ու լինելության պրոցեսի մեջ ուսումնասիրելու տեսակետից: Տրոհվում է ոչ միայն բանահյուսություն ներկայացնող երևույթի հոգևոր ամբողջությունը, այլև ըստ էության համահարթվում է պատմությունն իբրև զարգացման ընթացք և օբյեկտիվ օրինաչափություն: Ըստ Շանթի, օրինակ, հինգերորդ դարի պատմագրությունը բանահյուսական ներքին միասնություն չի ցուցադրում և տրոհված է տեղաբանական հատվածների, ուր Փավստոսն ու Խորենացին այլ հոսանքի գոյություն են, իսկ Եղիշեն ու Փարպեցին՝ այլ: Կամ, ըստ Շանթի պարբերացման, միջնադարյան բանաստեղծությունը (Ֆրիկ, Երզնկացի,

Աղթամարցի և ուրիշներ) Նարեկացու և Շնորհալու շարունակությունը չէ, այլ բանահյուսական տարբեր հոսանք, և Նարեկացու գիծը ընդհատվում է ավելի քան չորս դարով, մինչև որ 16-17-րդ դարերում տեղի է ունենում գրաբարի վերածնունդը: Վերջապես, այդ սխեմայով Աբովյանն ու Սունդուկյանը ոչ թե գրականության պատմության շղթան կապակցող օղակներ են, այլ գրավոր ժողովրդական բանահյուսության արտահայտություններ, որոնց ստեղծագործությունը ըմբռնելի է միայն, այսպես ասած, «բարբառական բանահյուսության» տեսադաշտի վրա:

Եվ այսպես, ըստ իր պարբերացման, Հայ բանահյուսության պատմությունը ստորոգելով երեք բաժնի, Շանթը առանձին-առանձին, գրեթե հավասար ծավալի մեջ տալիս է դրանց ուրվագիծը: Առաջին բաժինը նվիրված է գրաբար բանահյուսությանը, որը ստորաբաժանվում է երեք հատվածի՝ գուսանական վիպասանության, քրիստոնեական գրականության և գրաբար աշխարհական գրականության: Գուսանական վիպասանության հատվածում պարբերություններ են հատկացվում հին անգիր բանահյուսությանը և գուսանական վեպերին: Անդրադառնալով բանահյուսության ժանրային տարբերակներին (քնարական և վիպական)՝ Շանթը մասնավորապես քննության է առնում գուսանական վիպասանության ու գուսանների առաջացման պատմությունը, նրանց հեթանոսական ծագումն ու հետագա գոյությունը մինչև արաբական տիրապետությունը և վերջնական անկումը թուրքական տիրապետության շրջանում:

Առհասարակ մի միտում կա Շանթի աշխատության մեջ, որ արժանի է ուշադրության: Նա հակված է հաստատելու, որ անկախ քրիստոնեական կրոնի դիմադրությունից, հեթանոսական ոգին մշտապես գործել է հայկական աշխարհայեցության ու բարքերի մեջ, հանգամանք, որ իր կնիքն է դրել նրա բանահյուսության վրա: Եվ այնուամենայնիվ ինձ թվում է , որ Շանթը, ինչպես նաև այլ հետազոտողներ, նկատելիորեն չափազանցում է քրիստոնեական եկեղեցու ապաշխարհիկ ձգտումը՝ գրեթե այն հանգեցնելով ֆիզիկական ամեն մի գոյության ոչնչացման: «Իսկ քրիստոնեությունը, – գրում է Շանթը, – եկած էր հանդերձյալ կյանքը քա-

թողելու, մարմինը մեռցնել կուզեր և Հայաստանը վերածել կուզեր Համատարած վանքի մը, ուր միայն սուրբերը բնակեին, մինչև որ տերը վեր կանչեր իր երկնային վանքը, ինչպես շարունակ կկրկնեին քրիստոնյա Հայրերը իրենց քարոզներուն ու գրություններուն մեջ» (էջ 35):

Ոչ մի կրոն, առավել ևս պետական կրոն, չի կարող էթնիկական ինքնաոչնչացման այդպիսի վարդապետության վրա կառուցել իր գաղափարախոսությունը, որը փաստորեն կասկածի տակ է առնում այն յուրահատուկ դերը, որ ունեցել է Հայ եկեղեցին ժողովրդի պետական միավորման և քաղաքական ու էթնիկական կոնսոլիդացիայի, ֆիզիկական մաքառման ու գոյատևման Հարցում: Այս իմաստով Հայ միջնադարի քրիստոնեական աշխարՀայեցությունը կարիք է զգում ավելի խոր ու Հիմնավոր Հետազոտության, քան Հոգու և մարմնի Հակադրության մեջ մարմինը ոչնչացնելու մակերեսային տեսությունը:

Շանթը արտակարգ ներշնչանքով է գրել գուսանական բանաՀյուսությանը վերաբերող էջերը: Գուսանական վեպը ոչ միայն Հայոց ազնվականության վկայությունն է, այլև նրա Հոգևոր բարձր կերտվածքի ցուցանիշը, որովՀետև միայն տոՀմիկ արյան կանչն է արթնացնում անցյալի Հիշողությունը, և միայն գեղարվեստական բարձր երևակայությունը կարող է ընձեռել վիպելու անզուգական արվեստ: Ու թեև քրիստոնեությունը ասպարեզ եկավ Հեթանոսական կուլտի ոչնչացման գաղափարով, այնուամենայնիվ նա չէր կարող իրենն ստեղծել ոչնչի վրա և սկսեց Հեթանոս անցյալը մկրտել քրիստոնեության ոգով, ամեն բան՝ կենցաղը, բարքերը, տոնախմբությունները, տաճարները, սովորությունները առնել քրիստոնեական զգեստի մեջ՝ քրիստոնեությանը տալով Հայկական-էթնիկական կերպարանք: Այսպես էլ գուսանները երգում են Հեթանոսական անցյալի Հուշը, վիպում էթնիկական ծննդաբանությունը, կապ են ստեղծում անցյալի ու ներկայի միջև, արթնացնում ազատության, անկախության ու Հայրենասիրության զգացումներ: Այս պարագաներում արդեն քրիստոնեական վարդապետները չէին կարող անտեսել այն Հանգամանքը, որ «մեր աշխարՀի, մեր Հեռավոր ու մոտիկ անցյալի, մեր թագավորներու

ու մեր հանրային գործերու մասին կար միայն մեկ աղբյուր մը, բացարձակապես միակ աղբյուրը: Եվ ի՞նչ աղբյուր, ինչպե՛ս առատ, ի՞նչ կենդանի ու հարազատ, ի՞նչ գրավիչ մանրամասնություններով. և այդ միակ ու հորդ աղբյուրը գուսանական անգիր վեպերն էին, գուսաններու պատմած ու մշակած հայ դեմքերու և հայ գործերու պատմությունը» (էջ 48): Ահա այս անհրաժեշտությամբ է, որ տեղի է ունենում գուսանական վեպի գրականացումը, որի առաջին նմուշը հանդիսացավ Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը», ապա նաև Փավստոս Բուզանդի ու Մովսես Խորենացու աշխատությունները:

Շանթը բացահայտ նախապատվություն է տալիս Բուզանդին՝ նրան համարելով «առաջին հավաքիչը հայ անգիր բանահյուսության և ... պատմահայրը մեր պատմագրության»: Բնութագրումն ինքնին հուշում է, որ նա որոշ իմաստով ստորադասում է Մովսես Խորենացուն՝ մի քանի էական կետերում վերապահություն անելով նրա պատմության ինչ-ինչ սկզբունքների հավանականության վերաբերյալ: Նա ամենից առաջ անարդարացի է համարում պատմագրի կշտամբանքը Հայոց թագավորների անիմաստասեր բարքի վերաբերյալ, ապա թե մտացածին է Սահակ Բագրատունու հորդորանքով պատմությունը գրելու հավաստիացումը: Նույն սկզբունքով Շանթը սոսկ գրական ձև է համարում Խորենացու պատմության մեջ հիշատակված բազմաթիվ ինքնահնար նամակները, որպես թե նա վիպասան էր, այսինքն՝ հորինող ու հարմարեցնող, որ կցել-կցմցել է «իրեն հայտնի դեմքերն ու դեպքերը և քրիստոնեության հնարած կամ վավերացուցած ավանդությունները»: Վերջապես անտեսելի են նաև Մար Աբաս Կատինայի, Ափրիկիանոսի և հունական ու ասորական այլ աղբյուրների վկայակոչումները, չէ՞ որ ավելի հավաստի ու ավելի գեղեցիկ են գուսանների պատմած բանահյուսական վիպասանությունները: Այս երևույթը Շանթը բացատրում է յուրովի, թե Բուզանդը «զգացումի մարդ է, հափշտակվող և ենթարկվող», հետևաբար նա գուսանների պատմածը ընկալել ու վերարտադրել է անմիջական տպավորությամբ, իսկ ինչ վերաբերում է Խորենացուն, ապա սա «մտքի մարդ է ... քննող ու դատող», որ ձգտում էր աղբյու-

բացխտական ճշգրտությամբ ապացուցել իր նկարագրած դեպքերի ու դեմքերի հավանականությունը: Անհրաժեշտություն չկա պատմագիտության ժամանակակից տվյալներով քննաբանել Շանթի անստույգ տեսակետները, որոնք ինչարկե որևէ չափով չեն անտեսում «Խորենացիին պատմական ամենեն մեծ դերն ու հետաքրքրությունը», առանց որի «մենք կզրկվեինք բոլորովին մեր ժողովուրդի երիտասարդ ու խիզախ օրերու զգացած, մտածած ու ստեղծած պատմություններեն» (էջ 66):

Շանթը հատուկ բաժին է հատկացնում գուսանական վեպի տիպաբանական ու պատմական համակարգմանը: Նա տարբերակում է չորս շրջանակ: Առաջինն ընդգրկում է խալդա-հայկական ստեղծագործությունը՝ Հայկի ու Բելի, Արամի և Արայի առասպելներով, որոնք վիպում են էթնիկական վաղ կազմավորման շրջանի պատմությունը: «Հայկ ու Բելի վեպին նման հպարտ, ազնվական ու սքանչելի պատմվածք մը, - գրում է Շանթը, - իր պատմության ու իր բանահյուսության գլուխը ունենալը կրնա մեծ պարծանք մը համարվիլ անխտիր ամեն ժողովուրդի համար» (էջ 67): Երկրորդ շրջանակը վերաբերում է պատմության հայացման դարաշրջանին (Տիգրանի և Աժդահակի առասպելը), երրորդ շրջանակի մեջ ընդգրկվում են Արտաշեսի ու Սաթենիկի, ապա և Արտավազդի առասպելները, իսկ չորրորդ շրջանակը վիպում է չորրորդ դարի պատմական իրադարձությունները՝ մասնավորապես Արշակունիների մաքառումները ինքնուրույն պետականություն ստեղծելու համար: Այս շրջանակներից դուրս գտնվող առասպելներ են դիտվում Վահագնի ծնունդը, Տորք Անգեղը և այլն: Անդրադառնալով գուսանական վիպասանության արվեստին՝ Շանթը հետաքրքրական դիտարկումներ է անում նրանց կառուցվածքային ու արտահայտչական առանձնահատկությունների վերաբերյալ՝ համադրելով, թե «գուսանական այդ վեպերը հայ ժողովուրդի գրաբար լեզվով ստեղծած ամենեն բարձր արժեքներն են, որուն դեմ քրիստոնեական դարերու մնացած ամբողջ գրաբար գրականությունը շատ է անարյուն ու անհայ, շատ է միջակ ու անկենդան» (էջ 70):

Գրաբար բանահյուսության երրորդ հատվածում Շանթը

ներկայացնում է քրիստոնեական գրավոր գրականության համապատկերը: Բնութագրելով քրիստոնեական հազարամյակի ներքաղաքական կյանքի տեղաշարժերն ու ելևէջները, նա դիտում է, որ այդ ամենը ներգործել են միայն «հոգեկան տրամադրությունների» գործնական ընթացքին, բայց «ոչ աշխարհայացքի և ըմբռնումներու որևէ հիմնական ձևափոխությանը»: Այս իմաստով նա հազարամյակի այդ գրականությունը դիտում է որպես միաձույլ, միակերպ ու ամբողջական զանգված, որի հետազոտությունը ավելի նպատակահարմար է «ուղղահայաց հատումներով» (այսինքն՝ նյութի խմբավորմամբ ըստ ժանրային տեսակների), քան գաղափարական կամ աշխարհայացքային գործոններով տարբերակված «հորիզոնական հատումներով»: Այսպես էլ Շանթը խտացված, ամփոփ ու հմտորեն ընդհանրացված հատվածներում բնութագրում է թարգմանական գրականությունը, կրոնական-արարողական գրականությունը, պատարագը, կրոնական քնարերգությունը (աղոթք, շարական), կրոնական վիպական գրականությունը (չափածո վիպասանությունը, «Վարք սրբոց», վկայաբանություններ, առակներ), պատմագրությունը, իմաստասիրական-գիտական գրականությունը՝ հազարամյակի ամբողջ մշակույթում առանձնացնելով երկու դիմանկար՝ Գրիգոր Նարեկացի և Ներսես Շնորհալի:

Գրիգոր Նարեկացուն նվիրված հատվածը գրականագիտական մի փայլուն էջ է, ուր ներհյուսված են գեղագիտական բարձր ճաշակը, փիլիսոփայական խորությունը և մեկնաբանական հմտությունը: Կարելի է նույնիսկ ասել, որ այստեղ արտացոլված է արվեստի փիլիսոփայության մի յուրահատուկ հայեցություն, որը բանալի է տալիս լուսաբանելու Շանթի ստեղծագործության որոշ հանգուցային հարցեր: Միանգամայն տեսանելի են, օրինակ, զուգահեռները, որոնք ուրվագծվում են Նարեկացու անհատականության և «Հին աստվածներ» դրամայի հերոսների հոգեկան մաքառումներում: Իր մեկնությունը Շանթն սկսում է կրոնների բնույթի, ընդհանրության և գլխավոր ձգտման վերաբերյալ դատողություններով՝ միանգամայն հետաքրքրական հատկանիշներ գծելով քրիստոնեության ու հեթանոսության հատման կետերում:

Ցույց տալով հեթանոսության բնական պարզությունն ու չմիջնորդված աստվածապաշտությունը՝ նա դրան հակադրում է քրիստոնեական միաստվածության «բարդ, խրթին ու չարունակ վեճերու տեղիք տվող» պատկերացումը միության ու երրորդության, մարդու և աստծու հատման առեղծվածներում: Եվ սակայն. ըստ Շանթի, քրիստոնեության բարձր նշանակությունն այն էր, որ նա հռչակեց հանրային գաղափարը, ապա և ճանաչեց անհատականի ինքնագիտակցումը: Նախապատմական մարդու նեղ եսականությունը փոխարինելով այլասիրությամբ՝ նա կատարեց քաղաքակրթական մի ամբողջ հեղաշրջություն և այս իմաստով «քրիստոնեության բարձր արժեքը հոն է, որ մարդկութենեն ավելի բարձր հոգեբանական զարգացում կպահանջե և շատ ավելի բարձր տեսակի ընկերական կյանք ու կազմակերպություն» (էջ 128):

Քրիստոնեությունը մարդու հայացքն ուղղում է դեպի վեր. կատարյալը՝ նրան տալով աստվածայինին ձգտելու ինքնագիտակցումը, սակայն ինչքան էլ փորձես արհամարհել աշխարհայինը. այնուամենայնիվ չես կարող անջատվել ֆիզիկական գոյությունից. նյութական այն կապից, որ կա մարմնի երկնային զգացողությունների միջև. և անխուսափելի այս հակամարտությունը մշտապես «կծնի իսկապես քրիստոնյա հոգիներուն խորքը աններևակայելի բուռն տրամա մը»: Այս ձգտման մեջ է հասկանալի Նարեկացու անհատականությունը և ինքնին միանգամայն խորիմաստ է Շանթի բնութագրումը, թե «Նարեկացին իր դավանանքով. իր ուսումով. իր հոգեկան տվայտանքով ծնունդ է ու արտահայտություն միջնադարի քրիստոնեության, բայց իր հոգեկան կազմով, իր խորքով. ճաշակով ու բնածին հակումներով, ինչպես և տաղանդով, հեթանոսական դեմք մըն է» (էջ 132): Սա եկվություն է, որ բնավ չի փոշիացնում անհատականության ինքնագիտակցումը, այլ ճիշտ հակառակը: Եվ Նարեկացին ոչ այնքան ողբում է. որքան բողոքում. և նրա աղոթքներում հառնում է ոչ թե ստորացումը. այլ ըմբոստացումը: Դա անկում չէ, այլ ոգու ընդվզում, դա թռիչք է դեպի վեր, մարդկային իրավունքի, գոյության ազատության որոնում՝ աստվածային ամենակարող մեծության սարսափելի ճնշումից. «այսինքն՝ բնություն, իրականություն, ճշմարիտ հոգեբանություն.

անհատականություն ու պայքար մարդկայնության համար»: Շանթը «Նարեկը» գնահատում է որպես անկրկնելի գեղարվեստական մի ստեղծագործություն, որի արժեքը դիտելի է ոչ միայն հայ, «այլև ընդհանրապես համաշխարհային բուն քրիստոնեական ոգու բացառիկ ու բարձր ժայթքումներու տեսակետեն»: Դա նոր դարերի , եվրոպական Վերածննդի նախերգանքն է, որն ինքնին «Հայ հոգիի խորության և ստեղծագործ արժեքի տեսակետեն շատ բարձր վկայություն մըն է»:

Հայ բանահյուսության գրաբար հուշարձանների երրորդ հատվածում Շանթը քննության է առնում աշխարհականացման շրջանի գրաբար գրականությունը: Դա ընդգրկում է 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 19-րդ դարավերջը և ունեցել է ձևավորման երեք առանցք՝ Էջմիածին, Պոլիս, Հռոմ: Բնութագրելով այս օջախների մտավոր կազմավորման պրոցեսը ՝ Շանթը գրաբարի վերածնության երկու դարերի միջև որոշ տարբերակում է նշմարում: Եթե առաջին դարի (17-րդ դարավեսից մինչև 18-րդ դարավեր) համար բնորոշ էր ներքին ինքնաշարժման խթանը, ապա երկրորդ դարը հատկանշվում է գրաբար գրականության Եվրոպականացմամբ, արևմտացմամբ: Այս տեսակետից հատկապես նշանակալից եղավ Մխիթարյան միաբանության գործունեությունը, որը հայ մշակույթը հարստացրեց գիտական, գեղարվեստական, իմաստասիրական ինքնուրույն ու թարգմանական գրականության արժեքներով: Ընդունելով հանդերձ երկու դարերի գրաբար գրականության զարգացման նշանակությունը՝ Շանթը, սակայն, որոշ վերապահությամբ է գնահատում նրա իրական արժեքը ազգայինընդհանուր մշակույթի զարգացման ընթացքի մեջ: Գրաբարի վերածնունդը դիտելով որպես անախրոնիզմ՝ նա այն համարում է «շիտակ ճամբեն շեղած անել» մի բան, որ թեև նպաստել է ազգային գրականության նոր շարժման ձևավորմանը, սակայն «ինքը չէ եղած այդ երկու դարերու հայ բանահյուսության իսկական ստեղծագործ ուժը»: Սա գրականագիտության մեջ ավանդության ուժ ստացած մի տեսակետ է, որը այժմ արդեն վերանայվում է և որն իրոք արժանի է հիմնավոր վերագնահատության:

Աշխատության երկրորդ բաժինը նվիրված է հայ բանահյու-

սության բարբառական հոսանքներին: Առաջին հոսանքը, որ ներկայանում է որպես բանահյուսության պատմության չորրորդ հատված, ժողովրդական անգիր բանահյուսությունն է: Տեսական ակնարկ տալով անգիր ժողովրդական բանահյուսության և անհատական-գրավոր ստեղծագործության առանձնահատկությունների վերաբերյալ՝ Շանթը անդրադառնում է 19-րդ դարի երկրորդ կեսի բանահավաքչական նախաձեռնություններին՝ առնչելով այն Եվրոպայի հասարակական զարգացմամբ պայմանավորված ժողովրդապետական կարգերի առաջացմանը, որը, ճանաչելով ժողովրդի հոգևոր ու ֆիզիկական արժեքները, ընթացք տվեց նրա ստեղծումները հավաքելու և հետազոտելու գործունեությանը: Նույն այս շարժման արձագանքը եղավ բանահավաքչությունը հայոց մշակույթի պատմության մեջ, որի արժանահիշատակ նախաձեռնողները հանդիսացան Գարեգին Սրվանձտյանը և Երվանդ Լալայանը: Այնուհետև Շանթը առանձին բաժիններում քննության է առնում ժողովրդական անգիր բանահյուսության քնարական ու վիպական ժանրերը՝ հավատքի երգեր, կենցաղային երգեր, սիրո երգեր, բնության երգեր, զվարճանքի երգեր, անտունիներ, առնլուկ ու առած, առակ ու կատակ, զրույց ու ավանդություն, հեքիաթ, դյուցազներգություն, ապա անդրադառնում ժողովրդական քնարերգության տաղաչափական ու գեղարվեստական առանձնահատկություններին: Այստեղ հարցի քննական դրվածքով հատկապես առանձնանում են անտունիներին և «Սասունցի Դավիթ» էպոսին նվիրված հատվածները: Անտունիների առիթով Շանթը անդրադառնում է Քուչակի խնդրին և բանավիճելով Չոպանյանի տեսակետի դեմ՝ «կամայական ու անհիմն վերագրում է» համարում անտունիները Քուչակի անհատական ստեղծագործությունը դիտելու վարկածը և անվերապահորեն ընդունում նրանց ժողովրդական ծագումը՝ ենթադրելով, թե Քուչակը պարզապես մի հմուտ բանահավաք է, որ գրի է առել ժողովրդական երգը: Ինքնին վիճելի են Շանթի որոշ դրույթները «Սասունցի Դավթի» վերաբերյալ: Ըստ ամենայնի բարձր գնահատելով հայոց էպոսի արվեստն ու ոգին՝ գրականության պատմաբանը որոշ անստույգ տեսակետներ է արտահայտում նրա.

այսպես ասած, ժանրային բնույթի վերաբերյալ: Նրա կարծիքով «Սասունցի Դավիթը» «ռուն դյուցազներգությունն իջած է հեքիաթի աստիճանին», գեղարվեստական իջեցում, որը թեև չի նույնանում սովորական հեքիաթին, բայց և չի բարձրանում դասական էպոսի արվեստին: Դրա պատճառն այն է, որ ժամանակները այլևս դյուցազնական չէին և ապա՝ գրի առնվելով շատ և շատ ուշ դարերում՝ նա ենթարկվել է մշակման և մերձեցվել ժողովրդական մտածողությանը: Ճիշտ է, Շանթը նշմարում է նրա աղերսները հնագույն միֆոլոգիական պատկերացումներին, սակայն գտնում է, որ հետագայում այն փոխաձևվել է հեքիաթի և 9-րդ դարում, Հայոց Բագրատունիների թագավորության շրջանում, վերստին ենթարկվել նոր մշակման, որի մեջ «հին երկնածին ու երկնաբնակ աստվածայինը դարձեր է լեռնցի դյուցազնի մը ծնունդը, բնության կռվին պատկերացումը դարձեր է ազգային կռվի մը պատկերացումը, աստվածը դարձեր է հերոս» (էջ 316): Այս տեսակետից Շանթը հատկապես բնորոշ է համարում քեռի Օհանին՝ Հայոց այդ Սանչո Պանսան, որի կերպարը ունի միանգամայն ռեալիստական նկարագիր:

Բանահյուսության պատմության հինգերորդ հատվածում Շանթը գիտական համակարգի է ենթարկում բարբառական անհատական գրականությունը: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է 12-րդ դարից մինչև 19-րդ դարի առաջին կեսը: Գրաբարի նահանջով, որը պայմանավորված էր Հայոց պետականության անկմամբ ու թուրանական արշավանքներով, ձևավորվում է «միջնակ հայերենը», որը և դառնում է գրավոր լեզու՝ մի ամբողջ շրջան գծելով հայ մշակույթի պատմության մեջ: Սակայն Շանթի ընկալմամբ դա սոսկ լեզվական փոփոխություն չէր, այլ աշխարհայեցության մի արմատական բեկում, որն իր ընդհանուր բովանդակությամբ կապվում է արևելյան ազդեցության հետ: Տեղի էր ունեցել հոգեբանական մի խոր հեղաշրջում, ուր արաբական ու թուրանական համատարած տիրապետության մթնոլորտում քրիստոնեությունը գունաթափվում էր աշխարհիկ շռայլ վայելքի կոչող Ղուրանի ազդեցությունից. «Հոգիներուն մեջ մեռած է քրիստոնեությունը, հին քրիստոնեությունը: Կամ եթե կուզեք՝ ավելի

արքայավայել արտահայտությամբ՝ հին, հաղթական, հպարտ, դեպի երկինք սավառնող ու անզիջող քրիստոնեությունը գահընկեց է եղած հոգիներում մեջ և անոր գահը գրաված է նոր քրիստոնեություն մը, շատ ավելի ճկուն ու հարմարվող, ծեսս դարձած ու անվանական քրիստոնեություն մը, շատ ավելի համեստացած. մեր այս վարի իրականության հարմարած քրիստոնեություն մը» (էջ 331):

Եվ այսպես, իր հմայքը կորցրած, գունաթափված. գրեթե արհամարհված քրիստոնեությունը այլևս անզոր էր մարդու էությունը միայն դեպի երկինք սևեռել և կապանք դնել նրա բնական զգացողություններին: Այդ զգացողությունները սողոսկում էին նաև կրոնավորների ս.քեմի ներքո և նրանց բանաստեղծական ներշնչանքները տոգորում սիրո, կնոջ, գինու, մարմնի այլաբանական թե ուղղակի արտացոլումներով, որոնք արտահայտության ձև էին գտնում մի երկրորդ ազգակի՝ արաբական ու հատկապես պարսկական գրականության (Ֆիրդուսի, Նիզամի, Սաադի, Հաֆիզ) մոտիվներով: Այս ընդհանուր տեսադաշտի վրա Շանթը հանգամանորեն լուսաբանում է նոր աշխարհայնցության հոգեբանական կազմավորման հանգամանքները, բնութագրում տաղերգության առանձնահատկությունները և տալիս ժանրի պատմական տեսությունը Ֆրիկից մինչև Նաղաշ Հովնաթան: Ինչպես տեսնում ենք, գրականության պատմաբանը մի անլցելի անջրպետ է գծում հին ու նոր աշխարհայնցությունների միջև և ըստ այդմ սահմանազատում միջնադարյան տաղերգությունը Նարեկացու և Շնորհալու գրական ժառանգությունից՝ ընդհատելով գրականության պատմության օբյեկտիվ օրինաչափությունների ներքին կապը:

17-րդ դարում տաղերգությունը մայրամուտ է ապրում: Գրաբարի վերածնունդը արտամղում է միջին հայերենի գրական մենաշնորհը, և տաղերգությունը, գրեթե սպառած իր հնարավորությունները, դուրս է գալիս ասպարեզից: Գրականությունը վերստին ընդունում է արևմտյան բնույթ՝ հաղթահարելով արևելյան այն ազդեցությունը, որին հայ բանաստեղծությունը սկսեց տուրք տալ 13-րդ դարից ի վեր: Տաղերգությանը փոխարինելու է գալիս բար-

բառախոս մի այլ բանաստեղծություն, որ զուտ պարսկական ու թուրքական ծագում ուներ և որը կոչվում էր աշուղական երգ: Ժողովրդական այդ բանաստեղծության հանճարեղ դեմքը Սայաթ-Նովան է, որն իր տեսակի մեջ մնաց չգերազանցված և աշուղական արվեստը բարձրացրեց ձևի կատարելության, մոտիվների հումական-փիլիսոփայական խորության: Շանթը նշում է, որ աշուղական պոեզիան շարունակվում է նաև հետագա դարերում, ընդլայնում մոտիվների շրջանակները և արդեն 20-րդ դարում ազատագրվելով բարբառից՝ արտահայտության միջոց ընտրում գրական լեզուն:

Հայ բանահյուսության բարբառային հոսանքների պատմական ուրվագիծը Շանթը եզրափակում է «Բարբառական նորատեսակ ստեղծագործություններ արևմուտքի շունչին տակ» ակնարկով՝ առանձնացնելով 19-րդ դարի 40-70-ական թվականների գրականության բնորոշ մի ուղղություն, որի ականավոր դեմքերն էին Ղևոնդ Ալիշանը, Խաչատուր Աբովյանը, Գաբրիել Սունդուկյանը և Ռափայել Պատկանյանը: Այս ուղղությունն ըստ Շանթի արտացոլում է գրական-պատմական մի իրողություն, որ արժանի է ուշադրության: Եթե Ալիշանը և Աբովյանը մարմնավորում էին երկու դարաշրջանների անցման պրոցեսը, երբ արևմտականացող հայ գրականությունը անջատվում էր գրաբարից և ձգտում դեպի աշխարհաբար, ապա Սունդուկյանն ու Պատկանյանը արտահայտում էին նույն այդ գրականության գլխավոր միտումը՝ անջատվելու բարբառից և յուրացնելու գրական աշխարհաբարը: Ոչ հիմնավոր նախադրյալների վրա կառուցված այս սխեմը մի անգամ ևս ի հայտ է բերում Շանթի պարբերացման խոցելի կողմը: Եվ մի՞թե ստույգ չէ, որ Ալիշանի, Աբովյանի, Սունդուկյանի և Պատկանյանի ստեղծագործության գրական-պատմական արժեքը բացատրելի է միայն հայոց նոր գրականության պատմության գլխավոր ու միասնական կառուցվածքի մեջ:

Աշխատության երրորդ բաժինը վերաբերում է հայ բանահյուսության արդի հայերեն հոսանքներին: Վեցերորդ հատվածը նվիրված է արևմտահայ գրականությանը, որն ընդգրկում է անցյալ դարի կեսերից մինչև 20-րդ դարի 30-ական թվականները: Գրեթե

մեկ դարի պատմությունը Շանթը ստորաբաժանում է երեք շրջանի: Առաջին՝ 1860-1890-ական թվականներ՝ «քաղաքականապես հանգիստ և գրականապես ազգասիրական շրջան»: Երկրորդ 1890 – 1920 թվականներ՝ «քաղաքականապես հեղափոխական և գրականապես իրականասեր շրջան», երրորդ՝ 1920 թվականից ի վեր՝ «քաղաքականապես ցրումի և գրականապես կարոտանքի շրջան»: Հանգամանորեն անդրադառնալով արևմտահայերի քաղաքական կացությանը, հատկապես ազատամիտ մտավորականության գործունեությանն ու սահմանադրական օրենքի որքան էլ սուղ, այնուամենայնիվ նշանակալից ստատուսի վավերացմանը՝ Շանթը, ըստ իր առաջադրած պարբերաշրջանների, բնութագրում է գրական շարժման առանձնահատկությունները, բնորոշում յուրաքանչյուր շրջանի գլխավոր ձգտումը, քննում գրական պրոցեսը ըստ ժանրերի, համառոտ բնութագրականներով ներկայացնում գրեթե բոլոր գրողներին ու գրական գործիչներին:

Բանահյուսության պատմության վերջին՝ յոթերորդ հատվածում Շանթը ուրվագծում է արևելահայ նոր գրականության հարյուրամյա ուղին՝ գրեթե կիրառելով նույն սխեման և ժամանակագրական նույն բաժանումը, թերևս միայն որոշ երանգներ տարբերակելով գրական շարժման բովանդակության մեջ: Առաջին շրջան (1860-1890-ական թվականներ)՝ քաղաքական նպաստավոր պայմաններ, քաղաքակրթական զարթոնք, գեղարվեստի հիմնական ուղղությունը՝ քարոզչություն, երկրորդ շրջան (1890-1920 թվական)՝ ազգային հեղափոխական կուսակցությունների գործունեություն, գրականության մեջ քարոզչությունը տեղի է տալիս գեղարվեստական խոսքին, երրորդ շրջան (1920 թվականից ի վեր)՝ քաղաքական ու քաղաքացիական տեսակետից բոլշևիզմի տիրապետություն, գրականության մեջ արժեք են ներկայացնում հայագիտական ուսումնասիրությունները: Հարկ ենք համարում անդրադառնալ արևելահայ գրականության ընդհանուր օրինաչափությունների և առանձին գրողների վերաբերյալ Շանթի բնութագրումներին: Հասարակական ու գրական կյանքի համապատկերը ի հայտ է բերում ճշգրիտ ու լավ ըմբռնված դիտարկումներ, բայց և միտումնավոր ու միակողմանի գնահատումներ, որոնք ինչ-

որ չափով արդեն կանխակալ չափանիշ են դարձել սփյուռքահայ քննադատության համար: Միակողմանի ու անստույգ են, օրինակ, 20-30-ական թվականների արևմտահայոց գրականության բնութագրումները: Սխեմատիզմի, գաղափարական մերկամիտ ջատագովության վերաբերյալ դիտարկումները թերևս իրավացի են, սակայն փաստ է, որ այդ տասնամյակին են վերաբերում Չարենցի, Բակունցի, Դեմիրճյանի, Զորյանի, Զարյանի և այլ ականավոր գրողների ստեղծագործությունները, որոնք միայն շատ արժեքներ են ներդնում հայոց գրականության պատմությանը: Տեղին է նկատել, որ Շանթն առհասարակ հակված չէ գրականության պատմությունը ենթարկել գիտական որևէ մեթոդաբանության: Այս իմաստով նրա առաջադրած սխեմը բանահյուսության (գրականության) պատմության վերաբերյալ պատմափիլիսոփայական որևէ հայեցությամբ չի պարտադրվում: Դա ժամանակի մեջ կատարվող տարածական մի հասկացություն է, ուր պատմությունը զուգահեռ կամ հատվող շերտեր է գծում հոգևոր գործունեության ընթացքում: Պատահական չէ, որ Շանթը պատմական պրոցեսը չի ընկալում գրական դպրոցների, մեթոդների, ուղղությունների կոնտեքստում, և բանահյուսական հոսանքները ներկայանում են որպես համաժամանակյա իրողություններ: Միակ կամ գրեթե միակ մեթոդաբանական դրույթը, որի վրա Շանթը կառուցում է բանահյուսության պատմության արժեքայնությունը, գեղարվեստականության չափանիշն է, որ ամենուրեք հանդես է գալիս որպես երևույթների շարժումը կարգավորող սկզբունք: Շանթի հայեցությամբ գեղարվեստը մի վերին տրվածք է, որը կոչված է հեղաբեկիչ դեր կատարելու մարդու կատարելության գործում: «Գեղարվեստները, – գրում է նա, – հոգի կերթեն, զգայմունքները կբարձրացնեն, մարդկային վարմունքի ու գործունեության ընտիր օրինակներ կուտան: Գեղարվեստական գրական երկերը մարդուս ամենեն հետաքրքիր, ամենեն խոհուն ու ամենեն նրբամիտ ընկերներն են, խոսակիցներն են, մտերիմներն են ... Գեղարվեստական գրական երկերը կլայնացնեն ու կառատացնեն անհատներու և բազմություններու հոգեկան շփումները, ապրումներն ու իմացումները և բազմատեսակ ծուփ ու փոթորիկ կուտան

մեր ներքին հուզազգացական աշխարհին, այսինքն հաճույքներն են ու մխիթարանքը մարդկային հոգիի ... Եսականության դեմ պայքարող ամենեն մեծ ուժը գեղարվեստն է , մարդը սիրելու, մարդկայինը սիրելու, իր ժողովուրդը և բոլոր ժողովուրդները սիրելու ամենեն ազդու գործոնը գեղարվեստն է, որուն այնքա՜ն, այնքա՜ն պետք ունի մեր գեռ վայրենի ու թշվառ մարդկությունը» (էջ 527):

Այստեղ արտահայտված է Շանթի ոչ միայն գեղագիտական, այլև պատմագիտական կոնցեպցիան: Ուշագրավն այն է, որ նա ժանրային սահմաններում անգամ խմբավորում է գրողներին ըստ գեղարվեստականության չափանիշի: Այսպես, օրինակ, մեկնաբանելով 90-900-ական թվականների արձակը, նա տարբերակում է վիպագրություն և վիպասանություն կատեգորիաները և Ահարոնյանին ու Փափազյանին անվանելով վիպագիրներ առանձնացնում է վիպասանությունից, որի ներկայացուցիչներն են Մուրացանը, Նար-Դոսը, Շիրվանզադեն:

«Հայ բանահյուսությունը» պատմական ակնարկը Շանթը եզրափակում է մի վերջաբանով, որը կրում է «Մեր վաղվան գրականությունը» վերնագիրը: Դա չափազանց արժեքավոր ծրագիր -խորհրդածություն է, ուր հեղինակը, ընդհանրացնելով անցյալի փորձը, դատողություններ է անում հայոց ազգի ապագայի և նրա հոգևոր զարգացման ուղիների վերաբերյալ: Հանրագումարի բերելով հայ ժողովրդի հոգևոր ստեղծումները՝ Շանթը գտնում է, որ իր համաքաղաքական ամբողջության մեջ հայ բանահյուսությունը մարդկության կուլտուրայի մի արժեքավոր էջն է, և սակայն այդ ամբողջի մեջ առաջնությունը պատկանում է գեղարվեստական բանահյուսությանը և առավելապես անգիր բանահյուսությանը: «Արդ, - գրում է Շանթը, - երբ մեր ժողովուրդի այս երկու-երեք տասնյակ դարավոր գեղարվեստական հարատև աշխատանքին խորքը կնայինք, ըլլա հին թե նոր, ըլլա անգիր թե գրավոր, կրնանք ըսել հպարտ վստահությամբ, որ հայ ժողովուրդի բանահյուսական ու գեղարվեստական հակումներն ու կարողությունները զույգ ու հավասար կերթան ամենեն ընդունակ և ամենեն քաղաքակիրթ ազգերու բանահյուսական ու գեղարվեստական կարողություններուն» (էջ 557):

Անցյալի արժեքները խորհուրդ ունեն ապագայի տեսակետից և «ցեղային ժառանգական կարողությունների պայծառ ու փառահ գլխակցումը» հանրային ուժ է, որ խթան է տալիս ստեղծագործական անընդհատ վերելքի: Այս գաղափարը Շանթն ուղղում է ազգային հոգեբանության ինչ-որ ծալքերում պահված «անօգուտ ու վնասակար հոռետեսության» դեմ: Ճիշտ է, որ հայոց արդի կացությունը առիթ է տալիս հոռետեսական գուշակության, ճիշտ է, որ մարդկությունը հեշտավում է «քաղաքակրթության անճոռնի խրտվիլակի» խաբկանքից, երբ ամենուրեք վայրենի բռունցքն է գործում, ամենուրեք տիրողը սանձարձակ սուտն է, կեղծիքը ու լկտի անհոգությունը, բռնակալությունը, կամայականությունն ու փոխադարձ ատելությունը: Սակայն հայոց պատմությունը մռայլ դարերի փորձով է ծանրացած՝ թուրանական բարբարոսության մղձավանջով, իսկ մարդկությունը հղի է ազատության մոտալուտ զարթոնքով, թե ոգու ժայթքի հողմերի լարումը, և «գան նոր կարգեր, նոր խոսք, նոր վարդապետություն»: Ուստի «ապրող ժողովուրդ մը երբեք իրավունք չունի վաղվան վրա հուսահատ ըլլալու» և միայն «իմաստ և օգուտ ունեցող բանը մաքառելն է եղած պայմաններին դեմ»: «Դիմադրել ամեն ճնշումի օրվան թելադրած բոլոր զենքերով. և պայքարել իր ուժերու լիակատար արծարծումին հասնելու ջանքով: Աս է ամեն ապրող էակի, ամեն բույսի ու կենդանիի հարատևության ու զարգացման հիմնական օրենքը. ավելի ևս երբ հարցը մեզի նման հին ու արժեքավոր ժողովուրդի մը տևականությանը կվերաբերի» (էջ 559):

Իսկ ի՞նչ ուղղություն պետք է ունենա հայոց վաղվան գրականությունը: Նոր վաղվան բանահյուսությունը, ասում է Շանթը, իր ամբողջության մեջ պետք է բողոք լինի մարդկային իրավունքի, պետական անկախ գոյության պահանջ հանուն ներքին ինքնավար կյանքի, աշխատանքի ինքնավար կազմակերպման, տնտեսական բարձրացման, պայքար ամեն կարգի ստրկացման, մեքենայացման ու շահագործման դեմ: Նոր վաղվան գրականությունը պետք է լինի կարոտի բուռն երգ՝ հոգու ազատության, մտածումի ու զգացումի արտահայտության, կյանքի ու իրականության ճշգրիտ

պատկերման: Այս ամենը պետք է իրացված լինի բարձր գեղարվեստականությամբ և արվեստի կատարելությամբ:

Անդրադառնալով Սփյուռքի ու Հայաստանի, ինչպես նաև ազգային բանահյուսության երկու լեզուների հարցին, Շանթը գտնում է, որ վաղվան գրականությունը պետք է հաղթահարի այդ երկվությունը և անցնի միասնական ազգային գրական լեզվի: Ընտրությունը պետք է կատարվի հօգուտ արևելահայ գրական լեզվի: «Մենք, – բացատրում է Շանթը, – հիմա ունինք հայկական անկյուն մը, ուր կա կառավարություն հայ լեզվով, հայ դպրոցներով, լրագիրներով, գրականությամբ ու համալսարանով, ինչքան ալ կուզե սեղմված ու կաշկանդված ու աղավաղված ըլլան իր ներքին պայմանները: Այս առավելություններով օժտված գրական լեզվի մը դեմ դիմանալ չի կրնար քառասուն տեսակի ազգերու մեջ ցրված, օտար գրականություններու և օտար դպրոցներու մեջ կորսված մեր արևմտյան հայ լեզուն ու իր գրականությունը» (էջ 563):

Ազգի հոգևոր զարգացման ընթացքը տանում է ոչ միայն գեղի միասնական լեզվի ստեղծում, այլև անգիր բանահյուսության վերացում: Համընդհանուր գրագիտացումը, ժողովրդի բոլոր խավերի մտավոր հասունացումը և սոցիալական ազատության իրականացումը աստիճանաբար կհանգեցնեն ինտելեկտուալ մի մակարդակի, երբ ինքնին արդեն կվերանա անգիր բանահյուսության անհրաժեշտությունը: Սակայն վաղվա գրականության մեջ պետք է խորանան ոչ միայն ազգային հատկությունները, այլև համամարդկային հակումները: Ճշմարիտ է, գրականությունը ինքնատիպ ու արժեքավոր է, երբ կրում է ազգային առանձնահատկության ու անհատականության կնիքը, նրա հոգեգծի ու դիմագծի անկրկնելիությունը: Սակայն անվիճելի է նաև, որ յուրաքանչյուր ազգային գրականություն ներունակ ու հետաքրքրական է, երբ արծարծում է համամարդկային խնդիրներ, արձագանքում է մարդկության զբաղեցնող ձգտումներին ու որոնումներին: Հետևաբար «մեր վաղվան գրականության մեջ ամեն թռիչք ունեցող հայ հեղինակի բնական ու հպարտ ձգտումը պիտի ըլլա ոչ միայն նոր հարստություն մը ավելցնել ազգային գրականության գանձարանին մեջ, այլև իր նոր հայաշունչ երկովը

նոր նպաստ մը բերել համամարդկային բանահյուսական ստեղծագործ որոնումին» (էջ 567):

Շանթի «Հայ բանահյուսությունը» միանգամայն ինքնատիպ երևույթ է հայագիտական մտքի պատմության մեջ: Թերևս գրականության ոչ մի պատմաբան այնքան հետամուտ չի եղել մեր հոգևոր ստեղծագործության ազգային ինքնության բացահայտմանը, որքան Շանթը: Համաշխարհային քաղաքակրթության տեսադաշտի վրա ուրվագծելով հայոց բանահյուսության հազարամյակների արարումը՝ նա հայ ոգու ֆենոմենը նշմարում է միֆոլոգիական վաղ պատկերացումներում, որն իբրև սկիզբ կանխորոշել է հայոց ազգային մշակույթի ինքնատիպությունը, աշխարհազգացման նրա գույները, հնչյունները, փիլիսոփայությունը: Եվ այս ընդհանրության մեջ, որպես աստվածային մի վերին տրվածք՝ բացառիկ գեղեցկությամբ ցոլանում է հայ էթնիկական ոգու ու նրա մշակույթի խորապես հումանիստական բովանդակությունը, կյանքի, աշխարհի, կառուցման տիեզերական ներդաշնակությունը, սիրո, կարոտի, հավատարմության, երկնասույզ մաքրության այն ձգտումը, որ բխում է հայ բանահյուսության ավանդապատումից: Պատմափիլիսոփայական մի բարձր հայեցությամբ է իմաստավորված «վաղվան գրականության» կոնցեպցիան: Թվում է՝ հենց այս դիտակետից էլ Շանթը ընկալել է հայ բանահյուսության պատմությունը, թե նա, ով անցյալ ունի, ունի նաև ապագա, և թե «մենք ամենքս պարտական ենք հայության վրա նայելու իբրև համամարդկային մեծ ընտանիքի մեկ կարևոր անդամին վրա» (էջ 567): Պատմության գալիք դարերում իր գոյության խորհուրդն ունի հայ ժողովուրդն ու իր մշակույթը, հետևաբար մեր նշանաբանը պիտի լինի՝ «Դեպի նոր ու ավելի բարձր ստեղծագործություն»:

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ընդհանուր ակնարկ մը հայ բանահյուսության վրա» աշխատությունը գրվել է 1943-1946 թթ. Բեյրութում: Առաջին անգամ հրատարակվել է Բեյրութում 1946 թ. (Լևոն Շանթի երկերը, 9-րդ հատոր, էջ 3-464): Այս հատորը նույնությամբ վերահրատարակվել է 2008 թ., բայց որպես 8-րդ հատոր (Լևոն Շանթի երկերը, Ը հատոր, էջ 1-462): Այս երկու ամբողջական հրատարակություններից բացի աշխատությունից երեք հատված տպագրվել է պարբերական մամուլում. «Սասունցի Դավիթ» («Ազդակ» շաբաթօրյակ, Բեյրութ, 1946, թ. 40, էջ 3-4), Գր. Նարեկացի («Հայրենիք», Բոստոն, 1947, թ. 1, էջ 56-62), Ցիրիկ («Ակոս», Բեյրութ, 1950, թ. 6, էջ 63-66):

Ներկա հրատարակության համար հիմք են հանդիսացել Բեյրութի երկու հրատարակությունները:

Հատորը պատրաստելիս որոշակի դժվարություններ են հարուցել հատուկ անունները (հատկապես օտար հատուկ անունները) և մեջբերումները: Որոշ հատուկ անուններ (խոսքը քիչ հայտնի կամ լիովին անհայտ անունների մասին է) այն ձևով, ինչպես դրանք գրում է Շանթը, հնարավոր չէ գտնել որևէ հանրագիտարանում, կենսագրական բառարանում կամ այլ աղբյուրում, և բավականին ջանքեր են պահանջվել դրանց գրությունն ու արտասանությունը ճշտելու և կենսագրական տվյալներ գտնելու համար: Այդ անունները ևս (չնչին բացառություններով) բերված են այնպես, ինչպես գրել է Շանթը, իսկ դրանց ժամանակակից արևելահայ ձևերը բերված են անձնանունների բառարանում և ծանոթագրություններում:

Խոսելով ուղղագրական դժվարությունների մասին՝ պետք է նշել, որ դրանք էականորեն կպակասեին (կամ գուցե ընդհանրապես կվերանային), եթե հին (դասական) ուղղագրությունը չփոխվեր ժամանակակից ուղղագրության: Հին ուղղագրությամբ գրված գիտական աշխատությունները, կարծում ենք, հենց հին ուղղագրությամբ էլ պետք է հրատարակել, ինչը մեզ մոտ այժմ շատ քիչ դեպքերում է արվում և արվում է հատկապես գեղարվեստական գրականության պարագայում:

Ինչ վերաբերում է չափածո մեջբերումների հետ կապված դժվարություններին, ապա որոշվեց դրանք հաղթահարել երկու ճանապարհով. 1. մեջբերումների տեքստերը համեմատվել են դրանց գիտական կամ լավագույն հրատարակությունների տեքստերի հետ և կատարվել անհրաժեշտ ուղղումներ (խոսքը հիմնականում գրաբար մեջբերումների մասին է). 2. եթե մեջբերումների և այդ գործերի վերջին հրատարա-

կությունների տեքստերի միջև կան բառային և ընդհանրապես տեքստային մեծ տարբերություններ, կամ տեղի է ունեցել լավ հայտնի գործերի գրության այսպես ասած արևմտահայերենացում, ինչպես Սայաթ-Նովայի և միջնադարյան տաղերգուների պարագայում է, ապա Շանթի մեջբերումներում որևէ փոփոխություն (բացի վրիպակների ուղղումից) չի կատարվել, բայց դրանց զուգահեռ ծանոթագրություններում բերվում են դրանց ամբողջական, ճշտված ու նաև ուղղագրական տեսակետից ճիշտ տեքստերը: Որևէ փոփոխություն չի արված ժողովրդական բանահյուսության տեքստերում, քանի որ այդ ստեղծագործությունները հորինված են տարբեր բարբառներով, իսկ բարբառների պարագայում ուղղագրության հետ կապված խնդիրներ լինել չեն կարող:

Ծանոթագրությունները կազմելիս աշխատել ենք խուսափել լավ հայտնի անունների, դեպքերի, աշխատությունների և հանգամանքների վերաբերյալ (մանրամասն) բացատրություններից, դրա փոխարեն մեծ ուշադրություն է դարձված քիչ հայտնի կամ անհայտ անուններին և ընդհանրապես բացատրության ու մեկնաբանման կարիք ունեցող հարցերին: Հնարավորինս ճշտված և ուղղված են ինչպես տպագրական վրիպակներն ու տարընթերցումները, այնպես էլ Լ. Շանթի թույլ տված անճշտությունները. դրանք բոլորը կնշվեն ծանոթագրությունների համապատասխան տեղերում: Գրողների և ընդհանրապես հանրային գործիչների ծննդյան ու մահվան թվականներում եղած բացահայտ անճշտությունները ծանոթագրություններում չեն նշվում, բացի առանձին դեպքերից, քանի որ անձնանունների բառարանում անունից հետո բերվում են նրանց ծննդյան ու մահվան ճիշտ կամ առավել ընդունված թվականները (Շահազիզ, Պարոնյան, Աբովյան, Գրիգոր Արծրունի, Գր. Զոհրապ, Սիամանթո և այլն): Դիցաբանական և աստվածաշնչյան անունները բացատրված են անձնանունների բառարանում. իսկ առանձին դեպքերում՝ նաև ծանոթագրություններում:

Էջ 7, տող 10-11: ***Ապահովաբար ո՛չ սեմական ժողովուրդ են եղած, ո՛չ ալ արիական*** *- սեմական կոչվում են այն ժողովուրդները (օր. արաբները, հրեաները, մալթացիները), որոնք, ըստ ավանդության, սերված են համարվում Նոյ նահապետի Սեմ որդուց: Նրանց նախահայրենիքը համարվում է Սահարա անապատը, որտեղից նրանք անցել են Արաբական թերակղզի, այնտեղից էլ Միջագետք և այլուր:*

Արիական ժողովուրդներ բնութագրումը օգտագործվում է երկու առումով. նեղ առումով այդպես են կոչվում հնդիրանական ժողո-

վուրդները (մասնավորապես՝ պարսիկներն իրենց հնում անվանում էին արիներ՝ ի տարբերություն ուրիշ ժողովուրդների՝ ոչ արիների: Նրանց երկրի ժամանակակից անվան՝ Իրան բառի հիմքում ընկած է արի բառը): Ընդհանրապես արիական ժողովուրդներ կապակցությունն օգտագործվում է լայն առումով՝ որպես հնդեվրոպական լեզուներով խոսող ժողովուրդների (այդ թվում՝ հայերի) ընդհանուր անվանում: Հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը սկզբում համարվել է Հնդկաստանը, ապա՝ Միջին Ասիան, Բալթիկ ծովի ափերը և ընդհանրապես Արևմտյան Եվրոպան: Նոր ուսումնասիրությունների համաձայն՝ հնդեվրոպացիների նախահայրենիքը Փոքր Ասիայի արևելյան շրջաններն են՝ Հայկական լեռնաշխարհը, Հյուսիսային Միջագետքը և Իրանական բարձրավանդակի հյուսիսարևմտյան ծայրամասերը (տե՛ս, օրինակ, Թ.Վ. Գամկրելիձե և Վ.Վ. Իվանով, Հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպացիները, Թբիլիսի, 1980, ռուսերեն):

Էջ 7, տող 15: ...Մինչև Ալիս գետը ... - Ալիս կամ Հալիս՝ այժմ Կզըլ - Իրմակ կոչվող գետի (Թուրքիա) պատմական անունն է:

Էջ 7, տող 16: ...Փռյուգացիներուն անունը - Փռյուգիա՝ երկրամաս Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում, ուր ապրել են փռյուգացիների հնդեվրոպական (արիական) ցեղերը: Ենթադրաբար նրանք այստեղ վերաբնակվել են մ.թ.ա. II հազարամյակում Բալկանյան թերակղզուց՝ Մակեդոնիայից կամ Թրակիայից, ինչպես որ գրում է Շանթը:

Էջ 7, տող 8 ն.: ...Կհիմնե խալդական ուժեղ պետություն մը... - խոսքը ասորական աղբյուրներում Ուրարտու կոչվող կամ պարզապես Վանի Արարատյան թագավորության մասին է, որը գոյություն է ունեցել մ.թ.ա. 860-590 թթ.: Ուրարտուի գլխավոր աստվածը կոչվում էր Խալդ:

Էջ 8, տող 14-15: ... Հավանորեն Ալիսը անցնող ցեղերեն մեկուն անունովը - դժվար չէ նկատել, որ Շանթը հետևում է Հայ ժողովրդի ծագման հնդեվրոպական տեսությանը, որն առաջանալով 19-րդ դ. կեսերին՝ դարի վերջերին և 20-րդ դ. սկզբներին մեծ տարածում գտավ և այսօր էլ մնում է հայ ժողովրդի ծագման հիմնական տարբերակը, որն ընդհանուր գծերով ընդունում են նաև հայ պատմաբանները (տե՛ս, օրինակ, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1963, էջ 101-124, Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., հ. 1, Երևան, 1971, էջ 157-276 և այլն): Այսօր նույնպես հայ գրականության պատմաբանները հետևում են հնդեվրոպական տեսությանը և նույնիսկ Շանթի

սույն աշխատությունը նշում որպես սկզբնաղբյուր (տե՛ս, օրինակ, Կյուրեղ վրդ. Քիպարյան, Պատմութիւն Հայ Հին գրականութեան. Վենետիկ, 1992, էջ 13-17, 25): Հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը Հայկական բարձրավանդակը լինելու տարբերակի դեպքում բնականաբար խնդրոտինդրյան դուրս է գալիս Հայ ժողովրդի բնիկ կամ եկվոր լինելու հարցը: Եվ իրոք, գիտության վերջին նվաճումները հակված են այն մտքի հաստատմանը, որ հայերը բնիկ ժողովուրդ են, որոնց հայրենիքը հնուց ի վեր եղել է Հայկական լեռնաշխարհը (տե՛ս Գամկրելիձեի և Իվանովի վերոհիշյալ գիրքը):

էջ 9, տող 14-15: ... Հարկադրված է իր արևմտյան ուժեղ հարևանի կրոնքը ընդունելու... - Հայաստանը քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունել է 301 թ., Բյուզանդիայից ավելի շուտ: Նոր կրոնը Բյուզանդական կայսրությունում թեև մեծ տարածում ուներ, բայց պետական է ճանաչվել 313 թ.:

էջ 9, տող 11-12 ն.: ... Վեճ և դիմադրություն բյուզանդական քաղքեդոնության դեմ... - քաղկեդոնություն երկաբնակություն, երկբնություն, քրիստոսաբանական համակարգ, որն աստվածաբանական մտքի պատմության մեջ է մտել Քաղկեդոնի (Կ.Պոլսի արվարձան) ժողովով: 451թ. կայացած այս ժողովում ընդունվել է Քրիստոսի երկակի մարդկային ու աստվածային միմյանցից անկախ բնույթի վերաբերյալ դրույթը՝ «2 բնություն, 2 կամք, 2 ներգործություն» բանաձևով: Հայերը Քաղկեդոնի ժողովին չեն մասնակցել և նրա որոշումները չեն ընդունել՝ հետևելով Քրիստոսի միաբնակության ուսմունքին, այսինքն ընդունում էին նրա միայն աստվածային բնույթը: Քաղկեդոնականությանը չմիանալու պատճառով հետագա դարերում Բյուզանդիան նեղել է հայ եկեղեցուն, բայց միավորման բոլոր փորձերն անցել են ապարդյուն:

էջ 10, տող 5-7 ն.: ԺԴ դարուն վերջերը, թուրանական խուժումին երրորդ ալիքն է՝ մոնղոլական արշավները ... - Շանթը նկատի ունի միջինասիական նվաճող Լենկթեմուրի ավերիչ արշավանքները Հայաստան, իսկ մոնղոլական արշավները համընկնում են նրա թաթարական անվանածի հետ (մեկ տող վերև):

էջ 11, տող 1-2 ն.: ...Տերեպեյիներու հարստահարության ենթակա ... - տերեպեյի բառը որևէ բացատրական բառարանում չկա, թեև երբեմն գրականության մեջ (հատկապես պատմագիտական) հանդիպում է դերեբեյ ձևով:

էջ 22, տող 7-9 ն.: ...Արտավազդ թագավորը կհորիներ տրամաներ... հունարեն լեզվով – Տիգրան Մեծի որդի Արտավազդ Երկրորդը (մ.թ.ա. 55-34) «նույնիսկ ողբերգություններ էր հորինում, գրում էր ճառեր ու պատմական երկեր, որոնց մի մասը դեռ պահպանվել է» (Պլուտարքոս, Կենսագրություններ, Կրասոս, Երևան, 2001, էջ 144):

էջ 45, տող 2-4 ն.: ... Կույսերու նահատակության, Սուքիասյան նահատակներու շուրջ - կույսերու նահատակություն ասելով Շանթը նկատի ունի Հռիփսիմե կույսի և նրա 69 հավատակիցների նահատակությունը Տրդատ Մեծ թագավորի ձեռքով:

Սուքիասյան նահատակներ՝ նահատակների խումբ, տոնելի: Նահատակվել են մ.թ. 130 կամ 140/150 թ.: Անվանումն ստացել են իրենց առաջնորդ Սուքիասի անունից: Ըստ Սուքիասյանց վկայաբանության՝ սրանք ալանաց իշխաններ էին, Սաթենիկ թագուհու ազգականները և ապրել են Հայոց արքունիքում: Ոսկյանների քարոզչությամբ (Հինգ հռոմեացի դեսպաններ, որոնք Հայաստանում քրիստոնյա են մկրտվել Թադեոս առաքյալի կողմից: Իրենց գլխավորի՝ Խրյուսո-Ոսկիի անունով կոչվել են Ոսկյաններ, իրենք էլ զբաղվել են քարոզչությամբ և մ.թ. 100 կամ 107թ. նահատակվել Հայոց արքայորդիների ձեռքով) դարձել են քրիստոնյա և 44 տարի անց նահատակվել (տե՛ս Ա. Զամինյան, Հայոց եկեղեցու պատմություն, Երևան, 1992, էջ 33-34, Սոփերք հայկականք, հ. Ը, Վենետիկ, 1853, Քրիստոնյա Հայաստան, Ե., 2002 թ., էջ 945): .,

էջ 62, տող 9-10: ... Ափրիկիանոսի մը ձեռքով ուրիշ գրություն մը... - Հուլիոս Ափրիկիանոսը մ.թ. III դ. հույն պատմագիր է, ապրել է Ալեքսանդրիայում: Իր «Pentabiblion chronologicum» աշխատության մեջ դեպքերի ժամանակագրությունը հասցրել է մինչև 221թ.:

էջ 67, տող 15-16: ... Որ ծագման կապեր ունի Օրիոնին հետ... - Աստվածաշունչը 5-րդ դարում հունարենից հայերեն թարգմանելիս Մաշտոցը և նրա աշակերտները Օրիոն անունը փոխարինել են Հայկ անունով: Օրիոնը հունական դիցաբանության մեջ աղեղնաձիգ քաջ որսորդ է, ինչպես Հայկը՝ ըստ ժողովրդական ավանդությունների: Նա սիրում է Արտեմիս աստվածուհուն, սիրված է նրա կողմից, բայց աստվածուհին որսի ժամանակ իր եղբոր՝ Ապոլլոնի խարդավանքով պատահաբար սպանում է նրան: Վշտահար Արտեմիսը ողբում է իր սի-

ընդյալի մահը և նրան երկինք տեղափոխում վերափոխելով համաստեղության: Մեկ այլ տարբերակի համաձայն՝ Ապոլոնն ինքն է նետահարել ծովում լողացող Օրիոնին և նրա շանը՝ Սիրիուսին, փոխակերպել աստղերի և զետեղել երկնքում: Օրիոն համաստեղության երեք միաշար աստղերը հույներն անվանել են Օրիոնի գոտի կամ Երեք թագավոր, իսկ հայերը՝ Շամփուրք Հայկի կամ Շամփրուկ, Սիրիուսը՝ Շնիկ: Հայկի համաստեղությունը հայերի մեջ հայտնի էր նաև Հայ աստեղատուն անունով, և նրա ներքո ծնվողն իբր մեռնում է երկաթով: Հայկի մասին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդել 7-րդ դ. գիտնական Անանիա Շիրակացին և 13-րդ դ. մատենագիր Վանական վարդապետը:

էջ 68, տող 2-3: Իշտար, Աստարտե, Աստղիկ ու Շամիրամ խորքին մեջ բոլորն ալ նույնն են, բոլորն ալ կապված Արուսյակ աստղին.... - Արուսյակը Վեներա մոլորակն է, թվարկված առաջին երեքը՝ սիրո և գեղեցկության աստվածուհիներ, իսկ Շամիրամը դուստրն է սորական աստվածուհի Դերկետոյի, որի հետ նույնանում են Իշտարը և Աստարտեն (տե՛ս Ն. Ադոնց, Հին հայոց աշխարհայացքը, «Հայրենիք», 1926, նոյեմբեր, թիվ 1, էջ 78-89: Ադոնցի այս չափազանց ուշագրավ հոդվածը տպագրվել է «Հայրենիք» ամսագրի եւս երեք համարներում՝ 1926, հոկտ., թիվ 12, էջ 37-45, 1926, թիվ 2, դեկտ., էջ 70-82 և 1927, հունվար, թիվ 3, էջ 109-121: Այս վերջին համարում սկսել է տպագրվել նաև Շանթի «Սեռն ու նյութը բանահյուսության» աշխատությունը: Ինչ խոսք, Շանթը լավ ծանոթ է եղել Ադոնցի վերը նշված աշխատությանը, ուր գիտական խոր վերլուծության է ենթարկված հեթանոս հայերի աշխարհայացքը Արևելքի այլևայլ ժողովուրդների հավատալիքների հետ համեմատության և համադրության միջոցով):

էջ 68, տող 8-9 ն.: Հույն հեղինակ Քսենոֆոնի «Կյուրոսի կրթությունը» անունով վեպին մեջ... - Հույն գրող, պատմագիր Քսենոֆոնի (մ.թ.ա. մոտ. 430-355/ 54) այս աշխատությունը հայերեն առաջին անգամ հրատարակվել է Վենետիկում 1843 թ. «Քսենոփոնտեայ Կիւրոսի խրատու պատմութիւնք» վերնագրով: Առավելապես հայտնի է «Կյուրոպեդիա» և «Կյուրոսապատում» վերնագրերով:

էջ 77, տող 10-11: ... Որոնք անգիր վեպերեն բառացի առնված ըլլալու հավանականությունը ունին... -Շանթի մեջ բերած այս հատվածներում տեքստերը հաճախ որոշակիորեն տարբերվում են այդ տեքստերի՝ գիտականորեն ընդունված տարբերակներից և, բացի այդ, նույնիսկ Շանթի երկերի ժողովածուի բոլոր հրատարակությունների

2008 թ. հրատարակության մեջ տպագրված են ակնհայտ վրիպակներով (որոնք ուղղվել են), այդ իսկ պատճառով ծանոթագրություններում դնում ենք նաև դրանց վերոհիշյալ գիտականորեն ճշգրտված տարբերակները:

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովըն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկըն եղեգնիկ:

Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելանէր,
Ընդ եղեգան փող բո՛ց ելանէր,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ:

Նա հուր հեր ունէր,
Բո՛ց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

* * *

– Քե՛զ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց,
Ե՛կ հաւանեաց բանից
Աչագեղոյ դըստերս Ալանաց՝
Տալ զպատանիդ:
Զի վասն միոյ քինու ո՛չ է օրէն դիւցազանց՝
Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն
Կամ ծառայեցուցանելով
Ի ստրկաց կարգի պահել,
Եւ թշնամութիւն յաւիտենական
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել:

* * *

Ո՞ տայր ինձ զծուխ ծըխանի
Եւ զառաւօտըն Նաւասարդի,
Զվազելըն եղանց և զվարգելըն եղջերուաց.

Մեք փող հարուաք և թըմբկի հարկանէաք.
Որպէս օրէն էր թագաւորաց:

Էջ 91, տող 6-8 ն.: ...Հաղբատ, Սանահին ու Գետիկ վանքերը... Գլաձորի վանքը և Տաթևի վանքը - *Հաղպատի (Հաղբատի) վանքը հիմնադրվել է 976-ին և 11-13-րդ եղել կրթական, գիտական, մշակութային խոշոր կենտրոն: Վանքում ուսանել, ստեղծագործել և դասավանդել են նշանավոր շատ գիտնականներ, մասնավորապես՝ Հովհաննես Սարկավագը, Սամուել Անեցին, Վարդան Արևելցին: Ունեցել է գրչատուն, ուր գրվել, ընդօրինակվել ու ծաղկվել են բազմաթիվ մատյաններ:*

Սանահին վանական համալիրի (գտնվում է Հաղպատից ոչ հեռու) առաջին՝ Սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 10-րդ դ. 30-40-ական թթ.: Դարի երկրորդ կեսին կառուցվել է Ս. Ամենափրկիչ եկեղեցին և հիմնվել միաբանություն ու բարձրագույն դպրոց: 11-րդ դարում ունեցել է հարուստ մատենադարան, գրչատուն, ուր գրվել են բազմաթիվ մատյաններ: Սանահինը դարձել է միջնադարյան Հայաստանի հոգևոր, մշակութային և գիտակրթական նշանավոր կենտրոններից մեկը: Վանական համալիրն իր բուռն գործունեությունը շարունակել է նաև հաջորդ դարերին և միայն 15-րդ դարից հետո աստիճանական անկում է ապրել:

Գետիկի վանք ասելով Շանթը նկատի ունի Նոր Գետիկի վանքը կամ Գոշավանքը, որը հիմնադրել է Մխիթար Գոշը 1188-ին, իշխան Իվանե Զաքարյանի աջակցությամբ, երկրաշարժից ավերված Գետիկ վանքի մոտակայքում, որի միաբանությունը տեղափոխվել է նորակառույց վանք: Գոշի մահից հետո (1213) կոչվել է նրա անունով: Միջնադարյան կրոնական, կրթական և մշակութային խոշոր կենտրոններից էր, ուներ դպրոց և գրչատուն: Այստեղ են կրթվել Կիրակոս Գանձակեցին և Վանական վարդապետը: Ծաղկուն շրջանը եղել է 13-րդ դարը, հետո սկսվել է աստիճանական անկումը:

Գլաձոր միջնադարյան Հայաստանի՝ մեծ հռչակ ձեռք բերած վանական համալիր Վայոց ձորում, ուր 1291-1340 թթ. գործել է ուսումնագիտական կաճառ՝ համալսարան, միջնադարյան երկու նշանավոր համալսարաններից առաջինը: Այստեղ դասախոսել են 20-ից ավելի րաբունիներ և րաբունապետեր՝ Ներսես Մշեցի, Եսայի Նչեցի, Մխիթար Երզնկացի, Մխիթար Սասնեցի և այլն: Աստվածաբանությունից բացի

Համալսարանում դասավանդվել են 7 ազատ արվեստները (փիլիսոփայություն, ճարտասանություն, քերականություն, մաթեմատիկա, երկրաչափություն, աստղագիտություն և երաժշտություն), հունարեն և լատիներեն: Եղել է Արևելյան Հայաստանի հակամիաբարական (հակաունիթորական) շարժման նշանավոր կենտրոններից: Գլաձորն ունեցել է համահայկական նշանակություն և հռչակ: Ժամանակակիցները այն հորջորջել են «Երկրորդ Աթենք», «Իմաստության մայրաքաղաք և տուն», «Մեծահռչակ համալսարան» և այլն:

Տաթևի վանքը, ըստ Ստեփանոս Օրբելյանի, հիմնադրվել է 4-րդ դարում: Այժմյան տաճարը կառուցվել է 895-906 թթ.: Իններորդ դարում Հայաստանի ամենախոշոր վանքն էր, որի միաբանների թիվը հասնում էր մի քանի հազարի: 14-րդ դարում վանքը մեծ վերելք է ապրել, 1345-1415 թթ. այստեղ գործել է Տաթևի համալսարանը, ուր ուսանել և դասավանդել են Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Առաքել Սյունեցին, Գրիգոր Խլաթեցին (Ծերենց), Թովմա Մեծոփեցին և ուրիշներ: Միջնադարյան Հայաստանի գրչության խոշորագույն կենտրոններից էր, մեզ է հասել այստեղ գրված, ընդօրինակված և ծաղկված 140 ձեռագիր մատյան:

Էջ 91, տող 1-4 ն.: ... Հռոմկլայի բերդը... Սիսի կաթողիկոսարանը... Դրազարկի վանքը, Սկևռա վանքը, Գռներ, Ակներ և Այգեկ վանքերը... - Հռոմկլա ամրոցը 1149-1292 թթ. եղել է Հայոց կաթողիկոսների նստավայրը: Կաթողիկոսարանը, որը եղել է 3 եկեղեցի միավորող վանական համալիր, 12-13-րդ դդ. դարձել է համահայկական մշակութային, գրական, ուսումնական և մտավոր կենտրոն: Այստեղ հավաքվել, բազմացվել ու պատկերազարդվել են բազմաթիվ ձեռագրեր, գրվել են նորերը, բարձրագույն դպրոցում կրթվել ու դասավանդել են ժամանակի նշանավոր գիտնականները, հոգևորականները, Հայոց կաթողիկոսները: 1292-ին եգիպտական մամլուքները գրավել և ավերել են Հռոմկլան:

Սսի կաթողիկոսարանը եղել է Հայոց կաթողիկոսների նստավայրը 1293-1441 թթ.: 1292-ին, երբ ավերվել է Հռոմկլան, և գերի տարվել կաթողիկոս Ստեփանոս Դ Հռոմկլայեցին, նոր կաթողիկոսը՝ Գրիգոր Է Անավարզեցին, տեղափոխվել է Սիս և իր նստավայրը դարձրել Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Սիսը, հատկապես կաթողիկոսանիստ դառնալուց հետո, եղել է համահայկական կրթական և մշակութային խոշոր կենտրոն: Կաթողիկոսարանում և բարձրագույն դպրոցներում

(վարդապետարան-համալսարաններ) կրթվել ու գործել են ժամանակի նշանավոր հայ գիտնականներ, հոգևորականներ, հայոց կաթողիկոսներ: Հավաքվել, ուսումնասիրվել, պատկերազարդվել ու բազմացվել են հազարավոր ձեռագրեր, ստեղծվել են նորերը, կատարվել են թարգմանություններ:

Դրազարկի վանքը (Դրազարկի անապատ, Թ՚րազարկ, Փոխվանք. Ավագ վանք, Սիս քաղաքից մոտ 36 կմ արևմուտք) ենթադրաբար գոյություն է ունեցել 10-րդ դարից: Անունն ստացել է դուռ և զարկ կամ թուր և զարկ բառերից: 12-րդ դարում վերածվել է կրթական, գիտական, գրչության և մանրանկարչության կենտրոնի: Այստեղ են սովորել Սարգիս Պիծակը, Հովհաննես Արքաեղբայրը և ուրիշներ: Վանքի դպրոցը նաև դիվանագետներ է պատրաստել Կիլիկիայի հայոց թագավորության համար: Դրազարկում գրված վերջին ձեռագրի մատյանը թվագրված է 1371 թվականով:

Սկևռա վանք՝ ուսումնական, մշակութային և գիտական կենտրոն Կիլիկյան Հայաստանում: Մինչև 1071 թ. եղել է հունական վանք: 12-13-րդ դարերում վանքում ծաղկում են ապրել գրչությունը, մանրանկարչությունը, փորագրությունը: Եղել է կիլիկյան մանրանկարչության երկրորդ նշանավոր կենտրոնը Դրազարկից հետո: Ունեցել է բարձր տիպի դպրոց, մատենադարան, գրչատուն, կուսանոց: Սկևռա վանքում են գործել Ներսես Լամբրոնացին և Սարգիս Պիծակը: Վանքը 13-րդ դ. վերջին ավերվել է թուրքերի կողմից:

Գռներ՝ նշանավոր վանք Կիլիկյան Հայաստանում: Եղել է Հեթում Ա թագավորի (1226-1269) կրտսեր եղբայր Հովհաննես Արքաեղբոր բուն հայրենիքը, նրա կողմից հովանավորվել և առաջնորդվել է մինչև իր մահը (1289թ.): Գրչության և մանրանկարչության խոշոր կենտրոն էր, գործել է մինչև Կիլիկայի հայկական թագավորության անկումը (14-րդ դ. վերջ):

Ակներ կամ Ականց անապատ՝ Կիլիկյան Հայաստանի գլխավոր վանքերից, գրչության, մանրանկարչության և գիտական խոշոր կենտրոն: Գտնվել է Բարձրաբերդ ամրոցի մերձակայքում՝ Ակներ գյուղի մոտ. աղբյուրաշատ վայրում (այստեղից էլ Ակներ անունը): Վանքը կառուցել է Լևոն Բ Մեծագործ արքան 1198-1203 թթ., օծել է հայոց կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատը: Գործելով Կիլիկիայի հայոց թագավորության քաղաքական և ռազմական հզորության ժամանակաշրջանում վանքը եղել է նաև պետության դիվանագիտական և հոգևոր գործերի խորհրդա-

րան: Համահայկական հուշակ է վայելել գրչության և մանրանկարչության արվեստով: 14-րդ դարից հետո Ակների անունը այլևս չի հիշատակվում, հավանաբար ավերվել է 1375 թ. Սսի պաշարման ժամանակ:

Այգեկ՝ հայտնի վանք Կիլիկյան Հայաստանում: Հիմնադրվել է 1166-ին այգեշատ վայրում (այստեղից էլ անունը): 1206-ին Այգեկում է հաստատվել Վարդան Այգեկցին և այստեղ էլ գրել է իր առակները: Վանքի տեղում այժմ գտնվում են 2 կաթոլիկական եկեղեցիներ՝ շրջապատված այգիներով և պարտեզներով:

էջ 95, տող 3 ն.: ...Քաղդեական և սեմական ժողովուրդները -քաղդեացիները սեմական անասնապահ ցեղեր էին, որոնք մ.թ.ա. I հազարամյակի սկզբներին հաստատվել են Միջագետքի հարավում, անցել նստակեցության և ստեղծել մի շարք իշխանություններ: Դաշնակիցների հետ պայքարել են Բաբելոնի դեմ, որի գահին բազմիցս տիրել են քաղդեացի իշխանները: Մ.թ.ա. 626-538 թթ. Բաբելոնում կառավարել է քաղդեական դինաստիան, որն ստեղծել է Նորբաբելոնյան հզոր թագավորությունը:

Հին Հունաստանում և Հին Հռոմում քաղդեացիներ անվանել են բաբելոնյան ծագում ունեցող քրմերին և գուշակներին: Իսկ 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին քաղդեացիներ սխալմամբ անվանել են շումերներին:

էջ 96, տող 4-6: ...Մակաբայեցիներու ազգային դիմադրության պատմությունը ավելի ուշ ժամանակներեն - այսինքն՝ մ.թ.ա. II դարը: Սելևկյան թագավոր Անտիոք IV Եպիփանը մ.թ.ա. 168 թ. կողոպտեց Երուսաղեմի տաճարը, արգելեց եհովային զոհ մատուցելը, շաբաթ օրը տոնելը և երեխաների թլպատումը: Մ.թ.ա. 167 թ. հուդայացիները Մատաթիա քրմի գլխավորությամբ ապստամբություն բարձրացրին, որը 165-135 թթ. հաջորդաբար գլխավորեցին նրա 3 որդիները՝ Հուդան, Հովնաթանը և Սիմոնը, որոնք կոչվում էին Մակաբեյաններ (Մակաբայեցիներ): Ապստամբությունն ավարտվեց հրեաների հաղթանակով: Այս պայքարի պատմությունը շարադրված է Մակաբայեցիների Ա, Բ, Գ գրքերում, որոնք, ըստ հունական Յոթանասնիցի (որին հետևում է հայ եկեղեցին), մտնում են Հին կտակարանի մեջ:

էջ 98, տող 5-6: Բարսեղ Կեսարացիի (Դ դար) վեցօրյա արարչության ճառերը - խոսքը համառոտ «Վեցօրէից» կոչվող աշխատության մասին է («Ս. Բարսեղի Եպիսկոպոսի Կեսարու

Կապադովկացույ ճառք վասն վեցօրեայ արարչութեանն»), ուր հեղինակը 9 ճառով փորձել է բնագիտորեն մեկնաբանել աշխարհի վեցօրյա արարման աստվածաշնչյան առասպելը:

էջ 98, տող 6-7: ***Հովհան Ոսկեբերանի (մինչև Ը-ի կեսերը) մեկնությունները...*** *-փակագծերի այս Ը դարը ակնհայտ վրիպակ է, պետք է լինի Դ -Ե, քանի որ Ոսկեբերանն ապրել է մոտ 346-407 թթ., և նրա գործերից մի քանիսը հայերեն թարգմանվել են գրերի գյուտից անմիջապես հետո:*

էջ 98, տող 10-11: ***Եփրատ Զգոն պարսիկի քսաներեք ճառերը*** *- խոսքը պարսիկ հեղինակ Ափրահատի (Ափրատատ, Ափրաատ, Աֆրահատ, Ֆարհատ, Պարսիկ իմաստուն, III - IV դարեր) և նրա 22 ճառերի (դրանց հետագայում ավելացվել է ևս մեկը) մասին է, որոնք ամփոփված են «Գիրք, որ կոչի Զգօն» վերնագրով գրքում: Աշխատությունը հայերեն է թարգմանվել V դ. առաջին կեսին և վերագրվել IV դ. նշանավոր հոգևորական Հակոբ Մծբնա հայրապետին (տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 411-425, «Զգօն» կոչված գրքի հեղինակի հարցը»):*

էջ 98, տող 12: ***Գրիգոր Նազիանզացիի (Դ) քսանհինգ ճառերը ...*** *- Նազիանզացի-ն Շանթի երկերի բեյրության 2 հրատարակություններում էլ տպագրված է վրիպակով Նազիազանցի:*

էջ 98, տող 12-13: ***Մեծն Աթանասի (Դ) ճառերն ու թղթերը...*** *-խոսքը հույն նշանավոր եկեղեցական գործիչ Աթանաս Ալեքսանդրացու (295-373) մասին է:*

էջ 98, տող 13-14: ***Տիմոթեոս Կուզի (Ե) հակաճառություններ քաղքեդոնականներուն դեմ*** *- հույն աստվածաբան, եկեղեցական գործիչ Տիմոթեոս Կուզի (Ալեքսանդրացի, IV դ. վերջ - 477) ամենահայտնի և ամբողջական պահպանված երկը, որը մեզ է հասել հայերեն թարգմանությամբ, կոչվում է «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի»:*

էջ 98, տող 5-6 ն.: ***Արիստոտելի «Ստորոգությունները», Պորփյուրի «Ներածությունը» ...*** *- այստեղ մեկ տողի վրա կատարված է միանգամից երկու ուղղում. Շանթի երկերի Բեյրութի առաջին հրատարակության 9-րդ հատորում (էջ 87) գրված է` Արիստոտելի «Ստորագրությունները», «Պորփյուրի ներածությունը», ինչը ակնհայտ տառընթերցման արդյունք է և հետևանք թերևս Շանթի ձեռագրի դժվարընթեռնելի լինելու: Հույն փիլիսոփա, տրամաբան Պորփյուր*

Փյունիկեցու (232- 304) աշխատությունը կոչվում է «Ներածություն Ստորոգությանցն Արիստոտելի» և հայերեն է թարգմանվել ենթադրաբար 480-490-ական թթ.: Զարմանալին այն է, որ ընտրության առաջին հրատարակության այս (և նման) վրիպակները նույնությամբ տեղ են գտել նաև երկրորդ՝ 2008 թ. հրատարակության Ը հատորում (էջ 82):

Էջ 98, տող 2-3 ն.: Փիլատոսի «Բարուախոս» գրվածքը... - առակների և առակատիպ զրույցների «Բարոյախոս» ժողովածուն կազմվել է ենթադրաբար մ.թ. II դարում Ալեքսանդրիայում: Հավանական հեղինակ համարվել են Եպիփանես Կիպրացին, Պետրոս Ալեքսանդրացին, Բարսեղ Կեսարացին, Հովհան Ոսկեբերանը և ուրիշներ: Շանթի հիշատակած Փիլատոսը նույնպես ըստ երևույթին մտնում է հավանական հեղինակների ցանկի մեջ:

Էջ 99, տող 1 : Կալիսթենեսի «Ալեքսանդրի վարքը» - Կալիսթենես Ոլյունթացուն (II - III դդ.) վերագրվող այս աշխատությունը կրում է «Պատմութիւն վարուց Աղեքսանդրի» խորագիրը և V դ. թարգմանվելով հայերեն՝ դարձել է ընթերցանության սիրված նյութ ու բազմաթիվ ձեռագիր օրինակներով հասել մեր օրերը:

Էջ 99, տող 3: Այլև պետք է հիշել «Խիկարի իմաստությունը» ... - մ.թ.ա. V դ. ասորի հեղինակ Խիկարի «Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստնոյ» գիրքը, որը միջնադարում մեծ ժողովրդականություն է վայելել: Հայերեն առաջին անգամ հրատարակվել է 1708-ին և մինչև 1911 թ. հրատարակվել է ևս 14 անգամ:

Էջ 99, տող 4-5: .... Նոնոսի «Առասպելներուն մեկնությունը» - Շանթի երկերի ընտրության երկու հրատարակություններում էլ (էջ 88 և էջ 82) հեղինակի անունը գրված է վրիպակով՝ Նոմոս: Նոնոսի (կամ Նոննոսի, IV - V դդ. հույն հեղինակ) աշխատության վերնագիրն է «Ժողովարանք պատմութեանց առասպելացն»: Գիրքը Գրիգոր Աստվածաբանի (Նազիանզացի) ճառերում հանդիպող առասպելական անունների մեկնությունն է:

Էջ 99, տող 6-7: Դիոնիսիոս Առիսպագացին վերագրված խրթին վարդապետական գրվածքներ... - Աթենքի՝ Պողոս առաքյալի կողմից ձեռնադրված առաջին եպիսկոպոսապետ Դիոնիսիոս Առիսպագացի (Արիոպագացի, մ.թ. I դար) աշխատությունները հայերեն թարգմանվել են 8-րդ դարում Ստեփանոս Սյունեցու և Դավիթ Հյուպատոսի կողմից: Հետագայում նրա երկերը հայերեն է թարգմանել Ստեփանոս Լեհացին 17-րդ դ. սկզբին:

Էջ 99, տող 8-9: ***Կյուրեղ Ալեքսանդրացիի (Ե) «Պարապմանց» և «Գանձուց» գրքերը*** *- «Գիրք պարապմանց» աշխատությունը (44 ճառ) հայերեն է թարգմանվել 714-715 թթ. Դավիթ Հյուպատոսի և Ստեփանոս Սյունեցու կողմից: Մյուս «Գիրք գանձուց» աշխատությունը թարգմանվել է մոտավորապես նույն ժամանակ, բայց թարգմանիչների մասին հստակ տվյալներ չկան:*

Էջ 99, տող 10-11: ***Հովհաննես Կլիմաքսի (Զ) «Սանդուղքը»*** *- պետք է լինի Հովհ. Կլեմաքս, նույն Հովհ. Սինայեցին է (525-609), բյուզանդացի հեղինակ, որի գիրքը կոչվում է «Սանդուղք աստուածային ելից»:*

Էջ 99, տող 12: ***Նեմեսիոսի (Դ) «Մարդու բնության մասին» ...*** *- խոսքը 4-5-րդ դդ. աստվածաբան, փիլիսոփա Նեմեսիոս Եմեսացու մասին է:*

Էջ 99, տող 15: ***Պիսիտի «Վեցօրյակը» ...*** *- Գեորգ Պիսիդացի, Գեորգիոս Պիսիդես, 7-րդ դ. բյուզանդացի բանաստեղծ: Նրա «Վեցօրեայք» պոեմի (հրատ. Վենետիկում 1900-ին, Ծննդոց գրքի 1 գլխի բանաստեղծական վերաշարադրանքը) հայերեն բարձրորակ թարգմանությունից պակասում է մոտ 400 տող:*

Էջ 99, տող 17-18: ***Աբլմսնի նահատակության վկայաբանությունը ...*** *- Աբլմսև, ավելի ճիշտ Աբդլմսեհ անունով մեր մատենագրության մեջ հայտնի են 2 նահատակ՝ 553-ին 12 տարեկանում նահատակված մի հրեա և 11-րդ դարում մանուկ հասակում նահատակված Աբդլմսեհ Արծրունին: Այստեղ խոսքը առաջին՝ հրեա Աբդլմսեհի մասին է:*

Էջ 99, տող 5 ն.: ***...Ինչպես Բեննետիկտոսի (ԺԲ) «Սահմանք կրոնավորաց» ...*** *- 12-րդ դարում նման Բեննեդիկտոս մեզ չհաջողվեց գտնել: Հանրագիտարաններում (այն էլ ոչ բոլոր) նշված են միայն ս. Բեննեդիկտ Նուրսիացու (480-547) և ս. Բեննեդիկտ Անիանացու (751-821) անունները: Առաջինը մոտ. 530-ին Մոնտեկասինոյում (Իտալիա) հիմնել է արևմտաեվրոպական հնագույն եկեղեցական միաբանությունը՝ բեննեդիկտյան օրդենը, և սահմանել (բեննեդիկտյան) կրոնավորի վարքի կանոնները: Բեննեդիկտ Նուրսիացու կյանքի պատմությունը (վարքը) գրել է Հռոմի պապ Գրիգոր I -ը (տե՛ս հաջորդ ծանոթագրությունը), որի աշխատություններից Լամբրոնացին թարգմանել է:*

Բեննեդիկտ Անիանացին կրոնական մի քանի աշխատությունների, մասնավորապես «Code of Rules» («Կանոնների կոդեքս») և «Con-

cord of Rules» («Կանոնների համաձայնություն») գրքերի հեղինակն է, ընդ որում նա այս աշխատությունները գրել է Բենեդիկտ Նուրսիացու գործերի հիման վրա՝ վերամշակելով ու թարմացնելով նրա մշակած կանոնները:

Շանթի նշած Բենեդիկտոսը ակներևաբար այս երկուսից մեկն է, քանի որ 12-րդ դարում քիչ թե շատ հայտնի Բենեդիկտ չկա, և երկրորդ՝ Լամբրոնացին չէր կարող թարգմանել ինչ-որ անհայտ (կամ նույնիսկ քիչ հայտնի) աստվածաբանի աշխատություն (ի դեպ, Լամբրոնացու մասին գրված աշխատություններում նրա այս թարգմանության մասին որևէ տեղեկություն չկա):

Էջ 99, տող 4 ն.: ...Գրիգոր պապի իտալական հայրերու կյանքն ու վարքը - խոսքը ակներևաբար Հռոմի պապ Գրիգոր 1-ի (Մեծ, մոտ. 540-604, գահակալել է 590-ից) մասին է, որի «Տրամախոսությունները» թարգմանել է Լամբրոնացին:

Էջ 100, տող 3-5: ... ԺԳ դարուն սկիզբը Առաքել վարդապետ մը թարգմանած է արաբերենե «Երազահան»-ը և «Պղնձե քաղաքի պատմությունը» -Առաքել վարդապետը (Առաքել Արևելցի Անեցի, Առաքել Արևելցի Շիրակավանցի, 12-13- րդ դդ.) 1222-ին թարգմանել է «Ալեկխսոս» երազահանը և, ենթադրաբար, «Պղնձե քաղաք» վեպը: Հատկապես այս երկրորդը իրոք որ եղել է ընթերցանության սիրված նյութ, քաղաքի անունը ներառվել է նույնիսկ մեր էպոսի՝ «Սասնա ծռերի» մեջ:

Էջ 104, տող 1-2: ... Հովհան Մանդակունի հայրապետի օրով - 478-490 թթ.:

Էջ 104, տող 14-15: Առաջին անգամ Օհան Օձնեցի կաթողիկոսն է ութերորդ դարուն մեջ ... - Հովհան Օձնեցի կաթողիկոսը գահակալել է 717-728 թթ.:

Էջ 105, տող 17: ... Զաքարիա կաթողիկոս (Թ) - Զաքարիա Ա Ձագեցի (ծն. թ. անհայտ - 876), հայոց կաթողիկոս 855-ից:

Էջ 106. տող 10-11 ն.: Կարապետ Սանահնեցի ներբողած է խաչն ու Հովհաննես Մկրտիչը - Մատենադարանի հմուտ մասնագետների համաձայն՝ Կարապետ Սանահնեցի անունով հեղինակ մեր միջնադարյան գրականության մեջ չկա: Դժվար է ասել, թե ում նկատի ունի Շանթը, կարող է լինել 11-րդ դ. ժամանակագիր, աստվածաբան Հակոբ Սանահնեցին:

Էջ 105, տող 1-2 ն.: Կոստանդին կաթողիկոս (ԺԳ, Սիս) -

Կոստանդին Ա Բարձրաբերդցի (1180-ական թթ. - 1267, Հայոց կաթողիկոս 1221-ից): 1246-ին վճռականորեն մերժել է Հռոմի պապի առաջարկը` թողնելու «Հերձվածող դավանանքը» և միանալու կաթոլիկ եկեղեցուն:

էջ 105-106, տող 1: Մխիթար և Եսայի Սասնեցիներ (ԺԴ) - Մխիթար Սասնեցի (մոտ. 1260-1337) մատենագիր, մանկավարժ. Եսայի Նչեցու աշակերտը, նրանից էլ առացել է իր վարդապետական գավազանը: Իսկ Եսայի Սասնեցին հենց Եսայի Նչեցին է, որը ծնվել է Սասունի Նիչ գավառում:

էջ 106, տող 1-2 ն.: Նախ պավլիկյաններն են Է և Ը դարերուն, ետքը` Թոնտրակեցիք Թ, Ժ դարերուն - ըստ պատմաբանների` պավլիկյան շարժումն սկզբնավորվել է դեռևս V դ. վերջերին և VI դ. սկզբներին (Հայ ժող. պատմություն, հ. 1, Երևան, 1963, էջ 394-95): Այն արտահայտում էր ստորին ու միջին դասերի դժգոհությունը և ցասումը եկեղեցու անսահմանափակ իշխանության, քրիստոնեական դոգմաների և ֆեոդալների կամայականությունների դեմ: Պավլիկյաններն ունեին իրենց բնակավայրերը, ուր ապրում էին համայնքներով, ինչպես նաև կազմակերպված և մարտունակ զինուժ: Բյուզանդական կայսրությունը և նրան օգնող հայ ֆեոդալներին միայն 8-րդ դ. երկրորդ կեսին հաջողվեց վերջնականապես հրով ու սրով ճնշել պավլիկյան շարժումը, և նույն ժամանակ էլ նրա հիմքի վրա առաջացավ թոնդրակյան շարժումը: Թոնդրակեցիները, որոնց ամենահայտնի առաջնորդն էր Սմբատ Զարեհավանցին, պավլիկյանների նման մերժում էին եկեղեցին իր բոլոր խորհուրդներով, սրբություններով և հոգևոր դասով, բայց նրանք ավելի հեռուն գնացին` ժխտելով Սուրբ գիրքն ու Քրիստոսին: Պավլիկյանների նման ապրում էին համայնքներով, ուր բոլորը հավասար էին: Թոնդրակյան շարժումը խարխլում էր աշխարհիկ և հոգևոր պետերի իշխանության հիմքերը, և վերջիններս հերձվածողներին վերաբերվում էին չտեսնված դաժանությամբ: Հայ իրականության մեջ այդ շարժումը տևեց մոտ 200 տարի և վերջնականապես ճնշվեց 11-րդ դ. կեսերին Հայաստանի և Բյուզանդիայի միացյալ ուժերով (Մ. Հայրապետյան, Հայոց հին և միջնադարյան գրականության պատմություն, էջ 295-96: Ե. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 114-204 և այլն):

էջ 107, տող 5-6: Յոթներորդ դարուն մեջ Վրթանես մը կգրե պավլիկյաններուն աղանդին դեմ - խոսքն ակներևաբար

մատենագիր, աստվածաբան Վրթանես Քերթողի մասին է (6-րդ դ. կեսեր - 7-րդ դ. սկիզբ): Նրա հիմնական աշխատությունը կոչվում է «Յաղագս պատկերամարտից», ուղղված է պատկերամարտության դեմ և հիմնավորում է, որ պատկերների պաշտամունքը շեղում չէ Սուրբ գրքից:

էջ 107, տող 6-7: Դավիթ Անհաղթ «Խաչի ճառ» մը ունի պավլիկյաններուն դեմ - նշվածը ոչ թե ճառ է, այլ ներբող, նրա ամբողջական վերնագիրն է «Ներբող Աստուածընկալ Սուրբ Խաչին»:

էջ 107, տող 7: Աբրահամ կաթողիկոս ... - խոսքը Աբրահամ Ա Աղբաթանեցի կաթողիկոսի մասին է (ծն. թ. անհայտ - մոտ, 615), հայոց կաթողիկոս 607-ից:

էջ 107, տող 9: Իր հաջորդը՝ Կոմիտաս կաթողիկոս ... - ծն. թ. անհայտ - 628, հայոց կաթողիկոս 615-ից: Հայտնի է իր կրոնական-մշակութային լայն գործունեությամբ:

էջ 107, տող 12-13: Ութերորդ դարուն մեջ Խոսրով Հոխոր կգրե երևութականներու, հուլիանիտներու և սևերյաններու դեմ - խոսքը 8-րդ դ. մատենագիր, աստվածաբան Խոսրովիկ Թարգմանչի մասին է: Նրա անունով մեզ հասած 7 թղթերում քննադատվում են քաղկեդոնականությունը և ասորական քրիստոնեական միաբնակ եկեղեցու 2 ծայրահեղ հերձվածները՝ սևերյան և հուլիանական: Առաջինն իր անունն առացել է Սևերոս Անտիոքացու անունից (465-538), որը պնդում էր, թե Հիսուս Քրիստոսը բոլոր մարմնային կրքերը կրում էր հարկադրաբար, սովորական մարդկանց պես:

Հուլիանիտները նույն երևութականներն են (Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 53-54, 328, 643), այդպես են կոչվել Հուլիանոս Հալիկառնասացու (V - VI դդ.) անունով, որը պնդում էր, թե Քրիստոսի մարմնեղությունը և չարչարանքները իրական չեն, այլ երևութական, թվացյալ, «առ աչօք», իսկ ինքը՝ Քրիստոսը՝ անմարմին էակ:

էջ 107, տող 17-18: Իններորդ դարուն մեջ Սահակ Մռուտ, Մաշտոց կաթողիկոս և Հովհաննես կաթողիկոս ... - Սահակ Մռուտ Ապիկուրեցը Տայքի եպիսկոպոսն էր, գրել է Աշոտ Բագրատունի իշխանի կողմից Բյուզանդիայի Փոտ պատրիարքին (857-886) ուղղված պատասխան նամակը:

Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոսը գահակալել է ընդամենը 6 ամիս՝ 897- 98 թթ., իսկ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը՝ նրանից հետո՝ 898-925/ 930 թթ.:

էջ 107, տող 13-14 ն.: Տասներորդ դարուն Անանիա Նարեկացին ունի գրութիւններ Թոնտրակեցիներու աղանդին դէմ - Անանիա Նարեկացին (ծն. թ. անհայտ - մոտ. 978) Գրիգոր Նարեկացու ուսուցիչն էր, Նարեկա վանքի վանահայրը, հայտնի փիլիսոփա, մատենագիր և մանկավարժ: Կաթողիկոս Անանիա Ա Մոկացու պահանջով Թոնդրակյանների դեմ գրել է «Գիր խոստովանութեան» և «Հակաճառութիւն ընդդեմ Թոնդրակեցւոց» աշխատությունները, որոնցում հերքում է Թոնդրակեցիներին հարկը՝ իր դեմ ներկայացված ամբաստանությունները: Երկրորդ գրվածքից պահպանվել է քաղվածք Հովհ. Երզնկացու մոտ:

էջ 107, տող 12-13 ն.: Խաչիկ կաթողիկոս և Սամուել Կամրջեցի ... - Խաչիկ Ա Արշարունեցի (ծն. թ. անհայտ - 992), հայոց կաթողիկոս 973-ից: Հայտնի է հույն ուղղափառ եկեղեցու դեմ մղած պայքարով և Արգինայում կատարած շինարարական աշխատանքներով:

Սամուել Կամրջաձորեցին նորահաստատ Կամրջաձոր վանքի երկրորդ առաջնորդն էր, հեղինակն է «Տոնապատճառ» գրքի և գրել է դավանաբանական թղթեր Խաչիկ կաթողիկոսի թելադրությամբ:

էջ 107, տող 9-11 ն.: Վասպուրականի Գագիկ թագավորը նույն ոգիով թուղթ մը գրած է բյուզանդական Ռոմանոս կայսեր և Պոլսի պատրիարքին - Գագիկ արքայի (թագ. 908 - 943 թթ.) այս թուղթը լույս է տեսել «Գիրք թղթոց» ժողովածուում (Թիֆլիս, 1901, էջ 295-301): Ռոմանոս կայսրը Ռոմանոս I Լակապենոսն է (թագ. 920- 944):

էջ 107, տող 2-3 ն.: Լևոնի թագավորութենեն ետքը ... - խոսքը Կիլիկիայի Լևոն Բ Մեծագործ արքայի մասին է, որն իշխել է 1187-1219 թթ., թագավոր է օծվել 1198-ին:

էջ 124, տող 12 ն.: Մերժեցին զկարիս մարմնական կենցաղոյս ... -այս տան վերջին տողը ժամանակակից հրատարակություններում փոքր ինչ տարբեր է.

Մերժեցին ըզկարիս մարմնական կենցաղոյս,
Զի ծանեան եթէ երազ է և սուտ պաճուճանք,
Ոչ հեշտացան ի գըրգանս փափկութեան,
Իմացան եթէ սընոտի է անցաւոր մեծութիւնս:

էջ 144, տող 3-4 ն.: ... Ունի չափածո երկար գրություն մը ... - այս ստեղծագործությունը բաղկացած է 188 տողից և կարճ կոչվում է «Բան իմաստութեան»:

Էջ 147, տող 2-3: ... Համառոտ կերպով կվերածե Հազար տողանի ոտանավորի մը... - Գր. Մագիստրոսի պոեմը հենց այդպես էլ կոչվում է՝ «Հազարտողեան առ Մանուչէ», թեև պոեմի տողերի թիվը 1016 է: Մանուչեն էլ այն արաբ գիտունն է, որին գրավոր հաղթել է Մագիստրոսը:

Էջ 152, տող 3-4: Գիրքը կոչված է «Ողբերգական վիպասանութիւն» - Շնորհալու պոեմը կոչվում է «Ողբերգութիւն վիպասանական ի տառից սրբոց»:

Էջ 152, տող 7-8: Գրած է «Բան հաւատոյ» հազարե ավելի տողերով... - այս պոեմը բաղկացած է 1500 տողից:

Էջ 152, տող 4 ն.: Երկրորդը պարզ «Վիպասանութիւն» վերնագիրը ունի ... - ամբողջական վերնագիրը շատ երկար է՝ «Շարագրութիւն Հոմերական վիպասանութեամբ սակս Հայկազանց սեռի...»: Պոեմը բաղկացած է 1600 տողից:

Էջ 153,, տող 2 ն.: Ամենեն առաջ Գրիգոր Տղա կաթողիկոսը ... - Ներսես Շնորհալու ավագ եղբոր որդին էր և հայոց կաթողիկոս է դարձել իր հորեղբոր մահից հետո՝ 1173 թ.: Գահակալել է մինչև 1193-ը: Սալահեդդինը Երուսաղեմը գրավել է 1187-ին, իսկ 1189-ին Գրիգոր Տղան գրել է իր պոեմը:

Էջ 154, տող 3-4: Երկրորդ մեծ հեղինակն է Ստեփաննոս Օրբելյան ... - Օրբելյանը (մոտ. 1230-1305) եպիսկոպոս էր և Սյունիքի հոգևոր առաջնորդը: Նրա պոեմը կոչվում է «Ողբ ի դիմաց Կաթողիկէին», գրվել է եգիպտական մամլուքների կողմից 1292 թ. կաթողիկոսանիստ Հռոմկլա ամրոցի ավերման և հայոց կաթողիկոսի գերեվարման ու նահատակության առիթով: 1885-ին պոեմը «Ողբ ի Ս. Կաթողիկէն» խորագրով տպագրվել է Թիֆլիսում:

Էջ 154, տող 8-9: Հովհաննես Երզնկացին գրած է հազարտողյան մը ալ հանգով 1289 թվականին ... - միջնադարյան նշանավոր կրոնական գործիչ, գիտնական, փիլիսոփա, քերական, մատենագիր և բանաստեղծ Հովհ. Երզնկացին (1220-30-ական թթ. -1293) 1284-ին չափածոյի է վերածել իր «Յաղագս երկնային շարժմանց...» բնագիտական աշխատությունը: Այն տպագրվել է 1792-ին Նոր Նախիջևանում:

Էջ 154, տող 11-12: Խաչատուր Կեչառեցին ԺԴ դարուն սկիզբները գրած է «Ողբ վասն աւերման տանն արևելեան»...

- 90 տողանոց բանաստեղծություն է «Ողբ վասն առման տանս արևմտեան» խորագրով:

Էջ 154, տող 17-18: Վահրամ Րաբունի (ԺԳ) և Գրիգոր Ծերենց (ԺԵ) երկուքն ալ պատմիչի և տաղաչափի պաշտոնները կմիացնեն իրարու ... - Նանթը նկատի ունի Րաբունու «Ոտանաւոր պատմութիւն Ռուբինեանց» չափածո պատմական երկը, որը հեղինակը գրել է Կիլիկիայի Լևոն Գ թագավորի հանձնարարությամբ, և Գրիգոր Ծերենցի 2 չափածո պատմական ողբերը «Ողբ ի գծողէս» (Ի Գրիգորէ Խլաթեցւոյ)» և «Յիշատակարան աղէտից»:

Էջ 154, տող 10-11 ն.: Այսինքն՝ Միլտոնի և Տանթեի նյութերը - նկատի ունի Ջոն Միլտոնի «Դրախտ կորուսյալ» պոեմը և Դանթեի «Աստվածային կատակերգության» առաջին մասը «Դժոխքը»:

Էջ 154, տող 7-9 ն. : Աբրահամ Անկյուրացի... Առաքել Բաղիշեցի... - Անկյուրացու պոեմը կոչվում է «Ողբ ի վերայ առման Կոստանդինուպոլսոյ» (320 տող), իսկ Առաքել Բաղիշեցունը «Ողբ մայրաքաղաքին Ստըմպօլու» (392 տող):

Էջ 154, տող 5-6 ն.: Մինաս Թոխաթցին գրած է բարբառախառն գրաբարով մը «Ողբ ի վրայ Օլախաց երկրի Հայերուն» - պոեմում նկարագրված են Մոլդավիայի թագավոր Նտեֆան Ռարեշի (1551-52) խստությունները Օլախաց երկրում (Վալախիա) բնակվող Հայերի նկատմամբ:

Էջ 154, տող 2-3 ն.: ԺԶ դարու վերջերն ալ Սիմեոն վարդապետ Մոկացին գրած է «Ողբ Մեծոփայ սուրբ ուխտին» - խոսքը պատմագիր, բանաստեղծ և մանկավարժ ՍիմեոնԱպարանեցու մասին է (1540-ական թթ. - 1614), որը ծնվել է Մոկքի Ապարանք գյուղում: Նրա պոեմը՝ «Ողբ ցաւագին ի վերայ Մեծոփայ...», գրված է Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմի ազդեցությամբ:

Էջ 158, տող 1 ն.: Թափծու ու դժգույն միակերպ խոսքեր... - Թափծու բառացի նշանակում է թափածո, ձուլածո:

Էջ 160, տող 9-10: Առաջին անգամ կհիշվի Մաքենինի վանքին վանահայրը, որ ութերորդ դարուն... - Մաքենյաց կամ Մաքենոցաց վանքը գտնվում է Մաքենիս գյուղ մոտ Վարդենիսից 15 կմ հարավ-արևմուտք: Հայտնի է 7-րդ դարից, 9-10-րդ դարերում եղել է Մեծ Հայքի Գեղարքունի գավառի ամենանշանավոր կրոնական-մշակութային կենտրոնը: Այստեղ խոսքը Սողոմոն Մաքենացու մասին է. որը մոտավորապես 750-ին դեռ V դարում հունարենից և ասորերենից

թարգմանված ճառերից կազմել է «Ճառընտիր» (կամ «Տոնական», Կյուրեղ վ. Քիպարյան, Պատմութիւն հայ հին գրականութեան, էջ 367) ժողովածուն:

էջ 160, տող 5 ն.: ... Գրիգոր վարդապետ Ծերենցի ձեռքով - այս վերջին՝ 5-րդ և ամենատարածված խմբագրությունը Գր. Խլաթեցի Ծերենցի կողմից կատարվել է 1404 թ.:

էջ 168, տող 18: Վերջերս հրատարակվեցավ անանուն և կիսատ ձեռագիր մը ... -«Պատմութիւն Շապուհ Բագրատունւոյ» վերնագրով այս գիրքը տպագրվել 1921 թ. Էջմիածնում, և այն իսկապես Շապուհ Բագրատունունը չէ: Գրքի հեղինակին հետագայում տրվել է Անանուն զրուցագիր պայմանական անունը (տե՛ս Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 178-192, «Կարծեցյալ Շապուհը»):

էջ 170, տող 2: ... Որ գրած է ծատ. ազգին պատմությունը - Բեյրութի 2 հրատարակություններում էլ ծատ. (կամ ծաթ) բառը տպագրված է վրիպակով՝ ծաղ: Ծատերը քաղկեդոնիկ հայերն են:

էջ 170, տող 10-11: ... Գլակ վանքի վանահայրերու կողմե գրված ... - խոսքը հայտնի Մշո Սուլթան Ս. Կարապետ կամ Իննակնյան վանքի մասին է (Տարոնում, Մուշ քաղաքի մոտ): Հիմնել է Գրիգոր Լուսավորիչը 4-րդ դ. սկզբին՝ այդտեղ ամփոփելով Հովհ. Մկրտչի (Կարապետ) մասունքները: Նրա առաջին վանահայրն էր Զենոբ Գլակը, որի անունով էլ վանքը կոչվել է նաև Գլակավանք: 14- 15-րդ դդ. եղել է կրթական և մշակութային կենտրոն, ունեցել է մեծ մատենադարան, որի 1750 ձեռագրերը 1916-ին տեղափոխվել են Էջմիածին (այժմ պահվում են Մատենադարանում): Իննակնյան վանքը կամ Գլակավանքը մեծ ժողովրդականություն է վայելել, եղել է Հայաստանի երկրորդ հոգևոր կենտրոնը Էջմիածնից հետո:

էջ 170, տող 17: Կա գրվածք մը Մեսրոպ Երեցի անունով... - Մեսրոպ Երեց Վայոցձորեցու այս գրվածքը կոչվում է «Պատմութիւն սրբոյն Ներսէսի Պարթեւի Հայոց հայրապետի»:

էջ 170, տող 12-13 ն.: Կա նման գրվածք մըն ալ ԺԱ դարուն սկիզբները շարադրված ... - խոսքը մատենագիր, բանաստեղծ Կարապետ Սասնեցու (12-րդ դ. II կես - 13-րդ դ. I կես) «Ներբողեան յաղագս վարուց եւ մահուան Ս. վարդապետին Մեսրոպայ» ճառ-ներբողյանի մասին է, որը տպագրվել է 1897-ին Վաղարշապատում:

էջ 172, տող 11-12: Իր գրվածքը կկոչվի «Պատմութիւն

տիեզերական» ... - Վարդան Արեւելցու երկը կոչվում է «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», լույս է տեսել Վենետիկում 1863 թ.:

էջ 172, տող 9-10 ն.: **Մաղաքիա Աբեղան գրած է «Պատմութիւն վասն ազգին նետողաց»...** - «Պատմութիւն ազգին նետողաց» կամ «Պատմութիւն թաթարաց» երկի իրական հեղինակը 13-րդ դ. պատմիչ և գրիչ Գրիգոր Ակներցին է: Նրա երկը սխալմամբ վերագրվել է Մաղաքիա Աբեղային և այդ անունով 1870-ին տպագրվել է հայերեն, իսկ հետո՝ ռուսերեն և ֆրանսերեն:

էջ 173, տող 9-10: **...«Պատմութիւն պղծոյն և չար գազանին Լենկ- Թիմուրայ»** - ժամանակակից աղբյուրներում տրված է «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց» վերնագիրը:

էջ 173, տող 6-8 ն.: **Երրորդ՝ Մխիթար Այրիվանեցի, ԺԴ դարու միակ պատմիչը, որ գրած է «Պատմութիւն ժամանակագրական» աշխարհքի սկիզբեն մինչև 1328 թվականը** ... - Մխիթար Այրիվանեցին 13-րդ դ. մատենագիր, պատմիչ, մանկավարժ, վարքագիր, բանաստեղծ և երգահան է: Ապրել է 1230 35 – 1297 1300 թթ. (ըստ Աճառյանի 1222 - 1289/91): Նրա Շանթի հիշատակած աշխատությունը 1860–ին «Մխիթար Այրիվանեցւոյ պատմութիւն Հայոց» վերնագրով հրատարակվել է Մոսկվայում: Գրքում դեպքերի նկարագրությունը հասցվում է մինչև 1289թ. (տես Քրիստոնյա Հայաստան, Ե., 2002, էջ 732: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Ե., 1946, էջ 376):

էջ 182, տող 14 ն.: **... Արևի, աստղերու, ծովերու ու ցամաքի մասին** - այս պարբերության մեջ խոսքը Շիրակացու «Յաղագս շրջագայութեան երկնից», «Յաղագս ամպոց եւ նշանաց» և «Տիեզերագիտութիւն» աշխատությունների մասին է:

էջ 182, տող 6 ն.: **Իրմեն ունինք նաև թվաբանության խնդրագիրք մը** - դասագիրք է «Յաղագս հարցման եւ լուծման» վերնագրով, ունի թվաբանական 4 գործողությունների գումարման. հանման, բազմապատկման և բաժանման աղյուսակներ:

էջ 185, տող 7 ն.: **... Անցած էին Ռումելի** ... - Թուրքիայի եվրոպական տարածքները:

էջ 187, տող 8: **...Զարեքի վանքը** - Զարեքա անապատ կամ Զարեքավանք, գտնվում է Ուտիքի Գարդմանաձոր գավառում (այժմ Ադրբեջանի Գետաբեկի շրջանում): Ըստ Առաքել Դավրիժեցու կա-

ռուցվել է 17-րդ դարում: 17-18-րդ դարերում Ջարեքի վանքում ձեռագիր մատյաններ են նորոգվել և ընդօրինակվել: 1918-ից հետո լքվել է և ամայացել:

Էջ 187, տող 9-10: Բաղեշի մոտերը անուն հանեց Ամլորդի վանքը, Սպահանի մոտ՝ Ջուղայի վանքը ... - Ամլորդու (Ամլորդի կոչվել է Հովհաննես Մկրտիչը իր մոր՝ Եղիսաբեթի երկար ժամանակ ամուլ լինելու պատճառով) կամ Ամրդոլու Ս. Հովհաննես մենաստանը 15-րդ դարից եղել է գրչության խոշոր կենտրոն, ունեցել է դպրոց և մատենադարան: Մեծ ծաղկում է ապրել 17-րդ դարում՝ պատմիչ, գիտնական Վարդան վարդապետ Բաղիշեցու առաջնորդության շրջանում: 1915-ին ավերվել է թուրքերի կողմից և ամայացել, ձեռագրերի մի մասը հաջողվել է փրկել:

Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքը հիմնադրվել է 1606-ին, հայ եկեղեցու Սպահանի թեմի առաջնորդանիստն է: 1636-ին Նոր Ջուղայի առաջնորդ և վանքի վանահայր (1620-1646) Խաչատուր Կեսարացին վանքում հիմնել է տպարան՝ առաջինը Իրանում և Միջին Արևելքում: 17-րդ դ. կեսերին վանքում բացվել է դպրոց և մատենադարան, որն այժմ ունի մոտ 600 ձեռագիր, որոնցից մոտ 40-ը՝ մագաղաթյա:

Էջ 187, տող 12-14: ... Կաթողիկոսական աթոռը 1444 թիվեն սկսած նորեն փոխադրված էր Էջմիածին ... - այս վերահաստատումը տեղի է ունեցել 1441 թ.:

Էջ 189, տող 16-17: Իսկ Ներսես Պալենց գրած է գիրք մը, հավանորեն թարգմանաբար, «Գիրք քահանայապետաց Հռովմայ» - Հայ միաբանական (ունիթոր) Ներսես Պալիանենցը 1340-ական թթ. Ֆրանսիայի Ավինյոն քաղաքում, որն այդ ժամանակ Հռոմի պապերի նստավայրն էր, լատիներենից հայերեն է թարգմանել Մարտինոս Օպավիացու «Գավազանագիրքը», որը ներկայացնում է Հռոմի պապերի գահակալության սեղմ պատմությունը: Ըստ երևույթին խոսքը այս թարգմանության մասին է: Ի դեպ, սույն պատմական անձնավորությունը Ներսես Պալոնց անունով և իր իրական կերպարով ներկայացված է Շանթի «Օշին պայլ» դրամայում:

Էջ 189, տող 6-7 ն.: ... Որոնց մեջ ամենեն հայտնի դարձան հիսուսյանները՝ ճիզվիտները - 1540-ին իսպանացի Իգնատիոս Լոյոլայի կողմից հիմնադրված այս կաթոլիկ միաբանության անդամները, որոնք իրենց կոչում էին Քրիստոսի շներ, աչքի էին ընկնում չտեսնված դաժանությամբ, համառությամբ, ուխտադրժությամբ և իրենց նպա-

տակներին հասնելու համար չէին խորշում ոչ մի միջոցից: Ծիզվիտների պառակտիչ գործունեությունը հասցրեց նրան, որ Հռոմի պապը 1773-ին նույնիսկ ստիպված եղավ վերացնել այս միաբանությունը, բայց 1834-ին այն վերականգնվեց և իր գործունեությունը (համեմատաբար մեղմ ձևերով) շարունակում է մինչ օրս:

Ծիզվիտները 1650-ական թվականներից թափանցել են Հայաստան և հայաբնակ այլ վայրեր՝ զբաղվելով հոգեորսությամբ և կաթոլիկ դարձնելով բավականին թվով հայերի:

Էջ 192, տող 14: ... **Քունեն նոր ելնող մարդու առաջին երեժկտուքը** - երեժկտուք բառացի նշանակում է հորանջ:

Էջ 194, տող 4-5: **Թե՛ սարկավագը և թե՛ մանավանդ անոր գործը շարունակող Երևանցի Ոսկան վարդապետը** ... - Ամստերդամում տպարանը հիմնվել է 1660 թ. Մատթեոս Ծարեցու (1590-ական թթ. - 1661) կողմից, որին 1655-ին Զմյուռնիայից Եվրոպա էր ուղարկել նորընտիր Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը: Աստվածաշունչը տպագրվել է 1666-68 թթ. (առաջինն է և համարվում է օրինակելի տպագրություն): Ոսկան Երևանցին տպագրել է նաև «Շարակնոցը», «Այբբենարանը», «Քերականության գիրքը»: 1669-ին Երևանցին տպարանը տեղափոխել է Լիվոռնո (Իտալիա), իսկ հետո՝ Մարսել (Ֆրանսիա), ուր էլ վախճանվել է 1674-ին: Տպարանը գործել է մինչև 1686 թ. և իր գործունեության 26 տարիների ընթացքում տպագրել է 40 անուն հայերեն գրքեր:

Էջ 194, տող 13-14: ...**Ինչպես և Թովմա Աքվինացիի «Յաղագս հոգւոյ և հրեշտակաց» գիրքը** - Ստեփանոս վարդապետ Լեհացին թարգմանել է մեծ թվով գրքեր, որոնց միայն մի մասն է հիշատակում Շանթը: Դրանց թվում է նաև Թովմա Աքվինացու «Համառօտ հաւաքումն յաղագս հոգւոյ բանականի» (կամ ավելի կարճ «Յաղագս հոգւոյ բանականի») երկը:

Էջ 195, տող 7 ն.: **Իսկ Խաչատուր վարդապետ մը նույն վանքեն...** - խոսքը 18-րդ դ. պատմիչ Խաչատուր Ջուղայեցու մասին է: Նրա «Պատմութիւն պարսից» աշխատության մեջ դեպքերի նկարագրությունը հասցված է մինչև 1769 թ., մեծ տեղ է տրված Նոր Ջուղայի պատմությանը:

Էջ 196, տող 2: **ԺԶ դարու կեսեն Աբգար դպիրը...** - խոսքը հոգևորական, հասարակական-քաղաքական գործիչ, տպագրիչ Աբգար Թոխաթեցու մասին է (մոտ. 1520-1572):

էջ 196, տող 1 ն.: ... Արժեք ու հետաքրքրություն ունի - պոլսահայ գրող, պատմաբան, թարգմանիչ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի (1637-1695)՝ Շանթի հիշատակած առաջին ստեղծագործությունը կոչվում է «Օրագրութիւն», երկրորդը՝ «Ստամպօլոյ պատմութիւն»:

էջ 197, տող 6: «Գիրք կայսերն Փոնցիանոսի եւ եօթն իմաստասիրաց» - 17-րդ դ. առաջին թարգմանական երկն է, թարգմանիչն է բանաստեղծ, լեհահայ գաղութի գրական-մշակութային գործիչ, Զամոստյե (Զամոսցա, ըստ Շանթի՝ Սամոսցա) քաղաքի երեց Հակոբ Թոխաթեցին (1563- 1657/63): Գիրքը, որը հին հնդկական ծագում ունի և բարոյախրատական զրույցների ժողովածու է, թարգմանվել է լատիներենից և հրատարակվել 1696-ին, հետո ունեցել է ևս 8 հրատարակություն:

Հայերենից թարգմանվել է թուրքերեն, ռուսերեն, վրացերեն և ֆրանսերեն:

էջ 197, տող 6-8 ն.: ... «Հայելի վարուց, որ է փրանկաց հարանց վարք», այլև Հովսեփոսի «Գիրք պատմութեանց վասն պատերազմին հրէից» - առաջինը միջնադարյան բարոյախրատական զրույցների ժողովածու է, թարգմանվել է 1651-ին, հրատարակվել 1702-ին: Իսկ Հովսեփոսը մ.թ. I դ. հրեա մատենագիր Հովսեփոս Փլավիոսն է (37-95):

էջ 197, տող 3-4 ն.: ... Առաջին գրաբար թատերախաղը՝ «Սրբուհի կոյսն Հռիփսիմէ» 1665-ին - ըստ հայ թատրոնի պատմաբանների՝ այս ներկայացումը տեղի է ունեցել 1668-ին (Գ. Ստեփանյան, Ուրվագիծ հայ թատրոնի պատմության, հ. 1, Ե., 1962, էջ 90: Հ. Հովհաննիսյան, Հայ թատրոնի պատմություն, Ե., 1996, էջ 20):

էջ 198, տող 1: ... Բեմբասացություն - այստեղ՝ բեմից ճառ ասելու կամ քարոզելու արվեստը:

էջ 199, տող 10: ... Իր պասուկը հագցնելու ... - պասուկ նշանակում է ծարավ: Այս բառը Շանթն օգտագործել է նաև իր «Շղթայվածը» դրամայում (III արար, I տեսարան, 3):

էջ 199, տող 15 ն.: ... Եկած էր Մորեա... - Մորեան Պելեպոնեսն է (Հարավային Հունաստան), ուր գտնվող Մեթոն բերդաքաղաք Մխիթար Սեբաստացին և նրա աշակերտները ժամանել են 1703 թ.:

էջ 199, տող 1 ն.: ... 1713 Թվականին Վենետիկի մէջ հիմնադրած վանքին ... - պետք է լինի 1717:

էջ 202, տող 2-3: ...Հիմա միայն նոր ճիգեր կըլլան մեր Հայ Համալսարանին մէջ - այս «ճիգերն» իրենց արդյունքը տվել են Շանթի այս աշխատության լույս տեսնելուց մի քանի տարի հետո. 1951-ին հրատարակվել է «Հայ ժողովրդի պատմության» I մասը, իսկ 1958-ին՝ «Հայ ժողովրդի պատմություն» 12 պրակով:

էջ 202, տող 16: ...Այդ հաստափոր տարօրինակ պետքերները ... - պետքեր բառը որևէ բառարանում գտնել չհաջողվեց:

էջ 203, տող 12-13 ն.:... Օրինակ՝ երիտասարդ Խրիմյանի մը ... - նկատի ունի հասարակական, կրոնական և գրական գործիչ Մկրտիչ Խրիմյանին (1820-1907), 1892-1907 թթ. Ամենայն Հայոց կաթողիկոս: Այգեստանը Վանի այն թաղամասն է, ուր ծնվել է Խրիմյանը:

էջ 206, տող 9-10 ն.: ...Ռուս-Թուրքական պատերազմի Թուրք պարտութեննեն ետքը ... - խոսքը ակներևաբար 1828-29 թթ. ռուս-թուրքական պատերազմի և Թուրքիայի պարտության մասին է, որից հետո էլ 1839 թ. սուլթան Աբդուլ Մեջիդը պաշտոնապես հայտարարեց բարենորոգումների մասին:

էջ 207, տող 12: Հայտնի անուն է եղած իր ժամանակին Գևորգ Դպիր ... - Գևորգ Դպիր Հովհաննիսյանը (Պալատեցի, 1737-1711) իրոք որ հայտնի մտավորական էր, գիտեր բազմաթիվ հին և նոր լեզուներ: Նրա ջանքերով է, որ վերջնական կորստից փրկվել ու համաշխարհային գիտական հասարակայնության սեփականությունն է դարձել Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» («Ժամանակագրություն») աշխարհում միակ հայերեն թարգմանության օրինակը (Բ. Զուգասզյան, Գէորգ Դպիր Պալատեցու կեանքի եւ գործունեութեան տարեգրութիւն, Ե., 1994, էջ 7):

էջ 208, տող 10: Առանձին քերթված մըն է «Տեսարան Հայկայ, Արամայ և Արայի» - պետք է լինի՝ «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ եւ Արայի»:

էջ 209, տող 14-15: Այս երկուքն են եղած էապես Պոլսի մէջ առաջին անգամ թատերական բեմ պատրաստողը 1857 թվականին... - Հեքիմյանի և Պեշիկթաշլյանի պոլսահայ թատրոնի հիմնադիրները լինելու մասին Շանթը այս աշխատության մեջ գրել է մի քանի անգամ և փոքրիկ անճշտություններով հանդերձ ճիշտ է

ներկայացրել դեպքերը (տե՛ս Հ. Հովհաննիսյան, Հայ թատրոնի պատմություն, XIX դ., էջ 48, 55-57: Գ. Ստեփանյան, Ուրվագիծ հայ թատրոնի պատմության, հ. 1, էջ 148, 170 և այլն): Իսկ Ս. Հեքիմյանին ու նրա թատերական երկերին տված Շանթի գնահատականը ընդհանուր առմամբ հայ թատրոնի պատմաբանների կողմից չի հաստատվում:

Էջ 209, տող 14-15 ն.: Գրած է «Հարմակ ու Աշխէն», «Սամիլ կամ կրօնք ու տիրասիրութիւն» ... - Շանթի երկերի ընտրության 2 հրատարակություններում էլ այս 2 թատերգությունների վերնագրերը սխալ են տպագրված՝ «Հմայեակ ու Աշխէն», «Սամեկ կամ կեանք ու տիրապետութիւն»: Վրիպակներն ըստ երևույթին տարընթերցման արդյունք են, որ թույլ է տրվել 1 տպագրության ժամանակ (հ. 9, էջ 175), իսկ հետո նույնությամբ անցել են 2008 թ. հրատարակության Ը հատոր (էջ 172): Ուղղումները կատարված են ըստ Ս. Հեքիմյանի «Տաղք, քերթուածք եւ թատերգութիւնք» գրքի (Կ.Պոլիս, 1857, էջ 335-406 և 407-472):

Էջ 210, տող 8 ն.: Սիմոնեն ետքը մինչև Ներսես Աշտարակեցին ... - 1780-1843 թթ. (Սիմեոն Ա Երևանցու մահվանից մինչև Ներսես Ե Աշտարակեցու կաթողիկոս դառնալը):

Էջ 210, տող 5-6 ն.: Դավիթ-Դանիելյան կաթողիկոսներու ողորմելի ու խայտառակ կռիվներուն օրերն են ... - նկատի ունի Դավիթ Ե Էնեգեթցու և Դանիել Ա Սուրմառեցու պայքարը կաթողիկոսի աթոռի համար: Սկիզբ է առել 1799 թ.՝ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի մահվանից հետո: Նոր ընտրված կաթողիկոսին՝ Կ.Պոլսի հայոց պատրիարք Դանիել Սուրմառեցուն, կաթողիկոսի աթոռի մեկ այլ հավակնորդ՝ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը, ռուսական կառավարության օժանդակությամբ Բ. դռան միջոցով աքսորել տվեց Թենեդոս կղզի և հաջողեցրեց իր ընտրությունը: Բայց Էջմիածնի ճանապարհին՝ Թիֆլիսում, Արղությանը հանկարծամահ եղավ: Նոր կաթողիկոս ընտրվեց Դավիթ Էնեգեթցին: Դանիելի կուսակիցները չճանաչեցին նրան և 1802-ին Դանիելին օծեցին կաթողիկոս: Սակայն Բայազետի փաշան Դանիելին հանձնեց Դավթի ձեռքը, որը նրան Էջմիածնում բանտարկեց: Ռուսական կառավարությունը անվավեր համարեց Դավթի ընտրությունը և Երևանի խանից պահանջեց գահը հանձնել Դանիելին: Արդյունքում Դանիելը շահի հրամանով աքսորվեց Մարաղա: Միայն 1807-ին պարսիկները, վախենալով հայերի՝ ռուսների հանդեպ անսքող համակրանքից, գահը

հանձնեցին Դանիելին, որն էլ մահացավ հաջորդ տարի: Դավիթ - Դանիելյան վեճը մեծապես հեղինակազրկել է հայ եկեղեցին և առիթ ծառայել պարսիկներին, նաև թուրքերին և ռուսներին միջամտելու նրա ներքին գործերին:

էջ 212, տող 12-13: **Ամենեն ավելի հայտնի ու տարածված է այդ հատորեն «Տէր, կեցո՛ դու զհայս» երգը ...** - այս բանաստեղծությունը տպագրվել է «Ազգասեր» շաբաթաթերթում (1847, թիվ 102, էջ 238), որը 1845-48 թթ. Թաղիադյանը հրատարակել է Կալկաթայում: Երգը կրում է Հ.Կ. ստորագրությունը, և նրա հեղինակը Թաղիադյանը չէ: Այն առաջին անգամ տպագրվել է 1820 թ. «Հայելի կալկաթյան» օրաթերթում, և նրա հեղինակը, ենթադրաբար, նույն օրաթերթի խմբագիր Հովհ. Տեր- Հակոբյանն է (տե՛ս Հայ Նոր գրականության պատմություն, հ. 1, Ե., 1962, էջ 350): «Թութակ Թաղիադեան» գրքում այդ երգը չկա:

էջ 213, տող 7-8 ն.: **Հեղինակն է եպիսկոպոս մը՝ Հովհաննես Շահխաթունի** - Հովհ. Շահխաթունյան (1799-1849), եկեղեցական գործիչ, մատենագետ, բանասեր, պատմաբան: Նրա երկհատոր աշխատությունը, որ փաստական հարուստ նյութ է պարունակում, հրատարակվել
1842-ին:

էջ 214, տող 8-9: **Ամուսնացած, վերջը չուշտակ վարդապետ ու վարժապետ ...** - չուշտակ բառը, որը նշանակում է այրիանալուց հետո կուսակրոն դարձած հոգևորական, Շանթի այս աշխատության մեջ հանդիպում է ևս 2 անգամ (էջ 379 և 438): Ընդ որում Բեյրութի 1946 թ. հրատարակության մեջ 3 դեպքում էլ գրված է չուշտակ (էջ 179, 310, 357), իսկ 2008 թ. հրատարակության մեջ՝ չուշտակ (էջ 176) և շուշտակ (էջ 313 և 360):

էջ 217, տող 5: ... **Առաջին կթոտ քայլերուն** - կթոտ՝ թույլ, տկար, վարանոտ, դողդողացող:

էջ 228, տող 13: **ԺԹ դարու յոթանասունական թիվերուն էր ...** - Գարեգին Սրվանձտյանի առաջին՝ «Գրոց-բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գիրքը լույս է տեսել 1874 թ. Կ.Պոլսում:

էջ 228, տող 11-13 ն.: ... **Ինչպես էմինյան հրատարակությունն էր Պետրոգրադի մեջ և Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսը» Թիֆլիսի մեջ** -Շանթը նկատի ունի անվանի բանասեր-գիտնական, մանկավարժ Մկրտիչ Էմինի (1815-1890)

կտակած միջոցներով Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի հրատարակությամբ 1901-1913 թթ. Ալեքսանդրապոլում, Վաղարշապատում, Մոսկվայում, Նոր Նախիջևանում և Թիֆլիսում լույս տեսած 9 հատորները (խմբագիրներ՝ Գր. Խալաթյանց՝ 1-8, Կ.Կոստանյան՝ 9):

Անվանի ազգագրագետ, բանահավաք և բանագետ Երվանդ Լալայանի (1864- 1931) հիմնադրած «Ազգագրական հանդեսի» առաջին գիրքը տպագրվել է 1896-ին Թիֆլիսում: Մնացած 25 գրքերը լույս են տեսել Շուշիում, վերջինը՝ 1916-ին:

Էջ 243, տող 12 ն.: Պաղտատու կու գաս ... - այս տան վերջին տողը Շանթի մոտ ուրիշ է: Բնագրում այն ունի հետևյալ տեսքը.

Պաղտատու կուգաս, կերթաս ի սէհրատ,
Թըղթիկ մը գրեմ, տամ քեզ ամանաթ.
Աստուած թող վկայ լինի քո վըրադ,
Տարեալ հասուցես պայղ իմ սիրելեաց:

Էջ 255, տող 11: ... Քաշն գերանդի, քաշուն հեսան - Բեյրութի 2 հրատարակություններում էլ հեսանի տեղ գրված է հերան (էջ 212 և էջ 211). որն ակնհայտ վրիպակ է:

Էջ 277, տող 8-9: ...«Ակնա հնութիւնք»-ի հեղինակը՝ Ծանիկյան ... - բանահավաք, ազգագրագետ, գրող Հովսեփ Ծանիկյանի (1840-1902) «Հնութիւնք Ակնա» ժողովածուն լույս է տեսել 1895 թ.:

Էջ 279, տող 14: ...Թուրք քլիչէ ասություններ... -քլիչե կամ կլիչե այստեղ նշանակում է կաղապարային:

Էջ 280, տող 12-13 ն.: ....Հին ու նոր նյութը մեկտեղեր է հատորի մը մեջ... - Արշակ Չոպանյանը հայրենները Փարիզում հրատարակել է 2 անգամ՝ 1902-ին («Նահապետ Քուչակի դիվանը») և 1940-ին («Հայրեններու բուրաստանը»):

Էջ 285, տող 10-12: Չէ՞ որ Արծրունի հայ թագավորական տունը այդ կողմերն էր տեղափոխված բյուզանդական կայսրների ձեռքով ... - 1021-ին Վասպուրականի վերջին թագավորը՝ Սենեքերիմ Արծրունին (թագ. 968-1021), Բյուզանդիայի Վասիլ II կայսրին է հանձնել իր երկիրը (8 քաղաք, 72 բերդ, 4 հազար գյուղ) և փոխարենն ստացել Սեբաստիայի նահանգը, ուր մագիստրոսի կոչումով իշխել է մինչև իր մահը՝ 1025 թ.:

Էջ 290, տող 16-17 ն.: Ստրոֆ և անտիստրոֆ շարժում մը

... - ստրոփ (ստրոֆա, հունարեն բառացի նշ. է շրջադարձ) բանաստեղծության կամ երգի տողերի՝ չափով, ռիթմով, հանգով, տոնայնությամբ և շարահյուսությամբ կապված ամբողջություն, տեքստի հատված: Հին Հունաստանում ստրոֆան կատարում էր երգչախումբը հանդիսավոր երթի 2 շրջադարձերի միջև (այստեղից էլ անունը):

Ստրոֆան ուներ իր զույգ հատվածը՝ անտիստրոֆան, որը ռիթմով կրկնում էր ստրոֆային, ընդ որում ամեն մի ստրոֆա-անտիստրոֆա զույգը սովորաբար ուներ իր ռիթմը: Քնարերգության մեջ ենթադրաբար զույգն առաջին անգամ կիրառվել է Ալկմանի կողմից (մ.թ.ա. VII դ.), հետո անցել է ողբերգության մեջ, օր.՝ երգչախմբի երգերը Էսքիլեսի «Պրոմեթևսը շղթայված» և Սոֆոկլեսի «Էդիպ արքա» ողբերգություններում:

էջ 292, տող 9-10 ն.: Որոնք անցեր են արդեն Սիկիլիայի ու Ղարիպտայի այդ իրարու բախող ժայռերուն մեջեն - պետք է լինի Սկիլլա (Սքիլլա) և Քարիբդիս (Հոմերոս, «Ոդիսական», 12-րդ երգ, 80-130): Սկիլլան և Քարիբդիսը (օգտագործվում է նաև Սցիլլա և Քարիբդա ձևով) հունական դիցաբանության մեջ 2 հրեշներ են, որոնք բնակվում են նեղուցի 2 կողմի ժայռերի վրա և կուլ տալիս ծովագնացներին: Փոխաբերական իմաստով՝ Սկիլլայի և Քարիբդիսի միջև գտնվել նշանակում է մի դրություն, երբ 2 կողմից էլ վտանգ է սպառնում:

էջ 292, տող 8-9 ն.: **Իմաստուն Ոդիսևսն անգամ իրեն կապել տվավ կայմին...** - ըստ հունական դիցաբանության սիրենների կղզու մոտով անցնելիս Ոդիսևսը իր ուղեկիցների ականջները մեղրամոմ խցկեց, որպեսզի չլսեն գեղեցկուհի սիրենների երգերը, նավը չուղղեն կղզու ափամերձ ժայռերը և չխորտակվեն, իսկ իրեն հրամայեց բաց ականջներով կապել նավի կայմին, քանի որ շատ էր ուզում լսել այդ երգերը: Լսելով դյութիչ երգերը՝ նա ցանկանում է նետվել ջուրը, բայց կապանքները թույլ չեն տալիս (Հոմերոս, «Ոդիսական», 12-րդ երգ, 150-200):

էջ 294, տող 13 ն.: Համլեթյան խրատական մը - ինչպես երևում է քառատողի բովանդակությունից, Շանթը նկատի ունի Շեքսպիրի հերոսի՝ Համլետի խոսքերը դերեզմանոցում. «Եվ մի մարդու կյանքն ի՞նչ բան է միթե, «մեկ» չասած պրծավ» (5-րդ գործողություն. 2-րդ տեսարան):

էջ 325, տող 5-6 ն.: ... Կկարծվի, որ այդ գիրքն ալ Մխիթար Հերացիի աշխատությունը պիտի ըլլա - Շանթի հիշատակած գիրքը

կոչվում է «Գիրք վաստակոց», թարգմանիչն իրոք Մխիթար Հերացին է, որ թարգմանել է Անատոլ Պերիթացու համանուն երկի՝ երկրագործության և մանավանդ գինեգործությանը նվիրված մասերը (մանրամասները տե՛ս Կ. Վ. Քիպարյան, Պատմություն հայ հին գրականության, էջ 445):

էջ 326, տող 13-14 ն.: ... Որ լեզվագետ ու անվանի դեմք մըն է եղած - Ամիրդովլաթ Ամասիացին իր երկերը գրել է պարզ և բարբառին մոտեցող հայերենով, ինչն էլ Շանթին հիմք է տվել նրան լեզվագետ անվանելու:

էջ 328, տող 13-14 ն.: Նախորդ դարու վաթսունական թիվերուն բժիշկ Գևորգ Հախվերդյանն է... - Գևորգ Ախվերդյանի՝ Սայաթ-Նովային նվիրված գիրքը («Սայաթ-Նովա, լուս դցած աշխատասիրութենով») լույս է տեսել 1852 թ. Մոսկվայում:

էջ 328, տող 10-11 ն.: Ութսունական-իննսունական թվականներուն Կարապետ Կոստանյանն է, որ շարք մը հատորիկներով... - Կոստանյանը 1892-96 թթ. Թիֆլիսում հրատարակել է «Նոր ժողովածու» կոչվող գրքի 3 պրակ, որոնք ամփոփում են մեր միջնադարյան տաղերգուների գործերը:

էջ 330, տող 1-2: ...ԺԵ դարուն բարձր հոգևորական մը կերգե պլպուլն ու վարդը - այս «բարձր հոգևորականը» Մկրտիչ Նաղաշն է, որը եղել է եպիսկոպոս և Միջագետքի հայոց հոգևոր առաջնորդը 1430-43 թթ.: Շանթի մեջ բերած տաղերը Նաղաշի «Վասն բլբուլին և վարդին» բանաստեղծությունից են, ընդ որում՝ տարբեր տներից: Համեմատության համար բերում ենք այդ տներն ամբողջությամբ և ճշտված տեսքով.

Բլբուլն ի Վարդն ասաց. «Հոգիս կու քաղի
Ու բաժանիլն ի քէն ինձ մահ կու թուի.
Քո շատ կարօտուդ սիրտըս կու լայի,
Որ թէ չաքար տաս ինձ, զահր է ու լեղի»:

Վարդն ի Բլբուլն ասաց. «Այս ինչ գունահ է,
Զինչ դու հետ ինձ արիր՝ կատարեալ մահ է.
Հանցեղ հուքմ ու հրաման քեզ ո՞վ տուեալ է,
Որ վարդն ի քո սիրոյդ զարի ու զար է»:

Բլբուլն ի Վարդն ասաց, թէ՝ «Աններման ես,

Զկարէ մարդ Հողեղէն լեզուով գովել զքեզ.
Քան զտապարզի շաքար քաղցր ու շիրին ես,
Որպէս մուշկ ու ամբար անուշաՀոտ ես»:

Վարդն ի Բրլբուլն ասաց. «Դուն իմ արևն ես.
Որ ի բոլոր աշխարՀս լուսով կու ծագես.
Ում որ քաղցրր Նայես և Նազար առնես,
Այլ Հարամթ չի մնա, ով տեսնէ ըզքեզ»:

Բլբուլն ի Վարդն ասաց. «Էˊ բոլոր լուսին,
Զըկա քեզ օրինակ ջուՀար մեծագին,
Քո մէկ Հայիլդ արժէ զքաղաքըն Մաչին,
Զէ Զինումաչին մէկ Հայելուդ գին»:

Վարդն ի Բրլբուլն ասաց. Հասրաթով սըրտին.
«Ինձ ալամըս բոլոր չէ քո տեսուդ գին.
Յայնժամ Հասանէ վարդն իւր մուրադին,
Երբ տեսանէ զբլբուլն ի մէջ ծերկին»:

(Հայոց Հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Ե., 1979, էջ 339-340):

էջ 330, տող 15 ն.: Նույն դարուն վերջերը ավելի ևս բարձր Հոգևորական մը ... - ՀովՀաննես Թլկուրանցին է, որը երկար դարեր սխալմամբ Համարվել է 15-16-րդ դդ. բանաստեղծ և նույնացվել Սսի կաթողիկոս ՀովՀ. Թլկուրանցուն: Այս կածիքին է, ինչպես երևում է, նաև Շանթը: Միայն անցյալ դարի կեսերին (Շանթի մաՀվանից Հետո) ապացուցվեց, որ վերոՀիշյալ երկուսը տարբեր մարդիկ են, և բանաստեղծ Թլկուրանցին ապրել է ավելի վաղ՝ 14-րդ դ. երկրորդ և 15-րդ դ. առաջին կեսերին (տե՛ս ՀովՀ. Թլկուրանցի, Տաղեր, Ե., 1960, էմ. Պիվազյանի առաջաբանը, էջ 15-34): Թլկուրանցու տաղից քաղվածաբար և խառը մեջ բերված քառատողերը բերում ենք ամբողջությամբ.

Գէնայ բաՀա՛ր, այլ՝ ի բաՀա՛ր,
Այլ՝ ի կու տան սիրոյ խապար.
Ծով-ծով աչեր ու լուս քընար,
Ունքն է կեռեր քան ըզկամար:

Ճակատդ է լոյս ու լոյս կու տայ,
Բոլոր լուսին, շամս ու ղամար.
Վարսերդ ոսկի թելով քաշած
Վերայ անձինդ իջեր հասար:

Երեսդ վառ է, ծիրանի,
Վարդ, ըռեհան ու նունուֆար,
Ծոցդ է բաղչայ վարդով ի լի,
Մարգրիտ ատամունքըդ շարէշար:

Քո ձայնդ անուշ, քաղցրեղանակ,
Բերնէդ ի վայր թափի ճուհար.
Այդ քո մատունքն է լուսեղէն,
Այլ արեգակըն լոյս չի տար:

Անձըդ քո ճոխ բուսեր չինար,
Կու ճոճկըտայ քան զուռ դալար,
Այդ անտառակ ծոխուդ նըման,
Որ զիս ի քեզ արիր զարար:

Հանցեղ նետով զիս խոցեցիր,
Որ այլ չունիմ բըժըշկարար.
Է՛ գեղեցիկ կերպիւ սուրաթ,
Որ է ստեղծած նախշ ու նիկար:
(Վերոհիշյալ քրեստոմատիան, էջ 310):

էջ 330, տող ն.: Ավելի ևս բարձր հոգևորական մը՝ վեհափառ մը... - Գրիգորիս Աղթամարցին է, որը 1512-44 թթ. եղել է Աղթամարի կաթողիկոս:

էջ 333, տող 2 ն.: ... Եվ այս ամենը վասն ագահության - Մկրտիչ Նաղաշի այս բանաստեղծության ամբողջական վերնագիրն է «Խրատական բանեիս ագահութեան եւ անընչութեան ի Նաղաշ վարդապետէն ասացեալ»:

էջ 333, տող 1 ն.: Հովհաննես սարկավագ մը սեր է կապած Թուրք մոլլայի մը աղջկան ... - Հայ աղայի և մահմեդական աղջկա սիրո մասին պատմող միջնադարյան զրույցի գրական մշակումն է, որ

կատարել է Հովհաննես Երզնկացին (տե՛ս Հովհ. Երզնկացի. Բանք չափաւ, Ե., 1986, էջ 44-49, «Տաղ Երզնկացի Յովանիսի ասացեալ»)։ Նույն այս բանաստեղծությունը «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիայում» վերագրվում է Հովհ. Թլկուրանցուն (Ե., 1979, էջ 317, «Յովհաննէս եւ Այլչա»)։

Էջ 334, տող 15։ ... «Պիքանտ» պատմություն մը... - պիկանտ ֆրանսերեն նշանակում է կծու, կծվահամ, գրգռիչ, նրբահամ, նաև հետաքրքիր, հետաքրքրություն գրգռող։

Էջ 346, տող 6։ «Զոր ասացի վասն իմ ազգի» - «Գանգատի» 20-րդ քառատողի երկրորդ տողն է, որը Շանթն օգտագործել է որպես մեջբերման երկրորդ մասի վերնագիր։

Էջ 347, տող 6-8 ն.։ ... Ալեքսանդրի կյանքի թարգմանության սկիզբն ու վերջը իր ավելցուցած «կաֆաները» - խոսքը «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» վեպի մասին է։ Կաֆան միջնադարյան բանաստեղծական ժանր է, անունն արաբերեն է. նշանակում է ոտանավորի հանգ։ Հիմնականում 4-8 տողանի են՝ 15 վանկերից կազմված, տեղադրվել են գեղարվեստական արձակ ստեղծագործությունների մեջ։ Կաֆաները գրվել են հիմնականում բարոյախոսական- իմաստասիրական մոտիվներով։

Էջ 347, տող 3 ն.։ Կգնեմ իրմեն գրաբար և աշխարհաբար քանի մը տուներ - Շանթի մեջբերումներին զուգահեռ դնում ենք նույն տները Կեչառեցու բանաստեղծությունների ժամանակակից հրատարակություններից.

Հանցգուն զինչ բուսնի տերևն
Եւ ծաղկի զարունն ի ծառէն,
Տէ՛ր իմ, ծաղկեցո՛ հոգով
Զիս ի սէր քո աստուածեղէն։

Հանցգուն զինչ հանեն մարգրիտ
Հնարիւք ըգձուկն ի ծովէն,
Որ պահ մի տըտանըն տայ
Ու մեռնի կարօտ ի ջրէն,

Ես արտաքսեցայ մեզօք
Յիմաստից անհուն քո ծովէն.

Հոգիս թալկացաւ դէմ քեզ,
Զիս կեցո՛, ծնեալդ ի կուսէն.

Հանգցուն զինչ եղէ ժամ-ժամ
Թանձրացեալ թուխ ամպն ի ծովէն,
Ի յորատմանէ նորա
Սաստանի ամէն մրգեղէն:

(«Ողբ եւ մաղթանք ի Խաչատուր Կեչառեցւոյ տաղեալ», Խաչ. Կեչառեցի, Տաղեր, Ե., 1988, էջ 26, 27):

ԱՇԽԱՐՀՍ ԷՐ Ի ԾՈՎ ՆՄԱՆ

Աշխարհս էր ի ծով նըման՝
Զիս ի վայր տարաւ յանդիման,
Կենցաղս էր յալեաց նըման՝
Զիս ի մէջ էառ.քան զընդման:

Սերն էր անդընդոց նըման՝
Զիս իր վայր քաշեց փոշիման,
Աւուրքս էր ծաղկի նըման՝
Որ անցաւ երազի նըման:

Մարմի՜ն, մեռանիլ կայ քեզ
Եւ մանալ ի նեղ գերեզման,
Աչերըդ խըփի, գերի,
Ի՛ երեսիդ գոյնըն հողանան:

Գոհար բան և բառ լեզուիդ՝
Այդ ամէնն ի քէն վերանան,
Մնալի սիրելիքըդ քո
Զքեզ թողուն ու՛ ի քէն հեռանան:

(Քրեստոմատիա, էջ 266)

էջ 349, տող 7: Ահա՛ իրմեն մեկ-երկու նմուշ - զուգահեռ

գնում ենք նույն ստեղծագործությունները 1986 թ. Հրատարակությունից («Բանք չափավ»).

ԾԱ

Աւաղ մեզ Հայիլ պիտի յայն արևն որ լոյս կու ծագէ,
Շատ կայ ի յարև նըման՝ ի պնչէն օձըն կու փագէ,
Գիտուն մարդն յարև նըման, խօսքն զէտ արև կու ծագէ,
Անգէտ մարդն օձու նըման, Հանապազ ըզմարդ կու խոցէ:

ԽԱ

Մէկ կայ որ Հազար աժէ, Հազար կայ որ մէկ մի չաժէ,
Այն մէկն որ Հազարն աժէ, մօտ յանգէտին փող մի չաժէ:
Ինչ մարդ որ գլխուն մարդուն խոնարհի և նմա լըսէ,
Այս կեանքըս ինքըն ուրանայ 'ւ անդէնին բարին ժառանգէ:

ԾԲ

Բազան ի յանտառ մորին թէպէտ բու, թէպէտ բազայ է,
Ծոհարն ի ծովուն միջին թէպէտ քար, թէպէտ ճոհար է,
Խելօքն ի յանգէտն ի մօտ, միտք արա, թէ ի՞նչ նըման է.
Ծըրագն ի յաչև կուրին կու վառի՝ ինքըն չըգիտէ:

ԽԲ

Ծառ մին կայ Հազար ճըղի, զինչ տեսայ նա մէկ տակ ունի.
Այնպէս է գլխուն մանուկն, որ յանգէտի մօտն է գերի.
Գիտունն է ի ծով նման, քանի շատ մտնու կու տանի,
Ի անգէտն է ի տիկ նըման, թ'աւելի ածեն նա թափի:

ԾՁ

Ելայ ժողուեցի զիմ մեղքն ու դըրի առջևս ու լացի
Յանդէնըն քարւան կերթար, շալկեցի 'ւ ի Հետ գընացի.
Հրեշտակն այլ ի դէմս ելաւ, թ'Ո՞ւր կերթաս ողորմ ու լալի.
Այդ շալկիկդ որ դու ունիս՝ անդէնին քեզ տեղ չի ընկնի:

ԼԲ

Աշխարհս է ի ծով նըման, ով որ գայ՝ անթաց չմնայ.
Յայս ծովս ես ի նաւ մըտայ, գնաց նաւս և ես չիմացայ.

Յեղեր մօտեցել եմ ես, փախեմ թէ քարի դիպենայ.
Քանանի իմ ագուար շինուածս ու տախտակըս մէկմէկանայ:

Էջ 351, տող 14: Կգնեմ իրմեն բնորոշ երկու կտոր - նույն տեսքը 1979 թ. քրեստոմատիայում այսպիսին են.

ԲԱՆՔ ՅԵՐԿՈՒ ԴԷՄՍ ՄՏԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆՔ՝ Ի ՀՈԳԻ ԵՒ Ի ՄԱՐՄԻՆ, ԶՈՐ ԱՌԱԿՕՔ ԽՕՍԻ ԱՅՍՊԷՍ

Զարթիք ի յերազուստ, բացէք զաչերդ ով կայք ի քուն.
Տեսէք մէջ գիշերիս շատք՝ որ պահ մի չեն լել ի քուն.
Անդադար ի շուրջ գալով կան հրամանաւ մի աստուծուն,
Որ բանիւ զերկինք ի վեր կամար կապել երեւ քամուն:

Զարթայ ես ի քնոյս, ելայ կացի պահ մի արթուն,
Երբ էանց գիշերն յերկար՝ նըշան եղև առաւօտուն.
Տեսի լուսին պայծառ, բազում աստեղք ի յիր ագատուն,
Զերկինքն են զարդարել ու՝ են արարածք Իմաստնոյն:

Մի աստղ ելաւ պայծառ առջև Արուսեկին լուսոյն,
Ունէր լոյս գեղեցիկ քան զաստեղացն այլ գերագոյն.
Եւես ըզնա լուսին և հըրաման տայ աստեղնոյն,
Հասար ի մայր մըտան նուազեցան յիրենց լուսոյն:

Քաղցր է ծընունդ լուսոյն, երանի տամ ես այն մարդոյն,
Որ բաժին ինքն ունենայ ի յայն լուսոյն առաւօտուն:
Թէ դուռըն կայ երկնից՝ պարգևատու մի աստուծուն,
Ի ծագել արեգականն ի մեզ բացվի դուռըն բարոյն:

Թէ անուշ հոտ կայ բուրել ու՝ ի կեանք փոխէ զդուռըն մահուն,
Են շատոց հոգի հարբած՝ յանուշ հոտոյն առաւօտուն,
Թէ անմահական սէր կայ, որ հոգի տայ հոգևորնուն,
Իմ բաժին սէրն ու հոգին խառնել ի սէրն առաւօտուն:

Թէ ինձ կեանք կամ խընդութիւն բաժին կայ ի դուռն ի սիրուն,

Թէ մեկ պահու սէրն ի սրտէ՝ թող լինի ինձ յառաւօտուն.
Թէ Հոգի տալ կու պիտի, կամ թէ Հոգի Հանել մարդուն,
Նա յօժար եմ ես Հոգով՝ զՀոգիս փոխան տալ իմ սիրուն:

Ով կամի սիրով լինիլ ինքն յարութեան որդի լուսոյն,
Թող խնդրէ ի յայն սիրոյն, որ ինք յարեաւ առաւօտուն.
Ի սիրուն սէր յաւելու, սիրով գրնայ տունն ի սիրուն
Ի՛ ով սիրոյն ինք Հետևի՝ Հասնի սիրոյն առաւօտուն:

(էջ 250-251)

ԲԱՆՔ ԽՕՍԻԼ Ի ԺԱՄ ՏՐՏՄՈՒԹԵԱՆ, ԶՈՐ ԳՐԵՑԻ ԱՌ ՊԱՀՆ ՎԱՍՆ ՍՈՒՏ ԵՂԲԱՐՑ, ԶՈՐ ՎԻՐԱՒՈՐԵՑԱՅ

Ես քանի՞ Հառաչ բերեմ, կամ ի սրրտէ կենամ ազար,
Եւ յերակ զօրն ի ղուսայ, Հոգօք մաշեմ զիս անդադար.
Ես չունիմ Հանգըստութիւն ու՛ ուրախութեան ինձ չըկայ ճար.
Որ մի պահ Հանգիստ առնում, կամ դուրանայ կեանքըս դըժար:

Զերդ ի ծով կամ տատանել, յերակ ծըփիմ յալիս խաւար,
Եւ չըկայ եզըր ի ծովիս, կամ թէ ճամբուս թէզ կայ վըճար.
Ոչ ունիմ ես օգնական, յոյս ու՛ ապաւէն ինձ կամ եար,
Որ ի յայս չատ ցըներէս լինէր խօսօք ինձ մըխիթար:

Ոչ ունիմ մարդ սիրելի ի յընտանեաց ինձ կամ օտար,
Որ գըթայ սըրտովն ի յիս, կամ աղետայ զիս իր եղբայր.
Ով սրրտով էր սիրելի՝ եղաւ Հեռի յինէ ու՛ օտար,
Նա օտարին ի՞նչ մեղ դընեմ, երբ որ լինիմ յիրմէն ազար:

Զայս ի յո՞վ Հարցուկ լինիմ, որ ինձ խըրատ տար կամկար,
Թէ զիս է՞ր աչխարՀս ամէն Հանց կու ատեն թըչնամաբար.
Զով սիրով ես ընդունիմ, թէ ի սրրտէ ինձ տայ խապար,
Նա յետև ինք յերևայ ցուցնէ զիր սէրն ու անկատար:

(էջ 249)

Իսկ մեջ բերված առաջին քառատողը

Ես իմ կարօտ ի իւր սիրուն,
Զինչ ծարաւած երկիր՝ ցօղուն,
Կամ զինչ գարնան անուշ քամուն՝
Թ·է ե՛րբ հընչէ հողմըն հարաւ:

(«Տաղ սիրոյ», էջ 245)

էջ 354, տող 7-8: Կգնեմ իրմեն ղարիբի կտոր մը, ունայնության կտոր մը և ծաղկի մը երգին կտորը ... - մեջբերումները Մկրտիչ Նաղաշի «Տաղ վասն ղարիպի ասացեալ», «Ի Նաղաշէ ասացեալ վասն ունայնութեան աշխարհիս» և «Տաղ ի դէմս մարգարէից եւ Քրիստոսի եւ Լուսաւորչին» բանաստեղծություններից են, որոնց համապատասխան տները դնում ենք այստեղ.

ՏԱՂ ՎԱՍՆ ՂԱՐԻՊԻ ԱՍԱՑԵԱԼ

- Հոգի՛, մի՛ ասեր ղարիպ, թէ չէ իմ սիրտըս կարունի,
Ղարիպն ի յօտար երկիր, վայ ա՛մ, խիստ դըժար կու՛ լինի.
Զինչ հաւն երամէն ի զատ, մոլորած ի տեղ չի հանգչի,
Այնչափ երերուն կենայ, մինչ որ իւր տեղըն հասանի:

- Հոգի՛, ա՛ մ, դու լաւ կասես, սիրտս է սև քան ըզգործելի,
Ի ղարիպութեան դարդէն երեսիս գունըն կու քաղի.
Յորժամ ես ի միտ ածեմ զիմ եղբարքըն ու զիմ սիրելիքըն,
Հոգիս բերանիս կառնու, քակտելոյ ճարակ մի չունի:

Աւա՛ղ ըզղարիպն ասեմ, որ յօտար երկիր կու լինի,
Աչերն արտասուօք ի լի, յերեսէն ի վայր կու թափի.
Յորժամ ի մէջլիս նըստի, անկասկած սըրտէկն արունի,
Զաչերն ի բոլորն ածէ, կարեւոր և զուգ նա չունի:

(Քրեստոմատիա, էջ 338)

Ի ՆԱՂԱՇԷ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՍ

Երազ է ու սուտ, եղբա՛յրք, աշխարհիս բաներն ի լըման,

Ո՞ւր են թագաւորք, իշխանք, պարոնայք և սուլթան ու խան.
Շինեցին բերդ ու քաղաք, դարպասնի ու շատ դատեցան,
Յետոյ զէմ անտէր թողին ու մտան ի հող ւ՝ ի զընտան:

Նադա՛ն, մի՛ խաբիր մեղօք, մի՛ դատիր անասնոյ նըման.
Մի՛ դիրկ աշխարհիս ածեր, մի՛ կարծեր, թէ քեզ տի մընան.
Շուտով քեզ խընդիր կու գան ու խոցեն ըղհոգիդ մահուան,
Հոգիդ բաժանի ի քէն ու մընայ մարմինդ ի զընտան:

(Նույնը. էջ 334)

ՏԱՂ Ի ԴԵՄՍ ՄԱՐԳԱՐԵԻՑՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԼՈՒՍԱՎՈՐՉԻՆ

Զինչ որ գեղեցիկ ծաղկունք
կային՝ ամէնք գնացին.
Ծաղիկ մին այլ հանց գնաց,
որ ամէն ծաղկունք զնա լացին:

Ծաղիկն անուշ խոտ ունէր,
որ ամէն աշխարհս լսեցին.
Ու ամէն աշխարհաց ծաղկունք
յայն ծաղկի սէրըն դիմեցին:

Ոմանք յայն ծաղկի սիրուն
չորցան ու դարձան դեղին,
Բազումք այն ծաղկի սիրուն
ծաղկեցան քան զնշդարինին:

Զայն ծաղիկն աստուած երետ,
նա ոմանք զդատրըն չիմացին.
Ծաղիկն ով երետ, էառ,
զուրն շատոք ի վայր մնացին:

Ծաղիկն յանց տեղ գնաց,
որ ամէն ծաղկունք խընդացին.

Հազար գոյնզգոյն ծաղկունք
յայն ծաղկի սէրըն ժողովին:

Ծաղկունքն յայն ծաղկի սիրուն
շաղ ունին ու շողշողային,
Ամէն ծաղիկն իւր գունովն,
այն ծաղկին գլուխ դնէին:
(Մկրտիչ Նաղաշ, Տաղեր, Ե., 1965, էջ 105)

էջ 355, տող 5 ն.: Դու ես գինի ուրախարար... -այս հնգատողը Շանթը սարքել է 2 տնից.

Կարմունճ կապած ես ապիկի,
Եւ գետ՝ գինի ուրախարար,
Ով որ խըմէ ի քեզանէ՝
Ուրախանայ սըրտով յօժար:

Շըրթունքըդ շող է լուսեղէն,
Պըտկնէդ ի վայր թափի ճուհար,
Ով որ զմեղաց ճաշակն առնու,
Այլ աստուծոյ չի տայ խապար:
(Քրեստոմատիա, էջ 311)

էջ 356, տող 12: Սիրոյ տաղ - նույնը 1979 թ. հրատարակությունից.

Ար՚ե՛կ, ար՚ե՛կ, իմ խուպ սուրաթ,
Փա՛ռք ու պատի՛ւ քո ստեղծողին,
Եղեմական դրախտէն կու գաս,
Օրհնեալ անուն քո նախշողին:

Ար՚ե՛կ, արև գարնանային,
Ար՚ե՛կ, աշնան պայծառ լուսին,
Նի՛սա, որ հայիմ յերեսդ ի վեր,
Տեսըդ հերիք է ինձ բաժին:

Տեսըդ բըժիշկ է հիւանդին,

Առողջութիւն ջերմընտրին.
Աչերրդ ծով է ծարուածին,
Բերանըդ քաղցր է քաղցածին:

Ծոցդ է դըրախտ անմահութեան,
Ի յետ դարձնէ գնլած հոգին,
Ո՛չ մեռանի, ո՛չ ծերանայ,
Ո՛չ երեսլին դառնայ դեղին:

Վաղվընէն ում որ հանդիպիս՝
Ի ծար ելնէ զօրն ի բարին,
Ով որ սուրաթըդ համբուրէ՝
Խընդմով անցնէ զբոլոր տարին:

Զով դու սիրով ի ներս ձեռնես՝
Ծաղկի քան զծաղըն խընկենին,
Ով կուռ միջացըդ պիրկ ածէ՝
Կանանչ մընայ քան զնըշդարին:

Եւ Յովհաննէս Թըլկուրանցի,
Փառաւորէ զհայր և զորդի.
Այտր սուրաթն ի հող դառնայ,
Ի հուրն անշէջ իւր սիրելին:

(էջ 304)

էջ 357, տող 11 ն.: Ահա՛ եղեւ պայծառ գարուն - բերում ենք տաղն ամբողջությամբ.

Ահա եղև պայծառ գարուն,
Ծաղկեաց այգին ու պաղչանին,
Դաշտ ու լերունք պարդարեցան,
Արօտ հանին ըղխիլանին:

Գունդքըն ծաղկին ու հետ կապին,
Անուշանայ հովն ու քամին.
Ջափերն ձայն ածեն յայգին,

Քաղցր կու գայ ձայն պլպուլին:

Կու թանձրանայ շուքն ծառին,
Յորդոր գնայ ջուրն ի յառուին.
Ձթերն բերէր բոլոր վըզին,
Սիրով խըմէր զանուշ գինին:

Այն փարթենուն պէմ չկայ գին,
Որ այն խընդումն հանդիպին,
Քանել դրախտն անմահութեան,
Յորում եղաւ մարդն առաջին:

Թէ չէր մահուն օրն ու դժոխն
Ու կամ սարսափ դատաստանին՝
Նայ այս աղէկ էր զինչ ասաց
Խև Յովհաննէս Թուլկուրանցին:
(Հովհ. Թլկուրանցի, Տաղեր, Ե., 1960, էջ 139-140)

Էջ 358, տող 9: Կդնեմ գլխավոր կտորը իր տաղեն «Ի վերայ մահուան» - նույն աները 1979 թ. հրատարակությունից.

Է՜ մահ, քանի ըզքեզ յիշեմ,
Կու դողամ ու սարսափիմ ես.
Զըկայ քան ըզքեզ լեղի,
Ի՝ ամենայն լեղոյ լեղի ես:

Լեղի ամենայն լեղոյ,
Մի՞թէ դու ի քեզ նըման ես:
Դըժոխք քան ըզքեզ լեղի,
Եւ յետոյ զայն ալ դու բերես:

Սողոմոն յիշեաց ըզքեզ
Եւ ասաց՝ Եղո՜ւկ, վայ եմ ես,
Նախատեաց զիմաստութիւն,
Ինքն ի յինքն ասաց՝ Փո՜ւ ի քեզ:

Ինչ շահ է իմաստութիւն,
Քան զանգէտ աղքատ մնայ ես:
Անմեղք ի յաշխարհս եկի
Ու մեղօք գընամ սևերես:

Սողոմոն արքայն ասաց՝
Մի՛ ասեր, թէ արքայ եմ ես,
Ունիմ շատ դըրամ, շատ գանձ,
Շատ պարպաս և ոսկի ի ներս:

Ի վուր խըռովեալ գանձէս,
Ոչ զխտես, թէ ում ժողովես.
Զաշխարհս ես ի գիրկդ առեր,
Քեզ ի խոր դըժոխք կու փորես:

(Քրեստոմատիա, էջ 327-28)

Էջ 359, տող 12: ***Հոգիս բերկրեալ ընդ քեզ ցնծայ...*** *- մեջբերումը Աղթամարցու «Աղթամարցի Գրիգորիս կաթողիկոսէ ասացեալ» բանաստեղծությունից է (Գր. Աղթամարցի. Տաղեր, Երևան. 1963, էջ 215):*

Էջ 359, տող 14: ***Պլպուլի ու վարդի սերը Աղթամարցին վերածած է վիպերգության ...*** *- վարդի և բլբուլի հավիտենական սիրո մոտիվով Աղթամարցին գրել է 3 ծավալուն բանաստեղծություն «Ծաղկունքն ասեն՝ Հերիք արա», «Յետ գընալոյ վարդին» և «Գարունն երէկ պլըպուլն յայգին», որոնք տաղարաններում կրում են «Տաղ սիրոյ» խորագիրը: Այստեղ խոսքը «Յետ գընալոյ վարդին» տաղի մասին է:*

Էջ 360, տող 6: ***Քաղվածորեն կդնեմ իր սիրո երգը. և իր «այգին»...*** *- Շանթի մեջ բերած հատվածներին (ավելի ճիշտ՝ տարբերակներին) զուգահեռ դնում ենք նույնը ամբողջությամբ.*

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ ԱՂԹԱՄԱՐՑՈՅ

Գարունն է բացվեր. վարդն ի պաղշանին,
Քաղցր եղանակեն պլըպուլն ու ղումրին,
Սիրով են վառեալ ի կարմիր թրփին.
Կանաչ ու կարմիր տերև կու հագնին:

Գինով եմ, գինով, Հարբեր եմ սիրով,
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Է՛ շամս ու ղամար, աստղ աստաւօային,
Պայծառ արեգակըն լուսով ի լին,
Լալ ակն ու գոհար ես դու մեծագին,
Ծիրանի ծաղիկ, գոյն մանուշակին:
Գինով եմ, գինով, Հարբեր եմ սիրով,
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Դու նշդարենի ծաղիկ շուշանի,
Դու կանաչ տերև ի մէջ շովային,
Քաղաքն Խութան ու Չինումաչին,
Խորասան բոլոր չէ՛ քո տեսուղ գին:
Գինով եմ, գինով, Հարբեր եմ սիրով,
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Մանեղէն մատունք, Հոռ պալատանին,
Դու նուշ ու շաքար, տուփ անուշ խընկին,
Դու կարմիր խընձոր ի մէջ տերևին,
Ծաղկեայ բուրաստան և ցօղ արևին:
Գինով եմ, գինով, Հարբեր եմ սիրով,
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Մարգարիտ պայծառ ես դու մեծագին,
Ականք զարդարեալ ի յոսկի սինին,
Նունուֆար ծաղիկ, գոյն ըռահանին,
Մուրտ և բալասան, փափուկ շուշանին:
Գինով եմ, գինով, Հարբեր եմ սիրով,
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Համասփիւռ ծաղիկ ես բուրաստանին.
Բըրաբիոն պայծառ ի յԱդին դրախտին,
Զոհալ մուշթարին, աստղ առաւօտին.
Զոհրայ լուսաբեր, ղամար ու լուսին:
Գինով եմ, գինով, Հարբեր եմ սիրով,
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Շամս և արեգակն երկնային գընդին,
Թուխս ամպիդ նըման ցօղ ես անձրևին,
Ծառ կանաչատերև դու պըտղով ի լին,
Բողբոջեալ ծաղկով ոստ արմաւենին:
Գինով եմ, գինով, Հարբեր եմ սիրով,
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Կընդրուկ և զըմուռ, խունկ ընդ Հալուէին.
Քաղցր և ախորժակ Համով շաքարին,
Ի յամէն դիհաց բըխէ ձեզ բարին
Եւ ձեզ Հովանի նըշան սուրբ խաչին:
Գինով եմ, գինով, Հարբեր եմ սիրով,
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

(Քրեստոմատիա, էջ 412-13)

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ՆՈՐԱՇԷՆ ՏՈՒՆ ԵՒ ԱՅԳԻ ՈՒՆԵՑՈՂԻ ԵՒ ԼԱԼՈՒ

Յամէն առաւօտ և լոյս
Գաբրիէլն ասէր Հոգոյս,
-Արի՛, ե՛լ ի յայս այգոյս,
Այս իմ նորատունկ այգոյս:

Քար եմ բերեր սարերոյս,
Փուշ եմ կըրեր ձորերոյս,

Պատ եմ բոլորեր այգույս,
Կ՚ ասեն, թ՚Արեկ, ե՛լ այգույս: —
Ինչպե՞ս լինեմ ի յայգույս,
Գէմ չար փուշ կայ պատերույս:

Ջուր եմ բերեր լեռներույս,
Աղբիւր եմ շիներ այգույս,
Դեռ չեմ խըմեր ի ջըրույս,
Կ՚ասեն, թ՚Արե՛կ, ե՛լ այգույս.–
Այս իմ նորատունկ այգույս:

Ուռ եմ տընկեր այս այգույս,
Ձառկն եմ ջրեր այս տընկույս,
Դեռ չեմ կերեր ի պըտղույս,
Կ՚ասեն, թ՚Արե՛կ, ե՛լ այգույս.–
Այս իմ նորատունկ այգույս:

Հընձան եմ շիներ այգույս,
Կարաս եմ թաղեր գինույս,
Դեռ չեմ խըմեր ի գինույս,
Կ՚ասեն, թ՚Արե՛կ, ե՛լ այգույս.–
Այս իմ նորատունկ այգույս:

Տուն եմ շիներ մէջ այգույս,
Ոսկով նաշխած չարդըխնուս,
Դեռ չեմ վայլեր շէնքերույս,
Կ՚ասեն, թ՚Արե՛կ, ե՛լ այգույս.–
Այս իմ նորատունկ այգույս:

Վարդ եմ տընկեր այս այգույս,
Կարմիր ու՚ըսպիտակ վարդույս,
Դեռ չեմ զհոտն առեր վարդույս,
Կ՚ասեն, թ՚Արե՛կ, ե՛լ այգույս.–
Այս իմ նորատունկ այգույս:

Ծաղիկ եմ տընկեր այգոյս,
Կանաչ ու դեղին ծաղկոյս,
Դեռ չեմ զհոտն առեր ծաղկոյս,
Կ՚ասեն թ՚Արե՛կ, ե՛լ այգոյս.-
Այս իմ նորատունկ այգոյս:

Գաբրիէլն եկաւ հոգոյս,
Յահէն կապեցաւ լեզուս,
Խաւրաւ աչերս ի լուսոյս,
Աւա՜ղ իմ կարճ արևուս,
Կ՚ասեն, թ՚Արե՛կ, ե՛լ այգոյս:

Առին զհոգիս ի մարմնոյս,
Հանեցին զիս յիմ այգոյս,
Մահ է, որ ելնեմ այգոյս.
Այս իմ նորաշէն այգոյս:

Ուղն կանաչ է այգոյս,
Որթըն բացեալ է տընկոյս,
Խաղողն գոյնըզգոյն այգոյս,
Ծառեր, տունկըն շատ այգոյս,
Կ՚ասեն, թ՚Արե՛կ, ե՛լ այգոյս:

Պըլպուլըն կանչէ այգոյս
Առաւօտէն մինչ ի լոյս,
Ցօղն իջանէ ի յայգոյս,
Յամէն առաւօտ և լոյս:

(Նույնը, էջ 426-428)

էջ 363, տող 15-16: Կհիշվի Բերդակցի սարկավագ մը, կհիշատակվի Ղազար Սեբաստացի մը, կա Վարդան մը... - Սարկավագ Բերդակցին 16-րդ դ. բանաստեղծ է, առավելապես հայտնի «Գովք խաղողի» տաղով:

Ղազար Սեբաստացին 17-րդ դ. բանաստեղծ է, «Տաղ սիրոյ եւ ուրախութեան» երգի հեղինակը:

Իսկ Վարդանը տաղերգու և տոմարագետ Վարդան Կաֆացին է (1615 - 1712), «Վարդն է բացուեր առաւօտուն գոյնզգոյն» հայտնի տաղի հեղինակը:

Էջ 363, տող 16 ն.: Ստեփաննոս մը... - 17-րդ դ. բանաստեղծ Ստեփանոս Վարագեցին է:

Էջ 363, տող 13 ն.: Դավիթ Սալնաձորեցին կգովե ծաղիկները... -17-րդ դ. տաղասաց է, հայտնի է նաև Որբեկ մականունով:

Էջ 363, տող 5-6 ն.: Հովհաննես մըն ալ ուզած է թռչունները նկարագրել նույն ձևով - 17-րդ դ. բանաստեղծ, մեջբերումը նրա «Գովասանք թռչնոց» տաղից է:

Էջ 364. տող 6-8 :... Երբ Մինաս Թոխաթցին, Առաքել մը, Մարտիրոս մը կսկսին երգել հարիսան... կամ տաղերգել իրենց «չախուն» - 16-րդ դ. բանաստեղծ Մինաս Թոխաթեցին երգիծական մի շարք գործերի հեղինակ է, որոնցից մեկը «Վասն հերիսի» հայտնի բերթվածքն է:

Առաքելը 17-րդ դ. բանաստեղծ Առաքել վարդապետն է, «Տաղ վասն մահրամայի» բանաստեղծության հեղինակը:

Մարտիրոսը 17-րդ դ. բանաստեղծ Մարտիրոս Խարբերդցին է, «Վասն չախուին» երգիծական բանաստեղծության հեղինակը, իսկ իր ակռայի ցավը բանաստեղծությամբ նկարագրողը («Վասն ակռայի») 16-րդ դ. բանաստեղծ Պարսամ Տրապիզոնցին է:

Էջ 364, տող 1-3 ն.: ...Դավիթ Սալնաձորեցիի «Գովասանք ծաղկանց»-ի սկիզբն ու վերջը: Ստեփաննոսի տաղերն ալ անարժեք չեն - Դավիթ Սալաձորեցու տաղի սկզբի և վերջի հատվածներում կան ուղղագրական բազմաթիվ վրիպակներ (ուղղված են), բառային և այլ տարբերություններ, իսկ Ստեփանոս Վարագեցու տաղից արված մեջբերումն ընդհանրապես հեռու է ժամանակակից բնագրից, ուստի վերահիշյալ հատվածները և Վարագեցու տաղը դնում ենք ամբողջությամբ.

Գարուն ատրի, ամպքն են ճիւղ, սեաւ ու ալխատ պտուղ շարուն.
Երկնասասան ամպք որ կան, մարտն է խարխախ հիմն տարուն.
Յորժամ մարտին ամիսն գայ, աէքն հրաման կու տայ հողոյն.
Հողն ի քնոյն յետ կու զարթի, ջարայ կու տայ բոյս և անկոյն:
Բուսնին, գեանէն ի վեր կու գան, կանանչ հագնին բայքն ըխթուն.
Ապա օդոյն հրաման կու տայ, որ կը թափէ գյօղն ի յամպոյն,

Ցոզէ, աշխարհս ցնծացունէ, դաստուր լինի ծաղկըներուն,
Ուրախանայ երկինք, գետին, բուրէ հոտն անմահութեան:
Ծաղկունք բուսնին հարիւր հազար, ցեղ ցեղ ներկած և գունզգուն.
Թիւրլու Թիւրլու հոտեր ունին, մինըն քանց միւսն սիրուն:
Նախ ձնծաղիկ և ջրիկտամ, բարփն ու խաժուակն յառաջագոյն.
Սոքա չորսն միաբանին ու ձայն ածեն ծաղկըներուն.
– Ծաղկունք, զարթի՛ք ի խոր քնոյն, քանի՞ պառկիք ներքև հողոյն:
Զարթի՛ք, զաշխարհս ծաղկեցուցէ՛ք, բիւրք ի բիւրոց. անթիւ,
անհուն.

Ապա բուսնին ծառք և տնկոյնք, ծաղկին ծառներն և պտղատուն,
Յետոյ բեբղօշն ու քաքառօջն կու ջահարին ի հետ ամպոյն.
Ցինկն գեղին ծաղկի, ցնծայ, փայլէ, ծփայ մէջ ջրերուն.
Ջուրն ու չայիր-չիման, ծաղկունք ցնծան ի հետ ձնաբերոյն:
Լեռն մարմանդ ծաղիկ դառնայ, ծաղկունք ծաղկին ի սարերուն:
Ծիծաղին սարն ու ձոր ծաղկօք, ծափ զարնեն, ծփան բիւրագոյն.
Կարմիր կակաչն, ալ ու դեղին, մօռ ու մախմուր է պարդարուն.
Սումբուլն մանաւուշ է հագել, զըրմըզ է եօթնադըրանց արփուն.
Հուռմ ծաղիկն է փուշոտել, բուսել հետ մոշին-մորենւոյն.
Պուտն ու պուտվարդն ու մատուտիկն և այլ ծաղկունք բացուին
սիրուն:

Եզան ծաղիկն է խիստ դեղին, գոյնն է գունով քանց ծիրանուն.
Անջրդի տեղն կու բուսնի, կու ժրանայ ամռան չորոյն.
...Ծո սարկաւագ Սալաձորցի, դաստան արիր ծաղկըներուն,
Քանի դատես ի հետ մեղաց, կու նըմանիս նանիր ծաղկոյն.
Առաւօտուն ցանեն՝ բուսնի և չորանայ մինչ յիրիկուն:
Որբ Դաւիթն եմ, չատ դատեցա գըլուխ առնում ծաղկըներուն.
Ծաղկունք որ զարդ են աշխարհիս, օրինակ երկնից աստղերուն,
Սակաւ ծաղկունքս գովեցի, բազումն մնաց վարպետներուն:

(Քրեստոմատիա, էջ 560. 563)

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ

Աշուն էր, եղև գարուն,
Ցամաքեցաւ ձիւն սարերուն,
Ծառերն ամէն փըլթըլթան
Ու տերև հագան գոյնզգոյն:

Բլբուլն ի վարդին սիրոյն,
Գիլ կ'երթայ զինչ մարդն ի զինւոյն,
Գիշեր ի լոյս կու ձայնէ,
Վաղունէքն մինչ 'ւ իրիկուն:

Աշուն էր, եղև գարուն,
Ձայն անուշ երեկ հաւերուն,
Մանկտիքն ի սարերն ելան
Ու նստան վեր ծաղկներուն:

Սիրամարգ հաւի նման
Հագեր են հալաւ գոյնզգոյն.
Խեւ զարնեն ու խեւ խաղան,
Ու խմեն ի յանուշ գինոյն:

Աշուն էր, եղև գարուն,
Կանաչաւ երես դաշտերուն,
Հաւքերն ամէն պար առին,
Ու վայրի էրէքն անտառուն:

Օրհնեմք զարարիչն աստուած,
Բուն մըտան ծիծառն ու մեղուն.
Թուչին ի բարձր սարերն,
Քաղեն զնխւժ ի ծաղկըներուն:

Գարուն էր, եղև աշուն,
Ու թափաւ թուփըն ծառերուն,
Ուստա ամպն ի յարևելք,
Ձիւն եկեր ի վեր սարերուն:

Բարով գայ այլ'ի գարուն
Աւետիս տանին բըլպըլուն,
Գայ, նստի ծառի ճըղին,
Արտասուէ դէմ քաֆուր վարդին:

Գարուն էր, եղև աշուն,
Վերացաւ վէյլքն ադամորդոյն.
Հոգիս սևացեր մեղօք,
Կարօտ եմ Հարաւ քամուն:

Ողորմելի Ստեփաննո՛ս,
Վա՜յ է քեզ ու վա՜յ քո մահուն.
Ցաստուած բարեխօս անկիր,
Տէր առնէ զքեզ անճառ լուսոյն:

Գարուն էր, եղև աշուն,
Ցիմար, է՞ր կաս անհոգ ի քուն,
Քո կեանքդ ի պակսիլ առաւ
Ու հասաւ քո օրըն մահուն:

Խէրիք արա Սաեփաննոս,
Վա՜յ ու՝ եղուկ կարդա՛ զօրն ի բուն
Մի՛թէ ողորմի աստուած,
Ու չառնէ զքեզ կեր գեհենոյն:

(Նույնը, էջ 538-39)

էջ 369, տող 8-9: Կգնեմ իրմեն ամենեն հաջող մեկ-երկու երգեր, մեջեն քանի մը տուն զեղչած - զուգահեռ դնում ենք Հովնաթանի նույն տաղերը ժամանակակից հրատարակություններից.

ՏԱՂ ՍԻՐՈՅ Ի ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԷ ԱՍԱՑԵԱԼ. «ԼՈՒՍԱՒՈՐԵԱՅԻՆ» ԳՈՅՆՆ Է

Ասել ես, թէ՝ Գարնան փախտն.
Սիրեկա՜ն, ամա՜ն, ամա՜ն,
Որ բացվի մեր պաղչին վարդն,
Նազելի՛, մեր պաղչին վարդն,
Քեզ ցոյց կու տամ ծոցիս զարդն,
Նազելի՛, ամա՜ն, ամա՜ն.

Եկ պաղչէն, այս է լաւ վախտն,
Սիրեկա՜ն, այս է լաւ վախտն,
Բացուել է վարդն:

Վարդ ղրկեմ քեզ կոկոն թազայ,
Սիրեկա՜ն, ամա՜ն, ամա՜ն,
Գրեմ թղթով սիրոյ արզայ,
Նազելի՛, ես, սիրոյ արզայ,
Եկ պաղչէն, բեր արաղ մազայ,
Նազելի՛, ամա՜ն, ամա՜ն.
Եկ պաղչէն, այս է լաւ վախտն,
Սիրեկա՜ն, այս է լաւ վախտն,
Բացուել է վարդն:

Վարդով գլուխդ զարդարէ.
Սիրեկա՜ն, ամա՜ն, ամա՜ն,
Ե՛կ, իմ խնդիրքս կատարէ,
Նազելի՛, խնդիրքս կատարէ,
Ինձ էս դարդէս ազատ արէ,
Նազելի՛, ամա՜ն, ամա՜ն.
Եկ պաղչէն, այս է լաւ վախտն,
Սիրեկա՜ն, այս է լաւ վախտն,
Բացուել է վարդն:

Վարդագոյն երեսդ է փայլման,
Սիրեկա՜ն, ամա՜ն, ամա՜ն,
Դու՝ վարդ, ես՝ բլբուլի նման,
Նազելի՛, ես բլբուլի նման,
Քանի կանչեմ զարով ֆղան,
Նազելի՛, ամա՜ն, ամա՜ն.
Եկ պաղչէն, այս է լաւ վախտն,
Սիրեկա՜ն, այս է լաւ վախտն,
Բացուել է վարդն:

Վարդ տամ քեզի, ուրախանաս,

Սիրեկա՛ն, ամա՛ն, ամա՛ն,
Իմ սիրոյ դարդն իմանաս,
Նազելի՛, դարդերս իմանաս,
Նաղաշն չի՛ թողնես, մոռանաս,
Նազելի՛, ամա՛ն, ամա՛ն.
Եկ պաղչէն, այս է լաւ վախտն,
Սիրեկա՛ն, այս է լաւ վախտն,
Բացուել է վարդն:

(Նաղաշ Հովնաթան, Տաղեր, Ե., 1988, էջ 61-63)

Ի ՎԵՐԱՅ ԳՈՒՐՋՍՏԱՆԱՅ ԳՈԶԱԼՆԵՐԻՆ
Ի ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԷ ԱՍԱՑԵԱԼ

Գովեմ սըրտիւ ուրախական
Թիֆլիզ քաղաքըն պատուական.
Խիստ գեղեցիկ են սիրական՝
Վրաստանայ գօզալներըն,
Վրաստանայ գօզալներըն,
Գուրջըստանայ խաթուններըն:

Ինքնագոյ ջերմեռանդ Համամ,
Միջի խաթուններըն թամամ,
Սիպտակ բուխախ, բոլոր չամամ՝
Վրաստանայ արմաղաններըն,
Վրաստանայ արմաղաններըն,
Շէն Թիֆլիզու թաւադներըն:

Կարմիր երես նըման վարդի,
Ինչպէս ծաղիկ ծաղկազարդի,
Ուշ ու խելք կու տանեն մարդի՝
Վրաստանայ գօզալներըն.
Վրաստանայ գօզալներըն,
Գուրջըստանայ խաթուններըն:

Ղալամ ունքեր՝ կապած կամար,
Աչքերըն վառ՝ շամսի ղամար,
Կապել են մուրասայ քամար՝
Վըրաստանայ արմաղաններն,
Վըրաստանայ արմաղաններն,
Շէն Թիֆլիզու թաւադներըն:

Վարսերըն պատատ ոլորած,
Երեսըն՝ լուսին բոլորած,
Շատ մարդ է տեսած՝ մոլորած՝
Վըրաստանայ գօզալներըն,
Վըրաստանայ գօզալներըն,
Գուրջըստանայ խաթուններըն:

Տեսօք են ամէն Հասարակ,
Բօյն ու ջամըն է մուբարակ,
Բատանըն լայն, մէջքըն՝ բարակ
Վըրաստանայ արմաղաններն,
Վըրաստանայ արմաղաններն,
Շէն Թիֆլիզու թաւադներըն:

Մէջլիս նստեն սազով-դամով.
Լեզուն քաղցըր, խօսքըն Համով.
Գինի խմեն ոսկէ ջամով՝
Վըրաստանայ արմաղաններն,
Վըրաստանայ արմաղաններն,
Շէն Թիֆլիզու թաւադներըն:

Սիրամարգի նըման քայլին,
Աստղանըման գունով փայլին,
Տեսողըն զարմանան, մայլին՝
Վըրաստանայ գօզալներըն,
Վըրաստանայ գօզալներըն,
Գուրջըստանայ խաթուններըն:

Հագել են ղումաշ ու խարայ,

Ունեն շատ զարաւաշ, ծառայ,
Խիստ են կանանչ թազայ թառայ
Վրաստանայ արմաղաններն,
Վրաստանայ արմաղաններն,
Շէն Թիֆլիզու թաւաղներն:

Աթլազ են հագել հաւասար,
Սամուր, վալափուշ սարէսար,
Ամէն պարոն են, ազատար՝
Վրաստանայ գօզալներն,
Վրաստանայ գօզալներն,
Գուրջըստանայ խաթուններըն:

Ես՝ Նաղաշս մեղայց ծով եմ,
Նոցա սիրովըն գինով եմ,
Խապար չեմ, թէ ինչպէս գովեմ՝
Վրաստանայ արմաղաններն,
Վրաստանայ արմաղաններն,
Շէն Թիֆլիզու թաւաղներն:

(Բրեստոմատիա, էջ 588-590)

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ԳԱՐՆԱՆ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ Ի ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԷ ԱՍԱՑԵԱԼ

Յորժամ եղև գարուն, արև ծագեցաւ,
Հարաւ հողմն հնչեաց, սառն հալեցաւ,
Երկիր կանանչացաւ, ծառն ծաղկեցաւ.
Խմե՜նք, եղբա՛րք, գինի,
Բանն ստուած չինի:

Որ եղբարքն նստեն ծաղկեայ ծառի տակ,
Ջեռացներն գինի՝ կարմիր ու յըստակ,
Թասի մէջն անկանի ծաղիկ սպիտակ.
Խմե՜նք, եղբա՛րք, գինի,
Բանն ստուած չինի:

Վաղուն ոչ գիտես, թէ զի՞նչ ծնանի,
Մարդոյս կեանքն վայրի ծաղկի նմանի,
Որ այսօր բացուեալ է, վաղուն անցանի.
    Խմե՜նք, եղբա՛րք, գինի,
    Բանն աստուած չինի:

Նոր գարուն, նոր արև, ծաղիկ շնորհազարդ,
Այսուհետև բացվի մանուշակ և վարդ,
Ձայն բլբուլ, սատրակի լսէ ամէն մարդ.
    Խմե՜նք, եղբա՛րք, գինի,
    Բանն աստուած չինի:

Առէք կարմիր գինի և լցէք շուշով,
Բերէք թազայ գառն՝ սինի սարփուշով,
Ղարիլ փլաւ ձգէք մեխակով, նուշով.
    Խմե՜նք, եղբա՛րք, գինի,
    Բանն աստուած չինի:

Թո՛ղ չիման տեղ նստենք, ջուր լինի և խոտ,
Կարմիր գինին խմենք մէկըզմէկի մօտ,
Միմեանց տուէք ծաղիկ, վարդ անուշահոտ.
    Խմե՜նք, եղբա՛րք, գինի,
    Բանն աստուած չինի:

Այլ և խաղաղութեամբ խմելն է հալալ,
Ո՛չ հարբել, ո՛չ կռուել և ո՛չ բարկանալ,
Պարկեշտութեամբ ըմպել, սիրով զուարճանալ.
    Խմե՜նք, եղբա՛րք, գինի,
    Բանն աստուած չինի:

Նի՛ստ, քո մեղքերն լա՛ց, Նաղաշ Յովնաթա՛ն,
Աշխարհս անցաւոր է, չէ՛ մնացական,
Դուք կերէ՛ք, խմեցէ՛ք, եղբա՛րք պատուական,
Եւ օրհնեցէք զաստուած միշտ և յաւիտեան:
(Նաղաշ Հովնաթան, Տաղեր, էջ 83-84)

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ԶԱՏԿԻՆ ՀԱՅՈՑ

Յորժամ գայ պայծառ Զատիկըն Հայոց,
Մեծ աւետիս տամք ծերոց և տղայոց.
Ասեմք՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Կեա՛նք նընջեցելոց.
Փրկութիւն հոգւոց է Զատիկըն Հայոց,
Գովե՛մք Զատիկըն Հայոց:

Ուրախանան մարդիկք, մանկունք և տղայք,
Զարդարեալ ցնծան և պարեն կանայք,
Խաչապաշտք խնդան, և առաւել Հայք,
Որ են քրիստոնեայք.
Աւետեաց օր է Զատիկն Հայոց,
Գովե՛մք Զատիկն Հայոց:

Վերանայ ձմեռն և գայ ամառըն,
Հասանի գինին և թազա գառըն՝
Կանանչի խոտըն և ծաղկի ծառըն՝
Տերևախառըն.
Քաղցր և անոյշ է Զատիկն Հայոց,
Գովե՛մք Զատիկն Հայոց:

Նորոգին հոգիք սուրբ յաւազանէն.
Լոյս պայծառ բղխէ սուրբ գերեզմանէն,
Նա մեզ կու փրկէ ի չար գազանէն,
Նորին բերանէն.
Ազատարար է Զատիկն Հայոց,
Գովե՛մք Զատիկն Հայոց:

Առեալք քահանայք խաչ, Աւետարան,
Օրհնեն գերեզման, տուն և անդաստան,
Ամեն մարդ շրջի ծաղկանց բուրաստան.
Երկիր Հայաստան.

Շնորհ աշխարհի՝ Զատիկըն Հայոց,
    Գովե՛մք Զատիկըն Հայոց:

Թռչունքն խայտան, խօսի բլբուլըն,
Փայլի մանուշակ, բացուի սըմբուլըն,
Սերմանիք ցանեն, աշխատի ցուլըն՝
    Բոլոր աւուրըն.
Աստա գարուն է Զատիկըն Հայոց,
    Գովե՛մք Զատիկըն Հայոց:

Աղբերք յորդորին և հալի սառըն,
Քրիստոս զենանի՝ աստուծոյ գառըն,
Քահանայք երգեն երկնից բարբառըն՝
    Հրեշտակախառըն.
Դրախտի նման է Զատիկըն Հայոց,
    Գովե՛մք Զատիկըն Հայոց:

Նստէ՛ք, Հայրք և եղբայրք ի մէջ չիմանի
Եւ խմէք գինի վերայ սեղանի,
Նաղաշն արարէք յիշման արժանի
    Քաղցրութեան բանի,
Քանզի նա՛ գովեաց Զատիկըն Հայոց,
    Գովե՛մք Զատիկըն Հայոց:

Էլին սուրբ ծնող Մարիամ միշտ կույս,
Ծագեա՛ց ծննդեամբ քո մեզ փառք և լոյս,
Լեր բարեխօս առ յարուցեալն Յիսուս,
    Պարգևել մեզ լույս.
Մաքրութեամբ տանել Զատիկըն Հայոց,
    Գովե՛մք Զատիկըն Հայոց:

(Նույնը, էջ 218-20)

Էջ 337, տող 6 ն.: ...Ինչպես Մատաթյանն է... - խոսքը Պետրոս Մաղաթյանի (աշուղ Սեյադ, 1810-1876) մասին է:

Էջ 379, տող 14 ն.: Աշխարհս մէ փանջարա է... – մեջ բերված

տունը Սայաթ-Նովայի երգերի լավագույն հրատարակության մեջ այսպիսին է.

Աշխարհըս մէ փանջարա է. թաղիրումէն բէզարիլ իմ,
Մըտիկ տըվողըն կու խուցվի. դաղիրումէն բէզարիլ իմ.
Էրեգ լաւ էր, կանց վուր էսօր. վաղիրումէն բէզարիլ իմ.
Մարդ համաշա մէ՛կ չի ըլի. խաղիրումէն բէզարիլ իմ:
(Սայաթ-Նովա, Խաղեր, Ե., 2003, էջ 83)

էջ 379, տող 9 ն.: **Օխնըփ քիզ բերող մէրն...** - այս երկտողը Շանթը կազմել է Սայաթ-Նովայի 3 երգերի կիսատողերն իրար միացնելով:

էջ 381, տող 5: **Ամեն մարդ չի կանայ խըմի...** - եռատողը «Դուն էն գըլխեն իմաստուն իս» երգի 4-րդ տան առաջին 3 տողերն են. որոնք այստեղ բերում ենք ճիշտ ուղղագրությամբ և կետադրությամբ.

Ամէն մարդ չի կանայ խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջըրէն է.
Ամէն մարդ չի կանայ կարդայ՝ իմ գիրըն ուրիշ գըրէն է.
Բունիաթըս ապա չիմանաս, քարափ է, քարուկըրէն է.
Սէլավի պէս առանց ցամքիլ, ղուն չուտով խարաբ մի՛ անի:
(Նույնը, էջ 79)

էջ 381, տող 10: **Հեռու տեղացէն գալիս իմ ...** - մեջբերումը քաղվածորեն կատարված է «Գ՚ուզիմ ումըրըս հէնց անցկացնիմ...» երգից, որը ճշտված ուղղագրությամբ ու կետադրությամբ ամբողջությամբ դնում ենք այստեղ.

Գ՚ուզիմ ումըրըս հէնց անցկացնիմ՝ օրըս մունաթ չըքաշէ.
Թ՚էգուզ հազար դարդ ունենամ՝ դարդըս մունաթ չըքաշէ.
Ղաստ անիմ, բարու հանդիբիմ՝ չարըս մունաթ չըքաշէ.
Դըլուխըս չարէն ռադ անիմ՝ սարըս մունաթ չըքաշէ.
Էրեսըս հայալու պահիմ՝ արըս մունաթ չըքաշէ:

Հիռու տիղացէն գալիս իմ՝ խիլքի զարար շահ իմ բերի.
Հուջրէս լիքն է անգին լալով, ջավահիրչուն ահ իմ բերի.
Հընդու միջէմէն դուս էկած ղիմէթով մաթահ իմ բերի.
Տեսնողըն թահրըն չի գիդի՝ մէ հէսաբի քարգահ իմ բերի.
Հէսաբի տիղ դուքան բաց անիմ՝ կարըս մունաթ չըքաշէ:

Մէ՛ ըխուրս փոսանդի տակաս է, տակիս է շոփ ու շափալաթ.
Մէ՛ ըխուրն՝ գար-գալամքարի, ախը ունէ վունցոր մագալաթ.
Մէ՛ ըխուրս Չինումաչինին կու առնէ թամամ, փարալաթ.
Մէ՛ ըխուրն ենգլիզունիս է, մէ ըխուրն՝ փարչայի խալաթ,
Վո՛ւնց ձիլլէ փ'ուշէ, վո՛ւնց կըտրիլ՝ կարըս մունաթ չըքաշէ:

Մէ՛ ըխուրն՝ զըրմըզ ու զափրանգ, մէ ըխուրն էլ զանջափիլ ա,
Մէ՛ քանի ըխուրս՝ դարիչյին, մէ ըխուրն էլ զալանֆիլ ա.
Բերնիրըն վըրայ չէ գալիս, հակնիրըս է սիլա-սիլա.
Անտակ ծովի միջէն հանած ակնիր ունիմ՝ լալ ու թիլա.
Մուրգարիտըս շարա-շարա՝ շարըս մունաթ չըքաշէ:

Շատ մարդ էստունք կու խմանայ, կ'ասէ. «Հալբաթ սա զանգին ա».
Զին գիդի, թէ ուշք ու միտքըս հազար մէ բարաթ հանգին ա.
Մարխիաթով քաղցըր լիզուն զիփունի վըրայ անգին ա.
Սայաթ-Նովէն էնպուր պուլպուլ՝ գըլուխըն մահու ճանգին ա.
Աստուած սիրողն ինձ ապառէ՝ նարըս մունաթ չըքաշէ:
(Նույնը, էջ 49)

Էջ 381, տող 10 ն.: Եա՛ր, քու կարօտդ քաշում իմ... - մեջբերման ճշգրտված տարբերակը.

Եա՛ր, քու կարօտըն քաշում իմ անմահական ջըրի նըման,
Ռա՛հմ արա, դուռըդ իմ էկի օջախի ու փիրի նըման,
Սէրըդ սիրտըս կէս է արիլ ջահվարդարի թըրի նըման,
Էշխիդ ալավըն ինձ էրից բարէկական հըրի նըման:

Էլ քա՞նի գըլխըս տարէսար, ռա՛հմ արա, եա՛ր բէմուրվաթ,
Վո՛ւչ աչքումըս լուս է մնացի, վո՛ւչ դարդմանումըս թաղաթ,
Թ'է դադ կ'օնիս, էս էլ շատ է, ապանեցիր ինձ թամամ բաքաթ.
Էրված սիրտըս հովըընելու բըխի՛ր դու ախպուրի նըման:
....

Վունցոր կարօտ մէ ախտաւոր, դուռդ է էկել Սայաթ-Նովէն,

Անց է կացիլ ամէն չարկապ, ամէն արգել Սայաթ-Նովէն,
Թէվուր կորցնիս, էլ չիս գըթնի նորից մէկէլ Սայաթ-Նովէն.
Նա մի հասս էր՝ աշխարհ էկաւ կանց մէ զարիբ հուրի նըման:
(էջ 111)

էջ 384, տող 11: Կգնեմ քաղվածորեն քանի մը տուներ ու կտորներ ... - բերում ենք բոլոր մեջբերումների ճշտված տարբերակները.

Չիս ասում, թէ լաց իս էլի.
Բա՛րով տեսայ, ի՛մ սիրեկան.
Վարդի նըման բաց իս էլի
խարիրով,
խարիրով.
Բա՛րով տեսայ, ի՛մ սիրեկան:

Ա՛րի, մէ դարդըս իմա՛ցի,
Էշխէմէգ հա՛ման իմ լացի.
Օրըս էսպէս անց է կացի
դարիրով,
դարիրով.
Բա՛րով տեսայ, ի՛մ սիրեկան:

Ցիփ կու հագնիս ալ ու ատլաս,
Տեսնողին կու չինիս մաս-մաս.
Դօշիդ պիտի լալ ու ալմաս
շարիրով,
շարիրով.
Բա՛րով տեսայ ի՛մ սիրեկան:

Ցիս քիզ գովիմ խաղի մէջըն.
Ճամամնիրըդ թաղի մէջըն.
Ման իս գալի բաղի մէջըն
եարիրով,
եարիրով.
Բա՛րով տեսայ, ի՛մ սիրեկան:

Սայաթ-Նովէն փո՞ւնց դընջանայ.
Աչքիրըդ օսկէ փընջան ա.
Դուշմընի լիզուն մընջանայ
չարիրով,
չարիրով.
Բա՛րով ախպայ, ի՛մ սիրեկան:

(էջ 73)

* * *

Աշխարհումըս ա՛խ չիմ քաշի, քանի փուր ջա՜ն իս ինձ ամա.
Անմահական ջըրով լիքըն օսկէ փընջան իս ինձ ամա.
Նըստիմ՝ վըրէս շըվաք անիս՝ պայքար վըրան իս ինձ ամա.
Սուչս իմա՛ցի, է՞նէնց ասանէ՝ սուլթան ու խան իս ինձ ամա:

Մէջքըդ՝ սալբու-չինարի պէս, ռանգըդ փըռանգի ատլաս է,
Լիզուդ՝ շաքար, պըռօշըդ՝ ղանդ, ակռէքըդ մարգըրիտ, ալմաս է.
Օսկու մէջըն մինա արած, աչքիրըդ ակնակապ թաս է.
Պատուական անգին ջավահիր, լալ-բադէշխան իս ինձ ամա:

Յիս էս դարդին փո՞ւնց դիմանամ, մահա՞մ սիրտըս ունիմ քարած.
Արտա՛սունքս արուն շինեցիր, խիլքըն գըլխէս ունիմ տարած,
Նուր բաղ իս՝ նուր բաղչի մէջըն՝ բոլորքըդ վարդով չափարած.
Վըրէդ շուռ գամ բըլբուլի պէս՝ սիրով սէյրան իս ինձ ամա:

Քու էշխըն ինձի մաստ արաւ. յիս գարթուն իմ, սիրտս է քընած.
Աշխարհս աշխարհով կըշտացաւ, իմ սիրտըս քիզնից սով մընաց.
Եա՛ր, քիզ ինչո՞վ թարիփ անիմ՝ աշխարհումըս բա՜ն չըմընաց.
Կրա՛կէ ծովէմէն դուս էկած ռաշ ու ջէյրան իս ինձ ամա:

Ի՞նչ կու՛յի՝ մէկ հիդըս խօսիս, թէկուր Սայաթ-Նովու եար իս.
Շուդքըդ աշխարհըս բըռնիլ է՝ արեգակի դէմըն փար իս.
Հուտով հիլ, միխակ, դարիչին, վարդ, մանուշակ, սուսանբար իս,
Կարմըրագուն՝ դաշտի ծաղիկ, հովտայ շուշան իս ինձ ամա:

(էջ 55)

* * *

Բլբուլի հիդ լաց իս էլի,
Վարդի նըման բաց իս էլի,
Վարդաջըրով թաց իս էլի,
Թա՛ց իս էլի:

Զըկայ քիզի նըման,
Զըկայ քիզի նըման.
Քիզ նըման,
Քիզ նըման,
Դո՛ւն իս, աննըմա՛ն:

Սիրունութինդ էլաւ աքքաք,
Մազիր ունիս սիմ ու շարքաք,
Քի սազ գուքայ ղուշլու զարքաք,
Ղո՛ւշլու զարքաք:

Զըկայ քիզի նըման,
Զըկայ քիզի նըման.
Քիզ նըման,
Քիզ նըման,
Դո՛ւն իս, աննըմա՛ն:

Էրեսըդ է շամչ ու ղամար,
Ջանըս ղուռ գուքայ քիզ ամար,
Մէջքիդ ունիս օսկէ քամար,
Օ՛սկէ քամար:

Զըկայ քիզի նըման,
Զըկայ քիզի նըման.
Քիզ նըման,
Քիզ նըման,
Դո՛ւն իս, աննըմա՛ն:

Հավիդ գարըն ալ իս արի,
Բըլբուլի հիդ լալ իս արի,
Բարդ էրեսիդ խաղ իս արի,
Խա՛ղ իս արի:

Չըկայ քիզի նըման,
Չըկայ քիզի նըման.
Քիզ նըման,
Քիզ նըման,
Դո՛ւն իս, աննըմա՜ն:

Դարդըս ասիմ՝ գուլան սարիր,
Էս ի՞նչ բան էր, վուր դուն արիր,
Սայաթ-Նովուն ջունուն արիր.
Ջո՛ւնուն արիր:

Չըկայ քիզի նըման,
Չըկայ քիզի նըման.
Քիզ նըման,
Քիզ նըման,
Դո՛ւն իս, աննըմա՜ն:

(էջ 62-63)

* * *

Մէ խօսք ունիմ իլթիմազով, ա՜նգաճ արա, ո՛վ աչքի լուս,
Սըրտումըս ինթիզար ունիմ, քու սիրըն բա՛րով, ա՛չքի լուս,
Աջաբ քիզ ի՞նչ գէթ իմ արի՝ կէնում իս խըռով, ա՛չքի լուս,
Աշխարհս աշխարհով կըշտացաւ, յիս քիզանից սով, ա՛չքի լուս:

Մակամ օչով եար չէ սիրի՞, էս ի՞նչ արիր, էս ի՞նչ բան ա.
Էշխէմէգ ջունուն իմ էլի, ման իմ գալի եանա-եանա.
Էս դարդէն օչով չըքաշէ, վուր մէ դա՜նգին չի դիմանայ.
Սիրտըս լուրի պէս խորվիցիր էշխիդ կըրակով, ա՛չքի լուս:

Դոստիրըս պուշման չինեցիր, նազիրուն ի՞նչպէս դոստ անիմ.
Անցկացած օրըն չիմ տեսնում, քանի գ'ուզէ վուր ղաստ անիմ.
Ա՛ստուծ վըկայ, խիստ դըժար է, գըլուխըս ի՞նչպէս դուս տանիմ.
Ցիս մէ փուքըր նավի նըման, քու էշխըն է ծով. ա՛չքի լուս:

Գ'ուզիմ բերանըս բաց անիմ, գովքըդ ասիմ Թարիփի պէս.
Տաս տարի է ման իմ գալիս փադիշահի շարիփի պէս.
Օխտըն տարի էլ ման գուքամ՝ սազըն ձեռիս Ղարիբի պէս.
Բուլթա Շահսանամըս դուն իս, էլ չունիմ օչով, ա՛չքի լուս:

Թէգուզ հազար դարդ ունենամ, յիս սըրտումըս ա՛հ չիմ ասի.
Իմ հուքմի-հէքիմըն դուն իս, յիս էլ ուրիշ շա՛հ չիմ ասի.
Սայաթ-Նովէն ասայ՝ զա՛լում, յիս էն մահին մա՛հ չիմ ասի.
Հէնչաք ըլի՝ դո՛ւն վըրէս լաս, մազըդ շաղ տալով, ա՛չքի լուս:

(էջ 65)

* * *

Քանի վուր ջան իմ,
Եա՛ր, քի ղուրբան իմ.
Աբա ի՞նչ անիմ.
Արտասունք անիմ,
Շատ հոգուց հանիմ,
Եա՛ր, ղաղէդ տանիմ:
Ասիր՝ ջէյրան իմ.
Թուղ քի սէ՛յր անիմ,
Եա՛ր, մըտիկ անիմ:

Մո՛ւտ բաղչէն նազով,
Քիզ գովիմ սազով,
Եա՛ր, խըթիմազով:

Մազիրըդ՝ դաստա,
Պըռօշըդ՝ փըստա.

Հէյրանի վախտ է.
Ե՛կ նընդնինք չօլըն,
Վուր հասնինք փօլըն.
Ջէյրանի վախտ է:
Բըլբուլըն՝ վարդին,
Վարդըն՝ բաղաթին.
Սէյրանի վախտ է:

Մո՛նա բաղչէն նաղով,
Բիզ գոլլիմ սաղով,
Եա՛ր, խըթիմաղով:

(էջ 75)

* * *

Պատկիրքըդ՝ ղալամով քաշած, թահրըդ ռանգէռանգ իս անում.
Էրեսիդ խալըն ծածկում է՝ մազիրըդ խափանդ իս անում.
Բացվիլ իս կարմիր վարդի պէս, բըլբուլի հիդ հանգ իս անում.
Ակունքըդ՝ օսկումըն շարած, պըռօշըդ մահանդ իս անում:

Էրեսըդ նուր լուսնի նըման քանի կ'էհայ, կու թըլըրվի,
Դաստամազըդ նամ չի ուզի՝ ասանց հուսիլ կու օլըրվի,
Էնդու համա քու տեսողըն իր ճանփէմէն կու մոլըրվի.
Ցխի մըտնում իս մէջլիսումըն, շանգ, շուխի, շաբանգ իս անում:

Էրեսըդ տեսնելու գուքան քաղաք քաղքով, դիդ՝ դիդի պէս.
Միւնողըն քիզմէն կու առնէ անմահական դիդ՝ դիղի պէս.
Ցխի ախղէմէկ ժաժ իս գալի, շըխշըխկում իս ջիղջիղի պէս.
Ի՞նչ կ'օնիս սանթուր-քամանչէն՝ զուգըդ չօնգուր-չանգ իս արի:

Ծուցիդ մէջըն վարդ, մանուշակ, սընբուլ ու սուսան իս չինի.
Քու տէրըն բաղըն ի՞նչ կ'օնէ՝ քու հուտըն ռեհան իս չինի.
Քամին մէջըն անց է կէնում՝ մազիրըդ եղքան իս չինի.
Աշխարհքըն՝ ծով, դուն մէջըն՝ նաւ, ման իս գալի, լանգ իս անում:

Տանէմէզ մէկըն չին տալի, թէգուզ աշխարհըս քիզ գոլլին,

Նոխա՛վար, ծա՛ղիկ ծովային, մանո՛ւշակ բաց արած հովին.
Բաս քու էշխին վո՞ւնց դիմանամ, ջուրըն տա՛նէ Սայաթ-Նովին.
Թ՚է տեսնողըդ մէկ էլ տեսաւ՝ դիվանա, դաբանդ իս անում:

(էջ 72)

* * *

Ձէնըդ քաղցըր ունիս՝ լա՛մզով կու խօսիս,
Նա՛ պահէ քիզ, ումնոր ծառայ իս, գօ՛զալ,
Մէջքըդ ջէյրանի է, ռանգըդ՝ շաքարի,
Փըռանգըստանու էկած խա՛րա իս, գօզալ:

Ղո՛ւմաշ ասիմ՝ շուրէղէն է, կու մաշվի,
Սա՛լբի ասիմ՝ ախըր մին օր կու տաշվի,
Ջէ՛յրան ասիմ՝ շատ մարդ քիզիդ կու եաշվի.
Բաս վո՞ւնց թարիփ անիմ՝ մա՛րա իս, գօ՛զալ:

Թ՚է մանուշակ ասիմ՝ սարէմէն կ՚օսին.
Թ՚է ջավահիր ասիմ՝ քարէմէն կ՚օսին,
Թ՚էվուր լուսին ասիմ՝ տարէմէն կ՚օսին.
Արեգագի նըման փա՛րա իս, գօ՛զալ:

Գ՚ո՛ւզիմ, թէ համաշա դըռանըդ գամ ուխտ՝
Աչքիրըդ, կա՛րմիր վարդ, նուր բացարած տուղտ,
Լիզուդ գըրիչ ունիս, ձեռըդ՝ գուլգազ թուղթ.
Ծովէմէն դուս էկած զա՛րա իս, գօ՛զալ:

Սիրա սիրմըդ սըրտիս մէջըն ցանեցիր,
Նազ ու ղամզով, եա՛ր, իմ՝ հոգիս հանեցիր,
Էս քու Սայաթ-Նովուն դո՛ւն սըպանեցիր.
Գըլխիդ էկած ղադէն առայ յիս, գօ՛զալ:

(էջ 52)

* * *

«Ի՞նչ կ՚օնիմ հէքիմըն, ի՞նչ կ՚օնիմ ջարէն՝
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ,

Էրում է մըհլամըն, չէ լանում նարէն.
Քու տըվածըն ուրիշ գիղ է, ո՛ւրիշ գիղ.
ուրիշ գիղ, ա՛ման, ո՛ւրիշ գիղ»:

Ասաց թէ. «Հիսա՛ցի գըլխէմէս, գընա՛.
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.
Էդ քու ապարմունքըն քիզի չի՛ մընայ.
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.
ուրիշ տիղ, ա՛ման, ո՛ւրիշ տիղ»:

Ասի թէ. «Էշխէմէդ չիմ հանգչում տանըս,
Ջեռնիրըս թողացաւ՝ չէ շինում բանըս,
Էրվեցաւ ջիգարըս, մաշվեցաւ ջանըս.
Քու տըվածըն ուրիշ գիղ է, ո՛ւրիշ գիղ.
ուրիշ գիղ, ա՛ման, ո՛ւրիշ գիղ»:

Ասաց. «Իմ գիղէմէն քիզ չըկայ չարա,
Գընա՛, թէ խիլք ունիս՝ գըլխիդ ճա՛ր արա,
Թ'է չէ՝ անիկ կու տամ քիզ փարա-փարա.
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.
ուրիշ տիղ, ա՛ման, ո՛ւրիշ տիղ»:

«Ցիս բըլբուլ իմ, վարդըս մընաց խարումըն.
Կըրակ դըրիր սըրտիս խուցի նարումըն.
Վո՛ւնց գըրանքումըն կայ, վո՛ւնց դավթարումըն.
Քու տըվածըն ուրիշ գիղ է, ո՛ւրիշ գիղ.
ուրիշ գիղ, ա՛ման, ո՛ւրիշ գիղ»:

Ասաց թէ. «Բի պարար շինեցիր շահըդ
Կըտրեցիր ապաըդ, կըտրեցիր ահըդ.
Մի՛ վիթի արունըդ, մի՛ շանց տայ մահըդ.
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.
ուրիշ տիղ, ա՛ման, ո՛ւրիշ տիղ»:

Ասի թէ. «Մազիրըդ սիրմա իս անում,
Հէնց գիդիս՝ չի՞մ գիդի, եա՛ր, չի՞մ իմանում,

Սէրըդ ինձ մահ դառաւ, էլ չի՛մ դիմանում.
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ.
ուրիշ դիղ, ա՜ման, ո՛ւրիշ դիղ»:

«Թագաւուրի Թաքի լայիղ քարըն իմ,
Շիրինի պէս Փահրադի դիդարըն իմ,
Ցիս է՜ն գըլխէն Սայաթ-Նովու եարըն իմ.
Քու սսածըն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ.
ուրիշ տիղ, ա՜ման, ո՛ւրիշ տիղ»:

«Հիդըս խօ՛սի, մի՛ կէնայ խըռովի պէս.
Տալղա տըվիր պէմիս տարար ծովի պէս.
Կու միռնիմ, չիս տեսնի Սայաթ-Նովի պէս.
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ.
ուրիշ դիղ, ա՜ման, ո՛ւրիշ դիղ»:
(էջ 57-58)

էջ 401, տող 7-8: ...Բացված էր Սկյուտարի նշանավոր ճեմարանը ավելի բարձր ծրագրով - Սկյուտարի ճեմարանը, ուր սովորել է նաև Պետրոս Դուրյանը, բացվել է 1838 թ.:

էջ 401, տող 7-9 ն.: ...Եկավ հանգավ «Ազգային սահմանադրութիւն» հիսունական թվականներուն վերջը - արևմտահայերի կողմից Ազգային սահմանադրություն կամ Սահմանադրություն կոչված փաստաթուղթը իրականում նրանց կրոնահամայնքային կյանքը կարգավորող կանոնադրություն էր, որը Թուրք. կառավարության միջոցով մասամբ միայն կարողացավ կատարել իր այդ դերը: Հայոց պատրիարքարանն այն ընդունել է 1860 թ. մայիսի 24-ին, իսկ Թուրքական կառավարությունը վավերացրել է 1863 թ. մարտի 17-ին 150 հոդվածից թողնելով 99-ը: Սահմանադրությունը գործադրվել է մինչև 1896 թ. (արգելվել է սուլթան Համիդի հրամանով), հետո 1908-15 թթ.:

էջ 401, տող 4-6 ն.: ԺԹ դարու առաջին տարիներուն վենետիկցիք Պոլսի մեջ հրատարակած էին մեկ-երկու «Տարեգիրք» - ավելի ճիշտ՝ «Տարեգրութիւն», տարեթերթ գրական-բանասիրական, կրոնական, հրատ. 1799-1803 թթ. Վենետիկում Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ:

Էջ 401, տող 3-4 ն.: ... Իսկ 1812-1815՝ «Դիտակ Բյուզանդյան» անունով երկշաբաթաթերթ մը - շաբաթաթերթ, հետո՝ երկշաբաթաթերթ, հրատ. է 1812-16-ին Վենետիկում: Տպագրել է բանասիրական, կրոնական հոդվածներ, մշակութային, ռազմական, քաղաքական լուրեր, տարաբնույթ նյութեր:

Էջ 401, տող 1-2 ն.: ... «Լրո գիր» անունով շաբաթաթերթ մը 1832-ին, միայն տարի մը - «Լրո գիրը» («Լրոյ գիր Մեծի տէրութեանն Օսմանեան»), որն իրոք հայերեն առաջին պարբերականն էր Թուրքիայում, ընդհատումներով հրատարակվել է 1832-50 թթ.: 1840-49 թթ. վերանվանվել է «Յայտարար գիր լրոյ Մեծի տէրութեանն Օսմանեան», իսկ 1849-50 թթ.՝ «Լրագիր տէրութեանն Օսմանեան»:

Էջ 402, տող 1-2: 1839-1855 բողոքականները հրատարակած են «Շտեմարան» անունով կրոնական պարբերաթերթ մը... - լրիվ անունն է «Շտեմարան պիտանի գիտելյաց», հրատ. է 1839-42, 1844-46 և 1854 թթ. Զմյուռնիայում, ապա՝ Կ.Պոլսում: Պատկերազարդ կրոնական ամսագիր, ամերիկյան միսիոներների հրատարակություն: Բացի բողոքականության քարոզից տպագրել է գիտական և գեղարվեստական բազմազան նյութեր:

Էջ 402, տող 5-6: Պոլսի մեջ «Ազդարար Բյուզանդյան» և «Հայտարար գիր լրո» կարճատև թերթերը ... - «Ազդարար Բյուզանդյան» հասարակական, քաղաքական, առևտրական, բանասիրական շաբաթաթերթը հրատ. է 1840-41 թթ., խմբագիր-հրատարակիչ՝ Խ. Ոսկանյան: 4 համար լույս է տեսել հայերեն, հետո՝ հայատառ թուրքերեն:

«Հայտարար գիր լրո»՝ տե՛ս վերևը, «Լրո գիր» շաբաթաթերթի ծանոթագրությունը:

Էջ 402, տող 7-8: ... Իսկ Զմյուռնիայի մեջ «Արշալույս Արարատյան», որ տևած է մինչև 1886 թվականը... - հասարակական-քաղաքական, առևտրական և բանասիրական թերթ աշխարհաբար լեզվով: Հրատ. է 1840-87 թթ., խմբագիրներ՝ Ղ.Պալտազարյան, Հ. Սվաճյան և ուրիշներ:

Էջ 402, տող 10-12: «Սուրհանդակ Կոստանդնուպոլսո», որ շուտով կկոչվի «Հայաստան» և կտևե մինչև 1852 -ավելի ճիշտ՝ «Սուրհանդակ Բյուզանդյան», հրատ. է 1849-50 թթ., շարունակությունն էր «Լրո գիր» և «Հայտարար գիր լրո» թերթերի:

«Հայաստան» քաղաքական, ազգային, բանասիրական և առև-

տրական շաբաթաթերթը (կապ չունի վերևինի հետ) հրատ. է Կ.Պոլսում 1846-52 թթ.: Խմբագիրներ՝ Հովհ. Զամուռճյան և Մկրտիչ Ագաթոն:

էջ 402, տող 13-14: «Մասիս»՝ Կ.Ութուճյանի խմբագրությամբ, որ 1852-են կսեն մինչև 1888 թվականը -քաղաքական, տնտեսական, գրական և բանասիրական օրաթերթ, ապա շաբաթաթերթ, հետո՝ ամսաթերթ, հրատ. է 1852- 1908 թթ.: Կ. Ութուճյանից հետո պարբերականը խմբագրել են Ա. Արփիարյանը, Գ. Զոհրապը, Հ. Ասատուրը, Մ. Շամտանճյանը, Տ. Արփիարյանը և Ե. Արմենը: Արևմտահայ ամենաազդեցիկ պարբերականներից էր և զգալի դեր է խաղացել արևմտահայության հասարակական-քաղաքական և գրական կյանքում:

էջ 406, տող 6-8 ն.: 1820 թվին նորեն Մխիթարյանները թարգմանած են աշխարհիկ լեզվով «Ռոպինզոնը», «Եզովբոսի առակները» - առաջին գիրքը լույս է տեսել 1817 թ., թարգմանիչն է Մինաս Բժշկյանը: Գրքի հեղինակը Դանիել Դեֆոն չէ, այլ գերմանացի Յ. Կամպեն, որի «Նոր Ռոբինզոն» գիրքը (1799), գրված Դեֆոյի հետևողությամբ, Բժշկյանը թարգմանել է ֆրանսերեն հրատարակությունից (Հայ գիրքը 1801-1850 թթ., Ե., 1967, էջ 71):

«Եզոպոսի առակները» Մ. Բժշկյանի թարգմանությամբ լույս է տեսել 1818 թ.:

էջ 407, տող 1-3: ... Որ հրատարակեցին Զմյուռնիայի մեջ քառասնական թվականներուն վերջը Պոլսի բարբառով - Աստվածաշնչի այս հրատարակությունը 4 հատորով կատարվել է 1847-50 թթ.: Թարգմանել է Անդրեաս Փափազյանը հայագետ Իլիաս Րիկզ ամերիկացի միսիոների օգնությամբ (Հայ գիրքը 1801-1850 թթ., էջ 352):

էջ 407, տող 5-7: ... Հովհաննես Տերոյենց թարգմանած է Ծոյայի «Քաղաքավարությունը» և «Խորհրդածությունք Բասկալա» - հրապարակախոս, բանասեր, թարգմանիչ Հովհ. Տերոյենցի (Զամուռճյան, 1801-1888) թարգմանած «Քաղաքավարություն կամ ուսումն քաղաքական կրթության» գիրքը (հեղինակ Մելխիոր Ջոյա) լույս է տեսել 1842-43 թթ. (4 հատոր), իսկ երկրորդ գիրքը, որն ամփոփում է ֆրանսիացի ֆիզիկոս և փիլիսոփա Բլեզ Պասկալի (1623-1662) փիլիսոփայական խորհրդածությունները, լույս է տեսել 1844 թ.:

էջ 407, տող 7-9: «Մետաքսաբանություն» մը, «Մանկա-

տածություն» մը և «Նապոլեոնի կենսագրությունը» - «Մետաք-սաբանություն կամ ավելի մետաքս շինելու արհեստ» գիրքը (հեղինակ՝ Հակոբ Կոճիկյան) լույս է տեսել 1846 թ.:

«Մանկատածություն» բժշկափիլիսոփայական գրքի հեղինակը բժիշկ, հասարակական և գրական գործիչ Սերվիչենն է (Սերովբե Վիչենյան, 1815-1897): Գիրքը լույս է տեսել 1844-ին, ամբողջական վերնագիրն է «Մանկատածություն որ է բնական, բարոյական և իմացական հրահանգ խնամատարության մանկանց»:

«Նապոլեոնի կենսագրությունը» (ճիշտ վերնագիրն է «Կարճառոտ պատկեր Նապոլեոն Պոնապարթեին վարուցը») թարգմանել է Հովհ. Հիսարյանը: Գրքի հեղինակը ըստ երևույթին անգլիացի հայտնի գրող Վալտեր Սքոտն է: Թարգմանությունը լույս է տեսել 1847 թ.:

Էջ 409, տող 3-4 ն.: Հունական ապստամբության օրերեն հայերուն նախապատվություն կտրվեր ...-Հունական ազգային-ազատագրական հեղափոխությունը տեղի է ունեցել 1821–28 թթ.: 1830-ին Հունաստանը հռչակվել է անկախ պետություն:

Էջ 410, տող 2-3: Հիսունական թիվերուն Միդհատ փաշայի ազատական գաղափարներով տարված ... - խոսքը թուրք հայտնի քաղաքական– պետական գործիչ Ահմեդ Միդհատ փաշայի (1822-1883) մասին է, որը գլխավորել է թուրքական սահմանադրական շարժումը և հեղինակն է 1876-ին ընդունված թուրքական I սահմանադրության (մասնակցությամբ Գր. Օտյանի): Սուլթան Աբդուլ Համիդը, վախենալով Միդհատ փաշայի ռեֆորմիստական ձգտումներից, նրան 2 անգամ աքսորել է, երկրորդ անգամ՝ Արաբիա, ուր էլ նա սպանվել է սուլթանի մարդասպանների ձեռքով:

Էջ 410, տող 7: ... Սերվիչեն, Աղաթոն, Օտյան - Սերվիչենը, Մկրտիչ Աղաթոնը (1818-1890) և Գրիգոր Օտյանը (1834-1887) ակտիվորեն մասնակցում էին արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքին, հիմնականում նրանց ջանքերով է ստեղծվել Ազգային սահմանադրությունը:

Էջ 411, տող 15-16 ն.: ... «Քառակուսի անիվներով», ինչպես շատ ճիշտ կերպով որակած է ստորագրող փաշան - Թուրքիայի մեծ վեզիր Ալի փաշան արհամարհանքով սահմանադրությունը «տեղից չշարժվող քառակուսի անիվ» էր անվանում (Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Ե., 1974, էջ 338):

Էջ 413, տող 6: ... Բուն հայկական հողի վրա ապարան մը

բանալու առաջին փորձը ըրեր է Խրիմյանը 1857-1863 թիվերու ընթացքին ... - Մկրտիչ Խրիմյանը 1855-56 թթ. Կ.Պոլսում հրատարակել է «Արծվի Վասպուրականի» շաբաթաթերթը, որը 1858-ին Վարագա վանքում տպարան ստեղծելուց հետո, տեղափոխել է այնտեղ, ուր շաբաթաթերթը հրատարակվել է մինչև 1864 թ.:

Էջ 414, տող 2-4: ... Զմյուռնիայի մեջ «Արշալույս Արարատյան», հիմնադիրը՝ Ղուկաս Պալթազարյան, և «Արևելյան մամուլ», խմբագիրը՝ Մաթեոս Մամուրյան - «Արշալույս Արարատյան»՝ տե՛ս 660 էջի ծանոթագրությունը:

«Արևելյան մամուլ» ազգային, գրական և քաղաքական պարբերականը լույս է տեսել 1871-1909 և 1919-22 թթ., առաջին խմբագիրն էր գրող, թարգմանիչ, հաս. գործիչ Մատթեոս Մամուրյանը (1830-1901), իսկ հետո՝ նրա որդին՝ Հ.Մամուրյանը:

Էջ 414, տող 4-5: Պոլսի մեջ «Մասիս» օրաթերթը Կարապետ Ութուճյանի խմբագրությամբ, վերջն ալ «Արևելք» օրաթերթը - «Մասիս»՝ տես 661 էջի ծանոթագրությունը:

«Արևելք» օրաթերթը լույս է տեսել Կ.Պոլսում 1884-1915 թթ.: 1913-ից կոչվել է «Լուսին», «Պայքար», «Լրաբեր» և «Ջեզոք»: Պարբերականը խմբագրել են Բ. Քեչյանը, Ա. Արփիարյանը, Լ. Բաշալյանը, Տ. Արփիարյանը, Ե. Սրմաքեշխանլյանը (Երուխան), Ե. Օտյանը: «Արևելքը» չափավոր դեմոկրատական թերթ էր և մեծ դեր է կատարել արևմտահայ հաս.-քաղաքական և գրական կյանքում, նրա շուրջն են համախմբվել արևմտահայ իրապաշտ գրողները:

Էջ 414, տող 6-8: ... Այվազյանի «Մամուլը», Սվաճյանի «Մեղու» և Պարոնյանի զանազան անուններով ելեցող թերթերը, վերջինը՝ «Տիծաղ» -«Մամուլ» հաս. - քաղաքական եռօրյա երգիծական հանդեսը (1869-70-ին շաբաթաթերթ) լույս է տեսել Կ.Պոլսում 1869-83 թթ. Գևորգ Այվազյանի խմբագրությամբ: Սուր ծայրի է ենթարկել ազգային պահպանողականներին, պայքարել է կաթոլիկ եկեղեցու դեմ:

«Մեղու» բանասիրական, գրականագիտական, տնտեսական և երգիծական կիսամսյա հանդեսը լույս է տեսել Կ. Պոլսում 1856-65 և 1870-74 թթ.: 1872-74 թթ. հանդեսը խմբագրել է Հ. Պարոնյանը: «Մեղուն» ժամանակի ամենաառաջադիմական պարբերականն էր, ուներ ընդգծված դեմոկրատական ուղղվածություն:

Հ. Պարոնյանը 1876-78 թթ. խմբագրել-հրատարակել է «Թատ-

րան», 1884-88-ին՝ «Խիկար» երգիծական հանդեսները, իսկ «Ծիծաղը» նա հրատարակել է 1883 թ., և, ինչպես երևում է, այն նրա վերջին երգիծական հանդեսը չէ:

էջ 414, տող 8-9: Այլև պատանիներու համար՝ «Բուրաստան մանկանց» - կիսամսյա պատկերազարդ մանկապատանեկան հանդես, լույս է տեսել 1882-93 թթ. Կ.Պոլսում, 1889-ից կոչվել է «Ծաղիկ մանկանց»: Մանկական, գրական- գեղարվեստական գործերին զուգահեռ տպագրել է արվեստին, առողջապահությանը, բժշկությանը նվիրված գիտահանրամատչելի հոդվածներ, գրախոսություններ, նյութեր նշանավոր մարդկանց կյանքից, մաթեմատիկական խնդիրներ: Հանդեսի հրատարակմանն աջակցել են Մ. Մամուրյանը, Ռ. Պերպերյանը, Ա. Չոպանյանը և ուրիշ հայտնի գործիչներ:

էջ 415, տող 1-2: ... Որ կկոչվի «Միացյալ ընկերություն»... - ավելի ճիշտ՝ «Միացյալ ընկերությունք հայոց», ստեղծվել է 1880-ին և Արփ. Արփիարյանի ու Մ. Ջերազի ղեկավարությամբ գործել մինչև 1892 թ. (գործունեությունը դադարեցվել է սուլթան Աբդուլ Համիդի հրամանով): 1908 թ. ընկերությունը վերսկսել է իր գործունեությունը, որը շարունակվել է մինչև 1915 թ.:

էջ 415, տող 16-17: ... Վարդանանց տոնակատարությունը... - 451 թ. մայիսի 26-ին Ավարայրի ճակատամարտում նահատակված ս. Վարդան Մամիկոնյանի և ս. Վարդանանց 1036 վկաների հիշատակի տոնը, որը Հայ եկեղեցին տոնում է Բուն Բարեկենդանին նախորդող հինգշաբթի օրը:

էջ 415, տող 1-2 ն.: Սրապիոն Հեքիմյանի և Մկրտիչ Պեշիկթաշլյանի ջանքերով Խասգյոյի մեջ կբացվի առաջին թատրոնը 1858-ին ... - տե՛ս 615 էջի ծանոթագրությունը:

էջ 416, տող 4-6: ... Որոնք Վարդովյանի ու Մաղաքյանի ղեկավարության տակ շուտով հռչակ կստանան - Հակոբ Վարդովյանը (1835-1898) հայտնի թատերական գործիչ էր, հայտնի նաև նրանով, որ հիմնադրել է թուրք ազգային պրոֆեսիոնալ թատրոնը, ինչի համար էլ նրա լուսանկարը այսօր էլ զարդարում է Ստամբուլի պետական թատրոնի ճեմասրահը (Հ. Հովհաննիսյան, Հայ թատրոնի պատմություն, XIX դ. էջ 271): 1868-ին նա հիմնել է իր թատրոնը՝ «Թիատրո օսմանիե» անունով, որը մշտական մրցակցության մեջ էր գերասան, դերասույց և բեմադրիչ Պետրոս Մաղաքյանի (1826-1891) «Արևելյան թատրոնի» հետ: Ի տարբերություն Վարդովյանի՝ Մաղաք-

յանը հայտարարել էր, թե իր 1869-ից ղեկավարած «Արևելյան Թատրոնը» տաճկերեն ներկայացումներ չպիտի տա, այլ միայն հայերեն (նույնը, էջ 255-56):

էջ 416, տող 15-16: ... **Էքշյան, Ֆասուլյաճյան, Մնակյան** ...- Ստեփան Էքշյանը եղել է պոլսահայ դերասանական I սերնդի պարագլուխը: Նրա դերասանական տաղանդի վերաբերյալ ժամանակակիցների և հայ թատրոնի պատմաբանների կարծիքները հակասական են (Հ.Հովհաննիսյան, վերոհիշյալ գիրքը, էջ 100-105):

Դերասան, դերասանապետ Թովմաս Ֆասուլյաճյանը (1843-1901), որի բեմական և թատերական գործունեությունը տևել է 40 տարի, սիրելի դեմք է եղել Վահրամ Փափազյանի համար (նույնը, էջ 305):

Իսկ Մարտիրոս Մնակյանի (1837-1920) խաղը շատ է հավանել Րաֆֆին (նույնը, էջ 347): Նա մելոդրամայի բացառիկ վարպետ էր ու նաև տաղանդավոր երգիչ:

Այս և թվարկված մյուս հայտնի ու համեմատաբար քիչ հայտնի անունների կյանքի ու գործունեության վերաբերյալ հետաքրքիր մանրամասներ կան Շարասանի (Սարգիս Թյուլթյունճյան) «Թրքահայ բեմն ու իր գործիչները» աշխատության մեջ (Կ.Պոլիս, 1914), որը կարևոր սկզբնաղբյուր է հայ թատրոնի պատմաբանների համար:

էջ 417, տող 7-8 ն.: **Այս խաղերեն մանավանդ «Լեբլեբիճին» մեծ հռչակ ստացավ և սիրվեցավ** - այս գեղեցիկ օպերետի հիման վրա Արման Մանարյանը 1967 թ. «Հայֆիլմ» կինոստուդիայում նկարահանել է «Կարինե» երաժշտական կինոնկարը:

էջ 419, տող 13: ... **«Մասյաց աղավնի»** - հրատարակվել է Փարիզում 1855-58 և Թեոդոսիայում 1860-65 թթ.: Ազգային-պահպանողական ուղղություն ուներ և պայքար է մղել «Հյուսիսափայլի» դեմ:

էջ 421, տող 4: ...**«Մասիս»-ի խմբագիրը** - Կարապետ Ութուճյանը: «Թափառական հրեան» նրա թարգմանությամբ լույս է տեսել 2 անգամ 1867-68 և 1884-85 թթ. (6 հատորով):

էջ 421, տող 7-8: ...**«Գաղտնիք հավատաքննության» և Սելվիո Փելլիքքիոյի «Բանտք իմ»-ը** - առաջին գիրքը, որի հեղինակն է Մ. Ֆերյալը, և որը ներկայացնում է միջնադարյան իսպանական ինկվիզիցիայի (հավատաքննության) սարսափները, ընթերցանության

սիրված նյութ է եղել և 1860-70-ականներին ունեցել է 2 հրատարակություն՝ 1864-66-ին (2 հատորով) և 1873-ին (2 հատորը միասին): Երրորդ անգամ, նոր և ամբողջական թարգմանությամբ, լույս է տեսել դարձյալ Կ.Պոլսում (թարգմանիչ՝ Ժ. Շիրակացի): Պետք է նշել, որ այս գիրքը 1854-55-ին 2 հատորով հրատ. է նաև Թիֆլիսում, թարգմանիչներ՝ Հակոբ Կարենյան և Մկ. Պատկանյան:

Սիլվիո Փելլիքոյի (Սիլվիո Պելլիկո, «Բազմավեպը» գրում է՝ Բելլիքո Սիլվիո (1875, հ. ԼԳ, թ. 7-9, էջ 279-81), Թեոդիկը (Ամենուն տարեցույցը, 1928, էջ 209)՝ Բելլիգո, 1789-1854)՝ իտալացի հեղափոխական, կարբոնարների շարժման մասնակից, որը ձերբակալվեց, երկար տարիներ անցկացրեց բանտում, ինչի արդյունքը եղավ «Բանտք իմ» ինքնակենսագրական վեպը (1832): Հայերեն լույս է տեսել 2 անգամ՝ 1861 և 1867 թթ.:

էջ 421, տող 9-10: ... Զմյուռնիայի «Ծաղիկ» թերթին (1861-1867) խմբագիրը՝ Գրիգոր Չիլինկիրյան... - «Ծաղիկ» գրական, հաս.-քաղաքական տասնօրյա, ապա կիսամսյա հանդեսը, որի խմբագրման աշխատանքներին մասնակցում էին նաև Ա. Հայկունին և Մ. Մամուրյանը, ուներ առաջադիմական- դեմոկրատական ուղղություն և սատարել է աշխարհաբարի և նոր գրականության զարգացմանը: «Թշվառները» Չիլինկիրյանի թարգմանությամբ լույս է տեսել 1868-70 թթ. (10 հատորով) և 1885-ին (2 գրքով), «Մանոն Լեսկոն»՝ 1872-ին, «Ռաֆայելը»՝ 1867-ին, իսկ «Դարուս մեկ զավակին խոստովանանքը»՝ 1873-ին:

էջ 421, տող 14-15: ... «Արևելյան մամուլի» խմբագիրը - Մատթեոս Մամուրյանը: «Գաղտնիք Փարիզի» վեպը նրա թարգմանությամբ լույս է տեսել 1868-70 թթ. (8 հատորով), «Երեք հրացանակիրք» վեպը՝ 1871-72-ին (3 հատորով). «Քսան տարի ետք» վեպը՝ 1872-74-ին (4 հատորով), «Աշխարհի շրջանն ութսուն օրվան մեջ» վեպը՝ 1875-ին, «Խորհրդավոր կղզին»՝ 1877-78-ին (3 հատորով), «Վերթեր»-ը («Երիտասարդ Վերթերի տառապանքները»)՝ 1868-ին:

էջ 421, տող 16 ն.: ... Վալտեր Սքոտի «Իվանհոե» - այսպես տառադարձվել է «Այվենհո» հայտնի վեպի վերնագիրը: Հայերեն առաջին հրատ.՝ 1872-ին:

էջ 421, տող 13-14 ն.:... Հյուգոյի «Փարիզի Նոթր-Դամ»-ը ութսունական թվերուն - «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպը Նուպարյանը թարգմանել է 70- ական թթ.-ի սկզբին (1871-72):

*էջ 421, տող 12 ն.: **...Պուալոյի «Գրակալը» և ուրիշներ** - ըստ երևույթին խոսքը Նիկոլա Բուալոյի «Մարդուս երգիծաբանությունը» սատիրայի ութերորդ գլխի մասին է, որը Նուպարյանի թարգմանությամբ լույս է տեսել «Արևելյան մամուլի» 1871 թ. 4-5-րդ համարներում:*

*էջ 421, տող 10-11 ն.: **... Ստեփան Ոսկան, Գրիգոր Մսերյան, Կոստանդյան, Հարություն Տետեյան...** - Ստ. Ոսկանը. օրինակ, թարգմանել է Է. Սյուի «Թափառական հրեան» (1854, 2 հատոր, անավարտ) և Աբբա Պրևոյի «Մանոն Լեսկոն» (1859). Գ. Մսերյանը՝ Ժորժ Սանդի «Ֆլավիի» վիպակը (1875) և Բոկաչչոյի «Դեկամերոնը» (1879): Հար. Տետեյանը ևս կատարել է բավականին թվով թարգմանություններ, ինչպես, օրինակ, Մոլիերի «Ագահն», «Ակամա բժիշկ» և «Սերը բժիշկ է» կատակերգությունները: Իսկ պատմաբան, փիլիսոփա, բնագետ, հանրային գործիչ Գալուստ Կոստանդյանն առավելապես հայտնի է իր «Մեթոդին վրա» փիլիսոփայական արժեքավոր աշխատությամբ (1878): Մյուսների հետ Կոստանդյանի անունը նշելու պատճառը թերևս այն է, որ նա «Թանգարան հասարակաց» ընդհանուր խորագրով հրատարակել է բնագիտական տարբեր հարցերի նվիրված 16 գրքույկներ: Գեղարվեստական գործերի նրա կատարած թարգմանությունների մասին որևէ աղբյուրում ոչինչ գտնել չհաջողվեց:*

*էջ 421, տող 6-7 ն.: **... Ուր Տետեյան եղբայրներու տպարանը մեծ դեր է խաղացած...** - Տետեյան եղբայրների կողմից (Հարություն, Արամ Կարապետ, Հայկ Հակոբ, Ստեփան, Սարգիս) 1853-ին հիմնված այս տպարանն իր գործունեության 40 տարիների ընթացքում հրատարակել է ավելի քան 208 անուն գիրք, հիմնականում թարգմանություններ:*

*էջ 421, տող 3 ն.: **...«Մեթեոր»** - «Մետեորա» գիտական, հասարակական, գրական կիսամսյա հանդեսը հրատ. է 1880-81 թթ.: Խմբագիրն էր Գ. Մսերյանը: Հանդեսը նպաստել է արևմտահայ լուսավորական-դեմոկրատական շարժմանը, պայքարել է կաթոլիկ եկեղեցու դեմ:*

*էջ 422, տող 3: **...Այվազովսկիի թարգմանած «Քռիլովի առակները» ռուսերենե** - խոսքը Գաբրիել Այվազովսկու թարգմանության մասին է, որն առաջին անգամ հրատ. է 1866-ին Թեոդոսիայում, հետո՝ 1870-ին Կ.Պոլսում և 1896-ին Վաղարշապատում:*

էջ 424, տող 5-6: ...Ինչպես Ռուսինյանի և Մինաս Չերազի մտցնել ուզած բռնազբոսիկ նորությունները... - Ծանոթը նկատի ունի արևմտահայ բանաստեղծ, հրապարակախոս, հաս. գործիչ Նահապետ Ռուսինյանի (1819-1876) և բանաստեղծ, մշակութային, հաս. գործիչ Մինաս Չերազի (1852-1929) առաջարկները արևմտահայերենը բարեփոխելու վերաբերյալ: Առաջինը իր «Ուղղախոսություն արդի հայ լեզվի» (Կ.Պոլիս, 1853) և «Տարեցույց» (1855) աշխատություններում առաջարկում էր մի շարք փոփոխություններ ձևաբանության, ուղղագրության և ամսանունների անվանումների մեջ, իսկ Չերազն իր «Գրական փորձեր» (Կ.Պոլիս, 1874) և «Ազգային դաստիարակություն» (1876) գրվածքներում, կրկնելով Ն. Ռուսինյանին, առաջարկում էր նույն բնույթի փոփոխություններ: Երկու փորձերն էլ խիստ չկշռադատված էին ու բռնազբոսիկ և երկար կյանք չունեցան (տե՛ս Գ. Ստեփանյան, Պայքարը արևմտահայերի մոտ հանուն աշխարհաբարի, Ե., 1948, էջ 152-162,167-172: Հայ նոր գրականության պատմություն, հ. 3, Ե., 1964, էջ 461-462):

Պարոնյանն իր «Ազգային ջոջեր»-ում ծաղրել է Ռուսինյանի «լեզվաշինարարությունը»:

էջ 425, տող 9-10: ... Ցելեկյան, Փափազյան, Այվազյան, Միզպուրյան... - Ծանոթը նկատի ունի բանաստեղծ, մանկավարժ, հաս. գործիչ Սիմոն Ցելեկյանին (1831-1904), կրթական, մշակութային, գրական, հաս. գործիչ Ստեփան Փափազյանին (1839-1888), բանասեր, բանաստեղծ, մանկավարժ, հանրային գործիչ Աբրահամ Այվազյանին (1846-1909) և բանաստեղծ, մանկավարժ, կրթական գործիչ Մկրտիչ Միզպուրյանին (1834-1914):

էջ 426, տող 4-5: ... Ի՞նչ փույթ, թե հետևողությամբ օտար բանաստեղծի մը - Ծանոթը նկատի ունի այն, որ Պեշիկթաշլյանը իր «Հայ քաջորդին» բանաստեղծությունը գրել է Վիկտոր Հյուգոյի «Մանուկը» բանաստեղծության հետևողությամբ:

էջ 426, տող 10: Թերզյան բանաստեղծ մըն է - Թերզյանը գրել է նաև բավականին թվով թատերական երկեր (մի քանիսը Ծանոթը մի քանի էջ հետո նշում է)՝ «Հովսեփ Գեղեցիկ», «Մովսես», «Անառակ որդին», «Ադամ և Եվա», «Հռիփսիմե կույս նահատակ», «Սանդուխտ»: Վերջինը խաղացվել ու ծափահարվել է մինչև 1870-ական թթ. վերջը և բեմ է բարձրացել նույնիսկ 1909 թ. (Վ. Փափազյան, Հետադարձ հայացք, Ե., 1956, էջ 327):

էջ 426, տող 8 ն.: ... Իր դասընկերը՝ Մկրտիչ Աճեմյան... - բանաստեղծական 3 ժողովածուների հեղինակ է՝ «Լույս և ստվերք» (1887), «Գարնան հովեր» (1892) և «Թրթռուն հանգեր» (1908): 1870-80-ական թթ. ռեալիզմի համար ծավալված պայքարի առաջամարտիկներից էր արևմտահայ իրականության մեջ:

էջ 428, տող 2: **Երբ 1857 թվին Օրթաքյոյի մեջ հայ թատրոնի հիմը կդնեին...** - դարձյալ նկատի ունի Սրապիոն Հեքիմյանին և Մկրտիչ Պեշիկթաշլյանին (տե՛ս էջ 615): Մ. Պեշիկթաշլյանը 1858-ին Միջագյուղում (Օրթագյուղ) հիմնել է «Միջագյուղի թատերասիրաց ընկերությունը», իսկ Մ. Հեքիմյանը՝ «Հայկական թատերական ընկերությունը», որը 1861-ին վերանվանվել է «Արևելյան թատրոն» և գոյատևել մինչև 1862 թ.:

էջ 429, տող 17: **Թարգմանած է «Մահ Կեսարու», «Սավուղ» և «Բրուտոս»** - առաջինի հեղինակը Վոլտերն է (1684-1778), մյուս երկուսինը՝ իտալացի բանաստեղծ և թատերագիր Վիտորիո Ալֆիերին (1749-1803):

էջ 429, տող 3 ն.: **Գրած է թիվով ինը հատ ...** - վերջին տվյալներով Դուրյանի մեզ հասած դրամաները յոթն են՝ «Վարդ և Շուշան», «Սև հողեր», «Արտաշես աշխարհակալ», «Անկումն Արշակունի հարստության», «Ասպատակությունք պարսկաց ի Հայս», «Թատրոն կամ թշվառներ» և «Տարագիր ի Սիպերիա»: Այս յոթից բացի պահպանվել են 2 գործողություն կամ մաս «Փիննա» և «Ասուդ կամ լեգվահատն» վերնագրերով, որոնք, ինչպես ցույց է տվել Ա. Շարուրյանը, մտնում են «Տիգրան Բ» ողբերգաշարի մեջ (տե՛ս Ա. Շարուրյան, **Պ.Դուրյանի «Տիգրան Բ» ողբերգաշարը**, «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, թ. 1, էջ 175-181): Շանթի նշած «Կործանումն Հռոմա», «Շուշանիկ», ինչպես նաև այլ աղբյուրներում նշվող «Շահատակությունք հայոց» ողբերգությունները, ըստ երևույթին, չեն գրվել, ինչպես որ չի ամբողջացվել «Տիգրան Բ»-ն (տե՛ս Ա. Ջոպանյան, Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, Ե., 1967, էջ 100: Գ. Ստեփանյան, **Ուրվագիծ հայ թատրոնի պատմության**, հ. 1, Ե., 1962, էջ 402: **Հայ նոր գրականության պատմություն**, հ. 2, Ե., 1962, էջ 361-369):

էջ 430, տող 5-6: **Եվ շատ հետաքրքիր է իր փորձը ժամանակակից կյանքեն իր նյութն առնելու** - խոսքը Դուրյանի «Թատրոն կամ թշվառներ» դրամայի մասին է:

Էջ 430, տող 8-9 : ...Որոնք դժբաղդաբար մեջտեղ չկան - Ս. Թղլյանը հեղինակ է բազմաթիվ պիեսների, որոնք չեն տպագրվել, բայց մի քանիսը բեմադրվել են՝ «Էլեոնորա», «Դարանակալ պանդոկը», «Մասյաց գյուղացուհի», «Կույրն Տիրան», «Մեծն Տրդատ» և այլն: Թղլյանը նաև թարգմանել է եվրոպական մելոդրամաներ:

Էջ 432, տող 2: Ս. Տեր-Սարգսյան, վանցի ուսուցիչ մը... - Հրապարակախոս, գրող, հաս.- քաղաքական գործիչ Սեդրակ Տեր-Սարգսենցն է (Տևկանց), որի «Շահենն ի Սիպիր կամ գաղթական հայը» վեպը 1877-ին լույս տեսնելուց շատ չանցած այրվել է թուրքական իշխանությունների հրամանով:

Էջ 433, տող 14: Դժբաղդաբար հեղինակը չէ պահած իր խոստումը - «Վարժապետին աղջիկը» վեպից հետո Կամսարականը գրել է նորավեպեր, դրամա («Փրկանք», Մ. Կյուրճյանի հետ), գրականագիտական գործեր, բայց վեպ չի գրել:

Էջ 439, տող 10-11: ... Հայկական հարցը դրած է միջազգային սեղանի վրա - Խրիմյանը 1878 թ. Բեռլինի վեհաժողովում Հայկական պատվիրակության ղեկավարն էր (անդամներ՝ Խորեն Նարպեյ և Ստեփան Փափազյան, քարտուղար - թարգմանիչ՝ Մինաս Չերազ): Պատվիրակությունը Բեռլինից վերադարձավ ձեռնունայն, քանի որ իր՝ Խրիմյանի բառերով ասած, ի տարբերություն ուրիշների, ինքը գնված էր թղթե շերեփով, և այդ պատճառով էլ չկարողացավ ոչինչ վերցնել հարիսայի կաթսայից:

Էջ 439, տող 14-15: ... Կյանքի վերջին տարիներուն գրած է կիսահեգնոտ ոտանավոր մը Թագավորներու հասցեին - Շանթը նկատի ունի Խրիմյանի «Թագավորաց ժողով» երգիծական ծավալուն բանաստեղծությունը (1900):

Էջ 441, տող 14: ... «Երկրագունտ», «Շարժում» - «Երկրագունդ» գրական և գիտական հանդեսը լույս է տեսել 1883-1888 թթ. Կ.Պոլսում: Տեմիրճիպաշյանի հետ միասին նրա տնօրենն էր նաև Հ. Պարոնյանը:

«Շարժում գրական և իմաստասիրական» ամսագիրը հրատ. է Կ.Պոլսում 1886-88 թթ.: 1883-85 թթ. հրատարակվել է «Գրական իմաստասիրական շարժում» խորագրով:

Էջ 441, տող 16-17: ... Նիրվանայական - նիրվանա (սանսկրիտ՝ անչնչություն, մարում)՝ բուդդայականության և ջայնիզմի կրոնական

փիլիսոփայության կենտրոնական հասկացությունը, որը ցույց է տալիս մարդու հոգևոր զարգացման բարձրագույն վիճակը, վերջնական նպատակը:

Էջ 443, տող 4-5: ... Հայարնակ գավառներու համար երեք պետություններու ձեռքով 1895-ի գարնան - Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի:

Էջ 445, տող 16 ն.: ... «Հայրենիք» օրաթերթը - հրատարակվել է 1870-1896 և 1901 - 1910 թթ. (նախ շաբաթաթերթ էր, իսկ 1890-ից օրաթերթ), խմբագրապետ՝ Ա. Արփիարյան: Դեմոկրատական ուղղվածություն ուներ և միավորել է արևմտահայ գրականության նշանավոր դեմքերին: Այստեղ 1891-92 թթ. տպագրվել են Շանթի «Մնաք բարով խրխունը» վիպակը և 13 բանաստեղծություն:

Էջ 445, տող 8-9 ն.: ... Զոպանյանի «Ծաղիկ» ամսագիրը - բանասիրական, տնտեսական, գիտական և քաղաքական պարբերական, հրատ. է Կ.Պոլսում 1886-1907 թթ.: Ա. Զոպանյանը նրա խմբագիրներից մեկն էր:

Էջ 446, տող 2: ... Քեչեյանի «Բյուզանդիոնը» ... - քաղաքական, գիտական և գրական օրաթերթ, լույս է տեսել 1896-1918 թթ. Կ.Պոլսում, տնօրեն և խմբագիր՝ Բյուզանդ Քեչյան: Հետևում էր ազգային, բուրժուական-պահպանողական ուղղության:

Էջ 446, տող 4-5: Սմբատ Բյուրատ կհրատարակե «Բյուրակն» երկշաբաթաթերթը ...- գրող, մանկավարժ, հաս. գործիչ Սմբատ Բյուրատը (Տեր- Ղազարենց, 1862-1915) հրատարակել է ոչ թե «Բյուրակն», այլ «Փյունիկ» թերթը (1890-1900 թթ. Կահիրեում, 1901-1903 թթ. Ալեքսանդրիայում, իսկ 1909 թ. Կ.Պոլսում): Շանթի հիշատակած «Բյուրակն» ազգային, գիտական, գրական և քաղաքական հանդեսը հրատ. է Կ.Պոլսում 1882-1908 թթ., տեր և խմբագիր Ս. Ություճյան, 1901-ից տնօրեն՝ Ս. Դավթյան, խմբագիրներ Գ. Անդրեասյան, Հ. Ծիգմնճյան, Ս. Ջեոլմեկյան, Ա. Գալբակճյան:

Էջ 446, տող 8-9: Արշակ Զոպանյանի «Անահիտ»-ն է... - գրական- գեղարվեստական հանդես, հրատ. է 1898-1949 թթ.: Ամենահայտնի և ամենաերկարակյաց պարբերականներից էր, որին աշխատակցել են Իսահակյանը, Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Թումանյանը, Շիրվանզադեն և ուրիշներ:

Էջ 446, տող 12: ... Նման ամսագիր մը Արփիար Արփիարյանի ձեռքով՝ «Նոր կյանք»... - գրական և քաղաքական կիսամսյա

Հանդես, Հրատ. 1898- 1902 թթ. Լոնդոնում:

Էջ 446, տող 17-18: ... «Հանդես ամսօրյան» Հայագիտական կարևոր արժեքով - Վիեննայի Մխիթարյանների հրատարակած այս ամսագիրը ամենաերկարակյացներից է հայ մամուլի պատմության մեջ, լույս է տեսնում 1887-ից մինչև օրս:

Էջ 446, տող 5-6 ն.: ...«Ազատամարտ»՝ Դաշնակցության օրգանը, այլև «Ժամանակ» ... - «Ազատամարտ» օրաթերթը լույս է տեսել Կ.Պոլսում 1909-14, 1918-24 թթ. և Թիֆլիսում 1917-18 թթ.: 1910-11 թթ. Կ.Պոլսում նույն անունով լույս է տեսել գրական, գիտական, գեղարվեստական շաբաթաթերթը:

«Ժամանակ» գրական, քաղաքական և հաս. օրաթերթը հրատ. է 1908-1936 և 1945-ից մինչ օրս Կ.Պոլսում: 1912-25 թթ. կոչվել է նաև այլ անուններով՝ «Հետաձայն», «Ժողովրդի արձագանք», «Ժողովուրդ», «Ավետիս» և այլն:

Էջ 447, տող 16-17: ... Արսեն Ղազիկյանը, որ ձգտած է թարգմանիլ ընտրանքով... - Ղազիկյանը թարգմանել է Դանթեի «Աստվածային կատակերգությունը» (1905), Վիրգիլիոսի «Էնեականը» (1910), Հոմերոսի «Իլիականը» (1911), Սոֆոկլեսի «Էդիպոս թագավորը» (1927) և այլ հայտնի գործեր, ինչպես նաև նոր ժամանակների և իրեն ժամանակակից խոշոր հեղինակների գործեր:

Էջ 448, տող 13-14: Վիեննայի Մխիթարյաններեն Հակոբոս Տաշյան և Ներսես Ակինյան գլխավոր դեմքերն են ... - բանասեր, հայագետ, լեզվաբան, ձեռագրագետ, Հ. Տաշյանը (1866-1933) հեղինակել է բազմաթիվ գիտական աշխատություններ, որոնց մեջ առանձնանում է «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» աշխատությունը (1895):

Բանասեր, պատմաբան, ձեռագրագետ Ն.Ակինյանը (1883-1963), որը 1909- 63 թթ. խմբագրել է «Հանդես ամսօրյա»-ն, բանասիրական և պատմագիտական բազմաթիվ աշխատությունների հեղինակ է: Դրանց, այնուամենայնիվ, պետք է վերաբերվել զգուշությամբ, քանի որ դրանցում կան պատմագիտական սխալներ, հակասական և թյուր ենթադրություններ, օր.՝ Խորենացու «Հայոց պատմությունը» գրվել է 8-րդ դ. Ղևոնդի կողմից, իսկ Եղիշեի գիրքը, իբր, 572-590 թթ. Կարմիր Վարդանի գլխավորությամբ պարսիկների դեմ հայերի մղած պատերազմի նկարագրությունն է և այլն:

Էջ 448, տող 16: ... Արմաշի վանքը, ուր Մաղաքիա Օրման-

յան և Եղիշե Դուրյան ... - Արմաշի Չարխափան Ս. Աստվածածին վանքը հիմնադրվել է 1416 թ., անունը Մարաշ անունից է (Արմաշ գյուղում ապրել են Մարաշ քաղաքից 1410-ին գաղթած մարդիկ): Եղել է գրչության, մանրանկարչության և կրթական կենտրոն, ծաղկում է ապրել 18-րդ դ. վերջին և 19-րդ դարում: 1864-ին վանքում ստեղծվել է տպարան, հրատարակվել է «Հույս» հանդեսը, իսկ 1889-ին բացվել է դպրեվանքը, որի մատենադարանը մինչև I համաշխարհային պատերազմը ունեցել է մոտ 450 ձեռագիր՝ մեծ մասը գրված Արմաշում: 1915-ին վանքը թալանվել է, միաբանները՝ տարագրվել:

Մաղաքիա Օրմանյան (1841-1918) հաս. - քաղաքական, եկեղեցական գործիչ, բանասեր, պատմաբան, հրապարակախոս, Կ.Պոլսի պատրիարք 1896- 1907 թթ.: Նրա աշխատություններից առավել հայտնին «Ազգապատում» է (հ. 1-3, 1912-27):

Եղիշե Դուրյան (1860-1930)՝ եկեղեցական, հաս. գործիչ, բանասեր և բանաստեղծ, Պ. Դուրյանի եղբայրը: 1921-ին ընտրվել է Երուսաղեմի պատրիարք և պաշտոնավարել մինչև իր մահը: Առավել հայտնի աշխատություններն են՝ «Պատմություն հայ մատենագրության ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերն» (1885), «Բառագիտություն կամ ուղղագրություն բանի հայերեն քերականության» (1886):

էջ 448, տող 14-15 ն.: Վանքե դուրս պետք է հիշել Նորայր Բյուզանդացին և Մատաթիա Գարագաշյան ... - Նորայր Բյուզանդացի (Ստեփան Գազեզյան -Ճիզմեճյան, 1844-1916) հայագետ, բանասեր, լեզվաբան: Գրել է «Հայկական բառաքննություն» (1880), լեզվաբանական այլ գործեր, ուսումնասիրություններ Կորյունի, Բուզանդի, Խորենացու և այլ պատմիչների մասին:

Մատաթիա Գարագաշյան (1818-1903)՝ պատմաբան, փիլիսոփա, լեզվաբան, հայ քննական պատմագրության հիմնադիրը: Նրա ամենահայտնի աշխատությունը՝ «Քննական պատմություն Հայոց» (հ. 1-4, 1880-95), ընդգրկում է հայ ժողովրդի ծագումից մինչև V դ. ազատագրական շարժումների ավարտը (484) ընկած ժամանակաշրջանը:

էջ 449, տող 9-10 ն.: ... Գրական բնապաշտությունը՝ նատյուրալիզմը - նատուրալիզմը ուղղություն է գրականության և ընդհանրապես արվեստի մեջ, որը երևան է եկել 19-րդ դ. 60-70-ական թթ. Ֆրանսիայում և տարածվել այլ երկրներում: Ձգտել է իրականության օբյեկտիվ, ճշգրիտ և անտարբեր վերարտադրման, մեծ ուշադրություն է դարձրել հատկապես մարդկային բնավորության վրա: Ըստ

էության նատուրալիզմի տարրական մարդկային բնավորությունն էր՝ պայմանավորված ամենից առաջ նրա ֆիզիոլոգիական բնությամբ և նյութակենցաղային միջավայրով: Որպես գրական ուղղություն՝ վերջնականապես տեսականորեն մշակվել է Էմիլ Զոլայի կողմից և կիրառվել նրա գեղարվեստական ստեղծագործություններում: 1860-80-ական թթ. որոշակիորեն դրական դեր է խաղացել՝ նոր թեմաների յուրացում, իրականության նոր շերտերի վերհանում, մարդկային հոգեբանության մեջ ենթագիտակցական շերտի ընդգծում և այլն: Այս ամենը վերաբերում է նատուրալիզմի առավել տաղանդավոր դեմքերին, բայց ընդհանուր առմամբ (և դա երևում է Շանթի այս հոդվածից էլ) այս ուղղությունը իր չափից դուրս «բնականության» պատճառով արժանացել է քննադատության և անհանդուրժողական վերաբերմունքի: Այսպես, 1902-ին, երբ վախճանվեց Էմիլ Զոլան, և նրա տաղանդի երկրպագուներն ու բարեկամներն առաջարկեցին նրա աճյունն ամփոփել Պանթեոնում, դրան կտրականապես դեմ դուրս եկավ հայտնի գրող Մորիս Բարրեսը, որը գտնում էր, որ Զոլան իր ստեղծագործություններով մեծապես վարկաբեկել է ֆրանսիացի ժողովրդին: Մեծ ջանքերի գնով միայն հաջողվեց գրողի դին ամփոփել Պանթեոնում՝ ֆրանսիացի ժողովրդի մյուս մեծերի կողքին (Շիրվանզադե, Եժ, հ. 10, էջ 335, «Զոլան դեպի պանթեոն»):

Նատուրալիզմին որոշակի տուրք են տվել գերմանացի գրող Գ. Հաուպտմանը, նորվեգացի Հ. Իբսենը, անգլիացի Ջ. Մուրը և շատ ուրիշներ: Այն որոշակիորեն դրսևորվել է նաև 20-րդ դարասկզբի որոշ հայ գրողների ստեղծագործությունների մեջ (Զիֆթե-Սարաֆի «Միամիտի մը արկածները» վեպը, Ա. Ահարոնյանի, Մ. Մանվելյանի և այլոց արձակ ու դրամատիկական մի շարք երկեր):

Էջ 450, տող 6-7 ն.: Սիպիլ և Ալփասլան հրատարակած են «Մագնիս» 2 արարով - դրամ, մանկավարժ, հաս. գործիչ Սիպիլի (Զապել Ասատուր, 1863-1934) և բանաստեղծ Ալփասլանի (Ալեքսանդր Փանոսյան, 1859-1919) «Մագնիս» դրամայում (1909) քննադատվում է ժամանակի միակ մագնիսը՝ ոսկին, շահամոլական նպատակներին հակադրվում է ոսկին մարդկանց (հայ գավառին) ծառայեցնելու գաղափարը:

Էջ 450, տող 4-6 ն.: Մ. Տեր-Մինասյան, Շ. Նաթալի, Մ. Սուրյան գրած են մեկ-մեկ բեմական խաղ չորս-հինգ արարով - Մինաս Տեր-Մինասյանի (Ռուբեն) դրամայի մասին որևէ տվյալ գտնել

չհաջողվեց, Շահան Նաթալին գրել է «Մարդը» (1912), Միսաք Սուրյանը՝ «Միության օգուտը» (1913) դրաման:

*Էջ 450, տող 2-4 ն.: **Առանձար ունի կատակերգություն մը՝ «Փրկիչներ»՝ հինգ արարով և Երվանդ Օտյան՝ քանի մը մեկ արարով զավեշտներ** - երգիծաբան Առանձարի (Միսաք Գույումճյան) «Փրկիչներ» դրամայում (1907) ներկայացված է հայ ազգային կուսակցությունների գործունեությունը 20-րդ դ. սկզբին:*

Ե. Օտյանը գրել է «Զավալլըն» (1905) և «Ֆրանքո-թրքական պատերազմ կամ Զավալլը Արթին աղա» (1906) զավեշտախաղերը:

*Էջ 453, տող 15-16 ն.: **... Եվ հնչյակներու շարք մը կկազմե...** - Ինտրայի «Նոճաստան» ժողովածուն (1908) ներառում է 34 սոնետ:*

*Էջ 460, տող 5-6 ն.: **Իր «Դիմաստվերներ»-ը կկարդացվին մեծ հաճույքով** - «Դիմաստվերներ» ժողովածուում (1921) Հ. Ասատուրը ներկայացրել է Շանթի ասած գրական հին դեմքերի Ս. Տյուսաբի, Գր. Օտյանի, Հ. Պարոնյանի, Մ. Մամուրյանի և այլոց կյանքի ու գործունեության քննադատական ուրվագիծը:*

*Էջ 466, տող 12-13: **«Էն դիի դեմեն» հետաքրքիր է իր արտաքինով...** -ավելի ճիշտ՝ «Էնդի դեմեն» (1902): Թլկատինցու մյուս թատերախաղի վերնագիրն է «Զալըմ տղան» (1904): Վերջինս Շանթի երկերի Բեյրութի 2008 թ. հրատարակության մեջ տպագրված է վրիպակով՝ «Զալում աղան» (Ը հատոր, էջ 382):*

*Էջ 468, տող 12: **«Պոլսո գաղտնիքները» ...** - Հ. Հաճյանի արևմտահայերի Էժեն Սյուի (Ն. Անանյան, Արևմտահայ վիպագրություն, Ե., 1992, էջ 82) այս վեպի ճիշտ վերնագիրն է «Հեղինե կամ գաղտնիք մը ի Կոստանդնուպոլիս» (1869):*

*Էջ 468, տող 14-15 ն.: **Եվ Երվանդ Օտյան ալ դժբաղդաբար մշակած է բավականին այս տեսակի թերթոններ** - խոսքը Օտյանի «Ապտյուլ Համիտ և Շերլոք Հոլմս» (1911), «Սալիհա հանըմ կամ ջանակը բռնավորին դեմ» (1912), «Նոր հարուստներ» (1919) և «Թիվ 17 խաֆիեն» (1919) վեպերի մասին է:*

*Էջ 468, տող 7-8 ն.: **Զիփթե-Սարաֆի ու Մարի Սվաճյանի վեպերը գրական կեցվածք ունին...** - առաջինը հայտնի է իր «Միամիտի մը արկածները» (1908), իսկ երկրորդը՝ «Հայուհի մը ի Բարիզ» (1892) և «Բռնի ամուսնություն» վեպերով:*

*Էջ 468, տող 2 ն.: **Իսկ Սրմաքեշխանլյանի երկար վեպերը...***

- Ե. Սրմաքեշխանլյանը գրել է մեկ երկար վեպ, որը 1904-ին լույս է տեսել «Մերժված սեր», իսկ 1911-ին՝ «Ամիրային աղջիկը» վերնագրերով:

Էջ 470, տող 6-7: ... Ինչպես են «Անձկության օրեր»... - պետք է լինի՝ «Անձկության ժամեր» (Սեւանիկ, 1924):

Էջ 471, տող 8: ... Թղթակից «Մշակ»-ի - հաս., քաղաքական, գրական օրաթերթ (սկզբում՝ շաբաթաթերթ): Հրատարակվել է Թիֆլիսում 1872- 1921 թթ.: Թերթը հիմնադրել և մինչև իր մահը (1892) խմբագրել է Գրիգոր Արծրունին: Հատկապես այս շրջանում «Մշակը» հայտնի էր որպես առաջատար մտավորականության գաղափարական օրգան: Արփիարյանը «Հայկակ» ստորագրությամբ բազմաթիվ թղթակցություններ է տպագրել «Մշակ»-ում:

Էջ 471, տող 9-10: ... Լոնդոնի մեջ հրատարակած է «Նոր կյանք» և զանազան այլանուն թերթեր... - «Նոր կյանք»՝ տե՛ս 671 էջի ծանոթագրությունը:

Արփիարյանը 1902-ին Վենետիկում հրատարակել է «Հայ հանդես», իսկ 1905-ին Կահիրեում՝ «Շիրակ» և «Լուսաբեր» թերթերը:

Էջ 474, տող 12-13: «Տասներկու տարի ետքը»... - Օտյանի հուշագրության ճիշտ վերնագիրն է «Տասներկու տարի Պոլսեն դուրս»:

Էջ 477, տող 2-4: «Կյանք ու արվեստ», «Մենք», «Զվարթնոց», «Արևագալ», «Հայ գիր», «Երիտասարդ հայուհի», «Նոր գիր», «Վեմ», «Ակոս», «Նաիրի» և շատ ուրիշներ - «Կյանք և արվեստ» տարեգիրքը հրատ. է Փարիզում 1931-36 թթ., հրատարակիչ-խմբագիր՝ Սերուժան Պարսամյան:

«Մենք» գրականության և արվեստի պարբերականը հրատ. է Փարիզում 1931- 32 թթ., խմբագիրներ՝ Հ. Սարգսյան, Հ. Ֆրենկյան, Նշան Պեշիկթաշլյան:

«Զվարթնոց» գրական-գեղարվեստական հանդեսը հրատ. է Փարիզում 1929- 31, 1937-39, 1944, 1947-48, 1955-67 թթ.: Տպագրել է հիմնականում արևմտահայ և սփյուռքահայ, ինչպես նաև խորհրդահայ գրողների և օտարազգի հեղինակների ստեղծագործություններ և ուսումնասիրություններ:

«Արևագալ» գրականության և արվեստի պարբերաթերթը հրատ. է Աթենքում 1937-38 թթ., խմբագիր՝ Գ. Կասավարենց: «Հայ գիր» գրականության և արվեստի պարբերաթերթը լույս է տեսել դարձյալ Աթենքում 1945-46 թթ.: Հրատարակիչներ՝ Պ. Սարգսյան, Վ. Տա-

քեսյան, Ժ. Կյուպեյան, Պ. Լամպաճյան, Կ. Փանոսյան և Շ. Շահրիկյան:

«Երիտասարդ հայուհի» գրական-գեղարվեստական ամսագիրը լույս է տեսել Բեյրութում 1932-34 և 1946-47 թթ.: Հիմնադիր-տնօրեն Սիրան Սեզա:

«Նոր գիր» գրակ. և արվեստի ամսաթերթը հրատ. է Նյու-Յորքում 1936-54 թթ.: Խմբագիրներ՝ Անդ. Անդրեասյան, ապա Բեն. Նուրիկյան:

«Վեմ» մշակույթի և պատմության եռամսյա հանդեսը հրատ. է Փարիզում 1932-39 թթ., խմբագիր Սիմոն Վրացյան:

«Ակոս» գրական-գեղարվեստական և գիտական պարբերագիրքը հրատ. է 1944-60 թթ. Բեյրութում, խմբագիր Գ. Բանյան: Ձեռնարկն էր Շանթի և Աղբալյանի հիմնադրած Հայ ճեմարանի շրջանավարտների միության:

«Նաիրի» գրական գեղարվեստական ամսագիրը լույս է տեսել Հալեպում 1941- 52 թթ., 1952-ին խմբագիրը՝ Անդ. Ծառուկյանը, Բեյրութում հրատարակել է նույնանուն գրական, հասարակական շաբաթաթերթը:

էջ 477, տող 5: ... «Հայրենիք» ամսագիրը - գրականգեղարվեստական, մշակութային և գիտական ամսագիր, ՀՅԴ օրգան: Հրատ. է Բոստոնում 1922-70 թթ.: Առաջին խմբագիրն էր Ռուբեն Դարբինյանը:

էջ 477, տող 7-8: ... Երուսաղեմի «Սիոնը» և Անթիլիասի «Հասկը» - «Սիոն» ազգային, բանասիրական, քաղաքական և գիտական ամսագիրը լույս է տեսել 1866-77 թթ. և 1927 թ. մինչ օրս, խմբագրությունն Երուսաղեմի Հակոբյան միաբանների:

«Հասկ» կրոնական, կրթական, գրական և բանասիրական ամսաթերթը հրատ. է 1932 թ.-ից մինչ օրս, պաշտոնական հրատարակություն Կիլիկիո կաթողիկոսության:

էջ 477, տող 1-5 ն.: ... Արմեն Գարոյի «Հուշերը»... Ռուբենի «Հուշերը»... Տարագրի «Հուշերը», Մալխասի «Հուշերը» - Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաճյան), Ռուբենը (Մ. Տեր-Մինասյան), Տարագիրը (Մարտին Շաթիրյան) և Մալխասը (Արտաշես Հովսեփյան) ՀՅԴ ականավոր գործիչներ էին, ակտիվորեն մասնակցել են 19-րդ գ. վերջի և 20-րդ դ. սկզբի ազգային-ազատագրական պայքարին, իսկ հետո՝ սփյուռքահայության հաս. -քաղաքական կյանքին:

էջ 478, տող 4 ն.: ... Ինչպես Վ. Քյուրքճյանի «Ասպետ Լիպարիտը» - գրող, հրապարակախոս, հանրային գործիչ Վահան Քյուրքճյանի այս վեպի թեման վերցված է Կիլիկյան Հայաստանի 14-րդ դ. պատմությունից: Վեպի գլխավոր հերոսը նշանավոր զորավար Լիպարիտն է, որը զոհվել է 1369 թ. Սսի պաշտպանության ժամանակ:

էջ 478, տող 2-3 ն.: ...Ինչպես Հ.Օշականի ու Մալխասի վեպերը - նկատի ունի Օշականի «Ծակ-պտուկը», «Մնացորդաց» (3 հատոր), «Հաճի Մուրատ», «Հաճի Ապտուլլահ», «Սուլեյման էֆենտի» վեպերը և Մալխասի «Զարթոնք» (1933), «Ապրումներ» (1931), «Լուսաբեմին» (1935) ստեղծագործությունները:

էջ 478, տող 1-2 ն.: ... Համաստեղի մեկ երկար ու կես մնացած վեպը - խոսքը «Սպիտակ ձիավոր» վեպի մասին է, որը Համաստեղը հետագայում ամբողջացրել և 2 հատորով լույս է ընծայել 1952 թ.:

էջ 479, տող 1-2: ...Վիպասանությունը Լևոն Մեսրոպի - նկատի ունի Լ.Մեսրոպի (Մեսրոպյան) «Զարի», «Հաշիշին» (1939), «Ֆրեր Հարթմանն ու տատա Րոսթեմ» և «Բերդեկայի գիշերները» (1946) վեպերը:

էջ 479, տող 2-3 ն.: ... Որուն բեղմնավոր ներկայացուցիչն է Նշան Պեշիկթաշլյան - Ն. Պեշիկթաշլյանն ավելի քան 10 գրքի հեղինակ է` «Փարիզ» (1933), «Ընկեր Շահնազար» (1927), «Հայ տղերք» (1941), «Լույսի» (1942) և այլն:

էջ 484, տող 4-5: ... Մեկը` Աժտարխանի մեջ, մյուսը` Մոսկվայի Լազարյան ճեմարանը դարու սկիզբեն... - խոսքը Աստրախանի Աղաբաբյան վարժարանի մասին է, որը բացվել է 1810-ին, իսկ Լազարյան ճեմարանը բացվել է 1815 թ.:

էջ 484, տող 15-17 ն.: Այդ պաշտոնական պարբերաթերթը 1846-1849 ունեցավ նաև հայերեն լեզվով իր հրատարակությունը նույն անունով... - «Կովկաս» քաղաքական և բանասիրական լրագիրը գրաբար լույս է տեսել 1846-47 թթ. Հ.Կարենյանի և Մ.Պատկանյանի, ապա Հ. Արզանյանի խմբագրությամբ:

էջ 485, տող 5-6 ն.: ...Այդ դեմքերուն մեջ ամենեն կարևորներն են Գաբրիել Պատկանյան, Միքայել Նալբանդյան... - Շանթի երկերի Բեյրութի 2 հրատարակություններում էլ տպագրված է Գաբրիել Պատկանյան (էջ 397 և էջ 398), որը, ինչպես այս թվարկումից է պարզվում և հաստատվում է 2 պարբերության հետո, պետք է լինի Ռափայել:

էջ 486, տող 16-17: Պատկանյանը եղած էր Ներսեսյան դպրոցը, և իր հայրը Թիֆլիսի մեջ 1851 թվին թերթ կհրատարակեր... - Ռափ. Պատկանյանը Ներսիսյան դպրոցում ոչ թե սովորել է, այլ դասավանդել 1850-51 թթ., երբ դպրոցի տեսուչը նրա հայրն էր՝ Գաբրիել Պատկանյանը: 1843-49 թթ. Ռափ. Պատկանյանը սովորել է Լազարյան ճեմարանում (Հայ նոր գրակ. պատմություն, հ. 2, Ե., 1962, էջ 234-35: Մ.Սաղյան, Ռափայել Պատկանյան, Ե., 1980 և այլն): Գաբրիել քահանա Պատկանյանը 1850-51 թթ. Թիֆլիսում հրատ. է «Արարատ» թերթը, ուր տպագրվել են Ռափ.Պատկանյանի առաջին գործերը՝ «Շինականի առավոտյան երգը», «Շինականի երեկոյան երգը» բանաստեղծությունները և «Զարմայր նահապետի մահը». «Ի գերեզմանի Լևոնի վերջին թագավորի հայոց» պոեմները:

էջ 492, տող 3: ... Գաբրիել Պատկանյան ... - պետք է լինի՝ Ռափայել Պատկանյան:

էջ 492, տող 12: ... Գրական նոր լեզվով լույս տեսնող ամսագիրը՝ «Կռունկ»-ը ... - «Կռունկ Հայոց աշխարհին» կովկասահայ առաջին աշխարհաբար պարբերականը հրատ. է 1860-63 թթ.:

էջ 492, տող 11-13 ն.: Էջմիածնի մեջ երկու կաթողիկոսներ, երկուքն ալ իրար ետևե Պոլսեն հրավիրված... - խոսքը Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի (1802- 1865, հայոց կաթողիկոս 1858-ից) և Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի (Մնձադործ, 1813- 1882, հայոց կաթողիկոս 1866-ից) կաթողիկոսների մասին է:

էջ 493, տող 7 ն.: ... «Մեղու Հայաստանի», վերջն ալ «Նոր-դար»... - «Մեղու Հայաստանի» քաղաքական, բանասիրական և առևտրական լրագիրը լույս է տեսել Թիֆլիսում 1862, 1870-86 թթ.: Խմբագիրն էր նախ Ստեփան Մանդինյանը, հետո՝ Պետրոս Սիմոնյանը: Ազգային-պահպանողականների օրգանն էր և անհաշտ հակառակորդը Գր. Արծրունու և նրա «Մշակի»:

«Նոր-դար» ազգային, գրական, քաղաքական օրաթերթը (սկզբում՝ երկօրյա) լույս է տեսել Թիֆլիսում 1883-1916 թթ., խմբագիր՝ Սպանդար Սպանդարյան: Այս լրագիրը ևս ազգային-պահպանողական հոսանքի գաղափարակիրն էր և անհաշտ պայքար է մղել «Մշակի» դեմ:

էջ 494, տող 13-14: ... Եվ կբացվի Էջմիածնի մեջ Գևորգյան ճեմարանը - հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատություն. հայագիտության, մանկավարժության և մշակութային կարևոր կենտ-

րոն: Ճեմարանի հանդիսավոր բացումը կատարվել է 1874 թ. սեպտ. 28-ին: Գևորգյան է կոչվել իր հիմնադրի՝ Գևորգ Դ կաթողիկոսի անունով: Գևորգյան ճեմարանում դասավանդել և սովորել են գիտության և մշակույթի շատ նշանավոր դեմքեր: Փակվել է 1917 թ. վերջին քաղաքական և ռազմական անբարենպաստ պայմանների հետևանքով, Գևորգ V Սուրենյանց կաթողիկոսի որոշումով: Վերաբացվել է 1997 թ., Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի կարգադրությամբ Գևորգյան ճեմարանը վերանվանվել է Գևորգյան հոգևոր ճեմարան:

Էջ 494, տող 9 ն.: ...«Փորձ» եռամսյան (1875-1880)... - «Փորձ» ամսագիրը հրատ. է 1876-81 թթ.:

Էջ 495, տող 8: ... Այլև Մանտինյան ... - այս ազգանունով 2 դերասան են եղել Թիֆլիսում: Առաջինը Սեդրակ Մանդինյանն է, որը հակառակ իր տաղանդին՝ մոտ տասնամյա բեմական գործունեությունից հետո թողեց բեմը և նվիրվեց մանկավարժության, իսկ երկրորդը նրա ազգական Ամիրան Մանդինյանն է, որը նույնպես եղել է թարգմանիչ և մանկավարժ: Շանթը թերևս նկատի ունի Սեդրակ Մանդինյանին:

Էջ 495, տող 12-13 ն.: ... Թիֆլիսի մեջ կհիմնվի բժիշկ Նավասարդյանի ձեռքով Հայոց բարեգործական ընկերությունը... - Հիմնվել է 1881 թ., բժիշկ Բագրատ Նավասարդյանը եղել է նրա անփոփոխ պատվավոր նախագահը: Գործել է մինչև 1921 թ.:

Էջ 496, տող 10-12 ն.: Էմին Տեր-Գրիգորյանն ալ... գրած է երևանյան բարբառով կամ կիսաբարբառով - դրամատուրգ, մշակութային գործիչ, Երևանի թատրոնի հիմնադիրներից, ուր հանդես է եկել որպես բեմադրիչ, նկարիչ և դերասան: Գրել է դրամաներ, վոդևիլներ, փարսեր կենցաղային թեմաներով, որոնք ներկայացվել են Երևանում, Թիֆլիսում և այլուր: Միայն «Խեչոյի թուղթը» վոդևիլը (1882) խաղացվել է 500 անգամ: Այլ գործեր՝ «Զրկանքի զոհ» (1886), «Բարեգործության դիմակի տակ» (1895), «Հուր և սուր» (1906) և այլն:

Էջ 497, տող 10: 1890 թվին տպած է հատորիկ մը... - Հովհ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն լույս է տեսել Մոսկվայում 1887 թ.:

Էջ 499, տող 4-5: «Հայկ ու Լևոնին մռանանք, եղբա՛րք» - Ռափ. Պատկանյանի «Հայ պատանին երգում է» բանաստեղծության առաջին տողն է:

Էջ 500, տող 2-3 ն.: Ցնցել «չար սուլթանի ոսկի թախտը»

- Շանթը նկատի ունի Պատկանյանի «Վանեցի մոր երգը» բանաստեղծության (1876) II տան I տողը. «Զար սուլթանի ոսկի թախտը ջարդվեցավ, վար ընկավ...»:

էջ 501, տող 9-11: Իր գրական լեզվով գրած վեպերը՝ «Ես նշանած էի», «Նաժիշտ ու տիրուհին», գրված են ուսանողական տարիներուն ... - Շանթը սխալվում է. երկու վիպակներն էլ (երկրորդը պետք է լինի «Տիկին և նաժիշտ») գրվել են ուսանողական տարիների տպավորություններով, բայց շատ ավելի ուշ: Առաջինը լույս է տեսել 1880 թ. «Փորձ» ամսագրում, երկրորդը 1884 թ. «Արձագանք» ամսագրում (տես Հայ նոր գրականության պատմություն, հ. 2, Ե., 1962, էջ 280-84):

էջ 502, տող 1-2 ն.: ... Եվ փույթ չէ բնավ, որ նմանողություն մըն է Պայրոնին - խոսքը Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի մասին է:

էջ 503, տող 6-7 ն.: ...Կհայտարարե, որ իր քնարը պիտի նվիրե խեղճերու ցավերը երգելուն - Շանթը նկատի ունի Հովհաննիսյանի «Մնաք բարով, արև, գարուն» տողով սկսվող բանաստեղծության (1887) հետևյալ տունը.

Աղքատություն ես սիրեցի,
Խեղճի լացը, հառաչանք,
Ես քընարըս նվիրեցի
Վիշտ երգելու և տանջանք:

էջ 507, տող 18-20: ... Կհիշեմ Ա. Արարատյան մը, որ ուներ «Գյուղական խալիֆա» և «Գավառական ուսումնարանի հիմնարկումը» անունով վեպեր... -գյուղագիր, դրամատուրգ, մանկավարժ Ալեքսանդր Արարատյան, հեղինակը «Գյուղական խալֆա» (1883), «Հիմնարկություն գավառական ուսումնարանի» (1889) վիպակների և շուրջ մեկ տասնյակ պիեսների, որոնցից «Սուտ ճգնավորը» (1891) 2 գործողությամբ վոդևիլը ունեցել է մի քանի հրատարակություն և բազմիցս բեմադրվել է:

էջ 509, տող 15-16: ... Իր «երկաթ ծամոդ հայ ակռաներով» ... -նկատի ունի Պատկանյանի «Վանեցի կտրիճ» բանաստեղծության II տան III տողը. «Սուր ակռաներովս երկաթ կըծամեմ...»:

էջ 516, տող 7: ... Հայ կատետներ, հայ էստեկներ ... - կադետներ (ռուսերեն՝ конституционные демократы - սահմանադրական դեմոկրատներ)՝ լիբերալ միապետական բուրժուազիայի գլխավոր

կուսակցությունը Ռուսաստանում: Հայ կադետների «Սահմանադրական դեմոկրատական կուսակցության Հայ արմատական ֆրակցիան» ստեղծվել է 1906 թ. Թիֆլիսում:

Էսդեկները սոցիալ-դեմոկրատներն են (ռուս.՝ - социал-демократы*)՝ այստեղ բոլշևիկյան կուսակցության անդամները: Հայ բանվորների առաջին սոցիալ-դեմոկրատական խումբը ստեղծվել է Թիֆլիսում 1898 թ. (գոյ. է մինչև 1901-ը): 1899- ին Ստ. Շահումյանը Ջալալօղլիում (այժմ՝ Ստեփանավան) ստեղծել է Հայաստանում I մարքսիստական խմբակը:*

Էջ 517, տող 10-11 ն.: Կառավարությունը իր պարտադրած եկեղեցական Պոլոժենիայով ... - «Պոլոժենիե»՝ կանոնադրություն, որով պետք է առաջնորդվեր Հայ եկեղեցին Արևելյան Հայաստանը ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո (1828): Կայսր Նիկոլայ I-ի կողմից վավերացվել է 1836 թ. մարտի 11-ին և գործադրվել 1837 թ. հունվարի 1-ից: «Պոլոժենիեն» (10 գլուխ, 141 հոդված) էապես կրճատում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի և առհասարակ Հայ եկեղեցու իրավասությունները: Գործել է մինչև 1917 թ.:

Էջ 518, տող 6-8 ն.: Ստրիկովսկին հայ ճարտարապետության ունեցած մեծ ազդեցությունը դրավ եվրոպական գիտության առջև, Թորամանյան կաշխատեր նույն ուղղությամբ - ճարտարապետ Թորոս Թորամանյանը հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիրն է: Մինչև նրա աշխատությունների հանդես գալը եվրոպական գիտությունը չէր ընդունում հայկական ինքնուրույն ճարտարապետության գոյությունը, բայց Թորամանյանը եվրոպացիների համար բացահայտեց ոչ միայն դա, այլև այն մեծ ազդեցությունը, որը եվրոպական ճարտարապետությունը կրել է հայկականից: 1912 թ. նա Վիեննայի արվեստի պատմության ինստիտուտի պրոֆեսոր Յոզեֆ Ստրժիգովսկու առաջարկով Վիեննա է ուղարկել իր ուսումնասիրությունները, իսկ հետո նրանց միջև պայմանագիր է կնքվել Վիեննայում հայկական ճարտարապետության մասին համատեղ գիրք հրատարակելու վերաբերյալ: Սկսված Առաջին աշխարհամարտի պատճառով Թորամանյանը չի կարողացել երկրորդ անգամ մեկնել Վիեննա, և Ստրժիգովսկին 1918-ին գերմաներեն հրատարակել է «Հայկական ճարտարապետությունը և Եվրոպան» երկհատոր աշխատությունը՝ հիշատակելով, որ գծագրական նյութերի հեղինակը Թորամանյանն է:

էջ 519, տող 6-7: ... Որոնց ռուսերենի վերածած իր թարգմանությունները երբ Վալերի Բրյուսով կկարդար ... - Վալերի Բրյուսովը 1916-ին Վ. Տերյանի, Ալ. Ծատուրյանի և այլ հայ բանաստեղծների օգնությամբ Մոսկվայում հրատարակել է «Поэзия Армении» ծավալուն ժողովածուն, ուր տեղ են գտել նաև միջնադարի հայ տաղերգուների բազմաթիվ գործեր: Դրանք նորություն էին ռուս ընթերցողների, ինչպես նաև (շատ ճիշտ է նշում Շանթը) բազմաթիվ հայերի համար: Բրյուսովը 1915 թ. դեկտեմբերին և 1916 թ. հունվարին հայ գրականության մասին զեկուցումներ է կարդացել Բաքվում, Թիֆլիսում, Էջմիածնում և Երևանում: Շանթը նկատի ունի այս զեկուցումները:

էջ 520, տող 16-17 ն.: ... Բարակ տետրակ մը՝ «Արարատ» - «Արարատ» ամսագիրը հրատ. է 1868-1919 թթ., նախ որպես «ամսագիր կրոնական, պատմական, բանասիրական, բարոյական և ազգային», իսկ 1898-ից՝ «պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռո Ս. Էջմիածնի»:

էջ 520, տող 13-15 ն.: Այս կես շրջանի իրապես լուրջ ամսագիրն էր «Մուրճ»-ը Ավետիք Արասխանյանի - «Մուրճ» հաս., քաղաքական, գրական ամսագիրը լույս է տեսել Թիֆլիսում 1889-1907 թթ.: Այստեղ են առաջին անգամ տպագրվել Շանթի մի շարք բանաստեղծություններ, «Երազ օրեր», «Դուրսեցիները», «Դարձ», «Վերժին», «Դերասանուհին» արձակ գործերը և «Ուրիշի համար» դրաման:

էջ 520, տող 8-9 ն.: ... Ստեփան և Կատարինե Լիսիցյանների խմբագրած «Հասկերը» - հրատ. է 1905-17 և 1922 թթ. Թիֆլիսում:

էջ 521, տող 7-8: ... Գյուտ Աղանյանի «Դիվան հայոց պատմության» տասնյակ մը հատորները - պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ, թարգմանիչ Գյուտ քահանա Աղանյանը 1896-1912 թթ. խմբագրել և հրատարակել է «Լումա» հանդեսը, աշխատակցել ժամանակի մամուլին: «Դիվան հայոց պատմության» ծավալուն երկը (1893-1915) բաղկացած է 13 հատորից և ներառում է հայ ժողովրդի 18-19-րդ դդ. պատմությանը վերաբերող բազմաթիվ վավերագրեր:

էջ 521, տող 10-11: Վրթանես Փափազյանի «Վտակը» - գրական-բանասիրական այս ժողովածուն հրատ. է Թիֆլիսում 1901 թ.:

Էջ 521, տող 11: Գյուլնազարյանի «Արաքսը», նույնպես «Գարունը»... -«Արաքս» գրական-գեղարվեստական պատկերազարդ վեցամսյա հանդեսը լույս է տեսել Ս. Պետերբուրգում 1887-98 թթ., խմբագիր-հրատարակիչ՝ Սիմեոն Գուլամիրյան:

«Գարուն» գրական-գեղարվեստական ալմանախը (3 հատոր) լույս է տեսել 1910-12 թթ. Մոսկվայում: Խմբագրել է «Մոսկվայի գրական խմբակը» (Վ. Տերյան, Ա. Ծատուրյան, Ց. Խանզադյան, Պ. Մակինցյան, Կ. Կուսիկյան, Ալ. Մյասնիկյան և ուրիշներ): Ալմանախի տիտղոսաթերթը ձևավորել է Մարտիրոս Սարյանը: Ա. գրքում (էջ 51-104) տպագրվել է Շանթի «Ճամբուն վրա» դրաման (1904):

Էջ 521, տող 12-13: Նույնպես Նիկողայոս Ատոնցի խմբագրությամբ «Բանբերի» երկու հատորները - «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի Ա և Բ գրքերը լույս են տեսել 1904-ին Ս. Պետերբուրգում: Բ գրքում (էջ 1-47) տպագրվել է Շանթի առաջին դրաման՝ «Եսի մարդը» (1901):

Էջ 521, տող 11-12 ն.: ... «Նոր հոսանք» անունով և Նիկոլ Աղբալյանի գլխավոր խմբագրությամբ - «Նոր հոսանք» գրական, գիտական, հասարակական, քաղաքական ամսագիրը լույս է տեսել 1913-15 թթ. Թիֆլիսում:

Էջ 521, տող 7-8 ն.: ... «Գործ» անունով և Արտաշես Ջիլինգարյանի գլխավոր խմբագրությամբ - «Գործ» գրական, գիտական, հասարակական և քաղաքական ամսագիրը լույս է տեսել 1917 թ.:

Էջ 522, տող 3-4: Հիմնված էր թատերասիրաց ընկերություն մը՝ «Արտիստիկական ընկերությունը» ... - խոսքը 1894-95 թթ. թատերաշրջանից Թիֆլիսի Դրամատիկական ակումբի՝ «Թիֆլիսի դերասանական ընկերակցության» («Արտիստիկական ընկերություն») վերակազմավորվելու մասին է: «Արտիստիկական ընկերության» թատրոնի Նոր շենքի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1901 թ. փետրվարի 8-ին (Լ. Հախվերդյան, Հայ թատրոնի պատմություն, Ե., 1980, էջ 18):

1902-ին հիմնադրվել է Թիֆլիսի դրամատիկական ընկերությունը, որը 1906-ին վերանվանվել է Հայոց դրամատիկական ընկերություն (նույնը, էջ 22):

Էջ 522, տող 11-12 ն.: «Բագվի կուլտուրական ընկերությունը» ... - ավելի ճիշտ՝ «Բաքվի հայոց կուլտուրական միություն» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1906-ին և գործել

մինչև 1917-ը: Նպատակն է եղել ընդարձակել հանրակրթական և մասնագիտական դպրոցների ցանցը, նպաստել ինքնուրույն և թարգմանական գրքերի հրատարակմանը, հայոց լեզվի, թատրոնի, երաժշտության, կերպարվեստի և ճարտարապետության զարգացմանը: Մեծապես նպաստել է հատկապես Բաքվի հայկական թատրոնի գործունեությանը, նշել է Սիրանույշի, Արամ Վրույրի և այլոց բեմական գործունեության հոբելյանները:

էջ 522, տող 8 ն.: Երկրորդ ընկերությունն էր «Թիֆլիսի հրատարակչականը»... - խոսքը Աբգար Հովհաննիսյանի նախաձեռնությամբ 1880-ին ստեղծված «Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության ընկերության» մասին է:

էջ 522, տող 1-3 ն.: Երրորդ ընկերությունը Հովհաննես Թումանյանի ձեռնարկն է՝ «Հայ գրական միություն» ... - ավելի ճիշտ՝ Հայ գրողների կովկասյան ընկերություն, ստեղծվել է 1912-ին և գոյատևել մինչև 1921-ը: Ստեղծման օրից մինչև վերջ նրա անփոփոխ նախագահն է եղել Հովհ. Թումանյանը:

էջ 524, տող 4-8: ... Մկրտիչ Էմինի, Քերոբե Պատկանյանի, Կարապետ Եզյանի, Նիկողայոս Ատոնցի, Աշխարբեգ Քալանթարի, նույնիսկ ո՛չ լիովին հայ Նիկողայոս Մառի... աշխատությունները - Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, հայագիտության ամբիոնի վարիչ Մ. Էմինը բազմաթիվ աշխատությունների հեղինակ է, ինչպես, օրինակ, «Վեպք հնոյն Հայաստանի» (1850), «Մովսես Խորենացին և հայոց հին վեպերը» (1881), «Հայոց հեթանոսական կրոնի ընդհանուր տեսություն» (1864) և այլն:

Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր, Ռուսաստանի ԳԱ թղթակից անդամ Ք. Պատկանյանը ևս մեծ ներդրում ունի գիտության տարբեր բնագավառներում իր «Մի քանի խոսք հին հայկական ամսանունների մասին» (1871), «Վանի արձանագրությունները և դրանց նշանակությունը Առաջավոր Ասիայի պատմության համար» (1881), «Հետազոտություններ հայոց լեզվի կազմության մասին» (1864) և ուրիշ աշխատություններով:

Արևելյան լեզուների մագիստրոս, բանասեր, պատմաբան Կ. Եզյանի ներդրումն ավելի համեստ է. նա մի քանի աշխատության հեղինակ է, որոնցից լավագույնը կոչվում է «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» (1898, ռուսերեն):

Պետերբուրգի համալսարանի պրիվատ դոցենտ (1909-ից), բանա-

սիրության դոկտոր, պրոֆեսոր (1916), ականավոր պատմաբան, շուրջ 80 հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն գիտական աշխատությունների հեղինակ Նիկ. Ադոնցի անունը լայնորեն հայտնի է և երկար մեկնաբանությունների կարիք չունի: Բավական է հիշել միայն նրա «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (1908) կոթողային աշխատությունը:

Հայագետ, հնագետ, պատմաբան Աշխարհբեկ Քալանթարի աշխատությունները ևս արժանի ներդրում են հայագիտության բնագավառում՝ «Հնագիտություն» (մաս I, 1923), «Քարե դարը Հայաստանում» (1925), «Հին Վաղարշապատի պեղումները» (1935) և այլն:

Իսկ ահա հայագետ, արևելագետ, լեզվաբան, Նիկ. Մառը ոչ թե կիսով է հայ (ինչպես գրում է Շանթը), այլ ընդհանրապես հայ չէ. նրա հայրը շոտլանդացի էր, մայրը՝ վրացուհի: Դա չի խանգարել, իհարկե, որ նա մեծ ներդրում ունենա հայագիտության բնագավառում: Պետերբուրգի համալսարանի հայագիտության ամբիոնի պրիվատ դոցենտ էր (1891-ից), հայ-վրացական բանասիրության ամբիոնի վարիչ (1900), ակադեմիկոս (1909). նրա աշակերտներից էր Ն. Ադոնցը:

Էջ 524, տող 9-13: ... Խաչիկ Սամվելյան... Ալեքսանդր Երիցյան, Ստեփան Մալխասյան, Լեո, Միքայել Վարանդյան, Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Ա. Դո, Նիկոլ Աղբալյան... - Լ. Շանթի «Հայ բանահյուսությունը» աշխատության արժեքավոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հեղինակը լավ հայտնի անունների կողքին հիշատակում է տարբեր պատճառներով քիչ հայտնի կամ բոլորովին անհայտ հեղինակների, որոնք զգալի ներդրում ունեն հատկապես հայագիտության բնագավառում, օր.՝ Խաչիկ Սամվելյանը, Ալ. Երիցյանը, Միքայել Վարանդյանը և Ա. Դոն (վերջին անունը Շանթի երկերի Բեյրութի 2008 թ. հրատարակության Ը հատորում (էջ 429) գրված է Ա. Դրո ձևով):

Իրավագետ, պատմաբան, ազգագրագետ, բանագետ, մանկավարժ և թարգմանիչ Խ. Սամվելյանը հեղինակ է բազմաթիվ աշխատությունների՝ «Մ. Գոշի «Դատաստանագիրքը» և հայոց քաղաքացիական իրավունքը» (1911), «Հայ հին իրավունքի պատմություն» (1939), «Հին Հայաստանի կուլտուրան» (3 հ., 1931-41), «Խալդեական հասարակություն» (1938) և այլն:

Պատմաբան, հնագետ, մանկավարժ և հրապարակագիր Ալ. Երիցյանն առավելապես հայտնի է իր «Ամենայն հայոց կաթողիկոսները և

Կովկասի Հայք XIX դարում» (մաս 1-2,1894-95) աշխատությամբ:

Պատմաբան, փիլիսոփա, Հրապարակախոս Միք. Վարանդյանի (ՀովՀաննիսյան) աշխատությունները նոր-նոր միայն սկսել են տպագրվել Մայր Հայրենիքում: Նրա առավել Հայտնի գործերից են «Ամբոխային տրամադրություն» (1903), «Ավգուստ Բեբել» (1911), «Բողոքը նորա-գույն պատմության մեջ» (1911), «Համայնավարություն և Համաշ-խարՀային Հեղափոխություն» (1926), «Հ. 3. դաշնակցության պատ-մություն» (Հ. 1,1932, Հ. 2,1950):

Պատմաբան, տնտեսագետ-վիճակագիր, բանասեր Ա. Դոյի (ՀովՀ. Տեր- Մարտիրոսյան) աշխատությունները «Ազատագրական շարժումը Ռուսաստանում իր ծագման առաջին օրերից» (1908), «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» (1912), «Մեծ դեպքեր Վասպուրականում 1914–1915 թթ.» (1917), «Հայ-թուրքական ընդՀարումները Կովկա-սում» (1907), «Միք. Նալբանդյանի կյանքի Հետաքրքիր մի էջը և Բա-կունինի նրան գրած նամակները» (1908):

էջ 529, տող 9-10 ն.: ... ՀովՀաննես Թումանյանի նման՝ «Ես ալ Հայոց բանաստեղծն եմ» - «Ամենայն Հայոց կաթողիկոսին (Գևորգ V Սուրենյանցին - Ա.Մ.) դուր չէր եկել, որ Հայրիկը (ՀովՀ. Թումանյանը - Ա. Մ.) կառուցվող վեՀարանը դարձրել էր գաղթա-կանների ապաստան: Հետևյալ օրը Հայրիկին կանչում է իր մոտ բա-ցատրության՝ այդ ինքնակամ արարքի Համար. չէ՞ որ ինքն արգելել էր: Հայրիկի բացատրությունը չի գոՀացնում կաթողիկոսին, և նա զայրացած Հիշեցնում է. «Դուք գիտե՞ք, որ ես Ամենայն Հայոց կաթողի-կոսն եմ», Հայրիկն էլ պատասխանում է. «Գիտե՞ք, որ ես էլ Ամենայն Հայոց բանաստեղծն եմ» (Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Ե., 1987, էջ 126-27):

էջ 532, տող 15: Լեռենցն ու Համբարձում Համբարձում-յանը ... - Լեռենցը Հեղինակ է բանաստեղծական մի քանի ժողովա-ծուների՝ «Ազատ ժամեր» (1883), «Բանաստեղծություններ» (1890), «Նվագ և մեղեդի» (1895), ուր քննադատում է կյանքի անարդարու-թյունները, իսկ «Մարտում» ժողովածուն (1893) նվիրված է Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական շարժումներին:

Համբարձում Համբարձումյանը ծնվել է 1890-ին Կ.Պոլսում. աշխատակցել է «ՍուրՀանդակ» և «Ազատամարտ» թերթերին, եղել է եվրոպական մի քանի Հայտնի լրագրերի (օր.՝ Փարիզի «Յումանիտեի») թղթակիցը Կ.Պոլսում (Թեոդիկ, Հուշարձան նաՀատակ մտավորա-

կանության, Ե., 1990, էջ 39): Այլ աղբյուրից պարզվում է, որ նա եղել է Սիամանթոյի քրոջ՝ Զապելի ամուսինը: Սիամանթոն 1915- ի ամառանը աքսորից մոր գրած նամակներում մեկ-երկու անգամ հիշում է Համբարձումի անունը. նրանք աքսորի ճանապարհին եղել են միասին և բոլոր երևույթին միասին էլ նահատակվել են (Արևմտահայ գրողների նամականի, Ե., 1972, էջ 316,467):

Էջ 535, տող 1: ... Եվ «Արցունքի հովիտ» է իր գրականությունը... - Ահարոնյանի գրամայի վերնագիրն է (1902):

Էջ 537, տող 14: ... Ստեփան Տեր-Ավետիքյան, Առելյան և Ծուղուրյան - գրող, հրապարակախոս և հաս. գործիչ Ստ. Տեր-Ավետիքյանը հեղինակել է բավականին թվով գրքեր՝ «Սամիտարնի» (1897), «Նահատակը» (1898), «Զարաբաստիկ թուղթը» (1913), «Պատմվածքներ» (1912) և այլն, պաշտպանել է գյուղացիության շահերը, ներկայացրել գյուղական կյանքն իր սովորույթներով, զավեշտական ու ողբերգական կողմերով:

Ազարիա Առելյանը (Դանիելյան) իր ստեղծագործություններում («Տգիտության զոհեր», «Սկեսուր», «Ներհակ Առաքելը», «Նրա ցավը», «Հիվանդոտ խիղճը» և այլն) պատկերել է 19-րդ դ. 70-90-ական թթ. հայ գյուղի սոցիալական հակասությունները:

Գյուղագիր, մանկավարժ Հարություն քահանա Ծուղուրյանը հեղինակել է «Մոռացված աշխարհ» (3 հ., 1895-96), «Գյուղի այրին» (1902), «Զատոյի բախտի անիվը» (1908) և «Շիրինանց Նախշունը» (1911) գործերը: Սոցիալական չարիքը հայ գյուղից վերացնելու գործում (գոնե սկզբում) հույսը կապել է ժողովրդի ծոցից ելած մտավորականների և կրթված հոգևորականների հետ:

Էջ 537, տող 7-8 ն.: Պետք է հիշել Զուպարը, Արշալույս Մխիթարյանը, Սիմոն Շխյանը ... - գրող, հրապարակախոս Գևորգ Զուպարը հեղինակ է մի քանի գրքերի՝ «Վեպեր և պատկերներ» (1889), «Մահտեսի Սարգիս» (1905), «Իմ զրույցները» (1906), Արշ. Մխիթարյանը՝ «Դեպի Արարատ» (1904) գրքի, իսկ թարգմանիչ, մանկավարժ, գրող Ս. Շխյանը՝ «Մի մահ», «Անառակը» (1904) ստեղծագործությունների: Երեքն էլ գրեթե լիովին անհայտ անուններ են. և Շանթի աշխատությունը այն չատ փոքրաթիվ գործերից է, ուր դրանց կարելի է հանդիպել (օր.՝ լրագրող Արշ. Մխիթարյանի անունը որևէ հանրագիտարանում, բառարանում կամ տեղեկատուում գտնել չհաջողվեց):

Էջ 537, տող 5-6 ն.: Նկարիչ Գևորգ Պաշինջաղյան և

դերասան Միքայել Մանվելյան ... - Գևորգ Բաշինջաղյանը հեղինակել է «Նկարչի կյանքից» (1903) և «Էսքիզներ» (1913) ժողովածուները, իսկ Մ. Մանվելյանը՝ «Էսքիզներ» (1904), «Ուշ է» (1907), «Դեպի փայլող լույսը» (1909), «Ոստայն» (1912), «Հեքիաթ» (1914), «Հրաբուխ» (1915), «Դևերի քրքիջը» (1917) և ուրիշ ստեղծագործություններ:

Էջ 538, տող 3-6: ... Սիմակը... Ստեփան Լիսիցյան... Սարգիս Քամալյան, Լևոն Մելիք-Ադամյան և Սեյրի... - մանկավարժ, թարգմանիչ, կրթական-հասարակական գործիչ Սիմակը (Սենեքերիմ Սահակյան) 1901-ից սկսած մոտ 20 տարի աշխատել է Ներսիսյան դպրոցում՝ զուգահեռաբար զբաղվելով թարգմանչությամբ և ինքնուրույն գործեր գրելով, որոնք տպագրվել են ժամանակի մամուլում: Նրա պատմվածքների 2 ժողովածուները Երևանում տպագրվել են Շանթի այս աշխատության գրվելուց հետո, «Հասկերը»՝ 1955-ին, իսկ «Աղբյուրը»՝ 1958-ին:

Հատկանշական է, որ հեղինակը դրանք կոչել է մանկական 2 ամենասիրված հանդեսների անուններով:

Ստ. Լիսիցյանի մանկական պատմվածքները («Առավոտ», «Ալի», «Պաշտպանը», «Առաջին ձյունը», «Իմ հախից եկան», «Վանուշի Նոր տարին», «Վարդանի զոհաբերությունը, «Ինչպես Ամերիկա էինք գնում և չգնացինք», «Անվախ Սաքոն», «Երկու քույր» և այլն) հիմնականում տպագրվել են «Հասկեր» մանկական ամսագրում, ուր տպագրվել են նաև նրա հեքիաթները և ժողովրդական ավանդավեպերի մշակումները:

Գրող, մանկավարժ, թարգմանիչ և բանահավաք Ս. Քամալյանը հրատարակել է «Հեքիաթներ» (1882), «Ծովինար» (1893), «Ազգային առակներ» (1907) և «Սասունցի Հովնան» (1906) գրքերը, իսկ Լ. Մելիք-Ադամյանը գեղ. գրականության ասպարեզում հայտնի է իր թարգմանություններով. 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին թարգմանել է մոտ 10 ստեղծագործություն եվրոպական գրականությունից:

Բանաստեղծ, արձակագիր Սեյրին մանուկների համար հեղինակել է «Դերիկ կամ դեպի անմահություն» (1911), «Նոր վարժուհին» (1912) և «Դերձակի աշակերտը» (1913) ստեղծագործությունները:

Էջ 538, տող 9: Առանձին տեղ մը ունի Կարեն Միքայելյանը ... - արձակագիր, գրական գործիչ Կ. Միքայելյանը տարբեր թեմաներով

գրված բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակ է: Այստեղ խոսքը նրա առաջին՝ «Ջրկանքի հույզեր» (1907) ժողովածուի մասին է:

էջ 541, տող 4: Շրջանի կին վիպասանն է տիկին Խատիսյան ... - Մարիամ Խատիսյանը «Հեղինե» (1890), «Փեսա որոնողներ» (1894), «Նոր ճանապարհի վրա» (1894) և «Դժբախտ կին» (1899) վեպերում անդրադարձել է կանանց սոցիալական դրությանը և հասարակական դերին:

էջ 541, տող 17-18: ... Աչքի խնող երկ մըն է Համբարձում Առաքելյանի «Ջհուտ Քուչան»-ը - Համբ. Առաքելյանը 1913-18 թթ. խմբագրել և հրատարակել է «Մշակ» թերթը: Շահրիար կեղծանունով պատմվածքներ և վեպեր է տպագրել մամուլում: «Ջհուդ Քուչան» վեպը (1902) «ավելի ազգագրական հետաքրքրություն է ներկայացնում, քան գեղարվեստական» (Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Ե., 1979, էջ 724):

էջ 541, տող 13 ն.: Հյուրաբար մոտենալ չենք կրնար Ատրպետի վեպերուն... - Ատրպետը (Սարգիս Մուբայաջյան) հեղինակ է մի շարք վեպերի և վիպակների՝ «Ալմաստ» (1892), «Շինոց», «Ժառանգներ», «Քոռ Եղիկ» և այլն, ինչպես նաև բազմաթիվ պատմվածքների, որոնցից ամենահայտնին «Տժվժիկն» է:

էջ 542, տող 14-15: Միայն Լևոն Մանվելյանն էր բեմական ստեղծագործության այդ ինքնահատուկ սերն ու ներքին պահանջը ունեցողը... - Լ. Մանվելյանը գրել է բազմաթիվ դրամատիկական պոեմներ՝ «Գայլն և Միլտոն», «Փաթորիկ», «Դեպի վեր» (1902), «Սասունցի Դավիթ և Մսրա Մելիք» (հրատ. 1940), և ռեալիստական-հոգեբանական դրամաներ՝ «Նկարիչ Թաշճյան» (1903), «Դոկտոր Երվանդ Բոշայան» (1900), «Վերածնվածը» (1906), «Մագդա» (1913), ինչպես նաև «Տիգրանուհի» պատմադիցաբանական ողբերգությունը (1892):

էջ 542, տող 3-4 ն.: Աբել Ապրեսյանի «Մարվող ճրագները»՝ ժամանակակից քաղաքային կյանքե - Հրապարակախոս, մշակութային գործիչ Աբել Ապրեսյանը աշխատակցել է արևելահայ մամուլին և Կ.Պոլսի «Հայրենիք» օրաթերթին, 1881-ին Շուշիում տպագրել է Րաֆֆու «Խենթը», իսկ 1884-ին՝ Շիրվանզադեի «Հրդեհ նավթագործարանում» և «Գործակատարի հիշատակարանից» պատմվածքներն առանձին գրքով: 1910-12 թթ. Աստրախանում հրատարակել է «Մեր կյանքը» պարբերականը, 1913-ին նույն

քաղաքում նրա խմբագրությամբ լույս է տեսել «Հայ գրի և տպագրության մեծ տոնը» Հոբելյանական ժողովածուն: Բայց «Մարվող ճրագներ» դրամայի (1903) Հարցում Շանթը սխալվում է. այդ դրամայի Հեղինակը ոչ թե Ա. Ապրեսյանն է, այլ դրամատուրգ Ալեքսանդր Աբելյանը, Հեղինակը «Նշանվածներ» (1911), «Խնամատես» (1913) և այլ պիեսների: «Մարվող ճրագներ» դրաման 1903-ից սկսած բազմիցս ներկայացվել է Թիֆլիսում, Բաքվում, Երևանում և այլուր:

էջ 547, տող 15-16 ն.: Երևանի մեր Հայ Համալսարանը Հիմնված է 1920 Թվականին Հայ Հանրապետության ձեռքով ... - Շանթը նկատի ունի Հայաստանի առաջին Հանրապետությունը 1918-20 թթ.: Երևանում Համալսարան Հիմնելու օրենքը ընդունվել է 1919 թ. մայիսի 16-ին, վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի օրոք (Երևանի Համալսարան, Ե., 1995, էջ 58-59): Նախապատրաստական աշխատանքներից Հետո, դժվարին պայմաններում, ի վերջո 1920 թ. Հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի Առևտրական դպրոցում տեղի է ունեցել Համալսարանի Հանդիսավոր բացումը, ընդարձակ ճառով Հանդես է եկել Հանրային կրթության նախարար Նիկոլ Աղբալյանը: Համալսարանի առաջին ռեկտորն էր (տեսուչը) Յուրի Ղամբարյանը: 1920 թ. Հունիսի 21-ին նախարարների խորհուրդը որոշում է ընդունել Համալսարանը Երևան տեղափոխելու վերաբերյալ նրան Հատկացնելով Ուսուցչական սեմինարիայի շենքը Աստաֆյան փողոցում (այժմ Աբովյան փողոց): 1920 թ. դեկտեմբերի 28-ին` իշխանափոխությունից Հետո, նոր կառավարության լուսավորության ժողկոմ Ա. ՀովՀաննիսյանը Հրաման է արձակել Երևանի ժողովրդական Համալսարանի ստեղծման մասին (նույնը, էջ 283), և 1921-ի Հունվարի 23-ին տեղի է ունեցել նոր Համալսարանի բացման արարողությունը, ռեկտորն էր Հակոբ Մանանդյանը: Մինչև վերջերս Հենց 1921 թ. Հունվարի 23-ն էր Համարվում Երևանի Համալսարանի Հիմնադրման օրը, այսինքն խորՀրդային իշխանությունը Համալսարանի բացումը ներկայացնում էր որպես սեփական ձեռքբերում: Այսօր պատմական ճշմարտությունը վերականգնված է:

էջ 551, տող 5 ն.: ... Վաղինակ Նորենց... - պետք է լինի Վաղարշակ Նորենց:

էջ 552, տող 4-5 ն.: ... Պոսթոնի «Հայրենիքի» մեջ, թե՛ օրաթերթ և թե՛ մանավանդ ամսագիր - «Հայրենիք» ազգային. գրական, քաղաքական, Հասարակական շաբաթաթերթը, որը լույս

դարձել է երկօրյա, ապա՝ օրաթերթ, իսկ 1991-ից մինչ օրս՝ շաբաթաթերթ, սկսել է հրատարակվել 1899-ին: Ինչպես և «Հայրենիք» ամսագիրը (տե՛ս 677 էջի ծանոթագրությունը) մեծ աշխատանք է կատարել հայ մշակույթի, գիտության, տարագիր հայության համախմբման և ընդհանրապես հայապահպանության ասպարեզներում:

էջ 552, տող 3-4 ն.: Երկրորդ՝ Գահիրեի «Հուսաբեր» օրաթերթի մեջն ու շուրջը - «Հուսաբեր» ազգային, քաղաքական, տնտեսական և գրական օրաթերթը հրատ. է 1912-ից մինչ օրս: 1944-48 թթ. հրատարակվել է գրական, գեղարվեստական և գիտական ամսագիր նույն անունով:

էջ 552, տող 2 ն.: ...«Վեմ» ամսագրին կից... - տես 677 էջի ծանոթագրությունը:

էջ 552, տող 1-2 ն.: Եվ չորրորդ՝ Թեհրան, ուր կհրատարակվեր «Ալիք» օրաթերթը, «Լույս» ամսագիրը, «Նոր հասկեր»... - «Ալիք» քաղաքական, հասարակական, գրական-գեղարվեստական շաբաթաթերթը, ապա օրաթերթը լույս է տեսնում 1931-ից մինչ օրս (փոքրիկ ընդհատումներով):

«Լույս»՝ ժողովածու գրականության և գիտական, հրատ. է 1943-45 թթ.:

«Նոր հասկեր» մանկական-պատանեկան պատկերազարդ երկշաբաթյա հանդես լույս է տեսել 1935-36 թթ.:

էջ 553, տող 15-17 ն.: ... Ռուբեն Պերպերյանի գեղեցիկ գրքերը Միքայել Նալբանդյանի ու Գամառ-Քաթիպայի կյանքն ու գործը նկարագրող - Նանթը նկատի ունի Ռ. Բերբերյանի «Միքայել Նալբանդյան» («Հայրենիք» ամսագիր, 1929-30) և «Ռափայել Պատկանյան» («Հայրենիք», 1931, թթ. 1-3) աշխատությունները:

էջ 554, տող 9-10 ն.: ... Ինչպես Ռենն է ու Վաչե Վալատյանը իրենց վեպերուն մեջ - նկատի ունի Ռենի (Ռուբեն Վարդանյան) «Գնդակահարվածները», «Պոռնիկներ» և Վալադյանի «Ավետյաց երկիր», «Տախարիչչ Լյուբա» գործերը:

Անձնանունների բառարան*

Աբգար (մ.թ. I դար), Եդեսիայի թագավոր - 45, 64
Աբգար դպիր Թոխաթեցի (մոտ. 1520-1572), տպագրիչ, հասարակական-քաղաքական գործիչ -196
Աբեղյան Մանուկ (1865-1944), հայագետ, գրականագետ. լեզվաբան -524, 547
Աբլմսե (Աբլմսեհ), 6-րդ դ. հրեա նահապետ -99
Աբովյան Խաչատուր (1809-1848) -391, 392, 394, 487. 505, 557
Աբրահամ Անկյուրացի, Աբրամ Անկյուրեցի, 15-րդ դ. բանաստեղծ -154, 196
Աբրահամ Զենակեցի (Խոստովանող, Զենակացի), V դ. մատենագիր, թարգմանիչ -98
Աբրահամ կաթողիկոս, Աբրահամ Ա Աղբաթանեցի (ծն. թ. անհայտ - մոտ. 615), հայոց կաթողիկոս 607-ից - 107
Ագաթանգեղոս, V դարի առաջին հայ պատմիչը - 45, 50, 56, 164, 165, 174, 178
Ադամ, ըստ Աստվածաշնչի՝ Աստծու ստեղծած առաջին մարդը և մարդկության նախահայրը -171-173, 175, 298
Ադամյան Պետրոս (1849-1891), հայ հանճարեղ դերասան -416, 495
Ա. Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան, 1867-1954), պատմաբան, տնտեսագետ-վիճակագիր, բանասեր -524
Աթանաս Ալեքսանդրացի (295-373), հույն նշանավոր եկեղեցական գործիչ -98
Աժդահակ, պատմավիպական հերոս -68
Ալազան (Վահրամ Գաբուզյան, 1903-1966), խորհրդահայ գրող, գրական գործիչ -551
Ալամդարյան Հարություն (1796-1834), բանաստեղծ, կրոնական-հասարակական գործիչ, մանկավարժ -214. 216, 483

---

* Անձնանունների բառարանում ընդգրկված են Լեոն Շանթի աշխատության մեջ հանդիպող բոլոր անձնանունները. բացի այն դեպքերից. երբ անձնանունը համընկնում է գեղարվեստական ստեղծագործության վերնագրի հետ (կամ գտնվում է վերնագրի մեջ), և Շանթը նկատի ունի ստեղծագործությունը: Անունի հետ միասին բերվում են ծննդյան-մահվան թվականները (կամ դարը) և հիմնական զբաղմունքը (զբաղմունքները):

Ալեքսանդր II, Ռուսաստանի կայսր 1855 - 1881 թթ. - 490

Ալեքսանդր Մակեդոնացի (356-323 մ.թ.ա.), հին աշխարհի նշանավոր զորավար - 99, 347

Ալիշան Ղևոնդ (1820-1901), բանաստեղծ, բանասեր, պատմաբան-աշխարհագրագետ, հայագետ -202, 205, 215, 389, 390, 392, 394, 500

Ալփասլան (Ալեքսանդր Փանոսյան, 1859-1919), բանաստեղծ, դրամատուրգ -450

Ալփիար Հարություն (1864-1919), երգիծաբան, լրագրող -463

Ակինյան Ներսես (1883-1963), բանասեր, պատմաբան, ձեռագրագետ -448

Ահարոնյան Ավետիք (Ավետիս, 1866-1948), գրող, հաս.-քաղաքական գործիչ -534-536, 542

Աղաբեգյան Մարկոս (Աղաբեկյան, 1830-1908), հրապարակագիր, հասարակական գործիչ -492

Աղաթոն Մկրտիչ (1818-1890), հասարակական-քաղաքական գործիչ -410

Աղայան Ղազարոս (1840-1911) -392, 488, 505, 506

Աղանյան Գյուտ (Հարություն Տեր-Առաքելյան, 1866-1920), պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ, թարգմանիչ -521

Աղասի, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի գլխավոր հերոսը - 391

Աղբալյան Նիկոլ (1875-1947), բանասեր, գրականագետ, քննադատ, մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ -521, 524

Աճառյան Հրաչյա (1876-1953), լեզվաբան, բանասեր -208, 524, 547,

Աճեմյան Մկրտիչ (1838-1917), բանաստեղծ -426

Ամատունի Նապոլեոն, հասարակական-թատերական գործիչ -495

Ամիրդովլաթ Ամասիացի (1421/25-1496), միջնադարի նշանավոր բժիշկ -326

Այվազյան Աբրահամ (1846-1909), բանաստեղծ, բանասեր, մանկավարժ -425

Այվազյան Գևորգ (ծն.թ. անհայտ -1895), հրապարակագիր, հանրային գործիչ -414

Այվազովսկի Գաբրիել (1812-1880), գրող, թարգմանիչ, խմբագիր, կրթական, մշակութային, եկեղեցական գործիչ -419, 422

Այվազովսկի Հովհաննես (1817-1900), աշխարհահռչակ ծովանկարիչ -518
Այտընյան Արսեն (1825-1902), լեզվաբան-բանասեր, եկեղեցական-հասարակական գործիչ - 418, 424
Անանիա Նարեկացի (ծն. թ. անհայտ-978), փիլիսոփա, մատենագիր, մանկավարժ -107, 130
Անանիա Շիրակացի (7-րդ դ.), մաթեմատիկոս, աստղագետ, տոմարագետ, աշխարհագրագետ -105, 182, 183
Անդրանիկ Օզանյան (1865-1927) -553
Անտոնյան Արամ (1875-1952), գրող, պատմաբան, հրապարակախոս -462
Աշխարբեգ (Աշխարհբեկ) Քալանթար (1884-1942), հնագետ, հայագետ, պատմաբան -524
Ապե Փրևո (Աբբա Պրևո, Անտուան Ֆրանսուա դ՚Էքզիլ, 1697-1763), ֆրանսիացի գրող -421
Ապտուլ-Մեճիտ (Աբդուլ Մեջիդ), Թուրքիայի սուլթան 1839 - 61 թթ. - 399
Ապրեսյան Աբել (1860-մահ. թ. անհայտ), լրագրող, հրապարակախոս, մշակութային գործիչ -542
Առանձար (Միսաք Գույումճյան, 1877-1913), երգիծաբան -450
Առաքել, 17-րդ դ. բանաստեղծ -364
Առաքել Բաղիշեցի (մոտ. 1380-1454), բանաստեղծ, մատենագիր - 154
Առաքել Դավրիժեցի (ծն. թ. անհայտ-1670), պատմագիր - 194
Առաքել Սյունեցի (մոտ. 1350-1425), բանաստեղծ, փիլիսոփա, քերական, մանկավարժ -154
Առաքել վարդապետ (Առաքել Աբեղա Անեցի, Առաքել Աբեղա Շիրակավանցի, 12-13-րդ դդ.), թարգմանիչ -100
Առաքելյան Համբարձում (1855-1918), հրապարակախոս, հասարակական գործիչ, գրող -541
Առյուծ Մհեր, վիպական հերոս -312
Ասատ, թարգմանիչ (10-րդ դ.) -100
Ասդարտե (Աստարտե), սիրո աստվածուհին Ասորիքում -68
Աստղիկ, հայոց դիցարանի սիրո և գեղեցկության աստվածուհին - 68, 278
Աստղիկ (Գանթարճյան Ամպեր, 1852-1884), դերասանուհի և երգ-

չուհի, Սիրանույշի քույրը -416

Ավալյան Մկրտիչ (1850-1909), դերասան -495

Ատեյան (Ադեյան Ազարիա, 1871-1903), գյուղագիր -537

Ատոնց (Ադոնց) Նիկողայոս (1871-1942), պատմաբան, բյուզանդագետ, բանասեր -521, 524, 553

Ատրպետ (Սարգիս Մուբայաջյան, 1860-1937), գրող, հասարակական գործիչ -541

Արա Գեղեցիկ, Հայոց ավանդական արքաներից, պատմադիցաբանական հերոս -62, 67, 68

Արամ, Հայոց ավանդական արքաներից, պատմադիցաբանական հերոս - 62, 67, 68, 208, 375, 519

Արասխանյան Ավետիք (1857-1912), տնտեսագետ, հրապարակախոս, խմբագիր -520

Արարատյան Ալեքսանդր (1855-1885), գյուղագիր, դրամատուրգ, մանկավարժ - 507

Արգավան, վիպական հերոս - 69, 78

Արիստակես Լաստիվերտցի (Լաստիվերցի), 11-րդ դ. պատմիչ -169

Արիստոտել (384-322 մ.թ.ա.), հույն փիլիսոփա, գիտնական - 93, 97, 98

Արծրունի Գրիգոր (1845-1892), հրապարակախոս, հասարակական գործիչ, գրող - 493, 502, 508, 520

Արծրունի Սեննեքերիմ (1847-1918), թարգմանիչ, դրամատուրգ, թատերական գործիչ - 495

Արմեն Գարո (Գարեգին Փաստրմաջյան, 1872-1923), հասարակական-քաղաքական գործիչ -477

Արշակ II (ծն. թ. անհայտ-367 կամ 368), Հայոց արքա 350-367 թթ. -69, 80-82

Արշակներ, Հայոց արքաներ -313

Արշակյան Հերանուշ (1887-1905), բանաստեղծուհի - 451

Արշամ, ըստ Խորենացու՝ Եդեսիայի թագավոր (մ.թ.ա. I դ.-մ.թ. I դ.), Աբգար թագավորի հայրը -64

Արտաշես I, Հայոց արքա (թագ. 189-160թթ. մ.թ.ա.), վիպական հերոս -62, 68, 69, 73, 74, 77, 78

Արտաշեսներ, Հայոց արքաներ -313

Արտավազդ I, Հայոց արքա (թագ. մ.թ.ա. 160-115 թթ.), Արտաշես I-ի որդին, վիպական հերոս -69

Արտավազդ II, Հայոց արքա (թագ. մ.թ.ա. 55-34 թթ.), Տիգրան Մեծի որդին, դրամատուրգ -22
Արտեւան (Արտավան), Պարսկաստանի վերջին Արշակունի արքան (սպանվել է 226 թ.) - 81
Արուսյակ Փափազյան (1841-1907), դերասանուհի -416
Արփիարյան Արփիար (1851-1908), գրող, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ - 446, 471
Ափրիկիանոս, մ.թ. III դ. հույն պատմագիր - 62

Բագրատունի Արսեն (1790-1869), բանաստեղծ, լեզվագետ, թարգմանիչ -201, 205, 208
Բագունց (Բակունց)Ակսել (1899-1937) -551
Բարդուղիմեոս առաքյալ, Քրիստոսի տասներկու առաքյալներից, քրիստոնեություն է տարածել Հայաստանում մ.թ. I դարում -45
Բարթողիմեոս եպիսկոպոս (14-րդ դ.), ունիթոր թարգմանիչ -189
Բարղամ ճգնավոր, վիպական հերոս -100
Բարսեղ Կեսարացի (Բարսեղ Մեծ, Բարսեղ Սրբազան, 329-379), հույն մատենագիր, եկեղեցական նշանավոր գործիչ -98
Բել, ասորական աստված, վիպական հերոս -67
Բենետիկտոս (Բենեդիկտոս), կաթոլիկ աստվածաբան -99
Բորյան Գուրգեն (1915-1971), խորհրդահայ գրող -551
Բրյուսով Վալերի (1873-1924), ռուս բանաստեղծ, թարգմանիչ, հասարակական-մշակութային գործիչ -519
Բուդդա, բուդդայական կրոնի հիմնադիրը (մ.թ.ա. VI-V դդ.) -100

Գագիկ Արծրունի (879-մոտ. 943), Վասպուրականի թագավոր 908-ից -107
Գալֆայան Խորեն, Նարպեյ (1831-1893), բանաստեղծ, դրամատուրգ, մանկավարժ -419, 430, 431
Գամառ-Քաթիպա, տե՛ս Պատկանյան Ռափայել:
Գարագաշյան Երանուհի (1848-1924), դերասանուհի -416, 495
Գարագաշյան Մատաթիա (1818-1903), պատմաբան, փիլիսոփա, լեզվաբան -448
Գարագաշյան Վիրգինիա (1856-1933), դերասանուհի -416, 495
Գարա-Մուրզա (Կարա-Մուրզա Քրիստափոր, 1853-1902), կոմպո-

զինվոր, խմբավար, երաժշտական-հասարակական գործիչ, բանահավաք - 518
Գյուլխանդանյան Աբրահամ (1875-1946), հասարակական-քաղաքական գործիչ - 553
Գողիաթ, աստվածաշնչյան հերոս - 312, 316
Գոչար (Քոչար Հրաչյա, 1910-1965) - 551
Գրիգոր Դարանաղցի (մոտ. 1576-1643), եկեղեցական գործիչ, պատմագիր -196
Գրիգոր Զոհրապ (1861-1915) -457-459
Գրիգոր Լուսավորիչ (մոտ. 239-325) -47-49, 50, 52, 54, 55, 64, 170, 172
Գրիգոր Տաթևացի (Խլաթեցի, 1349-1425), գրող, աստվածաբան, փիլիսոփա, ուսուցչապետ -154, 160, 172
Գրիգոր Մագիստրոս Պահլավունի (980/990-1058), գրող, մանկավարժ, քաղաքական գործիչ - 84, 99, 107, 146, 147, 164
Գրիգոր Նազիանզացի (մոտ. 330-390), հույն աստվածաբան, գրող, -98
Գրիգոր Նարեկացի (951-1003) -132-137, 143-145, 149, 277, 329, 343, 359, 374, 556
Գրիգոր պապ, Գրիգոր Ա, Գրիգոր Մեծ (մոտ. 540-604), Հռոմի պապ 590-ից -99
Գրիգոր վարդապետ Սանահնեցի (ծն.թ. անհայտ - 1221), մատենագետ, կրոնական գործիչ -184
Գրիգոր Վկայասեր (ծն.թ. անհայտ - 1105), թարգմանիչ, խմբագիր, եկեղեցական գործիչ, հայոց կաթողիկոս 1066-ից -99, 105, 160
Գրիգոր Տաթևացի (1346-1409), փիլիսոփա, աստվածաբան, գիտնական, ուսուցչապետ -106, 173
Գրիգոր Տղա (մոտ. 1133-1193), բանաստեղծ, աստվածաբան, կրոնական գործիչ, հայոց կաթողիկոս 1173-ից -153
Գրիգոր (Գրիգորիս) Աղթամարցի (մոտ. 1490-1544), բանաստեղծ, եկեղեցական գործիչ, Աղթամարի կաթողիկոս 1512-ից -353, 359, 360, 519
Գուլամիրյան Սիմեոն (1857-1899), խմբագիր-հրատարակիչ «Արաքս» հանդեսի - 521

Գևորգ Դպիր (Գևորգ Հովհաննիսյան, Պալատեցի, 1737-1811), գիտնական, լեզվագետ, մանկավարժ, թարգմանիչ - 207

Դանիել կաթողիկոս, Դանիել Ա Սուրմառեցի (ծն. թ. անհայտ - 1808), Հայոց կաթողիկոս 1801-1802 և 1807-1808 թթ. -210
Դանիել Վարուժան (1884-1915) -451, 453, 454
Դավթակ Քերթող, 7-րդ դ. բանաստեղծ -117, 169
Դավիթ (մ.թ.ա. մոտ. 1020-950), Հուդայի և Իսրայելի թագավոր մ.թ.ա. մոտ. 990-ից -312, 316
Դավիթ Անհաղթ (V-VI դդ.), փիլիսոփա, ճարտասան -93, 107, 181, 187
Դավիթ կաթողիկոս, Դավիթ Ե Էնեգեթցի (ծն. թ. անհայտ - 1817), Հայոց կաթողիկոս 1801-1807թթ. -210
Դավիթ Հերքացի (Հարքացի), 6-րդ դ. փիլիսոփա, աստվածաբան, թարգմանիչ -98
Դավիթ Սալնաձորեցի (Սալաձորեցի, Որբիկ), 17-րդ դ. բանաստեղծ -363, 364
Դարբինյան Արտաշես (Չիլինգարյան Արտաշես, Դարբինյան Ռուբեն, 1883-1968), հասարակական-քաղաքական գործիչ -521, 553
Դեմիրջյան (Դեմիրճյան) Դերենիկ (1877-1956) -551
Դեմոսթենես (384-322 մ.թ.ա.), հույն հռետոր, քաղաքական գործիչ -203
Դիոնիսիոս Արիսպագացի (Արիոպագացի, մ.թ. 1 դար), Աթենքի առաջին եպիսկոպոսապետը, աստվածաբան, մատենագիր -99, 194
Դիոնիսիոս Թրակացի (մ.թ.ա. 170-90), հույն քերական -98
Դոդոխյան Գևորգ (1830-1908), բանաստեղծ -485
Դրաստամատ, ներքինապետ, պատմավիպական հերոս -81, 82
Դուրյան Եղիշե (1860-1930), եկեղեցական գործիչ, բանասեր, բանաստեղծ, Պետրոս Դուրյանի եղբայրը -448, 451
Դուրյան Պետրոս (1851-1872) -427-430, 452, 454

Եզյան Կարապետ (1835-1905), բանասեր, պատմաբան -524
Եզնիկ Կողբացի (մոտ. 380-450), փիլիսոփա, թարգմանիչ -95, 106
Եզովբոս (Եզովպոս, Եզոպոս, մ.թ.ա. VI դար), հույն առակագիր -161

Եկմալյան Մակար (1856-1905), կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ -518

Եհովա, Հուդայականության գերագույն աստվածը -127

Եղիշե (մոտ. 410/415-470/475), պատմիչ, եկեղեցական գործիչ -105, 159, 165-167, 178

Եսայան Զապել (1878-1943), գրող, թարգմանիչ, հրապարակախոս - 469, 470

Եսայի Սասնեցի (Նչեցի, 1260-1338), մատենագիր, մեկնիչ, քերական, րաբունապետ -106

Եվա, աստվածաշնչյան հերոսուհի, Ադամի կինը -171-173, 175

Եվկլիդես (Էվկլիդես), մ.թ.ա. III դ. հույն մաթեմատիկոս -99

Եվսեբիոս (Եվսեվիոս) Կեսարացի (մոտ. 260-339), հույն պատմագիր -98

Եվրիպիդես (Եվրիպիդես, մ.թ.ա. 480-406), հույն ողբերգակ -203

Երեմիա Չելեպի (Քյոմուրճյան, 1637-1695), գրող, պատմաբան, թարգմանիչ -196

Երիցյան Ալեքսանդր (1841-1902), պատմաբան, հնագետ -524

Երվանդ Թագավոր, Երվանդ IV (թագ. մոտ. 208-189 մ.թ.ա.), Հայոց արքա -70, 79

Եփրատ Զգոն պարսիկ (Ափրահատ, III-IV դդ.), պարսիկ հեղինակ, կրոնական գործիչ -98

Եփրեմ Ասորի (306-373), հույն (կամ ասորի) եկեղեցական գործիչ, բանաստեղծ, աստվածաբան, մեկնիչ -98

Զանգի ամիրա (12-րդ դար), Հալեպի մահմեդական կառավարիչը - 153

Զարդարյան Ռուբեն (1874-1915), գրող, խմբագիր, հրապարակախոս -465, 467

Զարիֆյան Մաթևոս (Մատթեոս, 1894-1924), բանաստեղծ -451

Զարյան Կոստան (1885-1969), գրող հրապարակախոս, հասարակական գործիչ -554

Զարյան Նաիրի (1900-1969) -551

Զաքարյան Զաքարիա, Զաքարե Բ Մեծ (ծն. թ. անհ. - 1212), իշխան, զորավար, պետական-քաղաքական գործիչ -89

Զաքարյան Իվանե (ծն. թ. անհ. - 1227), իշխան, զորավար, քաղաքական գործիչ - 89

Զաքարիա կաթողիկոս, Զաքարիա Ա Զագեցի (ծն. թ. անհայտ - 876), Հայոց կաթողիկոս 855-ից -105
Զաքարիա Սարկավագ Քանաքեռցի (1626-1699), պատմիչ, մատենագիր -194
Զենոբ Գլակ (IV դար), ասորի եպիսկոպոս, պատմիչ -170
Զորյան Ստեփան (1889-1967) -551
Զևս, հունական դիցարանի գերագույն աստվածը -135

Էտուարդ Հյուրմյուզ (Հյուրմյուզյան Էդուարդ, 1799-1876), բանասեր, պատմաբան -203
Էմինյան (Հովսեփ Էմին, 1726-1809), ազգային-ազատագրական շարժման գործիչ -211
Էսխիլես (Էսքիլես, մ.թ.ա. 525-456), հույն ողբերգակ -203
Էքշյան Ստեփան (1834-1901), դերասան, թատերական գործիչ - 416

Թադեոս առաքյալ, Քրիստոսի տասներկու առաքյալներից, որը մ.թ. I դարում քրիստոնեություն է քարոզել Հայաստանում-45, 54
Թաղիատյան (Թաղիադյան) Մեսրոպ (1803-1858), գրող, կրթական-մշակութային գործիչ -211-213
Թասսո (Տասսո Տորկվատո, 1544-1595), իտալացի բանաստեղծ -203
Թեոդորյան Սարգիս (1783-1877), Մխիթարյան միաբանության վարդապետ -419
Թերզյան Թովմաս (1840-1909), բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ -426, 428, 429
Թլկատինցի (Հովհաննես Հարությունյան, 1860-1915), գրող, մանկավարժ, հասարակական գործիչ -465-467
Թղլյան Սրապիոն (1840-1913), դրամատուրգ, թատերական գործիչ, մանկավարժ -430
Թոսպատ (Տիգրան Թոսպատյան, 1852-1914-ից հետո), դերասան - 416
Թովմաճյան Եղիա (1777-1848), բանասեր, թարգմանիչ -203
Թովմա Արծրունի, 10-րդ դ. պատմիչ -168, 169
Թովմա Աքվիտանացի (Աքվինացի, 1225-1274), իտալացի աստվածաբան, փիլիսոփա -194, 348

Թովմա Մեծոփեցի (1378-1446), պատմիչ, մանկավարժ, քերական - 172, 173,
Թորոմանյան (Թորամանյան Թորոս, 1864-1934), ճարտարապետ - 518
Թրյանց Դավիթ (1840-1898), կատակերգակ դերասան -416
Թումանյան Հովհաննես (1869-1923) -223, 488, 519, 522, 523, 528-531, 537, 538

Իշտար, բաբելա-ասորեստանյան սիրո և պտղաբերության աստվածուհին -68
Ինճիճյան Ղուկաս (1758-1833), բանասեր -202, 215
Ինտրա (Ինդրա), հնդկական դիցարանի գերագույն աստվածը -316
Ինտրա (Տիրան Չրաքյան, 1875-1921), բանաստեղծ, քննադատ, տեսաբան -451, 452
Իսահակյան Ավետիք (1875 - 1957) - 519, 528-531, 537, 540
Իրազեկ (Տեր-Հակոբյան Հակոբ, 1881-1960), գրող, հասարակական գործիչ, բանասեր, պատմաբան, մանկավարժ -553

Լալայան Երվանդ (1864-1931), ազգագրագետ, բանահավաք, բանագետ -228, 281, 520
Լամարդին (Լամարթին Ալֆոնս, 1790-1869), ֆրանսիացի բանաստեղծ, պատմաբան, քաղաքական գործիչ -421
Լեյլի (Փառանձեմ Սահակյան-Տեր-Մկրտչյան, 1892-1951), բանաստեղծուհի, թարգմանչուհի -531
Լենկ Թիմուր (Լենկթեմուր, Լենկ Թեմուր, Թամեռլան, 1336-1405), միջինասիական զորավար, նվաճող -170, 172, 185, 186, 321
Լեո (Առաքել Բաբախանյան, 1860-1932), գրող, բանասեր, պատմաբան -505, 506, 524
Լեռնենց (Ավետիս Նազարբեկյան, 1866-1939), բանաստեղծ -532
Լեռ Կամսար (Արամ Թովմասյան, 1885-1965), գրող-երգիծաբան - 551
Լիսիցյան Կատարինե (1863-1957), մանկավարժ, խմբագիր, Ստ. Լիսիցյանի կինը -520
Լիսիցյան Ստեփան (1865-1947), բանասեր, մանկավարժ, պատմաբան, ազգագրագետ -520, 538

Լևոն II Մեծագործ, Կիլիկիայի իշխան (1187-ից) և թագավոր (1198-1219) -107
Լևոն Մեսրոպ (Մեսրոպյան, 1880-1960), գրող, բանասեր -479

Խաչատուր Կեչառեցի (մոտ. 1260-1331), բանաստեղծ, եկեղեցական գործիչ -154, 347
Խաչատուր վարդապետ Ջուղայեցի, 18-րդ դ. պատմիչ -195
Խաչիկ կաթողիկոս, Խաչիկ Ա Արշարունեցի (ծն. թ. անհայտ - 992), Հայոց կաթողիկոս 973-ից - 107
Խատիսյան Ալեքսանդր (1874-1945), հասարակական-քաղաքական, պետական գործիչ -553
Խատիսյան Մարիամ (1845-1914), գրող, հասարակական գործիչ - 541
Խնկոյան Աթաբեգ (Աթաբեկ, Խնկո-Ապեր, 1870-1935), բանաստեղծ, առակագիր, թարգմանիչ -532
Խոսրով Անձևացի (ծն. թ. անհայտ – մոտ. 964), եկեղեցական գործիչ, մատենագիր, Գր. Նարեկացու հայրը -105
Խոսրով Հռետոր, Խոսրովիկ Թարգմանիչ, VIII դ. մատենագիր, աստվածաբան, թարգմանիչ -107
Խրիմյան Մկրտիչ (1820-1907), եկեղեցական, հասարակական գործիչ, գրող, Հայոց կաթողիկոս 1892-ից -203, 413, 438, 439

Ծերենց (Հովսեփ Շիշմանյան,1822-1888), վիպասան, հասարակական գործիչ- 310, 423, 433, 434

Կալիստինես (Կալիսթենես Ողյունթացի), մ.թ. II-III դարերի հույն հեղինակ -99
Կամսարական Տիգրան (1866-1944), գրող, հասարակական գործիչ -432, 503
Կապուտիկյան Սիլվա (1919-2005) -551
Կարապետ Սանահնեցի, անհայտ հեղինակ -105
Կիկերոն (մ.թ.ա. 106-43), հռոմեացի հռետոր, գրող, քաղաքական գործիչ -203
Կիրակոս Գանձակեցի (1200-1271), պատմիչ -172
Կյոթե (Գյոթե Յոհան Վոլֆգանգ, 1749-1832), գերմանացի գրող - 421

Կյուրեղ Ալեքսանդրացի (375-444), հույն մատենագիր, աստվածաբան, եկեղեցական գործիչ -99
Կյուրճյան Մելքոն, Հրանդ, (1859-1915), գրող, հրապարակախոս, մանկավարժ -440
Կողբացին, վիպական հերոս -318, 319
Կոմիտաս կաթողիկոս (ծն. թ. անհայտ - 628), հայոց կաթողիկոս 615-ից - 107, 115, 117, 124
Կոմիտաս (Սողոմոն Սողոմոնյան, 1869-1935) -518
Կոմս (Վահան Փափազյան, 1876-1973), ազգային-ազատագրական շարժման գործիչ -553
Կոմս Էմմանուել, տե՛ս Նալբանդյան Միքայել:
Կոստանդին Երզնկացի (մոտ. 1250-1328), միջնադարյան տաղերգու -281, 347, 350
Կոստանդին կաթողիկոս, Կոստանդին Ա Բարձրաբերդցի (1180-ական թթ. - 1267), հայոց կաթողիկոս 1221-ից -105
Կոստանդյան Գալուստ (1840-1898), պատմաբան, փիլիսոփա, բնագետ, հասարակական գործիչ -421
Կոստանյան Կարապետ (1853-1920), հայագետ, բանասեր, մանկավարժ -328, 494, 499
Կորյուն (մոտ. 380-450), Մ. Մաշտոցի վարքագիրը -95, 166, 167, 174, 178
Կուրղինյան Շուշանիկ (1876-1927), բանաստեղծուհի -531

Հախվերդյան (Ախվերդյան) Գևորգ (1818-1861), բանասեր, տնտեսագետ, բժիշկ, հասարակական գործիչ -328
Հակոբյան Հակոբ (1866-1937), բանաստեղծ -532
Հաճյան Հակոբ (Գափառացի, 1828-1906), վիպասան -468
Համամ Արևելցի (Համամ Բագրատունի, Համամ Բարեպաշտ, Համամ-Գրիգոր, 9-րդ դար), մատենագիր, քերական, մեկնիչ -105
Համաստեղ (Համբարձում Կելենյան, 1895-1966), սփյուռքահայ գրող - 478, 479
Համբարձումյան Համբարձում (1890-1915), բանաստեղծ, հրապարակագիր -532
Համլետ (Համլետ), Վ. Շեքսպիրի համանուն ողբերգության գլխավոր հերոսը -294
Հայկ, Հայ ժողովրդի անվանադիր նախնին -62, 64, 67, 375, 519

Հայկունի Արմենակ (Համբարձում Ճիզմեչյան, 1835-1866), գրող, թարգմանիչ, հրապարակախոս -431
Հաֆըզ (Հաֆիզ, Հաֆեզ, մոտ. 1325-1390), պարսիկ բանաստեղծ - 336
Հեթում Առաջին (1213-1270), Կիլիկիայի թագավոր 1226-1269 թթ. -171
Հերակլ (575-641), Բյուզանդիայի կայսր 610-ից -177
Հերակլ Երկրորդ (1720-1798), Վրաստանի թագավոր 1744-ից -378
Հեքիմյան Սրապիոն (1832-1892), բանաստեղծ, դրամատուրգ, թատերական գործիչ -209, 415, 428, 429
Հյուկո (Հյուգո) Վիկտոր (1802-1885), ֆրանսիացի գրող -421
Հոբ Երանելի, աստվածաշնչյան հերոս -96, 105
Հոմերոս (մ.թ.ա. 9-րդ դ.), հույն բանաստեղծ -70, 203, 205
Հովակիմ աղա, գրական հերոս («Վերք Հայաստանի») -391
Հովասափ, վիպական հերոս -100
Հովհան Մամիկոնյան, 7-րդ դ. պատմիչ -170
Հովհան Մայրագոմեցի (մոտ. 572-650), եկեղեցական գործիչ, փիլիսոփա, աստվածաբան, մատենագիր -105, 107
Հովհան Մանդակունի (մոտ. 420-490), հայոց կաթողիկոս 478-ից, բանաստեղծ, աստվածաբան, մատենագիր -104, 105
Հովհան Ոսկեբերան (մոտ. 346-407), հույն եկեղեցական գործիչ, հռետոր, աստվածաբան - 98
Հովհան Որոտնեցի (1315-1386), աստվածաբան, փիլիսոփա, մատենագիր, ուսուցչապետ -106
Հովհան Վանանդեցի (1772-1841), կլասիցիստ գրող, բանասեր, բանաստեղծ -207, 212
Հովհաննես, 17-րդ դ. բանաստեղծ -363
Հովհաննես ավետարանիչ, Քրիստոսի տասներկու աշակերտներից և չորս Ավետարաններից մեկի հեղինակը -99
Հովհաննես կաթողիկոս, Հովհաննես Ե Դրասխանակերտցի (845 850- մոտ. 929), պատմիչ, եկեղեցական գործիչ, հայոց կաթողիկոս 898-ից -107, 168
Հովհաննես Երզնկացի (Պլուզ, 1220/ 1230-1293), բանաստեղծ, մատենագիր, փիլիսոփա -154, 281, 282, 347, 348, 350
Հովհաննես Թլկուրանցի, 14-15-րդ դդ. քնարերգու -281, 353, 355, 357

Հովհաննես Կլիմաքս (Կլիմաքս, Հովհաննես Սինայեցի, 525-609), հույն հեղինակ, մատենագիր -99
Հովհաննես Կոզեռն (Տարոնացի, 11-րդ դ. առաջին կես), դիտնական, տոմարագետ, պատմիչ -105
Հովհաննես Հոլով (1635-1691), քերական, թարգմանիչ, եկեղեցական գործիչ -197
Հովհաննես Մկրտիչ, Հովհաննես Կարապետ (մ.թ.ա. 1- մ.թ. 31), Քրիստոսին Հորդանանում մկրտողը -105, 217
Հովհաննես Մրքուզ (Ջուղայեցի, 1643-1715), փիլիսոփա, թարգմանիչ, նկարիչ, եկեղեցական գործիչ -195
Հովհաննես Շահխաթունի (Շահխաթունյան, 1799-1849), եկեղեցական գործիչ, բանասեր, պատմաբան -213
Հովհաննես Սարկավագ (Իմաստասեր, 1045/ 1050-1129), բանաստեղծ, պատմաբան, փիլիսոփա, տոմարագետ -144, 173
Հովհաննես Տերոյենց (Զամուռճյան, 1801-1888), բանասեր, թարգմանիչ, հրապարակախոս -407
Հովհաննեսյան (Հովհաննիսյան) Աբգար (1849-1904), հրապարակախոս, թարգմանիչ, հասարակական գործիչ - 494
Հովհաննեսյան (Հովհաննիսյան) Հովհաննես (1864-1929), բանաստեղծ -497, 503, 504
Հովնան, աստվածաշնչյան մարգարե -120
Հովսեփոս Փլավիոս (37/38-95), հրեա պատմագիր -197
Հոփ, Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթների նորվեգացի տեսուչը -444
Հրանդ, տե՛ս Կյուրճյան Մելքոն :
Հրանդ Ասատուր (Հրանտ Ասատուրյան, 1862-1928), գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս-քննադատ -460
Հրանուշ (Թագուհի-Հերանույշ, 1854-1890), դերասանուհի -416
Հրաչյա (Ազնիվ Գարայան, 1853-1920), դերասանուհի -416, 495
Հուդա, Քրիստոսի 12 աշակերտներից մեկը և նրան մատնողը - 345
Հուլագու (Հուլավու, 1217-1265), մոնղոլ զորավար, նվաճող, պետական գործիչ -172
Հուլիոս Կեսար (100-44 մ.թ.ա.), հռոմեացի քաղաքական գործիչ, պատմագիր -203
Հունանյան Վարդան, լատին քարոզիչների հայ հետևորդ -197

Ղազար Սեբաստացի, 17-րդ դ. բանաստեղծ -363
Ղազար Փարպեցի (440/ 443-6-րդ դ. սկիզբ), պատմիչ -50, 51, 165-167, 178
Ղազիկյան Արսեն (1870-1932), մատենագիր, թարգմանիչ, բանասեր -447
Ղևոնդ Երեց, Ղևոնդ վարդապետ, 8-րդ դ. պատմիչ -168, 177

Ճամի (Ջամի, 1414-1492), պարսիկ բանաստեղծ -336
Ճանիկյան Հովսեփ (1840-1902), բանահավաք-ազգագրագետ, գրող -277
Ճոյա (Ջոյա Մելխիոր), փիլիսոփա -407
Ճուղուրյան Հարություն (1864-1938), գյուղագիր, մանկավարժ -537

Մաթեոս Ուռհայեցի (Մատթեոս Ուռհայեցի, 11-րդ դ. II կես - մոտ. 1144), պատմիչ -171, 172
Մալխաս (Արտաշես Հովսեփյան, 1877-1962), գրող, հասարակական գործիչ -477, 478
Մալխասյան Ստեփան (1857-1947), բանասեր, լեզվաբան, բառարանագիր -524, 547
Մահարի Գուրգեն (1903-1969) -551
Մաղաքիա Աբեղա, 13-րդ դ. պատմիչ -172
Մաղաքյան Պետրոս (1826-1891), դերասան, բեմադրիչ -416
Մամբրե Վերծանող, V դ. թարգմանիչ, մատենագիր, փիլիսոփա -105
Մամիկոնյան Վահան (Գայլ Վահան, մոտ. 440-6-րդ դ. I քառորդ), Հայաստանի մարզպան 484-ից -165
Մամուրյան Մաթեոս (Մատթեոս, 1830-1901), գրող, թարգմանիչ, հրապարակախոս - 414, 423, 432
Մանանդյան Հակոբ (1873-1952), պատմաբան -547
Մանտինյան (Մանդինյան) Սեդրակ (1844-1915), դերասան, բեմադրիչ, թարգմանիչ, մանկավարժ -494, 495,
Մանվելյան Լևոն (1864-1919), գրող, բանասեր -542
Մանվելյան Միքայել (1877-1944), դերասան, դրամատուրգ, արձակագիր -537, 543
Մաշտոց կաթողիկոս (Մաշտոց Ա Եղիվարդեցի, ծն. թ. անհայտ - 898), Հայոց կաթողիկոս 897-ից -107

Մառ Նիկողայոս (1864-1934), արևելագետ, հայագետ, լեզվաբան - 524
Մատաթյան (Մադաթյան Պետրոս, Սեյադ, 1810-1876), աշուղ -377
Մարիամ Աստվածածին, Հիսուս Քրիստոսի մայրը -390
Մարի - Նվարդ (1853-1885), դերասանուհի -416
Մարկիոս (Մարկիոն, մ.թ. II դար), գնոստիկյան աղանդավոր -106
Մարտիրոս Խարբեդցի, 17-րդ դ. բանաստեղծ -364
Մար Աբաս Կատինա, մ.թ. II կամ III դ. պատմագիր -62, 63
Մեզպուրյան Մկրտիչ (1834-1911), բանաստեղծ, մանկավարժ -425
Մելիք-Ադամյան Լևոն (1859-1930-ական թթ.), դերասան, թարգմանիչ, բանասեր- 538
Մեսիա, տե՛ս Քրիստոս:
Մեսրոպ Երեց Վայոցձորեցի, 10-րդ դ. վարքագիր, պատմագիր -170
Մեսրոպ Մաշտոց (361/ 362-440) -16, 58, 83, 95, 103, 105, 106, 115, 120, 121, 167, 170
Միլտոն Ջոն (1608-1678), անգլիացի բանաստեղծ, քաղաքական գործիչ -154, 203
Միդհատ փաշա (Միդհատ Ահմեդ, 1822-1883), թուրք քաղաքական և պետական գործիչ -410
Մինաս Թոխաթցի (Մինաս Թոխաթեցի), 16-րդ դ. բանաստեղծ - 154, 364
Մինաս Չերազ (1852-1929), բանաստեղծ, մշակութային և հասարակական գործիչ -424
Միսաք Մեծարենց (1886-1908) -451-453
Միսաքյան Խաչատուր (1815-1891), բանաստեղծ, արձակագիր - 431
Միրաքյան Վահան (1866-1942), բանաստեղծ -531
Միքայելյան Կարեն (1883-1942), գրող, թարգմանիչ -538
Մխիթար Այրիվանեցի (1230/ 1235-1297/ 1300), պատմագիր, բանաստեղծ, եկեղեցական գործիչ -173
Մխիթար Անեցի, 12-րդ դ. II կեսի պատմիչ - 173
Մխիթար Գոշ (մոտ. 1130-1213), առակագիր, օրենսգետ -162, 183, 184, 326
Մխիթար Հերացի (1120-1200), բժիշկ, թարգմանիչ -152, 325
Մխիթար Սասնեցի (մոտ. 1260-1337), պատմագիր, մանկավարժ - 105

Մխիթար Սեբաստացի (1676-1749), գիտամշակութային, եկեղեցական, հասարակական գործիչ, բառարանագիր -199, 200, 418
Մխիթարյան Արշալույս, լրագրող, գրող - 537
Մկրտիչ Էմին (1815-1890), բանասեր-գիտնական, մանկավարժ -228, 524
Մկրտիչ Նաղաշ (1390/1395-մոտ. 1475), բանաստեղծ, եկեղեցական գործիչ -281, 282, 333, 353
Մհեր (Փոքր Մհեր), վիպական հերոս -311
Մյուսե Ալֆրեդ դը (1810-1857), ֆրանսիացի գրող -421
Մնակյան Մարտիրոս (1837-1920), դերասան, երգիչ, բեմադրիչ -416
Մոլիեր Ժան Բատիստ (1622-1673), ֆրանսիացի դրամատուրգ -435, 436
Մոպասան Գի դը (1850-1893), ֆրանսիացի գրող - 458
Մովսես Կաղանկատվացի, 7-րդ դ. պատմիչ -169, 174, 177
Մովսես Խորենացի (մոտ. 410-V դ. վերջ), V դ. խոշորագույն պատմիչը -40, 41, 52, 56-66, 69, 70, 115, 122, 164, 165, 168, 174, 178, 183
Մսերյան Գրիգոր (1846-1893), թարգմանիչ, հրատարակիչ, հասարակական գործիչ -421
Մսերյան Մսեր (1808-1873), բանասեր, մշակութային գործիչ -213
Մսրա Մելիք, վիպական հերոս -311, 312, 315, 316, 318
Մուրատյան, հնդկահայ վաճառական -418
Մուրացան (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան, 1854-1908) - 538, 539, 542
Մուստաֆա Քեմալ (1881-1938), թուրք պետական-քաղաքական գործիչ -444

Նազարյան Ստեփանոս (1812-1879), բանասեր, լեզվաբան, հասարակական-մշակութային գործիչ -485, 486
Նալբանդյան Միքայել (1829-1866) -485, 486, 492, 497, 501, 502, 506, 553
Նալյան Հակոբ (1702-1764), մատենագիր, մանկավարժ, եկեղեցական գործիչ- 206
Նահապետ, տե՛ս Ղևոնդ Ալիշան :
Նահապետ Քուչակ, 16-րդ դ. բանաստեղծ -278
Նահապետյան Արշակ, մանկավարժ, մաթեմատիկոս, Ներսիսյան դպրոցի, Գևորգյան ճեմարանի տեսուչ -494

Նաղաշ Հովնաթան (1661-1722), տաղերգու, աշուղ, նկարիչ -328, 329, 366
Նաննա Ասորի սարկավագ, 9-րդ դ. մեկնիչ -99
Նավասարդյան Բագրատ (1852-1934), բժիշկ, հասարակական գործիչ -495
Նավասարդյան Վահան (1888-1956), տնտեսագետ, խմբագիր, հասարակական գործիչ -553
Նար-Դոս (Միքայել Հովհաննիսյան, 1867-1933) - 538-540, 543
Նարպեյ, տե՛ս Գալֆայան Խորեն:
Նեմեսիոս Եմեսացի (IV-V դդ.), հույն աստվածաբան, մատենագիր - 99
Ներսես Աշտարակեցի (1770-1857), եկեղեցական, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց կաթողիկոս 1843-ից -210, 214, 481, 483
Ներսես Լամբրոնացի (1153-1198), փիլիսոփա, թարգմանիչ, բանաստեղծ, երաժիշտ, հասարակական-քաղաքական գործիչ - 99, 105, 183
Ներսես Կլայեցի, Ներսես Շնորհալի (1100-1173), բանաստեղծ, երաժիշտ, եկեղեցական, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց կաթողիկոս 1166-ից - 99, 105, 115, 118, 125, 126, 143, 147-149, 151-155, 160, 171, 329
Ներսես Մեծ, Հայոց կաթողիկոս 353-373 թթ. -170
Ներսես Պալենց (Պալիանենց, 14-րդ դ.), միարարական (ունիթոր) թարգմանիչ - 189
Նժդեհ (Գարեգին Տեր-Հարությունյան, 1886-1955), զորավար, ռազմական-քաղաքական գործիչ -553
Նիզամի (1141-1209), պարսիկ բանաստեղծ, մտածող -336
Նոյ, աստվածաշնչյան հերոս -64
Նոնոս (Նոննոս, IV-V դդ.), հույն մեկնիչ -99
Նորայր Բյուզանդացի (Գազեզյան-Ճիզմեչյան Ստեփան, 1844-1916), հայագետ, լեզվաբան -448
Նորենց Վաղարշակ (1906-1973), բանաստեղծ, արձակագիր -551
Նվարդ, վիպական հերոսուհի -68
Նուպարյան Մեսրոպ (1842-1929), թարգմանիչ, բառարանագիր, հրապարակախոս -421

Շահ-Աբաս I (1571-1629), պարսից շահ 1587-ից -186, 194
Շահամիրյան Շահամիր (1723-1797), ազգային-ազատագրական շարժման գործիչ -211
Շահան Նաթալի (Հակոբ Տեր-Հակոբյան, 1884-1983), գրող -450
Շահնազարյան Կարապետ (1814-1865), մշակութային և եկեղեցական գործիչ, հրատարակիչ -419
Շամիրամ, պատմական, դիցաբանական, վիպական հերոսուհի -68
Շապուհ Բագրատունի, 8-9-րդ դդ. պատմիչ -168, 176
Շապուհ II, պարսից արքա 310-379 թթ. -80, 81
Շեքսպիր Վիլյամ (1564-1616), անգլիացի դրամատուրգ -495
Շիլլեր Ֆրիդրիխ (1759-1805), գերմանացի բանաստեղծ, դրամատուրգ, պատմաբան -495
Շիտանյան Արմեն (1870-1932), վիպասան -468
Շիրազ Հովհաննես (1914-1984) -551
Շիրվանզադե Ալեքսանդր (1858-1935) -538-542
Շխյան Սիմոն (1865-1947), թարգմանիչ, գրող, մանկավարժ, մշակութային գործիչ -537
Շմավոնյան Հարություն (1750-1796), խմբագիր, մշակութային-հասարակական գործիչ -211

Ողիսևս, դիցաբանական-գրական հերոս -292
Ոսկան Երևանցի (1614-1674), տպագրիչ -194

Ջամչյան Միքայել (1738-1823), պատմաբան, լեզվաբան, աստվածաբան -201, 202, 215
Ջարենց Եղիշե (1897-1937) -551
Ջափրաստ (Ջափրաստճյան Միքայել, 1848-1907), դերասան -416
Ջիլինգարյան Արտաշես, տե՛ս Դարբինյան Արտաշես:
Ջիլինկիրյան Գրիգոր (1839-1923), թարգմանիչ, հասարակական գործիչ -421
Ջիֆթե-Սարաֆ Օննիկ (1874-1932), արձակագիր -468
Ջմշկյան Գեորգ (Գևորգ, 1837-1915), դերասան -495
Ջյոկյուրյան Տիգրան (1884-1915), գրող, հասարակական գործիչ -469, 470

Չոպանյան Արշակ (1872-1954), բանաստեղծ, հրապարակախոս, բանասեր, թարգմանիչ -278, 280, 281, 328, 445, 446, 455, 456

Չուհաճյան Տիգրան (Չուխաջյան, 1837-1898), կոմպոզիտոր -417

Պալասանյան Ստեփան (1837-1889), բանասեր -494

Պալթազարյան (Պոլտազարյան) Ղուկաս (1810-1878), հրապարակախոս, հասարակական գործիչ -414

Պաղտասար Դպիր (1683-1768), բանաստեղծ, մանկավարժ -404

Պայծառ Ֆասուլյաճյան (1845-1920), դերասանուհի -416

Պայրոն (Բայրոն Ջորջ Գորդոն, 1788-1824), անգլիացի բանաստեղծ -203, 502, 503

Պաշինջաղյան Գևորգ (Բաշինջաղյան, 1857-1925), նկարիչ, գրող, հասարակական գործիչ - 537

Պասմաճյան Գրիգոր (1715-1791), գրող, եկեղեցական գործիչ, թարգմանիչ -207

Պատկանյան Գաբրիել (1802-1889), մանկավարժ, գրող, հասարակական գործիչ, Ռ.Պատկանյանի հայրը -485, 492, 505

Պատկանյան Ռափայել (1830-1892) - 394, 427, 486, 497, 499-501, 505, 509, 524, 553

Պատկանյան Սերովբե (1769-1836), բանաստեղծ, կրթական գործիչ, Ռ.Պատկանյանի պապը -213

Պատկանյան Քերովբե (1833-1889), արևելագետ, բանասեր, պատմաբան -524

Պարթևյան Սուրեն (1876-1921), գրող, հրապարակախոս -462

Պարոնյան Հակոբ (1843-1891) -414, 423, 433-437, 473, 474, 480, 513

Պեշիկթաշլյան Մկրտիչ (1828-1868) -209, 210, 216, 415, 425-429

Պեշիկթաշլյան Նշան (1896-1972), գրող, բանասեր, թատերական գործիչ -480

Պենկլյան Սերովբե (1835-1900), դերասան, երգիչ, բեմադրիչ -416, 417

Պեպո, գրական հերոս -393

Պետրոս Խափանցի (Ղափանցի, մոտ. 1700-1784), բանաստեղծ -404

Պետրոս Սյունեցի (Պետրոս Քերթող, ծն. թ. անհայտ - մոտ. 518), մատենագիր, թարգմանիչ, փիլիսոփա -105

Պերպերյան (Բերբերյան) Ռուբեն (1873 - 1942), կրթական-մշակութային գործիչ, բանասեր, գրականագետ - 553
Պիսիդ (Պիսիդես Գեորգիոս, Գեորգ Պիսիդացի), VII դ. բյուզանդացի բանաստեղծ -99
Պլատոն (427-347 մ.թ.ա.), հույն փիլիսոփա -99
Պլուտարգոս (Պլուտարքոս, մոտ. 45-120), հույն պատմագիր, փիլիսոփա, բարոյախոս -203
Պորփյուր Փյունիկեցի (232-301), հույն փիլիսոփա, տրամաբան -98
Պոշյան Պերճ (1837-1907) -392, 464, 488, 492, 505-507
Պրոմեթեոս (Պրոմեթևս), դիցաբանական հերոս - 135
Պուալո (Բուալո Նիկոլա, 1610-1684), ֆրանսիացի գրող, քննադատ, կլասիցիզմի տեսաբան -421

Ջիվանի (Սերովբե Լևոնյան, 1846-1909), աշուղ -377
Ջիվանշիր իշխան (Ջևանշեր, 637-670), Աղվանից երկրի իշխան - 117
Ջուպար (Գևորգ Ջուբար, 1864-1930), գրող, հրապարակախոս -537

Ռասին Ժան (1639-1699), ֆրանսիացի դրամատուրգ. -203, 421
Ռաբայելյան (Ռաֆայելյան), հնդկահայ վաճառական -418
Ռեն (Ռուբեն Վարդանյան, 1893-1958), գրող, խմբագիր -554
Ռոմանոս կայսր, Ռոմանոս I Լակապենոս (ծն. թ. անհայտ - 948), Բյուզանդիայի կայսր 920-944 թթ. -107
Ռուբեն (Մինաս Տեր-Մինասյան, 1882-1951), ազգային-ազատագրական շարժման գործիչ, գրող -450, 477
Ռուբեն Սևակ (1885-1915) -460, 461
Ռուսինյան Նահապետ (1819-1876), բանաստեղծ, հրապարակախոս. հասարակական գործիչ -424

Սաատի (Սաադի, 1203/ 1210-1292), պարսիկ բանաստեղծ -336
Սաթենիկ, վիպական հերոսուհի - 62, 68, 69, 74, 78
Սալահետտին (Սալահեդդին, Սալահ ադ Դին, 1138-1193), Եգիպտոսի սուլթան 1174-ից -154
Սալուստիոս (86-35 մ.թ.ա.), հռոմեացի պատմաբան -203
Սահակ Բագրատունի (ծն.թ.անհայտ - 482), իշխան, Հայաստանի մարզպան 481-482թթ. -58, 65

Սահակ Մռուտ Ապիկուրեղ (9-րդ դ.), Տայքի եպիսկոպոս -107

Սահակ Պարթև (348-439) -43, 47, 58, 95, 103, 105, 115, 121, 122

Սամվելյան Խաչիկ (1873-1940), իրավագետ, պատմաբան, բանագետ, մանկավարժ, թարգմանիչ -524, 547

Սամուել Անեցի (Սամուել Երեց, մոտ. 1100/1105-1185/1190), պատմիչ-ժամանակագիր -171

Սամուել Կամրջեցի (Կամրջաձորեցի, 10-րդ դ.), Կամրջաձոր վանքի երկրորդ առաջնորդը -107

Սայաթ-Նովա (1722-1795) -328, 378-384, 394-398, 519, 524, 556

Սանխո Փանչո (Սանչո Պանսա), գրական հերոս (Սերվանտես, «Դոն Կիխոտ»)- 317

Սասունցի Դավիթ, վիպական հերոս -311, 312, 314-319

Սարաֆյան Գ., վիպասան -468

Սարկավագ Բերդակցի, 16-րդ դ. բանաստեղծ - 363

Սեբեոս, 7-րդ դ. պատմիչ -167, 177

Սեղբեստրոս, III դ. Հույն եկեղեցական, Հայրապետ - 98

Սեյրի (Ավետիք Գույոյան, 1880-1920), բանաստեղծ, արձակագիր - 538

Սենեկա Կրտսեր (մ.թ.ա. 4-մ.թ. 65), Հռոմեացի փիլիսոփա, գրող, գիտնական -203

Սեպուհ (Արշակ Ներսիսյան, 1872-1940), ազգային-ազատագրական շարժման գործիչ, զորավար -553

Սերվիչեն (Սերովբե Վիչենյան, 1815-1897), բժիշկ, գրական-հասարակական գործիչ -410

Սիամանթո (Ատոմ Յարճանյան, 1878-1915) -451, 453-455, 462

Սիմակ (Սենեքերիմ Սահակյան, 1879-1961), մանկագիր, կրթական-հասարակական գործիչ -538

Սիմեոն Մոկացի (Սիմեոն Ապարանեցի, 1540-ական թթ. - 1614), բանաստեղծ, պատմագիր, մանկավարժ -154

Սիմոն Երևանցի (Սիմեոն Ա Երևանցի, 1710-1780), Հայոց կաթողիկոս 1763-ից -210

Սիպիլ (Զաբել Ասատուր, 1863-1934), գրող, մանկավարժ. հասարակական գործիչ -450, 451, 468

Սիսակ, նահապետ Հայկի սերնդից, Գեղամի որդին -174

Սիսակ Մանուկ (Տեր-Գրիգորյան, 1839-1897), դերասան -416

Սիրանուշ (Սիրանույշ, Մերոպե Գանթարճյան, 1857-1932), դերասանուհի -416, 495
Սմբատ Բյուրատ (Տեր-Ղազարենց, 1862-1915), գրող, մանկավարժ, հասարակական գործիչ -446, 468
Սմբատ Գունդստաբլ (Գունդստաբլ, 1208-1276), սպարապետ, պատմաբան, թարգմանիչ, օրենսգետ -171, 176, 325, 326
Սմբատ Շահազիզ (1840-1907), բանաստեղծ, մանկավարժ, հրապարակախոս - 485, 486, 492, 497, 502, 503
Սյու Էժեն (1804-1857), ֆրանսիացի գրող -421
Սոկրատ Սկոլաստիկոս (380-440), բյուզանդացի պատմիչ -98
Սողոմոն (մ.թ.ա. 975-928), Իսրայելի և Հուդայի թագավոր մ.թ.ա. 950-ից - 358
Սոֆոկլես (496-406 մ.թ.ա.), հույն դրամատուրգ -203
Սվաճյան Հարություն (1831-1874), գրող, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ -414
Սվաճյան Մարի, վիպասանուհի -468
Ստեփան Ոսկան (1825-1901), գրող, հրապարակախոս, թարգմանիչ, մանկավարժ -421, 423
Ստեփաննոս Ասողիկ (Տարոնեցի, 10-րդ դ. II կես - 11-րդ դ. I կես), պատմագիր -168
Ստեփաննոս Լեհացի (ծն.թ. անհայտ - 1689), աստվածաբան, փիլիսոփա, թարգմանիչ -194, 197
Ստեփաննոս Վարագեցի, 17-րդ դ. տաղերգու -363, 366
Ստեփաննոս վարդապետ, տե՛ս Ստեփաննոս Լեհացի:
Ստեփաննոս Տարոնցի, պատմիչ (Սեբեոսից առաջ) - 167
Ստեփաննոս Օրբելյան (մոտ. 1250-1305), բանաստեղծ, պատմագիր, եկեղեցական գործիչ -154, 173, 174
Ստրիկովսկի (Յոզեֆ Ստրժիգովսկի, 1862-1941), ավստրիացի արվեստի պատմաբան -518
Սրմաքեշխանլյան Երվանդ (Երուխան, 1870-1915), գրող, հրապարակախոս, մանկավարժ, թարգմանիչ -468
Սրվանձտյան Գարեգին (1840-1892), բանահավաք, բանագետ, գրող -228, 281, 305, 439, 440, 464
Սունդուկյան Գաբրիել (1825-1912) -380, 392, 393, 395, 494, 495, 541, 542, 557

Սուրյան Միսաք (1878-1930), դրամատուրգ -450
Սուքիասյան Արտաշես (1841-1895), դերասան -495
Սուքիասյան նահատակներ -45
Սքոտ Վալտեր (1771-1832), անգլիացի գրող -421

Վալատյան Վալատ (Վալադյան Վալադ, Վանեցյան Մկրտիչ, 1883-1974), գրող, քննադատ -554
Վահագն Վիշապաքաղ, հայոց դիցարանի կրակի, ամպի և քաջության աստվածը -70, 114, 278
Վահրամ Րաբունի, 13-րդ դ. աստվածաբան, պատմաբան, փիլիսոփա, ուսուցչապետ -154, 171
Վարանդյան Միքայել (Հովհաննիսյան, 1870-1934), պատմաբան, փիլիսոփա, հրապարակախոս -524
Վարանցով (Վորոնցով Միխայիլ Սեմյոնովիչ, 1782-1856), ռուս իշխան, պետական գործիչ, 1844-54 թթ. Կովկասի փոխարքա -484
Վարդան Այգեկցի, 12-13-րդ դդ. առակագիր, եկեղեցական գործիչ -105, 162
Վարդան Արևելցի (Վարդան Մեծ, Վարդան Պատմիչ, Վարդան Վարդապետ, մոտ. 1200-1271), պատմագիր, փիլիսոփա, թարգմանիչ, մանկավարժ -172
Վարդան Կաֆացի (1615-1712), տաղերգու, տոմարագետ -363
Վարդանյան Փիլիպպոս (1842-1916), մանկավարժ -494
Վարդգես մանուկ, վիպական հերոս -70, 79
Վարդովյան Հակոբ (1835-1898), դերասան, բեմադրիչ, թատերական գործիչ -416
Վարժապետյան Ներսես (1837-1884), եկեղեցական-հասարակական գործիչ, Կ.Պոլսի պատրիարք 1874-ից -410, 439
Վեռն Ժյուլ (1828-1905), ֆրանսիացի վիպասան - 421
Վեստենենկ, Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթների հոլանդացի տեսուչը -444
Վերգիլիոս (Վիրգիլիոս, 70-19 մ.թ.ա.), հռոմեացի բանաստեղծ -203
Վշտունի Ազատ (Կարապետ Մամիկոնյան, 1894-1958), բանաստեղծ, գրական-հասարակական գործիչ -551
Վրացյան Սիմոն (1882-1969), պետական-քաղաքական գործիչ, գրող, հրապարակագիր -553

Վրթանես Քերթող (6-րդ դ. կեսեր-7-րդ դ. սկիզբ), մատենագիր, աստվածաբան - 107

Տակիտոս *(մոտ. 55-117), Հռոմեացի պատմաբան -203*
Տանթե *(Դանթե Ալիգիերի, 1265-1321), իտալացի բանաստեղծ -164, 208*
Տաշյան Հակոբոս *(1866-1933), բանասեր, Հայագետ, ձեռագրագետ -448*
Տարագիր *(Մարտին Շաճիրյան, 1867-1940), տնտեսագետ, Հասարակական գործիչ, ՀՅԴ Հիմնադիրներից -477*
Տեմիրճիպաշյան Եղիա *(1851-1908), գրող, փիլիսոփա, բառարանագիր, մանկավարժ -441*
Տետեյան Հարություն *(1832-1868), լեզվաբան, թարգմանիչ, Հրատարակիչ -421*
Տերյան Վահան *(1885-1920) -519, 528-531*
Տեր-Ավետիքյան Ստեփան *(1868-1937), գրող, Հրապարակախոս - 537*
Տեր-Գրիգորյան Էմին *(1855-1939), դրամատուրգ, մշակութային գործիչ -496*
Տեր-Կարապետյան Գեղամ *(Մշո Գեղամ, 1866-1918), գրող, բանահավաք -465*
Տեր-Մինասյան Մ., *տե՛ս Ռուբեն :*
Տեր-Սարգսյան Ս. *(Սեդրակ Տեր-Սարգսենց, Տևկանց, 1845-1938), գրող, Հրապարակախոս -432*
Տիգրան Երվանդյան, *Հայոց արքա մ.թ.ա. 560-535 թթ., վիպական Հերոս -62, 68, 70, 375, 519*
Տիգրան Մեծ *(մ.թ.ա. 140-55), Հայոց արքա 95-55 թթ. -22*
Տիգրաններ, *Հայոց արքաներ -313*
Տիգրանյան Արմենուհի *(Մենուհի, 1888-1962), բանաստեղծուհի -531*
Տիգրանուհի, *վիպական Հերոսուհի -68*
Տիմոթեոս Կուզ *(Ալեքսանդրացի, 4-րդ դ. վերջ - 477), Հույն աստվածաբան, եկեղեցական գործիչ -98*
Տյումա *(Դյումա Ալեքսանդր, Դյումա - Հայր, 1803-1870), ֆրանսիացի վիպասան -421*

Տյուսապ (Տյուսաբ) Սրբուհի (1841-1901), վիպասանուհի, հասարակական գործիչ - 423-432
Տորք Անգեղ, վիպական հերոս - 70
Տրդատ III (Տրդատ Մեծ), հայոց արքա 298-330 թթ. -45, 46

Րաֆֆի (1835-1888) -392, 505, 507-513, 524

Ութուջյան Կարապետ (1823-1904), հասարակական-քաղաքական գործիչ, թարգմանիչ, մանկավարժ -402, 414, 421, 422
Ուխտանես (Սեբաստացի, Ուռհայեցի, մոտ. 935-1000), պատմագիր -170, 177

Փաշայան (Բաշայան) Լևոն (1868-1943), գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ -459
Փառանձեմ, հայոց արքա Արշակ Երկրորդի կինը, վիպական հերոուհի -69
Փավստոս Բուզանդ, V դ. պատմիչ -46, 50-57, 60, 61, 64-66, 70, 79, 164, 178, 431
Փափազյան Ստեփան (1839-1888), կրթական, մշակութային, գրական գործիչ, մանկավարժ, հրատարակիչ -425
Փափազյան Վրթանես (1866-1920) -521, 534-536, 543
Փելլիքքիո Սեվլիո (Սիլվիո Պելլիկո, 1789-1854), իտալացի գրող, հասարակական գործիչ -421
Փեշտըմալճյան Գրիգոր (1774-1837), բառարանագիր, քերական, փիլիսոփա, մանկավարժ -207
Փիլատոս, Հույն հեղինակ -98
Փիլոն Եբրայեցի (Ալեքսանդրացի, մ.թ.ա. 20-մ.թ. 50), հրեա հունալեզու փիլիսոփա, աստվածաբան, մեկնիչ -98

Քամալյան Սարգիս (1860-1934), գրող, մանկավարժ, թարգմանիչ, բանահավաք -538
Քեչյան Բյուզանդ (Քեչյան, 1859-1927), հրապարակախոս, խմբագիր-հրատարակիչ -446
Քեռի Օհան, վիպական հերոս - 314, 316, 319
Քյուրքճյան Վահան (1863-1961), գրող, հրապարակախոս, հասարա-

կական գործիչ -478
Քորնեյլ (Կոռնեյլ Պիեռ, 1606-1686), ֆրանսիացի դրամատուրգ -203
Քսենոփոն (մոտ. 430-355/354 մ.թ.ա.), հույն գրող, պատմագիր, զորավար -68
Քրիստոս -7-9, 22, 55, 59, 64, 66, 96-99, 109-111, 114, 119, 121-125, 129, 133-136, 217, 232, 325, 331, 342, 343, 350, 358, 364

Օհան Օձնեցի (Հովհան Օձնեցի, ծն.թ. անհայտ - 728), մատենագիր, բանաստեղծ, փիլիսոփա, Հայոց կաթողիկոս 717-ից -104, 107
Օմար Խայամ (մոտ. 1048-1122-ից հետո), պարսիկ բանաստեղծ -291
Օշական Հակոբ (Հակոբ Քյուֆեճյան, 1883-1948), գրող, քննադատ, գրականագետ, մանկավարժ -478
Օստրովսկի Ալեքսանդր (1823-1886), ռուս դրամատուրգ -392
Օտյան Գրիգոր (1834-1887), հրապարակախոս, հասարակական գործիչ -410, 423, 440, 441
Օտյան Երվանդ (1869-1926) -450, 468, 472-474, 480
Օրիոն, դիցաբանական հերոս -67
Օրմանյան Մաղաքիա (1841-1918), հասարակական-քաղաքական, եկեղեցական գործիչ, պատմաբան, բանասեր -448

Ֆասուլյաճյան Թովմաս (1843-1901), դերասան, բեմադրիչ, թատերական գործիչ -416
Ֆելեկյան Սիմոն (1831-1904), բանաստեղծ, մանկավարժ -425
Ֆենելոն Ֆրանսուա (1651-1715), ֆրանսիացի գրող - 203
Ֆիրտուսի (Ֆիրդուսի, մոտ. 932/934-1010), պարսիկ բանաստեղծ -336
Ֆրիկ (մոտ. 1230/ 1240-14-րդ դ. I քառորդ), միջնադարյան բանաստեղծ -281, 282, 329, 340, 341, 343, 344, 347, 349, 350, 367, 374, 519

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՄԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ 5

ԴԵՊԻ ՆՈՐ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ 568

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 589

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ 693

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ՅՈԹԵՐՈՐԴ

Համակարգչային շարվածքը և էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր՝ N 412
Հանձնված է տպագրության՝ 12.02.2013թ.:
Ձափսը՝ 60 x 84 1/16: Թուղթ՝ օֆսեթ N 1:
45 տպագր. մամուլ: Տպաքանակը 500 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատարակչության տպարան,
Երևան, Բաղրամյան 24գ:

[8000դր.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0675191

A II
108435